ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ
«ԱՐՄԵՆ ԵՎ ԲԵՐՍԱԲԵ ՋԵՐԵՋՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»
(ԱՄՆ)

THIS PUBLICATION WAS MADE POSSIBLE BY
«ARMEN AND BERSABE JEREJIAN FOUNDATION» Inc.
(USA)

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

NIKOLAY HOVHANNISYAN

HISTORY OF THE ARAB COUNTRIES

III

THE EPOCH OF INDEPENDENCE AND SOVEREIGNTY 1918–2005

Algeria, UAE, Bahrain, Egypt, Yemen
Tunisia, Iraq, Lebanon, Libya, Qatar

YEREVAN 2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

III

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ
1918–2005 թթ.

Ալժիր, ԱՄԷ, Բահրեյն, Եգիպտոս, Եմեն,
Թունիս, Իրաք, Լիբանան, Լիբիա, Կատար

ԵՐԵՎԱՆ 2006

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 93/99
ԳՄԴ 63.3(5 Արաբ)
Հ 854

Խմբագիր՝ **Վահան Բայբուրդյան**
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հովհաննիսյան, Նիկոլայ
Հ 854 **ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ:** Հատոր III. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան. 1918–2005 թթ./.– Եր.: Զանգակ–97, 2006.– 840 էջ + 38 կավճ.:

Հարգելի՛ ընթերցող: Ձեզ խոստացել էինք սույն՝ երրորդ հատորով ավարտել «Արաբական երկրների պատմությունը» սկզբից մինչև մեր օրերը: Ցավոք, դա մեզ չհաջողվեց, ինչի գլխավոր «մեղավորը» արաբական երկրներն են, ավելի ճիշտ՝ նրանց հարուստ պատմությունը, որի ծավալները հնարավորություն չտվեցին նրանց նորագույն պատմությունն ամփոփել մեկ հատորի մեջ: Եթե մենք գնայինք այդ ուղիով, այսինքն՝ այդ վիթխարի նյութն անպայման ամփոփեինք մեկ հատորի մեջ, ապա դրանից անխուսափելիորեն կտուժեր հարցի լուսաբանությունը, նրա գիտական կողմը: Ուստի մենք հարկադրաբար կանգնեցինք նյութը կիսելու և չորրորդ հատոր ստեղծելու անհրաժեշտության առջև, որի համար հայցում ենք Ձեր ներողամտությունը:
Սույն՝ երրորդ հատորն ընդգրկում է Արաբական Արևելքի և Մաղրիբի երկրների պատմության նորագույն շրջանը՝ Օսմանյան կայսրության կործանումից՝ 1918 թ–ից, մինչև XXI դարի սկիզբը: Այս հատորում ըստ այբբենական կարգի ամփոփ կերպով տրվում է արաբական տասը երկրների՝ Ալժիրի, ԱՄԷ–ի, Բահրեյնի, Եգիպտոսի, Եմենի, Թունիսի, Իրաքի, Լիբանանի, Լիբիայի և Կատարի նորագույն պատմության հանգուցային հարցերի լուսաբանությունը, մասնավորապես՝ արաբական երկրներում ծավալված ազգային–ազատագրական շարժումների, արաբական անկախ և ինքնիշխան պետությունների կազմավորման ու կայացման, սոցիալ–տնտեսական զարգացումների, ինչպես նաև արտաքին հարաբերությունների պատմությունը:
Զգալի տեղ է հատկացված հայ–արաբական հարաբերություններին, այդ թվում նաև միջպետական հարաբերությունների քննարկմանը:
Արաբական մյուս պետությունների՝ Հորդանանի, Մավրիտանիայի, Մարոկկոյի, Պաղեստինի ինքնավարության, Սաուդյան Արաբիայի, Սիրիայի, Սուդանի, Քուվեյթի և Օմանի նորագույն պատմությունը կլուսաբանվի չորրորդ՝ վերջին հատորում:

Հ $\frac{0503000000}{0003(01)–2006}$ **2006 թ.** **ԳՄԴ 63.3(5 Արաբ)**

ISBN 99941–1–210–4

© Ն. Հ. Հովհաննիսյան, 2006 թ.
© «Զանգակ–97», 2006 թ.



ı. Հովհաննիսյանի ելույթը Ալեքսանդրիայում հայ–արաբական
դոխհարաբերություններին նվիրված գիտաժողովում. 9 փետրվարի, 2006 թ.

Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, Հայաստանի գիտ
թյունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտու
ıորեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Կոնֆլիկտնե
ծման Հայաստանի Կենտրոնի հիմնադիր տնօրեն և Հայ–ատլանտյան ա
ացիայի նախագահ: Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի, Ազգա
ıվտանգության հիմնախնդիրների գիտությունների միջազգային ակադեմի
(Մոսկվա), «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի (Փարի
ության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմի
իսկական անդամ, Սիրիայի արաբական գիտության պատմության ընկեր
սն (Հալեպ) անդամ և Ամերիկյան կենսագրական ինստիտուտի հետազոտ
ıունների վարչության խորհրդական:

Հեղինակ է մոտ 400 գիտական աշխատությունների, այդ թվում՝ 30–ից ավելի մենագրական ուսումնասիրությունների որոնք լույս են տեսել Անգլիայում, ԱՄՆ–ում, Գերմանիայում, Իտալիայում, Կանադայում, Լիբանանում, Իրաքում, Սիրիայում, Քուվեյթում, Ռուսաստանում, Հունգարիայում, Վրաստանում և այլ երկրներում:

Նրա մենագրական ուսումնասիրություններից են. «Ազգային–ազատագրական պայքարը Լիբանանում» (Երևան, 1967 թ., հայերեն, Բեյրութ, 1974, արաբերեն), «Սիրիական անկախ հանրապետության կազմավորումը» (Մոսկվա, 1968, ռուսերեն), «Ազգային–ազատագրական շարժումը Իրաքում (1917–1958 թթ.)» (1976), «Իմպերիալիստական պետությունների քաղաքականությունն Արաբական Արևելքում երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ» (1980), «Դիվանագիտություն» (1997), «Հայաստանի արտաքին քաղաքականությունը» (1998, անգլերեն), «Ղարաբաղյան հիմնախնդիրը. գործոնները, չափանիշները, լուծման տարբերակները» (1999, անգլերեն), «Հայոց ցեղասպանությունը. Արմենոցիդ» (2002, անգլերեն), «Արաբական երկրների պատմություն» (հհ. I–II, 2003, 2004), «Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը» (2004), «Արաբական պատմագիտությունը հայոց ցեղասպանության մասին» (2005, անգլերեն) և այլն:

2001 թ. եղել է Քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700–ամյակի տոնակատարության կազմակերպման պետական հանձնաժողովի, իսկ 2005 թ. Հայոց ցեղասպանության 90–ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի անդամ: Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև միջկառավարական համատեղ հանձնաժողովի հայկական մասի անդամ է: Պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով, Ֆրիտյոֆ Նանսենի հուշամեդալով «Հայոց ցեղասպանության դատապարտման և մարդասիրական սկզբունքների հաստատման ուղղությամբ ծավալած գիտական և հասարակական գործունեության համար» և այլ պարգևներով:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

1918 թվականից, Օսմանյան կայսրության կործանումից հետո, որի մեջ նշանակալի էր նաև արաբների ներդրումը, պատմական նոր փուլ է սկսվում արաբական երկրների բազմադարյան պատմության մեջ: Նրանք ոտք դրեցին ազգային անկախության նվաճման և ինքնիշխան պետությունների կազմավորման, սոցիալ–տնտեսական վերափոխումների և ժամանակակից հասարակության կառուցման դժվարին ուղին, որը կազմում է նրանց նորագույն պատմության հիմնական բովանդակությունը:

1918 թվականից սկսվում է արաբական երկրների ազգային–ազատագրական պայքարի շրջանը, որը ներառնում է ինչպես Արաբական Արևելքի՝ Մաշրիկի, այնպես էլ Արաբական Արևմուտքի՝ Մաղրիբի բոլոր երկրները՝ Հնդկական օվկիանոսից և Պարսից ծոցից մինչև Ատլանտյան օվկիանոսն ընդգրկող վիթխարի տարածքը:

Օսմանյան կայսրության վերացումը ինքնաբերաբար չհանգեցրեց արաբական երկրների անկախացմանը, որոնք, ազատագրվելով թուրքական չորսհարյուրամյա լծից, տարաբախտաբար, քաղաքական կախման մեջ ընկան եվրոպական երկրներից: Ուստի և արաբական երկրները հարկադրված էին ոչ թե զենքը վայր դնել, այլ ուղղել իրենց նոր տիրակալների դեմ, որով և սկզբնավորվեց նրանց ազգային–ազատագրական, հակագաղութային պայքարի փուլը: Այդ պայքարն ի վերջո XX դարի կեսերին, պսակվեց փայլուն հաղթանակով, որով և ավարտվեց դեռևս XIX դարի կեսերին Արաբական Նահդայի կամ Արաբական Զարթոնքի կողմից ոգեկոչված ազգային–քաղաքական գործընթացը, որը շրջադարձային նշանակություն ունեցավ արաբական երկրների պատմական ճակատագրում:

Այս հարցերի լուսաբանությունը կազմում է սույն ուսումնասիրության հիմնախնդիրների առաջին կարևոր խումբը:

Ազգային–ազատագրական շարժումների հաղթանակի արդյունքում քաղաքական ասպարեզում հայտնվեց 18 արաբական նորանկախ

պետություն: Իր անկախ պետությունը ստեղծելու ճանապարհին է Պաղեստինը: Արաբական երկրների ընդհանուր տարածքը, մոտավոր հաշվումներով, կազմում է 15 մլն քառ. կմ, իսկ բնակչության թիվն այսօր հասնում է մոտ 200 մլն:

Աշխարհի քաղաքական քարտեզի վրա արաբական ինքնիշխան պետությունների հայտնվելը կարևոր պատմական երևույթ էր ոչ միայն իրենց՝ արաբական երկրների համար, այլև նշանակալի իրադարձություն համաշխարհային զարգացումների տեսանկյունից: Դրա շնորհիվ միջազգային հարաբերություններն ավելի ընդլայնվեցին ու բազմաբովանդակ դարձան, ավելի ընդգծվեց այդ հարաբերությունների միջազգային բնույթը՝ ի հաշիվ այն իրողության, որ արաբական երկրները գաղութային ենթակայությունից վերածվեցին միջազգային հարաբերությունների անկախ սուբյեկտի:

Բնականաբար, աշխատության մեջ մեծ տեղ է հատկացված արաբական անկախ պետությունների ձևավորման և զարգացման պատմությանն ու օրինաչափությունների բացահայտմանը, նրանցում տեղի ունեցած քաղաքական և սոցիալ–տնտեսական տեղաշարժերի, նրանց ներքին և արտաքին քաղաքականության, այդ թվում՝ միջարաբական հարաբերությունների, կառավարող նոր վերնախավի ձևավորման և այլ հանգուցային հարցերի լուսաբանությանը:

Անկախության նվաճումից հետո արաբական երկրների զարգացումն ընթացել է բավականին բարդ ներքին և արտաքին պայմաններում՝ հեղափոխություններ, բազմաթիվ պետական հեղաշրջումներ, արտաքին ագրեսիա, ներքին ցնցումներ և քաղաքացիական պատերազմներ, էթնիկական բախումներ, պաղեստինյան հիմնախնդիր և արաբա–իսրայելական պատերազմներ, որոնք Արաբական Արևելքը վերածել են ճգնաժամերի մի յուրատեսակ մշտական գոտու և հակասությունների բարդ հանգույցի: Դրանք իրենց կնիքն են դրել արաբական երկրների քաղաքական և սոցիալ–տնտեսական զարգացումների վրա՝ ներազդելով նաև նրանց միջազգային դրության, միջազգային, տարածաշրջանային և միջարաբական հարաբերությունների վրա:

Այս հիմնահարցերի ուսումնասիրությունը կազմում է սույն հատորի մյուս կարևոր հիմնախնդիրների խումբը:

Մենք այն կարծիքին ենք, որ մեր անմիջական և մերձավոր հարևան երկրների պատմությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է պատշաճ տեղ հատկացնել հայկական գործոնին՝ այդ բառի ամենալայն

իմաստով, և համապատասխան ուշադրություն դարձնել Հայաստանի հետ նրանց քաղաքական, տնտեսական, գիտական և մշակութային հարաբերությունների լուսաբանությանը: Մենք այդպես ենք վարվել սույն ուսումնասիրության նախորդ երկու հատորները շարադրելիս և ձգտել ենք այդ սկզբունքին հավատարիմ մնալ նաև այս հատորում: Մանավանդ հարկ է հաշվի առնել երկու հանգամանք:

Առաջին՝ օտար հեղինակները, որպես կանոն, հազվադեպ են իրենց ուսումնասիրություններում պատշաճ տեղ հատկացնում Հայաստանի հետ արաբական երկրների հարաբերությունների լուսաբանությանը, շատ հաճախ այն լիովին անտեսում են, իսկ երբեմն էլ, միտումնավոր կերպով թե անգիտության պատճառով, աղավաղում:

Երկրորդ՝ 1991 թ. քաղաքական ասպարեզում որպես անկախ պետություն հայտնվեց Հայաստանի Հանրապետությունը: Դա նոր, թերևս ամենակարևոր էջը բացեց հայ–արաբական բազմադարյան պատմության մեջ: Հայաստանի և արաբական պետությունների միջև հաստատվել են դիվանագիտական հարաբերություններ, որոնք զարգանում են միջպետական հարաբերությունների մակարդակով:

Չպետք է մոռանալ նաև, որ այսօր արաբական մի շարք երկրներում գոյություն ունեն հայ համայնքներ, որոնց գոյության ու զարգացման համար ստեղծվել են բարենպաստ քաղաքական պայմաններ և բարեկամական մթնոլորտ: Այդ համայնքներն իրենց որոշակի ներդրումն ունեն արաբական երկրների քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում, մի կողմից, և կամրջի դեր են կատարում հյուրընկալ արաբական երկրների և Հայաստանի Հանրապետության միջև, մյուս կողմից:

Պետք է հիշել, որ հայ–արաբական հարաբերությունները պատմականորեն բարեկամական բնույթ են կրել: Պատմությունը ոչ միայն չի անջատում, այլ միացնում է արաբներին ու հայերին, արաբական երկրներին և Հայաստանին:

Գլուխ առաջին

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ (1918–1920 թթ.)

Սույն կարևոր հարցի լուսաբանությունը ժամանակագրական առումով ընդգրկում է Առաջին համաշխարհային պատերազմին և Օսմանյան կայսրության կործանմանը հաջորդած առաջին տարիները, որոնք կարելի է համարել էյֆորիայի՝ խանդավառության, և հիասթափության ժամանակահատված:

Արաբները խանդավառված էին, քանի որ ավարտվել էր պատերազմը, կործանվել Օսմանյան բռնապետությունը և վերջացել թուրքական չորսդարյա դաժան տիրապետության շրջանը, որը նրանք կոչում էին զուլումի՝ միահեծանության, արհավիրքների ու աղետի դարաշրջան:

Նրանք խանդավառ էին, քանի որ ոչ մի կասկած չունեին, որ եկել էր իրենց ազատության և անկախության պատմական պահը: Անտեղյակ արաբական երկրների նկատմամբ Անգլիայի և Ֆրանսիայի նվաճողական ծրագրերին, ինչպես նաև նրանց հետ արաբական քաղաքական ղեկավարների գաղտնի բանակցությունների մանրամասնություններին՝ արաբական ժողովուրդները միամտաբար կարծում էին, որ այլևս ոչ մի խոչընդոտ գոյություն չունի իրենց անկախությունը կերտելու ճանապարհին:

Բայց, ինչպես ընդունված է, էյֆորիան երկար չի տևում, և սովորաբար շատ հեշտությամբ իր տեղը զիջում է դառն իրականությանը: Նույնը պատահեց նաև արաբական երկրների հետ:

Նրանք շատ շուտով համոզվեցին, որ իրենց երազանքներն անհաշտելի հակասության մեջ էին գտնվում արևմտյան պետությունների քաղաքական և գործնական ծրագրերի հետ: Եվ խանդավառությանը

փոխարինելու եկավ հիասթափությունը, որը, ի տարբերություն էյֆորիայի, շատ ավելի երկար՝ մի քանի տասնամյակ տևեց:

Արաբական երկրներն այդ ժամանակ իրավական և քաղաքական կարգավիճակի տեսանկյունից իրենցից ներկայացնում էին մի խայտաբղետ պատկեր: Այստեղ ներկայացված էին գաղութային տիրապետության համարյա բոլոր տեսակները՝ բուն կամ դասական առումով գաղութներ, պրոտեկտորատներ և ենթամանդատային երկրներ:

Գաղութային համակարգը, ինչպես հայտնի է, ստեղծվել է դարերի ընթացքում՝ եվրոպական պետությունների, հիմնականում Անգլիայի, Ֆրանսիայի, Պորտուգալիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Իսպանիայի և Իտալիայի նվաճումների արդյունքում, որը նրանք հետևողականորեն իրականացրել են Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում: Եվրոպական երկրներն իրենց գաղութներն ունեցան նաև Ասիայի և Աֆրիկայի արաբական երկրներում:

Քննարկվող ժամանակաշրջանում արաբական երկրներում **դասական գաղութներ** էին Ադենը և Սուդանը, որոնք պատկանում էին Անգլիային: Ճիշտ է, Սուդանը ձևականորեն համարվում էր անգլո–եգիպտական համատիրություն՝ կոնդոմինիում, սակայն իրականում նրա կարգավիճակը ոչնչով չէր տարբերվում դասական գաղութների կարգավիճակից: Եգիպտոսի «համատեր» լինելը սոսկ ձևական էր, և իրականում Անգլիան միանձնյա տնօրինում էր Սուդանի ճակատագիրը:

Գաղութային կարգավիճակ ուներ Ֆրանսիային պատկանող Ալժիրը, իտալական գաղութ էր Լիբիան: Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրներում իր գաղութային տիրույթներն ուներ նաև Իսպանիան, որին պատկանում էին այսպես կոչված «Իսպանական Մարոկկոն»՝ Մարոկկոյի հյուսիսային և հարավային մասերը, Իֆնին, Սեուտուն Մելիլլան և այլն:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ արաբական երկրներում իրենց գաղութային տիրույթներն ունեին Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Իսպանիան:

Բուն կամ դասական իմաստով գաղութները գաղութատիրական համակարգում իրավազրկության առումով գրավում էին ամենաստորին աստիճանակարգը: Նրանք անմիջականորեն ենթակա էին մետրոպոլիային՝ գաղութատեր «մայր» երկրին, և կառավարվում էին նրա կողմից նշանակված փոխարքայի, նահանգապետի կամ այլ աստիճանակարգ ունեցող պաշտոնյայի կողմից՝ կախված տվյալ գաղութի կարևորությունից: Գաղութների ամբողջ ներքին կարգը՝ հասարակական–քաղաքական, սո-

ցիալ–տնտեսական, հոգևոր–կրոնական և մշակութային–կրթական ոլորտը, ենթակա էր մետրոպոլիայի կողմից նշանակված կառավարչին, գտնվում էր նրա վերահսկողության ներքո, ուղղություն էր ստանում և կառավարվում նրա կողմից: Նրան էր պատկանում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունը: Գաղութները, որպես կանոն, չունեին իրենց կառավարման կենտրոնական մարմինները: Երբեմն տեղական ավագանուց նահանգապետին կամ կառավարչին կից ստեղծվում էր այս կամ այն խորհրդակցական մարմինը՝ Խորհրդակցական խորհուրդ, Սահմանադրական խորհուրդ, Ավագների խորհուրդ և այլ անվանակոչումներով: Բայց դրանք սովորաբար օժտված չէին լինում որևէ իշխանությամբ, իսկ այդ մարմինների խորհուրդները մետրոպոլիայի ներկայացուցիչ–կառավարիչը կարող էր և՛ հաշվի առնել, և՛ անտեսել: Ուստի այդ «խորհրդատվական» մարմինները լոկ շղարշ էին՝ քողարկելու համար եվրոպական պետությունների գաղութային տիրապետությունը:

Քաղաքական–իրավական առումով գաղութային տիրապետության մի յուրատեսակ կարգավիճակ էին ներկայացնում **պրոտեկտորատները՝ հովանավորյալ կամ հովանավորվող երկրները:**

Սովորաբար պրոտեկտորները կամ հովանավորները եղել են եվրոպական երկրները, իսկ պրոտեկտորատները՝ հովանավորյալները՝ Ասիայի և Աֆրիկայի երկրները: Եվրոպական երկրներն իրենց պրոտեկտորատը հաստատում էին պարտադրանքով՝ բռնի ուժով, սպառնալիքով, ահաբեկման ճանապարհով և, ի հարկին, չէին խորշում նաև պատերազմական գործողություններից: Լինում էին դեպքեր, երբ պրոտեկտորատը հաստատվում էր միակողմանիորեն, այսինքն՝ առանց մյուս կողմի համաձայնության կամ նրա հետ պայմանագիր կնքելու: Այդպես վարվեց Անգլիան, երբ 1914 թ. դեկտեմբերին միակողմանիորեն հայտարարեց Եգիպտոսի վրա իր պրոտեկտորատը հաստատելու մասին, թեև Եգիպտոսը ծնականորեն մտնում էր Օսմանյան կայսրության կազմի մեջ:

Բայց սովորաբար այդ կարգավիճակը հաստատվում է պայմանագրով, որը կնքվում է երկու կողմերի միջև:

Գաղութային տիրապետության այս կատեգորիայի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ եվրոպական պետության կողմից պրոտեկտորատը հաստատելիս պահպանվում էին հովանավորվող պետության կամ երկրի՝ տվյալ պահին գոյություն ունեցող պետական կառավարման ձևը, կառույցները և վարչակարգը՝ միապետություն, սուլթանություն, իշխանապետություն և այլն: Դրանք, որպես կանոն,

փոփոխության չէին ենթարկվում: Պահպանվում էին կառավարող դինաստիաները, եթե այդպիսիները կային, ինչպես Քուվեյթում աս–Սաբահների, Բահրեյնում ալ–Խալիֆաների դինաստիան, տեղական ցեղապետների իրավունքները և այլն:

Պրոտեկտորատը պարտավորվում է ընդունել պրոտեկտոր պետության «խորհուրդները» և ղեկավարվել դրանցով, որի շնորհիվ պրոտեկտոր պետությունն ապահովում է իր տիրապետող քաղաքական և տնտեսական դիրքերը: Մասնավորապես, եվրոպական որևէ պետության հովանավորությունն ընդունած պետությունը կամ երկիրը՝ պրոտեկտորատը, առանց պրոտեկտոր պետության թույլտվության և համաձայնության չի կարող կապերի մեջ մտնել կամ հարաբերություններ հաստատել այլ պետությունների հետ: Արտաքին քաղաքականության բնագավառում նա պարտավոր է ընդունել և հետևել հովանավոր երկրի «խորհուրդներին»:

Մյուս կողմից՝ հովանավոր կամ պրոտեկտոր պետությունն իր վրա է վերցնում պրոտեկտորատի՝ հովանավորյալ պետության, պաշտպանության և անվտանգության ապահովման «հոգսը»:

Իսկ ինչ վերաբերում է ներքին հարցերին, ապա այդ հարցերը նույնպես կարգավորվում են պայմանագրով, որ կնքվում է պրոտեկտորի և պրոտեկտորատի միջև: Ըստ այդմ՝ պրոտեկտորատն ընդունում է պրոտեկտոր երկրի ներկայացուցչին, որը սովորաբար ունենում է խորհրդականի աստիճանակարգ:

Արաբական երկրներից անգլիական պրոտեկտորատներ էին Քուվեյթը, Կատարը, Մասկատը, Պայմանագրային Օմանը, Բահրեյնը և Եգիպտոսը: Ֆրանսիական պրոտեկտորատներ էին Թունիսը և Մարոկկոն:

Պրոտեկտորատը թեև մտնում է «գաղութային համակարգ» հասկացության մեջ, բայց անհամեմատ ավելի բարձր կարգավիճակ ունի: Ուստի չի կարելի հավասարության նշան դնել դասական գաղութների և պրոտեկտորատների միջև:

Գաղութային կախվածության այս երկու տեսակները ձևավորվել և ի հայտ էին եկել նախորդ դարերում՝ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը:

Պատերազմի ավարտից և կայզերական Գերմանիայի ու Օսմանյան կայսրության տապալումից ու վերացումից հետո «գաղութային համակարգ» հասկացությունը հարստացավ կախվածության մի նոր տեսակով, որը ստացավ **մանդատային համակարգ** անվանումը: Մի բան

մնաց նույնը. ինչպես նախորդ երկու ձևերում, այս նոր տեսակի դեպքում ևս տերը կամ տիրապետողը եվրոպական գաղութատեր պետություններն էին, իսկ կախյալ վիճակում հայտնվածները՝ դարձյալ Ասիայի և Աֆրիկայի, այդ թվում և արաբական երկրները:

Մանդատային համակարգը լույս աշխարհ եկավ 1919–1920 թթ., երբ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Փարիզում գումարվել էր Խաղաղության կոնֆերանսը, որը կոչված էր հանրագումարի բերել պատերազմի ռազմական և քաղաքական արդյունքները, ամրագրել նոր քաղաքական իրողությունները, մասնավորապես հաղթած և պարտություն կրած պետությունների կարգավիճակները, և որոշել աշխարհի ճակատագիրն ու զարգացման հիմնական ուղղություններն առաջիկա տասնամյակներին:

Այդ քննարկումների ընթացքում շատ լուրջ ուշադրություն դարձվեց պարտություն կրած կայզերական Գերմանիայի նախկին գաղութներին և Օսմանյան կայսրության արաբական տիրություններին՝ նրանց ապագայի տեսանկյունից: Հիշեցնենք, որ արաբական երկրներն այդ ժամանակ, ինչպես լուսաբանված է սույն հետազոտության երկրորդ հատորում, փաստորեն գրավված էին անգլիական և ֆրանսիական զորքերի կողմից: Ուրեմն, խոսքը գնում էր նրանց քաղաքական ճակատագրի մասին: Անգլիան և Ֆրանսիան ցանկանում էին արաբական երկրները բռնակցել իրենց գաղութային կայսրություններին: Անգլիան հավակնում էր Պաղեստինին և Իրաքին, իսկ Ֆրանսիան՝ Սիրիային և Լիբանանին:

Սակայն դա նրանց չհաջողվեց: Դրան խանգարեց երկու հանգամանք: Առաջին՝ ԱՄՆ–ի խիստ բացասական դիրքորոշումը անգլո–ֆրանսիական ծրագրերի նկատմամբ: ԱՄՆ–ի ազգային շահերին չէր համապատասխանում Անգլիայի և Ֆրանսիայի հետագա հզորացումը: Եվ, երկրորդ՝ արաբական երկրներում կուտակված դժգոհությունը Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքականության նկատմամբ, որոնք հրաժարվում էին կատարել արաբներին պատերազմի ժամանակ տրված խոստումները նրանց անկախության վերաբերյալ: Անգլիան և Ֆրանսիան մտավախություն ունեին, որ արաբական երկրների ուղղակի բռնակցումը կարող է պատճառ հանդիսանալ արաբական մի նոր հուժկու ապստամբության համար:

Ելնելով այդ նկատառումներից՝ Անգլիան և Ֆրանսիան հրաժարվեցին արաբական երկրները, ինչպես նաև գերմանական նախկին գաղութները, ուղղակի բռնակցելու մտադրությունից և սկսեցին փնտրել

այդ տարածքները կառավարելու մի նոր՝ մինչ այդ մարդկությանն անհայտ տարբերակ:

Ահա այսպես հրապարակ նետվեց **կառավարման մանդատային համակարգը,** որն ուներ իր առանձնահատկությունները:

Նախ՝ մանդատային համակարգի հաստատումն իրավաբանորեն ամրագրվեց նորաստեղծ միջազգային կազմակերպության՝ Ազգերի լիգայի կանոնադրությամբ, որի 22–րդ հոդվածն ամբողջովին նվիրված էր այդ հարցին: Ըստ այդմ՝ Ազգերի լիգան իրավունք ուներ կառավարման մանդատը հանձնել որևէ արևմտյան զարգացած երկրի՝ նախկին Օսմանյան կայսրության արաբական երկրները և կայզերական Գերմանիայի գաղութները Ազգերի լիգայի անունից կառավարելու համար: Փարիզի Խաղաղության կոնֆերանսի այսպես կոչված «Տասի խորհուրդը», որի մեջ մտնում էին ԱՄՆ–ի պրեզիդենտն ու պետական քարտուղարը, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի վարչապետները և արտաքին գործերի նախարարները, 1919 թ. հունվարի 30–ին որոշում ընդունեց Օսմանյան կայսրությունից վերջնականապես անջատել և ենթամանդատային տերիտորիաներ հայտարարել Հայաստանը, Սիրիան, Պաղեստինը, Միջագետքը, Արաբիան և Քրդստանը, սակայն առանց կոնկրետ նշելու, թե այդ երկրների կառավարման մանդատը ո՞ր պետությանն է տրվելու: Այդ հարցը լուծվեց ավելի ուշ՝ երկար բանակցություններից հետո, որոնք երբեմն շատ սուր բնույթ էին կրում:

Մանդատային համակարգի մյուս առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ Ազգերի լիգան ապագա ենթամանդատային տերիտորիաները բաժանեց երեք կարգի՝ A, B, C՝ ելնելով նրանց «զարգացման մակարդակից», տալով դրանցից յուրաքանչյուրի բնութագիրը:

Ամենաբարձրը համարվում էր A կարգի մանդատը, որի շարքում դասվեցին միայն արաբական երկրները: Դրա վերաբերյալ Ազգերի լիգայի 22–րդ հոդվածում ամրագրված էր հետևյալը. «Մի շարք մարզեր, որոնք նախկինում պատկանում էին թուրքական կայսրությանը, հասել են զարգացման այնպիսի աստիճանի, որ նրանց գոյությունը որպես անկախ ազգեր, ժամանակավորապես կարելի է ճանաչել, պայմանով, որ մանդատային պետության խորհուրդները և օգնությունն ուղղություն տան նրանց զարգացմանը մինչև այն պահը, երբ նրանք ի վիճակի կլինեն իրենք իրենց կառավարելու: Մանդատային պետության ընտրության հարցում նախ և առաջ պետք է հաշվի առնվեն այդ մարզերի ցանկությունները»:

Ազգերի լիգայի կանոնադրության՝ մանդատներին վերաբերող հոդվածում նշվում էր նաև, որ ենթամանդատային տերիտորիաներում բոլոր պետությունները պետք է ունենան հավասար իրավունքներ տնտեսական մի շարք հարցերի բնագավառում, մանդատատեր պետությունն իրավունք չունի ենթամանդատային երկիրը համարել իր տիրապետությունը և յուրաքանչյուր տարի իր գործունեության մասին պետք է հաշվետվություն ներկայացնի Ազգերի լիգային:

Բ կարգի մանդատների շարքը դասվեցին գերմանական նախկին գաղութները Կենտրոնական Աֆրիկայում: Նրանք զարգացման առումով համարվում էին ավելի ցածր կարգի, ուստի և դրվում էին նրանց կառավարման մանդատը ստացած պետության ուղղակի կառավարման ներքո:

Իսկ ինչ վերաբերում է Գ կարգի ենթամանդատային տերիտորիաներին, ապա դրանց մեջ մտնում էին Հարավարևմտյան Աֆրիկայի երկրները և Խաղաղ օվկիանոսի կղզիները, որոնք իրենց զարգացման մակարդակով, ըստ Ազգերի լիգայի կանոնադրության 22–րդ հոդվածի, զիջում էին ոչ միայն Ա կարգին, այսինքն՝ արաբական երկրներին, այլև Բ կարգին պատկանող երկրներին: Այդ պատճառով էլ մանդատատեր պետությունները նրանց կառավարման հարցում ստացան ավելի լայն լիազորություններ, քան Ա, ինչպես նաև Բ կարգի երկրների հարցում: Գ կարգի երկրների կապակցությամբ ասված էր, որ «այդ տարածքները պետք է կառավարվեն մանդատատեր պետության օրենքներով՝ որպես նրա տերիտորիայի բաղկացուցիչ մասը»:

Եթե ի մի բերելու լինենք, ապա 22–րդ հոդվածի սահմանումներից ու դրույթներից ակնհայտ է դառնում, որ մանդատային համակարգի հիմքում դրված էր ազգերի «բարձր» և «ցածր» լինելու սկզբունքը, նրանց կառավարողների և կառավարվողների բաժանելու՝ ըստ էության ռասայական մոտեցումը:

Արևմտյան դասական գաղութատեր պետությունները, որոնց պատկանում էր որոշումներ ընդունելու իրավունքը, պետական ինքնուրույն գոյության համար «չհասունացած» ժողովուրդների շարքը դասեցին անգամ արաբներին. մի ժողովրդի, որը դեռևս VII դարում ստեղծել էր իր հզոր պետականությունը և մեծ նվաճումների հասել գիտության ու մշակույթի բնագավառում, որը հայտնի է արաբական քաղաքակրթություն անվանումով: Դա խորապես վիրավորեց արաբներին, ինչի մասին դառնորեն արտահայտվեց արաբական ազգային–ազատագրական պայքարի ականավոր ղեկավարներից մեկը՝ Հիջազի կառավարիչ Հու-

սեյն իբն Ալիի որդին՝ Իրաքի ապագա թագավոր Ֆեյսալը, որը հանդես գալով Փարիզի կոնֆերանսում մանդատների հարցի քննարկման ժամանակ, դիմելով արևմտյան պետությունների ղեկավարներին, ասաց. «Արաբները հին քաղաքակրթված և կազմակերպված ժողովուրդ էին դեռ այն ժամանակ, երբ այս սրահում ներկայացված ժողովուրդները դեռևս չէին ծնավորվել»:

Արաբական երկրների կառավարման A կարգի մանդատների բաժանման հարցը վերջնականապես լուծվեց և հաստատվեց 1922 թ. հուլիսի 24–ին և գործողության մեջ մտավ 1923 թ. նոյեմբերի 29–ին: Ըստ այդմ՝ Պաղեստինի և Իրաքի մանդատը ստացավ Անգլիան, իսկ Սիրիայի և Լիբանանի մանդատը՝ Ֆրանսիան: Հետագայում Պաղեստինի կազմից առանձնացվեց, որպես առանձին բրիտանական ենթամանդատային երկիր, Անդրհորդանանը:

Այսպիսով՝ արաբական երկրների մեծ մասը այս կամ այն կերպ կախման մեջ ընկավ եվրոպական երկրներից, գլխավորապես Անգլիայից և Ֆրանսիայից:

Արաբական երկրների քաղաքական կարգավիճակի պատկերն ամբողջացնելու համար հարկ է նշել, որ գաղութների, պրոտեկտորատների և ենթամանդատային երկրների կողքին կային նաև անկախ պետություններ:

Օսմանյան կայսրության կործանումից հետո **անկախ պետություն** դարձան միայն Նեջդը և հարակից երկրները Արաբիայում՝ Իբն Սաուդի գլխավորությամբ, Հիջազը, որի թագավոր հռչակվեց Հուսեյն իբն Ալին, և Եմենը: Հետագայում՝ 1924 թ., Իբն Սաուդը, շարունակելով իր իշխանության ներքո Արաբիայի տարածքները միավորելու իր հաղթական քաղաքականությունը, կարողացավ Նեջդի թագավորությանը կցել նաև Հիջազը՝ հիմնականում ավարտելով ապագա Սաուդյան Արաբիայի կազմավորման գործընթացը:

Քաղաքական և իրավական կարգավիճակի առումով ահա այսպիսի պատկեր էր ներկայացնում արաբական աշխարհը օսմանյան տիրապետությունից ազատագրվելուն հաջորդած առաջին տարիներին:

Գլուխ երկրորդ

ԱԼԺԻՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԼԺԻՐ

ԱԼ–ՋՈՒՄՀՈՒՐԻՅԱ ԱԼ–ՋԱԶԱԻՐԻՅԱ ԱԴ–ԴԻՄՈՒԿՐԱՏԻՅԱ ԱՇ–ՇԱԱԲԻՅԱ
ԱԼ-ՋԱԶԱԻՐ

Աշխարհագրական դիրքը — տեղակայված է Հյուսիսարևմտյան Աֆրիկայում
Սահմանները — սահմանակից է Լիբիային, Մալիին, Մավրիտանիային, Մարոկկոյին, Նիգերին, Թունիսին, Արևմտյան Սահարային, իսկ հյուսիսից՝ Միջերկրական ծովին
Տարածքը — 2381740 քառ. կմ, երկրորդ ամենամեծ երկիրը Աֆրիկայում՝ Սուդանից հետո
Բնակչությունը — 32129324 (2004 թ. տվյալներ)
Մայրաքաղաքը — Ալժիր (մոտ 4 մլն)
Պետական կարգը — հանրապետություն
Պետության ղեկավարը — պրեզիդենտ
Օրենսդիր իշխանությունը — երկպալատանի Ազգային ժողովրդական ժողով
Վարչական բաժանումը — 48 վիլայաթներ՝ մարզեր
Ազգային տոնը — 1 նոյեմբերի՝ Համազգային ապստամբության կամ Հեղափոխության օրը (1954 թ.)
Անկախության օրը — 5 հուլիսի, 1962 թ.
Պետական կրոնը — իսլամ (սուննի), դավանում է բնակչության 99%–ը, իսկ 1%–ը՝ քրիստոնյաներ և հրեաներ են
Պաշտոնական լեզուն — արաբերենը, գործածական են նաև ֆրանսերենը և բերբերական բարբառը
Ազգային կազմը — արաբ–բերբերներ՝ 99%, եվրոպացիներ՝ 1%
Ազգային դրամը — դինար
Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ըստ շնչի — 6000 ԱՄՆ դոլարին համարժեք (2003 թ.)

ԱԼԺԻՐ
1:15 000 000

Բնական հարստությունները — նավթ՝ պաշարները 13,1 մլրդ բարել (2002 թ.), բնական գազ, երկաթ, ֆոսֆատներ, ուրան, ցինկ, արճիճ

Արդյունաբերությունը նավթարդյունաբերություն, գազի, լեռնահանքային, էլեկտրատեխնիկական, թեթև և սննդի արդյունաբերություն

Գյուղատնտեսությունը մշակվում են ցորեն, գարի, վարսակ, խաղող, ծիթապտուղ, ցիտրուսներ, մրգեր, նշանակալի տեղ է գրավում անասնապահությունը

I. ԱԼԺԻՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ԵՐԿՈՒ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1919–1939 թթ.)

1. Ընդհանուր բնութագիրը

Ալժիրն իր նորագույն պատմության փուլը մտավ որպես ֆրանսիական գաղութ: Սակայն 1919–1939 թթ. Ալժիրն արդեն նման չէր ոչ միայն XIX դարի, այլև XX դարի սկզբների Ալժիրին:

Այդ ժամանակահատվածում, հատկապես Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած երկտասնյակում, տեղի ունեցան որոշակի տեղաշարժեր Ալժիրի սոցիալ–տնտեսական դրության մեջ, ալժիրցիների ազգային և քաղաքական մտածելակերպում ու ազգային հոգեբանության ոլորտում: Ալժիրցիներն ավելի ու ավելի էին ազատագրվում գաղութային վիճակում գտնվող ժողովուրդներին բնորոշ կապանքներից՝ ոչ լիարժեքության բարդույթից, ենթակայության հոգեբանությունից, և նրանց այլևս չէր վախեցնում անկախության հեռանկարը:

Ալժիրյան հասարակության ներսում տեղի էին ունենում առաջին հայացքից ոչ այնքան նկատելի գործընթացներ, որոնք վկայում էին ալժիրյան հասարակության քաղաքական հասունության միտումների մասին, ստեղծվում էին լուրջ նախադրյալներ հակագաղութային պայքարի ծավալման, այդ պայքարին ավելի կազմակերպված բնույթ հաղորդելու համար, ձևավորվում էին տարաբնույթ քաղաքական, ազգային, կրոնական կազմակերպություններ և կուսակցություններ, որոնք հավակնում էին դառնալ ֆրանսիական գաղութային տիրապետությունից ազատագրվելու ալժիրցիների ձգտումների արտահայտիչները և կազմակերպիչները:

Զարգացման այդ միտումները հանգեցրին նրան, որ ալժիրցիներն իրենց սոցիալ–տնտեսական պայմանների բարելավման, իրավունքների ընդարձակման և այլ բարենորոգումների պահանջներից, ի վերջո, անցան ֆրանսիական գաղութային տիրապետությունից ազատագրվելու և ազգային անկախության նվաճման պահանջներին:

Հենց այս երևույթներն ու գործընթացները կազմում են Ալժիրի 1920–1950–ական թվականների պատմության գլխավոր բովանդակությունը:

Ֆրանսիան, արբեցած Առաջին համաշխարհային պատերազմում տարած իր ռազմական հաղթանակներից, ընդհակառակը, փորձում էր ավելի ամրապնդել իր գաղութային տիրապետությունը Ալժիրում, հյուսիսաֆրիկյան այդ առանցքային երկիրն ավելի կապել, նույնիսկ ինտեգրել Ֆրանսիային:

Սակայն Ֆրանսիայի նման քաղաքականությունը պետք է բացատրել ոչ միայն այն իրողությամբ, որ դա բնորոշ է ընդհանրապես բոլոր գաղութատեր երկրներին, այլև այն իրավիճակով, որի մեջ հայտնվեց Ֆրանսիան Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Պատերազմը շատ ծանր նստեց Ֆրանսիայի վրա: Նա, կարելի է ասել, արյունաքամ եղավ, ունեցավ վիթխարի մարդկային և նյութական կորուստներ: Տնտեսությունն ավելի մեծ դժվարությամբ էր դիմանում պատերազմի հետևանքով առաջացած լարվածությանը և ի վիճակի չէր լիովին բավարարել երկրի և բնակչության պահանջները:

Դրան պետք է ավելացնել նաև այն նոր քաղաքական և տնտեսական մարտահրավերները, որոնց Ֆրանսիան հարկադրված էր դիմակայել հետպատերազմյան աշխարհում: Այստեղ պետք է նկատի ունենալ անգլո–ֆրանսիական մրցակցությունը, ԱՄՆ–ի համաշխարհային դիրքերի ամրապնդումը, 1930–ականների սկզբներից արդեն անկասելի դարձած հիտլերյան Գերմանիայի բարձրացումը, նրա տնտեսական և ռազմական հզորացումը, որը Ֆրանսիայում ընկալվում էր որպես մահացու սպառնալիք:

Այսպիսի պայմաններում Ալժիրը պահպանում էր իր քաղաքական կարևորությունը Ֆրանսիայի համար: Դեռ ավելին՝ նա ձեռք բերեց կարևոր աշխարհաքաղաքական նշանակություն հյուսիսաֆրիկյան–միջերկրածովյան տարածաշրջանում՝ հաշվի առնելով այն պարագան, որ սրվեց պայքարը արևմտյան մեծ տերությունների միջև Միջերկրական ծովի ավազանում տիրապետող դիրքեր գրավելու համար: Այդ պայքարում Ալժիրը կարևոր հենակետ էր Ֆրանսիայի համար:

Ալժիրը կարևոր ստրատեգիական հենակետ դարձավ Ֆրանսիայի համար նաև աֆրիկյան մայրցամաքում, մանավանդ եթե հաշվի առնենք, որ այստեղ էին կազմավորվում, վարժեցվում և պատրաստվում Ֆրանսիական գաղութային զորքերը, որոնք այնուհետև անհրաժեշտու-

թյան դեպքում օգտագործվում էին Աֆրիկայի ֆրանսիական գաղութներում: Ալժիրի նշանակությունն ավելի էր կարևորվում, եթե նկատի ունենանք, որ այս գաղութային երկրում էին պատրաստվում համապատասխան կադրեր՝ Աֆրիկայում գտնվող ֆրանսիական բոլոր գաղութների վարչական կառավարման համար:

Ինչ վերաբերում է Ալժիրի տնտեսական նշանակությանը, որի մասին խոսվել է նախորդ հատորում, ապա Առաջին համաշխարհային պատերազմը և նրան հաջորդած տարիները եկան ապացուցելու, որ Ալժիրը շատ կարևոր նշանակություն ուներ Ֆրանսիայի համար և՛ որպես գյուղատնտեսական որոշ մթերքների շտեմարան, և՛ արդյունաբերական հումքի մատակարարող, և՛ որպես ֆրանսիական ապարանքների համար արդյունաբերական շուկա:

Այս ժամանակաշրջանում Ալժիրի նկատմամբ ավելի ու ավելի մեծ հետաքրքրություն էր դրսևորում ֆրանսիական բանկային կապիտալը, որը տարեցտարի մեծացնում էր կապիտալ ներդրումները ալժիրյան տնտեսության, մասնավորապես գյուղատնտեսության, առևտրի և ծովագնացության բնագավառներում:

1920–1930–ական թվականներին Ալժիրը վերածվեց նաև Ֆրանսիային էժանագին բանվորական ուժ մատակարարող երկրի: Տարեկան տասնյակ հազարավոր ալժիրցիներ հեռանում էին իրենց հարազատ վայրերից և աշխատանք փնտրելու հույսով ապաստանում Ֆրանսիայում: Իսկ ֆրանսիական իշխանություններն ամեն կերպ խրախուսում էին էժան բանվորական ուժի ներհոսքը Ֆրանսիա:

Ալժիրը կարևոր նշանակություն ձեռք բերեց Ֆրանսիայի համար նաև որպես յուրահատուկ, այսպես կոչված վերաբնակեցման գաղութ: Դրա իմաստը կայանում էր նրանում, որ ֆրանսիական գաղութային տիրապետության տարիներին Ալժիրում գոյացավ եվրոպական փոքրամասնություն: Դրա միջուկը կազմում էին ֆրանսիացիները, առաջին հերթին Հարավային Ֆրանսիայի այն շրջաններից, որոնք անմիջականորեն հարում էին Միջերկրական ծովին և նրանց համար առանձնապես մեծ դժվարություն չէր ներկայացնում հարմարվել ծովի հակառակ մասում գոյություն ունեցող կյանքի պայմաններին: Վերաբնակյալների կամ կոլոնիստների մեջ զգալի թիվ էին կազմում նաև իսպանացիները:

Այս առումով Ալժիրը տարբերվում էր ֆրանսիական մյուս գաղութներից:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ սկսվել էր միգրացիոն շարժում դիմադարձ ուղղություններով՝ Ալժիրից Ֆրանսիա և Ֆրանսիայից Ալժիր: Սակայն որակական, ավելի ճիշտ՝ սոցիալական առումով նրանք նույնատիպ չէին: Ալժիրից Ֆրանսիա էին մեկնում աղքատ ու գործազուրկ ալժիրցիները, որոնց այդ քայլին ստիպում էին դիմել կարիքն ու աշխատանք գտնելու պահանջը, իսկ Ֆրանսիայից Ալժիր էին մեկնում ունևոր խավի ներկայացուցիչները՝ հարստանալու մղումով: Վերջիններս աստիճանաբար կարևոր դիրքեր գրավեցին Ալժիրի տնտեսության հիմնական ճյուղերում: Մոտ քսան տարվա ընթացքում կոլոնիստների ձեռքն անցավ լրացուցիչ 400 հազ. հա հողատարածք: Եվ եթե 1917 թ. նրանց տիրապետության տակ էր գտնվում 2 մլն 300 հազ. հա, ապա 1940 թ. կոլոնիստներին էր պատկանում արդեն 2 մլն 700 հազ. հա հողատարածք: Նրանց էր պատկանում Ալժիրում կատարված կապիտալ ներդրումների 90%–ը: Կոլոնիստների մենաշնորհը դարձան եկամտաբեր և ղեկավար պաշտոնները: Դրան նպաստեց այն հանգամանքը, որ ֆրանսիական կոլոնիստներն օժտվեցին նույնպիսի իրավունքներով, ինչպես ֆրանսիական քաղաքացիները: Նրանք ստացան ձայնի իրավունք՝ ընտրություններին մասնակցելու համար, իրենց կուսակցությունները և միությունները ստեղծելու իրավունք և այլ արտոնություններ, որոնցից զուրկ էին ալժիրցիները: Դա բացատրվում է ֆրանսիական իշխանությունների հատուկ քաղաքականությամբ, որի առանցքը կազմում էր այն, որ Ֆրանսիան ալժիրցիներին չէր ճանաչում որպես քաղաքացիներ, այլ ընդունում էր որպես հպատակներ: Այդ պատճառով էլ նրանք զրկված էին իրենց քաղաքական կուսակցությունները, արհմիությունները և զանազան այլ միություններն ունենալու իրավունքից:

Ալժիրում գործում էր «Տեղաբնիկների կոդեքսը», որով սահմանված էր, որ գաղութային վարչության բոլոր աշխատակիցները, անկախ նրանց գրված պաշտոնից, տեղաբնիկների, այսինքն՝ արաբ ալժիրցիների նկատմամբ օգտվում էին քաղաքացիական, ոստիկանական և դատական լիիրավ իշխանությամբ: Ալժիրցիները զուրկ էին նման իրավունքներից:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի վրա ևս՝ կապված Ալժիրում ֆրանսիական կոլոնիստների հետ: Տարիների ընթացքում նրանք շատ ուժեղացան և վերածվեցին կազմակերպված յուրահատուկ համայնքի: Նրանք ամրապնդեցին իրենց տնտեսական և քաղաքական դիրքերը ոչ միայն Ալժիրում, այլև սկսեցին ազդել բուն Ֆրանսիայի քաղաքականության վրա, նույնիսկ այն աստիճանի, որ հա-

ճախ նրանք էին թելադրում ֆրանսիական կառավարությանը, թե ինչ պետք է անել Ալժիրում՝ ելնելով իրենց նեղ, կորպորատիվ շահերից: Իսկ դրանք, հնարավոր է, տվյալ պահին հակասության մեջ գտնվեին Ֆրանսիայի արտաքին, այդ թվում և գաղութային քաղաքականության այս կամ այն խնդիրների հետ: Եվ եզակի չէին այն դեպքերը, երբ ֆրանսիական կառավարությունը հարկադրված էր հաշվի նստել նրանց շահերի հետ: Դա, ինչպես ցույց կտրվի աշխատության հետագա մասերում, երբեմն որոշակի բարդություններ էր ստեղծում ինչպես ֆրանսիական կոլոնիստների և ֆրանսիական կառավարության փոխհարաբերություններում, պատճառ դառնում քաղաքական ճգնաժամերի և կառավարությունների տապալման համար, այնպես էլ Ալժիրում ֆրանսիական կառավարության քաղաքականության իրականացման ժամանակ:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ Ֆրանսիան և Ալժիրը միանգամայն տարբեր նպատակներ էին հետապնդում: Եվ եթե հաշվի առնենք նաև Ալժիրում հաստատված ֆրանսիացիների՝ կոլոնիստ գործարարների, խոշոր ու միջին սեփականատերերի, գաղութային վարչության պաշտոնյաների, զինվորական ու ոստիկանական ծառայողների կորպորատիվ շահերը, կարելի է ասել, որ «ալժիրյան դաշտում» գործում էին երեք միտումներ կամ ուժեր, որոնց վեկտորները տարբեր ուղղվածություն ունեին:

Առաջին՝ Ֆրանսիան, որը ձգտում էր ոչ միայն պահպանել, այլև ամրապնդել իր գաղութային տիրապետությունը Ալժիրում՝ այդ նպատակի համար օգտագործելով **Ալժիրի ինտեգրացման տարբերակը:**

Երկրորդ՝ Ալժիրը, որը, չնայած նրանում առկա տարբեր և երբեմն հակառակ քաղաքական, կրոնական, կուսակցական ուժերի առկայությանը, այդուհանդերձ, ներկայացնում էր մի ամբողջություն, որի գլխավոր ազգային–քաղաքական նպատակակետը դարձավ **Ալժիրի անկախ և սուվերեն պետության ստեղծումը:**

Այս երկու՝ ֆրանսիական և ալժիրյան վեկտորները միանգամայն հակադիր էին միմյանց, և նրանց շահերի հաշտության մասին խոսք լինել չէր կարող:

Երրորդ՝ Ալժիրում հաստատված, արդեն խոր արմատներ ձգած և ուժեղ քաղաքական ու տնտեսական դիրքեր նվաճած ֆրանսիական ուժերը, որոնց մենք կանվանեինք **ֆրանսիական կորպորատիվ համախմբում:**

Այս համախմբումը, իհարկե, իր էությամբ, այդուհանդերձ, ֆրանսիական էր և կապված էր մետրոպոլիայի՝ բուն Ֆրանսիայի հետ, և կոպիտ

սխալ կլիներ նրանց հակադրել մի այնպիսի սկզբունքային հարցում, ինչպես Ալժիրում Ֆրանսիայի գաղութային տիրապետության պահպանման և ամրապնդման հարցն էր: Սակայն այդ համախմբումը ձեռք էր բերել հարաբերական ինքնուրույնություն և ձգտում էր, որ Ալժիրին վերաբերող բոլոր հարցերում Փարիզում խորհրդակցեին նրանց հետ, հաշվի առնեին նրանց տեսակետները և շահերը: Նրանք չէին ցանկանում դառնալ Փարիզի սոսկ կամքի կատարողները և ձգտում էին ավելի լայն իրավունքներ ձեռք բերել Ալժիրի հիմնախնդիրների լուծման հարցում և ճնշում էին գործադրում կառավարության վրա: Դա, անշուշտ, որոշակի դժվարություններ էր ստեղծում ֆրանսիական կառավարության համար և սահմանափակում նրա մանևրելու հնարավորությունները:

Մյուս կողմից այդ, այսպես կոչված, երրորդ խումբը կամ ուժը անհամեմատ ավելի կոշտ դիրք էր գրավում ալժիրցիների նկատմամբ, մանավանդ երկրի ապագա կարգավիճակի հարցում: Ֆրանսիական կոլոնիստների կորպորատիվ համախմբումը դեմ էր ինչպես այդ հարցում, այնպես էլ ընդհանրապես Ալժիրին որևէ էական զիջումներ կատարելուն: Նա գաղութային համակարգն իր դասական ձևով պահպանելու ամենամոլի կողմնակիցն էր: Եվ դա կազմում էր Ալժիրում նրանց առօրյա քաղաքականության հիմնաքարը, որը այդ գաղութում լարվածության պահպանման պատճառներից մեկն էր:

Ահա այսպիսին էին ընդհանուր քաղաքական իրավիճակը և զարգացման միտումները Ալժիրում, առանց որոնց հաշվառման անհնար է հավաստի գաղափար կազմել և ճշգրիտ պատկերացում ունենալ Ալժիրի պատմական զարգացման ուղիների վերաբերյալ նորագույն շրջանում՝ ընդհուպ մինչև Ալժիրի անկախության նվաճումը, որը տեղի ունեցավ 1962 թ.:

2. Հակագաղութային գաղափարախոսության ձևավորումը և ազգային անկախության պահանջի առաջադրումը

Հետպատերազմյան շրջանն Ալժիրում նշանավորվեց ոչ միայն սոցիալ–տնտեսական զգալի տեղաշարժերով, այլև ազգային գաղափարախոսության ձևավորումով, որը կոչված էր պատմական վճռորոշ դեր կատարել Ալժիրի նորագույն պատմության մեջ՝ ի մասնավորին ազգային անկախության նվաճման գործում:

Այդ գործընթացին մեծապես նպաստեց նաև այն կարևոր հանգամանքը, որ քաղաքական կյանք մտան նոր սերունդ և ազգային–քաղաքական նոր ղեկավարություն: Նոր սերունդը սկսել էր ձևավորվել դեռևս XIX դարի վերջերին, բայց քաղաքականապես ավելի հասունացավ համաշխարհային երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում, և նրա ծոցից դուրս եկան նոր մտածելակերպով օժտված առաջնորդներ, որոնք գլխավորեցին Ալժիրի ժողովրդի հակագաղութային, ազգային–ազատագրական շարժումը:

Սկզբնական շրջանում այդ գաղափարախոսությունն այնքան էլ հստակ չէր: Նրանում առկա էին զանազան, կարելի է ասել նույնիսկ իրարամերժ ու պղտոր հոսանքներ, որոնք հանդիսանում էին արտացոլումն այն իրողության, որ ալժիրյան հասարակության ներսում գոյություն ունեին տարբեր նպատակներ հետապնդող սոցիալ–դասակարգային խմբավորումներ, իսկ ինքը՝ հասարակությունը, որոնումների մեջ էր և դեռս կոնսոլիդացված չէր:

Ալժիրում հաստատված գաղութային վարչակարգից առաջին դժգոհների և ազգային զգացումների առաջին դրսևորողների մեջ էին, թող տարօրինակ չթվա, ալժիրյան պատերազմի վետերանները: Առաջին համաշխարհային պատերազմում ֆրանսիական բանակում ծառայել էին 173 հազ. ալժիրցիներ, որոնք իրենց արյունը թափել էին Ֆրանսիայի հաղթանակի համար: Հարյուր հազարավոր ալժիրցիներ աշխատանքի էին մեկնել Ֆրանսիա, որը նրանց աշխատուժի կարիքն ուներ: Շատ ալժիրցիներ Ֆրանսիա էին մեկնում նաև ուսանելու համար: Գտնվելով Ֆրանսիայում, համեմատելով Ֆրանսիայում գոյություն ունեցող կյանքը Ալժիրում տեղացիների համար ստեղծված կյանքի պայմանների հետ, շփվելով ֆրանսիացիների, տարբեր խավերի ու մասնագիտությունների մարդկանց հետ՝ նրանք իրենց համար բացահայտեցին, որ Ֆրանսիայում կա կյանքի մի այնպիսի տեսակ, որի մասին իրենք անգամ գաղափար չունեին: Նրանք տեսան, որ ֆրանսիացիների կյանքի մակարդակը և քաղաքական իրավունքներն անհամեմատ բարձր են, քան ալժիրցիներինը: Այդ հանգամանքը նրանց մոտ խոր ցավ ու վրդովմունք առաջացրեց: Նրանց վրդովեցնում էր այն հանգամանքը, որ Ալժիրում ֆրանսիական կոլոնները և նրանց ձեռքում գտնվող վարչական ու ոստիկանական իշխանությունները հրաժարվում էին նման իրավունքներ վերապահել և կյանքի նման պայմաններ ստեղծել իրենց՝ ալժիրցիների համար:

Ալժիրում դեռևս XIX դարի վերջերից սկսվել և XX դարի 10–ական թվականներին արդեն ձևավորվել էր սոցիալական մի խավ, որը կոչվում էր **էվոլվների**, այսինքն՝ զարգացածների կամ էվոլյուցիայի ենթարկվածների խավ: Դրանք միջին դասակարգի, անգամ մեծահարուստ մուսուլմանական ընտանիքներից դուրս եկածներն էին, որոնք ստացել էին լավ ֆրանսիական կրթություն և հարում էին ազատամիտ գաղափարների: Այդ ոչ մեծաթիվ խավը կազմեց «Երիտասարդ ալժիրցիների» կորիզը: Նրանք Ֆրանսիայի հետ ինտեգրացման կողմնակից էին՝ հայտարարելով, որ «իրենք ֆրանսիացիներ, ինչպես նաև մուսուլմաններ են»: Նրանք պահանջում էին ալժիրցիներին շնորհել լրիվ քաղաքացիություն, արտոնյալ վերաբերմունք դրսևորել Ալժիրի մտավորականների նկատմամբ, վերացնել անհավասար հարկերը, բացել ավելի շատ ազգային դպրոցներ, պաշտպանել տեղական՝ ալժիրյան սեփականությունը և այլն: Նրանք հանդես էին գալիս ֆրանսիական գաղութային քաղաքականությունը վերանայելու և բարեփոխելու պահանջներով: Ընդ որում՝ «Երիտասարդ ալժիրցիներն» այդ հարցերի վերաբերյալ շատ հաճախ խնդրագրեր էին ներկայացնում Ֆրանսիայի կառավարությանը:

Եվ եթե ֆրանսիական իշխանությունները նախկինում խուլ էին նման պահանջների նկատմամբ, ապա Առաջին համաշխարհային պատերազմից հետո նրանք այլևս չէին կարող անուշադրության մատնել դրանք: Այստեղ իր դերը խաղաց նաև այն պարագան, որ ալժիրցիները պատերազմի ժամանակ ֆրանսիացիների կողքին մարտնչել էին նրա թշնամիների դեմ, արյուն թափել, անգամ իրենց կյանքը զոհել հանուն Ֆրանսիայի. մի հանգամանք, որի հետ ֆրանսիական իշխանությունները ինչ–որ չափով հարկադրված էին հաշվի նստել:

Այսպիսի պայմաններում Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոն հարկադրված էր դիմել որոշ զիջումների: Նախ՝ նա Ալժիրի գլխավոր նահանգապետ նշանակեց Շառլ Ժոնարին, որը Ալժիրում բարեփոխումներ կիրառելու կողմնակից էր, գտնելով, որ այնտեղ հաստատված վարչակարգը չափազանց խիստ է և հիմնված է տեղացիների և կոլոնների միջև խտրականության սկզբունքի վրա: Նա 1919 թ. ընդունեց Ալժիրում բարեփոխումներ կիրառելու մասին օրենք, որը պատմության մեջ մտել է որպես «Ժոնարի օրենք»: Այդ օրենքը պարունակում էր երկու կարևոր նորամուծություն՝ ընտրական իրավունքի տրամադրում ալժիրցիներին և ֆրանսիական, ավելի լայն առումով՝ եվրոպական կոլոնիստ-

ներից ու տեղացի ալժիրցիներից գանձվող հարկերի տարբերությունների վերացում:

Խոսելով ընտրական իրավունքի մասին՝ պետք է նշել, որ այն հակասական էր: Ըստ Ժոնարի օրենքի, ընտրական իրավունք տրվեց մուսուլման բնակչությանը, ինչը դրական քայլ էր, սակայն ոչ բոլորին: Այդ իրավունքից գլխավորապես օգտվում էին ալժիրյան հասարակության ունևոր խավերը, առաջին հերթին՝ տեղական պաշտոնյաները, գործարարները, հողատերերը և այլք:

Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսք չկար քաղաքացիության, ազգային դպրոցների թվաքանակը ավելացնելու կամ գաղութային քաղաքականությունը վերանայելու մասին: Այդ պատճառով էլ 1919 թ. կիրառված ռեֆորմները չբավարարեցին ալժիրցիներին: Ալժիրցիներ ասելով տվյալ դեպքում նկատի ունենք ոչ միայն ժողովրդական զանգվածներին, հասարակ մարդկանց, այլև ունևոր խավին: Վերջիններս դժգոհ էին, որ մուսուլմանական ժողովրդական զանգվածներին, թեկուզ և սահմանափակ չափերով, մոտ 425 հազ. մարդու, ընտրական իրավունք էր տրվել:

Փաստորեն, այդ ռեֆորմները ոչ թե հանգստություն բերեցին Ալժիրին, այլ առիթ դարձան հակագաղութային պայքարի նոր ալիքի բարձրացմանը: Ալժիրյան ազգային–հայրենասիրական ուժերի պայքարը գլխավորեց էմիր Խալիդ իբն Հաշիմը, որը XIX դարում ֆրանսիական գաղութարարների դեմ ծավալված երկարատև և հերոսական պայքարի առաջնորդ Աբդ ալ–Կադիրի թոռն էր: Նա մեծ հեղինակություն էր վայելում ալժիրցիների նոր սերնդի մոտ և պատկանում էր «Երիտասարդ ալժիրցիների» խմբին: Նա հաղթեց 1920 թ. Ալժիրում կայացած տեղական մարմինների ընտրություններում և ընտրվեց Ալժիր քաղաքի մունիցիպալիտետի՝ քաղաքապետարանի անդամ: Խալիդ իբն Հաշիմն ուներ հետևողական հակագաղութային դիրքորոշում, վերին աստիճանի գործունյա անձնավորություն էր և օժտված էր հռետորական տաղանդով: Հավանաբար այդ հատկանիշների պատճառով 1920 թ. նրա մանդատը չեղյալ հայտարարվեց և նա զրկվեց Ալժիր քաղաքի մունիցիպալիտետում գործելու հնարավորությունից:

Սակայն Խալիդ իբն Հաշիմը չդադարեցրեց պայքարը՝ որդեգրելով գործունեության նոր տակտիկա: Նա հանդես էր գալիս զանազան հավաքներում ու ժողովներում և ալժիրցիներին ներկայացնում իր տեսակետները: Նա շատ հաճախ նամակներով կամ խնդրագրերով դիմում էր Ֆրանսիայի Ազգային ժողովին, կառավարությանը, անգամ պրեզի-

դենտին: Նրա կողմից առաջադրվող պահանջները հանգում էին հետևյալին. «Տեղացիների մասին օրենքի» վերացում, ալժիրցիների ներկայացուցչություն ֆրանսիական պառլամենտում, ֆրանսիական սոցիալական և աշխատանքային օրենսդրության տարածում ալժիրցիների վրա, մամուլի և միությունների ազատության երաշխավորում, պարտադիր ուսուցում, հավասար իրավունքների տրամադրում ալժիրցիներին ֆրանսիացիների հետ՝ զինվորական ծառայության ընթացում, եկեղեցին պետությունից անջատելու վերաբերյալ օրենքի կիրառում Ալժիրում և այլն:

Նա իր այս պահանջները խնդրագրի տեսքով ներկայացրեց Ֆրանսիայի վարչապետ Էդվարդ Էրիոյին:

Խալիդ իբն Հաշիմի և նրա կողմնակից «Երիտասարդ ալժիրցիների» սույն պահանջները նպատակաուղղված էին Ալժիրում գաղութատիրության դիրքերի թուլացմանը, ալժիրյան հասարակության դեմոկրատացմանը և ալժիրցիների ազգային ու քաղաքական ինքնագիտակցության զարգացմանը: Դա իր ժամանակի համար առաջադիմական քայլ էր:

Սակայն ֆրանսիական իշխանությունները հրաժարվեցին բավարարել այդ իրավացի և համեստ պահանջները, իսկ Խալիդ իբն Հաշիմին արտաքսեցին Ալժիրից:

Բայց պայքարը շարունակվեց, որը գլխավորեց Տեղական ընտրյալների ֆեդերացիան (ՏԸՖ), որը ձևավորվել էր 1926–1927 թթ. «Երիտասարդ ալժիրցիների» կողմից, որոնք սկզբնական շրջանում իրենց համարում էին Խալիդ իբն Հաշիմի կողմնակիցներ: Սակայն ՏԸՖ–ն, հատկապես նրա նախագահ Մուհամմադ Բենջալուլը, այդ հարցում, այսինքն՝ Խալիդ իբն Հաշիմի հայացքներին հետևելու խնդրում, հետևողական չգտնվեց, և նրա ծրագրային պահանջներում գերակայությունը տրվեց ինտեգրացիայի և ուծացման պահանջներին: Մասնավորապես, նրանք պահանջում էին էվոլվների ձուլում ֆրանսիական համայնքին, լիակատար քաղաքացիություն և Ալժիրի մշակութային ինտեգրացիա՝ որպես Ֆրանսիայի նահանգներից մեկը: Մուհամմադ Բենջալուլն այնքան հեռուն գնաց, որ անգամ հայտարարեց, թե ինքը խոսում և մտածում է ֆրանսերեն, և «ինքը Ֆրանսիայի ծառան է»:

Ճիշտ է, այս հարցում լինում էին որոշ վերապահումներ: Մասնավորապես, ֆեդերացիան գտնում էր, որ ինտեգրացիան պետք է լիներ աստիճանաբար՝ էվոլյուցիոն ճանապարհով: Բացի այդ, ՏԸՖ–ն, պահանջելով լրիվ կամ լիակատար քաղաքացիություն, միաժամանակ շեշ-

տում էր, որ ալժիրցիները չպետք է հրաժարվեն իրենց մուսուլմանական ինքնությունից կամ, ինչպես նշվում էր, «անհատական ստատուսից»:

Ինտեգրացման և ուծացման պահանջների հետևում կանգնած էին ալժիրյան տեղական այն ուժերը, առաջին հերթին՝ առևտրականները և ծնավորվող ազգային բուրժուազիան, որոնք կապված էին ֆրանսիական գործարարների հետ և իրենց տնտեսական բարգավաճումը տեսնում էին ինտեգրացման շրջանակներում: Այդ տեսակետի կրողներ էին հանդիսանում մտավորականության որոշ ներկայացուցիչներ, որոնք կրթություն էին ստացել Ֆրանսիայում, ֆրանսիական դպրոցներում ու ինստիտուտներում, և այս կամ այն չափով իրենց համարում էին ֆրանսիական արժեքների կրողներ:

ՏԸՖ–ի մյուս պահանջներից ուշադրության էին արժանի՝ հավասար վարձատրություն հավասար աշխատանքի համար, Ֆրանսիա մտնելու և այնտեղից դուրս գալու սահմանափակումների և «տեղացի» կատեգորիայի վերացում և այլ պահանջներ: Նրանք կրկին մտցրեցին ընտրական ռեֆորմի հարցը՝ գտնելով, որ այն, ինչ տրվել էր 1919 թ. Ժոնարի օրենքով, միանգամայն անբավարար էր:

Ալժիրի հակագաղութային շարժման մեջ և ազգային–հայրենասիրական կազմակերպությունների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում «Հյուսիսային Աֆրիկայի աստղ» կազմակերպությունը: Նա ստեղծվեց ոչ թե Ալժիրում, այլ Փարիզում, 1926 թ. ալժիրցի մտավորականների և ուսանողների կողմից և ֆրանսիական կոմունիստների օգնությամբ: Նրա ղեկավարների մեջ իր քաղաքական հայացքներով և եռանդուն գործունեությամբ աչքի էր ընկնում Ահմադ Մեսալի Հաջը: Նա Ֆրանսիայում սովորող ուսանող էր, որը, կապերի մեջ մտնելով ֆրանսիական կոմունիստների հետ, դեռևս 1924 թ. հիմնել էր օրաթերթ:

Սկզբնական շրջանում այս կազմակերպությունն իր գլխավոր նպատակը համարում էր Ֆրանսիայում գտնվող հյուսիսաֆրիկյան բանվորների մեջ աշխատանք տանելը, մասնավորապես համակարգել նրանց գործունեությունը և պաշտպանել «Հյուսիսային Աֆրիկայի մուսուլմանների նյութական, բարոյական և սոցիալական շահերը»: Հատկանշական է, որ նրա պատվավոր նախագահ ընտրվեց Ալժիրից վտարված Խալիդ իբն Հաշիմին:

«Հյուսիսային Աֆրիկայի աստղ» կազմակերպությունը որոշ զարգացումներ ապրեց և եղավ առաջինը, որը առաջադրեց Ֆրանսիայից Ալժիրի անկախության պահանջը: Ահա այդ առումով այս կազմակեր-

պության հրապարակ իջնելը կարելի է համարել շրջադարձային Ալժիրի ազգային–ազատագրական շարժման մեջ: Անկախության պահանջի հետ միասին «Աստղը», որի գլխավոր քարտուղարն էր դարձել Ահմադ Մեսալի Հաջը, հանդես էր գալիս մի շարք սոցիալ–տնտեսական և քաղաքական առաջադիմական պահանջներով, որոնց մեջ գլխավորներն էին՝ մամուլի և միությունների ազատություն, կալվածատիրական սեփականության բռնագրավում, ալժիրյան մասշտաբներով արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների ազգայնացում, մանր և միջին սեփականատերերի իրավունքների պաշտպանություն, ընդհանուր ընտրական իրավունքի սահմանում, արաբական դպրոցների հիմնում և այլ պահանջներ:

Ակնհայտ է, որ «Հյուսիսային Աֆրիկայի աստղ» կազմակերպության պահանջներն իրենց բնույթով ամենաարմատականն էին, և, ամենակարևորը, նա Ալժիրի անկախության հարցը մտցրեց քաղաքական պայքարի օրակարգում:

Նման կազմակերպության գոյությունը չէր կարող աննկատ մնալ և 1929 թ. նրա գործունեությունը ֆրանսիական իշխանությունների կողմից արգելվեց: Նա, փաստորեն, անցավ ընդհատակյա գործունեության: Սակայն իր լեգալ աշխատանքները վերսկսեց 1932 թ., նոր՝ «Փառապանծ հյուսիսաֆրիկյան աստղ» անվան ներքո և սկսեց հրատարակել «Ալ–Ումմա» թերթը, որը մեծ տարածում ուներ ալժիրցիների շրջանում: Բավական է նշել, որ նրա տպաքանակը 1934 թ. հասնում էր մոտ 44 հազարի, որը Ալժիրի նման մի երկրի համար բնավ էլ փոքր թիվ չէր:

Այդ ընթացքում փոփոխություններ տեղի ունեցան Ահմադ Մեսալի Հաջի քաղաքական հայացքներում: Նա տարվեց լիբանանյան դրուզների գաղափարախոս և ղեկավար Շակիբ Արսլանի ազգայնական գաղափարներով, որի հետևանքով նրա կոմունիստական հայացքները ստացան «ազգայնական գունավորում»: Դա առիթ հանդիսացավ, որ ֆրանսիական կոմունիստներն ուժեղ քննադատության ենթարկեին նրան ու նրա ղեկավարած «Աստղ» կազմակերպությունը:

Այս ժամանակահատվածում ալժիրյան քաղաքական ասպարեզում գործող կազմակերպություններից անհրաժեշտ է անդրադառնալ նաև երկուսին:

Առաջինը «Ալժիրյան ուլեմների ասոցիացիան» էր, որը հիմնվել էր 1931 թ.: Ուլեմները աստվածաբան գիտնականներ էին, որոնք ինչպես Ալժիրում, այնպես էլ արաբական մյուս երկրներում, մշտապես մեծ հե-

տաքրքրություն են ցուցաբերել բացի կրոնական հարցերից, նաև ազգային և քաղաքական խնդիրների նկատմամբ, իսկ երբեմն էլ ակտիվորեն մասնակցել քաղաքական շարժումներին:

Ասոցիացիան ուղղակի հակադրվում էր Տեղական ընտրյալների Ֆեդերացիային, որը, ինչպես նշվել է, ալժիրցիների ոչ միայն ինտեգրացման, այլև Ֆրանսիայի հետ ձուլման ջատագովն էր: Ուլեմները, ընդհակառակը, հանդես էին գալիս հանուն ալժիրյան ազգային մշակույթի և ինքնության պահպանման, արաբերեն լեզվով լուսավորության ու կրթության տարածման՝ ընդդեմ Ֆրանսիացիների և նրանց ալժիրյան համախոհների ասիմիլյատորական քաղաքականության: Պատահական չէր, որ նրանց հիմնական կարգախոսներից մեկը դարձավ «Սովորե՛ք» կոչը: Նրանք երկրի տարբեր վայրերում բացում էին դպրոցներ, որտեղ ուսուցումը տարվում էր արաբերենով, իսկ դասավանդվող առարկաների մեջ հիմնականը ժամանակակից աշխարհիկ առարկաներն էին:

Միաժամանակ ասոցիացիան և ընդհանրապես ուլեմները պայքարում էին նաև մուրաբուտների եղբայրության դեմ: Դա դեռևս միջնադարում ստեղծված կրոնառազմական եղբայրություն էր, որն իր մասնաճյուղերն ուներ Հյուսիսասային Աֆրիկայի արաբական երկրներում, բայց հատկապես ազդեցիկ էր Ալժիրում: Բառի ծագումն արաբական է (եզ.՝ մուրաբիտ, հոգն.՝ մուրաբիտուն)՝ կապված այն իրողության հետ, որ ասկետ արաբները, որոնք իրենց պատրաստում էին պատերազմի՝ հանուն հավատի, ապրում էին զանազանատիպ ամրություններում՝ ռիբատներում: Այստեղից էլ նրանց անվանումը՝ մուրաբիտ, այսինքն՝ ամրոցաբնակ: Սակայն հետագայում՝ ժամանակի ընթացքում, այդ բառը նոր իմաստ ձեռք բերեց, և մուրաբիտ կամ մարաբիտ սկսեցին կոչել մուսուլմանական տեղական սրբերին, որոնք առաջ էին քաշվում կամ հռչակվում այդ եղբայրության կողմից: Մուրաբիտների ընտանիքները, որոնք տարիների ընթացքում անընդհատ աճում էին, ըստ էության, վերածվել էին սոցիալական յուրատեսակ խավի և ազդեցիկ դիրք էին գրավում հասարակության կառավարող աստիճանակարգում:

Մուրաբիտների գործունեության արդյունքում լայն տարածում գտան սնոտիապաշտությունը, մոգությունը և կախարդությունը:

Ալժիրյան ուլեմների ասոցիացիան իր պայքարը մուրաբիտների դեմ սկսեց սնոտիապաշտության, կեղծ սրբերի պաշտամունքի դեմ պայքարի, իսլամը մագիայից մաքրելու կարգախոսով: Իսկ իրականում դա ուլեմների պայքարն էր հետամնաց ու հետադիմական մուսուլմանական

հոգևոր առաջնորդների դեմ, որոնք բավականին մեծ ազդեցություն ունեին հիմնականում անգրագետ կամ թերուս ալժիրցիների վրա: Դա հարցի մի՝ այսպես կոչված հոգևոր–կրոնական կողմն էր: Հարցի մյուս՝ քաղաքական կարևորությունը կայանում էր նրանում, որ մուրաբիտները սերտորեն կապված էին ֆրանսիական գաղութային իշխանությունների հետ և պաշտպանում էին նրանց: Իսկ ֆրանսիական գաղութային իշխանություններն էլ պաշտպանում էին մուրաբիտներին: Ուլեմները գտնում էին, որ եթե թուլացնեն մուրաբիտների ազդեցությունը խավարի մեջ խարխափող ալժիրյան գյուղացիների վրա, ապա դա կնպաստի ֆրանսիական գաղութարարների դիրքերի թուլացմանն Ալժիրում:

Մյուս կազմակերպությունը, որը գործում էր քաղաքական ասպարեզում՝ Ալժիրի կոմունիստական կուսակցությունն էր: Կարծում ենք, անհրաժեշտ է անդրադառնալ նաև նրա գործունեությանը Ալժիրի քաղաքական ներկապնակի մասին ավելի լիակատար պատկերացում կազմելու տեսանկյունից, մանավանդ որ ալժիրյան որոշ ազգային կազմակերպություններ, միություններ և ուժեր հաճախ են համագործակցել նրա հետ և միասնական ճակատ կազմել:

Առաջին ալժիրյան կոմունիստական սեկցիաները ձևավորվել են 1920–ական թվականների սկզբներին, իսկ 1924 թ. կազմավորվել է Ֆրանսիական կոմունիստական կուսակցության Ալժիրյան ֆեդերացիան, որի անդամների մեծամասնությունը կազմում էին եվրոպական բանվորները: Ընդհանրապես Ալժիրի կոմունիստների կապը Ֆրանսիական կոմունիստական կուսակցության հետ եղել է կարևոր և մշտական: Նրանք պարբերաբար օգնություն և ուղղություն են ստացել նրանից: 1934 թ. Ալժիրի կոմունիստների ֆեդերացիան դառնում է ինքնուրույն կոմունիստական կուսակցություն, և սկսվում է ալժիրցի բանվորների թվաքանակի աճը նրա շարքերում:

Ալժիրի կոմունիստական կուսակցությունը, ինչպես ընդունված էր միջազգային կոմունիստական շարժման մեջ, ուներ մինիմում և մաքսիմում ծրագրեր: Մինիմում ծրագիրը պահանջում էր ալժիրցիներին տալ դեմոկրատական ազատություններ, բարելավել աշխատավորների սոցիալական դրությունը, դադարեցնել հալածանքներն ու բռնությունները հայրենասիրական ուժերի նկատմամբ, կիրառել արդարացի հարկային քաղաքականություն: Իսկ մաքսիմում ծրագրի գլխավոր պահանջը Ալժիրի ազգային անկախությունն էր:

Ֆրանսիական գաղութային իշխանությունները, ի տես ալժիրյան քաղաքական տարբեր կազմակերպությունների ակտիվացման, դիմեցին բռնությունների և հալածանքների: 1933 թ. նրանց որոշմամբ արգելվեց ուլեմներին՝ մզկիթներն օգտագործել իրենց քաղաքական քարոզչության համար: Իսկ 1935 թ. ընդունվեց մեկ այլ որոշում՝ «Ռենյեի դեկրետը», որով տուգանքներ և բանտարկություն էր նախատեսվում բնիկներին, այսինքն՝ ալժիրցիներին՝ Ֆրանսիայի սուվերենության դեմ ուղղված գործողություններ հրահրելու համար:

3. «Բլյում–Վիոլետ պլանը»

Իրադրությունն Ալժիրում 1930–ականների կեսերին բավականին լարված էր: Ասպարեզում հայտնված ալժիրյան աջակողմյան, չափավոր, պահպանողական, արմատական և այլ քաղաքական, ազգային և կրոնական բնույթի կազմակերպությունները յուրաքանչյուրը յուրովի դժգոհ էր իրավիճակից և իր գործունեությամբ կամա թե ակամա նպաստում էր հակագաղութային շարժման ուժեղացմանը: Երկրում կուտակվել էր խոր դժգոհություն՝ ուղղված ֆրանսիական իշխանությունների և նրանց կամակատար տեղական իշխանությունների դեմ:

Լուրջ իրադարձություններ էին ծավալվել նաև բուն Ֆրանսիայում, որի գագաթնակետը հանդիսացավ ժողովրդական ճակատի հաղթանակը Ֆրանսիայում 1936 թ.՝ սոցիալիստ Լեոն Բլյումի գլխավորությամբ: Ազգային ճակատի կառավարությունը ձեռնարկեց առաջադիմական քաղաքական, տնտեսական և սոցիալական բնույթի մի շարք քայլեր, այդ թվում և գաղութներում տարվող քաղաքականության բնագավառում: Այս ոլորտում նախատեսվում էին որոշ բարեփոխումներ, որոնց իրականացումը վարչապետ Լեոն Բլյումը դրեց պետական նախարար և իր համախոհ Մորիս Վիոլետի վրա:

Ալժիրում ուշադրությամբ և սպասելիքներով հետևում էին իրադարձությունների զարգացմանը Ֆրանսիայում: Ալժիրյան ուլեմների ասոցիացիան նախաձեռնություն ցուցաբերեց Տեղական ընտրյալների ֆեդերացիայի և Ալժիրի կոմունիստական կուսակցության հետ համագործակցելու հարցում՝ նպատակ ունենալով մշակել համատեղ պահանջներ Ազգային ճակատի կառավարությանը ներկայացնելու համար: ՏԸՖ–ն և ԱԿԿ–ն դրականորեն արձագանքեցին այդ առաջարկությանը, և նրանց ջանքերով 1936 թ. հունիսի 7–ին Ալժիր քաղաքում գումարվեց

Ալժիրյան մուսուլմանների առաջին կոնգրեսը, որը դարձավ մշտական գործող մարմին:

Ճիշտ է, այդ երեք ուժերի միջև կային տարաձայնություններ, անգամ սկզբունքային, որի մասին նշվել է, այդուհանդերձ, նրանք որոշեցին իրենց ջանքերը համատեղել աննպիսի հարցերի շուրջը, որոնք ունեին ընդհանուր դեմոկրատական բնույթ և կարող էին ծառայել գաղութային վարչակարգի թուլացմանն ու ալժիրցիների դրության բարելավմանը: Դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ վերոնշյալ երեք ուժերը Ալժիրյան մուսուլմանական կոնգրեսին մասնակից չդարձրեցին «Հյուսիսային Աֆրիկայի աստղ» կազմակերպությանը և նրա ղեկավար Ահմադ Մեսալի Հաջին՝ համարելով նրա դիրքորոշումը չափազանց արմատական:

Կոնգրեսն ընդունեց մի ծրագիր, որի մեջ ներառված էին ալժիրցիների մի շարք քաղաքական, տնտեսական և սոցիալական պահանջներ՝ Լեոն Բլյումի կառավարությանը ներկայացնելու համար: Այդ պահանջներից ամենակարևորներն էին՝ Ալժիրի և Ֆրանսիայի քաղաքական ինտեգրում, արտակարգ ռեժիմ մտցնելու վերաբերյալ օրենքի վերացում, ֆրանսիական քաղաքացիություն ընդունող մուսուլմանների անձնական իրավական կարգավիճակի պահպանում, Ալժիրում եվրոպական և մուսուլմանական կրթական համակարգի միաձուլում, կրթության և մամուլի բնագավառում արաբերեն լեզվի օգտագործման ազատություն, հավասար վճարում հավասար աշխատանքի համար, ագրարային ռեֆորմի կիրառում, ընդհանուր ընտրական օրենքի հաստատում և այլն:

Կոնգրեսի պատվիրակությունը մեկնեց Փարիզ՝ իր առաջարկությունները ներկայացնելու համար: Պատվիրակությանն ընդունեցին վարչապետ Բլյումը և Վիոլետը, որոնք համատեղ քննարկելով Կոնգրեսի կողմից հաստատված պահանջները՝ ընդհանուր առմամբ դրական վերաբերմունք դրսևորեցին՝ ընդգծելով, որ դրանց մեծ մասն ընդունելի է իրենց համար:

Մորիս Վիոլետը մշակեց առաջարկությունների մի փաթեթ՝ հաշվի առնելով Ալժիրի մուսուլմանական կոնգրեսի մի շարք ցանկությունները: Նախատեսվում էր ալժիրցիներին տրամադրել որոշ դեմոկրատական ազատություններ, մասնավորապես նրանց տրվում էր իրենց կազմակերպությունները, միությունները և կուսակցություններն ունենալու իրավունք: Ալժիրցիները կարող էին ազատորեն միավորվել իրենց քա-

ղաքական կուսակցություններում և ծավալել հրապարակային գործունեություն:

Վիոլետի ծրագրի ամենակարևոր կետերից մեկը ալժիրցիների զգալի մասին ֆրանսիական քաղաքացիություն տալու նախաձեռնությունն էր: Նախատեսվում էր սկզբնական փուլում ֆրանսիական քաղաքացիություն շնորհել, ֆրանսիացիների հետ հավասար քաղաքական իրավունքներով, Ալժիրի մուսուլմանական որոշ խավերի՝ համալսարանական կրթություն ունեցողներին, ընտրովի պաշտոնյաներին, զինվորական սպաներին, պրոֆեսիոնալ մասնագետներին և համանման այլ խավերի ներկայացուցիչներին: Նրանք ստանալու էին նաև ընտրական իրավունքներ: Նախատեսվում էր անհապաղ քաղաքացիություն շնորհել և ընտրական իրավունք տալ 21 հազ. Ալժիրի մուսուլման քաղաքացիների, իսկ այնուհետև յուրաքանչյուր տարի քաղաքացիություն շնորհել մի քանի հազար մարդու:

Ինչպիսի՞ արձագանք գտավ «Վիոլետի պլանը» Ալժիրում:

Այդ պլանի պաշտպանությամբ հանդես եկան էվոլվները, Տեղացի ընտրյալների ֆեդերացիան և նրանց ղեկավարներ Մուհամմադ Բենջալուլն ու Ֆարհաթ Աբբասը: Նրանք դա համարում էին իրենց հաղթանակը՝ դիտելով այդ ծրագիրը որպես կարևոր քայլ իրենց հիմնական ծրագրային պահանջի՝ Ֆրանսիայի հետ Ալժիրի ինտեգրման իրականացման ուղղությամբ:

Այդ ծրագիրը հավանության արժանացավ նաև Մուսուլմանական կոնգրեսի մեջ միավորված Ալժիրի ուլեմների ասոցիացիայի և կոմունիստական կուսակցության կողմից:

Սակայն Վիոլետի կողմից ներկայացված ծրագիրն ունեցավ նաև իր ուժեղ ընդդիմադիրները՝ քննադատության ենթարկվելով Ալժիրի թե՛ ձախ և թե՛ աջակողմյան, հետադիմական ուժերի կողմից: Խիստ քննադատությամբ հանդես եկավ Ահմադ Մեսալի Հաջը: Նա Վիոլետին մեղադրում էր Ալժիրի ժողովրդի շարքերում պառակտում մտցնելու մեջ՝ նրա էլիտային բաժանելով զանգվածներից: Ընդհանրացնելով իր մեղադրանքները՝ նա «Վիոլետի պլանը» համարում էր «գաղութարարության գործիք»: Դրանով իսկ Ահմադ Մեսալի Հաջը և նրա ղեկավարած կազմակերպությունը հակադրվեցին ոչ միայն Ֆրանսիայի ժողովրդական ճակատին և Լեոն Բլյումի կառավարության քաղաքականությանը, այլև Ալժիրի մուսուլմանական կոնգրեսի մեջ միավորված ալժիրյան ուժերին:

«Վիոլետի պլանը» խիստ հարձակման ենթարկվեց Ալժիրի ֆրանսիական բնակիչների՝ կոլոնների, մասնավորապես նրանց վերնախավի կողմից, որոնց ձեռքում էր գտնվում տեղական իշխանությունը: Նրանց համար անընդունելի էր Ալժիրի մուսուլմաններին աստիճանաբար ֆրանսիական քաղաքացիություն շնորհելու քաղաքականությունը: Ալժիրում հաստատված եվրոպացիների համար անընդունելի էր այն հանգամանքը, որ Ալժիրի մուսուլմաններն իրավունք էին ստանում միավորվել իրենց քաղաքական կուսակցությունների և արհեստակցական միությունների մեջ, որը անխուսափելիորեն հանգեցնելու էր նրանց պայքարի ուժեղացմանը հանուն իրենց քաղաքական իրավունքների և սոցիալ–տնտեսական շահերի:

Այս ուժերն իրենց դաշնակիցներն ունեցան Ֆրանսիայում, այդ թվում և Ֆրանսիայի պառլամենտում՝ ի դեմս երկրի պահպանողական և հետադիմական ուժերի, որոնք հանդես էին գալիս ընդհանրապես ժողովրդական ճակատի և Լեոն Բլյումի կառավարության կողմից կիրառվող բարեփոխումների քաղաքականության դեմ, այդ թվում և ֆրանսիական գաղութներում: Հենց այս ալժիրյան–ֆրանսիական միացյալ հետադիմական ուժերին 1938 թ. հաջողվեց տապալել «Բլյում–Վիոլետ ծրագիրը»:

Այդ հանգամանքը նոր իրադրություն ստեղծեց Ալժիրում: Կանխատեսելով դեպքերի հետագա աննպաստ զարգացումը՝ Ահմադ Մեսալի Հաջը, որը բանտից արձակվել էր 1936 թ. և դեռևս 1937 թ. հեռացել Փարիզից, վերադառնալով Ալժիր, քաղաքական լայն գործունեություն ծավալեց անմիջապես ալժիրյան միջավայրում, իր ուշադրությունը կենտրոնացրեց ալժիրյան բանվորների ու գյուղացիների շրջանում տարվող աշխատանքների վրա: Հենց Ալժիրում նա իշխանությունների կողմից արգելված «Հյուսիսային Աֆրիկայի աստղի» փոխարեն հիմնեց նոր քաղաքական կուսակցություն՝ Ալժիրի ժողովրդական կուսակցությունը՝ ԱԺԿ: Շատ կարճ ժամանակահատվածում այդ կուսակցությունը բավականին մեծ հեղինակություն ձեռք բերեց ալժիրցիների շրջանում, մանավանդ նրա այն խավերի մոտ, որոնք կողմնակից էին ավելի հետևողական պայքարի: Իսկ քանի որ ԱԺԿ–ն պահանջում էր խզել կապերը Ֆրանսիայի հետ և կանգնած էր Ալժիրի անկախության դիրքերում, ապա ալժիրցիների այդ խավերը ի դեմս ԱԺԿ–ի տեսնում էին իրենց շահերի արտահայտչին:

ԱԺԿ–ն կազմակերպեց մի շարք բազմամարդ ցույցեր ընդդեմ ֆրանսիական գաղութային տիրապետության՝ պահանջելով Ալժիրի

անկախությունը: Ահմադ Մեսալի Հաջը և կուսակցության մյուս ականավոր ղեկավարները ձերբակալվեցին և նետվեցին բանտ, իսկ կուսակցությունը 1939 թ. արգելվեց:

1938 թ.՝ Վիոլետի պլանի ձախողումից և ֆրանսիական հետադիմության հարձակումների սաստկացումից հետո, տրոհվեց և դադարեց գոյություն ունենալուց նաև Մուսուլմանական կոնգրեսը:

Փոփոխություններ տեղի ունեցան նաև ՏԸՖ–ի, այդ թվում և նրա ղեկավարի՝ Ֆարհաթ Աբասի դիրքորոշումների մեջ: Ֆրանսիական հետադիմական ուժերի կողմից Վիոլետի պլանի տապալումից հետո Ֆարհաթ Աբասը հրաժարվեց էվոլվների ձուլման և Ֆրանսիայի հետ Ալժիրի լրիվ ինտեգրման հայեցակարգից և որդեգրեց նոր քաղաքականություն՝ Ալժիրի զարգացում՝ Ֆրանսիայի հետ սերտ համագործակցությամբ: Սակայն այժմ նա այդ «սերտ համագործակցությունը» նույնպես չէր ընդունում առանց վերապահումների: Նա գտնում էր, որ այդ դեպքում նա Ալժիրը պետք է «պահպանի իր սեփական ֆիզիոնոմիան, իր լեզուն, իր սովորույթները, իր ավանդույթները»:

Ահա այսպիսին էր դրությունը Ալժիրում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի վաղորդայնին:

II. ԱԼԺԻՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1939–1945 թթ.)

1. Սոցիալ–տնտեսական վիճակը և քաղաքական իրադրությունը Ալժիրում Վիշիի կառավարման շրջանում (1940–1942 թթ.)

Ալժիրը 1939 թ. սեպտեմբերի 1–ին սկսված Երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ մտավ Ֆրանսիայի գաղութի կարգավիճակով: Այդ պատերազմում նա ինքնուրույն դերակատարում չուներ և, որպես գաղութ, չէր էլ կարող ունենալ:

Պատերազմը սկսվեց երկու հակադիր իմպերիալիստական ռազմաքաղաքական բլոկների միջև: Մի կողմում Անգլիան և Ֆրանսիան էին, իսկ մյուս կողմում՝ ֆաշիստական Գերմանիան ու ֆաշիստական Իտալիան: Հետագայում պատերազմի մեջ ներգրավվեցին Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի և Աֆրիկայի բազմաթիվ պետություններ, այդ թվում

Խորհրդային Միությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները, և նա ստացավ հիրավի համաշխարհային բնույթ:

XX դարի Երկրորդ համաշխարհային այդ մեծ սպանդն իր ջրապտույտի մեջ ներգրավեց նաև գաղութային ու կախյալ երկրներին, որոնց մարդկային և նյութական վիթխարի ռեսուրսները ի սպաս դրվեցին ֆաշիստական կամ հակաֆաշիստական ռազմաքաղաքական խմբավորման այս կամ այն երկրի տրամադրության տակ: Նրանք նույնպես ենթարկվեցին ծանր զրկանքների ու տվեցին մեծաքանակ մարդկային զոհեր, թեև դա նրանց պատերազմը չէր, որի մեջ նրանք ներգրավվել էին ակամայից և հակառակ իրենց կամքի:

Ասվածը հավասարապես վերաբերում է նաև Ալժիրին, որի նյութական և մարդկային բոլոր հնարավորությունները դրվեցին Ֆրանսիայի տրամադրության տակ:

Պատերազմը, բնականաբար, վատթարացրեց Ալժիրի դրությունը, առաջին հերթին՝ ժողովրդի տնտեսական վիճակը: Որպես տնտեսական վիճակի վատացման ցուցիչ՝ սովորաբար ընդունված է վկայակոչել գների բարձրացումը: Կարծում ենք, որ այդ ցուցիչը կիրառելի է նաև Ալժիրի պարագայում: Գները Ալժիրում 1943 թ. նախապատերազմյան 1938 թ. համեմատությամբ բարձրացել էին մի քանի անգամ: Մտցվեց խիստ սահմանափակում էլեկտրականության և վառելիքի օգտագործման բնագավառում, սահմանվեց սննդի շատ ցածր օրապահիկ և այլն: Տնտեսական անկման անմիջական հետևանքներից մեկը եղավ երեխաների մահացության կտրուկ աճը:

Ալժիրում ներքաղաքական և սոցիալ–տնտեսական դրությունն ավելի սրվեց, երբ Ֆրանսիան 1940 թ. հունիսին պարտություն կրեց և անձնատուր եղավ հիտլերյան Գերմանիային: Ֆրանսիայում հաստատվեց ֆաշիստական Գերմանիայի հետ համագործակցող վարչակարգ՝ Պետենի և Լավալի գլխավորությամբ: Այդ նոր կառավարությունը, որը հաստատվել էր Վիշի առողջարանական քաղաքում, ամեն ինչ անում էր Գերմանիայի նկատմամբ «հաշտության պայմանագրով» ստանձնած բոլոր պարտավորությունները կատարելու համար: Վիշին ֆրանսիական հայրենասերների և հակահիտլերյան կոալիցիայի անդամ բոլոր երկրների աչքում դարձավ ազգային դավաճանության և նացիստների հետ համագործակցության ատելի խորհրդանիշ:

Ֆրանսիայի կապիտուլյացիան և ֆաշիստական Գերմանիայի, ինչպես նաև ֆաշիստական Իտալիայի հետ համագործակցելու Վիշիի

կառավարության պատրաստակամությունը Գերմանիայի և Իտալիայի առջև բացեցին ֆրանսիական գաղութների դռները Ասիայում և Աֆրիկայում: Եվ Գերմանիան ու Իտալիան չհապաղեցին օգտվել ստեղծված բարենպաստ քաղաքական իրադրությունից իրենց վերահսկողությունը հաստատելու համար ֆրանսիական գաղութների, այդ թվում և Ալժիրի վրա: Մեկը մյուսի հետևից Ֆրանսիայի կողմից հաշտության պայմանագրի պայմանների կատարումը ստուգելու պատրվակով Ալժիր էին ժամանում գերմանա–իտալական տարբեր հանձնաժողովներ: Դա մշակված լավ ծև էր Գերմանիայի և Իտալիայի կողմից՝ հաստատվելու ֆրանսիական գաղութներում, Ֆրանսիային աստիճանաբար իր գաղութներից դուրս մղելու և ամրապնդելու իրենց ստրատեգիական դիրքերը Աֆրիկայում և Միջերկրական ծովի ավազանում:

Գերմանա–իտալական հանձնաժողովները հաշվառման ենթարկեցին Ալժիրի տնտեսական հնարավորությունները և հումքային ռեսուրսները: Նրանց որոշումով սկսվեց ստրատեգիական կարևոր հումքի՝ ֆոսֆորի, երկաթի հանքաքարի և գունավոր մետաղների արտահանումը Գերմանիա և Իտալիա: Զուգահեռաբար Գերմանիա և Իտալիա էր ուղարկվում պարեն, ինչը, կարելի է ասել, ճգնաժամային իրավիճակ ստեղծեց Ալժիրում:

Այս հարցում Վիշիի կառավարությանը աջակցում և գերմանա–իտալական հանձնաժողովներին օգնում էին Ալժիրի ֆրանսիական և եվրոպական խոշոր կոլոնիստները, տեղական վարչակարգի պաշտոնյաները, որոնք անցել էին Վիշիի կողմը և հավատարմորեն ծառայում էին նրան: Իրենց այդ կողմնորոշման մեջ նրանք այնքան հեռու գնացին, որ սկսեցին օգնություն ցույց տալ, աջակցել և պարեն մատակարարել, ոչ միայն Գերմանիային ու Իտալիային, այլև գերմանական՝ այսպես կոչված Աֆրիկյան կորպուսին, որը գլխավորում էր հիտլերյան ամենահայտնի գեներալներից մեկը՝ էրվին Ռոմելը: Օգնողների թվում էին նաև ալժիրյան մեծահարուստ հողատերեր, թեև Ռոմելի զորքերն այդ ժամանակ պատերազմում էին արաբական երկրներում՝ Լիբիայում, և ներխուժել էին Եգիպտոս՝ նպատակ ունենալով զավթել այդ երկրները:

Սակայն Գերմանիան չէր ցանկանում բավարարվել միայն վերոնշյալով, այլ ձգտում էր ընդլայնել իր վերահսկողությունը և այն տարածել Աֆրիկայում տեղակայված ֆրանսիական ռազմական ուժերի և ենթակառուցվածքների վրա: Դրա մասին է վկայում 1941 թ հուլիսի 29–ի գերմանական վերջնագիրը Վիշիի կառավարությանը՝ իրեն անհա-

պաղ հանձնել Ալժիրի, Կասաբլանկայի և Դակարի ռազմածովային բազաները, որտեղ կենտրոնացված էր ֆրանսիական ռազմածովային նավատորմը: Գերմանական այդ ծրագրի բաղկացուցիչ մասն էր կազմում նաև ալժիրյան Օրան նավահանգստից Սահարայի տարածքով մինչև Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկա երկաթուղագծի կառուցումը, որի շինարարությունը Վիշիի կառավարությունը սկսել էր Գերմանիայի պահանջով: Այդ երկաթուղագծի կառուցումը Գերմանիայի համար ուներ ստրատեգիական նշանակություն, քանի որ նախատեսվում էր այդ երկաթուղով ֆրանսիական գաղութներից հումք և պարեն տեղափոխել Օրան, որը դառնալու էր յուրատեսակ հավաքակենտրոն, որտեղ կուտակված անհրաժեշտ հումքը, պարենը և տեղական արդյունաբերական արտադրանքը առաքվելու էր Գերմանիա:

2. Ամերիկյան և անգլիական զորքերի ներխուժումը Ալժիր և Ազգային ազատագրության ֆրանսիական կոմիտեի իշխանության հաստատումը

Սակայն գերմանական ծրագրերը ձախողվեցին: 1942 թ. աշնանը ԱՄՆ–ը և Անգլիան ձեռնամուխ եղան «Ջահ գործողություն» ռազմական ծրագրի իրականացմանը: 1942 թ. նոյեմբերի 8–ին 70–հազարանոց ամերիկյան և անգլիական զորքերը ամերիկյան գեներալ Դուայթ էյզենհաուերի հրամանատարությամբ ներխուժեցին Հյուսիսային Աֆրիկա և գրավեցին Ալժիրն ու Մարոկկոն: Երկու օր անց արդեն նրանց տիրապետության տակ էին գտնվում Ալժիր և Օրան քաղաքները: Նոյեմբերի 11–ին վիշիական զորքերի գլխավոր հրամանատար, ադմիրալ Դառլանը հրաման արձակեց կրակը դադարեցնելու մասին: Ալժիրը դարձավ դաշնակիցների գլխավոր հենարանը Հյուսիսային Աֆրիկայում: Հաջողությամբ զարգացնելով ռազմական գործողությունները՝ ամերիկյան և անգլիական զորքերը 1943 թ. ապրիլին գրավեցին նաև Թունիսը: Դա գերմանա–իտալական զորքերի և նրանց աջակցող վիշիական ուժերի պարտությունն էր, որով վերջ տրվեց նրանց կարճաժամկետ տիրապետությանը Հյուսիսային Աֆրիկայում, այդ թվում և Ալժիրում:

Գերմանացիներին և վիշիականներին արտաքսելուց հետո Ալժիրում ստեղծվեց նոր իրադրություն, որը կարելի է բնութագրել բարդ և հակասական: Ամերիկացիների աջակցությամբ Ալժիրում ֆրանսիական գաղութային վարչակարգի ղեկավարությունը հանձնեցին գեներալ Ժի-

րոյին, որը հանդիսանում էր նաև Հյուսիսային Աֆրիկայում ֆրանսիական ռազմական ուժերի գլխավոր հրամատար: Նա չէր շտապում տեղական գաղութային կառավարման համակարգը մաքրել վիշիականներից, նրանց հետ համագործակցած պաշտոնյաներից կամ նրանց համակիրներից: Իսկ դա խոր դժգոհություն էր հարուցում ալժիրցիների մոտ: Մյուս կողմից՝ գեներալ Ժիրոն պահանջեց ալժիրցիներից լրիվ աջակցություն ցույց տալ իր և դաշնակիցների զորքերին՝ կանգ չառնելով ոչ մի զոհողության առջև, բանակը մատակարարել անհրաժեշտ պարենով և այլ անհրաժեշտ ապրանքներով: Իսկ դա այնքան էլ դյուրին գործ չէր, քանի որ ալժիրցիներն արդեն ենթարկվել էին մեծ զրկանքների և գտնվում էին վատթարագույն պայմաններում:

Սրան պետք է ավելացնել նաև հարաբերությունների սրումը գեներալ Ժիրոյի և գեներալ Շառլ դը Գոլի ու նրա կողմից գլխավորած Ազատ Ֆրանսիա շարժման միջև:

Երբ 1940 թ. հունիսին Ֆրանսիան կապիտուլյացիայի ակտ ստորագրեց Գերմանիայի հետ, և Ֆրանսիայում հաստատվեց Պետեն–Լավալ վարչակարգը, որը ամբողջապես համագործակցում էր հիտլերյան Գերմանիայի հետ, ապա բազմաթիվ ֆրանսիական հայրենասերներ դատապարտեցին Պետենին ու վիշիականներին և հրաժարվեցին ենթարկվել նրանց ու համագործակցել գերմանական, ապա նաև իտալական ֆաշիստների հետ՝ դա համարելով ազգային ստորացում և դավաճանություն: Դրանց մեջ էր ֆրանսիական բանակի գեներալ Շառլ դը Գոլը, որը գլխավորեց ֆրանսիական հայրենասերների շարժումը՝ ուղղված և՛ ֆաշիստական պետությունների, և՛ Պետենի ու վիշիական ուժերի դեմ: Նա հիմնեց «Ազատ Ֆրանսիա» շարժումը, որն այնուհետև վերանվանվեց «Մարտնչող Ֆրանսիայի»՝ դառնալով մեկ ամբողջական վարչառազմական կառույց: Դը Գոլը և «Ազատ Ֆրանսիան» առաջին օրվանից ստացան Մեծ Բրիտանիայի ճանաչումը և աջակցությունը, այդ թվում նաև նյութական, ֆինանսական և ռազմական: Հետագայում նա ճանաչում գտավ Խորհրդային Միության և հակահիտլերյան կոալիցիայի անդամ այլ երկրների կողմից: Աստիճանաբար աճեց Դը Գոլի միջազգային հեղինակությունը:

Սակայն հարթ չէին ընթանում նրա հարաբերությունները ԱՄՆ–ի հետ, որը նախապատվությունը տալիս էր գեներալ Ժիրոյին: Իսկ վերջինս, հենվելով ԱՄՆ–ի և նրա պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտի աջակցության վրա, հավակնում էր դառնալ համաֆրանսիական առաջնորդ և հետին պլան մղել Դը Գոլին:

Բայց դա չհաջողվեց նրանց: Դը Գոլի և «Մարտնչող Ֆրանսիայի» հեղիանակությունն օրեցօր աճում էր, որին մեծապես նպաստում էր Դը Գոլի հետևողական հակաֆաշիստական դիքորոշումը, նրա սթափ և գործնական քաղաքականությունը, որը նրան ապահովում էր համազգային աջակցություն: Ֆրանսիացիների ճնշող մեծամասնությունը պաշտպանում էր Դը Գոլին: Ի վերջո, գեներալ Ժիրոն հեռացվեց իր գրաված բոլոր պաշտոններից, և Ալժիր ժամանեց Դը Գոլը, որտեղ 1943 թ. հունիսին ստեղծվեց Ազգային ազատագրության ֆրանսիական կոմիտեն (ԱԱՖԿ)՝ Դը Գոլի գլխավորությամբ: Փաստորեն, այդ կոմիտեն կառավարության ֆունկցիաներ էր կատարում: Իսկ 1943 թ. նոյեմբերից դարձյալ Ալժիրում սկսեց գործել օրենսդիր մարմնի իրավասություններով օժտված Ֆրանսիայի կոնսուլտատիվ ասամբլեան: Եվ, վերջապես, 1944 թ. հունիսին Ազգային ազատագրության ֆրանսիական կոմիտեն վերակազմավորվեց Ֆրանսիայի ժամանակավոր կառավարության, որի նստավայրը Ալժիրն էր՝ մինչև նրա տեղափոխվելը Փարիզ, որը տեղի ունեցավ 1944 թ. օգոստոսին՝ գերմանացիներից Փարիզի ազատագրումից հետո:

Այս բոլորի հետևանքով Ալժիրում ստեղծվեց քաղաքական նոր իրադրություն: Դը Գոլի հրամանով բանտերից ազատվեցին հազարավոր հայրենասեր և հակաֆաշիստներ, որոնք ձերբակալվել էին Վիշիի կառավարության հրամանով և բանտ նետվել: Նրանցից շատերին օգտագործում էին Օրան–Սահարա–Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկա երկաթգծի կառուցման տաժանակիր աշխատանքների մեջ: Բանտից ազատվածների մեջ էին նաև զգալի թվով ալժիրյան ազգային–քաղաքական գործիչներ: Ազգային–ազատագրության ֆրանսիական կոմիտեն աշխատանքից հեռացրեց շատ վիշիականների, որոնք կարևոր պաշտոններ էին զբաղեցնում Ալժիրի տեղական վարչությունում: Ալժիրի գլխավոր նահանգապետ նշանակվեց գեներալ Ժորժ Կատրուն՝ Դը Գոլի մերձավոր զինակիցներից մեկը, որը գաղութներում աշխատելու մեծ փորձ ուներ, այդ թվում և Սիրիայում ու Լիբանանում, որտեղ նա 1941–1942 թթ. Դը Գոլի ներկայացուցիչն էր:

3. Քաղաքական կյանքի աշխուժացումը: Սետիֆի 1945 թ. ապստամբությունը

Վիշիական վարչակարգի տապալումից հետո սկսված քաղաքական մթնոլորտի որոշ բարելավումը նպաստեց քաղաքական կյանքի

աշխուժացմանը Ալժիրում: Բանտից արձակված ալժիրյան ազգային առաջնորդները վերսկսեցին իրենց քաղաքական գործունեությունը և դիմեցին մի շարք կարևոր քայլերի: Դրանց մեջ էին Ֆարհաթ Աբասը, Մուհամմադ Մեսալի Հաջը և այլ ազգային գործիչներ ու կազմակերպություններ, այդ թվում՝ Տեղական ընտրանիի ֆեդերացիան, Ալժիրի ժողովրդական կուսակցությունը, Ալժիրի մուսուլմանական ասոցիացիայի միությունը, Ալժիրի կոմունիստական կուսակցությունը և այլ կազմակերպություններ ու միություններ:

Սկզբնական շրջանում նրանց գործունեության հիմնական ուղղությունը զանազան պահանջների ձևակերպումը և դրանք ֆրանսիական իշխանություններին ներկայացնելն էր: Նրանք ձգտում էին Ալժիրի հարցերը լուծել ոչ թե փողոցում, այլ խաղաղ ճանապարհով՝ ֆրանսիական նոր իշխանությունների հետ բանակցությունների և փոխհամաձայնությունների միջոցով:

Դրանց մեջ ուշադրություն է գրավում Ֆարհաթ Աբասի կողմից 1943 թ. ներկայացված Ալժիրյան ժողովրդի մանիֆեստը, որը կարևոր փաստաթուղթ է այդ փուլում ալժիրյան ազգային ուժերի քաղաքական պահանջները և նոր կողմնորոշումները հասկանալու տեսանկյունից: Այդ փաստաթուղթը, որ Ֆարհաթ Աբասի հետ ստորագրել էին Ալժիրի հիսունվեց երևելի ազգային առաջնորդներ, դատապարտում էր ֆրանսիական նախկին գաղութային իշխանությունների քաղաքականությունը Ալժիրում՝ այն համարելով սխալ և Ալժիրի ժողովրդի շահերին հակասող: Նա միաժամանակ վկայում էր, որ Ֆարհաթ Աբասը և նրա համախոհները հրաժարվում էին Ալժիրի՝ Ֆրանսիայի հետ միաձուլվելու հայեցակարգից և կանգնել էին Ալժիրի ինքնությունը պահպանելու և ճանաչելու տեսակետի վրա: Դա ակնհայտորեն երևում է Մանիֆեստում ամրագրված այն կետից, որը պահանջում էր Ալժիրի համար հատուկ սահմանադրություն, որը պետք է երաշխավորեր ալժիրցիների անհապաղ և արդյունավետ մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին և ճանաչեր նրանց իրավական հավասարությունը ֆրանսիացիների հետ: Այս քաղաքական պահանջների հետ միասին մանիֆեստը կոչ էր անում ֆրանսիական նոր իշխանություններին՝ անցկացնել ագրարային բարեփոխումներ, արաբերենը ճանաչել որպես պաշտոնական լեզու, Ալժիրի ժողովրդին տրամադրել բոլոր տեսակի քաղաքացիական ազատություններ, ազատ արձակել դեռևս բանտերում գտնվող բոլոր քաղաքական բանտարկյալներին և այլ պահանջներ:

Այս փաստաթուղթը հատուկ քննարկման երթարկվեց ԱԱՖԿ–ի ստեղծած հանձնաժողովի կողմից, որն իր առաջարկությունները ներկայացրեց Դը Գոլին և Կատրուին: Նրանք, ծանոթանալով մանիֆեստում ամրագրված պահանջների հետ, համոզվեցին, որ նախկինի պես շարունակել այլևս հնարավոր չէ, և անհրաժեշտ են համապատասխան քայլեր ձեռնարկել հարաբերությունները Ալժիրի տեղացիների և ֆրանսիական համայնքների միջև բարելավելու համար: Մյուս կողմից նրանց վախեցրեց ալժիրցիների և ֆրանսիացիների իրավունքների հավասերացման և Ալժիրի համար հատուկ սահմանադրություն ստեղծելու պահանջը: Կատրուի կածիքով՝ դա վտանգավոր պահանջ էր, քանի որ դրա բավարարման դեպքում եվրոպական փոքրամասնությունը, նրա բնութագրմամբ, «ջրախեղդ կլիներ մուսուլմանական մեծամասնության մեջ»: ԱԱՖԿ–ն 1944 թ. մշակեց նոր առաջարկություններ, որոնց հիմքում դրվեց «Բլյում–Վիոլետի» 1936 թ. պլանը: Ամենակարևորը, որ նա նախատեսում էր, ալժիրցիների որոշակի խավերի ֆրանսիական քաղաքացիություն շնորհելն էր: Այդ կատեգորիայի մեջ մտնում էին այսպես կոչված արժանիքներ և վաստակներ ունեցողները՝ զինվորական սպաները, կառավարական պարգևներ ստացած վետերանները, բարձրագույն կրթություն ունեցողները, պետական պաշտոնյաները, ինչպես նաև Պատվո լեգեոնի շքանշանակիրները: Նման «մենաշնորհից» օգտվողների թիվը կազմելու էր մոտ 60 հազ. մարդ: Իսկ մնացած ալժիրցիներին, մոտ 450 հազ. մարդու, իրավունք «շնորհվեց» ընտրելու մունիցիպալիտետների և գլխավոր խորհրդականների երկու հինգերորդին:

ԱԱՖԿ–ի ներկայացրած առաջարկությունների այս փաթեթը չբավարարեց և չէր էլ կարող բավարարել Ալժիրի ազգային ուժերին: Եվ դրա կարևոր քաղաքական հետևանքներից մեկը եղավ այն, որ ալժիրյան մի շարք ազգային առաջնորդների դիրքորոշման մեջ տեղի ունեցան սկզբունքային բնույթի փոփոխություններ: Մասնավորապես Ֆարհաթ Աբասը հրաժարվեց Ֆրանսիայի հետ Ալժիրի ինտեգրվելու իր դիրքորոշումից և պահանջեց Ալժիրի պետական անկախություն, որն իր հարաբերությունները Ֆրանսիայի հետ պետք է կառուցեր ֆեդերացիայի սկզբունքների վրա:

Պետական անկախության պահանջը, հիրավի, կարելի է համարել շրջադարձային, մանավանդ եթե նկատի ունենանք, որ Ֆարհաթ Աբասի այդ նոր առաջարկությունը լիակատար պաշտպանություն գտավ նաև Մեսալի Հաջի և Ալժիրի մուսուլմանական ասոցիացիայի կողմից, որոնք Ալժիրի քաղաքական դաշտում գործող ամենահեղինակավոր ուժերից էին:

Ֆարհաթ Աբասի նախաձեռնությամբ ստեղծվեց «Մանիֆեստի և ազատության բարեկամներ» ասոցիացիան, որին միացան Ալժիրի մուսուլմանական ասոցիացիան և Մեսալի Հաջի հիմնադրած Ալժիրի ժողովրդի կուսակցությունը, որն այդ ժամանակ դեռևս գտնվում էր ընդհատակում: Այդ նորաստեղծ ասոցիացիան օգտվում էր Ալժիրի ժողովրդի ամենալայն զանգվածների աջակցությունից և համակրանքից: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ ասոցիացիայի հիմնած «Էգալիտե» («Հավասարություն») օրաթերթի բաժանորդների թիվը հասնում էր 500 հազարի:

Այդ նույն ժամանակ Ալժիրի ժողովրդի կուսակցությունը, որի գործունեությունն արգելված էր, ստեղծում էր գաղտնի քաղաքական–կուսակցական բջիջներ, որոնք ընդհատակի պայմաններում բավականին լայն գործունեություն էին ծավալել: Իսկ Ալժիրի արևելյան շրջաններում՝ Կաբիլիայում և Կոնստանտինում, ԱԺԿ–ն ստեղծել էր նաև զինված ջոկատներ: Այս կուսակցությունը և նրա ստեղծած բջիջներն ու զինված խմբերը ամուր կանգնած էին Ալժիրի անկախության դիրքերում և պայքարում էին այսպես կոչված չափավորների դեմ, որոնք ինքնավարության կողմնակիցներ էին:

1944–1945 թթ. ձմեռը Ալժիրը դիմավորեց խիստ լարված պայմաններում, որի պատճառը ծանր սոցիալական և տնտեսական պայմաններն էին: Ցածր բերքի պատճառով առաջացել էր բնակչությանը հացով մատակարարելու խնդիր, արդյունաբերական ապրանքների խիստ պակաս էր զգացվում, վիթխարի չափերի էր հասել գործազրկությունը: Պարարտ հող էր ստեղծվել ժողովրդի դժգոհությունն արտահայտելու համար: «Մանիֆեստի և ազատության բարեկամների» ասոցիացիայի կոչով 1945 թ. մայիսի սկզբին ցույցեր տեղի ունեցան Ալժիրի քսանից ավելի քաղաքներում: Սոցիալական պահանջների հետ միասին ցուցարարները առաջադրում էին նաև քաղաքական պահանջներ, որոնցից կարևոր էին երկուսը՝ անկախության և բանտում գտնվող Մուհամմադ Մեսալի Հաջին ազատ արձակելու պահանջները: Այդ ընթացքում Ալժիրում, Օրանում և այլ վայրերում տեղի ունեցան բախումներ ցուցարարների և ոստիկանական ուժերի միջև, որի ընթացքում ցուցարարների շարքերից եղան զոհեր և վիրավորներ:

Սակայն ամենաարյունոտ բախումները տեղի ունեցան 1945 թ. մայիսի 8–ին, երբ Ալժիրի ազգային ուժերը որոշեցին նշել Եվրոպայի ազատագրումը և ֆաշիստական Գերմանիայի պարտությունը Երկրորդ համաշխարհային պատերազմում՝ միաժամանակ կոչ անելով ալժիրցի-

ներին պահանջել իրենց ազատությունը: Դա որոշակի լարվածություն ստեղծեց ալժիրցիների և եվրոպական կոլոնների միջև: «Մանիֆեստի բարեկամների և ազատության» ասոցիացիայի ղեկավարությունը ժողովրդին դիմեց պահպանել սառնասրտություն և զսպվածություն՝ հաշվի առնելով, որ նրա շարքերում կային ավելի արմատական գործողությունների կողմնակիցներ: Դեպքերը ողբերգական բնույթ ստացան Արևելյան Ալժիրում, մասնավորապես Սետիֆ և Գելմ քաղաքներում: Ոստիկանությունը նախազգուշացրեց ասոցիացիայի ղեկավարությանը, որ նրանք թույլ տան ցուցարարներին շարժվել Սետիֆ, եթե նրանք չկրեն ազգային դրոշներ և պաստառներ:

Ցույցերը շատ արագ և տարերայնորեն ապստամբության վերածվեցին, որին մասնակցում էր 50 հազ. մարդ: Ապստամբների հարձակումների նպատակակետը դարձան ֆրանսիական–եվրոպական կոլոնները, պաշտոնյաները, ոստիկանները, ֆերմերները, որոնց նկատմամբ ալժիրցիները խոր ատելություն էին տածում: Իշխանությունները, լրացուցիչ զորքեր, այդ թվում նաև ավիացիա և ռազմանավեր նետելով Արևելյան Ալժիր, օգտագործելով ոստիկանական ուժերը, ինչպես նաև իտալական ռազմագերիներին, դաժանորեն ճնշեցին ապստամբությունը: Սպանվեց 1500 ապստամբ (այլ տվյալներով՝ մի քանի տասնյակ հազար), իսկ զոհված եվրոպական կոլոնների թիվն անցնում էր հարյուրից:

Իշխանությունները «Մանիֆեստի և ազատության բարեկամների» ասոցիացիան հայտարարեցին օրենքից դուրս և ձերբակալեցին մոտ 5500 ապստամբության մասնակիցների, այդ թվում և Ֆարհաթ Աբասին:

Այսպես նշվեց Հաղթանակի օրը Ալժիրում:

III. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱԼԺԻՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ (1946–1962 թթ.)

1. Ալժիրի օրգանական ստատուտը

Սետիֆի ապստամբության ճնշումը, հազարավոր ալժիրցիների ձերբակալությունը և քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների արգելումը վերին աստիճանի ծանր իրադրություն ստեղ-

ծեցին Ալժիրում, որտեղ քաղաքական մթնոլորտն առանց այդ էլ խիստ լարված էր: Ալժիրի շատ հայրենասերներ և ազգային գործիչներ, որոնք կողմնակից էին Ֆրանսիայի հետ հարաբերություններ կարգավորմանը բանակցությունների միջոցով՝ փոխզիջումների հիմքի վրա, հարկադրված վերանայում էին իրենց դիրքորոշումը և գտնում, որ ստեղծված պայմաններում ալժիրցիները կարող են իրենց նպատակներին հասնել միայն ուժի միջոցով:

Փարիզում աստիճանաբար սկսում էին հասկանալ, որ իրադրության հետագա վատթարացումը կարող է նոր բարդություններ ստեղծել Ֆրանսիայի համար, որը դեռևս ուշքի չէր եկել պատերազմում կրած պարտությունից հետո և նոր էր ոտքի կանգնում որպես մեծ պետության հավակնություն ունեցող երկիր: Եվ Դը Գոլը որոշեց դիմել մասնակի զիջումների՝ հուսալով հասնել լարվածության լիցքաթափմանը բուն Ալժիրում և ֆրանս–ալժիրյան հարաբերություններում:

1946 թ. մարտին ֆրանսիական կառավարությունը ներում շնորհեց Սետիֆի ապստամբության կապակցությամբ ձերբակալված ալժիրցիներին ու նրանց ազգային ղեկավարներին, որոնք ազատ արձակվեցին բանտերից: Վերացվեց քաղաքական կազմակերպությունների գործունեության վրա դրված արգելքը և իրենց գործունեությունը վերսկսեցին ալժիրյան քաղաքական կուսակցությունները, ստեղծվեցին նոր միություններ, ասոցիացիաներ և կազմակերպություններ: Միաժամանակ այդ որոշումով իրենց պաշտոններից հեռացվեցին մի շարք տեղական ալժիրյան վարչակարգի պատասխանատուներ, որոնք հանցանքներ էին գործել 1945 թ. մայիսյան ապստամբությունը ճնշելու ժամանակ: Իրենց պաշտոններից հեռացվեցին նաև ալժիրցիների համար ատելի մի շարք նախկին վիշիական գործիչներ:

Ֆարհաթ Աբասը, ներում ստանալով և բանտից դուրս գալով, 1946 թ. մարտին հիմնեց մի նոր միություն, որը կոչվեց Ալժիրյան մանիֆեստի դեմոկրատական միություն (ԱՄԴՄ): Նրա գլխավոր քաղաքական խնդիրը համարվեց պայքարն ազատ, աշխարհիկ և դեմոկրատական Ալժիրի ստեղծման համար: Իսկ ինչ վերաբերում էր Ֆրանսիայի հետ հարաբերություններին, ապա Ֆարհաթ Աբասն այժմ գտնում էր, որ Ալժիրը պետք է իր հարաբերությունները նրա հետ կառուցեր թույլ արտահայտված ֆեդերալիզմի սկզբունքներով:

1946 թ. հունիսին տեղի ունեցած Ֆրանսիայի Սահմանադիր ժողովի ընտրությունների ժամանակ ԱՄԴՄ–ն Ալժիրի համար նախատես-

ված 13 դեպուտատական տեղերից ստացավ 11 մանդատ: Դեպուտատական այս խումբը 1946 թ. օգոստոսի 9–ին Սահմանադիր ժողովի քննարկմանը ներկայացրեց Ալժիրի սահմանադրության նախագիծը, որը նախատեսում էր ստեղծել Ալժիրի ինքնավար հանրապետություն Ֆրանսիական Միության կազմում: Սակայն այդ նախագիծը մերժվեց Ֆրանսիական Սահմանադիր ժողովի կողմից, որտեղ դեռ բավականին ուժեղ էին ֆրանսիական գաղութային համակարգն անփոփոխ պահպանելու կողմնակիցները:

Ներում ստացավ և հնգամյա տնային կալանքից ազատվեց Մուհամմադ Մեսալի Հաջը, որը թողնելով Ֆրանսիան՝ վերադարձավ իր հայրենիքը՝ Ալժիր: Այստեղ նա նույնպես հիմնեց մի նոր կազմակերպություն, որը ստացավ Դեմոկրատական ազատությունների հաղթանակի շարժում (ԴԱՀՇ) անվանումը: Նրա ծրագիրը վկայում էր այն մասին, որ Մուհամմադ Մեսալի Հաջը շարունակում էր հավատարիմ մնալ իր արմատական հայացքներին: Նա դեմ դուրս եկավ Ֆրանսիայի հետ ֆեդերալ կապեր հաստատելու Ֆարհաթ Աբասի քաղաքականությանը և պահանջեց լրիվ իրավահավասարության հաստատում Ալժիրի և Ֆրանսիայի փոխհարաբերություններում:

Մեսալի Հաջը, ինչպես նշել ենք, հանդիսանում էր Ալժիրի ժողովրդական կուսակցության՝ ԱԺԿ–ի հիմնադիրը, որը թեև արգելվել էր, սակայն շարունակում էր իր ընդհատակյա գործունեությունը: Նա, հիմնելով ԴԱՀՇ–ն, չլուծարեց ԱԺԿ–ն, որը մարտնչում էր հանուն անկախ, արաբական և իսլամական Ալժիրի: Դեռ ավելին՝ ԴԱՀՇ–ի կազմում նրա մի շարք երիտասարդ անդամների կողմից 1947 թ. ստեղծվեց գաղտնի Հատուկ կազմակերպություն (ՀԿ)՝ Հոկայն Այտ Ահմադի նախաձեռնությամբ: Նա իր առջև խնդիր էր դրել համակիրների օգնությամբ դրամ հավաքել և զենք ձեռք բերել, նախապատրաստվել զինված ելույթների համար և հող նախապատրաստել Ալժիրում հեղափոխական կառավարություն հաստատելու համար:

Հետագայում Հոկայն Այտ Ահմադին ՀԿ–ի ղեկավարի պաշտոնում փոխարինեց Ահմադ Բեն Բելլան, որին վիճակված էր մեծ դեր խաղալու Ալժիրի քաղաքական պատմության մեջ:

Իրենց գործունեությունը վերսկսեցին նաև ուլեմները՝ Ալժիրի աստվածաբան գիտնականները:

Իսկ ինչ վերաբերում է Ալժիրի կոմունիստական կուսակցությանը, ապա նա միակ ալժիրյան կուսակցությունն էր, որը 1945 թ. չէր արգել-

վել ֆրանսիական իշխանությունների կողմից և շարունակում էր իր լեգալ գործունեությունը: Կոմունիստական կուսակցությունը հանդես էր գալիս Ալժիրի դեմոկրատացման, բնակչության սոցիալ–տնտեսական վիճակի բարելավման, ալժիրյան տեղական վարչակարգը նախկին վիշիական պաշտոնյաներից մաքրելու պահանջներով: Հետագայում՝ 1946 թ., դրան ավելացավ նաև Ալժիրի դեմոկրատական հանրապետություն ստեղծելու պահանջը:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ հետպատերազմյան առաջին երկու տարիներին Ալժիրի կարգավիճակի հարցը դարձավ կենտրոնական հարցերից մեկը ինչպես ալժիրցիների, ալժիրյան տարբեր կուսակցությունների, միությունների ու ազգային գործիչների, այնպես էլ ֆրանսիական կառավարության համար:

1947 թ. սեպտեմբերի 20–ին Ֆրանսիայի Ազգային ժողովը հաստատեց կառավարության կողմից ներկայացված առաջարկությունների փաթեթը, որը ստացավ **Ալժիրի օրգանական ստատուտ** անվանումը: Նրանով նախատեսվում էր ստեղծել Ալժիրյան ժողով, որը կատարելու էր տեղական պառլամենտի ֆունկցիաներ: Նա բաղկացած էր 120 դեպուտատներից և կազմված էր մեկ պալատից, որտեղ ներկայացված էին և՛ եվրոպացիները, և՛ ալժիրցիները: Սակայն ժողովը բաղկացած էր երկու կոլեգիաներից՝ մեկը եվրոպացիների, մյուսը՝ ալժիրցիների ներկայացուցիչների համար: Յուրաքանչյուր կոլեգիա կազմված էր 60 դեպուտատից: Ստացվում էր, որ 60 դեպուտատներից կազմված առաջին կոլեգիան ներկայացնում էր Ալժիրում բնակվող մեկուկես միլիոն եվրոպացիների, իսկ նույնքան՝ 60 դեպուտատներից կազմված մյուս կոլեգիան, ներկայացնում էր մոտ ինը միլիոն բնիկ ալժիրցիների: Օրգանական ստատուտով ստեղծվում էին ընտրովի տեղական խորհուրդներ, արաբերենը ճանաչվում էր պաշտոնական լեզու՝ ֆրանսերենի հետ համատեղ, կանանց տրվում էր ընտրական իրավունք, վերացվում էր Ալժիրյան Սահարայի զինվորական կառավարությունը և այլն:

Օրգանական ստատուտը պահպանում էր ֆրանսիական գլխավոր նահանգապետի պաշտոնը՝ իր բոլոր իրավունքներով, իսկ Ալժիրյան ժողովի կողմից ընդունվող օրենքները չպետք է հակասեին ֆրանսիական պառլամենտի կողմից ընդունված օրենքներին: Հարկ է նշել, որ Ալժիրի ժողովի իրավասությանը ենթակա էին սահմանափակ թվով հարցերի քննարկում և դրանց վերաբերյալ որոշումների ընդունում, մասնավորապես նա կարող էր քննարկել ֆինանսական և վարչահիրավական հարցեր:

Առաջին անգամ Ֆրանսիան ընդունեց հատուկ օրենք Ալժիրի կարգավիճակի վերաբերյալ: Այդ առումով դա պետք է համարել դրական քայլ:

Սակայն բովանդակության, այսինքն՝ իրավական առումով նա չէր լուծում Ալժիրի ազգային–հայրենասիրական ուժերի, ալժիրյան ժողովրդի հիմնական քաղաքական պահանջները: Այդ պատճառով էլ Ալժիրի օրգանական ստատուտը մեծ դժգոհությամբ ընդունվեց ալժիրցիների կողմից, քանի որ այն չէր արդարացրել նրանց սպասելիքները:

Հետաքրքիրն այն է, որ այն դժգոհությամբ ընդունվեց նաև եվրոպական կոլոնների կողմից, որոնք գտնում էին, որ Փարիզը շատ մեծ զիջումներ է արել Ալժիրին, որը կարող է վտանգել Ֆրանսիայի տիրապետությունը Ալժիրում և թուլացնել եվրոպական կոլոնների տիրապետող քաղաքական և տնտեսական դիրքերը այդ երկրում:

Այսպիսով՝ լարվածության թուլացմանը նպատակաուղղված ֆրանսիական կառավարության այդ քայլն իրեն չարդարացրեց: Հիասթափված ալժիրցիները, նույնիսկ նրանք, ովքեր համարվում էին չափավորներ և հույս ունեին Ֆրանսիայի հետ կապերը պահպանելու ուղիով հասնել Ալժիրի ինքնորոշմանը, հրաժարվեցին այդ մարտավարությունից և կանգնեցին ավելի արմատական դիրքերի վրա: Դրա արտահայտությունը հանդիսացավ թեկուզ այն իրողությունը, որ օրգանական ստատուտի ընդունումից հետո՝ 1947 թ. հոկտեմբերին կայացած տեղական ընտրությունների ժամանակ տեղերի մեծ մասը, որ հատկացված էր ալժիրցիներին, գրավեցին Մուհամմադ Մեսալի Հաջի հիմնած և նրա կողմից ղեկավարվող ԴԱՀՇ–ի ներկայացուցիչները: Իսկ, ինչպես նշել ենք, ԴԱՀՇ–ն կողմնակից էր Ալժիրի անջատմանը Ֆրանսիայից, և Ալժիրի ժողովուրդը փաստորեն քվեարկել էր հօգուտ Ալժիրի անկախության:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Ալժիրի ֆրանսիական իշխանությունները, եվրոպական կոլոնները և նրանց քաղաքական ղեկավարները կեղծիքների, խարդախությունների ու սպառնալիքների միջոցով փորձեցին կանխել նույն պատմության կրկնությունը հաջորդ տարի տեղի ունեցած Ալժիրի ժողովի՝ պառլամենտի, ընտրությունների ժամանակ: Եվ նրանք հասան իրենց նպատակին: Մուհամմադ Մեսալի Հաջի գլխավորած դեմոկրատական ազատությունների հաղթանակի շարժմանը թույլատրվեց ունենալ ինը դեպուտատական տեղ, Ֆարհաթ Աբասի Ալժիրյան մանիֆեստի միությանը՝ ութ տեղ, մեկ տեղ՝ կոմունիստական կուսակցությանը, իսկ մնացած հիսունհինգ տեղը տրվեց այսպես

կոչված «անկախականներին», որոնց թեկնածությունները հավանության էին արժանացել ու պաշտպանություն գտել տեղական իշխանությունների կողմից:

Այսպիսով՝ կոլոնները կարողացան իրեն հսկողությունը հաստատել Ալժիրյան ժողովի վրա, որի պատճառով այն մտել է Ալժիրի պատմության մեջ որպես «եվրոպական սենյորների» դիկտատուրայի հաստատում: Դիկտատուրայի մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ Ալժիրի ժողովի առաջին նստաշրջանի բացման ժամանակ ԴԱՀԾ–ի դեպուտատներին ոչ միայն չթողեցին մտնել դահլիճ, այլև հենց մուտքի մոտ՝ պառլամենտի շեմին, ծերբակալեցին նրանց: Իսկ երբ Ֆարհաթ Աբասը պահանջեց ձայն տալ իրեն ելույթի համար, նրան զրկեցին այդ իրավունքից: Ի նշան բողոքի՝ ալժիրցի մի քանի դեպուտատներ լքեցին պառլամենտի նիստերի դահլիճը՝ հրաժարվելով մասնակցել նրա աշխատանքներն:

1951 թ. տեղի ունեցած ընտրությունները նույնպես ընթացան նույն սցենարով: Այդ ամենը օրգանական ստատուտով հավասարության վերաբերյալ հռչակված դրույթների կոպիտ խախտում էր նշանակում: Հավասարության վերաբերյալ դրույթները խախտվում էին նաև մյուս հարցերում, մասնավորապես աշխատավարձերի, աշխատատեղերի զբաղեցման և այլն:

Այդ ամենը խորացնում էր դժգոհությունը ալժիրյան հասարակության ներսում՝ ալժիրցիներին մղելով ավելի ակտիվ քայլերի: Կոնկրետ գործողությունների դիմեց Հատուկ կազմակերպությունը, որը 1949–1950 թթ. մի շարք ելույթներ ունեցավ ընդդեմ տեղական իշխանությունների և կոլոնների կամայականությունների, մասնավորապես Օրանում, որի ընթացքում անգամ հրազեն օգտագործվեց: Ոստիկանությանը հաջողվեց 1950 թ. հայտնաբերել այդ գաղտնի կազմակերպությունը և ջախջախել այն: Լայնորեն սկսեց կիրառվել Ֆրանսիայի քրեական օրենսգրքի հոդվածներից մեկը, ըստ որի տաս տարվա բանտարկություն էր նախատեսվում բոլոր նրանց համար, ովքեր «ոտնձգություն կկատարեն Ֆրանսիայի տերիտորիալ ամբողջականության դեմ»: Իսկ ալժիրյան հայրենասերների պայքարը Ալժիրի ազատության համար ընկնում էր այդ հոդվածի տակ և դիտվում որպես ոտնձգություն «Ֆրանսիայի տերիտորալ ամբողջականության դեմ»: Նման մեղադրանքով ծերբակալվեցին և բանտ նետվեցին մոտ 30 հազ. ալժիրցիներ: 1952 թ.

կրկին ձերբակալվեց և Ֆրանսիա տեղափոխվեց Մուհամմադ Մեսալի Հաջը, ինչը հակաֆրանսիական մեծ ցույցի պատճառ հանդիսացավ:

Հետապնդումներից և ձերբակալություններից խուսափելու համար ալժիրյան մի շարք ազգային գործիչներ հարկադրված հեռացան Ալժիրից: Դրանց մեջ էր նաև Ահմադ Բեն Բելլան, որը 1952 թ. հաստատվեց Կահիրեում: Այստեղ նա իր ութ ընկերների՝ Այտ Ահմադի, Մուհամմադ Բուդիաֆի, Բելկասիմ Քրիմի, Ռաբահ Բիթաթի, Լարբի Բեն Մ'Հիդի, Մուրադ Դիդուշի, Մուստաֆա Բեն Բուլաիդի և Մուհամմադ Խդիրի հետ միասին 1954 թ. մարտին հիմնեց մի նոր կազմակերպություն, որը կոչվեց Միասնության և գործողության հեղափոխական կոմիտե (ՄԳՀԿ): Վերոնշյալ գործիչները դարձան ալժիրյան հեղափոխության կազմակերպիչներն ու առաջնորդները, իսկ հետագայում նրանցից ոմանք՝ անկախ Ալժիրի հանրապետության ղեկավարները:

ՄԳՀԿ–ն Ալժիրը բաժանեց վեց ռազմական շրջանների և յուրաքանչյուր շրջանի համար նշանակեց պատասխանատուներ: Իսկ Բեն Բելլան, Մուհամմադ Քրիմը և Այտ Ահմադը կազմեցին այսպես կոչված ՄԳՀԿ–ի արտասահմանյան պատվիրակությունը (նստավայրը՝ Կահիրեում), որը սերտորեն համագործակցում էր Եգիպտոսի պրեզիդենտ Գամալ Նասերի հետ: Նրա կարևոր խնդիրներից մեկն էլ ալժիրյան հեղափոխությանն անհրաժեշտ ֆինանսական, նյութական, ռազմական օգնություն և քաղաքական աջակցություն ապահովելն էր:

1954 թ. հոկտեմբերին ՄԳՀԿ–ն վերանվանվեց Ալժիրի ազգային–ազատագրական ճակատի (ԱԱճ), որը գլխավորեց Ալժիրի անկախության համար պատերազմը: Նրա որոշումով ալժիրյան զինված ջոկատները միավորվեցին և ստեղծվեց Ալժիրի ազգային–ազատագրության բանակը (ԱԱԲ), որի շարքերում սկզբնական շրջանում հաշվվում էր ընդամենը երեք հազար մարտիկ: Հոկտեմբերի 10–ին որոշում ընդունվեց ապստամբությունը սկսել 1954 թ. նոյեմբերի 1–ին:

2. Անկախության պատերազմի սկիզբը և կողմերի դիրքորոշումները (1954–1956 թթ.)

1954 թ. նոյեմբերի 1–ին՝ Բոլոր սրբերի օրը, վաղ առավոտյան, ԱԱճ–ի հաստատած պլանի համաձայն, Ալժիրի Ազգային ազատագրության բանակի մարտիկները միաժամանակյա հարձակում սկսեցին ամբողջ Ալժիրի տարածքում: Նրանք հարձակվեցին Ալժիրում տեղակայ-

ված ֆրանսիական ռազմական կառույցների, ոստիկանական կետերի, կառավարական շենքերի, տրանսպորտային հանգույցների և այլ հաստատությունների վրա:

Այսպես սկսվեց համաալժիրյան ապստամբությունը, որը Ալժիրի պատմության մեջ մտել է որպես անկախության պատերազմ: Այն տևեց համարյա ութ տարի և, ի վերջո, Ալժիրի ժողովրդի վիթխարի զոհողությունների գնով և ազգային–հայրենասիրական ուժերի անձնազոհության ու հերոսության շնորհիվ ավարտվեց հաղթանակով:

Նոյեմբերի 1–ին՝ ապստամբությունը սկսվելուց անմիջապես հետո, Կահիրեի ռադիոն հեռարձակեց ԱԱճ–ի դիմումը՝ ուղղված Ալժիրի ժողովրդին՝ կոչ անելով բոլոր ալժիրցիներին ոտքի ելնել ֆրանսիական գաղութարարների դեմ «ալժիրյան սուվերեն, դեմոկրատական և սոցիալական պետությունը վերականգնելու համար՝ իսլամի սկզբունքների շրջանակներում»: Դա, ըստ էության, ԱԱճ–ի ծրագրային պահանջն էր, որի իրագործման համար նա ոտքի էր հանել Ալժիրի ժողովրդին:

Ապստամբները կարողացան իրենց վերահսկողությունը հաստատել Կաբիլիայի, Աուրեսի և Ալժիրի այլ՝ մանավանդ լեռնային շրջանների վրա: Իսկ ժողովուրդը, անսալով ԱԱճ–ի կոչին, իր լայն աջակցությունը ցուցաբերեց ապստամբներին: Շատ ալժիրցիներ համալրեցին ազատագրական բանակի շարքերը:

Ֆրանսիայի արձագանքը ալժիրյան ապստամբությանը եղավ շատ արագ և խիստ բացասական: Այդ հարցի վերաբերյալ նախ արտահայտվեց ֆրանսիական կառավարության ներքին գործերի նախարար, սոցիալիստ Ֆրանսուա Միտերանը, որը բացառեց որևէ բանակցությունների հնարավորությունը ԱԱճ–ի ղեկավարների հետ՝ հայտարարելով, որ «միակ հնարավոր բանակցությունը պատերազմն է»: Դրանով իսկ Ֆրանսիան ընդունեց պատերազմի մարտահրավերը և հստակ կերպով մատնանշեց, որ հարցը կարող է լուծվել միայն զենքի միջոցով:

Ներքին գործերի նախարարի հայտարարությանը հետևեց Ֆրանսիայի վարչապետ Պյեր Մենդես–Ֆրանսի ոչ պակաս կտրուկ հայտարարությունը: Նա ընդգծեց, որ «որևէ մեկը չի կարող զիջել, երբ պետք է պաշտպանել ազգի խաղաղությունը, հանրապետության միասնականությունը և ամբողջականությունը: Ալժիրյան դեպարտամենտները Ֆրանսիական Հանրապետության մասերն են: Նրանք ֆրանսիական են եղել երկար ժամանակ, և նրանք անվիճելիորեն ֆրանսիական են... Նրանց և ֆրանսիական մետրոպոլիայի միջև չի կարող լինել ընդունելի անջատում»:

Այսպիսով՝ կողմերի դիրքորոշումը շատ հստակ էր: Ալժիրը՝ ի դեմս նրա հեղափոխական ղեկավար մարմնի՝ Ազգային–ազատագրական ճակատի, գտնում էր, որ պետք է ստեղծել Ալժիրի անկախ և դեմոկրատական պետություն՝ խարսխված իսլամական սկզբունքների վրա, իսկ Ֆրանսիան Ալժիրը համարում էր իր բաղկացուցիչ մասը և բացառում նրա սեցեսիան՝ անջատումը Ֆրանսիայից:

Նման տրամագծորեն հակառակ և անհաշտելի դիրքորոշումը պետք է հանգեցներ դաժան պայքարի: Եվ իրոք, անկախության համար պատերազմը շատ ծանր նստեց երկու կողմերի վրա:

Ալժիրի ժողովուրդը, նրա տարբեր խավերը աստիճանաբար միանում էին ազատագրական պայքարին և լրացնում Ազգային–ազատագրության բանակի շարքերը: Բավական է նշել, որ ԱԱԲ–ի թվաքանակը, որը սկզբնական շրջանում կազմում էր ընդամենը 3 հազ. մարդ, շատ չանցած հասավ 70 հազարի, որը հնարավորություն էր տալիս նրան իրականացնել բավականին լուրջ և հաջող ռազմական գործողություններ ընդդեմ ֆրանսիական զորքերի և նրանց համախոհ ներքին՝ եվրոպական–ֆրանսիական կոլոնների ուժերի:

Պատերազմի սկզբնական փուլում Ալժիրում գործող քաղաքական ուժերը՝ Ալժիրյան մանիֆեստի դեմոկրատական միությունը, որ գլխավորում էր Ֆարհաթ Աբասը, ուլեմները և այլն, ԱԱճ–ի նկատմամբ գրավել էին չեզոք դիրք: Ճիշտ է, Աբասը և ուլեմները դա համարում էին բարեկամական չեզոքություն, բայց փաստը մնում է փաստ, որ նրանք անմիջապես չմիացան ճակատին: Սակայն հետագայում, ալժիրյան բանակի հաջողությունների տպավորության տակ և ազատագրական շարժման ընդլայնմանը զուգահեռ, տեղի ունեցավ արմատական փոփոխություն նրանց դիրքորոշման մեջ: 1956 թ. Կահիրե մեկնեց ԱՄԴՄ–ի ղեկավար Ֆարհաթ Աբասը, որտեղ նա հանդիպեց Ահմադ Բեն Բելլայի և ԱԱճ–ի այլ ղեկավարների հետ: Նրանց միջև տեղի ունեցած բանակցությունների արդյունքում Ֆարհաթ Աբասը պաշտոնապես հայտարարեց, որ ԱՄԴՄ–ն՝ Ալժիրի մանիֆեստի դեմոկրատական միությունը, միանում է ԱԱճ–ին: Եվ շատ էվոլվեր՝ էվոլյուցիայի ենթարկված ալժիրցիներ, որոնք անդամակցում էին ԱՄԴՄ–ին և նախկինում կանգնած էին Ֆրանսիայի հետ ծուլման կամ միավորման դիրքերում, պաշտպանեցին Ֆարհաթ Աբասի որոշումը և անցան ԱԱճ–ի կողմը: ԱԱճ–ի քաղաքական գծի և գործունեության պաշտպանությամբ հանդես եկան նաև Ալժիրյան ուլեմների ասոցիացիայի միությունը, Տեղական ընտրյալների ֆեդերացի-

ան և այլ ուժեր ու միություններ: ԱՄԴՄ–ի ղեկավար Ֆարհաթ Աբասը և Ալժիրյան ուլեմների ասոցիացիայի միության ղեկավար Թաուֆիկ ալ–Մադանին մտան ԱԱճ–ի ղեկավարության կազմի մեջ:

Հատկանշական էր Տեղական ընտրյալների ֆեդերացիայի ղեկավար Մուհամմադ Բենջալուլի դիրքորոշման փոփոխությունը: Նա սովորաբար համարվում էր ալժիրյան չափավորների տրամադրությունների արտահայտիչ և ապստամբությունը սկսվելուց հետո երկար ժամանակ փորձում էր միջնորդի դեր կատարել ալժիրյան ապստամբների և ֆրանսիական գաղութարարների միջև: Սակայն անկախության պատերազմի տրամաբանությունը, ֆրանսիացիների կողմից ապստամբների նկատմամբ կիրառվող դաժան պատժամիջոցները և նրանց կողմից զիջման գնալու ցանկության բացակայությունը ստիպեցին Մուհամմադ Բենջալուլին կանգնել ԱԱճ–ի կողքին:

Բոլորովին այլ էր Մուհամմադ Մեսալի Հաջի քաղաքականությունը: Նա Դեմոկրատական ազատությունների հաղթանակի շարժման՝ ԴԱՀՇ–ի արգելումից հետո ստեղծեց մի նոր կազմակերպություն, որը կոչվեց Ազգային ալժիրյան շարժում (ԱԱՇ) և ոչ միայն չմիացավ ԱԱճ–ին, այլև ինքն էր հավակնում դառնալ Ալժիրի ազգային հեղափոխության ղեկավարը՝ պայքարի ավելի արմատական մեթոդներով: Նա դարձավ ԱԱճ–ի մրցակիցը և բացահայտ պայքար ծավալեց նրա դեմ ինչպես Ալժիրում, այնպես էլ Ֆրանսիայում: Այդ պայքարում ԱԱՇ–ն տանուլ տվեց, քանի որ ալժիրցիների մեծամասնությունը պաշտպանեց Ազգային ճակատին: Բայց անկախության պատերազմի ժանանակ նրանց հակամարտության զոհ դարձավ 5000 հազ. ալժիրցի:

Ինչ վերաբերում է Ալժիրի կոմունիստական կուսակցությանը, ապա նա անմիջապես չկողմնորոշվեց իրադրության մեջ: Դա արտահայտվեց նրանում, որ նա թերագնահատեց զինված պայքարի կամ պատերազմի միջոցով անկախություն նվաճելու նշանակությունը՝ չհավատալով դրա հնարավորությանը, թեև նրա համակրանքը ապստամբ ալժիրցիների կողմն էր: Սակայն հետագայում նա ուղղեց իր սխալը, և 1955 թ. կայացած կուսակցության Կենտրոնական կոմիտեի պլենումը որոշեց ակտիվ կերպով մասնակցել զինված պայքարին: Ֆրանսիական իշխանությունները, ի պատասխան այդ քայլի, արգելեցին կուսակցության գործունեությունը:

Ահա այսպիսին էր ուժերի տեղաբաշխումը և իրադրությունը, եթե կարելի է այդպես անվանել, ալժիրյան ճամբարում:

Իսկ ինչ վերաբերում էր ֆրանսիական ճամբարին, ապա այստեղ իրադրությունը պակաս բարդ և հակասական չէր:

Սկզբնական շրջանում ֆրանսիական կառավարությունը որոշեց անմիջապես ճնշել ապստամբությունը և կանխել նրա վերածումը անկախության պատերազմի: Այդ խնդիրը դրվեց ֆրանսիական ռազմական ուժերի վրա: Ալժիրում կենտրոնացվեց մոտ 400 հազ. զորք: Դա մի հզոր ռազմական բռունցք էր, որի տրամադրության տակ, բացի զենքի սովորական տեսակներից, կային նաև ավիացիա, տանկեր, ծանր հրետանի և այլն: Ֆրանսիական զորքերը պատասխան պատերազմական գործողություններ ծավալեցին ալժիրցիների դեմ: Նրանք հիմնական հարվածը հասցրեցին գյուղական վայրերին՝ վերացնելով բազմաթիվ գյուղեր, մի կողմից, և կիրառելով գյուղական բնակչության բռնի տեղահանում՝ մյուս կողմից: Այդ տակտիկայի նպատակն էր Ալժիրի ազատագրության բանակը զրկել հիմնականում նրան սնող գյուղական շրջաններից և գյուղական բնակչության աջակցությունից: Մեծ չափեր ընդունեցին ալժիրցիների նկատմամբ կիրառվող բռնարարքները:

Ֆրանսիայի մարտավարության մյուս կարևոր մասը քաղաքական ապակողմնորոշիչ քայլերն էին: 1955 թ. Ալժիրի նոր գլխավոր նահանգապետի պաշտոնում նշանակվեց ձախակողմյան, նախկին սոցիալիստ, դրգոլականներին հարող Ժակ Սուստելը, որի վրա դրվեց Ալժիրը խաղաղեցնելու պարտականությունը: Նա նույն տարվա հունիսին ներկայացրեց «բարենորոգումների» իր ծրագիրը, որը խարսխված էր Ֆրանսիային Ալժիրի ինտեգրման գաղափարի վրա: Այդ ծրագիրը լրիվ անտեսում էր նոր իրադրությունը և այն փաստը, որ ալժիրցիները պատերազմ էին սկսել անկախության համար:

Սուստելի ծրագիրը նախատեսում էր նաև տնտեսական և սոցիալական բնույթի որոշ քայլեր, որոնք իբրև թե կոչված էին ինչ–որ չափով բավարարել տեղացիների պահանջները, առանց, սակայն, կոլոնների անհանգստությունն առաջացնելու: Իրականում դրանք 1947 թ. Ալժիրի օրգանական ստատուտով առաջարկվող միջոցառումներն էին, որոնք այդպես էլ չկիրառվեցին:

Ժակ Սուստելի ծրագիրը ժամանակավրեպ էր և այլևս չէր համապատասխանում ապստամբություն բարձրացրած ալժիրցիների պահանջներին: Եվ պատահական չէր, որ 1955 թ. օգոստոսի 20–ին՝ Ժակ Սուստելի ծրագրի առաջադրումից ընդամենը հիսուն օր անց, նոր թափով ծավալվեց ապստամբությունը: Նրա ծավալների մասին էր վկայում

այն փաստը, որ ապստամբություն սկսվեց Ալժիրի 40 կարևոր շրջաններում: Ալժիրյան զորամիավորումներն ազատագրեցին այդ շրջանները ֆրանսիական գաղութարարների և նրանց դաշնակից կոլոնների տիրապետությունից: Աուրեսի, Կաբիլիայի, Ալժիրի, Օրանի և երկրի այլ վայրերում Ալժիրի ազգային բանակը հաստատեց տեղական կառավարման նոր մարմիններ՝ զինվորական վարչություն, որը գործում էր արդյունավետ և մեծ հեղինակություն վայելում տեղական բնակչության մոտ: Նա կանոնավոր հարկեր էր հավաքում, բնակչությանն ապահովում պարենով, իրականացնում արդարադատություն, տեղացիներից զինվորներ հավաքագրում ազգային բանակի համար և այլն: Իսկ մի շարք այլ վայրերում, որոնք ազատագրված չէին, ստեղծվում էին անլեգալ կամ ընդհատակյա սոցիալական, իրավական և քաղաքացիական մարմիններ ու կազմակերպություններ, որոնք ծանր պայմաններում ջանում էին պաշտպանել ալժիրցիների իրավունքները և կազմակերպել նրանց սոցիալական կյանքը: Մի շարք քաղաքներում և գյուղական վայրերում տեղական մարմինների՝ մունիցիպալիտետների ալժիրցի պաշտոնյաները և խորհրդականները հրաժարական էին տալիս ու հեռանում իրենց գբաղեցրած պաշտոններից: Դա բողոքի նշան էր ընդդեմ ֆրանսիական գաղութային քաղաքականության, մի կողմից, և համերաշխության դրսևորում ապստամբ ալժիրցի համերկրացիների հետ՝ մյուս կողմից:

Այս բոլորն ավելի էր խորացնում կառավարման ֆրանսիական համակարգի ճգնաժամը Ալժիրում:

Ժակ Սուստելին չհաջողվեց իրագործել իր առաքելությունը Ալժիրը «խաղաղեցնելու» վերաբերյալ և նա ձեռնունայն վերադարձավ Փարիզ:

Ապստամբությունը սկսվելուց հետո կայացավ մի կարևոր փոփոխություն Ֆրանսիայի քաղաքական կյանքում: Դա ալժիրյան կոլոնների՝ բիզնեսմենների, հողատերերի, առևտրականների, զինվորական և ոստիկանական իշխանությունների դերի տեսակարար կշռի կտրուկ բարձրացումն էր Ֆրանսիայի քաղաքական կյանքում: Նրանք ազդում էին քաղաքական մթնոլորտի ձևավորման վրա բուն Ֆրանսիայում՝ ընդհուպ մինչև կառավարությունների կազմավորման կամ տապալման, նրանց քաղաքական կուրսի մշակման վրա: Այս պարագան հարկ է մշտապես նկատի ունենալ, երբ քննարկվում է Ալժիրի կնճիռը և այն լուծելու Ֆրանսիայի քաղաքականությունը:

Դրա վկայություններից մեկն էլ այն է, որ երբ 1956 թ. հունվարի 2-ին Ֆրանսիայում իշխանության գլուխ եկավ սոցիալիստ Գի Մոլեի

կառավարությունը, ապա նա Ալժիրի մինիստր–ռեզիդենտ նշանակեց մեր կողմից արդեն նշված Ժորժ Կատրուին, որը փոխզիջումների մեծ վարպետ էր: Իսկ դա չէր գոհացնում Ալժիրի կոլոնիստների ամենաարմատական ուժերին, որոնց ճնշման տակ Գի Մոլեն ստիպված էր Կատրուի փոխարեն նշանակել Ռոբեր Լակոստին: Եվ կոլոնիստների ուլտրահետադիմական ուժերին հանգստացնելու համար Գի Մոլեն հայտարարեց, որ Ֆրանսիան երբեք չի ճանաչի Ալժիրի անկախությունը:

Ֆրանսիական կառավարությունը Ռոբեր Լակոստին օժտեց արտակարգ լիազորություններով, և վերջինս մի առանձին եռանդով շարունակեց ալժիրյան ապստամբությունը ռազմական ուժով ճնշելու քաղաքականությունը՝ ապստամբների դեմ նետելով նորանոր ուժեր: Նրա որոշմամբ ցրվեց Ալժիրյան ժողովը, որը, ըստ Ռոբեր Լակոստի, խոչընդոտում էր նրա գործունեությանը: Նա Ալժիրը բաժանեց հինգ շրջանների, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր ընտրովի ասամբլեան: Նա հայտարարեց, որ Ալժիրին կարելի շնորհել ինքնավարություն՝ ապակենտրոնացված կառավարությամբ: Սակայն նա հիմնական շեշտը դնում էր ռազմական գործողությունների և պատիժների վրա: Ֆրանսիական գաղութային իշխանությունները Ալժիրում սկսեցին ստեղծել համակենտրոնացման ճամբարներ, ապստամբությանը մասնակից ալժիրցիների նկատմամբ կիրառել կտտանքներ և շատ հաճախ տանջամահ անել նրանց:

Այս բոլորը հայտնի դարձավ միջազգային հանրությանը, որը դատապարտում էր Ֆրանսիային՝ պահանջելով դադարեցնել բռնարարքները ալժիրցիների նկատմամբ և Ալժիրի հարցը լուծել բանակցությունների ուղիով: Ֆրանսիական կառավարության քաղաքականությունը դատապարտում էին նաև ֆրանսիական դեմոկրատական ուժերը՝ գտնելով, որ միակ ելքը խաղաղ բանակցություններն են ալժիրցիների հետ:

3. 1956 թ. Սումամի համագումարը և նրա որոշումները

Այսպիսի պայմաններում 1956 թ. օգոստոսին ԱԱՃ–ն Սումամում՝ Կաբիլիայում, գումարեց գաղտնի համագումար, որին մասնակցում էին նաև Ալժիրի ազգային բանակի զորահրամանատարները: Նման համագումարի հրավիրումը հասունացած հարց էր, քանի որ անհրաժեշտ էր հստակություն մտցնել ԱԱՃ–ի ծրագրում և քաղաքական խնդիրներում, որոշել հետագա քայլերը, այդ թվում և սոցիալական բնագավառում: Նոր ընդունված ծրագրում կենտրոնական հարցը մնում էր անկախ պե-

տականության հարցը: Այդ կապակցությամբ ծրագրում արձանագրված էր, որ ԱԱՇ–ի գլխավոր խնդիրն է «ստեղծել Ալժիրի անկախ, դեմոկրատական և սոցիալական հանրապետություն»: Դեմոկրատական Ալժիրում հարգվելու էին բոլոր քաղաքացիների հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ անկախ նրանց կրոնական, էթնիկական և ռասայական պատկանելությունից: Սոցիալ–տնտեսական բնագավառում նախատեսվում էին ագրարային բարեփոխումներ, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացում՝ նպատակ ունենալով վերացնել երկարամյա ֆրանսիական գաղութային տիրապետության հետևանքները:

Համագումարն ընդունեց կազմակերպչական բնույթի որոշումներ: Ստեղծվեց Ալժիրի հեղափոխության ազգային խորհուրդ, որին կից կազմավորվեց Կոորդինացիոն կոմիտե: Սումամի կոնգրեսը որոշեց 1956–1957 թթ. նոր թափ հաղորդել անկախության համար պայքարին:

Համագումարում առաջին անգամ ուրվագծվեցին Ալժիրի արտաքին քաղաքականության գերակայությունները: Գլխավորը համարվեց հասնել այն բանին, որ Ալժիրի հարցը դառնա միջազգային հարց, միջազգային կազմակերպությունների և հանրության քննարկման առարկա: Ալժիրի հեղափոխության ազգային խորհուրդը վստահ էր, որ միջազգային հանրությունը, Ասիայի և Աֆրիկայի մի շարք երկրներ, ամբողջ արաբական աշխարհը, ինչպես նաև Խորհրդային Միությունն ու սոցիալիստական մյուս երկրները կպաշտպանեն Ալժիրի արդար դատը, կօժանդակեն նրան, իսկ որոշ երկրներ անգամ կդառնան նրա դաշնակիցները: Կարևոր համարվեց Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրների ֆեդերացիայի ստեղծումը, որի բաղկացուցիչ մասն էր կազմելու անկախ Ալժիրը: Ալժիրը ստանձնում էր նաև Ալժիրում բնակվող եվրոպացիների իրավունքների, տնտեսական և մշակութային շահերի ապահովումը: Իսկ ինչ վերաբերում էր Ֆրանսիային, ապա համագումարը գտնում էր, որ ֆրանս–ալժիրյան հարաբերությունները պետք է լինեին երկու անկախ պետությունների իրավահավասար հարաբերություններ:

Սումամում ընդունված որոշումներն ընդհանուր առմամբ արժանի են դրական գնահատականի: Նրանք ավելի հստակ դարձրեցին պայքարի գլխավոր խնդիրները, նախանշեցին հիմնական անելիքները քաղաքական, տնտեսական, սոցիալական և ռազմական ոլորտներում:

Դեռ նոր էր ավարտվել Սումամի համագումարը, երբ Մարոկկոն և Թունիսը 1956 թ. հոկտեմբերին ներկայացրին համատեղ ծրագիր Հյուսիսաֆրիկյան ֆեդերացիա ստեղծելու վերաբերյալ, որի մեջ պետք է

միավորվեին Ալժիրը, Թունիսը և Մարոկկոն: Այն պետք է կապված լիներ Ֆրանսիայի հետ և նպաստեր հեղափոխության ավարտին Ալժիրում:

Նախատեսվում էր, որ Մարոկկոյում կայացած կոնֆերանսն իր շարունակությունը պետք է ունենար Թունիսում: Այդ նպատակով ԱԱՃ–ի պատվիրակությունը Ահմադ Բեն Բելլայի գլխավորությամբ Մարոկկոյից ուղևորվեց Թունիս: Սակայն հոկտեմբերի 22–ին այն ինքնաթիռին, որի մեջ գտնվում էին Բեն Բելլան և նրա զինակիցները, ֆրանսիացիները հարկադրեցին վայրէջք կատարել Ալժիրում և նրանց բոլորին ձերբակալեցին: Ֆրանսիացիների այդ քայլը ծանր հարված էր բանակցություններ-ի միջոցով հարցը կարգավորելու սպասումներին: Ընդհակառակը, դա ավելի բորբոքեց զինված պայքարը:

Մինչ այդ պատերազմական գործողությունները հիմնականում ընթանում էին գյուղական շրջաններում: Այժմ ԱԱՃ–ն որոշեց զինված պայքարը տարածել նաև քաղաքների վրա: Դրա վառ վկայությունը հանդիսացան մարտերը Ալժիր քաղաքում: 1957 թ. գարնանը Ազգային ճակատը մեծ հաջողությամբ կազմակերպեց համընդհանուր գործադուլ, որին ակտիվորեն մասնակցեցին ոչ միայն ալժիրցի բանվորներն ու աշխատավորները, այլև գործարարները, ինչն ինքնին վերցրած կարևոր երևույթ էր: Ֆրանսիական կառավարությունը հանձնարարեց գեներալ Ժակ Մասյուին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ ճնշելու ալժիրցի զինված խմբերի գործողությունները Ալժիր քաղաքում և ստիպել գործադուլավորներին դադարեցնել գործադուլը: Ֆրանսիական գեներալը իսկական տեռոր սանձազերծեց ալժիրցի հայրենասիրական ուժերի դեմ: Նրա բարբարոսական գործողությունները դատապարտեց միջազգային հանրությունը:

4. 1958 թ. մայիսի 13–ի պետական հեղաշրջումը Ֆրանսիայում, գեներալ Դը Գոլի վերադարձը իշխանության գլուխ և դրա ազդեցությունը ալժիրյան խնդրի լուծման վրա

Ակնհայտ էր, որ Ֆրանսիան կորցրել էր վերահսկողությունը Ալժիրի վրա և ընկղմվել գաղութային կեղտոտ պատերազմի մեջ: Նա այլևս ի վիճակի չէր հարցը լուծել զենքի միջոցով: Խիստ ընկել էր նաև Ֆրանսիայի միջազգային վարկանիշը, և նա Ալժիրի հարցում, այդ երկրի դեմ մղվող պատերազմում հայտնվել էր միջազգային մեկուսացման մեջ: Բայց Ֆրանսիական կառավարությունը չէր ուզում ընդունել այդ իրողությունը

և համապատասխան փոփոխություններ մտցնել Ալժիրում իր քաղաքականության մեջ:

Սակայն այն, ինչ չէին ուզում նկատել Փարիզում, տեսնում էին Ալժիրում՝ տեղական ֆրանսիական ռազմական և ոստիկանական ուժերը և նրանց ղեկավարությունը: Նրանց շարքերում տեղի էին ունենում լուրջ խմորումներ: Նրանք գտնում էին, որ ֆրանսիական կառավարությունները, որոնք այդ տարիներին գտնվել էին կառավարման ղեկի մոտ, ընդունակ չեն եղել Ալժիրի հարցը լուծելու այնպես, ինչպես ցանկանում էին իրենք՝ եվրոպական կոլոնները և նրանց դաշնակից քաղաքական ուժերը Ֆրանսիայում: Նրանք այլևս չէին վստահում այդ կառավարություններին: Իսկ այդ ուժերի ուզածը միայն մեկն էր. Ալժիրը եղել և պետք է մնա Ֆրանսիայի գաղութը ու նրա գաղութային կարգավիճակի մեջ սկզբունքային բնույթի փոփոխություններ չպետք է թույլ տալ: Եվ նրանք նախաձեռնությունը վերցրեցին իրենց ձեռքը:

Ալժիրում գտնվող ֆրանսիական ռազմական հրամանատրությունը կամ գեներալները դիմեցին մի շարք քայլերի: Ալժիրում ֆրանսիական բանակի հրամանատար Ռաուլ Սալանի հրամանով Ալժիրում մտցվեց կառավարման նոր համակարգ՝ կադրիլաժի համակարգ: Նա երկիրը բաժանեց սեկտորների, որտեղ տեղակայվեցին ֆրանսիական զորքերի մշտական կայազորներ: Նրանք պատասխանատու էին տվյալ կադրիլում ապստամբությունը ճնշելու համար: Սալանը ուժեղացված պարեկություն սահմանեց Մարոկկոյի և Թունիսի հետ Ալժիրի սահմանների երկայնքով՝ կանխելով զենքի և մարդկանց ներթափանցումը Ալժիր՝ ապստամբներին օգնելու համար:

1958 թ. սկզբներին Ալժիրում ստեղծվեց Հասարակական անվտանգության կոմիտե, որը փոխարինեց Ալժիրում գոյություն ունեցող քաղաքացիական վարչությանը:

Հրապարակի վրա կրկին հայտնվեց ժակ Սուստելը, որը սերտ կապեր հաստատեց Ալժիրում գտնվող ֆրանսիական զինվորականների և կոլոնների ազդեցիկ ղեկավարների հետ:

Այս ուժերի նպատակն էր տապալել Ֆրանսիայի կառավարությանը և իշխանությունը հանձնել գեներալ Դը Գոլին, որը քաղաքական ասպարեզից հեռացել էր դեռևս 1946 թ.:

Նրանք 1958 թ. պետական հեղաշրջում կատարեցին Ֆրանսիայում: Ֆրանսիայում այդ գործողությունները կոորդինացնում էր Սուստելը: 1958 թ. մայիսի 13–ին ռազմական խունտան գեներալ Մասյուի գլ-

խավորությամբ գրավեց իշխանությունը Ալժիրում, իսկ գեներալ Սալանը ստանձնեց Հասարակական անվտանգության կոմիտեի ղեկավարությունը: Նրանք Ալժիրից վերջնագրի ձևով պահանջեցին Ֆրանսիայի պրեզիդենտ Ռենե Կոտիից երկրի կառավարումը հանձնել գեներալ Դը Գոլին և նրան հնարավորություն տալ կազմել արտակարգ լիազորություններով օժտված ազգային միասնության կառավարություն, որի գլխավոր նպատակներից մեկն էր լինելու կանխել «Ալժիրի լքումը»: Ռենե Կոտին բավարարեց գեներալների պահանջը, որը նշանակում էր պետական հեղաշրջման հաղթանակը և ֆրանսիական Չորրորդ հանրապետության վախճանը:

Սկզբնական շրջանում թվում էր, թե Դը Գոլը պատրաստ է բավարարել ալժիրյան խռովարարների պահանջը և Ալժիրը պահել ֆրանսիական տիրապետության ներքո: 1958 թ. հունիսի 4–ին նա այցելեց Ալժիր, եղավ նրա տարբեր շրջաններում, հանդիպեց կոլոնների ղեկավարների հետ և արտասանեց «Je vous ai compri» («Ես ձեզ հասկացա») բառերը, որոնք այնուհետև դարձան թևավոր արտահայտություն: Դա մեծ հույս ներշնչեց Մասյուին, Սալանին, Սուստելին և մյուս զինվորականներին ու եվրոպական կոլոններին, որ Դը Գոլը հենց այն գործիչն է, որն ընդունակ է բավարարել նրանց պահանջները: Նրանք ավելի ոգևորվեցին, երբ գեներալ Դը Գոլը Ալժիրում իր հանդիպումներից մեկի ժամանակ բազմահազար ամբոխի առջև հայտարարեց. «Կեցցե՛ ֆրանսիական Ալժիրը»:

Դը Գոլի իշխանության գլուխ գալը նոր իրադրություն ստեղծեց Ալժիրում, որը չէր կարող հաշվի չառնել Ալժիրի հեղափոխական ղեկավարությունը: ԱԱՃ–ի որոշմամբ 1958 թ. սեպտեմբերի 19–ին ստեղծվեց Ալժիրի Հանրապետության ժամանակավոր կառավարություն (ԱՀԺԿ)՝ Ֆարհաթ Աբասի գլխավորությամբ: Ֆարհաթ Աբասին կառավարության ղեկավար նշանակելը բացատրվում է նրանով, որ ԱԱՃ–ի մյուս ականավոր ղեկավարները՝ Ահմադ Բեն Բելլան և մյուսները ձերբակալված էին: Կառավարության նստավայրը հաստատվեց Թունիսում: ԱՀԺԿ–ի ստեղծումից հետո Ալժիրյան հեղափոխության ազգային խորհրդի վրա դրվեցին Ալժիրի պառլամենտի պարտականությունները: Բավականին կարճ ժամանակաշրջանում՝ 1958–1960 թթ,. ԱՀԺԿ–ն ճանաչեցին Մարոկկոն, Թունիսը, Եգիպտոսը և այլ արաբական երկրներ, Ասիայի և Աֆրիկայի մի շարք երկրներ: Ճանաչողների շարքում էր նաև Խորհրդային Միությունը:

Ժամանակավոր կառավարության ստեղծումը և նրա ճանաչումը մի շարք երկրների կողմից ամրապնդեցին Ալժիրի դիրքերը, որը հաշվի առավ Դը Գոլը:

Այդ ընթացքում որոշակի, կարելի է ասել արմատական փոփոխություններ տեղի ունեցան Դը Գոլի տրամադրություններում և Ալժիրի հարցի նկատմամբ նրա դիրքորոշման մեջ: Դը Գոլը պրագմատիկ և սթափ ականավոր պետական գործիչ էր և հասկանում էր, որ կան հարցեր, որոնց լուծմանը չի կարելի մոտենալ զգացմունքային մղումներով: Սկզբնական էյֆորիային նրա մոտ փոխարինելու եկավ իրադրության անաչառ և սթափ վերլուծությունը, որը նրան ավելի ու ավելի վատատես էր դարձնում ալժիրյան կնճիռը ուժով լուծելու և Ալժիրը ամեն գնով Ֆրանսիայի տիրապետության տակ պահելու հնարավորության հարցում: Եկավ մի պահ, երբ նա այլևս չէր հավատում այդ հնարավորությանը: Գեներալն անցավ վճռական գործողությունների:

Նա ստեղծեց Հինգերորդ հանրապետության սահմանադրության նախագիծը մշակող կոմիտե: Կոմիտեի ներկայացված նախագծում նախատեսվում էր, որ Ալժիրը լինելու է Ֆրանսիայի հետ ասոցիացված պետություն, բայց չի լինելու նրա ինտեգրալ մասը:

Դը Գոլը դիմեց ապստամբության ղեկավարներին, առաջարկելով դադարեցնել կրակը, վերջ տալ թշնամությանը և մասնակցել հանրաքվեին: Սակայն գեներալի այդ կոչը դրական արձագանք չգտավ ալժիրյան ղեկավարության կողմից: Ֆարհաթ Աբասը հայտարարեց, որ «կրակի դադարեցումը սոսկ ռազմական խնդիր չէ: Դա իր էությամբ քաղաքական խնդիր է, և բանակցությունները պետք է ընդգրկեն Ալժիրի ամբողջ պրոբլեմը»:

1958 թ. սեպտեմբերին անցկացվեց հանրաքվե ամբողջ Ֆրանսիայում, ինչպես նաև Ալժիրում և ֆրանսիական մյուս գաղութներում ու կախյալ երկրներում: Հանրաքվեին մասնակցեց ալժիրցիների 80%–ը, որոնց 96%–ը քվեարկեց հօգուտ սահմանադրության:

1959 թ. փետրվարին Դը Գոլն ընտրվեց Ֆրանսիայի պրեզիդենտ:

5. Ֆրանս–ալժիրյան բանակցությունները և Ալժիրի անկախության հռչակումը

Դը Գոլը, արդեն որպես պրեզիդենտ, 1959 թ. հոկտեմբերին կրկին այցելեց Ալժիր և Օրանում հայտարարեց Ալժիրում պատերազմին վերջ

տալու իր ծրագրի մասին: Նա առաջին անգամ հայտարարեց Ալժիրի ինքնորոշման և Ալժիրի պետության ստեղծման մասին, որը պետք է սերտորեն կապված լիներ Ֆրանսիայի հետ:

Դը Գոլի այս ձևակերպումը դրական արձագանք գտավ Ֆրանսիայում, որտեղ մեծանում էր Ալժիրի անկախությունը ճանաչելու կողմնակիցների թիվը: Նույնն էր պահանջում միջազգային հանրությունը: Իսկ Ֆարհաթ Աբասը Ալժիրի Հանրապետության ժամանակավոր կառավարության անունից հայտարարեց, որ Դը Գոլի առաջարկությունը կարող է հիմք ծառայել բանակցությունների և Ալժիրի խնդրի լուծման համար:

Ալժիրի կոլոնները և նրանց թիկունք կանգնած զինվորական և ոստիկանական ուժերը սվիններով դիմավորեցին Դը Գոլի առաջարկությունը Ալժիրի ինքնորոշման մասին: Նրանք գեներալին մեղադրեցին դավաճանության մեջ: 1960 թ. հունվարին նրանք զինված ելույթներ կազմակերպեցին, իսկ Ալժիր քաղաքի փողոցներում բարիկադներ կառուցեցին:

1961 թ. ապրիլ ամսին Ալժիրում կենտրոնացված գեներալները և նրանց հավատարիմ ուժերը ապստամբություն բարձրացրին Ալժիրում, որը պատմության մեջ մտել է որպես «գեներալների խռովություն»: Նրանց նպատակն էր իրենց վերահսկողությունը սահմանել ամբողջ Ալժիրի վրա, այն վերածել իրենց քաղաքական և ռազմական հենարանի և տապալել պրեզիդենտ Դը Գոլին: Նրանք միայն այդպես էին տեսնում Ալժիրը Ֆրանսիայի գաղութային տիրապետության տակ պահելու հնարավորությունը: Դավադիրների կողմն անցան Ալժիրում գտնվող ֆրանսիական Արտասահմանյան լեգեոնի առանձին զորամիավորումներ: Ստեղծվեց Գաղտնի զինվորական կազմակերպություն (OAS), որը համակարգելու էր դավադիր ուժերի գործողությունները: Օասականները շատ վատ դերակատարում են ունեցել Ալժիրի 1960–ական թվականների պատմության մեջ:

Դը Գոլը դիմեց վճռական քայլերի և կարողացավ չորս օրվա ընթացքում ճնշել գեներալների խռովությունը:

Խռովության ճնշումը նոր և իրատեսական հեռանկարներ բացեց Ալժիրի հարցը խաղաղ ճանապարհով և քաղաքական մեթոդներով լուծելու համար: Խնդրի լուծումը ռազմական ոլորտից տեղափոխվեց բանակցությունների ոլորտ:

Բանակցությունները Ֆրանսիայի և Ալժիրի միջև սկսվեցին 1961 թ. մարտին ֆրանսիական փոքրիկ առողջարանական էվիան քաղա-

քում, որը հռչակված էր իր բուժիչ հանքային ջրերով: Մարտի 18–ին ստորագրվեց համաձայնագիր Ֆրանսիայի և Ալժիրի Հանրապետության ժամանակավոր կառավարության միջև կրակի դադարեցման մասին: Դա առաջին դրական քայլն էր: Մայիսի 13–ին կողմերի միջև սկսվեցին լայնածավալ բանակցություններ, որոնք ընդգրկում էին բոլոր հիմնական հարցերը: Բանակցությունները հարթ չէին ընթանում, և կողմերը հարկադրված էին հաղթահարել բազմաթիվ դժվարություններ: Ի վերջո, հաղթանակեց առողջ բանականությունը, և կողմերը փոխադարձ զիջումների հիման վրա հասան համաձայնության:

Էվիանի համաձայնագրի կենտրոնական հարցը, հասկանալի է, Ալժիրի անկախության հարցն էր: Նախատեսվում էր, որ զինադադարի կնքումից ոչ ուշ, քան վեց ամիս անց անկախության վերաբերյալ պետք է անցկացվեր հանրաքվե: ԱԱԵ–ն համարվեց օրինական կազմակերպություն և ստանում էր լեգալ գործունեության իրավունք: Դրա հետ կապված՝ ալժիրյան բոլոր քաղաքական բանտարկյալները, որոնք մասնակցել էին անկախության պատերազմին, ազատ էին արձակվում:

Համաձայնագրի մի շարք կետեր վերաբերում էին եվրոպական կոլոններին, նրանց իրավունքներին և հետագա ճակատագրին: Ալժիրյան կողմը հանձն էր առնում հարգել եվրոպացիների սեփականությունը, մշակույթը, կրոնական իրավունքները և ճանաչել նրանց քաղաքական իրավահավասարությունը: Սահմանվում էր երեքամյա անցումային շրջան եվրոպացիների, այսինքն՝ կոլոնների համար, որի ավարտին նրանք պարտավոր էին կա՛մ ընդունել ալժիրյան քաղաքացիություն, կա՛մ համարվել օտարերկրացիներ՝ զրկվելով որոշ արտոնություններից և իրավունքներից:

Ալժիրի վերաբերյալ հանրաքվեն տեղի ունեցավ 1962 թ. հուլիսի 1–ին: Հանրաքվեի մասնակիցները համարյա միաձայն քվեարկեցին հօգուտ Ալժիրի անկախության:

Հիմնվելով քվեարկության արդյունքների վրա՝ Ֆրանսիայի պրեզիդենտ գեներալ Շառլ դը Գոլը 1962 թ. հուլիսի 3–ին Ալժիրը պաշտոնապես ճանաչեց որպես անկախ պետություն:

Ալժիրի ազգային ճակատը հուլիսի 5–ը հայտարարեց անկախության օր, որը յուրաքանչյուր տարի նշվում է որպես ազգային տոն: Այդ օրը պատահականորեն չէր ընտրվել: 132 տարի առաջ՝ 1830 թ. հուլիսի 5–ին, ֆրանսիացիները ներխուժեցին Ալժիր և գրավեցին այն: Այժմ այդ օրը դիտվում էր որպես հաղթանակի օր ֆրանսիացիների նկատմամբ:

Այսպիսով՝ ութ տարի տևած անկախության պատերազմն ավարտվեց Ալժիրի ժողովրդի, նրա ազգային–հայրենասիրական բոլոր ուժերի հաղթանակով: Դա պատմական նշանակություն ունեցող իրադարձություն էր:

Սկսվեց նոր փուլ Ալժիրի նորագույն պատմության մեջ:

IV. ԱԼԺԻՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

1. Ալժիրի ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության հռչակումը և պետական կառավարման մարմինների ձևավորումը

Անկախության հռչակումից հետո Ալժիրի առջև անմիջականորեն կանգնած խնդիրների մեջ ամենակարևորն ինստիտուցիոնալ հարցերն էին: Անհրաժեշտ էր իրավական հիմք ստեղծել պետության և նրա կառավարական մարմինների ձևավորման համար: 1962 թ. սեպտեմբերի 20–ին կայացան Ազգային սահմանադրական ժողովի ընտրություններ, որի առջև իր լիազորությունները վայր դրեց Ալժիրի հանրապետության ժամանակավոր կառավարությունը՝ Ֆարհաթ Աբասի գլխավորությամբ:

1962 թ. սեպտեմբերի 26–ին Ազգային ժողովը Ալժիրը պաշտոնապես հռչակեց Ալժիրի ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն՝ ԱԺԴՀ: Նոր կառավարություն կազմելը հանձնարարվեց Ահմադ Բեն Բելլային, որին պաշտպանում էին ԱԱճ–ի և Ալժիրյան ազգային բանակի հրամանատարության ճնշող մեծամասնությունը: Իսկ Ալժիրի ժամանակավոր կառավարության նախկին ղեկավար Ֆարհաթ Աբասը ընտրվեց Ազգային ժողովի նախագահ:

1963 թ. օգոստոսին Սահմանադիր ժողովը հաստատեց ԱԺԴՀ–ի Սահմանադրության նախագիծը և վերջնական հավանության ու հաստատման համար դրեց հանրաքվեի: Սեպտեմբերի 8–ին կայացած հանրաքվեն հավանություն տվեց սահմանադրությանը, որը հենց նույն օրը մտավ ուժի մեջ:

Ըստ սահմանադրության պրեզիդենտն ընտրվում է հինգ տարի ժամանակով և հանդիսանում է գործադիր մարմնի՝ կառավարության և պետության ղեկավար: Այդ երկու բարձրագույն պաշտոնների համատեղումը նրան դարձնում է առանցքային դեմք երկրի պետական կառավարման համակարգում: Նրա թեկնածությունը առաջադրվում է Ալժիրի

ազգային ճակատի կողմից, որը, սահմանադրության համաձայն, հանդիսանում էր, ինչպես արձանագրված էր, «Ալժիրի միակ ավանգարդային կուսակցությունը»: ԱԱճ–ն, ըստ սահմանադրության, կոչված էր «իրականացնել ժողովրդական դեմոկրատական հեղափոխության խնդիրները և կառուցել սոցիալիզմ Ալժիրում»: Պրեզիդենտի ընտրությունները ընդհանուր և գաղտնի էին, և նա պատասխանատու էր Ազգային ժողովի առջև: Ալժիրի առաջին պրեզիդենտ 1963 թ. սեպտեմբերի 15–ին ընտրվեց Ահմադ Բեն Բելլան, պահպանելով նաև կառավարության ղեկավարի պաշտոնը: Նա միաժամանակ համարվում էր Ալժիրի զինված ուժերի գլխավոր հրամանատար:

Ազգային ժողովը, որն ընտրվում էր ութ տարի ժամանակով, երկրի բարձրագույն օրենսդիր մարմինն էր, որն օժտված էր կառավարության գործունեության վրա վերահսկողություն սահմանելու լիազորություններով: Նրա նախագահը պրեզիդենտից հետո համարվում էր երկրորդ դեմքը պետության մեջ: Սահմանադրության ընդունումից հետո Ազգային ժողովի առաջին նախագահ ընտրվեց Հաջ Բեն Ալան, որը Ահմադ Բեն Բելլայի մերձավոր զինակիցներից էր:

Փոփոխություններ տեղի ունեցան նաև Ալժիրի ազգային ճակատում:

1964 թ. ապրիլի 16–23–ը կայացավ Ալժիրի ազգային ճակատի հիմնադիր համագումարը:

Նա թեև պահպանեց իր անունը՝ Ալժիրի ազգային ճակատ, սակայն վերածվեց քաղաքական կուսակցության՝ դառնալով միակ կառավարող կուսակցությունը: Համագումարն ընտրեց 80 հոգուց կազմված Կենտրոնական կոմիտե: Նրա կազմում ստեղծվեց Քաղաքական բյուրո՝ կազմված 17 անդամներից, այդ թվում՝ պրեզիդենտ Ահմադ Բեն Բելլան, կառավարության նախագահի առաջին տեղակալ և ազգային պաշտպանության նախարար Հուարի Բումեդիենը և այլն: Բեն Բելլան դարձավ կուսակցության գլխավոր քարտուղար:

Այսպիսով՝ Ահմադ Բեն Բելլան կարողացավ իր ձեռքում կենտրոնացնել Ալժիրի պետական, քաղաքական և ռազմական ամբողջ իշխանությունը:

2. Ալժիրի զարգացման «Տրիպոլյան ծրագիրը»

Անկախություն նվաճած Ալժիրը շատ ծանր ժառանգություն ստացավ ֆրանսիական ավելի քան 130–ամյա գաղութային տիրապետությու-

նից: Հետամնաց տնտեսություն, աղքատություն, գործազրկություն և հողազրկություն, կրթական և առողջապահական համակարգի բացակայություն. ահա Ալժիրի սոցիալ–տնտեսական վիճակի ընդհանուր պատկերը: Պակասը լրացրեց անկախության համար մղված ութամյա պատերազմը՝ հարյուրավոր ավերված գյուղեր, լքված բնակավայրեր ու հողակտորներ, ավերված և շարքից դուրս եկած ենթակառուցվածքներ, անգործունեության մատնված ձեռնարկություններ, արհեստանոցներ և այլն:

Մեծ էին մարդկային կորուստները: Պատերազմի ընթացքում զոհվեց մոտ մեկ միլիոն մարդ, գլխավորապես աշխատունակ բնակչությունից, մոտ երկու միլիոն ալժիրցի արտագաղթեց հարևան Թունիս և Մարոկկո, ինչպես նաև Ֆրանսիա ու այլ երկրներ: Դրան պետք է ավելացնել եվրոպական կոլոնների հեռացումը Ալժիրից, որոնց թիվը 1962 թ. հասավ 800 հազարի: Նրանք վախենում էին, որ Ալժիրի ազգային ուժերի հաղթանակը կարող է մեծ սպառնալիք ներկայացնել նրանց կյանքին և սեփականությանը: Եվրոպական կոլոնների մոտ նման վախի տարածմանը և տրամադրությունների ամրապնդմանը նպաստում էին Ալժիրում գործող ֆրանսիական հետադիմական ուժերը, որոնք ոչ մի կերպ չէին կարող համակերպվել Ալժիրի անկախության գաղափարի հետ: Այդ ուղղությամբ մեծ գործունեություն ծավալեցին օասականները, որոնք խրախուսելով ֆրանսիացիների արտագաղթը Ալժիրից՝ նպատակ էին հետապնդում հիմնովին կազմալուծել Ալժիրը և նրան դնել անելանելի վիճակում:

Նրանց հեռացումը առաջ բերեց մասնագիտական կադրերի լուրջ խնդիր Ալժիրում: Հեռացող եվրոպական կոլոնները բարձրորակ մասնագետներ էին՝ ինժեներներ, տեխնիկներ, բժիշկներ, ուսուցիչներ, արտադրության կազմակերպիչներ, ձեռնարկատերեր և այլն: Այդ մասնագիտական խավի հեռացումը ծանր հարված էր անկախության ասպարեզում առաջին քայլերը կատարող և տնտեսապես հետամնաց Ալժիրին: Հարցն ավելի էր բարդանում նրանով, որ Ալժիրից հեռացող ձեռնարկատերերը փակում էին իրենց ձեռնարկությունները՝ գործարանները, ֆիրմաները, արհեստանոցները, որի հետևանքով խիստ բարձրացավ գործազուրկների թվաքանակը: Նրանք իրենց հետ երկրից դուրս էին հանում կապիտալը, անգամ սարքավորումները և համապատասխան փաստաթղթերը:

Տնտեսական ծանր վիճակից դուրս գալու և նորանկախ Ալժիր հետագա զարգացման հիմնախնդիրները սահմանելու նպատակով 1962 թ. հունիսին Լիբիայի մայրաքաղաք Տրիպոլիում կայացավ Ալժիրի հեղա-

փոխության ազգային խորհրդի նստաշրջանը: Նա ընդունեց մի ծրագրային փաստաթուղթ, որը հայտնի է «Տրիպոլյան ծրագիր» անունով:

Ծրագրում սահմանված էին Ալժիրի քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման հիմնական սկզբունքներն ու փուլերը և անկախ Ալժիրի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները:

Նրանում արձանագրված էր սկզբունքային կարգի մի կարևոր հիմնադրույթ առ այն, որ «ազգային անկախության համար պայքարին հաջորդելու է ազգային դեմոկրատական հեղափոխությունը և գիտակցական ստեղծագործություն՝ սոցիալիստական և ժողովրդավարության սկզբունքների հիման վրա»: Այս տեսադրույթը հանդիսանում էր առանցքային Ալժիրի ապագայի կերտման տեսանկյունից: Ըստ այդմ՝ նախատեսվում էր տնտեսության մի շարք ճյուղերի, առաջին հերթին երկրի բնական հարստությունների, որոնց մեջ գլխավորը նավթն էր, բանկերի, ապահովագրական ընկերությունների, տրանսպորտի միջոցների և արտաքին առևտրի, ինչպես նաև ծառայությունների ազգայնացում: Մտցվում էր տնտեսության պլանավորման սկզբունքը և նախատեսվում աշխատավորների մասնակցությունը երկրի տնտեսական կառավարմանը: Առաջնահերթ խնդիր էր համարվում արդյունաբերության վերագործարկումը, ճանապարհների, ընդհանրապես ենթակառույցների՝ ինֆրաստրուկտուրայի, քանդված դպրոցական և վարչական շենքերի վերականգնումը և այլն:

Ծրագրում կարևոր տեղ էր հատկացված ագրարային ոլորտին, որը Ալժիրի համար տվյալ փուլում թերևս ամենակենսական նշանակություն ունեցող բնագավառն էր՝ հաշվի առնելով, որ Ալժիրը գյուղատնտեսական երկիր էր, և բնակչության հիմնական մասը զբաղված էր այդ ոլորտում: Առաջարկվում էր կիրառել ագրարային ռեֆորմ, որի հիմքում դրվում էր «հողը նրան, ով այն մշակում է» սկզբունքը, հողային ավելցուկների բաժանումը հողազուրկ և աղքատ գյուղացիներին, և, վերջապես, գյուղում արտադրական կոոպերատիվների կազմակերպում:

Արտաքին քաղաքականության բնագավառում ծրագիրը հավաստեց, որ Ալժիրի արտաքին քաղաքականությունն իր բնույթով հակագաղութային է, և Ալժիրը չի միանում գոյություն ունեցող ռազմաքաղաքական խմբավորումներին: Նա համարվեց Չմիացած երկրների շարժման բաղկացուցիչ մաս:

Միաժամանակ ընդգծվում էր, որ Ալժիրը պատրաստ էր կապեր և համագործակցություն հաստատել բոլոր այն երկրների հետ, որոնք

հարգում են Ալժիրի անկախությունը և պատրաստ են նրա հետ հաստատել իրավահավասար հարաբերություններ: Բայց, այդուհանդերձ, ընդգծվում էր սոցիալիստական երկրների հետ հարաբերությունների կարևորությունը՝ ելնելով այն տեսադրույթից, որ «իմպերիալիզմից ազատագրվելու իրական հնարավորություններ ստեղծում է սոցիալիստական երկրների աջակցությունը, որոնք պատերազմի ժամանակ տարբեր ձևերով հանդես էին գալիս մեր կողմից, և որոնց հետ մենք պետք է ամրապնդենք արդեն գոյություն ունեցող կապերը»:

Ահա այսպիսին էր ընդհանուր գծերով «Տրիպոլիի ծրագրի» բովանդակությունը: Եվ երբ կազմավորվեցին անկախ Ալժիրի կառավարման մարմինները, ու նա ունեցավ իր պրեզիդենտը, կառավարությունը և Ազգային ժողովը, որոշվեց, որ Ալժիրի կառավարության գործունեության հիմքում պետք է դրվի «Տրիպոլիի ծրագիրը» և նրանում արձանագրված տեսադրույթները:

Հետագայում նա համալրվեց ԱԱճ–ի հիմնադիր համագումարի կողմից ընդունված Ալժիրյան խարտիայի մի շարք նոր տեսադրույթներով, որոնցում ավելի էր շեշտվում «ալժիրյան հեղափոխության սոցիալիստական բնույթը»: Խարտիան անհրաժեշտ էր համարում մարդու կողմից մարդու շահագործման վերացումը: Նա Ալժիրի հիմնական խնդիրը համարեց սոցիալիզմի կառուցումը և առաջադրեց բանվորների և գյուղացիների ինքնակառավարման տեսադրույթը՝ այն դիտելով որպես «ազգային ժողովրդական հեղափոխության անընդմեջ սոցիալիստական հեղափոխության վերածելու ձև»:

3. Տարաձայնությունների սրումը ալժիրյան ղեկավարության շարքերում և Ահմադ Բեն Բելլայի տապալումը

Ալժիրում ներքաղաքական կյանքը հարթ չէր ընթանում: Նրանում առկա էին տարբեր քաղաքական ուժեր և սոցիալ–քաղաքական խմբավորումներ, որոնք տարբեր նպատակներ էին հետապնդում, և որոնց միջև գոյություն ունեին հակասություններ: Քանի դեռ ընթանում էր անկախության պատերազմը և գլխավոր համազգային խնդիրը համարվում էր Ֆրանսիայի գաղութային տիրապետության տապալումն ու Ալժիրի անկախության նվաճումը, այդ հակասությունները շատ սուր բնույթ չէին կրում և բացահայտ կերպով չէին դրսևորվում:

Բայց իրադրությունը փոխվեց Ալժիրի անկախության նվաճման նախօրյակին և հատկապես դրանից հետո: Շուտով ջրի երես դուրս եկան տարբեր խմբավորումների միջև առկա անհամաձայնությունները և հակասությունները՝ կապված երկրի առջև կանգնած հիմնախնդիրների լուծման, զարգացման հետագա ուղիների ու հեռանկարների, ինչպես նաև երկրի կառավարման մեթոդների հետ: Քաղաքական մթնոլորտի փոփոխության և հակասությունների դրսևորման գործում իր դերը խաղաց առանձին գործիչների անձնական հավակնությունների, առաջինը լինելու և անձնական մրցակցության գործոնը:

Առաջին լուրջ ճեղքվածքը ալժիրյան ղեկավարության մեջ ի հայտ եկավ 1962 թ. Ազգային ժողովի կազմավորումից հետո: Ահմադ Բեն Բելլան հույս ուներ այս բարձրագույն օրենսդիր մարմնում ունենալ հուսալի հենարան և ձգտում էր ապահովել նրա անդամների ճնշող մեծամասնության աջակցությունը: Սակայն պարզվեց, որ դա այնքան էլ դյուրին չէ: Նրա ներսում կազմավորվեց դեպուտատների ընդդիմադիր մի խումբ՝ Այտ Ահմադի գլխավորությամբ: Կազմավորվեց ընդդիմադիրների մեկ այլ խումբ Մեսալի Հաջի հետևորդներից և Բուդիաֆի կողմից ղեկավարվող ձախակողմյան Սոցիալիստական հեղափոխության կուսակցությունից: Ինչպես տեսնում ենք, ընդդիմության շարքերում հայտնվեցին հակագաղութային պայքարի այնպիսի հայտնի դեմքեր, ինչպես Այտ Ահմադը, Մեսալի Հաջը և Բուդիաֆը, որոնք պայքարի սկզբում այս կամ այն Մերպ համախմբված էին ԱԱՃ–ի շուրջը: Այս բոլոր խմբավորումների գործունեությունն արգելվեց, իսկ Բուդիաֆը ձերբակալվեց: Արգելվեց նաև կոմունիստական կուսակցության գործունեությունը, որը վտարվել էր ԱԱՃ–ից:

Բեն Բելլային հաջողվեց ճնշել այս ընդդիմադիրներին և ամրապնդել իր իշխանությունը՝ դաշնակցելով գնդապետ Հուարի Բումեդիենի և Խիդերի հետ: Հուարի Բումեդիենը կառավարության նախագահի առաջին տեղակալն էր և ազգային պաշտպանության նախարարը, իսկ Խիդերը՝ ԱԱՃ–ի գլխավոր քարտուղարը:

Սակայն շուտով սրվեցին հարաբերությունները Բեն Բելլայի և Խիդերի միջև: Նրանց տարաձայնությունների աղբյուրը վերաբերմունքն էր հանդեպ ԱԱՃ–ն, մասնավորապես այն հարցում, թե ինչպիսի դերակատարում պետք է ունենա նա: Բեն Բելլան գտնում էր, որ ԱԱՃ–ն պետք է լինի էլիտար ավանգարդային կուսակցություն՝ ընդունակ ապահովելու համաժողովրդական աջակցություն կառավարության քաղա-

քականությանը: Խիդերը հակված էր ԱԱՆ–ն դիտել որպես ավելի խորհրդատվական դերակատարում ունեցող մի մարմին: Բեն Բելլան 1963 թ. ապրիլին կարողացավ ստիպել Խիդերին հրաժարվել ԱԱՆ–ի գլխավոր քարտուղարի պաշտոնից, և ինքը դարձավ այդ միակ լեգալ քաղաքական կուսակցության գլխավոր քարտուղարը: Խիդերը կարողացավ խուսափել ձերբակալությունից և փախավ Շվեյցարիա՝ իր հետ տանելով 12 մլն ԱՄՆ դոլար՝ կուսակցական ֆոնդից: Հետագայում այդ գումարն օգտագործվում էր ընդդիմադիր ուժերի կողմից Բեն Բելլայի դեմ մղվող պայքարում:

Շատ չանցած՝ սրվեցին հարաբերությունները Ազգային ժողովի նախագահ Ֆարհաթ Աբասի հետ: Նա իր դժգոհությունն էր հայտնում այն կապակցությամբ, որ ԱԱՆ–ն զավթել՝ ուզուրպացիայի էր ենթարկել օրենսդիր իշխանությունը և դրանով զրկել Ազգային ժողովին՝ կատարելու իր՝ որպես օրենսդիր մարմնի, գործառույթները: Եվ 1963 թ. օգոստոսին նա հրաժարական տվեց Ալժիրի Ազգային ժողովի նախագահի պաշտոնից: Ֆարհաթ Աբասը ենթարկվեց տնային կալանքի:

Ազգային ժողովի դեպուտատի իր մանդատից հրաժարվեց և բացահայտորեն ընդդիմադիր ուժերի կողմն անցավ Այտ Ահմադը: Նա այդ քայլին դիմեց՝ գտնելով, որ Բեն Բելլայի ռեժիմը դառնում է ավելի ու ավելի դիկտատորական, որի հետևանքով Ալժիրի պառլամենտը դարձել է պրեզիդենտի հրամանները կատարող մի սովորական մարմին: Նրան աջակցություն հայտնեցին Կաբիլիայի շրջանի ղեկավարները: Կաբիլիան Ալժիրի անկախության պատերազմի կարևոր կենտրոններից մեկն էր, և մեծ էր նրա ներդրումը Ալժիրի հակագաղութային պայքարում: Պատերազմի հետևանքով Ալժիրի այդ երկրամասն ամենից շատ տուժածներից էր, և տեղի բնակչությունը հայտնվել էր շատ ծանր վիճակում: Այստեղ կուտակվել էր խոր դժգոհություն կառավարության քաղաքականության նկատմամբ, որն անհրաժեշտ չափով ուշադրություն չէր դարձնում պատերազմից ավերված այդ շրջանի վերականգնման հարցերին: Դեռ ավելին՝ նրանք կառավարությանն ուղղակի մեղադրում էին Կաբիլիայի շրջանի վերաբերյալ նրա իսկ կողմից հաստատված ծրագրի ձախողման մեջ:

Այտ Ահմադը, հարելով Կաբիլիայում սկսված դժգոհության շարժմանը, սակայն բնավ մտադիր չէր սահմանափակվել լոկ մեկ տեղական երկրամասի խնդիրներով: Նրա տեսադաշտում գտնվում էր համայն Ալժիրը: Նա հիմք դրեց դիմադրական գաղտնի շարժմանը, Կաբիլիայում

հիմնեց Սոցիալիստական ուժերի ճակատը (ՍՈՒՀ) և իր գլխավոր նպատակը համարեց Բեն Բելլայի տապալումը: 1963 թ. ամռանը տեղի ունեցան առաջին զինված բախումները ՍՈՒՀ–ի զինված ջոկատների և ալժիրյան բանակի զորամիավորումների միջև:

Ավելի մեծածավալ և վտանգավոր զինված բախումներ տեղի ունեցան 1964 թ. հունիսին Կաբիլիայում և Հարավային Սահարայում, որը վերածվեց ապստամբության: Այն ղեկավարում էր Հեղափոխության պաշտպանության ազգային կոմիտեն: Նրան միացան Այտ Ահմադի ՍՈՒՀ–ի զինված ջոկատները, Բուդիաֆի Սոցիալիստական հեղափոխության կուսակցությունը և տեղական ռազմական հրամանատարները: Բեն Բելլայի դեմ ուղղված ապստամբական շարժմանը ֆինանսական օգնություն էր ցույց տալիս էմիգրացիայում գտնվող Խիդերը: Ապստամբության ընդհանուր ղեկավարն էր գնդապետ Շաբաանին:

Ալժիրյան ազգային բանակը, գործելով արագ և վճռականորեն, կարողացավ ճնշել ապստամբությունը: Այտ Ահմադը և գնդապետ Շաբաանին գերի ընկան և դատապարտվեցին մահվան: Շաբաանի նկատմամբ մահվան դատավճիռն ի կատար ածվեց, իսկ Այտ Ահմադի մահվան դատավճիռը փոխարինվեց ցմահ բանտարկությամբ: Հեռակա մահվան դատապարտվեցին նաև Խիդերը և Բուդիաֆը:

Իհարկե, սխալ կլիներ այս բախումները և ընդդիմությունը Բեն Բելլայի վարչակարգի դեմ բացատրել լոկ առանձին կուսակցական և քաղաքական լիդերների կամ զինվորական հրամանատարների անձնական հավակնություններով, անհատական թշնամությամբ և այլն: Նա ուներ իր քաղաքական և սոցիալ–տնտեսական հիմքերը: Արդեն նշվել է, որ անկախության նվաճումից հետո Ալժիրը հայտնվել էր արտակարգ ծանր վիճակում: Եվ թեև ընդունվել էին բազմաթիվ ծրագրեր ու որոշումներ, սակայն դրանք հետևողականորեն չէին կիրառվում, և շատ որոշումներ մնում էին թղթի վրա: Պակասում էր գործնականությունը, շատ մեծ տեղ էր գրավում պոլիտիկանությունը, ամպագոռգոռ հայտարարությունները և պոպուլիստական խոստումները: Ութամյա պատերազմից հոգնած և ուժասպառ ժողովրդի համբերությունը սպառվել էր, նա սպասում էր կոնկրետ արդյունքների իր սոցիալ–տնտեսական դրության բարելավման ուղղությամբ, սակայն ձեռքբերումները շատ համեստ էին: Ահա այս հանգամանքը՝ ժողովրդի մոտ կուտակված դժգոհությունը, փորձում էին օգտագործել ընդդիմադիր ուժերը:

Քանի դեռ համագործակցություն գոյություն ուներ Ահմադ Բեն Բելլայի և Հուարի Բումեդիենի միջև, հաջողվում էր դիմագրավել ընդդիմությանը և ճնշել նրա զինված ելույթները: Սակայն շուտով տարաձայնություններ առաջացան նաև նրանց միջև: Հուարի Բումեդիենը, որը ոչ միայն կառավարության նախագահի առաջին տեղակալն էր, այլև ազգային պաշտպանության նախարարը, բանակը վճռականորեն օգտագործում էր տեղական ապստամբությունները կամ զինված ելույթները ճնշելու համար՝ գտնելով, որ նման ելույթները մեծ վտանգ են ներկայացնում դեռևս չամրապնդված Ալժիրի անկախությանը: Սակայն Բեն Բելլան փորձեց տեղական որոշ առաջնորդների, այսպես կոչված՝ ռեգիոնալիստների հետ դաշնակցել: Նրանց մեջ կային այնպիսիները, որոնց հնազանդեցնելու համար Հուարի Բումեդիենն օգտագործել էր զինված ուժեր: Բեն Բելլայի նման քաղաքականությունն անհանգստացրեց Բումեդիենին և դարձավ տարաձայնությունների առաջին պատճառներից մեկը նրա և Բեն Բելլայի միջև:

Բեն Բելլան, ցանկանալով բանակը պահել քաղաքականությունից դուրս, որը սկզբունքորեն ճիշտ մոտեցում էր, ձեռնամուխ եղավ ժողովրդական զինված միլիցիայի կազմավորմանը, որը թշնամաբար ընդունվեց կանոնավոր բանակի զորահրամանատարների կողմից: Բումեդիենը և նրա համախոհները Բեն Բելլայի այդ քայլի մեջ տեսան ներքաղաքական կյանքում բանակի դերի նվազեցման և նրանց հենարանից և ազդեցությունից զրկելու միտում: Հարաբերություններն ավելի լարվեցին, երբ Բեն Բելլան ստիպեց հրաժարական տալ ներքին գործերի նախարար Ահմադ Մեդեդրիին, որը Բումեդիենի հավատարիմ մարդկանցից մեկն էր և պատրաստվում էր պաշտոնանկ անել Բումեդիենի մեկ այլ հավատարիմ զինակցի՝ արտաքին գործերի նախարար Բուտեֆլիկային: Բումեդիենը և բանակում նրա կողմնակիցները Բեն Բելլայի այդ քայլերն ընկալեցին որպես Բումեդիենին և նրան նվիրված մարդկանց կառավարման համակարգից վերջնականապես դուրս մղելու քաղաքականության դրսևորում, և իրենք եղան նախահարձակ:

1965 թ. հունիսի 19–ին ալժիրյան բանակը Հուարի Բումեդիենի գլխավորությամբ կատարեց պետական հեղաշրջում: Բեն Բելլան ձերբակալվեց և աքսորվեց Հարավային Սահարա, որտեղ ենթարկվեց տնային կալանքի ու մնաց այդպիսի վիճակում մինչև 1980 թ.: Նրա հետ ձերբակալվեցին ԱԱՃ–ի քաղբյուրոյի անդամներ, Ազգային ժողովի նա-

խագահ Հաջ Բեն Ալան և սոցիալական գործերի նախարար Մուհամմադ Նակկաշը:

Այսպիսով՝ 1965 թ. հունիսի 19–ի անարյուն պետական հեղաշրջման հետևանքով Բեն Բելլայի իշխանությունը տապալվեց: Իշխանությունն իրենց ձեռքը վերցրեցին Հուարի Բումեդիենը և նրա կողմնակիցները:

4. Նոր իշխանությունների առաջին քայլերը իրենց դիրքերն ամրապնդելու ուղղությամբ

Բեն Բելլային իշխանությունից հեռացնելուց հետո Ալժիրում իշխանությունն անցավ նորաստեղծ Հեղափոխական խորհրդին, որը գլխավորեց պետական հեղաշրջման կազմակերպիչ և ղեկավար գնդապետ Հուարի Բումեդիենը:

Բումեդիենի և նրա կողմնակիցների առջև կանգնած էր մի կարևոր խնդիր՝ բացատրել ալժիրցիներին, արաբական աշխարհին, ինչպես նաև միջազգային հանրությանը պետական հեղաշրջման և Բեն Բելլային իշխանությունից հեռացնելու պատճառները: Դա պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ Բեն Բելլան, չնայած իր կողմից թույլ տրված սխալներին, այդուհանդերձ, մեծ հեղինակություն էր վայելում Ալժիրում, արաբական երկրներում և միջազգային հանրության մեջ, որոշ իմաստով խորհրդանշում Ալժիրի ազգային–ազատագրական և հակագաղութային պայքարը Ալժիրի անկախության համար:

Բեն Բելլան նոր իշխանությունների կողմից մեղադրվեց պետական դավաճանության մեջ, թեև որպես դրա ապացույց որևէ լուրջ փաստարկ չբերվեց և չէր էլ կարող բերվել: Հեղափոխական խորհրդի հրապարակած հայտարարության մեջ նրան մեղադրում էին կառավարման դիկտատորական վարչակարգ հաստատելու, իր անձը փառաբանելու և ամեն ինչ իրեն վերագրելու, դեմագոգիայի և իմպրովիզացիայի մեջ: Նշվում էր, որ Բեն Բելլան լրջորեն չէր զբաղվում երկրի առջև կանգնած սոցիալ–տնտեսական խնդիրներով, հրապուրված էր «գովազդային սոցիալիզմով», սկզբունքների մեջ կայուն չէր, անտեսում էր օրենքները, որը նպաստում էր անարխիային, ազգային ունեցվածքի կողոպուտին ու թալանին: Նրան անգամ մեղադրում էին քաղաքական արկածախնդրության և շառլատանության մեջ: Բումեդիենը գտնում էր, որ Բեն Բելլան շեղվել էր ալժիրյան հեղափոխության սկզբունքներից, ուստի և իր ղե-

կավարած պետական հեղաշրջումը համարում էր նախորդ վարչակարգի կողմից թույլ տրված սխալների «պատմական ուղղում»:

Չի կարելի ասել, որ նման մեղադրանքներն անվերապահորեն ընդունվեցին բոլորի կողմից: Եղան անգամ դժգոհության արտահայտություններ: Ալժիրի աշխատավորների ընդհանուր միության 1965 թ. հուլիսի 3–ի հայտարարության մեջ, ընդունելով հանդերձ Բեն Բելլայի կողմից թույլատրված սխալները, հատկապես դեմոկրատական նորմերի ոտնահարումը և անձնական իշխանության ուժեղացումը, միաժամանակ նշվում էր, որ Ալժիրը հասել էր նաև տպավորիչ հաղթանակների, ինչպես ինքնակառավարման համակարգի հաստատումը, Ալժիրյան խարտիան և այլն:

Տեղի ունեցան ուսանողական ցույցեր և ելույթներ: Իրենց դժգոհությունը պետական հեղաշրջման կապակցությամբ հայտնեցին ԱԱճ–ի ծախ թևին պատկանող ուժերը՝ ԱԱճ–ի Քաղբյուրոյի անդամ Զահուանի գլխավորությամբ: Վերջինս հիմնեց ընդհատակյա ժողովրդական դիմադրության կազմակերպություն, որի ղեկավարության մեջ մտան նաև կոմունիստական կուսակցության ներկայացուցիչները: Նա Բումեդիենի իշխանության դեմ ուղղված թռուցիկներ էր տարածում և նախապատրաստում ժողովրդական ելույթներ նոր վարչակարգի դեմ: Սակայն Հեղափոխական խորհրդին հաջողվեց 1965 թ. սեպտեմբերին բացահայտել ժողովրդական դիմադրության կազմակերպությունը, ձերբակալել նրա ղեկավարներին և ակտիվիստներին, ինչպես նաև ցրել ուսանողական ելույթները:

Ահա այսպիսի պայմաններում Հուարի Բումեդիենը ձեռնամուխ եղավ իր իշխանության ամրապնդմանը:

Ինչպես նշվեց, ստեղծվեց Հեղափոխական խորհուրդ, որը նախկինում բացակայում էր Ալժիրի կառավարման համակարգում: Բումեդիենի կողմից գլխավորվող այդ խորհուրդը դարձավ Ալժիրի բարձրագույն մարմինը: Ոչինչ չէր արվում առանց նրա որոշման: Հեղափոխական խորհուրդը կազմված էր 26 մարդուց: Շատ հատկանշական է նրա կազմը, որը վկայում է այն մասին, որ դա, ըստ էության, ռազմական մարմին էր: Նրա 26 անդամներից չորսը զինվորական օկրուգների հրամանատարներ էին: Խորհրդի անդամ նշանակվեցին ժանդարմերիայի պետը, ազգային անվտանգության զորամասերի հրամանատարը, զինվորական ակադեմիայի տնօրենը, գլխավոր շտաբի բարձրաստիճան հրամանատարները, մի քանի նախարարներ և կուսակցական ապարատի գոր-

ծիչներ, որոնք նախկին զինվորականներ էին և, վերջապես, ԱԱճ–ի նախկին քաղբյուրոյի 10 անդամներ. մարդիկ, որոնք սերտորեն համագործակցել էին Բումեդիենի հետ պետական հեղաշրջումն իրականացնելու գործում: Բումեդիենի կապերը հենց զինվորականների հետ էին ուժեղ և շատ թույլ էին զինվորական շրջաններից դուրս: Այդ պատճառով էլ նա շեշտը դրեց զինվորական գործիչների վրա՝ նպատակ ունենալով ուժեղացնել համագործակցությունը բանակի, ոստիկանության և ազգային անվտանգության միջև և իր համար ստեղծել հուսալի հենարան: Դրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ Հուարի Բումեդիենը սկզբնական շրջանում մշտապես ընդգծում էր կոլեգիալ ղեկավարության անհրաժեշտությունը:

1965 թ. հուլիսի 10–ին կազմվեց Ալժիրի նոր կառավարությունը, որը գլխավորեց ինքը՝ Հուարի Բումեդիենը՝ զբաղեցնելով նաև ազգային պաշտպանության նախարարի պաշտոնը: Նա կազմված էր 21 անդամներից, և նրա մեջ մտան հիմնականում գնդապետի համախոհներն ու գործակիցները: Ներքին գործերի նախարարի պաշտոնը վերադարձվեց Ահմադ Մեդեղրիին, որը պաշտոնանկ էր արվել Բեն Բելլայի կողմից, արտաքին գործերի նախարարի պաշտոնը դարձյալ հանձնվեց Աբդ ալ–Ազիզ Բուտեֆլիկային, որի ճակատագիրը մազից էր կախված Բեն Բելլայի իշխանության վերջին օրերին: Նրանք, ինչպես նաև ֆինանսների նախարար Ահմադ Կահիդը միաժամանակ հանդիսանում էին Հեղափոխական խորհրդի անդամներ:

Հերթը հասավ ԱԱճ–ին: Ստեղծվեց ԱԱճ–ի գործադիր քարտուղարություն՝ լուսավորության նախկին նախարար Շարաֆ Բելկասիմի գլխավորությամբ, որի վրա դրվեց ԱԱճ–ի ապարատը վերակառուցելու պարտականությունները: Առաջին քայլը եղավ այն, որ վերացվեց ԱԱճ–ի Քաղբյուրոն, որը Հուարի Բումեդիենը համարում գործիք Բեն Բելլայի ձեռքին և ծառայում էր նրա անձնական իշխանությունն ամրապնդելուն: Վերացվեց կուսակցության համագումարների դելեգատներին նշանակելու պրակտիկան և մտցվեց նրանց ընտրության սկզբունքը: Տեղերում ուժեղացավ ռազմական օկրուգների հրամանատարների իշխանությունը: Նրանց իշխանությունն ավելի մեծ էր և հեղինակավոր, քան վիլայաթների ղեկավարներինը: Ռազմական օկրուգի հրամանատարներ նշանակվում էին Հուարի Բումեդիենին հավատարիմ և անձնապես նվիրված մարդիկ:

Հուարի Բումեդիենը ցրեց Ազգային ժողովը և ժողովրդական միլիցիան, որը ստեղծել էր Բեն Բելլան, և կախակայեց 1963 թ. ընդունված սահմանադրությունը: Սակայն նա չէր շտապում նոր սահմանադրություն ընդունել, և երկիրը տասնմեկ տարի կառավարվում էր Հեղափոխության խորհրդի կողմից ընդունվող որոշումներով: Վերջապես, 1976 թ. ապրիլին նա ներկայացրեց նոր սահմանադրության նախագիծը, որն ուժի մեջ մտավ 1976 թ. նոյեմբերին: Այդ նույն տարի կայացան ընտրություններ, և Հուարի Բումեդիենն ընտրվեց Ալժիրի պրեզիդենտ: Այսպիսով՝ նա իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ բարձրագույն գործադիր, օրենսդիր և զինվորական իշխանությունը: Նա Հեղափոխական խորհրդի նախագահն էր, երկրի պրեզիդենտը, վարչապետը, զինված ուժերի գլխավոր հրամանատարը, ազգային պաշտպանության նախարարը և ԱԱճ–ի գլխավոր քարտուղարը:

Իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու աստիճանով Հուարի Բումեդիենը գերազանցեց Ահմադ Բեն Բելլային:

5. Բումեդիենի վարչակարգի ներքին և արտաքին քաղաքականությունը (1965–1978 թթ.)

Հանուն արդարության պետք է նշել, որ Բումեդիենը ստացել էր ծանր ժառանգություն: Նախկին վարչակարգը անկախությանը հաջորդած տարիներին շատ բան չհասցրեց անել:

Հիմնական խնդիրը մնում էր երկրի տնտեսական և սոցիալական զարգացման հարցը: Բումեդիենը որոշեց պարզություն մտցնել այդ հարցում և մատնանշել Ալժիրի զարգացման գլխավոր ուղիները: 1965 թ. հուլիսի 5–ին նա հանդես եկավ ռադիոյով և դիմելով ժողովրդին՝ հայտարարեց իր հավատարմությունը «Տրիպոլյան ծրագրին» և Ալժիրի խարտիային՝ նշելով, որ տվյալ պահին գլխավորը համապատասխան պայմանների ստեղծումն է այդ երկու կարևորագույն ծրագրային փաստաթղթերում ամրագրված խնդիրների լուծման համար: Նա նկատի ուներ ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալ–տնտեսական ասպեկտները: Դա նշանակում էր, որ նա մնում էր հավատարիմ Ալժիրը սոցիալիստական ուղիով զարգացնելու հիմնադրույթին: Բումեդիենը հատկապես ընդգծեց ագրարային ռեֆորմ կիրառելու անհրաժեշտությունը՝ շեշտելով գյուղացիական մասսաների մասնակցության անհրաժեշտությունը:

Ի կատարումն այդ հայտարարության և տրված խոստումների՝ Հեղափոխական խորհուրդը 1965 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին ընդունեց մի քանի կարևոր դեկրետներ: Դրանց մի խումբը վերաբերում էր ինքնակառավարվող սեկտորի ղեկավարության բարելավմանը, իսկ մյուս խումբը՝ ագրարային ռեֆորմի կիրառմանը, որի մասին մինչ այդ հայտարարվել էր բազմիցս, սակայն կոնկրետ քայլեր չէին ձեռնարկվում:

1966 թ. մայիսին Հեղափոխական խորհրդի որոշմամբ ազգայնացվեցին օտարերկրացիներին պատկանող հանքերը և ապահովագրական ընկերությունները, իսկ 1967–1968 թթ. ընթացքում՝ բանկերի և արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը, որոնք պատկանում էին օտարերկրյա կապիտալին: Բացառություն կազմեց նավթային արդյունաբերությունը, որը հանդիսանում էր Ալժիրի ֆինանսների, այդ թվում և տարադրամի ստացման հիմնական աղբյուրը: Լայն շարժում սկսվեց արդյունաբերության բնագավառում վարչակառավարական ապարատի ծախսերի կրճատման, արդյունաբերության աշխուժացման, արտադրական բազմաթիվ ձեռնարկությունների աշխատանքների վերսկսման համար, որոնք չէին գործում մի քանի տարի:

1960–ական թվականների վերջերին և 1970–ական թվականներին կառավարությունը սկսեց վարել երկիր ինդուստրացման ակտիվացման և երկրի տնտեսության մեջ պետության դերի ուժեղացման քաղաքականություն: 1971 թ. փետրվարին Հեղափոխական խորհրդի ընդունած օրենքի համաձայն՝ ազգայնացվեց ամբողջ նավթագազային արդյունաբերությունը, և պետական վերահսկողություն սահմանվեց Ալժիրում գործող բոլոր նավթային ընկերությունների գործունեության վրա:

Հեղափոխական խորհուրդը վերահաստատեց իշխանությունների քաղաքականությունը՝ աջակցություն ցույց տալ ինքնակառավարման սկզբունքին: Հատկապես քայլեր ձեռնարկվեցին ինքնակառավարման կոմիտեների անկախությունը և ինքնուրույնությունն ապահովելու ուղղությամբ: 1971 թ. նոյեմբերի 16–ին ընդունվեց օրենք ձեռնարկությունների սոցիալիստական կառավարման մասին, և ստեղծվեցին աշխատավորական ասամբլեաներ: 1975 թ. նման ասամբլեաներ արդեն գոյություն ունեին պետական սեկտորին պատկանող 500 ձեռնարկություններում: Սակայն դա չէր նշանակում պետության դերի և վերահսկողության թուլացում: 1970–ական թվականներին արդյունաբերական ձեռնարկությունների 90%–ը գտնվում էր պետական վերահսկողության ներքո:

1967 թ. կայացան Ալժիրի համայնքների ընտրությունները, որի արդյունքում ընտրվի մունիցիպալիտետները եկան փոխարինելու նշանակվի՝ այսպես կոչված պատվիրակություններին:

1968–1969 թթ. փոփոխություններ մտցվեցին ինքնակառավարման համակարգում նաև գյուղատնտեսության բնագավառում, որն ուղղված էր գյուղատնտեսության մեջ շահութաբերության և ֆինանսական կարգապահության բարձրացմանը, և, որ ամենակարևորն է, խնդիր դրվեց ինքնակառավարման մարմինների ամենամյա ընտրությունների անցկացումը գաղտնի քվեարկությամբ: Հուարի Բումեդիենը, ընդգծելով այդ միջոցառումների կարևորությունը, հայտարարեց, որ ինքը «Ալժիրում ինքնակառավարման հաստատումը համարում է որպես կոլեկտիվիզմի հաղթանակ մասնավոր սեփականատիրական տարերքի դեմ»:

1966 թ. սկսվեց ագրարային ռեֆորմի նոր փուլը, որով նախատեսվում էր վերցնել 8500 խոշոր հողատերերին պատկանող հողերի ավելցուկները, որոնք գերազանցում էին 100 հա, և 15 հազ. հա միջին հողատերերին պատկանող հողային ավելցուկները, որոնք գերազանցում էին 50 հա: Հարուստ հողատերերից խլված այդ հողային ավելցուկները բաժանվում էին հողազուրկ կամ սակավահող գյուղացիներին: Մի շարք օրենքներով ավելի խորացավ ագրարային ռեֆորմը: 1970 թ. ընդունվեց Ագրարային հեղափոխության խարտիան, որն իր բնույթով մեծ նշանակություն ունեցող փաստաթուղթ էր: Նրանով նախատեսվում էր արմատական փոփոխություններ մտցնել ագրարային հարաբերությունների ոլորտում և հողային սեփականության բնագավառում: Այդ պատճառով էլ այն կոչվում էր հեղափոխական: Խարտիայի կարևոր կետերն էին՝ խոշոր հողային սեփականության սահմանափակում, հողաբաժինների տրամադրում հողազուրկ և սակավահող գյուղացիներին, կոոպերատիվների ստեղծում, գյուղատնտեսության արտադրության բարձրացում և այլն: 1971 թ. ընդունված օրենքով սկսվեց հողերի վերաբաժանումն ալժիրյան գյուղում՝ վերացվեցին խոշոր պետական ֆերմաները և նրանց պատկանող հողերը բաժանվեցին հողազուրկ գյուղացիներին: Սակայն հողը գյուղացուն տրվում էր, եթե նա համաձայնվում էր դառնալ կոոպերատիվի անդամ: Իսկ պետությունն այդ պարագայում գյուղացուն ապահովում էր վարկով, սերմացուով, պարարտանյութով և գյուղատնտեսական մեքենաներով:

Ագրարային ռեֆորմի շնորհիվ, որն իրականացվում էր հաջողությամբ, արդեն 1970–ական թվականների վերջերին 10–ական հա հող էր

ստացել 60 հազ. գյուղացի, որոնք միավորվել էին վեց հազար կոոպերատիվներում: Բումեդիենը կատարեց հաջորդ քայլը՝ հայտարարեց սոցիալիստական գյուղեր կառուցելու ծրագիրը, որով նախատեսվում էր կառուցել 1700 գյուղ:

Հուարի Բումեդիենի վարչակարգը զգալի ուշադրություն դարձրեց նաև կրթական և առողջապահական համակարգին, որը գտնվում էր բարձիթողի վիճակում: Հատկապես բարդ էր իրադրությունը կրթության բնագավառում, որտեղ տիրապետող էր ֆրանսերենը, նույնիսկ պետական կառույցներում և բյուրոկրատական ապարատներում պաշտոնական գրագրությունը կատարվում էր ֆրանսերենով:

Հուարի Բումեդիենը, ի տարբերություն ալժիրյան շատ ղեկավարների, ավելի ազատ արտահայտվում էր արաբերենով, քան թե ֆրանսերենով: 1960–ական թվականների վերջերին նրա որոշումով սկսվեց մի շարժում, որը ստացավ լիակատար արաբականացման շարժում: Այն սկսվեց դպրոցներից և բյուրոկրատական ապարատից: Դասավանդումը և պետական գրագրությունը պետք է կատարվեին արաբերեն: Սակայն հարկ է նշել, որ դա կապված էր մեծ դժվարությունների հետ. դպրոցների համար չկային անհրաժեշտ քանակությամբ համապատասխան մանկավարժներ, իսկ բյուրոկրատական ապարատում՝ արաբերենին լավ տիրապետող և գիտական ու տեխնիկական տերմինոլոգիային քաջածանոթ մասնագետներ: Դեռ ավելին՝ բնակչության հիմնական խոսակցական լեզուն արաբերենի ալժիրյան բարբառն էր՝ և նրանց մեծ մասի համար անհասկանալի էր գրական արաբերենը:

Բայց այդ դժվարություններն աստիճանաբար հաղթահարվում էին, և արաբերենն աստիճանաբար դուրս էր մղում ֆրանսերենը: Այդուհանդերձ, Ալժիրը շարունակում էր մնալ ֆրանկոֆոն երկիր, որտեղ ֆրանսերենը դեռևս լայն տարածում ունի որպես կրթության, գիտության ու տեխնիկայի, հաղորդակցման և առօրյա խոսակցական լեզու:

Այս շրջանում բավականին ակտիվ էր Ալժիրն արտաքին հարաբերությունների ասպարեզում: Նա կարողացավ հաղթահարել քաղաքական մեկուսացումը, որի մեջ հայտնվել էր Բեն Բելլային տապալելուց հետո:

Բումեդիենը հավաստեց Ալժիրի հավատարմությունը չեզոք կամ չմիացած երկրների սկզբունքներին և շարունակում էր վարել հակաիմպերիալիստական քաղաքականություն:

Ալժիրը կարգավորեց իր հարաբերությունները Ֆրանսիայի հետ, որը շարունակում էր մնալ նրա հիմնական արտաքին քաղաքա-

կան և տնտեսական գործընկերներից մեկը: 1965 թ. հոկտեմբերին Ալժիրի արտաքին գործերի նախարար Աբդ ալ–Ազիզ Բուտեֆլիկան պաշտոնական այցով մեկնեց Ֆրանսիա և բանակցություններ վարեց պրեզիդենտ Դը Գոլի հետ, որի ընթացքում քննարկվեցին Ֆրանս–ալժիրյան հարաբերությունների քաղաքական և տնտեսական բոլոր ասպեկտները: Այդ բանակցությունների շնորհիվ երկու երկրների հարաբերությունները մտան բնականոն հունի մեջ, թեև պարբերաբար նրանց միջև ծագում էին զանազան խնդիրներ:

Ալժիրի համար կարևոր էր հարաբերությունների կարգավորումը Խորհրդային Միության հետ և այն սառնության հաղթահարումը, որը առաջացել էր նրանց միջև Խորհրդային Միության հերոս Ահմադ Բեն Բելլային տապալելուց հետո: Խորհրդային ղեկավարությունը կասկածանքով էր մոտենում Բումեդիենին և նրա ղեկավարությանը: Սակայն այդ կասկածանքները վերացան, և հարաբերությունները նախկին ջերմությունը ստացան 1965 թ. դեկտեմբերին Բումեդիենի Մոսկվա կատարած այցից հետո: Խորհրդային Միությունը պաշտպանում էր Ալժիրին միջազգային հարցերում, ցույց տալիս նրան տնտեսական, տեխնիկական և ռազմական օգնություն, պատրաստում կադրեր և այլն:

Նորմալ բնույթ ստացան հարաբերությունները նաև ԱՄՆ–ի հետ, որը 1966 թ. վերսկսեց տնտեսական օգնությունը Ալժիրին: Ճիշտ է, 1967 թ. հունիսյան արաբա–իսրայելական պատերազմից հետո Ալժիրը խզեց դիվանագիտական հարաբերությունները ԱՄՆ–ի հետ՝ ի նշան բողոքի ընդդեմ այն բանի, որ ԱՄՆ–ը պաշտպանում էր Իսրայելին, սակայն հետագայում այդ հարաբերությունները վերականգնվեցին: 1968 թ. վերականգնվեցին հարաբերությունները նաև Մեծ Բրիտանիայի հետ, որ խզվել էին 1965 թ. Ռոդեզիայի կապակցությամբ:

Ալժիրը ակտիվորեն մասնակցում էր Արաբական պետությունների լիգայի, Աֆրիկյան միասնության կազմակերպության և այլ միջազգային կազմակերպությունների աշխատանքներին:

Կարելի է ասել, որ 1970–ականների կեսերին Բումեդիենի վարչակարգը հասել էր նշանակալի հաջողությունների ներքին և արտաքին քաղաքականության ասպարեզներում:

Հուարի Բումեդիենը մահացավ 1978 թ. դեկտեմբերի 27–ին:

6. Ալժիրը 1980–2005 թվականներին

Հուարի Բումեդիենին Ալժիրի պրեզիդենտի պաշտոնում փոխարինեց գնդապետ Շադլի Բենջադիդը, որը Բումեդիենի մերձավոր գործակիցներից էր և նրան մեծապես աջակցել էր Բեն Բելլային տապալելու և իշխանությունը գրավելու գործում: Շադլի Բենջադիդն իր հայացքներով համարվում էր չափավոր:

Ստանձնելով պրեզիդենտի պաշտոնը՝ Բենջադիդը գիտակցում էր, որ երկիրը փոփոխությունների կարիք է զգում, և նախկին քաղաքականությունը նույնությամբ շարունակել հնարավոր չէ: Եվ նա, թեև զգուշորեն, բայց դիմեց երկրի ազատականացման քաղաքականությանը՝ ջանալով մեղմացնել Բումեդիենի ժամանակ կանոնակարգված ավտորիտար վարչակարգը: Նա նույնիսկ ներում շնորհեց նախկին պրեզիդենտ Ահմադ Բեն Բելլային և 15 տարի անց նրան ազատ արձակեց տնային բանտարկությունից:

Ալժիրի առջև կանգնած էին նոր տնտեսական և քաղաքական խնդիրներ, որոնք լուծում էին պահանջում: Այդ նպատակով Բենջադիդը 1980 թ. հունիսին գումարեց ԱԱԾ–ի արտակարգ համագումար, որը հաստատեց Ալժիրի զարգացման հնգամյա պլան՝ 1980–1984 թթ. համար: Ընդունվեց տնտեսության ազատականացման ուղին: Շատ ձեռնարկություններ սեփականաշնորհվեցին, իսկ պետական այն ձեռնարկությունները, որոնք անարդյունավետ էին աշխատում, լուծարվեցին:

Բայց դա չտվեց սպասված արդյունքները, և երկրի տնտեսական վիճակը վատանում էր, որին մեծապես նպաստեցին նաև նավթի համաշխարհային գների անկումը և դրա պատճառով նավթի արտահանումից ստացվող եկամուտների խիստ նվազումը:

Ներքաղաքական դրությունը լարվեց նաև բերբեր ուսանողների շարժումների հետևանքով: Նրանք 1980–ական թվականներին բողոքի ցույցեր էին կազմակերպում ընդդեմ կառավարության արաբականացման քաղաքականության:

Բայց ձեռնարկված միջոցները բավարար չեղան երկիրը հանդարտեցնելու համար: Քաղաքական ասպարեզում հայտնվեց մի նոր և ազդեցիկ գործոն՝ իսլամը: Իսլամականների ազդեցությունը երկրի ներսում քանի գնում, ուժեղանում էր, որը անմիջական հետևանք էր այն բանի, որ կառավարությունը ձախողում կրեց երկրի առջև ծառացած խնդիրները լուծելու գործում: Իր նշանակությունն ունեցավ նաև սոցիա-

լիզմի համաշխարհային համակարգի անհաջողությունները, որի հետևանքով վարկաբեկվեցին սոցիալիզմի գաղափարներն ընդհանրապես: Այդպիսի պայմաններում իսլամականները և նրանց համակիրները գտնում էին, որ միակ ելքը իսլամին վերադառնալու և նրա հիմնադրույթները գործադրելու մեջ է: Նրանք ուղղակի պահանջում էին Ալժիրը հռչակել իսլամական պետություն: Իսլամականները փողոցներում վիրավորում և սպառնում էին կանանց, որոնք հագնված չէին իսլամի պահանջների համաձայն, ջարդում էին այն խանութները, որտեղ ալկոհոլային խմիչքներ էին վաճառում, այսպես կոչված պետական կամ պաշտոնական իմամներին դուրս վռնդում մզկիթներից, հարձակվում կառավարական շենքերի վրա, պատանդներ վերցնում, այդ թվում՝ օտարերկրացիներից և այլն: Երկրում ստեղծվել էր քաոսային վիճակ: Նրանց գլխավոր հարվածներից մեկն ուղղված էր ԱԱԵ–ի և նրա քաղաքականության դեմ: 1982 թ. նրանք պահանջեցին չեղյալ հայտարարել Ալժիրյան խարտիան, որտեղ ամրագրված էր երկիրը զարգացման սոցիալիզմի ուղիով տանելու հիմնադրույթը, և կազմել նոր՝ իրապես իսլամական կառավարություն:

Կառավարությունն սկսեց ձերբակալությունները: Ձերբակալվեցին և բանտ նետվեցին 400 իսլամ ակտիվիստներ, այդ թվում՝ նրանց ղեկավարներ շեյխ Աբդելաթիֆ Սուլթանին և շեյխ Ահմադ Սահնունը, որի պատասխանը եղավ իսլամականների 100–հազարանոց հզոր ցույցը: Կառավարությունը հայտարարվեց «անաստվածների հանցախումբ»:

Բենջադիդը հարկադրված էր դիմել որոշ զիջումների: Նա կառավարության կազմից հանեց մի քանի նախարարների, որոնք նախկին պրեզիդենտ Հուարի Բումեդիենի կոշտ քաղաքականության կողմնակիցներ էին, ավելի արագացրեց և ընդլայնեց սեփականաշնորհման քաղաքականությունը և թուլացրեց սոցիալիստական վարչատնտեսական համակարգին առանձնահատուկ կենտրոնացման համակարգը: Դա միայն շատ կարճ ժամանակով մեղմեց լարվածությունը: 1980–ական թվականների կեսերին կրկին սկսվեցին ցույցերը և քաղաքական բնույթի պահանջները՝ հիմնված իսլամի հիմնադրույթների վրա: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ տնտեսական վայրէջքը շարունակվում էր, որը վերածեց տնտեսական ճգնաժամի: Շուկաներում շեշտակիորեն պակասեցին սպառման ապրանքները, սննդամթերքը, թեյը և սուրճը, առաջացան հերթեր և ամենաանհրաժեշտ ապրանքների և մթերքների համար կանայք հարկադրված էին ժամերով հերթ կանգնել,

խիստ աճեց գործազրկությունը, հատկապես երիտասարդների շրջանում: 1988 թ. հոկտեմբերին սկսվեցին գործադուլները, զանգվածային ցույցերը և փողոցային երթերը: Ցուցարարները հարձակվում էին կառավարական շենքերի վրա, քանդում դրանք, ինչպես նաև կողոպտում ԱԱԵ–ին պատկանող գույքն ու ունեցվածքը: Անհնազանդությունը Ալժիր քաղաքից տարածվեց Անաբայի, Բլիդայի, Օրանի և այլ շրջանների ու քաղաքների վրա՝ սպառնալով ընդունել համաալժիրյան ապստամբության բնույթ: Կառավարությունը մտցրեց արտակարգ դրություն: Ձերբակալվեց 3500 մարդ: Բախումների ժամանակ սպանվեց 500 ալժիրցի: Դա Ալժիրի պատմության մեջ մտել է որպես «Սև հոկտեմբեր»:

1988 թ. դեկտեմբերին տեղի ունեցան պրեզիդենտական ընտրություններ, և Շադլի Բեն Ջադիդը, որը միակ թեկնածուն էր, վերընտրվեց Ալժիրի պրեզիդենտ: Նա տրամադիր էր նոր բարեփոխումներ կիրառել՝ հաշվի առնելով ստեղծված ծանր վիճակը և նոր իրողությունները: 1989 թ. ընդունվեց Ալժիրի երկրորդ և փոփոխված սահմանադրությունը, որտեղից հանվեց Ալժիրը սոցիալիստական երկիր լինելու ձևակերպումը: Կարևոր նորույթ էին խոսքի, մամուլի և միությունների ազատությունների վերաբերյալ երաշխիքները, ինչպես նաև գործադուլներ անելու իրավունքի ճանաչումը: Կային նաև երկու կարևոր նորություններ: Առաջինը վերաբերում էր Ալժիրի ազգային ճակատին՝ ԱԱԵ–ին, որի մասին սահմանադրության մեջ, ի տարբերություն նախորդի, ընդհանրապես ոչ մի հիշատակում չկար, որը վկայում էր այն մասին, որ նա դադարում էր միակ քաղաքական կուսակցությունը լինելու մենաշնորհից: Երկրորդը վերաբերում էր բանակին, որի գլխավոր խնդիրը համարվում էր երկրի պաշտպանությունը: Դրանով նա զրկվում էր յուրահատուկ քաղաքական կարգավիճակից, որին նա հասել էր անկախության պատերազմից հետո:

Այս նոր իրադրությունից փայլուն կերպով օգտվեցին իսլամականները: 1989 թ. փետրվարին իսլամական շարժման երկու ականավոր գործիչներ՝ Աբասի Մադանին և Ալի Բելհաջը, հիմնեցին մի նոր իսլամական կազմակերպություն, որը կոչվեց Իսլամական փրկության ճակատ (ԻՓճ): Ինչպես և հուշում է նրա անունը, այդ կազմակերպությունը Ալժիրի փրկությունը տեսնում էր իսլամի մեջ և իր կազմավորումից անմիջապես հետո հայտարարեց Ալժիրը իսլամական պետություն հռչակելու անհրաժեշտության մասին:

ԻՓճ–ի կազմավորումը զգալիորեն փոխեց ուժերի հարաբերակցությունը հօգուտ իսլամականների: Նրա ազդեցությունը և հեղինակու-

թյունը հասարակ ալժիրցիների մոտ արագորեն ուժեղանում էր: Դրա մասին է վկայում նրա հաղթանակը 1990 թ. հունիսին կայացած տեղական, ապա նաև շրջանային ընտրություններում: Պարտություն կրած ԱԱճ–ի պահանջով փոփոխություններ մտցվեցին ընտրական օրենքում՝ ի նպաստ ԱԱճ–ի: Սակայն ԻՓճ–ն որոշեց պայքարել մինչև վերջ և հայտարարեց ընդհանուր գործադուլ, սկսվեցին փողոցային երթերը և ցույցերը, իսկ մի շարք վայրերում իսլամականները գրավեցին հասարակական շենքերը: Ի պատասխան պրեզիդենտը 1991 թ. հունիսի 5–ին մտցրեց ռազմական դրություն: Աբասի Մադանին, Ալի Բելհաջը և հարյուրավոր իսլամական ակտիվիստներ ձերբակալվեցին: Բայց դա չկարողացավ խարխլել իսլամականների դիրքերը: 1991 թ. դեկտեմբերին տեղի ունեցան պառլամենտական ընտրություններ, որի առաջին փուլում ԻՓճ–ի թեկնածուներն ավելի շատ պառլամենտական տեղեր նվաճեցին, քան թե ԱԱճ–ն: Դա համարվեց սենսացիա: Կասկած չկար, որ երկրորդ փուլում իսլամականները կտանեին վերջնական հաղթանակ, և Ալժիրի պառլամենտը կվերածվեր իսլամիզմի ամրոցի:

Այդ պահին կրկին ասպարեզում հայտնվեցին զինվորականները և ցույց տվեցին, որ դեռ վաղ է իրենց հաշվից դուրս նետել, և իրենք են հանդիսանում Ալժիրի իսկական կառավարողները: 1992 թ. հունվարի 11–ին զինվորականների և ազդեցիկ որոշ քաղաքական ուժերի ճնշման տակ գնդապետ Շադլի Բենջադիդը ստիպված էր հրաժարական տալ: Նա պաշտոնանկ արվեց, պառլամենտը լուծարվեց, իսկ ընտրությունների երկրորդ փուլը կասեցվեց:

Իշխանությունն անցավ նորաստեղծ Պետական բարձրագույն խորհրդին, որը գլխավորեց Մուհամմադ Բուդիաֆը: Նա նշանակվեց պրեզիդենտ:

Սակայն ԻՓճ–ն չհամաձայնվեց ընտրությունների արդյունքները չեղյալ հայտարարելու և երկրորդ փուլ չանցկացնելու նորընծա իշխանությունների որոշման հետ և պահանջում էր վերադառնալ ընտրական համակարգին: Հետաքրքիր է, որ ընտրություններին վերադառնալու պահանջով հանդես էր գալիս նաև ԱԱճ–ն, որն անհանգստացած էր զինվորականների բացահայտ միջամտությունից և իշխանությունը նրանց դրածոների ձեռքում կենտրոնացնելուց: Իսկ իշխանավորները չէին մտածում այդ հարցում որևէ զիջում կատարելու մասին, և իրենք եղան նախահարձակ: 1992 թ. փետրվարին հուժկու ցույցեր տեղի ունեցան Ալժիրի տարբեր քաղաքներում և շրջաններում: Բանակը ոստիկանու-

թյան հետ միասին կատարեց զանգվածային ձերբակալություններ: Փետրվարի 9–ին մեկ տարի ժամանակով մտցվեց արտակարգ դրություն, իսկ մարտին արգելվեց ԻՓՃ–ի գործունեությունը:

Իսլամականներն անցան զանգվածային ահաբեկչական գործողությունների: 1992–1998 թթ. ահաբեկչության զոհ դարձան 100 հազ. ալժիրցիներ: Ահաբեկչությունը տարածվեց նաև պետական և զինվորական պաշտոնյաների դեմ: 1992 թ. հունիսին սպանվեց պրեզիդենտ Մուհամմադ Բուդիաֆը:

Բուդիաֆի սպանությունից հետո, որը իսլամական ահաբեկչության գագաթնակետերից մեկը հանդիսացավ, իշխանության ղեկն անցավ հինգ հոգուց կազմված Բարձրագույն խորհրդին, որը երկար կյանք չունեցավ: 1994 թ. հունվարին զինվորականները երկրի ժամանակավոր պրեզիդենտ նշանակեցին պաշտպանության մինիստր Լիամին Զերուալին: Բարձրագույն խորհուրդը վերացվեց:

Հաշվի առնելով երկրում ստեղծված ծայրագույն բարդ վիճակը՝ Զերուալը բանակցություններ սկսեց ԻՓՃ–ի ղեկավարության հետ՝ երկրում խաղաղություն հաստատելու շուրջ: Թեև որոշ հարցերի վերաբերյալ նախնական համաձայնություններ ձեռք բերվեցին, մասնավորապես պրեզիդենտական ընտրությունների մասին, այդուհանդերձ, դրանք չհանգեցրին դրության բարելավմանը և ահաբեկչության դադարեցմանը:

1995 թ. նոյեմբերին տեղի ունեցած պրեզիդենտական ընտրություններում հաղթանակեց Լիամին Զերուալը: Նա խոստացավ կիրառել կարևոր բարեփոխումներ, որոնց արդյունքում Ալժիրը պետք է դառնար իսկապես դեմոկրատական երկիր: 1996 թ. դեկտեմբերի 7–ին նա հաստատեց Ալժիրի բարեփոխված սահմանադրությունը, որը պահպանելով ազատությունների վերաբերյալ երաշխիքները՝ միաժամանակ արգելում էր բոլոր այն քաղաքական կուսակցությունները, որոնք հիմնված էին կրոնական և լեզվական սկզբունքների վրա:

Հասկանալի է, որ այդ կետն ուղղված էր ԻՓՃ–ի և իսլամականների դեմ, ուստի և վերջիններս շարունակեցին իրենց պայքարը Ալժիրի իշխանությունների և իսլամական ուժերի միջև:

1999 թ. ապրիլին կայացան Ալժիրի պրեզիդենտի հերթական ընտրությունները: Երկրի ղեկավարի բարձրագույն պաշտոնին հավակնում էր վեց թեկնածու: Բանակի ընտրյալը Աբդելազիզ Բուտեֆլիկան էր և հենց նա էլ հաղթանակ տարավ: Նա Հուարի Բումեդիենի ակտիվ գոր-

ծակիցներից էր և նրա պրեզիդենտության շրջանում զբաղեցնում էր Ալժիրի արտաքին գործերի նախարարի պաշտոնը:

Բուտեֆլիկայի հաղթանակը վկայում էր այն մասին, որ Ալժիրում դեռևս ուժեղ էին բանակի այն թևի դիրքերը, որոնք համարվում էին Հուարի Բումեդիենի կողմնակիցները: Այդ ուժերը շարունակում են պահպանել իրենց դիրքերը, որի մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ Բուտեֆլիկան 2004 թ. վերընտրվեց Ալժիրի պրեզիդենտ:

Ալժիրի իշխանությունները, հատկապես Բուտեֆլիկան, հասան որոշ հաջողությունների իսլամական ահաբեկչության դեմ մղվող պայքարում: Իսլամական փրկության բանակը, որը ստեղծվել էր ԻՓճ–ի կողմից, դադարեց որպես կազմակերպված ռազմական ուժ գոյություն ունենալ, թեև առանձին զինված խմբավորումներ դեռևս գոյություն ունեն և շարունակում են իրենց պայքարը կառավարության դեմ՝ Ալժիրը իսլամական պետության վերածելու համար:

Ներկա փուլում Ալժիրի առջև կանգնած են մի շարք բարդ տնտեսական և սոցիալական խնդիրներ, որոնց լուծումը կենսական անհրաժեշտություն է: Եթե մեկ բառով ասելու լինենք, ապա գլխավոր խնդիրը Ալժիրը արդիական, զարգացած և դեմոկրատական երկիր դարձնելու խնդիրն է՝ ընդունակ դիմագրավելու XXI դարի մարտահրավերները:

Գլուխ չորրորդ

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՄԷ

ԱԼ–ԻՄԱՐԱԹ ԱԼ–ԱՐԱԲԻՅԱ ԱԼ–ՄՈՒ ԻԱՏ

Միջազգային դիրքը — գտնվում է Մերձավոր Արևելքում. Արաբական թերակղզու արևելյան ափամերձ գոտուն է հարավից ընդ հարավարևելք ձգվող նեղուցի մասում։

Մակերևույթը — կիսաանապատ հարթավայր ավազային. Օմանի ծոցը և Օմանի ամբողջական սարավանդ հարավում Օմանի սուլթանությունը և Սաուդյան Արաբիան, արևմուտքում՝ հանրապետությունը Սաուդյան Արաբիան։

Տարածքը — 83 հազ. 600 քառ. կմ

Բնակչության թիվը — 4 410 41 հազ. (2006 թ.)

Բնակչությունը — Սաուդ հարթ (1 326 2006 թ.)

Պետական կառուցվածք — սահմանադրական միապետություն. 19% հասարակությունը ապրում է Դուբայում և արտերկրում. 23% հարավային ամիրաներ՝ 50% արտերկրյա հասարակություն. 1% հանքային քանակներ։ հանքեր

Պետական կրոնը — Իսլամ. հայ հրեան հասարակության կրոն հանդիսանում է բնակչության 96%-ը (80% տեղացիներ և 16% ցրված) ժողովուրդներին դիտարկվում է ավելի կարևոր 4%։

Պաշտոնական լեզուն — արաբերենը, նշանակ արտաքինում։ Հարավասիան են նաև հասարակությունը հանդիսանում հնդկերենը և արաբերեն։

Պետական նշանը — Հիմնադրվել Մեկնի դաշնությունը (միավորվում է հարավարևելքում՝ Դուբայ Դուբայ Իսլամ Դուբայ, Ռաս ալ-Խայմա, Ամ ալ-Քուվայն, Ֆուջեյրա

Պետական դրոշակը — հորիզոնական հարթ ինչ ինչ Օմանի ալ-Լամ սարամ (2006 թ. նոյեմբեր 2-ից)

Հարևանները իշխանությունից — ա) արևելքում՝ Դուբայ, բ) հարավարևելքում՝ գ) Դուբայում ընդհանուր բնակիչներ բնակիչներ հարավում՝ Սաուդյան Արաբիան դ) Սաուդյան Արաբիան

Օրենսդիր իշխանությունը — Սահմանադրությամբ հանդիսանում է նախագահ՝ Ալ-Ֆարիս ալ-Ինքիսան ալ-Սաուդի


ԱՐԱՔԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԻՐԱՆ
ԻՐԱՆ
ՊԱՐՍԻՑ ԾՈՎ
ՕՄԱՆԻ ԾՈՎ
ԿԱՍՊԻ ԾՈՎ
ԿԱՍՊԻՑ
ԴԱՂԵՍՏԱՆ
ԱՐԱՔԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՕՄԱՆ
ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՐԱԿՈՂՔԻ
ԿԱՐԱԲԻԾ

Դատական իշխանությունը — Դաշնային գերագույն դատարանը և Առաջին ատյանի դատարանները: Գործում են աշխարհիկ և իսլամական օրենքները

Սահմանադրությունը — ընդունվել է 1971 թ. դեկտեմբերի 2-ին

Անկախության օրը — 2 դեկտեմբերի, 1971 թ.

Ազգային տոնը — 2-ը դեկտեմբերի

Ազգային դրամը — դիրհամ (էմիրաթի դիրհամ)

Քաղաքական կուսակցությունները — չկան

Արդյունաբերությունը — նավթ, գազ, նավթաքիմիական արդյունաբերություն, շինարարական նյութերի արտադրություն, նավաշինություն, տնայնագործական արտադրություն, մարգարիտի արդյունահանում

Գյուղատնտեսությունը — արմավ, բանջարեղեն, թռչնաբուծություն, ձվի արտադրություն, կաթնամթերք, ձկնորսություն և ձկնաբուծություն

Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ) — 53 մլրդ ԱՄՆ դոլար, ըստ շնչի՝ 22 հազ. ԱՄՆ դոլար (2002 թ.)

Անդամակցում է — Միավորված ազգերի կազմակերպության, Համաշխարհային առևտրական կազմակերպության, Արաբական պետությունների լիգայի, Ծոցի համագործակցության խորհրդի, ՕՊԷԿ-ի, ՕԱՊԷԿ-ի և այլն

I. ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1. Ծովահենային ափ — Պայմանագրային (Խաղաղության) ափ — Պայմանագրային Օման

Այն տարածքը, որի վրա 1971 թ. ձևավորվեցին Արաբական Միացյալ էմիրությունները (ԱՄէ), գրավում է կարևոր ռազմավարական և աշխարհաքաղաքական դիրք Մերձավոր Արևելքի արևմտյան հատվածում և Պարսից ու Օմանի ծոցերի ավազանում:

Բնությունն այստեղ դաժան է, և արաբը մշտապես մաքառում է նրա հետ՝ իր կյանքի և գոյության համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելու համար: ԱՄէ–ի տարածքի չորս հինգերորդն անապատներ են՝ նրանց բնորոշ կիզիչ արևով, հաճախակի ավազային փոթորիկներով ու փոշու ամպերով, սակավ բուսականությամբ: Այդ անապատները սահմանակցում են Արաբական թերակղզում հայտնի Ռուբ ալ–Խալի՝ Դատարկ Քառորդ անապատին: ԱՄէ–ն այն երկրներից է, որտեղ ոչ մի գետ չկա, սակայն կան վադիներ՝ չորացած գետերի հուներ, որտեղով երբեմն հոսում են անձրևաջրերը: Բնականաբար, այդտեղ խոսք չի կարող լինել բուսականության, առավել ևս փարթամ բուսականության մասին, թեև կան անապատային գոտիներին բնորոշ մացառներ և զանազան փշաբույսեր:

ԱՄէ–ում իր շարունակությունն է գտնում Հաջարի լեռնաշղթան, որը ձգվում է Սաուդյան Արաբիայից: Երկրի հյուսիսային և արևելյան մասերում՝ լեռնամերձ շրջաններում, կան կանաչ հատվածներ: Սակայն ամենատպավորիչն օազիսներն են, որոնցով այնքան հարուստ են էմիրությունները: Դրանցից ամենահրապուրիչը ալ–Այն, Հիլի և Բուրայմի օազիսներն են: Օազիսներ կան համարյա ծովեզրյա ամբողջ գոտիով մեկ, որոնք, իրոք, հրաշք են իրենց փարթամ բուսականությամբ ու անկրկնելի գեղեցկությամբ: Անկասկած է, որ «միրաժ» հասկացությունն ուղղակի բխում է օազիսների եզակի գեղեցկությունից:

Պատմականորեն ԱՄԷ–ն անցել է շատ բարդ ու դժվարին ուղի: Այստեղ պատմական տարբեր ժամանակաշրջաններում իրենց տիրապետությունն են հաստատել հույները, պարթևները և Սասանյանները: VII դարում նա դարձավ Արաբական խալիֆայության բաղկացուցիչ մասը, և սկսվեց նրա իսլամացումը: XV դարի վերջերին սկսվեց եվրոպացիների ներթափանցումը, որի առաջնության դափնին պատկանում է պորտուգալացիներին: 1498–1515 թթ. նրանք նվաճում են Ռաս ալ–Խայման և վերահսկողություն սահմանում Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի հետ կատարվող առևտրի վրա: Նրանք Ռաս ալ–Խայմայի մոտ գտնվող Ջուլֆարում հաստատում են մաքսակետ և հարկեր գանձում Հնդկաստան, Չինաստան և հեռավորարևելյան այլ երկրներ մեկնող և այնտեղից վերադարձող նավերի ու նրանց ապրանքների վրա:

Սակայն պորտուգալական տիրապետությունը երկար չտևեց: Նրանց մարտահրավեր նետեց Մեծ Բրիտանիան, որին ի վերջո հաջողվեց պորտուգալացիներին դուրս մղել այդ տարածաշրջանից: Մեծ Բրիտանիայի համար առանձնահատուկ նշանակություն ուներ Հնդկաստանը, նրա հետ կատարվող առևտուրը և առևտրական ուղիների ազատությունը հարցը: Պարտուգալիային տարածաշրջանից դուրս մղելու խնդիրը լրիվ համընկնում էր նաև Սեֆյան Պարսկաստանի և Օմանի սուլթանի շահերի հետ: Նրանք անգամ դիմեցին Մեծ Բրիտանիային՝ Պորտուգալիային այդ տարածքներից դուրս մղելու խնդրանքով: Այդ հարցը Մեծ Բրիտանիան հաջողությամբ լուծեց XVII դարում: 1633 թ. պորտուգալացիները ստիպված էին հեռանալ Ջուլֆարից:

Մեծ Բրիտանիայի առջև կանգնած էր մեկ այլ ոչ պակաս կարևոր խնդիր: Դա ծովահենության դեմ պայքարի խնդիրն էր, որը սպառնալիքի տակ էր դնում առևտրի անվտանգությունը և առևտրական ուղիների ու նավարկության ազատությունը Ծոցի շրջանում և Հնդկաստանի հետ: Անգլիացիները ծովահենությունը կապում էին Կավասիմ կամ ալ–Կասիմի կլանի հետ, որը Ռաս–ալ–Խայմայի ու Շարջայի կառավարողն էր: Նրա տնօրինության տակ կար մոտ 900 նավ, որոնք հարձակումներ էին գործում տարածաշրջանի առևտրական ուղիներով անցնող նավերի վրա: Դա հակասում էր Մեծ Բրիտանիայի շահերին, որն այդ ժամանակ տարածաշրջանային խնդիրների լուծմանը մոտենում էր իր համար կենսական կարևոր նշանակություն ունեցող Հնդկաստանի հետ կապող ցամաքային և ջրային ուղիների անվտանգության տեսանկյունից: Մեծ Բրիտանիան ժամանակակից ԱՄԷ–ի մեջ մտնող Ռաս ալ–Խայմայի և շր-

ջակա ծովեզրյա տարածքները կոչեց **Ծովահենության ափ**, որն այդպես էլ մտել է պատմության մեջ[1]: Բրիտանական կառավարությունը խնդրեց Օմանի սուլթանին, որը, ինչպես ենթադրվում էր, կապերի մեջ էր և պայմանավորվածություններ ուներ ծովահենների հետ, վճռական քայլերի դիմել վերջ տալու ծովահենությանը և ապահովել առևտրական ուղիներում անվտանգ նավարկությունը: Սակայն Օմանի սուլթանը չկարողացավ (կամ չցանկացավ) վերջ տալ ծովահենությանը: Այնժամ իր ռազմական նավատորմը գործողության մեջ դրեց Մեծ Բրիտանիան: Առաջին հարձակումը, որը տեղի ունեցավ 1809 թ., ինչպես նաև հետագա մի շարք հարձակումներ Ռաս ալ–Խայմայի վրա, ավարտվեցին անհաջողությամբ: Սակայն, ի վերջո, բրիտանացիները հաղթանակ տարան: 1819 թ. նրանք գրավեցին Ռաս ալ–Խայման, որը մեծ ավերածությունների ենթարկվեց: Ծովահենությանը վերջ տրվեց: Մեծ Բրիտանիան միաժամանակ ձգտում էր այդ գոտին զերծ պահել Օսմանյան կայսրության և իր մշտական ախոյան Ֆրանսիայի ազդեցությունից և կանխել նրանց դիրքերի ուժեղացումը:

Սակայն բրիտանական հաղթանակի նշանակությունը չի սահմանափակվում միայն դրանով: Նա ունեցավ կարևոր ստրատեգիական և քաղաքական նշանակություն ամբողջ տարածաշրջանի համար, որն ընդգրկում էր Պարսից և Օմանի ծոցերի ավազանները:

Ծովահենների նկատմամբ հաղթանակ տանելուց և նրանց նավերը ոչնչացնելուց հետո Մեծ Բրիտանիան 1820 թ. պայմանագրեր ստորագրեց տարածաշրջանի, այդ թվում՝ ԱՄԷ–ի մասը կազմող յոթ շեյխությունների ղեկավարների հետ: Վերջիններս պարտավորվեցին ոչ մի օժանդակություն ցույց չտալ ծովահեններին, ամեն ինչ անել ծովահենությունը վերացնելու համար և պայմանավորվեցին այդ հարցում համագործակցել Մեծ Բրիտանիայի հետ:

---

1 Այս տեսակետն այսօր հերքվում է ԱՄԷ–ում, մասնավորապես Շարջայի էմիր շեյխ Սուլթան բին Մուհամմադ ալ–Կասիմիի կողմից: Նա պատկանում է նույն այն ալ–Կասիմի դինաստիային, որը դեռևս այն ժամանակներում կառավարող էր և այսօր էլ հանդիսանում է կառավարող դինաստիա Շարջայում և Ռաս ալ–Խայմայում: Նա պատմական և փիլիսոփայական գիտությունների դոկտոր է և մի շարք համալսարանների պատվավոր դոկտոր: Նրան 2005 թ. շնորհվել է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի դոկտորի պատվավոր կոչում: Իր «Ծոցում Արաբական ծովահենության միֆը» աշխատության մեջ ալ–Կասիմին նշում է, որ «բրիտանական հարձակման հետևում ընկած էր Ծոցի և Հնդկաստանի միջև ծովային առևտրական ուղիների վրա վերահսկողություն հաստատելու ցանկությունը»:

Այդ պայմանագրերով վերջ էին տրվում ռազմական գործողություններին, հաստատվում էին հրադադար ու խաղաղություն (truce) և համագործակցություն շեյխությունների և Մեծ Բրիտանիայի միջև:

Դրանից հետո **Ծովահենային ափը** վերանվանվեց **Պայմանագրային կամ Խաղաղության ափի**[2]:

Մեծ Բրիտանան կարողացավ ապահովել Հնդկաստանի հետ առևտրի ծովային ուղիների ազատ գործունեությունը:

Ծովահենության վերացումը կարևոր նշանակություն ունեցավ Պայմանագրային ափի մեջ մտնող յոթ էմիրությունների համար: Խաղաղության հաստատումը և անվտանգության վերականգնումը նպաստեց հինգհազարամյա վաղեմություն ունեցող մարգարիտի արդյունահանման զարգացմանը, նույնիսկ կարելի է ասել ծաղկմանը: Միանգամից կտրուկ աճեց մարգարիտի արտահանումը ոչ միայն Հնդկաստան, որը ավանդական բնույթ էր կրում, այլև եվրոպական շուկաներ՝ գտնելով մեծաքանակ գնորդներ՝ ի դեմս պերճանքի վարժված նրբաճաշակ եվրոպուհիների: Մարգարտի արդյունահանման աճը, ընդհուպ մինչև 1930–ական թվականները, մի կողմից աշխատանք ապահովեց հազարավոր արաբների, իսկ մյուս կողմից նպաստեց նրանից ստացվող եկամուտների նշանակալի աճին:

Սակայն դրանով չավարտվեց երկրամասի անվանափոխությունը: 1853 թ. կնքվեց նոր պայմանագիր բոլոր շեյխությունների միջև՝ ծովում մշտական խաղաղություն հաստատելու վերաբերյալ: Դրանից հետո Պայմանագրային ափը վերակոչվեց **Պայմանագրային Օմանի:** Այստեղ իր դերը խաղաց նաև այն հանգամանքը, որ այդ երկրամասը որոշ ժամանակ եղել էր Օմանի սուլթանի անվանական վերահսկողության տակ: Իրոք, դա եղել էր անվանական, քանի որ ցեղերը պահպանել էին իրենց քաղաքական և կրոնական (սուննի) ինքնուրույնությունը և չէին կազմել Օմանի սուլթանության մասը, որն իրականում շիական՝ Իբադի իմամություն էր հանդիսանում: Սակայն տարածքը կոչվեց «Պայմա-

2 Անգլերեն կոչվում է **Trucial coast** (Թրուսիալ կոուստ): **Truce** բառն անգլերենում ունի մի շարք իմաստներ՝ «թշնամական գործողությունների դադարեցում», «զինադադար», «հրադադար», «խաղաղություն» և այլն: Այն երբեմն օգտագործվում է նաև «պայմանագիր» իմաստով, որի շնորհիվ զինադադար կամ խաղաղություն է հաստատվում: Նա ունի երկիմաստ նշանակություն և տվյալ պարագայում օգտագործվում է «պայմանագիր» իմաստով և մասնագիտական գրականության մեջ մտել է որպես այդպիսին: Այդ պատճառով էլ **Ծովահենային** ափը վերակոչվել է **Պայմանագրային ափ**, որն ապահովել է հրադադար և հաստատել խաղաղություն:

նագրային Օման», որպեսզի այն չշփոթեն Օմանի սուլթանության հետ, որի հետ 1820 թ. մեծ Բրիտանիան պայմանագիր չէր կնքել:

Պայմանագրային Օման անվանումը պահպանվեց մինչև 1971 թ., երբ այդ երկրամասը ձեռք բերեց անկախություն և վերածվելով դաշնային պետության՝ կոչվեց Արաբական Միացյալ էմիրություններ:

2. Անգլիական պրոտեկտորատի հաստատումը

XIX դարի սկզբներից, հատկապես 1820 թ. կնքված պայմանագրերից հետո, Մեծ Բրիտանիան արագորեն ամրապնդեց իր դիրքերը Պարսից ծոցի ավազանում գտնվող արաբական երկրներում, այդ թվում և Պայմանագրային Օմանում: Բացի նրանից, որ ապահով ու անվտանգ դարձան Հնդկաստան, Չինաստան և Հեռավոր Արևելք տանող ծովային ուղիները, Մեծ Բրիտանիային հաջողվեց չեզոքացնել Իրանի, Օսմանյան կայսրության, Ֆրանսիայի, Նիդերլանդների և այլ երկրների քաղաքական, տնտեսական և ստրատեգիական հավակնությունները տարածաշրջանի նկատմամբ: Նրանց չհաջողվեց էական դիրքեր գրավել և սպառնալ բրիտանական շահերին:

Այդ ընթացքում կնքվեցին մի շարք այլ պայմանագրեր ևս, որոնց մեջ, սակայն, իր նշանակությամբ և կարևորությամբ առանձնանում է 1892 թ. կնքված Բացառիկ Պայմանագիրը, որով հաստատվեց Մեծ Բրիտանիայի պրոտեկտորատը Պայմանագրային Օմանի մեջ մտնող յոթ արաբական շեյխություն–էմիրությունների՝ Աբու Դաբիի, Աջմանի, Դուբայի, Շարջայի, Ռաս ալ–Խայմայի, Ում ալ–Քայվայնի և Ֆուջայրայի վրա: Պայմանագրային Օմանը դարձավ բրիտանական պրոտեկտորատ: Նույն կարգավիճակում XIX դարի վերջում հայտնվեցին Բահրեյնը, Քուվեյթը, իսկ 1916 թ.՝ նաև Կատարը:

Այսպիսով՝ Պարսից ծոցի արաբական տասը էմիրություններ դարձան բրիտանական պրոտեկտորատներ, որը պետք է համարել Մեծ Բրիտանիայի դիրքերի ամրապնդում Մերձավոր և Միջին Արևելքում:

Ստորագրված պայմանագրերի համաձայն՝ Պայմանագրային Օմանի մեջ մտնող էմիրությունները զրկվում էին միջազգային պայմանագրեր կնքելու իրավունքից և չէին կարող ընդունել որևէ օտարերկրյա ներկայացուցիչ՝ առանց Անգլիայի գիտության և նախնական համաձայնության: Դրա դիմաց Անգլիան պարտավորվում էր նրանց պաշտպանել (protect) արտաքին, այդ թվում և անմիջական հարևանների սպառնալիքներից: Այդ

ժամանակ անմիջական սպառնալիքը գալիս էր Սաուդյան Արաբիայից և վահաբիներից, ինչպես նաև Օսմանյան կայսրությունից: Իսկ Բահրեյնի պարագայում վտանգը գալիս էր Իրանից և Օմանի սուլթանությունից:

Պրոտեկտորատի վերաբերյալ պայմանագրերով Մեծ Բրիտանիան ծնականորեն ճանաչում էր էմիրությունների կառավարողների սուվերենությունը՝ նրանց տնօրինության տակ գտնվող էմիրությունների սահմաններում՝ հատուկ մատնանշելով, որ այդ սահմանները չեն կարող փոփոխության ենթարկվել առանց Անգլիայի համաձայնության:

Եթե առաջին կետով Անգլիան պարտավորվում էր պրոտեկտորատ–էմիրությունները պաշտպանել արտաքին հարձակումներից, ապա այս կետով նա իր վրա պարտավորություն է վերցնում կանխել ներքին երկպառակությունները և միջէմիրյան բախումները, որոնք սովորական երևույթ էին միջնադարյան արևելյան երկրներում, այդ թվում և արաբական էմիրություններում:

Իսկ ինչ վերաբերում էր էմիրությունների ներքին կառավարման հարցերին, ապա էմիրները այս ոլորտում պահպանում էին համեմատական անկախություն և իրենց էմիրությունները կառավարում էին համաձայն իրենց ավանդական օրենքների և սովորույթների: Բրիտանական միջամտությունը նրանց ներքին գործերին, մանավանդ պրոտեկտորատի հաստատման սկզբնական տարիներին, շատ սահմանափակ էր և, ըստ էության, ծնական բնույթ էր կրում: «Արաբական Միացյալ էմիրությունները 1998 թ.» տարեգրքում նշված է, որ այն ամենը, ինչ որ պաշտպանությունից և արտաքին հարաբերություններից դուրս էր, անտեսվում էր Մեծ Բրիտանիայի կողմից, և «ընդհուպ մինչև 1950–ականների կեսերը բրիտանացիների կողմից ոչ մի ուշադրություն չէր դարձվում երկրի տնտեսական զարգացմանը, և այդ ժամանակ կառավարողներն իրենք էին, որ նախաձեռնություն ցուցաբերեցին ժամանակակից ենթակառույցներ ստեղծելու հարցում»:

Իրադրությունը մի փոքր փոխվեց 1930–ական թվականներին, երբ արաբական էմիրություններում, այդ թվում և Պայմանագրային Օմանում, հայտնաբերվեց նավթ, որը խառնեց բոլոր խաղաքարտերը:

3. Կառավարող շեյխական տոհմերը

Պայմանագրային Օմանում բրիտանական ազդեցության հաստատման, այդ թվում և բրիտանական պրոտեկտորատի տարիներին՝

ընդհուպ մինչև XX դարի կեսերը, սոցիալ–հասարակական առումով, ըստ էության տեղի չունեցան էական փոփոխություններ: Հասարակական կարգի հիմքում պահպանվել էր դարերի խորքից եկող ցեղային կառուցվածքը: Արաբները, գլխավորապես բեդվին քոչվորները, համախմբված էին համապատասխան ցեղերում ու ցեղային միավորումներում, և ըստ հարազատության աստիճանակարգի՝ պատկանում էին կոնկրետ ընտանիքի, տոհմի, ցեղի և ցեղային միավորումների, որոնք ունեին միևնույն նախնին, որից և սերում էին:

Նման սոցիալական և հասարակական կառուցվածք ունեցող երկրներում, այդ թվում և Պայմանագրային Օմանում, կենտրոնական դեմքը ցեղապետը՝ շեյխն է, որը կարգավորում է բոլոր տեսակի սոցիալական, հասարակական, տնտեսական, կրոնական, ընտանեկան հարցերը, այդ թվում և ներցեղային ու միջցեղային վեճերը: Նա համարվում է թեև ընտրովի, իրականում ցեղապետ–շեյխի ինստիտուտը ժառանգական է, որը հորից անցնում է որդուն կամ եղբորը, համենայն դեպս, նա մշտապես ընտրվում է տվյալ մեծ ընտանիքից, որն ամենաազդեցիկն է տվյալ ցեղում կամ ցեղային միությունում: Կան հարցեր, որ շեյխը լուծում է միանձնյա, բայց կան և հարցեր, որոնք համարվում են կարևոր և շոշափում տվյալ ցեղի կենսական շահերը, ինչպես, ասենք, հարաբերություններն այլ ցեղերի հետ, ռազմական բախումները, տվյալ ցեղին պատկանող հողերի և ջրերի պահպանման և այլ խնդիրներ, որոնք շեյխը սովորաբար լուծում է՝ խորհրդակցելով տվյալ ցեղի ավագանու հետ և նրա կարծիքը հաշվի առնելով:

Ժամանակի ընթացքում ձևավորվում են հզոր և ազդեցիկ ցեղախմբեր, որոնց առաջնորդները տնօրինում են ընդարձակ տարածքներ և դառնում շեյխությունների կամ էմիրությունների առաջնորդներ՝ իրենց շեյխ մակդիրին ավելացնելով էմիր մակդիրը, որը միապետին հավասարազոր կոչում է: Էմիրի տնօրինության տակ է գտնվում որոշակի տարածք՝ էմիրություն, որի սահմաններն այս կամ այն չափով ճանաչվում են այլ ցեղային միությունների կամ էմիրությունների, իսկ երբեմն նաև օտար պետությունների կողմից: Եվ երբ որևէ օտար պետություն իր վերահսկողությունն է սահմանում նրա վրա, ապա նա սովորաբար ճանաչում է տվյալ էմիրությունը, նրա էմիրին և նրա իրավունքները, ինչպես դա պատահեց Պայմանագրային Օմանի հետ, երբ վերջինս XIX դարի վերջերին վերածվեց բրիտանական պրոտեկտորատի:

Ինչպես արդեն նշել ենք, նա կազմված էր յոթ էմիրություններից, որոնք ձևավորվել էին պատմականորեն՝ Աբու Դաբի, Աջման, Դուբայ, Շարջա, Ռաս ալ–Խայմա, Ում ալ–Քայվայն և Ֆուջեյրա: Բրիտանացիները պահպանեցին այդ կառուցվածքը, էմիրություններից յուրաքանչյուրի անվանումը, տարածքը և կառավարող շեյխական տոհմ–դինաստիաները, որոնք այնուհետև նույնությամբ անցան անկախ հռչակված Արաբական Միացյալ էմիրություններ պետությանը:

Աբու Դաբիում կառավարում է ալ–Նահայան տոհմը, որն այդ էմիրության էմիրն է ավելի քան 250 տարի: Դուբայում կառավարում է ալ–Մակտումների ընտանիքը, որը XIX դարի սկզբներին բաժանվեց ալ–Նահայան ընտանիքից: Աջմայի էմիրը ալ–Նուայմի տոհմից է, Շարջայինը և Ռաս ալ–Խայմայինը՝ ալ–Կասիմի տոհմից, որի մասին հիշատակվել է նախորդ էջերում, Ում ալ–Քայվայնինը՝ ալ–Մուալա, իսկ Ֆուջայրայինը՝ ալ–Շարկի տոհմից:

Նման իրավիճակ է տիրում նաև Պարսից ծոցի մյուս երեք էմիրություններում՝ Քուվեյթում, Բահրեյնում և Կատարում: Քուվեյթը կառավարում է աս–Սաբահների, Բահրեյնը՝ ալ–Խալիֆաների, իսկ Կատարը՝ ալ–Թանիների ընտանիքը:

Ավելացնենք, որ անկախության նվաճումից ու ԱՄԷ–ի կազմավորումից հետո այդ յոթ էմիրներից յուրաքանչյուրը հանդիսանում է բացարձակ միապետ իր էմիրության շրջանակներում:

II. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ (1918–1971 թթ.)

1. Քաղաքական իրադրությունը և սոցիալ–տնտեսական իրավիճակը 1920–1930–ական թվականներին

Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած սկզբնական շրջանում Պայմանագրային Օմանի մեջ մտնող բոլոր յոթ էմիրությունները գտնվում էին համանման վիճակում: Մեծ Բրիտանիան, պահպանելով նրանց պրոտեկտորատի կարգավիճակը, սակայն խուսափում էր անցնել ուղղակի կառավարման՝ գերադասելով անուղղակի կառավարման մեթոդը: Դա բխում էր ոչ միայն պրոտեկտորատի՝ որպես գաղութային կառավարման համակարգի, առանձնահատկությունից, այլև այն հանգամանքից, որ Մեծ Բրիտանիային տվյալ շրջանում ավելի հե-

տաքրքրում էր այդ էմիրությունները պահպանել այլ պետությունների սպառնալիքներից և նրանց հնարավոր ներթափանցումից, քան թե խորամուխ լինել էմիրությունների ներքին հարցերի մեջ, մանավանդ որ նրանք այդ առումով նրա համար առանձնակի հետաքրքրություն չէին ներկայացնում: Ուստի Մեծ Բրիտանիան իր վերահսկողությունը կամ կառավարումն իրականացնում էր էմիրությունների՝ մեր կողմից հիշատակված կառավարող տոհմերի ղեկավարների՝ էմիրների և նրանց շուրջը համախմբված ցեղային ավագանու միջոցով:

Դրան նպաստում էր նաև այն հանգամանքը, որ էմիրությունները քաղաքական և տնտեսական առումով գտնվում էին զարգացման համեմատաբար ցածր մակարդակի վրա, և նրանց բնակչությունը, որտեղ գերակայող էր քոչվոր–բեդվինական սոցիալական շերտը, հնազանդորեն հետևում էր շեյխին և կատարում ցեղապետի հրամանները: Դրանով նաև պետք է բացատրել այն իրողությունը, որ Պայմանագրային Օմանում 1920–1930–ական թվականներին տեղի չունեցան այնպիսի հզոր հակաիմպերիալիստական ելույթներ, ինչպես Եգիպտոսում, Իրաքում, Սիրայում և արաբական այլ երկրներում: Այդ հակաիմպերիալիստական ելույթները, որպես կանոն, իրենց մի ծայրով ուղղված էին լինում նաև տեղական կառավարողների՝ ցեղապետների, շեյխերի, հողատերերի և այլ մեծահարուստների դեմ: Նման երևույթներ Պայմանագրային Օմանում ակնհայտորեն չէին դրսևորվում: Իսկ դա հեշտացնում էր բրիտանացիների գործը: Նրանց անհրաժեշտ էր միայն իրենց տեսադաշտում պահել տվյալ էմիրին և նրա մերձակա շրջապատը, պահպանել նրանց ենթակայությունը և կախվածությունը Մեծ Բրիտանիայից և այդ ուղիով պահպանել իրենց տիրապետությունը Պայմանագրային Օմանի մեջ մտնող էմիրությունների վրա:

Բայց եթե այս կամ այն էմիրը ցուցաբերում էր անհնազանդության ամենաթույլ դրսևորումն անգամ բրիտանական իշխանությունների նկատմամբ կամ ինքնուրույն գործելու մտադրություն, ապա բրիտանական իշխանությունները գործում էին վճռականորեն և խստորեն պատժում նրանց՝ ընդհուպ մինչև նրանց տապալումը և փոխարինումը մեկ այլ՝ իրենց ավելի հնազանդ և ավելի ընդունելի թեկնածուով: Նրանք այդպես վարվեցին, ինչպես ցույց կտրվի, Աբու Դաբիի և Շարջայի էմիրների հետ, երբ վերջիններս փորձեցին փոքր–ինչ ինքնուրույնություն դրսևորել:

Մյուս կողմից, երբ մենք նշում ենք էմիրությունների բնակչության մոտ հակագաղութային պայքարի թուլության մասին, ապա դա չի նշա-

նակում, որ նրանք հաշտ էին, առավել ևս հիացած էին բրիտանացիներով: Բնավ, երբեք: Խոսքը նրանց համազգային գիտակցության մասին է, որը տվյալ ժամանակաշրջանում մի շարք գործոնների ազդեցության տակ դեռևս բարձր չէր և չէր հասել համազգային մասշտաբով ազգային–ազատագրական պայքարի անհրաժեշտության ըմբռնմանը: Դա կլինի հետագայում՝ կապված քաղաքական և սոցիալ–տնտեսական պայմանների փոփոխության և քաղաքական պայքարի բնագավառում անհրաժեշտ փորձի կուտակման հետ:

Թեև պետք է նշել, որ անգամ այդ շրջանում տեղի էին ունենում առանձին հակաբրիտանական ելույթներ: Դրա վառ օրինակն է հանդիսանում պայքարը 1930–ական թվականներին Շարջայի էմիրությունում ռազմական օդնավակայան կառուցելու բրիտանական ծրագրերի դեմ: Իսկ երբ բրիտանական իշխանություններին, այնուամենայնիվ, հաջողվեց օդանավակայան կառուցել, Շարջայի մի քանի ցեղեր հարձակվեցին օդանավակայանի վրա և այն շարքից հանեցին:

Էմիրությունները տնտեսապես հետամնաց երկրներ էին: Նրանք չունեին բնական հարստություններ, իսկ նավթ այդ ժամանակ դեռևս չէր հայտնաբերվել: Նրանք ունեին մի յուրատեսակ տնտեսություն որի «հումքային» բազան կազմում էին ձուկը և մարգարիտը, աղքատ՝ ոչ բարեբեր հողերը, իսկ ներքին՝ ցամաքային մասում՝ ջրի անբավարար պաշարները: Տնտեսության զարգացած ճյուղը ձկնարդյունաբերությունը և բնական մարգարիտի արդյունահանումն էր: Ժամանակակից հասկացողությամբ արդյունաբերություն գոյություն չուներ: Բացառություն էր կազմում, եթե կարելի է այդպես ասել, նավաշինությունը: Պայմանագրային Օմանում կառուցվում էին տարբեր չափերի և տարողության նավեր ու նավակներ՝ մարգարիտի արդյունահանման ու ձկնորսության համար, ինչպես նաև տրանսպորտային նպատակներով:

Նույնիսկ այդ պայմաններում առկա էր սոցիալական անհավասարությունը, որի ներքևում գտնվում էին ստրուկները, որոնք հանդիսանում էին հիմնական սուզակները՝ Ծոցի ջրերի խորքերից մարգարիտ որսալու համար, ապա արհեստավորները, որոնք մեծահարուստների համար սրճամաններ ու կոշիկներ, կենցաղային այլ իրեր ու առարկաներ էին պատրաստում, սոցիալական սանդղակում միջին տեղ գրավող մարգարտավաճառները և վերջապես շեյխերը, ցեղային ավագանին և նրանց ընտանիքի անդամները, որոնք զբաղեցնում էին սոցիալական սանդղակի ամենաբարձր աստիճանը:

Կառավարող շեյխական խավի համար եկամտի հուսալի աղբյուր էին հանդիսանում մաքսատները և նրանց օգնությամբ հավաքվող հարկերը, ձկնորսության արտոնագրեր տալու իրավունքը և այլն: Իսկ մարգարտավաճառները, որոնց մոտ կենտրոնացված էին զգալի քանակությամբ դրամական միջոցներ, ծեռք էին բերում հողատարածքներ և դառնում հողատերեր, ինչպես նաև դրամական վարկատուներ: Հարուստների շարքերը լրացնում էին օազիսներում արմավենի մշակողները և քոչվոր խոշոր անասնապահները: Դա հատկապես նկատելի էր Բուրայմիի ու ալ–Լիվայի օազիսներում և Ռաս ալ–Խայմայի հարթավայրերում, որտեղ առկա էին ջրի զգալի պաշարներ:

Աստիճանաբար ձևավորվում էր միջին, անգամ խոշոր առևտրականների խավը:

Այդուհանդերձ, հարստության գլխավոր աղբյուրը մինչև 1930–ականների վերջերը և 1940–ականների սկիզբը մնում էր բնական մարգարիտի արդյունահանումը և վաճառքը: 1925 թ. արդյունահանվել է մոտ 15 մլն ֆունտ ստեռլինգ մարգարիտ, որը փոքր թիվ չէ:

Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի վրա: Մարգարիտի արդյունահանումից ստացվող եկամուտները մտնում էին խոշոր ցեղապետների, նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև խոշոր առևտրականների գրպանները: Նրանցից, որպես կանոն, մասնահանումներ չէին կատարվում, հօգուտ հասարակության և տնտեսական զարգացման: Այդ պատճառով էլ այդ բնագավառներում շոշափելի տեղաշարժեր չէին կատարվում և առաջադիմություն չէր արձանագրվում ու Պայմանագրային Օմանի էմիրությունները շարունակում էին մնալ հետամնաց, չզարգացած և աղքատ երկրներ:

Իրադրությունն ավելի սրվեց, և տնտեսական վիճակն ավելի վատթարացավ, երբ վրա հասավ 1930–ականների համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որից առաջին հերթին տուժեց բնական մարգարիտի արդյունահանումն ու վաճառքը: Խիստ կրճատվեց նրա շուկայական պահանջը: Պակասը լրացրեց ճապոնացիների հայտնագործությունը՝ արհեստական մարգարիտ աճեցնելու բնագավառում: Ճապոնական ավելի էժան մարգարիտը լուրջ մրցակից դարձավ բնական մարգարիտի ճանապարհին: Կրճատվեց բնական մարգարիտի արդյունահանումը, որի հետևանքով աճեց գործազրկությունը, և նվազեցին նրանից ստացվող եկամուտները: Կրճատվեցին նաև առևտրի ծավալները: Դրան նպաստեց նաև այն պարագան, որ բրիտանական իշխանությունը

ներն արգելեցին նաև ստրկավաճառությունն ու զենքի վաճառքը, որով զբաղվում էին էմիրություններում:

2. Նավթի հայտնագործումը Պայմանագրային Օմանում և դրա հետևանքները

XX դարի 30–ական թվականները շրջադարձային եղան Ծոցի բոլոր երկրների, այդ թվում և Պայմանագրային Օմանի մեջ մտնող էմիրությունների համար: Դա կապված էր նավթի հայտնաբերման հետ: Առաջինը նավթ հայտնաբերվեց Բահրեյնում 1932 թ., ապա նաև մյուս էմիրություններում: Նրանց շարքը 1939 թ. մտավ Աբու Դաբիին՝ Պայմանագրային Օմանի ամենամեծ էմիրությունը, որի տարածքը կազմում է նրա, իսկ հետագայում՝ ԱՄԷ–ի տարածքի 85%–ը: 1939 թ. Աբու Դաբիի էմիր շեյխ Շախբուտ ալ–Նահայանն առաջին նավթային կոնցեսիան 75 տարի ժամանակով տրամադրեց «Թրուսիկըլ Կոուստ դիվելոպմենտ օյլ կոմպանիին», որը «Իրաք պետրոլեում կոմպանիի» դուստր ընկերությունն էր: Հետագայում՝ 1962 թ., նա վերանվանվեց «Աբու Դաբի Պետրոլեում կոմպանի»:

Այդ ընկերությունն իրավունք ստացավ հետախուզական աշխատանքներ կատարել Աբու Դաբիի ամբողջ տարածքում: Նավթ հայտնաբերվեց 1958 թ., որի պաշարներն այդ ժամանակ հաշվվում էին 1 մլրդ տոննայից ավելի: Իսկ այդ ժամանակ Աբու Դաբիի բնակչությունը կազմում էր ընդամենը 15 հազ. մարդ: Նավթի արտահանումն սկսվեց 1962 թ. և Աբու Դաբին 1966 թ. դարձավ Նավթ արտահանող երկրների կազմակերպության՝ ՕՊԷԿ–ի անդամ:

Հետագայում Աբու Դաբիի նավթի արդյունահանմանը մասնակցեց նաև «Բրիտիշ Պետրոլեումի» և «Կոմպանի ֆրանսեզ դը պետրոլի» դուստր կազմակերպությունը՝ «Աբու Դաբի մարին արեան»: Աբու Դաբիում նավթ արդյունահանվել է. 1962 թ.՝ 800 հազ. տ, 1963 թ.՝ 2 մլն 483 հազ. տ, 1964 թ.՝ 9 մլն տ, իսկ 1966 թ.՝ 17 մլն տ:

Օտարերկրյա, գլխավորապես անգլիական, ինչպես նաև ամերիկյան, ֆրանսիական և իսպանական նավթային ընկերությունները, ստանալով կոնցեսիաներ, նավթ հայտնաբերեցին նաև Դուբայում, Շարջայում և Ռաս ալ–Խայմայում:

Այսպիսով՝ Աբու Դաբին և Պայմանագրային Օմանի մյուս էմիրությունները նավթի հայտնաբերման, արդյունահանման և արտահանման

շնորհիվ թևակոխեցին նոր դարաշրջան, որը շրջադարձային եղավ նրանց տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման մեջ: Նրանք ցատկ կատարեցին հատկապես տնտեսության բնագավառում, մասնավորապես 1970–ական թվականներից սկսած, երբ վերացվեց անգլիական պրոտեկտորատը, և կազմավորվեց ԱՄԷ–ն՝ որպես անկախ պետություն: Սակայն դրա հիմքերը դրվեցին 1960–ականների կեսերից:

Նավթի հայտնագործումը զգալի փոփոխություն առաջացրեց Մեծ Բրիտանիայի քաղաքականության մեջ՝ հանդեպ Պայմանագրային Օմանը: Նա ավելի մեծ ուշադրություն դարձրեց էմիրությունների ներքին հարցերին և կառավարող տոհմերի ու նրանց ղեկավարների հետ իր փոխհարաբերությունների բարելավմանն ու ամրապնդմանը: Դա կապված էր մի կողմից՝ Մեծ Բրիտանիայի մտահոգությամբ՝ ամրապնդել իր ազդեցությունը և դիրքերը՝ խորամուխ լինելով նաև իր պրոտեկտորատների տնտեսական և սոցիալական հարցերի մեջ, իսկ մյուս կողմից՝ կանխել ԱՄՆ–ի և եվրոպական տարբեր երկրների հավանական մրցակցությունը, որոնք նույնպես ձգտում էին ձեռք բերել կոնցեսիաներ և տիրանալ էմիրությունների նավթային հարստություններին: Երկրորդ հարցում Մեծ Բրիտանիան հարկադրված դիմեց զիջումների: Օրինակ՝ Շարջայի էմիրը կոնցեսիա տվեց ամերիկյան «Կրեսենտ օյլ կոմպանիին», իսպանական «Իսպան օյլը» կոնցեսիա ձեռք բերեց Դուբայում և այլն:

Անգլո–ամերիկյան դաժան պայքարում Մերձավոր Արևելքի, ապա նաև Ծոցի նավթային հարստությունների համար անգլիական կողմը ստիպված էր համաձայնության գալ օրեցօր իր դիրքերն ամրապնդող ամերիկյան կապիտալի հետ: Դա միջազգային հարաբերություններում և համաշխարհային տնտեսության մեջ Մեծ Բրիտանիայի դիրքերի հարաճուն թուլացման և ԱՄՆ–ի դիրքերի անկասելի ամրապնդման արդյունք էր:

Իսկ ինչ վերաբերում է անգլիական քաղաքականությանը էմիրությունների կառավարող վերնախավի հետ, ապա նավթի հայտնաբերումից հետո բրիտանական տարբեր աստիճանակարգի ներկայացուցիչները սկսեցին այցելել էմիրություններ, հանդիպել էմիրների ու ցեղապետների հետ և առաջարկել նավթի դիմաց նրանց վճարել իր ժամանակի համար բավականին մեծ դրամական պարգևներ կամ դրամաշնորհներ: Այդ անսպասելի «նվերը» ուղղակի ապշեցրեց էմիրությունների կառավարող ընտանիքներին, մանավանդ որ նավթից ստացվող եկամուտներին զուգահեռ աճում էին նաև էմիրներին և ցեղապետներին տրվող կամ հատկացվող գումարները: Դրա արդյունքում էմիրությունները

ների ղեկավարներն արագ թափով հարստացան, որի համար նրանք պարտավորված էին զգում անգլիացիների հանդեպ: Աբու Դաբիի և Դուբայի շեյխերին, որտեղ նավթի արդյունահանումը ոչ մի կասկած չէր հարուցում, բրիտանացիները նշանակեցին տարեկան յուրաքանչյուրին 175 հազ. ֆունտ ստեռլինգ: Այդ գումարը հատկացվում էր նավթից ստացվելիք ապագա եկամուտների հաշվին: Դա սկզբնական շրջանում էր: Նավթային գործունեության ծավալմանը զուգահեռ՝ բրիտանացիները էմիրներին սկսեցին վճարել նավթից ստացվող եկամուտների մի մասը: Դա, այսպես ասած, միջանկյալ փուլն էր: Իսկ երբ նավթարդյունահանումը մեծ թափ ստացավ, և ակնհայտ դարձավ նրա շահութաբերությունն Աբու Դաբիում և Դուբայում, ապա հաստատվեց վճարման նոր կարգ՝ ըստ նոր համաձայնագրերի, որի հիմքում դրվել էր եկամուտների հավասար բաժանման սկզբունքը:

Իսկ ինչպես էին նրանք տնօրինում այդ գումարները: Էմիրները, ցեղապետները և նրանց շուրջը համախմբված ավագանին սկզբնական շրջանում այդ գումարի մեծ մասն օգտագործում էին որպես իրենց սեփական հարստություն և, ըստ այդմ՝ տնօրինում դրամական հատկացումներն ըստ իրենց հայեցողության: Սակայն անգամ այդ շրջանում էմիրները և ցեղապետները այդ գումարի մի մասը, համաձայն արաբական ավանդական սովորույթի, բաժանում էին նրանց պատկանող էմիրությունների և տարածքների բնակչության տարբեր խավերին՝ որպես առատաձեռնություն և նվիրատվություն: Նրանք թանկարժեք նվերներ էին տալիս իրենց բարեկամներին ու ընկերներին, սնունդ հատկացնում նրանց, ովքեր դրա կարիքն ունեին և այլն: Հետագայում այդ առատաձեռնությունը կամ նվիրատվությունը դառնում է ավելի առարկայական՝ հատկացումներ են կատարվում դպրոցների ու հիվանդանոցների շինարարության, ճանապարհների կառուցման, ինչպես նաև ջրամատակարարման համար:

Միաժամանակ Մեծ Բրիտանիան 1940–1950–ականներին սկսեց մասնակիորեն ցուցաբերել այսպես կոչված «Օգնություն հանուն զարգացման»: Դա պայմանավորված էր ոչ թե անգլիացիների մտահոգությամբ՝ զարգացնել Պայմանագրային Օմանի տնտեսությունը և բարելավել ժողովրդի սոցիալ–տնտեսական վիճակը, այլ, ինչպես նշում են որոշ ամերիկյան հետազոտողներ, այն «մտավախությամբ, որ Միացյալ Նահանգները և մյուս երկրները կարող են տարածաշրջանում ոտք դնելու տեղ գտնել և մրցակցել նավթային կոնցեսիաների հարցում»: Ահա դա կանխելու և էմիրությունների համակրանքը շահելու ու աջակցու-

թյունն ապահովելու նպատակով Մեծ Բրիտանիան իր կողմից նույնպես որոշ գումարներ էր հատկացնում էմիրություններին: Այսպես, օրինակ՝ 1954–1955 թթ. հատկացվել է 50 հազ., իսկ 1961–1962 թթ.՝ 550 հազ. ֆունտ ստեռլինգ: Իսկ 1955–1965 թթ.՝ տաս տարվա ընթացքում, բրիտանական օգնությունը կազմել է 1 մլն ֆունտ ստեռլինգ: Հատկացված գումարը ծախսվել է ջրային պաշարների ուսումնասիրության, ոռոգման վերականգնման նախագծերի, Դուբայում հիվանդանոցի բարեկարգման, Շարջայում դպրոցի կառուցման վրա և այլ նպատակներով: Կատարի օգնությամբ Դուբայում կառուցվեց խմելու ջրի մատակարարման համակարգ և առաջին կամուրջը քաղաքի ծովախորշի վրայով, իսկ Սաուդյան Արաբիան կառուցեց Շարջան Ռաս ալ–Խայմային միացնող կամուրջը: Այս բոլորին պետք է ավելացնել ևս մեկ կարևոր փաստ. անգլիական կառավարությունը մեծ գումար վճարեց Շարջայի էմիրին՝ Շարջայում ռազմական բազա կառուցելու թույլտվության համար: Իսկ կոնցեսիա ստացած անգլո–ֆրանսիական նավթային ընկերությունները կառուցեցին ստորջրյա նավթամուղ, որը Ում Շարիֆի նավթահանքը կապեց Դաս կղզու հետ: Այդ կղզում կառուցվեցին նավթապահեստներ, նավահանգիստ տանկերների համար, ջերմաէլեկտրակայան և այլն:

1950–1960–ականներին զգալի տեղաշարժեր եղան նաև առևտրի ասպարեզում: Այստեղ առաջնությունը պատկանում էր Դուբային: Նրա էմիրը և կառավարող վերնախավը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դուբայը նավթի պաշարներով և նրանից ստացվող եկամուտներով զիջում էր Աբու Դաբիին և չէր կարող մրցակցել նրա հետ այդ ասպարեզում, Դուբայի զարգացման համար որպես գերակա ուղղություն ընտրեցին բիզնեսը և առևտուրը: Նրանք ձգտում էին այդ ասպարեզում Դուբայը վերածել Պայմանագրային Օմանի կենտրոնի: Եվ պետք է նշել, որ նրանք հասան մեծ հաջողությունների, հատկապես ԱՄԷ–ի կազմավորումից հետո: Դրա մասին են վկայում հետևյալ ցուցանիշները, որոնք վերաբերում են մինչանկախության շրջանին՝ 1950–1960–ական թվականներին: Ներմուծումը 1958 թ. 3 մլն ֆունտ ստեռլինգից հասավ մոտ 48 մլն ֆունտ ստեռլինգ: Այդ նույն ժամանակաշրջանում կտրուկ աճեց ոսկու ներհոսքը Դուբայ, մեծ շահույթներ բերելով տեղական առևտրականներին և բանկիրներին: Պաշտոնական տվյալներով՝ 1970 թ. էմիրությունում կար 250 տոն ոսկի, որը բերել էր 80 մլն ֆունտ ստեռլինգ շահույթ:

Այս ամենով հանդերձ, հարկ է ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի վրա, առանց որի հնարավոր չէ հստակ պատկերացում կազմել Պայմանագրային Օմանի, ապա և ԱՄԷ–ի զարգացումների առանձնահատկությունների մասին: Չնայած նավթի հայտնաբերմանը, նրանից ստացվող շահույթներին, որոնք անընդհատ աճում էին, առևտրի աշխուժացմանը և տնտեսության ընդհանուր տեղաշարժերին, այդուհանդերձ, դա անմիջապես չառաջացրեց համարժեք փոփոխություններ երկրի տնտեսական և հասարակական կառուցվածքում, որը շարունակում էր մնալ խարսխված ցեղային հարաբերությունների, կառույցների և սովորույթների վրա: Դրա արտահայտություններից մեկն էլ այն էր, որ բեդվիների, ցեղերի անդամների աչքում ցեղապետը, շեյխը և, ի վերջո, էմիրը նախկինի պես շարունակում էին մնալ որպես էմիրությունների անվիճելի և լեգիտիմ ղեկավար–առաջնորդները: Հասարակության կառավարման համակարգում սկզբունքային բնույթի կամ արմատական փոփոխություններ տեղի չունեցան:

3. Իրադրությունը 1950–1960–ական թվականներին: Հասարակական և քաղաքական կյանքի նշանակալի ակտիվացումը Պայմանագրային Օմանում

Բրիտանական իշխանությունների քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը երկար տարիներ եղել է Պայմանագրային Օմանը պահել մեկուսացման մեջ՝ կտրված արտաքին աշխարհից, առաջին հերթին հարևան արաբական երկրներից, որտեղ հետպատերազմյան տարիներին շատ ուժեղ էին հակաիմպերիալիստական, հակաբրիտանական, ազգային–ազատագրական շարժումները: Նրանք ջանում էին, որ այդ երկրներում, ինչպես նաև Իրանում տեղի ունեցող հակաբրիտանական տրամադրությունները և շարժումները չազդեին Պայմանագրային Օմանի էմիրությունների վրա, չնպաստեին նրանց քաղաքական արթնացմանը և չներգրավեին նրանց հակաիմպերիալիստական պայքարի մեջ:

Սակայն կյանքը ցույց տվեց նման քաղաքականության սնանկությունը և ծախողման դատապարտված լինելը: Միամտություն է կարծել, թե հնարավոր է որևէ երկիր արհեստականորեն, երկար ժամանակ մեկուսացնել արտաքին աշխարհից, շրջակա քաղաքական միջավայրից ու նրա ազդեցություններից: Եվ ինչքան էլ որ էմիրությունները գտնվում

էին զարգացման համեմատաբար ցածր մակարդակի վրա և այդ առումով զիջում հարևան մի շարք արաբական երկրների և Իրանին, այդուհանդերձ, նրանցում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները այս կամ այն կերպ, այս կամ այն չափով ներթափանցում և համապատասխան խմորումներ էին առաջացնում ու ազդում էմիրությունների ներքաղաքական կյանքի, բնակչության մտածելակերպի և վարքագծի վրա: Պայմանագրային Օմանի հասարակությունը քնած հասարակություն չէր, այլ կենդանի մարմին, որը, թեկուզ և դանդաղ, բայց էվոլյուցիայի էր ենթարկվում և արձագանքում կարևոր քաղաքական իրադարձություններին: Դրա համար, բացի արտաքին ազդակներից, կային, անշուշտ, նաև ներքին քաղաքական և սոցիալ–տնտեսական դրդապատճառներ:

Դրա առաջին և թերևս ամենատպավորիչ դրսևորումը հանդիսացան մի շարք էմիրությունների, մասնավորապես Աբու Դաբիի, Դուբայի և Շարջայի բնակչության ելույթները՝ ի պաշտպանություն Իրանի ժողովրդի 1950–1953 թթ. հակաիմպերիալիստական պայքարի, երբ Իրանը ծանր պայքար էր մղում Անգլիայի դեմ իր նավթարդյունաբերության ազգայնացման համար: Նրանց համերաշխությունը Իրանի հայրենասիրական ուժերի հետ խիստ անհանգստացրեց բրիտանական իշխանություններին: Բայց անիվն արդեն սկսել էր պտտվել, և կանգնեցնել այնքան էլ դյուրին չէր, որում շատ շուտով համոզվեցին նրանք: 1950–ական թվականների կեսերին Պայմանագրային Օմանի հայրենասիրական ուժերը բրիտանական իշխանություններին մատուցեցին ևս մեկ տհաճ անակնկալ: Երկրում տարածվեցին թռուցիկներ՝ ուղղված ոչ միայն բրիտանական իշխանությունների, այլև ընդհանրապես գաղութարարների դեմ՝ նրանց պատասխանատու համարելով իրենց ենթակա ժողովուրդների հետամնացության և տնտեսական ծանր պայմանների համար: Թռուցիկը կոչ էր անում ոտքի ելնել պայքարելու գաղութային տիրապետության դեմ:

Ուշագրավ էր նաև Պայմանագրային Օմանի բնակչության դիրքորոշումը 1956 թ. Անգլիայի, Ֆրանսիայի և Իսրայելի կողմից Եգիպտոսի դեմ սանձազերծված պատերազմի նկատմամբ, երբ Եգիպտոսն ազգայնացրեց Սուեզի ջրանցքը: Դա ալեկոծեց ողջ արաբական աշխարհը, որոնք ոտքի ելան ի պաշտպանություն Եգիպտոսի հակաիմպերիալիստական պայքարի: Հուզումներից անմասն չմնացին նաև էմիրությունները: Դրությունն այնքան էր սրված, որ անգլիական իշխանություններն անգամ մտավախություն ունեին, որ հուզումները կարող են վերածվել

ապստամբության, որը կանխելու համար նրանք դիմեցին զենքի օգնությանը:

Դժգոհությունը համակել էր նաև ֆեոդալական վերնախավի որոշ շերտերի, մանավանդ այն էմիրություններում, որոնք նավթ չունեին, իսկ նավթից ստացվող եկամուտները հիմնականում բաժին էր հասնում Աբու Դաբիի և Դուբայի էմիրություններին: Նրանք պահանջում էին, որ իրենց նույնպես հատկացումներ կատարվեն այդ եկամուտներից: Դա ստեղծել էր լարվածություն էմիրությունների փոխհարաբերություններում, որն իր մի ծայրով ուղղված էր նաև Անգլիայի՝ որպես պրոտեկտոր երկրի դեմ: Իսկ աշխատավորական զանգվածները, որոնք ամենաաղքատ և անապահով սոցիալական խավն էին կազմում, խիստ տառապում էին գների աճից, բարձր հարկերից և սոցիալական անհավասարությունից:

Պայմանագրային Օմանում ստեղծված լարված իրադրությունն իր վրա գրավեց Արաբական պետությունների լիգայի ուշադրությունը, որը նպատակահարմար գտավ մոտիկից ուսումնասիրել իրադրությունը և ձեռք առնել համապատասխան միջոցառումներ: Նա որոշեց հատուկ պատվիրակություն ուղարկել Պայմանագրային Օման: Դրա դեմ դուրս եկավ Մեծ Բրիտանիան, որը շարունակում էր Պայմանագրային Օմանի մեկուսացման իր տխրահռչակ քաղաքականությունը: Բրիտանական իշխանությունները հրաժարվեցին Արաբական պետությունների լիգայի պատվիրակությանը մուտքի վիզաներ տրամադրել և արգելեցին նրա մուտքը էմիրություն: Դա ավելի սրեց իրադրությունը և բողոքի լայն ալիք առաջացրեց երկրում: Շատ վայրերում տեղի էին ունենում բողոքի միտինգներ կամ ցույցեր: Եվ այստեղ տեղի ունեցավ անսպասելին: Ռաս ալ–Խայմայի էմիրը խիզախություն ցուցաբերեց, և անտեսելով բրիտանական արգելքը՝ ինքը թույլատրեց Արաբական պետությունների լիգայի պատվիրակությանը մտնել Պայմանագրային Օմանի տարածք: Նրան պաշտպանեցին ոչ միայն ժողովրդական զանգվածները, այլև Շարջայի կառավարող սուլթան Սակր բին Սուլթան ալ–Կասիմին: Վերջինս 1965 թ. հուլիսի 4–ին հանդես եկավ մի հայտարարությամբ, որտեղ խստորեն դատապարտեց բրիտանական ադմինիստրացիայի գործողությունները: Միաժամանակ նա հայտարարեց, որ հրաժարվում է երկարացնել Շարջա քաղաքի մոտ անգլիական ռազմական բազայի վարձակալման վերաբերյալ պայմանագիրը: Դա արդեն լուրջ հարված էր բրիտանական ստրատեգիական շահերին, որը կանխելու համար անգլիացիները ձերբակալեցին սուլթան Սակր

բին Սուլթան ալ–Կասիմիին, և նրան ռազմական ինքնաթիռով տեղափոխեցին Բահրեյն: Դա դասական գաղութարարության վերին աստիճանի բնորոշ մի օրինակ էր: Սուլթանը գահընկեց արվեց: Նրան տապալեցին անգլիական իշխանությունները, սակայն այդ ամբողջ պատմությունը ներկայացրեցին, իբրև թե նրան տապալել է կառավարող ալ–Կասիմիների կլանը՝ փորձելով կոնֆլիկտին տալ ներընտանեկան վեճի «անմեղ» բնույթ: Շարջայի նոր սուլթան նշանակվեց Խալիդ բին Համեր ալ–Կասիմին:

Չնայած Շարջայում տեղի ունեցած իշխանափոխությանը՝ բրիտանացիները, այդուհանդերձ, ծագած կոնֆլիկտն ընկալեցին որպես սթափեցնող ազդանշան: Անգլիայի նախաձեռնությամբ 1965 թ. հուլիսին Դուբայում գումարվեց Պայմանագրային Օմանի մեջ մտնող բոլոր էմիրությունների ղեկավարների հանդիպում, որի ընթացքում հիմնականում քննարկվեցին տնտեսական հարցեր և երկրի զարգացման խնդիրներ: Դրանց մեջ կարևորները էմիրությունները միմյանց հետ կապող ճանապարհների շինարարության, խոշոր բնակավայրերի ջրի մատակարարման համակարգի բարելավման և ջերմաէլեկտրակայանների կառուցման հարցերն էին, որի համար նախատեսվեց 2,5 մլն ֆունտ ստեռլինգ: Ստեղծվեց Տնտեսական զարգացման խորհուրդ:

Անգլիան նման քայլերի օգնությամբ ձգտում էր մեղմացնել լարվածությունը և կանխել հնարավոր և ավելի հզոր հակաբրիտանական ելույթները Պայմանագրային Օմանում:

Այդ հանդիպման արդյունքները, սակայն, չբավարարեցին բոլորին: Ցույցերի և միտինգների ժամանակ խստորեն քննադատվում էր բրիտանական իշխանությունների և նրանց հետ համագործակցող էմիրների քաղաքականությունը: Բողոքի միտինգների և ցույցերի մասնակիցները պահանջում էին սերտացնել քաղաքական և տնտեսական կապերը արաբական երկրների և նրանց շահերն արտահայտող Արաբական պետությունների լիգայի հետ: Այդ տրամադրություններն ավելի բորբոքվեցին, երբ Շարջայի նախկին կառավարող Սակր բին Սուլթան ալ–Կասիմիին հաջողվեց Բահրեյնից փախչել Քուվեյթ, իսկ հետո հաստատվել Կահիրեում, որտեղից նա խիստ քննադատում էր անգլիական քաղաքականությունը Ծոցի շրջանում: Նա դիմեց կոչով՝ ուղղված ոչ միայն Պայմանագրային Օմանի էմիրություններին, այլև Բահրեյնի, Կատարի, Քուվեյթի, Ադենի, Հադրամաութի շեյխերին՝ ուժեղացնել պայքարը անկախության համար և չեղյալ հայտարարել Մեծ Բրիտանիայի հետ

կնքված բոլոր անիրավահավասար պայմանագրերը, որոնք արաբական էմիրությունները կախման մեջ էին դնում Անգլիայից:

Մեծ Բրիտանիայի հետ հարաբերությունների վատթարացման հարցում 1960–ական թվականների կեսերից իր դերը խաղաց նաև սաուդական գործոնը: Բրիտանացիները փորձում էին Սաուդյան Արաբիայի օգնությամբ, որի հետ նրանք հաստատել էին ամենասերտ հարաբերությունները, Պայմանագրային Օմանի էմիրություններին ներգրավել Մերձավոր Արևելքում և Ծոցի շրջանում նախատեսվող զանազան քաղաքական ծրագրերի մեջ: Այդ ծրագրերից էր նաև «իսլամական պակտի» ծրագիրը, որն առաջ քաշեց Սաուդյան Արաբիայի միապետը և աջակցություն գտավ Անգլիայի և արևմտյան մի շարք երկրների կողմից: Դրա նպատակն էր իսլամական դրոշի ներքո համախմբել տարածաշրջանի պետություններին՝ Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ, և շեղել արաբական երկրներին ազգային–ազատագրական և հակաիմպերիալիստական պայքարից:

Սակայն դա անընդունելի էր արաբական երկրների համար, որտեղ ազգային–ազատագրական և հակաիմպերիալիստական շարժումները գտնվում էին բարձր մակարդակի վրա և արդեն արձանագրել էին պատմական նշանակություն ունեցող հաղթանակներ անկախության և սուվերենության համար մղվող պայքարում: Նրանց համար անընդունելի էր վերադարձը միջնադարյան չափանիշներով կառավարվող մի պետության հովանավորության տակ, թեկուզ և արաբական, ինչպիսին Սաուդյան Արաբիան էր:

Մյուս կողմից՝ կարևոր նշանակություն ուներ այն պարագան, որ Սաուդյան Արաբիայում տիրապետող էր վահաբիական իսլամը, որն աչքի է ընկնում իր պահպանողականությամբ, ծայրահեղականությամբ և ագրեսիվությամբ[3]: Մինչդեռ Ծոցի, այդ թվում և Պայմանագրային Օմանի էմիրություններում տիրապետող էր իսլամի գլխավորապես սուննի, ինչպես նաև շիա ուղղությունը: Վահաբիների ու նրանց միջև հարաբերությունները մշտապես լարված են եղել, որոնք երբեմն ընդունում են բացահայտ թշնամական բնույթ:

Ուստի Անգլիայի փորձերը՝ ինչ–որ ձևով սերտացնել կապերը այդ երկրների և Սաուդյան Արաբիայի միջև, անընդունելի էին Ծոցի և արաբական մյուս երկրների համար, որը ոչ միայն կամրապնդեր Մեծ Բրի-

3 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Ն. Հովհաննիսյան,** Արաբական երկրների պատմություն, հ. II, 1516–1918, Երևան, 2004:

տանիայի դիրքերը, այլև, ի հավելումն, կուժեղացներ նաև Սաուդյան Արաբիայի ազդեցությունը:

Այդ հողի վրա սրվեցին հարաբերությունները Պայմանագրային Օմանի ամենամեծ և ամենաազդեցիկ էմիրության՝ Աբու Դաբիի էմիր Շախբուտի և բրիտանական կառավարության միջև: Վերջինս փորձում էր պարտադրել էմիր Շախբուտին հնդկական ռուպին, որի հետ կապված էր երկրի դրամը, փոխարինել սաուդական դրամով: Դա նշանակում էր Աբու Դաբիի տնտեսությունը, առևտուրը, մասնավորապես արտաքին առևտուրը, և ֆինանսները կապել Սաուդյան Արաբիայի հետ և կախման մեջ դնել նրանից: Դա լավ էր հասկանում էմիր Շախբուտը, ուստի նա տեղի չտվեց բրիտանական ճնշմանը և մերժեց բավարարել պրոտեկտոր երկրի պահանջը: Այդ քայլը շատ թանկ նստեց նրա վրա: 1966 թ. օգոստոսին էմիրը Շախբուտը գահընկեց արվեց ալ–Նահայան կառավարող կլանի կողմից, և էմիրի գահը հանձնվեց նրա կրտսեր եղբորը՝ Զայիդ բին Սուլթան ալ–Նահայանին:

Անհնազանդ էմիրներին գահընկեց անելու հարցում Անգլիան մեծ փորձ ուներ, որը նա հաջողությամբ կիրառում էր էմիրություններում: Հիշենք թեկուզ Շարջայի էմիր Սակր բին Սուլթան ալ–Կասիմիին, որը նույնպես մինչ այդ արժանացել էր նույն ճակատագրին: Նշենք նաև, որ մահափորձ կատարվեց Ռաս ալ–Խայմայի էմիրի դեմ, որը ծախողվեց, իսկ մահափորձ կատարողները սպանվեցին էմիրին պաշտպանող ժողովրդի կողմից:

Այս շրջանում Արաբական պետությունների լիգան անցավ ավելի վճռորոշ քայլերի և բարձրացրեց Պայմանագրային Օմանին անկախություն տալու հարցը:

Սիա այսպիսին էր ընդհանուր գծերով իրադրությունը, երբ Անգլիայի լեյբորիստական կառավարությունը, որը փոխարինել էր մինչ այդ ընտրություններում պարտություն կրած պահպանողականներին, 1968 թ. հանդես եկավ սենսացիոն հայտարարությամբ առ այն, որ Անգլիան պատրաստվում է մինչև 1971 թ. դեկտեմբերը հեռանալ Սուեզի ջրանցքից արևելք գտնվող, այդ թվում և Պարսից Ծոցի տարածքներից:

III. ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1. Տարածաշրջանում անգլիական նոր քաղաքականության դրդապատճառները

Անգլիական կառավարության հայտարարությունը, որ ինքը հեռանում է Սուեզի ջրանցքի գոտուց դեպի արևելք ընկած բոլոր տարածքներից, այնտեղից դուրս է բերում իր զորքերը և վերացնում ռազմական բազաները, իսկական անակնկալ էր ոչ միայն տարածաշրջանի երկրների, այլև շատ–շատերի համար: Դրա դրդապատճառների վերաբերյալ կան տարբեր կարծիքներ, և տրվել են տարբեր՝ երբեմն միմյանց հակասող բացատրություններ: Եվ քանի որ այս հարցը վերաբերում է ոչ միայն ԱՄԷ–ին, այլ նաև Ծոցի բոլոր երկրներին, ապա անհրաժեշտ է ավելի հանգամանորեն անդրադառնալ այդ խնդրին:

Կարծիքներից մեկը, որ հանդիպում ենք ամերիկյան աղբյուրներում, այն է, որ Անգլիան հայտնվել էր ֆինանսական ծանր պայմաններում և այլևս ի վիճակի չէր տանել այնպիսի բեռ, ինչպես իր ռազմական ներկայությունը այդ տարածաշրջանում. «Ներքին ֆինանսական խնդիրների պատճառով Բրիտանիան 1960–ականների վերջերին որոշեց վերացնել իր ռազմական պարտավորությունները Սուեզից արևելք»:

Գոյություն ունի մեկ այլ տեսակետ, որը Անգլիայի հեռանալը կապում է Հնդկաստանի կարգավիճակի փոփոխության հետ: Ըստ այդմ՝ ընդգծվում է, որ 1947–1950 թթ. ձևավորվեցին երկու անկախ պետություններ՝ Հնդկաստանը և Պակիստանը, որից հետո Մեծ Բրիտանիան այլևս անհանգստանալու կարիք չուներ իր նախկին հնդկական գաղութների անվտանգությունը, այդ թվում և կոմունիկացիաների ազատությունը և ապահովությունը պաշտպանելու հարցում, ինչպես XIX դարում և XX դարի առաջին կեսում:

Կարծում ենք, որ այս տեսակետները պարունակում են որոշ ճշմարտություն, ուստի սխալ կլիներ դրանք հաշվի չառնել:

Անգլիացիները հակված են իրենց քայլը բացատրել իրենց մարդասիրությամբ և մյուս ժողովուրդների ազգային շահերը, նրանց իղձերը հաշվի առնելու իրենց բարի կամքի դրսևորումով, որը չափազանցություն է:

Խորհրդային արևելագիտական գրականության մեջ տիրապետող էր այն տեսակետը, որ Անգլիան Սուեզի ջրանցքից արևելք ընկած երկրներից հեռացավ ազգային–ազատագրական շարժումների ճնշման ներքո: Բնավ չթերագնահատելով այդ շարժումների պատմական նշանակությունը՝ սակայն պետք է սթափ գնահատել և ընդունել, որ Ծոցի շրջանի երկրներում ազգային–ազատագրական պայքարն այնպիսի հզորության չէր հասել, որը ստիպեր բրիտանացիներին ընդունել այդպիսի պատասխանատու որոշում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարծում ենք, որ Անգլիայի այդ որոշման պատճառները պետք է փնտրել միջազգային այն նոր իրողությունների մեջ, որոնք աստիճանաբար ձևավորվեցին հետպատերազմյան տարիներին: Դրանց մեջ կարևորներն էին հետևյալ գործոնները:

Առաջին՝ Մեծ Բրիտանիան Երկրորդ համաշխարհային պատերազմից դուրս եկավ թուլացած: Չնայած այդ հանգամանքին՝ նա սկզբնական շրջանում իներցիայով դեռևս ձգտում էր շարունակել իր նախկին կայսերական քաղաքականությունը և փորձում էր այնպիսի տպավորություն թողնել, որ ինքն աշխարհի ամենահզոր տերությունն է: Սակայն շուտով ակնհայտ դարձավ, որ նման քաղաքականության համար, որը պետք է ապահովեր նրա առաջատար քաղաքական և ռազմական ներկայությունը մոլորակի բոլոր մայրցամաքներում կամ աշխարհի տարբեր մասերում, Մեծ Բրիտանիան այլևս չուներ համապատասխան նյութական, ֆինանսական և ռազմական պահուստային ուժեր, նա չուներ նախկին ներուժը: Մեծ Բրիտանիայի՝ որպես աշխարհի առաջնակարգ պետության և կայսրության դարն արդեն անցել էր, և եկել էր մի այնպիսի պատմական դարաշրջան, երբ նա ստիպված էր աստիճանաբար իր դիրքերը զիջել այլ պետությունների և վարել այնպիսի քաղաքականություն, որը կարող էր համարժեք լինել նրա նոր կարգավիճակին: Եվ նրա հարկադրական հեռանալը Սուեզից արևելք ընկած տարածքներից պետք է դիտարկել այդ նոր քաղաքական իրողության տեսանկյունից:

Մեծ Բրիտանիան առաջնությունը համաշխարհային քաղաքականության բոլոր հարցերում զիջում էր իր գլխավոր դաշնակից ԱՄՆ–ին:

Երկրորդ՝ 1940–1950–ական թվականներին Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում նոր թափ առած ազգային–ազատագրական շարժումները հարցականի տակ դրեցին համաշխարհային գաղութային համակարգը: Օրակարգի հարց դարձավ նրա վերացման խն-

դիրը, որն իր իրավաբանական ձևակերպումն ստացավ ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի 1960 թ. միաձայն ընդունած որոշման մեջ՝ գաղութային համակարգի վերացման և գաղութային կախման մեջ գտնվող բոլոր երկրների անկախության և սուվերենության ճանաչման մասին: Այդ որոշումն առաջին հերթին ուղղված էր աշխարհի ամենամեծ՝ բրիտանական գաղութային կայսրության, ինչպես նաև գաղութային այնպիսի երկրների, ինչպես Ֆրանսիան, Բելգիան, Իսպանիան, Պորտուգալիան, շահերի դեմ: Սակայն միջազգային դրությունն այնպիսին էր, որ այդ երկրները հարկադրված նույնպես Գլխավոր ասամբլեայի որոշման կողմ քվեարկեցին: Դրանով Մեծ Բրիտանիան պարտավորվում էր հրաժարվել նաև իր մի շարք պրոտեկտորատներից, որը և նա կատարեց 1960–ականների վերջին:

Երրորդ՝ բրիտանական որոշումն ընդունվեց սառը պատերազմի ամենաթեժ պահին: Աշխարհն արդեն բաժանված էր երկու միմյանց հակադիր ռազմաքաղաքական բլոկների, որոնցից մեկը գլխավորում էր Խորհրդային Միությունը, իսկ մյուսը՝ ԱՄՆ–ը: Անգլիան մտնում էր ԱՄՆ–ի գլխավորած խմբում և ամեն կերպ օգնում նրան:

Այստեղ խնդիրը կայանում էր նրանում, որ սառը պատերազմի ժամանակ գաղութները և գաղութային կախվածության մեջ գտնվող երկրները երկու հակադիր բլոկների միջև մղվող պայքարի յուրահատուկ թատերաբեմ էին հանդիսանում: Տիրապետող էր հանդիսանում այն տեսադրույթը, որ սառը պատերազմի ելքը զգալիորեն կախված է այն բանից, թե ում կպաշտպանեն գաղութային կախվածության մեջ գտնվող երկրները: Խորհրդային Միությունը և նրա գլխավորած սոցիալիստական երկրների բլոկը համոզված էին, որ գաղութային և կախյալ երկրները իրենց պահուստային ուժերն են և հակաիմպերիալիստական պայքարում իրենց բնական դաշնակիցները: Մինչդեռ ԱՄՆ–ը, Մեծ Բրիտանիան և արևմտյան մյուս երկրները ձգտում էին կանխել դրա հնարավորությունը, Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի երկրներին պահել իրենց ազդեցության ոլորտում և նրանց օգտագործել որպես իրենց պահուստային ուժեր: Իսկ դա հնարավոր էր, եթե նրանք արագացնեին ապագաղութացման համաշխարհային գործընթացը և գոնե ձևականորեն ճանաչեին նրանց անկախությունը և սուվերենությունը:

Ահա այս բոլոր գործոններով էր, մեր կարծիքով, պայմանավորված Մեծ Բրիտանիայի 1968 թ. ընդունած որոշումը «կամովին» հեռանալ Սուեզի գոտուց արևելք ընկած տարածքներից:

Այսպիսով՝ երկու հակադիր բլոկների մրցապայքարից, որը երբեմն շատ սուր և վտանգավոր ընթացք էր ունենում, շահողը եղան գաղութները, պրոտեկտորատները և ենթամանդատային երկրները, այդ թվում և Ծոցի պրոտեկտորատ–էմիրությունները:

2. Արաբական Միացյալ էմիրությունների կազմավորումը

Ծոցի երկրներից հեռանալու վերաբերյալ Մեծ Բրիտանիայի հայտարարությունը միանգամայն նոր քաղաքական իրադրություն ստեղծեց տարածաշրջանում: Էմիրությունները կանգնեցին նոր և բարդ խնդիրների առջև, որոնց մեջ ամենագլխավորը նրանց՝ որպես պետության, ապագա կարգավիճակի հարցն էր՝ ելնելով այն իրողությունից, որ Մեծ Բրիտանիան հրաժարվելու էր պրոտեկտորատից:

Սակայն չպետք է կարծել, որ Մեծ Բրիտանիան հեռանում էր հենց այնպես՝ բախտի քմահաճույքին թողնելով էմիրություններին, մասնավորապես Պայմանագրային Օմանին, Բահրեյնին, Կատարին, ինչպես նաև Քուվեյթին: Նա առաջ քաշեց ֆեդերատիվ՝ դաշնային պետություն ստեղծելու գաղափարը, որը կապված էր լինելու նրա՝ Մեծ Բրիտանիայի հետ: Դա հիմք տվեց այն տեսակետն արտահայտելու, որ «Անգլիան հեռանում է՝ մնալու համար»:

Դաշնային պետություն ստեղծելու գաղափարը նոր չէր, և դա պարբերաբար առաջ է քաշվել Անգլիայի կողմից, հատկապես արաբական պետություններն իր հովանու ներքո համախմբելու նպատակով: Սակայն այդ ծրագրերը երկար կյանք չեն ունեցել և, ի վերջո, ձախողում են կրել:

Այժմ նորից այդ գաղափարը կամ ծրագիրը հրապարակ էր նետվում: Եվ 1968 թ. սկսվեցին քննարկումները էմիրությունների միջև դաշնային պետության կազմավորման պայմանների և նպատակների վերաբերյալ:

Սկզբնական շրջանում նախատեսվում էր դաշնային պետության մեջ միավորել ինը էմիրություններ՝ Բահրեյնը, Կատարը և Պայմանագրային Օմանի մեջ մտնող յոթ էմիրությունները՝ Աբու Դաբին, Աջմանը, Դուբայը, Շարջան, Ռաս ալ–Խայմայը, Ում ալ–Քայվայնը և Ֆուջեյրան: Կատարը նույնիսկ կազմեց ապագա դաշնային էմիրության սահմանադրությունը, որն ընդունելի եղավ նաև մնացած ութ էմիրությունների համար:

Սակայն երեք տարի տևած քննարկումներից հետո պարզվեց, որ կան որոշ բարդություններ այդ բոլոր էմիրությունները մեկ պետության,

թեկուզ և դաշնային, միավորելու խնդրում: Դա առաջին հերթին կապված էր Բահրեյնի և Կատարի դիրքորոշման փոփոխության հետ:

Իրանի շահ Մուհամմադ Ռեզա Պահլավին, որը շատ սերտ ռազմաքաղաքական հարաբերություններ ուներ ԱՄՆ–ի հետ և համարվում էր նրա հենարանը Ծոցի շրջանում, հույս ուներ, որ Մեծ Բրիտանիայի հեռանալուց հետո Իրանը կփոխարինի նրան այդ տարածաշրջանում և կդառնա տարածաշրջանային «գերտերություն»: Շահը բացեիբաց ներկայացրեց իր հավակնությունները Բահրեյնի նկատմամբ՝ փաստարկելով, որ Բահրեյնը պատմական տարբեր ժամանակներում գրավված է եղել Իրանի կողմից և նրա մի մասն է կազմել, մինչդեռ նրա էմիր ալ–Խալիֆաները Բահրեյն են եկել և դարձել նրա կառավարողները միայն XVIII դարում: Շահը շատ կոշտ կերպով հայտարարեց, որ Իրանը երբեք չի համաձայնվի, որ Բահրեյնը նախատեսվող արաբական պետությունների դաշնության մաս կազմի:

Իրադրությունն այն աստիճանի սրվեց, որ Բահրեյնի հարցը դարձավ ՄԱԿ–ի քննարկման առարկա: Նա ընդունեց մի որոշում, որն ինչ–որ իմաստով կարելի է կոմպրոմիսային համարել: ՄԱԿ–ի որոշումը մերժեց շահի հավակնությունները Բահրեյնի նկատմամբ, մի կողմից, և նպատակահարմար գտավ, որ Բահրեյնը դառնա անկախ պետություն, մյուս կողմից: Այսպիսով՝ Բահրեյնի հարցը՝ որպես ապագա դաշնային էմիրություններից մեկը, հանվեց օրակարգից: 1971 թ. օգոստոսի 15–ին Բահրեյնը հռչակվեց անկախ պետություն:

Հավանաբար դա իր ազդեցությունն ունեցավ նաև Կատարի դիրքորոշման վրա: Նա ևս գերադասեց դառնալ անկախ պետություն, քան թե մաս կազմել էմիրությունների ծրագրվող դաշնությանը: Կատարի անկախությունը հռչակվեց 1971 թ. սեպտեմբերի 3–ին: Ենթադրվում է, որ Կատարի որոշման մեջ իրենց դերը խաղացին նրա բավականին լավ հարաբերությունները Սաուդյան Արաբիայի հետ, մանավանդ որ Կատարում զգալի էր վահաբիների ազդեցությունը, իսկ վահաբիական իսլամը տիրապետող է հանդիսանում Սաուդյան Արաբիայում: Բացի դրանից, Կատարը հույս ուներ օգտվել Սաուդյան Արաբիայի նավթից ստացվող եկամուտներից:

Այսպիսով՝ մնացին Պայմանագրային Օմանի մեջ մտնող յոթ էմիրությունները: Նրանք բազմաթիվ և հանգամանալի քննարկումներից հետո, եկան այն եզրակացության, որ իրենք միմյանց հետ միացնող ավելի շատ բան ունեն, քան թե բաժանող: Տվյալ պահին նրանց համար

շատ էական էին անվտանգության ապահովման, ինչպես նաև տնտեսական զարգացման խնդիրները: Նրանք հասկանում էին, որ առանձին–առանձին ի վիճակի չեն լուծել այդ խնդիրները, մանավանդ տարածությամբ և ազգաբնակչությամբ փոքր էմիրությունները, ինչպես, օրինակ՝ Աջմանը, որն էմիրություններից ամենափոքրն էր, և որի տարածքը կազմում էր ընդամենը 260 քառ. կմ: Պարզ է, որ նա ինքնուրույն ի վիճակի չէր լուծել ազգային անվտանգության, տնտեսական զարգացման և այլ խնդիրներ:

Սակայն այստեղ նույնպես ամեն ինչ հարթ չընթացավ: Դաշնության մեջ հրաժարվեց մտնել Ռաս ալ–Խայմայը, որտեղ, ինչպես և Շարջայում, կառավարող էր ալ–Կասիմիների դինաստիան: Նրա էմիրը հավակնություններ ուներ Ծոցի մի շարք կղզիների, ինչպես նաև նավթահանքերի նկատմամբ: Բայց դժբախտությունը կայանում էր նրանում, որ դրանց նկատմամբ հավակնություններ ուներ նաև Իրանը: Այդ պայմաններում Ռաս ալ–Խայմայի էմիրն ակնկալում էր աջակցություն իր պահանջների նկատմամբ՝ մնացած վեց էմիրությունների կողմից, առաջին հերթին Աբու Դաբիից: Բայց վերջիններս այդ հարցում որևէ օգնություն չխոստացան նրան, և էմիրը հայտարարեց, որ Ռաս ալ–Խայմայը չի միանա դաշնությանը:

Դա չազդեց վեց էմիրությունների դիրքորոշման վրա, և նրանք 1971 թ. դեկտեմբերի 2–ին պաշտոնապես հայտարարեցին Արաբական Միացյալ էմիրություններ դաշնային (ֆեդերատիվ) անկախ պետություն ստեղծելու մասին: Այդ կապակցությամբ հրապարակված պաշտոնական հայտարարության մեջ ասվում էր. «Արաբական Միացյալ էմիրությունները հիմնվել են որպես ինքնիշխան անկախ պետություն: Նա արաբական մեծ ազգի մի մասն է: Նրա նպատակն է պահպանել իր անկախությունը, իր ինքնիշխանությունը, իր անվտանգությունը և իր կայունությունը, պաշտպանել նրա ամբողջականությունը կամ էմիրությունների ամեն մի անդամի ամբողջականությունը՝ նրա դեմ ուղղված հարձակումից: Նրա խնդիրն է նաև իր ժողովրդի ազատությունների ու իրավունքների պաշտպանությունը և հասնել իրավահավասար համագործակցության էմիրությունների միջև հանուն ընդհանուր բարօրության: Նրա նպատակներից են, ի հավելումն վերոնշյալի, աշխատել հանուն երկրի առաջադիմության բոլոր ասպարեզներում, հանուն իր քաղաքացիների ավելի լավ կյանքի ապահովման, օգնել և աջակցել արա-

բական խնդրին ու շահերին և պաշտպանել Միավորված ազգերի կանոնադրությունը ու միջազգային իրավունքը»:

1972 թ. փետրվարին ԱՄԷ–ին միացավ նաև Ռաս ալ–Խայմայը՝ որպես յոթերորդ էմիրություն՝ զգալով, որ ինքն առանձին չի կարող գոյություն ունենալ, առավել ևս լուծել վիճելի տարածքային հարցերը Իրանի հետ:

Այսպիսով՝ աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվեց մի նոր անկախ պետություն՝ ԱՄԷ–ն, որի մեջ դաշնային հիմունքներով միավորվեցին Աբու Դաբին, Աջմանը, Դուբայը, Շարջան, Ռաս ալ–Խայմայը, Ում ալ–Քայվայնը և Ֆուջեյրան: Նա զբաղեցնում է 83 հազ. 600 քառ. կմ, իսկ բնակչությունը այդ պահին կազմում էր ընդամենը 180 հազ. մարդ:

Դրանով նոր դարաշրջան սկսվեց ԱՄԷ–ի վերածված նախկին Ծովահենային ափ — Պայմանագրային ափ — Պայմանագրային Օմանի պատմության մեջ՝ անկախության դարաշրջանը:

Դեկտեմբերի 2–ը համարվում է անկախության օր և յուրաքանչյուր տարի նշվում է որպես ազգային տոն:

IV. ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ–ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄԷ–ի պետական կարգի, կառավարման և իշխանությունների բաժանման հիմքում ընկած են 1971 թ. ժամանակավոր սահմանադրության հիմնարար սկզբունքները, որը վավերացվեց 1971 թ. հուլիսի 18–ին վեց էմիրությունների կողմից (1972 թ. այն վավերացրեց յոթերորդ՝ Ռաս ալ–Խայմայի էմիրությունը) և ուժի մեջ մտավ նույն տարվա դեկտեմբերի 2–ին: 1996 թ. նա վերածվեց մշտական սահմանադրության և որպես այդպիսին գործում է մինչև օրս:

Սահմանադրության համաձայն՝ ԱՄԷ–ն համարվում է դաշնային պետություն, որտեղ իշխանությունը բաժանվում է երեք ճյուղերի՝ գործադիր, օրենսդիր և դատական: Իսկ գործադիր և օրենսդիր իշխանություններն իրենց հերթին բաժանվում են դաշնայինի և էմիրությունների:

Պետական կարգը և կառավարման համակարգն աչքի են ընկնում մի շարք առանձնահատկություններով, որը հիմք է տալիս ասելու, որ

ԱՄԷ–ի պետական կարգը և կառավարման համակարգը արդիականի և ավանդականի մի համակեցություն՝ սիմբիոզ է, որն իր հերթին արտացոլումն է ԱՄԷ–ի հասարակական, սոցիալական և քաղաքական համեմատաբար ոչ բարձր զարգացման, որտեղ ավանդականը, անգամ արխայիկը, դեռևս զգալի դեր է խաղում:

1. Պրեզիդենտ

Կառավարման բուրգի վերևում գտնվում է ԱՄԷ–ի պրեզիդենտը, որը հանդիսանում է երկրի կենտրոնական քաղաքական դեմքը և օժտված է գործադիր և օրենսդիր իշխանությունների լիազորություններով: Նա պետության ղեկավարն է, Դաշնային գերագույն խորհրդի (ԴԳԽ) նախագահը և զինված ուժերի գլխավոր հրամանատարը: Նա է նշանակում կառավարության նախագահին՝ վարչապետին, երկու փոխվարչապետներին, կառավարության անդամներին, ինչպես նաև քաղաքացիական և զինվորական բարձրաստիճան պաշտոնյաներին: Նրա իրավասությունների մեջ է մտնում Դաշնային գերագույն խորհրդի գումարումը՝ տարեկան չորս անգամ, երկրում ռազմական դրություն մտցնելը և այլն:

Պրեզիդենտի բարձր պաշտոնի առկայությունը չի վերացնում էմիրությունների և էմիրների ինստիտուտը: Էմիրներից յուրաքանչյուրն իր էմիրությունում հանդիսանում է բացարձակ միապետ: Ստացվում է էմիրությունների մակարդակով թագավորական–միապետական ինստիտուտի, իսկ դաշնային մակարդակով՝ պրեզիդենտական ինստիտուտի յուրօրինակ համակեցություն:

Էմիրությունները պահպանում են ժառանգականության սկզբունքի վրա խարսխված միապետական վարչակարգը, սակայն նրանց միավորումից գոյացած պետության ղեկավարը կրում է ոչ թե թագավորի, արքայի, միապետի կամ կայսրի տիտղոս, որը միանգամայն բնական կարող է լիներ, այլ կոչվում է պրեզիդենտ, որը բնորոշ է տիպաբանորեն մեկ այլ՝ հանրապետական կառուցվածք ունեցող պետությունների համար: Դա հանդիսանում է ԱՄԷ–ի պետական կարգի կարևոր առանձնահատկություններից մեկը, որն իր դրոշմն է դնում երկրի պետական և քաղաքական համակարգի և կյանքի վրա, և որը որոշակի դժվարություններ է ստեղծում երկրի կառավարման գործում: Պրեզիդենտը հարկադրված է մշտապես նկատի ունենալ այդ յուրահատկությունը, էմիրների միապետական իրավասությունները նրանց ժառանգաբար պատկանող

էմիրություններում, և հաշվի նստել նրանց այդ լիազորությունների հետ, իսկ վերջիններս էլ հարկադրված են ենթարկվել «հանրապետական թագավորին»՝ պրեզիդենտին, որին, ի վերջո, ընտրում են իրենք:

2. Դաշնային գերագույն խորհուրդը

ԱՄԷ–ի կառավարման շղթայում գոյություն ունի մի կարևոր օղակ, որին առանձնահատուկ դեր է հատկացված: Խոսքը Դաշնային գերագույն խորհրդի (ԴԳԽ) մասին է, որի առկայությունը նույնպես հանդիսանում է ԱՄԷ–ի պետական կառավարման համակարգի առանձնահատկության դրսևորում: ԱՄԷ–ում չեն անցկացվում ոչ մի կարգի, այդ թվում և բարձրագույն ու տեղական մարմինների ընտրություններ: Ընտրությունների ինստիտուտ, որպես այդպիսին, գոյություն չունի, և 1971 թ. ԱՄԷ–ի կազմավորումից մինչև օրս երկրում ոչ մի անգամ ընտրություններ չեն անցկացվել:

Այդ դեպքում ի՞նչ սկզբունքներով են կազմավորվում պետական մարմինները, և, առաջին հերթին, ինչպե՞ս է ընտրվում պետության ղեկավարը՝ պրեզիդենտը: Այդ իրավասությունը հանձնված է ԴԳԽ–ին: Նա կազմված է դաշնության մեջ մտնող յոթ էմիրներից, համարվում է երկրի բարձրագույն մարմինը, և օժտված է օրենսդիր ու գործադիր գործառույթներով: Նա իրավասու է քննարկել ԱՄԷ–ի ներքին և արտաքին քաղաքականության բոլոր սկզբունքային բնույթի հարցերը և ընդունել համապատասխան որոշումներ, որոնց կատարումը պարտադիր է, վավերացնել դաշնային օրենքները և հրամանագրերը, ծրագրել ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, հաստատել պետական բյուջեն և ֆինանսական ծախսերը, վավերացնել միջազգային պայմանագրերն ու համաձայնագրերը և այլն: Նա հավանություն է տալիս պրեզիդենտի կողմից նշանակված վարչապետին և ընդունում նրա հրաժարականը:

Եվ, վերջապես, ԴԳԽ–ն ընտրում է ԱՄԷ–ի պրեզիդենտին և վիցեպրեզիդենտին՝ ԴԳԽ–ի անդամ էմիրների շարքից՝ հինգ տարի ժամանակով, կրկին վերընտրվելու իրավունքով:

ԴԳԽ–ում սովորական որոշումներն ընտրվում են յոթ էմիրների ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ սկզբունքային բնույթի կարևոր հարցերը՝ ձայների երկու երրորդով: Բացի դրանից, առանձին հարցերի

առնչությամբ, ԴԳԽ–ի նիստերում վետոյի իրավունքից կարող են օգտվել Աբու Դաբին և Դուբայը:

Դաշնային գերագույն խորհուրդը 1971 թ. դեկտեմբերին Արաբական Միացյալ էմիրությունների առաջին պրեզիդենտ ընտրեց ամենաազդեցիկ և հզոր էմիրության՝ Աբու Դաբիի էմիր շեյխ Զայիդ բին Սուլթան ալ–Նահայանին, որն այնուհետև անընդմեջ վերընտրվեց նս վեց անգամ, մինչև իր մահը, որը տեղի ունեցավ 2004 թ. նոյեմբերի 2–ին: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 3–ին՝ նրա որդին՝ շեյխ Խալիֆա բին Զայիդ ալ–Նահայան ընտրվեց ԱՄԷ–ի նոր պրեզիդենտ:

Իսկ ինչ վերաբերում է վիցեպրեզիդենտին, ապա 1971 թ. դեկտեմբերին առաջին վիցեպրեզիդենտ ընտրվեց Դուբայի էմիր, շեյխ Ռաշիդ բին Սայիդ ալ–Մախտումը: 1990 թ.՝ նրա մահից հետո, վիցեպրեզիդենտի պաշտոնում նրան փոխարինեց նրա որդին՝ Դուբայի էմիր շեյխ Մախտում բին Ռաշիդ ալ–Մախտումը:

1996 թ. մայիսի 20–ին ԴԳԽ–ն հաստատեց ԱՄԷ–ի մշտական սահմանադրությունը՝ համապատասխան փոփոխություններով: Նրա որոշումով Աբու Դաբի քաղաքը հռչակվեց ԱՄԷ–ի մայրաքաղաք:

ԴԳԽ–ում նրա անդամ բոլոր էմիրները ծնականորեն իրավահավասար են: Սակայն ակնհայտ է, որ այնտեղ վճռական դերակատարում ունեն Աբու Դաբին, ինչպես նաև Դուբայը՝ որպես ամենահարուստ, առավել զարգացած, ուստի և ավելի ազդեցիկ էմիրություններ: Թեև ոչ մի փաստաթղթում չի ամրագրված, բայց լռելյայն ընդունվում է, որ երկրի պրեզիդենտ կարող է ընտրվել միայն Աբու Դաբիի էմիրը, իսկ վիցեպրեզիդենտ և նախարարների խորհրդի նախագահ՝ Դուբայի էմիրը: Այլ կերպ ասած, գործում է յուրատեսակ դինաստիական ժառանգականության սկզբունքը:

3. Նախարարների խորհուրդը՝ կառավարությունը

Սահմանադրության համաձայն՝ ԱՄԷ–ի դաշնային գործադիր մարմինը կառավարությունն է, որը գլխավորում է վարչապետը: Նրան, ինչպես արդեն նշվել է, նշանակում է պրեզիդենտը ԴԳԽ–ի անդամ մնացած վեց էմիրների հետ խորհրդակցելուց հետո: Կառավարությունը կազմվում է, և նախարարական պաշտոնները բաժանվում են յոթ էմիրությունների ներկայացուցիչների միջև: Ընդ որում՝ այն էմիրությունները, որոնց տարածքն ավելի մեծ է, և բնակչությունն ավելի բազմաքա-

նակ, նրանք ավելի շատ նախարարներ ունեն դաշնային կառավարության կազմում: Նախարար դառնալու կարևոր և պարտադիր պայմաններն են նրա՝ ԱՄԷ–ի քաղաքացի և գրագետ լինելը: Բոլոր նախարարներն իրենց գործունեության համար անհատապես և հավաքականորեն պատասխանատու են պրեզիդենտի առջև:

Վարչապետի պաշտոնը զբաղեցնում և կառավարության աշխատանքները գլխավորում է վիցեպրեզիդենտը: Այդ երկու պաշտոնները, դարձյալ որպես չգրված օրենք, զբաղեցնում է Դուբայի էմիրը՝ Մախտումների դինաստիայից:

ԱՄԷ–ի առաջին վիցեպրեզիդենտ և վարչապետ նշանակվեց Ռաշիդ ալ–Մախտումը, որն այդ պաշտոնները զբաղեցրեց 1971 թ. դեկտեմբերին: Նրա մահվանից հետո՝ 1990 թ. հոկտեմբերի 8–ից, վարչապետի պաշտոնը զբաղեցնում է նրա որդին՝ Մախտում բին Ռաշիդ ալ–Մախտումը:

ԱՄԷ–ի կառավարությունը վարում է դաշնության ընդհանուր ներքին գործերը, որոնց մասին արդեն նշվել է:

Էմիրություններն ունեն իրենց տեղական կառավարությունները, որոնք ենթակա են տվյալ էմիրության էմիրին, և զբաղվում են տեղական խնդիրներով՝ հասարակական աշխատանքների, կրթության, զբոսաշրջիկության, մշակույթի, ջրամատակարարման և այլ հարցերով: Իսկ գլխավոր քաղաքները, ինչպես Աբու Դաբին, ալ–Այնը և այլն, ունեն իրենց քաղաքային վարչությունները: Էմիրություններում կան նաև Ազգային կոնսուլտատիվ խորհուրդներ, որի մեջ մտնում են տվյալ էմիրության գլխավոր ցեղերի և ընտանիքների ներկայացուցիչները: Նրանք իրականացնում են վերահսկողական գործառույթներ, քննարկում տեղական օրենսդրության հարցեր և նպաստում տեղական օրենքների ընդունմանը:

4. Դաշնային ազգային խորհուրդը

Գլխավոր օրենսդիր մարմինը Դաշնային ազգային խորհուրդն (ԴԱԽ) է՝ Մաջլիս ալ–Իթիհադ ալ–վաթանի, որը կազմված է 40 անդամներից: Քանի որ ԱՄԷ–ում բացակայում է ընտրությունների ինստիտուտը, ուստի այդ մարմինը ձևավորվում է էմիրությունների կողմից: Յուրաքանչյուր էմիրություն ունի անդամության իր քվոտան՝ կախված նրա բնակչության քանակից: Ըստ այդմ՝ Աբու Դաբին և Դուբայը նշանակում են 8–ական, Շարջան և Ռաս ալ–Խայմայը՝ 6–ական, իսկ Աջմանը, Ում ալ–Քայվայնը և Ֆուջեյրան՝ 4–ական անդամներ: Յուրաքանչյուր ան-

դամի ընտրությունը թողնվում է տվյալ էմիրության էմիրին, որի ներկայացրած թեկնածությունը չի կարող քննարկման առարկա լինել:

ԴԱԽ–ի աշխատանքները գլխավորում է նախագահը՝ սպիկերը, որն ունի երկու տեղակալ:

Սահմանադրությամբ ԴԱԽ–ին տրված են օրենսդիր և վերահսկողական իրավունքներ: Նա կարող է քննարկել դաշնային օրենսդրությունը, առաջարկել փոփոխություններ և լրացումներ, հարցաքննել դաշնային ամեն մի նախարարի նրա աշխատանքային գործունեության վերաբերյալ: Նրա իրավասությունների մեջ է մտնում ԱՄԷ–ի տարեկան բյուջեի քննարկումը:

Բայց, ընդհանուր առմամբ, ԴԱԽ–ը խորհրդատվական մարմին է:

Դաշնային ազգային խորհուրդը Միջազգային պառլամենտական միության և Արաբական պառլամենտական միության անդամ է:

5. Մեջլիս և շուրա

Անկախության ձեռքբերումից հետո, երբ ԱՄԷ–ի պետական այրերը քննարկում էին ապագա պետության մոդելը, նրանք միասնականորեն մերժեցին օտար պետությունների կառուցվածքը, պետության ու հասարակության մասին օտար գաղափարախոսությունն ընդօրինակելու սկզբունքը և կանգ առան ավանդականն ու նորը՝ արդիականը համատեղելու տեսակետի վրա՝ գտնելով, որ դա լավագույնս համապատասխանում է տեղական արաբ բնակչության, արաբական ցեղերի ավանդական պատկերացումներին, մտածելակերպին և կենսապայմաններին: Նրանք իրավացիորեն գտնում էին, որ միջնադարյան ավանդական, ցեղային կարգավիճակից, կառույցներից ու պատկերացումներից շեշտակի անցումը բացառապես կառավարման արդիական ձևերին, կարող է հիվանդագին լինել և ծանր նստել բնակչության վրա: Երկիրը և նրա բնակչությունը դեռևս պատրաստ չէին դրան:

Ելակետ ունենալով այդ տեսակետը՝ ԱՄԷ–ի առաջին պրեզիդենտ Զայիդ բին Սուլթան ալ–Նահայան, 1977 թ. դեկտեմբերի 14–ին հանդես գալով Դաշնային ազգային խորհրդում, հայտարարեց, որ ԱՄԷ–ի քաղաքացիները հանդիսանում են «մեր մեկ ընտանիքի անդամները», որտեղ տիրապետող է հանդիսանում **շուրան**՝ խորհրդակցությունը և փոխհամաձայնությունը ընտանիքի անդամների միջև: Այս տեսակետը տիրապետող է մինչև այժմ և հանդիսանում է ԱՄԷ–ի պետական կառուցվածքի

և կառավարման առանձնահատկություններից մեկը: Շուրայի՝ խորհրդակցության և փոխհամաձայնության սկզբունքի պահպանումն ու ամրապնդումը համարվում է երկրի կյանքի անխախտելի օրենքներից մեկը և համարվում է իսլամի կարևորագույն օրենքներից մեկը: Այդ գործում առանձնահատուկ տեղ է հատկացվում Դաշնային ազգային խորհրդին՝ որպես օրենսդիր մարմին: Եվ որ պակաս կարևոր չէ, երկրի քաղաքացիների համար միանգամայն ընդունելի է մեկ ընդհանուր ընտանիքի գաղափարը՝ խարսխված շուրայի սկզբունքների վրա:

ԱՄԷ–ում գործող ավանդական կառավարման համակարգում յուրահատուկ տեղ է գրավում **մեջլիսը:**

Էմիրը կամ տվյալ էմիրության ղեկավարը սովորաբար հանդիսանում է այդ տարածքում գտնվող ամենաուժեղ ցեղի շեյխը, որը, սակայն, միակ ցեղապետը չէ: Ամեն մի էմիրությունում կան բազմաթիվ տարբեր չափերի և հզորության ցեղեր՝ իրենց ցեղապետ–շեյխերով: Ավանդաբար նրանց հեղինակությունը, հետևաբար նաև իշխանությունը, զգալիորեն կախված է այն բանից, թե որքանով են նրանք մատչելի իրենց ցեղի անդամներին և ինչ չափով են ընդունակ բավարարել նրանց պահանջները: Դա մի յուրատեսակ դեմոկրատիա է, որը ոչ մի ընդհանուր բան չունի արևմտյան դեմոկրատիաների հետ և հիմնված չէ ընտրական սկզբունքի վրա: Նա հիմնված է մի չգրված օրենքի վրա, որն ավանդաբար գալիս է դարերի խորքից: Դրա էությունը կայանում է հետևյալում. ժողովուրդը, այսինքն՝ տվյալ ցեղի անդամները, պետք է ազատ մուտք ունենան իրենց ցեղապետ–շեյխի մոտ, և շեյխը պետք է պարբերաբար կազմակերպի ազատ մեջլիս, այսինքն՝ խորհուրդներ, որտեղ նրա ցեղակիցներն իրավունք ունեն մասնակցել, ազատորեն խոսել իրենց հետաքրքրող ամեն բանի մասին և անարգել արտահայտել իրենց կարծիքը:

Ազատ մեջլիսներ կարող են և պետք է հրավիրեն ոչ միայն էմիրները և կառավարողները, այլև նրանց ընտանիքի ավագ անդամները, որտեղ, ինչպես նշվեց, քննարկվում են տարբեր հարցեր: Որոշ մասնակիցներ իրենց ցեղապետից պահանջում են լուծել իրենց հողային հարցը, մյուսները հարց են բարձրացնում՝ ապահովել իրենց որդուն կամ դստերը կրթություն ստանալու արտասահմանում, շատ սուր է դրվում գործազրկության և օտար աշխատուժի ներգաղթի հարցը, որը սոցիալական մեծ լարվածություն է ստեղծում երկրում, ոմանք դժգոհում են նախարարությունների և նրանց բաժինների աշխատանքներից և այլն: Քննարկման առարկա են դառնում նաև արտաքին քաղաքականության հարցեր:

Մեջլիս գումարելու համար հստակ ժամանակացույց չկա: Տարբեր շեյխեր տարբեր պարբերականությամբ են հրավիրում մեջլիս և մի բաժակ սուրճի շուրջ անկեղծ զրույցի նստում իրենց ցեղակցի հետ: Ֆուջայրայի էմիրը, օրինակ, մեջլիս է հրավիրում ամեն շաբաթ, իսկ ռամադանի ժամանակ՝ ամեն օր:

ԱՄԷ–ի իշխանությունները խրախուսում են, որ ոչ միայն ցեղի անդամները գան էմիրի, շեյխի կամ ցեղապետի մոտ, այլև վերջիններս գնան ցեղերի, մասնավորապես քոչվոր ցեղերի բնակության վայրերը և նրանց հետ խորհրդակցեն ու քննարկեն վերջիններին հուզող բոլոր հարցերը: Եվ շատ էմիրներ այդպես են վարվում: Այդպես էր վարվում նաև առաջին պրեզիդենտ շեյխ Զայիդը, որը մեկնում էր անապատներ՝ որպես Աբու Դաբիի էմիր–ցեղապետ հանդիպելու իր ցեղի անդամների հետ: Նա շատ էր սիրում օրերով անցկացնել բեդվինների հետ և խստորեն պահպանել արաբական անապատի բնակչի բոլոր ավանդույթները: Այդ հանգամանքը մեծապես նպաստել էր նրա հեղինակության և վարկի բարձրացմանը ամբողջ երկրում: Նրա օրինակին էին հետևում նաև մյուս էմիրները և շեյխերը:

Մեջլիսի և շուրայի վրա հիմնված կառույցի առկայությունը չի խանգարում պետական մեքենային, նախարարություններին և այլ մարմիններին կատարելու իրենց պետական գործառույթները: Նրանց փոխհարաբերությունները հիմնված են ներդաշնակության սկզբունքի վրա, և մեկը լրացնում է մյուսին:

ԱՄԷ–ի ներքին քաղաքական կայունությունը և դաշնային մեխանիզմի անխափան գործունեությունը մասամբ բացատրվում են նաև այդ հանգամանքով:

Սակայն վերջին տարիներին նկատվում է, որ նոր սերունդը, որը ծնվել և կյանք է մտել ԱՄԷ–ի անկախությունից և կազմավորումից հետո, մի փոքր այլ կերպ է վերաբերվում շուրայի և մեջլիսի ինստիտուտին: Նրանք վարժված են նախարարությունների և պետական այլ մարմինների գործունեությանը և հաճախ գերադասում են գործ ունենալ նրանց հետ: Բայց դա չի նշանակում, թե նրանք հրաժարվել են շուրայից և մեջլիսից: Նրանք նույնպես օգտվում են այդ ինստիտուտից, նրա բարիքներից, սակայն ոչ այնպես և այն չափով, ինչպես ավագ սերունդը, որն ավելի ամուր է կառչած ավանդույթներին: Բացի դրանից, նկատվել է, որ երիտասարդներն ավելի հաճույքով են գնում մեջլիս, երբ շեյխը երիտասարդ է՝ իրենց հասակակիցը, և նրանք շատ ընդհանրություններ ունեն միմյանց հետ:

Մեջլիսի և շուրայի գործառույթը պետք է բնութագրել որպես ուղղակի, չմիջնորդավորված դեմոկրատիայի երևույթ:

6. Դատական համակարգը

Ինչպես նշվեց, իշխանության երրորդ թևը ԱՄԷ–ում հանդիսանում է դատական իշխանությունը, որի անկախությունը երաշխավորված է ԱՄԷ–ի սահմանադրությամբ:

Դատական բարձրագույն մարմինը ԱՄԷ–ի Գերագույն դատարանն է, որի նախագահին և հինգ անդամներին նշանակում է ԱՄԷ–ի պրեզիդենտը՝ Դաշնային գլխավոր խորհրդի համաձայնությամբ: Նա օժտված է լայն լիազորություններով, այդ թվում՝ դաշնության ու էմիրությունների, ինչպես նաև առանձին էմիրությունների միջև վեճերը քննարկելու և նրանց վերաբերյալ վճիռներ կայացնելու իրավունքով: Նա իրավասու է նաև քննարկելու կառավարության անդամների և դաշնային բարձրաստիճան պաշտոնյաների, մեղմ ասած, սխալ պահվածքը և թույլ տված լուրջ սխալները:

Դատական համակարգի երկրորդ կարևոր օղակը առաջին ատյանի դաշնային դատարաններն են, որոնց իրավասության շրջանակներում է գտնվում քաղաքացիական, քրեական, վարչական և առևտրական հարցերի քննարկումը: Սակայն նրանց վճիռները վերջնական չեն և կարող են բողոքարկվել Գերագույն դատարանում:

Յոթ էմիրություններից յուրաքանչյուրն ունի տեղական դատարաններ, որոնք քննում են տեղական բնույթի գանգատներ և հարցեր, որոնք սահմանադրությամբ վերապահված չեն դաշնային առաջին ատյանի դատարաններին: Էմիրություններում հիմնականում գործում են շարիաթական դատարանները, իսկ աշխարհիկ դատարաններն ավելի շատ գործում են դաշնային մակարդակով:

Սահմանադրությամբ իսլամական օրենքը՝ շարիաթը, համարվում է օրենսդրության աղբյուր:

ԱՄԷ–ի դատական համակարգում բացակայում է դատապաշտպանի ինստիտուտը, և մեղադրյալի շահերի պաշտպանությունը դրվում է դատավորի վրա, որի պարտականությունն է հետևել, որ դատավարությունն ընթանա օրենքին համապատասխան, արդար և ազնիվ:

Ահա այսպիսին է ընդհանուր գծերով ԱՄԷ–ի պետական–կառավարման համակարգը՝ իր առանձնահատկություններով հանդերձ:

V. ԱՄԷ-Ի ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

1. Ցատկ XXI դար

Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներին, հատկապես 1950–1980-ական թվականներին, տնտեսագիտական գրականության մեջ լայն տարածում գտավ «տնտեսական հրաշք» հասկացությունը՝ կապված գլխավորապես եվրոպական, մասամբ նաև ասիական որոշ երկրների սոցիալ-տնտեսական աննախընթաց, որակական նոր բնույթի, կարելի է ասել՝ թռիչքածև զարգացման հետ: Աշխարհը սկսեց խոսել գերմանական և ճապոնական «հրաշքների» մասին, երկրներ, որոնք ռազմական պարտություն էին կրել Երկրորդ աշխարհամարտում, որոնց տնտեսություններն ու քաղաքներն ավերվել էին և նրանք հայտնվել էին ծայրահեղ ծանր վիճակում: Թվում էր, թե կպահանջվի պատմական երկար ժամանակաշրջան, որպեսզի նրանք գեթ ոտքի կանգնեն: Բայց տեղի ունեցավ անսպասելին: Գերմանիան և Ճապոնիան կարողացան շատ կարճ ժամանակամիջոցում ոչ միայն վերականգնել իրենց ավերված տնտեսությունները, այլև տնտեսական զարգացման առումով անսպասելիորեն հասան շատ բարձր մակարդակի՝ առաջ անցնելով հաղթանակած բոլոր երկրներից, բացառությամբ ԱՄՆ-ից:

Այնուհետև աշխարհը սկսեց խոսել ասիական մի շարք երկրների՝ Սինգապուրի, Հոնկոնգի և Հարավային Կորեայի տնտեսական հրաշքի մասին, որոնք այսօր մոդել են հանդիսանում շատ ու շատ երկրների համար:

Մեր կարծիքով՝ տիպաբանորեն աշխարհին հրաշք մատուցած երկրների շարքը պետք է դասել նաև Արաբական Միացյալ էմիրություններին, ինչպես նաև Ծոցի մի քանի այլ երկրների՝ Քուվեյթին, Բահրեյնին և Կատարին, թեև նրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատուկ կողմերը:

ԱՄԷ-ի դեպքում հրաշքը կայանում է նրանում, որ ոչ հեռավոր անցյալում Ծովահեներության ափ անունով հայտնի այդ անապատային, աղքատ, հետամնաց երկիրը, որն անհաղորդ էր ժամանակակից քաղաքակրթության արժեքներին ու բարիքներին, և որը դեգերում էր ավանդապահության, քոչվորային տնտեսության և ցեղային հարաբերությունների բավիղներում, կարողացավ անկախությունից հետո ընդամենը մի քսան-երեսուն տարվա ընթացքում այնպիսի փոխակերպության ենթարկվել կյանքի բոլոր բնագավառներում, որն այլ կերպ, քան ցատկ

միջնադարից դեպի XX դար, ավելի ստույգ՝ դեպի XXI դար, չի կարելի անվանել:

ԱՄԷ–ն դարձել է ժամանակակից, արդիական երկիր: Դրան համապատասխան փոխվեց երկրի պատկերը: Նախկին անհրապույր և նոսր բնակեցված անապատային շրջաններին՝ քոչվորական վրաններով կամ խղճուկ շինություններով, զուրկ կենցաղային ամեն տեսակ հարմարություններից, փոխարինելու եկան ժամանակակից շքեղ կառույցները և պուրակները: Երկրի տարբեր մասերում վեր հառնեցին խելամտորեն պլանավորված քաղաքները՝ իրենց ինքնատիպ ճարտարապետությամբ, ժամանակակից երկնաքերերը, կառավարական հիմնարկները, բնակելի շենքերը, առաջնակարգ հյուրանոցները, տեղական և արտասահմանյան բանկերի շենքերը, մշակույթի և ուսումնակրթական կենտրոնները, մարմնամարզական և սպորտի կառույցները և այլն և այլն: Այդ առումով անջնջելի տպավորություն է թողնում մայրաքաղաք Աբու Դաբին, ինչպես նաև Դուբայը: Նույն ուղղությամբ են զարգանում ԱՄԷ–ի մյուս քաղաքները և բնակավայրերը:

ԱՄԷ–ում ստեղծվել է բարձր մակարդակի ինֆրաստրուկտուրա՝ ենթակառուցվածքային համակարգ: Երկիրը պատված է առաջնակարգ ավտոմայրուղիների ցանցով, որը բոլոր էմիրությունները կապում է միմյանց հետ և նպաստում նրանց տնտեսական ինտեգրացմանը, տնտեսական, մշակութային և առևտրական կապերի խորացմանը: ԱՄԷ–ն հագեցած է արդիական օդանավակայաններով, որոնց մեջ առանձնանում են Աբու Դաբիի, Դուբայի, Շարջայի միջազգային բարձրակարգ օդանավակայանները: Հիշատակության են արժանի ԱՄԷ–ի մեկ տասնյակի հասնող նավահանգիստները, ինչպես Աջմանի, ալ–Ֆուջայրայի, Ում ալ–Քայվայնի, Դաս Իսլանդի, Մինա Ջաբալ Ալիի, Մինա Ռաշիդի և այլն, որոնք հանդիսանում են երկրի ծովային դարպասները և հագեցված են ժամանակակից բարդ մեխանիզմներով ու սարքերով:

Մեծ զարգացում է ապրել ժամանակակից հեռակապը, իսկ համակարգիչները մուտք են գործել ամենուր:

Վերափոխման այս գործընթացը ինքնահոսի մատնված տարերային երևույթ չէ, այլ արդյունք նպատակաուղղված գործունեության, որը բավականին հաստատակամորեն իրականացրեցին և շարունակում են իրականացնել երկրի իշխանությունները: Այդ ֆանտաստիկ վերափոխության «գաղտնիքը» բացահայտված է ԱՄԷ–ի պաշտոնական փաստաթղթերում, որի հետ դժվար է չհամաձայնվել: Այդ առումով ուշագրավ

է «Տարեգիրք Արաբական Միացյալ Էմիրությունների. 1999 թ.» պաշտոնական հրատարակությունում արձանագրված հետևյալ տեսակետը. «Երկրի ընթացիկ տնտեսական հաջողության գաղտնիքը կայանում է տնտեսական վերափոխության (դիվերսիֆիկացիայի) կառավարության ստրատեգիայի մեջ»: Դրա արդյունքում ստեղծվեց նոր, ժամանակակից տնտեսություն իր համապատասխան ճյուղերով՝ հիմնված արդիական տեխնոլոգիաների վրա:

Այդ ստրատեգիան խարսխված էր հուսալի նյութական հիմքի՝ նավթի և նրանից ստացվող առասպելական եկամուտների վրա, մանավանդ երբ նավթի համաշխարհային գները բարձրանում էին ֆանտաստիկ չափերով, ինչպես 1973 թ. և հետագա մի շարք տարիներին: ԱՄԷ–ն նավթի պաշարներով աշխարհում գրավում է երրորդ տեղը՝ զիջելով Սաուդյան Արաբիային և Իրանին: ԱՄԷ–ի կառավարությունը, ունենալով տնտեսական հետամնացությունը հաղթահարելու և երկիրը ժամանակակից չափանիշներով առաջնակարգ և զարգացած երկրի վերածելու ստրատեգիա, հստակ ծրագիր և քաղաքական կամք և հենվելով նավթից ստացվող առասպելական եկամուտների վրա, բնակչության համեմատաբար փոքրաքանակ լինելու պայմաններում կարողացավ հաջողությամբ իրականացնել ԱՄԷ–ի տնտեսական դիվերսիֆիկացիան: «ԱՄԷ–ում տեղի ունեցած աննախադեպ տնտեսական վերափոխումը պետության կազմավորումից ի վեր,— ինչպես նշված է պաշտոնական փաստաթղթերից մեկում,— մեծապես ֆինանսավորվում էր շնորհիվ եկամուտների խելամիտ օգտագործման»: «Եկամուտների խելամիտ օգտագործում» ձևակերպումը տվյալ պարագայում ունի սկզբունքային նշանակություն, քանի որ աշխարհում կան շատ նավթարդյունահանող երկրներ, որոնք նույնպես ստանում են առասպելական շահույթներ, սակայն դրանք չեն հանգեցրել այնպիսի տպավորիչ նվաճումների և արմատական փոփոխությունների, ինչպես ԱՄԷ–ն է: Այստեղ, բացի այլ հանգամանքներից, խիստ կարևոր է տվյալ երկրի ղեկավարության ունակությունը, ցանկությունը և քաղաքական կամքի դրսևորումը:

Խոսելով ԱՄԷ–ի արդիական պետության փաստի մասին՝ մասնագետները նկատի ունեն ոչ միայն երկրի տնտեսական զարգացման մակարդակը, այլև բնակչության բարձր կենսամակարդակը: Պաշտոնական տվյալներով՝ համախառն ներքին արդյունքն ԱՄԷ–ում ըստ շնչի 2002 թ. կազմել է 22 հազ. ԱՄՆ դոլար, որը ոչնչով չի զիջում արևմտյան եվրոպական ամենազարգացած երկրների կենսամակարդակը: Ուշագ-

ռավ է, որ 2000–2005 թթ. տվյալներով՝ բացակայում են աղքատության գծից ցածր գտնվող խավեր, և երկրում չկա գործազրկություն:

2. Տնտեսության ընդհանուր պատկերը և զարգացման միտումները

Տնտեսության հիմնական ճյուղը շարունակում է մնալ նավթը: Նավթն առկա է չորս էմիրություններում՝ Աբու Դաբիում, Դուբայում, Շարջայում և Ռաս ալ–Խայմայում: Բայց նավթի գլխավոր պաշարները գտնվում են Աբու Դաբիում: Այս չորս էմիրությունները դաշնային բյուջե-ի ֆինանսավորման ճանապարհով մասնահանումներ են կատարում մնացած երեք էմիրություններին, որոնք նավթ չունեն: Դրա շնորհիվ իրականացվում է ԱՄԷ–ի սոցիալ–տնտեսական հավասարակշռված զարգացումը: Առանց դրա, որի հիմնական բեռն ընկած է Աբու Դաբիի վրա, հնարավոր չէր լինի ԱՄԷ–ի թռիչքածն, համաչափ և ներդաշնակ զարգացումը:

Նավթն արտահանվում է նավթամուղով, որի երկարությունը հասնում է 830 կմ: Կա նաև գազ և 870 կմ երկարությամբ գազամուղ: Աբու Դաբիում և Դուբայում գործում են մի քանի նավթազտիչ գործարաններ:

ԱՄԷ–ի ղեկավարները ժամանակին կռահեցին, որ անհրաժեշտ է նվազեցնել երկրի կախվածությունը նավթից և նրանից ստացվող եկամուտներից: Դա թելադրվում է երկու հանգամանքով: Առաջին՝ նավթի պաշարներն անսպառ չեն, և դրանք վաղ թե ուշ սպառվելու են: Ըստ հաշվարկների՝ ԱՄԷ–ի նավթի պաշարները արդյունահանման ներկա բավականին բարձր տեմպերը պահպանելու դեպքում կբավարարեն մոտավորապես 100 տարի: Երկրորդ՝ նավթարդյունաբերությունը ԱՄԷ–ում չի ապահովում բարձր զբաղվածություն, որը շատ կարևոր է բնակչության աճի համեմատաբար բարձր ցուցանիշների պարագայում: Դրա համար անհրաժեշտ է զարկ տալ նաև արդյունաբերության այլ ճյուղերի զարգացմանը և ստեղծել նորերը: Դա է պահանջում նաև երկրի տնտեսական առաջընթացի խնդիրը, որը չի կարող հիմնվել մոնոէկոնոմիկայի, տվյալ դեպքում միայն տնտեսության նավթային ճյուղի վրա, որը վտանգավոր է հեռանկարի, ինչպես նաև ազգային տնտեսական անվտանգության տեսակետից:

Եվ երբ նշում ենք ԱՄԷ–ի տնտեսության վերափոխության՝ դիվերսիֆիկացիայի մասին, ապա նկատի ունենք ոչ միայն անցումը միջ-

նադարից արդիականություն, ժամանակակից տնտեսական և տնտեսավարման մեթոդներին, այլև նավթային մոնոտնտեսությունից դեպի արտադրության նոր ճյուղերի ստեղծում: Այդ բնագավառում ԱՄԷ–ն վերջին 20–25 տարիներին հասել է զգալի հաջողությունների: Ստեղծվել են արդյունաբերության նոր ճյուղեր՝ ցեմենտի, շինարարական, ալյումինի արտադրության, պողպատի գլանման (գլանահաստոն), նավթաքիմիական, պարարտանյութերի արտադրության, գյուղատնտեսական մթերքների (բանջարեղենի, մրգերի, ալյուրի, կաթի) մշակման, կահույքի, թեթև արդյունաբերության, կաշվի և կոշկեղենի, ապակու, թղթի արտադրություն և այլն: Ստեղծվել է էլեկտրաարտադրության հուսալի հիմք, որը լրիվ բավարարում է երկրի տնտեսական զարգացման և կենցաղային պահանջները: Այս արտադրական ճյուղերը և ձեռնարկություններն աստիճանաբար փոխում են երկրի տնտեսական պատկերը, իսկ ձեռնարկությունները հագեցված են ժամանակակից առաջնակարգ տեխնոլոգիաներով, որոնք ապահովում են համապատասխան բարձր որակ:

ԱՄԷ–ի տնտեսական պատկերի էական և ուրույն մասն է կազմում ազատ տնտեսական գոտիների ստեղծումը, որոնք կարևոր դեր են խաղում առևտրական ծավալների աճի և օտարերկրյա ներդրումների ընդլայնման գործում: Դրանցից են Աբու Դաբիի Ջաբալ Ալիի, Դուբայի օդանավակայանի, Շարջայի Համրիյա, Ֆուջայրայի Ֆրի Թրեյդ և այլ ազատ առևտրի գոտիները:

ԱՄԷ–ում իրականացված ցատկն անհնար կլիներ առանց կրթական համակարգի արմատական վերակառուցման ու զարգացման: Անկախության նվաճումից հետո կառավարության համար ելակետային հիմնադրույթ հանդիսացավ պրեզիդենտ ալ–Զայիդի հետևյալ ձևակերպումը. «Ազգի իսկական հարստությունը նրա երիտասարդությունն է»: Նա նկատի ուներ գրագետ և կիրթ երիտասարդությանը: Իսկ դա շատ դժվար խնդիր էր, որովհետև ԱՄԷ–ն ստիպված էր սկսել համարյա զրոյից: Բավական է նշել, որ 1900–ական թվականների սկզբներին ամբողջ երկրում կար ընդամենը երեք դպրոց՝ Աբու Դաբիում, Դուբայում և Շարջայում, որ կառուցել էին մարգարիտի վաճառականները: Այնտեղ սովորեցնում էին գրել, կարդալ և կրոն՝ իսլամ: Հետագայում դրանց ավելացան մի քանի դպրոցներ ևս, որոնց մի մասը, սակայն, փակվեց 1920–1930–ական թվականներին:

Դրությունը կտրուկ փոխվեց ԱՄԷ–ի կազմավորումից հետո: Կառավարությունը նավթից ստացվող եկամուտների մի խոշոր մասը ուղղեց կրթական համակարգի զարգացմանը: Այսպես, օրինակ՝ 1988 թ. պետական բյուջեում կրթությանը հատկացված ծախսերը երկրորդ տեղն էին գրավում՝ պաշտպանական ծախսերից հետո: Սահմանադրության մեջ ամրագրվեց, որ «կրթությունը հիմնարար նշանակություն ունի հասարակության առաջադիմության համար»: Երկրում, համաձայն սահմանադրության, մտցվեց պարտադիր տարրական ուսուցում և ծրի ուսուցում բոլոր մակարդակներով՝ տարրական, միջնակարգ և բարձրագույն: Ձրի են նաև աշակերտների համազգեստը, դասագրքերը, օժանդակ իրերը և տրանսպորտը:

Երկրում սկսեցին արագ թափով կառուցվել նոր դպրոցներ՝ բոլոր հարմարություններով և հագեցված ժամանակակից դպրոցական սարքավորումներով, այդ թվում՝ համակարգիչներով, տպիչներով և այլն: Եվ եթե 1972 թ. երկրում կար ընդամենը 172 դպրոց՝ 40 հազ. աշակերտով, ապա XX դարի վերջում դպրոցների թիվը հասնում էր 700–ի, իսկ աշակերտների թիվը՝ 670 հազարի:

Անկախության շրջանում առաջին անգամ երկրի պատմության մեջ բացվեցին բարձրագույն ուսումնական հաստատություններ, այդ թվում՝ ԱՄԷ–ի համալսարանն ալ–Այնում, Զայիդ համալսարանը Աբու Դաբիում և Դուբայում, Գիտության և տեխնոլոգիայի համալսարանը Շարջայում, մի շարք քոլեջներ և այլն:

2003 թ. տվյալներով՝ երկրի բնակչության 78%–ը գրագետ էր: Անգրագիտությունը գործնականում համարվում է վերացված:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ կրթական համակարգի աննախադեպ զարգացումը՝ բոլոր մակարդակներով ինքնին մի կողմից խորհրդանշում է երկրի ընդհանուր թռիչքածն զարգացումը, մյուս կողմից՝ ինքն է նպաստել նման զարգացմանը և դարձել հուսալի հիմք հետագա առաջադիմության համար:

Նշանակալի հաջողություններ են գրանցված անապատները կանաչապատելու գործում, որը վերին աստիճանի աշխատատար գործընթաց և շատ թանկ հաճույք է, սակայն երկրի իշխանություններն այդ հարցում հետևողական են, մանավանդ ջանքերի թուլացման դեպքում անապատները ագրեսիվ են դառնում և փորձում ոչ միայն եղածը պահպանել, այլև նոր տարածքներ նվաճել:

Եվ վերջապես՝ տնտեսության մի այնպիսի ճյուղի մասին, որպիսին զբոսաշրջիկությունն է: Վստահաբար կարող ենք ասել, որ ԱՄԷ–ում ստեղծվել է զբոսաշրջիկության բարձրակարգ ինդուստրիա, որը զարգացել և զարգանում է երկրի տնտեսական վերափոխումներին ու առաջադիմությանը համընթաց: Բարեկարգ և նորագույն ճարտարապետական սկզբունքներով կառուցված քաղաքները, առաջնակարգ և մատչելի հյուրանոցները, հարմարավետ լողափերը և լողավազանները, հիանալի ճանապարհները, բարձրորակ սպասարկումը, ավիատոմսերի համեմատաբար էժանությունը, բազմատեսակ սնունդը, մրգերի առատությունը և տեղական բնակչության բարեհամբույր վերաբերմունքը և սրտաբաց ընդունելությունը. այս ամենը մագնիսի նման իրեն է ձգում զբոսաշրջիկներին աշխարհի տարբեր երկրներից: Զբոսաշրջիկությունից ստացվող եկամուտները շատ բարձր են: Դրա ամսին է վկայում այն հանգամանքը, որ 2002 թ. տվյալներով՝ ՀՆԱ–ի 50%–ից ավելին ստացվում է զբոսաշրջիկությունից և սպասարկման ոլորտից, մինչդեռ գյուղատնտեսության բաժինը կազմում է ընդամենը 3%:

ԱՄԷ–ում նկատում են համաշխարհային քաղաքական և տնտեսական զարգացման նոր միտումները, մասնավորապես գլոբալիզացիայի գործընթացը, որի մեջ անխուսափելիորեն ներգրավվում է նաև նա: Դա ստիպում է երկրի իշխանություններին համապատասխան քայլերի դիմել այդ նոր համակարգում իրենց համարժեք տեղն ապահովելու համար: Նախատեսվում է համապատասխան փոփոխություններ մտցնել երկրի օրենքներում և օրենսդրության մեջ, որը կոչված է ապահովելու երկրի առաջընթացը՝ հենվելով արդեն ձեռք բերվածի վրա և ավելի խոր ինտեգրվելով համաշխարհային գործընթացներին գլոբալիզացիայի դարաշրջանում: Կարևոր են համարվում մասնավոր սեկտորի ընդարձակումը և ֆինանսական ու տնտեսական աջակցությունը մանր ու միջին բիզնեսին, նորագույն բարձր տեխնոլոգիաների կիրառումը և բնակչության կրթական մակարդակի բարձրացումը:

Եվ վերջապես՝ ԱՄԷ–ի իշխանությունները տնտեսության դիվերսիֆիկացիան չեն համարում ավարտված: Ընդհակառակը, նրանք գտնում են, որ XXI դարում նա պետք է ավելի ընդարձակվի և խորանա:

Դա վերաբերում է հավասարապես տնտեսության բոլոր ճյուղերին, այսինքն՝ ամբողջ տնտեսությանը:

3. Սոցիալական հարաբերությունների յուրահատկությունները: Քաղաքացիության և տեղացի–եկվոր փոխհարաբերությունների հարցը

ԱՄԷ–ի զարգացման առանձնահատկություններն իրենց կնիքն են դրել նաև սոցիալական ոլորտի վրա: Այդ առումով նա զգալիորեն տարբերվում է այլ երկրներից:

Խոսքն առաջին հերթին գնում է տեղական արաբ բնակչության՝ իր սեփական երկրում, պայմանականորեն ասված, «ազգային փոքրամասնություն» լինելու մասին, ինչն, անշուշտ, ունի իր պատճառները: Սակայն դա մշտապես այդպես չի եղել: Ամեն ինչ սկսվեց անկախության նվաճումից հետո՝ նավթային բումից և տնտեսական վերափոխումներից:

Մինչև 1971 թ., այսինքն՝ անկախությունը և ԱՄԷ–ի կազմավորումը, երկրի բնակչությունը մոտավորապես կազմում էր 180 հազ. մարդ, գերազանցապես տեղաբնիկ արաբները: Այդ ժամանակահատվածում վերոնշյալ խնդիրը գոյություն չուներ: Սակայն 1970–1980–ական թվականներին, երբ սկսեց արագ թափով զարգանալ նավթարդյունաբերությունը, ԱՄԷ–ն մասնագիտական աշխատուժի մեծ պահանջարկ զգաց և իր դռները լայնորեն բացեց օտարերկրյա աշխատուժի առջև: Դա մի կողմից: Մյուս կողմից՝ այդ գործընթացին խրախուսեց նաև ԱՄԷ–ի տնտեսական դիվերսիֆիկացիան, արտադրական նոր ճյուղերի առաջացումը և համընդհանուր տնտեսական վերելքը: Իսկ դա պահանջում էր ոչ միայն աշխատուժի, այլև մասնագետների մեծաքանակ բանակ, որը, հասկանալի է, ԱՄԷ–ն չուներ: Ուստի նա հարկադրված էր նման մասնագետներ հրավիրել արտասահմանյան տարբեր երկրներից: Ահա այսպիսի պայմաններում օտարերկրյա աշխատուժն ուղղակի հորդեց ԱՄԷ, առաջացնելով դեմոգրաֆիկ հավասարակշռության խախտում՝ հօգուտ օտարերկրացիների, որի արդյունքում բնիկ արաբները վերածվեցին փոքրամասնության իրենց սեփական տանը: Այդ մասին են խոսում հետևյալ պաշտոնական վիճակագրական տվյալները:

Անկախության նվաճումից 20 տարի անց՝ 1991 թ., ԱՄԷ–ի բնակչությունը 180 հազարից հասավ 1 մլն 900 հազարի, որից միայն 12%–ն էր կազմում տեղական բնակչությունը: Պատկերը նույնն էր նաև 1993 թ., երբ բնակչության ընդհանուր թվաքանակը կազմում էր մոտ 2 մլն 700 հազար, իսկ ԱՄԷ–ի հիմնական բնակչությունը՝ դարձյալ ընդամենը դրա 12%–ը և աշխատուժի 7%–ը: Այսինքն՝ բնակչության 88%–ը կազմում էին

օտարերկրացիները: Թեև այդ համամասնությունը մի փոքր փոխվեց հետագայում՝ 2005 թ., երբ ԱՄԷ–ի բնակչության թիվն անցավ 4 մլն սահմանագիծը, իսկ տեղական բնակչության թիվը բարձրացավ մինչև 19%, այդուհանդերձ, բուն էմիրաթցիները շարունակում են մնալ երկրի բնակչության փոքրամասնությունը, իսկ 81%–ը կազմում են օտարերկրացիները:

Իսկ ո՞վքեր են այդ օտարերկրացիները, և ո՞ր երկրներից են նրանք գալիս: Նրանք գալիս են առաջին հերթին արաբական տարբեր երկրներից՝ Եգիպտոսից, Եմենից, Սիրիայից, Լիբանանից, Պաղեստինից, անգամ Մարոկկոյից: Նրանց համար, հասկանալի է, ավելի հեշտ է հարմարվել այդ երկրի պայմաններին, քանի որ նրանք չունեն լեզվական, կրոնական, կենցաղային և սովորութային խնդիրներ: Ոչ արաբական երկրներից հիմնականում գալիս են Աֆղանստանից, Բանգլադեշից, Հնդկաստանից, Պակիստանից, Ֆիլիպիններից, Իրանից, Շրի Լանկայից, Թաիլանդից, Թուրքիայից և այլ երկրներից: Նրանք տարբեր աշխատանքներ են կատարում: Եկվորների այն խավը, որ բարձր որակավորում, համապատասխան կրթություն և մասնագիտություն ունի, գրավում է բավականին բարձր դիրք: Նրանց հետ կնքում են պայմանագրեր և համեմատաբար բարձր վարձատրում: Դրանց թիվը, սակայն, մեծ չէ: Հիմնական զանգվածը ներգրավված է ցածրակարգ, անգամ անհարգի աշխատանքների մեջ, որոնք իր արժանապատվությունն ունեցող տեղացի արաբը երբեք իրեն թույլ չի տա կատարել: Էլ չենք խոսում բեդվին արաբի մասին, որը սովորաբար բոլորի վրա վերևից է նայում:

Եկվորների միջև կա աշխատանքի ներքին բաժանում՝ ըստ էթնիկական պատկանելության: Ֆիլիպինցիները, օրինակ, զբաղված են հիմնականում սպասարկության ոլորտում, հյուրանոցային և ռեստորանային աշխատանքներում: Պակիստանցիներն իրենց ձեռքում են կենտրոնացրել ավտոտաքսիների ծառայությունը, մարոկկոցիները ծառայում են ոստիկանությունում և խստորեն հետևում են հասարակական կարգի պահպանմանը, որը նրանք կատարում են մի առանձին եռանդով, և որոնց դաժան հայացքի տակ ոչ ոք իրեն լավ չի զգում, իրանցիները զբաղվում են առևտրով, հնդկացիները, բացի առևտրից, նաև բանկային համակարգում և դեղագործության ասպարեզում և այլն: ԱՄԷ–ում գտնվող հայերը զբաղված են առևտրի, շինարարության, բժշկության, բանկային և այլ ոլորտներում: Կան նաև որոշ թվով և շատ բարձր վարձատրվող արևմտյան մասնագետներ Մեծ Բրիտանիայից և ԱՄՆ–ից, որոնք ինժեներներ, կառավարիչներ, բանկային պատասխանատու աշխատողներ են և այլն:

Օտարերկրացիների հիմնական զանգվածը, որը պրոֆեսիոնալ մասնագիտացում և որակավորում չունի, շատ ցածր է վարձատրվում, մանավանդ եթե համեմատելու լինենք տեղացիների աշխատավարձի հետ, որը սովորաբար շատ բարձր է: Չկա սահմանված ցածր աշխատավարձի չափաքանակ: Օտարերկրյա աշխատուժը պաշտպանված չէ օրենքով, և գործատուի ցանկության դեպքում օտարերկրյա աշխատողին ուզած պահին ոչ միայն կարող են զրկել աշխատանքից, այլև արտաքսել ԱՄԷ–ից՝ որպես անօրինական օտարերկրացի: Օրինակ՝ 1980–ականներին, երբ նկատվեց որոշ տնտեսական անկում, իշխանությունները «բացահայտեցին» մեծ քանակությամբ անօրինական կերպով երկրում ապրող ու աշխատող օտարերկրացիների, և անահապաղ նրանց բոլորին երկրից արտաքսեցին: Այդ վտանգը մշտապես կախված է նրանց գլխին: Նրանց, ինչպես և տեղացիներին, արգելվում է գործադուլ անել, միավորվել իրենց կազմակերպությունների մեջ, կազմակերպել կոլեկտիվ ելույթներ և այլն: Երկրում արգելված են նաև քաղաքական կուսակցությունները:

Օտարերկրացիների բացարձակ գերակշռությունը երկրի բնակչության մեծամասնությունը կազմելու տեսակետից, հասկանալի է, ստեղծում է ուրույն վիճակ: Այդ վիճակից դուրս գալու ելքը, որը պետք է կանխի օտարերկրացիների տիրապետող դառնալը ԱՄԷ–ի քաղաքական, պետական, տնտեսական, ռազմական և այլ համակարգերում, իշխանությունները գտել են քաղաքացիությունը սահմանափակելու մեջ: Նրանք օտարերկրացիներին, որպես կանոն, քաղաքացիություն չեն շնորհում: Նրանք համարվում են այդ երկրում ժամանակավորապես հաստատված մարդիկ, որոնց թույլ են տվել ներգրավել միայն ու միայն աշխատանքային ոլորտում, և որոնք չեն օգտվում քաղաքացիական կամ քաղաքական որևէ իրավունքից:

Իսկ քաղաքացիության հարցը, անգամ տեղացիների համար, լուծվում է շատ հետաքրքիր ձևով: Քաղաքացիության ձգտող տեղաբնիկից պահանջվում է, որ նա անհատապես ապացուցի, որ իր արմատները ԱՄԷ–ում եղել են մինչև 1930 թ.: Իսկ դա կարող են կատարել ոչ բոլորը: Այդ պատճառով էլ նրանց թիվը մեծ չէ, սակայն նրանց ձեռքում է կենտրոնացված ամբողջ իշխանությունը՝ խարսխված ցեղային կառույցների վրա:

ԱՄԷ–ի իշխանությունները հավատարիմ են այդ սկզբունքին և խստորեն հետևում են դրա անսխալ կատարմանը: Դեռ ավելին՝ նրանք

վերջին տարիներին անցել են մի նոր քաղաքականության, որը ստացել է «էմիրաթիզացիա» անունը: Ըստ այդմ՝ նախատեսվում է ԱՄԷ–ի տարածքում գործող ձեռնարկությունների աշխատակազմի մեջ փոփոխություններ կատարել և ավելի մեծ չափերով աշխատանքի մեջ ներգրավել բնիկ, էմիրաթների քաղաքացի արաբ մասնագետներին և աշխատողներին: Պաշտոնապես դա համարվում է ստրատեգիական նշանակություն ունեցող քայլ, որն արդեն կիրառվում է բանկային համակարգում:

VI. ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հարևան երկրների անբարյացակամ դիրքորոշումը ԱՄԷ–ի նկատմամբ նրա կազմավորման սկզբնական շրջանում

ԱՄԷ–ի ծնունդը և հայտնվելն աշխարհի քաղաքական քարտեզի վրա, որպես անկախ պետություն, գոհունակությամբ չընդունվեց որոշ հարևան երկրների կողմից: Նրանք թերահավատությամբ էին վերաբերվում ԱՄԷ–ի կենսունակությանը և գտնում, որ այդ նոր դաշնային պետությունն ապագա չունի՝ ելնելով նաև այն հանգամանքից, որ Արաբական Արևելքում դաշնային պետություն ստեղծելու բոլոր փորձերն ավարտվել էին անհաջողությամբ: Նրանք հավատացած էին, որ նույն ճակատագիրն է սպասում նաև ԱՄԷ–ին: Տարածված էր այն տեսակետը, որ ԱՄԷ–ն հեռանկարից զուրկ արհեստածին պետություն է, փոքր, զուրկ բնական հարստություններից (սկզբնական շրջանում դեռևս չկային լրիվ և ամբողջական տվյալներ նրա նավթային պաշարների վերաբերյալ), մարդկային բավարար ռեսուրսներից և պետականության պատմական փորձից:

Բացի այս ընդհանուր մոտեցումից, որն իր բնույթով ժխտական էր, կարևոր էր նաև ԱՄԷ–ի կոնկրետ հարևանների դիրքորոշումը և այն քաղաքական ու տարածքային հավակնությունները, որ նրանք ունեին ԱՄԷ–ի նկատմամբ:

Սաուդյան Արաբիայի և ԱՄԷ–ի առաջատար էմիրության՝ Աբու Դաբիի միջև վաղուց՝ դեռևս մինչև ԱՄԷ–ի կազմավորումը (1971 թ.), վեճ գո-

յություն ուներ Բուրայմիի օազիսի պատկանելության վերաբերյալ: Աբու Դաբին գտնում է, որ այդ տարածքն օրինականորեն պատկանում է իրեն, և իր վերահսկողությունն էր սահմանել նրա վրա: Այդ պատճառով Սաուդյան Արաբիան, որը վիճարկում էր այդ տեսակետը, հրաժարվեց ճանաչել Արաբական Միացյալ էմիրություններ նորաստեղծ պետությունը և նրա անկախությունը:

Տարածքային վեճ գոյություն ուներ նաև Իրանի և ԱՄԷ–ի միջև երեք կղզիների՝ Աբու Մուսայի, Մեծ Թոնբ և Փոքր Թոնբ կղզիների շուրջը, որոնք գրավել էր Իրանը, թեև ԱՄԷ–ն շարունակում էր դրանք համարել իր տարածքի անբաժան մասը: Տարածքային հարց էր առաջացել նաև հարևան Օմանի սուլթանության հետ:

Իսկ Իրաքն ավելի հեռու գնաց: Նա հարցականի տակ դրեց ԱՄԷ–ի կառավարող էմիրների և նրանց դինաստիաների օրինականությունը: Այդ տեսակետի վրա Իրաքն ավելի համառորեն էր պնդում, երբ այնտեղ հայտնվեցին նավթի նշանակալի պաշարներ, որոնք մինչ այդ անհայտ էին: Նավթի նոր պաշարները գրգռել էին Իրաքի կառավարողների ախորժակը, որոնք, հարցականի տակ դնելով ԱՄԷ–ի կառավարողների օրինականությունը՝ լեգիտիմությունը, հող էին նախապատրաստում իրենց հետագա հավակնությունների համար դրանց նկատմամբ:

ԱՄԷ–ի միջազգային դրությունը և ազգային անվտանգությունն ավելի մեծ վտանգի տակ էր դնում մեկ այլ սպառնալիք, որը դարձյալ գալիս էր տարածաշրջանի հարևան երկրից: Խոսքը գնում է հարևան Օմանի սուլթանությունում 1970–ականների սկզբներին ծայր առած շարժման մասին, որի նպատակն էր տապալել սուլթանական իշխանությունը Օմանում: Այդ շարժմանը պաշտպանում էր Օմանի և Արաբական ծոցի ազատագրության ժողովրդական ճակատը: Սակայն այդ ճակատի գործունեությունը չէր սահմանափակվում միայն Օմանի սուլթանությունով: Ժողովրդական ճակատի նպատակն էր տապալել նաև էմիրական իշխանությունը Արաբական Միացյալ էմիրություններում և երկիրը հռչակել հանրապետություն:

Ահա այսպիսի անբարենպաստ իրադրության մեջ էր հայտնվել ԱՄԷ–ն: Նա, բնականաբար, իր սեփական ուժերով ու միջոցներով չէր կարող դիմագրավել այդ մարտահրավերները, քանի որ փոքր պետություն էր և անգամ սկզբնական շրջանում չուներ սեփական ռազմական ուժեր: Նույնիսկ դրանք ունենալու պարագայում էլ հազիվ թե նա կարողանար մրցակցության մեջ մտնել իր ավելի հզոր հարևանների՝ Իրաքի

և հատկապես Իրանի հետ, մանավանդ վերջինիս հետ, որը համարվում էր տարածաշրջանային հզոր երկիր:

2. Ապավինում դիվանագիտությանը և միջազգային նորմերին

Նման պայմաններում ԱՄԷ–ի ղեկավարությունն ընդունեց միակ ճիշտ որոշումը՝ ապավինել դիվանագիտությանը և միջազգային նորմերին: Նա որոշեց լայնորեն մասնակցել միջազգային զանազան կազմակերպություններին՝ նրանց դիտելով որպես հուսալի պատվար:

Այդ տեսակետից ԱՄԷ–ի համար առանցքային նշանակություն ունեցավ անդամակցությունը Միավորված ազգերի կազմակերպությանը: ԱՄԷ–ն պաշտոնապես հայտարարեց իր հավատարմությունը ՄԱԿ–ի կանոնադրությանը և նրանցում ամրագրված այնպիսի սկզբունքներին, ինչպես յուրաքանչյուր պետության տերիտորիալ ամբողջականության և ինքնիշխանության հարգումը, վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելը, ագրեսիայի մերժումը, խաղաղության պաշտպանությունը, մյուս երկրների ներքին գործերին չմիջամտելը և այլն: Այդ սկզբունքները նրա համար ծառայում էին որպես պաշտպանական պատնեշ՝ ընդդեմ այլ պետությունների ոտնձգությունների:

Շատ կարևոր էր ԱՄԷ–ի անդամակցությունը Արաբական պետությունների լիգային: Դա հնարավորություն է տալիս նրան մասնակից դառնալ համաարաբական գործերին, ունենալ իր սեփական ձայնը արաբական աշխարհին հուզող միջազգային, քաղաքական և դիվանագիտական հարցերում և ակնկալել նրանց պաշտպանությունը սպառնալիքների և վտանգների դեպքում: ԱՄԷ–ի կառավարությունը համագործակցությունն Արաբական լիգայի շրջանակներում և նրա աջակցությունը համարում է իր «արտաքին քաղաքականության կենտրոնական գիծը»:

Պակաս կարևոր չէր նրա մասնակցությունը՝ որպես անդամ «Իսլամական կոնֆերանս» կազմակերպությանը, որն իր շարքերում համախմբել է աշխարհի բոլոր իսլամական երկրներին: Անդամակցությունն այդ կազմակերպությանը հնարավորություն է տալիս ԱՄԷ–ին նախ և առաջ իր ազգային անվտանգության համար ապահովել լրացուցիչ միջոցներ, կանխել կոնֆլիկտները մուսուլմանական երկրների հետ, իսկ կոնֆլիկտի առաջացման պարագայում հնարավորություն ունենալ դա լուծել բանակցությունների միջոցով՝ օգտագործելով միջնորդության և բարի կամքի առաքելության մեխանիզմները: Չմոռանանք, որ ԱՄԷ–ի բարդությունը

ներն արտաքին քաղաքականության բնագավառում նրա կազմավորման հենց առաջին օրվանից կապված էին իսլամական պետությունների հետ:

Դառնալով «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության անդամ՝ նա հնարավորություն էր ստանում լիիրավորեն մասնակցել համայն իսլամական աշխարհի քաղաքական, տնտեսական, կրոնական, մշակութային խնդիրների լուծմանը, ինչը, անշուշտ, նպաստում էր նրա հեղինակության բարձրացմանը և միջազգային դիրքերի ամրապնդմանը:

Պետք է նշել, որ այս քաղաքականությունն իրեն արդարացրեց և շարունակում է արդարացնել: Դրա մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ վերոնշյալ վեճերը, տարածայնությունները և հակասությունները, բարեբախտաբար, չեն վերածվել զինված բախումների և այս կամ այն չափով մնում են բանակցային գործընթացների շրջանակներում: Դեռ ավելին՝ երբեմն նկատվում է լարվածության թուլացում և առանձին դեպքերում անգամ համագործակցության դրսևորում: Այդ ուղղությամբ են ընթանում ԱՄԷ–ի հարաբերությունները Սաուդյան Արաբիայի և Օմանի հետ: Հարաբերություններն ընդհանուր առմամբ բնականոն են զարգանում նաև Բահրեյնի և Կատարի հետ:

Ինչ վերաբերում է Իրանի հետ հարաբերություններին, ապա դրանք դեռևս մնում են լարված, թեև երբեմն նկատվում են մեղմացման միտումներ:

Իրանը իր տարածքային հավակնությունները երեք կղզիների՝ Աբու Մուսա, Մեծ Թոնբ և Փոքր Թոնբ, նկատմամբ ցուցաբերեց 1970 թ., երբ դեռ չէր կազմավորվել ԱՄԷ–ն: Նա այդ կղզիները գրավեց 1971 թ. նոյեմբերին՝ ԱՄԷ–ի կազմավորումից մի քանի օր առաջ: Այսպիսով՝ Իրանի շահը ԱՄԷ–ին կանգնեցրեց կատարված փաստի առջև և հայտարարեց, որ դրանք պատմականորեն պատկանել են Իրանին, և ինքը չի տեսնում որևէ ուժ, որը ստիպեր Իրանին դուրս գալ այդ կղզիներից և զիջել մեկ այլ պետության:

ԱՄԷ–ն Իրանի այդ քայլը համարեց որպես ագրեսիա և իր տերիտորալ ամբողջականության խախտում:

Քանի որ ԱՄԷ–ն էմիրությունների դաշնություն է, ապա նրա կազմի մեջ մտնող էմիրություններից Շարջայի իրավասությունն էր տարածվում Աբու Մուսա կղզու վրա՝ նախքան նրա գրավելը Իրանի կողմից: Ինչ վերաբերում է Մեծ և Փոքր Թոնբ անմարդաբնակ կղզիներին, ապա Ռաս ալ–Խայմայի էմիրությունը համարում է, որ նրանք պատկանում են իրեն, և պնդում, որ Իրանը դրանք իրեն վերադարձնի:

Սակայն կղզիների ճակատագրի լուծման հարցում կա որոշակի տարբերություն Շարջայի և Ռաս ալ–Խայմայի դիրքորոշումների միջև: Շարջան համաձայնվեց Անգլիայի և Իրանի միջև ձեռք բերված համաձայնագին, ըստ որի Իրանն իրավունք էր ստանում կղզու հյուսիսային մասում պահել կայազոր, իսկ Շարջան իրավունք էր ստանում տնօրինելու այդ նույն հյուսիսային մասում բնակվող բնակչության առօրյա բոլոր հարցերը: Դա փոխզիջումային մի համաձայնագիր էր, որն ինչ–որ լուծում էր հանդիսանում, սակայն հարցի վերջնական կարգավորումը՝ կապված կղզու նկատմամբ կողմերի ինքնիշխանության հարցի հետ, մնում է բաց: Այդուհանդերձ, լարվածությունը մի փոքր մեղմացավ:

Ինչ վերաբերում է մյուս երկու կղզիներին, ապա Ռաս ալ–Խայմայը կտրուկ դեմ է իրանական հավակնություններին նրանց նկատմամբ, պնդում է դրանց վերադարձման համար և անընդունելի համարում որևէ այլ քաղաքականություն: Համանման կոշտ դիրքորոշում է գրավել նաև Իրանը, որը շարունակում է պաշտպանել իր «իրավունքները»:

Ստեղծված պայմաններում ԱՄԷ–ի կառավարությունը հարցը տեղափոխեց Հաագայի միջազգային դատարան, որը մինչև օրս դեռ վերջնական որոշում չի ընդունել: ԱՄԷ–ի պաշտպանության նախարար գեներալ Մուհամմադ բին Ռաշիդ ալ–Մախտումը, վերահաստատելով իր կառավարության դիրքորոշումը երեք կղզիների հարցում, հայտարարեց. «Մենք պահանջում ենք վերադարձնել արաբական կղզիները, և մեր պահանջը պարզ է. կա՛մ խնդիրը պետք է լուծվի երկկողմանի բանակցությունների միջոցով, կա՛մ դա պետք է հանձնվի Արդարադատության միջազգային դատարանին»:

3. Իրանա–իրաքյան պատերազմը և ԱՄԷ–ի դիրքորոշումը

ԱՄԷ–ի համար մեծ փորձություն հանդիսացան իրանա–իրաքյան 1980–1988 թթ. պատերազմը և Իրաքի 1990–1991 թթ. ագրեսիան Քուվեյթի դեմ: ԱՄԷ–ում դրանք ընկալվեցին որպես պոտենցիալ լուրջ սպառնալիք երկրի ազգային անվտանգությանը: Անհրաժեշտ էր հստակ դիրքորոշում գրավել՝ ելնելով ստեղծված իրադրությունից և երկրի ազգային անվտանգության շահերից:

ԱՄԷ–ի ղեկավարությունն ըմբռնում էր, որ նավթի առկայությունը ոչ միայն բարիք է, որից կախված է երկրի և նրա բնակչության բարեկե-

ցությունը, այլև որոշ իմաստով նրան դարձնում է խոցելի: Լինելով փոքր պետություն՝ ոչ մեծ ազգաբնակչությամբ՝ նա գրգռում էր հարևան երկրների, առաջին հերթին՝ Իրաքի ախորժակները ԱՄԷ–ի նավթի բավականին մեծ պաշարների նկատմամբ՝ նրան տիրանալու առումով: Ուստի իրանա–իրաքյան պատերազմի ժամանակ ԱՄԷ–ն գրավեց յուրահատուկ չեզոք դիրք: Նա չպաշտպանեց պատերազմական կողմերից և ոչ մեկին: Այստեղ իրենց դերը խաղացին նաև այն որոշակի տարաձայնությունները, որ այդ հարցում դրսևորվեցին էմիրությունների, առաջին հերթին՝ Աբու Դաբիի և Դուբայի միջև: Աբու Դաբիի համակրանքը, այդուհանդերձ, ավելի շատ Իրաքի կողմն էր, իսկ Դուբայը, ընդհակառակը, հակված էր Իրանին պաշտպանելու: Դա բացատրվում է երկու հանգամանքներով: Առաջին՝ Դուբայում ուժեղ են շիաների դիրքերը, իսկ շիիզմը, ինչպես հայտնի է, տիրապետող է Իրանում, և երկրորդ՝ Դուբայի տնտեսական և մշակութային կապերն ավելի աշխույժ և զարգացած են Իրանի հետ: Նման պայմաններում ելքը գտնվեց չեզոք դիրք գրավելու մեջ, որը մենք, սակայն, անվանում ենք «յուրահատուկ չեզոքություն»: Նկատի ունենք այն հանգամանքը, որ Աբու Դաբին ֆինանսական օգնություն էր ցույց տալիս Իրաքին, իսկ Դուբայը թույլ էր տալիս, որ Իրան գնացող ապրանքները մուտք գործեն Դուբայ նավահանգիստը, որից հետո այն ուղարկվում էր Իրան:

Իրանա–իրաքյան պատերազմը ծագեց 1979 թ. Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունից հետո, որը ցնցեց Ծոցի երկրներին՝ առաջացնելով որոշակի վախ նրանց մոտ՝ կապված իրանական իսլամական հեղափոխությունը հարևան երկրներ արտահանելու ծրագրերի հետ: Այդ երկրների կառավարող դինաստիաները դրա մեջ տեսան մարտահրավեր իրենց իշխանություններին, և այդ պարագան նրանց մեծապես մտահոգեց՝ դրդելով նրանց դիմել համատեղ քայլերի: Այդ միտումն ավելի ուժեղացավ իրանա–իրաքյան պատերազմը սկսվելուց հետո: Ծոցի երկրները հասկանում էին, որ առանձին–առանձին իրենք խոցելի են և չեն կարող հուսալիորեն ապահովել իրենց ազգային անվտանգությունը: Այսպես նրանց մոտ ծագեց իրենց քաղաքական, տնտեսական և ռազմական ջանքերը միավորելու անհրաժեշտությունը և միասնական ուժերով դիմագրավելու դրսից եկող մարտահրավերներին:

4. Ծոցի համագործակցության խորհրդի հիմնումը և ԱՄԷ-ն: Արաբական միասնության ամրապնդումը

Երկար բանակցություններից հետո 1981 թ. Աբու Դաբիում կայացավ Ծոցի վեց արաբական պետությունների՝ Արաբական Միացյալ Էմիրության, Բահրեյնի, Կատարի, Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի և Օմանի ղեկավարների հանդիպումը, որի ժամանակ որոշվեց ստեղծել մի նոր տարածաշրջանային կազմակերպություն, որը ստացավ Ծոցի երկրների համագործակցության խորհուրդ՝ ԾՀԽ:

Անդամ պետությունները ԾՀԽ-ի գլխավոր նպատակները համարեցին համադրել իրենց ջանքերը քաղաքականության, տնտեսության, սոցիալական և առևտրի բնագավառներում և համատեղ ջանքերով ամրապնդել իրենց տարածաշրջանային անվտանգությունը: Շատ կարևոր համարվեց պաշտպանական ռազմական համակարգի ստեղծումը: Նրա հեղինակները չէին թաքցնում, որ եթե իրանա-իրաքյան պատերազմում հաղթանակեր Իրանը, ապա դա անխուսափելիորեն կամրապնդեր իրանական արմատական շիիզմը և կարող էր ակտիվացնել նրա գործողությունները Ծոցի ավազանի բոլոր երկրներում՝ իրանական մոդելի իսլամը տարածելու և հաստատելու համար:

ԾՀԽ-ի երկրները, նպատակ դնելով ստեղծել ինքնապաշտպանական մի համակարգ, միաժամանակ ընդգծում էին, որ այդ համակարգին մասնակից չի կարող դառնալ որևէ այլ օտար երկիր: Որոշվեց, որ յուրաքանչյուր երկիր սկսի իր զինված ուժերի ամրապնդումից՝ հանձնարարելով գնել արդիական զենքեր՝ ինքնաթիռներ, տանկեր, հրթիռներով զինված ռազմական նավեր և այլն: Հետագայում ռազմական համագործակցությունը նրանց միջև խորացավ, և արդեն 1993 թ. ընդունվեց ևս մի կարևոր որոշում՝ մեծացնել Արաբական թերակղզում գտնվող արագ արձագանքման ուժերը, նրանց թիվը հասցնել 25 հազարի: Նրա մեջ մտնում էին զինվորական զորամասեր ԾՀԽ-ի անդամ յուրաքանչյուր երկրից: ԱՄԷ-ն, որ ակտիվորեն մասնակցում էր ԾՀԽ-ի աշխատանքներին և քննարկումներին, գտնում էր, որ այդ թիվը՝ 25 հազար, փոքր է, իսկ Օմանը պահանջում էր այդ զորքերի թիվը հասցնել 100 հազարի:

ԱՄԷ-ի համար ուղղակի սպառնալիք հանդիսացավ Իրաքի 1990-1991 թթ. ագրեսիան Քուվեյթի դեմ: Իրաքի պրեզիդենտ Սադամ Հուսեյնը չէր թաքցնում, որ ինքը չի բավարարվելու միայն Քուվեյթի գրավումով: Նա սպառնում էր Ծոցի արաբական միապետություններին՝

ԱՄԷ–ին, ինչպես նաև Սաուդյան Արաբիային, Բահրեյնին, Կատարին: Նրա նպատակը ոչ միայն տնտեսական էր՝ վերահսկողություն սահմանել այդ երկրների նավթի վիթխարի պաշարների վրա, այլև քաղաքական՝ տապալել, ինչպես ինքն էր բնութագրում, այդ երկրների հետադիմական, իրենց դարն ապրած միապետական ռեժիմները և հաստատել կառավարման բաասական, «սոցիալիստական» համարվող վարչակարգ:

ԱՄԷ–ի գլխին մահացու վտանգ էր կախվել, որը հնարավոր եղավ վերացնել շնորհիվ ԱՄՆ–ի գլխավորությամբ և ՄԱԿ–ի համաձայնությամբ ստեղծված կոալիցիոն ուժերի ռազմական գործողությունների: ԱՄԷ–ն միացավ հակաիրաքյան կոալիցիային և մասնակցեց, իր հնարավորության սահմաններում, Իրաքի դեմ ուղղված պատերազմին, որը շատ կարճատև եղավ և ավարտվեց Իրաքի պարտությամբ ու Քուվեյթի ազատագրությամբ:

ԱՄԷ–ի արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը արաբական միասնականության ամրապնդումն է: Այստեղ լավ են հասկանում, թե ինչպիսի կարևոր նշանակություն ունի դա ընդհանրապես արաբական բոլոր երկրների միջազգային դիրքերի ամրապնդման համար: Սակայն դա կարևոր է ԱՄԷ–ի համար մի տեսանկյունից ևս. լինելով փոքր երկիր, սահմանափակ զինված ուժերով և շատ կողմերով խոցելի՝ արաբական միասնականությունը ԱՄԷ–ի համար ծեռք է բերում առանձնահատուկ նշանակություն նաև նրա ազգային անվտանգության ապահովման և պաշտպանունակության ամրապնդման տեսակետից: ԱՄԷ–ն կողմնակից է, որ արաբական միասնությունը հիմնված լինի շահերի ներդաշնակության, հավասարակշռվածության և բանականության վրա: Միայն այդ սկզբունքների վրա խարսխված միասնությունը կարող է ապահովել արաբական երկրներին՝ հաջողությամբ դիմագրավել արդիականության և ապագայի քաղաքական, տնտեսական, ռազմական, մշակութային և տեխնիկական մարտահրավերներին: Այս մոտեցումը ԱՄԷ–ում համարվում է պաշտոնական տեսակետ:

Շեղումն այս սկզբունքներից, բաժանվածությունը, առավել ևս առճակատումը արաբական երկրների միջև կարող է դառնալ արաբական երկրների թուլության մշտական աղբյուր: Այս միտքը սիրում էր բազմիցս կրկնել ԱՄԷ–ի առաջին և երկարամյա պրեզիդենտ շեյխ ալ–Զայիդը: Եվ պատահական չէր, որ երբ Եգիպտոսը 1979 թ. Քեմպ Դևիդում Իսրայելի հետ կնքեց առանձին պայմանագիր, որը դատապարտվեց համայն արաբական աշխարհի կողմից, ԱՄԷ–ն արաբական

մյուս պետությունների հետ խզեց դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի հետ: Սակայն նա երկրից չարտաքսեց հազարավոր եգիպտացի աշխատողների, որոնք, ԱՄԷ–ի իշխանությունների կարծիքով, պատասխանատու չէին Եգիպտոսի պրեզիդենտ Անվար Սադաթի այդ քաղաքականության համար:

Պրեզիդենտ ալ–Զայիդը համոզված էր, որ «եթե արաբական տունը լավ պաշտպանված է, և նրանում կարգ ու կանոն է հաստատված, ապա ոչ մի թշնամի խիզախություն չի ունենա շահագործել բաժանվածությունը և տարբերությունները մեր միջև»:

ԱՄԷ–ն բարեկամական քաղաքական և դիվանագիտակա հարաբերություններ ունի տարբեր երկրների հետ, այդ թվում՝ ԱՄՆ–ի, որի հետ դեռևս 1972 թ. ստորագրել է պայմանագիր ռազմական համագործակցության վերաբերյալ, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Չինաստանի, Ճապոնիայի, Գերմանիայի, Հնդկաստանի և աշխարհի բոլոր երկրների հետ:

5. ԱՄԷ — Հայաստանի Հանրապետություն

1991 թ. սեպտեմբերի 21–ից՝ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո Արաբական Միացյալ Էմիրություններն այն երկրների շարքում էին, որ չհապաղեցին ճանաչել Հայաստանի անկախությունը: Նրանք չսահմանափակվեցին լոկ ճանաչումով, ինչպես որոշ երկրներ: 1998 թ. հուլիսի 25–ին դիվանագիտական հարաբերություններ հաստավեցին նրանց միջև՝ դեսպանների մակարդակով: Իսկ 2000 թ. սեպտեմբերի 23–ին ԱՄԷ–ի մայրաքաղաք Աբու Դաբիում բացվեց Հայաստանի Հանրապետության դեսպանատունը, որի բացման արարողությանը ԱՄԷ–ի ղեկավարների հետ միասին ներկա էր նաև Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը: Նախարարը կարևորեց ՀՀ դեսպանության բացումը և ընդգծեց հարաբերությունների բարեկամական բնույթը, որ հաստավել է երկու երկրների միջև՝ ընդգծելով նրանց զարգացման հեռանկարները:

Երկու բարեկամական երկրների փոխհարաբերությունների մեջ կարևոր իրադարձություն հանդիսացան Հայաստանի Հանրապետության պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական այցը ԱՄԷ 2002 թ. ապրիլին և նրա բարեկամական զրույցներն ու բանակցությունները ԱՄԷ–ի պրեզիդենտ շեյխ Զայիդ բին Սուլթան ալ–Նահայանի, ինչպես նաև ԱՄԷ–ի այլ ղեկավարների հետ: Երկու երկրների պրեզիդենտները

քննարկեցին նրանց փոխհարաբերությունների, տարածաշրջանային և միջազգային հանգուցային հարցերը՝ ընդգծելով իրենց դիրքերի համընկնումը կամ մոտ լինելը բազմաթիվ կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ: Այցի ընթացքում կողմերի միջև ստորագրվեց 18 պայմանագիր քաղաքական, տնտեսական, առողջապահության, կրթության, գիտության և այլ բնագավառներում համագործակցության վերաբերյալ: Դրանք լավ հիմք են դրել երկու երկրների միջև հարաբերությունները ավելի զարգացնելու և խորացնելու համար:

2005 թ. սեպտեմբերի 19–ին Հայաստան այցելեց Շարջայի էմիր Սուլթան բին Մուհամմադ ալ–Կասիմին: Շարջան համարվում է ԱՄԷ–ի մշակութային կենտրոնը: 1998 թ. ՅՈՒՆԷՍԿՕ–ն Շարջան հայտարարեց արաբական աշխարհի մշակութային մայրաքաղաքը: Նա հանդիպում ունեցավ ՀՀ–ի պրեզիդենտ Ռ. Քոչարյանի հետ, որի ընթացքում քննարկվեցին Շարջայի էմիրության հետ համագործակցության հարցերը՝ ՀՀ–ԱՄԷ հարաբերությունների համատեքստում:

Հայաստանի և ԱՄԷ–ի միջև բազմաբնույթ հարաբերություններ ունեն զարգացման բավականին լավ հեռանկարներ:

Գլուխ չորրորդ

ԲԱՀՐԵՅՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՀՐԵՅՆ

ՄԱՄԼԱՔԱԹ ԱԼ–ԲԱՀՐԱՅՆ
ԲԱՀՐԱՅՆ

Աշխարհագրական դիրքը — Բահրեյն արաբերեն նշանակում է երկու ծով: Միակ արաբական կղզի–պետությունն է: Գտնվում է Մերձավոր Արևելքում՝ Պարսից ծոցում՝ Սաուդյան Արաբիայի և Կատարի միջև: Բաղկացած է 35 կղզիներից, որոնցից ամենամեծը Բահրեյն կղզին է: Մյուս նշանավոր կղզիներն են Մուհարակը, Ում–Նասասան, Սիտրահը և Հավարը

Սահմանները — ծովային՝ հյուսիսում՝ Իրանի, հարավում՝ Քուվեյթի հետ, արևմուտքում՝ Սաուդյան Արաբիայի, որի հետ միացել է 25 կմ երկարությամբ կամրջով, հարավ–արևելքում՝ Կատարի հետ, իսկ արևելքից կղզին ողողում են Պարսից ծոցի ջրերը

Տարածքը — 717 քառ. կմ

Բնակչությունը — 754000 (2005 թ.)

Մայրաքաղաքը — Մանամահ (մոտ 165 հազ.),

Անկախության օրը — 15 օգոստոսի, 1971 թ.

Ազգային տոնը — 16 դեկտեմբերի, 1971 թ.

Պետական կարգը — սահմանադրական ժառանգական միապետություն

Պետության ղեկավարը — էմիր՝ Համադ բին Իսա ալ–Խալիֆա, գահ է բարձրացել 1999 թ. մարտի 6–ին: 2002 թ. փետրվարին նա իրեն հռչակեց թագավոր

Օրենսդիր իշխանությունը — պատկանում է էմիրին (թագավորին) և երկպալատանի պառլամենտին՝ բաղկացած Մաջլիս աշ–Շուրայից՝ Կոնսուլտատիվ խորհրդից, որի բոլոր 40 անդամներին նշանակում է թագավորը, և Դեպուտատների պալատից՝ կազմված 40 ընտրովի անդամներից

Դատական համակարգը — իսլամական իրավունքը և բրիտանական ընդհանուր իրավունքը

Քաղաքական կուսակցությունները — արգելված են

ԲԱՀՐԵՅՆ
ՄԱՍՇՏԱԲ 1:750 000
ՊԱՐՍԻՑ ԾՈՎ
ՏՈՒՆԱՍ
ԲԱՀՐԵՅՆ
ԲԱՀՐԵՅՆԻ
ԾՈՎ

Պետական կրոնը — իսլամ. դավանում է բնակչության 85%–ը, որից շիա մուսուլմաններ՝ 70%, սուննի մուսուլմաններ՝ 30%, մնացած 15%–ը՝ քրիստոնյաներ, հրեաներ և հինդուսներ

Պաշտոնական լեզուն — արաբերեն, տարածված են նաև անգլերենը, ֆարսին և ուրդուն

Ազգային կազմը — բահրեյնցի արաբներ՝ 63%, այլ արաբներ՝ 10%, ասիացիներ՝ 19%, իրանցիներ՝ 8%

Վարչական բաժանումը — 12 շրջաններ՝ մինթաքահ

Ազգային դրամը — Բահրեյնի դինար

Բնական հարստությունները — նավթ՝ 148 մլն բարել (2004 թ. գնահատական), գազ (46 մլրդ խորանարդ մետր, 2004 թ. գնահատական), ծուկ, մարգարիտ

Արդյունաբերությունը — նավթի վերամշակում, ալյումինի ծուլում, երկաթյա իրեր, պարարտանյութ, նավավերանորոգում, բանկային համակարգ, զբոսաշրջիկություն

Գյուղատնտեսությունը — մրգեր, բանջարեղեն, **թռչնաբուծություն**, կաթնամթերք, ծուկ, ծովախեցգետին

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ըստ շնչի — 19200 ԱՄՆ դոլարի համարժեք (2004 թ.)

Անդամակցում է — Միավորված ազգերի կազմակերպության, Ծոցի համագործակցության խորհրդի, Համաշխարհային առևտրական կազմակերպության և այլն

Բահրեյնի պատմությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք մեծ շրջանների:

Առաջին շրջանն ընդգրկում է մի վիթխարի ժամանակահատված՝ մ.թ.ա. III հազարամյակից մինչև XIX դարի երկրորդ կեսը: Այս շրջանում Բահրեյնը հայտնի էր Դիլմուն անվանումով, որը մի մեծ առևտրական կայսրություն էր: Մ.թ.ա. 2200–1600 թթ. նրա վերահսկողության տակ էր գտնվում Ծոցի արևմտյան ափերի մեծ մասը, և նրա տիրապետությունը տարածվում էր մինչև Քուվեյթ, իսկ ցամաքում մինչև Հասա օազիսը՝ Արաբիայի արևելյան տարածքում: Հետագայում պետական այդ կազմավորումը թուլանում է և մ.թ.ա. 600–ին ընկնում Բաբելոնի տիրապետության տակ: Այստեղ արդեն մ.թ. առաջին հազարամյակի սկզբներին ձևավորվում է արաբական շեյխություն, որն Արաբական խալիֆայության կազմավորումից հետո դառնում է նրա բաղկացուցիչ մասը: Ապա, X–XI դարերում նրա տարածքում ձևավորվում է կարմաթների պետությունը, որը միջնադարի ամենահետաքրքիր և հանելուկային երևույթներից մեկն էր[4]: Այնուհետև նա ենթարկվում է մեծ փորձությունների՝ XVI դարում Դիլմունն ընկնում է պորտուգալացիների, իսկ XVII դարում՝ Պարսկաստանի տիրապետության տակ:

Հենց այս ժամանակաշրջանում քաղաքական ասպարեզում հայտնվում է ալ–Խալիֆա ընտանիքը, որին վիճակված էր առաջնակարգ դեր խաղալ Բահրեյնի պատմական ճակատագրում: Ալ–Խալիֆաները սկզբում հաստատվում են Կատարի հյուսիս–արևմուտքում գտնվող ազ–Զուբարայում: Նրանց հաջողվում է 1782 թ. պարսիկներին դուրս մղել Դիլմուն–Բահրեյնից և հաստատվել ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող այդ կղզում: Ճիշտ է, նրանք որոշ ժամանակ Օմանի ճնշման տակ ստիպված էին հեռանալ այնտեղից, սակայն 1820 թ. վերադառնում են կղզի և կրկին դառնում նրա կառավարողները՝ պահպանելով այդ կարգավիճակը մինչև մեր օրերը:

---

4 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Ն. Հովհաննիսյան,** Արաբական երկրների պատմություն, հ. I, Երևան, 2003:

Երկրորդ շրջանն ընդգրկում է հարյուրամյա ժամանակահատված՝ 1871–1971 թթ., երբ բրիտանական ներթափանցման արդյունքում Բահրեյնը վերածվեց բրիտանական պրոտեկտորատի: Մեծ Բրիտանիան կարողացավ 1820, 1847 և 1861 թթ. ալ–Խալիֆաներին պարտադրել մի շարք պայմանագրեր, որոնք համապատասխան հող նախապատրաստեցին Մեծ Բրիտանիայի համար իր տիրապետությունը պրոտեկտորատի ձևով Բահրեյնի վրա հաստատելու համար, որը և տեղի ունեցավ 1871 թ.: Հետագայում՝ 1880 և 1892 թթ., կնքվեցին ևս երկու պայմանագրեր, որոնք հաստատեցին Մեծ Բրիտանիայի իրավունքները Բահրեյնի վրա՝ որպես պրոտեկտոր: Ուստի 1871–1971 թթ. պետք է համարել Բահրեյնի՝ որպես բրիտանական պրոտեկտորատի շրջան:

Երրորդ շրջանը սկսվում է 1971 թ., երբ վերացվեց բրիտանական պրոտեկտորատը, և Բահրեյնը վերածվեց անկախ պետության՝ համալրելով արաբական սուվերեն պետությունների շարքը:

I. ԲԱՀՐԵՅՆԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1918–1971 թթ.)

1. Ընդհանուր դիտարկում

Բահրեյնը գրավում էր նշանակալի տեղ ստրատեգիական և ռազմաքաղաքական այն համակարգում, որը հաստատվել էր Պարսից ծոցի շրջանում Մեծ Բրիտանիայի կողմից դեռևս XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին: Նա կազմում էր բրիտանական ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասը, որի նպատակն էր ապահովել Մեծ Բրիտանիայի տիրապետող դիրքերը Արաբական Արևելքում և Պարսից ծոցի ավազանում:

Բահրեյնի և Ծոցի մյուս երկրների կարևորությունն առաջին հերթին կայանում էր նրանց աշխարհագրական դիրքի մեջ: Դա ծովային ուղիների մի անփոխարինելի հանգույց էր, որը Եվրոպան կապում էր Հարավային և Արևելյան Ասիայի ու Արևելյան Աֆրիկայի հետ: Իսկ նշված աշխարհագրական շրջաններում գտնվում էին անգլիական գաղութները, որոնք կազմում էին բրիտանական կայսրության քաղաքական հզորության և տնտեսական բարգավաճության հիմքը: Նրանց անվտանգության ապահովումը մշտապես հանդիսացել է բրիտանական գաղութային քաղաքականության, այդ թվում և դիվանագիտության, մտահոգու-

թյան առարկան: Ահա այդ խնդրի իրականացմանն էր ուղղված գաղութային տիրապետության այն բարդ համակարգը, որ տասնյակ, եթե ոչ հարյուրավոր տարիներ Մեծ Բրիտանիայի կառավարությունը համբերատարորեն ստեղծում էր մեր մոլորակի տարբեր մասերում:

Բահրեյնի և Պարսից ծոցի շրջանի մյուս երկրների ստրատեգիական կարևորությունն ավելի է ընդգծվում, եթե նկատի առնենք այն պարագան, որ նշված ժամանակահատվածում դեռևս հայտնաբերված չէին նավթի հանքավայրերը, ուստի և և այդ երկրների՝ որպես տնտեսական գործոնի, նշանակությունը դեռևս չնչին էր:

Սկզբնական շրջանում Մեծ Բրիտանիայի նպատակն էր Ծոցի արաբական շեյխությունները դուրս բերել օսմանյան իրավասության ոլորտից, որը նրան հաջողվեց իրագործել օսմանյան կառավարության հետ 1913 թ. հուլիսի 29–ին կնքված կոնվենցիայի շնորհիվ, ըստ որի նա մեծ զիջում կատարեց Մեծ Բրիտանիային՝ փաստորեն նրա տնօրինությանը հանձնելով Բահրեյնը, Կատարը և Պայմանագրային Օմանը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիան Բահրեյնում հիմնեց իր ռազմածովային հենարանը, որն իր հսկողության տակ էր վերցրել Պարսից ծոցից դուրս եկող ծովային կոմունիկացիաները: Բրիտանական ռազմածովային ուժերի մշտական ներկայությունն այդտեղ իր դերը խաղաց, որ բրիտանական պրոտեկտորատն «ընդունեն» Ծոցի ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող ևս երկու երկիր՝ Քուվեյթը և Կատարը, որոնք Բահրեյնի հետ ամբողջացրին Պարսից ծոցի ստրատեգիական անվտանգության համակարգը:

Բահրեյնն իր նորագույն պատմությունը թևակոխեց բրիտանական պրոտեկտորատի կարգավիճակով: Հետպատերազմյան տարիներին Մեծ Բրիտանիան ավելի ընդարձակեց իր ռազմածովային հենարանը Բահրեյնում՝ ավելացնելով զորքերի թվաքանակը և համալրելով ավելի արդիական ռազմական նավերով ու զենքերով:

Երկրի կառավարման ղեկը ձևականորեն գտնվում էր էմիր Իսա ալ–Խալիֆայի ձեռքում, սակայն Բահրեյնի քաղաքական և տնտեսական կյանքում ոչինչ չէր կատարվում առանց Մեծ Բրիտանիայի ներկայացուցչի գիտության ու համաձայնության: Իսա ալ–Խալիֆան Մեծ Բրիտանիայի հանդեպ իր քաղաքականության անկյունաքարը դարձրեց «ամեն ինչում պրոտեկտորի հետ համաձայնվելու» սկզբունքը:

Այսպիսով՝ Մեծ Բրիտանիան Բահրեյնում ուներ երկու հենարան՝ իր ռազմական բազան և կառավարող ալ–Խալիֆաների դինաստիան՝ ի

դեմս էմիր Իսա ալ–Խալիֆայի, որին համարում էին բրիտանական քաղաքական և ռազմական վարչության եթե ոչ դրածոն, ապա կամակատարը:

Ստեղծված իրադրությունը, մասնավորապես էմիրի համաձայնողական քաղաքականությունը և նրա պատրաստակամությունը բոլոր հարցերում ընդառաջել բրիտանացիներին և կատարել նրանց կամքը, հարուցեց բահրեյնցիների դժգոհությունը: Այդ քաղաքականության դեմ, 1918 թ. սկսած, ձևավորվեց Բահրեյնի հայրենասիրական ուժերի շարժումը, որը գլխավորեց Բահրեյնի ազատագրության կազմակերպությունը:

Սակայն այստեղ պետք է նկատի ունենալ մի կարևոր առանձնահատկություն: Բահրեյնում հակաբրիտանական ազատագրական շարժումը կամ պայքարն այնպիսի թափ, ծավալներ և կազմակերպվածություն չուներ, ինչպես արաբական հարևան երկրներում, մասնավորապես Եգիպտոսում և Իրաքում կամ Սիրիայում և Լիբանանում: Դա կարելի է բացատրել կղզու ոչ մեծ լինելով և բնակչության ոչ մեծաթիվ քանակով, քաղաքական պայքարի փորձի բացակայությամբ, դեռևս շատ ուժեղ ցեղային հարաբերությունների առկայությամբ, սոցիալ–տնտեսական հարաբերությունների զարգացման համեմատաբար ցածր մակարդակով և համանման այլ գործոններով: Նույնը կարելի է ասել նաև Ծոցի արաբական այլ պրոտեկտորատներում ծայր առած ազգային–ազատագրական շարժումների, հատկապես նրանց նախնական կամ սկզբնական փուլի մասին: Սակայն ասվածը բնավ չի կարող նսեմացնել կամ ստվեր գցել այն հիրավի խիզախ ու հերոսական պայքարի վրա, որը ծավալվեց Բահրեյնում՝ սկսած 1920–ական թվականներից՝ ուղղված բրիտանական պրոտեկտորատի վերացմանը և Բահրեյնի անկախության նվաճմանը:

2. Հակագաղութային ազատագրական շարժումները 1918–1930–ական թվականներին

Հակաբրիտանական առաջին ելույթները, որոնք իրենց մի ծայրով ուղղված էին նաև էմիր Իսա ալ–Խալիֆայի և նրան պաշտպանող կառավարող վերնախավի դեմ, որի մեջ մտնում էին նաև որոշ ցեղերի շեյխեր, սկսվեցին արդեն 1918 թ. և զարգացում ստացան հետագա տարիներին: Այդ ելույթների պատճառը կուտակված խոր դժգոհությունն էր էմիրի ներքին քաղաքականությունից և հատկապես բրիտանացիների հետ համաձայնողական նրա քաղաքականությունից: Այդ շարժումը, ինչպես

նշվեց, գլխավորեց Բահրեյնի ազատագրության կազմակերպությունը: Նա ստեղծվել էր դեռևս մինչև պատերազմը և արդեն նվաճել էր որոշակի համակրանք ու հեղինակություն բահրեյնցիների շրջանում: Նրա հիմնադիրն էր Աբդ ալ–Վահաբ Զինանին: Նա Բահրեյնի բնակչության մեծամասնությունը կազմող շիաների ճանաչված ղեկավարն էր, որի խոսքին ունկնդիր էին հասարակ շիա զանգվածները: Նա այդ ժամանակ առաջ քաշեց մի կարևոր կոչ՝ պայքար Բահրեյնը գրաված անգլիական գաղութարարների և նրանց հետ սերտորեն համագործակցող ու նրանց կամքը կատարող տեղական կառավարողների դեմ: Այս պարզ պահանջը միանգամայն հասկանալի ու ընդունելի դարձավ բահրեյնցիների համար, որոնք որպես պայքարի ձև ընտրեցին քաղաքացիական անհնազանդությունը: Նրանք հրաժարվում էին ենթարկվել անգլիացիների և ալ–Խալիֆայի պալատից եկող հրամաններին: Վերջիններիս բոլոր փորձերը՝ հանդարտեցնել բահրեյնցիների կրքերը և ստիպել նրանց ենթարկվել իշխանություններին ու կատարել նրանց հրամանները, ավարտվեցին ապարդյուն:

Ստեղծված պայմաններում էմիր Իսա ալ–Խալիֆան իր անգլիական խորհրդատուների դրդմամբ դիմեց մի հին ու փորձված մարտավարության, որը հայտնի է «Բաժանի՛ր, որ տիրես» բանաձևով: Նրանք հրահրեցին ներքին երկպառակություններ դավանանքի և էթնիկական տարբերությունների հողի վրա: Ինչպես նշվել է, Բահրեյնի բնակչության 70%–ը շիաներ են, իսկ 30%–ը՝ սուննիներ: Նրանց միջև ավանդաբար շատ հաճախ են լինում բախումներ: Իշխանությունները սկսեցին հենց նրանցից՝ շիաներին և սուննիներին լարելով միմյանց դեմ: Ամբողջ 1918–1919 թթ. չէին դադարում արյունալի բախումները իսլամի այդ երկու հիմնական ճյուղերի հետևորդների միջև: Դրան պետք է ավելացնել արյունալի բախումները բահրեյնցի արաբների և իրանցիների միջև՝ դարձյալ հրահրված Բահրեյնի կառավարող վերնախավի և անգլիական իշխանությունների կողմից: Այս վերջին պարագայում կրակի վրա յուղ էր լցնում նաև այն պարագան, որ Իրանը լուրջ հավակնություններ ուներ Բահրեյնի նկատմամբ՝ այն համարելով իրեն պատկանող տարածք:

Վարագույրի հետևից գործող իշխանությունները և անգլիական «խորհրդականները» արտաքուստ ցույց էին տալիս, թե իբր իրենք ոչ մի շահագրգռվածություն չունեն այդ արյունալի բախումները կազմակերպելու գործում: Ընդհակառակը, նրանք երբեմն–երբեմն հորդորում էին շիաներին ու սուննիներին, ինչպես նաև արաբներին ու իրանցիներին,

պահպանել հանդարտություն և ձեռնպահ մնալ արյունահեղությունից: Սակայն դա միայն արտաքուստ էր: Թափանիվն արդեն պտտվում էր:

Կրոնական և էթնիկական հողի վրա բախումներ կազմակերպելով՝ Բահրեյնի իշխանությունները և նրանց անգլիական խորհրդատուները նպատակ ունեին շեղել բահրեյնցիների պայքարը՝ ուղղված իշխանությունների ու անգլիական պրոտեկտորատի դեմ, և վարկաբեկել Բահրեյնի ազատագրության կազմակերպությունը բահրեյնցիների աչքերում՝ ցույց տալով, որ այն ընդունակ չէ լինել նրանց ղեկավար քաղաքական կազմակերպությունը: Եվ պետք է նշել, որ նրանց որոշ չափով հաջողվեց այդ նենգ մարտավարության օգնությամբ հասնել իրենց նպատակին: Բահրեյնցիները, կլանված միջհամայնքային և միջէթնիկ բախումներով, բնականաբար, շեղվեցին քաղաքական պայքարից: Դրանից օգտվեցին իշխանությունները, որոնք «հասարակական կարգը» վերականգնելու և հետագա արյունահեղությունը կանխելու պատրվակով անցան հակահարձակման և դիմեցին բռնությունների: Շարժման մեծաթիվ անդամներ ձերբակալվեցին և կանգնեցին դատարանի առջև, նրանցից շատերը բանտ նետվեցին: Ծանր հարված հասցվեց Բահրեյնի ազատագրության կազմակերպությանը, որի բոլոր ղեկավարները և ակտիվ կազմակերպիչները նույնպես ձերբակալվեցին: Նրանց հետագա մնալը Բահրեյնում համարելով վտանգավոր՝ իշխանությունները անգլիացիների օգնությամբ 1920 թ. փետրվարին նրանց բոլորին աքսորեցին Հնդկաստան, որն այդ ժամանակ անգլիական գաղութ էր:

Ալ–Խալիֆա ընտանիքը և անգլիացիները տոնում էին իրենց հաղթանակը: Սակայն դա երկար չտևեց: Հիմնական քաղաքական և սոցիալ–տնտեսական խնդիրները մնացել էին չլուծված, Մեծ Բրիտանիան լիովին պահպանեց պրոտեկտորի իր իրավունքները, որը պարարտ հող էր հանդիսանում նոր հակագաղութային և ազատագրական ելույթների համար: Դրանք նոր թափով սկսվեցին 1920–ական թվականներին:

Այստեղ պետք է նկատի ունենալ նաև մի կարևոր հանգամանք: Դա հակագաղութային պայքարի ընդհանուր վերելքն էր արաբական երկրներում, որը շիկացրել էր քաղաքական մթնոլորտն Արաբական Արևելքում՝ լուրջ սպառնալիք ստեղծելով անգլիական և ֆրանսիական գաղութային տիրապետությանը: Հետպատերազմյան շրջանում ազգային–ազատագրական պայքարի հզոր կենտրոնների վերածված Եգիպտոսը, Իրաքը և Սիրիան մեծ ազդեցություն էին թողնում արաբական այն երկրների վրա, որոնք համարվում էին ազգային–ազատագրական պայ-

քարի ծայրամասեր: Դրանց թվին էր պատկանում նաև Բահրեյնը: Այս հանգամանքը, այսինքն՝ արաբական տարբեր երկրներում ընթացող հակագաղութային շարժումների փոխազդեցությունը միմյանց վրա, հարկ է մշտապես նկատի ունենալ, երբ քննարկվում են այդ շարժումների դրդապատճառները, վերելքը կամ վայրէջքը:

1920–ական թվականներին Բահրեյնում սկսված ազատագրական պայքարն ուներ մի կարևոր առանձնահատկություն, որը կարելի է համարել առավելություն նախորդ շրջանում ծավալված շարժումների նկատմամբ: Բահրեյնցիներն այս անգամ մարտնչում էին ավելի համախմբված, առանց կրոնադավանական և էթնիկական տարբերությունների՝ դասեր քաղելով նախորդ շրջանի փորձից: Դա զրկեց Բահրեյնի կառավարող վերնախավին և անգլիացիներին՝ կրկին բահրեյնցիների շարքերը պառակտելու և նրանց միմյանց դեմ հանելու հնարավորությունից:

Էմիր Իսա ալ–Խալիֆան և անգլիացիները հայտնվեցին բավականին ծանր դրության մեջ: Այս անգամ նրանք «ելքը» գտան ոչ թե բռնություններ կիրառելու և բահրեյնցիների արյունը հեղելու մեջ, այլ դիմեցին մի անսպասելի քաղաքական քայլի: Իսա ալ–Խալիֆան, որը հեղինակազրկված էր բահրեյնցիների աչքում և վերջիններիս կողմից ընկալվում էր որպես անգլիացիների կամակատար, 1923 թ. մայիսին հրաժարվեց գահից՝ հօգուտ իր որդու՝ շեյխ Համադ ալ–Խալիֆայի: Դա արդեն հայրենասիրական ուժերի որոշակի հաղթանակն էր, մանավանդ որ նախկին էմիրի հրաժարականի հետ միասին իշխանությունները, անգլիացիների համաձայնությամբ, որոշեցին Բահրեյնում կիրառել դեմոկրատական բնույթի ազատություններ: Մասնավորապես, շարժման մասնակիցներից ոչ ոք չձերբակալվեց ու բանտ չնետվեց կամ չարտաքսվեց երկրից: Համադ ալ–Խալիֆան համարվեց բարենորոգիչ:

Մեծ Բրիտանիայի՝ որպես պրոտեկտորի, իրավունքները և իշխանությունը Բահրեյնում լրիվ պահպանվեցին: Իսկ ինչ վերաբերում է բարենորոգումներին և դրանց հեղինակին՝ էմիր Համադին, ապա դա ժողովրդի ցնծությունը չառաջացրեց: Բահրեյնցիները դեռևս չէին վստահում նրան և չգիտեին, թե ինչ կստացվի այդ ամենից:

Սակայն այդ ամենի հետ միասին պետք է արձանագրել, որ էմիրի փոփոխությունը և զենք կիրառելու մարտավարությունից հրաժարվելը Բահրեյնի հայրենասիրական և ազատագրական ուժերն ընկալեցին ոչ միայն թագավորող ալ–Խալիֆա դինաստիայի, այլև Բահրեյնում բրիտանական իշխանությունների թուլության նշան: Նրանք համոզվեցին,

որ համախմբված պայքարի պարագայում անհամեմատ մեծանում են հաջողությունների հասնելու իրենց հնարավորությունները: Այս հանգամանքները խթանիչ դերակատարում ունեցան Բահրեյնում ազգային–ազատագրական պայքարի հետագա ծավալման գործում, հատկապես 1930–ական թվականներին:

1926 թ. Բահրեյնում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ՝ գործակալի կարգավիճակով, նշանակվեց Չ. Բելգրայվը: Նրա վրա դրվեցին Բահրեյնում, նրա ներքաղաքական կյանքում որոշակի փոփոխություններ կիրառելու պարտականությունները՝ նպատակ ունենալով առանց բռնություններ կիրառելու կայունացնել ներքաղաքական դրությունը Բահրեյնում, ինչ–որ չափով գունազարդել էմիրի իշխանապետության արտաքին տեսքը, բարձրացնել բրիտանական իշխանությունների հեղինակությունը և ամրապնդել նրանց դիրքերը: Հարկավ, դրանք հեշտ խնդիրներ չէին, որոնց լուծումը ոչ միայն մեծ եռանդ, այլև հնարամտություն էր պահանջում Բելգրայվից: Դա հրատապ խնդիր էր դարձել, քանի որ բռնությունների կիրառումը սպասված արդյունքները չէր տալիս:

Անգլիական նորանշանակ գործակալը սկսեց նոր բարենորոգումների կիրառումից, որը նա փորձում էր հետևողականորեն կիրառել 1920–ական թվականների վերջերից և 1930–ական թվականներին: Նրանք կոչվեցին նոր բարենորոգումներ, քանի որ Համադի ձեռնարկած բարենորոգումները կիսատ–պռատ էին, շատ դանդաղ էին ընթանում, մասնակի և սահմանափակ բնույթ էին կրում, ուստի և արդյունավետ չէին: Բելգրայվը, ելնելով պրոտեկտորատի կարգավիճակով իրեն տրված լիազորություններից, խստագույն վերահսկողություն սահմանեց Բահրեյնի եկամուտների ու հասույթների վրա, որը նախկինում երբեք չէր կիրառվել: Դա կոչված էր շոշափելիորեն բարելավել պրոտեկտորատի ֆինանսական վիճակը և լրացուցիչ միջոցներ դնել իր՝ որպես գործակալի, անմիջական տնօրինության տակ: Մինչ այդ գործող վարչակառավարական համակարգն աչքի չէր ընկնում կարգապահությամբ, պետական մարմինների և պաշտոնյաների իրավունքների ու լիազորությունների հստակ սահմանազատությամբ: Ուստի Բելգրայվն իր կարևորագույն խնդիրներից մեկը համարեց այդ համակարգի բարելավումը՝ ձգտելով այն վերածել գործող համակարգի: Ստեղծվեցին ոստիկանական ուժեր, էմիրության պաշտպանունակության ամրապնդման պատրվակով ավելացան բրիտանական կայազորները, օտարերկրացիներին տրվեցին հավելյալ արտոնություններ և այլն:

Բելգրայվի նախաձեռնությունները ոչ միայն պաշտպանություն չգտան բահրեյնցիների կողմից, այլև արժանացան նրանց դիմադրությանը և դատապարտմանը: Հատկանշական է, որ նրա բարենորոգումները առաջացրին նույնիսկ էմիր Համադ ալ–Խալիֆայի և պալատականների խոր դժգոհությունը, որոնք գտնում էին, որ Բելգրայվը դուրս է գալիս գործակալի լիազորություններից և խառնվում Բահրեյնի ներքին կառավարմանը:

Ավելի կտրուկ էր կղզու հայրենասիրական ուժերի և աշխատավորական զանգվածների դիրքորոշումը: Նրանք համոզված էին, որ Բելգրայվի բարենորոգումների վերջնական նպատակը ոչ թե Բահրեյնի ներքաղաքական կյանքի բարեփոխումը և ժողովրդավարության զարգացմանը նպաստելն էր, այլ Մեծ Բրիտանիայի տիրապետության հետագա ամրապնդումը ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող այդ արշիպելագում: Ուստի նրանք ավելի վճռական դարձան Մեծ Բրիտանիայի կողմից Բահրեյնի սուվերենությունը ճանաչելու իրենց պահանջներում:

Լոնդոնը, անշուշտ, տեղյակ էր Բահրեյնում ստեղծված իրադրությանը և տեսնում էր, որ Բելգրայվի «բարենորոգումները» սպասված արդյունքները չեն տալիս: Անգլիական կառավարությունը, ցանկանալով դյուրացնել իր գործակալի գործունեությունը և ցույց տալ, որ ինքը ինչ–որ չափով հաշվի է նստում Բահրեյնի պահանջների հետ, 1934 թ. հայտարարեց, որ Բահրեյնը չի կազմում բրիտանական կայսրության մաս և նրան տվեց նոր՝ «անկախ իշխանապետության» կարգավիճակ: Ըստ այդմ՝ Բահրեյնը կապվում էր բրիտանական կայսրության հետ «հատուկ դաշնակցային պայմանագրով», որն էլ հենց ի չիք էր դարձնում «անկախ իշխանապետություն» հասկացությունը՝ վերածելով այն անիմաստ բառակապակցության:

Ի պատասխան անգլիական կառավարության այդ քայլերի՝ բահրեյնցիները բոյկոտ հայտարարեցին ոչ միայն Բելգրայվի «բարենորոգումներին», այլև հենց իրեն՝ չցանկանալով որևէ գործ ունենալ նրա հետ: 1930–ականների երկրորդ կեսում չէին դադարում բահրեյնցիների բողոքի միտինգները և զանգվածային ցույցերն ընդդեմ բրիտանական տիրապետության: Դրանց մեջ իրենց նշանակությամբ հատկապես առանձնանում են 1939 թ. նոյեմբերին տեղի ունեցած շարունակական ցույցերը, որոնց ընթացքում նախորդ պահանջների հետ միասին առաջին անգամ հնչեց Բահրեյնում ժողովրդավարական սահմանադրություն մտցնելու պահանջը: Դա վկայում էր Բահրեյնի հայրենասիրական

ուժերի, որոնք անցել էին 1920–1930–ական թթ. պայքարի բովով, քաղաքական հասունության մասին:

Բրիտանացիների ներվերը չդիմացան և նրանք, որ մինչ այդ խուսափում էին ռազմական ուժ և բռնություններ կիրառելուց, այս անգամ բահրեյնցիների այդ ելույթը ճնշեցին ուժի օգնությամբ:

Միաժամանակ, օգտվելով արդեն սկսված երկրորդ համաշխարհային պատերազմից, Անգլիան լրացուցիչ ռազմական ուժեր տեղակայեց Բահրեյնում:

Այսպիսով՝ թեև Բահրեյնի հայրենասիրական ուժերին չհաջողվեց հասնել բրիտանական պրոտեկտորատի վերացմանը և անկախ ու սուվերեն պետության ստեղծմանը, այդուհանդերձ, նրանց մոտ քսանամյա ազգային–ազատագրական պայքարն անհետևանք չանցավ: Նա լուրջ հարված հասցրեց, կարելի է ասել՝ խարխլեց բրիտանական տիրապետության հիմքերը և հող նախապատրաստեց նրա վերացման համար:

3. «Բահրեյն պետրոլեում կոմպանիի» (ԲԱՊԿՕ) ստեղծումը

Արաբական Արևելքի երկրների, առաջին հերթին՝ Սաուդյան Արաբիայի, Իրաքի, Քուվեյթի, Բահրեյնի և Արաբական Միացյալ Էմիրությունների նորագույն պատմությունը սերտորեն շաղկապված է նավթի գործոնի հետ: Այն շաղկապված է ոչ միայն տնտեսական, այլև պատմաքաղաքական առումով: Նավթի առկայությունն այդ և այլ երկրներում մագնիսի նման իրեն է ձգել աշխարհի հզոր տերություններին՝ Անգլիային, Ֆրանսիային և ԱՄՆ–ին, որոնք իրենց տիրապետությունն են հաստատել արաբական երկրների այդ կարևոր բնական հարստության վրա և քաղաքական կախման մեջ գցել այդ երկրները: Դրանով նրանք մեծապես ազդել են նաև նշված երկրների պատմական զարգացումների, քաղաքականության և տնտեսության վրա:

Բահրեյնը Սաուդյան Արաբիայից և Իրաքից հետո երկրորդ և Ծոցի առաջին արաբական երկիրն էր, որտեղ 1932 թ. նավթ արդյունահանվեց: Մեծ Բրիտանիան երկար ժամանակ տարօրինակ կերպով առանձնահատուկ ուշադրություն չէր դարձնում Բահրեյնի նավթային հարստությունների վրա և կոնկրետ քայլեր չէր ձեռնարկում նրա արդյունահանման ու շահագործման ուղղությամբ: Նրա ուշադրության կենտրոնում էր գտնվում Անգլո–իրանյան նավթային ընկերությունը, որին Լոնդոնն ամեն կերպ աջակցում էր՝ նպաստավոր քաղաքական,

տնտեսական և ֆինանսական պայմաններ ստեղծելով նրա գործունեության համար:

Սակայն իրադրությունը կտրուկ փոխվեց 1920–ական թվականների կեսերից, երբ ամերիկյան նավթային ընկերությունները սկսեցին ակտիվ գործունեություն ծավալել Մերձավոր ու Միջին Արևելքում, այդ թվում և արաբական այն երկրներում, որոնք ունեին նավթային պաշարներ և գտնվում էին անգլիական տիրապետության տակ կամ ազդեցության գոտում: Ամերիկյան նավթային ընկերությունները, վայելելով ԱՄՆ–ի կառավարության աջակցությունը, պայքար էին ծավալել Մերձավոր Արևելքում գտնվող նավթի համաշխարհային պաշարների օգտագործման մեջ իրենց բաժինն ունենալու և այդ բնագավառում անգլիական նավթային ընկերությունների մենաշնորհին վերջ տալու համար: Այդ քաղաքականության իրականացման ճանապարհին նրանց ուշադրության կենտրոնում հայտնվեց նաև Բահրեյնը: 1927 թ. նոյեմբերի 30–ին ամերիկյան «Իստերն գալֆ» նավթային ընկերությունը ավստրալիացի նավթային գործարար Ֆ. Հոլմսից գնեց նրան պատկանող «Իստերն ընդ ջեներալ սինդիկեյթ» ընկերության՝ Բահրեյնում նավթի հետախուզում կատարելու և շահագործելու կոնցեսիոն իրավունքները: Անգլիական կառավարությունն ամեն կերպ դիմադրում էր այդ գործարքի կատարմանը, սակայն միջամտեց ԱՄՆ–ի պետական դեպարտամենտը, և նրա բացահայտ ճնշման տակ անգլիական կառավարությունը ստիպված էր նահանջել: Ամերիկյան հայտնի «Ստանդարդ օյլ կոմպանի օֆ Կալիֆոռնիա» նավթային ընկերությունը հիմնեց «Բահրեյն պետրոլեում կոմպանի» (ԲԱՊԿՕ) իր դուստր ընկերությունը, որը և ձեռնամուխ եղավ նավթի արդյունահանմանը Բահրեյնում: Նա 1930 թ. հունիսի 12–ին պայմանագիր կնքեց Բահրեյնի էմիր Համադ ալ–Խալիֆայի հետ, ըստ որի՝ էմիրը 69 տարի ժամանակով կոնցեսիա էր տալիս ԲԱՊԿՕ–ին Բահրեյնի տարածքում նավթ հայտնաբերելու և շահագործելու համար: Նավթի պաշարները, որոնք գտնվում են հիմնականում Ավալի հանքավայրում, կազմում են մոտ 148 մլն բարել: Նավթից ստացվող եկամուտների մի մասը, ըստ 1930 թ. ամերիկյան–բահրեյնյան կոնցեսիոն համաձայնագրի, ստանալու էր Բահրեյնի էմիրը:

Նավթային համաձայնագիրը կնքվեց Բահրեյնի համար շատ ծանր ժամանակ: Ավանդաբար նրա տնտեսության գլխավոր ճյուղը եղել է բնական մարգարիտի արդյունահանումը ծովի ընդերքից: Բահրեյնցիներն այդ գործի մեծ վարպետներն էին: Սակայն 1930–ական թվական-

ների սկզբին մարգարիտի համաշխարհային շուկան կազմալուծվել էր և մարգարիտի արդյունահանումը խոր ճգնաժամ էր ապրում: 1932 թ. սկսված նավթի արդյունահանումը կոչված էր փոխհատուցել մարգարիտի արդյունահանման անկման հետ կապված կորուստները և նպաստել Բահրեյնի տնտեսության զարգացմանը:

4. Բահրեյնը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939–1945 թթ.)

1939 թ. սկսված Երկրորդ համաշխարհային պատերազմը սպառնալիք էր աշխարհի բոլոր երկրների համար, անկախ այն բանից, թե նրանք ինչպիսի հեռավորության վրա էին գտնվում պատերազմի գլխավոր թատերաբեմերից և ռազմաճակատներից: Այդ վտանգը կախված էր նաև Պարսից ծոցի, այդ թվում և Բահրեյնի վրա, քանի որ առաջին՝ Բահրեյնի պրոտեկտոր երկիրը՝ Մեծ Բրիտանիան, պատերազմի գլխավոր մասնակիցներից մեկն էր, և նա պետք է օգտագործեր, և իրոք օգտագործեց, իր գաղութները և պրոտեկտորատները, նրանց մարդկային և նյութական միջոցները գերմանական բլոկի դեմ հաղթանակ տանելու համար, և երկրորդ՝ Մեծ Բրիտանիայի թշնամի բլոկը՝ Գերմանիան և Իտալիան, որոշակի ծրագրեր ունեին արաբական երկրների նկատմամբ՝ գտնելով, որ Մեծ Բրիտանիային պարտության մատնելու հիմնական ուղիներից մեկը նրան զրկելն է իր անդրծովյան տիրույթներից: Ճիշտ է, գերմանա–իտալական այդ ծրագրերում առաջնային տեղ հատկացվում էր Իրաքին, Սիրիային, Եգիպտոսին և Հյուսիսային Աֆրիկայի արաբական այլ երկրների, սակայն Պարսից ծոցի արաբական շեյխություններին և էմիրություններին նույնպես մեծ նշանակություն էր տրվում:

Հօգուտ այս տեսակետի են խոսում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հրատարակված գերմանական, ինչպես նաև իտալական գաղտնի փաստաթղթերը[5]:

Դրա ապացույցն է հանդիսանում նաև պատերազմի սկզբում Բահրեյնի ռմբակոծումը գերմանական և իտալական ավիացիայի կողմից: Հաշվի առնելով այդ հանգամանքը և Բահրեյնի կարևոր ստրատեգիական դիրքն ու նշանակությունը բրիտանական պաշտպանական

5 Այդ մասին տե՛ս Н. Оганесян, Политика империалистических держав на Арабском Востоке в годы второй мировой войны, Ереван, 1980:

համակարգում՝ Մեծ Բրիտանիան պատերազմի տարիներին Բահրեյնում կենտրոնացրեց խոշոր ռազմական ուժեր և ռազմական տեխնիկա, այդ թվում և ավիացիա: Այդ ուժերը չէին նախատեսված միայն Բահրեյնի պաշտպանության համար: Նրանց խնդիրն էր ապահովել ամբողջ տարածաշրջանի ու Պարսից ծոցի անվտանգությունը: Այդ նպատակն էր հետապնդում նաև անգլիական կառավարության համաձայնությամբ Բահրեյնում ամերիկյան ռազմական ուժեր տեղակայելը:

Ռազմական իրադրությունը հօգուտ հակահիտլերյան կոալիցիայի փոխվելու և գերմանաֆաշիստական բլոկի ռազմական պարտությունների շնորհիվ Պարսից ծոց գերմանա–իտալական ներխուժման վտանգը վերացավ:

Պատերազմի տարիներին զգալի տեղաշարժեր տեղի ունեցան Բահրեյնի ներքաղաքական կյանքում: 1942 թ. էմիրի գահին նստեց վախճանված Համադ բին Ալի ալ–Խալիֆայի որդին՝ շեյխ Սալման բին Համադ ալ–Խալիֆան: Դա սովորական, ժառանգական իրավունքով տեղի ունեցած փոփոխություն չէր: Սալման ալ–Խալիֆայի անվան հետ է կապված Բահրեյնի արդիականացման գործընթացը: Նա էմիրի գահի վրա մնաց 19 տարի՝ մինչև 1961 թ.: Այդ ժամանակահատվածում նա կիրառեց մի շարք բարեփոխումներ տնտեսական, սոցիալական և կրթական համակարգերում, բարձրացավ բահրեյնցիների կենսամակարդակը, որի մեջ մեծ էր նավթից ստացվող եկամուտների տեսակարար կշիռը:

Ակտիվացավ նաև Բահրեյնի աշխատավորական զանգվածների և բոլոր հայրենասիրական ուժերի պայքարը Բահրեյնում դեմոկրատիայի հաստատման, դեմոկրատական վերափոխումների և ազատությունների համար: Դրան նպաստեցին ոչ միայն օբյեկտիվ պայմանները, այլ նաև Մեծ Բրիտանիայի անհաջողությունները պատերազմի սկզբնական փուլում: Դա հանգեցրեց նրան, որ Անգլիայի հեղինակությունն ընկավ բահրեյնցիների աչքում, որոնք սկսեցին Անգլիան ընկալել որպես թուլացած մի երկիր: Արդեն 1940 թ. երկրի հայրենասիրական ուժերը բացահայտ հանդես էին գալիս բրիտանական տիրապետության դեմ: Դա իր արտացոլումը գտավ անգլիական զորքերը Բահրեյնից դուրս բերելու պահանջի մեջ: Դրան ավելացավ Բահրեյնում բրիտանական ներկայացուցիչ Չ. Բելգրայվին անհապաղ երկրից վտարելու պահանջը: Այդ անձնավորությունը մարմնավորում էր բրիտանական գաղութային տիրապետությունն իր բոլոր բացասական

կողմերով: Դժգոհությունը Անգլիայի և նրա կառավարման մեթոդների դեմ այնքան խորն էր, որ այն անգամ համակել էր կառավարող վերնախավի որոշ շերտերը: Հակաբրիտանական դժգոհության այս ալիքն իր գագաթնակետին հասավ 1941–1942 թթ.: Բահրեյնն իրենից ներկայացնում էր մի եռացող կաթսա, և անգլիական իշխանությունները երկիրը հանդարտեցնելու համար վախեցան կիրառել բռնի միջոցներ և ճնշումներ:

Լարվածությունը մի փոքր լիցքաթափվեց 1942 թ., երբ էմիր հռչակվեց շեյխ Սալմանը: Նա բարենորոգումներ անցկացնելու իր շռայլ խոստումներով կարողացավ հանդարտեցնել զանգվածներին, իսկ կաշառքներով ու «նվերներով» նրան հաջողվեց դժգոհներին հարած կառավարող վերնախավի մի մասին անջատել ընդդիմադիր ճակատից: Այս քայլերի արդյունքում դժգոհության ալիքը 1943–1944 թթ. վայրէջք ապրեց: Նոր էմիրը գործողության մեջ դրեց պատերազմի ժամանակների օրենքները, կատարեց մի շարք ձերբակալություններ և կարողացավ թուլացնել ընդդիմադիր շարժումը: Դրությունը երկրում համեմատաբար կայունացավ: Հավանաբար դա հանդիսացավ Բահրեյնի մայրաքաղաք Մանամահը 1946 թ. Պարսից ծոցում բրիտանական ներկայացուցչության նստավայրը դարձնելու պատճառներից մեկը:

Չնայած պատերազմական գործողություններին, 1939–1945 թթ. երբեք չդադարեց մրցակցությունը ամերիկյան և անգլիական նավթային ընկերությունների միջև Մերձավոր և Միջին Արևելքում, մանավանդ որ պատերազմի տարիներին խիստ աճեց նավթի և նավթամթերքների պահանջարկը: Պայքարը հիմնականում ընթանում էր մի կողմից ամերիկյան «ԱՐԱՄԿՕ» ու «ԲԱՊԿՕ» և մյուս կողմից՝ «Անգլո–իրանական նավթային ընկերության» («ԱԻՆԿ») ու «Բրիտիշ պետրոլեում կոմպանիի» միջև, որի հետևանքով ավելի ուժեղացան ամերիկյան նավթային ընկերությունների դիրքերը:

Ինչպես միշտ, այս անգամ նույնպես ամերիկյան նավթային ընկերությունները, այդ թվում և «Բահրեյն պետրոլեում կոմպանին», մեծ աջակցություն էին ստանում, այդ թվում և ռազմական, ամերիկյան իշխանությունների կողմից:

5. Բահրեյնը հետպատերազմյան տարիներին: Բրիտանական պրոտեկտորատի վերացման համար պայքարի ավարտական փուլը

Ինչպես նշվեց, 1946 թ. Քուվեյթի մայրաքաղաք էլ–Քուվեյթից Մանամահ տեղափոխվեց Պարսից ծոցում բրիտանական վարչության ղեկավարի նստավայրը: Բահրեյնի մայրաքաղաքը վերածվեց Պարսից ծոցի արաբական շեյխությունների յուրատեսակ քաղաքական կենտրոնի: Այստեղից էր Մեծ Բրիտանիան իրականացնում իր կարևոր քաղաքական, ռազմական և տնտեսական ծրագրերը ու հետևում նրանց իրականացմանը: Մանամահից ստացվող տեղեկությունների հիման վրա էր Լոնդոնը ճշգրտում իր քաղաքականության առաջնայնությունները և որոշում ստրատեգիական հիմնախնդիրները Պարսից ծոցի ավազանում:

Մանամահի վերածումը Պարսից ծոցում բրիտանական իշխանությունների կենտրոնի վկայում էր նաև Բահրեյնի ստրատեգիական նշանակության կարևորության մասին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նկատվեց որոշակի փոփոխություն Մեծ Բրիտանիայի քաղաքականության մեջ՝ հանդեպ Բահրեյնը: Բրիտանական իշխանությունները գտան, որ իրենց դիրքերի հետագա ամրապնդմանը ավելի կհամապատասխանի, եթե խրախուսեն Բահրեյնի տնտեսության որոշ ճյուղերի ու ինֆրաստրուկտուրայի, կրթական և առողջապահական համակարգի զարգացմանը: Դա, ինչպես ենթադրում էին նրանք, կոչված էր նաև նպաստելու հակաբրիտանական զգացմունքների, ի վերջո՝ հակաբրիտանական պայքարի թուլացմանը:

Բահրեյնում մեծ թափ առավ շինարարությունը: Կառուցվեցին հիանալի ավտոմայրուղիներ և կղզիները միմյանց կապող թումբեր, նավահանգիստներ, որոնք համալրված էին նորագույն տեխնիկայով: Իր կարևորությամբ առանձնանում է առաջնակարգ օդանավակայանի շինարարությունը Մուհարակում, որը կարող էր ընդունել ամենախոշոր ինքնաթիռներ, այդ թվում և ռազմական: Ավտոմայրուղիների, կղզիները միմյանց կապող ամբարտակների և օդանավակայանի կառուցումը ստրատեգիական կարևոր նշանակություն ուներ հենց Մեծ Բրիտանիայի համար՝ նրա ռազմական ուժերի տեղաշարժումների տեսանկյունից:

Շինարարական ոլորտի մեջ ներգրավվեցին նոր և հարմարավետ հյուրանոցների, դպրոցական շենքերի, հիվանդանոցների, կինոթատրոնների, ակումբների և բնակելի շենքերի կառուցումը մայրաքաղաքում

և իր նշանակությամբ Բահրեյնի երկրորդ քաղաք Մուհարակում: Ընդլայնվեց հեռախոսային ցանցը, և բարելավվեց փոստային կապը: Թույլատրվեց թերթերի հրատարակումը, այդ թվում՝ ազգային–հայրենասիրական ուղղություն ունեցող «Ալ–Ջարիդա ալ–Ջադիդա» օրաթերթը:

Բահրեյնը ոտք էր դնում XX դար:

Յուրօրինակ կերպով այս գործընթացին մասնակցեց ԱՄՆ–ը, որի ներկայացուցիչները՝ գործարարները, զանազան խորհրդականներ և հատկապես նավթային ընկերությունների ներկայացուցիչներ, ուշադրությամբ հետևում էին, թե ինչ կստացվի բրիտանական փորձից: Նրանց մասնակցությունն արտահայտվեց նրանում, որ նրանք ինչ–որ չափով ֆինանսավորում էին Բահրեյնի վերակառուցման և արդիականացման բրիտանական ծրագրերը, որից օգտվելու էին նաև իրենք: Բայց նախկինի պես նրանց ուշադրության կենտրոնում մնում էր Բահրեյնի և տարածաշրջանի նավթը:

Ամերիկյան ԲԱՊԿՕ–ի ղեկավարությունն ընտրեց նավթարդյունաբերության շեշտակի զարգացման ուղին՝ մեծապես ավելացնելով կապիտալ ներդրումները, որի արդյունքում նավթահորերի թիվը հասավ 80–ի: Զուգահեռաբար նրանք զարկ տվեցին նավթավերամշակմանը: Դեռևս 1936 թ. Բահրեյնում հիմնված նավթավերամշակման գործարանի կարողությունները 1946 թ. մեծացան վեց անգամ, իսկ նավթի արտահանումը ԲԱՊԿՕ–ի կողմից աճեց 80%–ով: ԲԱՊԿՕ–ի նախաձեռնությամբ կառուցվեց Սաուդյան Արաբիայի Դահրանից Բահրեյն 55 կմ երկարությամբ ստորջրյա նավթամուղ, որի շնորհիվ սաուդյան նավթը հոսեց Բահրեյնի նավթամշակման գործարան: Այս բոլորի հետևանքով աճեց նավթի արդյունահանումը և վերամշակումը, համապատասխանաբար աճեցին նավթից ստացվող շահույթները, որի մի մասը՝ որպես եկամուտ, ստանում էր Բահրեյնը:

Առաջընթացը, անշուշտ, ակնառու էր: Սակայն նրա սոցիալական հետևանքներից կամ «բարիքներից» հիմնական շահողները եղան Բահրեյնի հասարակության ունևոր խավերը, իսկ աշխատավորական խավերի սոցիալ–տնտեսական դրության մեջ շոշափելի փոփոխություններ տեղի չունեցան: Այդ պատճառով էլ դժգոհությունը պահպանվում էր, որն ամեն մի հարմար պահի կարող էր պոռթկալ: Առիթն իրեն երկար սպասել չտվեց:

1951 թ. սկզբներին կարևոր իրադարձություններ տեղի ունեցան Իրանում՝ կապված Մոսադեղի կառավարության կողմից ԱԻՆԿ–ի՝ «Անգ-

լո–իրանական նավթային ընկերության» ազգայնացման որոշման հետ: Դա իր ժամանակի համար չափազանց համարձակ քայլ էր, որը ցնցեց ամբողջ Մերձավոր ու Միջին Արևելքը և մեծապես նպաստեց հակաիմպերիալիստական ալիքի բարձրացմանը մի շարք երկրներում, այդ թվում և արաբական նավթարդյունահանող երկրներում: Բացառություն չկազմեց նաև Բահրեյնը: 1951 թ. փետրվարին այստեղ տեղի ունեցան համերաշխության ցույցեր՝ ի պաշտպանություն Իրանի ժողովրդի պայքարի հանուն ԱԻՆԿ–ի ազգայնացման: Դրանք վերածվեցին բողոքի ցույցերի, երբ հայտնի դարձավ, որ բրիտանական իշխանությունները Իրանի հայրենասիրական ուժերին սպառնալու նպատակով Պարսից ծոցում կենտրոնացրին լրացուցիչ ռազմածովային ուժեր: Բահրեյնի կառավարությունը անգլիական իշխանությունների պահանջով և աջակցությամբ ցուցարարների դեմ հանեց ոստիկանական ուժեր, որոնց հաջողվեց ճնշել այդ ցույցերը, մասնակիցներից շատերը ձերբակալվեցին և բանտ նետվեցին:

Բահրեյնի իշխանությունները և անգլիացիները դեռ չէին հասցրել տոնել իրենց «հաղթանակը», երբ նույն թվականի մարտին սկսվեց ԲԱՊԿՕ–ին պատկանող նավթավերամշակման և օժանդակ ձեռնարկությունների աշխատավորների գործադուլը: Դա առաջին նման գործադուլն էր ԲԱՊԿՕ–ի համակարգում: Գործադուլավորների հիմնական պահանջներն էին՝ աշխատավարձի բարձրացում և աշխատանքի պայմանների, այդ թվում և աշխատավորների կենցաղային պայմանների բարելավում:

Իր նշանակությամբ շատ կարևոր էին Բահրեյնի աշխատավորական զանգվածների 1951 թ. հունիսին կայացած ցույցերը: Դրանք իրենց պահանջներով տարբերվում էին մինչ այդ տեղի ունեցած ելույթներից: Այդ ցույցերն ուղղված էին ինչպես կառավարող վարչակարգի, այնպես էլ բրիտանական իմպերիալիզմի դեմ: Ցուցարարների, որոնց շարքերը համալրում էին բանվորները, մանր առևտրականները, արհեստագործները և մտավորականությունը, գլխավոր պահանջներն էին՝ Բահրեյնի էմիր Սալման ալ–Խալիֆայի ու նրա անգլիացի խորհրդականի՝ Չ. Բելգրայվի արտաքսումը երկրից, ԲԱՊԿՕ–ի ազգայնացումը, Բահրեյնի անկախության ճանաչումը և Բահրեյնում տեղակայված անգլիական ռազմական հենարանի վերացումը: Ինչպես տեսնում ենք, այդ պահանջները արմատական բնույթ էին կրում և արտացոլում էին Բահրեյնի աշխատավորական ու հայրենասիրական խավերի վճռականությունը՝ տեսնել իրենց հայրենիքը ազատ ու անկախ:

Տեղական կառավարող վերնախավը և անգլիական իշխանությունները լավ էին գիտակցում, թե ինչպիսի վտանգ են ներկայացնում նմանատիպ պահանջները, և համատեղ դիմեցին վճռական գործողությունների: Բահրեյնի ոստիկանության և անգլիական զինվորների համատեղ «վճռական» գործողությունների արդյունքում, որի ընթացքում ցուցարարների դեմ կիրառվեց զենք, հաջողվեց ճնշել հայրենասիրական ուժերի այդ ելույթները: Ցուցարարների գնդակոծման ժամանակ զոհվեց վեց և վիրավորվեց քսան մարդ, բանտերը լցվեցին ձերբակալվածներով, սանձազերծվեց մի իսկական ահաբեկչություն:

Սակայն բրիտանական իշխանությունների և տեղական կառավարող վերնախավի «հաջողությունները» ժամանակավոր բնույթ էին կրում: Բահրեյնի հարենասիրական ուժերը վախեցած չէին և շարունակում էին պայքարը իրենց իրավունքների ու երկրի ազատության ու անկախության համար: Դրա վկայություններն են 1950–ական թվականներին տեղի ունեցած տրանսպորտի, նավթային և նավաշինական ձեռնարկությունների բանվորների և ծառայողների գործադուլները, զանգվածային ելույթներն ու ցույցերը, հակաֆեոդալական շարժումները: Պայքարին ավելի կազմակերպված բնույթ տալու նպատակով լրագրող ալ–Բաքիրի նախաձեռնությամբ ստեղծվեց Բարձրագույն գործադիր կոմիտե, որը հետագայում վերանվանվեց Ազգային միասնության կոմիտեի: Դա հասարակական կազմակերպություն էր, որի մեջ համախմբվել էին Բահրեյնի հասարակության ժողովրդավարական և հայրենասիրական ուժերի ներկայացուցիչները: 1954–1955 թթ. այդ կոմիտեն մշակեց և իշխանություններին ներկայացրեց Բահրեյնի աշխատավորական և ժողովրդավարական ուժերի հիմնական պահանջները, որոնք հանգում էին հետևյալին. մտցնել աշխատանքային օրենսդրություն, թույլատրել աշխատավորներին կազմակերպելու իրենց արհմիությունները, անցկացնել ընդհանուր ընտրություններ, մշակել քաղաքացիական և քրեական օրենսգիրք, արդարադատության համակարգում բարենորոգումներ կատարել՝ դատավարությունը հանձնարարելով անկախ դատավորներին, կրթական և առողջապահական համակարգը հանձնել ժողովրդական կոմիտեների տնօրինությանը և այլն: Կարևոր պահանջներից էր նաև արգելել օտարերկրյա ուժերի միջամտությունը Բահրեյնի ներքին գործերին:

Երբ Բահրեյնի իշխանությունները հրաժարվեցին քննարկել այդ հարցերը, Ազգային միասնության կոմիտեի կոչով սկսվեց քաղաքացիա-

կան անհնազանդություն: Բահրեյնը կրկին գտնվում էր զանգվածային ելույթների նախօրյակին:

Ստեղծված պայմաններում էմիր Սալմանը հարկադրված էր բանակցություններ սկսել Ազգային միասնության կոմիտեի ղեկավարության հետ և քննարկել նրա պահանջները: Բանակցությունները տևեցին մինչև 1955 թ. կեսերը, էմիրը մի շարք հարցերում զիջում կատարեց և հայտարարեց, որ պատրաստ է բավարարել այնպիսի պահանջներ, ինչպես համայնքների խորհուրդների ընտրությունների անցկացումը, բարենորոգումներ արդարադատության բնագավառում, աշխատանքային օրենսդրության մշակում, կրթության և առողջապահության հարցերով կոմիտեների ստեղծում: Կոմիտեի ներկայացրած մյուս պահանջները էմիրը կտրուկ կերպով հրաժարվեց բավարարել:

Երկրում լարվածությունը շարունակվում էր, և կոմիտեն պնդում էր իր բոլոր պահանջների բավարարման վրա:

1956 թ. Բահրեյնում տեղի ունեցավ առաջին ապստամբությունն այդ երկրի նորագույն պատմության մեջ, որը կապված էր Եգիպտոսի պրեզիդենտ Նասերի կողմից Սուեզի ջրանցքի ազգայնացման և Եգիպտոսի դեմ անգլո–ֆրանս–իսրայելյան ագրեսիայի հետ: Բահրեյնի ժողովուրդը, ինչպես արաբական մյուս բոլոր երկրների ժողովուրդները, ոտքի ելավ՝ ի պաշտպանություն Եգիպտոսի և նրա իրավունքների: Ի նշան բողոքի՝ Բահրեյնում կանգ առան բոլոր գործարանները, տրանսպորտը, փակվեցին ձեռնարկությունները, դպրոցները, շուկաները և խանութները, արհեստանոցները: Երկիրը համակվեց զանգվածային ցույցերով, որոնք տեղի էին ունենում ոչ միայն քաղաքներում, այլև գյուղերում: Ցուցարարները հարձակվում էին անգլիացիներին պատկանող ձեռնարկությունների, տրանսպորտային ընկերություններին պատկանող գրասենյակների ու ֆիրմաների վրա, հրկիզում Բահրեյնում բրիտանական քաղաքական վարչության շենքերը: Բրիտանական իշխանությունների գործողությունները անդամալուծելու նպատակով ապստամբները շրջափակեցին Մանամահը Մուհարակի հետ միացնող ամբարտակը, տարածաշրջանի ամենախոշոր և առաջնակարգ օդանավակայանը, որի պատճառով անգլիական ինքնաթիռները չէին կարողանում վայրէջք կատարել այնտեղ և հարկադրված էին օգտվել Ավալիի ոչ մեծ օդանավակայանից, որը պատկանում էր ամերիկյան ԲԱՊԿՕ–ին: Իսկ այդ ընկերության աշխատակիցները հրաժարվում էին սպասարկել անգլիական և ֆրանսիական ինքնաթիռները, որոնք մասնակցում էին Եգիպտոսի դեմ ուղղված ագրեսիային:

Կղզում գտնվող և խուճապի մատնված անգլիացիները և նրանց ընտանիքի անդամները հապշտապ փախչում էին Բահրեյնից, իսկ Մանամահում և Մուհարակում գտնվող ամերիկացիները, հեռանալով այդ քաղաքներից, կենտրոնացան Ավալիում, որը նրանց ավելի ապահով էր թվում:

Ապստամբների լայնատարած և վճռական գործողությունները խուճապի էին մատնել ոչ միայն կղզում գտնվող անգլիացիներին ու ամերիկացիներին, այլև արքունիքին ու տեղական իշխանություններին:

Ակնհայտ էր, որ սովորական և նախկինում բազմիցս գործադրված մեթոդներով ու միջոցներով հնարավոր չէր ճնշել ապստամբությունը, և անգլիացիները 1956 թ. նոյեմբերին լրացուցիչ ռազմական ուժեր բերեցին Բահրեյն, իսկ էմիրը երկրում մտցրեց արտակարգ դրություն: Փակվեցին թերթերը, արգելվեց Ազգային միասնության կոմիտեն, որը զգալի դերակատարում ուներ ապստամբության գործում, իսկ նրա ղեկավարները ձերբակալվեցին: Ապստամբության շատ մասնակիցներ և ղեկավարներ, խուսափելով ձերբակալություններից, հարկադրված էին հեռանալ Բահրեյնից և ապաստան գտնել այլ երկրներում:

Թեև ապստամբությունը պարտություն կրեց, բայց այն անհետևանք չանցավ: Անգլիական և տեղական բահրեյնյան իշխանությունները հարկադրված էին հաշվի նստել կատարված իրողության հետ և դիմել որոշ զիջումների: Դրանց մեջ արժանի է հիշատակման առաջին հերթին բրիտանական քաղաքական վարչության ղեկավար, բահրեյնցիների համար այնքան ատելի Բելգրայվի հրաժարականը, որը բազմիցս պահանջել էին նրանք: Բելգրայվի հետ իրենց պաշտոններից ազատվեցին և Բահրեյնից հեռացան նաև բրիտանական քաղաքական վարչության մի քանի այլ պաշտոնյաներ:

Ինչ վերաբերում է Բահրեյնի իշխանությունների զիջումներին, ապա էմիր Սալմանը համաձայնվեց վերջապես իրագործել որոշ բարեփոխումներ, որոնք նա վաղուց էր խոստացել, բայց զանազան պատրվակներով ձգձգում էր: Նրա հրամանով վերջապես հիմնվեցին քաղաքացիական դատարաններ, որոնք կազմում էին արդարադատության բնագավառում բարեփոխումների իրականացման ամենակարևոր պահանջներից մեկը: Ստեղծվեց այսպես կոչված Բարձրագույն վարչական խորհուրդ, որի պարտականությունների մեջ էր մտնում քաղաքների և գյուղերի տեղական մարմինների կառավարումը: Այնուհետև, որոշ ժամանակ անց՝ 1958 թ., ընդունվեց Բահրեյնի աշխատանքային օրենսդրությունը, որն առաջինն էր այդ երկրի պատմության մեջ, տրվեցին արի-

միություններ կազմակերպելու իրավունքներ, օրենսդրորեն սահմանվեցին վարձու աշխատողների և գործատուների իրավունքներն ու պարտականությունները:

Այս ընթացքում տեղի ունեցավ նշանակալի իրադարձություն: Պայքարի թեժ պահին՝ 1956 թ., կազմավորվեց Բահրեյնի ազգային ազատագրության ճակատը՝ Ջաբհա աթ-թահարուրի ալ-կաումի (ԲԱԱճ), որը ստանձնեց Բահրեյնի ազատագրական պայքարի ղեկավարությունը: Նա կարևոր դեր խաղաց Բահրեյնի ազատագրական և հայրենասիրական ուժերի պայքարին կազմակերպվածություն և նպատակասլացություն հաղորդելու գործում: 1964 թ. ԲԱԱճ-ը միացավ Արաբական թերակղզու ժողովրդավարական ուժերի միությանը, որի մեջ միավորվել էին նաև Սաուդյան Արաբիայի, Ադենի և Օմանի համապատասխան կազմակերպությունները:

Ամբողջ 1960-ական թվականներին չէին դադարում հակաբրիտանական ելույթները, որոնք իրենց մի ծայրով ուղղված էին նաև Բահրեյնի իշխանությունների դեմ: Այդ ելույթների թափի մասին է խոսում թեկուզ հենց այն հանգամանքը, որ Բահրեյնում կենտրոնացվել էին 22 հազ. անգլիական զինվորներ՝ պատրաստ զենքի ուժով «կարգ ու կանոն» հաստատել երկրում: Բայց դա չէր վախեցնում Բահրեյնի հայրենասերներին, որոնք 1961 թ. վերջերից սկսեցին հարձակումներ գործել անգլիական սպաների վրա և հրկիզել անգլիական ռազմական ճամբարները: Երկրում թռուցիկներ տարածվեցին, որոնցով կոչ էր արվում ապստամբել բրիտանական տիրապետության դեմ և հայտնել քաղաքացիական անհնազանդություն Բահրեյնի իշխանություններին:

1961 թ. մահացավ էմիր Սալմանը, և գահ բարձրացավ նրա որդին՝ Իսա իբն Սալման ալ-Խալիֆան: Դա էական փոփոխություն չառաջացրեց Բահրեյնի ներքին կյանքում և Մեծ Բրիտանիայի հետ նրա հարաբերություններում:

Ազատագրական պայքարի տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ ԲԱԱճ-ի կողմից գործողությունների խարտիայի մշակումը և ընդունումը 1964 թ. հունվարին: Այդ ծրագրային փաստաթղթի կարևոր պահանջներն էին՝ Բահրեյնի ազատություն և անկախություն, ժողովրդավարական բարենորոգումների կիրառում, անգլիական զորքերի և խորհրդականների արտաքսում, աշխատավորների կենսական պահանջների բավարարում և այլն: Այս փաստաթուղթը, որը հավանության

արժանացավ աշխատավորական զանգվածների մեծամասնության կողմից, դարձավ գործողությունների ծրագիր հետագա տարիների համար:

Իսկ հետագա տարիները եղան քաղաքական ակտիվության և բուռն պայքարի տարիներ: 1965 թ. ապրիլ–մայիս ամիսներին Բահրեյնում սկսվեց համընդհանուր գործադուլ: Իշխանությունների բոլոր կոչերը՝ ուղղված գործադուլավորներին՝ վերսկսելու աշխատանքը, ոչ մի արձագանք չգտան: Դեռ ավելին՝ կառավարության քաղաքականությունից դժգոհ ժողովուրդը շրջափակեց էմիրի պալատը, և պետության ղեկավարը հայտնվեց պատանդի վիճակում: Գործադուլը դաժանորեն ճնշվեց անգլիական զինվորների ուղղակի մասնակցությամբ, որի ժամանակ զոհվեցին մի քանի տասնյակ գործադուլավորներ, և բանտ նետվեց մոտ 3 հազ. մարդ:

1965 թ. Մեծ Բրիտանիան որոշեց Ադենում գտնվող իր ռազմական բազան տեղափոխել Բահրեյն, և 1966 թ. մայիսին նա համաձայնագիր ստորագրեց Բահրեյնի կառավարության հետ դրա համար կղզում նոր հողատարածք հատկացնելու մասին: Դրա դիմաց Անգլիան Բահրեյնի էմիրին պարտավորվում էր յուրաքանչյուր տարի վճարել 1,5 մլն ֆունտ ստեռլինգ: Անգլիացիների և Բահրեյնի իշխանությունների այդ նոր քայլը նոր հուզումների առիթ հանդիսացավ, որին ի պատասխան՝ անգլիացիները տեղական իշխանությունների հետ միասին կրկին դիմեցին բռնությունների: Այդ մասին հանգամանորեն խոսվում էր ԲԱԱԵ–ի 1966 թ. հուլիսի 4–ին միջազգային հանրությանն ուղղված դիմումի մեջ, որտեղ նշվում էր այն դաժան արարքների մասին, որ կիրառվում էին բահրեյնցիների նկատմամբ, և օգնություն խնդրվում աշխարհի առաջադեմ ուժերից:

Այնուհանդերձ, ակնհայտ էր, որ Մեծ Բրիտանիայի համար ավելի ու ավելի դժվար էր դառնում պահպանել իր դիրքերը Պարսից ծոցի արաբական շեյխություններում, այդ թվում և Բահրեյնում, և նա հայտարարեց իր մտադրության մասին՝ հեռանալ այդ տարածաշրջանից, որը նա իրականացրեց 1968 թ.:

Դա օրինաչափ արդյունք էր տասնամյակների այն համառ պայքարի, որ մղում էին Բահրեյնի, Ադենի, Քուվեյթի, Կատարի, Օմանի ու Մասկատի և Պայմանագրային Օմանի ազգային–հայրենասիրական ուժերը՝ հանուն իրենց ազգային անկախության:

Անգլիական ուժերի լրիվ հեռանալուց հետո Բահրեյնը չեղյալ հայտարարեց պրոտեկտորատի վերաբերյալ Մեծ Բրիտանիայի հետ կնքված բոլոր պայմանագրերն ու համաձայնագրերը:

1971 թ. օգոստոսի 14–ին Բահրեյնը պաշտոնապես հռչակվեց որպես անկախ և սուվերեն պետություն: Օգոստոսի 15–ը համարվում է անկախության օր և ամեն տարի նշվում է որպես ազգային տոն:

Այսպիսով՝ ավարտվեց ուղիղ հարյուր տարի տևած Բահրեյնի պատմության բրիտանական պրոտեկտորատի շրջանը և բացվեց նրա բազմադարյան պատմության նոր էջը՝ անկախության դարաշրջանը:

II. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱՀՐԵՅՆՈՒՄ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Անկախություն նվաճած Բահրեյնի առջև կանգնեցին նոր խնդիրներ, որոնց մեջ առաջնակարգ նշանակություն ստացան պետական շինարարության, տնտեսական զարգացման ուղղությունների որոշման, սոցիալական ոլորտի, այդ թվում և կրթության ու առողջապահության, արտաքին ինքնուրույն քաղաքականության հարցերը: Եվ Բահրեյնի կառավարող վերնախավը ձեռնամուխ եղավ դրանց լուծմանը:

1. Պետական շինարարությունը և փոփոխություններ վարչակառավարական համակարգում: Բահրեյնի վերածումը թագավորության

Բահրեյնի ղեկավարները տարբեր ժամանակներում կրել են տարբեր տիտղոսներ: Նրանք կոչվել են հաքիմներ, էմիրներ, իսկ այժմ՝ թագավոր: Հայտնի է, որ պետության ղեկավարի տիտղոսի հարցը բնավ էլ երկրորդական և ձևական հարց չէ: Այն կրում է որոշակի իրավական և քաղաքական բովանդակություն և արտացոլում է տվյալ պետության կարգավիճակն ու զարգացման մակարդակը տվյալ պատմական դարաշրջանում: Այդ առումով Բահրեյնը նորագույն շրջանում անցել է երեք փուլ: Նրա երկու կառավարողներ՝ Սալման իբն Համադ ալ–Խալիֆան և Իսա իբն Սալման ալ–Խալիֆան կոչվել են Բահրեյնի հաքիմներ՝ կառավարողներ: Առաջինը եղել է Բահրեյնի հաքիմ 1942–1961 թթ., իսկ երկրորդը՝ 1961–1971 թթ:

Իսա իբն Սալման ալ–Խալիֆայի կառավարման ժամանակ՝ 1971 թ. օգոստոսի 14–ին, Բահրեյնը պաշտոնապես հռչակվեց անկախ պետություն: Դրանից երկու օր անց՝ 1971 թ. օգոստոսի 16–ին, նա ընդունեց էմիրի տիտղոս, որը և Բահրեյնի պետության ղեկավարի անվանակոչության հարցում հանդիսանում է երկրորդ փուլը: Նա կառավարեց մինչև 1999 թ. մարտի 6–ը: Նրա մահից հետո գահն անցավ նրա որդուն՝ Համադ իբն Իսա ալ–Խալիֆային, որը նույնպես կրում էր էմիրի տիտղոսը: Նա՝ որպես այդ տիտղոսակիր, Բահրեյնը կառավարեց 1999 թ. մարտի 6–ից մինչև 2002 թ. փետրվարի 14–ը:

2002 թ. փետրվարի 14–ին Համադ իբն Իսա ալ–Խալիֆան իրեն հայտարարեց Բահրեյնի թագավոր: Եվ այդ օրվանից մինչև օրս Համադ իբն Իսան երկիրը կառավարում է որպես թագավոր, որը նշանակում է անհամեմատ ավելի բարձր կարգավիճակ: Դրանով Բահրեյնը պետության գլխավորի անվանակոչության հարցում թևակոխեց երրորդ փուլը:

Այսպիսով՝ Համադ իբն Իսա ալ–Խալիֆան հանդիսանում է Բահրեյնի առաջին թագավորը:

Հարկ է նշել, որ չնայած այս տարբերակումներին՝ բահրեյնցիները նույնիսկ այն ժամանակ, երբ երկրի ղեկավարը կրում էր հաքիմ տիտղոսը, շատ հաճախ, հատկապես առօրյա խոսակցությունների ժամանակ, գործածում էին նաև էմիր տիտղոսը: Էլ չենք խոսում այն մասին, որ պետության ղեկավարին կոչում են նաև շեյխ՝ տուրք տալով արաբական ավանդական, ցեղային կառուցվածք ունեցող հասարակություններում ընդունված և նրանց բնորոշ սովորույթներին: Իսկ ալ–Խալիֆաները պատկանում են սուննի Բանի Ուտբահ ցեղին, որը կարողացել էր դեռևս 1783 թ. իր իշխանությունը հաստատել Բահրեյնում և փոքր ընդմիջումներով ահա արդեն ավելի քան 220 տարի կառավարում է երկիրը: Ալ—Խալիֆա դինաստիան արաբական միապետություններում կառավարող դինաստիաների մեջ ամենաերկարակյացներից մեկն է:

Պրոտեկտորատի վերացումից և անկախության հռչակումից հետո փոփոխություն տեղի ունեցավ նաև պետության անվանակոչման մեջ: Եթե նախկինում այն կոչվում էր էմիրություն կամ շեյխություն, ապա 2002 թ., Համադ իբն Իսա ալ–Խալիֆայի թագավոր հռչակվելուց զուգահեռ, Բահրեյնը պաշտոնապես կոչվեց **Բահրեյնի թագավորություն:**

Անկախության նվաճումից և թագավորություն հռչակվելուց հետո նս ալ–Խալիֆաները մնացին Բահրեյնի կառավարող դինաստիա:

Բահրեյնը ժառանգականության սկզբունքի վրա խարսխված միապետություն է, որտեղ թագը հորից անցնում է անմիջապես ավագ որդուն: Դրանով այն տարբերվում է արաբական այլ թագավորություններից, ինչպես, օրինակ՝ Սաուդյան Արաբիայից, որտեղ գահին կարող է նստել ոչ անպայման միապետի ավագ զավակը, այլ կառավարող դինաստիային պատկանող այլ անդամներ:

Բահրեյնում կառավարման հիմնական լծակները կենտրոնացված են ալ–Խալիֆա ընտանիքի ձեռքում: Թագաժառանգը թագավորի որդին՝ շեյխ Սալման իբն Համադ ալ–Խալիֆան է, որը միաժամանակ Բահրեյնի ռազմական ուժերի հրամանատարն է: Վարչապետը, արտաքին գործերի և ֆինանսների նախարարները նույնպես պարտադիր պետք է լինեն ալ–Խալիֆա դինաստիայից: Վարչապետի պաշտոնն այժմ զբաղեցնում է շեյխ Խալիֆա իբն Սալման ալ–Խալիֆան, իսկ արտաքին գործերի նախարարինը՝ շեյխ Մուհամմադ իբն Մուբարակ ալ–Խալիֆան:

Թագավորն օժտված է ամենալայն լիազորություններով: Նրա ձեռքում է կենտրոնացված գործադիր իշխանությունը: Նա է նշանակում վարչապետին և կառավարության անդամներին: Թագավորն իրականացնում է նաև օրենսդիր իշխանություն:

Անկախություն ձեռք բերելուց երկու տարի անց՝ 1973 թ. մայիսին, էմիր Իսա իբն Սալմանը գործողության մեջ մտցրեց Բահրեյնի սահմանադրությունը: Նույն տարվա դեկտեմբերի 7–ին տեղի ունեցան ընտրություններ, և գումարվեց Ազգային ժողովի առաջին նիստը: Բահրեյնի պառլամենտը տրամադրված էր վճռականությամբ՝ իրականացնել իր օրենսդիր իրավասությունները և կիրառել բարենորոգումներ երկրում: Սահմանադրության որոշ հոդվածներ սահմանափակում էին էմիրի իշխանությունը: Եվ այդ հողի վրա առաջացան լուրջ տարաձայնություններ պառլամենտի և էմիրի միջև: Վերջինս 1975 թ. օգոստոսի 26–ին ցրեց Ազգային ժողովը, որը, էմիրի կարծիքով, չափազանց արմատական դիրքորոշում էր որդեգրել և խանգարում էր գործադիր իշխանությանը՝ իր գործառույթներն իրականացնել:

Դա առաջ բերեց բահրեյնցիների, հատկապես շիաների խիստ դժգոհությունը: Տեղի ունեցան ելույթներ և ցույցեր, որոնց մասնակիցները պահանջում էին Բահրեյնում ներդնել կառավարման ժողովրդավարական մեթոդներ: 1992 թ. ստեղծվեց Մաջլիս աշ–Շուրա՝ Կոնսուլտատիվ խորհուրդ, որը բաղկացած էր 30 անդամներից: Նրանք հիմանականում

իրավաբաններ, դատավորներ, գործարարներ էին, ինչպես նաև լուծարված նախկին Ազգային ժողովի անդամներ: Նա չէր հանդիսանում ընտրողի մարմին և օժտված էր միայն խորհրդատվական իրավունքներով: Սակայն վերջին խոսքը պատկանում էր էմիրին, որը այդ մարմնի խորհուրդները կարող էր ընդունել կամ մերժել:

Դա չբավարարեց բահրեյնցիներին, և 1994 թ. նրանք պահանջագիր ներկայացրին էմիրին՝ տրամադրել լայն դեմոկրատական ազատություններ, ինչպես նաև իրենց տնտեսական վիճակի բարելավում: Դրա վրա հատկապես պնդում էին կղզու բնակչության մեծամասնությունը կազմող շիաները: Սակայն էմիրը մերժեց ժողովրդի պահանջները և 1994 թ. տեղի ունեցան զանգվածային ելույթներ, որոնք կրկնվեցին ավելի մեծ թափով 1995 թ.: 1996 թ. բահրեյնցիները դիմեցին ավելի վճռական քայլերի՝ ռումբեր պայթեցվեցին «Դիպլոմատ» և «Մերիդիեն» հյուրանոցներում: Դրանք խիստ վտանգավոր քայլեր էին, եթե նկատի առնենք, որ Բահրեյնի տնտեսության մեջ արդեն կարևոր տեղ էին գրավում բանկային համակարգը և զբոսաշրջիկությունը, իսկ դրանց զարգացման համար կարևոր են երկրի ներքին կայունությունը, ապահովությունն ու անվտանգությունը: Դժգոհությունը և հուզումները շարունակվեցին նաև հաջորդ տարի: Այս անգամ ասպարեզում հայտնվեցին գործազուրկները, որոնք դժգոհ էին, որ Բահրեյնի գործարարները աշխատանքի ընդունելիս նախապատվությունը տալիս էին Ասիայից եկած բանվորներին:

1999 թ. մահացավ էմիր Իսա իբն Սալմանը, որը երկիրը կառավարում էր 38 տարի: Նրան, ինչպես նշվեց, հաջորդեց որդին՝ Համադ իբն Իսա ալ–Խալիֆան:

Համադ իբն Իսան ստացել էր լավ կրթություն: Նա դպրոցն ավարտել էր Քեմբրիջում, այնուհետև սովորել Անգլիայի կադետների սպայական դպրոցում և ԱՄՆ–ի բանակի շտաբի կոլեջում: Վերադառնալով հայրենիք՝ նա 1968 թ. կազմակերպում է Բահրեյնի զինված ուժերը և դառնում նրա գլխավոր հրամանատարը, իսկ 1971–1988 թթ. զբաղեցրել է նաև պաշտպանության նախարարի պաշտոնը: 1964 թվականից նա Բահրեյնի թագաժառանգն էր մինչև իր հոր մահը, որը տեղի ունեցավ 1999 թ.:

Համադ իբն Իսան սթափ պետական գործիչ է. մի կարևոր հատկանիշ, որը նա դրսևորեց էմիրի գահին նստելու առաջին օրվանից: Նա հասկանում է, որ Բահրեյնը վերափոխումների կարիք ունի և նախկին

քաղաքականության շարունակությունը նոր ու ավելի մեծ բարդություններ կարող է ստեղծել երկրի և նրա կառավարող վարչակարգի համար:

2000 թ. նրա հրամանով ստեղծվեց Ազգային բարձրագույն կոմիտե, որին հանձնարարվեց նախապատրաստել առաջարկությունների փաթեթ երկրի քաղաքական համակարգի մեջ փոփոխություններ մտցնելու վերաբերյալ՝ այն ավելի դեմոկրատական դարձնելու առումով: Կոմիտեն կատարեց իր վրա դրված պարտականությունները և մշակեց ծրագրային մի փաստաթուղթ, որը ստացավ խարտիա անունը: Նա 2000 թ. վերջերին հավանության արժանացավ էմիր Համադ իբն Իսա ալ–Խալիֆայի կողմից: Դա փաստորեն նոր սահմանադրությունն էր, որը դրվեց հանրաքվեի: Հանրաքվեն կայացավ 2001 թ. փետրվարի 13–14–ին: Նրա բոլոր մասնակիցները, այդ թվում և ընդդիմությունը, հավանություն տվեցին խարտիային և նրա առաջարկած փոփոխություններին:

Վերանայման ենթարկված սահմանադրությամբ Բահրեյնը դարձավ սահմանադրական միապետություն, հաստատվեց արդարադատության անկախ համակարգ, որոշվեց անցկացնել պառլամենտական ընտրություններ և այլն:

Նախկին մեկպալատանի Ազգային ժողովի փոխարեն ստեղծվեց երկպալատանի պառլամենտ, որը կազմված էր Մաջլիս աշ–Շուրայից՝ Կոնսուլտատիվ խորհրդից, և Դեպուտատների պալատից: Երկու պալատներն էլ կազմված են 40–ական անդամներից, միայն այն տարբերությամբ, որ Շուրայի բոլոր 40 անդամներին նշանակում է թագավորը, իսկ Դեպուտատների պալատի բոլոր 40 անդամներն ընտրովի են:

2002 թ. փետրվարին Համադ իբն Իսա ալ–Խալիֆան իրեն հայտարարեց թագավոր և իր այդ նոր կարգավիճակով նշանակեց պառլամենտական ընտրություններ:

Դեպուտատների պալատի ընտրությունները տեղի ունեցան 2002 թ. հոկտեմբերի 31–ին: Նրա 40 անդամներից 21–ը անկախականներ էին, 9–ը՝ սուննի իսլամականներ, իսկ մնացած 10–ը ներկայացնում էին Բահրեյնի սոցիալական տարբեր խավերի:

Նորամուծություններից մեկն էլ այն էր, որ ընտրական իրավունք տրվեց կանանց, որոնք մասնակցեցին ընտրություններին: Բահրեյնն առաջինն էր Ծոցի երկրներից, որ նման իրավունքներ տվեց կանանց: Իսկ ինչ վերաբերում է քաղաքական կուսակցություններին, ապա նրանց գործունեությունը Բահրեյնում արգելված է, թեև քաղաքական կողմնորոշում ունեցող միությունների գործունեությունը թույլատրվում

է: Պետք է նշել, որ երկրում ընդհատակում գործում են իսլամական ֆունդամենտալիստական և ծախակողմյան խմբեր, որոնք երբեմն դառնում են բավականին ակտիվ:

Նորընտիր պառլամենտի առաջին նիստը գումարվեց 2002 թ. դեկտեմբերի 25–ին:

Այս փոփոխություններն միջազգային հանրության կողմից ընկալվեցին որպես լուրջ քայլեր երկրի Բահրեյնի դեմոկրատացման ճանապարհին:

Բահրեյնը, չնայած նրա փոքր պետություն լինելուն, որոշակի գործոն է Պարսից ծոցի շրջանում միջազգային հարաբերությունների ձևավորման մեջ, յուրահատուկ դեր է խաղում ուժերի հավասարակշռություն հաստատելու և պահպանելու գործում: Նա սերտ քաղաքական և տնտեսական հարաբերություններ է հաստատել հարևան արաբական երկրների հետ, մասնավորապես Սաուդյան Արաբիայի հետ: Երկար ժամանակ նա խնդիրներ ուներ միայն Կատարի հետ՝ Հավար կղզու հարցում: Հարցը քննարկվեց Միջազգային դատարանում, որի վճիռը հօգուտ Բահրեյնի էր, և Հավար կղզին այսօր կազմում է Բահրյենի անբաժանելի մասը: Բահրեյնի հարաբերությունները կարգավորվեցին նաև Իրանի հետ, մանավանդ այն բանից հետո, երբ Իրանը պաշտոնապես հայտարարեց, որը ինքը Բահրեյնն այլևս չի համարում իրեն պատկանող արշիպելագ:

Բահրեյնը բարեկամական հարաբերություններ է պահպանում իր նախկին պրոտեկտոր Մեծ Բրիտանիայի հետ և սերտ հարաբերություններ հաստատել ԱՄՆ–ի հետ: Նա ծառայում է որպես խարսխակայան ԱՄՆ–ի 5–րդ նավատորմի համար: Երբ 1991 թ. Իրաքը ներխուժեց Քուվեյթ և ձևավորվեց հակաիրաքյան միջազգային կոալիցիա՝ ԱՄՆ–ի գլխավորությամբ, Բահրեյնը դատապարտեց Իրաքի ագրեսիան եղբայրական Քուվեյթի նկատմամբ, պահանջեց Իրաքից իր զորքերն անհապաղ դուրս բերել Քուվեյթից, վերականգնել նրա սուվերենությունը և միացավ հակաիրաքյան կոալիցիային: Վերջինիս ռազմական ուժերը օգտագործեցին Բահրեյնի տարածքը Իրաքի դեմ սկսված կարճատև պատերազմի ընթացքում:

Բահրեյնն անդամ է և ակտիվորեն մասնակցում է արաբական և տարածաշրջանային զանազան միջազգային կազմակերպությունների աշխատանքներին: Նա Արաբական պետությունների լիգայի, Ծոցի համագործակցության խորհրդի, Իսլամական կոնֆերանս կազմակերպու-

թյան, Նավթ արտահանող արաբական երկրների կազմակերպության՝ ՕԱՊԷԿ–ի, ՅՈՒՆԷՍԿՕ–ի և այլ կազմակերպությունների անդամ է:

Բահրեյնն առաջին արաբական երկրներից մեկն էր, որ ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը և դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին երկու երկրների միջև: Նրանց հարաբերություններն իրենց բնույթով բարեկամական են: Դրա արտահայտությունը հանդիսացավ 2005 թ. գարնանը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվիրակության պաշտոնական այցը Բահրեյն Ազգային ժողովի նախագահի գլխավորությամբ: Պատվիրակությունը հանդիպեց Բահրեյնի թագավոր Համադ իբն Իսա ալ–Խալիֆայի և երկրի այլ բարձրաստիճան ղեկավարների հետ, որի ընթացքում կողմերը հավաստեցին իրենց ցանկությունը՝ զարգացնել հարաբերությունները երկու երկրների միջև տնտեսական, ֆինանսական, մշակութային և գիտական ոլորտներում:

2. Տնտեսական զարգացումը: Արդիականացման և դիվերսիֆիկացիայի քաղաքականությունը

Բահրեյնը պրոտեկտորատի շրջանից ժառանգեց ոչ զարգացած տնտեսություն: Ուստի անկախության շրջանում նրա առջև ծառացան մի շարք բարդ խնդիրներ՝ կապված երկու կարևոր հանգամանքների հետ:

Առաջինը՝ նավթի արդյունահանման և նավթարդյունաբերության խնդիրն էր: **Նավթարդյունահանումը,** ինչպես նշվել է, երկար ժամանակ հանդիսացել է Բահրեյնի տնտեսության գլխավոր ճյուղը: Այսօր էլ նա իր նշանակությունը չի կորցրել: Սակայն հարցն այն է, որ Բահրեյնի նավթի պաշարները մեծ չեն, և նրանք մոտենում են վերջնագծին, այսինքն՝ նրա պաշարները, որոնց արդյունահանումը սկսվել է 1932 թ., սպառվում են:

Երկրորդ՝ նման պայմաններում անկախություն ձեռք բերած Բահրեյնի իշխանությունները 80–ական թվականներից որդեգրեցին նոր քաղաքականություն՝ **տնտեսության դիվերսիֆիկացիայի քաղաքականություն,** որը, հաշվի առնելով նավթարդյունահանման բնագավառում ստեղծված անբարենպաստ իրադրությունը, նպատակաուղղված է տնտեսության արդիականացմանը և նոր ճյուղերի ձևավորմանն ու զարգացմանը:

Նավթի պաշարների սահմանափակ լինելը Բահրեյնին դեռևս պրոտեկտորատի շրջանում հարկադրել էր օգտագործել նաև Սաուդյան

Արաբիայի նավթը՝ այդ նպատակով կառուցվել էր նավթամուղ: Բահրեյնում շեշտը դրվեց նավթավերամշակման արդյունաբերությունը զարգացնելու վրա: Այսօր Բահրեյնն օրական արդյունահանում է 50 հազ. բարել նավթ և Սաուդյան Արաբիայից ներմուծում օրեկան 210 հազ. բարել: Դա բավարար է, որպեսզի Բահրեյնի նավթավերամշակման գործարանն աշխատի լրիվ ծանրաբեռնվածությամբ: Նավթի մշակումից և արտահանումից ստացվող եկամուտները, մանավանդ այն շրջանում, երբ նավթի համաշխարհային գները շեշտակի բարձրանում են, մեծ եկամուտներ են բերում Բահրեյնին, որոնք օգտագործվում են տնտեսության դիվերսիֆիկացիայի՝ արդյունաբերության նոր ճյուղերի զարգացման համար, ինչպես նաև կրթության և առողջապահության ոլորտում:

Զուգահեռաբար հիմնվեցին նավթարդյունաբերության հետ առնչություն չունեցող գործարաններ: Դրանց մեջ առաջինը պետք է նշել ալյումինի գործարանի հիմնումը, որն աշխատում է Ավստրալիայից բերվող հումքի վրա: Այստեղ ձուլվում է ալյումին, արտադրվում ալյումինի փոշի և արտադրանքի այլ տեսակներ, որոնք ոչ միայն ներքին սպառման, այլև արտահանման համար են: Փաստորեն, ստեղծվել է Բահրեյնի արդյունաբերության ալյումինի սեկտոր, որը վերահսկում և տնօրինում է «Ալյումինում Բահրեյն» (ԱԼԲԱ) ընկերությունը: Նրա բաժնետոմսերի 77%–ը պատկանում է Բահրեյնի կառավարությանը, իսկ մնացածը՝ «Սաուդիան Արաբիա փաբլիկ ինվեստմենտ ֆանդին» և Գերմանիայի «Բրետոնս ինվեստմենտին»:

Բահրեյնի արդյունաբերական մյուս ձեռնարկություններից, որոնք կառուցվել են անկախության շրջանում, պետք է նշել անվադողերի երկու ֆաբրիկաները, երկաթյա իրերի, խողովակների, հորատող սարքավորումների, պլաստմասսայի, քիմիական նյութերի, հեղուկ թթվածնի, պարարտանյութերի արտադրությունը, գերնավթատարների վերանորոգման և փոքր նավերի արտադրության գործարանները: Երկրում գործում են թեթև արդյունաբերության մի քանի տասնյակ գործարաններ, արհեստանոցներ և այլն: Կան նաև գյուղատնտեսական մթերքների վերամշակման գործարաններ:

Այս ամենը միասին կազմում է ժամանակակից Բահրեյնի արդյունաբերական ներուժը:

Տնտեսության բնագավառում անկախությունից հետո վարվող քաղաքականության մեջ տեղի ունեցավ ևս մեկ նշանակալի փոփոխություն: Կառավարությունը որդեգրեց «բահրեյնիզացիայի»՝ «բահրեյնացման»

ծրագիր, որով Բահրեյնում հաստատված և գործող օտարերկրյա ընկերություններին առաջարկվում է իրենց ոլորտում անպայման աշխատանքի մեջ ներգրավել Բահրեյնի քաղաքացիներին՝ սահմանելով համապատասխան քվոտաներ առ այն, թե երբ, որտեղ և որքան բահրեյնցի քաղաքացիներ պետք է աշխատեն: Այս քայլը կազմում է գործազրկության դեմ պայքարի քաղաքականության բաղկացուցիչ մասը: Իսկ գործազրկությունը Բահրեյնում XX դարի վերջում հասնում էր 15%–ի:

Բահրեյնի տնտեսության թույլ օղակը գյուղատնտեսությունն է, որի գլխավոր պատճառներից մեկը բնական անբարենպաստ պայմաններն են: Հողերի մեծ մասը անապատներ են, շատ քիչ են տեղումները, մեծ վնաս են հասցնում փոշու փոթորիկները և այլն: Վարելահողերը կազմում են ընդամենը 2,9%–ը, որից ոռոգվում է ընդամենը 50 քառ. կմ: Գյուղատնտեսության համար պիտանի են միայն օազիսները, որտեղ մշակվում են հատիկավոր կուլտուրաներ՝ ինչպես ցորեն, գարի, եգիպտացորեն, բանջարեղեն, մրգեր՝ արմավենի, պիստակ և այլն: Զբաղվում են նաև անասնապահությամբ և ձկնորսությամբ: Հասկանալի է, որ գյուղատնտեսությունը չի կարող բավարարել բնակչության պահանջները, ուստի սպառվող սննդի մեծ մասը ներկրվում է դրսից:

Անկախության շրջանում տնտեսության կողմնորոշումների մեջ կատարված փոփոխությունների՝ դիվերսիֆիկացիայի, կարևոր ցուցիչներից մեկը նոր բանկային համակարգի ստեղծումն էր: Բահրեյնը վերածվեց բանկային միջազգային կենտրոնի Մերձավոր և Միջին Արևելքում: Դրան նպաստեցին երեք հանգամանք:

Առաջին՝ Լիբանանում 1975–1982 թթ. տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի հետևանքով Բեյրութը դադարեց այդ տարածաշրջանի բանկային կենտրոնը լինելուց:

Երկրորդ՝ 1970–ական թվականներին և հետագա տարիներին նավթի համաշխարհային գների բարձրացման հետևանքով շեշտակի աճեցին դրամական հասույթները, որոնք կիրառման նոր ոլորտ էին փնտրում, և նրանք հոսեցին դեպի բանկային համակարգը:

Երրորդ՝ Բահրեյնում ստեղծվեցին առավել նպաստավոր իրավական–օրենսդրական, պետական–քաղաքական և տնտեսական պայմաններ բանկային գործունեության համար՝ լիբերալ օրենսդրություն, զանազան արտոնություններ, այդ թվում՝ ստացված շահույթների ազատ արտահանում, հուսալի երաշխիքներ բանկային գործունեության ծավալման համար, անվտանգության և ապահովագրության վե-

ին աստիճանի հուսալի համակարգի ստեղծում, որոնք առաջնային նշանակություն ունեն բանկային համակարգի զարգացման գործում: Այդ ամենին պետք է ավելացնել Բահրեյնում միջազգային հեռահաղորդման, հեռակոմունիկացիաների և կապի զարգացած ցանցի ստեղծումը՝ արբանյակային կապի ամենալայն ներդրումով:

Եվ կապիտալը, առաջին հերթին արաբական երկրներից, հոսեց Բահրեյն, որտեղ մեկը մյուսի հետևից բացվում էին նոր բանկեր: Մասնագետների հաշվարկներով՝ 1990–ական թվականների վերջերին Բահրեյնում կային այնքան բանկեր և դրանց հետ կապված ֆինանսական կազմակերպություններ, որքան կային բոլոր արաբական երկրներում միասին վերցրած:

Ֆինանսաբանկային բարձր և զարգացած համակարգի ստեղծումը մեծապես նպաստում է Բահրեյնի տնտեսական զարգացմանը և նոր հեռանկարներ բացում նրա առջև:

Բահրեյնի տնտեսության փոխակերպման ցուցիչներից է, արդյունաբերության և բանկաֆինանսական համակարգի հետ միասին, նաև զբոսաշրջիկության զարգացումը, որը Բահրեյնում, իրոք, վերածվել է ինդուստրիայի: Զբոսաշրջիկներ գալիս են ոչ միայն արաբական երկրներից, այլև Եվրոպայից, Ամերիկայից և Ասիայից: Զբոսաշրջիկությունը գրավիչ դարձնելու նպատակով իշխանությունները դյուրացրել են վիզաների տրամադրումը, կառուցել հարմարավետ հյուրանոցներ, առկա են բարձրորակ ավտոմայրուղիներ և այլ հարմարություններ: Դա Բահրեյնի տնտեսության շահութաբեր ճյուղերից մեկն է:

Եթե բնութագրելու լինենք Բահրեյնի տնտեսությունը, ապա դա տիպաբանորեն պատկանում է խառը՝ պետական և մասնավոր ձեռներեցության տնտեսական համակարգին:

Բահրեյնում, հատկապես անկախության նվաճումից հետո, զգալի ուշադրություն է դարձվում կրթությանը և առողջապահությանը: Բավական է նշել, որ կրթությունը և բուժական սպասարկումը ձրի են: Առաջին դպրոցը Բահրեյնում բացվել է 1919 թ., իսկ այժմ ստեղծվել է զարգացած դպրոցական համակարգ: Դպրոցներում ուսման տևողությունը 11 տարի է: Աշխարհիկ դպրոցների կողքին կան նաև մեդրեսեներ՝ կրոնական դպրոցներ: Գործում են նաև պրոֆեսիոնալ և մանկավարժական ուսումնարաններ: Այս համակարգի զարգացումը գտնվում է կառավարության ուշադրության կենտրոնում՝ դրա հետ կապելով երիտասարդ մասնագետների պատրաստումը և գործազրկության նվազեցումը երի-

տասարդության շարքերում: Գրագիտության տոկոսն այսօր ընդհանուր առմամբ բավականին բարձր է՝ մոտ 90%. արական սեռինը՝ 92%, իսկ իգականինը՝ 85%:

Բահրեյնում կան որոշակի հետաքրքրություն ներկայացնող մզկիթներ, թանգարաններ և մշակույթի այլ կենտրոններ: Մզկիթներից պետք է նշել Մանամահի Ալ–Ֆաթիհ մզկիթը, որը միանգամից կարող է ընդունել 7000 հավատացյալի:

Թանգարաններից իր եզակիությամբ ուշադրության է արժանի Բայթ ալ–Կորանը՝ Կորանի տունը, որ հիմնվել է 1990 թ. և հանդիսանում է թանգարան–հետազոտական կենտրոն: Նա պարունակում է Կորանի մեծաքանակ հավաքածու՝ ձեռագիր և փայտի վրա փորագրված:

Գլուխ հինգերորդ

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵԳԻՊՏՈՍ

ԱԼ–ՋՈՒՄՀՈՒՐԻՅԱ ՄԻՍՐ ԱԼ–ԱՐԱԲԻՅԱ
ՄԻՍՐ

Աշխարհագրական դիրքը — Հյուսիսային Աֆրիկա
Սահմանները — սահմանակից է Իսրայելին, Լիբիային և Սուդանին, հյուսիսից ողողում են Միջերկրական ծովի ջրերը
Տարածքը — 1001450 քառ. կմ
Բնակչությունը — 77505756 մարդ (2005 թ. տվյալներ)
Մայրաքաղաքը — Կահիրե (16 մլն մարդ, 2005 թ.)
Ազգային կազմը — արաբներ, դպտիներ, բերբերներ՝ 99%, հայեր, հույներ, իտալացիներ, ֆրանսիացիներ՝ 1%
Պետական կրոնը — իսլամ՝ սուննիներ, 94%, դպտի և այլ քրիստոնյաներ՝ 6%
Պաշտոնական լեզուն — արաբերեն, խոսակցական են նաև անգլերենը, ֆրանսերենը, հայերենը, հունարենը և այլն
Ազգային դրամը — եգիպտական լիրա (ֆունտ)
Ազգային տոնը — 23 հուլիսի, 1952 թ.՝ հեղափոխության օրը
Պետական կարգը — հանրապետություն
Պետության ղեկավարը — պրեզիդենտ, ընտրվում է վեց տարի ժամանակով
Գործադիր իշխանությունը — պետության ղեկավարը, կառավարությունը, որը նշանակվում է պրեզիդենտի կողմից
Օրենսդիր իշխանությունը — երկպալատանի պառլամենտ՝ կազմված Ազգային ժողովից՝ Մաջլիս ալ–Շաաբ, և Խորհրդատվական Խորհրդից՝ Մաջլիս ալ–Շուրա
Դատական իշխանությունը — Գերագույն սահմանադրական դատարան: Դատական համակարգը հիմնված է անգլիական ընդհանուր իրավունքի, իսլամական օրենքի և նապոլեոնյան կոդեքսի վրա
Քաղաքական կուսակցությունները — Արաբական դեմոկրատական կուսակցություն կամ Նասերականներ, Ազգային դեմոկրատական կուսակցություն, «Նոր Վաֆդ» կուսակցություն, Ազգային առաջա-

դիմական յունիոնիստական խմբավորում, Վաղվա կուսակցություն և այլն

Վարչական բաժանումը — 27 մուհաֆազա՝ նահանգներ

Բնական հարստությունները — նավթ, բնական գազ, երկաթի հանքեր, ֆոսֆատներ, մանգան, կրաքար, ցինկ, արծիծ

Արդյունաբերությունը — տեքստիլ, սննդամթերքի, քիմիական, շինարարական, մետաղներ, ցեմենտ

Գյուղատնտեսությունը — բամբակ, բրինձ, եգիպտացորեն, ցորեն, լոբի, մրգեր, բանջարեղեն, անասնապահություն

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) — 316,3 մլրդ ԱՄՆ դոլար (2004 թ.), ըստ շնչի՝ 4200 ԱՄՆ դոլար (2004 թ.)

Անդամակցում է — ՄԱԿ, Արաբական պետությունների լիգա, ՕԱՊԷԿ, ՅՈՒՆԷՍԿՕ, Համաշխարհային առևտրական կազմակերպություն, Սննդի և գյուղատնտեսության կազմակերպություն և այլն


ԵԳԻՊՏՈՍ
ՄԱՍՇՏԱԲ 1:15 000 000
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ
Ալեքսանդրիա
Դամյաթ
Պորտ Սաիդ
Ալ Մանսուրա
Զագազիգ
Թանտա
Ալ Գիզա
ԿԱՀԻՐԷ
Մուեզ
Էլյաթ
Ալ Ֆայում
Մեծ Ավազե անապատ
ԵԳԻՊՏՈՍ
Սուրբ գետ
Սուրբ գետի դելտան
Սուրբ գետի հովտի
Ասյութ
Նեղոս
Լուքսոր
Ասուան
Լիբիական
անապատ
ՍԱՀԱՐԱ
ՍՈՒԴԱՆ
ԿԱՐՄԻՐ ԾՈՎ
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ

Եգիպտոսի դերն արտակարգ կարևոր է արաբական երկրների նոր և նորագույն պատմության մեջ: Նա արաբական աշխարհի ամենազարգացած և ուժեղ երկիրն է, որն ունի մեծ կշիռ և ազդեցություն ոչ միայն արաբական երկրներում, այլև մերձավորարևելյան–հյուսիսաֆրիկյան ամբողջ տարածաշրջանում:

Եգիպտոսում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները, առավել ևս կարևոր սոցիալ–քաղաքական փոփոխությունները, նոր և նորագույն շրջանում անմիջապես իրենց ազդեցությունն են ունեցել արաբական երկրների զարգացումների վրա: Դա հատկապես ակնհայտ դարձավ XX դարի կեսերից, մանավանդ Գամալ Աբդել Նասերի պրեզիդենտության շրջանում, երբ Եգիպտոսը դարձավ արաբական աշխարհի անվիճելի առաջատար երկիրը և շատ հարցերում ուղեցույց փարոս նրա համար:

Թեև Նասերի մահից հետո՝ XX դարի 70–80–ական թվականներին, Եգիպտոսում տեղի ունեցած ներքաղաքական զարգացումների հետևանքով եղավ մի պահ, երբ սասանվեցին նրա դիրքերը արաբական ասպարեզում, անգամ նա հայտնվեց մեկուսացման մեջ, այդուհանդերձ, Եգիպտոսը չկորցրեց իր կարևորությունը՝ որպես տարածաշրջանի վճռորոշ գործոն, և կրկին կարողացավ հաստատել արաբական աշխարհի կարևոր երկրի իր կարգավիճակը:

Եգիպտոսին պետք է արաբական աշխարհը, ինչպես որ արաբական աշխարհին պետք է Եգիպտոսը: Նրանք սերտորեն շաղկապված են միմյանց հետ:

Կահիրեի ծայնին ունկնդիր են նաև աշխարհի մեծ տերությունները՝ նրան համարելով առանցքային դերակատարում ունեցող երկիր աշխարհի ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող մերձավորարևելյան–աֆրիկյան տարածաշրջանում:

Կարծում ենք, որ նաև այս տեսանկյունից պետք է մոտենալ Եգիպտոսի նորագույն շրջանի՝ ստորև ներկայացվող պատմությանը:

I. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ (1918–1922 թթ.)

1. Հակաբրիտանական պայքարի սրումը: Վաֆդ ալ–Մսրի

Եգիպտոսը, որն անգամ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին չէր հաշտվել անգլիական պրոտեկտորատ լինելու իր կարգավիճակի հետ[6], թեև այդ պատերազմը մղվում էր նաև Եգիպտոսի և արաբական մյուս երկրների համար ատելի Օսմանյան կայսրության դեմ, պատերազմի ավարտից անմիջապես հետո պայքար սկսեց բրիտանական պրոտեկտորատի վերացման և իր անկախության համար: Հակաբրիտանական պայքարն այնքան արագ սկսվեց և այնպիսի լայն թափ ստացավ, որ անակնկալի բերեց Մեծ Բրիտանիային, մի կողմից, և մինչև օրս զարմացնում է պատմաբաններին, մյուս կողմից: Անգլիական իշխանությունները, որոնց թվում էր, թե իրենք Եգիպտոսում հաստատել են հուսալի կառավարման համակարգ, ծանր հարված հասցրել եգիպտական ազգային հայրենասիրական ուժերին և բացարձակորեն վերահսկում իրադրությունը, վստահ էին, որ պատերազմից հետո, որում իրենք հաղթանակ էին տարել, իսկ Օսմանյան կայսրությունը կործանվել էր, դեռ երկար ժամանակ իրենք կկարողանան առանց լուրջ բարդությունների կառավարել Եգիպտոսը՝ որպես բրիտանական պրոտեկտորատ:

Իսկ պատմաբան–մասնագետների զարմանքը կապված է նրանց կողմից այն թյուր ըմբռնման հետ, որ պատերազմում տնտեսապես հյուծված Եգիպտոսից և ծանր հարվածներ ստացած նրա ազգային ուժերից, որոնք գտնվում էին բրիտանական ուժեղ բռունցքի տակ, բավականին երկար ժամանակ կպահանջվի, մինչև ուշքի գան կրած ծանր կորուստներից, կազմակերպվեն, ընտրեն իրենց քաղաքական առաջնորդներին և հանդես գան այնպիսի արմատական պահանջներով, ինչպես բրիտանական պրոտեկտորատի վերացումը և անկախության նվաճումը:

6 Այդ մասին մանրամասն տե՛ս **Ն. Հովհաննիսյան,** Արաբական երկրների պատմություն, հ. II, Երևան, 2004:

Սակայն պատմությունը սիրում է անակնկալներ մատուցել, դասեր տալ անգամ պատմաբան մասնագետներին և սրբագրել նրանց, մեղմ ասած, վրիպումները:

Մեծ Բրիտանիայի ծրագրերի մեջ չէր մտնում պատերազմի ավարտից հետո անհապաղ հեռանալ Նեղոսի ափերին փռված այդ երկրից: Նա մտադիր էր դեռ երկար ժամանակ մնալ Եգիպտոսում՝ որպես պրոտեկտոր: Հարկավ, Լոնդոնում հասկանում էին, որ ամեն ինչ թողնել անփոփոխ, անհնար է, որ անհրաժեշտ է որոշ քայլեր ձեռք առնել՝ մեղմացնելու լարվածությունը, որը պատերազմի տարիներին թեև շատ ցցուն կերպով չէր դրսևորվում, սակայն անգլիացիները լավ գիտեին, որ այն գոյություն ուներ և կարող էր ամեն պահի պոռթկալ: Այդ պատճառով էլ բրիտանական կառավարությունը, դեռևս պատերազմը չավարտված, արտահայտվեց հօգուտ որոշ բարեփոխումների կիրառման Եգիպտոսի կառավարման համակարգում:

1917 թ. ստեղծվեց բարեփոխումների անգլո–եգիպտական հանձնաժողով, որը գլխավորեց բրիտանական կառավարության խորհրդական Վիլյամ Բրանիեյթը: Բրիտանական կողմը հանձնաժողովի քննարկմանը ներկայացրեց Եգիպտոսի նոր սահմանադրության նախագիծը, որն ընդունվեց նրա կողմից: Սահմանադրության մի շարք կարևոր կետեր վերաբերում էին Եգիպտոսի օրենսդիր մարմնին, ինչպես նաև արդարադատության իրականացմանը: Առաջարկվում էր Եգիպտոսի օրենսդիր ժողովը վերածել խորհրդակցական մարմնի՝ զրկված որոշումներ և օրենքներ ընդունելու իրավունքից: Դրա փոխարեն նրա իրավասությունները փոխանցվում էին նոր ստեղծվելիք մի նոր մարմնի՝ սենատին: Սակայն զարմանալի է, թե ինչ ուժերից և ինչպես էր ձևավորվելու այն, որը դառնալու էր Եգիպտոսի բարձրագույն օրենսդիր մարմինը: Սենատի մեծամասնությունը կազմելու էին անգլիական խորհրդականները, որոնց կողքին աշխատելու էին փոքրամասնություն կազմող եգիպտացիները, որոնք պատրաստ էին համագործակցել Մեծ Բրիտանիայի հետ:

Սահմանադրության մյուս կարևոր կետը վերաբերում էր արդարադատության ոլորտին, ըստ այդմ՝ եգիպտական բոլոր դատարաններում «արդարադատությունն» իրականացվելու էր ըստ բրիտանական իրավունքի: Կար նաև մեկ այլ նորամուծություն, որը վերաբերում էր լեզվին: Սահմանվում էր, որ դատավարությունն ընթանալու էր անգլերեն լեզվով:

Դատելով այդ կետերից՝ այն, ինչ առաջարկում էին անգլիական իշխանությունները, և որոնք հավանության էին արժանացել անգլո–ե-

գիպտական խառը հանձնաժողովի կողմից, ոչ մի կերպ չի կարելի համարել բարեփոխում: Դա մի քայլ հետ էր գոյություն ունեցող համակարգից և ավելի էր սահմանափակում Եգիպտոսի իրավունքներն ու ավելի ամրապնդում բրիտանական տիրապետությունը Եգիպտոսում:

Եգիպտացիները հենց այդպես էլ ընկալեցին այդ, այսպես կոչված, նոր սահմանադրությունը, որի նախագիծը հրապարակվեց 1918 թ. նոյեմբերին: Դա չտեսնված դժգոհություն առաջացրեց ամբողջ երկրում: Եգիպտոսում սկսվեցին հուզումներ, որոնց ժամանակ երկրի ազգային—հայրենասիրական ուժերը պահանջում էին մերժել ոչ միայն այդ սահմանադրությունը, այլև առաջադրեցին սկզբունքային բնույթի պահանջներ՝ անգլիական պրոտեկտորատի վերացում և Եգիպտոսի անկախություն:

Այսպիսով՝ պատերազմը դեռ նոր էր ավարտվել, երբ քաղաքական մթնոլորտը Եգիպտոսում շիկացավ, և հակաբրիտանական տրամադրությունները թնակոխեցին նոր փուլ:

Դրան նպաստում էր նաև նորաստեղծ միջազգային մթնոլորտը, որն ընդհանուր առմամբ բարենպաստ էր ազգային–ազատագրական, հակագաղութային շարժումների ծավալման համար: Նկատի ունենք ԱՄՆ–ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի, այսպես կոչված, «14 կետերը», որը պահանջում էր ճանաչել ազգերի ինքնորոշման իրավունքը և անկախություն տրամադրել Օսմանյան կայսրության ենթակա ժողովուրդներին, այդ թվում և արաբներին, Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղափոխությունը և նրա հռչակած սկզբունքները ազգերի իրավահավասարության վերաբերյալ և այլն: Այդ առումով ուշագրավ է Խորհրդային Ռուսաստանի կառավարության 1917 թ. դեկտեմբերի 3–ի դիմումը «Ռուսաստանի և Արևելքի բոլոր մուսուլման աշխատավորներին», որտեղ ասված էր. «Արևելքի մուսուլմաններ, պարսիկներ և թուրքեր, արաբներ և հնդիկներ... Դուք ինքներդ պետք է դառնաք ձեր երկրի տերը»: Դրանք խրախուսում էին գաղութային և կախյալ երկրներին և հակագաղութային պայքարի կոչում նրանց:

Սակայն Եգիպտոսում հակաբրիտանական, ազգային–ազատագրական պայքարի ուժեղացումը թելադրված էր առաջին հերթին ներքին, համազգային պահանջներով, որոնք կենտրոնացված էին երկու գլխավոր խնդիրների վրա՝ պրոտեկտորատի վերացում և անկախության նվաճում: Այդ պահանջներն ընդունելի էին եգիպտական հասարակության ինչպես «վերնների», այնպես էլ «ներքնների» համար: Դրանում է հակաբրիտանական պայքարի ուժեղացման «գաղտնիքը» Եգիպտոսում:

1918 թ. նոյեմբերի 13–ին՝ Գերմանիայի հետ Կոմպենյան զինադադարի կնքումից ընդամենը երկու օր անց, որով Գերմանիան իրեն պարտված ճանաչեց պատերազմում, իսկ դա նշանակում էր նաև պարտություն նրա կողմից գլխավորած ռազմաքաղաքական բլոկի, որի մեջ մտնում էր նաև Օսմանյան կայսրությունը, Եգիպտոսում բրիտանական գլխավոր կոմիսար Ռեջինալդ Վինգեյտին այցելեց մի Վաֆդ՝ պատվիրակություն Եգիպտոսի Ազգային ժողովի փոխնախագահ Սաադ Զաղլուլի գլխավորությամբ: Պատվիրակության մեջ մտնում էին նաև Աբդել Ազիզ Ֆահմին և Ալի Շարաուին: Նրանք երեքն էլ լիբերալ հայացքների տեր քաղաքական գործիչներ էին, որոնք ներկայացնում էին Եգիպտոսի ազգային ուժերը:

Սաադ Զաղլուլը «եգիպտական ժողովրդի անունից» բրիտանական կոմիսարին ներկայացրեց երեք կետերից բաղկացած պահանջ՝ վերացնել բրիտանական պրոտեկտորատը, ճանաչել Եգիպտոսի անկախությունը և դուրս բերել անգլիական զորքերը Եգիպտոսից: Այդ պահանջները ներկայացնելուց հետո Վաֆդի ղեկավար Սաադ Զաղլուլը տեղյակ պահեց Վինգեյտին, որ իրենց պահանջները բավարարելու դեպքում Եգիպտոսը պատրաստ է համաձայնության գալ Անգլիայի հետ և ճանաչել նրա որոշ իրավունքները և շահերը:

Սաադ Զաղլուլի ներկայացրած եգիպտական պահանջներն իրենց բնույթով արմատական էին և մարմնավորում էին ազգային–ազատագրական պայքարի բարձրակետը: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ այդ գերագույն պահանջներն առաջադրվել էին ոչ թե փողոցային ցույցերի կամ այլ բնույթի ելույթների ու հանրահավաքների ժամանակ, այլ պետական բարձր պաշտոններ զբաղեցնող գործիչների կողմից, որպիսին, ասենք, Սաադ Զաղլուլն էր, որը ոչ միայն Օրենսդրական ժողովի փոխնախագահն էր, այլև ժամանակին գրավել էր լուսավորության նախարարի պաշտոնը:

Վինգեյտի համար, եթե ոչ պատվիրակության այցը, ապա նրա ներկայացրած պահանջները կատարյալ անակնկալ էին: Նա, ինչպես նաև բրիտանական կառավարությունն ընդհանրապես, չէր կարծում, որ եգիպտական ազգային ուժերի մոտ հասունացել էին այդպիսի արմատական տրամադրություններ, և նրանք կհամարձակվեն պաշտոնապես նման պահանջներ ներկայացնել: Գլխավոր կոմիսար Ռեջինալդ Վինգեյտը, ուշքի գալով այդ անսպասելի պահանջներից, ասում է. «Եգիպտոսը Թուրքիայի ստրուկն էր: Դառնալով Անգլիայի ստրուկը՝ մի՞թե նա ավելի

վատթար պայմաններում է գտնվել»: Դրան ի պատասխան՝ Ալի Շարաֆին ասում է. «Ստրկության բոլոր ձևերը մեկը մյուսին արժեն: Մենք ուզում ենք լինել ոչ թե ձեր ստրուկը, այլ բարեկամը»:

Ի վերջո, Վինգեյտը մերժում է եգիպտական ազգային առաջնորդների պահանջը՝ հայտարարելով, որ ինքը «այդ հարցի վերաբերյալ իր կառավարությունից կարգադրություններ չի ստացել»:

Դա բնավ չվհատեցրեց եգիպտացիներին: Սաադ Զաղլուլը, Վինգեյտին այցելելուց յոթ օր անց՝ 1918 թ. նոյեմբերի 20–ին, դիմեց անգլիական իշխանություններին Անգլիա մեկնելու թույլտվություն ստանալու խնդրանքով: Նա ցանկանում էր մեկնել Անգլիա՝ բրիտանական հասարակայնությանը պարզաբանելու եգիպտական պահանջների էությունը և նպատակները՝ հույս ունենալով նվաճել նրա համակրանքն ու աջակցությունը եգիպտական արդար պահանջների նկատմամբ: Բայց դա չէր մտնում անգլիական կառավարության ծրագրերի մեջ, և նա մերժեց Սաադ Զաղլուլին մուտքի վիզա տրամադրել և ժամանել Անգլիա: Լլոյդ Ջորջի կառավարությունը, ի պատասխան Սաադ Զաղլուլի խնդրանքի, նշում է, որ «ազգայնականների այցելությունը ցանկալի չէ»:

Անգլիա ժամանելու և եգիպտական պահանջները բրիտանացիներին ներկայացնելու ցանկություն էր հայտնել նաև եգիպտական կառավարությունը, որը պատրաստ էր պաշտոնական պատվիրակություն ուղարկել Լոնդոն՝ վարչապետ Հուսեյն Ռուշդիի գլխավորությամբ: Սակայն բրիտանական կառավարությունը վարչապետ Ռուշդիի այցը նույնպես համարեց անցանկալի:

Անգլիայի կոշտ դիրքորոշումը և բացասական մոտեցումը եգիպտական երկու պատվիրակությունների Անգլիա ժամանելու վերաբերյալ Եգիպտոսում ընդունվեցին շատ հիվանդագին կերպով: Շատերը դա համարում էին հրապարակային ապտակ պաշտոնական Եգիպտոսին: Իսկ իրենց հպարտությամբ և ազգային արժանապատվությամբ հայտնի եգիպտացիների համար դա ազգային ստորացմանը հավասար նվաստացում էր, որը նոր լիցք հաղորդեց հակաբրիտանական պայքարին Եգիպտոսում:

Սաադ Զաղլուլը և նրա համախոհները կազմակերպեցին եգիպտական պատվիրակություն՝ Վաֆդ ալ–Միսրի, որի առաջնային նպատակն էր մեկնել Փարիզ և այնտեղ իր աշխատանքները սկսած Խաղաղության միջազգային կոնֆերանսին ներկայացնել Եգիպտոսի պահանջները:

Հակաբրիտանական պայքարը Եգիպտոսում մտնում էր նոր և վճռական փուլ:

2. 1919 թ. ապստամբությունը

Նախքան Փարիզ մեկնելը Վաֆդը մշակեց և ընդունեց գործողությունների ծրագիր, որը ստացավ «Ազգային պահանջների խարտիա» անվանումը: Դա կարևոր փաստաթուղթ էր, որը պարունակում էր Եգիպտոսի ազգային–ազատագրական ուժերի բոլոր հիմնական քաղաքական պահանջները: Նրանում ամրագրվեցին հետևյալ գլխավոր հիմնադրույթները. ա) վերացնել բրիտանական պրոտեկտորատը, բ) ճանաչել Եգիպտոսի անկախությունը, գ) անգլիական զորքերը դուրս բերել Եգիպտոսից, դ) Վաֆդ ալ–Միսրին ճանաչել որպես իրավասու ազգային պատվիրակություն, ե) թույլ տալ այդ պատվիրակությանը մեկնել Լոնդոն, ապա՝ Փարիզ՝ Փարիզի խաղաղության կոնֆերանսին ներկայացնելու «Ազգային պահանջների խարտիան»:

Սկզբից նեթ նշենք, որ Վաֆդը ձգտում էր իր պահանջներն իրագործել խաղաղ միջոցներով: Ընդհանրապես նա, եթե դեմ չէր, ապա գոնե խուսափում էր պայքարի զինված մեթոդներից՝ այն սին հույսերը տածելով, որ հնարավոր է բրիտանացիների հետ խաղաղ բանակցությունների ճանապարհով հասնել Եգիպտոսի ազգային իղձերի, այդ թվում և անկախության նվաճմանը: Այդ տեսակետն ուղղակի ամրագրված էր Վաֆդի կանոնադրության երկրորդ հոդվածում, որտեղ ասված էր. «Վաֆդի նպատակն է հասնել Եգիպտոսի անկախությանը խաղաղ և օրինական միջոցներով»:

Վաֆդի այդ զգուշավորությունը հավանաբար կարելի է բացատրել այն հանգամանքով, որ նրա ղեկավարները եգիպտական լիբերալ կալվածատերերի ու բուժուազիայի ներկայացուցիչներն էին, իսկ այդ խավը սովորաբար ամենուր՝ բոլոր երկրներում, նման անվճռականության հասնող զգուշավորություն է ցուցաբերում:

Բացառություն չէր նաև Եգիպտոսը:

Վաֆդ ալ–Միսրիի ընդունած ծրագիրը, որի հիմնական պահանջը Եգիպտոսին անկախություն տրամադրելն էր, իր դրական մեծ դերը խաղաց հակաբրիտանական պայքարի ուժեղացման գործում: Նա ավելի վստահ ու վճռական դարձրեց եգիպտացիներին թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում: Եգիպտոսում սկսվեց ստորագրությունների հավաք՝ ի

պաշտպանություն Եգիպտոսի անկախության պահանջի: Եգիպտացի քաղաքական գործիչ և պատմաբան աշ–Շաֆին նշում է, որ ստորագրությունների հավաքը Եգիպտոսի քաղաքներում և գյուղերում անցավ չտեսնված խանդավառությամբ: Ստորագրահավաքին զուգահեռ, մի շարք վայրերում տեղի ունեցան ցույցեր: Բրիտանական իշխանություններն ամեն ինչ անում էին՝ կանխելու ցույցերը և ծախողելու համաեգիպտական ծավալներ ընդունած ստորագրությունների հավաքի արշավը: Բայց ապարդյուն: Երկրի հայրենասիրական ուժերը շարունակում էին պնդել անկախության և Եգիպտոսից անգլիացիների հեռանալու պահանջների վրա:

Հայրենասիրական և հակաբրիտանական ալիքի աննախադեպ բարձրացման պայմաններում 1919 թ. մարտի 1–ին հրաժարական տվեց Հուսեյն Ռուշդիի կառավարությունը: Դա էական է այն առումով, որ Ռուշդին համարվում էր անգլիամետ պետական գործիչ և հակված էր զիջումների ու համագործակցության Մեծ Բրիտանիայի հետ: Բայց նա հասկանում էր, որ հակաբրիտանական պայքարի ուժեղացման պայմաններում, երբ ողջ Եգիպտոսը ոտքի էր կանգնել և անկախություն էր պահանջում, շարունակել մնալ նախկին դիրքերում անհնարին և անհեռանկար գործ էր: Այդ պատճառով էլ նա հրաժարական տվեց և միացավ եգիպտացիների ազգային շարժմանը:

Բրիտանական իշխանությունների համար ակնհայտ էր, որ համաձայնողական քաղաքականությունն իրեն սպառել է, և եգիպտական հայրենասիրական ուժերն այլևս չեն հավատում անգլիացիների սին խոստումներին ու հավաստիացումներին: Նման իրադրության մեջ նրանք որոշեցին դիմել ճնշումների և սպառնալիքների քաղաքականությանը:

Եգիպտոսում բրիտանական ուժերի գլխավոր հրամանատար Վատսոնը 1919 թ. մարտի 6–ին իր մոտ կանչեց Վաֆդի ղեկավարներին և իր կառավարության անունից նրանց ներկայացրեց հետևյալ պահանջները, որոնք վերջնագրի բնույթ ունեին՝ հրաժարվել բրիտանական պրոտեկտորատի վերացման պահանջից, պրոտեկտորատի գոյության պայմաններում չխանգարել եգիպտական նոր կառավարության կազմելուն և նրա գործունեությանը: Վերջում նա սպառնաց, որ այդ պայմանները չկատարելու դեպքում անգլիական իշխանությունները ուժ կգործադրեն:

Բրիտանական իշխանություններն ամենայն հավանականությամբ կորցրել էին իրականությունը սթափ գնահատելու զգացումը և չէին հասկանում, որ կարևոր փոփոխություններ են տեղի ունեցել եգիպ-

տացիների մտածողության ու հոգեբանության մեջ: Նրանց հետ այլևս վերջնագրի կամ սպառնալիքների լեզվով չէր կարելի խոսել:

Բրիտանական վերջնագիրը ոչ մի ազդեցություն չունեցավ, ընդհակառակը, եգիպտացիները նոր թափով սկսեցին պնդել իրենց հիմնական պահանջների վրա: Սաադ Զաղլուլը հեռագիր ուղարկեց Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջին՝ բողոքելով Վատսոնի նախազգուշացումների ու սպառնալիքների դեմ: Միաժամանակ Սաադ Զաղլուլն այդ նույն հեռագրում նշում էր, որ եգիպտոսի վրա անգլիական պրոտեկտորատն անօրինական է, և պնդում էր եգիպտոսի անկախության պահանջի վրա՝ հետագա դեպքերի համար ամբողջ պատասխանությունը դնելով անգլիական օկուպանտների վրա: Սաադ Զաղլուլը երբեք այդքան վճռական չէր դրսևորել իրեն Անգլիայի հետ փոխհարաբերություններում:

Անգլիական կառավարությունը պատասխանի չարժանացրեց Սաադ Զաղլուլի հեռագիրը: Դրա փոխարեն նա անցավ վճռական գործողությունների՝ ընդդեմ եգիպտոսի ազգային–հայրենասիրական ուժերի ու նրանց ղեկավարների:

1919 թ. մարտի 8–ին անգլիական իշխանությունները ձերբակալեցին Սաադ Զաղլուլին և Վաֆդի մյուս ղեկավարներից Մուհամմադ Մահմուդին, Իսմայիլ Սիդկիին և Համդի ալ–Բասիլիին: Նրանց բանտարկեցին Կահիրեի Կասր ան–Նիլ զորանոցում: Սակայն վախենալով, որ ժողովուրդը կարող է ոտքի կանգնել և ազատել բանտարկյալներին՝ անգլիական իշխանությունները հաջորդ օրը՝ մարտի 9–ին, նրանց ծածուկ դուրս բերեցին Կահիրեից և աքսորեցին Մալթա[7]:

Սաադ Զաղլուլի և նրա զինակիցների ձերբակալությունն առիթ ծառայեց 1919 թ. եգիպտական ապստամբության համար:

---

7 Մալթա կղզին բրիտանական տիրապետության տարիներին, հատկապես XX դարի առաջին քսանամյակում, յուրատեսակ դերակատարում է ունեցել: 1919 թ. թուրքական սուլթանական օրինական դատարանը տարբեր չափերի պատիժներ սահմանեց երիտթուրքական գործիչների՝ պատերազմի տարիներին հայերի դեմ գործած հանցագործությունների համար: Սակայն դատավճիռն այդ հանցագործների նկատմամբ հնարավոր չեղավ իրագործել, որովհետև անգլիացիները կարողացան նրանց՝ այդ հանցագործներին՝ 1915 թ. հայերի ցեղասպանությունն իրագործողներին, գաղտնի փախցնել և տեղափոխել Մալթա՝ փրկելով նրանց արդար հատուցումից: Իսկ այժմ, երբ եգիպտացիները պայքարում էին իրենց արդար իրավունքների, այդ թվում և անկախության համար, անգլիական իշխանությունները ձերբակալեցին նրանց առաջնորդներին և դարձյալ տեղափոխեցին Մալթա: Դա բրիտանական երկդիմի, փարիսեցիական քաղաքականությանը բնորոշ երևույթներից մեկն է:

1919 թ. ապստամբությունը համաժողովրդական բնույթ էր կրում: Նրան մասնակցում էին բանվորները, գյուղացիները, ուսանողությունը, մտավորականությունը, մանր ու միջին առևտրականները, ազգային բուրժուազիան և լիբերալ կալվածատերերը: Եգիպտացի պատմաբան Աբդռահման առ–Ռաֆին իր «1919 թ. ապստամբությունը Եգիպտոսում» աշխատության մեջ ժողովրդի ամենալայն մասնակցությունը ապստամբությանը համարում է «այդ ապստամբության գլխավոր գործոնը»: Ժողովրդական զանգվածներն էին ապստամբության գլխավոր շարժիչ ուժը: Իսկ ղեկավարությունը գտնվում էր եգիպտական ազգային լիբերալ բուժուազիայի ձեռքում, որը և հանդիսանում էր նրա հեգեմոնը:

1919 թ. մարտի 9–ին, երբ եգիպտացիներին հայտնի դարձավ Վաֆդի ղեկավարների ձերբակալությունը, սկսվեցին հակաբրիտանական ելույթները, որոնք այնուհետև վերածվեցին ապստամբության՝ ընդդեմ բրիտանական տիրապետության: Առաջինը հանդես եկավ Կահիրեի ուսանողությունը, որին միացան եգիպտական մյուս քաղաքների ուսանողները: Նրանք կազմակերպեցին ցույցեր՝ ի պաշտպանություն եգիպտոսի անկախության: Բրիտանական իշխանությունները դիմեցին բռնությունների, կատարվեցին զանգվածային ձերբակալություններ, որոնք, սակայն, ոչ մի ազդեցություն չունեցան: Մարտի 11–ին պայքարի մեջ մտավ եգիպտոսի բանվոր դասակարգը: Պայքարը սկզբնական շրջանում ընդունեց գործադուլային շարժման ձև: Գործադուլ հայտարարեցին մայրաքաղաքի տրամվայի և երկաթուղային տրանսպորտի աշխատողները: Նրանց միացան Ալեքսանդրիայի փարոսների, նավահանգստային դոկերի և պետական արհեստանոցների բանվորները, որոնք ուսանողության հետ կազմակերպեցին ցույցեր, հարձակումներ գործեցին անգլիական օբյեկտների վրա և ջարդուփշուր արեցին անգլիասեր «Ալ–Մուկկատամ» թերթի խմբագրությունը:

Ապստամբությունն իսկական համաժողովրդական բնույթ ստացավ, երբ պայքարին միացան ֆելահները՝ գյուղացիները:

Հակաիմպերիալիստական ելույթներն ընդգրկեցին եգիպտոսի համարյա բոլոր քաղաքները և գյուղական վայրերը՝ Ալեքսանդրիան, Թանթը, Ռակկան, Բիխեյրը, Զակազիկը, Շարկիյան, Դամանհուրը, Մանսուրը, Մինյեն, Ասյուտը, Ասուանը և շատ ու շատ այլ վայրեր: Բնակչությունը զինված դիմադրություն էր ցույց տալիս անգլիական բանակի կանոնավոր զորամասերին, որը եգիպտացիների հերոսական դիմադրությունը կոտրելու համար օգտագործում էր զենքի բոլոր տեսակները, անգամ ինքնաթիռներ:

Ապստամբները կառուցում էին բարիկադներ, իսկ որոշ վայրերում նույնիսկ փորում խրամատներ: Անգլիական զորքերի առաջխաղացումը կանխելու համար ապստամբները մեծ նշանակություն էին տալիս հաղորդակցության միջոցների խափանմանը, իսկ որտեղ հնարավոր էր, նաև նրանց ոչնչացմանը: Շատ վայրերում նրանք քանդում էին երկաթուղագծերը, հրկիզում երկաթուղային կայանները, կտրում հեռախոսային և հեռագրային լարերը: Ռակկայում նրանք հարձակում գործեցին անգլիական գնացքի վրա և հրկիզեցին կայարանը, իսկ Վաստայում՝ գրավեցին ապրանքատար գնացքը: Նրանք հրկիզեցին նաև Կալյուբի, Թալի և այլ կայարաններ: Ապստամբների այդ գործողությունների հետևանքով խզվեց երկաթուղային կապը Կահիրեի, Ալեքսանդրիայի և Պորտ Սաիդի միջև:

1919 թ. ապստամբության առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ կանայք մասնակցեցին հակագաղութային պայքարին: Կանայք և աղջիկները Կահիրեի փողոցներում ցույցեր էին կազմակերպում «Կեցցե ազատությունը և անկախությունը» և «Կորչի պրոտեկտորատը» լոզունգների ներքո:

Ապստամբությունը, ինչպես նշվեց, լայն թափ ստացավ գավառներում: Ապստամբները կարողացան մի ամբողջ շարք մուհաֆազաներ՝ նահանգներ, ազատագրել այնտեղ տեղակայված անգլիական կայազորներից և կազմակերպել կառավարման տեղական մարմիններ: Մի շարք գյուղերում այդ տեղական մարմինները կոչվեցին «սովետներ»: Քաղաքներում, որպես ապստամբական զանգվածների հեղափոխական գործունեության արդյունք, ձևավորվեցին ազգային հեղափոխական կոմիտեներ, իսկ որոշ տեղերում, հատկապես մուհաֆազաների կենտրոնական քաղաքներում, ստեղծվեցին ժամանակավոր կառավարություններ: Նման կառավարություններ առաջացան Մինյեում, Զակազիկում, Ասյուտում և այլ քաղաքներում ու նահանգային կենտրոններում:

Դրանց մեջ առանձնանում է Զիֆտի կառավարության՝ ապստամբության կոմիտեի գործունեությունը՝ Յուսուֆ Ահմադ ալ–Գունդիի ղեկավարությամբ: Կոմիտեն հռչակեց քաղաքի անկախությունը, կառավարական շենքից իջեցվեց անգլիական դրոշը և բարձրացվեց եգիպտական ազգային դրոշը: Ստեղծվեցին Ապստամբական կոմիտեի ենթակոմիտեներ, որոնք տնօրինում էին անվտանգության ապահովման, ֆինանսների, հարկերի և սոցիալական հարցեր: Հարկերից ստացված գու-

մարները քաղաքի կառավարությունն օգտագործեց ճահիճների չորացման, փողոցների բարեկարգման, կամուրջների վերանորոգման և համանման այլ նպատակների համար: Կառավարությունը կամ Ապստամբական կոմիտեն այդ աշխատանքների մեջ ներգրավում էր առաջին հերթին գործազուրկներին:

Համանման գործունեություն էին ծավալում նաև մյուս այն քաղաքներում, որտեղ իշխանությունն անցել էր ապստամբներին:

Կահիրեում ստեղծվեց հայրենասիրական ոստիկանություն, որը ցույցերի և միտինգների ժամանակ հսկում էր կարգի պահպանմանը: Կահիրեի ամբողջ բնակչությունը բարեխղճորեն կատարում էր իր՝ ժողովրդական ոստիկանության կարգադրությունները:

Այս ամենը վկայում էր, որ Եգիպտոսում անգլիական տիրապետությունը գտնվում էր հարցականի տակ:

Ստեղծված պայմաններում Անգլիան դիմեց ավելի կտրուկ և վճռական գործողությունների: Ռեջինալդ Վինգետի փոխարեն, որի գործունեությունից, ինչպես նշում է անգլիական պատմաբան Ջ. Մառլոուն, դժգոհ էր Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջը, Եգիպտոսում բրիտանական գլխավոր կոմիսար նշանակվեց գեներալ Ալլենբին: Նա այն Ալլենբին էր, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, համագործակցելով արաբական ապստամբական բանակի հետ, պարտության մատնեց թուրքերին և Սիրիան, Հորդանանը, Պաղեստին ու Լիբանանն ազատագրեց օսմանյան տիրապետությունից: Դրա շնորհիվ նա մեծ հեղինակություն էր վայելում արաբների մոտ: Դժվար է ասել, թե այդ գեներալին վստահելով Եգիպտոսում բրիտանական գլխավոր կոմիսարի պաշտոնը Մեծ Բրիտանիան ցանկանում էր օգտվել նրա հեղինակությունից և հասնել ապստամբության դադարեցմա՞նը, թե՞ ոչ, սակայն մի բան կարելի է վստահաբար ասել, որ ապստամբների դեմ իր սանձազերծած գործողություններով մարտական գեներալ Ալլենբին իր անունը պատեց խայտառակությամբ:

Ալլենբին, ստանձնելով գլխավոր կոմիսարի պաշտոնը, անմիջապես անցավ վճռական գործողությունների: Նա ստեղծեց պատժիչ խմբեր, որոնց գլուխն անցած նա մեկը մյուսի հետևից սկսեց ճնշել ապստամբական կենտրոնները: Անգլիական զինվորները նրա հրամանով կրակում էին խաղաղ ցուցարարների վրա, հիմնահատակ անում և հրկիզում գյուղերը: Շոբակ գյուղում անգլիական պատժիչ ջոկատները համարյա լրիվ ոչնչացրին գյուղի բնակչությանը, իսկ գյուղի շեյխին իր

որդիների հետ միասին կենդանի թաղեցին: Ապստամբների հետ բարբարոսաբար վարվելու նման դեպքերը շատ և շատ էին:

Դիմելով նման վայրագ միջոցների՝ անգլիական իշխանությունները կարողացան օգտագործել Վաֆդի տատանողական թևին ապստամբության կրակը մարելու համար: Ազատության մեջ մնացած Վաֆդի անդամների մեծ մասը դեմ էր վճռական, հատկապես զինված գործողությունների, և հակված էր համաձայնության գալ անգլիացիների հետ: 1919 թ. մարտի 27–ին Ալլենբին հանդիպում ունեցավ եգիպտական ազգային մի շարք գործիչների և Վաֆդի ներկայացուցիչների հետ, որի ժամանակ նա հորդորեց նրանց դիմել եգիպտացիներին պայքարը դադարեցնելու կոչով: Նրանք դրականորեն արձագանքեցին գեներալի դիմումին, և եգիպտական 55 գործիչներ, որոնց թվում կային նաև վաֆդիստներ, դիմեցին եգիպտական ժողովրդին՝ դադարեցնելու «անօրինական գործողությունները», այսինքն՝ ապստամբությունը: Եվ պետք է խոստովանել, որ դա ունեցավ իր ազդեցությունը:

Բրիտանական իշխանությունները դիմեցին մի կարևոր քայլի նս: Նրանք հասկացան, որ չեն կարող հասնել հաջողությունների, քանի դեռ Սաադ Զաղլուլը և նրա գործընկերները ձերբակալված էին և գտնվում էին բանտում: 1919 թ. ապրիլին ազատ արձակվեցին Սաադ Զաղլուլը և նրա զինակիցները: Դեռ ավելին՝ Անգլիան թույլատրեց նրանց մեկնել Փարիզ և խաղաղության կոնֆերանսին ներկայացնել եգիպտոսի պահանջները:

Այդ բոլոր միջոցառումների արդյունքում Անգլիային հաջողվեց ճնշել 1919 թ. մարտյան ապստամբությունը:

Եթե վերլուծելու լինենք ապստամբության պարտության պատճառները, ապա կարող ենք ասել, որ դրան նպաստեց ապստամբական մեկ ընդհանուր և համադրող կենտրոնի բացակայությունը: Սաադ Զաղլուլի ձերբակալությունից հետո Վաֆդին չհաջողվեց դառնալ ապստամբությունը ղեկավարող ընդհանուր և գործնական կենտրոնի:

Եգիպտոսի վերնախավի մեջ կրկին իրեն զգացնել տվեց հին հիվանդությունը՝ տատանվողականությունը և վճռական պահին բրիտանական իշխանությունների հետ համաձայնության գալու պատրաստակամությունը: Դա պառակտեց ապստամբական շարժումը և կազմալուծեց նրա շարքերը, որից փայլուն կերպով օգտվեցին անգլիական իշխանությունները:

Ապստամբության պարտության մեջ, հասկանալի է, վճռական գործոն հանդիսացավ անգլիական զորքերի լավ զինված լինելը: Ապս-

տամբներն անհամեմատ վատ էին զինված, և անգլիական կանոնավոր զորքերին նրանք հիմնականում հակադրում էին իրենց հերոսությունը և Եգիպտոսի անկախության համար իրենց կյանքը զոհելու պատրաստակամությունը: Սակայն դա բավարար չէր հաղթանակի համար:

Եվ վերջապես՝ Եգիպտոսը միայնակ էր և դրսից որևէ օգնություն կամ աջակցություն չստացավ: Ճիշտ է, Եգիպտացի հայտնի պատմաբան ալ–Շաֆին, որը զբաղվել է Եգիպտոսի հակաբրիտանական, հակագաղութային պայքարի պատմության ուսումնասիրությամբ, «Ազգային–ազատագրական շարժման զարգացումը Եգիպտոսում» փաստերով հարուստ իր աշխատության մեջ ընդգծելով, որ Խորհրդային Ռուսաստանի ստեղծումով «առաջին անգամ հանդես եկավ մի մեծ պետություն, որը ոչ ոքի չի ուզում գաղութացնել և կանգնել է աշխարհի բոլոր ազատասեր ուժերի կողքին», նշում է, իբրև թե «այդ նոր պետությունը Սաադ Զաղլուլին առաջարկեց օգնել զենքով, սակայն նա վախեցավ և մերժեց»: Ցավոք, այդ փաստը, որը խիստ կարևոր է և հետաքրքիր, չի հաստատվում այլ աղբյուրներով, մանավանդ՝ երբ և ինչպես, ինչ պայմաններում է խորհրդային կառավարությունը նման առաջարկություն արել Վաֆդ ալ–Միսրի ղեկավար Սաադ Զաղլուլին, պարզ չէ:

Սակայն, անկախ այդ ամենից և չնայած պարտությանը, 1919 թ. ապստամբությունը Եգիպտոսի պատմության մեջ մտել է որպես մի փայլուն էջ և կարևոր քայլ անկախության հասնելու Եգիպտոսի տատասկոտ ճանապարհին:

3. Իրադարձությունների հետագա զարգացումը և 1921 թ. ապստամբությունը

Սաադ Զաղլուլը, ազատվելով Մալթայի գերեվարությունից, 1919 թ. ապրիլի 11–ին մեկնեց Փարիզ՝ Խաղաղության կոնֆերանսին ներկայացնելու եգիպտական պահանջները, որոնք ամրագրված էին Վաֆդի ազգային ծրագրում: Վաֆդի հիմնադիր ղեկավարը Փարիզ մեկնեց՝ լավատեսորեն տրամադրված: Նա հույս ուներ, որ կոնֆերանսի մասնակիցների, հատկապես նրա գլխավոր դերակատարների վրա իր ազդեցությունն էր թողել 1919 թ. ապստամբությունը, որը վկայում էր Եգիպտոսի ժողովրդի վճռականության մասին մինչև վերջ պայքարել իր հայրենիքի ազգային անկախության համար: Դրա հետ միասին նա առանձնահատուկ հույսեր էր կապում ԱՄՆ–ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի

հետ: Սաադ Զաղլուլը շատ էր տպավորված Վիլսոնի 14 կետերով, հատկապես նրա այն կետով, որը նախատեսում էր քաղաքական անկախություն նախկին Օսմանյան կայսրության մեջ մտնող ժողովուրդներին, այդ թվում և արաբներին:

Փարիզի կոնֆերանսում միմյանց բախվեցին Սաադ Զաղլուլի և Լլոյդ Ջորջի տեսակետները: Մինչ Վաֆդի առաջնորդը ձգտում էր հասնել իր պահանջների կատարմանը՝ կապված պրոտեկտորատի վերացման հետ, Անգլիային հաջողվեց կոնֆերանսին ընդունել տալ որոշում առ այն, որ նա հաստատում է բրիտանական պրոտեկտորատը Եգիպտոսի վրա: Եվ հետաքրքիրն այն է, որ այդ որոշման օգտին էր քվեարկել և պաշտոնապես ճանաչել անգլիական պրոտեկտորատը Եգիպտոսի վրա նաև ԱՄՆ–ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը:

Դառը հիասթափություն ապրած Սաադ Զաղլուլին ոչինչ չէր մնում անել, քան դատարկածեռն վերադառնալ Կահիրե:

1919 թ. ապստամբության պարտությամբ Եգիպտոսի հայրենասիրական ուժերի պայքարը երկրի անկախության համար չդադարեց: 1919–1921 թթ. երկրի տարբեր վայրերում տեղի էին ունենում հակաբրիտանական ելույթներ, որոնք բրիտանական իշխանություններին պահում էին լարվածության մեջ:

Հակաբրիտանական պայքարի ծավալներից ու թափից լրջորեն անհանգստացած Անգլիան հասկանում էր, որ անհրաժեշտ են փոխզիջումային բնույթի քաղաքական քայլեր: Այդ նպատակով 1919 թ. դեկտեմբերի 7–ին հատուկ առաքելությամբ Կահիրե ժամանեց անգլիական պաշտոնական մի պատվիրակություն, որը գլխավորում էր Մեծ Բրիտանիայի գաղութների նախարար Միլները: Նա պետք է ուսումնասիրեր իրադրությունը տեղում, հանդիպեր եգիպտական տարբեր ազգային և քաղաքական գործիչների հետ, իմանար նրանց տրամադրությունները, ընդհանուր պատկերացում կազմեր և համապատասխան առաջարկություններ ներկայացներ իր կառավարությանը Եգիպտոսի ապագա կարգավիճակի վերաբերյալ:

Միլներին Կահիրեում ընդունեցին շատ վատ: Տեղի էին ունենում ցույցեր և զանազան տիպի հավաքներ՝ ընդդեմ նրա այցի և Եգիպտոսում անգլիական իշխանությունների քաղաքականության: Նրանք պնդում էին պրոտեկտորատի վերացման և Եգիպտոսի անկախության իրենց համազգային պահանջների վրա: Միլները Եգիպտոսում մնաց մինչև 1920 թ. մարտ ամիսը:

Նա Անգլիա վերադարձավ շատ ծանր տպավորություններով: Նրան պարզ դարձավ, որ պրոտեկտորատի պահպանումը գործնականում արդեն անհնար է, և դա Անգլիայից կխլի շատ մեծ ջանքեր ու զոհողություններ: Ուստի իր կառավարությանը ներկայացրած զեկուցագրում գաղութների նախարարը խորհուրդ էր տալիս. ա) հրաժարվել պրոտեկտորատից և ծնականորեն ճանաչել Եգիպտոսի անկախությունը, և բ) Եգիպտոսին դրա դիմաց պարտադրել մի այնպիսի պայմանագիր, որն ապահովի Մեծ Բրիտանիայի տիրապետող դիրքերը Եգիպտոսում:

Նա նաև խորհուրդ էր տալիս որոշ զիջումների գնով համագործակցություն հաստատել ազգային ուժերի պահպանողական թևի հետ և պառակտել ազգային–ազատագրական ուժերի շարքերը:

Հետևելով Միլների առաջարկություններին՝ Անգլիան 1920–1921 թթ. փորձում էր Եգիպտոսին պարտադրել մի այնպիսի անհավասար պայմանագիր, որը կոչված էր հաշվի առնել բրիտանական քաղաքական, ռազմաստրատեգիական և տնտեսական շահերը: Բայց դա չհաջողվեց նրան: Եգիպտական կողմը մերժում էր նման պայմանագիր ստորագրել Անգլիայի հետ:

Այնուհետև այդ հարցերի լուծումն իր ձեռքը վերցրեց անգլիական արտաքին գործերի նախարար լորդ Քերզոնը: 1921 թ. նա ներկայացրեց Եգիպտոսի հետ «դաշինքի» պայմանագրի նախագիծ, որը նախատեսում էր շարունակել Կահիրեի և Ալեքսանդրիայի ռազմական օկուպացիան, հաստատել Անգլիայի վերահսկողությունը Եգիպտոսի արտաքին քաղաքականության վրա, պահպանել անգլիական ֆինանսական և իրավաբանական խորհրդատուների ինստիտուտը, անգլիական պրոտեկտորատը Սուդանի վրա և այլն:

Քերզոնի ներկայացրած պայմանագրի նախագիծը այդ ամենի դիմաց նախատեսում էր պրոտեկտորատի վերացում և Եգիպտոսի անկախություն:

Այս պայմանագրի տեքստը, նրա պայմաններն ուղղակի առաջացրեցին Եգիպտացիների խոր զայրույթը, մանավանդ որ այն ներկայացվել էր վերջնագրի ձևով: Երկրում կրկին սկսվեցին ցույցերը, բողոքի ելույթները, գործադուլները և այլն: Ձգտելով գլխատել սկսված հակաբրիտանական նոր շարժումը և կանխել նրա հետագա խորացումը՝ Ալլենբիի հրամանով կրկին ձերբակալվեցին Սաադ Զաղլուլը և Վաֆդի այլ ղեկավարներ, որոնք աքսորվեցին սկզբում Հնդկական օվկիանոսում գտնվող Սեյշելյան կղզիներ, ապա տեղափոխվեցին Անգլիային պատկանող Ջիբրալթարի ամրոցը:

Սաադ Զաղլուլի նոր ծերբակալության լուրն ազդանշան ծառայեց նոր և զանգվածային հակաբրիտանական ելույթների համար: Եգիպտոսում սկսվեց համազգային քաղաքական գործադուլ, որը յուրատեսակ մի բոյկոտ էր բրիտանական իշխանություններին:

1921 թ. դեկտեմբերին Եգիպտոսում սկսվեց մի նոր ապստամբություն: Շատ վայրերում զինված ընդհարումներ էին տեղի ունենում ապստամբների և անգլիական զորքերի միջև: Ապստամբները հարձակվում էին անգլիական զինվորների վրա, պայթեցնում ռազմական պահեստները, անգլիացիներից խլում զենքը և ուղղում նրանց դեմ:

Բայց բրիտանական իշխանություններն այս անգամ գործեցին ավելի արագ, վճռական և կազմակերպված: Ալեքսանդրիա, Սուեզ, Պորտ Սաիդ և Իսմայիլիա ուղարկվեցին անգլիական ռազմական նավեր, որոնք այդ կարևոր քաղաքները և ապստամբական կենտրոնները կարողացան վերցնել իրենց վերահսկողության տակ: Կահիրեի և մյուս քաղաքների վրա ժողովրդին վախեցնելու նպատակով անընդմեջ պարեկություն էին անում անգլիական ինքնաթիռները: Անգլիական զինվորները գործում էին անողոքաբար և դաժանորեն ճնշում ապստամբական կենտրոնները քաղաքներում և գյուղական վայրերում: Այդ ամենի հետևանքով բրիտանական իշխանություններին հաջողվեց նույնպես ճնշել այս երկրորդ ապստամբությունը: Նա առաջին՝ 1919 թ. ապստամբության համեմատ ավելի կարճատև եղավ, իսկ կազմակերպչական առումով նույնպես զիջում էր նրան: Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ 1921 թ. ապստամբությունը որոշ իմաստով տարերային բնույթ էր կրում, իսկ Վաֆդը չունեցավ այն դերակատարումը, որն ուներ առաջին ապստամբության ժամանակ:

Այդուհանդերձ, նա, ինչպես ցույց կտրվի ստորև, անհետևանք չանցավ: Նա ունեցավ իր դրական դերակատարումը ապստամբությանը հաջորդած շրջանում ընդունված քաղաքական որոշումների ընդունման մեջ:

4. Պրոտեկտորատի վերացումը և Եգիպտոսի անկախության հռչակումը

1919 և 1921 թվականների զույգ ապստամբությունները, նրանց միջև ընկած ժամանակահատվածում առկա մշտական և կայուն լարվածությունը, Եգիպտոսի բոլոր գույների քաղաքական ուժերի և սոցիալական բոլոր խավերի վճռականությունը՝ հասնելու պրոտեկտորատի վե-

ռացման և Եգիպտոսի անկախության նվաճման, ցույց էին տալիս, որ գործնականում Մեծ Բրիտանիայի համար ավելի ու ավելի դժվար էր դառնում պահպանել իր տիրապետությունը Եգիպտոսում՝ առանց փոփոխությունների և համապատասխան զիջումների: Այդ մասին բարձրաձայն խոսում էին Լոնդոնի կառավարական կաբինետներում և միջանցքներում: Նույն ոգով էին արտահայտվում բրիտանական իշխանությունների ներկայացուցիչները Կահիրեում: Նրանց ավելի էր համակել Եգիպտոսի կարգավիճակի մեջ փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության գաղափարը: Այդ առումով խիստ բնորոշ էր Եգիպտոսում բրիտանական գլխավոր կոմիսար, գեներալ Ալլենբիի տեսակետը, որը նա արտահայտել է 1922 թ. փետրվարի 22–ին. «Պրոտեկտորատի ռեժիմը այլևս չի համապատասխանում գոյություն ունեցող իրադրությանը»:

1922 թ. փետրվարի 28–ին Մեծ Բրիտանիայի կառավարությունը միակողմանիորեն հայտարարեց, որ ինքը «հրաժարվում է պրոտեկտորատից և Եգիպտոսը ճանաչում է որպես անկախ ինքնիշխան պետություն»:

Այստեղ ուշագրավ է այն պարագան, որ բրիտանական հռչակագիրը ոչ թե երկու՝ եգիպտական և բրիտանական, կողմերի համատեղ հայտարարություն էր, այլ միակողմանի գործողություն: Դա բացատրվում է նրանով, որ Մեծ Բրիտանիային այդպես էլ չհաջողվեց ստիպել Եգիպտոսին պայմանագիր կնքել Միլների և Քերզոնի առաջարկությունների հիման վրա: Ստեղծված պայմաններում նա հարկադրված էր նախընտրել միակողմանի հայտարարության ձևը, որը, միջազգային դիվանագիտության մեջ նույնպես ընդունված պրակտիկա է:

Սակայն Մեծ Բրիտանիան հենց այնպես, առանց որոշ, կարելի է ասել, սկզբունքային բնույթի վերապահումների, չհրաժարվեց պրոտեկտորատից և չճանաչեց Եգիպտոսի անկախությունն ու գերիշխանությունը: Նա դա պայմանավորեց չորս կարևոր հանգամանքներով, որոնց իրագործումը նա վերցնում էր իր վրա. ա) Եգիպտոսի պաշտպանություն, բ) Եգիպտոսում բրիտանական կայսրության կոմունիկացիաների անվտանգության ապահովում, գ) Եգիպտոսում օտարերկրյա շահերի և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն, և դ) պրոտեկտորատի պահպանում Սուդանում՝ անգլո–եգիպտական համատեղ կառավարման (կոնդոմինիում) ձևով:

Եգիպտոսում պահպանվում էր բրիտանական գլխավոր կոմիսարի և խորհրդականների ինստիտուտը:

Այսպիսով՝ պրոտեկտորատի վերացումից և Եգիպտոսի անկախության հռչակումից հետո ևս բրիտանացիները մնում էին այնտեղ՝ պահպանելով իրենց տիրապետող քաղաքական, ռազմական և տնտեսական դիրքերը: Տարօրինակ էր, որ Մեծ Բրիտանիան, առանց եգիպտական մարմինների և ղեկավարների հետ համաձայնեցնելու, իր վրա էր վերցնում նրա «պաշտպանության» հոգսը: Անգլիացիները վերահսկելու էին եգիպտական բոլոր կարևոր տրանսպորտային, այդ թվում և ջրային ուղիները, ինչպես նաև Սուեզի ջրանցքը՝ դրանք հայտարարելով որպես կարևոր կայսերական ուղիներ: Պահպանելով իրենց տիրապետությունը Սուդանի վրա՝ անգլիացիները հնարավորություն էին ստանում վերահսկողություն հաստատել Նեղոսի ջրերի վրա: Բրիտանացիները կայսերական ուղիների ապահովման և Եգիպտոսի պաշտպանության պատրվակով կարող էին իրենց ռազմական ուժերը տեղադրել Եգիպտոսի ցանկացած վայրում:

Իսկ գլխավոր կոմիսարի և բրիտանական խորհրդականների ինստիտուտի պահպանումով Անգլիան շարունակում էր իր ձեռքում պահել եգիպտական կառավարության վրա ներազդելու լծակները:

Բրիտանական հռչակագրի հրապարակումից մի քանի օր անց՝ 1922 թ. մարտին, Եգիպտոսի սուլթան Ահմադ Ֆուադը իրեն հայտարարեց թագավոր՝ Ֆուադ I, որը նշանակում էր, որ Եգիպտոսն ընդունում էր միապետական կառավարման աստիճանակարգում ամենաբարձր տիտղոսներից մեկը:

Ինչպե՞ս կարելի է գնահատել 1922 թ. փետրվարի 28–ի բրիտանական հռչակագիրը:

Այս հարցում մասնագետների և քաղաքական ու պետական գործիչների մոտ միասնական տեսակետ գոյություն չունի, անգամ առկա են միանգամայն իրարամերժ և ծայրահեղական գնահատականներ:

Խորհրդային արևելագիտության մեջ անվերապահորեն տիրապետող էր հանդիսանում, այսպես կոչված, ժխտողական տեսակետը, համաձայն որի՝ բրիտանական դեկլարացիան՝ պրոտեկտորատի վերացման և Եգիպտոսի անկախության հռչակման վերաբերյալ, լոկ ձևական բնույթ էր կրում, և նրա կարգավիճակում, ըստ էության, սկզբունքային բնույթի ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել: Եգիպտոսը խորհրդային պատմագիտության կողմից շարունակում էր դասվել «գաղութային և կախյալ երկրների» շարքը. մի ձևակերպում, որն այն տարիներին լայն տարածում էր ստացել խորհրդային պատմագիտական գրականության

մեջ: Այս տեսակետը, որն այսօր ևս գտնվում է շրջանառության մեջ, առանձին հեղինակների աշխատություններից անցել և տեղ էր գտել դասագրքերում, այդ թվում և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար նախատեսված դասագրքերում: Իսկ դա նշանակում էր, որ այդ տեսակետը դարձել էր պաշտոնական, քանի որ նրանք՝ դասագրքերը, հաստատվել են Ռուսաստանի կրթության նախարարության կողմից և հանձնարարվել համալսարանների և ինստիտուտների ուսանողներին: Ահա դրա օրինակներից մեկը: Խոսքը 2001 թ. Մոսկվայում հրատարակված «Ասիայի և Աֆրիկայի երկրների նորագույն պատմություն. XX դար. 1900–1945» դասագրքի մասին է, որտեղ գրված է, որ պրոտեկտորատի վերացումից և անկախության հռչակումից հետո «Եգիպտոսը փաստորեն Անգլիայի գաղութն էր»:

Դա ծայրահեղական տեսակետ էր, որը վերը նշված բրիտանական չորս նախապայմանների հետևում ընդհանրապես չէր ուզում նկատել որևէ տեղաշարժ բրիտանական գաղութային կապանքների թուլացման և Եգիպտոսի ինքնիշխանության ամրապնդման ճանապարհին: Մյուս կողմից հարկ է նշել, որ Եգիպտոսը դասական առումով երբեք անգլիական գաղութ չի եղել:

Մյուս ծայրահեղական տեսակետը տիրապետող է հանդիսանում բրիտանական պատմագիտական և քաղաքական գրականության մեջ, որն անվերապահորեն ընդունում և պաշտպանում են նաև բրիտանական բոլոր աստիճանակարգի պետական գործիչները:

Եթե խորհրդային պատմագիտությունն անվերապահորեն ժխտում էր որևէ տեղաշարժ Եգիպտոսի անկախության ճանապարհին, ապա անգլիական պատմագիտության մեջ նույն անվերապահությամբ ընդգծվում է ոչ միայն պրոտեկտորատի վերացումը, այլև Եգիպտոսի վերածումը իսկապես անկախ ինքնիշխան պետության՝ անտեսելով Մեծ Բրիտանիայի իրավունքների պահպանումը մի շարք առանցքային հարցերում, որոնք, այդ թվում և գլխավոր կոմիսարի ինստիտուտի պահպանումը, անշուշտ, սահմանափակում էին այդ ինքնիշխանությունը: Սակայն Մեծ Բրիտանիայում խանդավառությամբ չտեսնելու էին տալիս այդ պարագան և սնով սպիտակի վրա գրում, որ 1922 թ. փետրվարի 28–ին Եգիպտոսը դարձավ «անկախ ինքնիշխան պետություն»:

Կա մի հետաքրքիր տեսակետ, որն ամրագրված է Վիկիպեդիա հանրագիտարանում: Այնտեղ Եգիպտոսի անկախությունը չի համարվում կատարյալ, այլ բնութագրված է որպես «Մասնակի անկախություն

(Partial independence) Միացյալ թագավորությունից, շնորհված 1922 թ. փետրվարի 28–ին»: Այդ նույն հանրագիտարանում դրան անմիջապես հաջորդում է հետևյալը. «Լրիվ անկախություն (Total independence)՝ 1953 թ. հունիսի 18–ին»: Այդ վերջին տարեթիվը նշելով՝ նկատի է առնված միապետության պաշտոնական վերացումը Եգիպտոսում, որը կայացավ 1952 թ. հուլիսի 23–ի հեղափոխությունից հետո՝ 1953 թ. հունիսի 18–ին:

Ինչ վերաբերում է եգիպտական պատմագիտությանը, իսկ լայն առումով նաև արաբական պատմագիտությանը, ապա նրանք չեն ընդունում բրիտանական միակողմանի հռչակագրում տրված սահմանումն առ այն, որ Եգիպտոսը 1922 թ. դարձավ «անկախ ինքնիշխան պետություն»: Ընդունելով հանդերձ որոշ տեղաշարժեր՝ եգիպտական և արաբական պատմագիտությունը շեշտում է, որ Եգիպտոսը 1922 թ. չթոթափեց բրիտանական տիրապետությունը: Դրա մասին է վկայում Եգիպտոսի պայքարն իր անկախության համար առնվազն ևս 30 տարի՝ մինչև 1952 թ. հուլիսի 23–ի հաղթանակը:

Մեր կարծիքով՝ պետք է հրաժարվել վերևում նշված երկու ծայրահեղական տեսակետներից և ցուցաբերել ավելի առարկայական մոտեցում՝ հարցը քննարկելով իրավական և քաղաքական տեսանկյուններից:

Իրավական տեսակետից 1922 թ. փետրվարի 28–ին իրոք վերացվեց պրոտեկտորատը, և իրավական կամ ձևական առումով նա այլևս Մեծ Բրիտանիային ենթակա երկիր չէր, մանավանդ եթե հաշվի առնենք, որ բրիտանական այդ դեկլարացիայով նրա նախկին «բոսը»՝ Անգլիան, հրաժարվում էր պաշտոնապես իր այդ իրավական իրավունքներից և իր երեկվա կախյալ երկիրը հռչակում «անկախ ինքնիշխան» պետություն: Այդ նոր իրողությունն անտեսելն արդարացված չէ:

Քաղաքական առումով պատկերը, իրոք, այլ է, և նա ամբողջությամբ չի համընկնում իրավական իրողությունների հետ: Այստեղ, այսինքն, քաղաքական առումով կա Եգիպտոսի ինքնիշխանության, որը նշանակում է նաև անկախության որոշակի սահմանափակում: Եվ չնայած այդ հանգամանքին՝ անգլո–եգիպտական հարաբերություններն այլևս այն չէին, ինչ որ էին մինչև 1922 թ. փետրվարի 28–ը: Տեղի ունեցավ առաջընթաց և եգիպտական իրավունքների ու ինքնիշխանության ընդլայնում՝ ի հաշիվ բրիտանական իրավունքների սահմանափակման:

Այստեղից հետևում է, որ խոսք չի կարող լինել Եգիպտոսի կատարյալ անկախության մասին, բայց մյուս կողմից էլ նա այլևս նախկին

պրոտեկտորատը չէր: Եգիպտոսը մի քայլ առաջ կատարեց պրոտեկտորատից, բայց չհասավ անկախության լիիրավ մակարդակի:

Այդ առումով ճշմարտությանն ավելի մոտ են եգիպտական և արաբական պատմաբանները, ինչպես նաև Վիկիպեդիա հանրագիտարանը, քան անգլիական և խորհրդային արևելագետները:

II. 1923 թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ 1936 թ. ԱՆԳԼՈ–ԵԳԻՊՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1. 1923 թ. սահմանադրության ընդունումը և հետպրոտեկտորյան Եգիպտոսի ինստիտուցիոնալիստական գործընթացի ավարտը

Բրիտանական պրոտեկտորատի վերացումից, Եգիպտոսի անկախության հայտարարումից և սուլթան Ֆուադի թագավոր հռչակվելուց հետո անհրաժեշտ էր այդ բոլոր փոփոխությունների իրավական հաստատումը՝ նրանց օրինականություն տալու իմաստով: Իսկ դա կարող էր արվել՝ ընդունելով սահմանադրություն, որի՝ որպես երկրի հիմնական օրենքի իրավասության մեջ էր մտնում երկրի նոր իրավիճակի ու պետական նոր կարգի հաստատումը՝ նրանց ինստիտուցիոնալիզացիան:

Նոր սահմանադրության մշակման համար 1923 թ. ստեղծվեց հանձնաժողով՝ կազմված չափավոր ազգայնականներից, իսլամական բարձրագույն հոգևորականության, հողատերերի և բուրժուազիայի ներկայացուցիչներից: Ժողովրդական խավերն այնտեղ ներկայացված չէին:

Հանձնաժողով ստեղծելու նպատակահարմարության մասին իր հատուկ տեսակետն ուներ Վաֆդը: Նա գտնում էր, որ ոչ թե հանձնաժողովը պետք է մշակի սահմանադրությունը, այլ Սահմանադիր ժողովը՝ պահանջելով գումարել Սահմանադիր ժողովի նիստ: Քանի որ նրա այդ առաջարկը չանցավ, Վաֆդը հրաժարվեց մասնակցել կառավարության ստեղծած հանձնաժողովի աշխատանքներին:

Հանձնաժողովը բավականին արագ պատրաստեց սահմանադրության նախագիծ, որը 1923 թ. ապրիլի 19–ին հաստատեց Ֆուադ I թագավորը:

Սահմանադրության համաձայն՝ **Եգիպտոսը դառնում էր սահմանադրական միապետություն:**

Ստեղծվում էր երկպալատանի պառլամենտ՝ կազմված սենատից և դեպուտատների պալատից: Բարձրագույն պալատը սենատն էր, որն օժտված էր վետոյի իրավունքով: Նրա անդամների 40%–ին նշանակում էր թագավորը: Ինչ վերաբերում է դեպուտատների պալատին, ապա նա ընտրվում էր երկաստիճան ընտրությունների հիման վրա: Թագավորն իրավունք ուներ վետո դնել դեպուտատների պալատի որոշումների վրա, սակայն նրա վետոն վերջնական չէր, այլ միայն որոշման հետաձգման ուժ ուներ, և դեպուտատների պալատը կարող էր կրկին նրան անդրադառնալ: Թագավորն իրավունք ուներ նաև ցրել դեպուտատների պալատը և նոր պառլամենտական ընտրություններ անցկացնել:

Կազմվում էր կառավարություն, որը պատասխանատու էր պառլամենտի և թագավորի առջև: Պառլամենտի կողմից կառավարությանը անվստահության քվե հայտնելու դեպքում կառավարությունը հրաժարական էր տալիս:

Սահմանադրությունը պարունակում էր մի շարք հոդվածներ Եգիպտոսի և օտարերկրյա քաղաքացիների իրավունքների վերաբերյալ: Եգիպտոսի քաղաքացիներին սահմանադրությունը խոստանում էր մի շարք դեմոկրատական իրավունքներ, որոնք ձևական բնույթ էին կրում: Իսկ ինչ վերաբերում է օտարերկրյա քաղաքացիներին, ապա դրան վերաբերող հոդվածը երաշխավորում էր օտարերկրյա քաղաքացիների իրավունքները և արտոնությունները, որոնցից օգտվում են նրանք Եգիպտոսում: Այսինքն՝ նրանք շարունակում էին օգտվել կապիտուլյացիաներից, որը գալիս էր դեռևս օսմանյան շրջանից:

Ընդունվեց նաև ընտրական օրենք, որը սահմանում էր պառլամենտական երկաստիճան ընտրություններ: Դրա հիման վրա 1923 թ. կայացան պառլամենտական առաջին ընտրությունները, որի ժամանակ փայլուն հաղթանակ տարավ Վաֆդը, որն արդեն վերակազմավորվել էր կուսակցության և կոչվում էր Հիզբ ալ–Վաֆդ: Պառլամենտը բաղկացած էր 215 դեպուտատական տեղերից, որոնցից Հիզբ ալ–Վաֆդը շահեց 188 տեղ, այսինքն՝ բացարձակ մեծամասնությունը: Դա իրավունք տվեց նրան կազմել կառավարություն և 1924 թ. հունվարի 23–ին Ֆուադ I–ը հանձնարարեց Վաֆդի առաջնորդ Սաադ Զաղլուլին կազմել կառավարություն, որը պատմության մեջ մտել է որպես Եգիպտոսի առաջին ազգային կառավարություն:

Այսպիսով՝ պրոտեկտորատի վերացման մասին բրիտանական որոշումից երկու տարի անց ավարտվեց Եգիպտոսի նոր պետական

կարգի ստեղծումը, նրա կառավարական ու պառլամենտական մարմինների ձևավորումը: Եգիպտոսը դարձավ թագավորություն, որտեղ թագավորի տիտղոսով շարունակեց կառավարել Մուհամմադ Ալիի դինաստիան: Երկիրը ստացավ իր սահմանադրությունը, ընտրական օրենքը, պառլամենտը և կառավարությունը:

Դա նշանակում էր հետպրոտեկտորյան Եգիպտոսի պետական համակարգի ձևավորման, հաստատման և օրինականացման՝ ինստիտուցիոնալիզմի ավարտ:

2. Հիզբ ալ–Վաֆդը կառավարող կուսակցություն: Հարաբերությունների սրումը նրա և պալատի ու բրիտանական իշխանությունների միջև

Պառլամենտական ընտրությունների ժամանակ Վաֆդի տարած ջախջախիչ հաղթանակը պատահական չէր: Դա վկայում էր այն մեծ հեղինակության մասին, որ նա վայելում էր Եգիպտոսի ժողովրդի ու հասարակության տարբեր խավերի մոտ: Դա խոսում էր նաև այն մասին, որ նրանք՝ այդ ուժերը, վստահում էին Վաֆդին և նրան համարում այն գլխավոր քաղաքական ուժը, որը կարող է իրագործել նրանց պահանջները և լուծել Եգիպտոսի առջև կանգնած բազում դժվար ու բարդ խնդիրները:

Վաֆդը մեծ բեռ վերցրեց իր ուսերին:

Այդ բեռն ավելի էր ծանրանում, քանի որ հենց սկզբից լարված հարաբերություններ էին ստեղծվել մի կողմից՝ Վաֆդի առաջնորդների, հատկապես Սաադ Զաղլուլի, մյուս կողմից՝ Ֆուադ թագավորի և բրիտանական գլխավոր կոմիսարի միջև: Այդ իրավիճակը պատմության մեջ մտել է որպես «Հակամարտության եռանկյունի»: Դրությունն ավելի էր բարդանում նրանով, որ այդ եռանկյունու երկու կողմերը՝ եգիպտական թագավոր Ֆուադ I–ը և բրիտանական իշխանությունները, համարյա մշտապես միասնական էին հանդես գալիս ընդդեմ Վաֆդի, նրա կառավարության, երբ նա գտնվում էր իշխանության գլուխ, և նրա ղեկավար Սաադ Զաղլուլի:

Սաադ Զաղլուլի կառավարությունը ձեռնարկեց մի շարք քայլեր ներքին քաղաքականության բնագավառում: Նրան հաջողվեց վերանայել ընտրական օրենքը և նոր օրենք ընդունել, որը վերացրեց երկաստիճան ընտրությունների համակարգը և մտցրեց ուղղակի կամ միաստիճան ընտրությունների համակարգ: Դրանով Եգիպտոսը մի առաջընթաց

քայլ էր կատարում երկրի դեմոկրատացման ուղղությամբ և դուռը փակում ընտրությունների ժամանակ հնարավոր մեքենայությունների առջև:

Սաադ Զաղլուլի կառավարությունն իր կարևոր խնդիրներից մեկը համարեց հարաբերությունների հետագա կարգավորումը Մեծ Բրիտանիայի հետ վերջինիս իրավունքները սահմանափակելու և Եգիպտոսի անկախությունն ամրապնդելու ճանապարհով: Եղավ մի պահ, երբ Սաադ Զաղլուլը լավատեսորեն էր տրամադրված այդ հարցում և հույս ուներ համաձայնության գալ բրիտանական կառավարության հետ: Դա կապված էր այն իրողության հետ, որ 1924 թ. Անգլիայում կայացած պառլամենտական ընտրությունների ժամանակ պարտություն կրեց տորիների՝ պահպանողականների կուսակցությունը, և հաղթեց լեյբորիստների կուսակցությունը, որի լիդերը՝ Ռամզեյ Մակդոնալդը, իր ընտրարշավի ժամանակ խոստացել էր հաղթելու դեպքում ճանաչել Եգիպտոսի լիակատար անկախությունը: Երբ Ռ. Մակդոնալդը կազմեց լեյբորիստական կառավարություն, Սաադ Զաղլուլը պահանջեց, որ բրիտանական զորքերը դուրս բերվեն ոչ միայն Եգիպտոսից, այլև Սուդանից: Լեյբորիստական կառավարությունը մերժեց բավարարել եգիպտական կառավարության պահանջը: Դրան ի պատասխան՝ Սաադ Զաղլուլը կատարեց իր վճռական քայլերից մեկը: Նա պահանջեց Եգիպտոսի և Սուդանի լրիվ անկախությունը:

Այսպիսով՝ հերթական անգամ սրվեցին եգիպտա–անգլիական հարաբերությունները: Ստեղծված փակուղուց ելք գտնելու նպատակով և ցանկանալով ճնշում գործադրել Սաադ Զաղլուլի վրա՝ Ռ. Մակդոնալդը եգիպտական վարչապետին բանակցությունների համար պաշտոնապես հրավիրեց Լոնդոն՝ հույս ունենալով, որ ճնշում գործադրելով նրա վրա՝ կկարողանա համաձայնության գալ նրա հետ:

Անգլո–եգիպտական բանակցությունները տեղի ունեցան 1924 թ. սեպտեմբերին Լոնդոնում: Պատվիրակությունները գլխավորում էին համապատասխանաբար երկու երկրների վարչապետները՝ Ռամզեյ Մակդոնալդը և Սաադ Զաղլուլը: Դրանք ընթանում էին շատ ծանր և, ի վերջո, ավարտվեցին անհաջողությամբ: Պատճառը բրիտանական կողմի հրաժարվելն էր Եգիպտոսին տալ լիակատար անկախություն, որի վրա պնդում էր եգիպտական կողմը: Նման պայմաններում Սաադ Զաղլուլն անհնար գտավ որևէ զիջում կատարել Անգլիային Սուդանի հարցում և շարունակեց պնդել վերացնել Սուդանի վրա անգլիական պրոտեկտորատը: Անգլիան Եգիպտոսին մերժեց նաև այդ հարցում:

Սաադ Զաղլուլի հետևողականությունը և Անգլիային որևէ զիջում չկատարելու նրա վճռականությունը շատ բացասական տպավորություն թողեցին անգլիական կողմի վրա, որի մոտ հասունացավ Սաադ Զաղլուլի գլխավորած կառավարությունը ամեն գնով իշխանությունից հեռացնելու գաղափարը: Այդ պարտականությունը դրվեց Եգիպտոսում բրիտանական գլխավոր կոմիսար, արդեն ֆելդմարշալի զինվորական բարձրագույն կոչումը ստացած Ալլենբիի վրա, որն իր հերթին փորձեց օգտագործել թագավորին՝ նկատի ունենալով, որ վերջինս որոշ պայմաններում կարող է ստիպել կառավարությանը հրաժարական տալ: Ֆուադ I–ը փորձեց իրականացնել անգլիացիների պահանջը, բայց չհաջողվեց: Ի պաշտպանություն Սաադ Զաղլուլի վաֆդական կառավարության՝ հանդես եկան Եգիպտոսի ժողովրդական ամենալայն զանգվածները, և վախեցած թագավորը նահանջեց:

Սաադ Զաղլուլի կառավարությունը Անգլիայի հետ իր փոխհարաբերություններում չշեղվեց իր որդեգրած քաղաքականությունից և շարունակելով պնդել անգլիական օկուպացիոն ուժերը երկրից դուրս բերելու պահանջի վրա՝ դրան ավելացրեց մի նոր կարևոր պահանջ ևս՝ անգլիական սպաներին և հրահանգիչներին հետ կանչել եգիպտական բանակից: Այդ հարցում նրան պաշտպանեց Եգիպտոսի դեպուտատների պալատը՝ պառլամենտը, որը 1924 թ. հունիսի 24–ին ընդունեց մի որոշում, որով արգելվեցին Եգիպտոսում անգլիական օկուպացիոն բանակի պահպանման համար նախատեսվող ծախսերը, որոնք տարեկան կազմում էին 146 հազ. ֆունտ ստեռլինգ: Բացատրելով իր գլխավորած կառավարության քաղաքականությունն այդ հարցում՝ Սաադ Զաղլուլը հայտարարեց. «Մենք ուզում ենք ամբողջ բանակը դարձնել բացառապես ազգային եգիպտական»:

Բրիտանական կառավարության համար Սաադ Զաղլուլի կառավարությանը իշխանությունից հեռացնելը շարունակում էր մնալ օրակարգի հարց: Միայն թե նա սպասում էր ավելի հարմար առիթի, որը շատ սպասել չտվեց: Դրան օգնեց մի պատահար, որն ալեկոծեց ողջ Եգիպտոսը և Սուդանը:

Սուդանում տեղի էր ունեցել ապստամբություն ընդդեմ բրիտանական իշխանությունների, որը դաժանորեն ճնշել էր Սուդանի բրիտանական գլխավոր կոմիսար Լի Ստեկը: Դրանից հետո նա՝ որպես «հերոս», ժամանեց Կահիրե, որտեղ 1924 թ. նոյեմբերի 22–ին ընկավ մի

խումբ հայրենասերների գնդակից: Նշենք, որ նա նշանակվել էր նաև եգիպտական բանակի գլխավոր հրամանատար:

Լի Ստեկի սպանությունը, որի հանգամանքները մինչև օրս լիովին պարզաբանված չեն, Անգլիայի համար ամենահարմար առիթը դարձավ մեղքը բարդել եգիպտական կողմի վրա և պահանջել Սաադ Զաղլուլի կառավարության հրաժարականը: Ըստ որում՝ դա արվեց էժանագին թատերական ներկայացում հիշեցնող ձևով: Նոյեմբերի 22–ին՝ Լի Ստեկի սպանությունից հետո, Ալլենբիի հրամանով նրա հեծյալ զորագունդը շրջապատեց պառլամենտի և կառավարության շենքը, որից հետո նա եգիպտական կառավարությանը ներկայացրեց մի վերջնագիրը՝ բաղկացած, ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, եգիպտոսի ազգային արժանապատվությունը վիրավորող հետևյալ ստորացուցիչ կետերից. ա) ներողություն խնդրել Լի Ստեկի սպանության համար, բ) խստորեն պատժել մեղավորներին, գ) արգելել բոլոր տեսակի ժողովրդական ցույցերը, դ) վճարել 500 հազ. ֆունտ ստեռլինգ փոխհատուցում, ե) 24 ժամվա ընթացքում Սուդանից հետ կանչել եգիպտական զորքերը, ե) անգլիական մոնոպոլիաներին իրավունք ընձեռել անսահմանափակ կերպով ընդլայնելու ոռոգելի տարածքները Սուդանում՝ նրա Գեզիրե շրջանում, զ) ճանաչել անգլիական կառավարության բացառիկ իրավունքը եգիպտոսում օտարերկրացիների իրավունքների պահպանման հարցում, է) հարգել ներքին գործերի նախարարության եվրոպական դեպարտամենտի կարգավիճակը (այդ անվան տակ գործում էր անգլիական ոստիկանական մարմինը), ը) կատարել նրա տնօրենի հանձնարարականները:

Եգիպտական կառավարությունը հայտնվեց ծանր դրության մեջ: Վերջնագրի բոլոր պայմանների ընդունումը կնշանակեր եգիպտոսի լիակատար կապիտուլյացիա և հաստատումն այն իրողության, որ եգիպտոսը անգլիական տիրապետության տակ գտնվող մի սովորական գաղութային երկիր է: Մյուս կողմից՝ Կահիրեում լավ էին հասկանում, որ ամբողջությամբ մերժել Ալլենբիի կողմից ներկայացրած բրիտանական վերջնագիրը տվյալ պահին անհնար էր:

Սաադ Զաղլուլը փորձեց գտնել մի միջին գիծ: Նոյեմբերի 23–ին, այսինքն՝ բրիտանական վերջնագրի հաջորդ օրը, եգիպտական կառավարությունը պատասխան նոտա ուղարկեց, որով նա տեղեկացնում էր անգլիական կողմին, որ ինքն ընդունում է բրիտանական վերջնագրի առաջին չորս պահանջները, իսկ ինչ վերաբերում էր մյուս կետերին,

ապա եգիպտական կառավարությունը հայտնում էր, որ դրանք անընդունելի են իր համար:

Այսպիսով՝ երկու կողմերն էլ հստակորեն ներկայացրին իրենց դիրքերը և մնում էր անգլիական կողմին որոշել, թե դեպքերը հետագայում ինչ ուղղությամբ կարող են ընթանալ: Ալլենբին երկար սպասել չտվեց: Նրա հրամանով անգլիական զինվորները բառացիորեն ողողեցին Կահիրեի փողոցները՝ վերահսկողություն հաստատելով բոլոր օբյեկտների վրա, իսկ Ալեքսանդրիա և Պորտ Սաիդ մտան անգլիական ռազմանավերը, հրաման արձակվեց ուժով եգիպտական զորքերը Սուդանից դուրս բերելու մասին: Այսպիսով՝ Եգիպտոսը հայտնվեց անգլիական ռազմական բռունցքի տակ:

Բոլորը սպասում էին, թե ինչ դիրք կգրավի Սաադ Զաղլուլի կառավարությունը: Նա բավարարվեց միայն բողոք հայտնելով, սակայն խուսափեց դիմել գործնական քայլերի: Ամենայն հավանականությամբ նա կարող էր կոչով դիմել ժողովրդին ոտքի ելնել և պաշտպանել Եգիպտոսի իրավունքները և արժանապատվությունը: Սակայն նա չդիմեց այդ քայլին՝ չցանկանալով արյուն թափել: Միաժամանակ կառավարությունը հրաժարական տվեց:

Այսպիսով՝ Անգլիային հաջողվեց հասնել իր նպատակին՝ ստիպել Սաադ Զաղլուլի կառավարությանը հրաժարական տալ և ռազմական վերահսկողություն սահմանել Եգիպտոսի վրա:

1924 թ. նոյեմբերին կազմվեց նոր կառավարություն Ահմադ Զիվար փաշայի գլխավորությամբ, որը հայտարարեց իր համաձայնության մասին ամբողջությամբ կատարել անգլիական վերջնագրի բոլոր պայմանները: Սուդանից դուրս բերվեցին եգիպտական զորքերը:

Պառլամենտը ցրվեց, և 1925 թ. սկզբներին կայացան նոր պառլամենտական ընտրություններ: Բրիտանացիները հույս ունեին, որ ընտրություններում կհաղթանակեն Անգլիայի հետ սերտորեն համագործակցության կողմնակիցները: Բայց դարձյալ հաղթեցին վաֆդականները: Բնականաբար, դա ձեռնտու չէր ոչ բրիտանական իշխանություններին և ոչ էլ արքունիքին: Ուստի թագավորի հրամանով այդ նորընտիր պառլամենտը, որը գոյություն ունեցավ ընդամենը 10 ժամ, ցրվեց՝ այդպես էլ չկարողանալով սկսել իր գործառույթները: 1926 թ. տեղի ունեցան նոր պառլամենտական ընտրություններ, որոնք դարձյալ հաղթանակ բերեցին Վաֆդ կուսակցությանը: Սաադ Զաղլուլն ընտրվեց Եգիպտոսի դեպուտատների պալատի նախագահ: Բայց արքունիքին և բրիտանական գլ-

խավոր կոմիսարին հաջողվեց կանխել Վաֆդի կողմից կառավարություն կազմելը, և վարչապետ նշանակվեց Սարվատը, որը չէր պատկանում Վաֆդ կուսակցությանը: Նա, փաստորեն, կատարում էր այն, ինչ պահանջում էին արքունիքը և բրիտանական իշխանությունները:

1927 թ. մահացավ Սաադ Զաղլուլը, որը, անկասկած, հանդիսանում էր հետպատերազմյան առաջին տասնամյակի եգիպտական ամենահեղինակավոր պետական գործիչը: Նրան, որպես Վաֆդի նախագահ, փոխարինեց Մուստաֆա Նահաս փաշան, որն ընդհանուր առմամբ շարունակում էր Սաադ Զաղլուլի քաղաքականությունը, և որին վիճակված էր հետագայում ակնառու դեր խաղալ Եգիպտոսի քաղաքական կյանքում:

Սարվատի գլխավորած կառավարությունը երկար կյանք չունեցավ: Նրա համար դժվար էր իշխանության գլուխ մնալ այն իրադրության մեջ, երբ պառլամենտում մեծամասնություն էին կազմում Վաֆդի դեպուտատները: Հենց նրանց ճնշման տակ Սարվատի կառավարությունը հրաժարական տվեց, և Վաֆդի նոր ղեկավար Նահաս փաշան կազմեց իր առաջին կառավարությունը:

Այդ ժամանակների համար բնորոշ էր քաղաքական անկայունությունը, և կառավարություններն արագորեն փոխարինում էին մեկը մյուսին: Շուտով հրաժարական տվեց Նահասի կառավարությունը, ապա՝ նրան փոխարինած լիբերալ–սահմանադրական կուսակցության ղեկավար Մուհամմադ Մահմուդի կառավարությունը և այլն:

3. 1930 թ. պետական հեղաշրջումը

1930 թ. Եգիպտոսում տեղի ունեցան հերթական պառլամենտական ընտրությունները, որոնց ժամանակ հերթական անգամ հաղթեց Վաֆդ կուսակցությունը, և Մուստաֆա Նահասը կազմեց իր նոր կառավարությունը:

Նրա ներքին քաղաքականության մեջ արդեն դրսևորվում էին նոր մոտեցումներ: Մասնավորապես, նա արգելեց գործադուլները, իսկ ցույցերի դեպքում նա չէր վարանում նրանց դեմ կիրառել ռազմական ուժ: Նահասի կառավարությունը ցուցաբերեց նաև պատրաստակամություն որոշ հարցերի շուրջը համաձայնության գալ Անգլիայի հետ, և այդ հիման վրա 1930 թ. փետրվարին սկսվեցին անգլո–եգիպտական բանակցություններ, որոնք, սակայն, ավարտվեցին անարդյունավետ: Անգ-

լո–եգիպտական պայմանագրի անգլիական նախագծում, որը դրվեց բանակցությունների սեղանին, նախատեսվում էր, որ Անգլիան պահպանելու է իր տիրապետությունը Սուդանի վրա: Եգիպտական կողմը չէր կարող համաձայնվել այդ կետի հետ և հրաժարվեց ստորագրել անգլո–եգիպտական պայմանագիրը:

Դա առիթ հանդիսացավ, որպեսզի եգիպտական թագավորը անգլիացիների ուղղակի պահանջով 1930 թ. հունիսին կատարի պետական հեղաշրջում, որը եգիպտոսի պատմության մեջ մտել է «հետադիմական հեղաշրջում» անվամբ: Նահասի վաֆդական կառավարությունը հեռացվեց իշխանությունից, և եգիպտոսի վարչապետ նշանակվեց «Հիզբ աշ–Շաաբի»՝ ժողովրդի կուսակցության ղեկավար Իսմայիլ Սիդկին, որը եգիպտոսի խոշորագույն կալվածատերերից և ֆինանսիստներից մեկն էր:

Պետական հեղաշրջումը եգիպտոսում ընդունվեց ծայրահեղ դժգոհությամբ: Եգիպտացիների անմիջական պատասխանը եղավ համընդհանուր գործադուլը, բանվորները, գյուղացիները և ուսանողությունը ցույցերի և ելույթների միջոցով իրենց բողոքն էին հայտնում արքունիքի և նրա թիկունքում կանգնած բրիտանացիների այդ քաղաքականության դեմ: Նրանց հիմնական պահանջները դարձան երկուսը՝ եգիպտոսի ազգային անկախությունը և Սիդկիի կառավարության հրաժարականը: Կահիրեի, Ալեքսանդրիայի և այլ քաղաքների փողոցներում կրկին հայտնվեցին բարիկադներ, Մանսուրում և այլ քաղքներում չէին դադարում բազմահազարանոց ցույցերը, որոնց դեմ Սիդկիի կառավարությունը գործադրում էր ռազմական ուժ: Երկրում հասունացել էր նոր ապստամբական իրադրություն: Սակայն նա հետագա զարգացում չստացավ, որովհետև հակաբրիտանական և հակաթագավորական ուժերը կազմակերպված չէին և չունեին պայքարը ղեկավարող միասնական և հեղինակավոր կենտրոն, իսկ իշխանություններն էլ շատ վճռական եղան նրանց դեմ զինված ուժեր կիրառելու հարցում:

Ճնշելով ժողովրդական ելույթները՝ Սիդկիի կառավարությունը դիմեց շատ համարձակ քայլի: Նրա որոշմամբ 1930 թ. հոկտեմբերին դադարեցվեց 1923 թ. սահմանադրության գործողությունը, և մտցվեց նոր սահմանադրություն: Դրանով փորձ էր արվում պետական հեղաշրջմանը տալ իրավական ուժ:

Սահմանադրությունն ընդլայնեց թագավորի իրավունքները և սահմանափակեց պառլամենտի լիազորությունները, այսինքն՝ այն, ինչին նրանք ձգտում էին տարիներ շարունակ: Կատարվեցին նաև այլ փոփո-

խություններ, մասնավորապես, ավելացավ թագավորի կողմից սենատում նշանակվի սենատորների թիվը, վերականգնվեց երկաստիճան ընտրական համակարգը և այլն: Եվ վերջապես՝ այդ նոր սահմանադրությունը պարունակում էր մի հոդված, որտեղ ամրագրված էր, որ նա, այսինքն՝ սահմանադրությունը, չի կարող վերանայման ենթարկվել առաջիկա տասը տարիների ընթացքում:

1931 թ. նշանակվեցին պառլամենտական ընտրություններ՝ ըստ նոր սահմանադրության: Այդ ընտրությունները փորձաքար էին հանդիսանալու թե իշխանությունների՝ արքունիքի, կառավարության և բրիտանական գլխավոր կոմիսարի ու նրա անձնակազմի և թե՛ եգիպտական ազգային հակաբրիտանական ուժերի համար:

Եգիպտական ազգային ուժերն ընդունեցին իշխանությունների և նրանց հետևում կանգնած անգլիացիների մարտահրավերը: Ի նշան բողոքի՝ երկրում սկսվեցին զանգվածային ցույցերը, որոնք համարձակորեն մարտի էին բռնվում իրենց դեմ նետած զորքերի հետ, փողոցային մարտերը դարձել էին սովորական երևույթ: Այդ ելույթների մեջ զգալիորեն աճել էր բանվորների տեսակարար կշիռը, նշանակալի էր նաև գյուղացիների դերակատարումը: Ուշագրավ էր այն փաստը, որ գյուղացիներ առաջադրում էին նաև տնտեսական և սոցիալական բնույթի պահանջներ, ինչպես, օրինակ՝ հարկերի վերացում, վարձակալության վճարի նվազեցում, անգամ նոր հողաբաժիններ:

Իշխանություններին հաջողվեց մեծ լարվածությամբ ճնշել ազգային ուժերի այս ելույթները: Բայց դա հանդարտություն չբերեց Եգիպտոսին: Լարվածությունը երկրում պահպանվում էր, շարունակվում էին նաև ելույթները, որոնք, ճիշտ է, այնպես ուժեղ չէին, ինչպես նախկինում, բայց մեծ անհանգստություն էին պատճառում իշխանություններին:

Դրան պետք է ավելացնել Եգիպտոսի տնտեսական դրության վատթարացումը՝ կապված նաև 1929–1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետ: Ճգնաժամի հետևանքով կրճատվեց բամբակի արտահանումը, որը հանգեցրեց բամբակի մշակման հողատարածքների կրճատմանը, խիստ ընկան գյուղատնտեսական մթերքների գները, որն ուղղակի աղետ եղավ ֆելահների համար, մանավանդ որ հարկերը, վարձակալման վճարները և վաշխառուների տոկոսադրույքները պահպանվեցին նախկին մակարդակի վրա: Կրճատվեց արդյունաբերական արտադրանքը, փակվեցին բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ և արհեստանոցներ: Կտրուկ աճեց գործազուրկների

թիվը, իսկ ծանր պայմաններում հայտնված և հողազուրկ գյուղացիները փախչում էին քաղաքներ՝ համալրելով գործազուրկների բանակը, որոնց թիվը 1932 թ. հասնում էր 500 հազարի, իսկ դա փոքր թիվ չէր Եգիպտոսի նման մի երկրի համար:

Պատահական չէ, որ 1930–ական թվականներին անընդհատ տեղի էին ունենում գործադուլներ, ցույցեր և բողոքի միտինգներ, որոնց ժամանակ աշխատավոր խավերն առաջ էին քաշում սոցիալական և տնտեսական պահանջներ՝ աշխատավարձի բարձրացում, աշխատանքային պայմանների բարելավում, գործազրկության վերացում և այլն: Այդ պահանջների կատարմամբ 1934 թ. հանդես եկան Կահիրեի կաշեգործները և տրանսպորտի աշխատողները, Մանսուրի ծխախոտագործները, Դամյատի տեքստիլագործները և այլ քաղաքների ու արդյունաբերական ճյուղերի բանվորները: Որոշ դեպքերում նրանց շահերի պաշտպանությամբ էին հանդես գալիս արհմիությունները: Իշխանությունները, վախենալով սոցիալական պայքարի հետագա սրումից, խոստումներ էին տալիս աշխատավորներին, սակայն, որպես կանոն, նրանք չէին կատարում իրենց այդ խոստումները: Այսպես, օրինակ՝ իշխանությունները խոստացան մշակել աշխատանքային օրենսդրություն և բարելավել աշխատավորների պայմանները, բայց այդ ամենը մնաց որպես դատարկ խոստում:

Քաղաքական լարվածության այդ ընդհանուր համապատկերում ծավալվեց նոր շարժում՝ հանուն Սիդկիի կառավարության հրաժարականի, 1930 թ. սահմանադրության վերացման և 1923 թ. սահմանադրության վերականգնման, որոնք ուղեկցվում էին հակաբրիտանական լոզունգներով, ինչպես՝ «Անգլիան մեր թշնամին է» և այլն:

Արքունիքը և բրիտանական իշխանությունները կրկին հայտնվեցին անելանելի դրության մեջ և հարկադրված էին նահանջել ու դիմել զիջումների: Վարկաբեկված և արքունիքի ու բրիտանական իշխանությունների կամակատար կառավարությունը 1934 թ. հարկադրված էր հեռանալ իշխանությունից, իր ուժը կորցրած համարվեց 1930 թ. սահմանադրությունը, և չեղյալ համարվեց այդ նույն թվականին ընդունված ընտրական օրենքը: Երկար ձգձգումներից հետո իշխանությունները, Անգլիայի համաձայնությամբ, ի վերջո հարկադրված էին 1935 թ. դեկտեմբերի 12–ին վերականգնել ու գործողության մեջ դնել 1923 թ. սահմանադրությունը:

Այդ ամենը կարելի է համարել Եգիպտոսի ազգային և հայրենասիրական ուժերի, գյուղի և քաղաքի աշխատավորների մեծ հաղթանակը: Իսկ այդ հաղթանակը նշանակում էր, որ Անգլիային և եգիպտական ար-

քունիքին չհաջողվեց իրագործել իրենց այն ծրագրերը, որոնց համար նրանք կատարել էին 1930 թ. պետական հեղաշրջումը:

4. Անգլո–եգիպտական 1936 թ. պայմանագիրը

1936 թ. մայիսին՝ 1923 թ. սահմանադրությունը վերականգնելուց հետո, եգիպտոսում տեղի ունեցան առաջին պառլամենտական ընտրությունները, որոնք ավարտվեցին դարձյալ Վաֆդ կուսակցության համոզիչ հաղթանակով: Վաֆդը մեծամասնություն նվաճեց պառլամենտի երկու պալատներում: Հատկապես հատկանշական էր նրա հաղթանակը սենատում, որտեղ նա 79 տեղերից շահեց 62–ը:

Կառավարություն կազմելը, բնականաբար, հանձնարարվեց Վաֆդի առաջնորդ Մուստաֆա Նահասին: Այս անգամ դա սովորական հաղթանակ չէր, որովհետև Մուստաֆա Նահասի կառավարության հետ կապվում էին հատուկ հույսեր անգլո–եգիպտական պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Նման պայմանագրի կնքումը Անգլիայի երազանքն էր, և այդ ուղղությամբ մինչ այդ՝ 1920–1930–ական թվականներին կատարված բազմաթիվ փորձեր վերջացել էին անհաջողությամբ: Դրան դեմ էին եգիպտոսի ազգային–հայրենասիրական բոլոր գլխավոր և հեղինակավոր ուժերը, այդ թվում և Վաֆդն ու նրա ղեկավար Սաադ Զաղլուլը, և 1927 թ. նրան փոխարինած Մուստաֆա Նահասը: Իսկ մյուս՝ ոչ վաֆդական Զիվարի, Սարվատի և Սիդկիի կառավարությունները թեև ցանկություն ունեին և համաձայն էին նման մի պայմանագիր ստորագրել, սակայն նրանք այնքան հեղինակություն, ուժ և ազդեցություն չունեին, որ կարողանային, հակառակ երկրի ազգային–հայրենասիրական ուժերի, Անգլիայի հետ կնքել դաշնության վերաբերյալ պայմանագիր:

Անգլիայում և եգիպտոսի արքայական պալատում հասկացան, որ միակ ուժը, որն ի վիճակի է նման քայլի դիմել, Վաֆդ կուսակցությունն է:

Վաֆդի դիրքորոշումն այդ հարցում զգալի փոփոխությունների էր ենթարկվել: Նա հույս ուներ նախատեսվող պայմանագրում ներառնել այնպիսի հոդվածներ, որոնց շնորհիվ կնվազեր կախվածությունը Անգլիայից և կթուլանային անգլիական քաղաքական, և ռազմական դիրքերը եգիպտոսում:

Իրենց դերը խաղացին նաև ֆաշիզմի ակտիվացումը և նրա ծավալապաշտական քաղաքականությունը աշխարհի տարբեր մասերում,

այդ թվում և Աֆրիկայում: Հատկապես սթափեցնող ներգործություն ունեցավ Իտալիայի ագրեսիան Եթովպիայում, որը Եգիպտոսում և Անգլիայում ընկալվեց որպես սպառնալիք՝ կախված Եգիպտոսի գլխին, որը հավասարապես վտանգ էր նշանակում նաև Անգլիայի համար: Այսպիսով՝ երկրորդ համաշխարհային պատերազմի մոտալուտ վտանգը և ֆաշիստական Գերմանիայի ու Իտալիայի ագրեսիվ գործողությունները ստիպեցին Անգլիային և Եգիպտոսին վերանայել իրենց դիրքորոշումները, մեծենալ և կնքել համապատասխան պայմանագիր:

Պայմանագիրը ստորագրվեց 1936 թ. օգոստոսի 26-ին Լոնդոնում: Նրա պաշտոնական անվանումն էր «Պաշինքի վերաբերյալ պայմանագիր Եգիպտոսի և Մեծ Բրիտանիայի ու Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության միջև»: Պայմանագիրը Եգիպտոսի անունից ստորագրեց վարչապետ Մուստաֆա Նահասը, իսկ Մեծ Բրիտանիայի կողմից՝ արտաքին գործերի նախարար Անտոնի Իդենը, որը համարվում էր բրիտանական դիվանագիտության բարձրացող աստղը:

Պայմանագրի առաջին հոդվածի համաձայն՝ պաշտոնապես դադարում էր Եգիպտոսի ռազմական օկուպացիան Անգլիայի կողմից: Դա այն էր, որի համար եգիպտացիները պայքարում էին XIX դարի վերջերից, ավելի կոնկրետ՝ 1882 թ.-ից, երբ անգլիացիները ճնշեցին Օրաբիի ապստամբությունը և գրավեցին Եգիպտոսը:

Եգիպտոսի և Անգլիայի միջև, ըստ պայմանագրի չորրորդ հոդվածի, հաստատվում էր պաշինք, և կողմերը պարտավորվում էին փոխադարձ խորհրդակցություններ իրականացնել այլ պետությունների հետ կոնֆլիկտի դեպքում, միմյանց փոխադարձ օգնություն ցույց տալ «պատերազմի, պատերազմի վտանգի և արտակարգ միջազգային իրադրությունների դեպքում»: Եգիպտոսը պարտավորվում էր Անգլիային տրամադրել «իր իշխանության տակ գտնվող բոլոր հնարավորությունները և օգնություն», ներառյալ նավահանգիստները, օդանավակայանները և հաղորդակցության միջոցները:

Դրա հետ միասին կողմերը համաձայնվեցին, որ թեև վերջ էր տրվում անգլիական օկուպացիային, բրիտանական ցամաքային զորքերը՝ մինչև 10 հազ. մարդ, և օդային ուժերը՝ 400 օդաչու, մնում էին Սուեզի ջրանցքի գոտում, մինչև որ եգիպտական բանակը կկարողանար սեփական ուժերով ապահովել ջրանցքի անվտանգությունը: Անգլիական զորքերը ութ տարի ժամանակով մնում էին Ալեքսանդրիայում, իսկ Կահիրեում՝ մինչև Սուեզի ջրանցքի գոտում նոր զորանոցների և մի շարք

ստրատեգիական ճանապարհների կառուցումը: Ալեքսանդրիայում պահպանվում էր նաև անգլիական ռազմածովային բազան: Պահպանվում էր անգլիական ինքնաթիռների իրավունքը՝ թռչել ամբողջ Եգիպտոսի տարածքով և օգտագործել նրա բոլոր օդանավակայանները:

Պայմանագրի համաձայն՝ անգլիական սպաները հետ էին կանչվում եգիպտական բանակից, բայց դրա փոխարեն Եգիպտոսը հրավիրում էր բրիտանական ռազմական առաքելությունը՝ եգիպտական բանակը վարժեցնելու համար: Եգիպտոսը պարտավորվում էր արտասահման սովորելու համար իր սպաներին ուղարկել միայն Անգլիայի ռազմական հաստատությունները:

Պայմանագրի մի շարք հոդվածներ վերաբերում էին արտաքին քաղաքականության ոլորտին: Կողմերը պարտավորվում էին արտաքին հարաբերություններում չգրավել այնպիսի դիրք, որը կհակասի սույն դաշնային պայմանագրի դրույթներին: Վերացվում էր Եգիպտոսում անգլիական գլխավոր կոմիսարի պաշտոնը, և հետայսու բրիտանական ներկայացուցիչը լինելու էր դեսպանը, որն օգտվելու էր ավագության իրավունքից: Անգլիան միաժամանակ պարտավորվում էր պաշտպանել Եգիպտոսի թեկնածությունը Ազգերի լիգայի անդամության համար:

Փոփոխություն տեղի ունեցավ նաև Սուդանի հարցում, որը Եգիպտոսի համար շատ հիվանդագին հարց էր: 1924 թ. Սուդանում բրիտանական գլխավոր կոմիսարի սպանությունից հետո, որը տեղի ունեցավ Կահիրեում, Անգլիան, խախտելով նախկին համաձայնությունները, միակողմանիորեն իր տիրապետությունը հաստատեց Սուդանի վրա՝ վերացնելով անգլո–եգիպտական համատեղ կառավարումը, և ստիպեց Եգիպտոսին իր զորքերը դուրս բերել Սուդանից: Այժմ դաշնության վերաբերյալ պայմանագրով Անգլիան համաձայնվում էր վերականգնել նախկին կարգավիճակը՝ անգլո–եգիպտական կոնդոմինիումը, և եգիպտական զորքերն իրավունք էին ստանում վերադառնալ Սուդան:

Պայմանագրի համաձայն՝ վերացվում էին եգիպտական կառավարությանը կից անգլիական ֆինանսական և իրավաբանական խորհրդականների պաշտոնները, Անգլիան պարտավորվում էր օժանդակել կապիտուլյացիաների վերացմանը, մասնավորապես, այսպես կոչված, հյուպատոսական դատարանների վերացմանը և նրանց փոխարինումը խառը դատարաններով: Վերացավ նաև Պետական անվտանգության դեպարտամենտի եվրոպական բյուրոն, որը գտնվում էր անգլիացիների ձեռքում:

Ահա այսպիսին էր 1936 թ. անգլո–եգիպտական դաշինքի վերաբերյալ պայմանագրի հիմնական բովանդակությունը:

Պայմանագրի մի շարք հոդվածներ անաչառ մոտեցման դեպքում վկայում են այն մասին, որ այն նպաստում էր Եգիպտոսի դիրքերի ամրապնդմանն անկախության և ինքնիշխանության հարցերում: Պաշտոնապես վերացվում էր Եգիպտոսի օկուպացիան Անգլիայի կողմից, անգլիական զորքերը, որոնք մինչ այդ ազատորեն կարող էին տեղակայվել Եգիպտոսի բոլոր մասերում, քաղաքներում և բնակավայրերում, այժմ կենտրոնանում էին որոշակի գոտիներում, գլխավորապես Սուեզի ջրանցքի գոտում: Վերացվում էր անգլիական ամենազոր գլխավոր կոմիսարի պաշտոնը, որն ինքնին հանդիսանում է օտարերկրյա տիրապետության խորհրդանիշ, և փոխարինվում միջազգային գործառույթներում ընդունված քաղաքակիրթ՝ դեսպանի պաշտոնով: Ուշագրավ էին նաև մի շարք այլ դրույթներ, որոնք վերաբերում էին անգլիական խորհրդականների և զինվորական հրահանգիչ սպաների ինստիտուտների վերացմանը, կապիտուլյացիաներին, դատական համակարգին, Սուդանի կառավարմանը և այլն:

Նշենք նաև, որ պայմանագրում նշված մի շարք հոդվածներ կենսագործվեցին Անգլիայի կողմից: 1937 թ. մայիսին Եգիպտոսը ընդունվեց Ազգերի լիգայի անդամ, որը նպաստում էր նրա միջազգային դիրքերի ամրապնդմանը և հեղինակության բարձրացմանը: Իսկ 1937 թ. ապրիլ–մայիս ամիսներին Մոնտրյոում գումարվեց միջազգային կոնֆերանս՝ նվիրված կապիտուլյացիաների վերացման հարցին: Կոնֆերանսը բավարարեց Եգիպտոսի պահանջը և Անգլիայի օժանդակությամբ հասավ այն բանին, որ Եգիպտոսը 1937 թ. հոկտեմբերից ազատվեց մոտ 400 տարի գործած կապիտուլյացիաներից:

Մյուս կողմից, սակայն, աչք չպետք է փակել այն փաստի առջև, որ պայմանագրի մի շարք հոդվածներ ծառայում էին Անգլիայի դիրքերի և ազդեցության պահպանմանը և Եգիպտոսի ինքնիշխանության սահմանափակմանը, որն ակնառու է վերը նշված մի շարք հոդվածներից: Իրոք, այն որոշ իմաստով կարելի է համարել անիրավահավասար պայմանագիր:

Սրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ պայմանագիրը միանշանակ չընդունվեց Եգիպտոսում նրա տարբեր քաղաքական ուժերի կողմից:

Վաֆդը, նրա ղեկավար Մուստաֆա Նահասը և նրա զինակիցները գոհ էին պայմանագրից և խոսքեր չէին խնայում այն գովաբանելու հա-

մար: Պայմանագրի տակ իր ստորագրությունը դրած Մուստաֆա Նահասը պայմանագիրը բնութագրեց որպես «պատվի և անկախության պայմանագիր»:

Ազգայնական և հայրենասիրական ուժերի որոշ թևեր իրենց դժգոհությունը հայտնեցին պայմանագրի ստորագրման կապակցությամբ և բողոքի միտինգներ կազմակերպեցին նրա դեմ՝ այն որակելով որպես մի պայմանագիր, որը «Եգիպտոսի վրա հաստատեց քողարկված պրոտեկտորատ»: Դա զգալի չափով գցեց Վաֆդի վարկը հաչս եգիպտացիների:

Պայմանագրի ստորագրումից հետո ուժեղացավ աջակողմյան և ձախակողմյան ընդդիմությունը Վաֆդի դեմ: Աջակողմյան ընդդիմությունը, որը ներկայացնում էր խոշոր հողատերերի և օտարերկրյա կապիտալի հետ կապված խոշոր առևտրական խավը, փորձում էր երկրում կուտակված դժգոհությունը Վաֆդի նկատմամբ շահագործել Մուստաֆա Նահասի կառավարությունը տապալելու և երկրի կառավարման համակարգում իր դիրքերն ամրապնդելու համար:

Այդ մթնոլորտն իր բացասական ազդեցությունն ունեցավ բուն Վաֆդի վրա, որի շարքերում առաջացան տարաձայնություններ: Դրա արդյունքում 1937 թ. տեղի ունեցավ պառակտում, և նրա կազմից դուրս եկավ մեծահարուստների մի խումբ Ահմադ Մահիրի, Մահմուդ Նուկրաշիի և Գալեբի գլխավորությամբ: Նրանք կազմեցին մի խմբավորում, որն իրեն անվանեց սաադականներ՝ Սաադ Զաղլուլի կողմնակիցներ:

Իրենց վերաբերմունքը բացասական իմաստով Վաֆդի հանդեպ փոխեցին նաև արքունիքը և Անգլիան: Այդ ժամանակ արքունիքում տեղի էին ունեցել կարևոր փոփոխություններ: 1936 թ. մահացավ Ֆուադ I–ը, և գահն անցավ նրա որդուն՝ Ֆարուկ I–ին: Հարաբերությունները Ֆարուկ I–ի, նրա արքունիքի վերնախավի և Վաֆդի միջև անմիջապես ընդունեցին ոչ բարեկամական բնույթ, որն ավելի շատ պայմանավորված էր թագավորական պալատի դիրքորոշումով: Պայմանագրի ստորագրումից հետո Մուստաֆա Նահասի գլխավորած կառավարությունն այլևս ոչ պալատին և ոչ էլ Անգլիային պետք չէր: Թուլացել էր նաև նրա հենարանը երկրի ներսում: Ժամանակն էր, որ նա հեռանար: «Մավրն արեց իր գործը, Մավրը հեռանում է»:

Ֆարուկ I–ը 1937 դեկտեմբերին ցրեց պառլամենտը, որից հետո հրաժարական տվեց Մուստաֆա Նահասի վաֆդական կառավարությունը:

Թեև դեռ շուտ էր Վաֆդին հաշվից դուրս նետել, նա դեռ իրեն ապագայում ցույց կտա, սակայն 1937 թ. դեկտեմբերին քաղաքական և

պետական կյանքում տեղի ունեցած իրադարձությունները վկայում էին, որ գալիս էին նոր ժամանակներ, երբ Վաֆդի դեմ քաղաքական դաշտում հանդես էին գալու նոր և լուրջ մրցակիցներ, և Եգիպտոսի քաղաքական կյանքում ավելի ակտիվ դեր էին խաղալու հետադիմական ուժերը, մանավանդ արքունիքում ազդեցիկ պաշտոններ գրաված գործիչները:

Դրա մասին էր խոսում նաև այն հանգամանքը, որ Նահասի կառավարության անկումից հետո կառավարությունը գլխավորեց Մուհամմադ Մահմուդը՝ Եգիպտոսի հետադիմական ուժերի ամենահայտնի պարագլուխներից մեկը: Նրա կառավարությունը գոյատևեց մինչև 1939 թ. օգոստոսը, երբ նրան փոխարինելու եկավ նոր կառավարություն, որը գլխավորեց թագավորական գրասենյակի պետ, խոշոր ֆինանսիստ և կալվածատեր Ալի Մահիրը, որ համարվում էր ամենահետադիմական գործիչներից մեկը Եգիպտոսի քաղաքական ասպարեզում:

III. ԵԳԻՊՏՈՍԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1939–1945 թթ.)

1. Իմպերիալիստական մեծ պետությունների գլխավոր քաղաքական նպատակները Արաբական Արևելքում Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ

Արաբական Արևելքը մշտապես կարևոր դերակատարում է ունեցել համաշխարհային քաղաքականության մեջ: Գտնվելով ասիական, աֆրիկյան և եվրոպական մայրցամաքների հանգուցակետում՝ Արաբական Արևելքը գրավում է կարևոր աշխարհագրական և ստրատեգիական դիրք ու հանդիսանում միջազգային ցամաքային, ջրային և օդային ուղիների կարևոր հանգույց: Տարածաշրջանը հարուստ է բնական ռեսուրսներով, առաջին հերթին նավթով և այլ օգտակար հանածոներով, ինչպես նաև գյուղատնտեսական հումքով՝ բամբակ, հատիկավոր կուլտուրաներ, ցիտրուսներ, մրգեր և այլն: Այդ պատճառով նա վերին աստիճանի գրավիչ է և մագնիսի պես իրեն է ձգում մեծ տերությունների ուշադրությունը, որոնք հետամուտ են իմպերիալիստական քաղաքականությանը: Այն երկիրը, որն ունի գերակա դիրքեր Արաբական Արևելքում, կարող է ոչ միայն մեծ շահույթներ քաղել, այլև ձեռք բերել հսկա-

յական քաղաքական ազդեցություն ամբողջ Մերձավոր ու Միջին Արևելքում, ինչպես նաև Ասիայի և Աֆրիկայի նշանակալի մասում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ձևավորվեցին մի քանի ռազմաքաղաքական թատերաբեմեր, ինչպես՝ եվրոպական, որն ամենագլխավորն էր, ասիական, հեռավորարևելյան, խաղաղօվկիանոսյան և աֆրիկյան: Իր կարևորությամբ աչքի էր ընկնում նաև մերձավորարևելյանը, որի միջուկը կազմում էր արաբական տարածաշրջանը:

Պատերազմի ժամանակ Արաբական Արևելքում հիմնական դերակատարներն էին Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան և ԱՄՆ–ը: Ինչ վերաբերում է ԽՍՀՄ–ին, ապա նա պատմական այդ ժամանակահատվածում նշանակալի դիրքեր չուներ Արաբական Արևելքում, իսկ 1941 թ. հունիսի 22–ին ֆաշիստական Գերմանիայի հարձակումից հետո նա կենաց ու մահու արյունաքամ պատերազմ էր մղում իր գոյությունը պահպանելու և Գերմանիային ու նրա դաշնակիցներին եվրոպական թատերաբեմում պարտության մատնելու համար:

Վերոնշյալ հինգ պետությունների քաղաքական նպատակները Արաբական Արևելքում ոչ միայն տարբերվում էին մեկը մյուսից, այլև տրամագծորեն հակառակ էին:

Պատերազմը սկսվելու պահին Արաբական Արևելքում ամենաուժեղ դիրքերն ուներ Անգլիան, որին հաջորդում էր Ֆրանսիան: Արաբական Արևելքի երկրներն այս կամ այն չափով կախման մեջ էին գտնվում նրանցից: Նրանց քաղաքականությունը պատերազմի ժամանակ կարելի է բնութագրել որպես պահպանողական: Նրանց նպատակն էր պահպանել իրենց տիրապետությունն ու դիրքերը և կանխել արաբական երկրների, առաջին հերթին՝ Եգիպտոսի, Իրաքի, Պաղեստինի, Սիրիայի և Լիբանանի գրավումը Գերմանիայի ու Իտալիայի կողմից:

ԱՄՆ–ը տերիտորիալ նպատակներ չէր հետապնդում, այսինքն՝ նրա քաղաքական նպատակների մեջ չէր մտնում արաբական որևէ երկրի գրավումը: Նրա նպատակն էր. առաջին՝ թույլ չտալ, որ արաբական երկրներն ընկնեն ֆաշիստական երկրների տիրապետության տակ: Այս հարցում նրա շահերը համընկնում էին Անգլիայի ու Ֆրանսիայի շահերի հետ: Երկրորդ՝ ԱՄՆ–ը, սակայն, բնավ մտադիր չէր անխախտ պահել անգլիական և ֆրանսիական գաղութային տիրապետությունը, և դրա համար զոհաբերել ամերիկյան զինվորներին ու կրել ծանր ֆինանսական ու նյութական զոհողություններ: Նրա նպատակն էր թուլացնել դասական գաղութային կայսրությունները և դրա հաշվին ամրապնդել իր

դիրքերը՝ մինչև անգամ գաղութներին, պրոտեկտորատներին ու այլ կախյալ երկրներին անկախություն տալու գնով: ԱՄՆ–ի պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտին հաջողվեց ստիպել անգլիական վարչապետ Ուինստոն Չերչիլին 1941 թ. օգոստոսի 14–ին ստորագրել Ատլանտյան խարտիան, որի մեջ բառացիորեն ամրագրված էր հետևյալը. «Նրանք (ԱՄՆ–ը և Անգլիան — Ն. Հ.) ցանկանում են վերականգնված տեսնել այն ժողովուրդների ինքնիշխան իրավունքները և ինքնակառավարումը, որոնք բռնությամբ զրկվել են դրանցից»: Բանակցությունների ընթացքում, որոնք ընթանում էին դժվարությամբ, Չերչիլը, դիմելով Ռուզվելտին, ասում է. «Պարոն պրեզիդենտ, ինձ թվում է, որ դուք փորձում եք վերջ տալ Բրիտանական կայսրությանը: Դա երևում է հետպատերազմյան շրջանում աշխարհի վերակազմավորման վերաբերյալ ձեր մտքերի ընթացքից»: Իսկ մեկ այլ առիթով բրիտանական վարչապետը դիմելով Ռուզվելտին, պաթետիկորեն բացականչում է, որ ինքը «ոչ այն բանի համար է դարձել Նորին մեծության վարչապետը, որ նախագահի Բրիտանական կայսրության վերացմանը»:

Գերմանիան և Իտալիան չէին թաքցնում իրենց ագրեսիվ նպատակները՝ դուրս մղել Անգլիային ու Ֆրանսիային Արաբական Արևելքից, կանխել որևէ այլ պետության, այսինքն՝ ԱՄՆ–ի, հավանաբար նաև Խորհրդային Միության ներթափանցումը և իրենց լիակատար տիրապետությունը հաստատել ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող այդ տարածաշրջանում: Արաբական Արևելքի գրավումը Գերմանիան և Իտալիան համարում էին կենսականորեն անհրաժեշտ խնդիր:

Սակայն Գերմանիան տակտիկական նկատառումներով Արաբական Արևելքում ֆաշիստական պետությունների տիրապետության հաստատման գործում առաջնությունը ձևականորեն «զիջել» էր Իտալիային՝ այդ տարածքը համարելով նրա ազդեցության գոտին: Գերմանիայի արտաքին գործերի նախարարության 1940 թ. օգոստոսի 20–ի շրջաբերականում այդ կապակցությամբ ասված էր հետևյալը. «Գերմանիան արաբական գոտու քաղաքական վերակազմավորման գործում ղեկավարությունը թողնում է Իտալիային»: Դա արվել էր Իտալիային որպես դաշնակից իր հետ ամուր կապելու նպատակով: Գերմանիայի համար տվյալ պահին ամենակարևորն իր տիրապետության հաստատումն էր ամբողջ Եվրոպայի վրա: Եվ քանի որ Եվրոպան համարվում էր Գերմանիայի ազդեցության գոտին, ուստի անհրաժեշտ էր Իտալիայի ագրեսիվ նկրտումները բավարարել Եվրոպայից դուրս՝ ուղղորդել աշխարհի մեկ

այլ մաս: Այդ պատճառով էլ Գերմանիան ճանաչեց Իտալիայի հատուկ շահերը Միջերկրական ծովի ավազանում և նրան հարող արաբական երկրներում:

Սակայն դա չէր նշանակում, թե Գերմանիան անտարբեր էր և իր նպատակները չէր հետապնդում արաբական աշխարհում: Գերմանիան հայտարարեց, որ ինքն Արաբական Արևելքում ունի հատուկ ստրատեգիական, տնտեսական և մշակութային շահեր, որոնք Իտալիան ճանաչեց:

Գոյություն ուներ Արաբական Արևելք ներխուժելու գերմանա–իտալական երկու պլան: Առաջինը իտալական պլանն էր: Իտալիայի առաջնորդը՝ Մուսոլինին, նպատակահարմար էր գտնում հարվածը հասցնել Եգիպտոսից, որի հետ համաձայնվեց Հիտլերը: Կողմերը եկան համաձայնության, որ Արաբական Արևելքում գերմանա–իտալական հարվածի գլխավոր ուղղություններից մեկը Եգիպտոսն է:

Մյուս ուղղությունը համարվում էր Անդրկովկասը, որը գրավելու դեպքում Գերմանիան իր ռազմական ուժերն ուղղելու էր դեպի Մերձավոր ու Միջին Արևելք: Այս ծրագրից Գերմանիան հրաժարվեց Ստալինգրադյան ճակատամարտում պարտություն կրելուց հետո, որը փակեց դեպի Մերձավոր Արևելք տանող ուղիները:

Այդ ամենի հետ միասին հարկ է նշել, որ Գերմանիայում կային ուժեր, որոնք դեմ էին արաբական հարցի տնօրինումը հանձնել Իտալիային: Այդ տեսակետի ամենավճռական կողմնակիցը Գերմանիայի բանակի գլխավոր հրամանատարությունն էր, որը գտնում էր, որ Գերմանիան ինքը պետք է քաղաքական տիրապետություն հաստատի Արաբական Արևելքում: Վերմախտի հրամանատարությունը 1941 թ. փետրվարի 5–ին այդ ոգով Հուշագիր ուղարկեց արտաքին գործերի նախարարությանը, որտեղ հատուկ նշված էր, որ Գերմանիայի որոշումը՝ Միջերկրական ծովի շրջանում Իտալիային գործողությունների ազատություն տալու վերաբերյալ, կարիք ունի վերանայման նրա այն մասով, որը վերաբերում է արաբական երկրներին: Հուշագրում ընդգծված էր, որ անհրաժեշտ է Արաբական Արևելքի նկատմամբ վարել նոր քաղաքականություն, գտնելով, որ Գերմանիան պետք է գլխավորի արաբական երկրների քաղաքական կյանքը: «Մեր կարծիքով,— ասված էր Հուշագրում,— հասել է ժամանակը ապագայում Գերմանիայից ղեկավարել քաղաքական գործունեությունը Մերձավոր Արևելքում և ընդունել արագ ու եռանդուն որոշումներ այդ հարցում»:

Վերմախտի Հուշագիրը մերժվեց: Բայց դա չէր նշանակում, որ Գերմանիան անկեղծ էր Իտալիային արաբական երկրներում տիրապետող դիրքեր զիջելու հարցում: Դժվար թե Գերմանիան, որն առանցքի երկրների գլխավոր ուժն էր և իր ուսերի վրա տանում էր պատերազմի հիմնական բեռը, կարող էր հաղթանակի դեպքում իր թույլ դաշնակցին, որպիսին Իտալիան էր, զիջել մի այնպիսի տարածաշրջան, որպիսին Արաբական Արևելքն էր: Դրա մասին է վկայում նաև Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ռիբենտրոպի հանձնարարությամբ նախարարության Քաղաքական դեպարտամենտի տնօրեն Վոերմանի կողմից 1941 թ. մարտի 7–ին կազմված գաղտնի փաստաթուղթը, որը կոչվում էր «Հուշագիր արաբական հարցի մասին»:

Հուշագիրը պարունակում էր «առաջարկություններ արաբական հարցում Գերմանիայի քաղաքականության վերաբերյալ մասնավորապես ելնելով արաբական հարցը Գերմանիայի գլխավոր նպատակներից մեկի՝ Անգլիային պարտության մատնելու նպատակով օգտագործելու անհրաժեշտությունից»: Նրանում նշվում էր, որ բոլոր արաբական երկրներն ունեն «ստրատեգիական մեծ նշանակություն»: Նրանք հանդիսանում են կամուրջ Աֆրիկայի ու Հնդկաստանի միջև, որով անցնում են Սուեզի ջրանցքը և կարևոր օդային ուղիներ. անհրաժեշտության դեպքում այստեղ կարող են միանալ Անգլիայի և Խորհրդային Միության ձեռքերը: Հատուկ նշվում էր նաև նավթի առկայությունը:

Առաջարկվում էր բրիտանական կայսրությանը՝ վճռական հարվածը հասցնել Եգիպտոսից կամ արաբական կամրջի, այսինքն՝ արաբական բոլոր երկրների ռազմական օկուպացիայի միջոցով:

Հուշագիրը պարունակում էր հատուկ բաժին արաբական երկրներում քայքայիչ գործունություն ծավալելու անհրաժեշտության վերաբերյալ, մասնավորապես առաջարկվում էր կազմակերպել սաբոտաժ, հեղաշրջումներ, ապստամբություններ և այլն:

Հուշագրի ամենահետաքրքիր մասերից էին Իտալիային և իտալա–գերմանական հարաբերություններին վերաբերող հատվածները: Այստեղ նշված էր, որ «Իտալիան իր սեփական շահերն է հետապնդում Մերձավոր Արևելքում», և շեշտվում էր, որ ցանկալի չէ արաբներին լայն երաշխիքներ տալ լրիվ անկախության վերաբերյալ կամ համաձայնվել արաբական երկրների դաշնության ստեղծման հետ: Միաժամանակ դժգոհություն էր հայտնվում, որ արաբական հարցում իտալական կառավարությունը Գերմանիայի հետ իր փոխհարաբերություններում զուսպ է:

Խորհուրդ էր տրվում քննարկել այդ հարցը իտալական կառավարության հետ՝ Իտալիայի նպատակները արաբական աշխարհում պարզելու և որոշելու համար: «**Բայց,**— նշվում էր փաստաթղթում,— **դրա ժամանակը դեռ չի եկել**»: Հատուկ ընդգծվում էր, որ Գերմանիան, չոտնահարելով Իտալիայի շահերը, պետք է ավելի նախածեռնություն հանդես բերի արաբական աշխարհում, որտեղ այդ ուղղությամբ փոփոխություններն արդեն կատարվում են:

Հուշագրում հատուկ վերապահում էր արվում, որ այդ ամենի մասին «Իտալիայի կառավարությանը կարելի է տեղյակ պահել միայն ընդհանուր գծերով, առանց մանրամասնությունների մեջ մտնելու»:

Հուշագիրը ներկայացվեց Ռիբենտրոպին, որը հավանություն տվեց նրա բոլոր հիմնական դրույթներին:

Այսպիսին էին ընդհանուր գծերով արևմտյան հինգ մեծ տերությունների քաղաքականության հիմնական ուղղությունները և նպատակները, որոնց նրանք հետամուտ էին Արաբական Արևելքում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին[8]:

2. Եգիպտոսը Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին փուլում

Պատերազմի հենց սկզբից երևաց այն կարևոր ստրատեգիական դերը, որ ուներ Եգիպտոսը մերձավորարևելյան–հյուսիսաֆրիկյան տարածաշրջանում: Նա վերածվեց բրիտանական ռազմաքաղաքական ամենակարևոր հենակետի, որտեղից Անգլիան ուղղորդում էր իր գործունեությունն ամբողջ Արաբական Արևելքում: 1936 թ. դաշինքի վերաբերյալ անգլո–եգիպտական պայմանագրի դրույթներին համապատասխան՝ Եգիպտոսի բոլոր կոմունիկացիաները, օդանավակայանները, նավահանգիստները, երկաթուղային և ցամաքային ճանապարհները, Սուեզի ջրանցքը, Նեղոսի ջրային արտերիան անցան անգլիացիների տրամադրության տակ, որոնք դրանք օգտագործեցին պատերազմական նպատակներով՝ հետ մղելու իտալական և գերմանական հարձակումները Եգիպտոսի վրա: Եվ ոչ միայն Եգիպտոսի, քանի որ դրանք ծառայում էին ամբողջ Արաբական Արևելքի երկրների պաշտպանության համար:

8 Այս հարցերի մասին ավելի հանգամանորեն տե՛ս **Н. О. Оганесян,** Политика империалистических держав на Арабском Востоке в годы второй мировой войны (1939—1945 гг.), Ереван, 1980:

Կահիրեն դարձավ յուրատեսակ անգլիական և ամերիկյան ռազմական և քաղաքական կենտրոն: Այստեղ տեղավորվեցին Անգլիայի և ԱՄՆ–ի կարևոր ռազմաքաղաքական կազմակերպությունները Մերձավոր Արևելքում, այդ թվում՝ Մերձավոր Արևելքում բրիտանական զինված ուժերի գլխավոր հրամանատարի զորակայանը, Մերձավոր Արևելքում բրիտանական պետական նախարարի նստոցը, Մատակարարման միջինարևելյան կենտրոնը, որը ԱՄՆ–ի պատերազմի մեջ մտնելուց և Մերձավոր Արևելքի ու Հյուսիսային Աֆրիկայի գործերի մեջ նրա ներգրավվելուց հետո վերածվեց անգլո–ամերիկյան համատեղ կենտրոնի, ամերիկյան Հյուսիս–աֆրիկյան առաքելության կայանը, լենդ–լիզի գծով ամերիկյան վարչությունը և այլն:

Պատերազմն առաջին օրվանից իր ազդեցությունը թողեց երկրի տնտեսության և ժողովրդի տնտեսական վիճակի վրա: Եգիպտոսի ոչ միայն կոմունիկացիաները, նավահանգիստները և օդանավակայանները, այլև մարդկային և նյութական ռեսուրսները ծառայեցին պատերազմի նպատակներին, որոնք անգլիացիներն օգտագործեցին անսահմանափակ կերպով:

Նրա համար առաջնային խնդիր դարձան Եգիպտոսում և Մերձավոր Արևելքում գտնվող անգլիական ռազմական ուժերը, որոնց թիվն օրեցօր աճում էր, անհրաժեշտ պարենով ապահովելը: Իսկ դա արվեց ի հաշիվ եգիպտացիների, առաջին հերթին՝ գյուղացիների: Ընդարձակվեցին հացահատիկային կուլտուրաների ցանքատարածքները՝ ի հաշիվ բամբակի ցանքատարածությունների կրճատման: Բամբակի արտադրությունը կրճատվեց երեք անգամ, համապատասխանաբար կրճատվեցին նաև գյուղացիների եկամուտները: Դրան ավելացրած նաև այն հանգամանքը, որ բամբակը անգլիացիները գնում էին շատ ցածր գներով: Ճգնաժամային վիճակ ստեղծվեց հացահատիկային կուլտուրաների բնագավառում: Սպասված բերքը չստացվեց, իսկ Մատակարարման միջինարևելյան կենտրոնի աշխատակիցները բռնությամբ գյուղացիներից հավաքում էին, այսպես կոչված, հացի «ավելցուկները», թեև նրանք լավ գիտեին, որ ոչ մի ավելցուկ էլ չկար, և ստացված բերքը չէր բավարարում գյուղացիների առօրյա նվազագույն պահանջները: Արդյունքում եգիպտական գյուղում սով սկսվեց, որն աստիճանաբար տարածվեց նաև քաղաքներում:

Այլ էր պատկերը արդյունաբերության բնագավառում: Պատերազմի հետևանքով կրճատվեց արդյունաբերական ապրանքների ներմու-

ծումը և դա խթանեց տեղական արտադրությունը: Նրա զարգացմանը նպաստում էին նաև անգլիական ռազմական պատվերները եգիպտական արդյունաբերությանը՝ անգլիական զորքերի պահանջները հոգալու համար: Հատկապես նպաստավոր պայմաններ ստեղծվեցին տեքստիլ, սննդամթերքի, քիմիական, ցեմենտի և նավթամթերքների արդյունաբերության զարգացման համար, որի շնորհիվ հարստացան եգիպտական խոշոր կապիտալիստները և հողատերերը, ամրապնդվեցին նրանց դիրքերը Եգիպտոսի տնտեսական և քաղաքական կյանքում:

Երկրորդ համաշխարհային պատերազմը սկսվեց 1939 թ. սեպտեմբերի 1–ին, երբ Անգլիան պատերազմ հայտարարեց Գերմանիային, որն այդ նույն օրը հարձակվել էր Լեհաստանի վրա:

Անգլիայի պատերազմի մեջ մտնելը Եգիպտոսի կառավարությանը կանգնեցրեց Անգլիայի հանդեպ իր դաշնային պարտավորություններն ամբողջությամբ կատարելու փաստի առջև: Ալի Մահիրը չէր շտապում իրեն ցույց տալ որպես Անգլիայի շահերին նվիրված վարչապետ: Այդուհանդերձ, նա սեպտեմբերի 1–ին հայտարարեց, որ խզում է դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ: Միայն այդքանը: Իսկ ինչ վերաբերում է Գերմանիային պատերազմ հայտարարելու հարցին, ապա Ալի Մահիրը ձեռնպահ մնաց և հրաժարվեց այդ քայլը կատարել: Առաջ անցնելով նշենք, որ Եգիպտոսի կողմից Գերմանիային պատերազմ հայտարարելը դարձավ բրիտանական կառավարության գլխավոր հարցերից մեկը և քիչ գլխացավանք չպատճառեց նրան, քանի որ միմյանց հաջորդած եգիպտական բոլոր կառավարությունները հրաժարվում էին Գերմանիային պատերազմ հայտարարել: Եգիպտոսն այդ քայլին դիմեց միայն 1945 թ. փետրվարի 26–ին, երբ պատերազմի ելքը վաղուց գործնականորեն որոշված էր, ուստի Գերմանիային պատերազմ հայտարարելը պետք է ձևական քայլ դիտել:

Համաձայն գործող սահմանադրության՝ Եգիպտոսում մտցվեց ռազմական դրություն: Վարչապետը, որն օժտվեց արտակարգ լիազորություններով, ստանձնեց նաև Եգիպտոսի ռազմական նահանգապետի պարտականությունները:

Ինչպիսի՞ն էր Եգիպտոսի ժողովրդական զանգվածների և քաղաքական ուժերի դիրքորոշումը պատերազմի նկատմամբ:

Նրանց բոլորի համար ընդհանուր էր այն տրամադրությունը, որ Եվրոպայում սկսված պատերազմն իրենց, այսինքն՝ Եգիպտոսի պատերազմը չէ: Դրանով ընդհանրությունը նրանց միջև ավարտվում է:

Պատերազմի նկատմամբ Եգիպտոսում ձևավորվեց երեք հոսանք:

Առաջին՝ չեզոք դիրքորոշում պատերազմի մեջ մտած երկու գլխավոր՝ անգլո–ֆրանսիական և գերմանա–իտալական կոալիցիաների նկատմամբ: Այդ տեսակետին էր հարում եգիպտացիների ճնշող մեծամասնությունը:

Երկրորդ՝ գերմանամետ հոսանք, որի մեջ մտնում էին թագավորական պալատի ազդեցիկ գործիչները: Այդ հոսանքին համենայն դեպս համակիր էր Ֆարուկ I–ին թագավորը, որը թեև արտաքուստ համագործակցում էր Անգլիայի հետ, բայց և չէր թաքցնում իր համակրանքը Գերմանիայի և Իտալիայի նկատմամբ: Այս խմբի մեջ էր մտնում նաև վարչապետը՝ Ալի Մահիրը, և նրա կաբինետի մի քանի անդամներ: Հետաքրքիր է, որ Անգլիային հայտնի էին Ալի Մահիրի համակրական հայացքներն առանցքի երկրների հանդեպ: Չնայած այդ հանգամանքին՝ նա չխոչընդոտեց նրա նշանակմանը վարչապետի պաշտոնում պատերազմը սկսվելուց մի քանի օր առաջ: Որոշ մասնագետներ հակված են Անգլիայի այդ քայլը բացատրել այն հանգամանքով, որ Ալի Մահիրն ուներ հետադիմական գործչի համբավ և համարվում էր ուժեղ բռունցք, որի օգնությամբ Անգլիան հույս ուներ կանխել և ճնշել հակաբրիտանական ժողովրդական ելույթները, որոնք չէին դադարում և սպառնալի չափեր էին ընդունել պատերազմի նախօրյակին:

Կուսակցություններից երկրորդ հոսանքին էր հարում լիբերալ–սահմանադրական կուսակցությունը, ինչպես նաև առանձին հողատերեր, արդյունաբերողներ և խոշոր առևտրականներ:

Հենց այս հոսանքն էր, որ կարողացավ թույլ չտալ պատերազմ հայտարարել Գերմանիային՝ հակառակ Անգլիայի ճնշումների:

Երրորդ հոսանքը կազմում էին այն ուժերը, որոնք կողմնակից էին Անգլիայի հետ համագործակցության: Նրա միջուկը կազմում էին Վաֆդ կուսակցությունը և նրանից անջատված սաադականների խումբը: Նրանց հարում էին մեծաթիվ արդյունաբերողներ, որոնք հարստացել էին պատերազմի ընթացքում, ինչպես նաև խոշոր առևտրականներ:

Բայց այստեղ կար մի նրբություն: Հիզբ ալ–Վաֆդն իր համագործակցությունը Անգլիայի հետ պայմանավորում էր մի շարք գործոններով՝ Անգլիան պետք է պաշտոնապես հայտարարեր, որ պատերազմի ավարտից հետո իր զորքերը դուրս կբերի Եգիպտոսից, պետք է երաշխավորեր Եգիպտոսի մասնակցությունը Խաղաղության կոնֆերանսին,

որը կգումարվեր պատերազմի ավարտից հետո, և Անգլիան պետք է ճանաչեր Եգիպտոսի ինքնիշխանությունը Սուդանի վրա:

Վաֆդականները հասկանում էին, որ առանց այդ պայմանների այդ համագործակցությունը կգցեր իրենց քաղաքական վարկը և կթուլացներ իրենց դիրքերը Եգիպտոսում:

Այս կապակցությամբ հարկ է անդրադառնալ մի կարևոր հարցի:

Եգիպտոսում, ինչպես նաև Իրաքում, Անդրհորդանանում և այլ արաբական երկրներում, պայմանականորեն ասված, առանցքի երկրների նկատմամբ որոշ ուժերի կողմից դրսևորված համակրանքը մինչև այժմ քննարկման առարկա է հանդիսանում, որի նկատմամբ մասնագետների մեջ չկա միասնական տեսակետ: Պատերազմի ժամանակ և հետպատերազմյան տարիներին տիրապետող էր հանդիսանում այն տեսակետը, որ դրանք պրոֆաշիստական ուժեր էին, առանցքի երկրների գործակալներ, որոնք պատրաստ էին համագործակցել ֆաշիստական երկրների՝ Գերմանիայի և Իտալիայի հետ, և խստորեն դատապարտում էին նրանց:

Մյուս տեսակետը, որը սկսեց ձևավորվել անցյալ դարի 60–ական թվականներին, չէր բաժանում նման մոտեցումը այդ կնճռոտ խնդրին:

Այո՛, արաբական երկրներում, այդ թվում և Եգիպտոսում կային ուժեր, որոնք պատրաստ էին համագործակցել Գերմանիայի կամ Իտալիայի հետ: Բայց դա չի նշանակում հավասարության նշան դնել նրանց և իրոք ֆաշիստամետ ուժերի միջև, առավել ևս՝ նրանց համարել ֆաշիստական գործակալներ: Ճշմարտությունը կայանում է նրանում, որ արաբական երկրների որոշ քաղաքական ուժեր, հուսահատված Անգլիայի հետ բանակցությունների միջոցով հասնել իրենց երկրների անկախությանը, ստեղծված պայմաններում մտածում էին, թե ինչու չօգտագործել Գերմանիային և Իտալիային, որոնք պատերազմում էին Անգլիայի դեմ, և նրանց օգնությամբ թերևս հասնեն իրենց ազգային գլխավոր իղձերի՝ անկախության նվաճմանը: Այստեղ գործում էր «Իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է» սկզբունքը: Մանավանդ որ Գերմանիան և Իտալիան բազմիցս հայտարարում էին, որ իրենց նպատակը ոչ թե արաբական երկրները գրավելն էր, այլ անգլիական և ֆրանսիական տիրապետության վերացումը և արաբական երկրների անկախության հաստատումը: Թեև դա արաբական որոշ ուժերի կողմից հուսահատ քայլ էր, մի հուսահատ փորձ՝ այդ ուղիով հասնել անգլիական տիրապետության վերացմանը, առանց, սակայն, դառնալու Գերմանիայի խամաճիկը:

Կարծում ենք, որ այդ հարցին նախընտրելի է մոտենալ այդ տեսանկյունից[9]:

3. Իտալա–գերմանական ներխուժումը Եգիպտոս: Ալ–Ալամայնի ճակատամարտը

1940 թ. հուլիսի 10–ին պատերազմի մեջ մտավ առանցքի երկրորդ պետությունը՝ Իտալիան: Դա միանգամից սրեց ներքաղաքական իրադրությունը Եգիպտոսում: Ալի Մահիրի կառավարությունն ամեն կերպ ձգձգում և չէր ցանկանում հստակ դիրքորոշում ընդունել Իտալիայի նկատմամբ, ինչը առաջացնում էր Անգլիայի զայրույթը: Անգլիան զգում էր, որ Ալի Մահիրը ցանկություն չունի ոչ միայն պատերազմ հայտարարել Իտալիային, այլև չի պատրաստվում խզել դիվանագիտական հարաբերությունները նրա հետ: Անգլո–եգիպտական հարաբերություններում կրկին ճգնաժամ առաջացավ: Միայն մեծ ջանքերի լարումով Անգլիային հաջողվեց ստիպել Ալի Մահիրին՝ խզել դիվանագիտական հարաբերությունները Իտալիայի հետ: Բայց դա կատարվեց հետաքրքիր ձևով, որն ընդունված չէ դիվանագիտական պրակտիկայում: Ալի Մահիրը, խզելով դիվանագիտական հարաբերությունները Իտալիայի հետ, միաժամանակ պաշտոնապես ցավ հայտնեց, որ հարկադրված է Իտալիայի հանդեպ դիմել նման քայլի՝ հասկացնելով, որ ինքն այդ քայլին դիմում է Անգլիայի բացահայտ ճնշման տակ: Ալի Մահիրի քայլը Հռոմում այդպես էլ գնահատվեց:

Արդյունքում Ալի Մահիրի հարաբերությունները Կահիրեում բրիտանական դեսպան Մայլզ Լեմփսոնի հետ լուրջ ճեղքվածք տվեցին և հասան ծայրահեղ լարվածության: Հարաբերություններն ավելի սրվեցին, երբ Ալի Մահիրը հայտնեց իր մտադրության մասին Կահիրեն հայտարարել բաց քաղաք, որի դեմ կտրուկ կերպով հանդես եկավ բրիտանական դեսպանը: Նա այլևս չէր վստահում եգիպտական վարչապետին և մտորում էր նրանից ազատվելու մասին: Նա բացահայտ ճնշում էր

9 Այդ հարցին մենք ավելի հանգամանորեն անդրադարձել ենք. **Н. О. Оганесян**, Национально–освободительное движение в Ираке (1918–1958гг.), Ереван, 1976. Նույնի, Политика империалистических держав на Арабском Востоке в годы второй мировой войны (1939–1945 гг.), Ереван, 1980. Նույնի, Отношение различных арабских политических сил ко второй мировох войне, Арабские страны. История. Экономика, Москва, 1974.

գործադրում թագավորի վրա՝ ստիպելով նրան իշխանությունից հեռացնել Ալի Մահիրին: Սակայն թագավորը չէր ցանկանում զիջել, նա նույնիսկ դիմեց բրիտանական թագավոր Գևորգ VI–ին, բայց վերջինս հրաժարվեց միջամտել այդ գործին:

Ի վերջո, անգլիական դեսպանը հասավ հաջողության՝ շուտով թագավորի հրամանով Ալի Մահիրն ազատվեց վարչապետի պաշտոնից, և կառավարության կազմելը հանձնարարավեց Հասան Սաբրիին: Նա բավարարեց անգլիացիների մի շարք պահանջներ, մասնավորապես հայտարարեց, որ Եգիպտոսը կկատարի իր պայմանագրային պարտավորությունները Անգլիայի հանդեպ: Անգլիային հաճոյանալու համար նրա հրամանով պաշտոնից ազատվեց եգիպտական բանակի շտաբի պետ, արաբական ազգային–ազատագրական շարժման հայտնի գործիչ Ազիզ ալ–Միսրին, որը մեծ ծառայություններ ուներ Եգիպտոսի և արաբական մյուս երկրների հակաօսմանյան պայքարի կազմակերպման և ղեկավարման գործում:

Շուտով Եգիպտոսում հասունացավ նոր ճգնաժամ, որը կապված էր Եգիպտոս Իտալիայի ներխուժման հետ:

1940 թ. հունիսին Ֆրանսիայի կապիտուլյացիայից հետո Իտալիան սկսեց լրջորեն նախապատրաստվել ռազմական գործողություններին Հյուսիսային Աֆրիկայում և հարձակվելու Եգիպտոսի վրա: Մուսոլինին 1940 թ. հուլիսի 17–ին հայտնեց Հիտլերին, որ «Եգիպտոսում լայնածավալ հարձակման նախապատրաստումն արդեն ավարտված է»: Այնուհետև իտալական դուչեն հայտնում էր իր դաշնակից գերմանական ֆյուրերին, որ եգիպտական Ալեքսանդրիա նավահանգստին հասնելու համար պետք է կտրել 600 կմ ճանապարհ իսկական անապատով՝ +56°C աստիճանի պայմաններում, որը, դուչեի կարծիքով, թուլացրել է բրիտանական բանակը:

1940 թ. սեպտեմբերին իտալական զորքերը մարշալ Գրացիանիի հրամանատարությամբ Լիբիայից ներխուժեցին Եգիպտոս: Անգլիական բանակը չկարողացավ կանգնեցնել իտալական հարձակումը, և իտալական զորքերը խորացան մոտ 100 կմ: Ալեքսանդրիայի ուղղությամբ նրանք գրավեցին մի շարք բնակավայրեր, իսկ սեպտեմբերի 16–ին՝ Սիդի Բարանի քաղաքը:

Հասան Սաբրիի կաբինետի սաադական չորս նախարարները պահանջեցին պատերազմ հայտարարել Իտալիային, բայց վարչապետը հրաժարվեց դիմել այդ քայլին՝ պատճառաբանելով, որ իտալական բա-

նակի ներխուժումը Եգիպտոս չի կարելի որակել որպես Եգիպտոսի դեմ ուղղված ագրեսիա: Նա դա դիտում էր որպես ռազմական գործողություն ուղղված բացառապես Անգլիայի դեմ: Չորս նախարարները հրաժարական տվեցին, բայց դա չհանգեցրեց կառավարության անկմանը:

Հետաքրքիր է Եգիպտոսում ԱՄՆ դեսպանորդ Ֆիշի զեկուցագիրը՝ ուղղված ԱՄՆ պետական դեպարտամենտին եգիպտական կառավարության դիրքորոշման պատճառների մասին: Նա ԱՄՆ պետական քարտուղար Կորդել Հելլին ուղղված իր հաղորդման մեջ նշում է երկու գլխավոր պատճառ. ա) «ժողովրդի ընդհանուր ընդդիմությունը պատերազմին» և բ) եգիպտական բանակի սպաների դիրքորոշումը, որոնց մեծամասնությունը «հավանություն չէր տալիս մասնակցությանը պատերազմին»: Վերջում Ֆիշը հայտնում էր Կորդել Հելլին, որ բնակչությունը և մեծաթիվ պետական գործիչներ գտնում են, որ «Եգիպտոսը չպետք է պայքարի կանխելու համար հնարավոր օկուպացիան (իտալական — Ն. Հ.), որպեսզի պահպանի գոյություն ունեցող օկուպացիան (անգլիական — Ն. Հ.)»:

Իտալական հարձակումը երկար չշարունակվեց: Անգլիային հաջողվեց մեծ ջանքերի գնով և ամերիկյան վիթխարի ռազմական օգնության շնորհիվ կանգնեցնել իտալական հարձակումը և զորքերի առաջխաղացումը: Բայց իտալացիները շարունակեցին օդային հարձակումները Կահիրեի, Ալեքսանդրիայի և Սուեզի ջրանցքում գտնվող անգլիական հենակետերի վրա:

1940 թ. նոյեմբերի 9–ին անգլիական զորքերն անցան հակահարձակման և երկու ամսվա ընթացքում ծանր մարտերից հետո պարտության մատնեցին մարշալ Գրացիանիի զորքերին, իտալացիներին դուրս մղեցին Եգիպտոսի տարածքից և պատերազմական գործողությունները տեղափոխեցին Լիբիա: 1941 թ. փետրվարի 6–ին անգլիացիները գրավեցին Բենգազին, որը համարվում էր Լիբիայի երկրորդ մայրաքաղաքը:

Պատերազմական իրադրությունը Հյուսիսային Աֆրիկայում փոխվեց հօգուտ Անգլիայի և ԱՄՆ–ի:

Իտալական զորքերի պարտությունը Եգիպտոսում և Լիբիայում խիստ անհանգստացրեց Գերմանիային: Հիտլերը և գերմանական քաղաքական ու ռազմական ղեկավարությունը հասկացան, որ Իտալիան սեփական ռազմական ուժերով չի կարող պարտության մատնել անգլիացիներին և գրավել Եգիպտոսը: Իսկ դա, ինչպես արդեն նշել ենք, միայն Եգիպտոսի հարցը չէր, այլ ամբողջ Մերձավոր Արևելքի նվաճման

խնդիրը: Բեռլինում հասունացավ Հյուսիսային Աֆրիկայի ռազմական գործողություններին Գեմանիայի անմիջական մասնակցության հարցը:

Սկզբում Հիտլերը մտադիր էր Իտալիային որպես օգնություն ուղարկել գերմանական ոչ մեծ, բայց լավ զիված զորախումբ: Սակայն Իտալիայի պարտության ծավալներն այնքան մեծ էին, որ գերմանական գլխավոր հրամանատարությունն առաջարկեց Գերմանիայի ավելի մեծ մասնակցություն ռազմական գործողություններին: Գերմանիայի ղեկավարությունը համոզված էր, որ Իտալիան առանց գերմանական ակտիվ օգնության ու մասնակցության չի կարող բեկում առաջացնել պատերազմում և հաջողության հասնել Եգիպտոսում և Լիբիայում:

Հիտլերը հարկ համարեց այդ ամենի մասին տեղյակ պահել Մուսոլինիին: 1941 թ. փետրվարի 5–ին նա նամակով դիմեց Իտալիայի ղեկավարին՝ նշելով, որ ստեղծված իրադրության մանրակրկիտ վերլուծությունից հետո ինքը եկել է այն եզրակացության, որ իտալական զորքերն արդեն մի քանի շաբաթ է՝ ծանր կորուստներ են կրում, որը չի կարող բացասաբար չանդրադառնալ զինվորների հոգեբանության և հավատի վրա իրենց սեփական ուժերի նկատմամբ: «Այդ պատճառով, դուչե՛,— գրում է Հիտլերը,— ես այժմ լրիվ հավատացած եմ, եթե նկատի ունենանք միայն հոգեբանական պահը, գերմանական զորամիավորման միջամտությունը կարող է միայն բարերար ազդեցություն ունենալ Ձեր զինվորների վրա»: Վերջում Հիտլերն ավելացնում է, որ արմատական բեկում առաջացնելու համար ինքը որոշել է Հյուսիսային Աֆրիկայի ռազմաճակատ ուղարկել ուժեղացված տանկային կորպուս: Եվ եթե դուչեն համաձայն է, նշում է Հիտլերը, ապա ինքն այդ կորպուսի հրամանատար կնշանակի գեներալ Ռոմելին, որին նա բնութագրում է որպես զրահատանկային զորքերի ամենաաչքի ընկնող գեներալը, որ ունի Գերմանիան, և որի ծառայություններն արևմտյան ռազմաճակատում բացառիկ են:

Դուչեն, որ հայտնվել էր ծանր դրության մեջ, ստիպված էր համաձայնվել Հիտլերի առաջարկության հետ՝ Հյուսիսային Աֆրիկայում ռազմական գործողություններին գերմանացիների մասնակցության վերաբերյալ, թեև այդ տարածքը համարվում էր Իտալիայի ազդեցության գոտի:

1941 թ. մարտ–ապրիլ ամիսներին Գերմանիան ավարտեց Հյուսիսային Աֆրիկա Ռոմելի կորպուսի տեղափոխումը, որը ստացավ Աֆրիկյան կորպուս անվանումը: Իսկ ապրիլին Ռոմելը սկսեց լայնածավալ հարձակողական գործողություններ, որոնք պսակվեցին հաջողությամբ:

Նա կարողացավ լրիվ ազատել Լիբիան անգլիական զորքերից և ներխուժել Եգիպտոս:

Սակայն հետագայում Ռոմելին չհաջողվեց զարգացնել իր հաջողությունները: Արևելյան կամ խորհրդային ռազմաճակատում ընթացող պատերազմական գործողությունները, որոնք առաջնային նշանակություն ունեին Գերմանիայի համար, զրկեցին Գերմանիային Ռոմելի կորպուսը թարմ ուժերով և ռազմական նոր տեխնիկայով համալրելու հնարավորությունից: Առաջացավ հարկադիր դադար, որից օգտվեց Անգլիան: Ստանալով լուրջ համալրում ԱՄՆ–ից՝ անգլիական զորքերը 1941 թ. անցան հարձակման և գրավեցին Էրիտրեան, Իտալական Սոմալին, Եթովպիայի մի մասը, իսկ նոյեմբերին նաև Կիրենաիկան և կարողացան ապաշրջափակել Թոբրուկը, որը ութ ամիս գտնվում էր շրջափակման մեջ Ռոմելի զորքերի կողմից:

Անգլիացիների հաջողություններն անհանգստացրին Գերմանիային և Իտալիային, որոնք լավ էին հասկանում, թե ինչպիսի ծանր հետևանքներով էր հղի իրենց զորքերի պարտությունը: Ուստի նրանք լրացուցիչ ռազմական տեխնիկա և զորքեր ուղարկեցին Հյուսիսային Աֆրիկա:

Ռոմելը, ստանալով անհրաժեշտ համալրում, կարողացավ 1941 թ. վերջերին կասեցնել անգլիացիների հարձակումը և 1942 թ. սկզբներին անցնել հակահարձակման Կիրենաիկայում: Հունվարի 29–ին նրանք գրավեցին Բենգազին և դիրքեր գրավեցին ալ–Գազալի — Բիր Հաքիմ գծի ուղղությամբ:

Ռոմելի նոր հաջողությունները և նրա զորքերի հայտնվելը Եգիպտոսի սահմանների մոտ խուճապ և խանդավառություն առաջացրին Կահիրեում, կարելի է ասել՝ ամբողջ Եգիպտոսում:

Խանդավառվել էին բոլոր այն ուժերը, որոնք Եգիպտոսի լիիրավ անկախությունը Անգլիայից կապում էին գերմանական զենքի հաղթանակի հետ: Կահիրեի և այլ քաղաքների փողոցներում տեղի էին ունենում բազմահազարանոց ցույցեր, որոնց ամենաակտիվ մասնակիցներն ուսանողներն էին: Նրանց հիմնական լոզունգները դարձան «Մենք Ռոմելի զինվորներն ենք», «Ռոմե՛լ, առա՛ջ» և «Ալի Մահիրը՝ վարչապետ»:

Խուճապը համակել էր անգլիացիներին և նրանց համակիր եգիպտական ուժերին, որն ավելի էր խորանում՝ ի տես եգիպտական կառավարության պասիվության և նրա թիկունքում կանգնած արքայական պալատի ու անձամբ Ֆարուկ թագավորի պաշտպանության:

Անգլիական իշխանությունները լավ էին հասկանում, թե ինչպիսի վտանգ է կախված իրենց գլխին, որը վերացնելու համար ռազմաճակատն ամրապնդելու հետ միասին անհրաժեշտ էր նաև թիկունքի ամրապնդումը Եգիպտոսում:

Այս երկրորդ՝ ծանր պարտականությունը դրվեց Կահիրեում բրիտանական դեսպան Մայլզ Լեմփսոնի վրա: Նա ստեղծված պայմաններում գործեց եռանդուն և շատ վճռական: Անգլիական դեսպանը պահանջեց թագավորից, որ հեռացնի Հուսեյն Սիրիի կառավարությանը, որը վարչապետ էր դարձել 1940 թ. նոյեմբերի 14–ին՝ Հասան Սաբրիի մահվանից հետո, և վարչապետ նշանակի ոչ թե Ալի Մահիրին, այլ Վաֆդի ղեկավար Մուստաֆա Նահասին:

Ֆարուկը համաձայնվեց վարչապետ նշանակել Նահասին, բայց ոչ թե կազմել կառավարություն միայն Վաֆդի անդամներից, այլ ստեղծել կոալիցիոն կառավարություն՝ տարբեր կուսակցություններից: Մուստաֆա Նահասը չհամաձայնվեց գլխավորել տարբեր կուսակցություններից կազմված կոալիցիոն կառավարությունը՝ շատ լավ հասկանալով, որ ինքը խաղալիք կդառնա թագավորական պալատի ձեռքում, այլ պնդեց միայն ու միայն իր կուսակցության անդամներից կառավարություն կազմելու վրա: Այս հարցում նրան պաշտպանում էր անգլիական դեսպանը: Սակայն թագավորը համառում էր իր առաջարկության վրա:

Այնժամ պատահեց այն, ինչը հազվադեպ է լինում պատմության մեջ պետությունների փոխհարաբերություններում և դիվանագիտական պրակտիկայում: Դեսպանը վերջնագիր ներկայացրեց Ֆարուկ թագավորին, որ եթե նա՝ թագավորը, մինչև 1942 թ. հուլիսի 24–ը՝ երեկոյան ժամը 6–ը, Մուստաֆա Նահասին չնշանակի Եգիպտոսի վարչապետ, ապա դա կստիպի անգլիացիներին «դիմել համապատասխան գործողությունների»:

. Ֆարուկ I–ը փետրվարի 4–ին՝ ժամը 3–4–ը, անցկացրեց խորհրդակցություն մի շարք քաղաքական գործիչների հետ, որոնք հավանություն տվեցին նրա որոշմանը՝ մերժել բրիտանական վերջնագիրը: Այդ նույն օրը երեկոյան ժամը 6–ին, դեսպան Լեմփսոնին այցելեց թագավորական գրասենյակի պետ Ահմադ Հասանեյնը, որը հաղորդեց դեսպանին, որ թագավորը հրաժարվում է ընդունել բրիտանական առաջարկությունը, որն իրեն ներկայացվել է վերջնագրի ձևով: Ուշադիր լսելով Ահմադ Հասանեյնին՝ դեսպանը հայտնեց նրան, որ ինքը թագավորին կայցելի այդ նույն օրը՝ երեկոյան ժամը 9–ին:

Մինչև հանդիպումը մնացել էր երեք ժամ: Այդ ընթացքում անգլիական տանկերը շրջապատեցին արքայական Աբդին պալատը, իսկ անգլիական զինվորները՝ պալատի շրջակա ամբողջ տարածքները: Ուղիղ ժամը 9–ին անգլիական մի տանկ մտավ պալատի տարածք: Տանկի հետևից զինված զինվորների ուղեկցությամբ գնում էին երկու հոգի՝ Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Մայլզ Լեմփսոնը և Եգիպտոսում անգլիական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ–լեյտենանտ Սթոունը: Թագավորական գվարդիան չհամարձակվեց դիմադրություն ցույց տալ, և դեսպանը գլխավոր հրամանատարի ուղեկցությամբ մտավ թագավորի սենյակ: Հեռախոսակապը պալատի հետ անջատված էր: Անգլիացիները շրջապատել էին նաև ռադիոկայանը: Այսպիսով՝ կարելի է ասել՝ Աբդին պալատը և նրա տերը՝ Ֆարուկ թագավորը, գտնվում էի պաշարման մեջ:

Դեսպան Լեմփսոնը թագավորին դեմառդեմ կրկնեց իր վերջնագիրը: Ըստ գեներալ Նագիբի՝ դեսպանը թագավորի առաջ դրեց երկու փաստաթուղթ և պահանջեց՝ ստորագրել դրանցից մեկնումեկը: Մի փաստաթղթում գրված էր գահից Ֆարուկի հրաժարականի մասին, իսկ մյուսում՝ Մուստաֆա Նահասին վարչապետ նշանակելու մասին: Թագավորը շատ արագ կողմնորոշվեց և ստորագրեց երկրորդ փաստաթուղթը՝ Վաֆդի ղեկավար Մուստաֆա Նահասին Եգիպտոսի վարչապետ նշանակելու մասին: Ջ. Կիմչեն իր «Յոթ կործանված սյուները» ուսումնասիրության մեջ վկայում է, որ թագավորը, ստանալով բրիտանական վերջնագիրը, դիմում է սենյակում այդ պահին գտնվող ներկաներին և ասում, որ ինքը կարող է մերժել վերջնագիրը և երկիրը վերածել մարտի դաշտի, բայց «ուզում է փրկել իր հպատակների կյանքը, և թող պատմությունը դատի իր արարքը»:

Տանելով «փայլուն» հաղթանակ՝ դեսպան Մայլզ Լեմփսոնը թողեց եգիպտական Աբդին արքայական պալալտը և մեկնեց իր պաշտոնավայրը:

Այսպիսի եզրափակում ունեցավ թագավորական պալատում տեղի ունեցած դրաման:

Անգլիական կառավարության հաշվարկը՝ կապված Մուստաֆա Նահասի կառավարության հետ, ճիշտ դուրս եկավ: Վերջինս արդարացրեց իր վրա դրված հույսերը՝ Եգիպտոսը դարձնելով հուսալի թիկունք Հյուսիսային Աֆրիկայում մարտնչող անգլիական զորքերի համար: Կառավարության հրամանով ձերբակալվեցին մի շարք գործիչներ, այդ

թվում իշխանազուններ և արքայական պալատի ազդեցիկ գործիչներ, մի քանի նախարարներ և քաղաքական կուսակցությունների ղեկավարներ, որոնք հայտնի էին իրեն գերմանամետ դիրքորոշումով և հակաանգլիական տրամադրություններով: Թագավորը չկարողացավ նրանց պաշտպան կանգնել: Մուստաֆա Նահասի կառավարությունը դա իրականացրեց հանուն Եգիպտոսի անվտանգության ապահովման:

Նահասի կառավարությունն իրականացրեց առաջադիմական բնույթի սոցիալական մի շարք միջոցառումներ՝ հարկերի նվազեցում, բանվորների հետ աշխատանքային պայմանագրերի կնքում, դժբախտ դեպքերից ապահովագրում, ծրի տարրական ուսուցում և այլն: Շատ տպավորիչ էր կառավարության ընդունած օրենքը Եգիպտոսում գործող ընկերությունների գործավարությունն արաբերենով կատարելու վերաբերյալ: Վերջապես՝ կարևոր էր 1942 թ. սեպտեմբերին ընդունված որոշումը բանվորական արհմիությունների ազատ գործելու իրավունքի մասին: Այս բոլորի հետևանքով ամրապնդվեցին Վաֆդի դիրքերը, և բարձրացավ նրա հեղինակությունը Եգիպտոսում:

Դրա հետ միասին Վաֆդին չհաջողվեց լուծել պարենային հարցը և բարելավել աշխատավորների տնտեսական վիճակը, որը շարունակում էր մնալ ծանր: Դրան ավելացան սպեկուլյացիան, կոռուպցիան, պաշտոնական դիրքի չարաշահումը բարձր պաշտոններ զբաղեցնող Վաֆդի անդամների կողմից և այլն:

1942 թ. գարնանը և ամռանը Հյուսիսային Աֆրիկան և Եգիպտոսը կրկին դարձան կատաղի ռազմական գործողությունների թատերաբեմ:

1942 թ. մայիսի 26–ին Ռոմելի զորքերը, ստանալով համալրում, անցան հարձակման Այն ալ–Գազալի–Թոբրուկ–Բիր ալ–Կուբրի–Բիր Հաքիմ գծի ուղղությամբ: Նրանց հաջողվեց ճեղքել անգլիական զորքերի պաշտպանական դիրքերը և գրավել վերոնշյալ բնակավայրերը: Առանձնապես տպավորիչ էր Թոբրուկի անկումը, որտեղ նրա պաշտպան 25 հազ. անգլիական զինվորներ 1942 թ. հունիսի 21–ին գերի հանձնվեցին գերմանացիներին: Թոբրուկի անկումը շատ ծանր տարավ Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինստոն Չերչիլը, որն այդ օրերին Ռուզվելտի հետ բանակցությունների համար գտնվում էր ԱՄՆ–ում: Հունիսի 21–ի առավոտյան Ռուզվելտը նրան հայտնում է գերմանացիների կողմից Թոբրուկ ամրոցի գրավման լուրը: Այդ կապակցությամբ հետագայում Չերչիլը գրել է. «Ես չեմ կարծում, որ որևէ մեկը Միացյալ Նահանգներում լիներ այնպես դժբախտ, ինչպես ես»:

Թոբրուկի, ապա և Մերս Մատրուկի, Ալեմի և այլ բնակավայրերի գրավումից հետո Ռոմելի տանկային կորպուսը սրընթաց մխրճվեց Եգիպտոսի խորքերը՝ մոտենալով Ալեքսանդրիային և Կահիրեին:

Մոտավորապես այդ նույն ժամանակ գերմանացիները հաջողության հասան նաև խորհրդա–գերմանական ռազմաճակատում՝ մոտենալով Ստալինգրադին և դուրս գալով Կովկասի մատույցները:

Թվում էր, թե գերմանացիները մոտ էին իրենց ծրագրերի իրագործմանը՝ աքցանի մեջ վերցնել Մերձավոր Արևելքը Կովկասից և Եգիպտոսից: Հիտլերը 1942 թ. հունվարի 5–ին Ֆրանսիայում գերմանական դեսպան Աբեցի հետ ունեցած զրույցի ժամանակ հետևյալն է ասել. «Եթե անգլիացիներն իմանային, թե ինչ է սպասում իրենց Արևելքում, ապա ուրախանալու պատճառ չէին ունենա: Հենց որ ընկնի Սինգապուրը... ճապոնացիները կդառնան Բենգալյան ծոցի տերերը: Գարնան վերջում նրանց հածանավերը կհայտնվեն Պարսից ծոցում:

Այդ ժամանակ ես կվերսկսեմ հարձակումը ռուսական ճակատում ավելի հզոր բանակով, քան թե 1941 թ.: Իմ զրահապատ դիվիզիաները կշարունակեն գնալ Կովկասի ուղղությամբ և կհասնեն Պարսից ծոց: Մենք ճապոնացիների հետ կմիանանք Բասրայում»:

Անգլիացիների դրությունը կարելի է համարել հուսահատական: Գերմանական բանակը առաջ էր շարժվել Եգիպտոսում համարյա 400 կմ և պատրաստվում էր վճռական ու վերջնական հարվածը հասցնել անգլիացիներին Եգիպտոսում, գրավել Կահիրեն, Ալեքսանդրիան և Սուեզի ջրանցքը:

Անգլիական զորքերին մեծ դժվարությամբ 1942 թ. հունիսի 30–ին հաջողվեց Ռոմելին կանգնեցնել ալ–Ալամայնի մոտ:

Եգիպտոսում անգլիական զորքերի գլխին կախված վտանգը տեսնում էր ԱՄՆ կառավարությունը: Պրեզիդենտ Ռուզվելտը գտնում էր, որ պետք է ամեն ինչ անել, որպեսզի Մերձավոր Արևելքը չընկնի գերմանացիների ձեռքը: Եվ նա կարգադրեց ամենալայն ռազմական օգնությունը ցույց տալ անգլիական բանակներին, որոնց տրամադրության տակ դրվեցին մեծ քանակությամբ ամերիկյան տանկեր, ռազմական օդանավեր և ռազմական այլ տեխնիկա: ԱՄՆ–ին և Անգլիային հաջողվեց 1942 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին կենտրոնացնել ահռելի քանակությամբ ռազմական տեխնիկա և հասնել թվական գերակշռության Ռոմելի բանակի նկատմամբ, որը Գերմանիայից չէր ստանում համալրում Վոլգայի ափերում ծավալված ճակատամարտի հետևանքով:

1942 թ. հոկտեմբերի 23–ին անգլիական 8–րդ բանակը ֆելդմարշալ Մոնտգոմերի հրամանատարությամբ անցավ հարձակման ալ–Ալամայնի մոտ: Դա Երկրորդ համաշխարհային պատերազմի կարևոր ճակատամարտերից մեկն էր, որը տևեց 12 օր և ավարտվեց անգլիական զորքերի հաղթանակով: Պարտություն կրած Ռոմելը նահանջեց արևմուտք:

Դրան 1942 թ. նոյեմբերին հաջորդեց մոտ կեսմիլիոնանոց ամերիկյան և անգլիական զորքերի դեսանտը Ալժիրում:

Ռազմական մի շարք գործողությունների հետևանքով ամերիկյան և անգլիական զորքերը կարողացան 1942 թ. նոյեմբերից մինչև 1943 թ. մայիսը գերմանական և իտալական զորքերին լրիվ դուրս մղել Հյուսիսային Աֆրիկայից:

Եգիպտոսի, Հյուսիսային Աֆրիկայի և Արաբական Արևելքի վրա կախված ֆաշիստական վտանգը վերացավ:

Հյուսիսային Աֆրիկայում անգլիական ու ամերիկյան և Վոլգայի ափերին խորհրդային զորքերի տարած հաղթանակները վերջնականապես պատմության արխիվ հանձնեցին Մերձավոր Արևելքը Եգիպտոսից և Կովկասից նվաճելու գերմանա–իտալական պլանները:

4. Եգիպտոսը պատերազմի ավարտական փուլում

Գերմանա–իտալական զորքերին Եգիպտոսից դուրս մղելուց և ֆաշիստական վտանգի վերացումից հետո Եգիպտոսում կրկին առաջին պլանի վրա հայտնվեցին ներքաղաքական հարցերը և Անգլիայի հետ հետագա հարաբերությունների խնդիրը:

Թագավորի, արքունիքի և աջ կուսակցությունների համար կենտրոնական հարցերից մեկը դարձավ Մուստաֆա Նահասի վաֆդական կառավարության տապալումը և արքունիքին հաճելի կառավարության կազմավորումը: 1943–1944 թթ. թագավորական պալատը մի քանի նման փորձեր կատարել էր, որոնք ավարտվել էին անհաջողությամբ, քանի որ պայմանները դրա համար դեռևս չէին հասունացել և Նահասի կառավարությունը շարունակում էր վայելել Անգլիայի վստահությունն ու աջակցությունը:

Սակայն իրադրությունը կտրուկ փոխվեց, երբ Նահասի կառավարությունը Եգիպտոսում ահագնացող հակաբրիտանական շարժումը ոչ միայն չփորձեց ճնշել, այլև խրախուսեց: Դրա բարձրակետը հանդիսա-

ցավ վարչապետ Մուստաֆա Նահասի ծրագրային ելույթը 1944 թ. օգոստոսի 28–ին՝ նվիրված 1936 թ. անգլո–եգիպտական պայմանագրի ստորագրման ութերորդ տարեդարձին: Նրա հիմնական կետերն էին՝ 1936 թ. պայմանագրի դենոնսացիա՝ վերացում, անգլիական զորքերի դուրսբերումը Նեղոսի հովտից և Եգիպտոսի ու Սուդանի միասնության հաստատումը:

Նահասի այդ ելույթը և նրա կառավարության նոր դիրքորոշումը առաջացրին Անգլիայի դժգոհությունը, և Վաֆդը կորցրեց բրիտանական դեսպանի վստահությունն ու աջակցությունը: Անգլիան այլևս Վաֆդի կարիքն այնպես չէր զգում, ինչպես 1942 թ. կրիտիկական պահին: Ուստի Նահասի կառավարության տապալումը, ինչպես գտնում էին Լոնդոնում, այլևս վտանգ չէր կարող սպառնալ Անգլիային: Մանավանդ որ Վաֆդին հակառակ քաղաքական ուժերը, թագավորը և նրա արքունիքը ոչ միայն այլևս բացահայտորեն հակաբրիտանական տրամադրություններ չէին դրսևորում, այլև ընդգծում էին Անգլիայի հետ համագործակցելու իրենց պատրաստակամությունը:

Հենց դա էլ վճռորոշ եղավ Նահասի կառավարության տապալման գործում: Նա իր խնդիրը կատարել էր և կարող էր հեռանալ: Այսպիսով՝ Նահասի կառավարությունը 1936 թ. հետո երկրորդ անգամ հայտնվեց նման վիճակում:

Կարելի է ենթադրել, որ Նահասը պատահական հանդես չեկավ ծրագրային ելույթով՝ պնդելով Վաֆդի հայտնի պահանջների վրա: Նա հասկանում էր, որ դա կհանգեցնի հարաբերությունների վատացմանը Անգլիայի հետ և իր գլխավորած կառավարության անկմանը: Բայց նա հեռուն էր նայում և դիմեց այդ քայլին իր և իր կուսակցության հեղինակությունը բարձր պահելու և ազդեցությունը եգիպտացիների ամենալայն զանգվածների մոտ չգցելու համար:

1944 թ. հոկտեմբերի 8–ին թագավորական հրամանով Նահասի կառավարությունը հրաժարական տվեց: Կազմվեց նոր՝ կոալիցիոն կառավարություն ամբ ուժերից՝ «Մնաադ» կուսակցության ղեկավար Ահմադ Մահիրի գլխավորությամբ, որը Ալի Մահիրի հորեղբորորդին էր: Կառավարության մեջ մտան նաև լիբերալների, Վաթան և Քուլլա ալ–Վաֆդի ներկայացուցիչները:

Այդ կառավարության առաջին կարևոր քայլը հանդիսացավ Ալի Մահիրի, Ահմադ Հուսեյնի, Մակրամ Ուբեյդիի և այլ հետադիմական գործիչների բանտից ազատ արձակումը, որոնք ձերբակալվել էին Նահասի

կառավարության ժամանակ: Դերերը փոխվեցին, և նոր կառավարությունը սկսեց վաֆդականների, նրանց համակիրների, բանվորական շարժման ակտիվ գործիչների և այլ դեմոկրատական ուժերի հալածանքները:

Պատերազմի ավարտական փուլում տեղի ունեցավ կարևոր քաղաքական իրադարձություն արաբական երկրներում: Արաբական աշխարհում քանի գնում, ավելի էին ուժեղանում արաբական երկրների միավորման միտումները, և այդ նպատակով առաջ էին քաշվում տարբեր ծրագրեր, ինչպես՝ «Բարեբեր մահիկի», «Մեծ Սիրիայի» և այլն: Սակայն ներքին հակասությունները և մրցակցությունը արաբական տարբեր երկրների՝ Եգիպտոսի, Իրաքի, Անդրհորդանանի, Սիրիայի, Սաուդյան Արաբիայի և Լիբանանի միջև հնարավորություն չտվեցին այդ միտումներն իրականացնել նրանց պետական միավորման մակարդակով: Գաղափարը ձևափոխվեց և ընդունեց տարածաշրջանային (ռեգիոնալ) մակարդակով միջպետական կազմակերպություն ստեղծելու ձև, որը ստացավ Արաբական պետությունների լիգա անվանումը:

Նրա ստեղծման մասին որոշումն ընդունվեց 1944 թ. հոկտեմբերի 7–ին Ալեքսանդրիայում կայացած արաբական հինգ պետությունների՝ Եգիպտոսի, Իրաքի, Սիրիայի, Լիբանանի և Անդրհորդանանի դեկավարների կոնֆերանսում, որոնք ստորագրեցին առաջին պաշտոնական փաստաթուղթը՝ Արձանագրությունը լիգայի ստեղծման վերաբերյալ: Իսկ 1945 թ. մարտի 22–ին Կահիրեում արաբական վեց պետությունների՝ Եգիպտոսի, Իրաքի, Սիրիայի, Սաուդյան Արաբիայի, Լիբանանի և Անդրհորդանանի ներկայացուցիչները ստորագրեցին Արաբական պետությունների լիգայի պակտը, որով ավարտվեց միջարաբական տարածաշրջանային այդ կազմակերպության ձևավորման գործընթացը: Նույն թվականի մայիսին նրան միացավ նաև Եմենը:

Հետագայում նրա կազմը համալրվում էր արաբական երկրների կողմից՝ նրանց անկախության նվաճմանը զուգընթաց:

Արաբական պետությունների լիգայի շտաբ–կայանը հաստատվեց Կահիրեում: Արաբական երկրները համաձայնության եկան, որ ԱՊԼ–ի գլխավոր քարտուղարը պիտի լինի Եգիպտոսի ներկայացուցիչը:

Արաբական պետությունների լիգան նշանակալի և դրական դեր է խաղացել և շարունակում է խաղալ արաբական երկրների քաղաքական կյանքում, միջարաբական հարաբերություններում, արաբական երկր-

ների առջև պարբերաբար ծագող քաղաքական, տնտեսական, մշակութային խնդիրների, այդ թվում և կոնֆլիկտների լուծման գործում:

Պատերազմի ավարտման նախօրեին արդեն քննարկվում էր պատերազմից հետո Խաղաղության կոնֆերանս գումարելու և վարկաբեկված ու իրեն չարդարացրած Ազգերի լիգայի փոխարեն մի նոր միջազգային կազմակերպություն՝ Միավորված ազգերի կազմակերպություն, ստեղծելու հարցը: Այդ առնչությամբ ծագեց մեկ այլ հարց՝ ո՞ր պետություններն իրավունք ունեն մասնակցելու այդ կոնֆերանսին և դառնալ ՄԱԿ–ի հիմնադիր անդամ: Այդ խնդիրը հատուկ քննարկման առարկա դարձավ Ֆ. Ռուզվելտի, Ու. Չերչիլի և Ի. Ստալինի միջև 1945 թ. փետրվարին Յալթայում կայացած կոնֆերանսի ժամանակ: Ի վերջո, Մեծ եռյակը համաձայնվեց Խաղաղության կոնֆերանսին հրավեր ուղարկել միայն այն երկրներին, որոնք մինչև 1945 թ. մարտի 1–ը պատերազմ կհայտարարեն Գերմանիային:

Հետևելով այդ հանձնարարականին՝ Եգիպտոսը Գերմանիային պատերազմ հայտարարեց 1945 թ. փետրվարի 26–ին:

1945 թ. փետրվարի 27–ին Վաշինգտոնում Եգիպտոսի դեսպանորդ Հասանը հաղորդեց ԱՄՆ պետական քարտուղարի պաշտոնակատար Գրյուին, որ իր կառավարությունը փետրվարի 26–ից իրեն հայտարարում է պատերազմի մեջ Գերմանիայի և Ճապոնիայի հետ և որոշել է միանալ Միավորված ազգերի 1942 թ. հունվարի 1–ի դեկլարացիային:

Գրյուն իր պատասխանում հայտնեց, որ ԱՄՆ–ը՝ որպես դեկլարացիայի պահորդ՝ դեպոզիտոր, ողջունում է Եգիպտոսի միանալը միավորված ազգերին:

Գերմանիային և Ճապոնիային պատերազմ հայտարարելը խորհրդանշական բնույթ էր կրում, քանի որ եգիպտական զորքերը ոչ մի մասնակցություն չունեցան Գերմանիայի և Ճապոնիայի դեմ ռազմական գործողություններին, թեկուզ նրա ավարտական փուլում: Նա ոչ մի զոհ չտվեց, բացի մեկ հոգուց՝ վարչապետ Ահմադ Մահիրից: Նա ընկավ ֆաշիստամետ ահաբեկչի գնդակից դեպուտատների պալատում, երբ դուրս էր գալիս՝ դեպուտատներին ներկայացնելով Գերմանիային և Ճապոնիային պատերազմ հայտարարելու վերաբերյալ իր կառավարության դեկլարացիան:

Եգիպտոսը մասնակցեց 1945 թ. Սան Ֆրանցիսկոյում գումարված Խաղաղության կոնֆերանսին և դարձավ ՄԱԿ–ի հիմնադիր–անդամ:

IV. ԵԳԻՊՏՈՍԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1945–1952 թթ.)

1. Իրադրությունը Եգիպտոսում «փոքրամասնական» կուսակցությունների կառավարման շրջանում (1945–1950 թթ.)

Հետպատերազմյան առաջին հինգ տարիներին՝ մինչև 1950 թ., Եգիպտոսի կառավարումը գտնվում էր, այսպես կոչված, «փոքրամասնության» կուսակցությունների կոալիցիայի ձեռքում, որի միջուկը կազմում էին սաադականները և լիբերալները: Ինչ վերաբերում է Վաֆդ կուսակցությանը, ապա նա, որ իշխանությունից հեռացվել էր դեռևս 1944 թ. հոկտեմբերին, գտնվում էր ընդդիմության ճամբարում: «Փոքրամասնության» կուսակցությունները թագավորի և պալատի օգնությամբ ամեն ինչ անում էին Վաֆդի վերադարձը իշխանություն կանխելու համար, և դա նրանց հաջողվում էր համարյա վեց տարի:

Դա իր կնիքը դրեց Եգիպտոսի ներքաղաքական կյանքի վրա:

Այս ժամանակաշրջանում քաղաքական նոր իրողություններից էր նաև կոմունիստական գաղափարների տարածումը և նրանց հետևորդների զգալի ակտիվությունը, մանավանդ ուսանողության, ինչպես նաև բանվորական որոշ շրջաններում, որը սովորաբար բացատրվում է պատերազմում Խորհրդային Միության հաղթանակով և հետպատերազմյան աշխարհում տեղի ունեցած փոփոխություններով, երբ սոցիալիզմի և կոմունիզմի գաղափարները դուրս եկան Խորհրդային Միության շրջանակներից և զգալի տարածում գտան ինչպես եվրոպական, այնպես էլ ասիական և աֆրիկյան առանձին երկրներում: Կոմունիստական գաղափարների և շարժման դերը Եգիպտոսում, իհարկե, չպետք է գերագնահատել, ինչպես դա սովորաբար արվում էր խորհրդային արևելագիտական գրականության մեջ, բայց և մյուս կողմից սխալ կլիներ դա անտեսել, քանի որ նա գոյություն ուներ և արդեն դարձել էր եգիպտական քաղաքական կյանքի իրողություններից մեկը:

Եգիպտոսի հետպատերազմյան քաղաքական կյանքում շատ ակտիվ գործունեություն ծավալեց «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությունը կամ ասոցիացիան: Նա հիմնվել է 1929 թ. Հասան ալ–Բաննայի կողմից՝ Իսմայիլիայում, սակայն հետագայում իր կենտրոնը տեղափոխեց Կահիրե: Ալ–Բաննան և կազմակերպության

մյուս ղեկավարները գտնում էին, որ Եգիպտոսը հայտնվել է խոր ճգնաժամի մեջ, որից ելքը նրանք տեսնում էին թեոկրատիայի՝ աստվածապետության հաստատման մեջ: «Մուսուլման եղբայրները» մուսուլմանների սուրբ գիրքը՝ Կորանը, համարում էին միակ ընդունելի սահմանադրությունը մուսուլմանների համար և հայտարարում, որ «Իսլամը սոցիալական ինստիտուտ է՝ պիտանի բոլոր ժամանակների և ժողովուրդների համար»: Նա պայքարում էր իշխանությունը գրավելու, միապետությունը տապալելու և Եգիպտոսը աստվածապետություն հռչակելու համար: Նրա իդեալը միջնադարյան խալիֆայությունն էր:

«Մուսուլման եղբայրները» մոլեռանդ հակակոմունիստներ և հակաարևմտականներ էին, նրանք չէին ընդունում եվրոպական դեմոկրատիան և նրա ինստիտուտները:

Նրանց գլխավոր պահանջներից էին նաև պայքարը օտարերկրյա տիրապետության դեմ, խոշոր հողատերերի և բուժուազիայի արտոնությունների վերացում և այլն:

Պետք է խոստովանել, որ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը զգալի ազդեցություն ուներ եգիպտական հասարակության տարբեր խավերի, հատկապես հետամնաց շրջանների վրա, որոնց գայթակղեցնում էին արդարության վերաբերյալ նրանց ամբոխավարական լոզունգները և խոստումները մուսուլմանների դրությունը բարելավելու մասին:

Դա լավ կազմակերպված և կարգապահ կազմակերպություն էր, որի ֆանատիկ շարքային անդամները պատրաստ էին ամեն մի քայքայիչ ու գաղտնի գործողության, այդ թվում և ահաբեկչական: Նա ուներ նաև իր զինված խմբավորումները:

Հետպատերազմյան շրջանի Եգիպտոսի քաղաքական կյանքի բնորոշ գծերից մեկն էլ այն էր, որ սոցիալական և հակաիմպերիալիստական խնդիրներն ավելի ու ավելի էին միախառնվում, որի շնորհիվ սոցիալական և հակաիմպերիալիստական շարժումները դառնում էին ավելի վտանգավոր:

Կրկին կենտրոնական հարց դարձավ անգլո–եգիպտական պայմանագրի խնդիրը: Եգիպտական կողմը պահանջում էր վերանայել այն և կնքել նոր պայմանագիր: Անգլիան ձնացրեց, թե ունկնդիր է եգիպտական պահանջներին, և 1946 թ. ապրիլին Կահիրեում սկսվեցին անգլո–եգիպտական բանակցությունները, որոնք այնուհետև շարունակվեցին Լոնդոնում: 1946 թ. հոկտեմբերի 25–ին Եգիպտոսի վարչապետ

Սիդկին և Անգլիայի արտաքին գործերի նախարար Բևինը ստորագրեցին «նոր» պայմանագիր, որի հիմնական կետերն էին. ա) անգլիական զորքերի դուրսբերում Եգիպտոսից երեք տարվա ընթացքում, բ) անգլիական բազաների պահպանում Եգիպտոսում, գ) Անգլո–եգիպտական համատեղ պաշտպանության խորհրդի ստեղծում և դ) Սուդանի կարգավիճակի պահպանում:

Այս պայմանագիրը չէր կարող ընդունելի լինել եգիպտացիների համար, և սկսվեց, կարելի է ասել, համաեգիպտական պայքար ընդդեմ Սիդկի–Բևին պայմանագրի: Այս մթնոլորտում Եգիպտոսի պառլամենտը հրաժարվեց վավերացնել պայմանագիրը, և Սիդկին հրաժարական տվեց:

Նրան վարչապետի պաշտոնում փոխարինած Նուկրաշին 1947 թ. հուլիսին հարցը տեղափոխեց ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի քննարկմանը: Հարցի քննարկումը, որը տեղի ունեցավ օգոստոսի 5–ից մինչև սեպտեմբերի 10–ը, Անգլիայի դիրքի պատճառով չհանգեցրեց որևէ որոշման ընդունման: Դրան հետևեցին զանգվածային բողոքի ելույթներ Ալեքսանդրիայում, Պորտ Սաիդում, Կահիրեում, որոնց սեպտեմբերին միացան Ալ–Մահալա ալ–Քուբրայի 30–հազարանոց տեքստիլագործները:

Այդ օրերին առաջին անգամ դրսևորվեցին նաև հակամիապետական միտումներ, որի ապացույցն է հանդիսանում Ալեքսանդրիայի բանվորների ցույցը՝ «Կորչի՛ միապետությունը» լոզունգի ներքո:

Լարվածությունն էլ՛ ավելի ուժեղացավ 1948 թ. արաբա–իսրայելական առաջին պատերազմում արաբական երկրների, այդ թվում և Եգիպտոսի բանակների ռազմական պարտության պատճառով: Եգիպտոսում, որտեղ մի առանձին հարգանք գոյություն ունի բանակի նկատմամբ, շատ ծանր տարան պարտության լուրը՝ համարելով այն ազգային ստորացում և խայտառակություն: Պարտության մեջ մեղադրում էին իշխանություններին, հատկապես պալատին, մանավանդ երբ հայտնի դարձավ, որ բանակին մատակարարվել են հին և օգտագործման համար ոչ պիտանի զենք, և այդ խարդախությամբ որոշ ազդեցիկ գործիչներ մեծ փողեր են աշխատել: Երկրում նորից ծայր առան ցույցերը: Դժգոհությունը համակեց նաև բանակին:

Հեգիպտոսի կառավարող վերնախավի դեմ բացահայտ կերպով հանդես եկան «Մուսուլման եղբայրները», որոնք դեռևս պաղեստինյան պատերազմի ժամանակ հրապարակեցին իրենց ծրագիրը, որը կոչ էր անում եգիպտացիներին՝ տապալել միապետությունը և հաստատել

աստվածապետություն: Նուկրաշիի կառավարությունը 1948 թ. դեկտեմբերի 8–ին արգելեց «Մուսուլման եղբայրներ» ասոցիացիան, և սկսվեցին նրա անդամների զանգվածային ձերբակալությունները: Բայց դա այն կազմակերպությունը չէր, որ հեշտությամբ զիջեր և համակերպվեր իրեն թելադրված պայմաններին: 1948 թ. դեկտեմբերի 28–ին «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության անդամի ձեռքով սպանվեց վարչապետ Նուկրաշին, որին ի պատասխան՝ 1949 թ. փետրվարի 12–ին սպանվեց կազմակերպության հիմնադիր ղեկավար Հասան ալ–Բաննան:

Սակայն դա չհաղթահարեց և չէր էլ կարող հաղթահարել այն համապարփակ ճգնաժամը, որի մեջ հայտնվել էր Եգիպտոսը: Ստեղծված վիճակից ելք գտնելու մի շարք անհաջող փորձերից հետո 1950 թ. հունվարին անցկացվեցին պառլամենտական ընտրություններ, որն ավարտվեց Հիզբ ալ–Վաֆդի հաղթանակով:

2. Ֆարուկ I–ի հռչակումը Եգիպտոսի և Սուդանի թագավոր

Մուստաֆա Նահասը հունվարի 12–ին կազմեց իր հերթական կառավարությունը: Նա իր գլխավոր խնդիրը համարեց բանակցությունները Անգլիայի հետ՝ անգլո–եգիպտական պայմանագիրը վերանայելու և եգիպտա–բրիտանական հարաբերությունները նոր հիմքի վրա կառուցելու համար: Բանակցությունները տևեցին 16 ամիս և բիտանական կողմի մեղքով, որը չէր ցանկանում որևէ զիջման գնալ, ավարտվեցին անարդյունավետ:

Դա ավելի խթանեց շարժումը Եգիպտոսում՝ հանուն 1936 թ. պայմանագրի վերացման, որն իր գագաթնակետին հասավ 1951 թ. օգոստոսի 28–ին, երբ լրացավ 1936 թ. պայմանագրի ստորագրման 15–րդ տարեդարձը: Դա որոշ իմաստով հանրագումարային տարեթիվ էր, որը ցույց տվեց, որ եգիպտացիների 15–ամյա պայքարը այդ պայմանագրի դեմ կոնկրետ արդյունքներ չի տվել: Օգոստոսի 25–ին Կահիրեում և Եգիպտոսի բոլոր խոշոր քաղաքներում տեղի ունեցան զանգվածային ցույցեր, որոնց ժամանակ բոլոր քաղաքական կուսակցությունները պահանջեցին Նահասի կառավարությունից չեղյալ հայտարարել 1936 թ. պայմանագիրը: Այս առանցքային բնույթի պահանջն արժանացավ համընդհանուր պաշտպանության: Եվ Վաֆդը դիմեց այդ քայլին: Նահասի կառավարությունն այդ հարցը ներկայացրեց պառլամենտի քննարկմանը, որը 1951 թ. հոկտեմբերի 15–ին միաձայն դենոնսացիայի

ենթարկեց՝ իր ուժը կորցրած հայտարարեց 1936 թ. օգոստոսի 28–ին կնքված անգլո–եգիպտական դաշնության պայմանագիրը: Միաժամանակ պառլամենտի որոշումով իր ուժը կորցրած համարվեց Անգլիայի հետ 1899 թ. Սուդանի վերաբերյալ կնքված պայմանագիրը:

Դա եգիպտոսի ազգային–ազատագրական, հայրենասիրական ուժերի խոշորագույն հաղթանակն էր:

Եգիպտոսի դեպուտատների պալատը 1951 թ. հոկտեմբերի 15–ին Սուդանը հայտարարեց միացված եգիպտոսին, իսկ եգիպտոսի թագավոր Ֆարուկ I–ին հռչակեց Եգիպտոսի և Սուդանի թագավոր:

Պառլամենտի որոշումները, որոնք եգիպտացիները համարում էին պատմական, աննկարագրելի խանդավառությամբ ընդունվեցին եգիպտոսում: Եգիպտական հասարակության բոլոր խավերը հայտարարեցին իրենց լիակատար գոհունակությունը և աջակցությունն այդ պատմական որոշումներին:

Սակայն չպետք է մոռանալ, որ պառլամենտի հոկտեմբերի 15–ի որոշումը միակողմանի գործողություն էր: Բրիտանական կառավարությունը հայտարարեց, որ ինքը չի ճանաչում եգիպտական պառլամենտի որոշումը 1936 թ. պայմանագիրը չեղյալ հայտարարելու վերաբերյալ՝ ընդգծելով, որ առաջիկայում ևս նա գործելու է այդ պայմանագրի հոդվածների համաձայն: Եվ, ի ապացույց իր հայտարարության, Անգլիան ոչ միայն իր զորքերը դուրս չբերեց եգիպտոսից, այլ, ընդհակառակը, ավելացրեց նրանց թվաքանակը: Բավական է նշել, որ միայն Սուեզի ջրանցքի գոտում անգլիական զորքերի թիվը հասավ մոտ 100 հազարի: Անգլիական իշխանություններն ավելի ամրապնդեցին իրենց դիրքերը Սուեզի գոտում:

Բրիտանական իշխանությունների այս անհեռատես քաղաքականությունը խիստ շիկացրեց իրադրությունը և պատճառ հանդիսացավ զինված բախումների և եգիպտոսի տարբեր շրջաններում պարտիզանական պայքարի ծավալման համար: Պարտիզանական ջոկատներ կազմավորեցին Իսմայիլիայի, Պորտ Սաիդի և Սուեզի բանվորները, որոնց օրինակին հետևեցին եգիպտական մյուս քաղաքները: Մի շարք վայրերում բանվորները և ուսանողությունը կազմեցին միասնական ազգային կոմիտեներ և ազատագրության ջոկատներ: Իրենց զինված ջոկատները ստեղծեցին նաև եգիպտական քաղաքական կուսակցությունների մեծ մասը:

Շուտով պարտիզանական ջոկատներ հայտնվեցին նաև գյուղական վայրերում:

Այդ պարտիզանական խմբերը, ազատագրության ջոկատները, կուսակցությունների մարտական խմբերը վերածվեցին գործունյա մարմինների, որոնք համարձակորեն պայքարի մեջ մտան անգլիական զինվորների հետ: Մի շարք վայրերում, այդ թվում և Սուեզի ջրանցքի գոտում, նրանք անգամ զինաթափում էին անգլիական զինվորներին ու սպաներին: Ընդլայնելով իրենց գործողությունները՝ պարտիզաններն արդեն սկսեցին հարձակվել անգլիական զորանոցների, օդանավակայանների և զինապահեստների վրա, գրավել անգլիական զենքը և այն ուղղել անգլիացիների դեմ: Նոյեմբերից կարելի է ասել, որ իսկական մարտեր էին գնում եգիպտական պարտիզանական ուժերի և անգլիական զորքերի միջև: Ի պաշտպանություն եգիպտական հայրենասիրական ուժերի՝ 1951 թ. նոյեմբերի 14–ին Կահիրեում կայացավ հզոր ցույց, որին մասնակցում էր մոտ մեկ միլիոն մարդ: Դեկտեմբեր ամսին իսկական մարտեր էին գնում Սուեզի ջրանցքի գոտում:

Մարտնչողների շարքերում էին նաև Վաֆդ կուսակցության շատ շարքային անդամներ: Բայց Վաֆդ կուսակցությունն ընդհանուր առմամբ, նրա ղեկավարությունը և կառավարությունը համարձակություն չունեցան և քաղաքական կամք չդրսևորեցին ղեկավարելու եգիպտական հայրենասիրական ուժերի հերոսական զինված պայքարը, որը փաստորեն, վերածվել էր հակաբրիտանական զինված ապստամբության: Այս անգամ Վաֆդը զոհ գնաց իր ավանդական զգուշավոր քաղաքականությանը և հարցը բանակցությունների և փոխհամաձայնությունների ուղիով «լուծելու» իր թուլությանը:

Վաֆդի անվճռականությունից օգտվեց Անգլիան, որը 1952 թ. հունվարից անցավ վճռական գործողությունների: Անգլիական զորքերին հրաման տրվեց ուղղակի ոչնչացնել և հողին հավասարեցնել այն քաղաքները և գյուղերը, որոնք կշարունակեն պայքարը և զինված դիմադրություն ցույց կտան անգլիացիներին: Ի կատարումն այդ հրամանի, անգլիական զորքերը վերացրին մի քանի բնակավայրեր: 1952 թ. հունվարի 19–ին անգլիական 7 հազ. զինվորներ տանկերի ուղեկցությամբ հարձակում սկսեցին ապստամբական շարժման կարևոր կենտրոններից մեկի՝ Իսմայիլիայի վրա՝ արյան մեջ խեղդելով քաղաքի բնակչության դիմադրությունը, որին միացել էր տեղական հայրենասեր ոստիկանությունը: Անգլիական զորքերի այդ բարբարոսական գործողությունների դեմ բողոքի միտինգ տեղի ունեցավ Կահիրեում հունվարի 26–ին:

Այդ օրը նշանակալի է և մտել է պատմության մեջ այն պատճառով, որ 1952 թ. հունվարի 26–ին Կահիրեի կենտրոնում հրկիզվեց 700–ից ավելի շենք: Դրանք խոշոր կառույցներ էին և հիմնականում պատկանում էին օտարերկրացիներին:

Գոյություն ունի այն տեսակետը, որ դա սադրանք էր եգիպտական հետադիմական ուժերի կողմից, որոնց թիկունքում թագավորական պալատն էր կանգնած: Նրանք ցանկանում էին «ցույց տալ, որ Վաֆդի կառավարությունն անկարող է երկրում ապահովել կարգ ու անվտանգություն» և այդ պատրվակով հասնել Նահասի կառավարության տապալմանը:

Այդպես էլ եղավ: 1952 թ. հունվարի 27–ին պալատը կատարեց պետական հեղաշրջում: Մուստաֆա Նահասի վաֆդական կառավարությունը հեռացվեց և նոր կառավարություն կազմելը հանձնարարվեց Ալի Մահիրին: Այսպիսով՝ քաղաքական թատերաբեմում կրկին հայտնվեց մի քաղաքական գործիչ, որն աչքի էր ընկնում իր նվիրվածությամբ թագավորին, և առաջին անգամը չէ, որ կատարում էր պալատի հանձնարարությունները:

Նա երկրում մտցրեց արտակարգ դրություն, սկսեց պարտիզանական ջոկատների ղեկավարների և հայրենասիրական գործիչների ձերբակալությունը, իսկ պարտիզանական և այլ մարտական խմբերը լուծարվեցին: Շատ հայրենասերներ կանգնեցին ռազմական դատարանների առջև:

Բայց դա եգիպտոսին չբերեց և չէր էլ կարող բերել հանդարտություն: Երկրի առջև կանգնած քաղաքական և սոցիալ–տնտեսական և ոչ մի խնդիր չէր լուծվել: Հարաբերությունները Անգլիայի հետ կարգավորված չէին, ավելին՝ նրանք 1951–1952 թթ. արյունալի իրադարձություններից հետո ավելի էին վատացել: Ալի Մահիրի կառավարությունը, բացի բռնությունների կիրառումից, ուրիշ ոչինչ չկարողացավ անել և հարկադրված էր իր տեղը զիջել ուրիշների: Մինչև 1952 թ. հուլիսյան հեղափոխությունը՝ հինգ ամսվա ընթացքում, Ալի Մահիրի կառավարությունից բացի եգիպտոսն ունեցավ ևս հինգ կառավարություն:

Եգիպտոսն ապրում էր խոր համակարգային ճգնաժամ: Նախկին թագավորական համակարգն իրեն արդեն սպառել էր: Անհրաժեշտ էին նոր ուժեր, նոր գաղափարներ և նոր մոտեցումներ:

Մոտենում էր եգիպտոսի պատմության շրջադարձային փուլը:

3. «Ազատ սպաները»՝ «Ադ–Դուբատ ալ–ահրար»

Եգիպտոսի համար պատմական նշանակություն ունեցող այդ փուլի իրականացումը կապված է «Ազատ սպաներ»՝ «Ադ–Դուբատ ալ–ահրար» գաղտնի զինվորական կազմակերպության և նրա հիմնադիր ղեկավար Գամալ Աբդել Նասերի անվան հետ:

Իսկ ովքե՞ր էին այդ ազատ սպաները, որտեղի՞ց էին նրանք գալիս, որ խավերից էին ծագում և ի՞նչ էին ուզում:

1936 թ. անգլո–եգիպտական պայմանագիրը թույլ էր տալիս եգիպտական ազգային բանակի թվաքանակի ավելացում՝ 11,5 հազարից մինչև 60 հազար, որը և իրականացրին եգիպտական իշխանությունները: Բանակի թվաքանակի այդպիսի կտրուկ՝ մոտ վեց անգամ աճը պահանջում էր ազգային միջին սպայական կազմի նույնպես կտրուկ աճ, որն իրականացվեց հիմնականում ի հաշիվ եգիպտական հասարակության մանր, գլխավորապես միջին խավերի ներկայացուցիչների: Եգիպտոսի զինվորական ուսումնական հաստատությունների դռները լայնորեն բացվեցին նրանց առջև, և այդ ուղիով ձևավորվեց նոր սպայական կորպուս, որը սերտորեն կապված էր հասարակ ժողովրդի հետ, լավ գիտեր նրա հոգսերն ու ցավերը և իր բնույթով ավելի դեմոկրատական էր: Այդ առումով այսինքն՝ իր կապերով ժողովրդի հետ, նա արմատականորեն տարբերվում էր եգիպտական բարձրաստիճան զինվորական արիստոկրատիայից, որը հիմնականում կազմված էր գեներալներից: Դրանք, սակավ բացառությամբ, խոշոր հողատերերի և բուրժուազիայի ծոցից դուրս եկած մարդիկ էին, որոնք սերտորեն կապված էին արքունիքի հետ, համախմբված էին թագավորի շուրջը, հավատարմորեն ծառայում էին նրան և պաշտպանում նրա ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականությունը, այդ թվում և Անգլիայի հետ հարաբերությունների հարցում: Նրանք իրենց բարեկեցությունը և բարձր դիրքը եգիպտական հասարակությունում տեսնում էին գոյություն ունեցող հին ու փտած համակարգի պահպանման մեջ:

Եգիպտական հանրահայտ զինվորական ակադեմիան, 1936 թ. սկսած, համալրվեց միջին խավերի ներկայացուցիչներով, որոնք դարձան եգիպտական բանակի ապագա լեյտենանտներ, կապիտաններ, մայորներ, փոխգնդապետներ և գնդապետներ: Նրանցից շատերը դարձան այդ ակադեմիայի և այլ զինվորական ուսումնական հաստատությունների դասախոսներ, ինչն ապահովում էր նրանց մշտական կապը և շփում-

ները նորակոչիկների հետ: Նրանք շատ սուր էին զգում ժողովրդի սոցիալ–տնտեսական ծանր վիճակը, նրա հոգսերը, օտարերկրյա՝ բրիտանական տիրապետության ծանր հետևանքները, թագավորի և նրա պալատի անսկզբունքային քաղաքականության վնասները, որը վրդովեցնում էր նրանց ու ստիպում մտածել Եգիպտոսի ապագայի մասին:

Դրանց մեջ էին նաև ապագա ազատ սպաները, այդ թվում և նրանց ապագա ղեկավար Գամալ Աբդել Նասերը:

Գամալ Աբդել Նասերը ծնվել է 1918 թ. հունվարի 15–ին Ալեքսանդրիայում՝ փոստային ծառայողի ընտանիքում: 1936–1937 թթ. եղել է Կահիրեի համալսարանի ուսանող և ուսումնասիրել է իրավագիտություն: 1938 թ. ավարտել է Եգիպտական զինվորական ակադեմիան, ապա սովորել է ցամաքային զորքերի հրահանգիչների ուսումնարանում, եգիպտական բանակի շտաբի քոլեջում և լեյտենանտի աստիճանով ծառայել է եգիպտական բանակի հետևակում: Հետագայում նա դասավանդել է տակտիկա այդ նույն քոլեջում:

Եգիպտական զինվորական ակադեմիան ավարտելուց հետո Նասերը 1938 թ. նշանակում է ստանում Մանկաբադում տեղակայված եգիպտական կայազորում, որտեղ և ծանոթանում է իր ապագա զինակիցներ Անվար Սադաթի և Զաքարիյա Մոհի ադ–Դինի հետ: Վերջիններս նույնպես ծնվել էին 1918 թ. և 1938 թ. ավարտել Եգիպտոսի զինվորական ակադեմիան և լեյտենանտի զինվորական կոչումով նշանակում ստացել Մանկաբադի կայազորում: Շուտով Գամալ Աբդել Նասերի, Անվար Սադաթի և Զաքարիյա Մոհի ադ–Դինի միջև հաստատվում են մտերմիկ ընկերական հարաբերություններ, որոնք այնուհետև վերածվում են բարեկամության և զինակցության: Նրանք հայտնաբերում են իրենց տեսակետների համընկնում Եգիպտոսում տիրող դրության և նրա ապագայի հարցում:

1938 թ. Նասերը, Սադաթը և Զաքարիյա Մոհի ադ–Դինը՝ քսանամյա երեք լեյտենանտներ, Զաբալ Շարիֆ սարի վրա երդում են տալիս իրենց կյանքը զոհաբերել Եգիպտոսից օտարերկրյա ուժերի դուրսբերման և եգիպտական բանակի վերակազմավորման համար:

Անվար Սադաթը հետագայում «Հեղափոխությունը Նեղոսի վրա» իր գրքում, որը ըստ էության, հուշագրություն է, գրել է այդ մասին հետևյալը. «Զաբալ Շարիֆ սարի ստորոտում գիշերները մենք՝ որպես զինակից եղբայրներ, տարիքով ու աստիճանով երիտասարդներ, նստում էինք խարույկի շուրջը: Մենք չհապաղեցինք ծանոթանալ

ն բարեկամանալ»: Այնուհետև, արժանին հատուցելով Նասերի կազմակերպական մեծ տաղանդին, Սադաթը հարց է տալիս. «Ի՞նչ էր ասում նա մեզ, երբ մենք հավաքվում էինք խարույկի շուրջը՝ Ջաբալ Շարիֆ սարի ստորոտում: «Մենք պայքարելու ենք իմպերիալիզմի, միապետության և ֆեոդալիզմի դեմ, որովհետև մենք դեմ ենք անարդարությանը, ճնշմանը և ստրկությանը: Բոլոր հայրենասերները ուզում են ստեղծել ժողովրդավարություն՝ ուժեղ և ազատ ամեն տեսակ կախվածությունից: Այդ նպատակին կարելի է հասնել ուզածդ ուղիով՝ զինված կամ այլ: Ժամանակը չի սպասում, երկիրն ընկղմվում է իսկական քաոսի մեջ: Հասարակական պահանջները մեզ ցույց են տալիս ուղի. այդ ուղին հեղափոխությունն է»:

Ահա այստեղ մենք մոտենում ենք այն հարցին, թե երբ է հիմնվել «Ազատ սպաներ» գաղտնի զինվորական կազմակերպությունը: Այդ հարցին հստակ և ճշգրիտ պատասխան և միասնական տեսակետ չկա: Ամենայն հավանականությամբ, ճշմարտությունը կայանում է նրանում, որ այդ կազմակերպությունն անցել է ձևավորման տարբեր փուլեր, որոնցից յուրաքանչյուրն իր տեղն ու նշանակությունն ունի նրա կազմավորման ճանապարհին:

Ուստի սխալ չի կարելի համարել, երբ ոմանք նրա հիմնելու եթե ոչ սկիզբը, ապա սաղմնավորումը համարում են 1938 թվականը, երբ Մանկաբադում՝ Ջաբալ Շարիֆ սարի վրա երեք լեյտենանտները իրենց երդումը տվեցին: Դա դարձավ այն կորիզը, որի շուրջը հետագայում համախմբվեցին Նասերին համախոհ երիտասարդ սպաները: Գ. Միրսկին իր «Երրորդ աշխարհ. հասարակություն, իշխանություն, բանակ» գրքում նշում է. «Մանկաբադի զինվորականները 1939 թ. սկզբներին ստեղծեցին գաղտնի հեղափոխական ընկերություն, որը նպատակ ուներ հող նախապատրաստել ազատագրության համար»: Նրա մատնանշած տարեթիվը (1939 թ. սկզբներին), ըստ էության, չի հակասում կազմակերպության 1938 թ. հիմնված լինելու տեսակետին:

Երկրորդ փուլը կարելի է համարել դրան հաջորդած 10–ամյա ժամանակաշրջանը՝ մինչև 1948–1949 թվականները, արաբա–իսրայելական առաջին պատերազմի ավարտը ներառյալ: Այս փուլում, կարելի է ասել, կազմակերպական առումով արդեն ավելի հստակ է ձևավորվում այդ գաղտնի ընկերությունը, որը ստանում է «Ազատ սպաներ» անվանումը:

Նախ՝ նրա շարքերում ներգրավվում են նոր հայրենասիրական սպաներ, թեև պետք է նշել, որ Նասերն առանձնապես չէր ձգտում կազ-

մակերպության արհեստական ուռճացմանը: Նրա համար ամենակարևորը տվյալ սպայի հայացքներն ու նրա հուսալիությունն էին և գաղտնապահության ապահովումը:

1939 թ. Նասերը Մանկաբադից ծառայության է տեղափոխվում Ալեքսանդրիա, որտեղ նա ծանոթանում և բարեկամանում է Աբդել Հաքիմ Ամերի հետ, որը հետագայում դառնում է հեղափոխական Եգիպտոսի առանցքային գործիչներից մեկը: Նրանք այնուհետև ծառայության են տեղափոխվում Սուդան, որտեղից 1943 թ. Նասերը վերադառնում է Կահիրե: Այստեղ նա, որ արդեն ստացել էր կապիտանի աստիճան, տակտիկա է դասավանդում Եգիպտոսի զինվորական ակադեմիայում:

Հուսալի համախոհներ հավաքագրելու աշխատանքի հետ միասին Նասերը ծավալում է մեծ մասշտաբի կազմակերպչական աշխատանքներ: 1942 թ. ձևավորվում են «Ազատ սպաների» ղեկավար կորիզը՝ Նասերի գլխավորությամբ, և առաջին բջիջները՝ կազմված 3–5 անդամներից: Շատ լավ էր մշակված գաղտնապահության համակարգը: Բոլոր անդամներին միայն Նասերն էր ճանաչում, կար հաստատված նշանաբառ՝ միմյանց հետ կապ պահպանելու համար: Ընկերությունը կամ կազմակերպությունն իր ցյուղավորումներ էր տարածել եգիպտական բանակի համարյա բոլոր մասերում: 1940–ականների վերջերին նրանում արդեն ընդգրկված էր մոտ 700 սպա:

Ինչպես ամբողջ արաբական աշխարհի և Եգիպտոսի, այնպես էլ Նասերի և նրա համախոհ սպաների համար, որոնք ներգրավված էին գաղտնի հեղափոխական ընկերության մեջ, առանցքային նշանակություն ունեցան արաբա–իսրայելական կամ պաղեստինյան առաջին պատերազմը, որը բռնկվեց 1948 թ., և նրա տխուր հետևանքները արաբական աշխարհի համար: Նասերը և նրա համախոհ շատ սպաներ դարձան այդ պատերազմի մասնակիցները: Նասերը մասնակցեց Ֆալուջայի շրջանում ծավալված մարտերին, բայց նրա-գլխավորած զորամասն ընկավ շրջապատման մեջ: Նա մերժեց անձնատուր լինելու իսրայելական հրամանատարության առաջարկները և հերոսաբար դիմագրավեց հակառակորդին մինչև պատերազմի ավարտը:

Պաղեստինյան առաջին պատերազմի ժամանակաշրջանը կարևոր նշանակություն ունեցավ «Ազատ սպաների» համար: Այն ավելի վճռական դարձրեց հայրենասեր սպաներին՝ Եգիպտոսն ազատագրելու նեխված և ծախու թագավորական վարչակարգից և օտարերկրյա ազդեցությունից: Դա մի կողմից:

Մյուս կողմից՝ պատերազմի ժամանակ՝ Ֆալուջայի շրջափակման ընթացքում, առաջին անգամ Նասերի օգնությամբ միմյանց հանդիպեցին և ծանոթացան կազմակերպության շատ անդամներ, որոնք հայտնվել էին միևնույն խրամատներում: Այստեղ նրանք խրամատներում նիստեր էին գումարում և քննարկում իրենց հետագա խնդիրները:

Շատ հետազոտողներ համամիտ են, որ «Ազատ սպաների» փաստական կազմավորումը կայացել է 1948 թ. պաղեստինյան պատերազմի վերջնափուլում:

1949–1952 թթ., մեր կարծիքով, կարելի է համարել «Ազատ սպաների» կազմակերպության կայացման վերջնական փուլը: Ավելի կուռ ու ամբողջական դարձավ նրա կառուցվածքը, հստակվեցին նրա առանձին օղակների խնդիրները:

Ըստ այդմ՝ պահպանվեցին բջիջները՝ որպես կազմակերպության ամենաստորին օղակներ: Յուրաքանչյուր օղակ իր մեջ ներառնում էր ոչ ավելի, քան հինգ անդամ: Քսան բջիջներ միավորվում և կազմում էին մեկ խումբ:

Կազմակերպվեցին կոմիտեներ կամ սեկցիաներ, որոնց թիվը չորսն էր՝ գրոհային, տնտեսական, անվտանգության և ահաբեկչության: Որոշ հետազոտողներ նշում են նաև հինգերորդ՝ պրոպագանդայի կոմիտեն:

Գրոհային կոմիտեի խնդիրն էր զինված խմբերի պատրաստումը, տնտեսականինը՝ անհրաժեշտ ֆինանսական և տնտեսական միջոցների հայթայթումը, անվտանգության կոմիտեն զբաղվում էր «Ազատ սպաներ» կազմակերպության նոր անդամների հավաքագրումով: Ինչ վերաբերում է ահաբեկչության կոմիտեին, ապա դրա խնդիրն ինքնին հասկանալի է:

Վերջապես՝ ձևավորվեց «Ազատ սպաներ» կազմակերպության բարձրագույն մարմինը՝ Գործադիր կոմիտեն: Սկզբում այն կազմված էր հինգ, ապա ինը հոգուց, որի նախագահ 1950 թ. ընտրվեց Գամալ Աբդել Նասերը:

1952 թ. հեղափոխության նախօրյակին Գործադիր կոմիտեի անդամների թիվը հասավ 13–ի: Հարկ ենք համարում նշել նրանց անունները՝ հաշվի առնելով այն պատմական կարևոր դերը, որը նրանք կատարել են Եգիպտոսի նորագույն պատմության շրջադարձային նշանակություն ունեցող փուլում՝ Գամալ Աբդել Նասեր, Աբդել Հաքիմ Ամեր, Աբդել Լաթիֆ Բաղդադի, Քամալ ադ–Դին Հուսեյն, Հասան Իբրահիմ, Զաքարիյա Մոհի ադ–Դին, Խալիդ Մոհի ադ–Դին, Մուհամմադ Նագիբ, Անվար աս–Սադաթ, Գամալ Սալիմ, Սալահ Սալիմ, Հուսեյն Շաֆի և Ալի Սաբրի:

Նրանցից հինգն ունեին մայորի, յոթը՝ փոխգնդապետի, այդ թվում՝ Գամալ Աբդել Նասերը, և միայն մեկը՝ Մուհամմադ Նագիբը, գեներալ–մայորի զինվորական կոչում:

Գեներալ Նագիբը ոչ մի առնչություն, առավել ևս ծառայություն չուներ «Ազատ սպաներ» կազմակերպության ստեղծման գործում: Նրան միայն 1952 թ. հեղափոխության նախօրյակին՝ մայիս ամսին տեղյակ պահեցին այդ կազմակերպության գոյության մասին և ներգրավեցին նրա կազմում՝ ելնելով հատուկ նպատակներից, որոնց մասին կխոսվի հաջորդ բաժնում:

Այսպիսով՝ «Ազատ սպաներ» կազմակերպությունը կառուցվածքային առումով ուներ հետևյալ պատկերը՝ բջիջ–խումբ–կոմիտե–Գործադիր կոմիտե, որը խարսխված էր ուղղաձիգ ենթակայության սկզբունքի վրա:

V. 1952 թ. ՀՈՒԼԻՍԻ 23–Ի ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1. Իշխանության գրավումը, միապետության տապալումը և Եգիպտոսի հռչակումը հանրապետություն (1952 թ. հուլիսի 23 — 1956 թ. հուլիսի 23)

Հեղափոխության համար Եգիպտոսում, ինչպես արդեն նշվել է, հասունացել էին բոլոր պայմանները: Մնում էր նշանակել նրա կատարման կոնկրետ ժամկետը, որը հանդիսանում էր «Ազատ սպաներ» կազմակերպության Գործադիր կոմիտեի իրավասությունը: Այդ հարցը դարձավ հատուկ քննարկման առարկա 1952 թ. հուլիսի 16–ին, և «Ազատ սպաների» գործադիր կոմիտեի նիստում, որին ներկա էին նրա ինը անդամները՝ Նասերը, Ամերը, Անվար Սադաթը, Խալիդ Մոհի ադ–Դինը, Բաղդադին, Հասան Իբրահիմը և Քամալ ադ–Դին Հուսեյնը, միաձայն որոշում ընդունվեց հեղափոխությունը սկսել ուղիղ մեկ շաբաթ անց՝ 1952 թ. հուլիսի 23–ի վաղ առավոտյան:

Հեղափոխության իրագործման ոչ միայն քաղաքական, այլև տեխնիկական հարցերը մանրամասն մշակված էին Նասերի կողմից՝ հաշվի առնելով բոլոր մանրուքները, թեև հեղափոխության ժամանակ ոչ մի մանրուք չի լինում: Կարելի է ասել, որ պլանը հիանալի էր մշակված:

1952 թ. հուլիսի 23–ի վաղ առավոտյան «Ազատ սպաներին» հավատարիմ զինվորները յոթ սպաների գլխավորությամբ գրավեցին

Եգիպտոսի բանակի գլխավոր շտաբը, որը տեղակայված էր Աբասիայում, և ծերբակալեցին բանակի հրամանատարությանը՝ չհանդիպելով գործնականում որևէ լուրջ դիմադրության: Ձերբակալվեց ամբողջ գեներալիտետը՝ բանակի շտաբի պետ, գեներալ–մայոր Հուսեյն Ֆարիդի գլխավորությամբ:

Հեղափոխական ուժերը գործում էին շատ արագ և հստակ: Գործելով հեղափոխությունների դասական մոդելով՝ նրանք մի քանի ժամվա ընթացքում հսկողություն սահմանեցին նախ և առաջ Կահիրեի կարևոր և ստրատեգիական նշանակություն ունեցող օբյեկտների՝ ռադիոկայանների, հեռագրի և հեռախոսի վարչությունների, կայարանի, կամուրջների, օդանավակայանների և հրապարակների վրա: Նրանք գրավեցին իշխանությունը Կահիրեում, որը, հասկանալի է, մեծ նշանակություն ունեցավ հեղափոխության հետագա զարգացման համար:

1952 թ. հուլիսի 23–ի առավոտյան ժամը 7:30–ին Կահիրեի ռադիոն տեղյակ պահեց մայրաքաղաքի և ամբողջ երկրի բնակչությանը, որ երկրում կատարվել է հեղափոխություն: Հեղափոխական իշխանություններ հաստատվեցին երկրի բոլոր մասերում: Հեղափոխությունը հուլիսի 26–ին հաղթանակեց իր նշանակությամբ եգիպտոսի երկրորդ քաղաքում՝ Ալեքսանդրիայում: Եգիպտական բանակի նոր ղեկավարության պահանջով եգիպտոսի թագավոր Ֆարուկ I–ը 1952 թ. հուլիսի 26–ին հրաժարական տվեց հօգուտ իր անչափահաս որդու՝ Ահմադ Ֆուադի, որի անչափահասության պատճառով ստեղծվեց Խնամակալական խորհուրդ[10]: Ֆարուկն այդ նույն օրը՝ հուլիսի 26–ին, ընդմիշտ հեռացավ եգիպտոսից:

Ամբողջ իշխանությունը կենտրոնացվեց «Ազատ սպաների» Գործադիր կոմիտեի ձեռքում, որն այդ օրվանից վերակոչվեց Հեղափոխության ղեկավարության խորհրդի (ՀՂԽ): Նրա աշխատանքները գլխավորում էր հեղափոխության կազմակերպիչ և ղեկավար Գամալ Աբդել Նասերը, որ հանդիսանում էր նրա ոգին ու միտքը:

Սակայն հեղափոխության հաղթանակից հետո Նասերը նախընտրեց գործել վարագույրի հետևում և առաջաբեմում թողնել գեներալ Մուհամմադ Նագիբին՝ նրան ձևականորեն հանձնելով բոլոր կարևոր

10 Գրականության մեջ երբեմն նշվում է, որ 1952 թ. հուլիսի 23–ի հեղափոխությունը տապալեց միապետությունը և երկիրը հռչակեց հանրապետություն, ինչը չի համապատասխանում իրականությանը: Միապետությունը վերացվեց համարյա մեկ տարի անց՝ 1953 թ. հունիս 18–ին:

պետական, կառավարական և ռազմական պաշտոնները: Դա ուներ իր պատճառները:

«Ազատ սպաներ» կազմակերպությունը գաղտնի կազմակերպություն էր և նրա երիտասարդ անդամները, այդ թվում և Նասերը, հայտնի չէին հանրությանը, անգամ բանակին, թեև սպաների մի նեղ շրջանակ ճանաչում էր Նասերին Եգիպտական զինվորական ակադեմիայից և շտաբի քոլեջից, որտեղ նա դասավանդում էր: Սակայն դա բավարար չէր ամբողջ բանակի և ողջ եգիպտական հասարակության համակրանքը և աջակցությունը գրավելու համար մի այնպիսի պատասխանատու և համարձակ գործում, ինչպիսին թագավորին գահընկեց անելը, հին իշխանությունը տապալելը և գեներալներից կազմված զինվորական նախկին հրամանատարություն ծերբակալելն էր: Նասերը և «Ազատ սպաներ» կազմակերպության նրա զինակից համախոհները գտնում էին, որ եգիպտական հասարակությանը հարկավոր էր ցույց տալ, որ իբր հեղափոխության և նորաստեղծ իշխանության ղեկավարը մի այնպիսի անձնավորություն է, որը հայտնի է նրան, հարգված է նրա կողմից և ընդունելի նրա համար:

Նրանց ընտրությունն ընկավ գեներալ Նագիբի վրա, որը հենց այդ նպատակով 1952 թ. մայիս ամսին էր ընդգրկվել «Ազատ սպաներ» կազմակերպության մեջ: Նա հայտնի էր որպես ազնիվ և հայրենասեր գեներալ, որն անհրաժեշտության դեպքում հակադրվում էր անգամ թագավորին, մասնակից չէր կոռուպցիային, որի մեջ թաղվել էին հին իշխանությունները, թագավորի շրջապատը և գեներալները: Նա իրեն հիանալի էր դրսևորել 1948 թ. պաղեստինյան պատերազմի ժամանակ, և նրան ընդունում էին որպես այդ պատերազմի հերոս: Հետևաբար, Նագիբին առաջին պլանի վրա մղելը լոկ տակտիկական քայլ էր ՀՂԽ–ի և նրա նախագահ Նասերի կողմից, մանավանդ որ ՀՂԽ–ն հսկում էր Նագիբի գործունեությունը:

Սակայն դա, այսպես ասած, ներքին, եգիպտական դրդապատճառն էր:

Նասերը և նրա ռազմական զինակիցները Նագիբի նշանակումով մեկ այլ նպատակ էլ էին հետապնդում: Նրանք այդ քայլով ուզում էին հանգստացնել նաև Մեծ Բրիտանիային, որպեսզի նա առանձնապես չանհանգստանար Ֆարուկին գահընկեց անելու և ավանդական կալվածատիրական և խոշոր բուրժուական ուժերին երկրի կառավարումից հեռացնելու համար: Նրանք հաշվի էին առնում այն հանգամանքը, որ

Եգիպտոսում կենտրոնացված էր 100–հազարանոց լավ զինված անգլիական բանակ, որը, եթե Անգլիան տեսներ, որ իր շահերին վտանգ է սպառնում, կուղղեր Եգիպտոսի նոր իշխանությունների դեմ: Նասերը հասկանում էր, որ դա երբեք չի կարելի թույլ տալ: Ահա նաև այդ նպատակին էր ուղղված Նագիբի նշանակումը Եգիպտոսի բարձրագույն պաշտոններում: Եվ պետք է նշել, որ Նասերի և «Ազատ սպաների» այդ տակտիկական քայլն իրեն արդարացրեց:

Ահա թե ինչու, երբ 1952 թ. հուլիսի 23–ին՝ վաղ առավոտյան Կահիրեի ռադիոն հայտարարեց հեղափոխության և իշխանությունը գրավելու մասին, միաժամանակ տեղեկացրեց եգիպտացիներին և միջազգային հանրությանը, որ Եգիպտոսի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար է նշանակվել գեներալ Մուհամմադ Նագիբը, ինչը դրականորեն ընդունվեց Եգիպտոսի ժողովրդի և տարբեր քաղաքական ուժերի կողմից: Անգլիացիները նույնպես հանգիստ ընդունեցին այդ լուրը:

Նման բնույթի տակտիկական քայլ էր նաև Եգիպտոսի վարչապետի պաշտոնում Ալի Մահիրին նշանակելը, որի թեկնածությունն առաջարկեց Նագիբը, որը հաստատեց ՀՂԽ–ն: Մահիրը կառավարման մեծ փորձ ուներ, և նոր ուժերը հույս ունեին նրա նշանակումով ապահովել պետական ապարատի նորմալ գործունեությունը: Նա լայն կապեր ուներ Եգիպտոսի տարբեր քաղաքական ուժերի և սոցիալական խավերի ներկայացուցիչների հետ, որը իշխանության գլուխ եկած նոր ուժերը ցանկանում էին օգտագործել հակահիշխանական ելույթները կանխելու համար: Բացի այդ, նա արդեն դարձել էր ամերիկամետ, ուստի նրա նշանակումը՝ որպես երկրի վարչապետ, պետք է այն տպավորությունը ստեղծեր, թե հուլիսի 23–ի հեղաշրջումը նպաստավոր է լինելու ԱՄՆ–ի համար: Այդ կերպ նասերականները ցանկանում էին չեզոքացնել ամերիկյան հնարավոր միջամտությունը:

Այսպիսով՝ Նագիբի և Ալի Մահիրի նշանակումը բարձր պաշտոններում պետք է դիտարկել տակտիկական քայլերի տեսանկյունից, որն իրեն միանգամայն արդարացրեց:

ՀՂԽ–ն ձեռնամուխ եղավ մի շարք հին ինստիտուտների վերացմանը, որոնք հատկապես ատելի էին եգիպտացիների համար: Վերացվեցին քաղաքական ոստիկանությունը և ներքին գործերի նախարարության հատուկ բաժինը, ձերբակալվեցին և դատարանի առջև կանգնեցին ոստիկանության բարձրաստիճան ղեկավարները, սկսվեց պետական ապարատի մաքրազտումը, բազմաթիվ քաղաքացիական և զինվո-

րական պաշտոնյաներ ազատվեցին իրենց գրաված պաշտոններից: Դրան հաջորդեց «փաշա» և «բեյ» տիտղոսների վերացումը:

Ալի Մահիրը, անտեսելով ՀՂԽ–ի նոր քաղաքական կուրսը, փորձեց խիստ քաղաքականություն վարել բնակչության արդարացի սոցիալական և տնտեսական պահանջների նկատմամբ: Երբ գյուղացիները հեղափոխությունից հետո մի շարք նահանգներում հրաժարվեցին հողատերերին հարկեր վճարել, ապա Ալի Մահերը սպառնաց, որ ինքը խստորեն կպատժի անհնազանդ գյուղացիներին: Ուղղակի խայտառակություն պետք է համարել Ալի Մահիրի դիրքորոշումը Քաֆր ադ–Դավրայի տեքստիլագործ բանվորների գործադուլի նկատմամբ, որը տեղի ունեցավ 1952 թ. օգոստոսի 13–ին, որին մասնակցում էր 10 հազ. բանվոր: Այդ գործադուլը ճնշվեց ամենայն դաժանությամբ. սպանվեց մի քանի բանվոր, ձերբակալվեց մոտ 600 հոգի, 28 հոգի դատապարտվեց մահվան և այլն: Իսկ երբ Ալի Մահիրը բացահայտ հանդես եկավ ագրարային բարեփոխումների դեմ, ՀՂԽ–ն նրան հեռացրեց վարչապետի պաշտոնից և 1952 թ. սեպտեմբերի 7–ին վարչապետ նշանակեց գեներալ Նագիբին: Մինչ այդ՝ օգոստոսի 25–ին, Նագիբը նշանակվել էր ՀՂԽ–ի նախագահ: Իսկ Նասերը դարձավ ՀՂԽ–ի նախագահի տեղակալ, ինչպես նաև փոխվարչապետ: Կրկին հիշեցնենք, որ իրական իշխանությունը կենտրոնացված էր ինը հոգուց կազմված ՀՂԽ–ի ձեռքում, որտեղ Նասերի դիրքերը շատ ուժեղ էին, և ոչինչ առանց նրա գիտության և համաձայնության տեղի չէր ունենում:

Իշխանությունը վերցնելուց մոտ մեկուկես ամիս անց՝ 1952 թ. սեպտեմբերի 9–ին, նոր իշխանություններն ընդունեցին օրենք ագրարային բարեփոխումների վերաբերյալ, որը թերևս ամենակարևոր օրենքն էր սոցիալական ոլորտում: Նա շոշափում էր 12 հազ. կալվածատերերի և 2 մլն 640 հազ. հողազուրկ և սակավահող ֆելահների շահերը: Օրենքը սահմանեց հողատիրության առավելագույն չափը՝ 200 ֆեդան, իսկ ավելցուկները բռնագրավվում էին և վաճառվում սակավահող գյուղացիներին: Հողատերը իրենից բռնագրաված հողի համար ստանում էր համապատասխան փոխհատուցում:

Օրենքը կարգավորում էր նաև վարձակալության պայմանները՝ նվազեցնելով վարձակալման վճարները, գյուղատնտեսական բանվորների աշխատավարձը և նախատեսում ստեղծել գյուղատնտեսական կոոպերատիվներ:

Ամբողջովին բռնագրավվեց թագավորական ընտանիքին պատկանող ընդարձակ հողային սեփականությունը:

Թեև ագրարային նոր օրենքը չէր վերացնում խոշոր ֆեոդալական հողատիրությունը, սակայն նա լրջորեն թուլացրեց խոշոր ֆեոդալ–կալվածատերերի տնտեսական դիրքերը և քաղաքական ազդեցությունը Եգիպտոսում:

Շարունակելով ընթանալ առաջադիմական վերափոխումների ուղիով՝ ՀՂԽ–ի որոշմամբ 1952 թ. դեկտեմբերի 10–ին դադարեցվեց սահմանադրության գործունեությունը և սահմանվեց երեքամյա անցումային շրջան: 1953 թ. հունվարի 16–ին լուծարվեցին քաղաքական կուսակցությունները: ՀՂԽ–ի որոշմամբ ստեղծվեց նոր քաղաքական կազմակերպություն՝ Ազատագրության կազմակերպությունը, որը նասերականներն ուզում էին դարձնել իրենց քաղաքական հենարանը:

Սակայն դեռ մնում էր միապետությունը, որի գոյությունը հակասում էր Եգիպտոսի նոր զարգացումների տրամաբանությանը: Նասերը և նրա զինակիցները գտան, որ արդեն եկել է նաև միապետության վերացման ժամանակը: 1953 թ. հունիսի 17–ին գեներալ Նագիբը հայտարարեց որ վերացվել է Խնամակալական խորհուրդը, և գահընկեց արվել Ֆուադ II թագավորը: Մուհամմադ Ալիի դինաստիան, որ Եգիպտոսը կառավարում էր 148 տարի, տապալվեց:

1953 թ. հունիսի 18–ին Եգիպտոսը հռչակվեց հանրապետություն:

Դա շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձություն էր Եգիպտոսի պատմության մեջ:

2. Գեներա՞լ, թե՞ փոխգնդապետ: Դրամայի հանգուցալուծումը

Միապետության վերացումից և Մուհամմադ Ալիի դինաստիայի վերջին թագավոր Ահմադ Ֆուադ II–ին գահընկեց անելուց հետո Եգիպտոսում ստեղծվեց պրեզիդենտի պաշտոն: Եգիպտական հանրապետության առաջին պրեզիդենտ նշանակվեց գեներալ Մուհամմադ Նագիբը: Այսպիսով՝ նրա ձեռքում կենտրոնացվեցին Եգիպտոսի բոլոր բարձրագույն պետական, կառավարական և զինվորական պաշտոնները: Նա Եգիպտոսի զինված ուժերի գլխավոր հրամանատարն էր, Հեղափոխության ղեկավարման խորհրդի նախագահը, վարչապետը, իսկ այժմ նաև պրեզիդենտը:

Ճիշտ է, այդ պաշտոններում Նագիբի դերակատարումը որոշ իմաստով սոսկ անվանական էր, և երկրի փաստացի ղեկավարը Նասերն

էր, այդուհանդերձ, երկրի բոլոր բարձր պաշտոնների կենտրոնացումը մեկ մարդու ձեռքում անտրամաբանական էր և մեծ վտանգներով հղի: Այդ օրինաչափությունը իրեն դրսևորեց նաև այստեղ՝ Եգիպտոսում:

Նագիբն օրեցօր ավելի էր հակվում իր սեփական քաղաքականությունը վարելու մտքին և նեղվում էր բեմի հետևից գործող ու իրեն պարտադրող երիտասարդ փոխգնդապետ Նասերի վերահսկողությունից, որից նա մտածում էր ազատվել: Աստիճանաբար սկսեցին սրվել հարաբերությունները գեներալի և փոխգնդապետի միջև:

Սակայն դա ոչ թե անձնական բնույթի հակասություններ էին, այլ երկու տարբեր քաղաքականությունների բախում:

Երբ տեղի ունեցավ հուլիսի 23–ի հեղափոխությունը, «Ազատ սպաները» չունեին որևէ մշակված ծրագիր և հստակ գաղափարախոսություն: Նրանք մի բան հստակ գիտեին. Եգիպտոսը փրկելու համար անհրաժեշտ է ազատագրվել օտարերկրյա, տվյալ դեպքում՝ բրիտանական տիրապետությունից և նեխված թագավորական իշխանությունից, որը, իհարկե, չի կարելի համարել մշակված ծրագիր՝ իր համապատասխան բաղադրիչներով: Իշխանությունը գրավելուց հետո Նասերը և նրա զինակիցները հասկացան, որ դա մեծ թերություն է, և անհրաժեշտ է լրացնել այդ բացը, քանի որ երկիրը չի կարելի կառավարել հընթացս ընդունվող որոշումներով կամ հարկադրական քայլերով:

Այդ բացը փորձեց լրացնել Նասերը, որը հեղափոխությունից հետո շատ կարճ ժամանակաշրջանում գրեց և հրատարակեց «Հեղափոխության փիլիսոփայությունը» աշխատությունը, որը կոչված էր ծրագրի կամ ծրագրայի փաստաթղթի դեր կատարել:

Իր գրքում նա առաջ քաշեց այն տեսակետը, որ բոլոր ազգերը անցնում են երկու հեղափոխությունների միջով՝ քաղաքական և սոցիալական: Քաղաքական հեղափոխության միջոցով ազգը հաստատում է իր ինքնակառավարման իրավունքը՝ ընդդեմ բռնակալության և նրա տերիտորիան օկուպացրած ագրեսիվ բանակի: Իսկ սոցիալական հեղափոխության ընթացքում հասարակության դասակարգերը կռվում են միմյանց դեմ, մինչև որ չի ապահովվում արդարություն բոլոր քաղաքացիների համար, և չի հաստատվում կայունություն երկրում:

Նասերը ղեկավարվում էր այս սկզբունքներով և ձգտում էր դրանք դարձնել Եգիպտոսի ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները:

Բայց Նագիբը այլ քաղաքական գծի կողմնակից էր: Երևակայելով, որ ինքը իրոք «հեղափոխության առաջնորդ է» և «ազգի հայր», ինչպես նրան շողոքորթելու համար անվանում էին որոշ ուժեր և գործիչներ, նա դեմ էր արմատական սոցիալական վերափոխումների: Նա գտնում էր, որ միանգամայն բավարար էր միապետության տապալումը, ցանկանում էր Եգիպտոսը վերածել սահմանադրական հանրապետության, և ինքը կդառնար նրա լիարժեք պրեզիդենտը, որտեղ ազատորեն գործելու էին ավանդական եգիպտական կուսակցությունները, որոնք իրենց վարկաբեկել էին երկարամյա անպտուղ քաղաքականությամբ: Նագիբը գտնում էր, որ միապետության վերացումից հետո հեղափոխությունն արդեն ավարտվել է:

Պայքարը գեներալ Նագիբի ու նրա համախոհների և փոխգնդապետ Նասերի ու նրա քաղաքական համախոհների և զինակիցների միջև ծավալվեց Եգիպտոսի քաղաքական և սոցիալական զարգացումների հարցերի շուրջը:

Նասերը գտնում էր, որ քաղաքական հեղափոխությունը դեռ չի ավարտվել, իսկ սոցիալական հեղափոխությունը ըստ էության, ինչպես հարկն է, դեռ չի սկսվել:

Պայքարը բավականին ծանր բնույթ կրեց, որովհետև Նագիբը հասցրել էր իր դիրքերը որոշ չափով ամրապնդել, այդ թվում և բանակում, կողմնակիցներ ձեռք բերել Վաֆդի, «Մուսուլման եղբայրների» և այլ կուսակցությունների շարքերում, որոնք թեև արգելված էին, բայց գոյություն ունեին:

Չնայած այդ հանգամանքին՝ Նասերը և «Ազատ սպաների» նրա գործընկերները կարողացան նախապատրաստական աշխատանքներից հետո դիմել վճռական քայլերի՝ գիտակցելով, որ դրությունը լրջանում է, և հապաղելը կարող է շատ ծանր նստել նրանց վրա:

1954 թ. փետրվարի 25–ին Նագիբը ՀՂԽ–ի որոշմամբ, որտեղ մեծամասնությունը Նասերի կողմնակիցներն էին, ազատվեց իր գրաված բոլոր պաշտոններից: Նրան մեղադրեցին իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու մեջ: Բացի դրանից, նրան կասկածում էին, որ կապեր է պահպանում «Մուսուլման եղբայրների», հավանաբար նաև Վաֆդի և այլ քաղաքական ուժերի հետ: Նասերը դարձավ վարչապետ և ՀՂԽ–ի նախագահ, իսկ պրեզիդենտի պաշտոնը մնաց թափուր մինչև ընտրությունները:

Նագիբին իր պաշտոններից զրկելու լուրը ցնցեց Կահիրեն, եգիպտացիներն ապշած էին այդ անսպասելի որոշումներից: Դա բա-

ցատրվում է նրանով, որ նրանք տեղյակ չէին այն պայքարից, որն ընթանում էր երկու տարբեր ուժերի միջև: Նագիբին այնքան էին բարձրացել, իսկ Նասերն այնքան երկար էր մնացել ստվերի մեջ, որ մարդիկ չէին հասկանում կատարվածի իմաստը: Եվ եգիպտական տարբեր ուժեր, անգամ առանձին բանակային զորամասեր, ոտքի կանգնեցին՝ ի պաշտպանություն «ազգի հայր» հռչակված Նագիբի: Նասերը և նրա կողմնակիցները հայտնվեցին ծանր դրության մեջ: Ամեն ինչ մազից էր կախված: Եվ Նասերը որոշեց նահանջել՝ խուսափելու համար քաղաքացիական պատերազմից: Նագիբը վերականգնվեց իր պաշտոններում: Փաստորեն, Նասերը և իր կողմնակիցները պարտություն կրեցին: Բայց նրանք չեն հուսահատվում: Նասերը դիմում է ժողովրդական զանգվածներին, և վերջիններս արձագանքում են նրա կոչին: Ի պաշտպանություն Նասերի և նրա հեղափոխական կուրսի ոտքի են ելնում բանվորները, արհմիությունները, Ազատագրության կազմակերպությունն ու նրա զանգվածային կողմնակիցները: 1954 թ. մարտի 25–27–ը, երեք օր անընդհատ, տեղի էին ունենում ցույցեր՝ ի պաշտպանություն Նասերի: Նա կարողանում է ամրապնդել իր դիրքերը նաև բանակում:

Քնած չէր նաև մյուս կողմը, որի պաշտպանությամբ փորձում էին հանդես գալ բանակի զրահատանկային զորամասերը: Սակայն նրանց ճանապարհը փակում են Նասերին հավատարիմ զորամասերը: Պատկերը նույն էր նաև Ալեքսանդրիայում: Նասերն ու ՀՂԽ–ի մյուս անդամներն իրենց ավելի վստահ են զգում: Մարտի 28–ին ՀՂԽ–ն որոշում է իր գրաված պաշտոններից ազատել Նագիբին, որը տնային կալանքի է ենթարկվում:

1954 թ. ապրիլի 16–ին Նասերը նշանակվում է վարչապետ և ՀՂԽ–ի նախագահ:

«Գեներալ–փոխգնդապետ» դրաման ավարտվում է դրամատիկ Նագիբի համար: Փոխգնդապետը հաղթում է գեներալին: Կյանքում այդպես էլ է պատահում:

Սակայն պայքարը դեռևս չէր ավարտվել: Իր գործողություններն է ակտիվացնում «Մուսուլման եղբայրները», որի ծերբակալված առաջնորդ Հուդայբիին բանտից ազատել էր Նագիբն իր իշխանությանը կարճաժամկետ վերադառնալու ընթացքում: Նա ուղղակի գրոհ է սկսում իշխանությունների դեմ՝ պահանջելով Եգիպտոսը հռչակել իսլամական պետություն: Պայքարը «Մուսուլման եղբայրների» և Նասերի միջև իր գագաթնակետին է հասնում 1954 թ. հոկտեմբերի 26–ին: Այդ օրը Նա-

սերն ընդարձակ ճառով հանդես է գալիս Ալեքսանդրիայում՝ բազմահազարանոց միտինգում: «Մուսուլման եղբայրները» մահափորձ են կատարում նրա դեմ: Այդ կազմակերպության անդամ «իխվան» Մահմուդ Աբդ ալ–Լաթիֆը ութ փամփուշտ է արձակում Նասերի վրա և վրիպում:

Անվար Սադաթը, իր «Հեղափոխությունը Նեղոսի վրա» գրքում պատմելով Նասերի հետ իրենց առաջին հանդիպման մասին 1942 թ. Մանկաբադի զորանոցում, հետևյալ կերպ է նկարագրում Նասերի արտաքինը. «Երկարահասակ և ուղղաձիգ, ինչպես սուրը»: Եվ ահա այդ բարձրահասակ և սրի նման ուղղաձիգ մարդը սրի նման ուղղաձիգ կանգնած մնաց ամբիոնի մոտ Ալեքսանդրիայում տեղի ունեցած միտինգի ժամանակ նաև այն պահին, երբ ալ–Լաթիֆն իր փամփուշտներն էր պարպում նրա վրա: Նա խուճապի չմատնվեց, նրա խոսքը չընդհատվեց, և նա իր ելույթն այնպես շարունակեց, կարծես ոչինչ չի պատահել: Դա արտակարգ տպավորություն թողեց ներկաների վրա, մանավանդ նրա ավարտական խոսքերը. «Թող նրանք սպանեն Նասերին: Ո՞վ է Նասերը, եթե ոչ շատերից մեկը: Իմ հայրենակի՛ց ընկերներ, մնացե՛ք այնտեղ, որտեղ որ եք: Ես մեռած չեմ: Ես կենդանի եմ, և նույնիսկ եթե ես մահանամ, դուք բոլորդ Գամալ Աբդել Նասեր եք»:

Գեղեցիկ է ասված:

Այդ իրադարձություններից և Նասերի դեմ մահափորձից հետո ՀՂԽ–ն իր կազմից հանեց Խալիդ Մոհի ադ–Դինին, Յուսուֆ Սադիկին և Աբդել Մոնեյմ Ամինին, որոնց կասկածում էին ձախ հայացքների և ձախակողմյան ուժերի հետ ունեցած կապերի մեջ: Ձերբակալվեց 16 սպա, մի քանի սպա դատապարտվեց բանտարկության: Այս զտումների հետևանքով Նասերը կարողացավ վերացնել ընդդիմությունը բանակի ղեկավարության շարքերում: Դա շատ լավ դաս էր նրա համար:

Հերթը հասավ «Մուսուլման եղբայրներին»: 1954 թ. նոյեմբերին տնային կալանքի ենթարկվեց գեներալ Նագիը, որին կասկածում էին «Մուսուլման եղբայրների» հետ ունեցած կապերի մեջ:

Եգիպտոսի պետական անվտանգության ղեկավար նշանակվեց Զաքարիյա Մոհի ադ–Դինը, որը Նասերի զինակիցներից էր դեռևս 1942 թ–ից՝ Մանկաբադից: Նրան հանձնարարվեց «Մուսուլման եղբայրների» գործի քննությունը՝ կապված նաև Նասերի դեմ կատարված մահափորձի հետ: «Մուսուլման եղբայրների» վեց ղեկավարներ 1954 թ. դեկտեմբերի 8–ին կախաղան հանվեցին, ավելի քան յոթ հազար «իխվաններ»

ձերբակալվեցին, որոնցից մոտ ինը հարյուրը բանտարկության դատապարտվեց տարբեր ժամկետներով:

Այսպիսով՝ Նասերին հաջողվեց ձախողության մատնել քաղաքական և ռազմական բոլոր դավադրությունները, ջախջախել իր հիմնական հակառակորդներին, ճզմել ընդդիմությունը և դառնալ Եգիպտոսի ոչ միայն փաստացի, այլև պաշտոնական ղեկավարը:

Պետական կառավարման փորձի կուտակումը, Եգիպտոսի առջև ծառացած ներքին զարգացման և արտաքին քաղաքականության խորազնին ուսումնասիրությունը, վերջապես Նասերին հնարավորություն տվեցին ձևակերպել Եգիպտական հեղափոխության հիմնական խնդիրները, որը նա որպես կառավարության ծրագիր ներկայացրեց հանրությանը 1955 թ. մարտի 28–ին: Ահա ծրագրի այդ վեց հիմնական կետերը. ա) իմպերիալիզմի վերացում, բ) ֆեոդալիզմի վերացում, գ) կապիտալիստական մոնոպոլիաների և նրանց տիրապետության վերացում, դ) սոցիալական արդարության հաստատում, ե) ազգային ուժեղ բանակի ստեղծում, զ) իսկապես ժողովրդավարական համակարգի հաստատում:

Սակայն դրանով հեղափոխական վարչակարգի ամրապնդման գործընթացը չավարտվեց: 1956 թ. հունիսի 23–ին Եգիպտացիների դատին հանձնվեց նոր սահմանադրությունը: Կայացավ համաժողովրդական հանրաքվե, որը հաստատեց Եգիպտոսի նոր հիմնական օրենքը: Նրա ընդունումը նշանակում էր հանրաքվե՝ հօգուտ նոր պետական կարգի՝ Եգիպտոսի Հանրապետության:

Նոր սահմանադրության ընդունումը նշանակում էր նաև եռամյա անցման շրջանի ավարտ, որը սկսվել էր 1952 թ. հուլիսի 23–ին:

Նոր սահմանադրության ուժի մեջ մտնելուց հետո՝ 1956 թ. հուլիսի 23–ին, Գամալ Աբդել Նասերը համընդհանուր քվեարկությամբ ընտրվեց Եգիպտոսի Հանրապետության պրեզիդենտ:

Ավարտվեց մի ամբողջ դարաշրջան՝ Եգիպտոսի խոշոր ֆեոդալական–կալվածատիրական դասակարգի անբաժան տիրապետության դարաշրջանը: Սահմանադրությամբ ամրագրվեցին նոր՝ հեղափոխական ուժերի իշխանությունը և նրանց նվաճումները հանրապետական կարգերի հաստատման, անկախության և սոցիալական վերափոխումների դժվարին ճանապարհին

Ավարտվեց անցման ժամանակաշրջանը, և Եգիպտոսը թևակոխեց զարգացման նոր փուլ:

VI. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԷՎԱԿՈՒԱՑԻԱՆ: ՍՈՒԵԶԻ ՃԳՆԱԺԱՄԸ: 1956 թ. ԵՌՑԱԿ ԱԳՐԵՍԻԱՆ

1. Սուդանի վերաբերյալ անգլո–եգիպտական 1953 թ. փետրվարի 12–ի համաձայնագիրը

Նասերը և «Ազատ սպաները», ամբողջությամբ կլանված լինելով հին իշխանության տապալման և նոր իշխանության հաստատման առաջնային խնդիրներով, իրենց տեսադաշտում պահում էին նաև արտաքին քաղաքականության հիմնախնդիրները, մանավանդ նրանք, որոնք տվյալ պահին ունեին առանցքային նշանակություն:

Մենք արդեն նշել ենք, որ եգիպտական նոր ղեկավարներն իրենց շատ զգույշ էին պահում Անգլիայի և ԱՄՆ–ի նկատմամբ՝ չցանկանալով նրանց մոտ ավելորդ կասկածներ հարուցել եգիպտոսի ապագա քաղաքականության նկատմամբ: Վերջիններս հավատացած էին, որ հեղաշրջմանը (նրանք 1952 թ. հուլիսի 23–ի իրադարձություններն ընկալեցին որպես սովորական պետական հեղաշրջում) բնորոշ պաթոսը և տերմինալոգիան շուտով կանցնեն և ամեն ինչ կվերադառնա իր բնական հունի մեջ: Նրանք չէին կասկածում, որ եգիպտոսը կմնա նրանց քաղաքականության ոլորտում:

Այդ պատճառով էլ հեղափոխությունից հետո արևմտյան պետությունների կողմից որևէ հակազդեցություն չդրսևորվեց, և կարելի է ասել, որ հարաբերությունները նրանց և եգիպտոսի նոր ղեկավարության միջև արտաքուստ բնականոն էին: Նաև դրա շնորհիվ Նասերին և նրա զինակիցներին հաջողվեց առանց ցնցումների տապալել միապետությունը և հաստատել իրենց իշխանությունը:

Նոր իշխանությունների կողմից ընտրված տակտիկան իրեն արդարացրեց և տվեց իր պտուղները նաև արտաքին քաղաքականության բնագավառում:

Մենք արդեն բազմիցս նշել ենք, որ անգլո–եգիպտական հարաբերությունների մեջ զգալի տեղ էր գրավում Սուդանի հարցը: Միապետական եգիպտոսը պահանջում էր վերացնել անգլիական տիրապետությունը Սուդանում, այնտեղից դուրս բերել անգլիական զորքերը և Սուդանը միացնել եգիպտոսին: Եգիպտական կառավարությունը նույնիսկ հայտարարեց եգիպտոսի և Սուդանի միավորման մասին և եգիպ-

տական թագավոր Ֆարուկ I–ին հռչակեց միացյալ Եգիպտոսի և Սուդանի թագավոր:

Եգիպտոսի նոր հեղափոխական իշխանությունները նման պահանջները համարեցին ոչ իրատեսական և հրաժարվեցին դրանցից: Նրանք հասկանում էին, որ նման պահանջներով հանդես գալը խիստ կլարեր հարաբերությունները Անգլիայի հետ, որի 100–հազարանոց բանակը տեղակայված էր Եգիպտոսում, կարող էր նրան դրդել միջամտության և մեծ սպառնալիք ստեղծել դեռևս իր դիրքերը չամրապնդած հեղափոխական իշխանության համար: Նրանք, ցուցաբերելով ճկունություն, հրաժարվեցին Եգիպտոսի տիրապետությունը Սուդանի վրա հաստատելու կամ միացյալ եգիպտա–սուդանական պետություն ստեղծելու՝ նախկին իշխանությունների պահանջներից և փորձեցին այլ լուծում տալ այդ խնդրին:

Անգլիան իր հերթին դիմեց որոշ զիջումների՝ հաշվի առնելով նոր իրադրությունը Եգիպտոսում և տարածաշրջանում, ինչպես նաև եգիպտական իշխանությունների պատրաստակամությունը՝ դիմելու փոխզիջման:

Անգլո–եգիպտական բանակցությունները՝ նվիրված Սուդանի քաղաքական ապագային և կարգավիճակին, ավարտվեցին հաջողությամբ: Կողմերը համաձայնության եկան Սուդանի խնդրի լուծման հիմքում դնել ազգերի ինքնորոշման իրավունքը, որը լայն տարածում էր ստացել աշխարհում և հանդիսանում էր միջազգային իրավունքի կարևոր հիմնադրույթներից մեկը: 1953 թ. փետրվարի 12–ին Անգլիան և Եգիպտոսը Կահիրեում ստորագրեցին համաձայնագիր. Անգլիան հրաժարվում էր համակառավարումից՝ կոնդոմինիումից, իսկ Եգիպտոսը՝ Սուդանի հետ միասնական պետություն ստեղծելու գաղափարից: Երկու կողմերը ճանաչեցին Սուդանի ինքնորոշման իրավունքը՝ նրան իրավունք վերապահելով ըստ այդմ որոշել իր քաղաքական ապագան՝ ընտրություն կատարել անկախության կամ Եգիպտոսի հետ միավորվելու միջև:

Սկզբնական շրջանում Սուդանում հակված էին միանալ Եգիպտոսին: Այդ բանում իր դերը խաղաց այն հանգամանքը, որ գեներալ Նագիբը, որն այդ ժամանակ ձևականորեն համարվում էր Եգիպտոսի առաջնորդը և իր ձեռքում էր կենտրոնացրել բոլոր բարձր պաշտոնները, մոր կողմից համարվում էր սուդանցի, և ընդհանրապես Սուդանում նրան ընդունում էին որպես իրենց մարդը: Բայց հետագայում, երբ Նագիբը հեռացվեց իշխանությունից, Սուդանում այլևս չէին մտածում Եգիպտոսի հետ միավորվելու մասին: Իր դերը խաղաց նաև «Մուսուլման եղբայր-

ների» ակտիվացումը Եգիպտոսում և նրանց պահանջները մուսուլմանական պետություն ստեղծելու վերաբերյալ, որոնք անընդունելի էին սուդանցիների համար:

2. 1954 թ. հոկտեմբերի 19–ի անգլո–եգիպտական համաձայնագիրը և անգլիական զորքերի դուրսբերումը Եգիպտոսից

Սուդանի հարցի խաղաղ լուծումը բանակցությունների և փոխզիջումների հիմքի վրա, հուսադրող նախադեպ եղավ Անգլիայի հետ վիճելի այլ հարցերի համանման լուծման համար: Խոսքն առաջին հերթին անգլիական զորքերը Եգիպտոսից՝ Սուեզի գոտուց, դուրս բերելու մասին է, որը վաղեմի պատմություն ունի:

Անգլիական զորքերի դուրսբերումը Եգիպտոսի հակաբրիտանական շարժման գլխավոր պահանջներից մեկն էր: Ինչպես նշվել է, 1951 թ. եգիպտական կառավարությունը միակողմանիորեն նույնիսկ որոշում ընդունեց 1936 թ. անգլո–եգիպտական պայմանագիրը չեղյալ հայտարարելու և անգլիական զորքերի դուրսբերման մասին, որը հաստատվեց եգիպտական պառլամենտի կողմից նույն տարվա հոկտեմբերի 15–ին: Սակայն այդ միակողմանի որոշումը Անգլիան չճանաչեց, և եգիպտական որոշումը մնաց թղթի վրա: Դեռ ավելին՝ հենց եգիպտական այս որոշումից հետո էր, որ Անգլիան իր զորքերի թվաքանակը Եգիպտոսում ավելացրեց՝ հասցնելով 100 հազարի:

Նասերը չգնաց միակողմանի որոշումներ ընդունելու ուղիով, այլ 1953 թ. ապրիլին բանակցություններ սկսեց Անգլիայի հետ՝ հրաժարվելով անգլիական զորքերն անհապաղ կամ շատ սեղմ ժամկետում Եգիպտոսից հանելու մոտեցումից: Բանակցությունները տևեցին մոտ տարի՝ ուկես՝ մինչև 1954 թ. հոկտեմբերը:

Անգլիան սկզբունքորեն դեմ չէր իր զորքերը դուրս բերել Եգիպտոսից: Սակայն նա ձգձգում էր և ցանկանում պայմանագրի մեջ մտցնել այնպիսի կետեր, որոնք առավել ձեռնտու էին իր համար:

Բանակցությունների ձգձգումը Եգիպտացիների դժգոհությունն առաջ բերեց, որոնք վերածվեցին պարտիզանական շարժման Սուեզի ջրանցքի գոտում: Կրկին կազմավորվեցին «ազատագրության ջոկատներ», որոնց օգնելու նպատակով ՀՂԽ–ն ջրանցքի գոտի ուղարկեց պրոֆեսիոնալ զինվորականների: Պարտիզանական շարժումը և ազատագրության ջոկատների գործողություններն այնպիսի մեծ ծավալներ

ընդունեցին, որ պարտիզանական այդ առանձին ջոկատները ներգրավվեցին ՀՂԽ–ի 1953 թ. հոկտեմբերի 25–ի որոշումով ստեղծված Ազգային գվարդիայի շարքերը: Դա ավելի արդյունավետ դարձրեց պայքարը, որը շարունակվեց 1953 թ. գարնանից մինչև 1954 թ. աշունը, որն իր ազդեցությունն ունեցավ անգլիացիների դիրքորոշման վրա: Նրանք հասկացան, որ գտնվում են թշնամի միջավայրում, որն անհեռանկար է դարձնում նրանց հետագա մնալը Սուեզի ջրանցքի գոտում:

Բնավ երկրորդական չէր նաև ԱՄՆ–ի դիրքորոշումը, որի հետ որոշակի հույսեր էին կապել Եգիպտոսի նոր իշխանությունները: Խոսքը անգլո–ամերիկյան հակասությունների մասին է: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ–ը որդեգրել էր աշխարհի բոլոր մասերում իր դիրքերն ամրապնդելու քաղաքականություն, որն անխուսափելիորեն հանգեցրեց շատ երկրներից կամ տարածաշրջաններից Անգլիային և այլ պետությունների դուրս մղելու անհրաժեշտությանը: Հուլիսյան հեղափոխությունից հետո նա այդ քաղաքականությունն էր վարում նաև Եգիպտոսում և ճնշում գործադրում Անգլիայի վրա զորքերը դուրս բերելու հարցում: ԱՄՆ–ը հույս ուներ այդ կերպ իր կողմը գրավել Եգիպտոսին, ճանապարհ հարթել Արևմուտքի հետ նրա համագործակցության համար և նրան ներգրավել իր կողմից պաշտպանվող զանազան ռազմական խմբավորումների մեջ, ինչպես՝ «Միջինարևելյան հրամանատարությունը» և այլն:

Անգլիայի հետագա դիրքորոշման վրա իր ազդեցությունն ունեցավ նոր միջազգային իրադրությունը, որն առաջադրել էր նոր գերակա հարցեր, միջուկային զենքի և հրթիռների ստեղծումը, որը պահանջում էր նորովի մոտենալ միջազգային ջրային արտերիաների կարևորությանը և այլն: Նման պայմաններում Սուեզի ջրանցքն արդեն այն առաջնակարգ կարևորությունը չուներ, ինչպես XIX դարում և XX դարի կեսերին, մանավանդ որ Հնդկաստանը և Պակիստանը դարձել էին անկախ պետություններ, և այդ առումով նույնպես Սուեզի նշանակությունը նվազել էր:

Սուեզի ջրանցքի և նրա գոտու վերաբերյալ համաձայնագիրը Անգլիայի և Եգիպտոսի միջև ստորագրվեց Կահիրեում 1954 թ. հոկտեմբերի 19–ին: Նրա հիմնական կետը վերաբերում էր անգլիական զորքերի դուրսբերմանը և նրա ժամկետների հարցին: Կողմերը համաձայնվեցին, որ Անգլիան իր զորքերի դուրսբերումը կսկսի համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո և կավարտի 20 ամսվա ընթացքում: Սուեզի ջրանցքը համարվեց Եգիպտոսի բաղկացուցիչ մասը:

Համաձայնագրի մի շարք կետեր վերաբերում էին Սուեզի գոտում պահպանվող մի շարք հաստատությունների: Մասնավորապես, պահպանվելու էին բրիտանական մի շարք քաղաքացիական տեխնիկական կառույցներ՝ իրենց սարքավորումներով, և եգիպտական կառավարությունը պատասխանատվություն էր ստանձնում բրիտանական զորքերի մեկնելուց հետո այն ամենի համար, ինչ կմնար բրիտանական բազայից: Այդ բազան վերագործարկվելու էր Անգլիայի կողմից Արաբական լիգայի անդամ որևէ երկրի և Թուրքիայի վրա օտարերկրյա որևէ պետության հարձակման դեպքում: Համաձայնագիրը հավաստեց Սուեզի ջրանցքի միջազգային կարևորությունը և ամրագրեց երկու կողմերի մտադրությունը հավատարիմ մնալ 1888 թ. Կոստանդնուպոլսի կոնվենցիային, որը երաշխավորում էր ջրանցքով ազատ նավարկություն:

Անգլիան հավատարիմ մնաց իր վրա վերցրած պարտավորություններին զորքերի դուրսբերման և դրա ժամկետի հարցում: 1956 թ. հունիսի 13–ին անգլիական վերջին զինվորը հեռացավ Եգիպտոսից: Նա այնտեղ ոտք էր դրել ուղիղ 74 տարի առաջ:

1956 թ. հունիսի 18–ին Գամալ Աբդել Նասերը Պորտ Սաիդի բրիտանական գաղութարարներին պատկանող շենքերից մեկի վրա բարձրացրեց Եգիպտոսի ազգային դրոշը:

Այսպես ավարտվեց Եգիպտոսում անգլիական տիրապետության դարաշրջանը: Դրանով իրականացվեց եգիպտական հայրենասերների մի քանի սերունդների երազանքը՝ տեսնել Եգիպտոսն ազատ օտարերկրյա կապանքներից:

Այդ համաձայնագրի, ինչպես նաև Սուդանի վերաբերյալ անգլո–եգիպտական համաձայնագրի ստորագրումը Նասերի դիվանագիտական կարևոր հաղթանակներից էր:

3. Սուեզի ջրանցքի ընկերության ազգայնացումը և 1956 թ. անգլո–ֆրանս–իսրայելական ագրեսիան

1956 թ. հուլիսին պրեզիդենտ Նասերն դիմեց մի քայլի, որն ուներ ինչպես ներքին՝ եգիպտական, այնպես էլ միջազգային կարևոր նշանակություն: 1956 թ. հուլիսի 26–ին Ալեքսանդրիայում կայացած բազմահազարանոց միտինգում նա տեղյակ պահեց ամբողջ Եգիպտոսի բնակ-

չությանը և միջազգային հանրությանը Սուեզի ջրանցքի ընկերությունն ազգայնացնելու իր որոշման մասին:

Այդ որոշումը հարկավոր է դիտարկել Նասերի և նրա ղեկավարած կառավարության կողմից տնտեսական կարևոր վերափոխումներ անցկացնելու, արտասահմանյան ընկերությունների ազգայնացման և նրանց եգիպտականացման, ինչպես նաև Եգիպտոսի տնտեսական կախվածությունը օտարերկրյա երկրներից և ընկերություններից ազատելու ստրատեգիական քաղաքականության շրջանակներում:

Եգիպտոսի կառավարությունը մինչ այդ որոշում էր ընդունել Նեղոսի վրա՝ Ասուանի մոտ, վիթխարի ամբարտակ կառուցելու մասին: Դա պետք է արմատականորեն նպաստեր ոռոգելի հողատարածքների կտրուկ ընդարձակմանը, նոր հողատարածքների մշակմանը, հողազուրկ գյուղացիներին հողատարածքով ապահովելուն, գյուղատնտեսական մթերքների արտադրության աճին և երկրի զարգացող արդյունաբերության համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի արտադրությանը: Ասուանի ամբարտակը լուծելու էր ոչ թե մեկ առանձին հարց, այլ ամբողջ Եգիպտոսի տնտեսական առաջընթացի և տնտեսական բարեփոխումների հանգուցային հիմնախնդիրների համալիրը:

Այդ վիթխարի ծրագրի կենսագործման համար անհրաժեշտ էին համապատասխան ֆինանսական միջոցներ, որոնցից զուրկ էր Եգիպտոսը: Եգիպտական կառավարությունը դիմեց ԱՄՆ–ի և Անգլիայի կառավարություններին: Երկար բանակցություններից հետո Վերակառուցման և զարգացման բանկը հայտնեց, որ պատրաստ է Եգիպտոսին տրամադրել 200 մլն ԱՄՆ դոլար վարկ ամբարտակի առաջին հերթի կառուցման համար: Եվս 70 մլն ԱՄՆ դոլար համաձայնվեցին տրամադրել ԱՄՆ–ը և Անգլիան:

Թվում էր, թե հարցը տեղից շարժվեց: Բայց կրկին առաջին պլանում հայտնվեց քաղաքական գործոնը, որն ամեն ինչ գլխիվայր դրեց:

ԱՄՆ–ը, Անգլիան և Վերակառուցման ու զարգացման բանկը հենց այնպես չէին ցանկանում տալ պահանջվող գումարը Եգիպտոսին: Դրա համար նրանց պետք էին երաշխիքներ, որ Եգիպտոսը կապված կմնա Արևմուտքի հետ և չի փորձի նայել Խորհրդային Միության կողմը, որի նախանշաններն արդեն կային: Թեկուզ այն հանգամանքը, որ Նասերը մտադրություն էր հայտնել զենք գնել Խորհրդային Միությունից: Բացի դրանից, նրանք երաշխիքներ էին ուզում, որ Կահիրեն կմիանա Բաղդադի ռազմական պակտին, որը Եգիպտոսում համարում էին հետադիմա-

կան վարչակարգերի ագրեսիվ խմբավորում և վճռականորեն մերժում նրան միանալ: Համոզվելով, որ իրենց չի հաջողվի փոխել Եգիպտոսի դիրքորոշումը՝ ԱՄՆ–ը պաշտոնապես տեղեկացրեց Եգիպտոսին, որ հրաժարվում են նրան տրամադրել խոստացած 270 մլն վարկը: Դիմելով այդ քայլին՝ Արևմուտքը վստահ էր, որ Եգիպտոսը չի կարողանա հայթայթել պահանջվող գումարը, կհայտնվի անելանելի դրության մեջ և կտապալվեն Եգիպտոսի զարգացման և վերակառուցման բոլոր ծրագրերը:

Սակայն Նասերը չվհատվեց և, ի պատասխան Արևմուտքի այդ որոշման, 1956 թ. հուլիսի 26–ին դիմեց անսպասելի քայլի՝ ազգայնացնել Սուեզի ջրանցքի ընկերությունը և նրանից ստացվող եկամուտներն ուղղել Նեղոս գետի վրա Ասուանի ամբարտակի կառուցմանը, ինչպես նաև այլ տնտեսական ծրագրերի իրականացմանը: Թեև ընկերությունն ազգայնացվում էր, Նասերը հայտարարեց, որ ընկերության օտարերկրյա բոլոր փայատերերը կստանան համապատասխան փոխհատուցում: Պրեզիդենտը երաշխավորեց նաև ջրանցքի երթևեկության ազատությունը՝ համաձայն 1888 թ. կնքված միջազգային համաձայնագրի պայմանների:

Նասերի այդ որոշումն ուղղակի ցնցեց բոլորին: Արևմուտքում գիտեին, որ Նասերը ընդունակ է անսպասելի քայլերի, բայց ոչ ոք չէր սպասում, որ նա կհանդգնի ձեռք բարձրացնել մի այնպիսի միջազգային ընկերության վրա, ինչպես Սուեզի միջազգային ընկերությունը:

ԱՄՆ–ը, Անգլիան, նրանց միացած Ֆրանսիան և արևմտյան այլ պետություններ փորձեցին զանազան միջոցներով ճնշում գործադրել, անգամ սպառնալ Եգիպտոսին, բայց ապարդյուն: Նասերը հաստատ մնաց իր դիրքերում:

Ահա այդ պայմաններում հասունացավ Եգիպտոսի դեմ պատերազմ սկսելու ծրագիրը, որի հեղինակները Անգլիան և Ֆրանսիան էին: Նրանք իրենց ռազմական արկածախնդրության մեջ ներգրավեցին նաև Իսրայելին՝ նրան գիջելով առաջինը հարվածելու «պատիվը»:

Անգլիայի, Ֆրանսիայի և Իսրայելի եռյակ ագրեսիան Եգիպտոսի դեմ սկսվեց 1956 թ. հոկտեմբերի 30–ին: Իսրայելական զորքերը մինչև նոյեմբերի 2–ը գրավեցին Սինայի թերակղզին և Ղազայի շրջանը: Անգլիական և ֆրանսիական ավիացիան հոկտեմբերի 31–ին սկսեց Կահիրեի, Ալեքսանդրիայի և ջրանցքի գոտու քաղաքների ռմբակոծումը, իսկ

նոյեմբերի 5–ին և 6–ին զորք ափ հանեցին Պորտ Սաիդում: Քաղաքը հերոսաբար դիմադրում էր:

Եռյակ ագրեսիան խստորեն դատապարտեցին աշխարհի բոլոր ժողովուրդները և բազմաթիվ պետություններ: ՄԱԿ–ը մի քանի անգամ քննարկեց ագրեսիայի հարցը և պահանջեց անհապաղ դադարեցնել այն: Եգիպտոսի պաշտպանությամբ վճռականորեն հանդես եկավ Խորհրդային Միության կառավարությունը: 1956 թ. նոյեմբերի 5–ին Խորհրդային վարչապետ Մ. Բուլգանինը նոտա հղեց Անգլիայի վարչապետ Անտոնի Իդենին, Ֆրանսիայի վարչապետ Գի Մոլեին և Իսրայելի վարչապետ Բեն Հուրիոնին, որ եթե նրանք չդադարեցնեն ագրեսիան, ապա Խորհրդային Միությունը լի է վճռականությամբ «ուժի գործադրումով կործանիչ հարված հասցնել ագրեսորներին և խաղաղությունը վերականգնել Արևելքում»: Անգլիայի, Ֆրանսիայի և Իսրայելի վրա ուժեղ ճնշում գործադրեց նաև ԱՄՆ–ը:

Ագրեսորները հայտնվեցին միջազգային մեկուսացման մեջ: Նրանք ստիպված էին դադարեցնել հարձակումը և նահանջել: 1952 թ. դեկտեմբերի 22–ին Եգիպտոսից իրենց զորքերը դուրս բերեցին Անգլիան և Ֆրանսիան, իսկ 1957 թ. մարտին՝ Իսրայելը:

Այսպիսով՝ ագրեսորներին չհաջողվեց հասնել իրենց հիմնական նպատակներին՝ ստիպել Եգիպտոսին հրաժարվել Սուեզի ջրանցքի ընկերության ազգայնացումից և հնարավորության դեպքում հասնել Նասերի և նրա վարչակարգի տապալմանը: Նրանց պարտությունը, ընդհակառակը, ավելի ամրապնդեց Նասերի դիրքերը և բարձրացրեց նրա միջազգային հեղինակությունը: Նասերն այդ ագրեսիայից հետո իրեն այնքան ուժեղ զգաց, որ 1957 թ. հունվարի 1–ին չեղյալ հայտարարեց Սուեզի ջրանցքի վերաբերյալ 1954 թ. համաձայնագիրը՝ վստահ լինելով, որ Անգլիան այլևս ի վիճակի չէ որևէ պատասխան քայլի դիմել:

Եգիպտոսը լիակատար կերպով օգտագործեց Սուեզի վրա իր իրավունքները, իսկ այնուհետև Խորհրդային Միության ֆինանսական և տնտեսատեխնիկական օգնությամբ իրագործեց Նեղոսի վրա Ասուանի ամբարտակի կառուցումը, որը մինչև օրս ծառայում է Եգիպտոսի տնտեսական առաջընթացին:

VII. ԵԳԻՊՏՈՍԻ ԵՎ ՍԻՐԻԱՑԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ (1958–1961 թթ.)

1. Օտարերկրյա ձեռնարկությունների և ընկերությունների ազգայնացումն ու եգիպտականացումը, եգիպտական ազգային բուրժուազիայի դիրքերի ամրապնդումը

Եգիպտոսի դիմակայելը եռյակ ագրեսիային և անգլիական, ֆրանսիական ու իսրայելական զորքերի հարկադրական հեռանալը Եգիպտոսից, բոլորովին նոր իրադրություն ստեղծեցին տարածաշրջանում: Եգիպտոսն այլևս այն երկիրը չէր, ինչպիսին էր մինչև եռյակ ագրեսիան: Այժմ նա համարվում էր իմպերիալիզմի դեմ պայքարում հաղթանակով դուրս եկած երկիր, որի հետ հետայսու չի կարելի վարվել այնպես, ինչպես վարվում էին ամբողջ XIX դարում և XX դարի առաջին կեսին: Չտեսնված բարձրացավ նրա հեղինակությունը արաբական երկրներում, և, կարելի է ասել, արաբական աշխարհի քաղաքական կենտրոնը տեղափոխվեց Կահիրե, իսկ Եգիպտոսի առաջնորդ Նասերն ընկալվեց որպես համաարաբական առաջնորդ:

Նասերը հայտնվեց նոր՝ անհամեմատ ավելի բարենպաստ վիճակում, և նա սկսեց գործել ավելի համարձակ ինչպես ներքին քաղաքականության բնագավառում, այնպես էլ արտաքին հարաբերությունների ոլորտում, առաջին հերթին՝ արաբական դաշտում:

Ներքին քաղաքականության ոլորտում նոր թափ ստացավ հարձակումը օտարերկրյա կապիտալի դիրքերի վրա Եգիպտոսում, որի հիմքը դրվեց Սուեզի ջրանցքի ընկերության ազգայնացումով:

Դեռ նոր էին ավարտվել պատերազմական գործողությունները, երբ 1956 թ. նոյեմբերին և դեկտեմբերին եգիպտական կառավարությունը բռնարգելք դրեց անգլիական և ֆրանսիական կապիտալիստներին պատկանող սեփականության, այդ թվում և բաժնետոմսերի վրա, որին հաջորդեց անգլիական և ֆրանսիական բոլոր բանկերի ու ապահովագրական ընկերությունների ազգայնացումը:

Բանկերից հետո հերթը հասավ նաև անգլիական և ֆրանսիական բազմաթիվ առևտրական, արդյունաբերական, շինարարական և այլ ընկերություններին: Սակայն տեղի ունեցավ դրանց ոչ թե ազգայնացումը,

այլ եգիպտականացումը՝ օտարերկրացիներին պատկանող ընկերությունների բաժնետոմսերի հարկադրական վաճառքը եգիպտական արդյունաբերողներին, առևտրականներին և շինարարներին: Անգլիական և ֆրանսիական բանկերին և ընկերություններին հաջորդեց իտալական և բելգիական բանկերի ու ընկերությունների ազգայնացումը կամ եգիպտականացումը, որն իրագործվեց արդեն 1960–1961 թթ.:

Պետությունն իր ձեռքում կենտրոնացրեց մի շարք օտարերկրյա ձեռնարկությունների բաժնետոմսերի վերահսկիչ ծրարը: Այդպիսի ձեռնարկությունները համարվում էին կիսապետական:

Կառավարությունը խրախուսում էր, որ օտարերկրացիներին պատկանող բաժնետոմսերի մեծ մասը գնի եգիպտական մասնավոր կապիտալը՝ ձգտելով ստեղծել եգիպտական ազգային կապիտալի սեկտոր: Եվ այդ գործում եգիպտական կառավարությունը հասավ զգալի հաջողությունների, որի մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ 1957 թ. Եգիպտոսում կառավարության որոշմամբ ստեղծվեց Պետական տնտեսական կազմակերպություն, որի հիմնական խնդիրը պետական սեկտորի ամրապնդումը և կառավարումն էր:

Այս բոլորի արդյունքը եղավ այն, որ օտարերկրյա կապիտալի դիրքերը 1960–ականների սկզբներին խիստ թուլացան: Պետական սեկտորը զարգացավ բավականին արագ և տնտեսության մի շարք ճյուղերում տիրապետող դիրքեր գրավեց: Պատահական չէր, որ հաստատվեց և գործողության մեջ դրվեց 1957–1962 թթ. եգիպտական արդյունաբերության զարգացման հնգամյա պլանը:

Այս բոլորը պետք է համարել այն դրականը, որ արձանագրվեց այդ ժամանակաշրջանում:

Սակայն դրսևորվեցին նաև որոշակի բացասական երևույթներ: Կառավարության վերոնշյալ միջոցառումները, որոնք սկզբունքային բնույթ ունեին, իրագործվեցին առանց համապատասխան նախապատրաստական աշխատանքների, բացակայում էր փորձը, չկային ազգայնացված և եգիպտականացված պետական ու կիսապետական ձեռնարկությունները և ընկերությունները ղեկավարող բավարար չափով կադրեր և մասնագետներ: Դա պարարտ հող ստեղծեց ազգային բուժուազիայի՝ արտակարգ արագությամբ հարստանալու համար օտարերկրյա մրցակցության վերացման և պետական կառավարման փորձի բացակայության պայմաններում: Եվ դա տեղի էր ունենում գյուղի և քաղաքի

աշխատավորական զանգվածների նյութական դրության վատացման պայմաններում:

Զարգացման այդ բացասական միտումները շուտով իրենց զգացնել էին տալու: Բայց դա հետո: Առայժմ դեռ արաբները էյֆորիայի մեջ էին:

2. Արաբական Միացյալ Հանրապետության ստեղծումը և փլուզումը (1958–1961 թթ.)

Հետպատերազմական տարիներին արաբական երկրները տարան պատմական նշանակություն ունեցող հաղթանակներ իրենց անկախության և ինքնիշխանության համար մղվող պայքարում: Աշխարհի քաղաքական քարտեզի վրա մեկը մյուսի հետևից հայտնվեցին մի շարք անկախ արաբական պետություններ:

Իմպերիալիզմի և արևմտյան գաղութային պետությունների կապանքներից ազատվելը նոր թափ հաղորդեց արաբների միասնության շարժմանը, որը դարձել էր տիրապետող գաղափար: Արաբական երկրներում այդ գաղափարի ջերմ կողմնակիցներ էին բոլորը՝ աշխատավորները, մտավորականությունը, ուսանողությունը, հողատերերն ու բուրժուազիան իրենց բոլոր թևերով: Ըստ էության չկար որևէ ուժ՝ կրոնական կամ աշխարհիկ, սոցիալական խավ կամ կուսակցություն, որը հանդես գար արաբական միասնության դեմ:

Այլ բան է, որ տարբեր ուժեր տարբեր հասկացություն էին դնում դրա մեջ և արաբական միասնության պաշտպանությամբ հանդես գալով տարբեր նպատակներ էին հետապնդում: Բայց փաստը մնում է փաստ, որ 1940–1970–ական թվականներին արաբական միասնությունը հանդիսանում էր արաբական ազգային–քաղաքական մտքի կիզակետը:

Այդ գաղափարներով էին համակված նաև Եգիպտոսը և Սիրիան՝ երկու արաբական առաջատար պետություններ, որոնք այդ ժամանակ իրենց բնույթով ու քաղաքական նպատակներով, տիպաբանական առումով, ամենամոտն էին միմյանց: Նրանց միջև հաստատվել էր սերտ համագործակցություն, այդ թվում և ռազմական բնագավառում: 1955 թ. հոկտեմբերի 20–ին երկու երկրների միջև կնքվեց պայմանագիր համատեղ պաշտպանության վերաբերյալ: 1957 թ., երբ արևմտյան երկրների և Թուրքիայի ճնշումը Սիրիայի վրա ընդունել էր սպառնալի չափեր, Եգիպտոսը, ի կատարումն այդ պայմանագրի, Սիրիա ուղարկեց իր զորքերը՝ Սիրիան պաշտպանելու համար:

Եգիպտոսի հետ միավորվելու նախաձեռնությունը եկավ Սիրիայից: Սիրիան ենթադրում էր Եգիպտոսի հետ միավորվել դաշնային՝ ֆեդերացիայի հիմունքներով: Բայց հետագայում բանակցությունների ընթացքում նրա դիրքորոշումը փոխվեց, և կողմերը համաձայնության եկան միավորվել որպես մեկ ունիտար պետություն: Այդ մասին Սիրիայի և Եգիպտոսի դեպուտատների պալատը 1957 թ. նոյեմբերի 18–ին ընդունեցին համատեղ որոշում, որի հիմքի վրա Եգիպտոսի պրեզիդենտ Նասերը և Սիրիայի պրեզիդենտ Շուքրի Քուբլին 1958 թ. փետրվարի 1–ին հռչակեցին Արաբական Միացյալ Հանրապետության՝ ԱՄՀ–ի ստեղծումը: Փետրվարի 21–ին այդ որոշումը հաստատեց Եգիպտոսում և Սիրիայում միաժամանակ անցկացված հանրաքվեն:

Նորաստեղծ պետության պրեզիդենտ ընտրվեց Նասերը, իսկ Կահիրեն հռչակվեց ԱՄՀ–ի մայրաքաղաք:

Սակայն շատ ժամանակ չպահանջվեց հասկանալու համար, որ այդ նոր պետական կազմավորումը հեռանկար չունի: Նա հիմնվեց առանց հաշվի առնելու Սիրիայի յուրահատկությունները, ամեն ինչի հիմքում դրվեց եգիպտական «մոդելը», որը հասկանալի և ընդունելի չէր սիրիացիների համար: Եգիպտոսում գործող օրենքներն ինքնաբերաբար տարածվեցին Սիրիայի վրա, այդ թվում քաղաքական կուսակցությունների արգելումը, գրաքննությունը մամուլի և խոսքի վրա և այլն: Եգիպտական բուժուազիան իր հսկողությունը հաստատեց սիրիական տնտեսության վրա՝ հետին պլան մղելով սիրիական ազգային բուժուազիային: Սիրիան հայտնվեց եգիպտական բյուրոկրատիայի հսկողության և սահմանափակումների տակ:

Դա առաջացրեց Սիրիայի բոլոր սոցիալական խավերի, բանվորների, գյուղացիների, մտավորականության, հողատերերի, ազգային բուրժուազիայի և քաղաքական կուսակցությունների խորը դժգոհությունը, որը համակեց նաև բանակին: Նրանք խորը հիասթափություն ապրեցին, որի տրամաբանական վախճանը հանդիսացավ 1961 թ. սեպտեմբերի 28–ին Դամասկոսում տեղի ունեցած պետական հեղաշրջումը: Սիրիան դուրս եկավ ԱՄՀ–ի կազմից և վերականգնեց իր անկախությունը՝ Սիրիայի Արաբական Հանրապետություն անվան ներքո[11]:

Նասերը և արաբական միասնության բոլոր կողմնակիցները շատ ծանր տարան ԱՄՀ–ի փլուզումը: Եգիպտոսում ծայներ հնչեցին Սիրիան

11 Այս մասին տե՛ս նաև հաջորդ հատորի «Սիրիա» գլուխը:

գրավելու և ԱՄՀ–ի կազմում պահելու եգիպտական զորքեր ուղարկելու մասին: Սակայն Նասերը, ինչքան էլ որ ծանր լիներ Սիրիայի դուրս գալը ԱՄՀ–ի կազմից, դարձյալ իրեն դրսևորեց որպես լայնախոհ պետական գործիչ, որը մի գլխով բարձր էր իր շրջապատից, և մերժեց դիմել նման եղբայրասպան քայլի, այլապես Նասերը Նասեր չէր լինի:

Դրանից հետո ևս եղան միավորման մի շարք փորձեր, սակայն Նասերը, ելնելով սիրիական դառը փորձից, միշտ զգուշավորություն էր ցուցաբերում: Նա այլևս չշտապեց:

VIII. ԵԳԻՊՏՈՍԻ ՀՌՉԱԿՈՒՄԸ «ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

Եգիպտոսը 1952 թ. հուլիսի 23–ի հեղափոխությունից մինչև 1970 թ.՝ Նասերի կառավարման շրջանում, անցել է քաղաքական և սոցիալ–տնտեսական զարգացման երեք փուլ:

Առաջին փուլն ընդգրկում է 1952–1956 թթ., որի ընթացքում տապալվեց միապետությունը, Եգիպտոսը հռչակվեց հանրապետություն, ամրապնդվեց Նասերի և «Ազատ սպաների» իշխանությունը, առաջին քայլերը կատարվեցին սոցիալական վերափոխումների, ֆեոդալիզմին հարված հասցնելու, երկրում քաղաքական և տնտեսական կայունություն հաստատելու ուղղությամբ: Այս փուլն ավարտվեց նոր սահմանադրության ընդունումով և Նասերի ընտրությամբ՝ որպես Եգիպտոսի պրեզիդենտ: Նասերը և նրա զինակիցներն առաջին փուլում հաղթանակեցին իշխանության համար մղվող պայքարում, ընդունեցին օրենք ագրարային վերափոխումների մասին, հաջողությամբ լուծեցին Եգիպտոսից անգլիական զորքերի դուրսբերման հարցը՝ հաղթանակով դուրս գալով Սուեզի ճգնաժամից և հաջողությամբ դիմակայելով անգլո–ֆրանս–իսրայելական եռյակ ագրեսիային:

Երկրորդ փուլն սկսվում է 1956 թ. և ավարտվում 1961 թ., որի ընթացքում առաջին պլան մղվեցին սոցիալ–տնտեսական խնդիրները՝ նպատակ ունենալով ստեղծել համապատասխան քաղաքական և տնտեսական նախադրյալներ Եգիպտոսը ուժեղ և զարգացած պետության վերածելու համար:

Այդ խնդրի լուծման ուղին նասերականները տեսնում էին օտարերկրյա, գլխավորապես անգլիական, ֆրանսիական, իտալական, բել-

գիական մոնոպոլիստական, զանազան բանկային, արդյունաբերական, առևտրական, շինարարական, ապահովագրական և այլ ընկերությունները Եգիպտոսի տնտեսական կյանքից դուրս մղելու մեջ: Նրանք դա իրականացրին հաջողությամբ՝ ազգայնացման և եգիպտականացման քաղաքականության, պետական կապիտալիզմի միջոցով:

Այս փուլում եգիպտական իշխանությունները շեշտը դրեցին պետական սեկտորի ստեղծման, եգիպտական մասնավոր կապիտալին և ազգային բուժուազիային քաղաքական, տնտեսական, ֆինանսական ամենալայն աջակցություն ցույց տալու վրա:

Այդ քաղաքականության համար տեսական հիմք ծառայեց «դասակարգերի ներդաշնակության» և «Եգիպտոսը որպես մեկ մեծ ընտանիք» լինելու հայեցակարգը:

Սակայն աստիճանաբար ակնհայտ դարձավ, որ ազգային բուժուազիան, մասնավոր կապիտալն այլ երազանքներ ունեն և բոլորովին այլ ծրագրեր են փայփայում: Նրանք, օգտվելով օտարերկրյա մրցակցության վերացումից և այն հանգամանքից, որ տեր ու տնօրեն էին դարձել ներքին շուկայում, շատ արագ թափով հարստացան: Չնայած այդ հանգամանքին, նրանք մտածում էին ոչ թե լուրջ տնտեսական ծրագրեր իրագործել, զարգացնել ազգային արդյունաբերությունը, բարձրացնել տնտեսությունը, այլ գերշահույթներ ստանալ, որոնց զգալի մասը նրանք Եգիպտոսից դուրս էին բերում: Նրանք խուսափում էին իրենց կապիտալը ներդնել ծանր արդյունաբերության, մեքենաշինության կամ մետալուրգիայի զարգացման ոլորտում, այլ նախընտրում էին ներդնել սպասարկման և առևտրի ոլորտում, կառուցել խանութներ, հյուրանոցներ և ռեստորաններ:

Արդյունաբերական այդ ճյուղերի զարգացման, այդ թվում և Հելուանի մետալուրգիական գործարանի՝ մերձավորարևելյան մասշտաբներով գիգանտի, շինարարության հիմնական բեռն ընկավ պետական սեկտորի վրա: Մասնավոր կապիտալն էական մասնակցություն չունեցավ անգամ Ասուանի ամբարտակի շինարարությանը, թեև նա համարվում էր XX դարի խոշորագույն կառույցներից մեկը: Այդ ծրագրին ազգային բուրժուազիայի միակ մասնակցությունը եղավ Ասուան քաղաքում մեկ հյուրանոցի կառուցումը:

Ազգային բուժուազիան և մասնավոր կապիտալը չարդարացրին նրանց վրա դրված հույսեր: Նասերը հիասթափված էր և դառնությամբ «իր» ազգային բուժուազիային մեղադրեց եսամոլության մեջ: Նա հաս-

կացավ, որ Եգիպտոսն իրենից բնավ էլ չի ներկայացնում մեկ միասնական ընտանիք, որ այդ ընտանիքի հարուստ անդամները վերմակը անվերջ միայն իրենց կողմն էին քաշում: Նա հասկացավ նաև, որ սխալ է դասակարգերի ներդաշնակության տեսությունը, որին նա այնքան հավատում էր և հետևում:

Հասկանալով իր թույլ տված սխալները՝ Նասերն իր մեջ ուժ գտավ ընդունելու այդ սխալները և դրանք ուղղելու նոր արմատական սոցիալ–տնտեսական բնույթի քաղաքականությամբ, որը հիմք դրեց նոր փուլի:

Եգիպտոսի զարգացման **երրորդ փուլն** ընդգրկում է 1961–1967 թթ.: Այդ ժամանակաշրջանը համարվում է Եգիպտոսի հակակապիտալիստական կամ ոչ կապիտալիստական զարգացման փուլ՝ միտված դեպի սոցիալիստական հասարակության կառուցումը:

Իշխանության գլխին գտնվելու մոտ տասնամյա փորձը Նասերին ի վերջո հանգեցրեց այն եզրակացության, որ Եգիպտոսը տնտեսապես զարգացած երկրի վերածելու, Եգիպտոսը քաղաքական ուժեղ պետություն դարձնելու և բնակչության կենսամակարդակը բարձրացնելու միակ ելքը հակակապիտալիստական քաղաքականության և սոցիալիստական հասարակություն կառուցելու մեջ է:

Նրա համար հեշտ չէր նման ընտրություն կատարելը: Երկրում կային բավականին հզոր քաղաքական և տնտեսական ուժեր, որոնք դեմ էին այդ քաղաքականությանը: Այդպիսի ուժեր կային նաև բանակում: Անգամ «Ազատ սպաները»՝ Նասերի մարտական ընկերները, որոնք միասին էին դիմագրավել բոլոր դժվարությունները հուլիսյան հեղափոխությունից հետո, անգամ նրանք բոլորը չէին, որ կիսում էին Նասերի մոտեցումներն այս հարցում և պաշտպանում նրան: Նրանցից ոմանք հեռացան նրանից. մի գործընթաց, որն ավելի հստակորեն դրսևորվեց 1967 թ. հունիսյան արաբա–իսրայելական պատերազմի ժամանակ և նրանից հետո: Բայց հենց այդ ժամանակ կրկին դրսևորվեցին Նասերի՝ որպես ականավոր և ոչ սովորական պետական գործչի բարձր որակները՝ կարողանալ գնալ ընդդեմ հոսանքի, գտնել տվյալ պահի և քաղաքականության համար իրեն հավատարիմ դաշնակից ուժեր և հենվելով նրանց վրա՝ իրագործել իր մտահղացումները: Եվ նա սկսեց քաղաքական և տնտեսական հարձակումը եգիպտական խոշոր բուրժուազիայի դիրքերի վրա:

Դրա մասին են վկայում ստորև թվարկվող այն միջոցառումները, որ 1961–1967 թթ. Նասերի կառավարությունն իրագործեց եգիպտական խոշոր կապիտալի դեմ:

Միջոցառումների ցանկում առաջին տեղը գրավում է Եգիպտոսի երկու ամենախոշոր բանկերի՝ Ազգային բանկի և «Միսրի» ազգայնացումը, որը տեղի ունեցավ 1960 թ. փետրվարին: Դրան հաջորդեցին 1961 թ. հուլիսին ընդունված սկզբունքային նշանակություն ունեցող կառավարական որոշումները, որով պետական սեփականություն էին հայտարարվում բոլոր ապահովագրական և 142 արդյունաբերական ու առևտրական ընկերությունները: Ընդունվեց Եգիպտոսի համար առանցքային նշանակություն ունեցող մի որոշում. պետական մենաշնորհ հաստատվեց բամբակի արտահանման վրա, որը Եգիպտոսի տնտեսության հնագույն, հիմնական և կարևորագույն ճյուղերից մեկն էր, որից մինչ այդ առասպելական շահույթներ էին ստանում մասնավոր արտահանողները: Պետական մենաշնորհ հաստատվեց նաև ամբողջ ներմուծման, իսկ ապա նաև արտաքին առևտրի վրա:

Հուլիսյան դեկրետների մեջ իր կարևորությամբ առանձնանում է բաժնետոմսերի քանակի վերաբերյալ մտցվող սահմանափակումները: Դեկրետով առավելագույն բաժնետոմսերի քանակը գումարային արտահայտությամբ, որ մի հոգի կարող էր ունենալ, չպետք է գերազանցեր 10 հազ. եգիպտական ֆունտը:

Հետագայում որոշումներ ընդունվեցին նաև որոշ միջին արդյունաբերական ձեռնարկությունների, փոխադրական և կապի միջոցների, շինարարական ընկերությունների ազգայնացման վերաբերյալ, մտցվեց պրոգրեսիվ եկամտահարկ: Պետության ձեռքն անցան նաև մեծածախ առևտուրը և խոշոր խանութները:

Այսպիսով՝ ամբողջ բանկաֆինանսային ոլորտը, արդյունաբերությունը, խոշոր առևտուրը, տրանսպորտն անցան պետության տնօրինության տակ:

Հերթը հասավ ագրարային ոլորտին: 1961 թ. հուլիսի 25-ին ընդունվեց նոր ագրարային օրենքը, որը 1952 թ. օրենքի հետագա զարգացումն էր հանդիսանում: Այժմ, ի տարբերություն 1952 թ. օրենքի, որը հողատիրության առավելագույն չափը համարում էր 200 ֆեդան, այդ չափաբաժինը կրճատվեց երկու անգամ և իջեցվեց մինչև 100 ֆեդանի, իսկ 1962 թ. օրենքով 100 ֆեդան կարող էին ունենալ արդեն ոչ թե մեկ հողատերը, այլ ամբողջ ընտանիքը: Վերացվեց կալավածատիրոջը նրանից խլված հողաբաժնի դիմաց տրվող փոխհատուցումը, իսկ գյուղացուց հողաբաժին ստանալու համար գանձվող վճարը կրճատվեց չորս անգամ:

Արդեն 1965 թ. խոշոր հողատերերից խլվել էր մեկ մլն ֆեդան հող, որը բաժանվեց 264 հազ. գյուղական ընտանիքների:

Այս բոլորի հետևանքով ամրապնդվեց պետական սեկտորը, որը հինգ տարի անց՝ 1965 թ., արդեն տալիս էր արդյունաբերական արտադրանքի 85%–ը: Ստեղծվեցին արդյունաբերական այնպիսի ճյուղեր, ինչպես մեքենաշինական, դազգահաշինական, մետալուրգիական, քիմիական և այլն: Զարգացավ պաշտպանական արդյունաբերությունը: Արդյունաբերական արտադրանքը 1963 թ.՝ Եգիպտոսի զարգացման երրորդ փուլում, համեմատած 1952 թ. հետ, ավելացավ երեք անգամ:

Երրորդ փուլում նկատելի տեղաշարժեր եղան նաև բնակչության, նրա աշխատավորական խավերի տնտեսական դրության բարելավման բնագավառում: Եգիպտոսում հաստատվեց 42–ժամյա աշխատանքային շաբաթ, բանվորները ստացան վճարովի արձակուրդի և կենսաթոշակի իրավունք, հաստատվեց աշխատավարձի մինիմում, աշխատողների հաշվին էր փոխանցվում տվյալ ձեռնակությունում ստացվող շահույթների 25%–ը, շոշափելի արդյունքներ ստացվեցին գործազրկության կրճատման հարցում: Եվ վերջապես՝ երկրում մտցվեց ձրի կրթություն ստանալու համակարգ:

Ամփոփելով կարելի է ասել, որ 1960–ականներին ընդունված արմատական բնույթի որոշումները և նրանց կենսագործումը ուժեղ հարված հասցրեցին խոշոր և կոմպրադորական, որոշ չափով նաև միջին բուրժուազիային, խոշոր առևտրականներին և ֆեոդալ–կալվածատերերին, ցնցեցին նրանց տնտեսական դիրքերը և զրկեցին նրանց տնտեսական, հետևաբար նաև քաղաքական լծակներից:

Վերափոխումները չսահմանափակվեցին միայն սոցիալ–տնտեսական ոլոտներով: Նրանք ընդգրկեցին նաև պետական–քաղաքական համակարգը:

Դրա անհրաժեշտությունը հասունացել էր, որովհետև Եգիպտոսի պառլամենտը՝ Ազգային ժողովը, և Ազգային միությունը, որը փոխարինել էր Ազատագրության կազմակերպությանը, ուղղակի դեմ էին կիրառվող հակակապիտալիստական վերափոխումներին: Նասերի պրեզիդենտական որոշումով դրանք լուծարվեցին, և 1962 թ. փետրվարին կայացան ժողովրդական ուժերի ազգային կոնգրեսի ընտրությունները: Վերջինս հունիսի 30–ին ընդունեց Ազգային խարտիա, որը լիակատար աջակցություն էր հայտնում անցկացվող վերափոխումներին:

Իսկ Ազգային միության փոխարեն Նասերի դեկրետով 1962 թ. հոկտեմբերին ստեղծվեց Արաբական սոցիալիստական միությունը՝ ԱՍՄ: Նա միակ քաղաքական կազմակերպությունն էր, որը համարվում էր Եգիպտոսի սոցիալիստական ավանգարդը: Նրան իրավունք վերապահվեց որոշել Եգիպտոսի ներքին և արտաքին քաղաքականությունը: Ստեղծելով ԱՍՄ–ն՝ Նասերը հույս ուներ այն դարձնել իր վարչակարգի քաղաքական հենարանը: ԱՍՄ–ն գլխավորեց «Ազատ սպաներ» կազմակերպության առաջին կազմի անդամ, Նասերի հնագույն զինակիցներից մեկը՝ Ալի Սաբրին:

1964 թ. մարտին անցկացվեցին Ազգային ժողովի նոր ընտրություններ: Նրա կազմը հիմնավորապես փոխվեց և համալրվեց Նասերի գծի պաշտպան դեպուտատներով: Իսկ նույն թվականի մարտի 25–ին հրապարակվեց Եգիպտոսի նոր ժամանակավոր Սահմանադրական դեկլարացիան: Նրանում առաջին անգամ տրվեց Եգիպտոսի՝ որպես նոր պետության բնութագիրը: Ժամանակավոր սահմանադրությունում բառացիորեն ամրագրված էր. «ԱՄՀ–ն դեմոկրատական, սոցիալիստական պետություն է՝ հիմնված ժողովրդի աշխատավորական ուժերի դաշինքի վրա»: Ժամանակավոր սահմանադրությունը պարունակում էր նաև մեկ առանցքային բնույթի հոդված, ըստ որի՝ բոլոր ազգայնացված բանկերը, ընկերությունները և ձեռնարկությունները համարվում էին համաժողովրդական սեփականություն: Նա միաժամանակ հաստատեց սեփականության երեք ձև՝ պետական, կոոպերատիվ և մասնավոր:

Որոշակի քայլեր կատարվեցին նաև կյանքի դեմոկրատացման ուղղությամբ: Մանավորապես վերացվեցին բոլոր արտակարգ օրենքները:

Այսպիսին էր իրադրությունը Եգիպտոսում, երբ 1967 թ. հունիսին պայթեց արաբա–իսրայելական երրորդ պատերազմը:

IX. 1967 թ. ՀՈՒՆԻՍՅԱՆ ՎԵՑՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Պաղեստինյան հարցի կարգավորված չլինելը և հարաբերությունների լարվածությունն Իսրայելի հետ հանդիսանում էին պատերազմի վտանգի մշտական աղբյուր Մերձավոր Արևելքում: 1948 թ. սկսած, երբ ծնավորվեց Իսրայել պետությունը, արդեն տեղի էր ունեցել երկու պատերազմ՝ 1948 թ. և 1956 թ.: Իսկ երբ ռազմական գործողու-

թյունները դադարում էին նրանց միջև, դարձյալ իրադրությունը մնում էր խիստ վտանգավոր: Դա այն դեպքն էր, երբ պատերազմի չգոյությունը չէր նշանակում խաղաղություն, քանի որ մի կողմից՝ Իսրայելի, իսկ մյուս կողմից՝ արաբական երկրների միջև անընդհատ տեղի էին ունենում «տեղական» նշանակության զինված բախումներ՝ ավիացիայի, տանկերի և հրետանու մասնակցությամբ: Առանձնապես տարածված էր «հրետանային դուելը»:

Արաբա–իսրայելական հարաբերությունները կրկին կրիտիկական աստիճանի հասան 1967 թ. գարնանը, երբ ապրիլ ամսին բավականին լուրջ ռազմական գործողություններ տեղի ունեցան սիրիա–իսրայելական սահմանի երկայնքով: Իսրայելը մեղադրեց Սիրիային այն բանում, որ նա թույլ էր տալիս և խրախուսում լավ զինված պաղեստինյան պարտիզանական խմբերի ներթափանցումը Իսրայել, որտեղ նրանք ծավալում էին ռազմական գործողություններ: Իսրայելը խոշոր ռազմական ուժեր կենտրոնացրեց սիրիական սահմանի վրա:

Սիրիան հերքեց այդ մեղադրանքները՝ ընդգծելով, որ Իսրայելը նման լուրերը փորձում է օգտագործել որպես պատրվակ Սիրիայի դեմ լայնածավալ ռազմական գործողություններ սկսելու համար: Իսրայելի քայլերն այդպես ընկալեցին նաև արաբական մյուս երկրները, առաջին հերթին՝ Եգիպտոսը, ինչպես նաև Հորդանանը, Իրաքը և մի շարք այլ երկրներ:

Եգիպտոսը, ինչպես արդեն նշվել է, Սիրիայի հետ ուներ համաձայնագիր համատեղ պաշտպանության վերաբերյալ: Նասերը հայտարարեց, որ Եգիպտոսը կկատարի իր վրա վերցրած պարտավորությունները Սիրիայի պաշտպանության վերաբերյալ: Բացի հայտարարությունից, Եգիպտոսը դիմեց մի շարք հակաքայլերի, մասնավորապես նրա պահանջով 1967 թ. մայիսին դուրս բերվեցին ՄԱԿ–ի արտակարգ ուժերը, որոնք տեղադրված էին Իսրայելի հետ բաժանարար գծում: Նրանց տեղը գրավեցին Եգիպտոսի զորքերը: Եգիպտական զինված ուժերն իրենց հսկողության տակ վերցրեցին Տիրանի նեղուցը, փակեցին նրանով իսրայելական նավերի անցումը Աքաբայի ծոցում գտնվող իսրայելական էյլաթ նավահանգիստ:

Իսրայելը այդ քայլերը դիտեց որպես պատերազմի սպառնալիք Եգիպտոսի կողմից, և ինքն էլ իր հերթին իր զորքերը կենտրոնացրեց Եգիպտոսի ուղղությամբ:

1967 թ. հունիսի 5–ի առավոտյան Իսրայելի ավիացիան հարձակում գործեց Եգիպտոսի, ինչպես նաև Հորդանանի և Սիրիայի օդանա-

վակայանների վրա, որով սկսվեց արաբա–իսրայելական երրորդ՝ այսպես կոչված «Վեցօրյա պատերազմը»: Նրանք շարքից դուրս բերեցին եգիպտական օդանավակայանները և ոչնչացրին եգիպտական ռազմական օդանավերի մեծ մասը, որոնք նույնիսկ չհասցրեցին օդ բարձրանալ: Առաջին հարվածից իսկ գերազանցություն ձեռք բերելով օդում՝ Իսրայելի բանակը առաջ շարժվեց և գրավեց Սինայի թերակղզին և պաղեստինյան Ղազայի շրջանը, որը 1948 թվականից գտնվում էր Եգիպտոսի վերահսկողության տակ: Պատերազմի մեջ մտան նաև Սիրիան ու Հորդանանը, իսկ Իրաքը և Ալժիրը, որպես օգնություն, պատերազմի թատերաբեմ ուղարկեցին զգալի քանակությամբ ինքնաթիռներ և հետևակային զորամասեր: Բայց դա չկարողացավ փոխել պատերազմի ընթացքը: Իսրայելը գրավեց Հորդանան գետի ձախ ափը և Երուսաղեմի հին քաղաքը: Զգալի տարածքային կորուստներ ունեցավ նաև Սիրիան: Պատերազմն ավարտվեց Իսրայելի ռազմական հաղթանակով և Եգիպտոսի, Սիրիայի ու Հորդանանի պարտությամբ:

Հունիսի 10–ին կողմերը, արձագանքելով ՄԱԿ–ի գլխավոր քարտուղարի կոչին, համաձայնվեցին կրակի դադարեցմանը: Վեցօրյա պատերազմն ավարտվեց:

Ե. Պրիմակովը և Ի. Բելյաևը նշում են, որ «Իսրայելի հարձակումը 1967 թ. հունիսի 5–ի առավոտյան հանկարծակիի բերեց Եգիպտոսին: Երկիրը գիտեր մոտեցող պատերազմի մասին, բայց պատրաստ չէր նրան»:

Հունիսի 9–ի երեկոյան, երբ Եգիպտոսի և արաբական մյուս երկրների պարտությունն արդեն ակնհայտ էր, Կահիրեի հեռուստատեսությամբ հանդես եկավ Նասերը: Նա տեղի ունեցածի համար ամբողջ պատասխանատվությունը վերցրեց իր վրա և եգիպտացիներին հայտնեց իր հրաժարականի մասին: Այն, ինչ հաջորդեց պրեզիդենտի հայտարարությանը՝ իր պաշտոնից հրաժարվելու մասին, նույնիսկ ամենավառ երևակայություն ունեցողը չէր կարող պատկերացնել: Նասերի հեռուստաելույթից անմիջապես հետո Կահիրեի փողոցները հորդեցին հարյուր հազարավոր մայրաքաղաքացիներ: Պատկերը նույնն էր նաև Ալեքսանդրիայում և Եգիպտոսի այլ քաղաքներում, որտեղ աշխատավորները, գյուղացիները, ուսանողությունը, հասարակ մարդիկ վճռականորեն հանդես եկան ի պաշտպանություն Նասերի՝ պահանջելով, որ նա հետ վերցնի իր հրաժարականը: Ցույցերը շարունակվեցին նաև հաջորդ օրը, և հունիսի 10–ին Նասերը հանդես եկավ նոր հայտարարությամբ, որ

ինքը հետ է վերցնում իր հրաժարականը: Նա կրկին ստանձնեց երկրի ղեկավարությունը:

Պատերազմն ակնառու ցույց տվեց այն թերությունները, սխալները և բացթողումները, որ տեղ էին գտել երկրի կառավարման համակարգում՝ վերևից մինչև ներքև: Դրանից չէր խուսափել նաև բանակը, որը, առաջին հերթին՝ ռազմաօդային ուժերը, կրում էր գլխավոր պատասխանատվությունը ռազմական պարտության համար: Թեև պատերազմի վտանգը մշտապես գոյություն ուներ, սակայն բարձրագույն հրամանատարությունը մարշալ Ամերի գլխավորությամբ, անհոգություն էր դրսևորել եգիպտական բանակի մարտունակության բարձրացման հարցում: Բարձրաստիճան սպաներն ավելի շատ մտահոգ էին իրենց արտոնությունները և դիրքերը պահպանելու հարցով, քան թե ամենօրյա քրտնաջան աշխատանքով բանակը նախապատրաստելու մարտական լուրջ գործողությունների համար: Եվ Նասերը պատերազմից հետո, անդրադառնալով պարտության պատճառներին, նշեց Եգիպտոսում «զինվորական դասակարգի» ձևավորման մասին, որը մտահոգ էր նախ և առաջ իշխանությունն իր ձեռքում պահելու և իր տնտեսական բարգավաճումն ապահովելու համար: Բանակի շտաբը Ամերի գլխավորությամբ վերածվել էր յուրահատուկ կենտրոնի, որը հետագայում կոչվեց «ղեկավարման» կամ «ուժային» երկրորդ կամ զուգահեռ կենտրոն՝ ի հակադրություն Նասերի քաղաքացիական իշխանության:

1962 թ. հունիսի 9–10–ի ցույցերի ժամանակ Նասերը, կրկին ստանալով եգիպտական ժողովրդի վստահության մանդատը, անցավ վճռական գործողությունների: Նա հասկացավ, որ խաղաքարտի վրա դրված է ոչ թե իր քաղաքական ճակատագիրը, այլ Եգիպտոսի ապագան, այն նվաճումների ապագան, որ համառ պայքարում ձեռք էր բերվել 1952 թ. հուլիսյան հեղափոխությունից հետո: Նա իր խնդիրը համարեց ոչ միայն պահպանել ձեռք բերված լավագույնը և դրականը, այլև նոր քայլերի դիմել Եգիպտոսի զարգացման ու հզորացման ուղղությամբ:

Նասերը ստանձնեց վարչապետի և Արաբական սոցիալիստական միության գլխավոր քարտուղարի պաշտոնները՝ գտնելով, որ դա հնարավորություն կտա իրեն իրականացնել իր նոր մտահղացումները՝ կապված պատերազմի ծանր հետևանքները վերացնելու և քաղաքական ու բարոյական մթնոլորտն առողջացնելու հետ:

Բայց նա հասկանում էր, որ պետք է սկսել բանակի զտումից, որը, իրոք, դարձել էր ուժային կենտրոն և միշտ չէ, որ հաշվի էր նստում Նա-

սերի հետ: Նրա հրամանով 1967 թ. օգոստոսին իրենց զբաղեցրած պաշտոններից ազատվեցին և ձերբակալվեցին մարշալ Ամերը, պաշտպանության նախարարը, ռազմաօդային ուժերի հրամանատարը, բանակային հետախուզության պետը և այլ զինվորական ղեկավարներ: Դրանով նա կանխեց Ամերի և նրա կողմնակից զինվորականների կողմից նախապատրաստվող պետական հեղաշրջումը, որի նպատակը Նասերի տապալումը և իշխանությունը զավթելն էր: Ամերը ինքնասպանություն գործեց, իսկ մնացածները դատապարտվեցին բանտարկության:

Այդ քայլով ամրապնդվեցին Նասերի դիրքերը բանակում:

Նրա հաջորդ քայլը եղավ կառավարությունից հեռացնել այն գործիչներին, որոնք բացահայտորեն հանդես էին գալիս Նասերի տնտեսական քաղաքականության, մասնավորապես սոցիալիստական ուղղվածություն ունեցող ծրագրերի դեմ: Այդ խումբը գլխավորում էր Զաքարիյա Մոհի ադ-Դինը, որը զբաղեցրել էր տարբեր պաշտոններ, այդ թվում և վիցեպրեզիդենտի ու վարչապետի: Նրա հեղինակավոր աջակիցն էր պլանավորման նախարար Ա. Կայսունին: Նրանց առաջարկած ծրագիրը մերժում էր սոցիալիստական կողմնորոշումը և ելքը տեսնում էր պետական ձեռնարկությունների կառուցումը դադարեցնելու, ազգայնացված ձեռնարկությունները մասնավոր կապիտալին հանձնելու և մասնավոր սեկտորի գործունեությունը սահմանափակող բոլոր օրենքների վերացման մեջ: Ե. Պրիմակովը և Ի. Բելյանը այդ պահանջները համարում են «նեոկապիտալիստական», իսկ նրա հեղինակներին ու պաշտպաններին՝ «նեոկապիտալիստներ»:

Նասերի և նրա կողմնակիցների, երկրի ձախ ուժերի, այդ թվում և կոմունիստների համար այդ ուղին անընդունելի էր, և նրանք հանդես եկան այդ առաջարկությունների դեմ: 1968 թ. մարտի 20-ին ձևավորվեց Եգիպտոսի նոր կառավարություն, և Զաքարիյա Մոհի ադ-Դինը, Ա. Կայսունին և նրանց մյուս կողմնակիցները դուրս մնացին նրա կազմից: Դա աջակողմյան նեոկապիտալիստական ուժերի խոշոր պարտությունն էր: Դա միաժամանակ Նասերի և նրա համակիրների երկրորդ կարևոր հաղթանակն էր 1967 թ. հունիսյան պատերազմում կրած պարտությունից հետո: Նասերին հաջողվեց իր վերահսկողությունը սահմանել նախ՝ զինվորական, ապա նաև տնտեսական բլոկի վրա:

Նասերն անդրադարձավ նաև Արաբական Սոցիալիստական Միության հարցին: Ակնհայտ էր, որ Եգիպտոսում այդ միակ քաղաքական կազմակերպությունը, որը պետք է լիներ վարչակարգի հենարանը, չէր

արդարացրել իր վրա դրված հույսերը, որն արդյունք էր նրա անբավարար գործունեության և աշխատավորական լայն զանգվածների հետ թույլ կապերի: Նասերը, ստանձնելով ԱՍՄ գլխավոր քարտուղարի պաշտոնը, իրականացրեց նաև նրա վերակառուցումը:

Սկզբունքային բնույթի այդ վերափոխումներն իրականացնելուց հետո Նասերը 1968 թ. մարտի 30–ին ներկայացրեց Եգիպտոսի զարգացման իր նոր ծրագիրը, որը ստացավ Մարտյան խարտիա անվանումը: Եգիպտոսը, ըստ այդ խարտիայի, պետք է դառնար ժամանակակից պետություն՝ հիմնված դեմոկրատիայի, գիտության և նորագույն տեխնոլոգիայի վրա: Մարտյան խարտիան հաստատվեց 1968 թ. մայիսի 2–ին կայացած հանրաքվեի ժամանակ և դարձավ Եգիպտոսի ապագա զարգացման հիմնական փաստաթուղթը:

Կյանքի վերջին տարիներին Նասերը դիմեց մի շարք քայլերի արաբական տարբեր երկրների, այդ թվում և Սաուդյան Արաբիայի հետ հարաբերությունները կարգավորելու և արաբական միասնությունը վերականգնելու ուղղությամբ: Նա կողմնակից էր արաբա–իսրայելական առճակատումը լուծել քաղաքական, խաղաղ ճանապահով, և միշտ չէ, որ արաբական երկրներում հասկանում էին նրան ու պաշտպանում նրա այդ դիրքորոշումը:

Արաբական ընդհանուր խնդիրները մշտապես գտնվել են Նասերի ուշադրության կենտրոնում և կազմել նրա քաղաքականության ամենակարևոր ուղղություններից մեկը: Եվ երևի խորհրդանշական պետք է համարել այն, որ մահվանից առաջ նրա վերջին և ամենակարևոր գործունեությունը կապված էր միջարաբական հարաբերությունների կարգավորման հետ: 1970 թ. սեպտեմբերին սկսվեցին ռազմական բախումները հորդանանյան կանոնավոր բանակի և Հորդանանում հաստատված Պաղեստինի ազատագրության կազմակերպության մարտիկների միջև, որոնք վերածվեցին իսկական և լայնամասշտաբ պատերազմական գործողությունների: Երկու կողմից էլ նույն արյունն էր հեղվում: Դա պատմության մեջ մտել է որպես «Սև սեպտեմբեր»: Նասերը շատ ծանր տարավ հորդանացիների և պաղեստինցիների միջև այդ եղբայրասպան պատերազմը, և ամեն ինչ արեց այն դադարեցնելու համար: Նրա նախաձեռնությամբ Կահիրեում հրավիրվեց արաբական պետությունների ղեկավարների գագաթնաժողով: Մեծ ջանքերի գնով հաջողվեց համաձայնության հասնել ռազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ: Դա նրա վերջին հաջողությունն էր և ծառայությունը իր արաբական ազգին:

Դաժան պայքարի բովով անցած, հոգնած և ուժասպառ Գամալ Աբդել Նասերի սիրտը չդիմացավ լարվածությանը, իր թշնամիների խարդավանքներին ու բարեկամների դավաճանությանը և 1970 թ. սեպտեմբերի 28–ին դադարեց բաբախելուց:

X. ԵԳԻՊՏՈՍԸ 1970–1981 թթ.

1. Անվար Սադաթը Եգիպտոսի երրորդ պրեզիդենտ

Նասերի մահից հետո իր ամբողջ սրությամբ ծառացավ նրան փոխարինողի հարցը: Նասերը այնպիսի բարձր հեղինակություն էր ոչ միայն Եգիպտոսում, այլև ամբողջ արաբական աշխարհում, որ նրան համարժեք փոխարինող գտնելն այդ պահին շատ դժվար էր, եթե ոչ անհնարին, թեև այդ տեղի համար հավակնորդներ շատ կային: Պրեզիդենտի տեղի համար մրցապայքարում հաղթող դուրս եկավ վիցեպրեզիդենտ Անվար Սադաթը, ինչը շատերի համար անակնկալ էր:

Նա Նագիբից և Նասերից հետո դարձավ Եգիպտոսի երրորդ պրեզիդենտը և երկիրը կառավարեց մինչև 1981 թ. հոկտեմբերը՝ մինչև իր սպանությունը:

Սադաթը ծնվել է Եգիպտոսում 1918 թ. հոկտեմբերի 6–ին 13 երեխաներից բաղկացած արաբական բազմանդամ ընտանիքում: Նա ավարտել էր Կահիրեի զինվորական ակադեմիան, ինչպես Նասերը և նրանց շատ սերնդակիցներ, ու անցել զինվորական ծառայության Մանկաբադում, որտեղ և ծանոթացել ու մտերմացել էր Նասերի հետ: Այստեղ էլ՝ Զաբալ Շարիֆ սարի մոտ, նրանք՝ երեք երիտասարդ սպաներ՝ Նասերը, Սադաթը և Զաքարիյա Մոհի ադ–Դինը, 1942 թ. երդվեցին պայքարել Եգիպտոսը օտարերկրյա կապանքներից ազատելու և զարգացած երկրի վերածելու համար: Նա «Ազատ սպաներ» կազմակերպության առաջին և հիմնադիր անդամներից էր:

Նրա կենսագրության մեջ կա մի հետաքրքիր էջ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, ինչպես նշվել է, Եգիպտոսում կային ուժեր, որոնք հույս ունեին Գերմանիայի և Իտալիայի օգնությամբ դուրս մղել Անգլիային Եգիպտոսից: Դրանց թվին էր պատկանում նաև Անվար Սադաթը, որին ձերբակալում են անգլիացիները՝ մեղադրելով

Գերմանիայից և Իտալիայից օգնություն ստանալու փորձերի համար: Հետագայում նա ազատ է արձակվում:

Անվար Սադաթը մասնակցել է 1952 թ. հուլիսյան հեղափոխությանը և զբաղեցրել բարձր պաշտոններ հանրապետական Եգիպտոսում: 1969 թ. Նասերը նրան նշանակում է իր վիցեպրեզիդենտներից մեկը:

Անվար Սադաթին չի կարելի համարել վառ անհատականություն: Նասերի ժամանակ նա միշտ եղել է երկրորդ պլանում և, ի տարբերություն Ամերի, Զաքարիյա Մոհի ադ–Դինի և «Ազատ սպաներ» կազմակերպության առաջին և հիմնադիր մի քանի այլ անդամների, երբեք չի գնացել ընդդեմ Նասերի և նրա քաղաքական կուրսի: Հավանաբար, այդ հանգամանքը նույնպես իր դերը խաղաց նրա պրեզիդենտ դառնալու գործում:

Եվ ինչպես պատմության մեջ շատ հաճախ է լինում, մի բան է, երբ տվյալ գործիչը երկրորդ պլանի վրա է, և բոլորովին այլ բան է, երբ նա դառնում է պետության առաջին դեմքը: Այդ պարագայում նա իրեն դրսևորում է բոլորովին այլ կերպ, եթե ունի բնատուր տվյալներ: Նույն բանը պատահեց Անվար Սադաթի հետ: Ճիշտ է, նա երբեք չհասավ Նասերի բարձրությանը և չունեցավ նրա անառարկելի հեղինակությունը, սակայն, այդուհանդերձ, դիմեց այնպիսի քայլերի ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում, որ զարմացրեց շատ–շատերին, շեղվեց Նասերի կանխագծած ուղուց և Եգիպտոսի զարգացումը տարավ այլ ուղիով:

Այդ պատճառով մասնագետները նրան անվանում էին «անակնկալների պրեզիդենտ»:

2. Սադաթիզմը և Եգիպտոսի պատմական նոր ընթացքը

Մասնագիտական գրականության մեջ բավականին շատ է գրվել Անվար Սադաթի 1970–ական թվականներին որդեգրած նոր քաղաքականության մասին: Գրվել է երկու տեսանկյունից: Նրանք, ովքեր Նասերի քաղաքականության հետևողական կողմնակիցներն էին, խստորեն քննադատում էին Անվար Սադաթին, դատապարտում նրա քաղաքականությունը ամբողջությամբ՝ որևէ դրական բան չտեսնելով այդ քաղաքականության մեջ: Իսկ այն մասնագետները և քաղաքական գործիչները, որոնք Անվար Սադաթի կողմնակիցներն էին, ջանք չէին խնայում գովաբանելու նրա նոր քաղաքական կուրսը, փառաբանելու նրա անձը և ցեխ շպրտելու Նասերի ամբողջ քաղաքականության վրա:

Բնականաբար, նման մոտեցումը գիտական առումով ընդունելի չի կարող լինել: Անհրաժեշտ է իրատեսական և հավասարակշռված մոտեցում, կոնկրետ իրադրության, հնարավորությունների, ներքին և արտաքին պայմանների հաշվառում, նրանց արածի անաչառ վերլուծություն՝ նկատելով ու գնահատելով այն դրականը, որ նրանցից յուրաքանչյուրը մտցրել է հանրապետական Եգիպտոսի զարգացման մեջ, թեև, հասկանալի է, վերջին խոսքը պատկանում է պատմությանը:

Անվար Սադաթը՝ որպես պրեզիդենտ, շատ ծանր ժառանգություն ստացավ: Եգիպտոսը, անշուշտ, հասել էր մեծ հաղթանակների և ծեռք բերել տպավորիչ հաջողություններ հուլիսյան հեղափոխությունից հետո՝ Նասերի պրեզիդենտության շրջանում: Դրա հետ միասին կուտակվել էին բազմաթիվ բարդ խնդիրներ ինչպես ներքին քաղաքականության, այնպես էլ արտաքին քաղաքականության բնագավառում: Իրեն զգացնել էին տալիս 1967 թ. հունիսյան պատերազմի հետևանքները: Թեև կար 1968 թ. Մարտյան խարտիան, որտեղ նշված էին եգիպտական իշխանությունների անելիքները առաջիկայում, սակայն Նասերը շատ բան չհասցրեց անել վրա հասած մահվան պատճառով:

Այդ ամենը բարդ խնդիրները և անկատար ծրագրերը ժառանգաբար անցան Անվար Սադաթին: Նրա առջև կար երկու ընտրություն կա՛մ գնալ Մարտյան խարտիայի կանխագծած ուղիով, որի ընդունման օգտին քվեարկել էր նաև ինքը՝ Անվար Սադաթը, կա՛մ ընտրել զարգացման նոր մոդել՝ սկզբունքային հարցերում տարբեր նասերյան մոդելից, և ընթանալ այդ ուղիով:

Անակնկալների սիրահար նորընծա պրեզիդենտն ընտրեց երկրորդ ուղին:

Կահիրեի համալսարանի պրոֆեսոր և Արաբական մտքի ֆորումի գլխավոր քարտուղար Սաադ ադ-Դին Իբրահիմը՝ սադաթյան շրջանի Եգիպտոսի քաղաքական պատմության լավագույն ուսումնասիրողներից մեկը, վերլուծելով Անվար Սադաթի քաղաքականությունը ամբողջության մեջ վերցված, առաջ է քաշել և գիտական շրջանառության մեջ դրել **«սադաթիզմ»** քաղաքական եզրը՝ բացահայտելով դրա բովանդակությունը: Արաբ պատմաբանը գտնում է, որ սադաթիզմն ունի չորս անկյունաքարեր, որոնց էության բացահայտումը կարող է հստակ պատկերացում տալ Անվար Սադաթ պրեզիդենտի քաղաքականության մասին: Այդ անկյունաքարերն են՝ դաշինք Արևմուտքի, առաջին հերթին ԱՄՆ-ի հետ, «Բաց դռների» քաղաքականություն, ժողովրդավարություն և հաշտեցում Իսրայելի հետ:

Անվար Սադաթի նոր քաղաքականության չորս բաղադրամասերի վերաբերյալ նույն տեսակետն է արտահայտել նաև անգլիական պատմաբան Լիլիան Կրեյգ Հարիսը, թեև պետք է նշել, որ այդ տեսակետն այս կամ այն ձևով կարելի է գտնել նաև այլ ուսումնասիրողների մոտ:

Այժմ կանգ առնենք Սադաթի քաղաքականության այդ առանցքային հիմնադրույթների լուսաբանության վրա:

Առաջին. Հեռացում Խորհրդային Միությունից և ԱՄՆ — Եգիպտոս հարաբերությունների մեղրամիսը

Կարելի է ասել, որ Սադաթի՝ որպես պրեզիդենտի, առաջին քայլերից մեկը եղավ որոշել Եգիպտոսի տեղը աշխարհում: Նասերի ժամանակ Եգիպտոսը բազմաթիվ թելերով կապված էր Խորհրդային Միության հետ և նրանից ստանում էր ֆինանսական, տնտեսական, տեխնիկական, ռազմական օգնություն և քաղաքական աջակցություն: Սադաթը բավականին արագ տեղաշարժ կատարեց այս առանցքային բնույթի հարցում: Նա որոշեց աստիճանաբար հեռանալ Խորհրդային Միությունից կարգավորել հարաբերությունները ԱՄՆ–ի հետ, և հնարավորինս մերձենալ նրան: Փորձելով արդարացնել իր այդ քայլը՝ Սադաթը նշում էր, որ Խորհրդային Միությունը դիտավորյալ ձգձգում էր զենքի մատակարարումը Եգիպտոսին, քաշքշուկ մտցնում այդ հարցում: Եվ նա Խորհրդային Միության հասցեին իր այդ մեղադրանքի մեջ պաշտպանություն է գտնում երկրի ներսում որոշ ուժերի կողմից: Սաադ ադ–Դինը Իբրահիմը վկայում է, որ «շատ եգիպտացիներ 1967 թ. պարտությունից հետո ծանձրացել էին Սովետների հետ Նասերի կապերից»:

Խորհրդային Միությունից հեռանալու առաջին նշանները երևացին արդեն 1971 թ. մայիսին, երբ Սադաթն իրենց պաշտոններից հեռացրեց այն նասերականներին, որոնք համարվում էին ԽՍՀՄ–ի բարեկամները: Նույն տարվա հուլիս ամսին Սադաթը մեծ օժանդակություն ցույց տվեց Սուդանի ղեկավար Ջաֆար Նիմեյրիին՝ նրա կողմից Սուդանի կոմունիստական կուսակցությանը հարվածելու, կոմունիստներին ձերբակալելու և բանտերը նետելու գործում:

Դրանք ազդանշաններ էին, որոնք երկու հասցե ունեին մեկը ուղղված էր Խորհրդային Միությանը, իսկ մյուսը՝ ԱՄՆ–ին:

1972 թ. կեսերին Անվար Սադաթը կատարեց իր ամենավճռական քայլն այս հարցում, որը փաստորեն հասցրեց հարաբերությունների խզմանը Խորհրդային Միության հետ: Պրեզիդենտի հրամանով իրենց ուժը կորցրած համարվեցին եգիպտա–խորհրդային պայմանագրերը և

20 հազ. խորհրդային ռազմական մասնագետները և խորհրդականներն արտաքսվեցին Եգիպտոսից: Դա Սադաթի քաղաքականության տրամաբանական ավարտն էր Խորհրդային Միության նկատմամբ քաղաքականության փոփոխության հարցում:

Դռներն արդեն բաց էին ԱՄՆ–ի հետ մերձենալու հարցում: Ցանկանալով ավելի մեծ կշիռ հաղորդել իր նոր քաղաքական կուրսին՝ Սադաթը, կորցնելով չափի զգացումը, հայտարարեց, որ արաբա–իսրայելական կոնֆլիկտի բանալին գտնվում է ԱՄՆ–ի ձեռքում: Նա մինչև իր ողբերգական մահը չէր դադարում տեղի–անտեղի կրկնել իրեն այնքան դուր եկած այդ բանաձևը:

Ընդհանրապես Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ–ի հետ մերձենալու գործում, որը հանդիսանում էր սադաթիզմի քաղաքականության անկյունաքարերից մեկը, իր որոշակի դերակատարումն ունեցավ Սաուդյան Արաբիան, որն իր վրա էր վերցրել միջնորդի դեր: Արդեն խոսվում էր ԱՄՆ–ի և Եգիպտոսի միջև հատուկ հարաբերությունների մասին, որոնք նոր թափ առան 1973 թ. հոկտեմբերյան արաբա–իսրայելական չորրորդ պատերազմից հետո: Դրա մասին են վկայում հետևյալ փաստերը: 1974 թ. սկզբներին վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները ԱՄՆ և Եգիպտոսի միջև, որոնք Եգիպտոսը խզել էր 1967 թ. հունիսյան պատերազմից հետո: 1974 թ. Եգիպտոսում պաշտոնական այցով եղավ ԱՄՆ–ի պրեզիդենտ Նիքսոնը, որը վերականգնեց Եգիպտոսին ցույց տրվող օգնությունը: ԱՄՆ–ի ակտիվ միջնորդությամբ կայացավ եգիպտական և իսրայելական զորքերի երկու տարանջատում ռազմական գծում: Եվ վերջապես՝ ամերիկյան և եվրոպական օգնությամբ հնարավոր եղավ մաքրել Սուեզի ջրանցքը և նավարկելի դարձնել այն նավերի համար: Սադաթը համոզվածությամբ արդեն խոսում էր ԱՄՆ–ի և Եգիպտոսի, նրա բառերով ասած, «լրիվ գործընկերներ լինելու» մասին: Հարկ է հիշատակել նաև, որ 1977 թ. Երուսաղեմ Սադաթի անակնկալ այցը տեղի ունեցավ ամերիկյան ամենաակտիվ խրախուսանքով:

Այս փաստերը և նոր իրողությունները նկատի ունի մեր կողմից արդեն հիշատակված Սաադ ադ–Դին Իբրահիմը, երբ նա 1974–1977 թվականները համարում է եգիպտա–ամերիկյան հարաբերությունների մեղրամիսը:

Բայց ինչպես ամեն մի մեղրամիս վերջ ունի, այնպես էլ ամերիկյան–եգիպտական մեղրամիսը 1970–ականների վերջերին աստիճանաբար սկսեց փոխարինվել սառնությամբ: ԱՄՆ–ից ստացվող օգնությունը

և դրա շնորհիվ Եգիպտոսի տնտեսական դրության և ժողովրդական զանգվածների վիճակի ակնկալվող բարելավում տեղի չունեցավ: Երկրում չէին բավարարում հացի և սննդամթերքի շատ տեսակներ, և 1977 թ. կայացան, այսպես կոչված, «հացի բունտեր», որոնք դաժանությամբ ճնշվեցին: Որոշակի հիասթափություն պատեց Իսրայելի հետ կոնֆլիկտը ԱՄՆ–ի օգնությամբ կարգավորելու հարցում: Մեծ հարցականի վերածվեց Սադաթի «Արաբա–իսրայելական կոնֆլիկտի լուծման բանալին ԱՄՆ–ի ձեռքում է» թևավոր դարձած արտահայտությունը:

Եվ վերջինը: Եգիպտացիների զգալի մասն արդեն ծանծրացել ու հոգնել էր... այս անգամ արդեն ԱՄՆ–ի հետ Սադաթի կապերից:

Պատմության ինչպիսի՜ հեգնանք:

Երկրորդ. Ինֆիթահ և «Գողերի ապստամբությունը»

Խոսքն այստեղ սադաթիզմի երկրորդ անկյունաքարային սկզբունքի՝ «բաց դռների» քաղաքականության մասին է, որի արաբերեն բովանդակային համարժեքը «ինֆիթահ» բառն է: Ինֆիթահը, որը բառացիորեն նշանակում է բացում, չափազանց արագ ընդունելություն գտավ և արաբերենից քոչեց աշխարհի տարբեր լեզուներ:

1970–ականների կեսերին Սադաթը հաջողությամբ լուծելով ԱՄՆ–ի հետ հարաբերությունները կարգավորելու և մերձենալու խնդիրը, համարյա նույն ժամանակահատվածում անցավ իր ամենահամարձակ մտահղացումներից մեկի՝ «բաց դռների» քաղաքականության կենսագործմանը: Դրա հիմքը դրեց 1974 թ. ընդունված Նո. 43 օրենքը տնտեսության ազատականացման մասին: Նախատեսվում էր այդ ազատականացումն իրագործել մասնավոր սեկտորը խրախուսելու, նրա գոյության ու զարգացման համար նպաստավոր բանկաֆինանսային, ներդրումային, հարկային, մաքսային, վաճառահանման, արտահանման, ներմուծման և այլ դյուրություններ տրամադրելու միջոցով: Դրա համար պահանջվում էր ևս մեկ կարևոր նախապայման՝ վերացնել պետական սեկտորի մենաշնորհային վիճակը արտադրության, վաճառահանման, հումքի ձեռքբերման և տնտեսության մյուս բոլոր բնագավառներում: Որոշումը նպատակաուղղված էր եգիպտական, արաբական և օտարերկրյա մասնավոր կապիտալի ու ձեռներեցության համար ներդրումային հրապուրիչ օրենսդրական դաշտ ստեղծելուն և դրանով Եգիպտոսի տնտեսական զարգացումը խթանելուն:

«Բաց դռների» քաղաքականությանն անցնելը նշանակում էր անցում սկզբունքորեն նոր բնույթի տնտեսական քաղաքականության: Սա-

դաթը փայլուն կերպով օգտվեց տնտեսական այն ծանր վիճակից, որի մեջ հայտնվել էր Եգիպտոսը 1967 թ. պատերազմից հետո, երբ նախորդ տարիներին բնորոշ տնտեսական, այդ թվում և արդյունաբերական վերելքը, խիստ անկում էր ապրում: Նա հավատացնում էր, որ «բաց դռների» քաղաքականությունը և մասնավոր կապիտալի ու ձեռներեցության զարգացումը միակ հնարավոր ճանապարհն է երկիրը տնտեսական լճացումից ու անկումից դուրս բերելու համար, և որ այդ քաղաքականությունը կնպաստի օտարերկրյա կապիտալի ու առաջավոր տեխնիկայի ներհոսքը Եգիպտոսի տնտեսության մեջ: Սադաթն այնքան էր ոգևորվել, որ իր նոր քաղաքականությունն անգամ համեմատեց հետպատերազմյան եվրոպական ավերված տնտեսության վերականգնմանը նպատակաուղղված ամերիկյան «Մարշալի պլանի» հետ՝ անվանելով այն «Նոր մարշալի պլան»:

Սկզբնական փուլում «ինֆիթահի» քաղաքականության հռչակումն ընդհանուր առմամբ հանգիստ, նույնիսկ կարելի է ասել՝ լավ ընդունվեց եգիպտացիների կողմից: Նրանք դա ընկալեցին որպես տնտեսական մի հերթական քայլ, և նրանց մտքով չէր անցնում, որ դա կնշանակի հրաժարում Նասերի սոցիալիստական կողմնորոշման քաղաքականությունից: Սակայն երբ 1974 թ. Նո. 43 օրենքին 1977 թ. հաջորդեցին համանման այլ օրենքներ և որոշումներ, ապա բոլորի համար ակնհայտ դարձավ, որ դա նշանակում էր հրաժարում նասերյան սոցիալիստական կողմնորոշումից և լրիվ անցում կապիտալիստական տնտեսածնին: Հրաժեշտ տրվեց պլանային սկզբունքին, պետության միջամտությանը տնտեսությանը, իսկ պետական սեկտորն ուղղակի անտեսվեց:

Դա հանգեցրեց եգիպտական հասարակության ներսում սոցիալական նոր բևեռացման: Սադաթի «բաց դռների» քաղաքականությունից օգտվեցին հասարակության բարձր խավերը, նորընծա հարուստները և կապիտալիստները, որոնք և պաշտպանում էին նրան: Իսկ դրանից դժգոհ էին գլխավորապես ցածր եկամուտ ունեցող խավերը, պետական սեկտորին պատկանող ձեռնարկությունների բանվորները, նասերականները, կոմունիստները, ձախերը և այլ խավեր:

Համենայն դեպս, երկրում ծագեցին տնտեսական և սոցիալական լուրջ հիմնախնդիրներ, և, ինչպես նշվեց, սննդի և հացի անբավարարություն, որը Կահիրեում և այլ քաղաքներում առաջ բերեց բունտեր: Սադաթը սոցիալական այդ պոռթկումն անվանեց «գողերի ապստամբություն»: Նրանցից շատերը ձերբակալվեցին և բանտերը նետվեցին: 1977 թ.

հուլիսին դրան հաջորդեցին արյունալի բախումներ իսլամական զինյալների հետ:

Այսպիսով՝ 1970–ականների վերջերին սադաթիզմի երկրորդ անկյունաքարը ևս երերաց:

Սադաթի «բաց դռների» քաղաքականությունը ժամանակին շատ սուր քննադատության ենթարկեցին խորհրդային և սոցիալիստական երկրների մասնագետները, տարբեր երկրների մարքսիստ–տնտեսագետները, արաբական երկրների կոմունիստական կուսակցությունները և այլ ուժեր՝ այն համարելով կործանարար ուղի:

Սակայն այժմ ժամանակները փոխվել են և անհրաժեշտ է ավելի սթափ մոտեցում և իրատեսական գնահատականներ տալ «բաց դռների» քաղաքականությանը և Եգիպտոսում դրա կիրառման փորձերին՝ ելնելով այն իրողությունից, որ փլուզվեց սոցիալիզմի համաշխարհային տնտեսական համակարգը՝ չկարողանալով ապացուցել իր կենսունակությունը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ազատական շուկայական հարաբերությունները և դրանց վրա խարսխված տնտեսությունները մեր ժամանակներում համարվում են զարգացման գլխավոր մոդելը:

Երրորդ. «Հայրական ժողովրդավարություն»

Գալով իշխանության գլուխ՝, Սադաթը շատ էր սիրում խոսել ժողովրդավարության և ազատությունների մասին՝ ընդգծելով այդ ուղղությամբ անհրաժեշտ փոփոխություններ կիրառելու անհրաժեշտությունը: Նա փորձեց «հայրաբար» իր ժողովրդին «պարգևել» ազատություններ խոսքի, մամուլի, քաղաքական կուսակցություններ ձևավորելու և այլ ասպարեզներում, որը ստացավ «Հայրական ժողովրդավարություն» (Paternalistic democratization) անվանումը:

Նա սկզբում՝ 1971 թ. մայիսին, «հայրաբար» ազատվեց նասերականներից՝ նրանց դիտելով որպես իր նոր «հայրական» ժողովրդավարության հիմնական հակառակորդները, նշելով, որ իսկական ժողովրդավարության հաստատումը և «ուժային կենտրոնների» վերացումը ժողովրդական պահանջ է: Ուստի նա, դիմելով համապատասխան քայլերի, դրանով իսկ կատարում է այդ համաժողովրդական պատվերը:

Սադաթն այնքան հեռու գնաց, որ այդ միջոցառումների մեջ հիշատակեց նաև Եգիպտոսում «ոստիկանական պետությանը» վերջ դնելու մասին, թեև եթե նա իրոք այդպես էր մտածում Նասերի շրջանի պետության մասին, ապա չպետք է մոռանար, որ նա այդ պետության կառու-

ցողներից ու ղեկավարներից մեկն էր՝ հասնելով մինչև Եգիպտոսի վիցեպրեզիդենտի պաշտոնին:

Նրա որոշումներով 1971–1975 թթ. աքսորված եգիպտական քաղաքական գործիչներին և լրագրողներին ներում շնորհվեց և նրանք իրավունք ստացան վերադառնալ հայրենիք, բանտերից արձակվեցին քաղաքական գործիչները, այդ թվում՝ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության անդամները:

1976 թ. երկրում հաստատվեց, ավելի ճիշտ՝ վերականգնվեց բազմակուսակցական համակարգը: Սակայն Սադաթը չգնաց այն բանին, որ նրանց թույլ տա ազատ գործելու, այլ նրանց վրա հաստատեց վերահսկողություն: Բացի դրանից, նա որոշեց կուսակցությունների թիվը սահմանափակել երեքով: Նա հիմնեց իր կուսակցությունը, որը կոչվեց Եգիպտոսի արաբական սոցիալիստական կուսակցություն, որին հատկացվեց կենտրոնի՝ ցենտրիստական կուսակցության դերակատարում: Մյուս երկու կուսակցություններն էին՝ Ազատական կամ Լիբերալ կուսակցությունը, որը գլխավորեց Մուստաֆա Քամիլը, և Յունիոնիստական առաջադիմական կուսակցությունը՝ Խալիդ Մոհի ադ–Դինի գլխավորությամբ: Ազատական կուսակցությունը համարվեց աջակողմյան, իսկ Յունիոնիստական առաջադիմական կուսակցությունը՝ ձախակողմյան: Մուստաֆա Քամիլը և Խալիդ Մոհի ադ–Դինը «Ազատ սպաներ» կազմակերպության նախկին անդամներ էին, մասնակից 1952 թ. հուլիսյան հեղափոխությանը, և որպես այդպիսիք՝ համարվում էին Սադաթի վաղեմի գործընկերները: «Հայրաբար» թույլատրելով այդ կուսակցությունների կազմավորման հարցը և նույնպես «հայրաբար» որոշելով, թե այդ երեք կուսակցություններից որն է կենտրոնի, աջակողմյան և ձախակողմյան՝ Սադաթը մերժեց այլ ուժերի հայտերը՝ ունենալ իրենց կուսակցությունը: Մերժվածների մեջ էին նաև նասերականներն ու «Մուսուլման եղբայրները»:

Սադաթի այդ ժողովրդավարական ազատությունները, չնայած իրենց սահմանափակ լինելուն, այդուհանդերձ, ընդհանուր առմամբ լավ ընդունելություն գտան եգիպտոսում, մանավանդ լրագրողների, գրողների, մշակույթի գործիչների, մտավորականության և այլ մասնագիտական շրջանակների կողմից:

Սակայն այդ ազատությունները երկար չտևեցին: 1977 թ. հայտնի բունտերց հետո և Եգիպտոսի ներքաղաքական դրության վատացմանը զուգահեռ սկսեցին մտցվել նոր սահմանափակումներ: Դժգոհ «իր» կու-

սակցության՝ Եգիպտոսի արաբական սոցիալիստական կուսակցության, գործունեությունից, մանավանդ որ նրան չէր հաջողվել խոր արմատներ գցել հասարակության մեջ և իր հետևից տանել ժողովրդական զանգվածներին, նա ցրեց այդ կուսակցությունը և 1978 թ. կազմավորեց նոր կուսակցություն, որը ստացավ Ազգային ժողովրդավարական կուսակցություն անունը:

Սադաթին խիստ անհանգստացնում էր իր կառավարման և քաղաքականության դեմ աճող ընդդիմությունը: Իր նախկին կուսակցությունը ցրելու որոշման մեջ առաջնային նշանակություն էր ունեցել այն հանգամանքը, որ նա ըստ Սադաթի, չէր կարողացել հակառակվել ընդդիմությանը և հաջող պայքար մղել նրա քաղաքական հակառակորդների դեմ:

Սադաթն անցավ բռնություններ կիրառելու քաղաքականությանը, որն ավելի դաժանորեն կիրառվեց 1981 թ. սկզբներից: Այսպես, օրինակ՝ 1981 թ. սեպտեմբերին նա արգելեց մի քանի հրատարակություններ, բռնագրավեց ընդդիմադիր լրագրերի ունեցվածքը, մոտ 1500 քաղաքական գործիչ բանտարկվեց: Խստացավ նրա քաղաքականությունը քրիստոնյա ղպտիների նկատմամբ: Բոլորին ցնցեց ղպտի քրիստոնյաների հոգևոր առաջնորդ պատրիարքին իր պաշտոնից հեռացնելու նրա աննախադեպ քայլը և բռնաճնշումները ղպտի եկեղեցու և նրա կառույցների նկատմամբ: Հերթը հասավ «Մուսուլման եղբայրների» հոգևոր առաջնորդին, որը նույնպես ձերբակալվեց և բանտարկվեց:

Ավելին՝ Սադաթը չհասցրեց անել: 1981 թ. հոկտեմբերի 6-ին նա սպանվեց:

Չորրորդ. Իսրայելի հետ հաշտեցումը և եգիպտա-իսրայելական Քեմպ դևիդյան համաձայնագրերը

Իսրայելի հետ հարաբերությունների կարգավորումը և արաբա-իսրայելական կոնֆլիկտի լուծումը Սադաթին ամենից շատ հուզող հարցն էր նրա պրեզիդենտ դառնալու առաջին օրվանից: Դա իր սրությունը չկորցրեց նրա պրեզիդենտության ամբողջ շրջանում: Սադաթին պետք էր մի այնպիսի հաղթանակ, որին չէին կարողացել հասնել նրա երեք նախորդները՝ Ֆարուկ I-ը, գեներալ Նագիբը և Գամալ Աբդել Նասերը: Նա վստահ էր, որ միայն այդ կերպ ինքը կարող էր դուրս գալ Նասերի ստվերի տակից և ձեռք բերել այնպիսի հեղինակություն, որին անգամ Նասերը կարող էր նախանձել:

Հենց սկզբից, մտածելով ռազմական գործողությունների մասին, նա իր առջև խնդիր չէր դնում հասնել լիիրավ հաղթանակի Իսրայելի

նկատմամբ: Նա գիտակցում էր, որ Եգիպտոսը և ողջ արաբական աշխարհը դեռևս պատրաստ չէր դրան: Նրա երազանքն էր հասնել մի փոքր՝ սահմանափակ բնույթի ռազմական հաղթանակի, որը կկապվեր նրա անվան հետ, կվերացներ Իսրայելի անպարտելիության առասպելը և կառաջացներ փոփոխություններ արաբների մտածելակերպում ու հոգեբանության մեջ: Նա հույս ուներ նաև, որ դա որոշակի փոփոխություններ կարող էր առաջացնել Իսրայելի և նրան պաշտպանող արևմտյան պետությունների, առաջին հերթին ԱՄՆ–ի քաղաքականության մեջ:

1973 թ. հոկտեմբերի սկզբներին կայացած Եգիպտոսի ազգային անվտանգության խորհրդի նիստում Սադաթը տեղյակ պահեց խորհրդի անդամներին, որ մտադիր է ռազմական գործողություններ սկսել Իսրայելի դեմ: Նա հայտնեց նրանց, որ այդ գործողությունների հիմքում դրվում է «սահմանափակ» պատերազմի հայեցակարգը: Թեև այնքան էլ հասկանալի չէր «սահմանափակ» պատերազմի հայեցակարգը, և պարզ չէր, թե ինչպես այն կարելի է պահել դրա շրջանակներում ու կանխել նրա վերածումը համընդհանուր պատերազմի, այդուհանդերձ, Ազգային անվտանգության խորհրդի անդամները հավանություն տվեցին պրեզիդենտի մտադրությանը:

1973 թ. հոկտեմբերի 6–ին սկսվեց արաբա–իսրայելական չորրորդ պատերազմը: Այն սկսեց Եգիպտոսը: Այս անգամ Եգիպտոսի հետ պատերազմի մեջ մտավ միայն Սիրիան, իսկ Հորդանանը ձեռնպահ մնաց: Եգիպտական զորքերը հոկտեմբերի 6–ին հաջողությամբ անցան Սուեզի ջրանցքը և, ճեղքելով իսրայելցիների կողմից կառուցված Բարլևի հզոր պաշտպանական գիծը, որը նրանք համարում էին անառիկ, գրավեցին Սինայի թերակղզու մի մասը, որը գտնվում էր Իսրայելի տիրապետության տակ 1967 թ. հունիսյան պատերազմից ի վեր: Ռազմական այդ հաջողությունը աննախադեպ խանդավառություն առաջացրեց Եգիպտոսում և ամբողջ արաբական աշխարհում, և շփոթվածություն՝ Իսրայելում:

Եգիպտոսը հնարավորություն ուներ զարգացնել իր ռազմական հաջողությունները և գրագետ մարտավարության դեպքում հասնել մեծ հաջողությունների:

Սակայն Սադաթի հրամանով եգիպտական զորքերի հարձակողական գործողություններն անսպասելիորեն դադարեցվեցին: Պարզ դարձավ, որ դա պատահական չէր տեղի ունեցել, այլ կատարվել էր «սահմանափակ» պատերազմի վերաբերյալ Սադաթի պլանի համա-

ծայն, որը ողբերգության վերածվեց հետագայում իսրայելական պարկի մեջ հայտնված եգիպտական զորաբանակի համար:

Եգիպտական բանակի հարձակողական գործողությունների դադարեցումից հիանալի օգտվեց Իսրայելը: Նրա բանակը շատ շուտ ուշքի եկավ, վերակազմավորեց իր ուժերը և անցավ հակահարձակման եգիպտական, ապա նաև սիրական ռազմաճակատներում և հասավ նոր հաջողությունների:

ՄԱԿ–ի միջնորդությամբ և Անվտանգության խորհրդի 1973 թ. հոկտեմբերի 22–ի Նո. 338 բանաձևի հիմքի վրա հաջողվեց հասնել կրակի դադարեցմանը:

Սադաթին, չնայած նախնական հաջողությանը, չհաջողվեց ամբողջությամբ հասնել իր գլխավոր նպատակներին, թեև նրան ենթակա լրատվամիջոցները մեծ աղմուկ բարձրացրեցին եգիպտական զենքի հաղթանակի շուրջը, իսկ Սադաթը հռչակվեց «անցումի հերոս»՝ նկատի ունենալով եգիպտական զորքերի՝ Սուեզի ջրանցքին անցնելը 1973 թ. հոկտեմբերի 6–ին:

Պատերազմի սկզբնական փուլը ցույց տվեց, որ լավ կազմակերպվածության, նախապատրաստական մտածված աշխատանքների, բանակի կարգապահության և մարտունակության բարձրացման դեպքում միանգամայն հնարավոր է հասնել հաջողությունների ռազմի դաշտում: Դրանում համոզվեցին ոչ միայն եգիպտոսում և արաբական մյուս երկրներում, այլև հասկացան Թել Ավիվում և Վաշինգտոնում:

Չպետք է բացառել, որ այդ հանգամանքը հետագայում իր դրական դերն ունեցավ արաբա–իսրայելական առճակատման վերաբերյալ եգիպտա–իսրայելական քաղաքական համաձայնագրերի հարցում:

Դա ակնհայտ դարձավ 1977–1979 թթ., երբ Սադաթը կրկին մատուցեց մի նոր անակնկալ՝ ձգտելով լուծել արաբա–իսրայելական առճակատման «գորդյան հանգույցը»: 1977 թ. նոյեմբերի 9–ին Սադաթը ի լուր աշխարհի հայտարարեց, որ պատրաստ է մեկնել Երուսաղեմ, հանդիպել Իսրայելի ղեկավարության հետ ու քննարկել արաբա–իսրայելական հարաբերությունների բոլոր կողմերը, եթե նման հրավեր լինի Իսրայելի կառավարության կողմից: Ստանալով նման հրավեր Թել Ավիվից՝ Իսրայելի վարչապետ Մենահիմ Բեգինից՝ Սադաթը նոյեմբերի 19–ին մեկնեց Երուսաղեմ, որտեղ նա մնաց մինչև նոյեմբերի 21–ը: Նրան հնարավորություն տրվեց հանդես գալ Իսրայելի պառլամենտում՝ կնեսետում, և շարադրել իր տեսակետները երկու երկրների միջև հարա-

բերությունները կարգավորելու վերաբերյալ: Առաջին կարևոր միտքը, որ նա արտահայտեց, և որը խառնեց ամբողջ արաբական աշխարհը, դա այն էր, որ ինքը պատրաստ է ճանաչել Իսրայելի անկախությունը և հաստատել կայուն խաղաղություն՝ հիմնված արդարության վրա: Սադաթը միաժամանակ ընդգծեց, որ հարաբերությունների կարգավորումը չպետք է տեղի ունենա միայն Եգիպտոսի և Իսրայելի միջև, այլ պետք է ընդգրկի նաև արաբական մյուս երկրները, որի համար պետք է վերադարձվեն արաբական բոլոր գրավյալ տարածքները, ներառյալ արաբական Երուսաղեմը, և ճանաչել սեփական պետությունն ունենալու Պաղեստինի իրավունքը:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Սադաթին ոչ ոք լիազորություններ չէր տվել Երուսաղեմում հանդես գալ արաբական մյուս երկրների և Պաղեստինի արաբ ժողովրդի անունից:

1977 թ. դեկտեմբերին կայացան Իսրայելի վարչապետ Մենահիմ Բեգինի պատասխան այցը Եգիպտոս և նրա հանդիպումն ու բանակցությունները Սադաթի հետ Իսմայիլիա քաղաքում: Նա իր հետ բերել էր առաջարկությունների մի փաթեթ, որը վկայում էր այն մասին, որ Իսրայելը դեռևս պատրաստ չէր այնպիսի արմատական փոփոխությունների արաբա–իսրայելական հարաբերություններում, որպիսին առաջարկում էր Անվար Սադաթը: Դա հատկապես վերաբերում էր պաղեստինցիների իրավունքներին և արաբական գրավյալ տարածքներին, որոնց վերաբերյալ նա առաջարկում էր մանր, երկրորդական և ոչ էական զիջումներ: Բեգինի առաջարկությունները Սադաթին դրեցին անհարմար դրության մեջ:

Սադաթի այցը Երուսաղեմ և Բեգինի պատասխան այցը Իսմայիլիա խիստ բացասական արձագանք գտավ ամբողջ արաբական աշխարհում: Նա ներքաղաքական լարվածություն առաջացրեց նաև Եգիպտոսում՝ ներառնելով կառավարությունը: Համաձայն չլինելով Սադաթի Երուսաղեմ այցի և արաբա–իսրայելական հարաբերությունների հարցում նրա նոր քաղաքական կողմնորոշման հետ՝ հրաժարական տվեցին Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ֆահմին, ապա նաև նրան այդ կարևոր պաշտոնում հաջորդած Մահմուդ Ռիյադը:

Ստեղծված պայմաններում գործին միջամտեց ԱՄՆ պրեզիդենտ Կարտերը, որը ստանձնեց միջնորդի դեր: Նա 1978 թ. հունվարին մեկնեց Եգիպտոս և Ասուանում հանդիպեց ու բանակցություններ վարեց Սադաթի հետ:

Ամբողջ 1978–1979 թթ. ամերիկյան դիվանագիտությունը շատ ակտիվ էր և ամեն կերպ ջանում էր երկու կողմերին նստեցնել բանակ-

ցությունների սեղանի շուրջը և հասնել առճակատման կարգավորմանը: Եվ, ի վերջո, ԱՄՆ պրեզիդենտ Ջիմի Կարտերին դա հաջողվեց: Նրա հրավերով Եգիպտոսի պրեզիդենտ Անվար Սադաթը և Իսրայելի վարչապետ Մենահիմ Բեգինը 1978 թ. սեպտեմբերին մեկնեցին ԱՄՆ–ի պրեզիդենտների ամառային նստավայր Քեմպ Դևիդ, որը գտնվում է Մերիլանդի նահանգում: Այստեղ նրանք Կարտերի անմիջական մասնակցությամբ բանակցություններ սկսեցին, որոնք տևեցին 1978 թ. սեպտեմբերի 4–17–ը: Բանակցություններն ընթանում էին շատ ծանր, անգամ լինում էին հուսահատական պահեր, երբ թվում էր, թե նրանք ձախողվելու էին: Հատկապես կարծր դիրքորոշում ուներ Իսրայելի վարչապետը: Նման հուսահատական պահերից մեկի ժամանակ Սադաթն անգամ տեղյակ պահեց Կարտերին, որ ինքը հավաքում է իր ճամպրուկները և մեկնում Կահիրե: Սակայն Կարտերը և նրա թիմը կարողացան ստիպել կողմերին շարունակել բանակցությունները և գնալ զիջումների: Զիջող հիմնական կողմը Սադաթն էր: Ինչպես նշում է ամերիկյան պատմաբան Ջորջ Լենցովսկին իր «Ամերիկյան պրեզիդենտները և Մերձավոր Արևելքը» աշխատության մեջ, «Սադաթի զիջումները շփոթեցնում և շատ հաճախ վշտացնում էին նրա եգիպտական օգնականներին»: Հենց այդ ժամանակ Քեմպ Դևիդում իր հրաժարականի մասին հայտնեց Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Քամիլը, որն ուղեկցում էր Սադաթին և մասնակցում բանակցություններին, որը նա իրականացրեց Կահիրե վերադառնալուց անմիջապես հետո:

1978 թ. սեպտեմբերի 17–ին Քեմպ Դևիդում ստորագրվեց երկու փաստաթուղթ, որի տակ կար երեք ստորագրություն՝ Անվար Սադաթի և Մենահիմ Բեգինի, որոնք այդ փաստաթղթերը ստորագրել էին համապատասխանաբար հանուն Եգիպտոսի ու Իսրայելի, և ԱՄՆ պրեզիդենտ Ջիմի Կարտերի ստորագրությունը՝ որպես վկա:

Առաջին փաստաթուղթը կոչվում էր «Մերձավոր Արևելքում խաղաղության շրջանակը», իսկ երկրորդը՝ «Եգիպտոսի և Իսրայելի միջև հաշտության պայմանագրի կնքման շրջանակը»:

Առաջին փաստաթղթում սահմանվում էր հինգամյա անցման շրջան Արևմտյան ափի և Ղազայի շրջանում արաբական ինքնավարության հարցը կարգավորելու համար: Առաջարկվում էր հաշտության պայմանագրեր կնքել մի կողմից՝ Իսրայելի, իսկ մյուս կողմից՝ Եգիպտոսի, Հորդանանի, Սիրիայի և Լիբանանի միջև, որի հիմնական կետերն

էին Իսրայելի լրիվ ճանաչում (full recognition), տնտեսական բոյկոտի վերացում և այլն:

Երկրորդ փաստաթուղթը, որը սահմանում էր Եգիպտոսի և Իսրայելի միջև խաղաղության պայմանագրի շրջանակները, նախատեսում էր Իսրայելի զինված ուժերի դուրսբերումը Սինայից, նրան փոխանցվող օդանավակայանների օգտագործումը միայն քաղաքացիական նպատակներով, իսրայելական նավերի ազատ նավարկումը Սուեզի ջրանցքով և այլն:

1979 թ. մարտի 26–ին Վաշինգտոնում ստորագրվեց Եգիպտա–իսրայելական Հաշտության (խաղաղության) պայմանագիրը, որը հիմնականում վերարտադրում էր «Եգիպտոսի և Իսրայելի միջև Հաշտության պայմանագրի կնքման շրջանակը» փաստաթղթի հիմնական դրույթները:

Այսպիսով՝ Եգիպտոսը դարձավ արաբական առաջին պետությունը, որը ճանաչեց Իսրայելին՝ պարտավորվելով հրաժարվել վիճելի հարցերը լուծել պատերազմի կամ պատերազմի սպառնալիքի միջոցով: Նա միակողմանիորեն դուրս եկավ Իսրայելի դեմ համաարաբական պայքարից:

3. Եգիպտոսի մեկուսացումը արաբական աշխարհից և Սադաթի սպանությունը

Քեմպ Դևիդի համաձայնագրերը և եգիպտա–իսրայելական հաշտության պայմանագիրը նոր իրադրություն ստեղծեցին Մերձավոր Արևելքում: Ձևավորվեց նոր փուլ արաբա–իսրայելական առճակատման զարգացման մեջ: Եթե մինչ այդ արաբական բոլոր երկրների պայքարի հիմնական նշանակետը Իսրայելն էր, ապա այժմ նրա կողքին հայտնվեց նաև Եգիպտոսը: Լինում էին պահեր, հատկապես պայմանագրերի ստորագրմանը հաջորդած առաջին շրջանում, երբ թվում էր, թե ատելությունը, հակազդեցությունը և թշնամանքը Եգիպտոսի դեմ արաբական երկրներում գոնե առանձին ուժերի կողմից, երբեմն ավելի ուժեղ էին դրսևորվում, քան Իսրայելի կամ ԱՄՆ–ի դեմ:

Ավելի հստակ դարձավ նաև արաբական երկրների դիրքորոշումը ԱՄՆ–ի նկատմամբ, որին արաբական աշխարհը պատասխանատու էր համարում և մեղադրում քեմպդևիդյան համաձայնագրերի ու եգիպտա–իսրայելական պայմանագրի համար: Նրանք գտնում էին, որ Կար-

տերը խաղաղասերի դիմակի տակ իրականում դարձավ արաբական աշխարհի պառակտողը:

Կարելի է ասել, որ արաբական երկրների դիրքորոշումն այդ պայմանագրերի ու Սադաթի նոր քաղաքական կողմնորոշման հանդեպ եղավ խիստ բացասական: Երկու հարցում էին նրանք մեղադրում Սադաթին:

Առաջին՝ նրանք գտնում էին, որը Սադաթը դիմեց այդ քայլին առանց նախօրոք խորհրդակցելու նրանց հետ: Սադաթի այդ քաղաքականության արդյունքը եղավ այն, որ արաբական աշխարհի ամենազորեղ պետությունը որպես մի սովորական դասալիք դավաճանեց նրանց և լքեց հակահիսրայելական արաբական միասնական ճակատը: Սադաթը մեղադրվում էր այն բանում, որ արաբական համընդհանուր մոտեցումը զոհաբերեց եգիպտա–իսրայելական երկկողմանի հարաբերություններին՝ վերջինս ավելի բարձր դասելով և ավելի կարևոր համարելով առաջինից:

Երկրորդ՝ նրանք դավաճանական որակեցին Սադաթի դիրքորոշումը Պաղեստինի խնդրի լուծման և նրա ապագա կարգավիճակի հարցում, որոնք ամրագրվեցին Քեմպ Դևիդում: Ի հավելումն՝ արաբական երկրների ղեկավարները համոզված էին, որ Իսրայելը չի կատարելու անգամ այն կիսատ–պռատ պարտավորությունները, որ նա Քեմպ Դևիդում վերցրեց իր վրա:

Արաբական երկրների ղեկավարները, քաղաքական տարբեր ուժերը, կուսակցությունները, զինվորականները, սոցիալական տարբեր խավերը դատապարտում էին Սադաթին՝ նրան որակելով որպես դասալիք: Արաբական մամուլը և լրատվական այլ միջոցները ողողված էին հակասադաթական նյութերով, նրան համարում էին դավաճան, բառեր չէին խնայում նրա անձը վիրավորելու և քաղաքականությունը դատապարտելու համար:

Արաբական երկրները դիմեցին նաև հակաեգիպտական որոշակի գործնական քայլերի:

1978 թ. նոյեմբերի 5–ին Բաղդադում կայացավ արաբական երկրների ղեկավարների առաջին հանդիպումը Քեմպ Դևիդում նույն թվականի սեպտեմբերի17–ին ստորագրված եգիպտա–իսրայելական պայմանագրերի ստորագրումից հետո: Նրանք զգուշացրեցին Սադաթին սթափվել ու կանգ առնել, այլևս ոչ մի զիջում չկատարել Իսրայելին: Սակայն անակնկալների քաղաքականության սիրահարը չանսաց Բաղդադից հնչած արաբական առաջնորդների ձայնին և 1979 թ. մարտի 26–ին,

ինչպես նշվեց, ստորագրեց եգիպտա–իսրայելական հաշտության պայմանագիրը: Արաբական երկրները Սադաթի այդ նոր քայլն ընկալեցին որպես մարտահրավեր՝ ուղղված ամբողջ արաբական աշխարհին: Եվ նրանք ընդունեցին այդ մարտահրավերը: 1979 թ. մարտի 31–ին՝ եգիպտա–իսրայելական պայմանագրի կնքումից հինգ օր անց, արաբական երկրների որոշումով կախակայվեց Եգիպտոսի անդամակցությունը Արաբական պետությունների լիգային: Նրա շտաբ–կայանը բոլոր ստորաբաժանումներով հանդերձ տեղափոխվեց Թունիս: Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղարի պաշտոնը, ավանդույթի համաձայն, միշտ զբաղեցնում էր Եգիպտոսի ներկայացուցիչը: Այժմ Եգիպտոսը զրկվեց այդ առանձնաշնորհումից: Արաբական երկրները խզեցին դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի հետ, չեղյալ հայտարարեցին կամ սառեցրին տարբեր բնագավառներում Եգիպտոսի հետ համագործակցության վերաբերյալ մի շարք համաձայնագրեր և այլն: Սառեցվեց Եգիպտոսի անդամակցությունը նաև Իսլամական կոնֆերանս կազմակերպությունում և այլն:

Այսպիսով՝ Եգիպտոսը հայտնվեց մեկուսացման մեջ արաբական աշխարհում: Այդ իրողությունից ոչ ոք չէր շահում, քանի որ դրանից տուժում էր ոչ միայն Եգիպտոսը, այլև արաբական բոլոր երկրները, որովհետև, ինչպես արդեն նշվել է, արաբական ամենաուժեղ պետության հեռանալը արաբական շարքերից հարվածում էր նաև բոլոր արաբական երկրներին, թուլացնում նրանց դիրքերը և նվազեցնում արաբա–իսրայելական առճակատման հարցում հաջողության հասնելու նրանց հնարավորությունները:

Քեմպդևիդյան համաձայնագրերը և եգիպտա–իսրայելական հաշտության պայմանագիրն անմիջական ազդեցություն ունեցան Սադաթի քաղաքական ճակատագրի վրա: Դա թուլացրեց նրա դիրքերը և նպաստեց նրա հեղինակության անկմանը երկրի ներսում: Դրան նպաստեցին նաև Եգիպտոսի տնտեսական վիճակի վատացումը և բռնությունների այն ալիքը, որ 1981 թ. սեպտեմբեր ամսին լայնորեն ծավալվեց Եգիպտոսում: Զանգվածային բռնությունները այլախոհների, ղպտիների, ինչպես նաև «Մուսուլման եղբայրների» նկատմամբ, որ կիրառեց Սադաթը, արագացրեց նրա անկումը: Եգիպտացիների ավելի ու ավելի լայն խավեր էին երես թեքում նրա կառավարման ոճից, նրա անկանխատեսելի լինելուց և անսպասելի քայլերից:

1981 թ. հոկտեմբերի 6–ին Կահիրեում զինվորական շքերթ էր 1973 թ. հոկտեմբերի 6–ին՝ արաբա–իսրայելական չորրորդ պատերազմի ժամանակ, եգիպտական զորքերի կողմից Սուեզի ջրանցքը հաջողությամբ անցնելու 8–րդ տարեդարձի կապակցությամբ: Զինվորական շքերթն ընդունում էր Եգիպտոսի պրեզիդենտ, Եգիպտոսի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար Անվար Սադաթը: Երբ զինվորականներն անցնում էին ամբիոնի առջևից, նրանցից անջատվեց մի խումբ, որը նռնակներ նետեց ամբիոնում կանգնած Սադաթի կողմը և կրակ բացեց հրացաններից նրա վրա: Պրեզիդենտը զոհվեց:

Այդպես ավարտվեց Անվար Սադաթի կյանքի ուղին: Նրա սպանությամբ փակվեց Եգիպտոսի ժամանակակից պատմության կարևոր գլուխներից մեկը:

Սադաթի դարաշրջանի և նրա գործունեության ու քաղաքականության մասին գոյություն ունեն միանգամայն իրարամերժ կարծիքներ և գնահատականներ: Խորհրդային պատմագիտությունը միահամուռ կերպով բացասական է գնահատել նրա գործունեությունը՝ սխալ համարելով նրա կողմից Նասերի քաղաքականության սկզբունքներից հեռանալը, Քեմպ Դևիդի համաձայնագրերի կնքումը և Եգիպտոսի մերձեցումը Իսրայելի հետ: Խորհրդային որոշ հետազոտողներ ոչ մի արդարացում չեն գտնում նրա այդ քաղաքականության համար: Նրանք Սադաթի՝ որպես պետական գործչի գնահատականին մոտենում են նաև Խորհրդային Միություն — ԱՄՆ փոխհարաբերությունների տեսանկյունից մի դարաշրջանում, որը պատմության մեջ մտել է որպես սառը պատերազմի դարաշրջան: Այդ շրջանում ամեն մի քայլ, որը նպաստում էր ԱՄՆ–ի դիրքերի ամրապնդմանը, խստորեն դատապարտվում և քարկոծվում էր խորհրդային կողմից: Իսկ Սադաթը եղավ Եգիպտոսի այն պրեզիդենտը, որը հեռացավ Խորհրդային Միությունից և բարեկամական հարաբերություններ հաստատեց ԱՄՆ–ի հետ: Նման գործիչը չէր կարող դրական գնահատականի արժանանալ խորհրդային պատմագիտության կողմից:

Նրա մասին, ինչպես նշել ենք, մերժողական տեսակետն էր տիրապետում նաև արաբական իրականության մեջ, այդ թվում և պատմագիտության բնագավառում:

Նրա նախկին գործընկերները, որոնք այնուհետև հեռացան նրանից, ինչպես արտաքին գործերի նախարար Քամիլը, Սադաթին համարում են «փոփոխական, քմահաճ», որը չէր սիրում նախօրոք խորհրդակ-

ցել: Եգիպտոսի մեկ այլ արտաքին գործերի նախարար՝ Իսմայիլ Ֆահմին, որն աշխատել է Սադաթի հետ, անդրադառնալով նրա Երուսաղեմ այցին, նշում է, որ «նա թույլ տվեց, որ իսրայելցիները պարզապես իրեն օգտագործեն, մինչև որ հայտնվեց մի այնպիսի դրության մեջ, երբ պետք է ընդուներ, որ ինքը կա՛մ սխալ է գործել, կա՛մ Իսրայելի հետ ստորագրեր անջատ խաղաղություն՝ Իսրայելի պայմանների հիման վրա»: Նա նույնպես Սադաթին համարում է փոփոխական՝ ընդունակ կատարելու անկանխատեսելի քայլեր՝ ուշադրություն չդարձնելով ռիսկի վրա: Իսրայելի հետ անջատ հաշտության համար Սադաթին խիստ քննադատում է Եգիպտոսի հեղինակավոր քաղաքական գործիչ, «Ալ–Ահրամ» ազդեցիկ թերթի խմբագիր Մուհամմադ Հասանեյն Հեյքալը:

Հետաքրքիր է նաև գեներալ Սաադ Շազլիի կարծիքը: Դա հետաքրքիր է այնքանով, որ նա 1973 թ. պատերազմի ժամանակ Սուեզի ջրանցքն անցած և ռազմական առաջին՝ թեկուզ և սահմանափակ հաղթանակի պտուղները ճաշակած զորքերի հրամանատարն էր: Նա իր դժգոհությունն է հայտնում այն կապակցությամբ, որ Սադաթը «քաղաքականապես միջամտեց լավ պլանավորված ռազմական գործողություններին», որի արդյունքում, ինչպես նշում է նա, իսրայելական զորքերը կարողացան հետ անցնել Սուեզի ջրանցքը և շրջափակման մեջ վերցնել եգիպտական երրորդ բանակը: Շարունակելով իր դատողությունները՝ գեներալը գրում է. «Պրեզիդենտն անուշադրության մատնեց ամենամեծ բանակը, որ երբևիցե ունեցել էր Եգիպտոսը»:

Ինչ վերաբերում է արևմտյան, մասնավորապես ամերիկյան պատմագիտությանը, ապա նա առաջին օրվանից գովաբանում և փառաբանում էր Սադաթին՝ նրան համարելով խիզախ, ավելի հեռուն տեսնող և լայնախոհ արաբական պետական գործիչ:

Սակայն վերջին տարիներին ավելի ու ավելի են հանդիպում նոր մոտեցումներ, այդ թվում և ռուսական պատմագիտության մեջ, որոնք անվերապահորեն պաշտպանում են Սադաթի քաղաքականությունը բոլոր հարցերում՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության բնագավառում: Այդ տեսակետի ամենաբնորոշ արտահայտություններից մեկն է հանդիսանում Լ. Վասիլևի կարծիքը, որը տեղ է գտել նրա «Արևելքի պատմությունը» աշխատության երկրորդ հատորում: «Եգիպտոսի ճկուն արտաքին քաղաքականությունը,— գրում է նա,— դուր չեկավ շատ արաբական երկրների, որոնք մեղադրում էին Սադաթին այն բանի համար, որ նա դավաճանել է պաղեստինցիների շահերին: Ինչպես

հայտնի է, այդ երկրներից շատերը խզեցին դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի հետ, կախակայվեց նրա անդամակցությունը Արաբական երկրների լիգայում: Բայց Եգիպտոսը չզիջեց: Ժամանակը ցույց տվեց, որ Իսրայելի հետ խաղաղություն փնտրելու Սադաթի ընտրած քաղաքականությունն իրեն արդարացրեց, և դա, ի վերջո, հարկադրված էին ընդունել նախկինում նրան դատապարտող արաբական երկրները»:

Ընդունելով հանդերձ նոր մոտեցման անհրաժեշտությունը Սադաթի անձի և քաղաքականության հանդեպ՝ միաժամանակ չպետք է ընկնել չափազանցության մեջ, մանավանդ այնպիսի խիստ վիճելի հարցում, ինչպիսին «նախկինում նրան դատապարտող արաբական երկրների» գնահատականի փոփոխությունն:

XI. ԵԳԻՊՏՈՍԸ XX ԴԱՐԻ ՎԵՐՋՈՒՄ ԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ: ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

1. Հուսնի Մուբարակը Եգիպտոսի նոր պրեզիդենտ

1981 թ. հոկտեմբերի 6–ին, երբ զինվորական շքերթի ժամանակ «Ալ–Թակֆիր վա ալ–Հիջրա» մուսուլմանական գաղտնի կազմակերպությանը պատկանող զինվորականների նռնակներից և հրացաններից արձակած գնդակներից զոհվեց պրեզիդենտ Սադաթը, միաժամանակ վիրավորվեցին մի շարք պետական գործիչներ, որոնք այդ պահին գտնվում էին ամբիոնում: Նրանց թվում էր Եգիպտոսի վիցեպրեզիդենտ Հուսնի Մուբարակը, որը կանգնած էր պրեզիդենտի կողքին: Ստացած վերքերը թեթև էին և նրա կյանքին ոչ մի վտանգ չէին սպառնում[12]:

1981 թ. հոկտեմբերի 14–ին վերքերը դեռևս չբուժած Հուսնի Մուբարակը ստանձնեց Եգիպտոսի պրեզիդենտի պարտականությունները:

Ո՞վ էր նա:

12 Տարածված է այն տեսակետը, որ Մուբարակը ահաբեկչության պահին գտնվում էր Սադաթից ընդամենը 10 սմ հեռավորության վրա, և որ ահաբեկիչները, նախքան կրակ բացելը Սադաթի վրա, իբրև թե բղավել են և զգուշացրել Հուսնի Մուբարակին կռանալ:

Այդ հարցը տեղին է, քանի որ, ի տարբերություն Անվար Սադաթի, որը եղել էր «Ազատ սպաներ» կազմակերպության անդամ, 1952 թ. հուլիսյան հեղափոխության կազմակերպիչներից մեկը նախքան պրեզիդենտ դառնալը գրավել մի շարք պետական բարձր պաշտոններ և այդ պատճառով հայտնի էր եգիպտական և արաբական հասարակայնության ամենալայն շրջաններին, Հուսնի Մուբարակի կյանքի ուղին միանգամայն այլ էր եղել, և նա չուներ այնպիսի լայն ճանաչում, ինչպես իր նախորդը:

Նա ծնվել է 1928 թ. Եգիպտոսի Մենուֆիյա նահանգում, որը գտնվում է Նեղոսի դելտայում, դատական աշխատողի ընտանիքում: Դպրոցն ավարտելուց հետո նա ընդունվում է Եգիպտոսի ռազմաօդային ուժերի զինվորական ակադեմիան, որը հաջողությամբ ավարտում է 1950 թ. և ստանում բակալավրի գիտական աստիճան: 1950–1954 թթ. նա ծառայում է Եգիպտոսի ռազմաօդային ուժերում՝ որպես մարտական օդաչու, ապա դասավանդում ռազմաօդային ուժերի ակադեմիայում՝ հետագայում դառնալով նրա գլխավոր տնօրենը: Մուբարակի կենսագրության մեջ կա մի հետաքրքիր էջ: 1964 թ. նա սովորելու է մեկնում Խորհրդային բանակի շտաբի Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, որտեղ նա սովորում է մեկ տարուց ավելի և ապա վերադառնում Կահիրե՝ կրկին ստանձնելով Եգիպտոսի ռազմաօդային ուժերի ակադեմիայի տնօրենի պաշտոնը: 1969 թ. նա նշանակվում է Եգիպտոսի ռազմաօդային ուժերի շտաբի պետ և ստանում վիցեմարշալի զինվորական աստիճան: 1973 թ. հոկտեմբերյան արաբա–իսրայելական պատերազմի ժամանակ՝ նրա նախնական փուլում, Եգիպտոսի ռազմաօդային ուժերը նրա հրամանատարությամբ գործում են հաջողությամբ և ապահովում եգիպտական զորքերի անցումը Սուեզի ջրանցքով: 1973 թ. նա Եգիպտոսի ռազմաօդային ուժերի հրամանատարն էր, և նրան շնորհվում է ավիացիայի մարշալի զինվորական բարձրագույն աստիճան: Երկու տարի անց՝ 1975 թ. ապրիլին, նա դառնում է Եգիպտոսի վիցեպրեզիդենտ: Նա միաժամանակ նշանակվում է կառավարող Ազգային ժողովրդավարական կուսակցության նախագահի տեղակալ, որի առաջնորդն էր Անվար Սադաթը:

Կարելի է ասել, որ նրա առաջընթացը պաշտոնավարության աստիճանակարգով տեղի է ունեցել բավականին արագ և առանց ցնցումների ու դրամատիկական պահերի:

Հուսնի Մուբարակը դարձավ **Եգիպտոսի հանրապետության չորրորդ պրեզիդենտը:**

2. Հուսնի Մուբարակի ներքին քաղաքականությունը: Իմպրովիզացիայից՝ հանկարծաստեղծումից՝ հավասարակշռված քաղաքականություն

Մուհամմադ Հուսնի Մուբարակը Անվար Սադաթից ժառանգություն ստացավ որոշակի սկզբունքների վրա հիմնված պետական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և հասարակական մի կառուցվածք, որն արդեն արմատներ էր արձակել երկրի ներսում: Ճիշտ է, դրա վերաբերյալ կային տարբեր կարծիքներ, վիճաբանություններ էին գնում երկրի ներսում և դրսում, կար քաղաքական ու կրոնական ընդդիմություն և այլն, այդուհանդերձ, այդ համակարգը գործում էր, և երկրի ավելի ու ավելի լայն խավեր էին համակերպվում դրա հետ:

Դառնալով պրեզիդենտ՝ Հուսնի Մուբարակը կանգնեց այդ համակարգն ամբողջությամբ ընդունելու և նրա հիմքի վրա երկիրը կառավարելու կամ նրանից հրաժարվելու և նոր համակարգ ստեղծելու երկընտրանքի առջև: Ի տարբերություն իր նախորդի, որը սկզբունքորեն հրաժարվեց նասերական ժառանգությունից, հասարակության, տնտեսության և պետության վերաբերյալ Նասերի հիմնադրույթներից, և եգիպտական հասարակության զարգացումը տարավ այլ ուղիով՝ հիմնված այլ սկզբունքների վրա՝ Հուսնի Մուբարակը չգնաց այդ ճանապարհով:

Նա հիմնական գծերով պահպանեց այն ժառանգությունը, որ ստացավ իր նախորդից, և փոփոխության ենթարկեց այնքանով և այն ժամանակ, որքանով և երբ դա պահանջում էին նոր ժամանակները և նոր պայմանները:

Նա Սադաթից տարբերվում էր մեկ այլ կարևոր հարցում ևս:

Ի տարբերություն իր նախորդի իմպրովիզացիայի՝ հանկարծաստեղծման քաղաքականության, որի վիրտուոզ կատարողն էր նա, Մուբարակը նախընտրում է հավասարակշռված և սթափ քաղաքականությունը, որի մեջ տեղ չի մնում անակնկալների, անսպասելի շրջադարձերի և հանպատրաստից գործողությունների համար: Դա նրա ոճը չէ: Նրանք, ովքեր աշխատում են Եգիպտոսի նոր պրեզիդենտի հետ և հատուկ ուսումնասիրել են նրա կյանքը և գործունեությունը, հավաստում են, որ Հուսնի Մուբարակին բնորոշ են ռացիոնալիզմը, նույնիսկ զգուշավորությունը, հարցերի մեջ հիմնովին խորամուխ լինելը և ցուցադրական ռիսկի դիմելու ժխտումը: Նրա բնավորության այդ գծերը և աշխա-

տառոը մեծ հեղինակություն բերեցին նրան և բարձրացրին Եգիպտոսի՝ որպես հուսալի գործընկերոջ վարկը:

Հուսնի Մուբարակի պրեզիդենտության շրջանում նոր զարգացում ստացան **շուկայական–կապիտալիստական հարաբերությունները:** Հաջողությամբ շարունակվեց ձեռնարկությունների և ծառայությունների սեփականաշնորհումը, մասնավոր սեկտորն ավելի ամրապնդեց իր դիրքերը երկրի տնտեսության մեջ: Դրան նպաստում է իշխանությունների քաղաքականությունը ներդրումների հարցում: Եգիպտոսի կառավարությունը խրախուսում է նախ և առաջ տեղական, ապա՝ արաբական, հետո նոր օտարերկրյա կապիտալի ներդրումները երկրի տնտեսության մեջ: Աշխուժացավ և խորացավ համագործակցությունը Համաշխարհային բանկի և Միջազգային արժութային հիմնադրամի հետ, որոնք խրախուսում են տնտեսական բարեփոխումները Եգիպտոսում և ֆինանսավորում դրանք: Զգալի է նաև ԱՄՆ–ի ֆինանսական օգնությունը՝ 1979 թ. սկսած մինչև 2005 թ. ներառյալ. տարեկան 2,2 մլրդ ԱՄՆ դոլար:

Եգիպտոսն ունի ֆինանսավորման մեկ այլ աղբյուր ևս: Արտասահմանում, գլխավորապես Սաուդյան Արաբիայում, ԱՄԷ–ում և Ծոցի մյուս երկրներում, Եվրոպայում աշխատում են 5 մլն–ից ավելի եգիպտացիներ, որոնք ամեն տարի բավականին մեծ գումարներ են փոխանցում Եգիպտոս:

Այդ ամենը նպաստեց տնտեսական զարգացման տեմպերի աճին: Դա առանձնահատուկ նշանակություն ունի Եգիպտոսի համար, որի բնակչությունը 2005 թ. արդեն հասնում էր 77 միլիոնի, որտեղ բնակչության տարեկան աճը աշխարհում ամենաբարձրերից է, և որտեղ, դարձյալ 2005 թ. տվյալներով, յուրաքանչյուր տարի ծնվում է 1,5 մլն եգիպտացի: Իսկ դա նոր խնդիրներ է դնում բնակչությանը աշխատանքով, սնունդով և համապատասխան սպասարկություններով և ծառայություններով ապահովելու գործում: 1990–ական թվականներին տնտեսական տարեկան աճը կազմել է միջինը 5%, որը վատ ցուցանիշ չէ Եգիպտոսի նման երկրների համար: Այդ ցուցանիշներն ավելի բարելավված ձևով պահպանվել են նաև 2000 թվականների սկզբներին: Բայց այստեղ կարևորն այն է, որ այդ տարիներին հաջողվեց հասնել բնակչության աճի որոշ նվազման. այն իջավ տարեկան մինչև 2,2%–ի, թեև դա նույնպես փոքր թիվ չէ:

Հայտնի է, որ Եգիպտոսն աշխարհում գրավում է առաջին տեղը բարձրորակ բամբակի արտադրության գծով: Եգիպտոսի կառավարու-

թյունը տնտեսության այդ ճյուղի զարգացումը պահում է իր ուշադրության կենտրոնում: 1997 թ. կառավարությունը հաստատեց «Նոր հովիտ» ծրագիրը որով նախատեսվում էր Արևմտյան Եգիպտոսում լրացուցիչ ոռոգել 1,4 մլրդ հա հողատարածություն: Իրականացվում են տնտեսական զարգացման այլ ծրագրեր ևս, որոնք նպատակաուղղված են նոր հողատարածքների յուրացմանը, ոռոգելի հողերի ընդարձակմանը և արդյունաբերական գոտիների ստեղծմանը: Հաստատված է 25 նման գոտիների ստեղծման ծրագիրը, և աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ:

Սակայն կան նաև դժվարություններ ու բարդություններ տնտեսական ոլորտում, մանավանդ հարկերի, մաքսերի գանձման, ֆինանսավորման և ներդրումների նոր աղբյուրների հայթայթման, եգիպտական դրամի կայունացման, սղաճի և այլ հարցերում: Այդ պատճառով քայլեր են ձեռնարկվում՝ արագացնելու բարեփոխումները և խթանելու օտարերկրյա կապիտալի ներհոսքը Եգիպտոս: 2004 թ. սեպտեմբերին իրականացվեցին մաքսային ռեֆորմներ, մտցվեցին կարևոր փոփոխություններ եկամտահարկի և ընդհանրապես հարկերի գանձման բնագավառում և այլն:

Տնտեսության կարևոր, առաջատար և եկամտաբեր ճյուղի վերածվեց զբոսաշրջիկությունը: Փարավոնյան ժամանակներից և միջնադարից մնացած հիասքանչ պատմական կոթողները և հուշարձանները, ծովափնյա գրավիչ վայրերը և բարձր սպասարկումը մագնիսի նման յուրաքանչյուր տարի Եգիպտոս են ձգում միլիոնավոր զբոսաշրջիկների:

Հուսնի Մուբարակը հավատարիմ մնաց հավասարակշռված քաղաքականության իր սկզբունքներին նաև Եգիպտոսի **պետական կառավարման ոլորտում:** Այստեղ նույնպես բացառելով որևէ ցնցումային քայլ և կասկածելի թռիչքաձև փոփոխություն՝ նա ոչ միայն ինքը չի դիմում նման քայլերի, այլև աշխատում է ամեն կերպ փակել նման իրադրություն ծնող բոլոր աղբյուրները, երկրի զարգացումը տանել հիմնական օրենքի՝ Եգիպտոսի սահմանադրության նորմերին համապատասխան և էվոլյուցիոն ճանապարհով:

Եգիպտոսի սահմանադրությունը հաստատվել էր 1971 թ. սեպտեմբերի 11–ին և փոփոխության ենթարկվել 1980 թ. մայիսի 22–ին: Անվար Սադաթը շատ բան չհասցրեց անել փոփոխված սահմանադրության հիման վրա, որովհետև դրա հաստատումից համարյա մեկ տարի անց նա սպանվեց: Ուստի պետական բոլոր կառույցների ձևավորումը և

նրանց աշխատանքների կազմակերպումն ըստ փոփոխված սահմանադրության ընկան Հոսնի Մուբարակի ուսերին:

1980 թ. մայիսի 22–ի սահմանադրությունը Եգիպտոսում հաստատեց կիսապրեզիդենտական պետական կարգ, որի համաձայն գործադիր իշխանությունը կիսվում էր պրեզիդենտի և վարչապետի միջև: Հոսնի Մուբարակը չփորձեց փոխել այդ կարգը և ընդլայնել պրեզիդենտի լիազորությունները:

Պրեզիդենտը պետության ղեկավարն է ու զինված ուժերի գլխավոր հրամանատարը: Նա է նշանակում վարչապետին:

Պրոզիդենտն ընտրվում է վեց տարի ժամանակով ժողովրդական ժողովի կողմից՝ ձայների երկու երրորդով, և այնուհետև դրվում համաժողովրդական հանրաքվեի: Նա համարվում է ընտրված, եթե ստանում է հանրաքվեին մասնակցածների ձայների մեծամասնությունը:

Պրեզիդենտի վերընտրության սահմանափակում չկա: Հոսնի Մուբարակը 1981 թ–ից պրեզիդենտ է ընտրվել հինգ պարբերաշրջան՝ վերջին անգամ՝ 2005 թ. սեպտեմբերին 7–ին: Եգիպտոսում պրեզիդենտի ընտրությունների ժամանակ սովորաբար միայն մի թեկնածություն է առաջադրվում: 2005 թ. փետրվարին փոփոխության ենթարկվեց պրեզիդենտի ընտրության մասին օրենքը, ըստ որի թույլատրվեց պրեզիդենտական ընտրություններին մասնակցել մի քանի թեկնածուների: 2005 թ. սեպտեմբերի 7–ին կայացած պրեզիդենտական ընտրությունների ժամանակ Եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ առաջադրվեցին մի քանի թեկնածուներ: Ձայների բացարձակ մեծամասնությամբ հաղթանակեց Հոսնի Մուբարակը:

Պրեզիդենտը կանխագծում և որոշում է երկրի զարգացման, ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները և հետևում նրանց կատարմանը:

Կառավարությունը երկրի գլխավոր վարչական օրգանն է, որն իրականացնում է պրեզիդենտի կանխագծումները, որոշումները և հանձնարարականները: Կառավարությունը գլխավորում է վարչապետը, որի վրա դրված են նաև կառավարության գործունեության վրա հսկողության իրականացումը:

Եգիպտոսն այն քիչ երկրներից է, որը պառլամենտարիզմի բավականին հարուստ փորձ ունի: Առաջին անգամ Եգիպտոսում պառլամենտ ստեղծվել է 1866 թ.: Այդ ժամանակվանից մինչև օրս Եգիպտոսն ունեցել

է 32 պառլամենտ և կիրառել պառլամենտական յոթ համակարգ: Դեպուտատների քանակը տատանվել է 75–458–ի միջև:

1980–ական թվականներից մինչև օրս Եգիպտոսի պառլամենտները ձևավորվել են 1980 թ. փոփոխության ենթարկված սահմանադրության հոդվածների համաձայն:

Պառլամենտը երկրի բարձրագույն օրենսդիր մարմինն է: Նրա իրավասությունների մեջ են մտնում ընդհանուր քաղաքականության, նոր օրենքների, բյուջեի, տնտեսական և պետական նշանակություն ունեցող պլանների հաստատումը:

Պառլամենտը կազմված է երկու պալատներից՝ Ազգային ժողովից՝ Մաջլիս ալ–Շաաբ, և Խորհրդատվական խորհրդից՝ Մաջլիս ալ–Շուրա:

Ազգային ժողովը բաղկացած է 454 դեպուտատներից, որոնցից 444–ին ընտրում է ժողովուրդը, իսկ 10–ին նշանակում պրեզիդենտը:

Ինչ վերաբերում է Մաջլիս ալ–Շուրային, ապա այն կարող է Ազգային ժողովին միայն խորհուրդներ տալ, նրա քննարկմանը ներկայացնել զանազան առաջարկություններ, օրենքներ և այլն:

Հուսնի Մուբարակի շրջանում ոչ միայն պահպանվեց բազմակուսակցական համակարգը, այլև ավելի ընդլայնվեց: 1990–ականների վերջերին և 2000–ականների սկզբներին Եգիպտոսում գործում են տարբեր ուղղությունների պատկանող 17 քաղաքական կուսակցություններ: Արգելված են միայն կրոնական հիմքի վրա ձևավորված քաղաքական կուսակցություններ:

2005 թ. գործող կուսակցություններից ամենանշանավորներն են Ազգային ժողովրդավարական կուսակցությունը, որը համարվում է կառավարող կուսակցություն և որի նախագահն է պրեզիդենտ Հուսնի Մուբարակը, Նասերական արաբական ժողովրդավարական կամ Նասերականների կուսակցությունը, որը գլխավորում է Զիյա ադ–Դին Դաուդը, Նոր Վաֆդ կուսակցությունը, Ազգային առաջադիմական յունիոնիստական միությունը, Վաղվա կուսակցությունը և այլն:

Այդուհանդերձ, Եգիպտոսում առկա են զանազան սահմանափակումներ և այլ հիմնախնդիրներ, որոնց վերաբերյալ իրենց մտահոգությունն են հայտնում զանազան միջազգային դիտորդ կազմակերպություններ, մանավանդ մարդու իրավունքների պաշտպանության դիտորդները, որոնք մտահոգ են Եգիպտոսում խոսքի ազատության պահպանման վերաբերյալ՝ արձանագրելով խախտումներ այդ բնագավա-

ռում: Նրանք քննադատում են Եգիպտոսի կառավարությանը՝ ընտրություններին իշխանությունների միջամտելու համար և այլն:

Հուսնի Մուբարակին, շնորհիվ իր հավասարակշռված քաղաքականության, զգուշավորության և հապճեպ որոշումներ ընդունելուց խուսափելու, ընդհանուր առմամբ հաջողվել է երկիրը զերծ պահել ցնցումներից և ապահովել ներքաղաքական կայունությունը:

XX դարի վերջին տասնամյակներում ուժեղացավ իսլամական ֆունդամենտալիզմը և նրա սկզբունքների վրա ծնավորված ու գործող զանազան իսլամիստական կուսակցությունները: Նրանց գործունեության մեջ գլխավոր տեղերից մեկը գրավել է ահաբեկչությունը: Այդ գլոբալ գործընթացից զերծ չմնաց նաև Եգիպտոսը, որտեղ կրկին ակտիվացել են ոչ միայն «Մուսուլման եղբայրները», այլև այլ կազմակերպություններ, ինչպես՝ Իսլամական ջիհադը և այլն: Նրանք իրագործել են բազմաթիվ ահաբեկչական գործողություններ, որոնք խլել են բազմաթիվ մարդկանց կյանք: Նրանց հարձակումների թիրախ են հանդիսանում հատկապես օտարերկրյա զբոսաշրջիկներն ու զբոսաշրջիկության կենտրոնները, ինչպես Շարմ աշ–Շեյխը: Ամբողջ աշխարհը ցնցեց 2005 թ. հուլիսին կայացած ահաբեկչությունը Շարմ աշ–Շեյխում, որի զոհը դարձան մեծ թվով մարդիկ: Դրանով ծանր հարված հասցվեց Եգիպտոսի զբոսաշրջիկության ինդուստրիային:

Եգիպտական կառավարությունը հետևողական պայքար է մղում ահաբեկչության դեմ, հետապնդում ահաբեկչական կազմակերպությունների գործունեությունը, ձերբակալում և բանտերը նետում նրանց մասնակիցներին:

3. Եգիպտոսի արտաքին քաղաքականությունը: Վերադարձ արաբական ընտանիք

Եգիպտական կառավարությունը Հուսնի Մուբարակի պրեզիդենտության շրջանում հավասարակշռված քաղաքականություն էր վարում նաև արտաքին հարաբերությունների ոլորտում: Նա շարունակեց բարեկամական հարաբերությունների պահպանումը և խորացումը ԱՄՆ–ի հետ, որոնք համագործակցում են տարբեր ասպարեզներում, մասնավորապես մերձավորարևելյան, այդ թվում և պաղեստինյան հիմնախնդիրների լուծման բնագավառում: Այդ ասպարեզներում մեծ է Եգիպտոսի դերակատարումը, և ԱՄՆ–ը հաշվի է առնում Եգիպտոսի կարծիքը:

Նրանց հարաբերություններն ավելի սերտացան, երբ Եգիպտոսը դատապարտեց Իրաքի 1990 թ. ագրեսիան Քուվեյթի դեմ և միացավ ԱՄՆ–ի գլխավորած երկրների կոալիցիային՝ ընդդեմ Իրաքի և ի պաշտպանություն Քուվեյթի: Դա ոչ միայն նպաստեց եգիպտա–ամերիկյան հարաբերությունների սերտացմանը, այլև պատճառ դարձավ, որը ԱՄՆ–ը չեղյալ հայտարարի Եգիպտոսի՝ մի քանի միլիարդների հասնող պարտքը:

Հոսնի Մուբարակը կարգավորեց հարաբերությունները նաև Խորհրդային Միության, իսկ նրա փլուզումից հետո՝ Ռուսաստանի հետ: Վերսկսվեց համագործակցությունը երկու երկրների միջև տարբեր բնագավառներում, որոնք խաթարվել էին Սադաթի օրոք: Իհարկե, դրանք չհասան նախկին մակարդակին, այդուհանդերձ, հարաբերությունների նորմալացումը Ռուսաստանի հետ եգիպտական դիվանագիտության հաջողություններից մեկն էր:

Ակտիվացավ Եգիպտոսի գործունեությունը ՄԱԿ–ի շրջանակներում: 1991–1996 թթ. ՄԱԿ–ի գլխավոր քարտուղարի պաշտոնը զբաղեցնում էր Եգիպտոսի նախկին պետական նախարար, փոխվարչապետ Բուտրոս Բուտրոս–Ղալին, որը վկայում է Եգիպտոսի միջազգային հեղինակության մասին:

Եգիպտոսի արտաքին քաղաքականության կարևոր բնագավառներից մեկը շարունակում են մնալ հարաբերությունները Իսրայելի հետ: Քեմպդևիդյան համաձայնագրերից և եգիպտա–իսրայելական պայմանագրի ստորագրումից հետո դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Եգիպտոսի և Իսրայելի միջև՝ դեսպանների մակարդակով: Իսրայելական դեսպանություն բացվեց Կահիրեում, և եգիպտական դեսպանություն՝ Թել Ավիվում: Ավարտվեց իսրայելական զորքերի դուրսբերումը Սինայի թերակղզուց և Եգիպտոսի ինքնիշխանության վերականգնումը Սինայի վրա:

Հոսնի Մուբարակը շարունակեց Իսրայելի հետ հարաբերությունները նորմալ մակարդակի վրա պահելու Սադաթի քաղաքականությունը՝ առանց, սակայն, վերջինիս թատերական ժեստերի:

Հոսնի Մուբարակի պրեզիդենտության շրջանում՝ 1981–2005 թթ., չստորագրվեց որևէ նոր սկզբունքային պայմանագիր Եգիպտոսի և Իսրայելի միջև: Սակայն Եգիպտոսի կողմից փոխվեցին շեշտադրությունները: Հոսնի Մուբարակը կարևոր է համարում ոչ թե նոր պայմանագրերի կնքումը կամ նոր դեկլարացիաների ընդունումը, այլ արդեն կնքված պայմանագրերով ձեռք բերված պայմանավորվածությունների

հետևողական կենսագործումը: Նա շեշտը դնում է պրակտիկ քայլերի վրա թե՛ երկկողմանի եգիպտա–իսրայելական հարաբերությունների և թե՛ պաղեստինյան ու համընդհանուր արաբական հիմնախնդիրների առնչությամբ, թեև արաբական երկրները խզել էին դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի հետ: Սակայն Հուսնի Մուբարակը դրան ուշադրություն չէր դարձնում, նա ավելի հեռուն էր նայում: Ուշագրավ է նաև այն պարագան, որ Հուսնի Մուբարակը 1981–2005 թթ. իր պրեզիդենտության մոտ 25 տարիների ընթացքում, ոչ մի անգամ չայցելեց Իսրայել, չնայած վերջինիս ղեկավարության բազմաթիվ պաշտոնական հրավերներին, որոնցից նա կարողանում էր հնարամտորեն խույս տալ: Նա չմեկնեց Թել Ավիվ և Կահիրե չհրավիրեց իսրայելական կառավարության կամ պետության ղեկավարներին:

Հուսնի Մուբարակի այս լավ հաշվարկված դիրքորոշումը նկատվեց և բարձր գնահատվեց արաբական աշխարհում, որն ազդեց Եգիպտոսի նկատմամբ նրանց հետագա քաղաքականության վրա՝ դրա փոփոխության իմաստով: Այդ փոփոխությանը նպաստեց նաև արաբական երկրների ղեկավարների կողմից այն իրողության գիտակցումը, որ նրանց չի հաջողվի առանց Եգիպտոսի՝ արաբական ամենաուժեղ, ազդեցիկ և հեղինակավոր պետության մասնակցության հասնել արաբական աշխարհի առջև կանգնած հիմնախնդիրների, այդ թվում և պաղեստինյան հարցի լուծմանը: Նրանք ավելի ու ավելի էին գիտակցում, որ Եգիպտոսի քաղաքական վտարումը արաբական ընտանիքից թուլացնում է բոլոր արաբական երկրների դիրքերը հատկապես մերձավորարևելյան տարածաշրջանում: Ու նրանց մոտ աստիճանաբար հասունանում է Եգիպտոսի հետ հարաբերությունները կարգավորելու և նրան արաբական ընտանիք վերադարձնելու գաղափարը: Դրանում իր որոշակի դերակատարումն ունեցավ նաև այն հանգամանքը, որ 1980–1988 թթ. իրանա–իրաքյան պատերազմի ընթացքում Եգիպտոսը պաշտպանում էր Իրաքին և նրան ցույց տալիս բազմատեսակ օգնություն, այդ թվում և ռազմական:

Այդ նոր միտումներն իրենց մարմնավորումը գտան 1987 թ. նոյեմբերին Հորդանանի մայրաքաղաք Ամանում կայացած արաբական երկրների ղեկավարների գագաթնաժողովում, որի գումարման և եգիպտանպաստ համապատասխան որոշումների ընդունման մեջ մեծ դեր խաղաց Հորդանանի թագավոր Հուսեյնը: Քննարկելով Եգիպտոսի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման և նրան արաբական շարքերը վերադարձնելու հարցը՝ գագաթնաժողովն ընդունեց

հետևյալ բանաձևը. «Մանրազնին և եղբայրաբար քննարկումից հետո նրանք գտնում են, որ դիվանագիտական հարաբերությունները Արաբական լիգայի անդամ որևէ երկրի և Եգիպտոսի միջև ինքնիշխան գործողություն է, որը պետք է որոշի յուրաքանչյուր երկիր՝ համաձայն իր սահմանադրության և օրենքների, և չի գտնվում Արաբական լիգայի իրավասությունների ոլորտում»:

Ամանի այդ կարևոր որոշումից անմիջապես հետո արաբական ինը պետություն՝ Արաբական Միացյալ Էմիրությունները, Բահրեյնը, Եմենի Արաբական Հանրապետությունը, Իրաքը, Կատարը, Մավրիտանիան, Մարոկկոն, Սաուդյան Արաբիան և Քուվեյթը վերականգնեցին դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի հետ: Մի քանի շաբաթ անց նույն քայլին դիմեցին նաև Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետությունը և Թունիսը, ապա նաև արաբական մյուս պետությունները:

1989 թ. վերականգնվեց Եգիպտոսի անդամակցությունը Արաբական պետությունների լիգայում, որին հաջորդեց նրա շտաբ–կայանի տեղափոխումը Թունիսից Կահիրե: Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Ամր Մուսան դարձավ լիգայի գլխավոր քարտուղարը:

Դրանով տաս տարի հետո ավարտվեց Եգիպտոսի վերադարձը արաբական ընտանիք: Դա Հուսնի Մուբարակի հավասարակշռված և իրատեսական քաղաքականության ուղղակի արդյունքն էր և Եգիպտական դիվանագիտության փայլուն հաղթանակը, որը կարևոր նշանակություն ունեցավ ամբողջ արաբական աշխարհի համար:

Հուսնի Մուբարակին հաջողվեց կարգավորել հարաբերությունները նաև իսլամական պետությունների հետ: Դեռևս 1984 թ. վերականգնվել էր Եգիպտոսի անդամակցությունը Իսլամական կոնֆերանս կազմակերպությանը, և 1987 թ. Հուսնի Մուբարակը մասնակցեց այդ կազմակերպության անդամ երկրների ղեկավարների Քուվեյթում կայացած գագաթնաժողովին՝ որպես նրա լիիրավ անդամ:

Եգիպտոսը XXI դար թևակոխեց՝ վերականգնած արաբական աշխարհի առաջատար պետության իր բնական կարգավիճակը:

Հաղթանակ տանելով 2005 թ. կայացած պրեզիդենտական ընտրությունների ժամանակ, Հուսնի Մուբարակը հավաստիացրեց եգիպտական ժողովրդին և արաբական բոլոր երկրներին, որ ինքը շարունակելու է իրեն արդարացրած հավասարակշռված, լավ հաշվարկված և ցն-

ցումները բացառող ներքին և արտաքին քաղաքականությունը իր պրեզիդենտության հաջորդ ընթացքում, որն ընդգրկում է 2005–2011 թթ.:

XII. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Եգիպտոսը արաբական առաջին պետություններից էր, որ 1991 թ. դեկտեմբերի 21–ին ճանաչեց Հայաստանի անկախությունը, իսկ 1992 թ. մարտի 9–ին դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին երկու պետությունների միջև: Երևանում բացվեց եգիպտական, իսկ Կահիրեում՝ հայկական դեսպանություն:

Եգիպտա–հայկական միջպետական հարաբերությունները նրանց ձևավորման առաջին օրվանից ընդունեցին բարեկամական բնույթ, որոնք հետագա տարիներին ավելի զարգացան ու խորացան: Նրանք ընդգրկում են միջպետական հարաբերությունների համարյա բոլոր ոլորտները:

Հատկանշական է, որ եգիպտական առաջին պաշտոնական պատվիրակության այցը Հայաստան տեղի ունեցավ Եգիպտոսի կողմից Հայաստանի անկախության ճանաչումից ուղիղ մեկ ամիս անց՝ 1992 թ. հունվարի 22–ին, երբ երկու երկրների միջև դեռ չէին հաստատվել դիվանագիտական հարաբերություններ: Եգիպտական պատվիրակությունը, որի կազմի մեջ մտնում էին Եգիպտոսի արդյունաբերության, էներգետիկայի և տնտեսության նախարարները, գլխավորում էր Եգիպտոսի փոխվարչապետ և պլանավորման նախարար Քամալ ալ–Գանզուրին: Նրա մաս էին կազմում նաև մասնավոր և պետական սեկտորը ներկայացնող գործարարներ և բանկային բարձրաստիճան պաշտոնյաներ:

Պատվիրակության ղեկավարին ընդունեց Հայաստանի պրեզիդենտ Լևոն Տեր–Պետրոսյանը, որին Քամալ ալ–Գանզուրին փոխանցեց Եգիպտոսի պրեզիդենտ Հուսնի Մուբարակի ուղերձը:

Պատվիրակության կազմը խոսում էր այն մասին, որ եգիպտական կողմին հետաքրքրում էին Հայաստանի հետ համագործակցության հաստատումը տնտեսական զանազան ոլորտներում:

Կողմերը պատրաստակամություն հայտնեցին ձեռք առնել անհրաժեշտ ջանքեր Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև հարաբերությունների համակողմանի զարգացման համար՝ ՄԱԿ–ի կանոնադրության նպատակների և սկզբունքների, միջազգային իրավունքի այլ հանրաճանաչ նորմերի համաձայն:

Կողմերն ընդծեցին առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության մասին հայ–եգիպտական համաձայնագրերի պատրաստման և կնքման կարևորությունը, որը թույլ կտար հարաբերությունները զարգացնել կայուն և երկարաժամկետ հիմքի վրա:

Հայկական կողմը կարևորեց շուկայական հարաբերություններին անցնելու եգիպտական փորձի ուսումնասիրությունը: Անհրաժեշտ համարվեց գործնական կապեր հաստատել հայ և եգիպտական իրավասու կազմակերպությունների, այդ թվում և Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի և արտաքին առևտրի եգիպտական ընկերության միջև, համաձայնվեցին ստեղծել հայ–եգիպտական գործարար խորհուրդ, հիմնել հայ–եգիպտական համատեղ բանկ, կազմակերպել առևտրաարդյունաբերական ցուցահանդեսներ և տոնավաճառներ ու մասնակցել դրանց և այլն:

Եգիպտական պատվիրակության այցը Երևան համարվեց կարևոր փուլ երկու անկախ պետությունների միջև համակողմանի համագործակցություն հաստատելու և հայ ու եգիպտական ժողովուրդների միջև բարեկամությունն ամրապնդելու գործում:

Եգիպտոսի և Հայաստանի միջև հարաբերությունների զարգացման և խորացման գործում սկզբունքային նշանակություն ունեցավ Հայաստանի պրեզիդենտ Լ. Տեր–Պետրոսյանի ղեկավարած պատվիրակության պաշտոնական այցը Եգիպտոս, որը կայացավ 1992 թ. մայիսի 26–27–ը:

1992 թ. մայիսի 27–ին տեղի ունեցան բանակցություններ երկու երկրների պրեզիդենտների՝ Հուսնի Մուբարակի և Լ. Տեր–Պետրոսյանի միջև, որի ընթացքում քննարկվեցին Հայաստանի և Եգիպտոսի երկկողմ հարաբերությունների զարգացմանը և համակողմանի համագործակցությանը, տարածաշրջանի հիմնահարցերի նկատմամբ կողմերի մոտեցումները, միջազգային ասպարեզում երկու երկրների համագործակցության հեռանկարները և այլ կարևոր խնդիրներին առնչվող հարցեր:

Տեղի ունեցան նաև Հայաստանի պատվիրակության անդամ նախարարների հանդիպումները իրենց եգիպտական գործընկերների

հետ: Իսկ պատվիրակության անդամ Հայաստանի պառլամենտի դեպուտատները եգիպտական պառլամենտի անդամների հետ քննարկեցին երկու երկրների պառլամենտների միջև կապերի հաստատման և զարգացման հարցերը:

Հայաստանի պաշտոնական պատվիրակության այցի ընթացքում 1992 թ. մայիսի 27-ին ստորագրվեց համաձայնագիր Հայաստանի և Եգիպտոսի միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության մասին, որով նախատեսվում էր երկու երկրների միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության զարգացման նպատակով ստեղծել միջկառավարական հանձնաժողով: Նրա խնդիրն էր մշակել արդյունաբերության, գյուղատնտեսության, էներգետիկայի, հեռուստակապի, փոխադրումների, կրթության, սպորտի, համատեղ ձեռնարկությունների և այլ ոլորտներում համագործակցության ուղիները:

Կողմերը համաձայնվեցին, որ հանձնաժողովը կհավաքվի տարին մեկ անգամ հաջորդաբար Հայաստանում և Եգիպտոսում:

Այսպիսով՝ երկու երկրների ամենաբարձր մակարդակով բանակցությունների արդյունքում դրվեցին հայ-եգիպտական բարեկամական հարաբերությունների հիմքերը և կանխագծվեցին ապագա համագործակցության հիմնական ուղղությունները:

Դրանից հետո սկսեցին զարգանալ հայ-եգիպտական տնտեսական համագործակցությունը և առևտրական կապերը, կանոնավոր կերպով տեղի են ունենում տարբեր մակարդակների պատվիրակությունների փոխայցելություններ և այլն: Արդյունավետ է գործում հայ-եգիպտական միջկառավարական հանձնաժողովը, որը բաղկացած է երկու՝ եգիպտական և հայկական մասերից և իր նիստերն է գումարում հաջորդաբար Երևանում և Կահիրեում[13]: Բավականին արդյունավետ է համագործակցությունը մշակույթի, կրթության և գիտության բնագավառներում: Գիտահետազոտական աշխատանքների համար Կահիրեի համալսարանում ուսումնասիրություններ են կատարում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական աշխատողները, որոնք զեկուցումներով հանդես են գալիս նաև Կահիրեի «Ալ-Ահրամ» ստրատեգիական ուսումնասիրությունների կենտրոնում: Կարևոր պետք է համարել Եգիպտոսի պատմության ուսումնասիրությանը նվիրված հայ արաբագետնե-

13 Տողերիս հեղինակը հայ-եգիպտական միջկառավարական հանձնաժողովի հայկական մասի անդամ է:

րի աշխատությունները և ատենախոսությունները: Արևելագիտության ինստիտուտում իրենց ատենախոսություններն են պաշտպանում արաբ հետազոտողները:

Յուրաքանչյուր տարի արաբերենի մեջ կատարելագործվելու նպատակով Կահիրեի համալսարան են մեկնում Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի ուսանողները:

Երկու երկրները պարբերաբար խորհրդակցում և կարծիքներ են փոխանակում միջազգային և տարածաշրջանային իրենց հուզող հարցերի շուրջ: Հայաստանը հանդես է գալիս հօգուտ պաղեստինյան խնդրի կարգավորման՝ ՄԱԿ–ի համապատասխան որոշումների հիման վրա, ինչն ըստ արժանվույն է գնահատվում Եգիպտոսի ղեկավարության կողմից: Իր կողմից Եգիպտոսը պաշտպանում է ղարաբաղյան հիմնախնդիրը բանակցությունների միջոցով և համապատասխան փոխզիջումների հիմքի վրա լուծելու մոտեցումը: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Եգիպտոսը ղարաբաղյան խնդիրը չի համարում կրոնական դիմակայություն քրիստոնյաների և մուսուլմանների միջև և այն դիտում է որպես էթնոքաղաքական–տարածքային վեճ:

Եգիպտա–հայկական միջպետական հարաբերությունների վերընթաց զարգացման արտահայտություն էին Հայաստանի վարչապետի և նրա գլխավորած պատվիրակության այցը Եգիպտոս 2005 թ. դեկտեմբերին և նրա հանդիպումները Եգիպտոսի վարչապետի հետ: Նրան ընդունեց և բարեկամական զրույց ունեցավ Եգիպտոսի պրեզիդենտ Հուսնի Մուբարակը, որի ընթացքում կողմերն ընդգծեցին Հայաստանի և Եգիպտոսի միջև քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտական կապերի խորացման անհրաժեշտությունը:

Ի կատարումն այդ պայմանավորվածությունների՝ 2006 թ. փետրվարի 7–ին Ալեքսանդրիայի նորոգ գրադարանում, որի արտաքին պատերին աշխարհի այլ այբուբենների կողքին քանդակված են մեսրոպյան այբուբենի տառերը, տեղի ունեցավ Մեսրոպ Մաշտոցի հին ձեռագրերի ինստիտուտում՝ Մատենադարանում, պահվող հայկական ձեռագրերի ցուցահանդես, որը մեծ արձագանք գտավ եգիպտական հասարակության մեջ: Իսկ փետրվարի 9–ին նույն Ալեքսանդրիայի հիասքանչ գրադարանում կայացավ գիտաժողով՝ «Հայ–եգիպտական պատմամշակութային հարաբերությունները» թեմայով, որտեղ զեկուցումներով հանդես եկան Հայաստանի պատվիրակության անդամներ ՀՀ ԳԱԱ Հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Վ.

Բ. Բարխուդարյանը, Մատենադարանի տնօրեն, ակադեմիկոս Ս. Ս. Արևշատյանը և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Ն. Հ. Հովհաննիսյանը:

Այդ առնչությամբ հարկ է նշել այն մեծ և արդյունավետ աշխատանքը, որը կատարում է Եգիպտոսում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը:

Կարելի է ասել, որ չկա պատմական, տարածքային, քաղաքական կամ որևէ այլ խնդիր, որը բաժանի երկու երկրներին: Ընդհակառակը, պատմությունը, որն այնքան հարուստ է երկու ժողովուրդների բարեկամության ու համագործակցության փաստերով, միացնում է մեր երկու ժողովուրդներին և երկրներին:

Երկու երկրներին միացնելու և բարեկամական հարաբերությունները պահպանելու գործում յուրահատուկ դեր է կատարում Եգիպտոսի հայ համայնքը, որը մի գործունյա և համերաշխ համայնք է: Եգիպտահայերը ունեն իրենց արժանի ներդրումը ժամանակակից Եգիպտոսի տնտեսության, քաղաքականության, արվեստի, մշակույթի, լրագրության և այլ ոլորտների բնագավառում:

Եգիպտահայերը, որոնց թիվն այսօր հասնում է մոտ 10 հազարի, հավատարմորեն են կատարում Եգիպտոսի քաղաքացիների իրենց պարտականությունները բոլոր բնագավառներում և վայելում Եգիպտոսի ժողովրդի ու իշխանությունների հարգանքը:

Գլուխ վեցերորդ

ԵՄԵՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՄԵՆ

ԱԼ–ՋՈՒՄՀՈՒՐԻՅԱ ԱԼ–ՅԱՄԱՆԻՅԱ
ԱԼ-ՅԱՄԱՆ

Աշխարհագրական դիրքը — գտնվում է Մերձավոր Արևելքում, Արաբական թերակղզու հարավային մասում

Սահմանները — սահմանակից է ցամաքից՝ Օմանին և Սաուդյան Արաբիային, իսկ ծովից՝ Արաբական ծովին, Ադենի ծոցին և Կարմիր ծովին

Տարածքը — 527 հազ. 970 քառ. կմ, ներառյալ Փերիմ և Սոկոտրա կղզիները

Բնակչությունը — 20 մլն 727 հազ. (2005 թ. հուլիս)

Մայրաքաղաքը — Սանա՝ 1 մլն 700 հազ. (2002 թ.), մյուս խոշոր քաղաքն է Ադենը (530 հազ.)

Ազգային կազմը — բացարձակ մեծամասնությունը՝ արաբներ, կան նաև աֆրո–արաբներ, հարավարևելյան ասիացիներ և եվրոպացիներ

Պետական կրոնը — իսլամ՝ շաֆիական մազհաբին պատկանող սուննիներ, զայդիական շիաներ, որոնք կազմում են մեծամասնությունը, ինչպես նաև քրիստոնյաների, հրեաների և հինդուսների փոքր խմբեր

Պաշտոնական լեզուն — արաբերեն

Պետական կարգը — պառլամենտական հանրապետություն

Գործադիր իշխանությունը — պատկանում է պրեզիդենտին, որը պետության ղեկավարն է, և վարչապետին

Օրենսդիր իշխանությունը — երկպալատանի պառլամենտը, որը կազմված է Խորհրդակցական խորհրդից և Ներկայացուցիչների պալատից

Դատական իշխանությունը — Գերագույն դատարան

Քաղաքական կուսակցությունները — գործում են տասից ավելի քաղաքական կուսակցություններ

Վարչական բաժանումը — կազմված է 19 մուհաֆազներից՝ նահանգներից

Անկախության օրը — 22 մայիսի, 1990 թ.՝ Հյուսիսային և Հարավային Եմենների միավորման օրը

Ազգային տոնը — մայիսի 22–ը 1990 թ.

ЦЕЙЛОН
Масштаб 1:1 000 000
Ямна
Ямна
Ямна

Սահմանադրությունը — ընդունվել է 1991 թ. մայիսի 16–ին, փոփոխության է ենթարկվել 1994 թ. սեպտեմբերի 28–ին և 2001 թ. փետրվարին

Ազգային դրամը — եմենական ռիալ

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ըստ շնչի — 800 ԱՄՆ դոլարի (2004 թ.)

Բնական հարստությունները — նավթ, մարմար, քարածուխ, ոսկի, արծիվ, նիկել, պղինձ, քարաղ

Արդյունաբերությունը — նավթի արդյունահանում և մշակում, տեքստիլ, կաշվի, սննդամթերքի, ինչպես նաև ալյումինի ու ցեմենտի արտադրություն, առևտրական նավերի վերանորոգում և արհեստագործական արտադրություն

Գյուղատնտեսությունը — հացաբույսեր, մրգեր, բանջարեղեն, կատ (թմրաբույս), սուրճ, բամբակ, անասնապահություն, կաթնամթերք, թռչնաբուծություն, ձկնորսություն

Արաբական երկրները, չնայած նրանց պատմական, էթնիկական, կրոնական, լեզվական և այլ ընդհանրություններին, զարգացման ընդհանուր օրինաչափություններին, այդուհանդերձ, նրանցից յուրաքանչյուրն ունի զարգացման իր յուրահատկությունները, անգամ առանձնահատկությունները, որը միանգամայն բնական է: Այդ տարբերությունները և զարգացման ուղիների յուրահատկություններն անտեսելը ոչ միայն անհնար է, այլև կարող է հետազոտողին տանել սխալ ուղիով, աղճատել տվյալ արաբական երկրի պատմական զարգացման իրական պատկերը և հանգեցնել սխալ մտահանգումների:

Այդ առումով հատկապես աչքի է ընկնում Եմենը, որն առանձնահատկությունների բազմազանության առումով մի իսկական խճանկար է ներկայացնում:

Նկատի ունենք այն հանգամանքը, որ «Եմեն» անվանմամբ պատմության ընթացքում փաստորեն գոյություն չի ունեցել մեկ միասնական պետություն, այլ գոյություն են ունեցել զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող և քաղաքական ու պետական կարգավիճակի տեսանկյունից տարբեր կարգավիճակ ունեցող մի քանի պետական կազմավորումներ:

Երբ այս տեսանկյունից ենք մոտենում Եմենի պատմության ուսումնասիրությանը նոր և նորագույն շրջանում, ապա տեսնում ենք, որ նրա հյուսիսային մասում 1918 թ. առաջացավ անկախ Եմեն պետությունը, հարավային մասում գոյություն ուներ Ադեն անգլիական գաղութը, նրա հարևանությամբ՝ 23 շեյխություններից կազմված Հարավային Եմենի անգլիական պրոտեկտորատները, ապա Հարավային Եմենի Դաշնությունը, որին հաջորդեց Հարավային Եմենի Ժողովրդական Հանրապետությունը՝ որպես եմենական երկրորդ անկախ պետություն, պատերազմները երկու եմենական պետությունների միջև, և վերջապես՝ նրանց միավորումը և միասնական Եմենի Հանրապետության ստեղծումը:

Այս իրողությունը կառուցվածքային առումով իր կնիքն է դրել սույն գլխում Եմենի պատմության ուսումնասիրության մեր մոտեցման վրա:

I. ԵՄԵՆԻ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՄԵՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

1. Հյուսիսային Եմենի անկախության հռչակումը 1918 թ. և Համիդ ադ-Դինների դինաստիայի հաստատումը

Եմենի բաժանումը երկու մասի՝ Հյուսիսային և Հարավային, պատմական իրողություն դարձավ XIX դարի առաջին կեսին, որն արդյունք էր բրիտանական և օսմանյան նվաճողական քաղաքականության: 1839 թ. Անգլիան գրավեց Ադենը և այն վերածեց իր գաղութի՝ հետագայում իր տիրապետությունը տարածելով Ադենին հարակից տարածքների վրա:

1849 թ. Օսմանյան կայսրությանը հաջողվեց վերագրավել Հյուսիսային Եմենը և վերականգնել իր տիրապետությունը այդ երկրամասի վրա:

Դրան հաջորդած տարիներին երկու կողմերն էլ ձգտում էին ընդարձակել իրենց տիրույթները մեկը մյուս հաշվին, որը մշտական լարվածության և բախումների պատճառ էր հանդիսանում: Վերջապես՝ XX դարի սկզբներին բրիտանական և օսմանյան կառավարությունները համաձայնության եկան իրենց եմենյան տիրույթների միջև սահման հաստատելու վերաբերյալ, որով Եմենը «իրավաբանորեն» բաժանավեց Հյուսիսային և Հարավային Եմենի: Նրանց բաժանող այդ սահմանը գոյություն ունեցավ ընդհուպ մինչև 1990 թ., երբ Հյուսիսային կամ Եմենի Արաբական Հանրապետությունն ու Հարավային կամ Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետությունը միավորվեցին, և ստեղծվեց ժամանակակից Եմենի Հանրապետությունը:

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը Հյուսիսային Եմենը գտնվում էր օսմանյան տիրապետության ներքո: Այդ տարիներին ազատատենչ եմենցիները երբեք զենքը վայր չեն դրել և չեն դադարեցրել պայքարը օսմանյան տիրապետությունը վերացնելու և իրենց անկախությունը նվաճելու համար: Այդ պայքարը, որ գլխավորում էր զայդական իմամ Յահյան, հատկապես սուր բնույթ կրեց և մեծ ծավալներ ընդունեց XX դարի առաջին տասնամյակում: Կարելի է ասել, որ դա անընդմեջ պերմանենտ հերոսական պայքարի մի շրջան էր, որն ավարտվեց եմենցիների հաղթանակով: 1911 թ. թուրքական սուլթանը ճանաչեց Եմենի ինքնավարությունը Օսմանյան կայսրության շրջանակներում, որն ընդգրկում էր Հյուսիսային Եմենի մեծ մասը, իսկ իմամ Յահյա Համիդ էդ-Դինին՝ որպես նրա կառավարող:

1918 թ.՝ Օսմանյան կայսրության կործանումից հետո, Հյուսիսային Եմենը հռչակվեց անկախ պետություն՝ Եմեն անվան ներքո: Իմամ Յահյան դարձավ այդ նորաստեղծ պետության ղեկավարը: Նրա առջև կանգնած էր երկու գլխավոր խնդիր՝ ամրապնդել նորաստեղծ պետությունը և գլխավորել բոլոր եմենյան տարածքները միավորելու և Եմենի միասնական անկախ պետություն ստեղծելու շարժումը:

Այդ պահին Եմենը փաստորեն բաժանված էր երեք մասի: Ադենը և Եմենի հարավային մասը գրավված էին անգլիացիների կողմից: Լեռնային Ասիրը և Թիաման գտնվում էին Հարավային Ասիրի էմիր Մուհամմադ ալ–Իդրիսիի տիրապետության տակ: Եվ միայն Ջաբալի շրջանն էր, որը կազմում էր ինքնավար Եմենի միջուկը, գտնվում եմենցիների ձեռքում: 1919 թ. իմամ Յահյան պայքար ծավալեց Մեծ Բրիտանիայի և ալ–Իդրիսիի տիրապետության տակ գտնվող տերիտորիաներն ազատագրելու և միասնական Եմենի պետություն ստեղծելու համար: Ամրապնդելով իր իշխանությունը Ջաբալում՝ իմամ Յահյան, 20–ական թվականների առաջին կեսին բավականին հաջող ռազմական գործողություններ մղելով մի կողմից՝ Մեծ Բրիտանիայի, իսկ մյուս կողմից՝ ալ–Իդրիսիի դեմ, կարողացավ գրավել Հոդեյդան և Հյուսիսային Թիամայի զգալի մասը: Այնուհետև նա ակտիվ հարձակողական գործողություններ ծավալեց հարավային ուղղությամբ և ազատագրեց Ջաբիդը, Բայթ Ալ–Ֆակիհը և այլն: Դրանով 1925 թ. ավարտվեց հյուսիսեմենյան տերիտորիաների միավորումը:

Այնուհետև իմամ Յահյան մարտական գործողություններ սկսեց Հարավային Եմենում, այդ թվում և Հադրամաութի ուղղությամբ, և իր վերահսկողությունը սահմանեց ալ–Բայդայի շրջանի վրա: Սակայն նրան չհաջողվեց այստեղ հասնել շոշափելի հաջողության և Հարավային Եմենի անգլիական պրոտեկտորատները դուրս մնացին Եմենի պետության տարածքից: Նրանից դուրս մնացին նաև Ասիրի ու Նաջրանի շրջանները, որոնք հետագայում անցան Սաուդյան Արաբիայի թագավոր Իբն Սաուդի հսկողության տակ:

Բայց իմամը չհրաժարվեց Եմենը ամբողջությամբ միավորելու գաղափարից և այդ խնդրում դաշնակիցներ էր փնտրում: Նրա ընտրությունը կանգ առավ Իտալիայի վրա, որը Անգլիայի մրցակիցն էր Կարմիր ծովի շրջանում: 1926 թ. Եմենի մայրաքաղաք Սանայում Եմենի և Իտալիայի միջև ստորագրվեց պայմանագիր «Բարեկամության և առևտրի վերաբերյալ»: Իտալիան պարտավորվում էր Եմենին մատակարարել զանազան ապրանքներ, այդ թվում և զենք, պատրաստել մասնագետ-

ներ իտալական ռազմական և տեխնիկական ուսումնարաններում և այլն: Սակայն Իտալիան իր խոստումները չկատարեց:

Անգլիան 1928 թ. պահանջեց Եմենից, որ նա ճանաչի բրիտանական իրավունքները Հարավային Եմենի նկատմամբ և իր զորաջոկատները դուրս բերի վիճելի տերիտորիաներից: Իմամը հրաժարվեց կատարել այդ պահանջը, և անգլիական ավիացիան սկսեց ռմբակոծել Եմենի քաղաքներն ու գյուղերը: Իմամ Յահյան, չստանալով որևէ օգնություն և աջակցություն Իտալիայից և անգլիական օդային ռմբակոծումների ճնշման տակ, որոնք սարսափ էին առաջացրել բնակչության մեջ, հարկադրված իր զորքերը դուրս բերեց Ադենի պրոտեկտորատի տարածքների մեծ մասից:

Հարկ է նշել, որ իմամ Յահյան վարում էր բավականին ճկուն և հեռատես քաղաքականություն, որի արտահայտություններից մեկն էլ հանդիսացավ բարեկամական կապերի հաստատումը ԽՍՀՄ–ի հետ: 1928 թ. նոյեմբերի 1–ին երկու երկրների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ, և ստորագրվեց պայմանագիր բարեկամության և առևտրի վերաբերյալ: Դրա շնորհիվ մասամբ վերացվեց Եմենի դիվանագիտական և առևտրական շրջափակումը, և զգալիորեն ամրապնդվեցին նրա միջազգային դիրքերը:

Սակայն դրությունը մնում էր լարված: Անգլիական մշտական սպառնալիքները, ցեղերին իմամ Յահյայի դեմ հրահրելու սադրանքները, եմենա–սաուդական սահմանային վեճերն ու բախումները, որոնց նույնպես անմասն չէին անգլիացիները. այս ամենը խիստ ապակայունացնում էր քաղաքական իրավիճակը Եմենում: Վերջիվերջո, իմամ Յահյան հարկադրված էր զիջել: 1934 թ. փետրվարի 11–ին Սանայում Անգլիայի և Եմենի միջև ստորագրվեց պայմանագիր «Բարեկամության և փոխադարձ համագործակցության մասին»: Այդ պայմանագրով Անգլիան պաշտոնապես ճանաչեց Եմենի անկախությունը: Դրա դիմաց Եմենը ճանաչում էր գոյություն ունեցող սահմանը և վիճելի տարածքների անցումը Անգլիայի իշխանության ներքո: Միաժամանակ արձանագրվեց, որ այդ հարցը վերջնականորեն կլուծվի պայմանագրի վավերացումից հետո 40 տարվա ընթացքում:

Նույն թվականի մայիսին Թաիֆում ստորագրված պայմանագրով լուծվեցին նաև սահմանային վեճերը Եմենի և Սաուդյան Արաբիայի միջև: Ասիրն անցավ Սաուդյան Արաբիային, իսկ Նաջրանը բաժանվեց երկու երկրների միջև:

2. Եմենի կառավարման համակարգը

Եմենում հաստատվեց ֆեոդալական–աստվածապետական միապետություն: Զայդական–շիական իմամ Յահյան երկրի թագավորն էր ու հոգևոր առաջնորդը, նա իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ իշխանությունը: Երկրի կառավարմանը մասնակցում էին թագավորող Համիդ ադ–Դին դինաստիային պատկանող անդամները, ինչպես նաև սեյիդները, երնելի և ազդեցիկ եմենցիները՝ շեյխերը և ցեղապետները, որոնք համարվում էին Մուհամմադ մարգարեի շառավիղները: Այս վերջինները սովորաբար կատարում էին խորհրդականի պարտականություններ:

Իմամ Յահյան ձգտելով ստեղծել ուժեղ կենտրոնացված պետություն, XX դարի 20–30–ական թվականներին քայլեր ձեռնարկեց կանոնավոր բանակ ստեղծելու ուղղությամբ՝ գտնելով, որ ցեղերի աշխարհազորները չեն կարող իր համար հուսալի հենարան լինել:

Թագավորի համար սկզբունքային նշանակություն ուներ հարաբերությունների կարգավորումը ցեղապետների՝ շեյխերի հետ, որոնք մեծ հեղինակություն էին վայելում նահանգներում և գավառներում, և իրականացնում էին վարչական, դատական և այլ ֆունկցիաներ, ղեկավարում աշխարհազորները: Իմամ Յահյան նշանակալի չափով պահպանեց շեյխերի ինքնուրույնությունը՝ թագավորին հավատարիմ լինելու նրանց երդման դիմաց: Նա պահպանեց շեյխերին դրամական միջոցներ տրամադրելու և նրանց զավակներին պատանդ վերցնելու՝ դարերի խորքից եկող ավանդույթը:

Դրա հետ միասին նա ցեղերում նշանակեց այսպես կոչված պետության ներկայացուցիչներ, որոնք պետք է հսկեին ցեղապետների գործունեությունը:

Իմամ Յահյան կարևոր համարեց նաև դատական բարենորոգման իրականացումը՝ որպես կարևոր քայլ կենտրոնացված պետություն ստեղծելու ճանապարհին: Մասնավորապես նա ձգտում էր վերացնել տեղական օրենքների և սովորույթների վրա հիմնված դատավարությունը և այն փոխարինել շարիաթական դատարաններով: Սակայն ցեղապետները դրան խիստ դիմադրեցին, և իմամը հարկադրված էր որոշ զիջումներ անել: Նա 30–ական թվականների կեսերին թեև հիմնեց շարիաթի սկզբունքների վրա հիմնված դատարաններ, սակայն պահպանեց նաև հները:

Նկատելի տեղաշարժեր եղան, մանավանդ 20–ական թվականների երկրորդ կեսից, նաև Եմենի հասարակական մշակութային կյանքում:

երկրի կառավարման համար անհրաժեշտ կադրեր պատրաստելու համար նախկին թուրքական դպրոցների փոխարեն բացվեցին աշխարհիկ և հոգևոր դպրոցներ: 1925 թ. Սանայում բացվեց գրադարան, իսկ 1927 թ. սկսեց լույս տեսնել «Ալ–Իման» («Հավատ») ամսաթերթը:

Եմենը հետամնաց ագրարային երկիր էր, որտեղ առկա էին տարբեր կացութածներ՝ նախակապիտալիստական բնատնտեսական–նահապետական, կիսաֆեոդալական, ֆեոդալական և նոր սաղմնավորվող բուրժուական: Սակայն, այդուհանդերձ, 20–30–ական թվականներին Եմենը բավարարում էր ազգաբնակչության պահանջները գյուղատնտեսական մթերքների բնագավառում: Դեռ ավելին՝ նա նույնիսկ արտահանում էր, մասնավորապես սուրճ, բուրդ, հացահատիկ, կաշի և այլն:

Իմամ Յահյայի թագավորության առաջին տարիները նշանավորվեցին ցեղերի մի շարք ելույթներով, որոնց պատճառը նրանց դժգոհությունն էր հարկային քաղաքականությունից, պետական վերահսկիչների գործունեությունից, գյուղացիներին բանակ զորակոչելուց և այլն: 1922 թ. ոտքի ելան հաշիդ և բակիլ ցեղերը, 1926–1928 թթ. Թիամայի շրջանում բնակվող ցեղերը, իսկ 1929 թ. խռովություն բարձրացրին Եմենի արևելյան շրջանի տարբեր ցեղեր: Իմամ Յահյային մեծ դժվարությամբ հաջողվեց հնազանդեցնել նրանց:

Պետք է ընդգծել, որ տնտեսական զարգացման բնագավառում իմամ Յահյան ճիշտ քաղաքականություն չէր վարում: Այդ հարցում նա խիստ պահպանողական էր և դեմ էր ժամանակակից գործարանների ու ճանապարհների կառուցմանը, ֆինանսական–բանկային գործի զարգացմանը: Նա խիստ անհանգստացած էր Եմենում եվրոպական գաղափարների, աշխատանքի ձևերի ու մեթոդների տարածումից: Եվ ջանալով կանխարգել եվրոպական ազդեցության տարածմանը, իմամը և նրա մերձավորագույն շրջապատը որդեգրեցին Եմենի ինքնամեկուսացման քաղաքականությունը: Եմենը կտրվեց արտաքին աշխարհից, ոչ միայն եվրոպական, այլև արաբական, որը խիստ բացասաբար անդրադարձավ նրա սոցիալ–տնտեսական առաջընթացի վրա:

3. Եմենը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին

30–ական թվականների երկրորդ կեսից սկսած՝ ուժեղանում է դժգոհությունը իմամ Յահյայի ներքին քաղաքականությունից և միահեծան կառավարումից: Այդ հողի վրա ծնավորվում են զանազան գաղտ-

նի և լեգալ ընդիմադիր կազմակերպություններ և միություններ: 1935 թ. Ահմադ ալ–Մութան Սանայում հիմնում է «Պայքարի կազմակերպում» գաղտնի գրական ընկերությունը: Ավելի նշանավոր էր 30–ական թվականների վերջին պոետ Մուհամմադ Մահմուդ ազ–Զուբեյրիի և գրականագետ ալ–Խալիդիի հիմնած լեգալ գրական ընկերությունը, որը պահանջում էր թագավորի իշխանությունը սահմանափակող սահմանադրության ընդունում, տնտեսական և քաղաքական բարենորոգումների կիրառում, ժողովրդական կրթության զարգացում և այլն:

Ընդիմադիր շարժումը որոշ ազդեցություն գործեց իմամ Յահյայի քաղաքականության վրա: Դրա ճնշման տակ, ինչպես նաև հասկանալով, որ ոչինչ չի ստացվում անգլո–իտալական հակասությունների վրա խաղալուց, նա Երկրորդ համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին որոշ ուղղումներ մտցրեց իր արտաքին քաղաքականության բնագավառում: Մասնավորապես, վերանայվեց Եմենի ինքնամեկուսացման հարցը՝ արաբական երկրների հետ ավելի սերտորեն համագործակցելու տեսանկյունից: Եվ որպես դրա արդյունք՝ Եմենը 1937 թ. միացավ «Բարեկամության և արաբական եղբայրության» սաուդա–իրաքյան պայմանագրին, ընդլայնեց իր առևտրատնտեսական և մշակութային կապերը Սիրիայի, Լիբանանի և Եգիպտոսի հետ, իսկ 1938 թ. 10 տարով երկարաձգվեց 1928 թ. ստորագրված խորհրդա–եմենական պայմանագիրը:

Ահա այսպիսին էր Եմենի ներքին և արտաքին քաղաքական դրությունը, երբ բռնկվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Եմենը թեև չդարձավ պատերազմի թատերաբեմ, սակայն իր վրա կրեց պատերազմի բոլոր հետևանքները: Սկզբնական շրջանում նրան մեծ վտանգ էին ներկայացնում Իտալիայի քաղաքական ծրագրերը: Վերջինս փորձում էր իր տիրապետությունը հաստատել Կարմիր ծովի և Ադենի նեղուցի շրջանում, Եմենը վերածել իր հենակետի՝ Արաբական թերակղզի ներթափանցելու համար: Սակայն 1941 թ. անգլիական զորքերը պարտության մատնեցին իտալացիներին, և իտալական վտանգը Եմենի համար վերացավ:

Պատերազմի ընթացքում Եմենը պահպանեց չեզոքություն և միայն 1943 թ. փետրվարի 26–ին խզեց դիվանագիտական հարաբերությունները Իտալիայի հետ և ներկալման ենթարկեց Եմենում այդ պահին գտնվող իտալական, ինչպես նաև գերմանական քաղաքացիներին:

Պատերազմը չափազանց ծանր անդրադարձավ Եմենի տնտեսության և ժողովրդի նյութական դրության վրա: Եմենը զրկվեց սուրճ ար-

տահանելու և իրեն անհրաժեշտ ապրանքներ ներմուծելու հնարավորությունից: Գյուղատնտեսությանը ծանր հարված հասցրեց երաշտը, և որպես արդյունք՝ սկսվեց սով:

Այս հողի վրա կրկին ակտիվացավ ընդդիմադիր ուժերի գործունեությունը: Նրանց մի մասը, խուսափելով ձերբակալությունից և հալածանքներից, տեղափոխվեց Ադեն: 1944 թ. այստեղ հաստատվեցին «Ազատ եմենցիների» ղեկավարներ Ահմադ Մուհամմադ Նումանը և Մուհամմադ Մահմուդ ազ–Զուբեյրին: 1944 թ. տեղի ունեցավ «Ազատ եմենցիների» համաժողովը, որտեղ ստեղծվեց Եմենական մեծ միությունը: «Ազատ եմենցիների» հիմնական պահանջներն էին՝ իրականացնել քաղաքական բարեփոխումներ և Եմենը աստվածապետական բացարձակ միապետությունից վերածել սահմանադրական միապետության:

4. 1948 թ. պետական հեղաշրջումը

Հետպատերազմյան առաջին տարիներին Եմենը ձեռնարկեց մի շարք քայլեր, որոնք ամրապնդեցին նրա դիրքերը արաբական աշխարհում: 1945 թ. նա դարձավ Արաբական պետությունների լիգայի անդամ, իսկ 1945–1946 թթ. ընթացքում առևտրատնտեսական պայմանագրեր ստորագրեց Իրաքի և Եգիպտոսի հետ՝ զգալիորեն բարելավելով իր քաղաքական հարաբերությունները վերջինիս հետ:

1946 թ. ԱՄՆ–ը ճանաչեց Եմենի անկախությունը և հաստատեց դիվանագիտական հարաբերություններ: Եվ վերջապես՝ 1947 թ. Եմենն ընդունվեց ՄԱԿ–ի անդամ:

Եթե հետպատերազմյան առաջին տարիներին արձանագրվեցին նշանակալի տեղաշարժեր և հաջողություններ արտաքին քաղաքականության բնագավառում, ապա նույնը չի կարելի ասել ներքին քաղաքականության մասին:

Իմամ Յահյան նախկինի պես ընդիմանում էր որևէ նորամուծության սոցիալ–տնտեսական ոլորտում և շարունակում էր մնալ որպես տիպիկ միջնադարյան միապետ–կրոնապետ, թեև արաբական աշխարհում արդեն նոր հովեր էին փչում: Այս բոլորի հետևանքով խիստ ուժեղացել էր սոցիալ–քաղաքական լարվածությունը երկրի ներսում: Նոր թափ ստացավ ընդդիմադիրների շարժումը, մանավանդ «Ազատ եմենցիների» գործունեությունը: Վերջիններս գաղտնի կապերի մեջ մտան իմամ Յահյայի փեսա Աբդալլահ բին Ահմադ ալ–Վազիրի հետ:

Վազիրների ընտանիքը Համիդ ադ–Դինների ընտանիքի վաղեմի մրցակիցն էր և հավակնում էր Եմենի գահին ու իմամի պաշտոնին: Ընդդիմադիրների գլխավոր պահանջը դարձավ բացարձակ աստվածապետական միապետությունը փոխարինել սահմանադրական միապետությամբ: Նրանք եկան այն եզրակացության, որ քաղաքական այդ կարևոր պահանջը հնարավոր է իրականացնել թագավորին ֆիզիկապես ոչնչացնելու ուղիով:

1948 թ. փետրվարի 17–ին տեղի ունեցավ պետական հեղաշրջում: Իմամ Յահյան սպանվեց: Փետրվարի 18–ին Աբդալլահ ալ–Վազիրը հռչակվեց Եմենի թագավոր և իմամ: Սանա վերադարձան ալ–Վազիրի կողմնակից վտարանդիները, որոնք կազմեցին Եմենի նոր կառավարություն, խորհրդատու մարմին, զինվորական և հեղափոխական խորհուրդներ և պետական այլ մարմիններ: Նա խոստացավ մեծ փոփոխություններ մտցնել երկրի քաղաքական կառուցվածքում և քայլեր ձեռնարկել Եմենի արդիականացման ուղղությամբ: Այդ նպատակին էին ուղղված սահմանդրություն ընդունելու, օրենսդիր մարմին ստեղծելու և այլ բարենորոգումներ կիրառելու նրա խոստումները:

Ալ–Վազիրը դիմեց Արաբական պետությունների լիգային, ինչպես նաև առանձին արաբական պետությունների՝ իրեն ճանաչելու խնդրանքով, սակայն մերժում ստացավ: Դա, անշուշտ, բարդացրեց նրա վիճակը: Նա դիմեց նաև Անգլիային՝ իրեն անհրաժեշտ նյութական օգնություն ցույց տալու խնդրանքով: Սակայն ապարդյուն. Անգլիան չարձագանքեց նորաթուխ թագավորի խնդրանքին:

Դրությունը սրվեց նաև ներքաղաքական ասպարեզում: Պետական հեղաշրջման ժամանակ իմամ Յահյայի ավագ որդին՝ թագաժառանգ Ահմադ բին Յահյային հաջողվել էր փախուստ տալ: Նա կարողացավ իր կողմը գրավեց զայդական ցեղերին, իրեն հռչակեց իմամ, իսկ ալ–Վազիրին՝ «գահի զավթիչ», և սրբազան պատերազմ հայտարարեց նրան: Ահմադին հաջողվեց պարտության մատնել ալ–Վազիրի զորքերին և 1948 թ. մարտի 13–ին գրավել մայրաքաղաք Սանան: 1948 թ. մարտի 15–ին Յահյայի ավագ որդի Ահմադը հռչակվեց Եմենի թագավոր և իմամ: Ալ–Վազիրը մահապատժի ենթարկվեց: Նույն ճակատագրին արժանացան նրա կողմնակիցներից շատ–շատերը, որոնք մասնակցել էին փետրվարի դավադրությանը:

5. Եմենը 1948–1962 թթ.

Ահմադը իր հորից ստացավ ոչ միայն գահը, այլև շատ ծանր սոցիալ–տնտեսական ժառանգություն, որը նա չէր կարող հաշվի չառնել: Նա չէր կարող հաշվի չառնել նաև ժողովրդի տրամադրությունները և պետական հեղաշրջումը ծնող պատճառները: Ուստի սկզբնական շրջանում նա վարում էր շրջահայաց քաղաքականություն և ձգտում ինչ–որ փոփոխություններ մտցնել երկրի կյանքում: Նա ստեղծեց նախարարների խորհուրդ, որը մինչ այդ գոյություն չուներ, պահպանելով մեդրեսեները՝ բացեց աշխարհիկ դպրոցներ, քայլեր ձեռնարկեց առողջապահության զարգացման (հիվանդանոցների կառուցում, բժշկական կադրերի պատրաստում և այլն) ուղղությամբ և այլն, որոնք պետք է ապացուցեին, ինչպես հույս ուներ Ահմադ բին Յահյան, որ նա լիբերալ բարենորոգումների կողմնակից էր:

Նա եռանդուն գործունեություն ծավալեց իր միջազգային դիրքերն ամրապնդելու ուղղությամբ: Նրան հաջողվեց կարգավորել սահմանային վեճերը Անգլիայի հետ, իսկ 1951 թ. մարտի 10–ին ստորագրել նոր պայմանագիր, որով կողմերը պայմանավորվում էին դիվանագիտական ներկայացուցիչների փոխանակում կատարել: Բացի այդ, Անգլիան հանձն էր առնում տնտեսական օգնություն ցույց տալ Եմենին և աջակցել նրան մշակույթի, առողջապահության և լուսավորության զարգացման բնագավառում, սակայն իր այդ հանձնառությունը նա չկատարեց:

Իմամ Ահմադը որոշ չափով բարելավեց իր հարաբերությունները նաև արևմտյան մյուս պետությունների հետ: Նա վերականգնեց դիվանագիտական հարաբերությունները Իտալիայի հետ, ԳՖՀ–ի հետ ստորագրեց պայմանագիր բարեկամության և առևտրի վերաբերյալ, ԱՐԱՄԿՈ–ին թույլատրեց նավթի որոնումներ կատարել Եմենում և այլն:

Ներդաշնակորեն էին զարգանում հարաբերությունները արաբական երկրների, մասնավորապես Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի հետ:

Սակայն Եմենում տեղի էին ունենում, մանավանդ 50–ական թվականների սկզբներից, նաև այլ երևույթներ: 1948 թ. պարտությունից հետո աստիճանաբար ուշքի էին գալիս ընդդիմադիր ուժերը, այդ թվում և «Ազատ եմենցիները», որոնք հիմեցին Եմենական միությունը և դարձյալ առաջադրեցին քաղաքական բարենորոգումների պահանջները: Սակայն, ի տարբերություն նախորդ շրջանի, նրանք իրենց պահանջների մեջ ավելի հեռուն գնացին: Եթե մինչ այդ գլխավոր պահանջը Եմենը

սահմանադրական միապետության վերածելն էր, այժմ առաջ քաշվեց Եմենը հանրապետություն հռչակելու պահանջը:

Սրվեցին հարաբերությունները արքայական ընտանիքի անդամների միջև:

Ահմադին գահի համար մարտահրավեր նետեցին նրա երկու եղբայրները՝ էմիր Աբդալլահը և էմիր Հասանը: Դժգոհությունը համակեց նաև զինվորական որոշ գործիչների, որոնց գլխավորում էր Թաիզի կայազորի պետ փոխգնդապետ Ահմադ Յահյա աս–Սուլլայան: Նա կապված էր «Ազատ եմենցիների» հետ: Դրությունը Եմենում հատկապես սրվեց 1955 թ. սկզբներին, երբ երկրով մեկ ծավալվեց դժգոհության ալիքը: Դժգոհ էին քաղաքի աշխատավոր ժողովուրդը, մանր և միջին բուրժուազիան, պետական ցածրաստիճան պաշտոնյաները, մտավորականությունը, որոնք մեղադրում էին իմամին միջնադարյան համակարգը պահպանելու և երկրի սոցիալ–տնտեսական առաջադիմությանը խոչընդոտելու մեջ:

Իմամ Ահմադը լավատեղյակ էր այս տրամադրություններին և որոշեց առաջին հարվածը ինքը հասցնել: 1955 թ. մարտին նա կարգադրեց ձերբակալել փոխգնդապետ Ահմեդ աս–Սուլլայային և ընդդիմադիր ուժերի այլ ղեկավարների: Սակայն վերջինիս հրամանով նրա կայազորի մարտիկները 1955 թ. մարտի 31–ին ապստամբեցին, շրջապատեցին արքայական պալատը և ստիպեցին իմամ Ահմադին հրաժարվել գահից ու իշխանությունը զիջել իր եղբայր էմիր Աբդալլահին: Բայց վերջինիս թագավորությունը երկար չտևեց: Ահմադի որդի Մուհամմադ ալ–Բադրը կարողացավ ոտքի հանել հյուսիսային զայդական ցեղերին և հենվելով նրանց, հատկապես հաշիդ և բակիլ ցեղերի աշխարհազորայինների վրա՝ 1955 թ. ապրիլի 5–ին գրավեց Թաիզը: Խռովարար էմիրները՝ Աբդալլահը և Աբասը, ինչպես նաև աս–Սուլլայան մահապատժի ենթարկվեցին: Հեղաշրջումը ձախողվեց: Ահմադը վերադարձավ իր գահին, իսկ Մուհամմադ ալ–Բադրը հռչակվեց թագաժառանգ:

Այս, ինչպես նաև 1948 թ. հեղաշրջումը ցնցեցին բացարձակ աստվածապետական, միջնադարյան խավարամիտ ֆեոդալական միապետության հիմքերը: Դրանք վկայում էին այն մասին, որ Եմենի քաղաքական և սոցիալ–տնտեսական համակարգը խոր ճգնաժամ էր ապրում:

Չգտելով կանխել վատթարագույնը՝ իմամ Ահմադը հարկադրաբար որոշ նորամուծություններ կատարեց: Կառուցվեցին արդյունաբերական նոր ոչ մեծ ձեռնարկություններ և արհեստանոցներ, հիմնվեցին առևտրական, շինարարական, տրանսպորտային, էլեկտրական և այլ

բաժնետիրական ընկերություններ, բացվեցին նոր դպրոցներ և հիվանդանոցներ, սկսեցին հրատարակվել նոր թերթեր:

Այս և այլ նորամուծությունների բնագավառում նշանակալի էր թագաժառանգ Մուհամմադ ալ–Բադրի դերը, որը ստանձնել էր վարչապետի տեղակալի, արտաքին գործերի նախարարի և գլխավոր հրամանատարի պաշտոնները: Նա ազատամիտի համբավ էր ձեռք բերել և չէր խորշում ընդդիմության ներկայացուցիչների հետ կապեր պահպանելուց:

50–ական թվականների երկրորդ կեսին ավելի արդյունավետ եղան Եմենի քայլերն արտաքին քաղաքականության բնագավառում: Եմենը մի կողմից ավելի սերտացրեց իր հարաբերությունները արաբական պետությունների, իսկ մյուս կողմից բարելավեց հարաբերությունները սոցիալիստական երկրների հետ: 1956 թ. ապրիլի 21–ին Եմենը Եգիպտոսի և Սաուդյան Արաբիայի հետ ստորագրեց համատեղ պաշտպանական պայմանագիր, իսկ 1958 թ. ֆեդերալ հիմունքներով միացավ Արաբական Միացյալ Հանրապետությանը, որը առաջացել էր Եգիպտոսի և Սիրիայի միավորման հիմքի վրա:

Մի շարք պայմանագրեր ստորագրվեցին ԽՍՀՄ–ի հետ: 1955 թ. հոկտեմբերին ստորագրվեց պայմանագիր բարեկամության և առևտրի վերաբերյալ, 1956 թ. մարտին՝ համաձայնագիր առևտրի և վճարումների մասին, իսկ նույն տարվա հունիսին՝ տնտեսական և տեխնիկական համագործակցության մասին: Խորհրդային Միության տեխնիկատնտեսական օգնությամբ 1958 թ. սկսվեց Հոդեյդա նավահանգստի կառուցումը, որը սկզբունքային կարևոր նշանակություն ուներ Եմենի տնտեսական զարգացման և Անգլիայի կախվածությունից ազատվելու տեսանկյունից: Նավահանգիստը շարք մտավ 1961 թ.: Խորհրդային Միությունը զգալի օգնություն ցույց տվեց Եմենին առողջապահության գործի զարգացման և ազգային կադրերի պատրաստման բնագավառներում:

Հաջողությամբ զարգանում էին Եմենի հարաբերությունները ԳԴՀ–ի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Չինաստանի և սոցիալիստական մյուս երկրների հետ, որոնք օգնում էին Եմենի տնտեսության տարբեր ճյուղերի զարգացմանը, ճանապարհների կառուցմանը և այլն:

Սակայն Եմենի ներքաղաքական վիճակը մնում էր ծայրահեղորեն լարված, որի պատճառը բացարձակ միապետական կառավարական համակարգի գոյությունն էր:

Ընդդիմադիր ուժերից շատերն էին արդեն հասկանում, որ բարենորոգումների ճանապարհով հնարավոր չէ հասնել հարցի ցանկալի

լուծմանը: Նրանց շրջաններում ավելի ու ավելի էր հասունանում միապետության տապալման և հանրապետության ստեղծման գաղափարը, որը տիրապետող է դառնում 50–ական թվականների վերջերին և 60–ական թվականների սկզբներին: Այս նույն ժամանակ տեղի ունեցան ցեղերի, քաղաքային բնակչության, անգամ զինվորների բազմաթիվ ելույթներ, իսկ 1961 թ. մարտին զինվորները մահափորձ կատարեցին իմամ Ահմադի վրա, սակայն անհաջող: Բայց դա արդեն որևէ նշանակություն չուներ, հին վարչակարգի օրերը հաշվված էին: Նրա անկումը արագացավ շնորհիվ այն բանի, որ բանակը դադարեց միապետության հուսալի հենարանը լինելուց, մանավանդ երբ 1961 թ. հիմնվեց «Ազատ սպաներ» գաղտնի կազմակերպությունը, որի ղեկավարներն էին Աբդալլահ աս–Սալալը, Աբդալլահ Ջուզեյլանը և Ալի Աբդ ալ–Մուղնին: Սակայն նրանց մեջ առավել աչքի ընկնողը գնդապետ աս–Սալալն էր:

6. 1962 թ. սեպտեմբերի 26–ի հեղափոխությունը

1962 թ. սեպտեմբերի 19–ին վախճանվեց իմամ Ահմադը, և հաջորդ օրը նրա որդին՝ Մուհամմադ ալ–Բադրը, հռչակվեց Եմենի թագավոր և իմամ: Նա հայտարարեց, որ մտադիր է իրականացնել առաջադիմական բարեփոխումներ, ինչն ընդունվեց գոհունակությամբ: Սակայն դրանից մի փոքր անց նա հայտարարեց, որ մտադիր է շարունակել իր հոր քաղաքականությունը և հրաման արձակեց ձերբակալել «Ազատ սպաներ» կազմակերպության մի շարք անդամների: Դա ազդանշան ծառայեց զինվորականների ելույթի համար: 1962 թ. սեպտեմբերի 26–ին «Ազատ սպաներ» կազմակերպությանը հավատարիմ զորքերը շրջապատեցին Ալ–Բաշիր թագավորական պալատը և գնդակոծեցին այն: 1962 թ. սեպտեմբերի 27–ին Սանայի ռադիոն հայտնեց ի լուր Եմենի ժողովրդի՝ միապետության տապալման և հեղափոխության հաղթանակի մասին: Բանակի կողմից հրապարակված առաջին հայտարարության մեջ ասվում էր, որ «Հեղափոխությունը, տապալելով իմամների միապետական դաժան վարչակարգը, փրկեց երկիրը նրա ժողովրդի վատթարագույն թշնամիներից՝ բանվորների, գյուղացիների և վաճառականների թշնամիներից»: Այդ հայտարարության մեջ խոսվում էր մի այնպիսի սուր և ցավոտ հարցի մասին, որպիսին բոլոր կրոնական աղանդների և ցեղերի իրավունքների հավասարության հարցն էր: Եմենի նոր հեղափոխական իշխանությունները հայտարարում էին, որ «այլևս չեն լի-

նելու ո՛չ զայդիականներ, ո՛չ շաֆիականներ, ո՛չ կահթանիականներ, ո՛չ հաշիմականներ»:

1962 թ. սեպտեմբերի 28–ին վերացվեց միապետությունը, և հռչակվեց Եմենի Արաբական Հանրապետությունը՝ ԵԱՀ: Այդ նույն օրը ստեղծվեց Հեղափոխական հրամանատարության խորհուրդ՝ Աբդալլահ աս–Սալալի գլխավորությամբ: Նա ստանձնեց նաև վարչապետի պաշտոնը: Ստեղծվեց նաև պրեզիդենտական խորհուրդ Մուհամմադ Ալի Օսմանի գլխավորությամբ: Ընդունվեցին կարևոր օրենքներ Ազգային գվարդիայի կազմավորման և Ազգային պաշտպանության բարձրագույն խորհրդի ստեղծման մասին: Այս վերջին մարմինը կարևոր էր այն իմաստով, որ նրա մեջ մտան 180 շեյխեր:

Հեղափոխության հաղթանակը և ԵԱՀ–ի ստեղծումը ողջունեցին աշխարհի առաջադիմական–դեմոկրատական ուժերը: ԽՍՀՄ–ը առաջինը մեծ պետություններից ճանաչեց նորաստեղծ հանրապետությունը: Նույն քայլին դիմեցին նաև սոցիալիստական մյուս պետությունները, Ասիայի և Աֆրիկայի մի շարք երկրներ:

Բոլորովին հակառակ արձագանք գտավ Եմենի կյանքում տեղի ունեցած այդ պատմական երևույթը պահպանողական ուժերի, առաջին հերթին՝ Սաուդյան Արաբիայի, Հորդանանի, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի մոտ: Սաուդյան Արաբիան ապաստան տվեց հեղաշրջման ժամանակ հրաշքով փրկված Մուհամմադ ալ–Բադրին:

Հեղափոխության հետևանքով իշխանությունից զրկվեցին ֆեոդալական–ցեղային ավագանին, շեյխերը, և իշխանությունն անցավ մանրբուրժուական դեմոկրատների ձեռքը:

Հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո ընդունվեցին մի շարք առաջադիմական օրենքներ և որոշումներ: Բռնագրավվեց թագավորական ընտանիքին պատկանող ամբողջ հողը: Նույն օրենքի տակ ընկավ նաև այն կալվածատերերի սեփականությունը, որոնք հանդես էին գալիս միապետական վարչակարգի պաշտպանությամբ: Անցկացվեց ֆինանսական–դրամական ռեֆորմ, և ստեղծվեց նոր վայրուտա: Դրա շնորհիվ ԵԱՀ–ի դրամական համակարգը ազատվեց Ադենի, այսինքն՝ Մեծ Բրիտանիայի վերահսկողությունից: Հիմնվեց Եմենի վերակառուցման և զարգացման բանկ, կազմվեց Եմենի պատմության մեջ առաջին պետական բյուջեն, հայտարարվեց երկրի տնտեսական զարգացման պլանավորման անհրաժեշտության մասին, թեև շեշտվեց, որ կապահովվի մասնավոր սեփականություն ունենալու իրավունքը: Երկ-

րի պաշտպանությունն ամրապնդելու նպատակով լուրջ քայլեր ձեռնարկվեցին ժամանակակից ազգային բանակ ստեղծելու ուղղությամբ, և այդ հարցում ԵԱՀ–ն համապատասխան օգնություն ստացավ ԽՍՀՄ–ից, Չեխոսլովակիայից և ԱՄՀ–ից:

Հեղափոխության հաղթանակից հետո առաջին շրջանում բավականին նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Եմենի նորակազմ բանվոր դասակարգի զարգացման և կյանքի պայմանների համար: 1963 թ. մարտի 25–ին պրեզիդենտ աս–Սալալի որոշմամբ թույլատրվեց շինարարական բանվորներին՝ հիմնել իրենց արհմիությունը, որի շարքերում միավորվեցին ինը հազար բանվորներ: Նա հետագայում ակտիվ պայքար ծավալեց բանվորների տնտեսական դրության բարելավման, նրանց իրավունքների պաշտպանության և արժանապատվության հարգման համար:

1964 թ. ապրիլի 27–ին ընդունվեց ԵԱՀ–ի առաջին մշտական սահմանադրությունը, որը Եմենի Արաբական Հանրապետությունը հայտարարում էր «արաբական, իսլամական, անկախ և գերիշխան պետություն»: Իսլամը դարձավ պետական կրոն, իսկ շարիաթը համարվեց Եմենում ընդունվող բոլոր օրենքների աղբյուր:

Սահմանադրության համաձայն՝ պետության ղեկավարը դառնում էր պրեզիդենտը, որն օժտված էր լայն լիազորություններով: Նա էր նշանակում փոխպրեզիդենտին, վարչապետին և նախարարներին: ԵԱՀ–ի առաջին պրեզիդենտ դարձավ Աբդալլահ աս–Սալալը: Ինչ վերաբերում է օրենսդիր իշխանությանը, ապա նա, համաձայն սահմանադրության, պատկանում էր Խորհրդատվական խորհրդին:

7. Քաղաքացիական պատերազմը Եմենում

Սակայն հեղափոխության բնականոն ընթացքը խաթարվեց Եմենում բռնկված քաղաքացիական պատերազմի հետևանքով: Սաուդյան Արաբիան, ինչպես նաև Հորդանանը, որոնք վախենում էին հեղափոխական ալիքի տարածումից, թիկունք կանգնեցին ալ–Բադրին և միապետականներին՝ նպատակ ունենալով վերականգնել միապետական կարգերը Եմենում: Նույնպիսի թշնամական դիրք գրավեց հեղափոխության նկատմամբ նաև Մեծ Բրիտանիան, որը խիստ մտահոգված էր Ադենում և շրջակա տարածքներում Եմենի դեպքերի ազդեցության տակ հակագաղութային պայքարի ուժեղացման հեռանկարից:

Հյուսիսային Եմենում՝ Եմենա–սաուդյան սահմանագծի մոտ, կազմավորվեցին հակահեղափոխական ռազմական ուժեր, որոնք 1962 թ. նոյեմբերին հարձակում սկսեցին նոր վարչակարգի հսկողության տակ գտնվող շրջանների վրա: Իսկ անգլիացիները զինված բախումներ էին հրահրում հարավային սահմաններում, որի պատճառով ԵԱՀ–ի կառավարությունը 1963 թ. փետրվարին փակեց բրիտանական դեսպանությունը Սանայում:

Հեղափոխությունը պաշտպանելու համար կառավարությունը ստեղծեց Ազգային գվարդիա և կոչ արեց բնակչությանը՝ ոտքի ելնել ի պաշտպանություն հայրենիքի:

Աս–Սալալը դիմեց նաև մի քայլի, որը կարելի է համարել տարօրինակ: Նա, հենվելով դեռևս 1956 թ. Ջիդայում՝ Սաուդյան Արաբիայում, Եմենի, Եգիպտոսի և Սաուդյան Արաբիայի միջև պաշտպանության վերաբերյալ կնքված պայմանագրի վրա, օգնության համար դիմեց Եգիպտոսին և Սաուդյան Արաբիային՝ խնդրելով նրանց իրենց զորքերը մտցնել Եմեն: Այդ քայլը տարօրինակ էր, քանի որ Սաուդյան Արաբիան բացահայտորեն պաշտպանում էր տապալված թագավոր և իմամ ալ–Բադրին և ռոյալիստներին: Հավանաբար նա այդ քայլին դիմել էր տակտիկական նպատակներով՝ ցանկանալով Եգիպտոսի օգնությամբ հակակշռել Սաուդյան Արաբիային և չեզոքացնել նրա թշնամական գործողությունները նոր վարչակարգի նկատմամբ:

Հարկ է նաև նկատի ունենալ, որ աս–Սալալը Եգիպտոսին դիմել էր, քանի որ Եմենը միացել էր 1958 թ. Եգիպտոսի և Սիրիայի միավորման հիմքի վրա ստեղծված ԱՄՀ–ին:

Ի պատասխան եմենական խնդրանքի՝ եգիպտական զորամիավորումները ժամանեցին ԵԱՀ: Նրանց թիվը հետագայում հասավ մոտ 70 հազարի: 1962 թ. նոյեմբերի 10–ին ԱՄՀ–ի և ԵԱՀ–ի միջև ստորագրվեց դաշինքի և փոխադարձ օգնության պայմանագիր, որը իրավական հիմք հանդիսացավ եգիպտական օգնության համար: Եմեն իր զորքերը մտցրեց նաև Սաուդյան Արաբիան:

Պատերազմական գործողությունները հանրապետականների և ռոյալիստների միջև ընթանում էին փոփոխակի հաջողությամբ: Մերթ միապետականներին էր հաջողությունը ուղեկցում, որոնք, գրավելով հյուսիսում և արևելքում գտնվող կարևոր բնակավայրերը՝ Սաադան, Շահարան, Մարիբը, Խարիբը և այլն, սպառնում էին մայրաքաղաքին: Մերթ հանրապետականներին էր հաջողվում մոբիլիզացնել իրենց ուժե-

րը և լրացուցիչ օգնություն ստանալով եգիպտացիներից՝ հակահարձակման անցնել և պարտության մատնել միապետականներին: Սակայն կողմերից ոչ մեկը չէր կարողանում վճռական հաջողության հասնել, և քաղաքացիական պատերազմը շարունակվում էր:

Հաշվի առնելով ստեղծված փակուղին՝ Եգիպտոսը և Սաուդյան Արաբիան վերջինիս մայրաքաղաք Առ-Ռիյադում 1965 թ. օգոստոսին համաձայնության եկան՝ դադարեցնել բոլոր տեսակի օգնությունը քաղաքացիական պատերազմի երկու կողմերին և իրենց զորքերը դուրս բերել Եմենից: Համաձայնագրի տակ դրված էին Եգիպտոսի պրեզիդենտ Նասերի և Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆայսալի ստորագրությունները: Եվ չնայած այդ հանգամանքին՝ համաձայնագիրը մնաց թղթի վրա և չկենսագործվեց կյանքում:

Քաղաքացիական պատերազմը շարունակվեց, որն ապակայունացնում էր երկրի քաղաքական վիճակը, խանգարում կառավարությանը՝ իրագործելու իր ծրագրերը, մանավանդ սոցիալ-տնտեսական բնագավառում:

Սկսվել էր դժգոհություն կուտակվել նաև եգիպտացիների նկատմամբ: Եգիպտական զինվորականների հետ միասին Եմեն եկան նաև քաղաքացիական խորհրդականներ՝ օժտված լայն լիազորություններով, առանց որոնց թույլտվության ոչ մի բան չէր ձեռնարկվում ԵԱՀ-ի նախարարությունների և պետական ապարատի կողմից: Շատերը դժգոհ էին անձամբ Աբդալլահ աս-Սալալից, որը չէր կարողանում համապատասխան լուծումներ գտնել, ժամանակի զգալի մասը անց էր կացնում Կահիրեում և չափից ավելի էր հաշվի առնում եգիպտական հանձնարարությունները: Ահա այս հողի վրա ընդդիմադիր խումբ առաջացավ հանրապետականների ներսում, որը 1966 թ. օգոստոսին, օգտվելով աս-Սալալի հերթական բացակայությունից, փորձեց պետական հեղաշրջում կատարել, սակայն անհաջող:

Դրությունը փոխվեց 1967 թ. հունիսյան պատերազմից հետո, երբ Նասերը ստիպված էր նոր մոտեցում ցուցաբերել ԵԱՀ-ում գտնվող զորքերի հարցում: Խարտումում 1967 թ. օգոստոսին նա համաձայնության եկավ Սաուդյան Արաբիայի Ֆայսալ թագավորի հետ, ըստ որի՝ ա) Եգիպտոսը պարտավորվում էր դուրս էր բերել իր զորքերը ԵԱՀ-ից, բ) Սաուդյան Արաբիան դադարեցնում էր օգնությունը ալ-Բադրին ու միապետականներին, գ) ԵԱՀ-ում անց էր կացվելու հանրաքվե՝ երկրի ապագա պետական կառուցվածքի վերաբերյալ:

Աս–Սալալը և հանրապետականները չընդունեցին Խարտումի որոշումները, և հարաբերությունները սրվեցին Եգիպտոսի հետ: Դա ավելի թուլացրեց աս–Սալալի դիրքերը: 1967 թ. նոյեմբերի 5–ին ԵԱՀ–ում տեղի ունեցավ պետական հեղաշրջում: Երբ աս–Սալալը կառավարական պատվիրակության հետ թռչում էր Բաղդադ, Եմենի ռադիոն հայտարարեց ի լուր ԵԱՀ–ի ժողովրդի, որ Աբդալլահ աս–Սալալը պաշտոնանկ է արվել: Այդ նույն օրը Սանայում ստեղծվեց Հանրապետական խորհուրդ՝ Աբդ առ–Ռահման ալ–Արյանիի գլխավորությամբ:

Պետական հեղաշրջման հետևանքով իշխանությունից հեռացվեցին մանրբուրժուական դեմոկրատները, և իշխանությունն անցավ ֆեոդալական–ցեղային ավագանու, բուրժուազիայի, բարձրաստիճան պաշտոնյաների և զինվորականության ներկայացուցիչների ձեռքը:

Օգտվելով ստեղծված որոշ խառնաշփոթ վիճակից՝ միապետականները 1967 թ. նոյեմբերին անցան հարձակման, բավականին հեշտությամբ առաջ շարժվեցին և դեկտեմբերին շրջապատեցին Սանան: Սանայի շրջափակումը տևեց 70 օր, և միայն մեծ ջանքերի շնորհիվ, ժողովրդին ոտքի հանելով, որում մեծ դեր խաղացին ընդհատակից դուրս եկած մի շարք կազմակերպություններ, ինչպես Արաբ նացիոնալիստների շարժումը և Բաաս կուսակցության Եմենի մասնաճյուղը, հաջողվեց 1967 թ. փետրվարին ճեղքել մայրաքաղաքի շրջափակումը: Դրանից հետո միապետականների դիմադրությունը թուլացավ, և քաղաքացիական պատերազմը 1969 թ. աստիճանաբար գնաց դեպի մարում: Այդ թվականի կեսերին ԵԱՀ–ի համարյա ամբողջ տարածքը ազատագրված էր, և շատ միապետականներ, տեսնելով, որ այլևս հեռանկար չկա, պայքարը դադարեցնում էին: 1970 թ. մարտին Սաուդյան Արաբիայի, ԵԱՀ–ի և միապետականների պատվիրակությունը համաձայնության եկան հետևյալի շուրջը. ա) Սաուդյան Արաբիան դադարեցնում է ամեն տեսակի օգնություն միապետականներին, բ) ճանաչում է ԵԱՀ–ն, գ) ԵԱՀ–ն պարտավորվում է պետական ապարատը և բանակը մաքրել առաջադեմ գործիչներից:

Այսպես ավարտվեց մոտ 8 տարի տևած քաղաքացիական պատերազմը Եմենում:

8. Եմենի քաղաքացիական կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը (1970–1974 թթ.)

Դեռևս 1970 թ. փետրվարին վարչապետի պաշտոնը ստանձնած Մուհսին ալ–Այնին մշակեց և Հանրապետական խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր կառավարության ծրագիրը ներքին և արտաքին քաղաքականության բնագավառներում: Նրանում մեծ տեղ էին գրավում հարաբերությունների կարգավորումը Սաուդյան Արաբիայի, կապերի ընդլայնումը արտաքին աշխարհի հետ, երկրի տնտեսության զարգացման, տարբեր քաղաքական հոսանքների համախմբման և այլ հարցեր: Եվ պետք է ասել, որ նա որոշ հարցերում հասավ շոշափելի արդյունքների: Կարգավորվեցին հարաբերությունները Սաուդյան Արաբիայի, վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները ԳՖՀ–ի և Անգլիայի հետ, դրական տեղաշարժեր արձանագրվեցին Իտալիայի և ԱՄՆ–ի հետ ունեցած կապերում: Կառավարությունը աչքաթող չարեց նաև կապերի ընդլայնումը Խորհրդային Միության և սոցիալիստական մյուս երկրների հետ: Այս բոլորը դրականորեն ներգործեցին երկրի տնտեսական կյանքի աշխուժացման վրա:

1970 թ. դեկտեմբերին ընդունվեց նոր մշտական սահմանադրություն: Կուսակցական գործունեությունն արգելվեց, իսկ իսլամը կրկին հռչակվեց պետական կրոն: 1971 թ. ստեղծվեց Խորհրդակցական խորհուրդ, որի նախագահը դարձավ հայտնի շեյխ և պահպանողական հայացքների տեր Աբդալլահ ալ–Ահմադը:

Սակայն ալ–Այնիին չհաջողվեց լուծել երկրի առջև կանգնած դժվարագույն ֆինանսական և տնտեսական խնդիրները, և 1971 թ. մայիսին նա հրաժարական տվեց: Նոր վարչապետ նշանակվեց Ահմադ Մուհամմադ Նումանը, որին նույնպես չհաջողվեց կարգավորել ֆինանսները և վերակառուցել պետական ապարատը: 1971 թ. սեպտեմբերին կրկին վարչապետի պաշտոնը գրավեց ալ–Այնին, որը ալ–Արյանիի հետ միասին կազմում էր Եմենի ղեկավարության այսպես կոչված ճկուն հոսանքը:

Այս շրջանում առաջնակարգ նշանակություն ձեռք բերեց ԵԱՀ–ի փոխհարաբերությունների հարցը Հարավային Եմենի՝ Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության (ԵԺԴՀ) հետ: 1972 թ. սեպտեմբերի 26–ին հարավեմենյան դիմադրության զինջոկատները, որոնք տեղակայված էին ԵԱՀ–ի հարավային մասում, ԵԱՀ–ի հյուսիսային ցեղերի աջակցությամբ ներխուժեցին ԵԺԴՀ, գրավեցին նրա մի շարք բնակավայ-

ներ: Նրանք հույս ունեին, որ ԵԺԴՀ–ում գլուխ կբարձրացնի ընդդիմությունը, և նրանց օգնությամբ կգրավեն ամբողջ ԵԺԴՀ–ն: Սակայն դա չստացվեց, և Արաբական պետությունների լիգայի շրջանակներում բանակցություններ սկսվեցին ԵԱՀ–ի և ԵԺԴՀ–ի միջև: Կողմերը համաձայնության եկան երկու պետությունները միավորելու հարցի շուրջ, որը պետք է իրականացվեր ոչ թե անհապաղ, այլ աստիճանաբար: Այդ տեսակետը կրկին հաստատվեց 1972 թ. նոյեմբերի 26–28–ը լիբիական մայրաքաղաքում՝ Տրիպոլիում, տեղի ունեցած բանակցությունների ժամանակ: Ընդունվեց համապատասխան փաստաթուղթ: Նախատեսված էր ստեղծել միասնական պետություն, որը գործելու էր արաբական իսլամական սոցիալիզմի և սոցիալական արդարության սկզբունքների հիման վրա:

ԵԱՀ–ի Խորհրդակցական խորհուրդը հավանություն տվեց այդ փաստաթղթին: Բայց այն դժգոհությամբ ընդունեցին Հյուսիսային Եմենի ցեղապետները և նրանց թիկունքում կանգնած Սաուդյան Արաբիան: Վերջինս, որպես պատժամիջոց, դադարեցրեց ֆինանսական և տնտեսական օգնությունը ԵԱՀ–ին: Ալ–Այնին ստիպված էր հրաժարական տա, և կառավարության նախագահ դարձավ Սաուդյան Արաբիայի դրածո Աբդալլահ ալ–Հաջարին, որը բացահայտորեն վարում էր սաուդամետ քաղաքականություն: 1973 թ. մարտի 17–ին նա ստորագրեց պայմանագիր, որով ճանաչում էր Ասիրի, Ջիզանի և Նաջրանի անցումը Սաուդյան Արաբիային: Շատերը ալ–Հաջարիին դրա համար անվանում էին ԵԱՀ–ի ազգային շահերի դավաճան: Եվ ընդհանրապես այդ ժամանակ խիստ մեծացավ Սաուդյան Արաբիայի միջամտությունը ԵԱՀ–ի ներքին գործերին: Օգտվելով այն հանգամանքից, որ խիստ դժգոհություն էր կուտակվել ալ–Հաջարիի քաղաքականության դեմ՝ Հանրապետական խորհրդի նախագահ ալ–Արյանին 1974 թ. փետրվարին հասավ նրա հրաժարականին և երկրի նոր վարչապետ դարձավ ավելի առաջադիմական հայացքների տեր Հասան Մաքին:

Սակայն երկրում վիճակը մնում էր խիստ լարված և անկայուն: Ակնհայտ էր, որ կողմերից և ոչ մեկը՝ ոչ պահպանողականները և ոչ էլ ճկուն գծի կողմնակիցները, չունեին բացարձակ ազդեցություն և չէին կարող ապահովել ներքաղաքական կայունություն և սոցիալ–տնտեսական առաջադիմություն: Կրկին քաղաքական ասպարեզում հայտնվեց բանակը, որը 1974 թ. հունիսի 13–ին գրավեց իշխանությունը: Նրա գործողությունները ղեկավարում էր ԵԱՀ–ի ռազմական ուժերի գլխավոր հրամանատարի տեղակալ փոխգնդապետ Իբրահիմ ալ–Համդին:

Ալ–Սիմարը, ալ–Արյանին և Նումանը հրաժարական տվեցին իրենց զբաղեցրած պաշտոններից:

9. ԵՄԵՆԸ 1974–1985 թթ.

Իշխանությունն անցավ Հրամանատարության խորհրդի ձեռքը, որի ղեկավարը ալ–Համդին էր: Նրա որոշմամբ ցրվեցին Հանրապետական և Խորհրդակցական խորհուրդները, կասեցվեց սահմանադրության գործողությունը: Հրամանատարության խորհուրդը հայտարարեց, որ կանցկացվեն բարենորոգումներ, իսկ հետագայում կվերականգնվի պառլամենտական դեմոկրատիան: Այս խնդիրների իրագործման համար կազմվեց նոր կառավարություն՝ փորձառու ալ–Այնիի ղեկավարությամբ:

Երկրում կիրառվեցին մի շարք միջոցառումներ ուժեղ կենտրոնացված իշխանություն ստեղծելու և տոհմատիրական ցեղային ավագանու դիրքերը թուլացնելու ուղղությամբ, որը թշնամաբար ընդունվեց վերջինիս կողմից:

1975–1976 թթ. ընթացքում զգալի տեղաշարժեր կատարվեցին երկրի տնտեսական կյանքում: Ընդունվեց և սկսեց կիրառվել ԵԱՀ–ի տնտեսական զարգացման եռամյա ծրագիրը, կարգավորվեց հարկերի գանձումը, որի շնորհիվ ավելացան պետական բյուջետային եկամուտները, հաջողվեց կանգնեցնել պարենային ապրանքների գների բարձրացումը, առաջին անգամ անցկացվեց բնակչության մարդահամար: Այս բոլորի հետևանքով զգալիորեն ամրացան ալ–Համդիի դիրքերը:

Սակայն իր շարքերն էր համախմբում նաև ֆեոդալական–ցեղային ավագանին, որի վերահսկողության տակ 1977 թ. կեսերին գտնվում էր երկրի տերիտորիայի կեսը: Եմենի կանոնավոր բանակը 1977 թ. ամռանը պատերազմական գործողություններ սկսեց հյուսիսի շեյխերի դեմ: Կոնֆլիկտին միջամտեց Սաուդյան Արաբիան, որի ջանքերի շնորհիվ կրակը դադարեցվեց: Բայց դրությունը մնում էր լարված:

Զինվորական ղեկավարության հարաբերությունները լարված էին նաև ձախ դեմոկրատական ուժերի հետ, որոնք 1976 թ. միավորվեցին և ստեղծեցին ԵԱՀ–ի Ազգային–դեմոկրատական ճակատը (ԱԴճ):

Ահա այսպիսի իրադրության մեջ 1977 թ. հոկտեմբերի 11–ին սպանվեց ալ–Համդին: Ստեղծվեց Հրամանատարության խորհրդի նոր կազմ՝ Սիմադ Հուսեյն ալ–Ղաշմիի գլխավորությամբ: Այս խորհուրդը, ինչպես նրա նախորդները, հանդես եկավ բարեփոխումների և ժողովր-

դի վիճակը բարելավելու հայտարարությամբ: Նա 1978 թ. ընդունեց նոր սահմանադրական հայտարարություն, որով ստեղծվում էր ժողովրդական սահմանադիր ժողով (ԺՍԺ), որը ապագայում կարող էր վերածվել պառլամենտի: 1978 թ. ապրիլին ԺՍԺ–ն ալ–Ղաշմիին ընտրեց ԵԱՀ–ի պրեզիդենտ, որի ձեռքում էր կենտրոնացված ամբողջ փաստացի իշխանությունը: Բայց ալ–Ղաշմին չհասցրեց որևէ լուրջ քայլ ձեռնարկել, քանի որ 1978 թ. հունիսի 24–ին նա նույնպես սպանվեց:

1978 թ. հուլիսի 17–ին ԺՍԺ–ի նիստում ԵԱՀ–ի ռազմական ուժերի գլխավոր հրամանատարի տեղակալ և գլխավոր շտաբի պետ փոխգնդապետ Ալի Աբդալլահ Սալիհը ընտրվեց ԵԱՀ–ի պրեզիդենտ:

Նորընտիր պրեզիդենտը ձեռնամուխ եղավ երկրի առջև կանգնած մի շարք բարդ խնդիրների լուծմանը: 1979 թ. մարտին հաջողվեց հասնել կրակի դադարեցմանը ԵԺԴՀ–ի հետ: Ընդհարումները եմենական երկու պետությունների միջև սկսվել էին ալ–Ղաշմիի սպանությունից հետո, որի մեջ մեղադրում էին ԵԺԴՀ–ին: Կողմերը ստորագրեցին հայտարարություն միասնության մասին և ստեղծեցին տարբեր հանձնաժողովներ միավորումն իրականացնելու նպատակով:

Դրանից հետո Սալիհն անցավ ներքին հարցերի կարգավորմանը: 1979 թ. ապրիլին ընդլայնվեցին ԺՍԺ–ի իրավասությունները: Հաջորդ տարվա մայիսին ստեղծվեց Ազգային երկխոսության կոմիտե, որի մեջ մտավ նաև ԱԴՆ–ի ներկայացուցիչը: Կոմիտեի գլխավոր խնդիրն էր Ազգային խարտիայի՝ ԵԱՀ–ի քաղաքական ծրագրային փաստաթղթի ստեղծումը: Ամբողջ 1980–1981 թթ. ընթանում էր այդ ծրագրի քննարկումը: Այն պետք է ներկայացվեր երկրի նոր բարձրագույն մարմնի՝ Համընդհանուր ժողովրդական կոնգրեսի (ՀԺԿ) հաստատմանը: Նրա առաջին նստաշրջանը բացվեց 1982 թ. օգոստոսի 24–ին, որը հավանություն տվեց Ազգային խարտիային, ընտրեց կոնգրեսի Մշտական հանձնաժողով և գլխավոր քարտուղար: Մշտական հանձնաժողովի նախագահ և գլխավոր քարտուղար դարձավ Սալիհը: 1983–1984 թթ. ՀԺԿ–ի մասնաճյուղերը և սկզբնական կազմակերպությունները ստեղծվեցին նահանգներում և գավառներում: Որպես դրական երևույթ պետք է նշել նաև 1984 թ. ԵԱՀ–ի բանվորների արհմիությունների ընդհանուր ֆեդերացիայի, ինչպես նաև կոոպերատիվների միության ընդհանուր ֆեդերացիայի հիմնումը:

1982 թ. ԵԱՀ–ն ձեռնամուխ եղավ տնտեսական զարգացման երկրորդ հնգամյա պլանի (1982–1986 թթ.) կենսագործմանը: Շարք մտան

մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, կառուցվեցին խճուղային ճանապարհներ, անցկացվեցին էլեկտրահաղորդման գծեր:

Որոշ չափով բարելավվեց աշխատավորների վիճակը: 1979 թ. բարձրացվեց պետական ծառայողների աշխատավարձը, ընդունվեց օրենք սոցիալական ապահովության, իսկ 1980 թ.՝ զինծառայողներին կենսաթոշակով ապահովելու մասին: Գները վերահսկելու և նրանց բարձրացումը կանխելու համար կառավարությունը զգալի միջոցներ էր հատկացնում պետական բյուջեից:

Շնորհիվ այս ամենի, ինչպես նաև ճկուն քաղաքականության, Սալիհին հաջողվեց հասնել երկրի ներքին դրության կայունացմանը:

Շոշափելի էին նաև ԵԱՀ–ի հաջողություններն արտաքին քաղաքականության բնագավառում: ԵԱՀ–ն վարում էր դրական չեզոքության և բլոկներին չմիանալու քաղաքականություն:

ԵԱՀ–ն առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում ԵԺԴՀ–ի հետ հարաբերություններին: 1982 թ. ստեղծվեցին պրեզիդենտական խորհուրդ, որի մեջ մտան ԵԱՀ–ի և ԵԺԴՀ–ի պրեզիդենտները, և միջկառավարական խառը հանձնաժողով՝ կազմված երկու երկրների վարչապետներից, որոնք կոչված էին իրագործելու երկու պետությունների միավորման մասին 1979 թ. հայտարարությունը:

ԵԱՀ–ն պաշտպանում էր Պաղեստինի արաբ ժողովրդի պայքարը, օգնություն ցույց տալիս ՊԱԿ–ին, իսկ 1982 թ. իսրայելական ագրեսիայից հետո ընդունեց Պաղեստինի դիմադրության շարժման մարտիկներին: ԵԱՀ–ն դատապարտեց քեմպդեյվիդյան սեպարատիստական համաձայնագիրը և 1979 թ. խզեց դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի հետ:

Այս տարիներին բարելավվեցին և հետագա զարգացում ստացան ԵԱՀ–ի հարաբերությունները ԽՍՀՄ–ի հետ: 1984 թ. հոկտեմբերին ԽՍՀՄ այցելեց Սալիհը, և Մոսկվայում ստորագրվեց բարեկամության և համագործակցության պայմանագիր:

ԵԱՀ–ի առջև կարևոր խնդիրներից մեկը Եմենական երկու պետությունների միավորման հարցն էր: Չնայած դրա վերաբերյալ ընդունված մի շարք փաստաթղթերին՝ հարցը տեղից չէր շարժվում, որը դարձել էր ԵԱՀ–ի և ԵԺԴՀ–ի ներքին քաղաքական կյանքի անկայունության աղբյուրներից և նրանց միջև փոխհարաբերությունների պարբերաբար սրման պատճառներից մեկը:

II. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՄԵՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԵՄԵՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

1. Հարավային Եմենի կարգավիճակը (1917–1945 թթ.)

Արաբական թերակղզու հարավային մասը կազմող տարածքը, որը հայտնի է Հարավային Եմեն ընդհանուր անվանմամբ, ամբողջությամբ Անգլիայի տիրապետության տակ հայտնվեց XIX դարում: Դեռևս 1839 թ. փետրվարի 2–ին Անգլիան «Բարեկամության և խաղաղության» պայմանագիր կնքեց Լահջի սուլթան Մոհսին Ֆադլի հետ, որով վերջինս ճանաչում էր Անգլիայի «իրավունքները» Ադենի նկատմամբ: Հետագայում անգլիացիները մեկ տասնյակից ավելի համանման պայմանագրեր կնքեցին հարավեմենական տարբեր սուլթանների և շեյխերի հետ, որոնց շնորհիվ նրանք, փաստորեն, իրենց տիրապետությունը հաստատեցին համարյա ամբողջ Հարավային Եմենի վրա: Անգլիայի բազմաթիվ գաղութային տիրույթներին ավելացավ ևս մեկը՝ Հարավային Եմենը, որը կարևոր ստրատեգիական դիրք էր գրավում: XIX դ. վերջին Անգլիան վերանայեց «Բարեկամության և խաղաղության» պայմանագրերը և հարավեմենական սուլթաններին ու շեյխերին պարտադրեց նորերը, որոնցով նրանք ճանաչում էին անգլիական պրոտեկտորատի հաստատումը Հարավային Եմենում: Հետագայում՝ 1914 թ. կնքված համաձայնագրով Հարավային Եմենի քաղաքական կարգավիճակը ճանաչեց Օսմանյան կառավարությունը:

Հյուսիսային Եմենում ծավալված ազատագրական պայքարի ազդեցության տակ հակագաղութային շարժում սկսվեց նաև Հարավային Եմենում, թեև այն իր կազմակերպվածությամբ և թափով զիջում էր Արաբական Արևելքի մյուս երկրներում ծավալված համանման շարժումներին: Երկրի հետամնաց լինելու և ֆեոդալական–ցեղային կառուցվածքի պատճառով այդ շարժումների հիմնական ուժը ցեղերն էին, քոչվոր և նստակյաց գյուղացիները: Այդ ելույթներից, որոնք երբեմն շատ երկար էին տևում, հիշատակության են արժանի Ռադֆանի շրջանի (1918–1938 թթ.), ավալիկ ցեղերի (1936–1946 թթ.), ինչպես նաև Բեյհանի (1942 թ.), Հադրամաութի (1944 թ.) գյուղացիների ելույթները, որոնք շատ հաճախ

հակագաղութային շարժմանը զուգահեռ, հակաֆեոդալական գունավորում էին ստանում:

Անգլիան իր տիրապետությունը պահպանելու և ամրապնդելու համար շատ խորամանկ և ճկուն քաղաքականություն էր վարում: Նա լրացուցիչ ցամաքային զորքեր բերեց Ադեն, իսկ 1928 թ. նաև ռազմաօդային ուժեր: Նա ցեղերից կազմակերպեց այսպես կոչված գվարդիա, որը պետք է փոխարիներ բրիտանական հետևակին: Ստեղծվեց նաև կառավարական գվարդիա, որը կոչված էր «կարգ ու կանոն» պահպանելու համար: Այն գտնվում էր անգլիական և եմենական սպաների հրամանատարության ներքո, և նրա ֆինանսական ծախսերն ամբողջությամբ հոգում էր Անգլիան: 1934 թ. արևմտյան շրջանների ցեղերից կազմակերպվեց Ադենի պրոտեկտորատի աշխարհազորը: Այն նույնպես ենթարկվում էր անգլիական հրամանատարին, և նրա խնդիրն էր պահպանել սահմանը Հյուսիսային Եմենի հետ և անգլիական ռազմաօդային բազաները Ադենում: Իսկ Հադրամութում անգլիացիները ստեղծեցին Բեդվինական լեգեոն, որը հիմնականում պատժիչ առաքելություն էր իրագործում:

Դրա հետ զուգահեռաբար անգլիացիները վարում էին ցեղերին պառակտելու և միմյանց դեմ լարելու քաղաքականություն: Նրանք հովանավորում և վարձատրում էին այն ցեղապետներին, որոնք հնազանդ էին նրանց և ձգտում էին իրենց իշխանությունը տարածել այն ցեղապետների վրա, որոնք լոյալ չէին անգլիացիների նկատմամբ: Իսկ դա շատ վիրավորական էր վերջիններիս համար: Անգլիացիները դաժանորեն պատժում էին անհնազանդ շեյխերին: Եվ եթե ավելացնենք, որ անգլիացիները չէին խորշում օդային ռմբակոծման ենթարկել անհնազանդ գյուղերը, ապա Հարավային Եմենում նրանց կողմից վարվող քաղաքականության պատկերն ավելի կատարյալ կդառնա:

XX դարի 30–ական թվականների երկրորդ կեսերից Անգլիան կրկին որոշակի փոփոխություն մտցրեց Հարավային Եմենի կառավարման կարգավիճակում: 1937 թ. ապրիլի 1–ին Ադենը դարձավ բրիտանական թագի գաղութ (մինչ այդ այն Հնդկաստանի փոխարքայի անմիջական ենթակայության տակ էր): Ստեղծվեց նոր գաղութային վարչություն՝ անգլիական գլխավոր կոմիսարի գլխավորությամբ, որն օժտված էր նահանգապետի լիազորություններով: Նրան կից ստեղծվեց գործադիր խորհուրդ: Եմենի մնացած ամբողջ հարավային տարածքը այդ նույն տարում բաժանվեց երկու մասի՝ Ադենի Արևմտյան և Արևելյան

պրոտեկտորատների (որոնց մեջ չէր մտնում Ադեն գաղութը): Արևմտաադենյան պրոտեկտորատի մեջ մտան 20 պետական միավորումներ, այդ թվում՝ Լահջի, Ալ–Ֆադլի, Ալ–Խաուշաբի, Վերին և Ներքին Յաֆի և այլ սուլթանությունները, Ադ–Դալիի, Քութեյբիի և Բեյհանի էմիրությունները, Ալավիի, Աշ–Շուայբիի և այլ շեյխություններ: Իսկ Արևելաադենյան պրոտեկտորատի մեջ մտան Հադրամաութի, Ալ–Կուվայթի և Ալ–Կատիրի սուլթանությունները, Մահրի, Ալ–Վահիդիի, Շիհրի և Մուկալայի, Քիշնի և Սոկոտրայի սուլթանությունները:

1944 թ. հիմնվեց Ադեն գաղութի Օրենսդիր խորհուրդ: Դա սահմանափակ իրավունքներով մի մարմին էր, որի նպատակն էր ցույց տալ, որ անգլիացիները երկիրը կառավարում են դեմոկրատական մեթոդներով: Նա պետք է զբաղվեր տնտեսական զարգացման, աշխատանքի, առողջապահության և լուսավորության հարցերով: Սակայն նրա որոշումներն ի զորու էին դառնում միայն անգլիական գլխավոր կոմիսարի կողմից հաստատվելուց հետո: Սկզբնական շրջանում հենց նա էլ նշանակում էր Օրենսդիր խորհրդի անդամներին: Հետագայում եմենցիների ճնշման տակ Անգլիան թեև այս հարցում զիջում կատարեց և համաձայնեց Օրենսդիր խորհուրդը կազմել ընտրությունների ուղիով, բայց, այնուամենայնիվ, այն մնաց իրավազուրկ մարմին, որը ստեղծված պայմաններում չէր կարող վճռական դեր խաղալ երկրի կառավարման համակարգում:

2. Հարավային եմենի սոցիալ–տնտեսական կառուցվածքը

Հարավային եմենի յուրահատկություններից մեկը կայանում էր նրանում, որ անգլիական գաղութային կառավարմանը զուգահեռ պահպանվեցին Արևմտյան և Արևելյան պրոտեկտորատների մեջ մտնող սուլթանությունների և շեյխությունների կառավարման հին՝ կիսաֆեոդալական–ցեղային ձևերը:

Սուլթանների և շեյխերի ձեռքում՝ նրանց տիրույթների սահմաններում, մնացին բարձրագույն օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները: Շեյխերը և սուլթանները ցմահ ընտրվում էին ցեղերի ներկայացուցիչների կողմից: Առանձին սուլթանություններում գործում էին «պետական խորհուրդներ», որոնք կարող էին այս կամ այն որոշումն ընդունել: Սակայն սուլթանը կամ շեյխը կարող էր համաձայնվել կամ մերժել այդ մարմնի կողմից ընդունած որոշումը: Որոշ սուլթանու-

թյուններում գործում էին նաև գործադիր խորհուրդներ՝ կազմված հիմնականում շեյխի ազգականներից: Սակայն Ադենում անգլիական գլխավոր կոմիսարը իր ձեռքում էր պահում ամբողջ իշխանությունը և իր խորհրդականների միջոցով, որոնք նստում էին Ադենում և Ալ–Մուկալայում, վերահսկում Արևմտյան և Արևելյան պրոտեկտորատների և նրանց մեջ մտնող շեյխությունների և սուլթանությունների գործունեությունը:

Հարավային Եմենի սոցիալական փոխհարաբերություններում մեծ դեր էին խաղում ցեղերը և ցեղային աստիճանակարգը: Երկրում հաշվվում էին մի քանի հարյուր ցեղեր, որոնք կարող էին միավորվել և կազմել ցեղային միություններ: Ցեղերի առօրյա կյանքը, այդ թվում և դատական, ռազմական և այլն, տնօրինում էր ցեղապետը, որն անմիջական կախման մեջ էր գտնվում այս կամ այն սուլթանից: Ցեղերի մեծ մասը նստակյաց կյանք էր վարում, և միայն ոչ մեծ մասն էր, որ քոչվորներ էին:

Ցեղին պատկանելը շատ կարևոր հանգամանք էր: Դա տալիս էր որոշակի սոցիալական ապահովվածություն, պաշտպանություն, անգամ դիրք, ուստի և ստեղծում էր որոշակի մտածելակերպ ու հոգեբանություն ցեղի անդամների մոտ: Ցեղային աստիճանակարգի ամենագագաթում գտնվում էին սեյիդները, որոնք կազմում էին հոգևորական արիստոկրատիան: Հաջորդ աստիճանը զբաղեցնում էին մաշաիխները, որոնք իրականացնում էին կրոնական, դատական և անգամ դաստիարակչական ֆունկցիաներ: Նրանցից ներքև գտնվում էին ցեղերի (կաբիլ) անդամները: Սակայն այստեղ ևս կար շերտավորում: Վերին աստիճանը զբաղեցնում էին ցեղապետ շեյխերը (մուկադամ, զաիմ), իսկ ստորինը՝ ցեղերի շարքային անդամները: Սրանք ունեին մի շարք արտոնություններ, այդ թվում և զենք կրելու իրավունք:

Սոցիալական աստիճանակարգի ավելի ստորին աստիճանը զբաղեցնում էին նրանք, ովքեր չէին մտնում ցեղային, լինի քաղաքային, թե գյուղական, միությունների մեջ: Դրանց թվին էին պատկանում արհեստավորները, բանվորները, առևտրականները և այլք, որոնց իրավունքները, համեմատած ցեղերի անդամների հետ, զգալիորեն սահմանափակ էին: Այսպես, օրինակ՝ նրանք իրավունք չունեին ամուսնանալ ցեղերի անդամների հետ, զրկված էին զենք կրելու իրավունքից, չէին կարող ընտրվել շեյխությունների այսպես կոչված «պետական խորհուրդներում» և այլն:

Եվ վերջապես, սոցիալական աստիճանակարգի ամենաստորին աստիճանը զբաղեցնում էին սիբյանները, ախլամները, խաջուրները և

սնամորթ ստրուկները: Ստրուկների ժառանգները՝ աբիդ, ըստ էության շատ քիչ բանով էին տարբերվում ստրուկներից, որոնք դեռևս կային Հարավային Եմենի մի շարք շրջաններում:

Երկրի սոցիալ–տնտեսական կառուցվածքում բավականին զորավոր էին ֆեոդալների դիրքերը: Ֆեոդալ–հողատերերի դերում շատ հաճախ հանդես էին գալիս նույն շեյխերը և ցեղապետները: Նրանց շահերը խիստ միահյուսված էին և երբեմն շատ դժվար էր ջրբաժան գիծ անցկացնել նրանց միջև: Հողերի, մանավանդ ոռոգելի, և անասունների գլխաքանակի մեծ մասը կենտրոնացված էր նրանց ձեռքում: Որոշ աղբյուրների համաձայն՝ 50–60–ական թվականներին մշակվող հողատարածությունների ավելի քան 50%–ը պատկանում էր խոշոր ֆեոդալներին: Աբյանում, Զիարում, Լահիջում և այլ սուլթանություններում առանձին խոշոր ֆեոդալների ձեռքում կենտրոնացված էին մի քանի հազար ֆեդդան (մեկ ֆեդդանը հավասար է 0,42 հա) մշակվող հողատարածություններ:

Հարավային Եմենում սովորական և շատ տարածված երևույթ էր հողազրկությունը: Գյուղացիները հարկադրված էին ամենածանր պայմաններով ֆեոդալներից վարձակալել հողը և այն մշակել ամենապարզունակ գյուղատնտեսական գործիքներով:

Երկրի գյուղատնտեսությունը, որով զբաղված էր ազգաբնակչության երեք քառորդը, գտնվում էր զարգացման շատ ցածր մակարդակի վրա և չէր բավարարում երկրի պարենային պահանջների անգամ կեսը: Նրան հատուկ էր բնատնտեսությունը և կիսաբնատնտեսությունը: Շատ թույլ էր զարգացած նաև արդյունաբերությունը: Երկրում գործում էին մանր, հիմնականում արհեստավորական բնույթի ձեռնարկություններ, որոնք արտադրում էին աղյուսներ, զովացուցիչ ջրեր, աղ, ալյումինե ամաններ, ծխախոտ, ցեմենտ և այլն: Դրանց արտադրությունը հիմնականում կենտրոնացված էր Ադենում: Կային նաև ձկների պահածոյի (Մուկալայում) և բամբակազտիչ գործարաններ (Լահիջում և Աբյանում): Եմենի մասշտաբներով խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները պատկանում էին օտարերկրացիներին, ինչպես, օրինակ՝ 1954 թ. շահագործման հանձնված նավթավերամշակիչ գործարանը Բուրեյկում, որը պատկանում էր «Բրիտիշ Պետրոլեում կոմպանիին»: Օտարերկրյա կապիտալը տիրապետող էր նաև բանկային–ֆինանսական և առևտրական ոլորտներում: Այդ պատճառով էլ երկրի ներսում գործող բուրժուազիան այլազգի էր: Իսկ հարավեմենական բուրժուազիան երկրի ներսում նոր–նոր էր ձևավորվում, շատ թույլ էր և չուներ իր դեմքը: Հարավեմե-

նական ծագումով բուրժուազիան ավելի զարգացած և զորավոր էր երկրից դուրս: Բայց նրա թուլությունը կայանում էր նրանում, որ նա մի կողմից՝ շոշափելի կապեր չուներ Հարավային Եմենի տնտեսության հետ, իսկ մյուս կողմից՝ անխուսափելիորեն տարրալուծվում էր այն երկրի բուրժուազիայի մեջ, որտեղ նա գործում էր:

Եվ վերջապես՝ 50–ական թվականներին տնտեսական, իսկ ապա նաև քաղաքական ասպարեզ դուրս եկավ բանվոր դասակարգը: Նրա ձևավորումն ընթանում էր դանդաղ, խիստ բարդ սոցիալ–տնտեսական և քաղաքական պայմաններում: Բանվոր դասակարգի հիմնական ջոկատներն էին նավթագործ և շինարարական բանվորները: Զգալի թիվ էին կազմում նաև Ադենի նավահանգստի, ինչպես նաև սեզոնային աշխատանքների մեջ ներգրավված բանվորները: Նորակազմ բանվոր դասակարգը այդ շրջանում դեռևս ի վիճակի չէր առաջատար դեր խաղալ: Նա երեկվա գյուղացին էր իր մտածելակերպով և հոգեբանությամբ, երիտասարդ էր, չուներ պայքարի, մանավանդ քաղաքական, փորձ, չուներ իր դասակարգային կազմակերպությունները: Այդուհանդերձ, բանվորների ձևավորումը՝ որպես դասակարգ, երևույթ էր Հարավային Եմենի սոցիալ–քաղաքական կյանքում:

3. Հարավային Եմենի Դաշնության ստեղծումը

Անգլիական գաղութարարները վաղուց էին փայփայում հարավեմենական սուլթանությունները, էմիրությունները և շեյխությունները, որոնք ըստ էության գաճաճ պետություններ էին, միավորել և ստեղծել պետական մեկ ամբողջություն, թեկուզ և ֆեդերացիայի՝ դաշնության ձևով, որը պետք է լրիվ կախման մեջ լիներ Անգլիայից: Նման գաղափար առաջին անգամ առաջ քաշեց Ադենում անգլիական քաղաքական ներկայացուցիչ Բ. Ռեյլին դեռևս 1925 թ.: Հինգ տարի անց՝ 1930 թ., անգլիացիները կոնկրետ փորձ արեցին այդ ծրագրի կենսագործման ուղղությամբ, բայց դրանից ոչինչ չստացվեց, քանի որ սուլթաններն ու շեյխերը չէին ցանկանում զրկվել այն ինքնուրույնությունից, որից ավանդաբար օգտվում էին:

Անգլիացիները հարկադրված էին ժամանակավորապես հետաձգել իրենց սրտին մոտ ֆեդերացիայի ծրագրի իրագործումը՝ սպասելով ավելի հարմար ժամանակների:

Նրանք դաշնության գաղափարին կրկին վերադարձան 50–ական թվականների կեսերին: Այդ ժամանակ իրադրությունը զգալիորեն փոխվել էր Արաբական Արևելքում: 1952 թ. եգիպտական և 1958 թ. իրաքյան հեղափոխությունները ծանր հարված հասցրին Անգլիայի դիրքերին: Վերջինս զրկվեց իր ռազմաստրատեգիական կարևոր հենակետերից: Այսպիսի պայմաններում խիստ մեծացավ Ադենի դերը բրիտանական կայսերական ուղիների և շահերի պաշտպանության մեջ:

Չգտելով հարավեմենական մանր պետությունները միավորել մեկ ֆեդերացիայի մեջ՝ Անգլիան երկու կարևոր նպատակ էր հետապնդում. առաջին՝ անջատել Հարավային Եմենը Հյուսիսայինից, չթողնել նրանց միավորումը, և երկրորդ՝ ամրապնդել իր դիրքերը ամբողջ Հարավային Եմենի տարածքում և ուժեղացնել հարավեմենյան շեյխությունների կախվածությունը:

Անգլիացիներին հաջողվեց կոտրել հարավեմենցի կառավարողների դիմադրությունը և «համոզել» նրանց միավորվելու դաշնության մեջ: 1959 թ. փետրվարի 11–ին պաշտոնապես հռչակվեց Հարավի Արաբական էմիրությունների Ֆեդերացիայի (ՀԱԷՖ) ստեղծումը: Սկզբում ֆեդերացիայի մեջ մտան վեց սուլթանություններ և էմիրություններ, իսկ 1964 թ. նրանց թիվը հասավ 17–ի: 1963 թ. ֆեդերացիայի կազմում հայտնվեց նաև Ադենը:

ՀԱԷՖ–ի և Անգլիայի միջև ստորագրվեց պայմանագիր, որով Անգլիան իր վրա էր վերցնում ֆեդերացիայի, որը գաղութային կարգավիճակ ունեցող միավորում էր, արտաքին քաղաքականության և պաշտպանության հոգսերը: Փաստորեն, նա էր տնօրինում նաև ֆեդերացիայի ներքին հարցերը: Այդ պատճառով էլ բոլոր հիմքերը կան ասելու, որ ֆեդերացիայում իշխանությունը պատկանում էր Անգլիայի քաղաքական ներկայացուցիչներին, որոնք և իրականացնում էին կառավարման բոլոր ֆունկցիաները: Ճիշտ է, ստեղծվեց ֆեդերացիայի կառավարություն, սակայն դա ձևական, կառավարման իրական ֆունկցիաներից զուրկ մարմին էր, որը լրիվ կախվածության մեջ էր անգլիացիներից:

1962 թ. ապրիլի 4–ին փոխվեց երկրի անվանումը. այն սկսեց կոչվել Հարավային Արաբիայի Ֆեդերացիա (ՀԱՖ), սակայն դա լոկ ցուցանակի փոփոխություն էր, քանի որ որևէ արմատական տեղաշարժ տեղի չունեցավ երկրի գաղութային կարգավիճակում:

4. Հակագաղութային պատերազմը և Հարավային Եմենի անկախության նվաճումը (1963–1967 թթ.)

Երկրի գաղութային կախվածությունը, սոցիալ–տնտեսական հետամնացությունը և ժողովրդի ծանր տնտեսական վիճակը պարարտ հող էին հանդիսանում զանազան կազմակերպությունների առաջացման և ազգային–ազատագրական պայքարի ծավալման համար: Եվ, իրոք, 40–ական թվականների երկրորդ կեսից մինչև 60–ական թվականների սկիզբը Հարավային Եմենում ձևավորվեցին տարբեր բնույթի կազմակերպություններ, որոնք զգալի դեր խաղացին եմենցիների ազգային ինքնագիտակցության արթնացման, քաղաքական մտածելակերպի ձևավորման և հակագաղութային պայքարի կազմակերպման մեջ: Առաջին կազմակերպությունները, որոնք հայտնվեցին Հարավային Եմենում, ինչպես Արաբական գրականության ակումբը, Արաբական հաշտեցման ակումբը և կամ ժողովրդի ակումբը, ավելի շատ գրական–լուսավորչական բնույթ էին կրում, թեև պետք է ընդգծել նրանց դերը եմենցիների հայրենասիրական զգացմունքների արթնացման մեջ:

1950 թ. Հարավային Եմենի քաղաքական ասպարեզում հայտնվեց Հարավային Եմենի որդիների լիգան (ՀԵՈԼ), որի ղեկավարն էր Մուհամմադ ալ–Զիֆրին: Նա այդ շրջանում ամենաազդեցիկն էր և, փաստորեն, գլխավորում էր հակագաղութային պայքարը: Սակայն ՀԵՈԼ–ը դեմ էր զինված պայքարին, ինչպես նաև սոցիալ–տնտեսական և քաղաքական պահանջների առաջադրմանը: Դա պատճառ հանդիսացավ, որ նա 60–ական թվականների սկզբներին կորցրեց իր ազդեցությունը:

Կարևոր իրադարձություն էր 1956 թ. Ադենի արհմիությունների կոնֆեդերացիայի (ԱԱԿ) ստեղծումը, որ մեծ դեր խաղաց ինչպես բանվորների կազմակերպման, նրանց շահերի պաշտպանության, այնպես էլ ազատագրական պայքարում:

Հայրենասիրական պայքարի մթնոլորտում ձևավորվեցին նաև մարքսիստական կազմակերպություններ: 1961 թ. հոկտեմբերին նրանք միավորվեցին և ստեղծեցին Ժողովրդա–դեմոկրատական միությունը (ԺՈՄ): Նրա ղեկավարն էր Աբդալլահ Բազիրը: ԺՈՄ–ն հանդես էր գալիս հանուն Հարավային Եմենի լիակատար անկախության և աշխատավորների սոցիալ–տնտեսական կենսական պահանջների պաշտպանության:

1962 թ. ստեղծվեց Ժողովրդա–սոցիալիստական կուսակցություն (ԺՍԿ), որն առաջադրում էր Անգլիայի հետ կնքված անիրավահավասար

պայմանագրերի վերացման, Հարավային Եմենի անկախության ճանաչման և Եմենի միասնական պետության ստեղծման պահանջները: Սակայն նա կողմնակից չէր արմատական քայլերի, այդ պատճառով էլ, երբ 1963 թ. Հարավային Եմենում սկսվեց զինված պայքարը, ԺՍԿ–ն չմիացավ այդ պայքարին, ինչը հարվածեց նրա հեղինակությանը:

Հարկ է նշել նաև «Արաբ նացիոնալիստների շարժում» (ԱՆՇ) միջարաբական կազմակերպության մասնաճյուղի ստեղծումը: Այս կազմակերպությունը վճռական դեր խաղաց եմենցիների զինված պայքարի կազմակերպման և ղեկավարման գործում: Սակայն այդ պայքարը անմիջականորեն ղեկավարեց ԱՆՇ–ի հիմքի վրա 1963 թ. փետրվարի 24–ին ստեղծված Ազգային ճակատը (Աճ): Նրա շարքերում միավորվեցին մանր բուրժուազիայի, գյուղացիության, բանվորների, ուսանողության և մտավորականության ներկայացուցիչները: Սկզբնական շրջանում նրան էին հարում ունևոր դասերի, մասնավորապես շեյխերի որոշ մասը: Աճ–ին միացան Հարավային Եմենում գործող համարյա բոլոր հայրենասիրական կազմակերպությունները, բացառությամբ ԺՍԿ–ի և Հարավային Եմենի որդիների լիգայի, քանի որ նրանք դեմ էին զինված պայքարին և կանգնած էին ռեֆորմիստական դիրքերում: Աճ–ի ղեկավարն էր Կահտան աշ–Շաաբին: Աճ–ը հանդես էր գալիս Հարավային Եմենի ազատագրման, այդ թվում և զինված պայքարի ուղիով Հյուսիսային և Հարավային Եմենի միավորման և արաբական սոցիալիստական հայրենիքի միասնության պահանջներով:

1963 թ. հոկտեմբերի 14–ին Հարավային Եմենում սկսվեց հակագաղութային ազգային–ազատագրական պատերազմ: Պայքարի դրոշը բարձրացրին Ռադֆանի, որը գտնվում է Հարավային Եմենի հյուսիսարևմտյան շրջանում, ցեղերը: Ապստամբության ղեկավարությունն իր ձեռքը վերցրեց Ազգային ճակատը:

Անգլիացիները մի շարք փորձեր կատարեցին, մանավանդ 1963 թ. վերջերին, ռազմական ուժի միջոցով ճնշելու ապստամբությունը, բայց անհաջողության մատնվեցին: Ռադֆանի ապստամբությունը սկսեց տարածվել ամբողջ երկրով մեկ՝ ներառելով մի վիլայաթ մյուսի հետևից: 1965 թ. պատերազմական գործողություններ էին գնում երկրի 11 շրջաններում, այդ թվում՝ Դալիում, Խաուշաբիում, Վահիդում, Ավադիլում և այլ վայրերում:

Պարտիզանների գործողությունները վայելում էին ժողովրդի ամենաջերմ պաշտպանությունը: Հատկապես ակտիվ էին գյուղացինե-

ը, որոնք, մասնակցելով զինված պատերազմին, շատ վայրերում նրան տալիս էին նաև հակաֆեոդալական բնույթ՝ իրագործելով ֆեոդալ–շեյխերի հողերի բռնագրավում և վերաբաժանում: Պարտիզանների շարքերն այնքան ստվարացան, որ ԱԺ–ն նրանց միավորեց և ստեղծեց Ազատագրության բանակ:

Հակագաղութային պատերազմը ղեկավարելուն զուգահեռ, ԱՆ–ն լայն քարոզչական և կազմակերպչական աշխատանք էր տանում ժողովրդի մեջ, մոբիլիզացնում նրա հոգևոր և նյութական ուժերը, հաղթահարում ցեղերի միջև գոյություն ունեցող թշնամանքն ու անվստահությունը, հաշտեցնում նրանց և դրանով ամրապնդում ազգային–ազատագրական պատերազմի թիկունքը:

Հարավեմենյան ապստամբներին նյութական և ռազմական օգնություն էին ցույց տալիս Եմենի Արաբական Հանրապետությունը և Եգիպտոսը: Շատ պարտիզաններ ռազմական պատրաստությունը ստանում էին ԵԱՀ–ի ռազմական ճամբարներում:

Ի պաշտպանություն Հարավային Եմենի արդարացի պայքարի հանդես եկավ ՄԱԿ–ը: Նրա Հատուկ կոմիտեն պահանջեց, որ Անգլիան ճանաչի Հարավային Եմենի անկախությունը և վերացնի իր ռազմական բազաները, սակայն անգլիական կառավարությունը մերժեց կատարել ՄԱԿ–ի պահանջները:

Հայրենասիրական ուժերի հաղթարշավը շարունակվում էր, և դա իր ազդեցությունն ունեցավ ֆեդերալ բանակի և ոստիկանության վրա: Շատ վայրերում նրանք աջակցում էին ապստամբներին: Իսկ 1967 թ. հունիսին ոստիկանական ուժերը ապստամբվեցին Ադենում: Ապստամբները գրավեցին քաղաքի ստրատեգիական նշանակություն ունեցող մասերը, քաղաքային բանտը՝ ազատ արձակելով քաղաքական բանտարկյալներին և հայրենասերներին:

Ազատագրական պատերազմի ճանապարհին կային նաև մեծ բարդություններ, այդ թվում և ընդդիմադիր ուժերի անմիաբանությունը: Դեռևս 1964 թ. ստեղծվեց Օկուպացված Հարավի ազատագրության կազմակերպությունը (ՕՀԱԿ): Նա ավելի ու ավելի լայն աջակցություն էր գտնում Եգիպտոսի, ինչպես նաև Արաբական պետությունների լիգայի կողմից: Նրանց ճնշման տակ 1966 թ. հունվարի 13–ին տեղի ունեցավ ՕՀԱԿ–ի և ԱՆ–ի միավորում և Եմենի օկուպացված հարավի ազատագրության ճակատի (ԵՕՀԱՆ) հիմնումը: Դա սխալ քայլ էր Ազգային ճակատի այն ղեկավարների՝ Ալի աս–Սալամի և այլոց կողմից, որոնք առանց

հաշվի առնելու ԱԵ–ի գործադիր խորհրդի մյուս անդամների կարծիքը, ստորագրեցին միավորման վերաբերյալ փաստաթուղթը: Հարաբերությունները ԱԵ–ի և ՕՀԱԿ–ի միջև սրվեցին, քանի որ վերջինս ձգտում էր տիրապետող դիրք ունենալ ԵՕՀԱԵ–ում և, ըստ էության, դեմ էր զինված պայքարին և այդպիսի պայքար չէր էլ մղում: Նման պայմաններում Ադենում գործող պարտիզանները և արմատական հայրենասիրական ուժերը 1966 թ. հոկտեմբերի 14–ին պահանջեցին, որ ԱԵ–ն դուրս գա ԵՕՀԱԵ–ի կազմից, վերականգնի իր ինքնուրույն կազմակերպչական գոյությունը և ուժեղացնի զինված պայքարը: Ի պաշտպանություն ադենցիների պահանջի հանդես եկան Ազատագրության բանակը և ԱԵ–ի շատ գործիչներ՝ Աբդել Ֆաթահ Իսմայիլի գլխավորությամբ: 1966 թ. տեղի ունեցած ԱԵ–ի արտակարգ 3–րդ համագումարը որոշեց դուրս գալ ԵՕՀԱԵ–ի կազմից: Դա հանգեցրեց հարաբերությունների սրմանը և անգամ զինված ընդհարումների երկու կազմակերպությունների միջև, որից, սակայն, հաղթանակով դուրս եկավ Ազգային ճակատը:

ԱԵ–ն ընդունեց պայքարի նոր պլան՝ հաջորդաբար գրավել իշխանությունը վիլայաթներում և այդ ուղիով ավարտել երկրի ազատագրումը: Այդ պլանի իրագործմանը ԱԵ–ն ձեռնամուխ եղավ 1967 թ.: Հաջող ռազմական գործողությունների շնորհիվ ԱԵ–ին հաջողվեց 1967 թ. հոկտեմբերին իր վերահսկողությունը սահմանել 18 սուլթանություններ, էմիրությունների և շեյխությունների վրա: Անգլիան զրկվեց իր պրոտեկտորատների մեծ մասից և բանակցությունների մեջ մտավ ԱԵ–ի հետ՝ իշխանությունը նրան փոխանցելու հարցի շուրջ: Բանակցությունները, որոնք սկսվեցին 1967 թ. նոյեմբերի 21–ին Ժնևում, ավարտվեցին նույն ամսվա 28–ին: Անգլիան համաձայնվեց ճանաչել Հարավային Եմենի Ֆեդերացիայի անկախությունը:

1967 թ. նոյեմբերի 30–ին Ազգային ճակատը պաշտոնապես հռչակեց Հարավային Եմենի անկախությունը: Քաղաքական քարտեզի վրա հայտնվեց մի նոր անկախ արաբական պետություն, որը կոչվեց Հարավային Եմենի Ժողովրդական Հանրապետություն՝ ՀԵԺՀ:

Այսպիսով՝ հանգամանքների բերումով պատմական Եմենի տարածքում ձևավորվեցին երկու եմենական պետություններ՝ Եմենի Արաբական Հանրապետությունը և Հարավային Եմենի Ժողովրդական Հանրապետությունը:

5. ՀԵԺՀ–Ն անկախության նվաճումից հետո առաջին տարիներին: Ներքաղաքական պայքարի սրումը

Անկախության նվաճումից հետո ՀԵԺՀ–ում իշխանությունն անցավ Ազգային ճակատի ձեռքը, որը վերակոչվեց Ազգային ճակատ քաղաքական կազմակերպության՝ ԱՃՔԿ: Ճակատի նախագահ Կահտան Մուհամմադ աշ–Շաաբին նշանակվեց պրեզիդենտ՝ իր ձեռքը վերցնելով նաև վարչապետի և զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնները: Ճակատի գլխավոր ղեկավարությունը դարձավ երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը:

Երկրի ղեկավարությունն անմիջապես կիրառեց մի շարք քայլեր հանրապետական վարչակարգն ամրապնդելու ուղղությամբ: 1967 թ. դեկտեմբերի 11–ի որոշումով փոփոխվեց երկրի նախկին վարչատարածքային բաժանումը: Վերացվեցին հարավեմենական պետական կազմավորումները՝ շեյխությունները, սուլթանություններն ու էմիրությունները, և ՀԵԺՀ–Ն բաժանվեց վեց մարզերի: 1967 թ. դեկտեմբերի 26–ի որոշմամբ բռնագրավվեց 13 սուլթանների և 50 շեյխերի ու նախկին նախարարների սեփականությունը: Մասամբ զտման ենթարկվեց պետական ապարատը, ըստ որում՝ մի քանի նախկին ղեկավար գործիչներ ձերբակալվեցին:

Սկզբնական փուլում թե՛ ԱՃՔԿ–ում և թե՛ պետական ապարատում տիրապետող դիրքերը գրավեցին Կահտան աշ–Շաաբիի կողմնակիցները, որոնք կազմում էին հարավեմենական ղեկավարության պահպանողական, չափավորական, նացիոնալիստական թևը և հենվում մանր ու միջին բուրժուազիայի և կիսաֆեոդալական ուժերի վրա: Այս թևը շահագրգռված չէր սոցիալ–տնտեսական վերափոխումների արմատական խորացման մեջ և հակված էր վարելու չափավոր բուրժուադեմոկրատական բարեփոխումների քաղաքականություն:

Ի հակադրություն այս թևի՝ ճակատի ներսում ձևավորվեց ձախ՝ գիտական սոցիալիզմին հարող արմատական–հեղափոխական թևը՝ Աբդել Ֆաթահ Իսմայիլի գլխավորությամբ: Այդ թևը հենվում էր գյուղի և քաղաքի աշխատավորների վրա և հանդես էր գալիս հանուն հին պետական ապարատի և բանակի վերացման, նոր պետական ինստիտուտների ստեղծման և ժողովրդական–դեմոկրատական հեղափոխության սկզբունքների կիրառման: Այդ ասելով նրանք հասկանում էին արմատական ագրարային բարեփոխումների կիրառում, հարուստ հողատե-

ների հողերի բռնագրավում և դրանց՝ առանց փոխհատուցման հանձնում գյուղացիներին, կոոպերատիվների կազմավորում, սոցիալիստական արտադրական հարաբերություններին անցնելու համապատասխան նախադրյալների ստեղծում:

Ձախերի ճնշման տակ 1968 թ. մարտի 2–8–ը գումարվեց ԱՆՔԿ 4–րդ համագումարը, որտեղ նրանք կարևոր հաղթանակ տարան: Համագումարն ընդունեց ձախերի հիմնական պահանջները: Բացի այդ Գլխավոր ղեկավարության կազմի մեծ մասն ընտրվեց ձախերից: Դրանց մեջ էին Աբդել Ֆաթահ Իսմայիլը, Ալի Անտարը, Սալեմ Ռուբայա Ալին և ուրիշներ:

Սակայն աշ–Շաաբիի խումբը և բոլոր աջերը ամեն կերպ խոչընդոտում էին համագումարի կողմից ընդունված ծրագրերի իրականացումը: Դեռ ավելին՝ 1968 թ. մարտի 19–ի լույս 20–ի գիշերը զինվորականների և ոստիկանների մի խումբ Հուսեյն Օսման Աշալի գլխավորությամբ խռովություն բարձրացրեց Ադենում, որը, սակայն, ոչ մի պաշտպանություն չգտավ ժողովրդի կողմից: Ձինված խռովության բարձրացումն ավելի սրեց հարաբերությունները աջերի և ձախերի միջև ճակատի ներսում, որն իր կնիքն էր դնում երկրի ներքաղաքական կյանքի վրա և բացասաբար անդրադառնում սոցիալ–տնտեսական պրոբլեմների լուծման վրա: Պարզ էր, որ այդպես երկար շարունակվել չէր կարող, մանավանդ որ օրեցօր ավելի էին ամրապնդվում ձախերի դիրքերը: Հանգուցալուծումը վրա հասավ 1969 թ. հունիս ամսին:

Ցանկանալով ճնշում գործադրել ձախերի վրա և վստահ լինելով, որ իրեն կպաշտպանեն բանակն ու ոստիկանությունը՝ Կահտան աշ–Շաաբին հայտարարեց, որ ինքը հրաժարական է տալիս: Ձախերը հմտորեն օգտագործեցին այդ հանգամանքը: Հունիսի 22–ին նրանք տեղյակ պահեցին ՀԵԺՀ–ի բնակչությանը, որ աշ–Շաաբին հրաժարական է տվել իր բոլոր պաշտոններից: Պրեզիդենտի պաշտոնը վերացվեց, ստեղծվեց պրեզիդենտական խորհուրդը, որը գլխավորեց Սալեմ Ռուբայա Ալին: Աբդել Ֆաթահ Իսմայիլը դարձավ ԱՆ–ի գլխավոր քարտուղարը, իսկ Մուհամմադ Հեյտամը նշանակվեց վարչապետ:

6. Արմատական վերափոխումների նոր փուլը: Երկրի վերանվանումը Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության (1970–1975 թթ.)

1969 թ. իշխանության գլուխ եկան հեղափոխական–դեմոկրատները, որոնք վերանայման ենթարկեցին նախկին վարչակարգի ներքին, տնտեսական, գաղափարախոսական և արտաքին քաղաքականությունը: Առաջնահերթ խնդիր համարվեց պետական ապարատը հին՝ պահպանողական տարրերից մաքրելը: 1969 թ. դեկտեմբերին կուսակցական բարձրագույն պաշտոններից և ճակատի Կենտրոնական կոմիտեի կազմից հանվեց 21 մարդ, այդ թվում և Կահտան աշ–Շաաբին, Ֆեյսալ Աբդել Լատիֆը և Ալի Աբդել Ալիմը: Ջտումներ կատարվեցին նաև ապարատի ավելի ստորին օղակներում: Ջինված ուժերից հեռացվեցին հին մտայնության տեր բազմաթիվ սպաներ: Բանակը վերակառուցվեց և համալրվեց միայն բանվորներով, գյուղացիներով և հեղափոխությանը նվիրված մտավորականներով: Ստեղծվեցին նաև ժողովրդական միլիցիայի ջոկատներ, որոնց գլխավոր խնդիրը հեղափոխական կարգ ու կանոնի և ժողովրդական սեփականության պահպանումն էր: Նոր բանակի ստեղծումն ավարտվեց 1974 թ., որը պետք է համարել հեղափոխական դեմոկրատների կարևորագույն նվաճումներից մեկը:

Նոր վարչակարգը ծեռնամուխ եղավ արմատական սոցիալ–տնտեսական վերափոխումների: 1969 թ. նոյեմբերի 27–ին ընդունված օրենքով ազգայնացվեցին անգլիացիներին, ֆրանսիացիներին, հնդկացիներին և պակիստանցիներին պատկանող 8 բանկ, 12 ապահովագրական և 5 առևտրական ընկերություններ: Մի շարք կարևոր սննդամթերքների գնումների վրա սահմանվեց պետական մենաշնորհ: Ազգայնացված ծեռնարկությունների ղեկավարումը ստանձնեց պետական սեկտորը: Կառավարությունն իր միջոցառումների մեջ ավելի հեռուն գնաց: 1972 թ. ազգայնացվեցին բոլոր մասնավոր առևտրական, տնտեսական շենքերը, հյուրանոցները, վարձով տրվող բնակելի տները և այլն:

1970 թ. նոյեմբերի 5–ին ընտրվեց նոր՝ ավելի արմատական բնույթի ագրարային բարեփոխումների օրենք, որը հողօգտագործման առավելագույն չափը սահմանում էր 20 ֆեդդան ջրովի և 40 ֆեդդան անջրդի հողաբաժիններ: Այդ օրենքի հիման վրա բռնագրավվեց 135 հազ. ֆեդդան հող, որը բաժանվեց կոոպերատիվների մեջ միավորված սա-

կավահող գյուղացիներին: Ագրարային բարեփոխումները, որոնց ակտիվորեն մասնակցում էին գյուղացիները, ավարտվեցին 1974 թ.:

1970 թ. նոյեմբերի 30–ին ընդունվեց նոր սահմանադրություն: Երկիրը կոչվեց Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն (ԵԺԴՀ): Ըստ նոր սահմանադրության՝ երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը դարձավ Ժողովրդական գերագույն խորհուրդը:

Նոր վարչակարգը ազատ գործելու հնարավորություն տվեց այն քաղաքական կազմակերպություններին, որոնք կանգնած էին առաջադիմական և հայրենասիրական դիրքերում: Խոսքը վերաբերում էր առաջին հերթին Ժողովրդական–դեմոկրատական միությանը (ԺԴՄ) և Բաաս կուսակցությանը, որը 1974 թ. վերանվանվեց Ժողովրդական ավանգարդի կուսակցության (ԺԱԿ): Նրանց ղեկավարներ Աբդալլահ Բազիբը և Անիս Հասան Յահյան մտան կառավարության մեջ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՆ–ի, ԺԴՄ–ի և ԺԱԿ–ի տեսակետները և քաղաքական ձգտումները շատ հարցերում համընկնում էին՝ 1970 թ. նրանց միջև բանակցություններ սկսվեցին միավորվելու և ավանգարդային կուսակցություն ստեղծելու շուրջ: Բանակցությունները թեև ձգձգվեցին, բայց վերջիվերջո ավարտվեցին հաջողությամբ: 1975 թ. հոկտեմբերի 11–13–ը տեղի ունեցավ այդ երեք կազմակերպությունների միավորիչ համագումարը, որտեղ ստեղծվեց նոր քաղաքական կազմակերպություն՝ «Ազգային ճակատ միացյալ քաղաքական կազմակերպություն» (ԱՆՄՔԿ) անվանումով՝ ԱՆ–ի ծրագրային փաստաթղթերի հիմքի վրա: Նոր կազմակերպությունն իրեն համարեց անցումային՝ ավանգարդային կուսակցության ստեղծման ճանապարհին, որը և պետք է լուծեր ազգային–դեմոկրատական հեղափոխության ավարտման և սոցիալիստական շինարարությանը թևակոխելու հարցերը:

7. Ներքաղաքական և ներկուսակցական իրավիճակը 1975–1978 թթ.

Երեք կազմակերպությունների միավորումից հետո լայն թափով ծավալվեցին ավանգարդային կուսակցություն ստեղծելու նախապատրաստական աշխատանքները: Որոշակի փոփոխության ենթարկվեց ԱՆՄՔԿ–ի սոցիալական կազմը: Նրանում աճեց բանվոր դասակարգի տեսակարար կշիռը: Կազմակերպության անդամները սկսեցին ուսումնասիրել գիտական սոցիալիզմի տեսությունը: ԱՆՄՔԿ–ի Կենտրոնա-

կան կոմիտեին կից Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության օգնությամբ ստեղծվեց գիտական սոցիալիզմի բարձրագույն դպրոց: Ճակատը իր սկզբնական կազմակերպությունները վերակառուցեց ըստ արտադրական սկզբունքի, իսկ ընդհանրապես գլխավոր կազմակերպական սկզբունքը դարձավ դեմոկրատական ցենտրալիզմը: Մեծ նշանակություն էր տրվում նաև քննադատությանն ու ինքնաքննադատությանը: Այս բոլորը համարվում էին կարևոր միջոցառումներ ԱՆՄՔԿ–ն ավանգարդային կուսակցության վերածելու ճանապարհին:

Այդ տարիներին զգալի տեղաշարժեր կատարվեց ԵԺԴՀ–ի տնտեսության մեջ: Ընդհանուր առմամբ, հաջողությամբ կատարվեց 1974–1978 թթ. հնգամյա պլանը: Պետական և կոոպերատիվ սեկտորները դարձան տնտեսության գլխավոր հենարանները: Զգալի զարգացում ապրեց նաև խառը սեկտորը: Հնգամյակի տարիներին պետական սեկտորի գծով շարք մտան մի շարք նոր ձեռնարկություններ, այդ թվում՝ տեքստիլ ֆաբրիկա Ադենում, բամբակազտիչ գործարան Աբյանում, ձկան պահածոյի գործարան Շուքրում, կոշիկի, հացի և այլ գործարաններ: Մոտ 32%–ով աճեց գյուղատնտեսության արտադրանքը:

Սակայն կային նաև մի շարք դժվարություններ: Նկատվում էր գների անկայունություն, աճում էր պետական բյուջեի պակասորդը, չլուծվեց երկիրը սեփական գյուղատնտեսական մթերքներով ապահովելու խնդիրը:

Այս բարդություններին ավելացավ ներքաղաքական պայքարի սրումը ԱՆՄՔԿ–ի ղեկավարության ներսում, որտեղ ձևավորվել էր ընդդիմադիր թև՝ պրեզիդենտական խորհրդի նախագահ Սալեմ Ռուբայա Ալիի գլխավորությամբ: Ալին ձգտում էր հաստատել իր անձնական դիկտատուրան և անհրաժեշտ չէր համարում ավանգարդային կուսակցության ստեղծումը: Նա բռնի մեթոդների կիրառման կողմնակից էր և հակված էր ձախլիկ քաղաքական քայլերի օգնությամբ լուծել երկրի առջև կանգնած խնդիրները: Հենց նրա նախաձեռնությամբ սկսեցին գյուղացիներին բռնի ուժով մտցնել կոոպերատիվների մեջ, բռնագրավեցին մանր ձեռնարկատերերի սեփականությունը և այլն: Նա սկսել էր միանձնյա կերպով լուծել շատ հարցեր: Այս բոլորը լուրջ դժվարություններ էին ստեղծում երկրի հետագա զարգացման ճանապարհին: ԱՆՄՔԿ–ի բացարձակ մեծամասնությունը դեմ էր Սալեմ Ռուբայա Ալիի այս գծին, և վերջինիս դիրքերն արագ թափով թուլանում էին:

Չգտելով իրադրությունը փոխել հօգուտ իրեն՝ Ալին դիմեց մի քայլի, որը կարելի է որակել որպես արկածախնդրական: 1978 թ. հունիսի 23–ին Ալիի խնդրանքով նրա ներկայացուցչին ընդունեց Եմենի Արաբական Հանրապետության պրեզիդենտ ալ–Ղաշմին: Երբ Ալիի հանձնակատարը բացեց իր պայուսակը, պայթեց նրանում դրված ռումբը, և երկուսն էլ զոհվեցին: Ալին հույս ուներ, որ դրանից հետո ԵԱՀ–ն պատերազմ կհայտարարի ԵԺԴՀ–ին, որից օգտվելով՝ ինքը կհաստատի իր անձնական դիկտատուրան:

Սակայն դեպքերի զարգացումը չընթացավ ըստ Սալեմ Ռուբայա Ալիի սցենարի: ԵԱՀ–ն խզեց դիվանագիտական հարաբերությունները ԵԺԴՀ–ի հետ և մարտական պատրաստության մեջ դրեց իր զորքը, բայց պատերազմի չդիմեց: ԱՃՄՔԿ–ն պահանջեց Ալիի հրաժարականը: Սակայն վերջինս 1978 թ. հունիսի 26–ին պետական հեղաշրջման փորձ կատարեց, բայց աջակցություն չգտավ բանակի կողմից: Սալեմ Ռուբայա Ալին ձերբակալվեց և իր երկու մերձավորագույն զինակիցների հետ միասին գնդակահարվեց:

Այլևս ճանապարհը բաց էր ավանգարդային կուսակցության ստեղծման ճանապարհին:

8. Եմենի սոցիալիստական կուսակցության հիմնումը

1978 թ. հոկտեմբերի 11–13–ը կայացավ Եմենի սոցիալիստական կուսակցության (ԵՍԿ) հիմնադիր համագումարը, որը հռչակեց նոր ավանգարդային կուսակցության ստեղծումը: Այն հիմնվեց, ինչպես պաշտոնապես նշվեց, գիտական սոցիալիզմի սկզբունքների վրա: Համագումարն ընդունեց կանոնադրություն և ծրագիր: Կանոնադրությունում գրանցվեց, որ ԵՍԿ–ն «բանվոր դասակարգի, որը դաշինքի մեջ է գյուղացիության և աշխատավոր ժողովրդի այլ խավերի հետ, կուսակցությունն է»: Նրա գլխավոր նպատակը համարվեց «Միասնական դեմոկրատական Եմենի կառուցումը՝ սոցիալիստական հեռանկարով»: ԵՍԿ–ի ԿԿ գլխավոր քարտուղար ընտրվեց Աբդել Ֆաթահ Իսմայիլը:

Համագումարից հետո կուսակցությունն արագորեն համալրվեց բանվորներով, գյուղացիներով և ծկնորսներով:

1978 թ. հոկտեմբերի 31–ին ընդունվեց նոր սահմանադրություն, որն արձանագրեց, որ իշխանությունը պատկանում է ժողովրդական խորհուրդներին: Սահմանադրությունում նշվեց, որ Եմենը ժողովրդա-

կան դեմոկրատական հանրապետություն է և գտնվում է սոցիալիզմի անցումային շրջանում:

Նոր սահմանադրության ընդունումից հետո՝ 1978 թ. դեկտեմբերին, անցկացվեցին ժողովրդական գերագույն խորհրդի (ԺԳԽ) ընտրություններ: Նրա նախագահ ընտրվեց Աբդել Ֆաթահ Իսմայիլը:

1980 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ ԵՍԿ 2–րդ արտակարգ համագումարը: Այն կրկին հաստատեց, որ ԵԺԴՀ–ի զարգացման հիմնական ուղղությունը սոցիալիզմի կառուցումն է, և հավանություն տվեց դրա համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու ծրագրին:

ԵՍԿ–ի ստեղծումից և նոր սահմանադրության ընդունումից հետո ավելի արագ ու լայնորեն ընթացավ եմենական հասարակության հետագա դեմոկրատացման պրոցեսը: Աճեց բանվորական արհմիությունների համընդհանուր կոնֆեդերացիայի դերը: Ակտիվացրին իրենց գործունեությունը Եմենի երիտասարդության սոցիալիստական միությունը, Եմենի կանանց ֆեդերացիան, գյուղացիների դեմոկրատական միությունը և այլ հասարակական կազմակերպություններ:

Սակայն նոր հասարակության կառուցումը հեշտ գործ չէր, մանավանդ մի այնպիսի հետամնաց երկրում, ինչպիսին ԵԺԴՀ–ն է: Այստեղ անխուսափելի էին սխալները: Դեռևս իրենց զգացնել էին տալիս ցեղային–կլանային հարաբերությունները, որոնք այս կամ այն չափով իրենց արտացոլումն էին գտնում առանձին ղեկավարների գործունեության մեջ: Այս հողի վրա և բարդ քաղաքական պայմաններում ԵՍԿ–ի ներսում ծայր առան տարաձայնություններ, որոնք վերածվեցին սուր բախումների: 1980 թ. ապրիլին ստիպված իր զբաղեցրած բոլոր կուսակցական և պետական պաշտոններից հրաժարական տվեց Աբդել Ֆաթահ Իսմայիլը և հեռանալով ԵԺԴՀ–ից՝ մեկնեց ԽՍՀՄ: Նրան փոխարինելու եկավ Ալի Նասեր Մուհամմադը, որը մինչ այդ զբաղեցնում էր վարչապետի պաշտոնը:

9. Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետությունը 1980–ական թվականներին

Դեռևս 1980 թ. հոկտեմբերին կայացած ԵՍԿ 2–րդ համագումարը հաստատեց տնտեսական զարգացման երկրորդ փոփոխված հնգամյա պլանը (1981–1985 թթ.): Այդ հնգամյա պլանն ընդհանուր գծերով հաջողությամբ կատարվեց, որի շնորհիվ բարելավվեց երկրի տնտեսական

վիճակը: Շարք մտան նոր արդյունաբերական ձեռնարկություններ, բուժհիմնարկներ, բնակելի տներ, դպրոցներ, գրադարաններ, ակումբներ և այլն: Աճեց ժողովրդի զբաղվածությունը: Սակայն տնտեսական զարգացման ոլորտում դրսևորվեցին նաև լուրջ թերություններ: Խեղաձևվեց պետական սեկտորին օժանդակելու գլխավոր կուրսը, անուշադրության մատնվեցին կոոպերատիվները, ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեցին մասնավոր սեկտորի զարգացման համար, որի պատճառով հայտնվեց շահագործողների մի նոր խավ: Չարդարացված ձևով մեծ գումարներ էին ծախսվում արտասահմանում պերճանքի առարկաներ գնելու վրա, որն առաջ բերեց դժգոհություն երկրում և կուսակցության ներսում:

Դրան հակառակ՝ ավելի ներդաշնակ էին զարգանում ԵԺԴՀ–ի արտաքին քաղաքական կապերը: ԵԺԴՀ–ն մեծ նշանակություն էր տալիս լայնածավալ համագործակցությանը ԽՍՀՄ–ի հետ, և այդ ուղղությամբ մեծ դեր խաղաց 1979 թ. հոկտեմբերի 25–ին ԽՍՀՄ–ի և ԵԺԴՀ–ի միջև ստորագրված բարեկամության և համագործակցության պայմանագիրը: Միջպետական կապերին զուգահեռ, բարեկամական հարաբերություններ հաստատվեցին նաև կուսակցական գծով՝ ԽՄԿԿ–ի և ԵՍԿ–ի միջև: Խորհրդային Միության տեխնիկատնտեսական օգնությամբ կառուցվեցին մի շարք կարևոր տնտեսական օբյեկտներ, այդ թվում՝ ցեմենտի գործարան, ջերմաէլեկտրակայան, 100 կմ երկարությամբ ոռոգելի ջրանցք, 9 ջրամբար, Ադենի համալսարանի շենքը, հիվանդանոց և այլն (ընդամենը 50 օբյեկտ): ԵԺԴՀ–ն ավելի ու ավելի էր կախման մեջ ընկնում Խորհրդային Միությունից, որն անհանգստացնում էր նրա որոշ հարևանների, առաջին հերթին՝ Սաուդյան Արաբիային:

Չգտնելով կանխել ԵԺԴՀ–ի հետագա կախվածության ուժեղացումը Խորհրդային Միությունից և վերջինիս դիրքերի հետագա ամրապնդումը տարածաշրջանում՝ Սաուդյան Արաբիան 1976 թ. ճանաչեց ԵԺԴՀ–ն, նրա հետ հաստատեց դիվանագիտական հարաբերություններ և պատրաստակամություն հայտնեց նրան ցույց տալ տարատեսակ օգնություն: Սակայն նրան չհաջողվեց կանխել Հարավային Եմենի բարեկամական հարաբերությունների զարգացումը սոցիալիստական երկրների հետ: ԵԺԴՀ–ն 1979 թ. բարեկամության և համագործակցության պայմանագիր ստորագրեց ԳԴՀ–ի, իսկ 1981 թ.՝ Չեխոսլովակիայի հետ:

Բարելավվեց հարաբերությունները արաբական մի շարք երկրների հետ: ԵԺԴՀ–ն Ալժիրի, Լիբիայի, Սիրիայի և ՊԱԿ–ի հետ կազմեց Կա-

յունության և դիմակայության ազգային ճակատ՝ ուղղված արաբական աշխարհում անջատ գործարքների դեմ:

Ինչ վերաբերում է կապիտալիստական երկրներին, ապա ԵԺԴՀ–ի քաղաքական կապերը նրանց հետ աշխույժ չէին: Նրանց փոխհարաբերություններում գլխավոր դերը պատկանում էր առևտրին:

Բարդ և դժվար էին ընթանում հարաբերությունների զարգացումը Եմենի Արաբական Հանրապետության հետ, որը երկու պետությունների համար էլ առաջնակարգ նշանակություն ուներ: Սակայն այդ հարաբերությունները մշտապես իրենց վրա կրում էին լարվածության և փոխադարձ անվստահության կնիքը, որը երբեմն թշնամանքի էր վերածվում: 1972 թ. եղբայրասպան պատերազմական գործողություններ սկսվեցին Եմենական երկու պետությունների միջև, որը մեծագույն ջանքերով և արաբական պետությունների միջամտության շնորհիվ հնարավոր եղավ դադարեցնել: Դեռ ավելին՝ անգամ բանակցություններ սկսվեցին նրանց միջև՝ միավորման և մեկ միասնական Եմենական պետություն ստեղծելու շուրջ, որը, սակայն, հետագա զարգացում չստացավ և վերջացավ անհաջողությամբ:

Որոշ դրական տեղաշարժեր նկատվեցին 80–ական թվականներին, երբ ԵԺԴՀ–ին և ԵԱՀ–ին հաջողվեց հաղթահարել գոյություն ունեցող անվստահությունը, վերջ տալ առճակատմանը և հարաբերությունները զարգացնել բարեկամության ու համագործակցության ոգով:

80–ական թվականների կեսերին կրկին սրվեցին հարաբերությունները Եմենի սոցիալիստական կուսակցության ներսում, որը վերածեց սուր քաղաքական ճգնաժամի: Կուսակցության ղեկավարության մեջ բացակայում էր միասնությունը: Ալի Նասեր Մուհամմադը և նրա կողմնակիցները խախտում էին կոլեգիալ ղեկավարությունը և ներկուսակցական դեմոկրատիան, որն առաջացրեց նրա քաղաքական հակառակորդների շատ խիստ դժգոհությունը: Դրան միախառնվում էր ընդդիմադիր կողմերի ղեկավարների հավակնությունները՝ այս կամ այն ցեղի շահերի արտահայտիչը լինելու, և այլ հարցեր: Ալի Նասեր Մուհամմադի հեղինակությունն արագ թափով ընկնում էր: Նրան մեղադրում էին աջակողմյան ոգով կուսակցության գիծը խեղաթյուրելու, տեղայնականությունը խրախուսելու, իրեն կուսակցությունից վեր դասելու մեջ: 1985 թ. մարտին ԵԺԴՀ վերադարձավ Աբդել Ֆաթահ Իսմայիլը: Դա ավելի սրեց պայքարը նրա և Ալի Նասեր Մուհամմադի կողմնակիցների միջև: 1985 թ. Ադենում գումարվեց ԵՍԿ 3–րդ համագումարը, որը պետք է ճգնաժա-

մը լուծելու ուղիներ նշեր: Սակայն դա չհաջողվեց: Թեև կուսակցության նորընտիր ղեկավար մարմինների կազմի հարցում ձեռք բերվեց փոխզիջողություն, բայց պայքարը երկու թևերի միջև շարունակվեց: Դեպքերի հետագա զարգացումը ողբերգական բնույթ ընդունեց: 1986 թ. հունվարի 13–ին Ալի Նասեր Մուհամմադի գիտությամբ և հավանությամբ սպանվեցին նրա հիմնական քաղաքական հակառակորդներ, ԵՍԿ քաղբյուրոյի անդամներ Աբդել Ֆաթահ Իսմայիլը, Ալի Անտարը, Սալիհ Մուսլի Կասեմը և Ալի Շայյա Հադին: Դա ցնցեց ամբողջ երկիրը և զինված պայքարի ազդանշան ծառայեց Ադենում, նրա շրջակայքում և երկրի այլ վայրերում: Երկրում սկսվեց քաղաքացիական պատերազմ: Տասներկու օր տևած պատերազմի ընթացքում զոհվեց ավելի քան 4 հազ. մարդ: Ժողովրդի ճնշող մեծամասնությունը հանդես եկավ Ալի Նասեր Մուհամմադի դեմ, և վերջինս իր կողմնակիցներով երկրից փախավ:

1986 թ. հոկտեմբերին ԵԺԴՀ–ի նախկին վարչապետ Հայդար Բաքր ալ–Աթասին ընտրվեց պրեզիդենտ և իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ իշխանությունը:

Այդ ողբերգությունը ծանր նստեց ԵԺԴՀ–ի վրա: Սակայն նոր ղեկավարությանը ալ–Աթասիի ղեկավարությամբ փորձում էր վերականգնել ու կայունացնել ներքաղաքական իրադրությունը և ձեռնամուխ լինել երկրի առջև կանգնած խնդիրների լուծմանը: Բայց դա նրան չհաջողվեց, և 1987–1988 թթ. ծայր առան նոր բախումներ՝ ավելի բարդացնելով առանց այն էլ վերին աստիճանի ծանր իրադրությունը երկրի ներսում: Սրվեցին հարաբերությունները նաև հարևան երկրների, այդ թվում և Եմենի Արաբական Հանրապետության հետ:

III. ԵՄԵՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՄԵՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԵՄԵՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1. Եմենի Հանրապետության ստեղծումը

Եմենական երկու պետություններում կար մեկ հարց, որը համաեմենական բնույթ ուներ և հուզում էր բոլոր եմենցիներին, անկախ այն

բանից, թե նրանք եմենական ո՛ր պետության քաղաքացիներ էին, սոցիալական ո՛ր խավին և կամ իսլամի ո՛ր թևին էին պատկանում: Դա օսմանական և բրիտանական տիրապետությունից ժառանգություն մնացած Եմենի պառակտվածության վերացման և միասնականության վերականգնման, մեկ միասնական Եմենի պետության ստեղծման հարցն էր: Այդ հարցը մշտապես գոյություն է ունեցել եմենական քաղաքական օրակարգում, և չկար որևէ ուժ, որ փորձեր բացահայտորեն հանդես գալ միավորման գաղափարի դեմ: Անգամ այն բանից հետո, երբ ձևավորվեց Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետությունը, որը սոցիալիստական կողմնորոշում ուներ և չէր ընդունում Եմենի Արաբական Հանրապետության զարգացման ուղին, անգամ այդ ժամանակ երկու պետություններից և ոչ մեկը հանդես չէր գալիս միավորման դեմ:

Միավորման հարցը շատ սուր բնույթ կրեց և արդիական կարևորություն ձեռք բերեց 1980–ական թվականների վերջերից: Անվերջ պետական հեղաշրջումները, ներքին արյունալի բախումները, թշնամանքը տարբեր ուժերի, խմբավորումների և ցեղերի միջև և այլն. այդ ամենը հոգնեցրել էին եմենցիներին թե՛ Հյուսիսում և թե՛ Հարավում: Նրանցից շատերը ելքը տեսնում էին Հյուսիսային և Հարավային Եմենների միավորման և մեկ միասնական պետություն ստեղծելու մեջ:

Այդ հարցն արդիական էր դարձել ոչ միայն ազգային իդեալի կենսագործման առումով, այլև սոցիալ–տնտեսական զարգացման հեռանկարի տեսանկյունից: Եմենցիները հավատացած էին, որ միավորումը, երկու մասերի մարդկային ուժերի, բնական հարստությունների, նյութական և հոգևոր ռեսուրսների համատեղումը կարող է բարերար ազդեցություն ունենալ երկրի տնտեսության և սոցիալական զարգացման վրա, նոր հեռանկարներ բացել նրանց առջև:

Նրանց այդ հարցը հուզում էր նաև ներքին՝ ներեմենական և միջեմենական կայունության տեսանկյունից՝ գտնելով, որ միավորումը կարող է վերջ դնել անվերջ բախումներին, թշնամանքին, պատերազմական գործողություններին երկու եղբայրական պետությունների միջև և համերաշխություն ու խաղաղություն հաստատել եմենցիների միջև, որը կայունություն կհաստատեր ամբողջ Եմենում՝ հյուսիսից մինչև հարավ:

Բայց այդ հարցն իր բարդություններն ուներ՝ կապված նախ և առաջ երկու պետությունների զարգացման տարբեր ուղիների ընտրության հետ, որը, ինչպես նշվեց, մշտական լարվածություն էր ստեղծել

նրանց միջև, ինչը երբեմն հանգեցնում էր նաև ռազմական բախումների ու պատերազմական գործողությունների:

Լարվածությանը նպաստում էր նաև այն հանգամանքը, որ 1967 թ. Հարավային Եմենի Ժողովրդական Հանրապետության կազմավորումից հետո, որը 1970 թ. վերանվանվեց Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության՝ սոցիալիստական կողմնորոշումով, հարյուր հազարավոր եմենցիներ լքեցին Հարավային Եմենը և հաստատվեցին Եմենի Արաբական Հանրապետությունում: Նրանք իրենց հետ տարան նաև հակակրանքն ու թշնամանքը ԵԺԴՀ–ի հանդեպ, որը բացասաբար էր անդրադառնում նաև նրանց ապաստան տված Եմենի Արաբական Հանրապետության քաղաքական մթնոլորտի վրա՝ դառնալով երկու եմենական պետությունների միջև լարվածությունը սնող աղբյուրներից մեկը:

Մյուս կողմից՝ ԵԺԴՀ–ում ապաստան էին գտել մի քանի հազար եմենցիներ Հյուսիսային Եմենից, որոնք դժգոհ էին Եմենի Արաբական Հանրապետությունում հաստատված վարչակարգից: Այդ ուժերի ներկայությունն իր հերթին բացասական ազդեցություն էր թողնում ԵԺԴՀ–ի քաղաքական մթնոլորտի վրա և այս կամ այն չափով սնում ԵԱՀ–ի դեմ ուղղված զգացմունքները:

Եմենցիների ճնշող մեծամասնությունը համոզված էր, որ միասնության դեպքում կարող է վերանալ թշնամանքը եմենական երկու հատվածների, այդ թվում և հարկադրական էմիգրանտների միջև, և հնարավոր կլինի հասնել համազգային համերաշխության ու ներդաշնակության եմենական հասարակության ներսում:

Հօգուտ միասնականության էր աշխատում նաև արտաքին գործոնը: Երկու եմենում էլ լավ էին հասկանում, որ ԵԺԴՀ–ի և ԵԱՀ–ի միավորումը և մեկ եմենական պետության ստեղծումը կբարձրացներ նորաստեղծ պետության վարկն ու քաղաքական կշիռը արաբական աշխարհում, մերձավորարևելյան տարածաշրջանում և միջազգային հարաբերություններում:

Ահա այս բոլոր գործոնները հանգեցրին նրան, որ ԵԺԴՀ–ի և ԵԱՀ–ի կառավարությունները բանակցություններ սկսեցին միավորման մասին, որն ավարտվեց հաջողությամբ: 1990 թ. մայիսի 22–ին նրանք ստորագրեցին պայմանագիր Եմենի Արաբական Հանրապետության և Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության միավորման և մեկ միասնական պետություն ստեղծելու մասին, որը կոչվեց Եմենի Հանրապետություն: Դրանով վերջ տրվեց Եմենի՝ մոտ մեկուկես դար տևած քաղա-

քական բաժանվածությանը և իրականություն դարձավ եմենցիների՝ մեկ միասնական պետություն ունենալու ազգային երազանքը:

Մայիսի 22–ը՝ միավորման օրը, հայտարարվեց Եմենի Հանրապետության ազգային տոն:

Նորաստեղծ պետության անվանակոչության հարցում կողմերը գնացին փոխզիջման: Նրանցից ոչ մեկը չփորձեց մյուս կողմին պարտադրել իր երկրի անվանումը: Դրա փոխարեն նրանք ընդունեցին նոր անվանում՝ Եմենի Հանրապետություն՝ պահպանելով էքնոաշխարհագրական «Եմեն» անվանումը, և նորաստեղծ պետության հանրապետական բնույթը:

Այդուհանդերձ, Եմենի Հանրապետության կառավարման համակարգում ավելի ուժեղ դիրքեր գրավեցին Եմենի Արաբական Հանրապետության ներկայացուցիչները: Եմենի Հանրապետության պրեզիդենտ դարձավ ԵԱՀ–ի պրեզիդենտ Ալի Աբդալլահ Սալիհը, որը բավականին մեծ հեղինակություն էր վայելում եմենցիների շրջանում: ԵԱՀ–ի մայրաքաղաք Սանան դարձավ Եմենի Հանրապետության մայրաքաղաքը: Իսկ նախկին ԵԺԴՀ–ի մայրաքաղաք Ադենը ոչ պաշտոնապես ստացավ Եմենի Հանրապետության «տնտեսական մայրաքաղաք» անունը, որը ոչնչի չի պարտավորեցնում և ավելի շատ բարոյահոգեբանական նշանակություն ունի:

Սակայն չպետք է կարծել, թե երկու եմենական պետությունների միավորումից և ԵՀ–ի կազմավորումից հետո բոլոր հարցերը միանգամից լուծվեցին: Այդպիսի հրաշք պատմության մեջ տեղի չի ունենում: Քաղաքական, տնտեսական և սոցիալական սուր խնդիրները դեռևս պահպանվում են: Նույնիսկ միասնության հարցում չհաստատվեց ներքին համերաշխություն: Իրենց դիրքերը պահպանեցին անջատողականության կողմնակիցները, հատկապես Հարավային Եմենում, որը մեծապես խանգարում էր քաղաքական իրադրության կայունացմանը և լարվածության վերացմանը: Բնականաբար, այդպես շարունակվել չէր կարող, և 1994 թ. մայիսին ռազմական բախումներ սկսվեցին ԵՀ–ի հյուսիսում և հարավում տեղակայված զինվորական ուժերի միջև: Նախաձեռնողները Հարավային Եմենի կամ նախկին Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության անջատողական ուժերն էին ու նրանց պաշտպանող զինվորական միավորումները: Ռազմական դիմակայությունը կամ քաղաքացիական պատերազմը տևեց մինչև հուլիս ամիսը, երբ հյուսիսի ռազմական ուժերը հաղթանակ տարան հարավի ապստամբ զինված ուժերի նկատմամբ:

Դա եղավ հարավի անջատողական ուժերի վերջին ելույթը:

1994 թ. մայիսյան պատերազմական գործողությունները շատ ծանր նստեցին ԵՀ–ի վրա: Եղան մեծաթիվ մարդկային զոհեր, իսկ պատերազմի հասցրած տնտեսական վնասը կազմեց մոտ 11 մլրդ ԱՄՆ դոլար:

2. Եմենի Հանրապետության պետական կառուցվածքը

Տարբեր հասարակական–քաղաքական համակարգեր ունեցող երկու պետությունների միավորումից հետո առաջնահերթ խնդիր դարձավ այդ համակարգերի միասնականացման հարցը: Հասկանալի է, որ դրա համար պետք էր ոչ միայն որոշակի ժամանակ, այլև սահմանադրական և իրավական հիմք:

1991 թ. մայիսի 16–ին Եմենի Հանրապետությունում ընդունվեց նոր սահմանադրություն, որն այնուհետև փոփոխության ենթարկվեց 1994 թ. սեպտեմբերի 28–ին և 2001 թ. փետրվարի 20–ին: Դրանով դրվեց ամբողջ երկրում միասնական օրենքներ և իրավական նորմեր հաստատելու հիմքը, որի վրա բարձրացան պետական կառույցները:

Եմենի Հանրապետությունում գործող սահմանադրության համաձայն՝ պետության ղեկավարը, որին պատկանում է գործադիր իշխանությունը, պրեզիդենտն է: ԵՀ–ի առաջին պրեզիդենտ, ինչպես նշվեց, 1990 թ. մայիսին նշանակվեց նախկին Եմենի Արաբական Հանրապետության պրեզիդենտ Ալի Աբդալլահ Սալիհը: Պրեզիդենտն ընտրվում է յոթ տարի ժամանակով ուղղակի ընտրությունների միջոցով: Սալիհը վերջին անգամ ընտրվել է 1999 թ. սեպտեմբերի 23–ին, և նրա ժամկետն ավարտվում է 2006 թ.: Պրեզիդենտական ընտրություններն ունեն մեկ կարևոր յուրահատկություն: Ընտրությունների ժամանակ պարտադիր կերպով պետք է լինի պրեզիդենտության առնվազն երկու թեկնածու: 1999 թ. ընտրությունների ժամանակ, Սալիհից բացի, ընտրություններին մասնակցում էր նաև Եմենի ազատագրական պայքարի հայտնի գործիչ Կահթան ալ–Շաաբին:

Պրեզիդենտն օժտված է լայն լիազորություններով: Նա է նշանակում փոխպրեզիդենտին, վարչապետին և կառավարության անդամներին՝ վերջինիս ներկայացմամբ:

Օրենսդիր իշխանությունը պատկանում է պառլամենտին, որը 2001 թ. կայացած սահմանադրական փոփոխության համաձայն դարձել

է երկպալատանի: Նա կազմված է Ներկայացուցիչների պալատից և Խորհրդատվական խորհրդից՝ Շուրայից: Ներկայացուցիչների պալատը բաղկացած է 301 դեպուտատներից, որոնք ընտրվում են 6 տարի ժամանակով, իսկ Շուրան՝ 111 անդամից, որոնց նշանակում է պրեզիդենտը: Պառլամենտական վերջին ընտրությունները տեղի են ունեցել 2003 թ. ապրիլի 27–ին:

Սահմանադրության համաձայն միասնականացվեցին նաև նախկին Հյուսիսային և Հարավային Եմենների դատաստանագրքերը և իրավական համակարգերը: ԵՀ–ում գործում են Գլխավոր դատարան, առևտրական դատարաններ, և ի զորու են շարիաթի դրույթները: Դրան պետք է ավելացնել մի յուրահատուկ հանգամանք ևս, որը ոչ բոլոր երկրներում է առկա: Խոսքն այն մասին է, որ ԵՀ–ում ցեղերն արդարադատությունը շարիաթի դրույթների հետ միասին իրականացնում են նաև տեղական նորմերով: Գործում են նաև տեղական դատարաններ:

Եմենում կան մեկ տասնյակից ավելի քաղաքական կուսակցություններ, որոնք ակտիվորեն մասնակցում են երկրի քաղաքական կյանքին, այդ թվում և պառլամենտական ընտրություններին: Սակայն դրանցից մի քանիսն են միայն, որ ազդեցիկ են և օգտվում են որոշակի հեղինակությունից: Դրանց թվին են պատկանում Ժողովրդական գլխավոր կոնգրեսը, Իսլամական բարեփոխումների խմբավորումը, Եմենի սոցիալիստական կուսակցությունը և այլն: 2003 թ. կայացած վերջին պառլամենտական ընտրությունների ժամանակ երկրի բարձրագույն օրենսդիր մարմնում տեղերը բաժանվել էին հետևյալ կերպ. Ժողովրդական գլխավոր կոնգրես՝ 228 տեղ, Իսլամական բարեփոխումների խմբավորում՝ 47 տեղ, Եմենի սոցիալիստական կուսակցությունը՝ 7 տեղ և այլն: Ժողովրդական գլխավոր կոնգրեսը համարվում է պրեզիդենտական կուսակցություն, որը երկրի զինված ուժերի հետ միասին հանդիսանում է պրեզիդենտի քաղաքական կարևոր հենարաններից մեկը:

Իսկ Իսլամական բարեփոխումների խմբավորումը կամ կուսակցությունը Եմենի իսլամական ֆունդամենտալիստների կուսակցությունն է, որի առաջնորդը՝ շեյխ ալ–Ահմարը, և մյուս ղեկավար գործիչները սերտորեն համագործակցում են արաբական երկրների մյուս համանման կազմակերպությունների հետ: Մասնավորապես նրանք մոտ հարաբերությունների մեջ են Սաուդյան Արաբիայի հետ:

1994 թ. քաղաքացիական պատերազմի ավարտից հետո՝ մինչև 1997 թ. ապրիլի 27–ի պառլամենտական ընտրությունները, պրեզիդեն-

տական ժողովրդական գլխավոր կոնգրես կուսակցությունը ԵՀ–ն կառավարում էր՝ կոալիցիայի մեջ գտնվելով շեյխ Աբդալլահ բին Հուսեյն ալ–Ահմարի Իսլամական բարեփոխումների կուսակցության հետ: Սակայն այդ ընտրություններում տանելով համոզիչ հաղթանակ՝ ԺԳԿ–ն դուրս եկավ կոալիցիայից և երկիրը կառավարում է որպես պառլամենտում բացարձակ մեծամասնություն ունեցող կուսակցություն, որը կրկին հաստատվեց 2003 թ. պառլամենտական ընտրությունների ժամանակ:

Ինչ վերաբերում է Եմենի սոցիալիստական կուսակցությանը, ապա դրա անդամները նախկին ԵԺԴՀ–ի երբեմնի կառավարող ամենաազդեցիկ սոցիալիստական կուսակցության հետևորդներն են, որոնք ծանր հարված էին ստացել մասնավորապես 1994 թ. հարավեմենցիների ապստամբության ժամանակ, որի մասնակիցներն էին դարձել նաև նրա անդամները: Սակայն հեռատես և պրագմատիկ պրեզիդենտ Ալի Սալիհը հետագայում նրանց ներում շնորհեց, և փախուստի մեջ գտնվող սոցիալիստներն աստիճանաբար սկսեցին վերադառնալ ԵՀ–ը և մասնակցել քաղաքական կյանքին: Եմենի սոցիալիստական կուսակցությունը լոյալ դիրք է գրավում պրեզիդենտ Ալի Սալիհի և նրա վարչակարգի հանդեպ:

Միասնական պետություն ստեղծելու ճանապարհին առաջնակարգ նշանակություն ուներ բանակի վերակառուցումը: Բանակը, ինչպես հայտնի է, մեծ դեր է խաղում արևելյան հասարակություններում, և նրա գործառույթը չի սահմանափակվում միայն ռազմական ոլորտով: Նա կատարում է նաև քաղաքական ֆունկցիաներ՝ պետական հեղաշրջումներ, պրեզիդենտների և կառավարությունների տապալում, նորերի նշանակում և այլն: Շատ հաճախ իրենք՝ զինվորական հրամանատարներն են պետական հեղաշրջումների նախաձեռնողները, և իրենք են վերցնում իշխանությունն իրենց ձեռքը: Այդ իրողությունը հաստատվում է բազմաթիվ երկրների, ներառյալ արաբական երկրների, այդ թվում և Եմենի պատմական օրինակով:

1994 թ. քաղաքացիական պատերազմից հետո, երբ հյուսիսային եմենցիների ռազմական ուժերը հաղթող դուրս եկան, և հարավեմենական ռազմական ուժերը պարտություն կրեցին, ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեցին Եմենի Հանրապետությունում ռազմական ուժերի ինտեգրացման և միասնական զինված ուժերի ստեղծման համար: Սպայական կազմի որոշակի զտումից հետո հարավեմենցի սպաները ներգրավվեցին ռազմական ուժերի բոլոր կառույցներում:

Բանակի գլխավոր խնդիրը համարվում է երկրի անվտանգության ապահովումը արտաքին թշնամիներից, և ավելի հստակ է խոսվում այն մասին, որ այն քաղաքականության մեջ չպետք է ներգրավվի:

Բանակը վերակառուցվեց ըստ զորատեսակների: Այդ գործընթացն իր վերջնակետին հասավ 2002 թ.: Այժմ ԵՀ–ի զինված ուժերը կամ բանակը ներառնում է հետևյալ զորատեսակներ. բանակ (իմա՝ հետևակ)՝ Հատուկ ուժերի հետ միասին, Ծովային և առափնյա պաշտպանության ուժեր, Օդային ուժեր և Հանրապետական գվարդիա:

Կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում զինված ուժերի զարգացմանը: Նրա վրա յուրաքանչյուր տարի ծախսվում է 885,5 մլն ԱՄՆ դոլար, որը կազմում է ՀՆԱ–ի 7,8%–ը:

3. Իրադրությունը տնտեսական և սոցիալական ոլորտներում

Եմենի Հանրապետության գլխավոր խնդիրներից մեկը տնտեսության բնագավառում և սոցիալական ոլորտում նախկին երկու եմենական պետությունների տնտեսական տարբեր համակարգերի միավորումը՝ ինտեգրացումն է, մեկ միասնական տնտեսական համակարգի ստեղծումը և այդ հիմքի վրա երկրի տնտեսական և սոցալական առաջադիմության ապահովումը: Սակայն դա դյուրին գործ չէ և պահանջում է երկար ժամանակ, ֆինանսական մեծ միջոցներ և նոր մոտեցումներ: Պետք է նկատի ունենալ նաև, որ Եմենի Հանրապետությունը, ինչպես արաբական երկրների մեծ մասը, հանդիսանում է տնտեսապես թույլ զարգացած երկիր:

1980–ական թվականներին երկրում հայտնաբերվեցին նավթի պաշարներ, որը մեծ հույսեր է ներշնչում, և նրա արդյունահանման ու զարգացման հետ են կապված Եմենի Հանրապետության տնտեսական զարգացման հեռանկարները: ԵՀ–ի նավթի պաշարները 2004 թ. տվյալներով կազմում են 4 մլրդ բարել: Նավթավերամշակման ամենախոշոր գործարանը գտնվում է Ադենում, նման գործարան գոյություն ունի նաև Մարիբում:

Արդյունաբերությունը տալիս է ներքին համախառն արտադրանքի 42%–ը: Նրանում չափազանց մեծ է նավթարդյունաբերության բաժինը: Արդյունաբերության մյուս ճյուղերից հիշատակության են արժանի տեքստիլ, բամբակազտիչ, կաշվի, սննդի վերամշակման ճյուղերը: Ադենում և Սանայում կան հռչակավոր եմենական «Մոկո» սուրճի վերամ-

շակման գործարաններ: Հիշատակության են արժանի նաև Ադենում և Հոդեյդայում գտնվող մետաղամշակման ձեռնարկությունները: Զգալիորեն զարգացած է նաև շինարարական արդյունաբերությունը, հատկապես ցեմենտի արտադրությունը: Իր նշանակությունը չի կորցրել արհեստագործական արտադրությունը: Եմենի արհեստագործները հռչակված են գործվածքի, գորգերի, ոսկերչության, երկաթագործության, սառը զենքի արտադրության և այլ բնագավառներում:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը, ապա այս ոլորտում նս կան լուրջ խնդիրներ: Մշակվում է մոտ 1,5 մլն հա հողատարածք, որը կազմում է երկրի ընդհանուր տարածքի 3%–ից էլ պակաս: Գյուղատնտեսական ամենազարգացած կենտրոնը Զաբալի շրջանն է: Եմենի նախալեռնային շրջաններում աճեցվում են ծիրան, թուզ, նուռ, խաղող, մշակվում են նաև կորեկ, ցորեն, գարի և եգիպտացորեն: Տեխնիկական կուլտուրաներից լայն տարածում ունի բամբակի, ծխախոտի և ինդիգոյի մշակումը: Եմենի հարավարևելյան շրջաններում և Թիհամում տարածված է օազիսային գյուղատնտեսությունը:

ԵՀ–ն գյուղատնտեսական կուլտուրաներից արտահանում է սուրճ, որի «Արաբիկա« կամ «Մոկո» տեսակը համաշխարհային մեծ հռչակ է վայելում: Սակայն նրա մշակմանը և զարգացմանը վերջին տասնամյակներին լուրջ մարտահրավեր է նետել կատը՝ մի թմրաբույս, որի օգտագործումը եմենցիների կողմից շատ մեծ տարածում է գտել:

Իսկ ընդհանուր առմամբ գյուղատնտեսությունը չի բավարարում երկրի բնակչության պահանջները: Դրա մասին է վկայում այն փաստը, որ Եմենը ներմուծում է սննդամթերքի 70%–ը:

Եմենը համարվում է արաբական ամենաաղքատ երկրներից մեկը, և ներկա փուլում՝ XXI դարի սկզբներին, երկրի տնտեսական վիճակը դեռևս մնում է ծանր: Դրանում, բացի ընդհանուր հետամնացությունից, իր բացասական դերն են խաղում բնակչության աճի տեմպերը, որոնք ամենաբարձրն են արաբական երկրների մեջ՝ տարեկան 3,1%–ի աճ: Եմենական կինը միջին հաշվով ունի ութ երեխա: Նման պայմաններում, երբ տնտեսության աճն անհամեմատ ավելի դանդաղ է և ավելի ցածր, քան բնակչության աճը, տարեցտարի ավելի է խորանում աղքատությունը:

Դրան նպաստում են նաև այլ գործոններ: Արտասահմանյան տարբեր երկրներում՝ Ծոցի արաբական երկրներում, Սաուդյան Արաբիայում, Պակիստանում, Ինդոնեզիայում, Հնդկաստանում, աֆրիկյան

երկրներում և այլուր, բնակվում են մոտ երկու միլիոն եմենցիներ, որոնք դրամական զգալի փոխանցումներ են կատարում Եմեն իրենց հարազատներին: Սակայն Հյուսիսային և Հարավային Եմենների միավորումից հետո, երբ քաղաքական իրադրությունը զգալիորեն բարելավվեց, մոտ 850 հազ. եմենցիներ վերադարձան ԵՀ: Դրա հետևանքով զգալիորեն կրճատվեց օտարերկրյա արժույթի հոսքը Եմեն, և մեծացավ այն ընտանիքների թիվը, որոնք, զրկվելով եկամտի այդ աղբյուրից, համալրեցին անապահով ընտանիքների շարքերը:

Իր դերը խաղաց նաև Եմենի Հանրապետության դիրքորոշումը Իրաքի հանդեպ 1990–1991 թթ. Քուվեյթի դեմ վերջինիս ագրեսիայի ժամանակ: ԵՀ–ն պաշտպանեց Իրաքին և չմիացավ հակաիրաքյան կոալիցիային, որի մեջ բացի ԱՄՆ–ից, Մեծ Բրիտանիայից, Խորհրդային Միությունից, Ֆրանսիայից և այլ երկրներից, մտնում էին նաև մի շարք արաբական երկրներ, ինչպես Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը, Սիրիան և այլն: Դա ունեցավ իր բացասական հետևանքները ԵՀ–ի համար ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական առումով: Սաուդյան Արաբիայի կառավարությունը, ի պատասխան ԵՀ–ի այդ անհեռատես քաղաքականության, երկրից վտարեց մոտ մեկ միլիոն եմենցիների, որոնք ապրում և աշխատում էին Սաուդյան Արաբիայում: Դա ծանր հարված էր ԵՀ–ի տնտեսությանը, իսկ հարյուր հազարավոր ընտանիքներ զրկվեցին ապրուստի միջոցներից:

ԵՀ–ում բարձր է գործազրկությունը: 2004 թ. տվյալներով՝ ԵՀ–ի աշխատուժը կազմում է մոտ 5 մլն, իսկ գործազրկությունը՝ 35%, որը շատ բարձր ցուցանիշ է: 2003 թ. տվյալներով՝ բնակչության 45,2%–ը գտնվում է աղքատության սահմանագծից ներքև: Կարծում ենք, որ այդ թվերը շատ խոսուն են և վկայում են տնտեսական այն ծանր դրության մասին, որի մեջ հայտնվել է ԵՀ–ի բնակչությունը:

1990–ական թվականների վերջերից և 2000–ականների սկզբներից նկատվում է տնտեսության զգալի աճ, որը կապված է առաջին հերթին նավթարդյունաբերության զարգացման և նավթի համաշխարհային գների բարձրացման հետ: Կառավարությունը Համաշխարհային բանկի և Միջազգային արժութային հիմնադրամի հետ միասին փորձում է իրականացնել տնտեսության վերակառուցում և արդիականացում, բարենպաստ պայմաններ ստեղծել օտարերկրյա ներդրումների համար, կարևոր է համարում տնտեսական ազատ գոտիների ստեղծումը, վերահսկողության ուժեղացումը ֆինանսական ծախսումների վրա և այլն: Համաշխարհային բանկը մասնակցում է ԵՀ–ում իրականացվող 22

ծրագրերի իրագործմանը, որով նախատեսվում է հասարակական սեկտորի կառավարման բարենորոգում, բնակչությանը ջրի մատակարարման բարելավում, կրթության համակարգի զարգացում և այլն:

Սակայն այդ բոլորի արդյունքները կերևան ապագայում:

4. ԵՀ–ի միջազգային դրությունը

ԵԱՀ–ն և ԵԺԴՀ–ն նախքան միավորվելն ունեին իրենց նախասիրությունները և կողմնորոշումները միջազգային հարաբերություններում:

Մինչև 1962 թ. Հյուսիսային Եմենը գտնվում էր քաղաքական մեկուսացման մեջ, որն իմամների յուրահատուկ քաղաքականության արդյունք էր: 1962 թ. միապետության տապալումից հետո նա աստիճանաբար դուրս եկավ մեկուսացումից և սկսեց կարգավորել իր հարաբերություններն առաջին հերթին արաբական երկրների, իսկ այնուհետև՝ արևմտյան պետությունների հետ: Առանձնապես սերտ էին նրա հարաբերությունները Եգիպտոսի հետ: Իսկ ինչ վերաբերում է նրա ամենակարևոր անմիջական հարևանին՝ Սաուդյան Արաբիային, ապա հարաբերությունները նրա հետ խիստ լարված բնույթ էին կրում, մանավանդ այն բանից հետո, երբ Սաուդյան Արաբիան ապաստան և օգնություն ցույց տվեց տապալված եմենական միապետականներին՝ փորձելով վերականգնել իմամների իշխանությունը Եմենի Արաբական Հանրապետությունում: Սակայն ԵԱՀ–ից զորքերը դուրս բերելու վերաբերյալ 1970 թ. եգիպտա–սաուդյան համաձայնությունից հետո հարաբերությունները ԵԱՀ–ի և Սաուդյան Արաբիայի միջև կարգավորվեցին: Սաուդյան Արաբիան սկսեց ԵԱՀ–ին ցույց տալ ֆինանսական և այլ բնույթի օգնություն, մասնավորապես նրա բյուջեն համալրելու հարցում:

1989 թ. ԵԱՀ–ն Իրաքի, Եգիպտոսի և Հորդանանի հետ ստեղծեց Արաբական համագործակցության խորհուրդ՝ ի հակադրություն Ծոցի համագործակցության խորհրդի: Նրա նպատակն էր նպաստել անդամ երկրների տնտեսական մերձեցմանը և ինտեգրացմանը:

Ինչ վերաբերում է Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետությանը, որը պաշտոնապես ընթանում էր զարգացման սոցիալիստական ուղիով, ապա նա, բնականաբար, առաջին հերթին սերտ հարաբերություններ հաստատեց Խորհրդային Միության և սոցիալիստական մյուս պետությունների հետ՝ նրանցից ստանալով քաղաքական լայն աջակցություն և տնտեսական ու ռազմական օգնություն:

ԵԺԴՀ–ի հարաբերությունները խիստ լարված էին, ինչպես այն ժամանակ ընդունված էր ասել, արաբական պահպանողական պետությունների հետ, որոնք երբեմն հանգեցնում էին պատերազմական գործողությունների: 1969 և 1973 թթ. լուրջ ռազմական բախումներ տեղի ունեցան ԵԺԴՀ–ի և Սաուդյան Արաբիայի միջև: Նման բախումներ էին տեղի ունենում, ինչպես արդեն նշվել է, նաև Եմենի Արաբական Հանրապետության հետ:

ԵԺԴՀ–ն, ելնելով իր գաղափարական հիմնադրույթներից և քաղաքական կողմնորոշումներից, որոնք խարսխված էին սոցիալիզմի սկզբունքների վրա, օգնություն էր ցույց տալիս Դոֆարի ապստամբներին, որոնք պայքարում էին Օմանի սուլթանության դեմ: Նրա հարաբերությունները խիստ լարված էին Ծոցի երկրների հետ, որոնք ունեին միապետական վարչակարգեր: ԵԺԴՀ–ն անգամ դեմ քվեարկեց Ծոցի արաբական երկրներին ՄԱԿ–ի և Արաբական պետությունների լիգայի անդամ ընդունելու հարցում:

Միավորվելուց և Եմենի Հանրապետության կազմավորումից հետո ԵՀ կառավարությունը հայտարարեց իր հավատարմությունը նախկին երկու եմենական պետությունների կնքած պայմանագրերին: Սակայն, հասկանալի է, ԵՀ–ն չէր կարող նույնությամբ նախկին քաղաքականությունը վարել: Նախ՝ աշխարհի քաղաքական քարտեզից անհետացան Խորհրդային Միությունը և Արևելյան Եվրոպայի սոցիալիստական պետությունները: Դրա հետևանքով ԵՀ–ն արտաքին հարաբերությունների բնագավառում ազատվեց ԵԺԴՀ–ի «սոցիալիստական» բեռից: Նրան անհրաժեշտ էր մշակել նոր արտաքին քաղաքականություն, այդ թվում և միջարաբական հարաբերությունների ոլորտում: Եվ այդ հարցում ԵՀ–ի կառավարությունը միշտ չէ, որ կարողանում էր ճիշտ կողմնորոշվել: Նա կոպիտ սխալ թույլ տվեց Քուվեյթի դեմ Իրաքի 1990–1991 թթ. ագրեսիայի ժամանակ, երբ համայն աշխարհը դատապարտեց Իրաքի պրեզիդենտ Սադամ Հուսեյնի այդ քայլը՝ պահանջելով դադարեցնել ագրեսիան և վերականգնել Քուվեյթի անկախությունը: ԵՀ–ն այդ հարցում կանգնեց Իրաքի կողքին: ԵՀ–ն, լինելով ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ, ձեռնպահ մնաց, երբ քննարկվում էին Անվտանգության խորհրդի բանաձևերը, իսկ երբ ներկայացվեց Իրաքի դեմ ուժ գործադրելու բանաձևը, ապա ԵՀ պատվիրակը դեմ քվեարկեց դրան: Արդյունքը եղավ այն, որ ԵՀ–ն որոշ ժամանակ հայտնվեց մեկուսացման մեջ: Նրա հարաբերությունները վատացան ոչ

միայն արևմտյան, այլև արաբական երկրների հետ: Իսկ Սաուդյան Արաբիան իր երկրից արտաքսեց մոտ մեկ միլիոն եմենցիների և դադարեցրեց տնտեսական օգնությունը ԵՀ–ին:

Քուվեյթյան ճգնաժամի լուծումից հետո Սանայում որոշ քայլեր ձեռնարկվեցին արաբական երկրների հետ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ: 1993 թ. ԵՀ կառավարությունը ակտիվ քայլերի դիմեց վերականգնելու խզված հարաբերությունները Ծոցի արաբական երկրների հետ, բայց դրական արդյունքի չհասավ: Դեռ ավելին՝ 1994 թ., ԵՀ–ում քաղաքացիական պատերազմի ժամանակ, Ծոցի արաբական երկրները մեծ օգնություն էին ցույց տալիս հարավեմենական ապստամբական ուժերին ընդդեմ Աբդալլահ Սալիհի իշխանության:

Իհարկե, հարաբերությունները հարևան արաբական երկրների հետ հետագայում կարգավորվեցին: Նախ՝ լուծվեցին սահմանային վեճերը Օմանի հետ, որի վերաբերյալ կնքվեց համապատասխան պայմանագիր: 1995 թ. երկարաձգվեց եմենա–սաուդյան 1934 թ. պայմանագրի գործողության ժամկետը, որով կարգավորվում էին սահմանային հարցերը և առևտրական համագործակցության շրջանակները: Իսկ 2000 թ. նրանց միջև կնքվեց նոր պայմանագիր, որը վերջնականապես կարգավորեց միջպետական սահմանների հարցը:

ԵՀ–ն որոշակի հաջողությունների հասավ նաև ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի և այլ երկրների հետ իր հարաբերություններում, մասնավորապես առևտրական ոլորտում: 1990–ականների վերջերին և 2000–ականների սկզբներին, ԵՀ–ի հիմնական պարտնյորներն արտահանման գծով դարձան Թաիլանդը, ՉԺՀ–ն, Հարավային Կորեան և Ճապոնիան, ուր նա արտահանում է նավթ, սուրճ, ծուկ և այլ ապրանքներ: Իսկ Սաուդյան Արաբիայից, ԱՄԷ–ից, ԱՄՆ–ից, Ֆրանսիայից և Իտալիայից նա ներմուծում է մեքենաներ, սարքավորումներ, պարենամթերք և այլ անհրաժեշտ ապրանքներ:

Եմենի հանրապետությունը ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը և 1995 թ. մայիսի 26–ին դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին երկու երկրների միջև:

Եմենի Հանրապետությունը XXI դար թևակոխեց որպես եմենցիների դարավոր երազանքը մարմնավորած միասնական պետություն, որն ընթանում է արդիականացման ուղիով:

Գլուխ յոթներորդ

ԹՈՒՆԻՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԹՈՒՆԻՍ

ԱԼ–ՋՈՒՄՀՈՒՐԻՅԱ ԱԼ–ԹՈՒՆԻՍԻՅԱ
ԹՈՒՆԻՍ

Աշխարհագրական դիրքը — գտնվում է Հյուսիսային Աֆրիկայում
Սահմանները — սահմանակից է Ալժիրին և Լիբիային, իսկ հյուսիսից՝ Միջերկրական ծովին
Տարածքը — 163 հազ. 610 քառ. կմ
Բնակչությունը — 10 մլն 75 հազ. (2005 թ. հուլիս)
Մայրաքաղաքը — Թունիս (2 մլն)
Ազգային կազմը — արաբներ՝ 98%, եվրոպացիներ՝ 1%, հրեաներ և այլ ազգություններ՝ 1%
Պետական կրոնը — իսլամ՝ 98%, քրիստոնյաներ՝ 1%, հրեաներ և այլք՝ 1%
Պաշտոնական լեզուն — պաշտոնական լեզուն՝ արաբերեն, գործածական է նաև ֆրանսերենը
Պետական կարգը — հանրապետություն
Գործադիր իշխանությունը — պատկանում է պրեզիդենտին, որը պետության ղեկավարն է, և վարչապետին
Օրենսդիր իշխանությունը — միապալատանի Դեպուտատների պալատը՝ Մաջլիս ալ–Նուվաբ
Դատական իշխանությունը — Վճռաբեկ դատարան, համակարգը հիմնված է իսլամական օրենքի և ֆրանսիական քաղաքացիական օրենքի վրա
Վարչական բաժանումը — 24 նահանգներ
Քաղաքական կուսակցությունները — գործում են մոտ մեկ տասնյակ կուսակցություններ
Անկախության օրը — 20 մարտի, 1956 թ.
Ազգային տոնը — 1956 թ. մարտի 20
Սահմանադրությունը — 1959 թ. հունիսի 1, փոփոխության է ենթարկվել 1988, 2002 թթ.
Ազգային դրամը — թունիսյան դինար


ԱՏԼԱՍԻ ԼԵՌՆԵՐ
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ
ԹՈՒՆԻՍ
ՄՈՎ
ՍԱՀԱՐԱ
ԼԻԲԻԱ
ԹՈՒՆԻՍ
ՄԱՍՇՏԱԲ 1:7 500 000

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ըստ շնչի — մոտ 2000 ԱՄՆ դոլար (2003 թ.)

Բնական հարստությունները — նավթ, ֆոսֆատներ, երկաթահանք, արճիճ, ցինկ, աղ

Արդյունաբերությունը — նավթարդյունաբերություն, հանքային արդյունաբերություն, տեքստիլ, կոշիկի, սննդի արդյունաբերություն, զբոսաշրջիկություն

Գյուղատնտեսությունը — ձիթենի, ցիտրուսներ, բանջարեղեն, արմավ, կաթնամթերք, անասնապահություն

Նախորդ գլխում նշվեց, որ արաբական երկրներից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ յուրահատկությունները, որոնք պայմանավորված են ներքին և արտաքին զանազան գործոններով:

Նման յուրահատկություններից զերծ չէ նաև Թունիսը, որն առաջին հերթին արտահայտվում է այն իրողությամբ, որ Թունիսի քաղաքական մշակույթն իր վրա կրում է երկու տարբեր մշակույթների ազդեցությունը և ձևավորվել է նրանց համատեղումից: Առաջինը, անշուշտ, իսլամական քաղաքական մշակույթն ու աշխարհընկալումն է, որը պայմանավորված է Թունիսի իսլամական պետություն լինելու և իսլամական–արաբական աշխարհին պատկանելու հանգամանքներով: Երկրորդը՝ ֆրանսիական մշակույթի խոր ազդեցությունն է Թունիսի մշակույթի վրա ընդհանրապես և Թունիսի քաղաքական մշակույթի վրա՝ մասնավորապես: Թունիսի քաղաքական մշակույթը ներծծված է ֆրանսիական քաղաքական արժեքներով, հայեցակարգային հիմնադրույթներով ու գաղափարներով:

Այդ առումով նա սկզբունքորեն տարբերվում է Հյուսիսային Աֆրիկայի մյուս երկրներից՝ Ալժիրից և Մարոկկոյից, որոնք նույնպես գտնվել են ֆրանսիական տիրապետության տակ: Ի տարբերություն նրանց՝ Թունիսն ավելի ընկալուչ է եղել ֆրանսիական քաղաքական արժեքների նկատմամբ, ուստի ավելի շատ է ազդվել դրանցից, քան թե մյուս երկրները: Հավանաբար նաև դրանով պետք է բացատրել այն իրողությունը, որ ֆանատիզմը, այդ թվում և կրոնական անհանդուրժողականությունը, որը շատ ցայտունորեն դրսևորվել է Ալժիրի ժամանակակից պատմության մեջ, երբեք Թունիսում խոր արմատներ չգցեց և չդարձավ ներքին անկայունության ու թունիսյան հասարակության ներքին պառակտման ու առճակատման դրդապատճառ:

I. ՊԱՅՔԱՐ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԵՎ ԹՈՒՆԻՍԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ (1918–1956 թթ.)

1. Քաղաքական նոր տեղաշարժեր և իրողություններ Թունիսում (1918–1938 թթ.)

Ֆրանսիական տիրապետության կամ պրոտեկտորատի դեմ պայքարը Թունիսում հստակորեն բաժանվում է երկու փուլի: Առաջին փուլը սկսվում է 1881 թ., երբ հաստատվեց ֆրանսիական պրոտեկտորատը Թունիսի վրա, և ավարտվեց 1918 թ.: Այս փուլում պրոտեկտորատի շրջանակներում ձևավորվեցին ֆրանսիական գաղութային տիրապետության սկզբունքները, հաստատվեցին կառավարման մեխանիզմները, ամրապնդվեց ֆրանսիական քաղաքական և տնտեսական տիրապետությունը Թունիսում: Առաջին փուլի բնորոշ գծերից մեկն էլ այն էր, որ այդ ժամանակ հակաֆրանսիական, հակագաղութային պայքարը դեռևս թույլ էր, հստակ չէր թունիսյան տարբեր քաղաքական ուժերի դիրքորոշումը հանդեպ պրոտեկտորատը նրանից ազատագրվելու և պայքարի մեթոդների հարցում: Իսկ Թունիսի բեյը, որը պատկանում էր Հուսեյնիների դինաստիային և ձևականորեն համարվում էր Թունիսի ղեկավարը, ամբողջապես ենթակա էր ֆրանսիական իշխանություններին:

Այդուհանդերձ, այդ տարիները չի կարելի Ֆրանսիայի համար դիտել որպես խաղաղ կառավարման տարիներ: Թունիսի ազգային և հայրենասիրական ուժերը տարբեր ձևերով իրենց դժգոհությունն են արտահայտել ֆրանսիական կառավարման, Թունիսը ամեն միջոցներով Ֆրանսիային ենթարկելու իշխանությունների քաղաքականության դեմ, որը երբեմն շատ սուր բնույթ է կրել և մեծ տհաճություններ պատճառել ֆրանսիական գաղութային իշխանություններին:

Երկրորդ փուլը սկսվեց 1918 թ.՝ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ համաշխարհային մասշտաբով նոր իրադրություն էր ստեղծվել: Դրա բնորոշ գծերից մեկն էլ այն էր, որ հակագաղութային պայքարի աննախադեպ նոր ալիք էր բարձրացել աշխարհում, որն իր մեջ ներառավ նաև Թունիսը:

Թունիսում հակագաղութային պայքարի մեջ մտան նոր՝ ավելի երիտասարդ ուժեր՝ համեմատած նախորդ փուլի հետ, կապված սերնդափոխության, ինչպես նաև պայքարի փորձի կուտակման հետ: Ասպարեզ իջան նոր քաղաքական առաջնորդներ և կազմակերպություններ,

որոնք նոր ուղղություն տվեցին և նոր թափ հաղորդեցին պրոտեկտորատի վերացման համար ծավալված պայքարին: Ավելի կոնկրետ ու հստակ դարձան քաղաքական պայքարի նպատակներն ու խնդիրները:

Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներին թունիսյան քաղաքական կյանքում զգալի դեր սկսեցին խաղալ բանվոր դասակարգը և նրա արհմիութենական ու քաղաքական կազմակերպությունները: Թունիսում ձևավորվեցին Ֆրանսիայի սոցիալիստական և կոմունիստական կուսակցությունների տեղական կազմակերպությունները, որոնք, սակայն, դեռևս փոքրաթիվ էին ու թույլ:

Այդ ժամանակ Թունիսում տեղի ունեցած ամենակարևոր երևույթներից մեկը 1920 թ. «Ալ–Հիզբ ալ–հուր ալ–դուստուրի»՝ Ազատական սահմանադրական կուսակցության հիմնադրումն էր, որը կոչված էր ղեկավար դեր խաղալու Թունիսի քաղաքական կյանքում: Այդ կուսակցությունը, որն ավելի շատ հայտնի է կրճատ «Դուստուր» (Սահմանադրություն) անունով, հիմնադրվեց շեյխ Աբդ ալ–Ազիզ Թալիբիի և նրա երիտթունիսյան համախոհների կողմից: «Երիտասարդ Թունիս» կազմակերպությունը ստեղծվել էր դեռևս 1908 թ., բայց առանձնակի գործունեություն չկարողացավ ծավալել: Այժմ նա վերակենդանացման նշաններ ցույց տվեց, բայց հրաժարվեց իր հին անվանումից, որն ակամայից հիշեցնում էր իրեն վարկաբեկած «երիտթուրքական» կուսակցությունը, և որդեգրեց լիբերալ և սահմանադրական սկզբունքները, որոնք այդ տարիներին լայն տարածում էին ստացել:

Շեյխ Աբդ ալ–Ազիզ ալ–Թալիբին մինչ այդ 1919 թ. դիմել էր մի կարևոր քայլի: Նա ակտիվ գործունեություն էր ծավալել Թունիսի հարցը քննարկման առարկա դարձնելու Փարիզի խաղաղության կոնֆերանսում: Բայց խաղաղության կոնֆերանսը, որտեղ ամենազոր էին Անգլիան և նրա դաշնակից Ֆրանսիան, մերժեց ընդհանրապես այդ հարցը քննարկման դնել:

«Դուստուրն» ընդհանուր գծերով ներկայացրեց իր ծրագիրը, որի հիմնական պահանջներն էին՝ ինքնակառավարվող սահմանադրական վարչակարգի հաստատում Թունիսում, օրենսդիր մարմնի՝ ասամբլեայի ստեղծում, արաբների իրավունքների հավասարեցում ֆրանսիացիների հետ, դեմոկրատական ազատությունների հաստատում և այլն:

«Դուստուրի» այս պահանջները աջակցություն գտան Թունիսի բեյ Մուհամմադ ան–Նասերի կողմից, որը դրանք ներկայացրեց Ֆրանսիայի պրեզիդենտ Միլյերանին 1922 թ. ապրիլին՝ վերջինիս Թունիս այ-

ցի ժամանակ: Երկրում ծայր առան զանգվածային ցույցեր՝ ի պաշտպանություն «Դուստուրի» և բեյի պահանջների: Ֆրանսիական իշխանությունները հարկադրված էին զիջել և 1922 թ. հուլիսին մտցրին մի շարք փոփոխություններ պրոտեկտորատի կառավարման համակարգում: Դեռևս պրոտեկտորատի հաստատման առաջին փուլում՝ 1891 թ., ֆրանսիական ռեզիդենտին կից ստեղծված խորհրդատվական համաժողովի փոխարեն ստեղծվել էր Մեծ խորհուրդ, որը զուտ խորհրդատվական մարմին էր՝ զուրկ օրենքներ ընդունելու իրավունքից: Նա կարող էր միայն կարծիք հայտնել բյուջեի և ֆինանսական այլ հարցերի վերաբերյալ: Ինչ վերաբերում էր քաղաքական և սահմանադրական հարցերին, ապա նա զրկված էր նման հարցեր քննարկելու իրավունքից: Մեծ խորհուրդը կազմված էր երկու խմբերից՝ կուրիաներից՝ արաբական–թունիսյան և ֆրանսիական կամ եվրոպական: Բայց այստեղ չէր կիրառվում հավասարության սկզբունքը: Դրա մասին է վկայում այն փաստը, որ բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմող արաբական կուրիան կազմված էր 41 անդամներից, իսկ ֆրանսիական կուրիան, որը ներկայացնում էր եվրոպացիներին, կազմված էր 56 անդամներից, թեև եվրոպացիները բնակչության չնչին մասն էին կազմում: Ստեղծվեցին նաև տեղական մարմինների խորհուրդներ՝ շատ սահմանափակ լիազորություններով:

Այդ այսպես կոչված բարենորոգումները չբավարարեցին ընդդիմադիր թունիսյան ուժերին, այդ թվում և «Դուստուրին»: Երկրում ալիքվեց նոր դժգոհություն, որը խիստ անհանգստացրեց ֆրանսիական իշխանություններին, որոնք կիրառեցին մի շարք կանխարգելիչ և պատժիչ միջոցառումներ: Ցանկանալով գլխատել «Դուստուր» կուսակցությանը՝ ֆրանսիական իշխանությունները 1923 թ. աքսորեցին շեյխ ալ—Թալիբին, ինչը բացասաբար ազդեց «Դուստուրի» հետագա գործունեության վրա: 1925 թ. այն քայքայվեց: Նրանից հեռացան չափավոր թևի ներկայացուցիչները, որոնք բացահայտորեն սկսեցին համագործակցել ֆրանսիական իշխանությունների հետ: «Դուստուրի» ազդեցությունը և դիրքերը թուլացան, որն ավելի խորացավ 1929–1932 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակ: Այդ ճգնաժամը ծանր հարված հասցրեց աշխարհի բոլոր երկրներին, այդ թվում և Թունիսին: Նրա տնտեսությունը մեծ անկում ապրեց: Արտադրությունը քաղաքներում և գյուղերում շեշտակի կրճատվեց, շատ ձեռնարկություններ փակվեցին, մեծացավ գործազրկությունը: «Դուստուրի» ղեկավարները բարձրու-

թյան վրա չգտնվեցին և չկարողացան ճիշտ քաղաքականություն վարել ստեղծված պայմաններում, որի հետևանքով նրա հեղինակությունն ավելի ընկավ:

Սակայն 1930–ական թվականները որոշ իմաստով շրջադարձային եղան Թունիսի քաղաքական կյանքում: Քաղաքական ասպարեզում հայտնվեցին նոր երիտասարդ ուժեր, որոնք ակտիվորեն մտան պայքարի մեջ և աստիճանաբար առաջատար դիրքեր գրավեցին նրա ղեկավարության մեջ: Նրանց մեջ իր ունակություններով, եռանդով և գիտելիքներով աչքի էր ընկնում երիտասարդ իրավագետ Հաբիբ Բուրգիբան, որն իր կրթությունը ստացել էր Փարիզում: Նա հետագա տարիներին՝ մոտ կես դար, ղեկավարել է Թունիսի ազատագրական շարժումը, ապա եղել անկախ Թունիսի ղեկավարը:

Հաբիբ Բուրգիբան 1934 թ. հիմնեց նոր քաղաքական կազմակերպություն, որը կոչվեց «Նեո (Նոր) դուստուր»: Դրանով շեշտվում էր նրա կապը հին «Դուստուրի» լավագույն սկզբունքների հետ, մի կողմից, և մատնացույց արվում, որ դա հնի կրկնությունը չէ, այլ նոր գաղափարներով ղեկավարվող քաղաքական կուսակցություն, մյուս կողմից: Մասնավորապես ակնհայտ էին սոցիալիստական գաղափարների կամ միտումների առկայությունը նրա գաղափարախոսության և գործունեության մեջ: Նրա շարքերը համալրեցին բոլոր այն ուժերը, ովքեր դժգոհ էին հին «Դուստուրի» քաղաքականությունից և գտնում էին, որ անհրաժեշտ է նոր գործելակերպ՝ հաշվի առնելով նոր իրողությունները:

«Նոր դուստուրը» շատ արագ կերպով հեղինակություն նվաճեց և դարձավ Թունիսի ամենաազդեցիկ քաղաքական ուժը: Նա իր գործունեությունը չսահմանափակեց միայն մայրաքաղաքով, այլ իր կազմակերպությունները ստեղծեց Թունիսի բոլոր շրջաններում:

Նրա գործունեության համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին նաև շնորհիվ այն հանգամանքի, որ Ֆրանսիայում 1936 թ. հաղթանակեց ժողովրդական ճակատը: Թունիսում ընդլայնվեցին դեմոկրատական ազատությունները, բանտերից ազատ արձակվեցին քաղաքական բանտարկյալները, ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին քաղաքական կազմակերպությունների գործունեության և մամուլի համար: Նոր պայմաններից հիանալի օգտվեց «Նոր դուստուրը» երկրում իր դիրքերն ամրապնդելու և թունիսցիների պայքարը պրոտեկտորատի վերացման համար գլխավորելու համար: 1936 թ. օգոստոսին բանակցություններ սկսվեցին «Նոր դուստուրի» և Ֆրանսիայի կառա-

վարության միջև Թունիսի կարգավիճակի և Ֆրանս–թունիսյան հարաբերությունների վերաբերյալ: Սակայն դրանք արդյունավետ չեղան: «Նոր դուստուր» պահանջում էր, որ Ֆրանսիան ճանաչի Թունիսի անկախությունը, և պատրաստ էր պայմանագիր ստորագրել Ֆրանսիայի հետ, իսկ Ֆրանսիան դեռևս պատրաստ չէր արմատական զիջումների գնալ Թունիսի կարգավիճակի հարցում: Դա ստիպեց Հաբիբ Բուրգիբային և նրա կուսակցությանը 1937 թ. անցնել ընդդիմության շարքերը: «Նոր դուստուրն» ամբողջապես ապավինեց ժողովրդի աջակցությանը և գլխավորեց համաթունիսյան պայքարը երկրի անկախության համար: 1937–1938 թթ. Թունիսում մեկը մյուսին էին հաջորդում ցույցերը և գործադուլները: Ֆրանսիական իշխանությունները անցան բռնությունների և ճնշումների քաղաքականությանը, անգամ զենք կիրառեցին Բիզերտայի ցուցարարների դեմ: Հատկապես հիշատակության է արժանի 1938 թ. ապրիլի 8–9–ի ցույցը, որին մասնակցում էին տասնյակ հազարավոր թունիսցիներ: Ֆրանսիական իշխանությունները կարողացան այդ ցույցը ցրել միայն բանակի օգնությամբ:

Զուգահեռաբար ֆրանսիական իշխանությունները սկսեցին Թունիսի ազգային գործիչների ձերբակալությունները: Ձերբակալվեցին 200 ազգային երևելի գործիչներ, որոնց մեջ էին նաև «Նոր դուստուրի» ղեկավարները, այդ թվում՝ Հաբիբ Բուրգիբան: Կառավարության որոշմամբ լուծարվեց «Նոր դուստուր» կուսակցությունը: 1938 թ. Թունիսում մտցվեց արտակարգ ռազմական դրություն:

2. Թունիսը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939–1945 թթ.)

Թունիսն ակամայից, որպես ֆրանսիական պրոտեկտորատ, ներգրավվեց պատերազմի հորձանուտի մեջ և որոշ ժամանակահատվածում անգամ վերածվեց պատերազմի թատերաբեմի:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբնական փուլում թունիսցիների համակրանքը ֆրանսիացիների կողմն էր: Եվ երբ Իտալիան 1940 թ. մտավ պատերազմի մեջ, Թունիսում գտնվող 23 հազ. իտալացիներ Թունիսի ֆրանսիական իշխանությունների կողմից ներկալվեցին:

1940 թ. հունիսին Ֆրանսիայի կապիտուլյացիայից հետո Ֆրանսիայում իշխանությունն անցավ Գերմանիայի և Իտալիայի հետ համա-

գործակցության պատրաստ ուժերին: Նրանցից կազմված կառավարությունը, որը գլխավորում էին Պետենը և Լավալը, հաստատվեց Վիշի առողջարանական քաղաքում: Հյուսիսաֆրիկյան ֆրանսիական տիրույթներն անցան Վիշիի կառավարման ներքո: Կառավարության որոշմամբ ցրվեց Թունիսի Մեծ խորհուրդը, և երկրում հաստատվեց բռնության ու հալածանքների վարչակարգ: Օգտվելով ստեղծված բարենպաստ պայմաններից և վիշիական կառավարության դիրքորոշումից՝ Գերմանիան և Իտալիան իրենց հսկողությունը սահմանեցին Թունիս, Բիզերտա և թունիսյան այլ նավահանգիստների վրա և օգտագործեցին դրանք Լիբիայում գտնվող իրենց զորքերը, որոնք պատերազմում էին բրիտանական զորքերի դեմ, ռազմական տեխնիկայով, զինամթերքով և զինուժով համալրելու համար:

Ֆրանսիական վիշիական իշխանությունների հանդեպ փոխվեց Թունիսի բեյ Մուհամմադ ալ–Մունսիֆի դիրքորոշումը: Նա, տեսնելով Ֆրանսիայի թուլացումը, այլևս չէր ցանկանում նրան ներկայացնող իշխանությունների հետ հաշվի նստել, ինչպես նախկինում էր: Բեյի կարգադրությամբ ստեղծվեց թունիսյան կառավարություն, որի վարչապետ նշանակվեց Մուհամմադ Շենիկը: Կառավարությունն իրագործեց որոշ բարենորոգումներ, որոնք ընդլայնում էին Թունիսի իրավունքները և սահմանափակում ֆրանսիական իշխանությունների լիազորությունները: Ընդհանրապես, այդ ժամանակ նկատվում է գերմանամետ տրամադրությունների ուժեղացում Թունիսում: Թունիսյան այդ ուժերը ցանկանում էին Գերմանիային օգտագործել ընդդեմ Ֆրանսիայի՝ հույս ունենալով, որ այդ ուղիով իրենք կարող են հասնել անկախության[14]:

1942 թ. նոյեմբերին ԱՄՆ–ի և Անգլիայի զորքերը ափ իջան Հյուսիսային Աֆրիկայում: Հենց այդ նույն ամսին գերմանական և իտալական զորքերը, ձգտելով կանխել անգլո–ամերիկյան զորքերի ներխուժումը Թունիս, գրավեցին Թունիսը: Նրանք փաստորեն վերացրին ֆրանսիական իշխանությունները Թունիսում: Գերմանական հրամանատարությունն իր ձեռքում կենտրոնացրեց փաստացի իշխանությունը Թունիսում: Որոշակի համագործակցություն հաստատվեց գերմանական իշխանությունների և բեյի միջև: Գերմանական իշխանությունները բանտից ազատ արձակեցին նաև Հաբիբ Բուրգիբային, որին, ինչպես նշվեց, ձերբակալել էին ֆրանսիական իշխանությունները: Դիմելով այդ քայ-

14 Այդ մասին տե՛ս նաև սույն հատորի նախորդ գլուխներում:

լին՝ գերմանական իշխանությունները հույս ունեին Բուրգիբային իրենց կողմը գրավել և համագործակցել նրա հետ: Սակայն Հաբիբ Բուրգիբան չդիմեց այդ քայլին և մերժեց առանցքի երկրների հետ համագործակցելու բոլոր առաջարկությունները:

Գերմանիայի կողմից Թունիսում հաստատված կառավարման վերոնշյալ ձևը պահպանվեց մինչև 1943 թ. մայիս ամիսը, երբ ամերիկյան և անգլիական զորքերը մտան Թունիս և դուրս մղեցին գերմանա–իտալական զորքերին:

Թունիսում վերականգնվեց կառավարման ֆրանսիական համակարգը, միայն այն տարբերությամբ, որ դա այլևս ոչ թե Վիշիի, այլ գեներալ Դը Գոլի կողմից ղեկավարվող Ազատ Ֆրանսիայի կառավարման համակարգն էր: Ֆրանսիացիները ցրեցին Շենիկի կառավարությունը և ձերբակալեցին բեյ Մուհամմադ ալ–Մունսիֆին: Նրան մեղադրելով Գերմանիայի հետ համագործակցելու մեջ՝ ֆրանսիացիները նրան գահընկեց արեցին: Նրան փոխարինեց նրա ազգականը նույն Հուսեյնիների դինաստիայից՝ Մուհամմադ ալ–Ամինը: Առանցքի հետ համագործակցելու մեղադրանքով հետապնդվեցին, մեղադրվեցին և ձերբակալվեցին նաև Թունիսի բազմաթիվ այլ գործիչներ: Եվ միայն 1944 թ. Դը Գոլի կառավարությունը նրանց ներում շնորհեց:

Այնուհետև թունիսցիները հակահիտլերյան կոալիցիայի ուժերի շարքերում ակտիվորեն մասնակցեցին առանցքի երկրների դեմ պատերազմական գործողություններին և մոտ 70 հազ. թունիսցիները իրենց կյանքը զոհեցին Եվրոպան ֆաշիստական տիրապետությունից ազատագրելու համար:

3. Ներքին ինքնավարության տրամադրումը Թունիսին (1945–1955 թթ.)

Պատերազմի ավարտից հետո Ֆրանսիան քայլ առ քայլ և հետևողականորեն վերականգնեց իր քաղաքական և տնտեսական դիրքերը Թունիսում, որոնք խիստ սասանվել էին պատերազմի տարիներին՝ հատկապես այն շրջանում, երբ գերմանա–իտալական ֆաշիստները իրենց տիրապետությունը հաստատեցին Թունիսի վրա:

Հետպատերազմյան առաջին ամիսները նշանավորվեցին Թունիսում լարվածության որոշ մեղմացումով և քաղաքական կյանքի աշխուժացումով: Սկսեցին լույս տեսնել թերթերը, իրենց գործունեությունն ակ-

տիվացրին քաղաքական կուսակցությունները և զանազան հասարակական կազմակերպություններ ու միություններ: Նրանք պահանջում էին Թունիսում իրագործել քաղաքական փոփոխություններ. այդ ասելով հասկացվում էր ինքնավարության կամ անկախության տրամադրում Թունիսին: Բայց դա դուր չէր գալիս Փարիզի իշխանավորներին, որոնք ձգտում էին պահպանել պրոտեկտորատի կառավարման համակարգն իր ամբողջությամբ: Ուստի նրանք ջանում էին քաղաքական գործընթացները պահպանել իրենց վերահսկողության տակ և թույլ չտալ որևէ շեղում նախանշված քաղաքականությունից: Այդ նպատակով նրանք պատրաստ էին դիմել բռնարարքների այն ուժերի և գործիչների նկատմամբ, որոնք չէին ենթարկվի ֆրանսիական իշխանությունների պահանջներին և դուրս կգային նրանց կողմից գծած սահմաններից:

Հաբիբ Բուրգիբան, զգալով մոտալուտ վտանգը, 1945 թ. հեռացավ Թունիսից և հաստատվեց Կահիրեում: Թունիսում մնաց նրա մերձավոր օգնական Սալահ բին Յուսուֆը, որը, գտնվելով մշտական կապի մեջ Բուրգիբայի հետ, ղեկավարում էր «Նոր դուստուր» կուսակցության աշխատանքները:

Հետպատերազմյան առաջին տարիները ծանր տարիներ էին երկրորդ համաշխարհային պատերազմում պարտություն կրած Ֆրանսիայի համար: Նա փորձում էր վերականգնել մեծ տերության իր կարգավիճակը, մի կողմից, և պահպանել ու ամրապնդել իր դիրքերը իր գաղութային տիրույթներում, մյուս կողմից: Այդ նպատակն էր հետապնդում նաև 1946 թ. ընդունված ֆրանսիական նոր սահմանադրությունը, որի կարևոր նորություններից մեկը եղավ այն, որ նա հռչակեց Ֆրանսիական Միության ստեղծումը, որը ծնականորեն նշանակում էր ֆրանսիական գաղութային կայսրության վերացում: Գաղութները, ներառյալ պրոտեկտորատները, հայտարարվեցին «անդրծովյան տարածքներ» և «միացյալ պետություններ», որը սկզբնական շրջանում խանդավառությամբ ընդունվեց Հյուսիսային և Հարավային Աֆրիկայի, Հարավարևելյան Ասիայի և այլ աշխարհամասերի ֆրանսիական գաղութների ժողովուրդների կողմից: Նրանք հավատացած էին, որ նոր էջ է սկսվում Ֆրանսիայի հետ իրենց փոխհարաբերություններում և տեսնում էին մոտալուտ անկախության հեռանկարը:

Սակայն շատ ժամանակ չպահանջվեց հասկանալու համար, որ այդ բոլորը, մեղմ ասած, չէր համապատասխանում իրականությանը, քանի որ մետրոպոլիայի՝ Ֆրանսիայի հարաբերություններն իր «անդր-

ծովյան տարածքների», այսինքն՝ գաղութների և պրոտեկտորատների հետ նախկինի պես մնում էին հիմնված գաղութատիրության պահպանման սկզբունքների վրա: Թունիսի պարագայում այդ հարաբերությունները խարսխվում էին 1881 և 1883 թթ. Թունիսի բեյի հետ կնքված պայմանագրերի վրա, որով իրավաբանորեն ձևավորվել էր ֆրանսիական պրոտեկտորատը Թունիսի վրա:

Իհարկե, այդ բանը շատ լավ հասկացան «անդրծովյան տարածքներում», և պայքարը ֆրանսիական գաղութատիրության և ազգային անկախության համար շարունակվեց առանց բացառության ֆրանսիական բոլոր գաղութներում, այդ թվում և Թունիսում: Միայն այն տարբերությամբ, որ այժմ այդ պայքարը ծավալվեց ավելի մեծ թափով, վճռականությամբ և կազմակերպվածությամբ:

Ֆրանսիական իշխանությունները, այդուհանդերձ, ստիպված էին Թունիսում ինչ–որ քայլեր կատարել, որը նրանք փորձեցին ներկայացնել որպես բարենորոգումներ: Այսպես, օրինակ՝ նրանք վերացրեցին բոլոր այն օրենքները, որոնք ընդունել էր Վիշիի կառավարությունը, իսկ 1945 թ. սեպտեմբերին իր գործունեությունը վերսկսելու իրավունք ստացավ Մեծ խորհուրդը, սակայն նա մնաց որպես խորհրդատվական մարմին: Միայն մի բան փոխվեց՝ հավասարվեց արաբական–թունիսյան և ֆրանսիական–եվրոպական կուրիաների թվաքանակը: Իսկ դա առանձնապես որևէ նշանակություն չուներ, քանի որ այդ մարմինը որոշում ընդունելու իրավասությունով չօժտվեց և, ինչպես և մինչ այդ, չէր կարող զբաղվել քաղաքական հարցերով:

1946–1947 թթ. ընթացքում տեղի ունեցան նաև այլ փոփոխություններ, որոնցից ամենանշանակալին թերևս Նախարարների խորհրդի ստեղծումն էր: Նա կազմված էր 13 հոգուց՝ վեց թունիսյան նախարարներից և յոթ ֆրանսիական պաշտոնյաներից, որը գլխավորեց Մուհամմադ Կահակը: Նրան մասնակցեցին չափավորները, իսկ ինչ վերաբերում է «Հին դուստուրին» և «Նոր դուստուրին», ապա նրանք հրաժարվեցին մասնակցել այդ կառույցին, որն ամբողջապես գտնվում էր ֆրանսիացիների հսկողության տակ: Դա չբավարարեց թունիսցիներին, որովհետև չլուծվեց նրանց ամենագլխավոր պահանջներից մեկը՝ թույլ տալ իրենց մասնակցել երկրի կառավարմանը:

1949 թ. սեպտեմբերին հնգամյա բացակայությունից հետո Թունիս վերադարձավ Հաբիբ Բուրգիբան: Նա անմիջապես ծեռնամուխ եղավ «Նոր դուստուրի» քաղաքական նոր պահանջների մշակմանը,

որը 1950 թ. ապրիլին ներկայացվեց ֆրանսիական կողմին: Դրանք հանգում էին հետևյալին. Թունիսին վերադարձնել ինքնիշխանությունը և գործադիր վերահսկողությունը, ստեղծել պատասխանատու կառավարություն՝ բեյի կողմից նշանակված վարչապետով, ընտրովի Ազգային ժողով, որը կպատրաստի և կընդունի Թունիսի դեմոկրատական սահմանադրությունը և այլն: Թունիսը պարտավորվում էր համագործակցել Ֆրանսիայի հետ իրավահավասարության հիման վրա և հարգել տեղական ֆրանսիական շահերը տեղական մունցիպալ խորհուրդներում նրանց ներկայացուցչությունն ապահովելու ուղիով:

Հաբիբ Բուրգիբայի կողմից մշակված և «Նոր դուստուրի» կողմից ներկայացված այս առաջարկություններն ընդհանուր առմամբ դրական արձագանք գտան Փարիզում: 1950 թ. օգոստոսին Թունիսում կազմվեց նոր կառավարություն՝ Մուհամմադ Շենիկի գլխավորությամբ, որտեղ հավասար չափով էին ներկայացված թունիսյան և ֆրանսիական նախարարները: Իսկ Սալահ բին Յուսուֆը՝ Հաբիբ Բուրգիբայի գլխավոր օգնականը և «Նոր դուստուր» կուսակցության գլխավոր քարտուղարը, ստանձնեց արդարադատության նախարարի պաշտոնը: Կառավարության գլխավոր նպատակը հայտարարվեց վերականգնել Թունիսի ինքնիշխանությունը: Սակայն չէր դրվում այդ պահանջի անհապաղ իրականացման հարցը: Կառավարությունը ծրագրում էր այդ կենսականորեն անհրաժեշտ հիմնախնդիրն իրագործել փուլ առ փուլ և Ֆրանսիայի հետ համագործակցելով:

Այդ արդարացի պահանջները հանդիպեցին Թունիսում հաստատված եվրոպացիների և ֆրանսիացիների համառ դիմադրությանը, որոնք ընդհանրապես դեմ էին թունիսցիներին որևէ զիջում կատարել: Նրանց այդ դիրքորոշումն աջակցություն էր գտնում Փարիզում ֆրանսիական կառավարության որոշ անդամների և ֆրանսիական պահպանողական ուժերի կողմից:

Շենիկի կառավարության բոլոր փորձերը՝ բանակցությունների միջոցով հասնել իրենց պահանջների բավարարմանը, որի մեջ կենտրոնականը Թունիսին ներքին ինքնավարություն շնորհելու հարցն էր, ավարտվեցին անհաջողությամբ: 1951 թ. դեկտեմբերին ֆրանսիական կառավարությունը նոտա հղեց Թունիսի կառավարությանը, որտեղ նա տեղեկացնում էր, որ Ֆրանսիան մտադիր չէ որևէ փոփոխություն մտցնել Թունիսի պրոտեկտորատի կարգավիճակի մեջ:

Դրան թունիսցիների պատասխանը եղավ հզոր գործադուլային շարժումը, զանգվածային ցույցերը և այլ բնույթի հավաքները, որոնք սկսվեցին 1951 թ. վերջերին և շարունակվեցին 1952 թ. սկզբներին: Ֆրանսիական իշխանությունները ուժի գործադրումով ճնշեցին այդ ելույթները, իսկ 1952 թ. հունվարին ձերբակալեցին Հաբիբ Բուրգիբային, «Նոր դուստուրի», կոմունիստական կուսակցության և այլ քաղաքական կազմակերպությունների ղեկավարներին: «Նոր դուստուրը» հայտարարվեց օրենքից դուրս, երկրում մտցվեց խիստ գրաքննություն, ձերբակալվեցին գործադուլների և ցույցերի շատ մասնակիցներ: 1952 թ. մարտի 26-ին ֆրանսիական իշխանությունները ձերբակալեցին Շենիկի կառավարությանը և ստեղծեցին նոր կառավարություն՝ Սալահ ադ-Դին Բակուշի գլխավորությամբ, որը ֆրանսիացիների դրածոն էր: Նա ֆրանսիացիների հանձնարարությամբ 1952 թ. ապրիլին ներկայացրեց բարեփոխումների ծրագրի մի նախագիծ, որը որևէ նոր և թունիսցիների համար ընդունելի բան չէր պարունակում: Անգամ բեյը հրաժարվեց ընդունել այդ առաջարկները և ստորագրել համապատասխան որոշումներ: Եվ միայն այն բանից հետո, երբ ֆրանսիացիները նրան սպառնացին, որ եթե չընդունի Բակուշի առաջարկները, ապա գահընկեց կարվի, նա հարկադրված եղավ 1952 թ. դեկտեմբերին զիջել: Բայց «Նոր դուստուրը» այդպես էլ չընդունեց այդ նոր «առաջարկները»:

Այս փուլում ազատագրական շարժման առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ բանվորներից և գյուղացիներից տեղերում ստեղծվեցին մարտական խմբեր, որոնք ֆրանսիական իշխանությունների դեմ ընդունեցին պարտիզանական պայքարի տարբերակը: Հետագայում նրանք միավորվեցին և ստեղծվեց Ազատագրության բանակ, որը շատ մեծ դեր խաղաց թունիսցիների պահանջները ֆրանսիացիների կողմից ընդունելու պատմական նշանակություն ունեցող հարցում: Այդ բանակի գործողությունները շարունակվեցին ընդհուպ 1954 թ. դեկտեմբեր ամիսը, երբ ֆրանսիական կողմը հարկադրված էր բանակցություններ սկսել թունիսյան կողմի հետ:

Դրան նպաստեցին նաև այն փոփոխությունները, որ տեղի ունեցան Ֆրանսիայում 1954 թ. հունիսին: Ֆրանսիայում կազմավորվեց նոր կառավարություն, որը գլխավորեց Պյեր Մենդես-Ֆրանսը: Ֆրանսիան արդեն հոգնել էր իրեն պատկանող գաղութներում ազգային-ազատագրական շարժումները ճնշելով, որը ոչ մի դրական արդյունք չէր տալիս: Ֆրանսիան հյուծվում էր, նրա մարդկային և նյութական ռեսուրսները

սպառվում էին, նրա միջազգային դիրքերը թուլանում էին, իսկ հեղինակությունն էլ ընկնում: Երկրում ավելի ու ավելի էր հասունանում գաղութների հարցը խաղաղ և քաղաքական ուղիներով լուծելու գաղափարը: Ուստի պատահականություն չէ, որ երբ Մենդես–Ֆրանսը ստանձնեց կառավարություն կազմելը, ապա նա իր ծրագրային հայտարարության մեջ խոստացավ ֆրանսիացիներին գաղութային ամենասուր հարցերը լուծել խաղաղ ճանապարհով և բանակցությունների միջոցով: Թունիսը հայտնվեց այդ ցուցակում: 1954 թ. հուլիսի 31–ին Ֆրանսիայի վարչապետ Պյեր Մենդես–Ֆրանսը ժամանեց Թունիս և հայտարարեց Թունիսին ներքին ինքնավարություն տալու մասին: Նա միաժամանակ տեղյակ պահեց, որ Ֆրանսիան իրեն վերապահում է պաշտպանության և արտաքին հարցերի տնօրինումը, իսկ մնացած բոլոր ներքին հարցերում Թունիսը ձեռք էր բերում ինքնիշխանություն: Նախատեսվում էր մանրամասները ճշտել երկու երկրների կառավարությունների հետագա բանակցությունների ընթացքում:

Մենդես–Ֆրանսի առաջարկությունները Թունիսի կողմից ընդունվեցին, և 1954 թ., օգոստոսին Թահար բին Ամարը կազմեց Թունիսի նոր, այսպես կոչված, անցումային կառավարությունը: Նրա կազմի մեջ մտան «Նոր դուստուր» կուսակցության երեք ներկայացուցիչներ:

Բանակցությունները Ֆրանսիայի և Թունիսի միջև սկսվեցին 1954 թ. սեպտեմբերին Կարթագենում և ընթանում էին հաջողությամբ: Սակայն 1954 թ. փետրվարին Մենդես–Ֆրանսի կառավարության անկումը առաջացրեց հարկադրական դադար բանակցություններում, որոնք վերսկսվեցին 1955 թ. մարտ ամսին: Նրանք հաջողությամբ ավարտվեցին և Փարիզում 1955 թ. հունիսի 3–ին կողմերը ստորագրեցին համապատասխան համաձայնագիր: Նրանում տեղ գտան Ֆրանսիայի նախկին վարչապետ Մենդես–Ֆրանսի առաջարկությունները և ձնակերպումները:

Համաձայնագիրը Թունիսը հռչակում էր ինքնավար և ներքին հարցերում լրիվ ինքնիշխան պետություն: Ֆրանսիայի իրավասության տակ էին մնում պաշտպանության, այդ թվում և սահմանների, արտաքին հարաբերությունների, ինչպես նաև Թունիսում բնակվող ֆրանսիացիների և այլ օտարերկրացիների իրավունքների պաշտպանության հարցերը: Համաձայնագիրը ենթադրում էր նաև ֆինանսական և մաքսային միության ստեղծում Ֆրանսիայի և Թունիսի միջև:

Ահա այսպիսին էր Թունիսի համար պատմական նշանակություն ունեցող այդ պայմանագրի բովանդակությունը, որը շատ կարևոր քայլ

էր Թունիսի լիակատար անկախության և կատարյալ ինքնիշխանության հաստատման ճանապարհին:

Այդ պայմանագիրն ուժի մեջ մտավ 1955 թ. օգոստոսի 31–ին:

4. Թունիսի անկախության հռչակումը, միապետության վերացումը և Թունիսի Հանրապետության ստեղծումը (1956–1957 թթ.)

Թունիսի ինքնավարության վերաբերյալ պայմանագրի ստորագրումից հետո սկսվեցին նախապատրաստական աշխատանքները համեմատաբար կարճ ժամանակամիջոցում Թունիսը անկախ պետության վերածելու ուղղությամբ: Թահար բին Ամարի կառավարությունը համարվեց ժամանակավոր կառավարություն և նրա կազմից դուրս բերվեցին բոլոր ֆրանսիացիները: Նա դարձավ թունիսյան առաջին կառավարությունը, որն ուներ բացառապես ազգային՝ թունիսյան կազմ: Ամարի կառավարությունը դիմեց մի շարք անհրաժեշտ քայլերի երկրում իրադրությունը նորմալացնելու և կայունացնելու ուղղությամբ, մասնավորապես քաղաքական կուսակցությունները, արհեստակցական միությունները և հասարակական կազմակերպությունները ստացան լեգալ գործունեության իրավունքներ:

Այդ կառավարության ամենագլխավոր խնդիրը համարվեց Սահմանադիր ժողովի ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը, որը տվյալ պատմական պահին ուներ առանցքային նշանակություն Թունիսն անկախ պետության վերածելու ճանապարհին:

Սակայն մինչ այդ Հաբիբ Բուրգիբան 1956 թ. փետրվարի 27–ին բանակցություններ սկսեց ֆրանսիական կառավարության հետ Փարիզում՝ Թունիսի անկախության հարցի շուրջ: Բանակցություններն ընթացան մեծ հաջողությամբ, և 1956 թ. մարտի 20–ին կողմերը ստորագրեցին Արձանագրություն, որով Ֆրանսիան պաշտոնապես ճանաչում էր Թունիսի անկախությունը և ինքնիշխանությունը: Ֆրանսիան հրաժարվեց պաշտպանության, ներքին անվտանգության և արտաքին հարաբերությունների հարցերում իր լիազորություններից և այդ խնդիրների իրավասությունը փոխանցեց Թունիսին: Իր ուժը կորցրած համարվեց 1881 թ. կնքված Բարդոյի պայմանագիրը, որով հաստատվում էր Ֆրանսիայի պրոտեկտորատը Թունիսի վրա, և 1955 թ. հունիսի 2–ի պայմանագիրը, որով Թունիսին տրվում էր ներքին ինքնավարություն: Դրանով իսկ վե-

բացվում էր պրոտեկտորատը, և Թունիսը ներքին ինքնավարություն ունեցող երկրից վերածվում էր լիակատար անկախ և սուվերեն պետության:

Արձանագրությունը սահմանեց անցումային շրջան, որի ընթացքում պետք է ֆրանսիական բոլոր զորքերը դուրս բերվեին Թունիսից, այդ թվում և Բիզերտայի ռազմածովային բազայից:

Այսպիսով՝ Թունիսը ուղիղ 75 տարի անց թոթափեց ֆրանսիական գաղութային տիրապետությունը: Պրոտեկտորատը վերացվեց, և Թունիսը դարձավ անկախ պետություն, որն ինքն էր որոշում իր ներքին և արտաքին քաղաքականությունը: Սկսվեց նոր էջ նրա պատմության մեջ:

Փարիզում Թունիսի անկախության վերաբերյալ արձանագրության ստորագրումից հինգ օր անց՝ 1956 թ. մարտի 25–ին, կայացան Թունիսի Ազգային սահմանադիր ժողովի ընտրությունները: Նրանում կատարյալ հաղթանակ տարավ Հաբիբ Բուրգիբայի «Նոր դուստուր» կուսակցության կողմից ստեղծված Ազգային ճակատը, որի թեկնածուները հաղթեցին բոլոր 98 տեղամասերում:

1956 թ. ապրիլի 11–ին «Նոր դուստուր» կուսակցության ղեկավար Հաբիբ Բուրգիբան, որի հեղինակությունը մեծապես աճել էր, կազմեց անկախ Թունիսի առաջին կառավարությունը: Կառավարությունը բաղկացած էր 17 նախարարներից, որոնցից 16–ը «Նոր դուստուր» կուսակցության անդամներ էին:

Նոր կառավարության առջև կանգնած էին մի շարք առաջնահերթ խնդիրներ: Վարչապետ Հաբիբ Բուրգիբան սկսեց պետական ապարատի վերակազմավորումից: Նա անցկացրեց լայնածավալ զտում, որի արդյունքում պետական ապարատից ազատվեցին պաշտոնյաների ճնշող մեծամասնությունը: Դրանք հիմնականում ֆրանսիական իշխանությունների դրածոները և նրանց կամակատարներն էին, որոնք իրենց վարկաբեկել էին գաղութարարներին ծառայելով: Նրանք իրավացիորեն համարվեցին ոչ պիտանի անկախություն նվաճած Թունիսի պետական մարմիններում աշխատելու համար: Զտված պաշտոնյաների մեջ զգալի թիվ էին կազմում նաև թունիսյան տեղական ֆեոդալական և հետադիմական ուժերի ներկայացուցիչները: Պետական ապարատը համալրվեց ազգային պայքարի բովով անցած, համեմատաբար լավ կրթություն ստացած և եռանդուն երիտասարդ պաշտոնյաներով, գլխավորապես «Նոր դուստուր» կուսակցության անդամներից կամ համակիրներից:

Անցկացվեց Թունիսի նոր վարչատարածքային բաժանում: Թունիսը բաժանվեց 14 վիլայաթների, որոնց գլուխ կարգվեցին «Նոր դուս-

տուրին» նվիրված մարդիկ: Վերաբաժանումը կատարվեց ոչ միայն հին վալիներից ազատվելու նպատակով, այլև ուժեղացնելու համար նոր ազգային կառավարության վերահսկողությունը տեղերի վրա:

Ուշադրության էին արժանի նաև 1957 թ. անցկացված տեղական մարմինների ընտրությունները գյուղական վայրերում և քաղաքներում՝ Թունիսում, Սուսում, Սֆարում, Բիզերտայում և այլ քաղաքներում ու շրջաններում:

Արմատական բարեփոխումներ կատարվեցին դատական համակարգում, որն իրենից ներկայացնում էր տարբեր բնույթի դատարանների և դատական օրենքների մի բարդ խառնուրդ: 1956 թ. հունիս–օգոստոս ամիսների ընթացքում վերացվեցին դեռևս պրոտեկտորատի ժամանակներից գործող քրեական, քաղաքացիական և կրոնական դատարանները, վարչական դատարանները և ֆրանսիական դատարանը: Ընդունվեցին մի շարք նոր դատական օրենքներ, որով նախկին դատական համակարգի փոխարեն Թունիսում հաստատվեց միասնական, գերազանցապես աշխարհիկ դատական համակարգ, թեև որոշ հարցերում թույլատրվեց իսլամական օրենքի կիրառումը:

Կառավարության կարևոր միջոցառումների շարքին պետք է դնել նաև Թունիսի ազգային բանակի և ազգային անվտանգության մարմինների ստեղծումը:

Այսպիսով՝ կառավարության առաջին քայլերն ուղղված էին նոր իշխանությունների ստեղծմանը, որը կոչված էր ամրապնդելու երիտասարդ Թունիսի անկախ պետականությունը:

Այս բոլորն անհրաժեշտ նախապայմաններ ստեղծեցին Թունիսի պետական կարգում արմատական փոփոխություններ մտցնելու համար: Թունիսը համարվում էր միապետություն, որտեղ թագավորում էր Հուսեյնիների դինաստիան: Միապետը՝ բեյը, այլևս չէր վայելում հեղինակություն և բնակչության համակրանքը: Նրան մեղադրում էին գաղութային իշխանությունների հետ համագործակցելու և երկրի ազգային շահերը պաշտպանելու անկարողության մեջ: Ազգային–քաղաքական որոշ ուժեր անգամ բեյ Մուհամմադ ալ–Ամինին մեղադրանք նետեցին այն բանում, որ նա չէր ցանկանում ակտիվորեն մասնակցել անկախության համար մղվող պայքարին և ամբողջապես ապավինում էր ֆրանսիական իշխանություններին:

Քաղաքական ուժերը գտնում էին, որ կառավարման այդ համակարգը Թունիսում իրեն արդեն սպառել է:

Հաբիբ Բուրգիբան և նրա ղեկավարած «Նոր դուստուր» կուսակցությունը, որն ուներ սոցիալիստական կողմնորոշում, միապետության հարցին մոտենում էին զգուշորեն: Նրանք միանգամից՝ անկախության հռչակման հաջորդը օրը, չդրեցին միապետության վերացման հարցը, այլ դրան մոտենում էին աստիճանաբար: Սկզբում սահմանափակվեցին բեյ Մուհամմադ ալ–Ամինի իրավունքները, նա չէր կարող անգամ այլ պետություններ այցելություններ կատարել կամ երկրի ներսում տեղաշարժվել առանց վարչապետ Բուրգիբայի գիտության ու թույլտվության, իսկ նրա ընտանիքի անդամները զրկվեցին ամեն տեսակի արտոնություններից:

Միապետության գոյությունը դարձել էր լոկ ձևական, և երկրի քաղաքական ուժերը դրեցին միապետության վերացման և հանրապետության հաստատման հարցը: Սկզբունքային բնույթի և կենսական նշանակություն ունեցող այդ հարցը 1957 թ. հուլիսի 22–ին հատուկ քննարկման առարկա դարձավ կառավարող «Նոր դուստուր» կուսակցության Քաղբյուրոյում, որը միաձայն որոշեց Թունիսը հռչակել հանրապետություն: Դրա վերջնական որոշման համար 1957 թ. հուլիսի 25–ին գումարվեց Ազգային սահմանադիր ժողովի հատուկ նստաշրջան:

1957 թ. հուլիսի 25–ին Թունիսի Ազգային սահմանադրական ժողովն ընդունեց օրենք՝ վերացնել միապետությունը և Թունիսը հռչակել հանրապետություն:

Այսպիսով՝ 1956–1957 թթ. հանդիսանում են պատմական նշանակություն ունեցող տարեթվեր Թունիսի համար: Այդ ժամանակահատվածում Թունիսը սկզբում նվաճեց իր քաղաքական անկախությունը, ապա սահմանադրական ճանապարհով հռչակվեց հանրապետություն:

II. ԹՈՒՆԻՍԸ ՀԱԲԻԲ ԲՈՒՐԳԻԲԱԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1957–1987 թթ.)

1. Հաբիբ Բուգիբան անկախ Թունիսի առաջին պրեզիդենտ և ամբողջ իշխանության կենտրոնացումը նրա ձեռքում

Բեյին գահընկեց անելուց և Թունիսը հանրապետություն հռչակելուց հետո Թունիսի առաջին պրեզիդենտ դարձավ Հաբիբ Բուրգիբան: Սակայն նա պահպանեց նաև վարչապետի և «Նոր դուստուր» կուսակ-

ցության նախագահի պաշտոնները: Դրանով իսկ նա իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ իշխանությունը:

Հաբիբ Բուրգիբան իր առաջնահերթ խնդիրներից մեկը համարեց իր վարչակարգի հետագա ամրապնդումը: Արդեն նշվեց, որ դեռևս 1956 թ. նա անցկացրեց պետական ապարատի զտում: Սակայն նա, դառնալով պրեզիդենտ, չբավարարվեց դրանով, այլ գնաց ավելի հեռուն: 1958 թ. վերջերին դատարանի առջև կանգնեցին Թունիսի նախկին վարչակարգի ամենաաչքի ընկնող մի շարք գործիչներ, այդ թվում՝ բեյի ավագ որդի և թագաժառանգ Չադլին, նախկին վարչապետներ Թահար բին Ամարը և Բակուշը, որոնք մեղադրվում էին ֆրանսիական իշխանությունների հետ համագործակցելու և իրենց պաշտոնական դիրքը չարաշահելու մեջ: Ձերբակալվածների մեջ էին Բակուշի կառավարության անդամ համարյա բոլոր նախարարները: Նրանք բանտարկվեցին և զրկվեցին քաղաքացիական իրավունքներից:

Զտում կատարվեց և պատասխանատվության ենթարկվեցին նաև «Նոր դուստուր» կուսակցության ղեկավար կազմի մեջ: Դեռևս 1955 թ. տարաձայնություններ էին առաջացել «Նոր դուստուր» կուսակցության նախագահ Հաբիբ Բուրգիբայի և գլխավոր քարտուղար Սալահ բին Յուսուֆի միջև Թունիսի հետագա զարգացման ուղիների հարցում: Արդյունքում գլխավոր քարտուղարն իր մի շարք կողմնակիցների հետ միասին վտարվեց կուսակցությունից:

1958 թ. Սալահ բին Յուսուֆը և նրա 54 կողմնակիցներ մեղադրվեցին պրեզիդենտ Բուրգիբայի դեմ մահափորձ կազմակերպելու և նրա կառավարությունը տապալելու մեջ և ստացան տարբեր չափի պատիժներ: Սալահ բին Յուսուֆը և նրա մի շարք համախոհ գործակիցներ դատապարտվեցին մահվան:

Այսպիսով՝ եթե 1956 թ. զտումները և 1958 թ. դատավարությունները դիտարկենք մեկ ամբողջության մեջ, ապա կարելի է ասել, որ Հաբիբ Բուրգիբան իշխանության գլուխ գալու հենց առաջին օրվանից դիմեց կտրուկ քայլերի պետական, վարչական և կուսակցական որևէ ընդդիմություն վերացնելու և իր վարչակարգն ամրապնդելու ուղղությամբ:

1959 թ. հունիսի 1–ին լույս աշխարհ եկավ Թունիսի Հանրապետության առաջին սահմանադրությունը, որն այնուհետև փոփոխությունների ենթարկվեց 1988 և 2002 թթ.:

2002 թ. փոփոխության ենթարկված սահմանադրության համաձայն՝ պետության ղեկավարը ամենալայն լիազորություններով օժտ-

ված պրեզիդենտն է: Նա է որոշում պետության ներքին և արտաքին քաղաքականությունը, նշանակում վարչապետին և կաբինետի անդամներին, հանդիսանում է երկրի զինված ուժերի գլխավոր հրամանատարը և նշանակում բոլոր բարձրաստիճան քաղաքացիական և զինվորական պաշտոնյաներին:

Պրեզիդենտն ընտրվում է 5 տարի ժամանակով և իրավունք ունի վերընտրվել 3 անընդմեջ ժամանակաշրջան:

Հաբիբ Բուրգիբան, իրոք, երեք անգամ անընդմեջ ընտրվեց պրեզիդենտ, և երբ 1974 թ. լրացավ նրա երրորդ և վերջին ժամկետը, 1975 թ. մարտ ամսին նա ընտրվեց Թունիսի ցմահ պրեզիդենտ՝ «ազգի և հայրենիքի առջև առանձնահատուկ ծառայությունների համար»: Որոշ հետազոտողներ Թունիսում հատուկ Բուրգիբայի համար հաստատված կառավարման այդ համակարգի պատճառով գերադասում են նրան համարել դիկտատոր:

Սահմանադրության դրույթների համաձայն Թունիսում հաստատվեց միապալատ պառլամենտ՝ Դեպուտատների պալատ:

Դեպուտատների պալատն իրականացնում է օրենսդիր իշխանություն, սակայն պրեզիդենտի հետ միասին: Սահմանադրությունը պրեզիդենտին նույնպես օժտել է նման լիազորություններով: Ընդ որում՝ սահմանադրության մեջ հատուկ ընդգծված է, որ պրեզիդենտի ներկայացրած օենսդրական նախագծերն ունեն առաջնայնություն և առավելություն Դեպուտատների պալատի կողմից ներկայացված օրինագծերի նկատմամբ:

1976 թ. Դեպուտատների պալատին իրավունք վերապահվեց վերահսկողություն սահմանել կառավարության վրա: Նա իրավունք ուներ գրավոր կամ բանավոր հարցումներ կատարել կառավարությանը, բայց միաժամանակ նա պատասխանատու էր դառնում պետության ղեկավարի՝ պրեզիդենտի առջև:

1959 թ. հունիսի 1–ի սահմանադրության ընդունումից հետո, նույն տարվա նոյեմբերի 8–ին կայացան Թունիսի Հանրապետության պրեզիդենտի և Դեպուտատների պալատի առաջիկա ընտրությունները: Հաբիբ Բուրգիբան չուներ մրցակից և ընտրվեց ձայների ճնշող մեծամասնությամբ: Իսկ Դեպուտատների պալատի բոլոր 90 տեղերում ընտրվեցին Հաբիբ Բուրգիբայի գլխավորած «Նոր դուստուր» կուսակցության անդամները:

Սահմանադրությունը տալիս էր նաև դեմոկրատական ազատությունների՝ խոսքի, մամուլի, կուսակցությունների և միությունների ազատության երաշխիքներ: Սակայն միշտ չէ, որ Բուրգիբայի կառավարման

տարիներին, մանավանդ վերջին շրջանում, պահպանվում էին այդ իրավունքները: Նշանակալի էին խախտումները և սահմանափակումները: Արդեն իսկ առաջին ընտրությունների արդյունքները, երբ Բուրգիբայի թեկնածության դեմ չառաջարկվեց այլընտրանքային թեկնածու, և երբ պառլամենտի բոլոր տեղերը գրավեցին մի կուսակցության՝ «Նոր դուստուրի», ներկայացուցիչները, շատ խոսուն էին: Պառլամենտական ընտրությունների ժամանակ «Նոր դուստուրն» ուներ միայն մեկ մրցակից՝ Թունիսի կոմունիստական կուսակցությունը, որը դեպուտատական ոչ մի մանդատ չկարողացավ նվաճել:

2. «Ճակատամարտ հանուն Բիզերտայի» և ֆրանսիական զորքերի հեռացումը Թունիսից

Հաբիբ Բուրգիբան, եռանդուն քայլերի շնորհիվ ամրապնդելով իր վարչակազմը և կայունացնելով քաղաքական իրադրությունը, միաժամանակ աչքաթող չէր անում արտաքին քաղաքական հարցերը, որոնց մեջ ամենագլխավորը Թունիսից ֆրանսիական զորքերի դուրսբերման և ֆրանս–թունիսյան հարաբերությունների կարգավորման հարցն էր: Քանի դեռ ֆրանսիական զորքերը դուրս չէին բերվել, խոսք չէր կարող լինել Թունիսի անկախության և ինքնիշխանության ամբողջացման մասին:

Զորքերի դուրսբերման հարցը, որն ինքնին շատ բարդ խնդիր է, ավելի սուր բնույթ ընդունեց այն պատճառով, որ Թունիսը թիկունք կանգնեց Ալժիրում ծավալված ազգային–ազատագրական պայքարին, որի նպատակն էր ազատվել ֆրանսիական տիրապետությունից և ստեղծել անկախ ալժիրյան պետություն: Թունիսի իշխանությունների համաձայնությամբ Թունիսում հաստատվեցին Ալժիրի Հանրապետության ժամանակավոր կառավարության պաշտոնական գրասենյակները և հաստատությունները: Թունիսի դիրքորոշումը և քաղաքականությունը ալժիրյան հարցում նյարդայնացնում էին Փարիզին և խիստ լարվածություն ստեղծում ֆրանս–թունիսյան հարաբերություններում: Նպատակ ունենալով ճնշում գործադրել Թունիսի կառավարության վրա՝ Փարիզը դիմում էր զանազան քաղաքական և տնտեսական քայլերի. դադարեցրեց ֆինանսական և տնտեսական օգնությունը Թունիսին, երբեմն իր դեսպանին հետ էր կանչում Թունիսից, շատ հաճախ ֆրանսիական զորքերը Ալժիրից ներխուժում էին Թունիս և այլն: Իսկ 1958 թ. փետրվարի 8–ին ֆրանսիական ինքնաթիռները ռմբակոծեցին թունիս-

յան Սակիեթ Սիդի Յուսու գյուղը, որի ժամանակ զոհվեց մոտ 70 մարդ, իսկ վիրավորների թիվն անցնում էր 100–ից:

Այդ բոլոր քայլերը Թունիսում ընկալվեցին որպես լուրջ սպառնալիք նորանկախ հանրապետությանը և բողոքի ու դժգոհության աննախադեպ ալիք բարձրացրին երկրում:

Թունիսի կառավարությունը սովորաբար անպատասխան չէր թողնում ֆրանսիական իշխանությունների կողմից իրականացվող հակաթունիսյան քայլերը: Նա փակեց Թունիսի տարբեր շրջաններում գոյություն ունեցող ֆրանսիական 7 հյուպատոսություններից 5–ը, շրջակալեց Թունիսում գտնվող ֆրանսիական զորքերը՝ արգելելով նրանց տեղաշարժերը երկրում: Թունիսի կառավարությունը դիմեց ՍԱԿ–ի Անվտանգության խորհրդին՝ պահանջելով դատապարտել ֆրանսիական օդուժի կողմից թունիսյան անպաշտպան բնակավայրերի ռմբակոծումները:

Մայրաքաղաքում և այլ քաղաքներում ու բնակավայրերում հուժկու հակաֆրանսիական ցույցեր սկսվեցին՝ վճռականորեն պահանջելով Ֆրանսիայից՝ իր զորքերը դուրս բերել Թունիսից: Ֆրանսիան հայտնվեց ծանր դրության մեջ և համաձայնվեց բանակցություններ սկսել իր զորքերը Թունիսից դուրս բերելու հարցի շուրջը: Բանակցությունները, որոնք ընթանում էին շատ դժվար, ի վերջո ավարտվեցին հաջողությամբ: 1958 թ. հունիսի 17–ին Ֆրանսիան և Թունիսը համաձայնվեցին ֆրանսիական զորքերը Թունիսից դուրս բերել չորս ամսվա ընթացքում: Այս անգամ Ֆրանսիան հավատարիմ մնաց պայմանավորվածությանը, և իրոք, չորս ամսվա ընթացքում ֆրանսիական զորքերը հեռացան Թունիսից:

Սակայն մնաց չլուծված Բիզերտայում ֆրանսիական ռազմածովային բազայի հարցը, որտեղից Ֆրանսիան հրաժարվում էր իր ռազմական ուժերը դուրս բերել: Այդ բազան նրա համար կարևոր էր Ալժիրում հակաֆրանսիական շարժումները ճնշելու և Ֆրանսիայի ռազմաստրատեգիական դիրքերը Հյուսիսային Աֆրիկայում և Միջերկրական ծովի ավազանում ամրապնդելու տեսանկյունից:

Թունիսը շարունակում էր պնդել, որ Ֆրանսիան հեռանա նաև Բիզերտայից: Քանի որ բանակցություններն ավարտվում էին անպտուղ, Թունիսը 1961 թ. հուլիսի 5–ին պաշտոնապես պահանջեց ֆրանսիական կառավարությունից՝ անհապաղ լուծել իր զորքերը Բիզերտայից դուրս բերելու հարցը: Թունիսցիներն այդ հարցում այնպիսի վճռականությամբ էին համակված, որ Հաբիբ Բուրգիբան, 1961 թ. հուլիսի 17–ին

Դեպուտատների պալատում հանդես գալով, խոսեց թունիսցիների կամքի, «Թունիսի տերիտորիայի թե՛ հյուսիսում և թե՛ հարավում» Թունիսի ինքնիշխանությունը վերականգնելու մասին՝ կոչ անելով Թունիսի ողջ բնակչությանը դուրս գալ «ճակատամարտի հանուն Բիզերտայի»: Պրեզիդենտը հարկադրված էր դիմել նման ծայրահեղ քայլի, թեև լավ էր հասկանում, որ ուժերն անհավասար էին, և զենքի ուժով հազիվ թե հնարավոր լիներ ստիպել Ֆրանսիային նահանջել: Բայց դա էր պահանջում երկրի անկախության ամբողջացման և ինքնիշխանության հաստատման համար պայքարի տրամաբանությունը, և Հաբիբ Բուրգիբան հետևեց այդ տրամաբանությանը:

Ֆրանսիան մերժեց Թունիսի վերջնագրային բնույթ կրող պահանջը: «Հանուն Բիզերտայի» ճակատամարտի դուրս եկած թունիսցիները շրջափակեցին Բիզերտայի բազան: Սկսվեցին մարտեր, որոնք տևեցին մինչև 1961 թ. հուլիսի 22–ը: Թունիսը խզեց դիվանագիտական հարաբերությունները Ֆրանսիայի հետ: Ֆրանսիան լրացուցիչ զորքեր բերեց Բիզերտա, և թունիսցիները, մեծ կորուստներ տալով, հարկադրված էին նահանջել: Բիզերտան և նրա շրջակա տարածքը ամբողջությամբ մնացին ֆրանսիացիների հսկողության տակ: Այդ մարտերի ընթացքում զոհվեց 800 թունիսցի:

Բայց այդ ճակատամարտն անտեղի չանցավ: Համաշխարհային հանրությունը դատապարտեց Ֆրանսիային, իսկ ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեան, որը հավաքվել էր հատուկ Բիզերտայում տեղի ունեցած իրադարձությունները և այնտեղից ֆրանսիական զորքերը դուրս բերելու հարցերը քննարկելու համար, լիովին պաշտպանեց Թունիսի արդարացի պահանջները, դիմեց Ֆրանսիային իր զորքերը դուրս բերել Բիզերտայից և հանձնարարեց Ֆրանսիայի և Թունիսի կառավարություններին սկսել բանակցություններ խաղաղ ճանապարհով Բիզերտայի հարցը կարգավորելու համար: Բանակցային գործընթացին աջակցելու նպատակով Թունիս ժամանեց ՄԱԿ–ի գլխավոր քարտուղար Դագ Համարշելդը:

1961 թ. հուլիսի 28–ին Ֆրանսիան հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ շեշտվում էր նրա պատրաստակամությունը վերսկսել բանակցություններ Թունիսի հետ Բիզերտայի ռազմածովային բազան օգտագործելու հարցի շուրջը:

1961 թ. հոկտեմբերին Թունիսի և Ֆրանսիայի ներկայացուցիչները Հռոմում նստեցին բանակցությունների սեղանի շուրջը, որոնք այնուհետև ընդհատումներով շարունակվեցին Փարիզում: Սակայն այդ հարցի

կարգավորման համար իրական հնարավորություններ ստեղծվեցին միայն այն ժամանակ, երբ 1962 թ. Էվիանում կնքվեցին Ֆրանս–ալժիրյան հայտնի համաձայնագրերը, որոնցով կարգավորվում էին Ալժիրի անկախության հարցերը[15]: Դա դուռ բացեց նաև Բիզերտայի ռազմածովային բազայի հարցի կարգավորման համար: Ֆրանսիան և Թունիսը համաձայնության եկան Բիզերտան Թունիսին հանձնելու շուրջ: Սակայն այդ համաձայնությունը ձեռք բերվեց շատ յուրահատուկ ձևով: Հատուկ պայմանագիր չստորագրվեց, այլ 1963 թ. մարտի 2–ին Թունիսը Բիզերտան իրեն վերադարձնելու Ֆրանսիայի համաձայնության դիմաց պարտավորվեց հետ գնել ֆրանսիական կոլոնիստներին պատկանող մոտ 370 հազ. ակր հողատարածք: Սկսվեց Բիզերտան Թունիսին հանձնելու գործընթացը, որն ավարտվեց 1963 թ. հոկտեմբերի 15–ին: Բիզերտայի վրա ծածանվեց Թունիսի ազգային դրոշը: Ֆրանսիական զորքերի հեռացման պաշտոնական հանդիսությունները տեղի ունեցան 1963 թ. դեկտեմբերի կեսերին: Դա նշանակում էր Թունիսի տերիտորիայի լրիվ ազատագրում օտարերկրյա տիրապետությունից, նրա անկախության և ինքնիշխանության ամբողջացում, որն արդյունք էր թունիսյան բոլոր ազգային–հայրենասիրական ուժերի երկարատև ու համառ պայքարի:

3. Փոփոխություններ և վերակառուցումներ Թունիսի սոցիալական ու տնտեսական հարաբերությունների ոլորտում

Ընդհանրապես սոցիալ–տնտեսական ոլորտն ամենաբարդ ոլորտն է, և յուրաքանչյուր փոփոխություն այդ ոլորտում սովորաբար ուղեկցվում է հասարակական ցնցումներով: Այդ առումով բացառություն չէր նաև Թունիսը: Յուրահատկությունն այստեղ կայանում էր նրանում, որ Հաբիբ Բուրգիբայի և «Նոր դուստուր» կուսակցության քայլերը շատ ավելի զգույշ էին, քան արաբական այլ երկրներում, ինչպես Եգիպտոսում կամ Սիրիայում, էլ չենք խոսում Հարավային Եմենի՝ Եմենի ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության մասին: Թունիսի կառավարության քայլերը հիմնված էին քաղաքական որոշակի, կարելի է ասել՝ կշռադատված հաշվարկների վրա:

«Նոր դուստուրին», ինչպես նշվել է, սկզբից նեթ հատուկ էին սոցիալիստական հակումներ, որոշակի միտումներ՝ թունիսյան հասարա-

15 Այդ մասին տե՛ս սույն հատորի՝ Ալժիրին նվիրված գլուխը:

կությունը վերակառուցելու սոցիալիստական սկզբունքների հիման վրա: Անկախության նվաճումից հետո այդ միտումները կամ համոզմունքները Թունիսի ղեկավարության և «Նոր դուստուրի» շարքերում այնքան ուժեղացան, որ անգամ հարկ եղավ փոփոխություն մտցնել կուսակցության անվանակոչության մեջ: 1964 թ. հոկտեմբերին կայացավ «Նոր դուստուր» կուսակցության VII համագումարը, որը որոշեց կուսակցությունը վերանվանել և այն կոչել Սոցիալիստական դուստուրական կուսակցություն՝ ՍԴԿ: Դա ազդանշան էր այն բանի, որ «սոցիալիստական» վերափոխություններն ավելի պաշտոնական բնույթ էին կրում և պետք է ստանային ավելի լայն ծավալներ ու զարգացումներ:

Սոցիալիստական հայացքներին փարելը նորություն չէր XX դարի երկրորդ կեսերի արաբական, ասիական և աֆրիկյան հասարակությունների ու երկրների համար: Բայց դրանք բոլորը, չնայած նրանց «սոցիալիստական» կոչվելուն, խիստ տարբեր էին մեկը մյուսից և չէին հանդիսանում միասնական սոցիալիստական ուսմունքի տեսություն: Համենայն դեպս, նրանք չկանգնեցին գիտական սոցիալիզմի դիրքերի վրա:

Ասվածը հավասարապես վերաբերում է նաև սոցիալիզմի թունիսյան կամ դուստուրական տարբերակին: Դուստուրական սոցիալիզմի կողմնակիցները ոչ միայն չէին կիսում գիտական սոցիալիզմի հիմնադրույթները, այլև ընդգծում էին իրենց անհամաձայնությունը նաև արաբական և եվրոպական սոցիալիզմի տարբեր հոսանքների հետ: Դրանով հանդերձ, Սոցիալիստական դուստուրական կուսակցության ղեկավարությունը և ինքը՝ Հաբիբ Բուրգիբան, այդպես էլ չփորձեցին մշակել սոցիալիզմի իրենց տեսությունը և նրան տալ մեկ ամբողջական ուսմունքի տեսք: Նրանց ելույթներից, հայտարարություններից և կուսակցական որոշումներից հետևում էր, որ, նրանց հասկացողությամբ, դուստուրական սոցիալիզմը սոցիալիստական տարբեր հոսանքների կամ ուսմունքների կոնկրետացումն էր թունիսյան իրականությունում՝ ելնելով թունիսյան հասարակության ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալական և տնտեսական զարգացման պահանջներից:

Այդուհանդերձ, մի բան ակնհայտ էր, դուստուրական սոցիալիզմը պարունակում էր հակակապիտալիստական տարրեր, մերժում էր կապիտալիզմի անվերահսկելի զարգացումը, ընդունում էր պլանավորման սկզբունքի կիրառումը տնտեսության մեջ, հաստատում էր արդարության, հավասարության և դեմոկրատական ազատությունների սկզբունքների կիրառումը և այլն:

Թունիսի հասարակությունում վերափոխումները՝ նրա սոցիալիզացիան, տեղի չունեցան մեկ հարվածով, այլ կատարվում էին աստիճանաբար, որն ավելի ակտիվորեն կիրառվեց, երբ Թունիսը ստացավ ներքին ինքնավարություն, և ավելի մեծ ծավալներով ու խորությամբ՝ պրոտեկտորատի վերացումից և անկախացումից հետո:

Սոցիալ–տնտեսական ոլորտներում Հաբիբ Բուրգիբայի քաղաքականությանը հատուկ էին փուլային զարգացումները: Առաջին փուլը սկսվեց անկախության հռչակումից անմիջապես հետո՝ 1956 թ., և տևեց մոտ չորս տարի: Այս փուլում տեղի չունեցան հասարակության և նրա սոցիալ–տնտեսական ոլորտի կառուցվածքային փոփոխություններ: Տնտեսական քաղաքականության հիմքում դրվեցին տնտեսական լիբերալիզմի սկզբունքները, որոնց համաձայն բարենպաստ պայմաններ ստեղծվեցին ազատ ձեռներեցության և Թունիսի տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի ներդրումների համար: Միաժամանակ երկրի տնտեսության զարգացումը խրախուսելու համար կիրառվեցին մի շարք պրոտեկցիոնիստական քայլեր՝ նպատակ ունենալով մեղմել օտարերկրյա մրցակցությունը և ավելի բարենպաստ պայմաններ ստեղծել ազգային տնտեսության զարգացման համար: Այդ պատճառով էլ այս փուլում պետությունը չէր միջամտում սեփականության հարաբերություններին և թույլ չէր տալիս բռնագրավում, ազգայնացում և այլն: Դա այս փուլի առանձնահատկություններից մեկն էր:

Մյուս առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ առաջին փուլում՝ 1956–1960 թթ., Թունիսի կառավարությունը դնում էր Ֆրանսիայից Թունիսի տնտեսական կախվածության միայն թուլացման հարցը: Նա ազգայնացրեց մի քանի օտարերկրյա ընկերություններ, 1959 թ. հրաժարվեց Ֆրանսիայի հետ մաքսային դաշինքից, որը մեծապես հարվածում էր Թունիսի անկախությանը և նրան կախման մեջ պահում Ֆրանսիական տնտեսությունից:

Չբավարարվելով դրանով՝ Թունիսի կառավարությունը հիմնեց մի քանի թունիսյան բանկեր երկրի տնտեսության զարգացումը վարկավորելու համար և սկսեց հովանավորել տեղական ձեռներեցությունը՝ զանազան արտոնյալ պայմաններ ստեղծելով նրա համար:

Հաբիբ Բուրգիբան և նրա կառավարությունը նման քաղաքականության օգնությամբ փորձում էին նախադրյալներ ստեղծել տնտեսական հետագա վերելքի համար, բայց նրանց հույսերը չարդարացան: Նրանք հիասթափված էին թե՛ օտարերկրյա ներդրողներից և թե՛ սեփա-

կան արտադրողներից: Օտարերկրյա ներդրողները շատ «համեստ» գտնվեցին և առանձին ակտիվություն չցուցաբերեցին Թունիսի տնտեսության մեջ կապիտալ ներդրումներ կատարելու հարցում, իսկ թունիսյան՝ «սեփական» կապիտալիստները ուղղակի անճարակ գտնվեցին ժամանակակից արդյունաբերական արտադրություն կազմակերպելու գործում: Նրանք այդ բնագավառում փորձ չունեին և վախենում էին ռիսկի դիմել: Երևում էին երկարատև ֆրանսիական գաղութային տիրապետության բացասական հետևանքները:

Հաբիբ Բուրգիբան, որն օժտված էր նեղ իրավիճակներից դուրս գալու վարպետությամբ, 1960 թ. դիմեց վճռական գործողությունների, որով դրվեց տնտեսության բնագավառում նոր քաղաքականության հիմքը: Այս անգամ նա արդեն հարկադրված էր դիմել որոշակի կառուցվածքային փոփոխությունների:

Տնտեսական նոր քաղաքականության առանցքային և սկզբունքային նորություններից մեկը եղավ անցումը տնտեսության պլանավորմանը և պետական ղեկավարմանը, որի տրամաբանական շարունակությունը հանդիսացավ մասնավոր ձեռներեցության սահմանափակումը: Այս հարցերի մշակման և տնտեսական նոր քաղաքականության հիմնադրույթների հաստատման համար երկրի կառավարման համակարգում ստեղծվեց մի նոր կարևոր օղակ՝ Պլանավորման ազգային խորհուրդ, որը մշակեց և կառավարության հաստատմանը ներկայացրեց «Զարգացման տասնամյա հեռանկար» կոչված ծրագիրը, որն ընդգրկում էր 1962–1971 թթ.: Ծրագիրը նախատեսում էր Թունիսի ինդուստրալիզացիա, երկրի ընդհանուր տնտեսական արագ աճ, բնակչության նյութական և կուլտուրական պայմանների կտրուկ բարելավում, որի արդյունքում Թունիսը պետք է լուծեր Ֆրանսիայից Թունիսի տնտեսական կախվածության վերացման համազգային խնդիրը:

Այդ ծրագիրն ընդհանուր առմամբ իրագործվեց հաջողությամբ: Թունիսում 1960–1970–ական թվականներին կառուցվեցին մի շարք գործարաններ, դպրոցներ, տարբեր ուսումնական հաստատություններ, հիվանդանոցներ, գրադարաններ, բարելավվեցին ճանապարհները, բարձրացավ բնակչության կենսամակարդակը: Միայն 1960–1964 թթ. ընթացքում Թունիսում կրկնակի անգամ աճեցին երկրի տնտեսական զարգացման տեմպերը: Հավանաբար դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ պլանավորման սկզբունքի ներդրումը տնտեսության մեջ չհանգեցրեց տնտեսության կառավարման կենտրոնացմանը, որը սովո-

ռաբար տեղի է ունենում: Դրա հնարավոր բացասական հետևանքները լավ էին հասկանում Թունիսում, այդ պատճառով էլ նրանք կարողացան պահպանել երկրի տնտեսության ապակենտրոնացումը:

Թունիսում ձևավորվեց պետական սեկտոր, որի միջուկը կազմում էին էներգետիկան և տրանսպորտը, բայց դրա հետ միասին զգալի զարգացում ստացավ նաև խառը ընկերությունների ստեղծումը, իսկ տնտեսության մի շարք ճյուղերում պահպանվեցին մասնավոր ձեռնարկությունները: Եվ եթե այս բոլորին ավելացնենք, որ իր դիրքերը պահպանեց օտարերկրյա կապիտալը, ապա ավելի կատարյալ կդառնա Թունիսի տնտեսության ընդհանուր պատկերը և նրա կառուցվածքային համակարգը:

Վերափոխումներից, բնականաբար, դուրս չէին կարող մնալ գյուղատնտեսությունը և ագրարային հարաբերությունների ոլորտը: Այստեղ Թունիսի ղեկավարությունը դարձյալ դրսևորեց ոչ ստանդարտ մոտեցում: Ի տարբերություն արաբական որոշ երկրների, մասնավորապես Եգիպտոսի և Սիրիայի՝ Բուրգիբան չդիմեց ամբողջ ագրարային ոլորտը համակող արմատական փոփոխությունների: Նրա կիրառած ագրարային վերափոխումները տարբերվում էին Նասերի կողմից Եգիպտոսում կիրառած բարեփոխումներից, որը հետագայում ընդօրինակեց Սիրիան: Նա այստեղ ևս հավատարիմ մնաց աստիճանական վերափոխումների իր քաղաքականությանը, որը բավականին հետաքրքիր երևույթ էր: Նկատի ունենք այն հանգամանքը, որ սկզբնական շրջանում Բուրգիբան շեշտը դրեց Թունիսում ֆերմերական տնտեսություններ ստեղծելու վրա: Դրա համար նա 1956–1957 թթ. իրականացրեց խաբուսների՝ վակուֆների, այսինքն՝ մուսուլմանական հոգևոր զանազան հիմնարկներին պատկանող հողատարածքների մի մասի ազգայնացում, իսկ մի մասի էլ աշխարհականացում և պետականացում, որը բավականին համարձակ քայլ էր մուսուլմանական երկրում: 1957 թ. կատարվեց ևս մեկ բավականին համարձակ քայլ՝ ընդունվեց օրենք, որը դուռ էր բացում համայնքային հողերի բաժանման և դրանք հողազուրկ գյուղացիների կողմից օգտագործելու ու ֆերմերային տնտեսություններ հիմնելու համար:

Այդ նույն տարի իրականացվեցին նաև արմատական բնույթի մի շարք միջոցառումներ. կառավարության որոշմամբ կիրառվեց ֆրանսիական կոլոնիստների հողերի հետգնում, բռնագրավում և արգելակալանք, որը տարածվեց նաև տեղական այն հողատերերի վրա, որոնք դատապարտվել էին, ինչպես նշված էր, «թշնամու հետ համագործակ-

ցելու և հողի մշակման ու արդյունավետության մակարդակը ինչպես հարկն է չապահովելու համար»:

Այդ հողերը անցնում էին պետությանը և կազմավորում պետական սեկտոր:

Իսկ ի՞նչ էր հետագայում տեղի ունենում այդ հետգնված և բռնագրավված հողերի հետ: Դրանք բաժանվում էին գյուղացիներին կամ տրվում վարձակալությամբ, իսկ մի մասն էլ մնում էր պետության տնօրինության տակ: Շարունակելով ագրարային վերափոխումների քաղաքականությունը՝ Թունիսում 1964 թ. մայիսի 12–ին ընդունվեց օրենք այն բոլոր հողերի ազգայնացման մասին, որոնք չէին պատկանում թունիսցիներին: Ֆրանսիացի և իտալացի կոլոնիստները զրկվեցին իրենց հողային սեփականությունից և հարկադրված հեռացան Թունիսից: Դա շատ կարևոր հաղթանակ էր Թունիսի տնտեսական անկախության ամրապնդման գործում:

Իսկ տեղական հողատերերի սեփականության չափաբաժինը, ինչպես վկայում են 1958 թ. Ներքին Մաջարդի հովտում կիրառված ագրարային վերափոխումները, որտեղ կային բարեբեր մեծ հողատարածքներ, սահմանափակվեց մինչև 50 հա:

Այս բոլորը կարելի է համարել որպես նախապատրաստական աշխատանքներ գյուղում արտադրական կոոպերացիայի անցնելու քաղաքականության համար: Այդ կարևոր գործընթացը սկսվեց 1962 թ.: Կոոպերացման գործընթացը թեև ընթանում էր դանդաղ, այդուհանդերձ, երեք տարի անց՝ 1965 թ., արդեն կային 1185 կոոպերատիվներ, որոնց տնօրինության տակ էին գտնվում 800 հազ. հա հողատարածք: Նրանց մեջ միավորված էր մոտ 145 հազ. գյուղացի: Գյուղում կոոպերատիվ շարժման տարածումը գտնվում էր կառավարության և Սոցիալիստական դուստուրական կուսակցության ուշադրության կենտրոնում: Նրանց նախաձեռնությամբ Թունիսի Դեպուտատների պալատը 1964 թ. ընդունեց օրենք գյուղական կոոպերատիվներին օգտագործման համար բաժանել մոտ 2 մլն հա համայնքային հողատարածքներ:

Կոոպերատիվների ստեղծումը մի փորձ էր Թունիսի կառավարության և ՍԴԿ–ի կողմից գյուղատնտեսությունը ոտքի կանգնեցնելու և երկրի տնտեսությունը զարգացնելու համար: Այդ շարժումը միշտ չէ, որ ճիշտ է գնահատվել: Եղել են դեպքեր, երբ Թունիսում ձեռնարկած կոոպերատիվ շարժումը անհասկացողությամբ, թե միտումնավոր կերպով շփոթել են կոլտնտեսային շարժման հետ և այն ներկայացրել որպես

կոլխոզային շարժում՝ անկնարկելով խորհրդային կոլխոզները և նրանց ծախողումները: Սակայն կոոպերատիվները Թունիսում և կոլխոզները նախկին Խորհրդային Միությունում բոլորովին տարբեր բաներ էին:

Թունիսում տեղի ունեցան նաև շոշափելի փոփոխություններ և բարելավումներ նաև սոցիալական հարաբերությունների ոլորտում: Դա էին պահանջում երկրի տնտեսական զարգացումն և բնակչության տնտեսական վիճակի բարելավման խնդիրները: Իսկ բնակչության տնտեսական դրությունը Թունիսում ծանր էր, որը պատճառ էր դառնում բանվորների գործադուլների և գյուղացիական ելույթների համար: Թունիսի անկախության շրջանի պատմությունը բավականին հարուստ է նման իրադարձություններով: Օրինակ՝ 1956 թ. տեղի ունեցան գյուղացիական լայնածավալ ելույթներ Թունիսի տարբեր շրջաններում, որոնց ընթացքում հողազուրկ և սակավահող գյուղացիները հանդես էին գալիս իրենց բավարար քանակությամբ հող տրամադրելու պահանջներով: 1957 թ. տեղի ունեցան մի շարք բանվորական գործադուլներ, որոնց մեջ աչքի ընկան երկաթուղային բանվորների և հանքափորների գործադուլները:

Հաբիբ Բուրգիբան և նրա գլխավորած կառավարությունն ու կուսակցությունը հասկանում էին, որ անհրաժեշտ են անհետաձգելի քայլեր սոցիալական ոլորտում, հարկավոր է օրենսդրորեն պաշտպանել գյուղի և քաղաքի աշխատավորների իրավունքները, բարելավել նրանց նյութական դրությունը: Ի կատարումն այդ պահանջների՝ Թունիսում այդ ուղղությամբ ընդունվեցին մի շարք օրենքներ և որոշումներ, ձեռնարկվեցին համապատասխան քայլեր:

1956 թ. Թունիսում ընդունվեց օրենք աշխատանքի մասին գյուղատնտեսության մեջ: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ գյուղական շրջաններում և բնակավայրերում հողատերերը թույլ էին տալիս կամայականություններ գյուղացիների նկատմամբ, որոնք աշխատում էին նրանց մոտ և մշակում նրանց հողերը: Օրենքը կոչված էր պաշտպանել գյուղացիների իրավունքները և արգելք դնել կալվածատերերի կամայականությունների առջև:

Այդ նույն օրենքով ստեղծվեցին «աշխատանքային ճամբարներ» գործազուրկների համար, որոնք չունեին հող, բնակարան և ապրուստի միջոցներ, ովքեր չունեին կրթություն և մասնագիտություն: Նման ճամբարներում հավաքվեցին մոտ 400 հազ. գործազուրկներ, որոնք այնտեղ կատարում էին զանազան աշխատանքներ, ստանում մասնագիտություն, սնվում էին և այլն: Դա փրկություն էր նրանց համար:

Նման հովանավորչական քաղաքականություն էր վարվում նաև անապատաստան երեխաների հարցում: Նրանց համար նույնպես ստեղծվեցին կենտրոնացված բնակավայրեր, որոնք կոչվեցին «Բուրգիբայի մանկական գյուղեր»: Այստեղ նրանց նկատմամբ տարվում էր դաստիարակչական մեծ աշխատանք, տրվում կրթություն, զարգացնում սեր աշխատանքի նկատմամբ, ապահովում անվճար սնունդով ու հագուստով:

Ընդհանրապես, Բուրգիբայի կառավարությունը մեծ ուշադրություն էր դարձնում կրթության ոլորտին՝ այն համարելով Թունիսի զարգացման կարևոր խնդիրներից մեկը: Խնդիր դրվեց, որ մինչև 1971 թ. թունիսյան բոլոր երեխաները պետք է ստանան տարրական կրթություն, որն ընդհանուր առմամբ կենսագործվեց հաջողությամբ:

Սոցիալական ոլորտում Թունիսի կառավարության կարևոր քայլերից մեկը պետք է համարել բանվորների և ընդհանրապես աշխատավորների իրավունքների օրենսդրական պաշտպանությունը, որն ամրագրվեց 1959 թ. ընդունված անկախ Թունիսի առաջին սահմանադրության մեջ: Սահմանադրության հոդվածներով բանվորները ստանում էին իրենց արհմիությունները կազմակերպելու իրավունք: Դրա հետ միասին, սահմանադրության դրույթների համաձայն, բանվորներն իրենց աշխատանքային իրավունքները պաշտպանելու համար կարող էին դիմել գործադուլների, որից մեկ անգամ չէ, որ նրանք հետագայում օգտվել են: Բացի դրանից, սահմանադրության համաձայն՝ Թունիսում ընդունվեց աշխատանքային օրենսդրություն, որը հզոր զենք էր բանվորների ձեռքին իրենց իրավունքների պաշտպանության և հարգման համար նրանց մղած պայքարում: Եվ քիչ չեն այն դեպքերը, երբ Թունիսի բանվորները կարողացել են ստիպել գործատուներին գործել՝ ըստ սահմանադրության և աշխատանքային կոդեքսի պահանջների:

Թունիսի 1959 թ. սահմանդրությամբ և նրա 2002 թ. տարբերակով երաշխավորվեցին նաև կուսակցությունների, միությունների, ասոցիացիաների ազատությունն ու գործունեությունը, մամուլի, խոսքի և այլ դեմոկրատական ազատություններ:

Թունիսի ղեկավարությունը, մասնավորապես պրեզիդենտ Հաբիբ Բուրգիբան, չափազանց մեծ ուշադրություն էին դարձնում մի այնպիսի սկզբունքային հարցի, ինչպիսին կանանց իրավունքների հարցն էր: Նա և նրա ղեկավարած ՍԴԿ–ն ու կառավարությունը լավ էին հասկանում, որ առանց կնոջ իրավունքների ճանաչման, առանց նրա կարգավիճակի փոփոխության ընտանիքում և հասարակության մեջ, անհնար է ապահովել

Թունիսի առաջընթացը և Թունիսը վերածել ժողովրդավարական ժամանակակից պետության: Նրանք նաև լավ էին հասկանում, որ այդ հարցի լուծմանը հնարավոր չէ հասնել կոչերով, այլ անհրաժեշտ են օրենսդրական քայլեր և դրանց համապատասխանող հետևողական քաղաքականություն: Այդ առումով սկզբունքային նշանակություն ունեցավ 1957 թ. հունվարի 1–ին ընդունված քաղաքացիական կոդեքսը: Մինչ այդ գործում էին շարիաթի նորմերը, ադաթը՝ սովորույթը, և այլ վաղուց իրենց դարն ապրած օրենքներ, կանոններ և սովորույթներ: Քաղաքացիական կոդեքսը վերացնում էր այդ բոլորը և սահմանում նոր իրավական նորմեր: Ըստ այդմ՝ արգելվեց բազմակնությունը՝ պոլիգամիան, և մտցվեց միակնություն՝ մոնոգամիա, հաստատվեց տղամարդու և կնոջ իրավունքների հավասարություն ընտանեկան բազմաթիվ հարցերում, այդ թվում և ապահարզանի հարցում, որտեղ մինչ այդ տղամարդու իրավունքները հանդիսանում էին գերակայող: Հաստատվեց նաև, որ Թունիսում ապահարզաններն այդ պահից սկսած կատարվելու էին դատարանների միջոցով և սահմանված օրենքների համաձայն: Ընտանիքում և հասարակությունում կնոջ իրավունքների ընդլայնման և նրա անձի հարգման առումով էական նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ այլևս պարտադիր չէր համարվում չադրայի կրումը կնոջ կողմից: Ճիշտ է, չադրա կրելը չարգելվեց, բայց չէր էլ խրախուսվում, նույնիսկ, կարելի է ասել, քարոզչական մեծ արշավ սկսվեց հօգուտ չադրայի վերացման:

Սկզբունքային, կարելի է ասել՝ պատմական նշանակություն ունեցավ կնոջը քաղաքական իրավունքներ տրամադրելու որոշումը, որն օրենքի ուժ ուներ: Թունիսյան կինը ստացավ ընտրելու և ընտրվելու իրավունք, որը նշանակում էր, որ կինն իրավունք էր ձեռք բերում Թունիսի քաղաքական ճակատագրի լուծման հարցում: Դրանով Թունիսում հիմք դրվեց կնոջ էմանսիպացիային՝ ազատությանը:

Եվ պետք է նշել, որ այս որոշումները չմնացին թղթի վրա, այլ կենսագործվեցին կյանքում: Արդեն այդ կոդեքսի ընդունումից հետո՝ 1957 թ. մայիսին 5–ին, Թունիսում կայացած պառլամենտական ընտրությունների ժամանակ կանայք լայնորեն օգտվեցին իրենց նոր իրավունքներից և մասնակցեցին ընտրություններին:

Վերոշարադրյալը վկայում է այն լուրջ քայլերի մասին, որ կատարվում էին Թունիսում Բուրգիբայի պրեզիդենտության շրջանում՝ Թունիսը վերածելու զարգացած և դեմոկրատական պետության:

III. ԹՈՒՆԻՍԸ XX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

1. Իշխանափոխությունը Թունիսում 1987 թ.

Չնայած որոշակի, անգամ ակնհայտ տեղաշարժերի ու նվաճումների, այդուհանդերձ, ամեն բան չէր, որ հարթ էր ընթանում կամ հաջողությամբ պսակվում, մանավանդ տնտեսության ոլորտում: Ակնհայտ հաջողությունների հետ միասին տեղի էին ունենում ձախողումներ, անհաջողություններ, թույլ էին տրվում սխալներ, դեմոկրատական ազատությունների սահմանափակումներ և այլն: Երկրում բնակչության վիճակը մնում էր ծանր, գործազրկությունը բարձր, որի պատճառով աստիճանաբար խոր դժգոհություն էր կուտակվում ընդդեմ իշխանությունների, որը վաղ, թե ուշ պետք է պոռթկար:

Ապագա լուրջ դժգոհությունների և ելույթների առաջին նախանշանները երևան եկան արդեն XX դարի 60–ականների վերջերին՝ կապված գյուղատնտեսության անկման հետ, իսկ դա իր հերթին կապվում էր գյուղում կոոպերատիվ շարժման հետ: Այդ երևույթը հիմնավոր վերլուծելու փոխարեն իշխանությունները գնացին այլ ուղիով: Նրանք այդ բանում մեղադրեցին համապատասխան նախարարին և նրան բանտ նետեցին, որից, իհարկե, տնտեսական վիճակը չբարելավվեց: Արդեն հաջորդ տարի՝ 1968 թ., տեղի ունեցան բանվորների և ուսանողների բողոքի ցույցեր՝ ուղղված տնտեսական ծանր պայմանների դեմ: Դժգոհությունը, բողոքների շարժումը և ցույցերը շարունակվեցին և նոր թափ առան 1970–ականներին, որոնցից նշանակալի էին 1978 թ. հուզումները, որոնք ընդգրկել էին բավականին լայն և տարբեր սոցիալական խավերի: Եվ բնավ էլ պատահական չէր, որ 1980 թ. պետական հեղաշրջման փորձ կատարվեց Թունիսում, որը թեև ավարտվեց անհաջողությամբ, բայց վկայում էր, թե դժգոհությունն ինչպիսի աստիճանի էր հասել: Դրանից հետո թեև պայքարի ալիքը որոշ չափով անկում ապրեց, սակայն 1984 թ., այն բանից հետո, երբ կառավարությունը բարձրացրեց ամենակարևոր և էական ապրանքների գները, վտանգավոր բնույթի նոր խոշոր և լուրջ հակակառավարական ելույթներ տեղի ունեցան:

Դժգոհության և ելույթների աղբյուրը միայն տնտեսական հարցերը չէին: Կային նաև քաղաքական դրդապատճառներ: Դա Հաբիբ Բուր-

գիբայի կառավարման մեթոդներն էին և զգալի փոփոխությունները քաղաքականության ասպարեզում:

1974 թ. սեպտեմբերին Հաբիբ Բուրգիբան հռչակվեց Թունիսի ցմահ պրեզիդենտ: Ճիշտ է, նա մեծ ծառայություններ ուներ Թունիսի հանդեպ, չափազանց մեծ է նրա ներդրումը Թունիսի անկախության նվաճման և Թունիսի պետության կերտման ու կայացման գործում, որի համար նա շատ հաճախ հավակնում էր «Թունիսի հայր» կոչվելուն, այնուհանդերձ, նրա այդ քայլը՝ ցմահ պրեզիդենտ հռչակվելը, լավ չընդունվեց թունիսցիների կողմից: Կարելի է ասել, որ ապավինելով իր հեղինակությանը և մեծ ծառայություններին՝ չափի զգացումը դավաճանեց Հաբիբ Բուրգիբային: Նման սխալը, ինչպես վկայում է պատմության փորձը, սովորաբար կործանարար է լինում: Հաբիբ Բուրգիբայի այդ քայլը նշանակում էր ծանր հարված ժողովրդավարությանը և նրա սկզբունքներին: Դա նշանակում էր, որ նա իր իշխանությունը հավերժ դարձնելու համար դիմում էր կառավարման այնպիսի մի ձևի, որը բնորոշ և հատուկ է միապետական վարչակարգ ունեցող երկրներին: Կասկածամտությունը թունիսյան հասարակությանն ավելի համակեց, երբ Հաբիբ Բուրգիման իր որդուն՝ կրտսեր Հաբիբ Բուրգիբային, նշանակեց Թունիսի արտաքին գործերի նախարար և աստիճանաբար սկսեց ավելի լայնորեն նրան ներգրավել պետական կառավարման մեջ: Դրա մեջ շատերը տեսնում էին Հաբիբ Բուրգիբայի կողմից իշխանությունը իր որդուն թողնելու կամ էլ փոխանցելու մտադրություն, որով կարող էր հիմք դրվել պրեզիդենտության ժառանգականության ինստիտուտին:

Հաբիբ Բուրգիբան կառավարման վերջին տարիներին կոպիտ սխալներ թույլ տվեց ներքին քաղաքականության, մանավանդ քաղաքական ազատությունների և ժողովրդավարության հարցերում: Նրա գլխավորած Սոցիալիստական դուստուրական կուսակցությունը փաստորեն դարձավ միակ գործող կուսակցությունը, ըստ էության սահմանվեց միակուսակցական քաղաքական համակարգ, թեև սահմանադրությունը թույլ էր տալիս բազմակուսակցություն, և 1881 թ., իրոք, մտցվեց բազմակուսակցական համակարգ: Արգելված կուսակցությունները լեգալացվեցին: Բայց, այդուհանդերձ, նրանք Բուրգիբայի քաղաքականության պատճառով չկարողացան ամրապնդվել և մարտահրավեր նետել կառավարող Սոցիալիստական դուստուրական կուսակցությանը: Գաղափարախոսության բնագավառում տիրապետող էին դուստուրական սոցիալիզմի գաղափարները, որոնց քարոզչության համար պետու-

թյան կողմից ստեղծվել էին ամենաբարենպաստ պայմանները, որոնցից զուրկ էին այլ կուսակցությունները և քաղաքական հոսանքները:

Հաբիբ Բուրգիբան, իր ձեռքում կենտրոնացնելով ամբողջ պետական, կառավարական, օրենսդիր և կուսակցական իշխանությունը, իր պրեզիդենտության վերջին տարիներին Թունիսում հաստատեց մի վարչակազմ, որը կարելի կոչել անձնիշխանական՝ ավտորիտար վարչակարգ:

Երկրում կային քաղաքական գործիչներ և ուժեր, որոնք խիստ դժգոհ էին այս բոլորից: Նրանք համախմբվեցին Թունիսի վարչապետ Զին ալ–Աբիդին Բին Ալիի շուրջը: Հենց այս ուժերի աջակցությամբ վարչապետը 1987 թ. նոյեմբերի 7–ին կատարեց յուրահատուկ պետական հեղաշրջում: Հաբիբ Բուրգիբան զրկվեց իր բոլոր պաշտոններից և ուղարկվեց թոշակի: Իշխանությունից նրա հեռացման գլխավոր պատճառը պաշտոնապես ներկայացվեց նրա զառամյալ լինելու հանգամանքը: Հատուկ հայտարարությամբ Թունիսի ժողովրդին տեղյակ պահվեց, որ բժիշկների կողմից մանրազնին քննարկումից հետո նրանք եկել են այն եզրակացության, որ զառամյալ Հաբիբ Բուրգիբան իր տարիքի պատճառով այլևս ի վիճակի չէ կառավարել երկիրը: Նա այդ թվականին ընդամենը 85 տարեկան էր:

Թունիսի պրեզիդենտի պաշտոնը գրավեց Զին ալ–Աբիդին Բին Ալին:

2. Նոր իշխանությունների ներքին քաղաքականության հիմնական միտումները

Զին ալ–Աբիդին Բին Ալին, դառնալով Թունիսի երկրորդ պրեզիդենտը, իշխանության հետ միասին ժառանգություն ստացավ հիմնախնդիրների մի ամբողջ շարք, որոնք իրենց լուծումն էին պահանջում ստեղծված նոր պայմաններում: Հասկանալի է, որ դա այլևս չէր կարող լինել առաջին պրեզիդենտ Հաբիբ Բուրգիբայի քաղաքականության շարունակությունը, առավել ևս կրկնությունը: Կկարողանա՞ր արդյոք նոր պրեզիդենտը ցուցաբերել նոր մոտեցումներ և Թունիսի հասարակությանն առաջարկել քաղաքական նոր կուրս, որը լիներ համոզիչ և ընդունելի Թունիսի սոցիալական տարբեր խավերի համար: Այդ էր խնդիրը:

Զին ալ–Աբիդին Բին Ալին ծնվել է 1936 թ. Սուս քաղաքում: Նա ուներ դիվանագիտական աշխատանքի որոշ փորձ և զբաղեցրել էր Լե-

հաստանում Թունիսի արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնը: 1987 թ. հոկտեմբերին Բուրգիբան նրան նշանակեց վարչապետ և Բին Ալին զարմանալիորեն արագ հաջորդ ամիս կարողացավ հեռացնել Բուրգիբային պրեզիդենտի պաշտոնից և ինքը դառնալ Թունիսի պետության ղեկավարը:

Ներքին քաղաքականության ընդգավառում Բին Ալիի առջև կանգնեցին երեք կարևոր խնդիրներ: Առաջին՝ ամրապնդել նոր իշխանությունների դիրքերը երկրում և շահել Թունիսի տարբեր քաղաքական ուժերի վստահությունն ու աջակցությունը: Երկրորդ՝ հասնել լարվածության թուլացմանը հասարակության ներսում, որը նկատելիորեն աճել էր Բուրգիբայի պրեզիդենտության վերջին շրջանում, Երրորդ՝ կանխագծել նոր իշխանությունների ներքին քաղաքականության հիմնական ուղղությունները թունիսյան հասարակության քաղաքական և տնտեսական զարգացման ոլորտներում XX դարի ավարտական փուլում և XXI դարի սկզբներին:

Եվ պետք է ասել, որ Զին ալ–Աբիդին Բին Ալին ցուցաբերեց բավականին հնարամտություն, կամք և շրջահայացություն այդ ոչ դյուրին հիմնախնդիրները լուծելու գործում:

Բին Ալին հիմնականում պահպանեց պրեզիդենտի որպես պետության ղեկավարի բոլոր լիազորությունները և իրավունքները: Նա անցկացրեց պրեզիդենտի ընդհանուր ընտրություններ և հաղթանակ տանելով, ամրապնդեց իր դիրքերը որպես երկրի լեգիտիմ ղեկավար: Բին Ալին՝ վերընտրվեց 1994, ապա նաև 1999 թվականներին կայացած ընտրությունների ժամանակ: Դեռ ավելին՝ նա իր թեկնածությունն առաջադրեց նաև 2004 թ. կայացած պրեզիդենտական ընտրություններում, շահելով ընտրողների քվեների 94,5%–ը: Այսպիսով՝ նա որպես պրեզիդենտ մնալու է Թունիսի պետության ղեկավարի պաշտոնում առնվազն մինչև 2009 թ., այսինքն՝ ընդհանուր առմամբ, 22 տարի: Այդ վերջին ընտրությունների ժամանակ նա ուներ ընդդիմություն, և ընտրություններն անցան մրցակցության պայմաններում: Նրա մրցակիցներից ժողովրդական միասնության կուսակցության առաջնորդ Մուհամմադ Բուչիհան ստացավ քվերակության մասնակիցների ձայների 3,8%–ը, իսկ «Նորացում» շարժման ղեկավար Մուհամմադ Ալի Հալվանին՝ 1%–ը: Թունիսի ժողովրդավարական առաջադիմական կուսակցությունը նույնպես մասնակցում էր պրեզիդենտական ընտրությունների արշավին, սակայն ընտրություններից երկու օր առաջ դուրս եկավ հետագա

պայքարից՝ հայտարարելով, որ «իր մասնակցությունը միայն կօրինականացնի դեմոկրատիայի այս մասկարադը»:

Պահպանվեցին պրեզիդենտի լիազորությունները Թունիսի կառավարություն կազմելու հարցում: Նա է նշանակում վարչապետին և կաբինետը: Սակայն Բին Ալին, ի տարբերություն Հաբիբ Բուրգիբայի, չստանձնեց վարչապետի պաշտոնը և դա չհամատեղեց պրեզիդենտի պաշտոնի հետ, որը նրան գործողությունների և մանևրելու ավելի մեծ ազատություն է տալիս, մի կողմից, և իշխանության ճյուղերի բաժանման հարցում հետևում է ավելի դեմոկրատական սկզբունքների, քան իր նախորդը, մյուս կողմից: 1999 թ. նոյեմբերի 17–ից Թունիսի վարչապետի պաշտոնը զբաղեցնում է Մուհամմադ Ղանուչին:

Բին Ալիի պրեզիդենտության շրջանում ամբողջությամբ պահպանվեցին օրենսդիր բարձրագույն մարմնի՝ Դեպուտատների պալատի լիազորությունները այնպես, ինչպես դրանք ամրագրված են սահմանադրության մեջ: Այն կառուցվածքային փոփոխության չենթարկվեց և պահպանվեց որպես միպալատանի պառլամենտ: Սակայն փոփոխության ենթարկվեց թվական կազմի առումով: Բուրգիբայի պրեզիդենտության շրջանում Դեպուտատների պալատը կազմված էր 90 դեպուտատներից: Բին Ալին, ցանկանալով ավելի լայն խավեր ընդգրկել պառլամենտում և ընդլայնել իր սոցիալական հենարանը, մեծացրեց նրա թվաքանակը: 1999 թ. ընտրությունների ժամանակ պառլամենտի կազմը հասցվեց 182, իսկ վերջին՝ 2004 թ. հոկտեմբերի 24–ի ընտրությունների ժամանակ՝ 189 դեպուտատի:

Նա փոփոխություններ մտցրեց նաև կառավարող Սոցիալիստական դուստուրական կուսակցության ծրագրում և գործունեության մեջ: 1988 թ. փոխվեց կուսակցության անունը: Այն վերանվանվեց «Դեմոկրատական սահմանադրական միավորում» կուսակցության՝ ԴՍՄԿ: Ինչպես դժվար չէ նկատել, կուսակցության անվանումից հանվել էր «սոցիալիստական» բառը, և դա բնավ էլ ձևական բնույթ չէր կրում: Դա վկայում էր այն մասին, որ նոր ժամանակներ էին եկել, և Թունիսի ղեկավարության համար սոցիալիզմի կամ սոցիալիստական գաղափարների, թեկուզ և նրանց թունիսյան տարբերակով կամ ընկալումներով, ժամանակներն արդեն անցել էին, և նա հասարակական զարգացումների հարցում հետևելու էր այլ մոդելի:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ Զին ալ–Աբիդին Բին Ալին կարողացավ հաջողությամբ լուծել նոր իշխանությունների դիրքերի ամրապնդ-

ման խնդիրը, որի վկայությունն է նաև այն, որ նա արդեն մոտ 20 տարի է՝ իր ձեռքում է պահում Թունիսի կառավարման ղեկը:

Բին Ալիի և նրա իշխանության կարևորագույն խնդիրներից էր, ինչպես նշվեց, Թունիսի ներքաղաքական կայունության ամրապնդումը, որը խախտվել էր Բուրգիբայի պրեզիդենտության վերջին տարիներին, երբ խիստ մեծացել էր լարվածությունը հասարակության ներսում, զգալիորեն սահմանափակվել էին ազատությունները, մասնավորապես կուսակցությունների գործունեությունը: Որդեգրելով իրավական պետություն ստեղծելու քաղաքականություն՝ Թունիսի իշխանությունները մի շարք բարեփոխումներ կիրառեցին հասարակական ոլորտում՝ անցում կատարելով Բուրգիբայի անձնիշխանական վարչակազմից դեպի կառավարման ավելի դեմոկրատական մեթոդները:

Թունիսում խոսքից գործի անցան բազմակուսակցական համակարգ ստեղծելու հարցում: Կուսակցությունները ստացան լեգալ, ազատ գործելու իրավունքներ: Բոլոր քաղաքական արգելքները վերացվեցին և նրանք լայն քաղաքական գործունեություն ծավալեցին ոչ միայն մայրաքաղաքում, այլև նահանգներում:

Սակայն կուսակցությունների հարցում պահպանվեց մի կարևոր սահմանափակում: Օրենքն արգելում է ստեղծել քաղաքական կուսակցություններ ռասայական, կրոնական և էթնիկական սկզբունքների հիման վրա: Նման սահմանափակումը ծառայում է ժողովրդավարական սկզբունքների ամրապնդմանը և ուղղված է կրոնական կամ ռասայական հողի վրա մրցակցություն և պայքար ծավալելու դեմ, որի անմիջական արդյունքը կարող է լինել հատվածայնության, հասարակության պառակտման և ներքին լարվածության ոչ միայն պահպանումը, այլև խորացումը:

Թունիսում հաստատվեց իսկապես բազմակուսակցական համակարգ և վերջ տրվեց նախկին Սոցիալիստական դուստուրական կուսակցության մենաշնորհին:

Բացի «Դեմոկրատական սահմանադրական միավորում» կուսակցությունից, Թունիսում գործում են ևս վեց կուսակցություններ՝ «Սոցիալ–դեմոկրատների շարժումը», «Ժողովրդական միավորում» կուսակցությունը, ժողովրդավարական առաջադիմական կուսակցությունը և այլն: Դրանց մեջ ամենամեծը և ազդեցիկը շարունակում է մնալ «Դեմոկրատական սահմանադրական միավորում» կուսակցությունը, որը հանդիսանում է պրեզիդենտական կուսակցությունը և Բին Ալիի կարևոր քաղաքական հենարանը: Շարունակելով Թունիսում բազմակուսակցա-

կան համակարգ հաստատելու իր քաղաքականությունը՝ Բին Ալին 1993 թ. նոյեմբերին հայտարարեց, որ լեգալ՝ օրինական ընդդիմությունը կարող է մասնակցել պառլամենտի՝ Դեմոկրատական պալատի ընտրություններին և աշխատանքներին:

Թունիսում քաղաքական լարվածությունը թուլացնելու գործում կարևոր նշանակություն ունեցավ մամուլի ազատության հաստատումը, որի արդյունքում կուսակցությունները, կազմակերպությունները և անհատ անձինք սկսեցին թերթեր և ամսագրեր հրատարակել: Բանտերից ազատ արձակվեցին քաղաքական բանտարկյալները, իսկ քաղաքական վտարանդիները և աքսորյալներն իրավունք ստացան վերադառնալ Թունիս: Այս բոլորը զգալիորեն նպաստեց քաղաքական մթնոլորտի առողջացմանը և քաղաքական կյանքի աշխուժացմանը: Դա, անշուշտ, պետք է համարել հետբուրգիբյան ժամանակաշրջանի Թունիսի վարչակարգի կարևոր նվաճումներից մեկը:

Իհարկե, սխալ կլիներ կարծել, թե Թունիսում իդիլիա է տիրում, չկան պրոբլեմներ, սահմանափակումներ կամ դժգոհություն: Մարդու իրավունքների կազմակերպություններն իրենց հաղորդումներում մատնացույց են անում հատկապես այն հանգամանքը, որ իշխանությունները չեն հանդուրժում այլախոհությունը, քննադատությունը իշխանությունների և նրանց քաղաքականության հասցեին, ոտնահարում են մարդու իրավունքների համար պայքարող ակտիվիստների իրավունքները և այլն:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ընդդիմությունը քննադատության ենթարկեց Բին Ալիին այն բանի համար, որ նա 2002 թ. չորրորդ անգամ անընդմեջ դրեց իր թեկնածությունը պրեզիդենտի պաշտոնի համար՝ խախտելով անընդմեջ միայն 3 անգամ ընտրվելու՝ սահմանադրությամբ հաստատված իրավունքը: Քննադատության է ենթարկվում, այդ թվում և արտասահմանյան մամուլի ու զանազան կազմակերպությունների կողմից, նաև այն հանգամանքը, որ նախորդ բոլոր պառլամենտական ընտրություններում միևնույն «99,9%» համամասնությամբ հաղթանակ է տարել պրեզիդենտական կուսակցությունը:

Բին Ալիի առջև կանգնած ամենաբարդ և վտանգավոր խնդիրներից մեկը պայքարն է իսլամական ֆունդամենտալիզմի և ծայրահեղականության դեմ: Իսլամական էքստրեմիզմը լայն տարածում գտավ իսլամական բոլոր երկրներում անցյալ դարի 70–90–ական թվականներից, մանավանդ 1979 թ. Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունից հետո: Բոլոր երկրներում, որտեղ բնակչության մեծամաս-

նությունը մուսուլմաններն են, աշխուժացան զանազան իսլամական կազմակերպությունները՝ նպատակ ունենալով տապալել գոյություն ունեցող վարչակարգերը և հաստատել իսլամական ֆունդամենտալ սկզբունքների վրա խարսխված հասարակարգ ու կրոնապետություն: Այդ ալիքը տարածվեց նաև Թունիսում, թեև ոչ այնպիսի ծավալներով ու ձևերով, ինչպես հարևան Ալժիրում և մի շարք այլ երկրներում:

Այդ շարժումը սկսվել էր դեռևս Հաբիբ Բուրգիբայի պրեզիդենտության շրջանում, բայց ավելի մեծ թափ առավ և վտանգավոր բնույթ կրեց Բին Ալիի պրեզիդենտության շրջանում, հատկապես 1990–ական թվականներին:

Այդ շարժման առաջատար ուժը «Իսլամական նահդա» («Իսլամական զարթոնք կամ վերածնունդ») կուսակցությունն էր, որի ժողովրականությունը բավականին ուժեղացել էր 90–ական թվականներին: Թունիսի կառավարությունը, համաձայն կուսակցությունների վերաբերյալ գոյություն ունեցող օրենքի, պաշտոնապես չէր արտոնել այդ կուսակցությունը, քանի որ այն խարսխված է կրոնական սկզբունքների վրա: Բայց դա չէր խանգարում նրան իր գործունեությունը ծավալել և ստվարացնել իր շարքերը հավատացյալ, բայց քաղաքականապես միամիտ և մոլորյալ թունիսցիների հաշվին:

Դրությունը հատկապես շիկացավ և վտանգավոր ընթացք ընդունեց 1991 թ. մայիս–օգոստոս ամիսներին, երբ «Իսլամական նահդան» պետական հեղաշրջման փորձ կատարեց Թունիսում՝ ցանկանալով տապալել Զին ալ–Աբիդին Բին Ալիի վարչակարգը: Նա փորձեց ժողովրդին դուրս բերել իշխանությունների դեմ, հրահրեց անկարգություններ, ընդհարումներ և բախումներ բանակի և ոստիկանության հետ: Սակայն կառավարությունը գործեց շատ եռանդուն և կարողացավ ծախողել իշխանությունը գրավելու «Իսլամական նահդայի» փորձերը: Ձերբակալվեցին նրա ղեկավարները և 300 անդամներ՝ իսլամական ֆունդամենտալիստներ, որոնք դատապարտվեցին երկարաժամկետ բանտարկության: Իսկ 1992 թ., հունվարին երկրից արտաքսվեցին մոտ 30 ակնառու ֆունդամենտալիստներ:

Դրա հետ միասին Բին Ալին դիմեց մի քայլի, որը Լ. Վասիլևը համարում է «պետական իմաստության դրսևորում»: Նա ուխտագնացություն՝ հաջ կատարեց Մեքքա՝ ցանկանալով ցույց տալ, որ ինքը, դեմ լինելով ֆունդամենտալ իսլամին, կողմ է Թունիսում չափավորական իսլամի գոյությանը:

Համենայն դեպս, ֆունդամենտալ իսլամը հետագա տարածում և զարգացում չկարողացավ ստանալ և ամրապնդել իր դիրքերը Թունիսում:

Ահա այս բոլոր քայլերի շնորհիվ Թունիսում հաստատվեց քաղաքական համեմատաբար հանգիստ իրադրություն, առանց ծայրահեղությունների, բախումների կամ քաղաքական, կրոնական և միջէթնիկական ընդհարումների:

3. Հայեցակարգային փոփոխություններ սոցիալ–տնտեսական ոլորտում

1987 թվականից սկսվում են կարևոր փոփոխություններ և տեղաշարժեր Թունիսի սոցիալ–տնտեսական ոլորտում, որոնք կապված էին հայեցակարգային նոր մոտեցումների հետ: Նոր իշխանությունները հեռացան նախորդ շրջանի գաղափարական հիմնադրույթներից, որոնք խարսխված էին դուստուրական սոցիալիզմի սկզբունքների վրա: Ինչպես արդեն նշվել է, 1988 թ. Սոցիալիստական դուստուրական կուսակցության անվանումից հանվեց «սոցիալիստական» եզրը, և այն որդեգրեց նոր անվանում, որտեղ բացակայում էր այդ եզրը: Դա առանձին վերցված երևույթ չէր: Չպետք է մոռանալ, որ Սոցիալիստական դուստուրական կուսակցությունը կառավարող կամ պրեզիդենտական կուսակցություն էր, որը պաշտոնապես հրաժարվում էր թունիսյան դուստուրական սոցիալիզմից: Բնականաբար, այդ ազդանշանին հետևեցին նաև մյուս ոլորտներում, այդ թվում և տնտեսական, ու շուտով Թունիսում հրաժեշտ տվեցին դուստուրական սոցիալիստական գաղափարներին՝ դրանք հանձնելով պատմությանը արխիվը:

Թունիսի տնտեսության զարգացման գերակա ուղին հայտարարվեց սեփականաշնորհումը և տնտեսության լիակատար ազատականացումը: Նախկին պետական ձեռնարկությունները և նրանց վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, արտադրական և առևտրական միավորումները ապապետականացվեցին և սեփականաշնորհվեցին ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ձեռներեցների կողմից: Տնտեսական այդ նոր գործընթացը մեծ թափ և լայն ծավալ ստացավ 1990–ական թվականներին և 2000–ականների սկզբներին: Ընդունվեցին մի շարք օրենքներ և որոշումներ, որոնք կոչված էին նպաստավոր պայմաններ ստեղծել Թունիսի տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի ներհոսքի համար, բարեփոխումներ տեղի ունեցան հարկերի

բնագավառում, վերացվեցին արգելքները և սահմանափակումները առևտրի ոլորտում: Դրական արդյունքներն իրենց շատ սպասեցնել չտվեցին: Նկատելի դարձան տնտեսական վերելքը և բնակչության կենսամակարդակի շոշափելի բարձրացումը: Համախառն ներքին արդյունքը 2001 թ. տվյալներով կազմեց 70 մլրդ 88 մլն, իսկ ըստ շնչի՝ 2062 ԱՄՆ դոլար: Խիստ կրճատվեց սղաճը: Եթե 1991 թ. սղաճը կազմում էր տարեկան 8%–ից ավելի, ապա 2001 թ. այն կազմում էր ընդամենը 1,9%:

Լուրջ քայլեր կատարվեցին վարչական ապարատի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ և առևտրական դեֆիցիտը կրճատելու գործում:

Թունիսի համար սկզբունքային կարևոր նշանակություն ունեցավ համագործակցության հաստատումը Եվրամիության հետ: 1998 թ. մարտին Թունիսի և Եվրամիության միջև կնքվեց այսպես կոչված Ասոցիացիայի համաձայնագիր (Association Agreement), որով Թունիսը արտոնյալ և շահավետ հիմունքներով առևտրատնտեսական համագործակցություն էր հաստատում ԵՄ–ի հետ: Այդ համաձայնագիրը լայն հեռանկարներ է բացում ԵՄ–ի հետ ազատ առևտրի զարգացման և Թունիսի տնտեսության մեջ եվրոպական կապիտալ ներդրումների աճի համար: Այդ համաձայնագրի ստորագրումից հետո արդեն 2000–ականների սկզբներին թունիսյան մի շարք ապրանքներ հայտնվեցին ԵՄ երկրների շուկաներում:

Թունիսի իշխանությունների այս նոր քաղաքականությունը և նրա նոր հայեցակարգային ուղղվածությունը դրականորեն գնահատվեցին Համաշխարհային բանկի և Միջազգային արժութային ֆոնդի կողմից, որոնք ամեն կերպ քաջալերում են այդ բնույթի բարեփոխումները Թունիսում և օժանդակում նրան մի շարք տնտեսական ծրագրերի իրականացման բնագավառում: 1999 թ. մարտին Համաշխարհային բանկը և Միջազգային արժութային ֆոնդը 400 մլն ԱՄՆ դոլարի վարկ տրամադրեցին Թունիսին սեփականաշնորհումը շարունակելու, տնտեսության ազատականացումը խորացնելու և նոր տնտեսական ծրագրերն իրականացնելու համար:

Թունիսի աշխատուժը կազմում է մոտ 3 մլն մարդ, որոնց 55%–ը զբաղված է սպասարկությունների, 23%–ը՝ արդյունաբերության և 22%–ը՝ գյուղատնտեսության բնագավառում: Դեռևս բարձր է գործազրկությունը: 2004 թ. տվյալներով այն կազմում է 13,8%: Իսկ աղքատության սահմանագծից ներքև, ըստ 2001 թ. տվյալների, գտնվում է բնակչության 7,6%–ը:

Այս թվերը խոսում են այն մասին, որ չնայած Թունիսի տնտեսական զարգացմանը և այն հանգամանքին, որ տարեցտարի աճում է համախառն ներքին արդյունքը, Թունիսը դեռևս ունի լուրջ սոցիալ–տնտեսական խնդիրներ, որոնց լուծման համար նա դեռևս երկար ճանապարհ ունի անցնելու:

4. Արտաքին հարաբերությունները

Թունիսը անկախության նվաճումից ի վեր վարում է հավասարակշռված քաղաքականություն, ի հարկին գրավում չեզոք դիրք և ավելի հակված է չափավոր դիրքորոշումների միջազգային բարդ խնդիրների հանդեպ՝ խուսափելով ծայրահեղություններից և բլոկներին հարելու քաղաքականությունից: Այդ քաղաքականությանը հետևելն ավելի հեշտացավ 1990–ական թվականների սկզբներից, երբ վերացան Խորհրդային Միությունը, սոցիալիստական երկրների համագործակցությունը և Վարշավայի պայմանագրի ռազմական կազմակերպությունը, ավարտվեց սառը պատերազմը, և աշխարհը դարձավ միաբևեռ: Նոր պայմաններում վերացավ երկու հակադիր ռազմաքաղաքական բլոկների միջև ընտրություն կատարելու անհրաժեշտությունը:

Թունիսն անդամ է զանազան միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ՄԱԿ–ի, Արաբական պետությունների լիգայի, Աֆրիկյան միասնության կազմակերպության, Իսլամական կոնֆերանս կազմակերպության, պարտնյորական հարաբերություններ է հաստատել Եվրոպայի Անվտանգության և համագործակցության կազմակերպության հետ և այլն:

Նրա համար շատ կարևոր են հարաբերությունները արաբական երկրների հետ: Երբ արաբական երկրները խզեցին կապերը Եգիպտոսի հետ՝ նրա պրեզիդենտ Անվար Սադաթի կողմից Իսրայելի հետ 1979 թ. անջատ հաշտության պայմանագիր կնքելու պատճառով, ապա Թունիսը նույնպես խզեց հարաբերությունները Եգիպտոսի հետ և համաձայնվեց, որ Արաբական պետությունների լիգայի շտաբ–կայանը Կահիրեից տեղափոխվի Թունիս՝ նրա գործունեության համար ստեղծելով բոլոր համապատասխան պայմանները: Եվ միայն 1990 թ. հոկտեմբերին, երբ արաբական երկրները, այդ թվում՝ Թունիսը, վերականգնեցին դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի հետ, Արաբական պետությունների լիգայի շտաբ–կայանը վերադարձավ Կահիրե:

Թունիսն իր հյուրընկալ դռները բացեց նաև Պաղեստինի ազատագրության կազմակերպության ղեկավար մարմինների և գործիչների առջև, երբ վերջիններս 1982 թ. հարկադրված էին հեռանալ Լիբանանից: Թունիսը մշտապես կողմ է եղել արաբա–պաղեստինյան կոնֆլիկտի խաղաղ կարգավորմանը: Նա ակտիվորեն մասնակցել է Մերձավոր Արևելքի կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով լուծելու Մադրիդյան կոնֆերանսին և դրան հաջորդած գործընթացներին, որոնք սկսվեցին 1990–ականների սկզբներին:

Թունիսը առանձնահատուկ նշանակություն է տալիս իր հարաբերություններին Հյուսիսային Աֆրիկայի երկրների, մանավանդ իր հարևանների հետ: Նրանց ղեկավարները հաճախ են հանդիպում և քննարկում սահմանային հարցերը, ընդհանուր համաարաբական քաղաքական զարգացումների և տնտեսական համագործակցության խնդիրները: Նման հարցերի թվում էր համատեղ պայքարը իսլամական ֆունդամենտալիզմի և էքստրեմիզմի դեմ, որը հատկապես վտանգավոր բնույթ էր կրում Ալժիրում և Եգիպտոսում: 1993 թ. տեղի ունեցավ Բին Ալիի հանդիպումը Եգիպտոսի և Ալժիրի պրեզիդենտների հետ, որի ընթացքում արաբական երեք երկրների ղեկավարները մշակեցին իսլամական ծայրահեղականության դեմ պայքարի համատեղ ձևեր և մեթոդներ:

Թունիսին և Մաղրիբի մյուս երկրներին մշտապես հետաքրքրել է նրանց քաղաքական և տնտեսական միասնության հարցը: Այդ ուղղությամբ առաջ են քաշվել տարբեր ծրագրեր և առաջարկություններ, սակայն միշտ չէ, որ դրանք հնարավոր է եղել կյանքի կոչել: Դրանց մեջ բացառություն է կազմում Արաբական Մաղրիբի Միասնության (ԱՄՄ) կազմակերպությունը, որի ստեղծման գործում Մարոկկոյի հետ միասին առաջատար դերը պատկանում է Թունիսին: Այդ կազմակերպության անդամներ են նաև Ալժիրը, Լիբիան և Մավրիտանիան: ԱՄՄ–ն, որի գործունեության մեջ 2000–ականներին նկատվում է որոշակի աշխուժացում, նպատակ ունի համատեղել Հյուսիսային Աֆրիկայի այդ հինգ երկրների քաղաքական և տնտեսական ջանքերը նրանց առջև կանգնած խնդիրները լուծելու համար:

Իհարկե, չպետք է կարծել, թե Թունիսի հարաբերությունները արաբական երկրների հետ մշտապես հարթ են ընթանում: Երբեմն–երբեմն զանազան խնդիրներ են ծագում մի կողմից՝ Թունիսի, իսկ մյուս կողմից՝ Եգիպտոսի, Լիբիայի կամ Ալժիրի միջև, բայց միշտ հաջողվում է դրանք կարգավորել և կանխել հակասությունների վերածումը վտան-

գավոր հակամարտության: Դրանում մեծ է Թունիսի դերը, որը արտաքին հարաբերությունների ոլորտում մշտապես հետևում է հանդուրժողականության՝ տոլերանտության սկզբունքներին:

XXI դարի սկզբներին բավականին ակտիվացան Թունիսի տարաբնույթ հարաբերություններն արևմտյան երկրների, մասնավորապես Ֆրանսիայի, Գերմանիայի, ԱՄՆ–ի, Իտալիայի, Հունաստանի հետ: Թունիսը նշանակալի դերակատարում ունի Աֆրիկյան մայրցամաքում, ինչպես երկկողմանի հարաբերությունների, այնպես էլ Աֆրիկյան Միասնության կազմակերպության շրջանակներում: Նա սիրահոժոր կերպով մասնակցում է խաղաղապահ գործընթացներին, ինչպես Կամբոջայում, Նամիբիայում, Բուրունդիում, Ռուանդայում և այլ երկրներում՝ նպաստելով ազգամիջյան և ցեղամիջյան բախումների կանխմանը և խաղաղության հաստատմանը:

Թունիսը 1991 թ. դեկտեմբերի 26–ին ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, որից հետո դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին երկու երկրների միջև: Հայաստանի և Թունիսի միջև հաստատվել են բարեկամական հարաբերություններ, որոնք նպաստում են տնտեսական համագործակցությանը և գիտական ու մշակութային շփումներին: Այդ առումով պետք է նշել Հայաստանի Հանրապետության վարչապետի այցը Թունիս 2005 թ., որտեղ նա մասնակցեց գիտական ինֆորմացիոն տեխնոլոգիաներին նվիրված միջազգային ֆորումին, հանդիպումներ ունեցավ Թունիսի պետական գործիչների հետ:

Գլուխ ութերորդ

ԻՐԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՔ

ԱԼ–ՋՈՒՄՀՈՒՐԻՅԱ ԱԼ–ԻՐԱՔԻՅԱ
ԱԼ-ԻՐԱՔ

Աշխարհագրական դիրքը — գտնվում է Մերձավոր Արևելքում

Սահմանները — սահմանակից է Իրանին, Հորդանանին, Քուվեյթին, Սաուդյան Արաբիային, Սիրիային, Թուրքիային

Տարածքը — 437072 քառ. կմ

Բնակչությունը — 26 մլն 75 հազար

Ազգային կազմը — արաբներ՝ 75–80%, քրդեր՝ 15–20%, թուրքմեններ, ասիրիացիներ, հայեր, պարսիկներ և այլք՝ 5%

Մայրաքաղաքը — Բաղդադ (մոտ 6 մլն), մյուս խոշոր քաղաքներն են՝ Բասրա (մոտ 1 մլն 100 հազ.) և Մոսուլ (մոտ 1 մլն 120 հազ.)

Պետական կրոնը — իսլամ. դավանում է բնակչության 97%–ը, որից շիա՝ 65%, սուննի՝ 32%, քրիստոնյա՝ 3%

Պաշտոնական լեզուն — արաբերեն՝ պաշտոնական, քրդերեն՝ պաշտոնական քրդական շրջաններում՝ արաբերենի հետ միասին՝ ասորերեն և հայերեն

Պետական կարգը — պառլամենտական հանրապետություն[16]:

Պետության բարձրագույն մարմինը — Հեղափոխական հրամանատարության խորհուրդը

Գործադիր իշխանությունը — պատկանում է պրեզիդենտին, որը պետության ղեկավարն է

Օրենսդիր իշխանությունը — միպալատանի Ազգային խորհուրդ: Օրենսդիր իշխանությամբ են օժտված նաև Հեղափոխական հրամանատարության խորհուրդը և պրեզիդենտը

Վարչական բաժանումը — 18 մուհաֆազներ

16 Պետական կառուցվածքը վերաբերում է մինչև 2003 թ. ապրիլ ամիսը, երբ ԱՄՆ–ի գլխավորած կոալիցիոն ուժերը ներխուժեցին Իրաք և հաստատվեցին պետական կառավարման ժամանակավոր մարմիններ:

ԹՈՒՐՔԻԱ
ԻՐԱՔ
ԻՐԱՔ

Ազգային տոնը — 17-ը հուլիսի՝ Հանրապետության ազգային և 1968 թ. հեղափոխության օրը

Ազգային դրամ — Իրաքի դինար

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ըստ շնչի — 2100 ԱՄՆ դոլար (2004 թ.)

Բնական հարստությունները — նավթ, գազ, ֆոսֆատներ և սուլֆատներ

Արդյունաբերությունը — նավթարդյունաբերություն, քիմիական, տեքստիլ, շինարարական, սննդի, պարարտանյութերի արտադրության և մետաղամշակման արդյունաբերություն

Գյուղատնտեսությունը — ցորեն, գարի, բրինձ, բանջարեղեն, արմավ, բամբակ, անասնապահություն

I. ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԿՈՒՊԱՑԻՈՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԻՐԱՔՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊԱՑՔԱՐԻ ՍԿԻԶԲԸ (1918–1920 թթ.)

1. Օսմանյան տիրապետության վերացումը և անգլիական քաղաքացիական վարչակարգի հաստատումը Իրաքում

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում՝ 1914–1918 թթ., բրիտանական զորքերին հաջողվեց պարտության մատնել օսմանյան բանակին և թուրքական տիրապետությունից ազատել Իրաքը[17]:

Հենվելով 1916 թ. Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կնքված «Սայքս–Պիկոյի համաձայնագրի» վրա, որն Անգլիային իրավունք էր վերապահում Միջագետքում՝ Իրաքում, հաստատել այնպիսի կառավարություն և կառավարման համակարգ, որպիսին ինքը նպատակահարմար կգտներ, Անգլիան հաստատեց կառավարման մի յուրօրինակ համակարգ, որն այլ կերպ, քան գաղութային, չի կարելի համարել:

Երբ 1917 թ. մարտի 11–ին անգլիական զորքերը գրավեցին Բաղդադը, մոտ մեկ շաբաթ անց՝ 1917 թ. մարտի 19–ին, Միջագետքում անգլիական զորքերի հրամանատար գեներալ Մոդը կոչով դիմեց բաղդադցիներին և ամբողջ իրաքյան ժողովրդին և հայտարարեց նրանց, որ անգլիացիները մտել են Դար աս–Սալամ, այսինքն՝ Բաղդադ, ոչ թե որպես նվաճողներ կամ թշնամիներ, այլ ազատարարներ՝ ընդգծելով, որ «անգլիական կառավարությունը ձեզ չի պարտադրելու օտարերկրյա կարգեր: Նրա միակ ցանկությունն է իրականացնել այն, ինչին որ ձգտում են ձեր փիլիսոփաները և գրողները... Անգլիան և նրա դաշնակիցները կապահովեն արաբական ազգի նոր վերածնունդը, նրանք հարություն կտան նրա վեհությանն ու փառքին»:

17 Այդ մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության երկրորդ հատորում:

Իրականում տեղի ունեցավ ճիշտ հակառակը: Անգլիան ամեն կերպ ձգտում էր Միջագետքում հաստատել իր տիրապետությունը: Անգլիական կառավարության գաղտնի հրահանգներում, որ պարբերաբար ուղարկվում էին Միջագետք նրա ներկայացուցիչներին մշտապես ընդգծվում էր այն միտքը, որ Միջագետքը պետք է մնա բրիտանական տիրապետության տակ և չպետք է պատկանի որևէ այլ պետության: Այսպես, օրինակ՝ անգլիական կառավարությունը 1917 թ. մարտի 29–ին գեներալ Մոդին ուղարկված հատուկ հրահանգում նրան կարգադրում էր, որ «Բասրան պետք է մշտապես մնա բրիտանական կառավարման ներքո... Բաղդադում կարելի է ստեղծել արաբական պետություն տեղական կառավարությունով, որն ամեն բանում, բացի իր անվանումից, պետք է գտնվի բրիտանական պրոտեկտորատի տակ: Նա, հասկանալի է, չպետք է հարաբերություններ ունենա արտասահմանյան երկրների հետ»: 1918 թ. նոյեմբերին անգլիական կառավարությունը կրկին հրահանգում է մահացած գեներալ Մոդի փոխարեն Իրաքում բրիտանական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Մարշալին հետևյալի մասին. «Ձեր ուժերի առաջնահերթ խնդիրն է բրիտանական ազդեցության հաստատումը և պահպանումը Բաղդադի վիլայաթում»: Եվ Իրաքում բրիտանական պաշտոնական քաղաքական և ռազմական գործիչներն աշխատում էին Լոնդոնից ստացված խիստ հրահանգների ու հրամանների համաձայն, իրենք էլ իրենց հերթին ներկայացնում համանման առաջարկություններ կամ ծրագրեր: Դրա փայլուն վկայությունն է հանդիսանում Իրաքի ապագա կառուցվածքի վերաբերյալ Իրաքում Մեծ Բրիտանիայի քաղաքացիական կոմիսար Առնոլդ Վիլսոնի՝ անգլիական կառավարությանն ուղղված ծրագիրը: Նա կտրուկ դեմ էր Իրաքում անկախ պետություն ստեղծելու գաղափարին՝ համոզված լինելով, որ դա միայն քաոս կառաջացնի: Նրա կարծիքով՝ Իրաքը պետք է լիներ բրիտանական պրոտեկտորատ, որը կարող էր «ժամանակի ընթացքում դառնալ արաբական պետություն՝ բրիտանական գահի դոմինիոնի կարգավիճակով»: Մի անգամ ևս նշելով անկախ Իրաքի ստեղծման աննպատակահարմարությունը՝ Առնոլդ Վիլսոնը գրում է. «Ես հավատացած եմ, որ այս օրերին անհնար է թուրքական կայսրության փլատակների վրա ստեղծել նոր սուվերեն մուսուլմանական պետություն: Իրաքը դարերի ընթացքում գտնվել է թուրքերի ուղղակի կառավարման ներքո, և նա չպետք է ձգտի ինքնուրույնության, քանի որ շտապողականությունն այդ գործում կվնասի Իրաքին և կարող է հասցնել ոչ հաճելի հետևանքների»:

Իրաքում բրիտանական քաղաքականությունը հասկանալու առումով հետաքրքիր է նաև Գերտրուդա Բելի՝ Արաբական Արևելքում բրիտանական գաղութային քաղաքականության մշակողներից և իրագործողներից մեկի տեսակետը: Նա գտնում էր, որ Մեծ Բրիտանիան ոչ մի կերպ չի կարող հեռանալ Միջագետքից, քանի որ դա կնշանակեր վերանայել ամբողջ բրիտանական քաղաքականությունն Ասիայում: «Եթե մենք կորցնենք Միջագետքը, ապա մենք անխուսափելիորեն կկորցնենք Պարսկաստանը, իսկ ապա նաև Հնդկաստանը»,— գրում էր նա:

Այս տեսակետներին և դրույթներին համապատասխան՝ Իրաքում անգլիացիները հաստատեցին կառավարման մի համակարգ, որն ամբողջապես համապատասխանում էր նրանց կայսերական շահերին:

Իրաքում մտցվեց ոչ թե արաբական ազգային, այլ բրիտանական քաղաքացիական իշխանություն՝ քաղաքացիական ադմինիստրացիա՝ վարչակարգ, որի գլուխ էր կանգնած քաղաքացիական կոմիսարը: Մինչ այդ Իրաքում բրիտանական գլխավոր ներկայացուցիչը կոչվում էր գլխավոր քաղաքական կոմիսար, սակայն 1917 թ. հուլիսին նա վերանվանվեց քաղաքացիական կոմիսարի, իսկ հետո՝ գլխավոր կոմիսարի:

Իրաքում առաջին քաղաքացիական կոմիսար դարձավ Պերսի Կոքսը, որին 1918 թ. մայիսին փոխարինեց նրա տեղակալ Առնոլդ Վիլսոնը: Նա այդ պաշտոնը վարեց 30 ամիս: Քաղաքացիական կոմիսարի ձեռքում էր կենտրոնացված ամբողջ իշխանությունը: Նա ուներ իր շտաբը և քարտուղարությունը, որը բաղկացած էր եկամուտների, ֆինանսների, առողջապահության, հասարակական աշխատանքների և դատական գործերի բաժիններից: Տեղերում նշանակվեցին այսպես կոչված քաղաքական սպաներ, որոնք, հեռացնելով տեղացի պաշտոնյաներին իրենց զբաղեցրած պաշտոններից, դարձան իրենց հանձնված շրջանների լիիշխան տնօրենները: Քաղաքական սպաներ նշանակվեցին Բաղդադում, Բասրայում, Բաքուբայում, Խանեկինում, Ազիզիյայում, Հիլում, Քարբալայում, Ռամադիյում, Սամավայում, իսկ հետագայում նաև այլ քաղաքներում ու շրջաններում, այդ թվում և քրդաբնակ վայրերում: Նրանց իրավասության տակ էին գտնվում բոլոր այն հարցերը, որոնք վերաբերում էին ցեղերին և ցեղային փոխհարաբերություններին, քաղաքական խնդիրներին, անվտանգությանը, հարկերի հավաքմանը, բանակի հետ փոխհարաբերություններին և այլն: Կառավարման այդ մարմիններում բոլոր կարևոր պաշտոնները զբաղեցնում էին անգլիացիները և հնդկացիները: Քաղաքացիական կոմիսարի վարչությունում 534

պաշտոնյաներից, որոնք զբաղեցնում էին պատասխանատու պաշտոններ, միայն 20–ն էին արաբներ: Տեղացիները կարող էին զբաղեցնել միայն երկրորդական և ցածր վարձատրվող պաշտոններ:

Անգլիական վարչակարգը շատ խիստ քաղաքականություն էր վարում հասարակական–քաղաքական և տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում: Արգելվեցին ազգային կազմակերպությունների գործունեությունը, ժողովրդական ելույթները, փակվեցին շատ թերթեր, հաստատվեց խիստ գրաքննություն:

Անգլիական կառավարության վարած գաղութային քաղաքականության հետևանքով խիստ վատացավ ժողովրդի վիճակը: Ստացվող եկամուտների և գանձվող հարկերի մեծ մասը ծախսվում էր անգլիական կառավարչության պահպանման վրա: Նախապատերազմյան շրջանի հետ համեմատած՝ երեք ու կես անգամ ավելացան հարկերը:

Գյուղական բնակչությանը մեծ հարված հասցրեցին քաղաքացիական վարչության կողմից ընդունված մի շարք օրենքներ, մասնավորապես 1918 թ. սեպտեմբերի 25–ի «Հողեր ձեռք բերելու մասին» օրենքը, որն ավելի շատ հողերի էքսպրոպրիացիայի բնույթ էր կրում: Կիրառվեց այսպես կոչված «ագրարային ռեֆորմ», ըստ որի անցկացվեց «հողային սեփականությանը վերաբերող փաստաթղթերի վերահաշվառում»: Դրանից շահեցին ցեղապետները և ֆեոդալական ավագանին, քանի որ անգլիացիները նրանց անունով ձնակերպեցին ցեղերին պատկանող հողերը, այդ թվում և համայնական հողերը: Իսկ ինչ վերաբերում է գյուղացիներին, որոնք չունեին համապատասխան փաստաթղթեր, ապա նրանք զրկվեցին իրենց հողակտորներից, որոնք անցան շեյխերին:

Խիստ կերպով աճեց նաև գործազրկությունը: Անգլիացիները հրաժարվում էին զորացրված իրաքցի սպաներին կենսաթոշակ նշանակել, որն առաջացրեց նրանց դժգոհությունը:

Իրաքում Անգլիայի գաղութատիրական քաղաքականությունը դրսևորվեց նաև ցեղամիջյան և ազգամիջյան թշնամանքներ հրահրելու մեջ:

Այդ բոլորի հետևանքով սրվեցին հարաբերությունները բնակչության և բրիտանական գաղութային իշխանությունների միջև, որն ալեկոծեց ամբողջ Իրաքը: Կուտակված դժգոհությունը 1918–1920 թթ. վերածվեց հակաբրիտանական ապստամբության, ազգային–ազատագրական շարժման:

Այսպիսով՝ Իրաքը թեև ազատագրվեց օսմանյան հետադիմական և բարբարոսական երկարամյա լծից և իրականացվեց իրաքցիների

երազանքը՝ տեսնել իրենց երկիրն ազատագրված թուրքական ատելի տիրապետությունից, բայց դա, տարաբախտաբար, չհանգեցրեց իսկապես ազատ ու անկախ Իրաքի ստեղծմանը

2. Ազգային–ազատագրական պայքարը Իրաքում 1918–1920 թթ.

Անգլիայի գաղութարարական քաղաքականությունն առաջ բերեց ժողովրդական զանգվածների և հակաիմպերիալիստական բոլոր ուժերի համառ դիմադրությունը, որոնք բարձրացրին ազգային–ազատագրական պայքարի դրոշը: Այդ պայքարում երկրի տարբեր սոցիալ–քաղաքական ուժեր տարբեր դիրքեր գրավեցին: Մի բևեռում համախմբվեցին ֆեոդալական–ցեղային ավագանին և կոմպրադորական բուրժուազիան, որոնք պաշտպանում էին անգլիական օկուպանտներին և դեմ էին հակաիմպերիալիստական պայքարին, իսկ մյուս բևեռում՝ գյուղացիները, բեդվինները, բանվորները, ազգային բուրժուազիան և ազգային մտավորականությունը, որոնք կողմ էին պայքարի, այդ թվում և զինված՝ հանուն Իրաքի անկախության:

Ազգային–ազատագրական շարժման սկզբնական փուլում քաղաքական ասպարեզում գործում էին երկու գաղտնի կազմակերպություններ կամ ընկերություններ: Առաջինը «Ալ–Ահդ ալ–Իրաքի» («Իրաքյան պատգամ») կազմակերպությունն էր, որը ձևավորվել էր 1918 թ.: Նա ներկայացնում էր գլխավորապես սունիի ֆեոդալների, ինչպես նաև կոմպրադորական բուրժուազիայի մի մասի շահերը: Նրա ղեկավարներն էին անգլիամետ կողմնորոշում ունեցող այնպիսի գործիչներ, ինչպես Նուրի Սաիդը, Ջամիլ Միդֆաին, Թաուֆիկ աս–Սուվեյդին, Մավլուդ Մուխլիսը, Իսմայիլ Նամիկը: Այդ կազմակերպությունը կապեր էր պահպանում Հաշիմյանների ընտանիքի, հատկապես Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմիի երկու որդիների՝ Ֆեյսալի և Աբդալլահի հետ: Կազմակերպության ծրագրում, որն ընդունվել էր 1919 թ., ազգային պայքարի վերելքի պայմաններում թեև խոսվում էր Իրաքի անկախության մասին, սակայն մատնանշվում էր, որ նրան կարելի է հասնել Անգլիայի օգնությամբ՝ նրա հետ սերտ դաշինք հաստատելով կամ ընդունելով բրիտանական պրոտեկտորատ: Այդ պատճառով էլ ալ–Ահդը կտրուկ դեմ էր զինված պայքարին և կողմնակից էր Անգլիայի հետ քաղաքական գործարքների:

Երկրորդ կազմակերպությունը կոչվում էր «Հարաս ալ–իսթիկլալ» («Անկախության պահապան»), որ ստեղծվել էր 1919 թ. փետրվարին

Բաղդադում: Նա արտահայտում էր իրաքյան երիտասարդ ազգային բուրժուազիայի, միջին խավերի, մանր առևտրականների, արհեստավորների և հայրենասիրաբար տրամադրված շեյխերի, ինչպես նաև որոշ չափով ժողովրդական զանգվածների շահերը: Կազմակերպությունը գլխավորում էին Ալի ալ–Բազիրկանը, Մուհամմադ Բակիր աշ–Շաբիբին, Ջալալ Բաբանը, Ջաֆար Աբու աթ–Թիմանը, Մուհամմադ աս–Սադրը և Արիֆ Հիքմաթը: «Հարաս ալ–իսթիկլալը» իր բնույթով ավելի արմատական էր և որպես գլխավոր ծրագրային պահանջ առաջադրում էր Իրաքի անկախության նվաճումը և սուվերեն արաբական պետության ստեղծումը: Նա այդ նպատակին ձգտում էր հասնել, ի հակադրություն «Ալ–Ահդ ալ–Իրաքի», ժողովրդական զանգվածների վրա հենվելով, նրանց շարժման մեջ դնելով և, ի հարկին, զինված պայքարի միջոցով:

1919 թ. գաղտնի քրդական կազմակերպություն էր ստեղծվել նաև Սուլեյմանիյայում: Նրա հիմնադիրներն էին քուրդ սպաները և քրդական ավագանու որոշ ներկայացուցիչներ: Այդ կազմակերպությունն իր գլխավոր խնդիրը համարում էր պայքարը Քրդստանի անկախության համար:

Առաջին հակաիմպերիալիստական ելույթները Իրաքում տեղի ունեցան 1917 թ. հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին, երբ իրաքցի հայրենասերները բախվեցին անգլիական օկուպանտների հետ Նաջաֆում, Կուֆում և Աբու Սուխեյրում: 1918 թ. մարտին ապստամբություն բռնկվեց Նաջաֆում: Ապստամբները սպանեցին Նաջաֆի անգլիացի կառավարիչ կապիտան Մարշալին: Ավելի քան 40 օր բնակչությունը հերոսաբար դիմադրում էր անգլիական զորքերին, որոնք պաշարել էին քաղաքը: Բայց, վերջիվերջո, ապստամբությունը ճնշվեց: Ապստամբներից 11 հոգի կախաղան բարձրացվեց, 5 հոգի ցմահ բանտարկության դատապարտվեց, իսկ 100 հոգի աքսորվեց:

Դժգոհությունը համակել էր ամբողջ երկիրը: Անգլիական ոստիկանությունը հաղորդում էր, որ յուրաքանչյուր կրթված իրաքցի անդամակցում էր որևէ գաղտնի կազմակերպության, որի նպատակը բրիտանական տիրապետության տապալումը և արաբական անկախ պետության ստեղծումն էր: Կատաղած անգլիական իշխանություններն ուժեղացրին ճնշումը՝ կանգ չառնելով անգամ ահաբեկչության առջև: Առնոլդ Վիլսոնի կարգադրությամբ արգելվեց մզկիթներում կրոնական տոների անցկացումը: Սակայն ժողովուրդը չենթարկվեց այդ հրամանին և հավաքվեց Բաղդադի Հայդարխան մզկիթում: Անգլիական զինվորները, ուժ գործադրելով, ցրեցին իրաքցիների այդ հավաքը, որի ժամանակ

եղան զոհեր: Նրա ղեկավարները ձերբակալվեցին, և նրանցից մի քանիսը մահապատժի ենթարկվեց:

Հակաիմպերիալիստական ելույթներ տեղի ունեցան նաև Դիվանիյայում, Նասիրիյայում, Հիլլում և այլ քաղաքներում:

Առնոլդ Վիլսոնը, ձգտելով որոշ չափով մեղմացնել լարվածությունը, ցույց տալ, որ բրիտանական իշխանությունները իբրև թե հաշվի են առնում իրաքցիների տրամադրությունները և ցանկանում են իմանալ նրանց կարծիքը Իրաքի ապագա կառուցվածքի վերաբերյալ, կարգադրեց 1918–1919 թթ. Իրաքում անցկացնել հանրաքվե: Սակայն դա անցկացվեց շատ տարօրինակ կերպով: Հարցումից, փաստորեն, դուրս մնացին ժողովրդական զանգվածները: Հանրաքվեի համար կազմակերպվեցին տեղական ասամբլեաներ՝ կազմված բացառապես տվյալ շրջանի ավագանու ներկայացուցիչներից: Նրանց կազմը և հանրաքվեին ներկայացված հարցացանկը վկայում էին, որ հանրաքվեն լոկ մի մանևր էր, որի օգնությամբ բրիտանական իշխանությունները ցանկանում էին ստանալ իրենց՝ իրաքցիների համաձայնությունը բրիտանական տիրապետությունը Իրաքում պահպանելու և շարունակելու հարցում:

Բրիտանական իշխանությունները հանրաքվեի ժամանակ ասամբլեաների առջև դրեցին երեք հիմնական հարց. «1. Դուք ձգտո՞ւմ եք արաբական անկախ կառավարության ստեղծմանը՝ բրիտանական պրոտեկտորատի ներքո: 2. Կցանկանայի՞ք դուք, որ այդպիսի կառավարությունը գլխավորեր արաբական էմիրներից որևէ մեկը: 3. Դուք ո՞ւմ կնախընտրեիք տեսնել այդ կառավարության ղեկավար»:

Միաժամանակ անգլիական իշխանություններն իրենք քաղաքական սպաներին ուղարկեցին գաղտնի շրջաբերականներ՝ հանձնարարելով նրանց ստիպել իրաքցիներին արտահայտվել հօգուտ Պերսի Կոքսի ընտրությանը՝ որպես իրաքյան պետության ղեկավար:

Հանրաքվեի արդյունքները տարբեր եղան: Այն շրջաններում, որտեղ շեյխերի դրությունը և նրանց իրավունքները հողերին տիրապետելու վերաբերյալ կախված էին բրիտանական իշխանություններից, ասամբլեաներն արտահայտվեցին հօգուտ անգլիական տիրապետության շարունակության: Այդպես վարվեցին Ամարայում, որտեղ շեյխերի կողմից ընդունված հայտարարության մեջ նշվում էր, որ նրանք գերադասում են, որ Իրաքի պետության ղեկավարը լինի «արաբերեն խոսող անգլիացի» և պահանջեցին, որ Պերսի Կոքսը դառնա Իրաքի պետության ղեկավար:

Համանման դիրքորոշում ընդունեցին ալ–Քուրնայի, Նասիրիյայի և մի քանի այլ շրջանների ասամբլեաները: Նասիրիյայի 271 շեյխերի կողմից ստորագրված հայտարարության մեջ նշվում էր, որ նրանք արտահայտվում են հօգուտ բրիտանական տիրապետության շարունակության, մերժում են արաբական էմիրների գաղափարը և պաշտպանում են Պերսի Կոքսի թեկնածությունը:

Հանրաքվեի արդյունքները ցույց տվեցին, որ Իրաքի ֆեոդալ շեյխերի բարձրագույն խավը և կոմպրադորական բուրժուազիան դեմ չեն բրիտանական տիրապետությանը և պետության ղեկավարի պաշտոնում ցանկանում էին տեսնել անգլիական հայտնի գաղութային գործիչ Պերսի Կոքսին:

Հօգուտ բրիտանական վերահսկողության արտահայտվեցին նաև այն ասամբլեաները, որոնք կազմված էին կոմպրադորական բուրժուազիայի ներկայացուցիչներից, և որոնց շահերը սերտորեն կապված էին բրիտանական իմպերիալիզմի շահերի հետ:

Իրաքի մի շարք շրջաններում ասամբլեաները հանրաքվեի առաջին օրվանից գրավեցին ընդգծված հակաբրիտանական դիրքորոշում: Դա վերաբերում է առաջին հերթին Իրաքի շիական սրբազան քաղաքներին՝ Նաջաֆին, Քարբալային և Կադիմայնին: Այստեղ, ցանկանալով ստանալ ձայներ հօգուտ բրիտանական տիրապետության շարունակության, բրիտանական իշխանությունները սպառնում էին, ճնշում գործադրում և փորձում նաև կաշառել քվեարկության մասնակիցներին: Բայց ոչինչ չստացվեց: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ շիաների գլխավոր մուջթահիդ Թակի աղ–Դին աշ–Շիրազին հանդես եկավ հատուկ ֆետվայով, որտեղ ասված էր. «Ոչ մի մուսուլման իրավունք չունի ընտրել ոչ մուսուլմանին մուսուլման հավատացյալների կառավարող»:

Մի շարք վայրերում՝ Բաղդադում, Նաջաֆում, Կադիմայնում և այլուր, իրաքցիները կազմակերպեցին ցույցեր հօգուտ ազգային արաբական կառավարություն կազմելու: Ցույցերի կենտրոնը դարձավ Բաղդադը, ուր աշ–Շիրազիի կոչով Իրաքի յուրաքանչյուր շրջան Բաղդադ ուղարկեց իր ներկայացուցիչներին: Ցուցարարների գլխավոր պահանջներն էին՝ անկախություն Իրաքին, արաբական կառավարության ստեղծում և իրաքցիներին տալ իրենց օրինական իրավունքները: Աշ—Շիրազին, դիմելով ժողովրդին, նշեց, որ եթե անգլիացիները մերժեն այդ ազնիվ պահանջները, ապա իրաքցիներն իրավունք ունեն ինքնապաշտպանության նպատակներով դիմել զենքի:

Ի պատասխան բրիտանական իշխանությունները դիմեցին բռնարարքների: Նրանք ձերբակալեցին աշ–Շիրազիի որդուն՝ շեյխ Մուհամմադ Ռիզային, և 11 այլ ականավոր գործիչների: Բայց դա չկարողացավ կանգնեցնել հակաբրիտանական շարժումը և ազդել հանրաքվեի արդյունքների վրա Միջին Եփրատում, Բաղդադում և այլ վայրերում: Նույնիսկ Առնոլդ Վիլսոնի ժամանումը Նաջաֆ չազդեց հանրաքվեի արդյունքների վրա: Նաջաֆցիների ընդունած որոշման մեջ ասված էր, որ նրանք հանդես են գալիս հօգուտ արաբական իսլամական պետության ստեղծման՝ Հիջազի թագավոր Հուսեյնի որդիներից մեկի գլխավորությամբ, մի պայմանով, որ թագավորի իշխանությունը սահմանափակված լինի օրենսդրական մեջլիսով: Համանման բանաձևեր ընդունվեցին նաև Շամիյայում, Հիլում, Կադիմայնում, Քարբալայում և այլուր:

Հանրաքվեի օրերին իրադրությունը հատկապես շիկացած էր Բաղդադում: Բրիտանական իշխանություններին չհաջողվեց Բաղդադում կազմել ասամբլեաներ բացառապես իրենց մարդկանցից: Բաղդադի փողոցներում տեղի էին ունենում հավաքներ, միտինգներ և ցույցեր, որոնց ժամանակ ընտրվում էին ասամբլեայի դեպուտատներ, որոնց պատվիրվում էր հանդես գալ հօգուտ արաբական կառավարության՝ առանց եվրոպական պրոտեկտորատի:

1919 թ. հունվարի 22–ին Բաղդադի և նրա շրջակայքի տարբեր խավերի ներկայացուցիչներից կազմված ասամբլեան ընդունեց մի բանաձև, որտեղ ասված էր. «Մենք՝ իսլամական արաբական ազգը և Բաղդադի ու նրա շրջակայքի շիա և սուննի մուսուլմանական համայնքների ներկայացուցիչները, որոշեցինք, որ այս երկիրը, որը տարածվում է հյուսիսում՝ Մոսուլից, մինչև հարավ՝ Պարսից ծոցը, պետք է լինի միասնական արաբական պետություն մուսուլման թագավորի՝ շերիֆ Հուսեյնի որդիներից մեկի գլխավորությամբ, որի իշխանությունը պետք է սահմանափակված լինի տեղական օրենսդիր խորհրդով: Իրաքի մայրաքաղաքը պետք է լինի Բաղդադը»:

Համաձայն չլինելով այս բանաձևի հետ՝ ասամբլեայի մի քանի անդամներ՝ խոշոր հողատերեր, ինչպես Փաչախչին, ալ–Գայլանին, Ջամիլ–զադեն և այլք, ոչ միայն լքեցին նիստերի դահլիճը, այլև դիմեցին բրիտանական իշխանություններին՝ ձերբակալելու Բաղդադի ակտիվ ազգային գործիչներին: Զարացած բրիտանական իշխանությունները չեղյալ հայտարարեցին Բաղդադի ասամբլեայի ընդունած բանաձևը, իսկ 7 առավել աչքի ընկնող գործիչների ձերբակալեցին և արտաքսեցին Բաղդադից:

Ինչ վերաբերում է Իրաքյան Քրդստանին, ապա քրդերը խուսափեցին մասնակցել հանրաքվեին: Դրա պատճառներից մեկն այն էր, որ նախատեսվող արաբական պետության մեջ պետք է մտներ նաև Մոսուլի վիլայաթը, և դա հանրաքվեի հարցերից մեկն էր: Քրդերն այդ ժամանակ ձգտում էին ստեղծել իրենց անկախ պետությունը և հավակնում էին Մոսուլին: Իսկ որոշ վայրերում քրդերը գրավեցին հակաբրիտանական դիրքորոշում: Այդ պատճառով Մոսուլում բրիտանական իշխանություններին երկար ժամանակ չէր հաջողվում կազմել ասամբլեա: Եվ միայն 1919 թ. հունվարի 10–ին ուժեղ ճնշումից հետո անգլիացիներ կարողացան ստանալ 23 մեծահարուստների ստորագրությունները, որով նրանք «հավանություն» էին տալիս անգլիական քաղաքական սպանների կողմից կազմված որոշմանը:

Այսպիսով՝ ամփոփելով հանրաքվեի արդյունքները, կարելի է ասել, որ բրիտանացիներին չհաջողվեց ստանալ բոլոր իրաքցիների համաձայնությունը այս կամ այն ձևով բրիտանական տիրապետությունը Իրաքի վրա պահպանելու և Պերսի Կոքսին իրաքյան պետության ղեկավար նշանակելու հարցում:

Դա Իրաքի ազգային հայրենասիրական ուժերի խոշոր հաղթանակն էր, որն ավելի խթանեց իրաքցիների պայքարը երկրում ազգային վարչակարգ հաստատելու համար: 1919 թ. հունվարին Հիջազի շերիֆ Հուսեյնի ազատագրական բանակում ծառայող իրաքցի սպաները նամակով դիմեցին անգլիական իշխանություններին՝ պահանջելով, որ «Իրաքի ոչ մի շրջան չպետք է գտնվի օտարերկրյա կառավարման ներքո»: Նույն թվականի նոյեմբերին իրաքցի սպաները դիմեցին Փարիզի Խաղաղության կոնֆերանսին՝ «պահանջելով անհապաղ տեղական ազգային կառավարություն հաստատել» Իրաքում: Խաղաղության կոնֆերանսն անգամ ուշադրության չարժանացրեց իրաքցի սպաների այդ արդարացի պահանջը:

Հակաբրիտանական տրամադրություններն ուժեղանում էին օրեցօր: Բաղդադի, Նաջաֆի, Քարբալայի և Իրաքի մյուս քաղաքների մզկիթներում տեղի էին ունենում միտինգներ, որտեղ աղոթքի հետ միասին հնչում էին հայրենասիրական և հակաբրիտանական ելույթներ: Շատ վայրերում շարունակվում էին ցույցերը, որոնց ժամանակ ցուցարարները պահանջում էին Իրաքում ստեղծել արաբական կառավարություն՝ առանց բրիտանական պրոտեկտորատի:

Դրությունը խիստ լարված էր նաև Իրաքի քրդաբնակ շրջաններում: Քրդերն արաբներից հետո իրենց թվաքանակով Իրաքի երկրորդ ժողովուրդն են հանդիսանում՝ Նրանք բնակվում են երկրի հյուսիսային և հյուսիսարևելյան մասերում՝ Մոսուլի, Էրբիլի, Կիրկուկի և Սուլեյմանիայի շրջաններում: Այդ ժամանակ քրդերը հանդես էին գալիս անկախ քրդական պետություն ստեղծելու պահանջով: 1919 թ. ընթացքում զինված բախումներ տեղի ունեցան անգլիական զորքերի և քրդական զինված ջոկատների միջև Զախոյում, Ամադիյայում և այլ վայրերում: Սակայն ամենախոշոր ելույթը եղավ քրդերի ապստամբությունը Սուլեյմանիյայում շեյխ Մահմուդ Բարզինջիի գլխավորությամբ: Ապստամբությունը սկսվեց 1919 թ. մայիսի 20–ին: Շեյխ Մահմուդը հռչակեց Քրդստանի անկախությունը և իր իշխանությունը տարածեց մինչև Կիրկուկ: Նա տեղերում նշանակեց իր տեղակալներին, դրամ հատեց, իսկ պետական հիմնարկների վրա բարձրացվեցին քրդական կանաչ գույնի դրոշներ՝ կիսալուսնով:

Առաջին բախումները անգլիական զորքերի և քուրդ ապստամբների միջև ավարտվեցին վերջիններիս հաղթանակով: Սակայն վճռական ճակատամարտը, որը տեղի ունեցավ 1919 թ. հունիսի 18–ին, ավարտվեց քրդական ապստամբների պարտությամբ: Անգլիացիները դաժան հաշվեհարդար տեսան ապստամբության ղեկավարների և մասնակիցների հետ:

II. ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Անգլիան և Ֆրանսիան ձեռնամուխ եղան արաբական երկրների վրա իրենց տիրապետության հաստատմանը՝ հիմքում դնելով, ինչպես նշել ենք, դեռևս պատերազմի ժամանակ՝ 1916 թ., նրանց միջև ստորագրված Սայկս–Պիկոյի գաղտնի համաձայնագրի սկզբունքները: Ի կատարումն այդ համաձայնության՝ 1920 թ. ապրիլի 25–ին իտալական Սան Ռեմո քաղաքում տեղի ունեցավ Անտանտի Գերագույն խորհրդի նիստը, որը հատուկ նվիրված էր Ազգերի լիգայի մանդատները հիմնականում Անգլիայի և Ֆրանսիայի միջև բաժանելու հարցին: Այդ նիստում Իրաքի կառավարման մանդատը հանձնվեց Անգլիային:

Դա ծանր հարված էր արաբների, այդ թվում և իրաքցիների սպասումներին: Նկատի ունենք այն հանգամանքը, որ Անգլիան պատերազմի ժամանակ արաբներին, նրանց քաղաքական ղեկավաներին խոստացել էր քաղաքական անկախություն տալ արաբական երկրներին, և դա դարձավ օսմանյան տիրապետության դեմ արաբների 1916 թ. բարձրացրած ապստամբության գլխավոր պատճառներից մեկը: Այժմ, ստանձնելով Իրաքի կառավարման մանդատը, Անգլիան դրանով իսկ նահանջում էր անկախության վերաբերյալ Իրաքին և արաբական մյուս երկրներին տված իր խոստումներից:

1. 1920 թ. համաիրաքյան համազգային ապստամբությունը

Իրաքի կառավարման մանդատը Անգլիային հանձնելու վերաբերյալ Սան Ռեմոյում ընդունված որոշումը լցրեց Իրաքի ազգային–հայրենասիրական բոլոր ուժերի համբերության բաժակը: Նրանք դեմ էին անգլիական մանդատի հաստատմանը Իրաքի վրա և որոշեցին պայքարի դուրս գալ ընդդեմ անգլիական նորածն գաղութային տիրապետության:

1920 թ. մայիսին Իրաքի շեյխերի և մուջահիդների՝ Քարբալայում տեղի ունեցած ժողովում որոշում ընդունվեց զինված ապստամբության նախապատրաստման մասին, որին միացավ «Հարաս ալ–իսթիկլալը»:

Ապստամբությունն Իրաքում ընդդեմ անգլիական գաղութային տիրապետության սկսվեց 1920 թ. հունիսի 30–ին: Ապստամբության պատճառները պետք է փնտրել Անգլիայի իմպերիալիստական քաղաքականության, Իրաքին լրիվ քաղաքական անկախություն տալուց նրա հրաժարվելու և մանդատային տիրապետության հաստատման մեջ:

Ապստամբության հիմնական շարժիչ ուժերն էին գյուղացիությունը, քաղաքային չքավորությունը, արհեստավորները, վաճառականները և ազգային մտավորականությունը: Ապստամբության ղեկավարությունը գտնվում էր ազգային բուրժուազիայի, շիա հոգևորականության և Միջին Եփրատի՝ հայրենասիրաբար տրամադրված ցեղապետների ձեռքում: Հեղափոխության այդ ուժերը ստեղծեցին Մաքթաբ աս–սաուրի՝ Հեղափոխության կոմիտե:

Ապստամբների գլխավոր նպատակն էր Իրաքի անկախության նվաճումը: Նրանք հանդես էին գալիս ընդդեմ բրիտանական մանդատի և ընդհանրապես ընդդեմ անգլիական տիրապետության: Ինչպես նշում էր իրաքյան «Ալ–Իստիկլալ» թերթը, «Մենք մերժում ենք մանդատը ոչ թե

նրա անվան պատճառով, այլ որովհետև այն անհամատեղելի է անկախության հետ»:

Ապստամբությունը սկսվեց Միջին Եփրատում՝ Ռումայսայում, և այնուհետև տարածվեց ամբողջ Իրաքում: Ապստամբները սկզբնական շրջանում տարան մի քանի փայլուն հաղթանակներ անգլիական ռազմական ուժերի նկատմամբ: Նրանք իրենց վերահսկողությունը սահմանեցին Ռումայսա, Աբու Սուխեյր, Քիֆլ, Հինդիյա, ալ–Մուսայիբ, Սուկ աշ–Շույուխ, Դիվանիյա, Կուֆա քաղաքների և նրանց շրջակա ամբողջ տարածքների վրա: Դրան հաջորդեցին ապստամբների հաջողությունները Նաջաֆում և Քարբալայում: Ազատագրելով Նաջաֆը անգլիացիներից, ապստամբները ստեղծեցին կառավարման տեղական մարմիններ: Հետագայում նրանք նույնպիսի մարմիններ ստեղծեցին նաև Քարբալայում:

Այդ օրերին եռացող կաթսայի էր նմանվում Բաղդադը: Այստեղ տեղի էին ունենում ցույցեր, միտինգներ և ելույթներ: Սակայն դրանք չվերածվեցին ապստամբության: Անգլիացիները կարողացան ծերբակալել նախապատրաստվող ապստամբության մի շարք ղեկավարների և ծանր հարված հասցնել ընդդիմադիր ուժերին:

Ապստամբների և անգլիական զորքերի միջև կատաղի պայքարի ասպարեզի վերածվեց Բաղդադի հյուսիս և արևմուտք ընկած ամբողջ տերիտորիան՝ Դիլտավան, Սամարան, Բաքուբան և Շահրաբանը: Ապստամբությունը տարածվեց նաև հյուսիսային շրջաններում և նրանց միացան մի քանի քրդական ցեղեր: Քրդական դիլո ցեղը 1920 թ. օգոստոսի 14–ին գրավեց Կիզիլ Ռաբաթը, Խանեկինը, իսկ այնուհետև՝ Մանդալին և Քիֆրին:

1920 թ. օգոստոսի վերջերին ապստամբներին հաջողվեց վերահսկողություն սահմանել Իրաքի տերիտորիայի մեծ մասի վրա, բացառությամբ Մոսուլի վիլայաթից և Բաղդադ ու Բասրա քաղաքներից:

Ապստամբությունը ճնշելու համար Անգլիան լրացուցիչ ռազմական ուժեր ուղարկեց Իրաք, որոնց թիվը հասավ 150 հազարի: Ակտիվացրեց իր գործողությունները նաև անգլիական ավիացիան, որը մեծ սարսափ էր տարածում արաբների, մասնավորապես բեդվինների և գյուղացիների վրա: Այս նախապատրաստական քայլերից հետո անգլիացիները անցան հարձակման, և նրանց հաջողվեց օգոստոսի վերջերից մինչև նոյեմբերի վերջերը մեկը մյուսի հետևից ճնշել ապստամբական օջախները:

1920 թ. ապստամբությունը պարտվեց, որովհետև նա ոչ բոլոր տեղերում էր, որ լավ էր նախապատրաստվել: Ապստամբության ղեկա-

վարությունը միշտ չէ, որ վճռականություն էր ցուցաբերում, ընդհակառակը, նա հաճախ տատանվում էր, իսկ առաջին անհաջողություններից հետո դրսևորեցին համածայնողական, նույնիսկ կապիտուլյանտական տրամադրություններ: Եվ, վերջապես, չպետք է մոռանալ, որ անգլիական բանակն անհամեմատ ավելի լավ էր զինված ու կազմակերպված, քան ապստամբական ուժերը, որոնք ռազմական արվեստի և գործերի մեջ հմուտ չէին, թեև նրանք հակառակորդին գերազանցում էին հոգեբանորեն և իրենց խանդավառությամբ:

Չնայած ապստամբության պարտությանը, նա, այդուհանդերձ, կարևոր ուղենիշ է հանդիսանում Իրաքի ազգային–ազատագրական պայքարի մեջ: Արաբ պատմաբան ալ–Հասանին իր «Իրաքի նոր քաղաքական պատմությունը» հետաքրքիր աշխատության մեջ 1920 թ. ապստամբությունը համարում է «մեծ ապստամբություն»:

Անգլիացիները հարկադրված էին զիջումների դիմել, որն արտահայտվեց Իրաքում ժամանակավոր «ազգային» կառավարության ստեղծման, իսկ ապա նաև Իրաքի թագավորության ստեղծման փաստի մեջ: Առանց 1920 թ. համազգային ապստամբության Անգլիան չէր գնա նման շոշափելի զիջումների[18]:

2. Իրաքի թագավորության ստեղծումը: Ֆեյսալ իբն Հուսեյն ալ–Հաշիմին Իրաքի առաջին թագավոր

Անգլիական տիրապետության երեքամյա փորձը և հակաիմպերիալիստական պայքարը ցույց տվեցին, որ անհնար է խաղաղեցնել Իրաքը միմիայն ռազմական միջոցներով և ճնշումներով: Անհրաժեշտ էր խուսանավել և գտնել կառավարման ավելի ճկուն և քողարկված ձևեր: Այդպես ծնվեց Իրաքում Ազգային ժամանակավոր կառավարություն ստեղծելու գաղափարը, որի վերաբերյալ դեկրետը Իրաքում կրկին Անգլիայի գլխավոր կոմիսար նշանակված Պերսի Կոքսը ստորագրեց 1920 թ. հոկտեմբերի 27–ին:

Թվում էր, թե Անգլիան գնում էր մեծ զիջումների և ազգային կառավարություն ստեղծելով՝ դրանով կփոխարինի Իրաքի կառավարման, եթե ոչ ամբողջ համակարգը, ապա գոնե ինչ–որ իրական գործառույթ-

18 Այս մասին և ընդհանրապես Իրաքի նորագույն պատմության մասին ավելի մանրամասն տե՛ս **Н. О. Оганесян**, Национально–освободительное движение в Ираке (1917–1958 гг.), Ереван, 1976:

ներ: Սակայն այդպես չստացվեց: Իրաքում ամբողջ իշխանությունը նախկինի պես կենտրոնացված էր անգլիական գլխավոր կոմիսարի ձեռքում:

1921 թ. մարտին Կահիրեում գումարվեց կոնֆերանս Անգլիայի գաղութների նախարար Ուինստոն Չերչիլի գլխավորությամբ, որտեղ քննարկվեց նաև Իրաքի ապագա կարգավիճակի հարցը: Կոնֆերանսում ընդունվեց որոշում այն մասին, որ Իրաքը պետք է լինի միապետություն՝ անգլիական տիրապետության ներքո, և որպես թագավոր գահին առաջարկվեց Հիջազի շերիֆ Հուսեյն իբն Ալիի երրորդ որդին՝ Ֆեյսալը:

Ֆեյսալը 1921 թ. հունիսի 23–ին ժամանեց Իրաք: Այն քաղաքների և գյուղերի միջով, որ անցնում էր նա, բնակիչները նրան բավականին սառն ընդունեցին, ինչը ճնշող տպավորություն թողեց Ֆեյսալի վրա: Դառնացած թագավորն ասում է իրեն ուղեկցող բրիտանական սպա Կինահան Կորնուոլիսին. «Ես կարծում էի, թե նրանք ինձ ուզում են»:

1921 թ. օգոստոսի 23–ին տեղի ունեցավ նրա թագադրումը, և Իրաքում հաստատվեց Հաշիմիների դինաստիան: Թագավորը, որն ընդունեց Ֆեյսալ I տիտղոսը, ձևականորեն դարձավ պետության ղեկավար, բայց ամբողջ իրական իշխանությունը մնաց անգլիական գլխավոր կոմիսարի ձեռքում, քանի որ մանդատով նրան տրված բոլոր իրավասությունները պահպանվեցին:

Այդ պատճառով էլ ազգային–ազատագրական պայքարը՝ հանուն մանդատի վերացման և Իրաքի լրիվ ու իրական անկախության, շարունակվեց և ընդունեց սպառնալից չափեր: Թագադրումից հետո՝ 1921 թ. նոյեմբերի 10–ին, Աբդել Ռահման ալ–Գայլանին կազմեց Իրաքի կառավարությունը: Բայց բոլոր իրաքցի նախարարներին կից գործում էին անգլիական «խորհրդականներ»՝ օժտված ամենալայն լիազորություններով:

Ստեղծված պայմաններում անգլիական իշխանությունները, դրսևորվելով որոշ ճկունություն, ինչ–որ չափով փոխեցին մանդատային կառավարման ձևը: Նրանք առաջարկեցին պայմանագիր կնքել Անգլիայի և Իրաքի միջև և մանդատային կառավարմանը տալ երկկողմանի՝ անգլո–իրաքյան պայմանագրի ձև: Ազգերի լիգայի խորհրդին անգլիական կառավարության ներկայացրած պաշտոնական բացատրությունում ասված էր, որ Անգլիայի համար «ավելի նախընտրելի է իր իրավական կարգավիճակը Իրաքում որոշել ոչ թե մանդատի սովորական ձևով, ինչպես ենթադրվում էր նախկինում, այլ Նորին մեծության կառավարության (Մեծ Բրիտանիայի — Ն. Հ.) և Իրաքի կառավարության միջև կնք-

վող պայմանագրի ձևով»: Միաժամանակ Անգլիայի ներկայացուցիչ Ֆիշերը Ազգերի լիգայի խորհրդում իր կառավարության անունից հայտարարեց, որ կնքվելիք պայմանագիրը «չի փոխարինելու մանդատին, որը կմնա որպես գործող փաստաթուղթ, և որը սահմանում է Նորին մեծության կառավարության պարտականությունները, որ նա ստանձնել է Ազգերի լիգայի անունից»:

Պայմանագրի տեքստը, որ կազմել էին անգլիացիներն առանց իրաքցիների մասնակցության, Իրաքին ներկայացվեց 1922 թ. մայիսին: Այն, որ պաշտոնապես կոչվում էր «Պայմանագիր դաշինքի մասին», կազմված էր 18 հոդվածից: Նրանում ասված էր, որ Իրաքի թագավորի խնդրանքով Անգլիան համաձայն է Իրաքին տալ այնպիսի խորհուրդներ և աջակցություն, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում: Իրաքը համաձայնվում է բոլոր կարևոր հարցերում, որոնք շոշափում էին միջազգային և ֆինանսական պարտավորությունները, ղեկավարվել անգլիական կառավարության կողմից գլխավոր կոմիսարի միջոցով տրվող խորհուրդներով: Անգամ Իրաքի թագավորը չէր կարող որևէ օտարերկրացու ծառայության ընդունել առանց անգլիական կառավարության համաձայնության:

Իրաքում մնում էին անգլիական զորքերը և Անգլիային Իրաքում ներկայացնելու էր ոչ թե դեսպանը, այլ գլխավոր կոմիսարը և գլխավոր հյուպատոսը: Պայմանագիրը ստորագրվում էր 20 տարի ժամկետով:

Իրաքցիների համար անընդունելի էր նման պայմանագիրը, և երկրում նոր թափ ստացավ հակաիմպերիալիստական պայքարը: Այդ պահից սկսած՝ պայքարը մանդատի դեմ ընդունում է անգլո–իրաքյան պայմանագրերի դեմ ուղղված պայքարի ձև: Պայմանագրի դեմ ուղղված խոշոր ելույթներ տեղի ունեցան Բասրայում, Բաղդադում, Միջին Եփրատում, Նաջաֆում, Քարբալայում, Դիվանիյայում, Մունթաֆիկում և այլ վայրերում: Ցուցարարները կրում էին «Կորչի մանդատը», «Կորչի Անգլիան» պաստառներ: Բաղդադում ցուցարարներն ուղևորվեցին դեպի թագավորական պալատ և թագավորից պահանջեցին մերժել անգլո–իրաքյան պայմանագիրը: Նրանք Մահդի ալ–Խալիսիին, Մուհամմադ աս–Սադրին, Մահդի Բուսաիրին, Ահմադ Դաուդին և Համդի բեյ Փաչաչիին ընտրեցին որպես Իրաքի ժողովրդի ներկայացուցիչներ՝ հանձնարարելով նրանց «տեղյակ պահել ամբողջ աշխարհին այն մասին, որ իրենք մերժում են մանդատը և պահանջում լրիվ անկախություն»: Նրանք հեռագրեր ուղարկեցին Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ–ի, Իտալի-

այի պառլամենտներին և Ազգերի լիգային, աշխարհի բոլոր ազդեցիկ լրագրերին առ այն, որ «Իրաքի ժողովուրդը կազմակերպում է ցույցեր, որպեսզի արտահայտի իր ծգտումը դեպի լրիվ անկախություն, և այն մասին, որ չի ցանկանում ընդունել մանդատը, ինչ ձևով էլ, որ այն լինի»: Լուրջ հուզումներ տեղի ունեցան Նաջաֆում, Քարբալայում, Հիլում, Դիվանիյայում և Միջին Եփրատի այլ բնակավայրերում: Միջին Եփրատի ցեղապետները 1922 թ. օգոստոսի 4–ին պահանջագիր ուղարկեցին Ֆեյսալ I–ին՝ առաջարկելով նրան մերժել մանդատը, պահանջել անգլիական կառավարությունից ճանաչել այդ իրողությունը և ստիպել հրաժարական տալ իրաքյան որևէ կառավարության, որը Անգլիայի հետ կստորագրի մի այնպիսի պայմանագիր, որը չի բավարարի Իրաքի ազգային շահերը: Այդ ընթացքում ներկայացվեց մի կարևոր պահանջ ևս: Ընդդիմադիր ուժերը պահանջեցին, որ Իրաքը Անգլիայի հետ կապերը պահպանի ոչ թե գաղութային նախարարության, այլ արտաքին գործերի նախարարության միջոցով:

Այս համընդհանուր տրամադրությունները և հակաբրիտանական ելույթները որոշ չափով ազդեցին նաև Ֆեյսալ I–ի դիրքորոշման վրա: Ուստի լրիվ անակնկալ եղավ անգլիացիների համար, երբ Իրաքի թագավորը հայտարարեց, որ «ինքը Իրաքի լրիվ անկախության կողմնակից է»: Բրիտանական իշխանությունները Ֆեյսալ I–ի վրա ուժեղ ճնշումներ գործադրեցին, անգամ սպառնացին նրան, որ եթե նա շարունակի հետևել նման քաղաքականության, ապա կարող է զրկվել իր գահից:

Բայց պայքարը անգլո–իրաքյան պայմանագրի դեմ շարունակվում էր և ընդունում նոր ծավալներ: Հիշատակության է արժանի այն փաստը, որ ի նշան բողոքի բրիտանական իշխանությունների քաղաքականության դեմ՝ Իրաքի կառավարության վեց նախարարներ հրաժարական տվեցին:

Ստեղծված պայմաններում, երբ ամբողջ Իրաքը եռում էր, հարկադրված էր հրաժարական տալ Իրաքի կառավարությունը՝ Աբդել Ռահման ալ–Գայլանիի գլխավորությամբ:

Դրանից հետո դեպքերը զարգացան անհավանական, նույնիսկ, կարելի է ասել, թատերական ձևով: 1922 թ. օգոստոսի 24–ին Ֆեյսալ I–ը «պատահականորեն» հիվանդացավ: Օգտվելով այդ առիթից՝ բրիտանական գլխավոր կոմիսար Պերսի Կոքսն իշխանությունն ամբողջովին իր ձեռքում կենտրոնացրեց: Նա արգելեց քաղաքական կազմակերպությունների գործունեությունը, փակեց թերթերը, ձերբակալեց մի շարք

ազգային ղեկավարների, իսկ այն շրջանները, որտեղ տեղի էին ունենում ելույթներ, ռմբակոծման ենթարկվեցին:

Այդ ուղիով «վերականգնելով» կարգ ու կանոնը՝ Պերսի Կոքսը իշխանությունն իր ձեռքում մեկ ամիս պահելուց հետո «վերադարձրեց» թագավոր Ֆեյսալին: Վերջինս շնորհակալություն հայտնեց գլխավոր կոմիսարին նրա վճռական գործողությունների համար՝ «ընդհանուր շահերը պաշտպանելու և անվտանգությունն ապահովելու գործում» և իր համաձայնությունը տվեց ներկայացված անգլո–իրաքյան պայմանագրին, որը և ստորագրվեց 1922 թ. հոկտեմբերի 10–ին:

Սակայն պայմանագիրը պետք է վավերացվեր Իրաքի նոր սահմանադիր ժողովի կողմից:

Իրաքի հայրենասիրական ուժերն իրենց պայքարի սուր ծայրն ուղղեցին Սահմանադիր ժողով գումարելու դեմ: Նրանք որոշեցին բոյկոտել ընտրությունները: Տեղի էին ունենում ցույցեր, միտինգներ և այլ բնույթի ելույթներ: Շիա ուլեմները (աստվածաբան գիտնականները) 1922 թ. նոյեմբերի 8–ին հրապարակեցին մի ֆետվա (որոշում), որը շիաներին արգելում էր մասնակցել ընտրություններին:

Այս ընթացքում բռնկվեց քրդական նոր ապստամբություն, որը կրկին ղեկավարեց աքսորից վերադարձած շեյխ Մահմուդը: Նա սկզբում իրեն հռչակեց Սուլեյմանիյայի հուքումդար (կառավարիչ), իսկ 1922 թ. նոյեմբերին Քրդստանի թագավոր: Նա փորձեց իր իշխանությունը տարածել ամբողջ Իրաքյան Քրդստանի վրա: Դա արդեն չէր համապատասխանում Անգլիայի շահերին, և նա դիմեց վճռական ռազմական գործողությունների: Շեյխ Մահմուդի երկրորդ ապստամբությունը 1924 թ. ևս ավարտվեց պարտությամբ:

Անգլիացիներին և Ֆեյսալին մեծ դժվարությամբ միայն 1924 թ. մարտին հաջողվեց անցկացնել Սահմանադիր ժողովի ընտրություններ: Անգլո–իրաքյան 1922 թ. պայմանագրի վավերացման հարցի քննարկումը Սահմանադիր ժողովում տևեց 3 ամիս: Ամբողջ երկիրը պահանջում էր մերժել այդ անիրավահավասար պայմանագիրը: Երկրում տեղի էին ունենում ցույցեր և տարբեր բնույթի ելույթներ: 1924 թ. մայիսի 24–ին հուժկու ցույց տեղի ունեցավ Բաղդադում: Ցուցարարները ներխուժեցին Սահմանադիր ժողովի շենք՝ պահանջելով դեպուտատներից չվավերացնել պայմանագիրը: Նրանց գլխավոր լոզունգները դարձան՝ «Կորչի պայմանագիրը», «Կորչի Ֆեյսալը»: Ջինվորները և ոստիկանները կրակ բացեցին ցուցարարների վրա: Ստեղծված պայմաններում անգլիական նոր

գլխավոր կոմիսար Հենրի Դոբսը 1924 թ. հունիսի 2–ին վերջնագիր ներկայացրեց Սահմանադիր ժողովին, որ եթե նա մինչև հունիսի 10–ը չվավերացնի պայմանագիրը, ապա Անգլիան կդիմի Ազգերի լիգային՝ խնդրելով հաստատել մանդատը նրա նախնական ձևով, այսինքն՝ հաստատել ուղղակի կառավարման ձև: Վարչապետ Ջաֆար ալ–Ասկարին պարտադրեց դեպուտատներին արթնացնել գիշերով և նրանց հավաքեց Սահմանադիր ժողովի շենքում: 1924 թ. հունիսի 11–ին Սահմանադիր ժողովն իր արտակարգ նիստում, որին 100 դեպուտատից ներկա էր ընդամենը 69–ը քնաթաթախ դեպուտատ, 37 ձայնով հաստատեց 1922 թ. անգլո–իրաքյան պայմանագիրը: Ըստ էության, դա հաստատվեց Սահմանադիր ժողովի փոքրամասնության կողմից՝ նրա անդամների 1/3–ով:

Պայմանագրի վավերացման լուրը մեծագույն դժգոհությամբ և խոր զայրույթով ընդունվեց ժողովրդի և ազգային–հայրենասիրական ուժերի կողմից: Իրաքի պատմության ճանաչված մասնագետ Մաջիդ Խադուրին իր «Անկախ Իրաք» աշխատության մեջ նշում է, որ պայմանագրի վավերացումից հետո Իրաքի ժողովուրդը Ֆեյսալ թագավորին անվանեց «դավաճան, որը ծախեց իր երկիրը սեփական մորթին փրկելու համար»:

1924 թ. սեպտեմբերի 27–ին Ազգերի լիգայի խորհուրդը հաստատեց այդ պայմանագիրը: Դա նշանակում էր, որ Իրաքում անգլիական մանդատը հաստատվեց յուրահատուկ՝ երկկողմանի պայմանագրի ձևով, որի շրջանակներում գոյության իրավունք էր ստանում Իրաքի թագավորությունը:

3. Հայ գաղթականների հոսքը Իրաք և իրաքահայ համայնքի ձևավորումը

Իրաքը բազմազգ պետություն է: Այստեղ արաբների հետ միասին ապրում են քրդեր, ասորիներ, պարսիկներ, հրեաներ, թուրքմեններ, հայեր և այլք: Ինչպես նշում է ամերիկյան պատմաբան Հ. Ֆոստերը, Իրաքում բնակվող մարդկանց երակներում հոսում է արաբական, պարսկական, քրդական և հայկական արյուն: Հայկական առաջին գաղթօջախները Իրաքում հայտնվել են շատ վաղուց՝ մասնավորապես XVII դ. սկզբից: Սակայն ժամանակակից հայ համայնքն առաջացել է Առաջին համաշխարհային պատերազմից և երիտթուրքական կառավարության կողմից կիրառված ցեղասպանության և բռնի տեղահանումից հետո, երբ Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչության զգալի մասը հայտնվեց Արա-

բական Արևելքում, այդ թվում և Իրաքում: Հայերին բռնի տեղահան անելով և քշելով արաբական անապատներ՝ երիտթուրքերի ղեկավարությունը հույս ուներ, որ այդ հատվածը կուլ կգնա անապատի ավազուտներին, և որ քրիստոնյա հայերը թշնամական վերաբերմունքի կհանդիպեն մուսուլման արաբների կողմից, որոնք կշարունակեն երիտթուրքերի արյունալի գործը: Բայց նրանց հույսերը չարդարացան: Արաբները եղբայրական օգնության ձեռք մեկնեցին հայ տարագիրներին: Շատ վայրերում ազգությամբ արաբ կառավարիչները հրաժարվում էին իրագործել հայերին կոտորելու վերաբերյալ թուրքական կառավարության արձակած հրամանները: Այդպես վարվեցին, օրինակ, Մոսուլում: Երբ Մոսուլի նահանգապետը ստացավ թուրքական կառավարության հրամանը տեղի հայերին ոչնչացնելու մասին, նա հրավիրեց արաբ երևելիների խորհրդակցություն: Վերջիններս կտրուկ կերպով հանդես եկան այդ ծրագրի դեմ՝ նշելով, որ «իրենց խիղճը թույլ չի տա, որ արաբ ժողովրդի ձեռքը թաթախվի հայերի արյան մեջ»: Նման փաստերը շատ շատ են, որոնք գալիս են հավաստելու, որ արաբ ժողովրդի ձեռքը, իրոք, չթաթախվեց հայերի արյան մեջ: Ընդհակառակը, արաբները, ինչպես որ կարողանում էին, օգնում էին հայ գաղթականներին՝ նրանց տալով օթևան, սնունդ, հագուստ: Զգալի թվով հայեր հաստատվեցին արաբական երկրներում, այդ թվում և Իրաքում: Սկզբնական շրջանում՝ 1917–1922 թթ., Իրաքում հաստատված հայերի թիվը հասնում էր 90 հազարի:

Նրանք գլխավորապես կենտրանացված էին երկու գաղթականներում՝ Նար Ումարում, որը գտնվում է Բասրայից 17 մղոն հեռու՝ Շատ ալ–Արաբի ափին, և Բակուբայում՝ Բաղդադից 30 մղոն արևելք: Բակուբայում՝ Դիյալա գետի ափին, հաստատվում են մոտ 20 հազ. հայ, հիմնականում Վասպուրականից և Ատրպատականից: Նրանք ժամանակավորապես բնակություն են հաստատում վրանների տակ:

Գաղթականների կարիքները հոգալու և նրանց ծանր վիճակը փոքր ինչ թեթևացնելու համար Բաղդադի ազգային իշխանությունները կազմակերպում են «Հայ տարեգրելոց պաշտպան» և «Գաղթականներու օգնության հայ տիկնանց օժանդակ» մարմիններ, որոնք անմիջապես գործի են անցնում և օգնում գաղթականներին: Բաղդադում բացվում է որբանոց, որտեղ ապաստան են գտնում և մահվան ճիրաններից փրկվում մեծաքանակ հայ որբ մանուկներ:

1917 թ. Բաղդադում հաստատվում է Մերձավոր Արևելքում ամերիկյան նպաստից հանձնախումբը, որը ազգային իշխանությունների

օգնությամբ հազարավոր որբեր է բերում Դեյր ազ–Զորից Բաղդադ և հետո նավերով փոխադրում Երուսաղեմ և Եգիպտոս:

Իսկ Նար Ումարում տեղակայված շատ հայ գաղթականներ, որոնք նույնպես բնակվում էին վրաններում, հետագայում մշտական բնակություն են հաստատում Բասրա քաղաքում:

Հետագայում հայ գաղթականներից շատերը հեռացան Իրաքից, և հայերի քանակը նվազելով հասավ 20–25 հազարի: Այնուհետև նրանք դուրս եկան այդ ճամբարներից և հաստատվեցին Իրաքի տարբեր վայրերում: Նրանք դառնում են հիմնականում քաղաքաբնակ և կենտրոնանում Բաղդադում՝ 17 հազ., Բասրայում՝ 3,5 հազ., Մոսուլում՝ 3 հազ., Կիրկուկում՝ 1 հազ. մարդ, ինչպես նաև Խանեկինում, Հաբբանիյայում, Զախոյում և այլուր: Սկզբնական շրջանում նրանց վիճակը շատ ծանր էր, սակայն հետագայում հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ՝ նրանք կարողանում են ոտքի կանգնել և կազմակերպել իրենց տնտեսական և հոգևոր–մշակութային կյանքը: Հայերի հիմնական զանգվածը զբաղված է արհեստներով, արդյունաբերության և առևտրի մեջ: Մի մասը պետական պաշտոնյա է, բժիշկ, իրավաբան, ուսուցիչ, լրագրող և այլն: Հայերի մոտ 65%–ը բանվորներ և արհեստավորներ էին, 20%–ը՝ ծառայողներ և մտավորականներ, իսկ 15%–ը՝ առևտրականներ:

Համայնքի հասարակական–ազգային կյանքը ղեկավարում են քաղաքային և գավառական ժողովները, որոնց հսկողության տակ են գտնվում նաև ուսուցչական խորհուրդները: Իրաքում գործել և շարունակում են գործել մի քանի հայկական դպրոցներ՝ Բաղդադում, Բասրայում և այլուր, որոնք պահվում են 1927 թ. Բաղդադում հիմնված Հայ բարեգործական միության հաշվին: Այն իր մասնաճյուղերն ուներ համարյա բոլոր քաղաքներում, որտեղ ապրում էին հայեր՝ Կիրկուկում, Մոսուլում, Խանեկինում, Բասրայում և այլուր: Հայ բարեգործական միությունը հաճախ օգնություն է ցույց տալիս նաև կարիքավոր արաբներին:

Իրաքահայերը հիմնում են իրենց ակումբները, միությունները, ինչպես՝ Հայ բժիշկների միությունը, Բաղդադի հայ երիտասարդաց միությունը, որ հիմնվել է 1926 թ. և այլն:

Արաբների և հայերի միջև հաստատվում է եղբայրական բարեկամություն, և նրանք համերաշխորեն համագործակցում են հասարակական–քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի տարբեր մարզերում:

4. Սահմանադրության ընդունումը և Իրաքի պետական սահմանների վերջնական ճշգրտումը

Անգլո–իրաքյան պայմանագրի վավերացումից հետո Անգլիայի կառավարությունը ձեռնամուխ եղավ Իրաքի սահմանադրության նախապատրաստմանը և ընդունմանը: Սահմանադրության նախագիծը պատրաստեցին անգլիական պաշտոնյաները՝ առանց իրաքցիների մասնակցության, որն այնուհետև հավանության արժանացավ Անգլիայի գաղութների մինիստրության կողմից: Սահմանադրության հիմքում դրվեց անգլո–իրաքյան պայմանագրին նրա չհակասելու սկզբունքը: Այն գործելու էր այդ պայմանագրի շրջանակներում և չէր կարող դնել Իրաքի անկախության և գերիշխանության հարցը: Իրաքի սահմանադիր ժողովը 1924 թ. հուլիսի 10–ին հավանություն տվեց սահմանադրությանը, իսկ 1925 թ. մարտի 21–ին այն ստորագրեց Ֆեյսալ I թագավորը: Իրաքը վերածվեց սահմանադրական միապետության:

Այս բոլորին զուգահեռ, Անգլիան զգալի ջանքեր գործադրեց Իրաքի պետական սահմանները ճշգրտելու և դրանք ընդարձակելու ուղղությամբ: Նրա կազմի մեջ մտցվեցին մի շարք տերիտորիաներ, որոնց վերաբերյալ վեճեր կային Իրաքի և հարևան պետությունների միջև: 1922 թ. ընթացքում որոշվեցին Իրաքի սահմանները Սաուդյան Արաբիայի թագավորության և Իրանի հետ: Ավելի դժվար ստացվեց սահմանի ճշգրտումը Թուրքիայի հետ՝ կապված Մոսուլի վիլայաթի հետ: Թուրքիան ինքն էր հավակնում այդ նահանգին, որի հետ չէր կարող համաձայնվել Անգլիան: Վերջինս ձգտում էր նավթով հարուստ այդ շրջանը մտցնել իր ենթամանդատային տերիտորիա հանդիսացող Իրաքի կազմի մեջ, որից հետո ինքնաբերաբար Մոսուլի վիլայաթի վրա կտարածվեին մանդատից բխող Անգլիայի բոլոր իրավունքները: Երկարատև քաղաքական խուսավարումից հետո Անգլիային հաջողվեց ձեռք բերել ԱՄՆ–ի և Ֆրանսիայի համաձայնությունն այդ հարցում: Անգլիան գտավ համապատասխան աջակցություն նաև Ազգերի լիգայի կողմից: Վերջիվերջո Թուրքիան զիջեց, և 1926 թ. հունիսի 5–ին Անկարայում ստորագրվեց պայմանագիր Անգլիայի և Թուրքիայի միջև, որով վերջինս ճանաչում էր Մոսուլի վիլայաթը որպես Իրաքի բաղկացուցիչ մաս:

Այսպիսով՝ նախկին Միջագետքի տարածքի վրա Բասրայի, Բաղդադի և Մոսուլի վիլայաթների միավորման հիմքի վրա կազմավորվեց Իրաք պետությունը:

Իր քաղաքական դիրքերն ամրապնդելուն զուգահեռ, Անգլիան մեծ եռանդ ցուցաբերեց նաև Իրաքում իր տնտեսական դիրքերն ամրապնդելու ուղղությամբ, մանավանդ նավթարդյունահանման բնագավառում: 1925 թ. մարտի 14–ին Իրաքի կառավարությունը հաստատեց դեռևս Օսմանյան կայսրության կողմից 1914 թ. հունիսի 28–ին «Թըրքիշ պետրոլեում կոմպանիին» տրված կոնցեսիան և 75 տարի ժամանակով համապատասխան պայմանագիր կնքեց նրա հետ: Ընկերությունում տիրապետող էր անգլիական կապիտալը, սակայն 1927 թ. Անգլիան ստիպված էր բաժնետոմսերի մի մասը զիջել ֆրանսիական և ամերիկյան իր մրցակիցներին, որոնք դարձան այդ ընկերության մասնակիցներ: 1929 թ. «Թըրքիշ պետրոլեումը» վերանվանվեց «Իրաք պետրոլեում կոմպանիի»: Նրանում բաժնետոմսերի 23,75%–ը պատկանում էր անգլո–հոլանդական «Ռոյալ Դատչ Շելլին», 23,75%–ը՝ «Անգլո–իրանիան օյլ կոմպանիին», 23,75%–ը՝ ֆրանսիական «Կոմպանի ֆրանսեզ դը պետրոլին», 23,75%–ը՝ ամերիկյան «Նիըր իստ դիվելըպմենթ կորպորեյշնին» և 5%–ը՝ Գալուստ Ս. Գյուլբենկյանին: Գ. Գյուլբենկյանը մեծ դերակատարում էր ունեցել Իրաքի նավթի հայտնագործման և շահագործման մեջ: Իր այդ ծառայությունների դիմաց նա ստացավ, որպես անհատ, «Իրաք պետրոլեումի» բաժնետոմսերի 5%–ը և «Միստր ֆայվ պըրսենթ» («Պարոն հինգ տոկոս») կոչումը:

Նավթից ստացվող եկամուտների առյուծի բաժինը մտնում էր օտարերկրյա մոնոպոլիստական ընկերությունների գրպանը, իսկ Իրաքին յուրաքանչյուր տոննա նավթի համար վճարում էին մի չնչին գումար՝ 4 շիլինգ:

5. Պայքարի հետագա սրումը մանդատի վերացման համար

Երբ քննարկվում էր Մոսուլի վիլայաթը Իրաքի կազմի մեջ մտցնելու հարցը, Ազգերի լիգան դրան իր համաձայնությունը տվեց մի պայմանով, որ անգլիական մանդատի ժամկետը երկարացվի 25 տարով, և ապահովվեն ոչ արաբ ժողովուրդների իրավունքները: Դա միանգամայն ձեռնտու էր Անգլիային, և նա առաջարկեց Իրաքին՝ կնքել նոր պայմանագիր: Անգլո–իրաքյան երկրորդ պայմանագիրը ստորագրվեց 1926 թ. հունվարի 13–ին: Այն լրիվ ուժի մեջ թողեց 1922 թ. պայմանագիրը, միայն նրա գործողության ժամկետը երկարացվեց 25 տարով:

Այդ նոր պայմանագիրը, ինչպես նրա նախորդը, դժգոհությամբ ընդունվեց Իրաքում: Իրաքի պառլամենտում նրա հաստատման հարցի քննարկման ժամանակ 20 դեպուտատներ, որպես բողոքի նշան, հեռացան նիստից: 1926 թ. մարտի վերջերին և ապրիլի սկզբներին մի քանի հակաանգլիական ելույթներ եղան Իրաքի տարբեր մասերում: Երկրի դեմոկրատական ուժերը պահանջում էին հրաժարվել անիրավահավասար պայմանագրից և վերջնականապես ծերբազատվել բրիտանական մանդատից: Ամբողջ 1927 թ. ընթացքում տեղի էին ունենում ցույցեր, հաճախ նաև զինված բախումներ իրաքցի հայրենասիրական ուժերի և անգլիական գաղութարարների միջև:

Անգլիական իշխանությունները, հաշվի առնելով ստեղծված իրադրությունը, հարկադրված էին դիմել որոշ զիջումների: Նրանք առաջարկեցին նոր պայմանագիր, որը նախահաստատվեց 1927 թ. դեկտեմբերի 14–ին: Այն ամբողջությամբ վերարտադրում էր 1922 թ. պայմանագիրը, սակայն ձևականորեն Իրաքը ճանաչում էր որպես «սուվերեն և անկախ պետություն» և սահմանեց Ազգերի լիգայի մեջ Իրաքի մտնելու ճշգրիտ թվականը՝ 1932 թ.: Սակայն Անգլիան պահպանում էր Իրաքում իր զորքերը և խորհրդականներին, Իրաքի նկատմամբ իր ռազմական և ֆինանսական վերահսկողությունը, ինչպես նաև արտաքին քաղաքականության հարցերում Իրաքին «խորհուրդներ» տալու իրավունքը:

Նման պայմանագրի առաջադրումը Անգլիայի կողմից պայմանավորված էր նրանով, որ Իրաքում մեծ թափ էր ստացել մանդատի դեմ ուղղված շարժումը, և անգլիական իշխանությունները փորձում էին **պահպանել մանդատային կառավարման ողջ համակարգը, սակայն ձևականորեն առանց մանդատի**:

Իրաքի ազգային–հայրենասիրական ուժերը հեշտությամբ կռահեցին անգլիական այդ խուսավարման իմաստը և պահանջում էին Իրաքին տալ ոչ թե ձևական, այլ իրական անկախություն: Բաղդադում և այլ վայրերում տեղի ունեցան ցույցեր, իսկ Հյուսիսային Իրաքում՝ զինված բախումներ: Հակաիմպերիալիստական վերելքի պայմաններում Իրաքի պառլամենտը հրաժարվեց վավերացնել բրիտանական կառավարության կողմից առաջարկված նոր պայմանագիրը: Իրաքի կողմից անգլո–իրաքյան երրորդ պայմանագրի մերժումը Իրաքի ազգային–հայրենասիրական ուժերի խոշոր հաղթանակն էր, որը մեծ հարված էր Անգլիայի հեղինակությանը:

Այս փուլում ազգային–ազատագրական շարժման բնորոշ գծերից մեկը Իրաքի երիտասարդ բանվոր դասակարգի մասնակցությունն էր նրան: 1928–1929 թթ. բանվորները կազմակերպում են իրենց արհմիությունները, իսկ 1927 թ. հիմնվեց առաջին մարքսիստական խմբակը, որի հիմնադիրներն էին Հուսնի Այյուշը և Յուսուֆ Սալման Յուսուֆը (Ֆահդ): Բանվորները պայքարում էին իրենց կյանքի պայմանների բարելավման համար և ընդդեմ բրիտանական իմպերիալիզմի տիրապետության:

20–ական թվականների վերջին ուժեղացան հուզումները նաև քրդաբնակ շրջաններում: Քրդերը պահանջում էին Իրաքի կազմում ստեղծել քրդական առանձին վարչական միավոր:

Շարժումը մանդատի վերացման և անգլիական տիրապետությունից ձերբազատվելու համար ընդգրկել էր ամբողջ Իրաքը: Անգլիացիները, ոչ առանց հիմքի, վախենում էին, որ կարող է սկսվել նոր համաիրաքյան ապստամբություն: Նրանք դեռ լավ էին հիշում 1920 թ. համաիրաքյան ապստամբությունը, որը նրանց մեծ դժվարությամբ հաջողվեց ճնշել:

Եվ ահա այսպիսի պայմաններում Անգլիան առաջարկեց Իրաքին կնքել նոր պայմանագիր, որն իբր պետք է վերացներ մանդատը, սակայն այնպես, որ էական փոփոխություններ տեղի չունենային անգլո–իրաքյան հարաբերություններում:

III. 1930 թ. ԱՆԳԼՈ–ԻՐԱՔՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՔԻ ՁԵՎԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

1930 թ. մարտի 23–ին Անգլիայի և իրաքյան հետադիմության ջանքերով Իրաքի վարչապետ նշանակվեց Նուրի Սաիդը, որը հայտնի էր որպես բրիտանական իմպերիալիզմի հլու կամակատար: Անմիջապես սկսվեցին բանակցություններ Բաղդադի և Լոնդոնի միջև՝ նոր պայմանագիր կնքելու վերաբերյալ, որը պետք է նոր հիմքերի վրա դներ անգլո–իրաքյան հարաբերությունները և նոր միջազգային ստատուս հաստատեր Իրաքի համար:

1930 թ. հունիսի 30–ին Լոնդոնում Անգլիայի և Իրաքի միջև ստորագրվեց «Պայմանագիր բարեկամության և դաշինքի մասին»: Այն չեղյալ էր հայտարարում Ազգերի լիգայի կողմից Անգլիային տրված ման-

դատը Իրաքը կառավարելու վերաբերյալ և ձևականորեն Իրաքը հռչակում որպես անկախ պետություն: Սակայն պայմանագիրը պարունակում էր մի շարք կետեր, որոնք խիստ սահմանափակում էին Իրաքի անկախությունը և ապահովում Անգլիայի տիրապետությունը Իրաքում: Անգլիան շարունակելու էր «խորհուրդներ տալ» Իրաքին: Անգլիան իրավունք ուներ Իրաքում պահել իր զորքերը, նրա զինված ուժերն իրավունք ունեին ազատորեն տեղաշարժվել երկրում, օգտվել Իրաքի երկաթուղիներից, գետերից, նավահանգիստներից, օդանավակայաններից և կապի միջոցներից: Իրաքը Անգլիային տրամադրում էր երկու ռազմաօդային բազա՝ Հաբբանիյայում՝ Բաղդադի մոտ, և Շուայբայում՝ Բասրայի մոտ: Պայմանագրի հավելվածով անգլիական զինծառայողները պահպանում էին իրենց բոլոր արտոնությունները իրավական և ֆինանսական հարցերում: Իր բանակը վարժեցնելու համար Իրաքը պարտավորվում էր հրավիրել **միայն անգլիական զինվորական հրահանգիչներ, բանակը զինել միայն անգլիական զենքով, նավերով և ինքնաթիռներով:** Զինվորական կադրեր պատրաստելու համար Իրաքը պարտավորվում էր հրավիրել միայն անգլիական մասնագետներ կամ իրաքցիներին ուղարկել միայն անգլիական ռազմական դպրոցներ: Բացի այդ, Իրաքը համաձայնվում էր, որ Իրաքում գոյություն ունենա անգլիական ռազմական միսիա, պարտավորվում էր արտասահմանից հրավիրել միայն բրիտանական պաշտոնյաներ ու փորձագետներ և ճանաչել անգլիական դեսպանի ավագությունը մյուս երկրների դիվանագիտական ներկայացուցիչների նկատմամբ:

Պայմանագիրը ստորագրվեց 25 տարի ժամկետով:

1930 թ. անգլո–իրաքյան պայմանագիրը, ինչպես ցույց են տալիս նրա վերոնշյալ հոդվածները, իրավահավասար պայմանագիր չէր: Ձևականորեն չեղյալ հայտարարելով անգլիական մանդատը և ճանաչելով Իրաքի «անկախությունը»՝ Անգլիան իրականում կարողացավ պահպանել իր լրիվ վերահսկողությունն Իրաքի ներքին և արտաքին քաղաքականության վրա: Այդ պատճառով իրավացի էր Իրաքի կառավարության նախկին նախարար Ռաշիդ Ալի ալ–Գայլանին, երբ ընդգծում էր, որ «նոր իրաքյան պայմանագիրը ժամանակավոր մանդատը փոխարինեց մշտական օկուպացիայով»:

Իրաքի ժողովրդական զանգվածները, մտավորականությունը, ազգային բուրժուազիան, ինչպես նաև լիբերալ ազնվականության մի մասը հանդես եկան պայմանագրի դեմ, իսկ արքունիքը, ամենահետա-

դիմական շեյխերն ու ֆեոդալները և կոմպրադորական բուրժուազիայի ներկայացուցիչները պաշտպանեցին այն: Վերջիններս հույս ունեին դրա օգնությամբ ընդլայնել իրենց իրավունքները երկրի ներքին կառավարման հարցերում:

Թագավորական հրովարտակով ցրվեց հին պառլամենտը և նշանակվեցին նոր ընտրություններ: Արքունիքը, Նուրի Սաիդը և անգլիացիները հույս ունեին պառլամենտում «ընտրել» իրենց հլու–հնազանդ մարդկանց, որոնք կվավերացնեին 1930 թ. պայմանագիրը:

Ընտրություններն անց էին կացվում ազատության բացակայության և ոստիկանական ահաբեկչության պայմաններում: Այդ պատճառով իրաքյան մի շարք հայրենասիրական ուժեր, ինչպես՝ «Հիզբ ալ–Վաթանի ալ–Իրաքի» (Իրաքի ազգային կամ հայրենիքի) կուսակցությունը, բոյկոտ հայտարարեցին ընտրություններին: Պայմանագրի դեմ հանդես եկավ նաև «Հիզբ աշ–Շաաբ»՝ ժողովրդական կուսակցությունը: Ընտրությունների նկատմամբ ժխտական դիրք գրավեցին նաև քրդերը: Մի շարք վայրերում՝ Սամարայում, Սուլեյմանիյայում և այլուր, ընտրությունների ժամանակ բախումներ եղան ժողովրդական զանգվածների և ոստիկանական ուժերի միջև: Սակայն Նուրի Սաիդին հաջողվեց ընտրել իրեն ձեռնատու պառլամենտ, որը 1930 թ. նոյեմբերի 16–ին վավերացրեց 1930 թ. անգլո–իրաքյան պայմանագիրը:

Բայց դրանից հետո էլ երկիրը չհանդարտվեց: Պայքարն ավելի կազմակերպված տանելու համար Իրաքի քաղաքական գործիչների մի խումբ՝ Յասին ալ–Հաշիմիի, Նաջի Սուվեյդիի և Ռաշիդ Ալի ալ–Գայլանիի գլխավորությամբ 1930 թ. նոյեմբերի 25–ին հիմնեցին «Հիզբ ալ–Իխա ալ–Վաթանի»՝ Ազգային եղբայրության կուսակցությունը, որը 1931 թ. միավորվեց Իրաքի ազգային կուսակցության հետ: Նրա գլխավոր նպատակն էր պայքարի կազմակերպումը ընդդեմ 1930 թ. պայմանագրի: Ավելի ակտիվորեն պայքար ծավալեցին բանվորները, որոնք 1931 թ. փորձեցին հիմնել բանվորական կուսակցություն, սակայն Նուրի Սաիդի կառավարությունն արգելեց այն: Ծայր առան ելույթներ, ցույցեր, գործադուլներ, որոնք Բաղդադում, Բասրայում, Մունթաֆիքում և այլ վայրերում վերածվեցին արյունալի բախումների:

Կրկին ոտքի ելան քրդական ժողովրդական զանգվածները: Հատկապես նշանակալից էր քրդական ապստամբությունը Բարզանի շրջանում 1931–1932 թթ., որ գլխավորում էին Ահմադ և Մուսթաֆա Բարզանի եղբայրները: Սակայն այդ ապստամբությունը նս արյան մեջ խեղդվեց:

Դժգոհությունը համակել էր նաև ասիրիացիներին: Քրդերը և ասիրիացիները դիմեցին Ազգերի լիգա իրենց իրավունքները պաշտպանելու խնդրանքով: Վերջինս պահանջեց Իրաքից հանդես գալ հատուկ դեկլարացիայով ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ՝ դա դիտելով որպես Ազգերի լիգայի մեջ Իրաքին ընդունելու նախապայման: Իրաքի կառավարությունը նման դեկլարացիայով հանդես եկավ 1932 թ. մայիսի 20–ին, որով պարտավորվում էր ապահովել բոլոր ոչ արաբ ժողովուրդների ազատությունը, պաշտպանել նրանց կյանքը, ապահովել հավասարությունը օրենքի առջև և այլն:

1932 թ. հոկտեմբերի 3–ին Ազգերի լիգան որոշեց Իրաքը ընդունել Ազգերի լիգայի անդամ: Դա նշանակում էր անգլիական մանդատի պաշտոնական վերացում և Իրաքի անկախության ձևական հռչակում: Միաժամանակ ուժի մեջ մտավ 1930 թ. անգլո–իրաքյան պայմանագիրը:

IV. ԻՐԱՔԸ ՁԵՎԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՃԵԼՈՒ ՊԱՅՔԱՐԻ ՓՈՒԼՈՒՄ (1932–1958 թթ.)

1. Իրադրությունը Իրաքում «անկախության» հռչակման առաջին տարիներին

Իրաքում ստեղծվեց յուրահատուկ իրավիճակ: Մանդատը, որը Իրաքի վրա հաստատվել էր 1922 թ. երկկողմանի անգլո–իրաքյան պայմանագրով, պաշտոնապես վերացված համարվեց 1930 թ. անգլո–իրաքյան պայմանագրով, որի հիման վրա Իրաքը 1932 թ. ընդունվեց Ազգերի լիգայի անդամ: Այդ պատճառով 1932 թ. ընդունված է համարել Իրաքի անկախության օր: Ձևականորեն, ինչպես ասում են, ամեն ինչ կարգին էր, և Իրաքը ձևականորեն համարվում էր անկախ և ինքնիշխան պետություն:

Սակայն բոլորովին այլ կարծիքի էին Իրաքի ազգային և հայրենասիրական ուժերը, երկրի բացարձակ մեծամասնությունը՝ բանվորները, գյուղացիները, մտավորականությունը, ազգային բուրժուազիան, հայրենասեր ցեղապետ–շեյխերը, երիտասարդությունը և հասարակության այլ խավերը: Նրանք Իրաքի անկախությունը համարում էին

ծնական և ոչ լիակատար, և գտնում, որ բրիտանական գաղութային տիրապետությունից վերջնականապես ու ամբողջապես ազատագրվելու հարցը դեռևս չի լուծված:

Ուստի ազգային–ազատագրական պայքարը Իրաքում շարունակվում է ընդհուպ մինչև 1958 թ. հուլիսյան հեղափոխությունը: Այդ փուլում ազգային–ազատագրական պայքարի հիմնական բովանդակությունը կազմում էր Իրաքի ծնական անկախության վերածումն իրական անկախության, իսկ պայքարի հիմնական թիրախ դարձավ 1930 թ. անգլո–իրաքյան պայմանագիրը, ավելի կոնկրետ՝ նրա վերացումը:

Պայմանագրի ստորագրումից և Իրաքի՝ Ազգերի լիգայի անդամ դառնալուց հետո էլ երկրում վիճակը մնում էր ծանր և խիստ լարված: Սկսվում է Իրաքի հայրենասիրական ուժերի երկարատև և ծանր պայքարը ծնական անկախությունն իրականի վերածելու համար: Երկրում քաղաքական իրադրությունը կայուն չէր: Քաղաքական անկայունության դրսևորում պետք է համարել այն փաստը, որ 1932–1933 թթ. Իրաքում փոխվել է 21 կառավարության, և երեք անգամ անցկացվել պառլամենտական ընտրություններ: Խիստ ծանր էր նաև երկրի տնտեսական վիճակը: 1929–1932 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը մեծ հարված հասցրեց Իրաքի թույլ զարգացած տնտեսությանը: Խիստ ընկան արմավի, բրդի, ցորենի և գարու գները, կրճատվեցին ցանքատարածությունները և քայքայված գյուղական զանգվածները հորդեցին քաղաքներ: Իսկ քաղաքներում շեշտակի աճեց գործազրկությունը:

Ֆեոդալ–կալվածատիրական և առևտրավաշխառուական վերնախավը, որի ձեռքն անցավ երկրի կառավարումը, և նրանց շահերն արտահայտող արքունիքն ի վիճակի չէին լուծել երկրի առջև կանգնած քաղաքական և տնտեսական լուրջ պրոբլեմները: 1932 թ. դեկտեմբերի 27–ին հարկադրված էր հրաժարական տալ Նուրի Սաիդի կառավարությունը: Իշխանության գլուխ եկան Ազգային եղբայրության կուսակցության ներկայացուցիչները Ռաշիդ Ալի ալ–Գայլանիի գլխավորությամբ: Վերջինս 1933 թ. մարտի 20–ին կազմեց իր կառավարությունը: Իշխանության գլուխ գալով՝ Ազգային եղբայրության ղեկավարները խոստանում էին մի շարք բարեփոխուներ անցկացնել Իրաքում: Սակայն արտաքին քաղաքականության բնագավառում խոստացան «հարգել Իրաքի միջազգային պարտավորությունները», ինչը նշանակում էր հրաժարվել 1930 թ. անգլո–իրաքյան պայմանագիրը չեղյալ հայտարարելու իրենց նախկին պահանջից: Որպես բողոքի նշան՝ Ազգային եղբայրու-

թյան կազմից դուրս եկան Իրաքի ազգային կուսակցության ներկայացուցիչները՝ Աբու Թիմանի գլխավորությամբ: Դա ծանր հարված էր Ռաշիդ ալ–Գայլանիի կառավարությանը: Վերջինիս դեմ քանի գնում, ուժեղանում էր դժգոհությունը: Փորձելով ելք գտնել ստեղծված ծանր պայմաններից և ժողովրդական զանգվածների ուշադրությունը շեղել ներքին և արտաքին խնդիրներից՝ ալ–Գայլանիի կառավարությունը 1933 թ. օգոստոսին կազմակերպեց ասիրիացիների ջարդ, որը հանդիսանում է սև էջ միապետական Իրաքի պատմության մեջ: Այդ քայլը վարկաբեկեց Իրաքին, և Ռաշիդ ալ–Գայլանիի կառավարությունը 1933 թ. սեպտեմբերի 27–ին հրաժարական տվեց:

Այդ ընթացքում վախճանվեց Իրաքի թագավոր Ֆեյսալ I–ը, և 1933 թ. սեպտեմբերի 9–ին վախճանված Ֆեյսալ I–ի փոխարեն Իրաքի գահի վրա նրան փոխարինեց նրա որդին՝ Ղազին: Սակայն նորաթուխ, երիտասարդ և քաղաքականության մեջ դեռևս անփորձ գահակալին չհաջողվեց լուծել երկրում առաջացած քաղաքական սուր ճգնաժամը:

Այս շրջանում նկատելիորեն աճում է իրաքցիների քաղաքական ինքնագիտակցությունը, և նրանք ավելի ակտիվորեն են պայքարի մեջ մտնում իրենց իրավունքների համար: 1933 թ. հաջողվեց միավորել գործող արհմիությունները և հիմնել Միավորված բանվորների միություն, որի կազմի մեջ մտավ 20 արհմիություն:

20–ական թվականների վերջին և 30–ական թվականների սկզբին Իրաքում ձևավորվում են կոմունիստական բջիջներ, մասնավորապես Բասրայում, Բաղդադում և Նասիրիյայում: 1934 թ. դեկտեմբերի 31–ին Բաղդադում գումարված կոմունիստական կազմակերպությունների կոնֆերանսում հիմնվեց Իրաքի կոմունիստական կուսակցությունը: Սկզբնական շրջանում այն կոչվում էր Իմպերիալիզմի և շահագործման դեմ պայքարի կոմիտե, որն իր առջև երկու կարևոր խնդիր էր դնում՝ աշխատավորների շահերի պաշտպանություն և պայքար Իրաքի լրիվ անկախության և սուվերենության համար: 1935 թ. հունիսից Իրաքի կոմունիստներն սկսեցին հրատարակել «Քիֆահ աշ–Շաաբ»՝ «Ժողովրդի պայքար» թերթը:

30–ական թվականներին Իրաքի քաղաքական կյանքում զգալի դեր էր խաղում «Ալ–Ահալի»՝ «Ժողովուրդ» խումբը, որի ղեկավարներն էին Աբդել Ֆաթահ ալ–Իբրահիմը, Մուհամմադ Հադիդը և Աբդել Կադիր Իսմայիլը: Նրանք պահանջում էին կիրառել սոցիալական ռեֆորմներ և հաստատել «կոլեկտիվիզմի» վրա հիմնված դեմոկրատական վարչակարգ:

1934 թ. «Ալ–Ահալիի» մեջ մտան վաթանիստներ Աբու աթ–Թիմանը և Քամիլ Չադերչին:

2. 1935–1936 թթ. ապստամբությունը

1930–ական թվականների Իրաքի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում 1935–1936 թթ. ապստամբությունը: Նրա գլխավոր պատճառներն էին գյուղացիական զանգվածների ծանր վիճակը, երկրում տիրող անկայուն քաղաքական դրությունը և անգլիական տիրապետության շարունակումը: Իսկ անմիջական առիթ հանդիսացավ 1934 թ. պառլամենտական ընտրությունների կեղծումը, որի հետևանքով շիա ցեղերի շատ շեյխեր և Ազգային եղբայրության բլոկի ղեկավարներ չընտրվեցին պառլամենտ: Ապստամբությունը սկսվեց 1935 թ. հունվարին Միջին Եփրատի շրջանում և ընդգրկեց Դիյալան, Հիլը, Սուկ աշ–Շույուխը, Ռումայսան, Նասիրիյան և այլ վայրեր: Կառավարությունը անզոր գտնվեց ճնշել ապստամբությունը և հրաժարական տվեց: Ղազի թագավորը հարկադրված Ազգային եղբայրության բլոկին հանձնարարեց կազմել նոր կառավարություն: 1935 թ. մարտի 17–ին Յասին ալ–Հաշիմին կազմեց իր կառավարությունը, որը բավարարեց շիա առաջնորդների մի քանի պահանջները, և վերջիններս դադարեցրին պայքարը: Դրանով ավարտվեց ապստամբության առաջին փուլը:

Քանի որ գյուղացիական զանգվածները ոչինչ չստացան, այդ պատճառով էլ մի շարք վայրերում նրանք շարունակեցին պայքարը: Ապստամբությունն ընդունեց հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական բնույթ: Ստեղծվեց հակաիմպերիալիստական ճակատի կենտրոնական կոմիտե: Նա առաջ քաշեց «Կեցցե հեղափոխությունը», «Կորչի իմպերիալիզմը և շահագործումը» լոզունգները: Ապստամբները պահանջում էին արմատականորեն վերանայել 1930 թ. անգլո–իրաքյան պայմանագիրը, պետական հողերը բաժանել հողազուրկ գյուղացիներին, ընդունել օրենք աշխատանքի պաշտպանության վերաբերյալ և այլն:

Ապստամբության երկրորդ փուլը սկսվեց 1935 թ. մայիսին Ռումայսայում և Սուկ աշ–Շույուխում և այնուհետև տարածվեց այլ վայրեր: Սակայն իրաքյան բանակը գեներալ Բաքր Սիդկիի գլխավորությամբ մեկը մյուսի հետևից արյան մեջ խեղդեց ապստամբական օջախները: Գյուղացիական վերջին ելույթը տեղի ունեցավ Սամավայում 1936 թ. օգոստոսին, որը ճնշվեց նույն տարվա աշնանը:

Արաբների հետ միասին ապստամբվեցին քրդերը: 1935 թ. կրկին ոտքի ելան բարզանցիները՝ Խալիլ Խոշավիի գլխավորությամբ: Այդ ապստամբությունը ճնշվեց 1936 թ. մարտին իրաքյան և թուրքական զորքերի միացյալ գործողություններով:

Ապստամբության դրոշ բարձրացրին նաև եզդիները՝ Դաուդ աղ–Դաուդի գլխավորությամբ: Սակայն 1935 թ. աշնանը սա ևս ճնշվեց:

Այսպիսով՝ 1935–1936 թթ. ապստամբությունը նույնպես ավարտվեց պարտությամբ:

3. 1936 թ. պետական հեղաշրջումը և ազգային ռեֆորմների կառավարությունը

Թեև 1935–1936 թթ. ապստամբությունը ճնշվեց, երկրի ներքաղաքական վիճակը շարունակում էր մնալ լարված: Դժգոհությունը համակել էր համարյա բոլոր սոցիալական խավերին: Յասին ալ–Հաշիմիի կառավարությունը բռնի կերպով զավթում էր համայնքային հողերը և հանձնում անգլիական պաշտոնյաներին, ցեղապետներին և ֆեոդալներին: Գյուղացիները շնչահեղձ էին լինում հողազրկությունից և բարձր հարկերից: Խիստ վատացավ բանվորների վիճակը, որոնք աշխատում էին օրական 12–14 ժամ և դրա դիմաց ստանում չնչին աշխատավարձ: Կառավարությունն արգելեց բոլոր տեսակի բանվորական կազմակերպությունների, իսկ այնուհետև նաև քաղաքական կուսակցությունների գործունեությունը, անգամ ցրեց Ազգային եղբայրության բլոկը: Նա հետապնդում էր բոլոր առաջադեմ գործիչներին, պառլամենտից վտարվեցին բոլոր այն դեպուտատները, որոնք հավանություն չէին տալիս կառավարության գործունեությանը: Կառավարության քաղաքականությունը ոտնահարում էր ազգային բուրժուազիայի շահերը և խոչընդոտում ազգային անկախ էկոնոմիկայի ստեղծմանը:

Յասին ալ–Հաշիմիի կառավարության դեմ ծնավորվեց բավականին ազդեցիկ ընդդիմություն, որը ղեկավարում էին Իրաքի այնպիսի հեղինակավոր գործիչներ, ինչպես Հիքմեթ Սուլեյմանը, Աբու Թիմանը և Քամիլ Չադերչին: Հիքմեթ Սուլեյմանը կապվեց իրաքյան բանակի 2–րդ դիվիզիայի հրամանատար Բաքր Սիդկիի հետ և ստացավ նրա համաձայնությունը՝ աջակցելու օպոզիցիային: Ինչպես մատնանշում է Հ. Շարաբին, Իրաքի «բանակի սպայական կորպուսը մշտապես մնացել է հակաբրիտանական և դարձել ազգային զգացմունքների կենտրոն»:

1936 թ. հոկտեմբերի 29–ին՝ առավոտյան ժամը 8–ին, Բաղդադի օդում հայտնվեցին մի քանի ինքնաթիռներ, որոնք Բաքր Սիդկիի ստորագրությամբ թռուցիկներ ցրեցին: Բաղդադի փողոցներում մոտոցիկլետներով հայտնվեցին սպաներ, որոնք նույնպես թռուցիկներ էին տարածում բնակչության մեջ: Նրանցում ասվում էր. «Ազնիվ իրաքյա՛ն ժողովուրդ: Ձեր որդիներից կազմված բանակի համբերությունը այժմյան կառավարության նկատմամբ, որը ձեզ դատապարտում է տառապանքների, չի հոգում ձեր բարեկեցության մասին և մտածում է միայն իր անձնական շահերի մասին, սպառվել է: Մենք թագավորին ուղարկել ենք պահանջագիր, որ այս կառավարությունը փոխվի, և որպեսզի նոր կառավարությունը կազմվի ժողովրդի անկեղծ և նվիրված զավակներից՝ Հիքմեթ Սուլեյմանի գլխավորությամբ»: Բաքր Սիդկին սպառնում էր՝ ռմբակոծել Բաղդադը, եթե կառավարությունը հրաժարական չտար:

Թագավորը և կառավարությունը խուճապի մատնվեցին: Վարչապետ Յասին ալ–Հաշիմին հեռախոսով կապվեց Բաքր Սիդկիի հետ, փորձելով կանգնեցնել բանակի գործողությունները, որն Բաքր Սիդկին պատասխանեց շատ լակոնիկ. «Իմ դիվիզիայով գալիս եմ Բաղդադի վրա, որպեսզի տապալեմ կառավարությունը»:

Թագավոր Ղազին հապշտապ կառավարության նիստ հրավիրեց թագավորական պալատում, որին մասնակցում էր նաև Անգլիայի դեսպան Ա. Կերրը: Նիստի ժամանակ պալատում հայտնվեց ինքը՝ Հիքմեթ Սուլեյմանը և անձամբ թագավորական գրասենյակի պետ Ռուստամ Հայդարին հանձնեց Բաքր Սիդկիի և Առաջին դիվիզիայի հրամանատար Աբդել Լաթիֆ Նուրիի ստորագրությամբ նամակ, որտեղ ասվում էր, որ եթե նամակը ստանալուց հետո երեք ժամվա ընթացքում Հիքմեթ Սուլեյմանը չնշանակվի վարչապետ, ապա Բաղդադը կվերածվի ավերակների:

Վարչապետ Յասին ալ–Հաշիմին մերժեց հրաժարական տալ, սակայն թագավորը և անգլիական դեսպանը նրան չպաշտպանեցին:

Մինչ բանակցություններ էին ընթանում պալատում, Բաքր Սիդկիի կողմից տրված ժամկետն ավարտվեց, և Բաղդադի երկնքում հայտնվեց ռազմական օդանավերի մի էսկադրիլիա Իրաքի ռազմաօդային ուժերի հրամանատար Ալի Ջավդատի հրամանատարությամբ: Ինքնաթիռները նետեցին չորս ռումբեր Բաղդադի վրա, և դա բավարար եղավ, որ Յասին ալ–Հաշիմին հրաժարական տար:

Ապստամբած զորամասերը Բաքր Սիդկիի գլխավորությամբ 1936 թ. հոկտեմբերի 29–ին մտան Բաղդադ: Պետական հեղաշրջումը դար-

ծավ իրողություն: Այդ նույն օրը թագավորը Հիքմեթ Սուլեյմանին հանձնարարեց կազմել Իրաքի նոր կառավարությունը: Բաքր Սիդկին չցանկացավ մտնել կառավարության մեջ և գրավեց Իրաքի բանակի գլխավոր շտաբի պետի պաշտոնը: Հիքմեթ Սուլեյմանը ոչինչ չէր անում առանց Բաքր Սիդկի գիտության և համաձայնության:

1936 թ. պետական հեղաշրջումից հետո ուժեղանում է բանակի դերը Իրաքի քաղաքական կյանքում:

1936 թ. դեկտեմբերի 9-ին Հիքմեթ Սուլեյմանը ներկայացրեց իր կառավարության ծրագիրը, որով նախատեսվում էր մի շարք կարևոր ռեֆորմների կիրառում: Մասնավորապես խնդիր էր դրվում ուժեղացնել բանակը, որը վերածվելու էր ազգային պաշտպանության բանակի, բարելավել գյուղացիների դրությունը և նրանց հողեր հատկացնել պետական ֆոնդերից, նպաստել ազգային արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացմանը, թույլատրել արհմիությունների գործունեությունը, ժողովների և մամուլի ազատություն, ներում շնորհել բոլոր քաղաքական բանտարկյալներին և այլն: Արտաքին քաղաքականության բնագավառում կառավարությունը պարտավորվում էր ամենալավագույն հարաբերությունները պահպանել Անգլիայի հետ և հաստատել բարեկամական հարաբերություններ արաբական երկրների, Թուրքիայի և Իրանի հետ:

Իր գոյության սկզբնական շրջանում Հիքմեթ Սուլեյմանի կառավարությունը, իրոք, կիրառեց իր ծրագրի մի քանի կետեր: Դա դուր էր գալիս ոչ բոլորին, և երկրի ներսում ձևավորվեց ֆեոդալ-շեյխերի և կոմպրադորների օպոզիցիա: Այդ ուժերի հետևում կանգնած էր անգլիական դեսպանությունը: Դա ահազանգ հանդիսացավ Հիքմեթ Սուլեյմանիի և Բաքր Սիդկիի համար, և նրանք սկսում են ավելի մեծ զգուշավորություն ցուցաբերել, իսկ այնուհետև շեշտակիորեն փոխել իրենց կուրսը դեպի աջ և հրաժարվել իրենց իսկ հռչակած ծրագրի մի շարք կետերից: Նրանք մերժեցին 1936-1937 թթ. տեղի ունեցած պառլամենտական ընտրություններն ազատ անցկացնելու Աբու Թիմանի, Քամիլ Չադերչիի և մյուս ռեֆորմատորների պահանջը: Դա հանգեցրեց հարաբերությունների սրմանը նրանց միջև և ուժեղացրեց դեմոկրատական ուժերի օպոզիցիան կառավարության քաղաքականության դեմ: Կառավարության դիրքերը թուլացրեց նաև նրա անգործությունը 1930 թ. պայմանագիրը չեղյալ հայտարարելու հարցում: Երկրում կրկին հասունանում էր քաղաքական ճգնաժամ: Համաձայն չլինելով կառավարության

նոր կուրսի հետ՝ 1937 թ. հունիսի 19–ին նրա կազմից դուրս եկան չորս նախարար ռեֆորմատորները՝ Աբու աթ–Թիմանը, Քամիլ Չադերչին, Յուսուֆ Իզզեդին Իբրահիմը և Սալիհ Զաբրը:

Ակնհայտ դարձավ, որ գեներալ Բաքր Սիդկին ձգտում էր բացահայտ դիկտատուրայի: Սակայն նրա հակառակորդները կանխեցին նրան: 1937 թ. օգոստոսի 11–ին նա սպանվեց Մոսուլում: Դավադրությունը կազմակերպել էին Իրաքի բանակի յոթ սպաներ, որոնց Հիքմեթ Սուլեյմանը կարգադրեց ձերբակալել: Սակայն նրա այդ որոշման դեմ դուրս եկան Մոսուլում տեղակայված զորամասերը բանակի հրամանատար Մուհամմադ Ամին ալ–Ումարի գլխավորությամբ: Նրանք պահանջեցին Հիքմեթ Սուլեյմանի հրաժարականը: Վերջինս 1937 թ. օգոստոսի 17–ին հարկադրված հրաժարվեց կառավարության ղեկավարի պաշտոնից:

Վարչապետ նշանակվեց Զամիլ ալ–Մադֆաին, և իշխանությունը կրկին անցավ հին, անգլիական կողմնորոշում ունեցող և ֆեոդալական ավագանու շահերը ներկայացնող ուժերին: Այդ միտումն ավելի հստակորեն դրսևորվեց, երբ 1938 թ. դեկտեմբերի 25–ին վարչապետի պաշտոնը կրկին ստանձնեց Նուրի Սաիդը: Նա հաշվեհարդար տեսավ իր քաղաքական հակառակորդների հետ: Ընդդիմադիրների մի մեծ խումբ Հիքմեթ Սուլեյմանի գլխավորությամբ ձերբակալվեց և բանտ նետվեց: Ուժեղացան ճնշումը և ահաբեկումը: Ցրվեց պառլամենտը, և երկրում մտցվեց արտակարգ դրություն:

1939 թ. ապրիլի 3–ին, պաշտոնական հաղորդագրության համաձայն, ավտոարկածի հետևանքով զոհվեց Ղազի թագավորը: Սակայն որոշ աղբյուրներ մատնանշում են, որ այն կազմակերպել էին անգլիացիները: Ղազին դեմ էր Նուրի Սաիդի ներքին, մանավանդ արտաքին քաղաքականությանը և ձգտում էր ավելի շատ ինքնուրույնության, քան թե դա թույլատրում էր անգլիական տիրապետությունը: Նրա մահից հետո գահի խնամակալ նշանակվեց Աբդուլ Իլլահը՝ թագավորի հորեղբոր որդին, քանի որ թագաժառանգը՝ Ֆեյսալը, անչափահաս էր, ընդամենը չորս տարեկան: Աբդուլ Իլլահը հայտնի էր իր անգլիամետ կողմնորոշումով և Նուրի Սաիդի հետ ձեռք ձեռքի տված ջանասիրաբար պաշտպանում էր Անգլիայի շահերը: Անգլիական պատմաբան Ջ. Մորիսի բնութագրմամբ՝ Աբդուլ Իլլահն «ավելի շատ անգլիացի էր, քան իրենք՝ անգլիացիները»:

4. Իրաքը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: 1941 թ. անգլո–իրաքյան պատերազմը: 1943–1945 թթ. քրդական ապստամբությունը

Իրաքը Անգլիայի պատերազմի մեջ մտնելուց հետո, «հավատարիմ իր դաշնակցային պարտավորություններին», 1939 թ. սեպտեմբերի 5–ին խզեց դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ, առանց, սակայն, նրան պատերազմ հայտարարելու: Նուրի Սաիդը ցանկանում էր նաև պատերազմ հայտարարել Գերմանիային, սակայն հանդիպելով կառավարության մյուս անդամների և բանակի հրամանատարության դիմադրությանը՝ հարկադրված էր հրաժարվել իր այդ մտադրությունից:

1939 թ. սեպտեմբերի 12–ին Իրաքում մտցվեց արտակարգ դրություն, որի հետևանքով խիստ ուժեղացավ արքունիքի և ոստիկանության հսկողությունը հասարակական–քաղաքական կյանքի բոլոր ոլորտների վրա: Երկրի տնտեսական ռեսուրսները, կոմունիկացիաները, նավահանգիստները, օդանավակայանները, համածայն անգլո–իրաքյան 1930 թ. պայմանագրի, դրվեցին Անգլիայի տրամադրության տակ: Վերջինս ուժեղացրեց իր կայազորները Հաբբանիյայում և Շուայբայում:

Կառավարության բացահայտ անգլիամետ քաղաքականությունը դժգոհություն առաջացրեց երկրում, որը համակեց նաև բանակին: Նման դիրքորոշումը բացատրվում է երկու հանգամանքներով:

Առաջին՝ Իրաքի հակաիմպերիալիստական ուժերը գտնում էին, որ Գերմանիայի հետ հարաբերությունները խզելու հետևանքով ուժեղանում էր Իրաքի կախվածությունը Անգլիայից, և Իրաքը լծվում էր բրիտանական մարտակառքին: Իսկ դա չէր համապատասխանում իրենց շահերին: Երկրորդ՝ Իրաքի հայրենասիրական ուժերը ձգտում էին օգտվել պատերազմի հետևանքով ստեղծված իրադրությունից և առաջին պլան մղել իրենց ազգային կենսական խնդիրները՝ արաբական երկրների ազատագրումը անգլիական և ֆրանսիական տիրապետությունից:

Այսպիսով՝ Իրաքի տարբեր քաղաքական ուժերի առջև կանգնած հիմնական խնդիրն էր. արդյոք օգտվե՞լ, թե՞ ոչ պատերազմի հետևանքով առաջացած հնարավորություններից, պե՞տք է Իրաքը փորձի ազատագրվել բրիտանական տիրապետությունից, թե՞ կատարի իր «դաշնակցային պարտականությունները» Անգլիայի նկատմամբ: Եվ Իրաքում մեկը մյուսին հաջորդող կառավարական ճգնաժամերը ոչ այլ ինչ

էին, եթե ոչ այդ երկու հոսանքների բախման արտահայտություն: 1940 թ. մարտին հրաժարական տվեց Նուրի Սաիդի, 1941 թ. հունվարին՝ Ռաշիդ Ալի ալ–Գայլանիի, իսկ 1941 թ. ապրիլի սկզբներին՝ Թահա Հաշիմիի կառավարությունները:

Կառավարության քաղաքականությունից դժգոհ իրաքյան բանակի չորս գնդապետները՝ Սալահ ադ–Դին աս–Սաբահը, Մահմուդ Սալմանը, Քամիլ Շաբիբը և Ֆահմի Սայիդը, որոնք հայտնի էին «ոսկյա քառակուսի» անվան տակ, կարողացան լիակատար հսկողություն հաստատել Իրաքի բանակի վրա և ակտիվորեն միջամտել կառավարական ճգնաժամերին: Նրանք հայտնի էին իրենց հակաբրիտանական տրամադրություններով և նվիրվածությամբ արաբական ազգային իդեալներին:

1941 թ. ապրիլի 1–ին Բաղդադի մերձակա Ռաշիդ ռազմական ճամբարում տեղի ունեցավ մի գաղտնի խորհրդակցություն, որին մասնակցում էին «ոսկյա քառակուսու» անդամ չորս գնդապետները, Իրաքի բանակի շտաբի պետ Ամին Զաքին և Ռաշիդ Ալի ալ–Գայլանին: Խորհրդակցության մասնակիցները ընդունեցին որոշում՝ պահանջել Թահա Հաշիմիից հրաժարվել կառավարության ղեկավարի պաշտոնից, վարչապետ նշանակել Ռաշիդ Ալի ալ–Գայլանիին, իսկ Թահա Հաշիմիի և խնամակալի հրաժարվելու դեպքում կատարել այդ պահանջները, բարձրացնել զինված ապստամբություն:

Այդ խորհրդակցությունից անմիջապես հետո Ամին Զաքին և Ֆահմի Սայիդը մեկնեցին վարչապետի նստավայր և Թահա Հաշիմիին հանձնեցին իրենց պահանջները: Վերջինս մի փոքր վարանելուց հետո համաձայնվեց հրաժարական ներկայացնել: Այդ ընթացքում, երբ բանակցություններ էին գնում վարչապետի հետ, բանակը մտավ Բաղդադ, գրավեց ռադիոկայանը, պետական հիմնարկները և շրջապատեց խնամակալ Աբդուլ Իլլահի պալատը: Վերջինս, կանացի շորեր հագած, կարողացավ դուրս գալ պահակախմբի միջով և թաքնվել ամերիկյան դեսպանությունում: Այնուհետև ամերիկյան դեսպան Պոլ Կնաբենշուն Աբդուլ Իլլահին տեղափոխեց Հաբբանիյայի ռազմաօդային բազան, որտեղից նա կարողացավ փախչել Հորդանան: Այստեղ նրան միացան նաև Նուրի Սաիդը, Ալի Զավդատը և Մադֆահին: Բաղդադից հեռացան և Քրդստանում ապաստանեցին նաև Իրաքի հնգամյա թագավոր Ֆեյսալ II–ը, նրա մայրը՝ Ալիյան, և անգլուհի դայակը:

1941 թ. ապրիլի 10–ին բացվեց պառլամենտի նիստը, որը գահընկեց արեց Աբդուլ Իլլահին և գահի նոր խնամակալ նշանակեց Շարաֆ

իբն Ռաջիհին: Կազմվեց «Հայրենիքի պաշտպանության կառավարություն»՝ Ռաշիդ Ալի ալ–Գայլանիի գլխավորությամբ, որն իր գլխավոր խնդիրը համարեց թույլ չտալ Իրաքը ներգրավել պատերազմի մեջ, ապահովել Իրաքի ժողովրդի իրավունքները և ազատությունը, պահպանել երկրի անկախությունը և հարգել Իրաքի միջազգային պարտավորությունները:

Անգլիայի կառավարությունը, բնականաբար, սկզբից նեթ թշնամական դիրք գրավեց Իրաքում տեղի ունեցած պետական հեղաշրջման, «Հայրենիքի պաշտպանության կառավարության» և նրա քաղաքական ծրագրի նկատմամբ, չնայած որ Իրաքի նոր կառավարությունը նշեց, որ ինքը պատրաստ է կատարել 1930 թ. պայմանագրից բխող իր պարտավորությունները: Անգլիան, որ քաջատեղյակ էր «ոսկյա քառակուսու» և Ռաշիդ Ալիի հակաբրիտանական տրամադրություններին, «Հայրենիքի պաշտպանության կառավարությունը» չճանաչեց որպես սահմանադրական կառավարություն:

Անգլիան սկսեց լրացուցիչ ռազմական ուժեր կենտրոնացնել Իրաքում, մասնավորապես Բասրայում: Նրանց ճնշման տակ Բասրայում Իրաքի կայազորը 1941 թ. ապրիլի 29–ին հեռացավ քաղաքից և կանգ առավ նրանից 15 մղոն հեռավորության վրա:

Անգլիան 1941 թ. մայիսի 2–ին ռազմական գործողություններ սկսեց Իրաքի դեմ: Անգլիական ավիացիան այդ օրը ռմբակոծեց իրաքյան զորքերի դիրքերը Հաբբանիյայի շրջանում: Պատերազմական գործողությունները տևեցին մոտ մեկ ամիս: Անգլիային հաջողվեց լրացուցիչ ռազմական ուժեր կենտրոնացնել և պարտության մատնել Իրաքին Հաբբանիյայի, Ֆալուջայի, Ռուտբայի ուղղություններով և շարժվել Բաղդադի վրա: Մայիսի 28–ին անգլիական զորքերը գտնվում էին Բաղդադից ընդամենը 12 մղոն հեռավորության վրա: Դա բավարար եղավ, որ հաջորդ օրը՝ մայիսի 29–ին, Ռաշիդ Ալին և «ոսկյա քառակուսու» գնդապետները հեռանան Իրաքից: Անգլիական զորքերը 1941 թ. հունիսի 1–ին մտան Բաղդադ, իսկ այնուհետև օկուպացրին ամբողջ երկիրը: Ռաշիդ ալ–Գայլանին փախավ երկրից: Չորս գնդապետները հետագայում ձերբակալվեցին և մահապատժի ենթարկվեցին· Ձերբակալվեցին և տարբեր պատիժներ ստացան նաև այդ գործողությունների այլ մասնակիցներ: Միայն Ռաշիդ Ալիին հաջողվեց խուսափել պատժից:

Իրաքի պարտությունը պատերազմում պետք է բացատրել նրա վատ կազմակերված լինելով: Իրաքցիները չունեին պատերազմը վարե-

լու գործողությունների մշակված ծրագիր, որն իր կնիքը դրեց պատերազմական գործողությունների վրա: Նկատվեց որոշակի պասիվություն և ակտիվության պակաս իրաքյան հրամանատարության կողմից: Պետք է նկատի ունենալ նաև այն պարագան, որ իրաքյան բանակը պատերազմ մղելու ոչ մի փորձ չուներ, այն ստեղծվել էր ոչ թե պատերազմական գործողություններ մղելու համար օտարերկրյա պետությունների հետ, այլ ժողովրդական ելույթները ճնշելու և երկրի ներքին անվտանգությունն ապահովելու համար:

Այդ ամենը հանգեցրին Իրաքի ռազմական պարտությանը 1941 թ. անգո–իրաքյան երեսնօրյա պատերազմում:

Անգլիացիների «հաղթանակից» հետո Իրաք վերադարձան Աբդուլ Իլլահը և Նուրի Սաիդը: 1941 թ. հոկտեմբերի 9–ին Նուրի Սաիդը կրկին ստանձնեց կառավարության ղեկավարի պաշտոնը և ձեռնարկեց մի շարք քայլեր, որոնք կոչված էին իրաքյան հետադիմության և անգլիական իմպերիալիզմի դիրքերը ամրապնդելուն. վերակազմվեցին բանակը և ոստիկանությունը, անցկացվեց զտում բանակում, նախարարություններում և պետական այլ հիմնարկներում, ուժեղացվեց գրաքննությունը, բազմաթիվ զինվորական և քաղաքացիական գործիչներ նետվեցին բանտերը:

1941 թ. անգլո–իրաքյան պատերազմն այն հարցերից մեկն է, որը մշտապես գտնվել է մասնագետների ուշադրության կենտրոնում և որի վերաբերյալ արտահայտվել են տարբեր կարծիքներ ու տրվել տարբեր գնահատականներ:

Այդ հարցը, բնականաբար, մեծ տեղ է գրավում անգլիական պատմագիտության մեջ: Նրանք հիմնական գծերով պաշտպանում են Մեծ Բրիտանիայի այն տարիների ղեկավարության, մասնավորապես վարչապետ Ուինստոն Չերչիլի տեսակետն առ այն, որ, ինչպես գրում է Չերչիլը իր «Երկրորդ համաշխարհային պատերազմը» հուշագրության մեջ, Ռաշիդ Ալին աշխատում էր գերմանացիների հետ: Այդ տեսակետը տարբեր վարիացիաներով իր արտացոլումն է գտել Ռ. Բուլարդի, Ջ. Կիրկի, Ֆ. Ստարկի, Ու. Յելի, Ջ. Մորիսի, Մ. Սետոն–Վիլյամսի և անգլիական այլ հեղինակների աշխատություններում: Այսպես, օրինակ՝ Ֆ. Ստարկը գրում է, որ «Ոսկյա քառակուսին» գործում էր գերմանացիների թելադրանքով»: Իսկ մյուսների մոտ տիրապետող է հանդիսանում այն տեսակետը, որ Ռաշիդ Ալի ալ–Գայլանիի խումբը «նացիստամետ ռազմական խմբավորում էր»:

Չնայած այդպիսի ծանր մեղադրանքներին՝ անգլիական հեղինակները չեն բերում հավաստի փաստեր և չեն մատնանշում հուսալի աղբյուրներ, որոնք համոզիչ կերպով հաստատեին նրանց տեսակետները:

Անգլո–իրաքյան պատերազմի բնույթը և նրա պատճառները մի ժամանակ սխալ դիրքերից էին գնահատում նաև որոշ խորհրդային արևելագետներ, մասնավորապես Ֆ. Զունը, Վ. Լուցկին, Ն. Լուցկայան և ուրիշներ, որոնք այդ պատերազմը ուղղակիորեն կապում են ֆաշիստական Գերմանիայի հետ և Ռաշիդ Ալիի շարժումը համարում պրոֆաշիստական շարժում, իսկ Ռաշիդ Ալիին համարում հիտլերյան, ֆաշիստական գործակալ: Հետագայում նոր փաստերի լույսի ներքո և ավելի խորքային հետազոտական աշխատանքների արդյունքում խորհրդային արևելագետները վերանայեցին այդ տեսակետը և ցուցաբերեցին նոր մոտեցում: Դրանց թվում էր Բ. Դանցիգը, որը նախկինում նույնպես կանգնած էր 1941 թ. իրադարձությունները հիտլերականների կողմից հրահրված լինելու տեսակետի վրա: Նորահայտ փաստերի հիման վրա նա եկավ այն եզրակացության, որ «իրաքյան բանակի գործողությունները հրահրված չեն եղել հիտլերյան գործակալների կողմից»: Իսկ Գ. Միրսկու կարծիքով՝ «1941 թ. գարնանը Իրաքը անգլիական տիրապետության շղթայից պոկելու իրաքյան բանակի կողմից ձեռնարկած փորձը պատահական ելույթ չէր, առավել ևս գերմանանպաստ պուտչ չէր, ինչպես փորձում էր դա այդպես ներկայացնել բրիտանական պրոպագանդան»:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Գերմանիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ հրատարակված արխիվային և դիվանագիտական փաստաթղթերը եկան վերջնականապես հաստատելու, որ, իրոք, Ռաշիդ Ալիի շարժումը և անգլո–իրաքյան պատերազմը ոչ մի կապ չեն ունեցել գերմանական ֆաշիստների հետ, դա նրանց կողմից հրահրված չի եղել, իսկ Ռաշիդ Ալին և չորս գնդապետները հիտլերյան գործակալներ չեն եղել: Մենք նույնպես հանգել ենք նույն եզրակացությանը՝ հանգամանորեն ուսումնասիրելով Գերմանիայի արտաքին գործերի նախարարության և այլ պաշտոնական փաստաթղթերն ու նյութերը[19]:

1943 թ. հունվարի 17–ին Իրաքը պատերազմ հայտարարեց Գերմանիային և Իտալիային: Սակայն դա լոկ խորհրդանշական էր, քանի որ

19 Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս **Н. О. Оганесян, Политика империалистических держав на Арабском Востоке в годы второй мировой войны, Ереван, 1980:**

Իրաքը պատերազմական գործողություններին չմասնակցեց, թեև պետք է նշել, որ նրա ռեսուրսները, տրանսպորտի և կապի միջոցները օգտագործվում էին Անգլիայի կողմից:

Աբդուլ Իլլահը, Նուրի Սաիդը և նրանց դաշնակիցները դեռ ուշքի չէին եկել և լրիվ չէին ամրապնդել իրենց դրությունը, երբ սկսվեց քրդական հերթական ապստամբությունը: Քրդական ապստամբությունը Մուսթաֆա Բարզանիի գլխավորությամբ սկսվեց 1943 թ. սեպտեմբերին: Պատճառը իրաքյան իշխանությունների կողմից քրդերի ազգային իրավունքները չճանաչելն էր, ինչպես նաև պատերազմի ժամանակ նրանց տնտեսական վիճակի խիստ վատացումը: Ապստամբները մի շարք ռազմական բախումների ժամանակ պարտության մատնեցին իրաքյան զորամիավորումներին և իրենց վերահսկողությունը հաստատեցին ամբողջ Բարզան շրջանի վրա: Այնուհետև ապստամբությունը տարածվեց Մոսուլի և Էրբիլի շրջաններում: Իրաքի կառավարությունը, ի վիճակի չլինելով ճնշել ապստամբությունը, առաջարկեց կնքել զինադադար՝ բավարարելով ապստամբների մի շարք պահանջները: 1944 թ. սկզբին համաձայնագիր ստորագրվեց Իրաքի կառավարության և քրդերի միջև, որով «նախատեսվում էր Իրաքում ստեղծել քրդական ինքնավար մարզ»: Իրաքի կառավարությունը պարտավորվում էր նաև բարելավել քրդական շրջանների մատակարարումը սննդամթերքով և այլն:

Սակայն քրդերին տրված խոստումները չկատարվեցին, և նրանք կրկին դիմեցին զենքի: 1944–1945 թթ. սկսվեց ապստամբության երկրորդ փուլը: Իրաքյան զորքերին անգլիական ավիացիայի, ինչպես նաև Թուրքիայի օգնությամբ 1945 թ. աշնանը հաջողվեց ճնշել ապստամբությունը:

5. Դրությունը Իրաքում հետպատերազմյան առաջին տարիներին

Երկրորդ համաշխարհային պատերազմում դեմոկրատական ուժերի հաղթանակը ֆաշիզմի նկատմամբ բարենպաստ պայմաններ ստեղծեց ազատագրական և դեմոկրատական շարժումների համար Ասիայի և Աֆրիկայի երկրներում, այդ թվում և Իրաքում: Աս–Սուվեյդիի կառավարությունը, որը կազմվեց 1946 թ. փետրվարին, ընդունեց մի շարք որոշումներ երկրի ներքաղաքական կյանքի դեմոկրատացման ուղղությամբ: Վերացվեցին ռազմական դրությունը, մամուլի գրաքննությունը, Ամարայում գոյություն ունեցող համակենտրոնացման ճամբարը, բանվորներն իրավունք ստացան կազմակերպել իրենց արհմիու-

թյունները, փոփոխություններ մտցվեցին ընտրական օրենքում: 1946 թ. ապրիլին ընդունվեց օրենք կուսակցությունների լեգալ գործունեությունը թույլատրելու մասին:

Հետպատերազմյան առաջին տարիներին Իրաքի քաղաքական ասպարեզում հայտնվեին մի քանի նոր կուսակցություններ: Նրանց մեջ իր նշանակությամբ աչքի էր ընկնում Ազգային դեմոկրատական կուսակցությունը, որի ղեկավարն էր Քամիլ Չադերչին: Նա արտահայտում էր ազգային բուրժուազիայի, մասնավորապես նրա միջին և մանր խավերի շահերը:

1946 թ. ձևավորվեց «Հիզբ ալ–Իստիկլալ»՝ Անկախության կուսակցությունը, որն ավելի աջակողմյան էր և ներկայացնում էր խոշոր բուրժուազիայի և մանր ֆեոդալների շահերը: Մյուս կուսակցություններից պետք է նշել նաև «Հիզբ ալ–Ահրար»՝ Լիբերալների կուսակցությունը, ինչպես նաև ժողովրդի, Ազգային միասնության և Ազգային ազատագրության առաջադիմական կուսակցությունները: 1946 թ. ձևավորվեց Քրդստանի դեմոկրատական կուսակցությունը՝ ՔԴԿ՝ Մուսթաֆա ալ–Բարզանիի գլխավորությամբ: Այդ կուսակցությունն իր սոցիալական կազմով խայտաբղետ էր, և նրա շարքերում միավորվել էին քրդական ֆեոդալների, ազգային բուրժուազիայի, մտավորականության, ինչպես նաև աշխատավորության ներկայացուցիչները: Կուսակցությունը հանդես էր գալիս քրդերին Իրաքի շրջանակներում ինքնավարություն տալու պահանջով:

Իրաքյան իշխանությունները լեգալ գործունեության իրավունք տվեցին Իրաքի կոմունիստական կուսակցությանը: 1945 թ. ապրիլին տեղի ունեցավ կոմկուսի առաջին համագումարը, որն ընդունեց կուսակցության ծրագիրը: Նրանում մասնավորապես շեշտվում էր, որ կուսակցությունը պայքարում է Իրաքի լրիվ ազգային անկախության, ներքին կյանքի դեմոկրատացման, ազգային տնտեսության զարգացման, ագրարային ռեֆորմի կիրառման, աշխատավորների տնտեսական դրության բարելավման համար: Համագումարը Յուսուֆ Սալմանին ընտրեց կուսակցության գլխավոր քարտուղար:

Կոմունիստական կուսակցությունը կարևոր էր համարում ոչ արաբ ժողովուրդների՝ քրդերի, հայերի, թուրքմենների և ասորիների իրավունքների ճանաչումը և հարգումը: Ելնելով այդ խնդիրներից՝ Իրաքի կոմունիստական կուսակցության առաջին համագումարի որոշմամբ ստեղծվեցին քրդական և հայկական սեկցիաներ: Հայկական սեկցիան հայերեն լեզվով լույս էր ընծայում «Հիմք» թերթը:

Այս շրջանում ակտիվացավ աշխատավորների պայքարը իրենց իրավունքների և տնտեսական վիճակի բարելավման համար: 1946 թ. հուլիս–սեպտեմբեր ամիսներին տեղի ունեցան Կիրկուկի նավթագործների, Բաղդադի տպագրիչների և երկաթուղային բանվորների, Բասրայի նավավերանորոգման գործարանի բանվորների գործադուլները, իսկ 1947 թ. մի շարք ուսանողական ցույցեր՝ Բաղդադում, Նաջաֆում, Դիվանիյայում, Սուլեյմանիյայում: Թեև դանդաղ, բայց ոտքի էին ելնում նաև գյուղացիները:

Ժողովրդական զանգվածների շարժման աճը վախեցրեց Իրաքի կառավարող վերնախավին և հետադիմությանը, որն անցավ հարձակման: 1947 թ. հունվարի 13–ին ձերբակալվեցին Իրաքի կոմունիստական կուսակցության մի շարք ղեկավարներ, այդ թվում և գլխավոր քարտուղար Յուսուֆ Սալմանը: Ռեակցիան ավելի ուժեղացավ, երբ 1947 թ. ապրիլին Նուրի Սաիդը կրկին դարձավ վարչապետ. փակվեցին մի շարք առաջադիմական թերթեր, սկսվեց դեմոկրատական կազմակերպությունների և առաջադիմական գործիչների հետապնդումը, կատարվեցին զանգվածային ձերբակալություններ:

6. Պորտսմուտի պայմանագիրը և 1948 թ. ապստամբությունը

Սակայն Իրաքի կառավարությունն անզոր էր կանգնցնել թագավորական–ֆեոդալական վարչակարգի և իմպերիալիզմի դեմ ուղղված ելույթները: Կրկին ուժեղացավ 1930 թ. պայմանագիրը չեղյալ հայտարարելու պահանջը: Անգլիան, որի գաղութային դիրքերը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո թուլացել էին Մերձավոր և Միջին Արևելքում, փորձեց առերես զիջել, ցույց տալ, որ հաշվի է առնում Իրաքի ժողովուրդների պահանջները: 1948 թ. հունվարի 15–ին երկար բանակցություններից հետո անգլիական Պորտսմուտ քաղաքում Անգլիայի արտաքին գործերի մինիստր Էռնստ Բևինը և Իրաքի վարչապետ Սալիհ Ջաբրը ստորագրեցին նոր պայմանագիր, որը չեղյալ էր հայտարարում 1930 թ. պայմանագիրը: Սակայն, ըստ նոր պայմանագրի և նրա հավելվածի, ստեղծվում էր «Համատեղ անգլո–իրաքյան պաշտպանության օրգան», Անգլիան կարող էր իր զորքերը թողնել Իրաքում, օգտագործել նրա բոլոր օդային բազաները: Իրաքը պարտավորվում էր անգլիական զորքերին ցույց տալ ամեն տեսակի օգնություն ցամաքում, օդում և ջրում: Իրաքի բանակը պետք է անգլիական բանակի հետ համագործակցեր ոչ միայն երկրի ներսում, այլև Իրաքի սահմաններից

դուրս: Իրաքը պարտավորվում էր նաև իր բանակը զինել անգլիական զենքով, իսկ բանակը վարժեցնելու համար հրավիրել միայն անգլիական զինվորական հրահանգիչներ:

1948 թ. Պորտսմուտի պայմանագիրը ոչ միայն չվերացրեց 1930 թ. պայմանագրի ծանր պայմանները, այլև ուժեղացրեց Իրաքի կախվածությունն Անգլիայից:

Հունվարի 16–ից, երբ հայտնի դարձավ նոր պայմանագրի բովանդակությունը Իրաքի հասարակայնությանը, կուսակցություններին և քաղաքական գործիչներին, սկսվեցին ժողովրդական ելույթներ, որոնք հունվարի 26–27–ին վերածեցին զինված ապստամբության:

Արաբների հետ ապստամբությանը մասնակցում էին և նրանց հետ կողք կողքի պայքարում նաև քրդերը և հայերը: Հունվարի 27–ին մարտեր սկսվեցին ապստամբների և զինված ոստիկանական ուժերի միջև Բաղդադում: Դրությունը նույնն էր նաև երկրի հյուսիսային և հարավային շրջաններում: Վճռական ճակատամարտը ապստամբների և կառավարական ուժերի միջև տեղի ունեցավ Բաղդադի կենտրոնական կամրջի վրա, որն ավարտվեց ապստամբների հաղթանակով: Սալիհ Ջաբրը հրաժարական տվեց և փախավ երկրից: Իրաքի պառլամենտը որոշում ընդունեց մերժել Պորտսմուտի պայմանագիրը, իսկ փետրվարի 4–ին նոր վարչապետ Մուհամմադ Սադրը պաշտոնապես հայտարարեց, որ Իրաքը չեղյալ է հայտարարում 1948 թ. պայմանագիրը: Դա երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Իրաքի ազգային–հայրենասիրական ուժերի առաջին խոշոր հաղթանակն էր:

Մուհամմադ Սադրի կառավարությունը հարկադրված էր բռնությունները մեղմացնել և ժողովրդին տալ որոշ դեմոկրատական ազատություններ: Բայց այդ վիճակը երկար չշարունակվեց: 1948 թ. մայիսին սկսված արաբա–իսրայելական պատերազմի կապակցությամբ Իրաքում մտցվեց արտակարգ դրություն, որից օգտվելով՝ իրաքյան հետադիմությունը կրկին հարձակման անցավ աշխատավորների դեմոկրատական իրավունքների վրա: Բռնությունները և ճնշումներն ավելի սաստկացան, երբ 1949 թ. հունվարին կրկին իշխանության գլուխ եկավ Նուրի Սաիդը: 1949 թ. փետրվարի 19–ին կախաղան բարձրացվեցին Իրաքի կոմկուսի՝ դեռևս 1947 թ. ձերբակալված ղեկավարները, այդ թվում՝ գլխավոր քարտուղար Յուսուֆ Սալմանը, շատերը դատապարտվեցին ցմահ բանտարկության ու տաժանակիր աշխատանքների: Հալածանքների ենթարկվեցին նաև Իրաքի այլ դեմոկրատական ուժեր:

7. Գործադուլային պայքարի ուժեղացումը և օտարերկրյա նավթային ընկերությունների ազգայնացման համար ծավալված շարժումը

Ուշքի գալով հետադիմության հասցրած ծանր հարվածներից՝ Իրաքի ժողովրդական զանգվածները 50-ական թվականների սկզբներին կրկին պայքար են ծավալում իրենց իրավունքների պաշտպանության և երկրի լիակատար անկախության համար: 1950 թ. դեկտեմբերին սկսվեց Իրաքի բոլոր բանկերի ծառայողների գործադուլը, որին մասնակցում էր 5 հազ. մարդ: 1951 թ. մայիսի 1-ին գործադուլ հայտարարեցին Բաղդադի տեքստիլ ֆաբրիկայի բանվորները, որոնց հետ իրենց համերաշխությունը հայտնեցին տնտեսության այլ ճյուղերի բանվորներ: Նույն թվականի մարտին սկսվել էր Բասրայի նավթագործների գործադուլը, որը ավարտվեց նրանց հաղթանակով: 1951 թ. հուլիսին խոշոր ցույցեր սկսվեցին անգլիական ռազմաօդային բազա Շուայբայում, իսկ 1952 թ. հունիսին՝ անգլիական մյուս ռազմաօդային բազայում՝ Հարբանիյայում: Այս վերջին ելույթները բիրտ կերպով ճնշվեցին անգլիական զորքերի և Իրաքի ոստիկանության միացյալ ուժերով:

Տեղի ունեցան նաև մի շարք ուսանողական ելույթներ: Ոտքի ելան նաև գյուղացիները: 1951 թ. գյուղացիական մի շարք ելույթներ տեղի ունեցան Բասրայի, Քութի և Ամարայի լիվաներում՝ նահանգներում: Սակայն այս շրջանի ամենաաչքի ընկնողը Ամարայի գյուղացիների 1952 թ. զինված ելույթն էր, որը ճնշվեց ամենայն դաժանությամբ:

Ահա այսպիսի պայմաններում Իրաքի դեմոկրատական ուժերը առաջադրեցին Իրաքի նավթարդյունաբերության ազգայնացման պահանջը՝ գտնելով, որ Իրաքը չի կարող հասնել լրիվ անկախության առանց նավթի ազգայնացման: 1951 թ. մարտին իրաքյան պառլամենտի 18 դեպուտատներ առաջարկություն մտցրեցին ընդունել օրենք առանց բացառության բոլոր նավթային ընկերությունների ազգայնացման վերաբերյալ:

Հարկ է նշել, որ նավթի ազգայնացման համար Իրաքում ծավալված շարժման վրա մեծ ազդեցություն էր գործել անգլո-իրանական նավթային ընկերության ազգայնացումը Իրանում, որն իրականացրեց Մոսադեղի կառավարությունը 1951-1953 թթ.: Նավթարդյունաբերության ազգայնացման համար սկսված շարժումը լրջորեն անհանգստաց-

րեց Անգլիային և ԱՄՆ–ին: Անգլիան շտապ կարգով զորքեր տեղափոխեց Բասրա և Կիրկուկ, ուժեղացրեց իր ռազմաօդային բազաները Իրաքում: Իսկ Իրաքի կառավարությունը ուժեղացրեց բռնարարքներն ու ձերբակալությունները: Սակայն դա անզոր էր կոտրել պայքարի թափը:

Օտարերկրյա մոնոպոլիաները, հաշվի առնելով Իրանի դառը փորձը, հասկանում էին, որ անհրաժեշտ է դիմել զիջումների, հակառակ դեպքում Իրաքում նս իրադարձությունների զարգացումն այնպիսի բնույթ կարող է կրել, ինչպես Իրանում, և իրենք կարող են կորցնել ամեն ինչ:

1951 թ. օգոստոսին Իրաքի կառավարության և Իրաքում գործող երեք նավթային ընկերությունների միջև կնքվեց նավթային նոր համաձայնագիր: Եթե նախկինում Իրաքը արդյունահանվող յուրաքանչյուր տոննա նավթի համար ստանում էր մի չնչին գումար՝ 4 շիլինգ, իսկ առյուծի բաժինը մտնում էր օտարերկրյա նավթային մոնոպոլիաների գրպանը, ապա այժմ սահմանվեց ստացվող շահույթների հավասար բաժանման՝ 50/50–ի սկզբունքը:

Այսպիսով՝ թեև Իրաքի դեմոկրատական ուժերի պայքարը չհանգեցրեց նավթարդյունաբերության ազգայնացմանը, սակայն շահույթների հավասար բաժանման սկզբունքի ընդունումը պետք է դիտել որպես որոշակի նվաճում:

1951 թ. հոկտեմբերի 13–ին ԱՄՆ–ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Թուրքիայի կառավարությունները դիմեցին արաբական երկրներին՝ Եգիպտոսին, Իրաքին, Սիրիային, Սաուդյան Արաբիային, Լիբանանին, Հորդանանին և Եմենին, ինչպես նաև Իսրայելին՝ առաջարկելով նրանց միավորել իրենց ռազմական ուժերը և ստեղծել ռազմական բլոկ՝ «Միջինարևելյան հրամանատարություն»: Նրանում պետք է միավորվեին նաև Ավստրալիան, Նոր Զելանդիան և Հարավ–Աֆրիկյան Միությունը: Դրանով իմպերիալիստական ուժերը ձգտում էին առաջին՝ արաբական երկրները ներգրավել սառը պատերազմի մեջ և նրանց օգտագործել Խորհրդային Միության դեմ, և երկրորդ՝ որոշակի վերահսկողություն սահմանել արաբական երկրների վրա և ի հարկին ճնշել արաբական երկրներում ծավալված ազգային–ազատագրական շարժումներն ու պաշտպանել իրենց հավատարիմ վարչակարգերը:

Իրաքի կառավարությունը հակված էր միանալու այդ ռազմական խմբավորմանը: Սակայն դրա դեմ լայն պայքար ծավալեցին ժողովրդական զանգվածները, քաղաքական տարբեր հոսանքները, ուժերը, կուսակցությունները և կազմակերպությունները: Նրանք գտնում էին, որ Իրաքը

չպետք է միանա նման ռազմական խմբավորումներին և նրա ազգային շահերին ավելի համապատասխանում է ռազմաքաղաքական բլոկներին չմիանալու քաղաքականությունը: Երկրում ստեղծվեց մի իրադրություն, երբ առաջարկվող ռազմական խմբավորմանը միանալը հղի էր մեծ վտանգներով Իրաքի վարչակարգի համար: Բացի այդ, Եգիպտոսը և արաբական այլ երկրներ բացասական դիրք գրավեցին «Միջինարևելյան հրամանատարություն» ստեղծելու առաջարկության հանդեպ:

Ստեղծված պայմաններում ԱՄՆ–ը, Անգլիան և նրանց դաշնակիցները հարկադրված էին նահանջել և ժամանակավորապես հրաժարվել իրենց մտադրությունից:

8. 1952 թ. ապստամբությունը

1952 թ. աշնանն Իրաքում կրկին լարված վիճակ ստեղծվեց, որը կապված էր առաջիկա պառլամենտական ընտրությունների հետ: Ընտրություններն Իրաքում երկաստիճան էին, սովորաբար տեղի էին ունենում ոստիկանական ռեժիմի պայմաններում, և թույլ տրվում կեղծիքներ: Իրաքի դեմոկրատական ուժերը պահանջեցին վերացնել երկաստիճան ընտրությունները և մտցնել ուղղակի ընտրական համակարգ: Իրաքի կառավարությունը մերժեց դեմոկրատական ուժերի այդ պահանջը: Ի պատասխան կառավարության այդ քայլի՝ երկրում սկսվեցին ցույցեր և գործադուլներ: 1952 թ. նոյեմբերի 22–ին և 23–ին Բաղդադում տեղի ունեցան հզոր ցույցեր, որոնց մասնակցում էր 20 հազ. մարդ: Պայքարի ավանգարդում ընթանում էին բանվորները և ուսանողները, որոնք հանդես էին գալիս «Կորչեն անգլո–ամերիկյան իմպերիալիստները», «Կորչեն խարդախ ընտրությունները», «Կորչի գոյություն ունեցող ռեժիմը» լոզունգների ներքո: Բաղդադի շատ թաղերում ցուցարարները համարձակորեն մարտի մեջ էին մտնում ոստիկանների հետ: Խոշոր ելույթներ տեղի ունեցան նաև Նաջաֆում, Դիվանիյայում և այլ վայրերում:

Կառավարությունը, տեսնելով, որ սովորական միջոցներով ի վիճակի չէ երկրում կարգ ու կանոն հաստատել, Իրաքի ապստամբ ժողովրդի դեմ հանեց բանակը: 1952 թ. նոյեմբերի 23–ին տանկերը և զրահամեքենաները գրավեցին Բաղդադի բոլոր ստրատեգիական կետերը: Գահի խնամակալ Աբդուլ Իլլահը շտաբի պետ Մուհամմադ Նուր ադ–Դինին նշանակեց վարչապետ, ինչը սահմանադրության կոպիտ խախտում

էր, որովհետև Իրաքի սահմանադրությունը արգելում էր բանակի շտաբի պետին կառավարության ղեկավար նշանակել:

Բանակին հաջողվեց ճնշել ապստամբությունը: Միայն մի գիշերվա ընթացքում ձերբակալվեց 2 հազ. հայրենասեր, եղան բազմաթիվ զոհեր, երկրում մտցվեց ռազմական դրություն, արգելվեցին ցույցերն ու ժողովները, փակվեցին 17 առաջադիմական թերթեր, արձակվեցին բոլոր քաղաքական կուսակցությունները:

Դրա հետ միասին Իրաքի կառավարությունը հարկադրված էր բավարարել ընդդիմության մի կարևոր պահանջը: Նա վերացրեց երկաստիճան ընտրական կարգը, և 1953 թ. Իրաքում առաջին անգամ անցկացվեցին ուղղակի պառլամենտական ընտրություններ: 1953 թ. հունվարին Մուհամմադ Նուր ադ–Դինը կառավարության ղեկավարի պաշտոնում իր տեղը զիջեց Ջամիլ Մադֆաիին: Դա նշանակում էր ռազմական դիկտատուրայի անկում, թեև երկրում դեռևս պահպանվում էր ռազմական դրությունը:

Այսպիսով՝ 1952 թ. ապստամբության շնորհիվ ձեռք բերվեցին երկու կարևոր նվաճումներ: Առաջին՝ Իրաքում երկաստիճան ընտրական համակարգի փոխարեն հաստատվեց ուղղակի, միաստիճան ընտրական համակարգ, որը մի քայլ առաջ էր երկրի դեմոկրատացման ճանապարհին, երկրորդ՝ տապալվեց ռազմական դիկտատուրան, որը ցույց տվեց, որ ընդդիմադիր դեմոկրատական ուժերի համախմբվածության և համատեղ գործողությունների պարագայում հնարավոր է հասնել որոշակի արդյունքների նույնիսկ մի այնպիսի բռնատիրական երկրում, ինչպիսին Իրաքն էր, որտեղ հաստատված դիկտատորական–ոստիկանական ռեժիմը Իրաքի պատմության մեջ մտել է որպես «Սև ռեժիմ»:

Սակայն իրաքցիների պայքարը դրանով չավարտվեց:

1953 թ. մայիսին լրացավ թագաժառանգ Ֆեյսալի 18 տարին, և նա, Իրաքի օրենքների համաձայն, դառնալով չափահաս, իրավունք ստացավ նստել գահի վրա: Աբդուլ Իլլահի խնամակալական իրավունքներն ու պարտականություններն ավարտվեցին, և Ֆեյսալը հռչակվեց թագավոր՝ կրելով Ֆեյսալ II տիտղոսը:

Իրաքցիները հույս ունեին, որ իրենց համար ատելի Աբդուլ Իլլահի հեռացումով և նոր երիտասարդ թագավորի գահ բարձրանալով երկրում հնարավոր է կիրառել ավելի մեղմ քաղաքականություն, հրաժարվել բացահայտ և կոշտ բռնատիրական քաղաքականությունից: 1953 թ. հուլիսին Բաղդադի ավելի քան 5 հազ. բնակիչներ մի խնդրագիր ու-

ղարկեցին Ֆեյսալ II–ին՝ պահանջելով վերացնել արտակարգ օրենքները, բանտերից ազատել քաղաքական բանտարկյալներին, չեղյալ հայտարարել 1930 թ. անգլո–իրաքյան պայմանագիրը և այլն: Կառավարող վերնախավը վերջիվերջո հարկադրված էր զիջել: 1953 թ. սեպտեմբերի 17–ին իշխանության գլուխ եկած Ֆադիլ ալ–Ջամալիի կառավարությունը վերացրեց ռազմական դրությունը և թույլատրեց ընդդիմադիր կուսակցությունների լեգալ գործունեությունը: Դա հնարավորություն տվեց վերջիններիս միավորել իրենց ուժերը և 1954 թ. հունիսին տեղի ունեցած ընտրությունների ժամանակ հանդես գալ միասնական ճակատով: Նրանց 10 թեկնածուներ ընտրվեցին Իրաքի պառլամենտի անդամ, ինչը պետք է համարել նշանակալի հաղթանակ Իրաքի նման մի երկրում: Սակայն ընտրություններում ընդհանուր առմամբ հաղթանակեցին հետադիմական ուժերը և նրանց շահերն արտահայտող Սահմանադրական միություն կուսակցությունը, որը հիմնել էր Նուրի Սաիդ դեռևս 1949 թ.: Հենց նա էլ դարձավ Իրաքի վարչապետ:

9. Բաղդադի պակտի ստեղծումը: Անգլո–իրաքյան 1930 թ. պայմանագրի վերացումը

Ամեն անգամ, երբ Նուրի Սաիդը իշխանության գլուխ էր կանգնում, Իրաքում հաստատվում էր ոստիկանական–ահաբեկչական ռեժիմ, և իմպերիալիստական ուժերն աշխատում էին նրա օգնությամբ իրականացնել իրենց ագրեսիվ պլանները: Բացառություն չեղավ նաև այս անգամ:

Նուրի Սաիդը որոշեց անպայման միանալ ԱՄՆ–ի և Անգլիայի կողմից ծրագրվող տարածաշրջանային ռազմական խմբավորմանը: Սակայն մինչ այդ նա դիմեց մի շարք քայլերի ընդդիմությունը ուժերին ճնշելու համար: 1954 թ. օգոստոսի 22–ին Նուրի Սաիդի կառավարությունն ընդունեց «Դեկրետ Իրաքի հպատակությունից զրկելու մասին», որով Իրաքի իշխանությունները օրենքով իրավունք էին ձեռք բերում առաջադեմ հայացքների տեր իրաքցիներին զրկել քաղաքացիությունից: Նույն օրն ընդունված նաև «Արհմիությունների մասին դեկրետով» լուծարվեցին բոլոր արհմիությունները: 1954 թ. սեպտեմբերի 22–ին ընդունվեց այսպես կոչված ասոցիացիների վերաբերյալ դեկրետը: Ըստ այդ դեկրետի լուծարվեցին բոլոր քաղաքական կուսակցությունները, հասարակական, գրական–գեղարվեստական և սպորտային կազմա-

կերպություններն ու ակումբները՝ ընդհանուր առմամբ 465 կազմակերպություն: 1954 թ. նոյեմբերի 10–ի «Մամուլի մասին դեկրետով» փակվեցին 225 քաղաքական, գիտական ու հասարակական թերթեր ու ամսագրեր: Երկրում դադարեց լեգալ քաղաքական և հասարակական կյանքը: Դա մի աննախադեպ երևույթ էր անգամ Իրաքի համար: Երկրում մոլեգնում էր հետադիմությունը: Դրան պետք է ավելացնել Իրաքի կառավարության 1954 թ. նոյեմբերի 7–ի որոշումը Մոսկվայում իրաքյան դիվանագիտական միսիայի փակման և Իրաքի արտաքին գործերի մինիստրության 1955 թ. հունվարի 3–ի հայտարարությունը Իրաքի և ԽՍՀՄ–ի միջև դիվանագիտական հարաբերությունների ընդհատման մասին:

Այս բոլորից հետո Նուրի Սաիդը, անտեսելով Իրաքի ժողովրդի դիմադրությունը և հաշվի չառնելով արաբական մյուս երկրների դիրքորոշումը, որոնք դեմ էին ռազմական դաշինքների և բլոկների ստեղծմանը տարածաշրջանում, 1955 թ. փետրվարի 24–ին Բաղդադում 5 տարի ժամանակով Թուրքիայի հետ կնքեց ռազմական դաշինք, որով դրվեց Բաղդադի ագրեսիվ ռազմական պակտի հիմքը: Կողմերը պարտավորվում էին համագործակցել «անվտանգության և պաշտպանության նպատակներով»: Նրանում նշված էր, որ պայմագիրը բաց է, և նրան կարող են միանալ նաև այլ երկրներ: 1955 թ. ապրիլի 4–ին դրան միացավ Անգլիան:

Միաժամանակ Իրաքի և Անգլիայի միջև կնքվեց «Հատուկ համաձայնագիր», որով չեղյալ էր համարվում 1930 թ. անգլո–իրաքյան պայմանագիրը: Սակայն Անգլիան ըստ նոր համաձայնագրի պահպանում էր Իրաքում իր քաղաքական և ռազմական տիրապետությունը: Անգլիան և Իրաքը համագործակցելու էին միմյանց անվտանգությունն ու պաշտպանությունն ապահովելու նպատակներով: Անգլիան ձնականորեն Հաբբանիյայի, Շուայբեյի և Մարգիլի ռազմաօդային բազաները դնում էր իրաքյան հրամանատարության տրամադրության տակ: Բայց միաժամանակ պայմանագիրն իրավունք էր վերապահում Անգլիային՝ օգտագործել դրանք «համատեղ պաշտպանական նպատակներով»: Իրաքում մնում էին անգլիական ռազմաօդային բազաների աշխատակազմը, հրահանգիչները, տեխնիկները և այլն՝ «օգնություն ցույց տալու և իրաքյան բանակը վարժեցնելու համար»: Անգլիան պահպանեց իրաքյան բանակը վարժեցնելու և նրան զենք մատակարարելու իր մոնոպոլ իրավունքը: Նոր համաձայնագրով անգլիական ինքնաթիռները կարող էին ազատ թռչել Իրաքի տերիտորիայի վրայով, իսկ նավերը՝ ուզած ժամանակ մտնել Շատ ալ–Արաբի ջրերը:

Ինչպես տեսնում ենք, նոր համաձայնագիրը բովանդակային առումով ոչնչով չէր տարբերվում 1930 թ. պայմանագրից: Եվ թեև այն համարվեց վերացված, այդուհանդերձ, Անգլիայի դիրքերը չսասանվեցին Իրաքում: Իրաքի և Անգլիայի հարաբերությունները շարունակում էին խարսխվել հին սկզբունքների վրա, և Իրաքը չվերածվեց իսկապես անկախ ու ինքնիշխան պետության:

1955 թ. սեպտեմբերի 23–ին Բաղդադի պայմանագրին միացավ Պակիստանը, իսկ նոյեմբերի 3–ին՝ Իրանը: Այսպես լույս աշխարհ եկավ Բաղդադի ագրեսիվ պակտը, որը կազմակերպչորեն վերջնականապես ձևավորվեց 1955 թ. նոյեմբերի 21–22–ին Իրաքի մայրաքաղաք Բաղդադում տեղի ունեցած Անգլիայի, Իրաքի, Թուրքիայի, Պակիստանի և Իրանի ներկայացուցիչների հիմնադիր ժողովում:

Բաղդադի պակտը ագրեսիվ ռազմական խմբավորում էր, որի նպատակն էր. առաջին՝ ստեղծել ռազմական պլացդարմ ԽՍՀՄ հարավային սահմանների մոտ, երկրորդ՝ ռազմական այդ խմբավորումն օգտագործել տարածաշրջանի՝ Մերձավոր և Միջին Արևելքի բոլոր ժողովուրդների ազգային–ազատագրական շարժումները ճնշելու համար, երրորդ՝ այդ բլոկի մեջ մտնող երկրների զինված ուժերի փոխադարձ համագործակցությամբ պահպանել այդ երկրներում գոյություն ունեցող հակաժողովրդական, հետադիմական ռեժիմները:

ԱՄՆ–ը ձևականորեն չմիացավ Բաղդադի պակտին, սակայն նա դրա ամենաակտիվ ստեղծողներից մեկն էր և հետագայում միացավ նրա Տնտեսական կոմիտեին և Քայքայիչ գործողությունների դեմ պայքարող կոմիտեին:

Բաղդադի պակտի կնքումը Իրաքի ժողովուրդը՝ արաբները, քրդերը, հայերը և այլք, ընդունեցին խոր զայրույթով: Բաղդադում, Բասրայում, Սուլեյմանիյայում, Ամարայում, Նասիրիյայում, ալ–Հայյում և երկրի այլ վայրերում տեղի էին ունենում ելույթներ, ցույցեր, միտինգներ, տարածվում թռուցիկներ՝ ուղղված Բաղդադի պակտի դեմ: Նուրի Սաիդը կանխատեսել էր դա և նախօրոք մարտական պատրաստականության մեջ էր դրել բանակը և ոստիկանական ուժերը: Պառլամենտի շուրջը և Բաղդադի փողոցներում տեղադրվել էին տանկեր և զինվորական ջոկատներ, զինվորներին և ոստիկաններին հրաման էր տրված առանց զգուշացնելու կրակ բացել ցուցարարների վրա: Սակայն դա չկարողացավ կանխել ելույթները, ցույցերը և միտինգները: Մի շարք վայրերում, ինչպես Ամարայում, Նասիրիյայում և ալ–Հայյում, արյունա-

լի բախումներ տեղի ունեցան ոստիկանության հետ: Բաղդադում տեղի ունեցած ցույցերին մասնակցում էին տասնյակ հազարավոր ցուցարարներ: Ոստիկանությունը նրանց վրա կրակ բացեց և դաժան հաշվեհարդար տեսավ ցուցարարների՝ բանվորների ու ուսանողների հետ: Երկրում մտցվեց արտակարգ դրություն: Կառավարությունը ժամանակավորապես փակեց ուսումնական հաստատությունները: 1955 թ. դեկտեմբերի 25–ին Իրաքի 140 ականավոր քաղաքական և հասարակական գործիչներ նամակ հղեցին Ֆեյսալ II–ին՝ պահանջելով Նուրի Սաիդի հրաժարականը, երկրի արտաքին քաղաքական կուրսի փոփոխություն, դուրս գալ Բաղդադի պակտից և վերականգնել դեմոկրատական ազատությունները:

Այս պահից սկսած՝ Իրաքի հակաիմպերիալիստական ուժերն իրենց գլխավոր հարվածն ուղղում են Բաղդադի պակտի դեմ:

10. 1956 թ. նոյեմբերյան զինված ապստամբությունը

1956 թ. հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին Անգլիան, Ֆրանսիան և Իսրայելը պատերազմ սանձազերծեցին Եգիպտոսի դեմ՝ Սուեզի ջրանցքը վերջինիս կողմից ազգայնացնելու կապակցությամբ: Ագրեսորներն իրենց պլանների իրականացման գործում մեծ հույսեր էին կապել Բաղդադի պակտի, հատկապես Իրաքի հետ: Սակայն այդ հույսերը չարդարացան: Իրաքի ժողովուրդը ոտքի ելավ՝ ի պաշտպանություն Եգիպտոսի արդարացի պայքարի: Երկրի դեմոկրատական–հայրենասիրական ուժերը կառավարությունից պահանջում էին լիակատար աջակցություն ցույց տալ Եգիպտոսին, դուրս գալ Բաղդադի պակտից, խզել դիվանագիտական հարաբերությունները Անգլիայի, Ֆրանսիայի և Թուրքիայի հետ, դադարեցնել նավթի մատակարարումը ագրեսորներին: Ժողովրդական շարժումների ճնշման տակ Իրաքի կառավարությունը խզեց դիվանագիտական հարաբերությունները Ֆրանսիայի հետ և հայտարարեց, որ չի մասնակցի Բաղդադի պակտի խորհրդի նիստերին, եթե այնտեղ ներկա գտնվեն Անգլիայի ներկայացուցիչները: Սակայն շուտով Իրաքի հասարակությանը հայտնի դարձավ, որ Նուրի Սաիդի թույլատվությամբ Անգլիան Եգիպտոսի քաղաքները և գյուղերը ռմբակոծելու համար օգտագործում է Իրաքի օդանավակայանները և իրաքյան վառելանյութը: Հայտնի դարձավ նաև, որ Իրաքը դավադրություն է նախապատրաստում Սիրիայի դեմ, որը թիկունքից պաշտպանում էր Եգիպտո-

սին: Նուրի Սաիդի այդ դավաճանական քաղաքականությունը նոր ապստամբության պատճառ դարձավ: Երկրի տարբեր վայրերում ապստամբության ղեկավարման համար ստեղծվեցին ազգային կոմիտեներ: Ապստամբությունն առանձնապես մեծ թափ ընդունեց Նաջաֆում և Կուտ ալ–Հայում, որտեղ ապստամբները քաղաքի կառավարումը վերցրին իրենց ձեռքը: Ապստամբությունն ընդգրկեց նաև երկրի մյուս շրջանները և քաղաքները՝ Բաղդադ, Բասրա, Սուլեյմանիյա, Մոսուլ, Կիրկուկ, Ամարա, Դիվանիյա և այլն: Կիրկուկի բանվորները պայթեցրին նավթամուղը՝ ագրեսորներին նավթից զրկելու համար:

1956 թ. իրադարձություններին բավականին ակտիվորեն մասնակցեցին գյուղացիները, մասնավորապես Միջին Եփրատի, Տիգրիսի շրջաններում և Բաղդադի լիվայում: Հուզումները համակեցին նաև բանակը: Հայրենասեր սպաները պահանջում էին պաշտպանել Եգիպտոսին, իսկ իրաքյան բանակի բրիգադների հրամանատարները որոշեցին չպատերազմել Սիրիայի դեմ, եթե նրա վրա հարձակվելու հրաման տրվի: Հորդանանում տեղակայված իրաքյան զորամասերի սպաները և զինվորները, որպես բողոքի նշան, չենթարկվեցին Նուրի Սաիդի հրամանին՝ վերադառնալ Իրաք:

Հուսահատ Նուրի Սաիդը դիմեց ցեղապետների օգնությանը: Սակայն վերջիններս հրաժարվեցին նրան օգնության ձեռք մեկնել՝ հայտարարելով, որ ապստամբությունը ազատագրական բնույթ է կրում: Դեռ ավելին՝ շիա ցեղերի շեյխերը եկան Բաղդադ, մտան արքայական պալատ և հայտարարեցին, որ իրենք չեն հեռանա, մինչև Նուրի Սաիդը հրաժարական չտա:

Ֆեյսալ II–ը ցրեց պառլամենտը և 1956 թ. դեկտեմբերի 1–ից մտցրեց ռազմական դրություն: Բաղդադ մտցվեցին երկու զրահատանկային բրիգադներ, ակտիվացան ոստիկանության գործողությունները, սկսվեցին զանգվածային ձերբակալությունները: Բանակը, մասնավորապես զրահատանկային ուժերը, նետվեցին ապստամբների դեմ՝ արյան մեջ խեղդելով հայրենասիրական ուժերի ելույթները: Կառավարությանը մեծ ջանքերի գնով հաջողվեց ճնշել ապստամբությունը:

Չնայած պարտությանը՝ 1956 թ. ապստամբությունը, այդուհանդերձ, խաղաց իր կարևոր դերը: Այն ձախողեց Իրաքը Եգիպտոսի դեմ օգտագործելու իմպերիալիստական պլանները, սասանեց Բաղդադի պակտի հիմքերը և հանդիսացավ միապետական ռեժիմի տապալման կարևոր էտապներից մեկը:

V. ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

1. «Ազատ սպաներ» գաղտնի զինվորական կազմակերպության և Ազգային միասնության ճակատի ստեղծումը

Տիրապետող ռեժիմի դաժան քաղաքականությունը հայրենասիրական ուժերին՝ թե՛ քաղաքական և թե՛ զինվորական, դրեց իրենց շարքերը միավորելու անհրաժեշտության առջև: 1956 թ. մայիսին Իրաքի բանակի գեներալ Աբդել Քերիմ Կասեմի գլխավորությամբ հիմնվեց «Ազատ սպաներ» գաղտնի կազմակերպությունը, որը շատ մեծ նշանակություն ունեցավ բանակը ժողովրդի կողմը գրավելու գործում: Գաղտնի կազմակերպության ստեղծումը և նրա անվանակոչումը կատարվեց Նասերի կողմից՝ եգիպտոսի «Ազատ սպաներ» կազմակերպության օրինակով, որին քաջածանոթ էին գեներալ Կասեմը և նրա գործընկերները:

Կոնսպիրացիայի նպատակով ստեղծվեցին առանձին փոքր խմբեր, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր խնդիրները և տեղյակ չէր մյուս խմբերի գոյության մասին: Ինչպես հետագայում նշում էր Կասեմը, իրենք աշխատում էին մեծ զգուշավորությամբ, քանի որ բանակում շատ էին Նուրի Սաիդի գործակալները:

«Ազատ սպաներ» կազմակերպության ստեղծումը կարևոր նշանակություն ունեցավ: Այն ապահովեց բանակը ժողովրդի կողմը դարձնելը, առանց որի, նկատի ունենալով Իրաքի յուրահատուկ պայմանները, անհնար կլիներ հուլիսյան հեղափոխության հաղթանակը:

Դրան հաջորդեց ևս մեկ կարևոր իրադարձություն Իրաքի քաղաքական կյանքում: 1957 թ. փետրվարին հիմնվեց Ազգային միասնության ճակատը: Նրա մեջ մտան Իրաքի ազգային–դեմոկրատական, կոմունիստական, արաբական վերածննդի սոցիալիստական՝ Բաաս, և անկախության կուսակցությունները: Ստեղծվեց ճակատի ղեկավար մարմին՝ Բարձրագույն ազգային կոմիտե: 1957 թ. մարտի 9–ին հրապարակվեց ճակատի ծրագիրը, որը նախատեսում էր Նուրի Սաիդի և հետադիմական ֆեոդալական վերնախավի հեռացում երկրի կառավարումից, պառլամենտի ցրում, Իրաքի դուրս գալը Բաղդադի պակտից, անկախ ու դրական չեզոքության սկզբունքների վրա հիմնված արտաքին քաղա-

քականության որդեգրում, սահմանադրական ազատությունների կիրառում, քաղաքական բանտարկյալների ազատ արձակում և այլն:

Իրաքի բազմաթիվ շրջաններում ստեղծվեցին ճակատի տեղական կոմիտեներ, որոնք մեծ դեր խաղացին ազգային–հայրենասիրական ուժերի համախմբման և վճռական մարտի պատրաստելու գործում: Նրանց ջանքերով ստեղծվեցին մարտական խմբեր: Շուտով կապեր հաստատվեցին ճակատի Բարձրագույն գործադիր կոմիտեի և «Ազատ սպաների» միջև: Վերջիններս հավանություն տվին ճակատի ծրագրին և պայմանավորվեցին համատեղ գործողությունների մասին:

Ազգային միասնության ճակատի օրինակով ստեղծվեցին նաև զանազան գյուղացիական գաղտնի կազմակերպություններ, միություններ և կոմիտեներ: Նրանք նույնպես նշանակալի դեր խաղացին հուլիսի 14–ի հեղափոխությունը նախապատրաստելու գործում:

Ամբողջ 1957 թվականին և 1958 թ. առաջին կեսին ժողովրդական զանգվածները անդուլ պայքար էին մղում հետադիմական ռեժիմի և օտարերկրյա իմպերիալիստների դեմ: Հուժկու ցույցեր տեղի ունեցան Բաղդադում, Բասրայում, Մոսուլում, Քարբալայում և այլ քաղաքներում ու շրջաններում: 1958 թ. ապրիլի 24–ին Բաղդադում տեղի ունեցած զանգվածային ցույցերի ժամանակ առաջին անգամ բացահայտորեն առաջ քաշվեց «Կորչի միապետությունը» լոզունգը:

1958 թ. փետրվարի 14–ին՝ Եգիպտոսի ու Սիրիայի միավորումից և Արաբական Միացյալ Հանրապետության ստեղծումից երկու շաբաթ անց, ստեղծվեց Արաբական Ֆեդերացիան՝ Դաշնությունը, որի մեջ մտան Իրաքը և Հորդանանը: Այդ երկու երկրներում էլ կառավարում էր Հաշիմիների դինաստիան: Արաբական Ֆեդերացիայի ստեղծումը երկու երկրների թագավորական–ֆեոդալական վերնախավի գործարքն էր, յուրատեսակ պատասխանը հեղափոխական Եգիպտոսի և Սիրիայի միավորմանը և Արաբական Միացյալ Հանրապետության ստեղծմանը, որը լայն աջակցություն գտավ Անգլիայի և ԱՄՆ–ի կողմից: Նրա ստեղծումով փորձ էր արվում պառակտում մտցնել արաբական երկրների շարքերում և նրանց հակադրել միմյանց դեմ: Արևմտյան պետությունների կողմից ծրագրվում էր Արաբական Ֆեդերացիայի մեջ ներգրավել նաև Լիբանանը և Քուվեյթը:

1958 թ. մայիսի 5–ին Իրաքում և Հորդանանում միաժամանակ տեղի ունեցան Դաշնության պառլամենտական ընտրություններ: Այդ օրը Բաղդադում և Իրաքի մի քանի այլ շրջաններում մտցվեց պաշարո-

ղական դրություն: Զինվորները և ոստիկանները պարեկություն էին անում փողոցներում, իսկ ժողովուրդը բոյկոտեց ընտրությունները: Ազգային միասնության ճակատի կոչով այդ օրը գործադուլներ տեղի ունեցան Բասրայում, Մոսուլում, Քարբալայում, Կիրկուկում և այլ քաղաքներում, իսկ Բաղդադում կայացավ հուժկու ցույց: Ցուցարարները տանում էին «Կորչի Բաղդադի պակտը», «Կորչի Նուրի Սաիդի կառավարությունը» և այլ լոզունգներ: Այդ օրը միայն Բաղդադում ձերբակալվեց 3200 մարդ, ձերբակալություններ կատարվեցին նաև բանակում:

Այդ ոստիկանական միջոցառումների օգնությամբ մայիսի 5–ի «ընտրությունները» ավարտվեցին Նուրի Սաիդի կողմնակիցների «հաղթանակով»: Պառլամենտի 145 դեպուտատներից 118–ը նախօրոք կառավարության կողմից նշանակվել էին պառլամենտի դեպուտատ՝ «նկատի առնելով մրցակիցների բացակայությունը»: Նորընտիր պառլամենտը մայիսի 12–ին վավերացրեց Իրաքի և Հորդանանի համաձայնագիրը Արաբական Ֆեդերացիա ստեղծելու վերաբերյալ, իսկ 13–ին հաստատեց Արաբական ֆեդերացիայի սահմանադրությունը: Իրաքի թագավոր Ֆեյսալ II–ը հռչակվեց Արաբական Ֆեդերացիայի թագավոր, իսկ Նուրի Սաիդը գլխավորեց դաշնության կառավարությունը:

Բացի ֆեդերալ կառավարությունից, կազմավորվեցին նաև Իրաքի և Հորդանանի կառավարություններ: Իրաքի վարչապետ դարձավ Ահմադ Մուխթար Բաբանը: Դա եղավ միապետական Իրաքի վերջին կառավարությունը:

2. 1958 թ. հուլիսի 14–ի հեղափոխությունը

1957–1958 թթ. ելույթները և նրանց բնույթը վկայում էին, որ Իրաքում հասունացել էր հեղափոխական իրադրությունը, և առկա էին նրա օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Հեղափոխական ուժերի համբերության բաժակը լցվեց այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ 1958 թ. հուլիսի 14–ին Ստամբուլում նշանակված Բաղդադի խորհրդի նիստը պաշտոնապես Իրաքին լիազորելու էր ինտերվենցիայի դիմել Լիբանանի դեմ՝ ճնշելու դեռևս 1958 թ. մայիսին սկսված Լիբանանի ժողովրդի հակաիմպերիալիստական ապստամբությունը: Այլ կերպ ասած՝ Իրաքը դառնում էր գործիք իմպերիալիստական պետությունների ձեռքին արաբական երկրներում ազգային–ազատագրական շարժումները ճնշելու համար:

Սակայն այդ նիստը այդպես էլ չգումարվեց:

1958 թ. հուլիսի 13–ին Իրաքի բանակի 19–րդ և 20–րդ բրիգադները հրաման ստացան մեկնել Հորդանան, որտեղից նախատեսվում էր դրանք նետել լիբանանյան ապստամբների դեմ: Բրիգադի հրամանատարներ Աբդուլ Քերիմ Կասեմը և Աբդել Սալամ Արիֆը որոշեցին, որ հասել է միապետական ռեժիմի դեմ հանդես գալու պահը: Նրանք այդ մասին տեղյակ պահեցին Ազգային միասնության ճակատի Բարձրագույն գործադիր կոմիտեին՝ ստանալով նրա հավանությունը: 19–րդ և 20–րդ բրիգադների զորքերը ուղղորվեցին ոչ թե Հորդանան, այլ 1958 թ. հուլիսի 14–ի առավոտյան ժամը 4–ին մտան Բաղդադ և գրավեցին ռադիոկայանը, հեռագրատունը, քաղաքի բոլոր կարևոր ստրատեգիական կետերը և շրջապատեցին արքայական պալատը: Նրանք պահանջեցին թագավորի հրաժարականը գահից, սակայն Ֆեյսալ II–ը մերժեց, իսկ Աբդուլ Իլլահը հրամայեց պալատական պահակախմբին՝ կրակ բացել զինվորների վրա: Այնժամ զորքերն անցան հարձակման և մտան թագավորական պալատ և զինաթափեցին պահակախումբը: Ֆեյսալ II–ը և Աբդուլ Իլլահը սպանվեցին: Իրաքցիների համար ատելի, իրաքյան հետադիմության խորհրդանիշ և բրիտանական իմպերիալիզմի հլու ծառա Նուրի Սաիդին սկզբում հաջողվեց կանացի շորերով ծպտված փախչել պալատից և թաքնվել Բաղդադի թաղերից մեկում, սակայն շուտով նրան ևս բռնեցին ու սպանեցին: Առավոտյան ժամը 6–ին բանակը դարձավ դրության տերը: 1958 թ. հուլիսի 14–ին հեղափոխությունը հաղթանակեց:

1958 թ. հուլիսի 14–ի վաղ առավոտյան Բաղդադի ռադիոն ծայնասփռեց բանակի հրամանատարության հետևյալ հայտարարությունը. «Իրաքի ազնի՛վ ժողովուրդ, ապավինելով Ալլահին և ժողովրդի հավատարիմ զավակների ու ազգային զինված ուժերի աջակցությանը, մենք սկսեցինք մեր սիրելի հայրենիքի ազատագրման գործը ծախու հանցախմբի տիրապետությունից, որին իշխանության գլուխ էր դրել իմպերիալիզմը, որպեսզի կառավարեր ժողովրդին՝ խաղալով նրա ճակատագրի հետ և ծառայելով իմպերիալիզմի շահերին ու սեփական շահերին:

Եղբայրնե՛ր, բանակը, որը կազմված է ձեզանից և գոյություն ունի ձեզ համար, ոտքի է ելել, որպեսզի կատարի ձեր ցանկությունը, և տապալեց տիրանների խմբավորումը, որը ծաղրում էր ժողովրդին: Ձեր պարտքն է աջակցել բանակին»:

Հեղափոխության հաղթանակով Իրաքում տապալվեց Հաշիմիների դինաստիան, վերացվեց միապետությունը, և Իրաքը հռչակվեց հան-

ռապետություն: Դա պատմական նշանակություն ունեցող կարևոր իրադարձություն էր Իրաքի բազմադարյան պատմության մեջ:

Հեղափոխության հաղթանակից հետո կազմվեց հանրապետական Իրաքի առաջին կառավարությունը՝ «Ազատ սպաներ» կազմակերպության ղեկավար Աբդել Քերիմ Կասեմի գլխավորությամբ, որը ստանձնեց վարչապետի պաշտոնը: Աբդել Սալամ Արիֆը դարձավ վարչապետի տեղակալ և ներքին գործերի նախարար: Ստեղծվեց նաև Պետական խորհուրդ, որի վրա ժամանակավորապես դրվեցին երկրի բարձրագույն մարմնի պարտականությունները:

Հեղափոխությունը չտեսնված խանդավառությամբ ընդունեցին Իրաքի ժողովրդական զանգվածները, բոլոր ազգությունները՝ արաբները, քրդերը, ասորիները, հայերը և մյուսները: Հեղափոխության պաշտպանության համար ստեղծվեցին ժողովրդական պաշտպանության ջոկատներ, որոնց մեջ արաբների և քրդերի հետ միասին մտան նաև հայերը: Երկրում տեղի էին ունենում միտինգներ, ժողովներ և տարբեր բնույթի հանդիպումներ, տպագրվում կոչեր՝ ի պաշտպանություն հեղափոխության: Նման մի կոչով Հայ երիտասարդաց ընկերության հիմնադիր մարմինը դիմեց իրաքահայ երիտասարդությանը՝ «մտնելու ժողովրդային պաշտպանության ջոկատներու շարքերուն մեջ, ձեր մասնակցությունը բերելու համար արաբ և քուրդ մեր եղբայրներու կողքին, մեր նորածին հանրապետությունը պաշտպանելու պատվավոր գործին»:

Հուլիսի 14–ի հեղափոխությունն իր բնույթով բուրժուա–դեմոկրատական, հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական հեղափոխություն էր: Նրա շարժիչ ուժերն աշխատավորներն էին՝ բանվորները և գյուղացիները, մտավորականությունը, միջին խավերը և ազգային բուրժուազիան: Բանակը, որ բոլոր թելերով կապված էր ժողովրդի հետ, կատարեց հարվածային ուժի դերը: Հեղափոխության հաղթանակով ֆեոդալ–շեյխերը և կոմպրոդորները հեռացվեցին իշխանությունից, և քաղաքական իշխանությունն անցավ ազգային բուրժուազիայի ձեռքը:

Հեղափոխության հաղթանակը ծանր հարված էր գաղութատիրությանը և Անգլիայի ու ԱՄՆ–ի դիրքերին Արաբական Արևելքում: Ի պատասխան Իրաքի հեղափոխության՝ 1958 թ. հուլիսի 15–ին ԱՄՆ–ի զորքերը մտան Լիբանան, իսկ հուլիսի 17–ին անգլիական զորքերը նետվեցին Հորդանան: Նրանք պատրաստվում էին ռազմական ինտերվենցիա սկսել Իրաքի դեմ: Իրաքի Հանրապետության պաշտպանությամբ հանդես եկավ Խորհրդային Միությունը: Խորհրդային կառավարությունը

հայտարարեց, որ ինքն անտարբեր չի կարող մնալ իր հարավային սահմանների մոտ կատարվող ագրեսիվ քայլերի նկատմամբ և պահանջեց ԱՄՆ–ից ու Անգլիայից՝ վերջ տալ ռազմական միջամտությանը արաբական երկրներում: Խորհրդային կառավարությունը 1958 թ. հուլիսի 24–ին նախազգուշացրեց նաև Թուրքիային, որը պատրաստվում էր ռազմական գործողություններ սկսել Իրաքի դեմ: Իրաքի պաշտպանությամբ հանդես եկան նաև արաբական երկրները և աշխարհի խաղաղասեր ուժերը: Այդ ամենը սթափեցնող ազդեցություն ունեցավ և ստիպեց ԱՄՆ–ին և Անգլիային ձեռնպահ մնալ հետագա վտանգավոր քայլերից:

Հեղափոխության հաղթանակով Իրաքը դեն նետեց բրիտանական տիրապետության շղթաները և դարձավ իսկապես անկախ և ինքնիշխան պետություն: Դրանով իրագործվեց 1918 թվականից սկսված ազգային–ազատագրական պայքարի գլխավոր նպատակը:

3. Կասեմի կառավարության առաջադիմական միջոցառումները ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում հեղափոխության առաջին փուլում (1958–1959 թթ.)

Հեղափոխությունից հետո ընդունվեցին մի շարք կարևոր որոշումներ: Առաջին հերթին Իրաքը դուրս եկավ Արաբական Ֆեդերացիայից, որը իրենից ներկայացնում էր միապետական դաշնություն: 1958 թ. հուլիսի 26–ին ընդունվեց ժամանակավոր սահմանադրություն, որը Իրաքը հռչակում էր անկախ և սուվերեն հանրապետություն, հավասար իրավունքներ սահմանում երկրի բոլոր քաղաքացիների համար և Իրաքի հանրապետությունը դիտում որպես արաբների և քրդերի հանրապետություն: Ցրվեց նախկին իշխանությունների ժամանակ ընտրված պառլամենտը և սկսվեց պետական ապարատի զտումը հետադիմական տարրերից: Ընդլայնվեցին դեմոկրատական ազատությունները, ներում շնորհվեց քաղաքական բանտարկյալներին, աշխուժացավ քաղաքական կյանքը, հիմնվեցին արհմիություններ, գյուղացիական, կանանց և երիտասարդական միություններ, սկսեցին լույս տեսնել նոր լրագրեր և ամսագրեր: Իրաք վերադառնալու հնարավորություն ստացան քուրդ վտարանդիները՝ Մուստաֆա Բարզանիի գլխավորությամբ: Կառավարության որոշմամբ մայիսի 1–ը պաշտոնապես հայտարարվեց տոնական օր: Ընդունվեցին որոշումներ աշխատավորների նյութական դրու-

թյան բարելավման ուղղությամբ՝ որոշ չափով բարձրացավ աշխատավարձը, կրճատվեցին հարկերը:

Խիստ կարևոր էր 1958 թ. սեպտեմբերի 30–ի օրենքը ագրարային ռեֆորմի մասին, որով սահմանափակվում էր ֆեոդալական հողատիրությունը, և կալվածատերերից բռնագրաված հողերը բաժանվում էին հողազուրկ գյուղացիներին: Այդ կապակցությամբ Աբդել Քերիմ Կասեմը հայտարարեց. «Հուլիսի 14–ի փառապանծ հեղափոխությունը միաժամանակ քաղաքական և սոցիալական հեղափոխություն էր, որի գլխավոր խնդիրներից մեկը ագրարային բարեփոխումների անցկացումն է: Ագրարային հեղափոխությունն այն հիմքն է, որի վրա հենվում է սոցիալական հեղափոխությունը»: Ագրարային բարեփոխումների օրենքի համաձայն հողատիրության առավել չափն անջրդի տարածքներում սահմանվեց 500 հա, իսկ ջրովի տարածքներում՝ 250 հա: Ֆեոդալների հողերը, որոնք գերազանցում էին այդ չափաբաժինները, ենթակա էին օտարացման և տրվում էին հողազուրկ գյուղացիներին, որոնք պարտադիր կարգով պետք է միավորվեին կոոպերատիվների մեջ:

Կառավարությունը մշակեց նաև ազգային արդյունաբերության զարգացման ծրագիր:

Հեղափոխությունից հետո փոխվեց նաև Իրաքի արտաքին քաղաքականությունը: Նա սկսեց վարել դրական չեզոքության քաղաքականություն: 1958 թ. հուլիսի 17–ին Իրաքի կառավարությունը վերականգնեց դիվանագիտական հարաբերությունները Խորհրդային Միության հետ: Դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին նաև սոցիալիստական մյուս երկրների հետ: 1958 թ. օգոստոսին կնքվեցին խորհրդա–իրաքյան առևտրական, իսկ 1959 թ. մարտի 16–ին՝ տնտեսական և տեխնիկական համագործակցության վերաբերյալ համաձայնագրեր:

Սկզբունքային նշանակություն ունեցավ Իրաքի կառավարության 1959 թ. մարտի 24–ի որոշումը Բաղդադի պակտից դուրս գալու մասին: Դրա հետ միասին չեղյալ հայտարարվեցին 1955 թ. անգլո–իրաքյան համաձայնագրերը և 1959 թ. մայիսին անգլիական վերջին զինվորը հեռացավ Իրաքի տերիտորիայից: Չեղյալ հայտարարվեցին նաև ԱՄՆ–ից ռազմական և տնտեսական օգնություն ստանալու վերաբերյալ նախկին վարչակարգի կողմից կնքված պայմանագրերը: Որոշ քայլեր կատարվեցին օտարերկրյա նավթային ընկերությունների գործունեությունը սահմանափակելու ուղղությամբ:

Հեղափոխության այս կամ, ինչպես ընդունված է ասել, առաջին փուլում կառավարությունը, կիրառելով առաջադիմական բնույթի քայլեր և վայելելով դեմոկրատական ուժերի աջակցությունը, հաջողությամբ պայքար էր մղում իմպերիալիստական և հետադիմական ուժերի դավադրությունների դեմ:

Դժգոհ լինելով Կասեմի կառավարության առաջադիմական քայլերից, ծախ ուժերի հետ նրա համագործակցությունից՝ Անկախության և Բաաս կուսակցությունները և զինվորական խմբավորումները կապերի մեջ մտան հակահեղափոխական դավադիր ուժերի հետ, որի պատճառով նրանց ներկայացուցիչները հեռացվեցին կառավարությունից և բանակից: Դավադրությունների շարքում ամենավտանգավորը 1959 թ. մարտին Մոսուլում բռնկված խռովությունն էր գնդապետ Աբդել Վահաբ Շավաֆի գլխավորությամբ: Սակայն խռովարարները, ոչ մի հենարան չունենալով ժողովրդի մեջ, պարտություն կրեցին: Խռովությունների ծախողումը լայն հեռանկարներ էր բացում երկրի հասարակարգի հետագա դեմոկրատացման համար: 1959 թ. ապրիլին ծախ ուժերը հանդես եկան նոր կառավարություն կազմելու պահանջով՝ առաջարկելով, որ նրա մեջ մտնեն նաև Իրաքի կոմունիստական կուսակցության ներկայացուցիչները:

4. Շեշտակի շրջադարձ դեպի աջ Կասեմի կառավարության ներքին քաղաքականության մեջ

1959 թ. երկրորդ կեսից նկատվում է փոփոխություն Իրաքի կառավարության ներքին քաղաքականության մեջ: Մասսաների ակտիվությունը, դեմոկրատիայի զարգացումը, կոմունիստների ազդեցության ուժեղացումը սարսափեցրին ազգային բուրժուազիային: Հեղափոխության հետագա զարգացումը և խորացումը այլևս չէր համապատասխանում նրա շահերին: Եվ Կասեմի կառավարությունը, լինելով այդ շահերի արտահայտիչը, աստիճանաբար նահանջում էր իր իսկ հռչակած սկզբունքներից և որդեգրում աջ և ծախ ուժերի միջև հավասարակշռություն պահպանելու քաղաքականություն, որն իրականում աջերին հովանավորելու և ակտիվացնելու քաղաքականություն եղավ: Կասեմը չընդառաջեց ծախ ուժերին՝ կոմունիստների մասնակցությամբ կառավարություն ստեղծելու հարցում: Դեռ ավելին՝ նա պահանջեց, որ քաղաքական կուսակցությունները ժամանակավորապես դադարեցնեն իրենց գործունե-

ությունը: Ազգային–դեմոկրատական և Քրդստանի դեմոկրատական կուսակցությունների ղեկավարությունները համաձայնվեցին դրա հետ: 1958 թ. մայիս–հուլիս ամիսներին բանտերից ազատվեցին մեծ թվով բանտարկյալներ, որոնք դատապարտվել էին հեղափոխության սկզբում ժողովրդի դեմ հանցանք գործելու համար: Հետադիմական ուժերը հնարավորություն ստացան թափանցելու պետական ապարատ և բանակ: Այդ քայլն ուղեկցվեց կոմունիստներին և մյուս դեմոկրատներին բանակից և պետական ապարատից հեռացնելով: Հենվելով հետադիմական ուժերի վրա՝ Կասեմի կառավարությունը լայն հարձակում սկսեց դեմոկրատական ազատությունների վրա: Նա սկսեց հետապնդել արհմիութենական, գյուղացիական, երիտասարդական, կանանց և անգամ խաղաղության շարժման ակտիվ գործիչներին ու մասնակիցներին:

1959 թ. հուլիսին կայացավ Իրաքի կոմունիստական կուսակցության պլենումը, որը որպես հիմնական տակտիկական լոզունգ հաստատեց ազգային բուրժուազիայի հետ դաշինքի և պայքարի լոզունգը: Դա նշանակում էր պաշտպանել Կասեմի վարչակարգի բոլոր առաջադիմական քայլերը ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում և խաղաղ միջոցներով պայքարել նրա հակադեմոկրատական քայլերի դեմ, որոնք հակասում էին հուլիսի 14–ի հեղափոխության սկզբունքներին: Կոմկուսը հույս ուներ նման տակտիկայի միջոցով կանխել աջակողմյան տենդենցների հետագա զարգացումը կառավարության քաղաքականության մեջ: Բայց Կասեմը չանսաց բանականության ձայնին և շարունակում էր իր կործանարար գիծը: Փակվեցին բազմաթիվ արհմիութենական, գյուղացիական և երիտասարդական կազմակերպություններ ու դեմոկրատական ուղղության թերթեր:

Կասեմի կառավարությունը կոպիտ սխալներ թույլ տվեց քրդական հարցում: Նա հրաժարվեց քրդերին Իրաքի շրջանակներում ազգային ինքնավարություն տրամադրելուց: Դրա փոխարեն նա կանգնեց քրդական հարցը զենքի միջոցով լուծելու դիրքերի վրա և 1961 թ. սեպտեմբերի սկզբին եղբայրական պատերազմ սկսեց քրդերի դեմ: Այդ պատերազմը, որը ոչ մի պաշտպանություն չէր վայելում Իրաքի աշխատավորների և դեմոկրատական ուժերի մոտ, նպաստեց Կասերի ռեժիմի մեկուսացմանը, թուլացրեց այդ ռեժիմի հիմքերը և դարձավ նրա անկման պատճառներից մեկը:

Կասեմի վարչակարգը գոյություն ունեցավ 5 տարի: Սակայն այդ շրջանում Իրաքում ոչ մի անգամ պառլամենտական ընտրություններ

տերի չունեցան: Իրականում Կասեմը հաստատեց իր անձնական դիկտատուրան՝ պահպանելով արտակարգ օրենքներն ու ռազմական դատարանները:

Վատացավ նաև աշխատավորների տնտեսական վիճակը: Իջավ աշխատավարձը, բարձրացան հարկերը, աճեց գործազրկությունը: Վտանգի տակ դրվեց նաև ագրարային բարեփոխումների կիրառումը: Այսպիսով՝ անջրպետը Կասեմի և ժողովրդի միջև քանի գնում, խորանում էր, և այս փուլում նա այլևս չէր հենվում ժողովրդական մասսաների և դեմոկրատական ուժերի վրա: Նա ավելի ու ավելի էր հենվում բանակի և գաղտնի ոստիկանության վրա:

Այս բոլորը երկրում խիստ դժգոհություն առաջ բերեց: 1961–1962 թթ. բավականին լայն թափ ընդունեց բանվորների, գյուղացիների և այլ խավերի պայքարը հանուն դեմոկրատիայի և ընդդեմ Կասեմի անձնական դիկտատուրայի: Հատկապես ակտիվ էին գործում նավթային արդյունաբերության և երկաթուղային բանվորները, որոնք 1962 թ. փետրվար–օգոստոս ամիսներին 10 անգամ դիմեցին գործադուլի: 1962 թ. ամռանը Բաղդադի ավելի քան 7000 բանվորներ մոտ երկու շաբաթ բողոքի ելույթներ էին կազմակերպել ընդդեմ արհմիությունների արգելման:

1962 թ. կեսերից սկսեցին ավելի հստակորեն դրսևորվել հայրենասիրական ուժերի՝ Իրաքի կոմկուսի, Ազգային–դեմոկրատական և Քրդստանի դեմոկրատական կուսակցությունների մերձեցման միտումները, ինչը իրական հեռանկարներ էր բացում Ազգային ճակատի ստեղծման համար: 1962 թ. վերջերին ակնհայտ էր դառնում, որ քաղաքական իրադարձությունների զարգացումը սկսել է դառնալ ոչ նպաստավոր հետադիմական և նրա հետևում կանգնած իմպերիալիստական ուժերի համար: Վերջիններս ծրագրում էին կանխել զարգացման այդ միտումը հակահեղափոխական հեղաշրջման միջոցով: Դա հայտնի դարձավ դեմոկրատական ուժերին, որոնք այդ կապակցությամբ նախազգուշացնում էին Կասեմին: Նրան տեղյակ պահելով նախապատրաստվող հեղաշրջման մասին՝ նրանք պահանջեցին, որ նա վճռական քայլերի դիմի դավադիրների նկատմամբ: Սակայն Կասեմը, հավանաբար չվստահելով նման տեղեկատվության հավաստիությանը, չարձագանքեց այդ նախազգուշացումներին, որի համար շատ թանկ վճարեց:

VI. ԿԱՍԵՄԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՏԱՊԱԼՈՒՄԸ, ԱՋ ՈՒԺԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԵՎ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՈՒՄԸ ԻՐԱՔՈՒՄ 1960–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. 1963 թ. փետրվարի 8–ի պետական հեղաշրջումը և Կասեմի տապալումը: Աբդել Սալամ Արիֆը Իրաքի պրեզիդենտ

Կասեմի անձնական դիկտատուրան իր հոգեվարքն էր ապրում: Իրաքի ներքաղաքական իրավիճակի հանգամանալի զննումը հիմք է տալիս այն կարծիքն արտահայտելու, որ այդ ժամանակ, ըստ էության, հնարավոր էր ոչ միայն աջ պետական հեղաշրջում, այլև երկրի, այսպես կոչված, ձախացում: Նման ենթադրությունը կապված է այն իրողության հետ, որ չնայած կառավարող վարչակարգի կողմից ձախ ուժերի նկատմամբ տարվող հետապնդումների և դեմոկրատիայի սահմանափակման քաղաքականությանը, երկրի ձախ ուժերը՝ Իրաքի կոմկուսը, Ազգային դեմոկրատական և Ազգային առաջադիմական կուսակցությունները, դեռևս զգալի ուժ էին ներկայացնում և կարող էին երկիրը վերադարձնել հուլիսյան հեղափոխության հաղթանակից հետո ստեղծված դեմոկրատական զարգացման իրավիճակին: Ինչ վերաբերում է Քրդստանի դեմոկրատական կուսակցությանը և նրա ղեկավարած ինքնավարական շարժմանը, ապա քրդական հարցը զինված ուժով լիկվիդացնելու կառավարող ռեժիմի ջանքերի ձախողումը, ժողովրդական լայն զանգվածների պայքարը՝ Քրդստանում երբայրական պատերազմը դադարեցնելու համար, հասցրել էին այնպիսի իրավիճակի, երբ Կասեմը կարող էր կամ ստիպված էր հակվել պատերազմը դադարեցնելու և դրանով իսկ իր վարչակարգը փրկելու մտքին: Նկատի ունենալով երկրի ներքաղաքական նման զարգացման ռեալ հնարավորությունները՝ կարելի է ասել, որ Բաասի և նրան հարող աջ ուժերի կողմից նախատեսվող հեղաշրջումը հետապնդում էր ոչ միայն Կասեմի վարչակարգը տապալելու, այլև երկրի ձախացման գործընթացը կանխելու նպատակ:

Ահա վերը նշված հանգամանքներն էին, որ, ինչպես նշվեց, դրդեցին Իրաքի դեմոկրատական ուժերին 1962–1963 թթ. ահազանգել Կասեմին վերահաս վտանգի մասին: Վերջին ահազանգը նա ստացավ 1963 թ. հունվարին: Սակայն նա, ինչպես նշվեց, անտեսեց այդ նախազգուշացումները:

1963 թ. փետրվարի 8–ի վաղ առավոտյան Բաղդադի բնակիչները արթնացան կրակոցներից: Դա եղավ Կասեմի դիկտատուրայի վերջին օրը: Մի քանի ժամվա ընթացքում ժողովրդական զանգվածներից կտրված, դեմոկրատական ուժերի աջակցությունից իրեն զրկած անձնական դիկտատուրայի վարչակարգը տապալվեց: Կասեմը և նրա մերձավոր զինակիցները ձերբակալվեցին և առանց դատի անմիջապես գնդակահարվեցին, իսկ գնդակներից խոցված նրանց դիակները երեք օր շարունակ ցուցադրվում էին Բաղդադի հեռուստատեսությամբ:

Հեղաշրջումն իրականացրեց Իրաքի աջ ազգայնական, էքստրեմիստական կուսակցությունների և կազմակերպությունների խմբավորումը, որի մեջ գլխավոր դերը պատկանում էր Բաաս կուսակցության աջ ծայրահեղական թևին: Նրան պաշտպանեցին Իսթիկլալ կուսակցությունը, «Մուսուլման եղբայրները», Արաբական նացիոնալիստների կազմակերպությունը և, այսպես կոչված, անկախականները:

Սակայն դա նրանց չէր հաջողվի, եթե նրանք պաշտպանություն չգտնեին բանակի որոշ մասի կողմից: Նրանց օգնություն ցույց տվեց գեներալ Աբդել Սալամ Արիֆը, որը գեներալ Կասեմի հետ միասին 1958 թ. հուլիսի 14–ի հեղափոխության կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկն էր: Հետագայում երկու զինակից գեներալների ճանապարհները բաժանվեցին: Դրանում մեծ դեր խաղացին Աբդել Սալամ Արիֆի քաղաքական մեծ հավակնությունները: Նա չէր համակերպվում Իրաքի Հանրապետության երկրորդ դեմքը լինելու մտքի հետ՝ գտնելով, որ ինքն ավելի արժանի է Իրաքի ղեկավարը լինելու, քան թե Աբդել Քերիմ Կասեմը: Այդ տրամադրությունները և Իրաքի միանձնյա ղեկավարը դառնալու հավակնությունները նրան բերեցին աջ ուժերի ճամբար, և նա չվարանեց զենքն ուղղել իր երեկվա ընկերոջ դեմ:

Թվում էր, թե հեղաշրջումից հետո Աբդել Սալամ Արիֆը հասավ իր քաղաքական նպատակին: Պետական հեղաշրջումից հետո ստեղծվեց Հեղափոխության հրամանատարության ազգային խորհուրդ՝ ՀՀԱԽ, որը Աբդել Սալամ Արիֆին նշանակեց Իրաքի պրեզիդենտ: Սակայն շատ շուտով ակնհայտ դարձավ, որ երկրի կառավարման շարժափոկերն ամբողջապես գտնվում էին Բաաս կուսակցության և նրա կամքն արտահայտող ՀՀԱԽ–ի ձեռքում:

Իրաքի նոր կառավարողները հրապարակեցին երկրի ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ իրենց ծրագրային հայտարարությունները, որոնք հրապուրիչ էին թվում և կոչված էին հավատ

ներշնչելու նոր վարչակարգի նկատմամբ: Բաասականները խոստանում էին լուծել ազգարային հարցը, ապահովել միասնություն արաբների և քրդերի միջև, հավատարմությամբ ծառայել արաբական միասնության գործին, վարել դրական չեզոքության քաղաքականություն և այլն: Սակայն սկզբից նեթ աջ էքստրեմիստական ռեժիմը բացահայտեց իր խոստումների կեղծ բնույթը: Երկրում հաստատվեց ահաբեկման ահավոր ու աննախադեպ իրավիճակ: Գլխավոր հարվածն ուղղվեց դեմոկրատական ուժերի դեմ, որոնց մի մասը նրանց երեկվա դաշնակիցներն էին: Կառավարությունն ուղղակի կոչ արեց «ժողովրդի զավակներին»՝ օգնելու ոստիկաններին հայտնաբերելու կոմունիստներին՝ «այդ հանցագործներին, և ոչնչացնել դրանց»: Բայց ահաբեկման և բիրտ բռնությունների ու հալածանքների քաղաքականությունը չսահմանափակվեց և չէր էլ կարող սահմանափակվել միայն կոմունիստներով: Դրա ալիքը տարածվեց նաև մյուս դեմոկրատական ուժերի վրա: Քրեական թափթփուկներից, ապադասակարգայնացված տարրերից և դպրոցահասակ պատանիներից հապշտապ կազմված, այսպես կոչված, ազգային գվարդիականները ահավոր արհավիրքներ բերեցին Իրաքի ժողովրդին: Ձանգվածային տեռորի հետևանքով զոհվեց ավելի քան 10 հազ. հայրենասեր, 120 հազ. մարդ նետվեց բանտերը և համակենտրոնացման ճամբարները: Փետրվարի 21–ին ձերբակալվեցին Իրաքի կոմկուսի կենտկոմի գլխավոր քարտուղար Սալյամ Ադիլը և կուսակցության մի քանի այլ ղեկավար գործիչներ, որոնք մի քանի օր տևող անմարդկային տանջանքներից հետո սպանվեցին:

Իրաքում սանձազերծված տեռորը առաջ բերեց միջազգային համընդհանուր բողոքի ալիք:

2. Իրադրության հետագա վատթարացումը և դժգոհության կուտակումը երկրում

Ինչպիսի՞ սոցիալ–դասակարգային կազմ ունեին հեղաշրջումն իրականացրած ուժերը, ո՞ւմ շահերն էին նրանք պաշտպանում: Կասեմի և նրա վարչակարգի դեմ համախմբված ուժերն ունեին խայտաբղետ սոցիալական կազմ: Ստացվել էր այնպես, որ այս խմբավորման մեջ հանդես էին գալիս ուժեր, որոնք հեղափոխության իրականացման պահին և որոշ չափով նրա զարգացման առաջին փուլում, գտնվում էին հակադիր դիրքերում: Ուժերի այս յուրօրինակ վերադասավորումը որոշ

իմաստով Կասեմի բոնապարտիզմի կամ հավասարակշռության քաղաքականության հետևանքն էր: Հակակասեմյան խմբավորման մեջ էին հիմնականում մանր բուրժուազիայի շահերն արտահայտող Բաաս կուսակցությունը, միջին ու մանր բուրժուազիային ներկայացնող Անկախության կուսակցությունը, Արիֆի գլխավորած յունիոնիստների հոսանքը՝ ԱՄՀ–ի հետ ֆեդերացիայի կողմնակիցները, նրանց համախոհ մյուս քաղաքական խմբավորումները և վերջապես՝ միապետականները, խոշոր ֆեոդալները և հետադիմական բոլոր այն տարրերը, որոնց շահերը լրջորեն տուժել էին Կասեմի հանրապետական կառավարության հեղափոխական միջոցառումների շնորհիվ: Բոլոր այս խմբավորումներին միավորում էր իշխանության գրավման տենչը, թշնամանքը կոմունիզմի, դեմոկրատիայի, սոցիալիստական համակարգի երկրների և Կասեմի վարչակարգի նկատմամբ:

Նոր վարչակարգը, ինչպես և սպասվում էր, սկզբից նեթ դրսևորեց իր անկարողությունը՝ լուծելու երկրի առջև ծառացած սոցիալ–տնտեսական և քաղաքական խնդիրները: Եվ դա պատահական չէր: Չնայած նոր հաստատված վարչակարգը հենվում էր մանր բուրժուական զանգվածների վրա, բայց նրա քաղաքականությունը վերջին հաշվով ծառայում էր ավանդական տիրապետող դասակարգերի շահերին: Կառավարող վարչակարգի ճգնաժամի նախանշանները ավելի ցցուն դարձան, երբ փակուղու մեջ մտան քրդական պրոբլեմի կարգավորման և, այսպես կոչված, արաբական միասնության նպատակին ուղղված քայլերը:

Քրդական ինքնավարական շարժման ղեկավարների հետ վարվող բանակցությունները բացառապես տակտիկական բնույթ էին կրում և հետապնդում էին ժամանակ շահելու նպատակ: Դրանց ձախողմանը հետևեցին բաասականների մի շարք քայլեր, որոնք, ի վերջո, 1963 թ. հունիսի 10–ին հասցրեցին պատերազմի վերսկսմանը Քրդստանում: Թվում էր, թե նման իրավիճակում բաասականները տրամաբանորեն կկառչեն գոնե իրենց պայքարի, այսպես կոչված, գլխավոր նպատակից՝ արաբական միասնությունից, որը այդ կուսակցության ծրագրի և գործունեության անկյունաքար էր հռչակված: Այդ նպատակին ծառայող քայլը 1963 թ. ապրիլի 17–ին Կահիրեում Եգիպտոսի, Սիրիայի և Իրաքի կողմից արաբական ֆեդերացիայի ստեղծման մասին հայտարարությունն էր, որը, սակայն, մնաց թղթի վրա: Հռչակված արաբական ֆեդերացիայում գերիշխող դիրքեր գրավելու և այն իրենց դիրքերի ամրապնդման համար օգտագործելու բաասականների չթաքնված հա-

վակնությունները առաջ բերեցին Գամալ Աբդել Նասերի և Եգիպտոսի կառավարող շրջանների բուռն հակազդեցությունը և հարաբերությունների սրում մի կողմից՝ Եգիպտոսի, մյուս կողմից՝ բաասականների կողմից կառավարվող Իրաքի և Սիրիայի միջև:

Նման պայմաններում 1963 թ. հունիսի 10–ին Քրդստանում վերսկսվեց պատերազմը, որը դարձավ կառավարող ռեժիմի կործանման արագացուցիչը: Քրդերի նկատմամբ գենոցիդի քաղաքականության կիրառումը, զանգվածային տեռորը երկրի բոլոր դեմոկրատական ուժերի դեմ, օտարերկրյա միջամտությունը Քրդստանում տեղի ունեցող իրադարձություններին խիստ կերպով գցեցին իրաքյան վարչակարգի հեղինակությունը միջազգային ասպարեզում: Իսկ այն բանից հետո, երբ խորհրդային կառավարությունն իր 1963 թ. հուլիսի 10–ի հայտարարությամբ դատապարտեց Իրաքում տեղի ունեցող իրադարձություններին օտարերկրյա միջամտությունը, խորհրդա–իրաքյան հարաբերությունները լարվեցին:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար Իրաքի կառավարող վարչակարգը դիմեց արտաքին քաղաքական մի քայլի, որն այլ կերպ, քան անհեռանկար, չի կարելի անվանել: 1963 թ. հոկտեմբերին Իրաքի բաասականները փորձեցին կյանքի կոչել այսպես կոչված «Արգավանդ մահիկի» ծրագիրը, որի համաձայն՝ իրաք–սիրիական միությանը պետք է միանային նաև Հորդանանը և Լիբանանը: Սակայն այդ ծրագիրը, որն առաջին անգամ առաջ էր քաշվել դեռևս անցյալ դարի 40–50–ականներին և անհաջողության մատնվել, ձախողվեց այս անգամ ևս:

1963 թ. աշնանը Իրաքի ներքաղաքական իրադրությունը այնպիսին էր, որ կառավարող վարչակարգի տապալումն անխուսափելի էր թվում: Այս գիտակցությամբ համակված կառավարող շրջանների մեջ սկսվեց ներքին պայքար: Բաասականների՝ այսպես կոչված «չափավոր» պարագլուխ, արտաքին գործերի նախարար Թալիբ Շաբիբը հակադրվեց ծայրահեղական հոսանքի պարագլուխ վարչապետի տեղակալ Ալի Սաադիին: Այս երկու խմբավորումների ընդհարումը ավելի թուլացրեց կառավարող Բաաս կուսակցության դիրքերը:

3. Հերթական հեղաշրջումը և իշխանափոխությունն Իրաքում

1963 թ. նոյեմբերի 18–ին Իրաքում տեղի ունեցավ յուրօրինակ պետական հեղաշրջում, որը ղեկավարում էր... երկրի պրեզիդենտ Աբ-

դել Սալամ Արիֆը: Հեղաշրջումից հետո երկրի կառավարման ղեկն անցավ բարձր սպայական կազմի ձեռքը: Աբդել Սալամ Արիֆը՝ որպես երկրի պրեզիդենտ, ձեռք բերեց լայն լիազորություններ: Իրաքի վարչապետի պաշտոնը գրավեց Թահիր Յահյան:

Նոր հեղաշրջումը և Իրաքում հաստատված նոր վարչակարգը ինչպես Իրաքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս համեմատաբար դրական ընդունելության արժանացան: Դա բացատրվում է նրանով, որ նախկին՝ աջ բաասական ծայրահեղ վարչակարգը բաասականներ Թալիբ Շաբիբի և հատկապես Ալի Սաադի գլխավորությամբ երկրում հաստատել էր սարսափի մթնոլորտ, երբ սպանությունները և ձերբակալությունները զանգվածային բնույթ էին կրում: Այդ վարչակարգն իրեն այնպես էր վարկաբեկել, որ նրա անկումը հույս էր ներշնչում, որ ներքաղաքական դրությունն ինչ–որ չափով կարող է փոխվել:

1963 թ. նոյեմբերի 26–ին Բաղդադում հրապարակվեց նոր կառավարության ծրագրային հայտարարությունը, որտեղ նշված էին երկրի ներքին և արտաքին քաղաքականության հիմնական խնդիրները:

Հայտարարության մեջ ասված էր, որ կառավարության նպատակն է հուլիսյան հեղափոխության նպատակների իրագործումը, ագրարային պրոբլեմի լուծումը, դեմոկրատական ազատությունների հաստատումը, արաբական սոցիալիզմի կառուցումը և այլն: Սակայն այդ բոլորը կրում էր վերացական բնույթ և, ըստ էության, քիչ էր տարբերվում նախորդ վարչակարգի նմանօրինակ հայտարարություններից:

Կառավարության դիրքորոշման մեջ դրական փոփոխությունները փոքրիշատե նկատելի էին արտաքին քաղաքականության մարզում: Այստեղ նա հռչակում էր իր հավատարմությունը հակագաղութային քաղաքականության սկզբունքներին, Խորհրդային Միության և սոցիալիստական երկրների հետ մերձեցմանը, որը կոչված էր Իրաքը դուրս բերել քաղաքական մեկուսացումից, որի մեջ Իրաքը հայտնվել էր աջ բաասական արյունարբու վարչակարգի քաղաքականության հետևանքով, և այլն: Դրական տեղաշարժեր տեղի ունեցան ԽՍՀՄ և սոցիալիստական երկրների հետ հարաբերությունների մեջ, վերացավ իրաքա–եգիպտական հարաբերությունների նախկին լարվածությունը:

Նոր վարչակարգի դիրքերն ամրապնդելու և ներքաղաքական շատ թե քիչ կայուն իրավիճակ ստեղծելու մտադրությամբ Արիֆ–Յահյայի վարչակարգը իրականացրեց որոշ քայլեր, որոնք ունեին առաջադիմական բնույթ: Այսպես՝ թեև նոր կառավարությունը հայտարարեց, որ

հրաժարվում է նավթարդյունաբերության ազգայնացման գաղափարից, բայց դրա հետ մեկտեղ պատրաստակամություն հայտնեց իրականացնելու դեռևս 1961 թ. դեկտեմբերի 11–ին ընդունված օրենքը, ըստ որի պետք է ստեղծվեր Իրաքի ազգային նավթային ընկերություն:

Երկրում տնտեսական գործարար կյանքի որոշ աշխուժություն նկատվեց: Զգտելով երկիրը դուրս բերել տնտեսական փակուղուց՝ Իրաքի կառավարությունը 1964 թ. հուլիսին ձեռնարկվեց մի շարք միջոցառումներ, որոնք արժանացան նաև ընդդիմադիր ուժերի հավանությանը: Ազգայնացվեցին օտարերկրյա և իրաքյան մասնավոր բանկերը և արտասահմանյան նրանց մասնաճյուղերը, ապահովագրական ընկերությունները, ցեմենտի, ասբեստի և ծխախոտի արտադրության ձեռնարկությունները: Կառավարությունն ապահովեց իր փայատիրական մասնակցությունը մի շարք ֆիրմաների գործունեությանը: Դրա շնորհիվ կառավարությունը մի կողմից՝ աշխատում էր բարելավել երկրի ֆինանսատնտեսական վիճակը, մյուս կողմից՝ իրականացնել բանվորների աշխատավարձի բարձրացում: Հարկ է, սակայն, նշել, որ ռազմաբյուրոկրատական վարչակարգի հռչակած ծրագրերի ու քաղաքականության և նրանց փաստական արդյունքների միջև ընկած էր անջրպետ, որը մի կողմից անհետևողականության, մյուս կողմից տեղական հետադիմության և արտաքին իմպերիալիստական ուժերի ճնշման հետևանք էր:

Արիֆ–Յահյայի վարչակարգը շարունակում էր պատերազմը Քրդստանում: «Իրաքյան Քրդստանում,— գրում էր ֆրանսիական «Յումանիտե» թերթը,— ներկայումս տեղի է ունենում իսկական գենոցիդ»: Սակայն ռազմական գործողություններով իր դիրքերն ամրապնդելու Իրաքի կառավարության ջանքերն ապարդյուն անցան: Ավելին՝ քրդերի դեմ պատերազմի պարագան կարող էր օգտագործվել ընդդիմադիր ուժերի կողմից՝ կառավարող վարչակարգի դիրքերը խարխլելու համար: Նման իրադրության մեջ կառավարությունը հարկադրված էր ստեղծված վիճակից դուրս գալու ելք փնտրել: Քրդական պրոբլեմի կարգավորման մեջ շահագրգռված էր նաև Արաբական Միացյալ Հանրապետությունը, մասնավորապես Նասերը, որը Իրաքի յունիոնիստների միջոցով ճնշում էր գործադրում Արիֆ–Յահյայի կառավարության վրա: Վերջապես՝ Իրաքի կառավարության և քրդական ազգային ուժերի միջև համաձայնություն ձեռք բերելու գործում կարևոր նշանակություն ուներ Խորհրդային Միության և սոցիալիստական համագործակցության երկրների դիրքը:

Քրդերի դիմադրությունը զինված ուժով կոտրելու անհաջող փորձերից հետո վերը նշված գործոնները հաշվի առնելով, Իրաքի կառավարությունը հարկադրված էր 1964 թ. փետրվարի 10–ին համաձայնության գալ Մուստաֆա Բարզանիի հետ: Նրանք համաձայնագիր կնքեցին «Քրդստանում պատերազմի դադարեցման և քրդական պրոբլեմի խաղաղ կարգավորման մասին»: Փետրվարի 10–ի համաձայնագրին հաջորդեցին մի քանի քայլեր, որոնք հույս էին ներշնչում, որ կառավարությունը կիրականացնի քրդերի ինքնավարության պահանջը:

1964 թ. մայիսի 4–ին ընդունվեց Իրաքի Հանրապետության ժամանակավոր սահմանադրությունը: 1964 թ. հուլիսի 14–ի դեկրետով ազգայնացվեցին օտարերկրյա և իրաքյան մասնավոր բանկերը, ապահովագրական բոլոր ընկերությունները, արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ: Յուրաքանչյուր ձեռնարկության վրա պարտավորություն էր դրվում իր շահույթի 25%–ը տրամադրել բանվորների և ծառայողների աշխատավարձի բարձրացմանը և սոցիալական կարիքների բավարարմանը: Վերոհիշյալ օրենքին հաջորդեց 1964 թ. սեպտեմբերի 4–ի օրենքը, ըստ որի մասնավոր ձեռնարկատերերի և ընկերությունների եկամուտներից գանձվելու էր պրոգրեսիվ հարկ: Կառավարությունը սահմանափակեց նաև «Իրաք պետրոլեում կոմպանիի» գործունեության շրջանակները և ստեղծեց Իրաքի ազգային նավթային ընկերություն, որի ձեռքն էին անցնում դեռևս 1961 թ. օտարերկրյա նավթային ընկերություններից վերցված նավթատարածքները:

Ինչպես տեսնում ենք, Արիֆի վարչակարգը իր կառավարման սկզբնական շրջանում իրականացրեց մի շարք միջոցառումներ, որոնք ընդհանուր առմամբ ունեին առաջադիմական բնույթ: Սակայն այդ քայլերը աչքի էին ընկնում անհետևողականությամբ և անվճռականությամբ:

Արիֆի վարչակարգն ընկավ յուրօրինակ վիճակի մեջ: Նրան քննադատում էին և՛ աջից, և՛ ձախից: Աջերը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս դժգոհ էին կառավարության՝ վերը հիշատակված առաջադիմական քայլերից, իսկ երկրի ձախ ուժերը հիմք չունեին բավարարված լինելու կառավարության քաղաքականությունից, որին բնորոշ էին դեմոկրատական ազատությունների բացակայությունը, առաջադիմական կուսակցությունների և կազմակերպությունների հետապնդումը և նրանց գործունեության արգելումը, քրդական պրոբլեմը զինված ուժով լուծելու անհեռանկար քաղաքականությունը:

1965 թ. կեսերին տարածայնությունները կառավարության մեջ ծայրաստիճան սրվեցին, և Թահիր Յահյայի կառավարությունը ստիպված էր սեպտեմբերի 6–ին հրաժարական տալ: Աբդել Սալամ Արիֆը նոր կառավարություն կազմելը հանձնարարեց ռազմաօդային ուժերի հրամանատար գեներալ Արիֆ Աբդել Ռազակին, որը հայտնի էր որպես նասերամետ հոսանքի ներկայացուցիչ: Չեռնարկելով այս քայլը՝ պրեզիդենտ Արիֆը ձգտում էր դրանով իսկ բարելավել հարաբերությունները յունիոնիստների և նրանց մեջքին կանգնած եգիպտոսի հետ: Իր նշանակումից տառացիորեն տաս օր հետո Աբդել Ռազակը, օգտվելով պրեզիդենտ Արֆի բացակայությունից, պետական հեղաշրջման փորձ կատարեց, որը, սակայն, անհաջողության մատնվեց, և Աբդել Ռազակը փախավ Կահիրե: Յունիոնիստների ազդեցությունը մեծ չափով նվազեց, իսկ իրաք–եգիպտական հարաբերությունները ընդունեցին սառը բնույթ:

1965 թ. սեպտեմբերի 21–ին Իրաքում, 1958 թ. հեղափոխությունից հետո առաջին անգամը լինելով, կառավարության ղեկն իր ձեռքը վերցրեց ոչ զինվորական անձնավորություն՝ Աբդել Ռահման ալ–Բազազը:

Բազազի կառավարությունը հանդես եկավ երկրի տնտեսական և քաղաքական վիճակի բարելավման, քրդական հարցի լուծման և այլ պրոբլեմների մասին ծրագրով:

4. Ներքաղաքական իրադրությունը Իրաքում 1966–1968 թվականներին

1966 թ. ապրիլի կեսերին խորհրդավոր պայմաններում ավիավթարի հետևանքով զոհվեց պրեզիդենտ Աբդել Սալամ Արիֆը, որին փոխարինեց պետական և ռազմական անհամեմատ ավելի համեստ ընդունակությունների տեր նրա կրտսեր եղբայրը՝ Աբդել Ռահման Արիֆը: Երկրի ներքին և արտաքին քաղաքական կուրսը չփոխվեց: Կառավարությունը որոշեց իրականացնել դեռևս ավագ Արիֆի ժամանակ մշակված քրդական շարժումը զինված ուժով լիկվիդացնելու պլանը, որը, սակայն, հակառակ արդյունք ունեցավ: 1966 թ. սկզբներին կառավարական զինված ուժերը պարտություն կրեցին, և Արիֆ–Բազազի ռեժիմը հարկադրված եղավ քրդական ինքնավարական շարժման ղեկավարների հետ 1966 թ. հունիսի 29–ին համաձայնագիր կնքել քրդական հարցը խաղաղ ճանապարհով կարգավորելու մասին:

Դրան հաջորդած ժամանակաշրջանը ցույց տվեց, որ Իրաքում հակադիր քաղաքական ուժերի միջև մղվող պայքարի ելքը դեռևս վճռված չէ: Եթե Իրաքի կոմկուսը, Ազգային դեմոկրատական կուսակցությունը, Քրդստանի դեմոկրատական կուսակցությունը և առաջադիմական մյուս ուժերը դժգոհ էին կառավարության քայլերի անհետևողականությունից, քրդական հարցը ձգձգումների և անորոշության ոլորտ գցելու քաղաքականությունից, ապա աջերը ոչ մի կերպ չէին ուզում հաշտվել թեկուզ և անհետևողական այս միջոցառումների, առավել ևս զինվորականներին աստիճանաբար երկրի քաղաքական կառավարումից հեռացնելու Բազազի քաղաքականության հետ: Եվ միանգամայն սպասելի ու տրամաբանական էր, որ Իրաքում իրենց գոյատևման համար դեռևս պարարտ հող ունեցող հետադիմական ուժերը ի վիճակի էին դուրս մղելու Բազազին քաղաքական ասպարեզից: 1966 թ. օգոստոսի սկզբներին պրեզիդենտ Արիֆի պահանջով Բազազը հրաժարական տվեց, և կառավարություն կազմելու արտոնությունը տրվեց չափավոր հայացքների տեր Նաջի Թալիբին:

Վերջինիս գործունեությունը՝ որպես կառավարության ղեկավար, ընթանում էր խիստ անբարենպաստ պայմաններում: Նախկին կառավարությունների կողմից, ըստ էության, շատ քիչ բան էր արվել երկրի տնտեսական և քաղաքական պրոբլեմների լուծման ուղղությամբ, բացակայում էին դեմոկրատական ազատությունները, զինվորականությունը շարունակում էր մնալ երկրի կառավարման հիմնական ուժը: Նաջի Թալիբի կառավարության առաջին քայլերը վկայում էին, որ նա մտադիր էր երկիրը դուրս բերել տնտեսական և քաղաքական ճգնաժամային վիճակից: Ծրագրային հայտարարության մեջ կառավարության նոր ղեկավարը նշեց, որ նա «պայքարելու է հուլիսյան հեղափոխության նպատակների իրագործման համար, վարելու է ռազմական պակտերին չմիանալու քաղաքականություն և հանդես է գալու հանուն արաբական միասնության ամրապնդման»: Ներքաղաքական մարզում կառավարությունը որպես առաջնահերթ խնդիր հռչակեց ագրարային ռեֆորմի հետագա իրականացումը և ֆեոդալական մնացուկների վերացումը, արաբական սոցիալիզմի ուղիով զարգացումը, 1964 թ. սկսված ազգայնացման քաղաքականության շարունակումը, նավթի մասին օրենքի իրականացումը, քրդական հարցի խաղաղ կարգավորման մասին 1966 թ. հունիսի 29–ի համաձայնագրի իրականացումը և այլն: Ինչպես տեսնում ենք, առաջ էին քաշվում խնդիրներ, որոնց իրականացումը էապես կարող էր

նպաստել երկրի առաջադիմական, դեմոկրատական զարգացմանը, Իրաքը այն մայրուղին դուրս բերելուն, որի համար պայքարում էին հայրենասիրական դեմոկրատական ուժերը: Դժբախտաբար, այդ ամենը տեղի չունեցավ, որովհետև Իրաքում հաստատված ռազմադիկտատորական վարչակարգը, զինվորականության մենաշնորհ դիրքը երկրի կառավարման գործում բացառում էին նման հնարավորությունը:

1967 թ. սկզբներին Իրաքի կառավարությունը հայտարարեց, որ շուտով վերջ կտրվի անցման ժամանակաշրջանին, և երկիրը կանցնի պառլամենտական կառավարման համակարգին: Ի հաստատումն դրա՝ հրապարակվեց ընտրական օրենքի նախագիծը, որը դրվեց քննարկման: Սակայն ընտրական օրենքի նախագիծն ուներ մի շարք էական թերություններ, որոնք, ըստ էության, ի չիք էին դարձնում երկրի դեմոկրատացման հնարավորությունները: Ընդդիմադիր կուսակցությունները զրկված էին պառլամենտում իրենց ներկայացուցիչները ունենալու հնարավորությունից, այդ արտոնությունը մենաշնորհ կերպով տրված էր Արաբական Միացյալ Հանրապետության օրինակով ստեղծված Արաբական սոցիալիստական միությանը: Ընտրական օրենքի նախագիծը ոչ մի քննադատության չէր դիմանում նաև բանվորների, գյուղացիների, կանանց ներկայացուցչության և իրավունքների ապահովման տեսակետից: Ընդդիմադիր կուսակցությունների՝ Իրաքի կոմունիստական կուսակցության, Ազգային դեմոկրատական կուսակցության, Քրդական դեմոկրատական կուսակցության և երկրի դեմոկրատական լայն հասարակության քննադատության ճնշման տակ պրեզիդենտ Արիֆը փորձեց համաձայնության գալ օպոզիցիոն ուժերի ղեկավարների հետ, ինչը սակայն, չհաջողվեց: Նման պարագաներում թեև ընտրական օրենքը 1967 թ. փետրվարի 8–ին հաստատվեց կառավարության կողմից, բայց այդպես էլ մնաց չիրականացված փաստաթուղթ:

1967 թ. Արաբական Արևելքում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք էապես ազդեցին տարածաշրջանի երկրների ինչպես ներքաղաքական, այնպես էլ միջպետական հարաբերությունների վրա: Խոսքը վերաբերում է 1967 թ. հունիսյան արաբա–իսրայելական պատերազմին և արաբական երկրների պարտությանը, որը ավելի բարդացրեց արաբա–իսրայելական կնճիռը՝ միաժամանակ բացահայտելով արաբական որոշ երկրների կառավարող վարչակարգերի անկենսունակությունը: Ասվածը առաջին հերթին վերաբերում էր Իրաքի կառավարող

ռեժիմին, որի ապիկարությունը և պատերազմի ընթացքում ունեցած դերը խիստ քննադատության ենթարկվեցին ընդդիմադիր ուժերի կողմից:

1968 թ. առաջին կեսին Իրաքի ներքաղաքական դրությունը բնութագրվում էր լարվածությամբ և կառավարող վարչակարգի նկատմամբ ժողովրդական զանգվածների բացահայտ անվստահությամբ: Իրաքում գոյություն ունեցող վարչակարգը վաղուց սպառել էր իրեն, և նրա անկումը անխուսափելի էր դարձել: Խոսքը միայն այն մասին էր, թե ընդդիմության ո՞ր թևը կիրականացնի նրա տապալումը:

5. 1968 թ. հուլիսի 17–ի հեղաշրջումը և իշխանության գրավումը Բաաս կուսակցության կողմից

1968 թ. հուլիսի 17–ի լուսաբացին բաասական կուսակցությունը իրեն համախոհ զինվորականների աջակցությամբ իրականացրեց պետական հեղաշրջում: Պրեզիդենտ Արիֆը պաշտոնազրկվեց և արտաքսվեց երկրից: Իշխանությունն իր ձեռքում կենտրոնացրեց Հեղափոխական հրամանատարության խորհուրդը: Նրա նախագահը դարձավ Բաաս կուսակցության ռեգիոնալ ղեկավարության գլխավոր քարտուղար Ահմադ Հասան ալ–Բաքրը, որը նշանակվեց նաև երկրի պրեզիդենտ: 1968 թ. հուլիսի 30–ին իշխանությունից հեռացվեցին և երկրից արտաքսվեցին վարչապետ Աբդ ալ–Ռազակ Նայիֆը և պաշտպանության նախարար Իբրահիմ ադ–Դաուդը, որոնք բաասական կուսակցության անդամներ չէին: Կազմվեց բաասական կառավարություն, իսկ Ահմադ ալ–Բաքրը դարձավ միաժամանակ պետության ղեկավար, վարչապետ և Իրաքի զինված ուժերի գլխավոր հրամանատար:

1968 թ. հուլիսի 17–ի իրադարձություններից հետո երկար ժամանակ վիճաբանություն էր գնում այն հարցի շուրջը, թե ինչպես գնահատել այն, արդյո՞ք դա հեղափոխություն էր՝ սաուրա, թե՞ հեղաշրջում՝ ինկիլաբ: Ահմադ Հասան ալ–Բաքրը, որն այդ հարցին մեծ նշանակություն էր տալիս, իրաքյան և օտարերկրյա լրագրողներին տրված ինտերվյուի ժամանակ ասաց. «Այդ հարցը հարաբերական է: Հուլիսի 17–ի հեղափոխությունը մեր հասկացողությամբ հեղափոխություն է: Ձեզ համար այն հեղաշրջում է»:

Բաքրն անդրադարձավ նաև այդ հեղափոխության–հեղաշրջման պատճառներին: Նշելով, որ դրանք շատ են՝ նա առանձնացրեց դրանցից մի քանիսը: Ներքին քաղաքականության բնագավառում նա մատ-

նանշում է երկրի ծանր տնտեսական վիճակը, աննախադեպ թանկությունը, աշխատավորների ցածր կենսամակարդակը: Պետական գանձարանը դատարկ էր, իսկ իշխանությունները, որոնց պարտականությունների մեջ էր մտնում հոգալ այդ հարցերի մասին, անգործության էին մատնված: Մյուս կարևոր պատճառը նա համարում է երկրի քաղաքական ուժերի պառակտվածությունը և նրանց անկարողությունը՝ համաձայնության գալ որևէ հարցի շուրջը: Ինչ վերաբերում է ազգային և արտաքին քաղաքական պատճառներին, ապա Բաքրը նշում է առաջին հերթին արաբական երկրների պարտությունը 1967 թ. հունիսյան պատերազմի ժամանակ:

Բաասականների վերստին իշխանության գլուխ գալը ժողովրդական լայն զանգվածների կողմից ընդունվեց սառն անտարբերությամբ: Նրանց հիշողության մեջ դեռևս թարմ էին 1963 թ. արյունոտ դեպքերը և աջ բաասականների ստեղծած սարսափի և ահի մթնոլորտը: Նոր վարչակարգը, որը ներկայացնում էր Բաաս կուսակցության ավելի չափավոր կամ ձախ թևը, խիստ մտահոգված էր իրերի նման վիճակով: Մեկուսացված մնալու ու դրա հետ կապված անցանկալի հետևանքների վտանգը խստորեն անհանգստացնում էին նրան: Նա հասկանում էր, որ անհրաժեշտ էին նոր քայլեր և նոր մոտեցումներ Իրաքի առջև կանգնած բազմատեսակ խնդիրների լուծման համար:

Բաաս կուսակցությունն ինքը որոշակի էվոլյուցիա ապրեց: Նրա նոր ղեկավարությունը, որը համարվում էր կուսակցության չափավոր, համեմատաբար առաջադիմական և ձախ թևը, անհրաժեշտ համարեց սահմանազատվել նախկին բաասական ղեկավարությունից, նրա աջ և էքստրեմիստական թևից, և դատապարտեց Ալի Սաադիի, Թալիբ Շաբիբիի և նրանց համախոհների ճնշումների ու հալածանքների արյունոտ քաղաքականությունը, ընդունելով, որ դա շատ ծանր հարված էր հասցրել կուսակցության հեղինակությանը:

Բաասական նոր ղեկավարությունը սկսեց կիրառել ավելի սթափ և իրատեսական քաղաքականություն՝ հաշվի առնելով երկրի ներսում ծնավորված ուժերի փոխհարաբերակցությունը:

Կառավարությունը հարկադրված եղավ փոխել իր վերաբերմունքը Իրաքի այլ առաջադիմական ուժերի հանդեպ և որոշ քայլեր ձեռնարկել ընդդիմադիր առաջադիմական ուժերի հետ կապերի մեջ մտնելու համար: Ահմադ Հասան ալ–Բաքրը և նրա զինակիցները խոստանում էին ձախ ուժերին «չենթարկվել համաշխարհային նավթային մոնոպոլի-

աներին և ամրապնդել Իրաքի նավթային ընկերությունը, ավելի արմատական բնույթ տալ ագրարային ռեֆորմին, ուժեղացնել պայքարը իմպերիալիզմի, սիոնիզմի և հետադիմության դեմ»:

Պրեզիդենտ Բաքրը հանդիպում ունեցավ ընդդիմադիր կուսակցությունների, այդ թվում և կոմունիստական կուսակցության ղեկավարների հետ և առաջարկեց համագործակցության իր ծրագիրը: Ուշագրավ է, որ ծախ ուժերի լիդերները, սկզբունքորեն կողմ լինելով դրան, այդուհանդերձ, հրաժարվեցին այդ համագործակցությունից: Նման՝ առաջին հայացքից շահավետ թվացող համագործակցությունից հրաժարվելու գլխավոր պատճառներից էին երկրում ռազմադիկտատորական վարչակարգը անփոփոխ պահելու, երկրի ընդդիմադիր ուժերին Բաասի վերահսկողության տակ վերցնելու և իր մենաշնորհի իշխանությունը հաստատելու նրա մտադրությունը, որը Բաաս կուսակցության ղեկավարությունը բնավ էլ չէր թաքցնում:

Այսպիսով՝ նոր իշխանությունների առաջին քայլերը երկրի ներքաղաքական դրության հասունացած սոցիալ–տնտեսական պրոբլեմների կարգավորման ուղղությամբ ըստ էության անարդյունավետ չեղան: Այդ նշանակում էր, որ կառավարող վարչակարգին դեռևս չէր հաջողվում իր համար ստեղծել կայուն հենարան, ապահովել լայն զանգվածների աջակցությունը:

1968 թ. սեպտեմբերին պետական հեղաշրջման և բաասական վարչակարգի լիկվիդացման փորձ կատարեցին հետադիմական աջ ուժերը, և թեև այդ փորձը ձախողվեց, ու նրա մասնակիցները ձերբակալվեցին ու պատժվեցին (40 հոգի գնդակահարվեց), այդ փաստն ինքնին վկայում էր կառավարող վարչակարգի դիրքերի թուլության մասին:

Նման իրադրության մեջ Իրաքի կոմկուսի Կենտկոմը հրապարակեց մի կարևորագույն փաստաթուղթ՝ Ազգային միասնության ճակատի մասին խարտիայի նախագիծը: Կոմկուսն առաջարկում էր միանգամայն իրական հիմքի վրա ապահովել երկրի դեմոկրատական հայրենասիրական ուժերի համագործակցությունը ներքին և արտաքին պրոբլեմների լուծման համար: Որպես Իրաքի հեղափոխական դեմոկրատական ուժերի առաջնահերթ խնդիրներ՝ առաջադրվում էին՝ հետևողական պայքար իմպերիալիզմի, սիոնիզմի և նրա գործակալների դեմ, արմատախիլ անել ֆեոդալիզմը և լուծել ագրարային հարցը, իրականացնել առաջադիմական սոցիալ–տնտեսական վերափոխություններ և վերջապես՝ քրդական հարցի արդարացի լուծում: Իրաքի կոմկուսը գտնում էր, որ

Բաքրի կառավարությունը ի վիճակի չէ միայնակ լուծելու դեմոկրատական լայն վերափոխությունների ծրագիրը առանց դեմոկրատական–հեղափոխական մյուս կուսակցությունների օգնության և համագործակցության: ԻԿԿ–ն առաջարկում էր ազգային ճակատի հիմամբ ստեղծել կոալիցիոն ներկայացուցչական կառավարություն ԻԿԿ–ի, ՔԴԿ–ի և դեմոկրատական մյուս ուժերի մասնակցությամբ: Այդ կառավարության անդամները «չպետք է ենթարկվեն մեկ կուսակցության կամքին»:

1969 թ. ապրիլի սկզբներին Իրաքի կոմկուսի և Արաբական սոցիալիստական շարժման ղեկավարությունը հրապարակեցին նոր հայտարարություն, որով կոչ էին անում ստեղծել Ազգային ճակատ: Նրանում նշված էր, որ չնայած երկրի ազգային–հայրենասիրական ուժերի համախմբման մասին հայտարարություններին՝ կառավարությունն ըստ էության մինչև այժմ գործնական քայլեր չի ձեռնարկել այդ ուղղությամբ: ԻԿԿ–ն քննադատում էր կառավարությանը քրդական հարցում գրաված դիրքի համար: «Ներկա կառավարության էական թուլություններից մեկն այն է,— ասում էր ԻԿԿ–ի կենտկոմի առաջին քարտուղար Ազիզ Մուհամմադը,— որ նա չի ձգտում քրդական պրոբլեմի դեմոկրատական լուծման իրական ուղիներ փնտրել»:

1969 թ. գարնանը Իրաքի ներքաղաքական դժվարություններին գումարվեցին արտաքին քաղաքական բարդությունները: Նորից սրվեցին իրանա–իրաքյան վաղեմի սահմանային վեճերը, որոնք կապված էին Իրանի կողմից միակողմանի կերպով 1937 թ. իրանա–իրաքյան սահմանային պայմանագիրը չեղյալ հայտարարելու հետ: Փոքր ծավալի սահմանային ընդհարումները Իրաքի և Իրանի միջև կարող էին վերածել զինված մեծ կոնֆլիկտի: ԱՄՆ–ի, Քուվեյթի և Հորդանանի կառավարությունների միջնորդությամբ հնարավոր դարձավ թուլացնել իրանա–իրաքյան հարաբերությունների լարվածությունը:

Այսպիսով՝ Իրաքի ներքին և արտաքին քաղաքական պրոբլեմները ամբողջությամբ լուրջ անհանգստության հիմք էին տալիս երկրի հետագա զարգացման տեսանկյունից: Բաքրի կառավարությունը կանգնած էր երկընտրանքի առջև. կա՛մ շարունակել կիրառել կառավարման ռազմադիկտատորական մեթոդը, մենաշնորհի կերպով ոչ միայն կառավարել երկիրը, այլև քաղաքական գործունեության իրավունքից զրկել ազգային–դեմոկրատական մյուս ուժերին, կա՛մ մերձենալ ձախ դեմոկրատական ուժերի հետ, իրականացնել առաջադիմական սոցիալ–տնտեսական և քաղաքական վերափոխություններ, գտնել քրդա-

կան հարցի խաղաղ դեմոկրատական լուծման ուղիներ և դրանով իսկ հուսալի հենարան ստեղծել երկրի զարգացման համար: Կառավարող կուսակցության ղեկավար շրջաններում ձախ ուժերի հետ համագործակցելու, քրդական հարցը խաղաղ միջոցներով կարգավորելու շուրջ առկա էին տարաձայնություններ: Մեկ հոսանքը, որը ներկայացնում էին Սալիհ Մահդի Ամաշը, Հարդան Թիկրիթին և ուրիշներ, հանդես էր գալիս ազգային ճակատի շրջանակներում ձախ դեմոկրատական ուժերի հետ համագործակցելու և քրդական հարցի դեմոկրատական և արդարացի որևէ լուծման դեմ: Մյուս հոսանքը, որը բաղկացած էր Ահմադ Հասան Բաքրից, Սաադուն Գայդանից, Մուրտադա Սայիդ Աբդել Բաքրից, հակվում էր Ազգային ճակատի շրջանակներում համագործակցել Իրաքի ձախ դեմոկրատական ուժերի հետ և պատրաստ էր քրդական հարցի կարգավորմանը խաղաղ ճանապարհով:

6. 1970 թ. մարտի 11–ի համաձայնագիրը քրդական հարցի խաղաղ կարգավորման վերաբերյալ

1968 թ. հուլիսյան հեղաշրջումից հետո հաստատված իրաքյան իշխանությունները սկզբնական շրջանում ըստ էության կանգնած էին քրդական հարցը ռազմական ուժով լուծելու դիրքերում: Դրա վկայությունը Քրդստանում ռազմական գործողությունների շարունակումն էր: Սակայն իրադարձությունների զարգացումը և երկրի ընդհանուր քաղաքական իրավիճակը պահանջում էին ավելի իրապաշտ մոտեցումներ քրդական հարցում:

1969 թ. Բաքրը վերակազմավորեց իր կառավարությունը՝ նրա կազմում ընդգրկելով առաջադեմ մի քանի գործիչների, որոնք հայտնի էին ձախ հայրենասիրական ուժերի հետ իրենց կապերով: Արդեն կապեր էին հաստատվել կառավարության և քրդական շարժման ներկայացուցիչների միջև, և առկա էր լարվածության թուլացումը երկու կողմերի միջև:

Բանակցությունները երկու կողմերի միջև ավարտվեցին հաջողությամբ և 1970 թ. մարտի 11–ին Իրաքի կառավարության և քրդական ազգային–դեմոկրատական շարժման ղեկավարների միջև կնքվեց համաձայնագիր Քրդստանում զինված գործողությունների դադարեցման և քրդական հարցի խաղաղ կարգավորման մասին: Մարտի 11–ի դեկլարացիան պարունակում էր քրդերի ազգային ինքնավարության վերաբերյալ գրեթե բոլոր պահանջները և կոչված էր լուծելու այդ հիմնախն-

դիրը: Դեկլարացիան նախատեսում էր քրդական ինքնավար շրջանի օրենսդիր և գործադիր մարմինների ստեղծում, որը պետք է արտահայտեր սահմանադրության մեջ մտցված այն դրույթը, որ իրաքյան հանրապետության ազգաբնակչությունը բաղկացած է երկու հիմնական ազգություններից՝ արաբներից և քրդերից: Իրաքի երկու փոխպրեզիդենտներից մեկը պետք է քուրդ լիներ, քրդերեն լեզուն ճանաչվում էր որպես պաշտոնական լեզու այն շրջաններում, որտեղ քրդերը մեծամասնություն էին կազմում, նախատեսվում էր քրդական դպրոցների բացում, համալսարանի ստեղծում, Քրդստանի ֆինանսատնտեսական պահանջների այնպիսի կարգավորում, որն ապահովեր այդ շրջանի նորմալ զարգացումը:

1970 թ. մարտի 11–ի համաձայնագրի նախօրեին և նրանից հետո Իրաքը ձեռնարկեց մի շարք արտաքին քաղաքական քայլեր, որոնք կոչված էին նպաստելու նրա միջազգային հեղինակության բարձրացմանը: 1969 թ. ապրիլին Իրաքը ճանաչեց Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությանը և հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ՝ դեսպանների մակարդակով, այնուհետև ճանաչեց Հարավային Վիետնամի Հանրապետության ժամանակավոր հեղափոխական կառավարությանը: Մի շարք քայլեր ձեռնարկվեցին խորհրդա–իրաքյան հարաբերությունների բարելավման ուղղությամբ, ստորագրվեց խորհրդա–իրաքյան համաձայնագիրը տեխնիկա–տնտեսական համագործակցության մասին: Նման կապեր հաստատվեցին նաև Իրաքի և սոցիալիստական մի քանի այլ երկրների միջև:

7. Ազգային խարտիան և Իրաքի Ազգային առաջադիմական հայրենասիրական ճակատի ստեղծումը

Ներքին և արտաքին քաղաքական այս դրական քայլերը էապես նպաստեցին Իրաքի վարչակարգի դիրքերի ամրապնդմանը: Դա հնարավորություն տվեց ձեռնարկելու սոցիալ–տնտեսական և քաղաքական մի շարք նոր քայլեր, որոնք կարևոր նշանակություն ունեին երկրի զարգացման համար:

1970 թ. ընդունվեց նոր օրենք ագրարային վերափոխումների վերաբերյալ: Նա մի կողմից՝ արագացրեց ագրարային վերափոխումների իրականացումը, մյուս կողմից՝ նախատեսում էր նոր, ավելի նպաստավոր միջոցառումներ: Մասնավորապես, գյուղացիներն ազատվեցին

կալվածատերերից խլված հողերի դիմաց փոխհատուցում վճարելուց, չեղյալ հայտարարվեց հողի դիմաց վճարումներ կատարելը, կալվածատերերը զրկվեցին հողաբաժինների ընտրություն կատարելու իրավունքից և այլն: Պետությանը պատկանող բոլոր գյուղատնտեսական մեքենաները և տեխնիկան տրվեցին գյուղացիական կոոպերատիվներին: Նրանց հանձնվեցին նաև արտեզյան ջրհորները: Կրճատվեցին կալվածատերերին թողնվող հողաբաժինների չափերը: Դրա շնորհիվ հողազուրկ գյուղացիները ստացան նոր հողակտորներ:

1971 թ. նոյեմբերի կեսերին պրեզիդենտ Ահմադ Հասան ալ–Բաքրը հրապարակեց Իրաքի ազգային խարտիայի նախագիծը: Խարտիայի ընդհանուր դրույթներն ունեին առաջադիմական բնույթ և նպաստավոր հող էին ստեղծում երկրի դեմոկրատական–հայրենասիրական ուժերի համագործակցության համար: Նրա կարևորագույն դրույթներից մեկը վերաբերում էր հակաիմպերիալիստական պայքարին, որը նախատեսում էր Իրաքն ամբողջապես ազատել օտարերկրյա կախվածությունից: Պետական սեկտորը հռչակվում էր որպես հիմնականը ազգային տնտեսության մեջ: Կառավարությունը հայտնում էր իր վճռականությունը հասնելու ազգային նավթարդյունաբերության ստեղծմանը, կարևոր տեղ էր հատկացվում ագրարային ռեֆորմի իրականացմանը: Խարտիայի մեջ ընդգծվում էր, որ քրդական ազգային պրոբլեմը լուծվելու է մարտի 11–ի դեկլարացիայի հիման վրա, Բաասի և ՔԴԿ–ի համագործակցության պայմաններում:

Սակայն կառավարության բոլոր դրական ձեռնարկումներն ունեին նաև իրենց ներքին ծալքերը, որոնց համար բնորոշ էր ձախ ուժերի նկատմամբ անվստահությունը, երբեմն նաև անհանդուրժողականությունը: Երկրի ընդդիմադիր ձախ ուժերի, առաջին հերթին՝ ԻԿԿ–ի և ՔԴԿ–ի հետ ունեցած հարաբերությունների մեջ, Բաասը տարբեր փուլերում տարբեր դիրքորոշում ուներ, որի ընդհանուր նպատակը այդ ուժերին իրար հակադրելը և թուլացնելն էր: Այսպես՝ հեղաշրջումից հետո, մինչև 1971 թ. վերջերը, Բաասը շատ թե քիչ համագործակցում էր ՔԴԿ–ի հետ՝ աշխատելով չեզոքացնել ԻԿԿ–ին: Ավելին՝ ԻԿԿ–ն այդ շրջանում հետապնդվում էր և տեռորի ենթարկվում կառավարող կուսակցության կողմից: ԻԿԿ–ի նկատմամբ Բաասի քաղաքականության մեջ դրական տեղաշարժ սկսվեց 1971 թ. վերջերից, երբ Բաքրը հրապարակեց վերը նշված Ազգային գործողության խարտիան: Կարելի է ասել, որ կառավարող կուսակցության այդ քայլը որոշակի չափով թելադրված էր

ստեղծված իրավիճակով և ուներ հարկադրական բնույթ: Իրաքի կառավարությունն աշխատում էր դուրս գալ մեկուսացման վիճակից, որ սկսվել էր դեռևս 1963 թ. փետրվարյան հեղաշրջումից հետո և շարունակում էր Արիֆ եղբայրների կառավարման տարիներին: Նա մասնավորապես աշխատում էր բարելավել հարաբերությունները սոցիալիստական երկրների հետ, որով աշխատում էր վստահություն ձեռք բերել ժողովրդական զանգվածների կողմից:

1972 թ. ապրիլի 9–ին ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ա. Ն. Կոսիգինի պաշտոնական այցելության ժամանակ Բաղդադում ստորագրվեց Բարեկամության և համագործակցության պայմանագիր ԽՍՀՄ–ի և Իրաքի միջև:

ԽՍՀՄ–ի և սոցիալիստական երկրների հետ Իրաքի մերձեցումը դրական զգալի դեր խաղաց ընդդիմադիր ծախ ուժերի դիրքորոշման մեջ: Ստեղծված նոր պայմաններում նրանք արդեն հնարավոր էին համարում համագործակցությունը կառավարող Բաաս կուսակցության հետ:

Ազգային խարտիայի նախագծի հրապարակումից հետո Բաասի և ԻԿԿ–ի միջև հարաբերությունները բարելավվեցին: 1972 թ. մայիսին ԻԿԿ–ն հանդես եկավ հայտարարությամբ, որով հայտնում էր իր համաձայնությունը գրավելու նախարարական երկու տեղ Իրաքի կառավարության կազմում:

Վայելելով ԻԿԿ–ի, ՔԴԿ–ի և Իրաքի մյուս դեմոկրատական ուժերի աջակցությունը, ինչպես նաև ԽՍՀՄ և սոցիալիստական մյուս երկրների օգնությունը, Իրաքի կառավարությունը 1972 թ. հունիսի 1–ին որոշում ընդունեց «Իրաք պետրոլեում կոմպանի» նավթաընկերության ազգայնացման մասին: Իրաքի կոմունիստական կուսակցությունը և Քրդստանի դեմոկրատական կուսակցությունը լրիվ հավանություն տվեցին կառավարության գործողություններին: Այսպիսով՝ կառավարող Արաբական վերածնության սոցիալիստական կուսակցությունը՝ Բաասը, կոմունիստական կուսակցությունը, Քրդստանի դեմոկրատական կուսակցությունը հանդես եկան միասնական ճակատով Իրաքը իմպերիալիստական մոնոպոլիաների ճնշումից ազատագրելու պայքարում: 1973 թ. մարտի 1–ին նավթային ընկերությունները ճանաչեցին ազգայնացման ակտը և Իրաքի սուվերեն իրավունքները իր նավթային տարածքների վրա: Ստեղծվեց իրաքյան ազգային նավթարդյունաբերություն:

1973 թ. կեսերին Իրաքում գործնական քայլեր կատարվեցին Ազգային ճակատի ստեղծման ուղղությամբ: Արաբական վերածնության սոցիա-

լիստական կուսակցության գլխավոր քարտուղար Սիմադ Հասան ալ–Բաքրը և Իրաքի կոմկուսի առաջին քարտուղար Ազիզ Մուհամմադը հուլիսի 17–ին հրապարակեցին համատեղ կոմյունիկե Ազգային առաջադիմական ճակատի շրջանակներում համագործակցության մասին: ՔԴԿ–ն հրաժարվեց ճակատին մասնակցելուց, որը տակտիկական սխալ էր նրա կողմից:

Ազգային ճակատի ստեղծումը կոչված էր նոր թափ հաղորդելու սոցիալ–տնտեսական և քաղաքական բարեփոխությունների ծրագրին և ավարտելու այն: Այդ ուղղությամբ զգալի հաջողություններ ձեռք բերվեցին: Առկա էր Իրաքի ներքաղաքական դրության կայունացումը: Բարձրացավ երկրի միջազգային հեղինակությունը: Դրա շնորհիվ Իրաքում իրականացվեցին ժողովրդական զանգվածների նյութական պայմանների բարելավման, բնակարանային շինարարության, կրթական ու մշակութային մի շարք պլաններ:

Երկրի ներքաղաքական դրության բարելավումն զգալի չափով կապված էր տնտեսական դրական տեղաշարժերի հետ: Իրաքի նավթարդյունաբերության ազգայնացումը տեղի ունեցավ այնպիսի պարագաներում, երբ համաշխարհային մասշտաբով տեղի ունեցավ նավթի գների բարձրացում: Բավական է նշել, որ երկրի գանձարանը նավթի արտահանումից 1976 թ. 1968 թ. համեմատությամբ 17 անգամ ավելի գումար ստացավ, իսկ 1980 թ.՝ 54 անգամ: Այդ նավթադոլարների ընդհանուր գումարը, ըստ ՕՊԵԿ–ի տվյալների, 1980 թ. տարեկան կազմում էր 26,134 մլրդ ԱՄՆ դոլար: Ձեռք բերելով այսպիսի վիթխարի միջոցներ՝ Իրաքի կառավարությունը ծավալեց մեծ չափերի շինարարություն և վերակառուցման աշխատանքներ:

8. Հակասությունների սրումը Իրաքի տարբեր քաղաքական ուժերի միջև

Իրաքի առաջադիմական զարգացման ճանապարհին կանգնած էին ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական մի շարք դժվարություններ, որոնք գնալով ավելի ու ավելի էին կաշկանդում դեմոկրատական հայերնասիրական ուժերի գործունեությունը: Ինչպես հարևան մի շարք երկրներ, այնպես էլ արևմտյան իմպերիալիստական տերությունները ամենևին շահագրգռված չէին ոչ Իրաքում իրականացվող առաջադիմական սոցիալ–տնտեսական վերափոխություններով, ոչ Բաասի, Իրաքի կոմկուսի ու մյուս դեմոկրատական ուժերի համագործակ-

ցությամբ և ոչ էլ քրդական ազգային պրոբլեմի արդարացի դեմոկրատական լուծմամբ: Հիշյալ պատճառներով արևմտյան որոշ պետություններ և Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների հետադեմ վարչակարգերը եռանդուն գործունեություն ծավալեցին Իրաքի առաջադիմական զարգացման համար վճռորոշ նշանակություն ունեցող ձեռնարկումների դեմ:

Բնականաբար, հետադիմական ներքին ու արտաքին այս ուժերը պետք է աշխատեին օգտագործել նվազագույն իսկ հնարավորությունները Իրաքի դեմոկրատական հայրենասիրական ուժերի համագործակցությունը կանխարգելելու և երկրի առաջադիմական զարգացումը խափանելու համար:

Այդ նպատակով հիշյալ հետադիմական ուժերն աշխատում էին օգտագործել առաջին հերթին քրդական ազգային պրոբլեմը: Դժբախտաբար այդ հնարավորությունը նրանց ընձեռեցին ինչպես Իրաքի կառավարությունը, այնպես էլ քրդական ազգային–դեմոկրատական շարժման ղեկավարները: Իրաքի կառավարությունը որոշակի նահանջ կատարեց, և քրդերի ինքնավարության շրջանակները (տերիտորիալ, քաղաքական, իրավական և այլն) որոշ չափով սեղմվեցին: Այստեղ իր դերը խաղաց նաև հարևան երկրների՝ Իրանի և Թուրքիայի ճնշումը Իրաքի վրա, որոնք ոչ մի կերպ չէին ցանկանում քրդական հարցի շատ թե քիչ նորմալ լուծման օրինակ ունենալ՝ նկատի ունենալով, որ այդ երկրներում նույնպես ապրում էին միլիոնավոր քրդեր: Ինչ վերաբերում է քրդական շարժման ղեկավարներին, ապա նրանք, ունենալով ազգային ինքնավարության օրենքից դժգոհության օբեյկտիվ որոշ հիմքեր, գոյություն ունեցող տարաձայնությունների վերացման սխալ և անհեռանկար ուղի ընտրեցին, գժտվեցին կոմկուսի հետ և կամա թե ակամա ընկան օտարերկրյա ուժերի ազդեցության ոլորտը: Դեպքերի հետագա զարգացումը հասցրեց այն բանին, որ և՛ ինքնավարության գործը, և՛ ԻԿԿ–ի և ՔԴԿ–ի գործունեությունը հայտնվեցին անբարենպաստ վիճակի մեջ:

1975 թ. քրդական շարժման պարտությունը, որը մասամբ կապված էր նաև քրդական շարժման ղեկավարների ոչ ճիշտ դիրքորոշման հետ, Ազգային ճակատի միակողմանի, առավելապես Բաասին ձեռնտու պայմանները, վերը նշված հսկայական չափերի հասնող նավթադոլարները և վերջապես՝ բաասական առավել աջ ուժերի դիրքերի ամրապնդումը երկրի կառավարման բոլոր օղակներում աստիճանաբար հասցրեցին նոր իրավիճակի ստեղծմանը, որը, ըստ էության, նշանակում էր հրաժարում նախկին առաջադիմական կուրսից:

1977–1978 թթ. ակներև դարձան ճգնաժամային երևույթները Ազգային ճակատի և նրա գործունեության մեջ: Դրանք կապված էին կառավարող Բաաս կուսակցության քաղաքական գործունեության համար մենաշնորհ իրավիճակ ստեղծելու, դիկտատորական մեթոդների կիրառմանն ավելի ու ավելի հակվելու և կոմկուսի ու ծախ մյուս ուժերի դեմ անվստահության և հետապնդումների քաղաքականության հետ: Փաստորեն, տեղի ունեցավ երկրի քաղաքական ուժերի վերադասավորում: Ստեղծված պայմաններում Իրաքի կոմկուսը դուրս եկավ կառավարությունից և Ազգային հայրենասիրական առաջադիմական ճակատից:

VII. ԻՐԱՔԸ ՍԱԴԱՄ ՀՈՒՍԵՅՆԻ ՊՐԵԶԻԴԵՆՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1979–2003 թթ.)

1. Ահմադ Հասան ալ–Բաքրի հեռացումը իշխանությունից: Սադամ Հուսեյնը Իրաքի պրեզիդենտ

1979 թ. հուլիսի 7–ին տեղի ունեցավ իշխանափոխություն Իրաքում: Ահմեդ Հասան ալ–Բաքրը զրկվեց իր զբաղեցրած բոլոր բարձր պաշտոններից, և իշխանությունն անցավ Սադամ Հուսեյնին[20]: Դա Իրա-

20 Ահմադ Հասան ալ–Բաքրն իր հայացքներով ավելի չափավոր էր, քան նրան հաջորդած նրա հեռավոր ազգական Սադամ Հուսեյնը: Ես հնարավորություն եմ ունեցել հանդիպել և զրուցել նրա հետ, երբ 1992 թ. դեկտեմբերին խորհրդային մի պատվիրակության կազմում եղա Իրաքում, և ալ–Բաքրն ընդունեց մեր պատվիրակությանը: Նա հասարակ մարդու տպավորություն թողեց, հագնված էր համեստ, աշխույժ զրուցակից էր, որի ժամանակ առատորեն օգտվում էր ժեստիկուլյացիայից: Ալ–Բաքրը խանդավառությամբ պատմում էր իրենց ապագա ծրագրերի, Իրաքի տնտեսական վերափոխումների և Իրաքը տարածաշրջանի ամենազարգացած պետությանը վերածելու մասին: Իմանալով, որ ես հայ եմ՝ նա ժպտաց և մի քանի րոպե շարունակ խոսում էր հայերի, մասնավորապես իրաքահայերի մասին՝ գովեստներ շռայլելով նրանց հասցեին: Նա հատուկ ընդգծեց, որ իրենք շատ գոհ են իրաքահայերից, իրաքահայերը շատ ազնիվ, պարկեշտ և վստահելի մարդիկ են և Իրաքի օրինական քաղաքացիները: Նրա վրա մեծ տպավորություն էր թողել իրաքահայերի մասնագիտական բարձր ունակությունները բոլոր բնագավառներում՝ նշելով, որ նրանք շատ հաճախ են դիմում հայերին այս կամ այն հարցով: Այնուհետև ժպտալով ասաց, որ երբ իր ավտոմեքենան փչանում է, ինքը միայն հայերին է դիմում: Այնուհետև ալ–Բաքրը հավաստիացրեց, որ ինքը իր հնարավորության տակ եղած բոլոր միջոցներով կպաշտպանի հայերին և թույլ չի տա, որ նրանց իրավունքները ոտնահարվեն:

քի համար անսովոր անարյուն հեղաշրջում էր: Սակայն արյուն առատորեն հոսելու էր հետո:

Սադամ Հուսեյնը դարձավ Իրաքի պրեզիդենտ, Հեղափոխական հրամանատարության խորհրդի նախագահ, վարչապետ, Արաբական սոցիալիստական վերածննդի՝ Բաաս կուսակցության գլխավոր քարտուղար և զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար: Մինչ այդ բոլոր պաշտոնները զբաղեցնում էր Ահմադ Հասան ալ–Բաքրը, իսկ Սադամ Հուսեյնը նրա տեղակալն էր այդ բոլոր պաշտոնների գծով:

Այսպիսով՝ պետական, քաղաքական, կուսակցական և ռազմական ամբողջ բարձրագույն իշխանությունը մնաց կենտրոնացված մի անձի ձեռքում:

Սադամ Հուսեյնը մինչ այդ արդեն ձեռք էր բերել Իրաքի «ուժեղ մարդու» համբավ: Նա, 1967 թ. հուլիսի 17–ի հեղաշրջումից անմիջապես հետո ստանձնելով պաշտպանության նախարարի կարևոր պաշտոնը, հետագայում կարողացավ աստիճանաբար, քայլ առ քայլ իր դիրքերն ամրապնդել Իրաքի բարձրագույն պետական և կուսակցական ղեկավարության մեջ: Նա մեկը մյուսի հետևից ասպարեզից հեռացրեց իր բոլոր հնարավոր մրցակիցներին՝ ոմանց այն աշխարհ ուղարկելով, և դարձավ Ահմադ Հասան ալ–Բաքրի տեղակալը: Շուտով ստեղծվեց մի այնպիսի դրություն, երբ երկրում ոչ մի կարևոր որոշում չէր կարող ընդունվել, և ոչինչ չէր կարող տեղի ունենալ առանց Սադամ Հուսեյնի գիտության և հավանության: Քանի գնում, այնքան ավելի էին թուլանում Ահմադ Հասան ալ–Բաքրի դիրքերը և ավելի ձևական դառնում նրա պրեզիդենտ, Բաաս կուսակցության գլխավոր քարտուղար, Հեղափոխական հրամանատարության խորհրդի նախագահ և զինված ուժերի գլխավոր հրամանատար լինելը: Այդ բոլոր բնագավառներում 1970–ական թվականների վերջերին արդեն գլխավոր դերակատարը դարձել էր նրա տեղակալ և երկրի փաստացի ղեկավար Սադամ Հուսեյնը: 1979 թ. հուլիսի 7–ին վերջ տրվեց այդ երկվությանը, և Սադամ Հուսեյնը փաստացի ղեկավարից դարձավ Իրաքի պաշտոնական և օրինական ղեկավարը:

Սադամ Հուսեյնը ծնվել է 1937 թ. Թիկրիտի մոտ գտնվող Աուջա գյուղում՝ Բու Նասիր ցեղի Բեգատ տոհմին պատկանող ընտանիքում: Նրա հայրը՝ Հուսեյն Աբդ ալ–Մաջիդը, հողազուրկ աղքատ գյուղացի էր, որը մահացել էր նախքան իր որդու լույս աշխարհ գալը: Հետագայում Սադամը մեկ անգամ չէ, որ հիշում է իր մանկության ծանր օրերի և իրենց ընտանիքի աղքատ վիճակի մասին: Նրա նմանակ Միքայել Ռա-

մադանն իր «Սադամ Հուսեյնի ստվերը» գրքում գրում է, որ մի անգամ Սադամ Հուսեյնը, իր մերձավորների ներկայությամբ խոսելով այդ մասին, ասում է. «Այն ամենը, ինչ մայրս ուներ, ընդամենը մի փայտե գդալ էր, որով նա խառնում էր կերակուրը, որը մենք ձեռքերով էինք ուտում»: Հայրազուրկ Սադամի խնամքն իր վրա է վերցնում նրա քեռին՝ Սուբհա Խեյրալլահ Թալֆա ալ–Մասալատը, որն Իրաքի բանակի սպա էր, իսկ հետո դառնում է պետական ծառայող: 1955 թ. վերջինս հաստատվում է Բաղդադում և նրա հետ միասին մայրաքաղաք է տեղափոխվում նաև Սադամը՝ նպատակ ունենալով շարունակել իր կրթությունը: Այստեղ 1955 թ., 18–ամյա Սադամ Հուսեյնը անդամակցում է Բաաս կուսակցությանը և իր ամբողջ կյանքը կապում նրա գործունեության հետ:

1959 թ. հոկտեմբերին նա մասնակցում է Իրաքի վարչապետ Աբդել Քերիմ Կասեմի դեմ Բաաս կուսակցության կազմակերպած մահափորձին, որն ավարտվում է անհաջողությամբ: Ոտքից վիրավորված Սադամ Հուսեյնին հաջողվում է փախչել Իրաքից և թաքնվել Սիրիայում: Նա դավադրության մի քանի այլ մասնակիցների հետ միասին հեռակա դատապարտվում է մահվան: Այնուհետև նա 1960 թ. Սիրիայից անցնում է Եգիպտոս և երեք տարի Կահիրեի համալսարանում ուսումնասիրում իրավագիտություն:

1963 թ. պետական հեղաշրջումից, Կասեմի վարչակարգի տապալումից և իշխանությունը Բաաս կուսակցությանն անցնելուց հետո, Սադամը կրկին Բաղդադում է: Սակայն այն բանից հետո, երբ պրեզիդենտ Աբդել Սալամ Արիֆը իշխանությունից հեռացրեց բաասականներին, Սադամը 1964 թ. մասնակցում է նրա դեմ ուղղված դավադրությանը, ձերբակալվում և բանտ է նետվում: 1966 թ. նրան հաջողվում է փախչել բանտից և դարձյալ ապաստան գտնել Սիրիայում:

1968 թ. հուլիսի 17–ին, ինչպես նշվեց, Իրաքում Բաաս կուսակցությունը երկրորդ անգամ եկավ իշխանության գլուխ, որը նոր ու մեծ հեռանկարներ բացեց 31–ամյա Սադամ Հուսեյնի առջև: Նա աստիճանաբար դառնում է նոր իշխանությունների ազդեցիկ մարդկանցից մեկը: Դրան մեծապես նպաստում է նաև այն պարագան, որ նա արյունակցական կապեր ուներ Իրաքի հեղափոխական հրամանատարության խորհրդի նախագահ և Իրաքի պրեզիդենը Ահմադ Հասան ալ–Բաքրի հետ, որի ազգականն էր վերը արդեն հիշատակված Սադամ Հուսեյնի քեռին՝ Խեյրալլահ Թալֆա ալ–Մասալատը: Շուտով ձևավորվում է Բաքր–Հուսեյն դուետը, որը դառնում է տիրապետող հեղափոխական հրամա-

նատարության խորհրդում և Բաաս կուսակցության ղեկավարության մեջ: Արդեն այդ ժամանակ հստակորեն դրսևորվում են Սադամի Հուսեյնի բնավորության այնպիսի գծերը, ինչպես՝ խորամանկությունը, փառասիրությունը, իշխանատենչությունը, իր նպատակին հասնելու համար միջոցների մեջ խտրություն չդնելը, դաժանությունը, անհանդուրժողականությունը, վրիժառությունը և այլն: Նա սկսում է ավելի ու ավելի հետին պլան մղել Ահմադ Հասան Բաքրին և հաշվի չնստել նրա հետ:

Ահմադ Հասան Բաքրը, անշուշտ, տեսնում էր այդ բոլորը և փորձեր կատարում սահմանափակել նրա իշխանությունը, բայց դա չէր հաջողվում նրան: Սադամ Հուսեյնը կարողացել էր իշխանական բոլոր օղակներում դնել իրեն հավատարիմ մարդկանց:

Ահմադ Հասան Բաքրը մի վերջին փորձ էլ կատարեց դրությունը հօգուտ իրեն փոխելու ուղղությամբ: Նա 1979 թ. գաղտնի նամակ հղեց Սիրիայի պրեզիդենտ Հաֆիզ ալ–Ասադին, որտեղ նույնպես Բաաս կուսակցությունը կառավարող կուսակցություն էր, առաջարկելով արագացնել Սիրիայի և Իրաքի միավորման գործընթացը: Նա հույս ուներ, որ միավորման դեպքում Ասադի հետ միասին իրենց կհաջողվի քաղաքական և պետական ասպարեզից դուրս մղել Սադամ Հուսեյնին: Բայց վերջինս, որի գործակալներն ամենուր էին, այդ թվում և Բաքրի շրջապատում, իմացավ Բաքրի այդ գաղտնի նամակի մասին և հասկացավ նրա այդ քայլի իմաստն ու վտանգավորությունն իր համար: Նա անցավ վճռական գործողությունների և ուղղակի ստիպեց Ահմադ Հասան ալ–Բաքրին հրաժարական տալ առանց բացառության իր գրաված բոլոր բարձրագույն պաշտոններից: Հենարանից և աջակցությունից զուրկ Բաքրը 1979 թ. հուլիսի 7–ին հարկադրված էր կատարել Սադամ Հուսեյնի կամքը: Նրա հեռացման պաշտոնական վարկածը նրա վատառողջ լինելն էր:

Սադամ Հուսեյնը դարձավ Իրաքի անսահմանափակ տիրակալը:

2. Սադամ Հուսեյնի՝ բռնությունների վրա խարսխված ներքին քաղաքականությունը

Իրաքի վերջին քառորդ դարի պատմությունն անխզելիորեն կապված է Սադամ Հուսեյնի անվան հետ: Դա մի հակասական շրջան է, որը հնարավոր չէ բնութագրել մեկ բառով: Այս փուլում, հատկապես նրա սկզբնական շրջանում, եղան նշանակալի տեղաշարժեր Իրաքի հասարակության և տնտեսության ոլորտներում, որոշ բարելավումներ բնակ-

չության սոցիալ–տնտեսական դրության մեջ: Իրաքը ստեղծեց բավականին ամուր զինված ուժեր և այլն:

Բայց դրա հետ միասին, XX դարի ավարտական փուլում Իրաքում հաստատվեց դիկտատորական և դաժան վարչակարգ՝ Սադամ Հուսեյնի անձնական դիկտատուրան, որն իր դաժանությամբ, բռնություններով, հալածանքներով, բոլոր տեսակի ազատությունների սահմանափակումով գերազանցեց բոլոր նախորդ վարչակարգերին: Դեռ երբեք այդքան անմեղ մարդկանց արյուն չէր թափվել: Ձերբակալվում և առանց դատ ու դատաստանի, տանջամահ անելով այն աշխարհ էին ուղարկվում հազարավոր մարդիկ՝ Սադամ Հուսեյնի քաղաքական հակառակորդներ և յուրայիններ, որոնք թեկուզ և փոքր չափով կասկածվում էին Սադամ Հուսեյնին անհնազանդ կամ անհավատարիմ լինելու մեջ: Դաժան հալածանքների և կտտանքների էին ենթարկվում անգամ կանայք, ծերունիները և երեխաները:

Այդ մասին կան բազմաթիվ փաստաթղթեր, հուշագրություններ և ուսումնասիրություններ՝ հրատարակված տարբեր լեզուներով: Բայց դրանց մեջ իր հավաստիությամբ և արյունալի իրադարձությունների ու փաստերի իմացության աստիճանով առանձնանում է Սադամ Հուսեյնի նմանակ կամ կրկնակ Միքայել Ռամադանի հուշապատումը, որը հրատարակվել է անգլերեն և արաբերեն, ապա թարգմանվել մի շարք լեզուներով, այդ թվում և ռուսերեն՝ «Սադամ Հուսեյնի ստվերը» խորագրով: Ժանրային առումով լինելով հուշագրություն, այդ գիրքը, սակայն, իրականում անհերքելի փաստաթղթերի արժեք ունի:

Սադամ Հուսեյնն ունեցել է մի քանի նմանակ կամ կրկնակ, որոնց նա օգտագործում էր զանազան նպատակների համար: Ինչպես գրում է Մ. Ռամադանը. «Կամոքն ճակատագրի ես եղա Սադամ Հուսեյնի գործող ամենահայտնի մի քանի նմանակներից առաջինը: Երկու տասնամյակի ընթացքում ես հարկադրված էի դիտել, թե ինչպես Սադամ Հուսեյնը, որն ուներ բացարձակ իշխանություն իր ժողովրդի վրա, դաժանորեն վերացնում էր նրանց, ովքեր համարձակվում էին հակադրվել իրեն»: Նրա հուշագրության էջերը ողողված են դանթեական դժոխքին արժանի տանջանքների, բռնությունների, սպանությունների և սարսափների նկարագրությամբ:

Սադամ Հուսեյնը շատ հաճախ էր դիմում իր դեմ ուղղված «դավադրությունների բացահայտման» տակտիկային՝ օգտագործելով դա իր հակառակորդներին ծերբակալելու և կախաղան բարձրացնելու հա-

մար: Այդ առումով հետաքրքիր փաստեր են բերվում Մ. Ռամադանի գրքում: Նշենք դրանցից միայն մեկը, որը շատ բնորոշ է Սադամ Հուսեյնի քաղաքական տակտիկայի համար: «Հուլիսի վերջերին (1979 թ. — Ն. Հ.),— գրում է Մ. Ռամադանը,— Սադամը «բացահայտեց» մի դավադրություն, որի նպատակն էր նրան սպանել: Չնայած այն հեշտությանը, որով նա գրավեց պրեզիդենտությունը, նա թշնամիներ ուներ Հեղափոխական հրամանատարության խորհրդում: Խորհրդի գլխավոր քարտուղար Մուհի Աբդուլլահ Մաշադին պահանջեց անցկացնել քվեարկություն պրեզիդենտ ալ–Բաքրին պաշտոնանկ անելու հարցի վերաբերյալ, և քանի որ Սադամի անվտանգության համար անհրաժեշտ էր ճնշել դիմադրության օջախները, Մուհիին ձերբակալեցին և ենթարկեցին կտտանքների: Բաաս կուսակցության ղեկավարների հանդիպման ժամանակ կոտրված Մուհիին ստիպեցին խոստովանել, որ ինքը մասնակցել է Սադամին տապալելու նպատակով կազմակերպված դավադրությանը, և հայտնել իր դավադիր գործակիցների անունները: Դրա հետևանքով ձերբակալվեցին Բաաս կուսակցության 68 քաղաքացիական և զինվորական ղեկավարներ, որոնցից հինգը Հեղափոխական հրամանատարության խորհրդի ղեկավարության անդամներ էին: Բոլոր մեղադրյալներին հայտարարեցին Սադամի գործող կամ պոտենցիալ հակառակորդներ: Քննչական հանձնաժողովի աշխատանքներից հետո, որոնք ամբողջապես ուղղորդվում էին Սադամի կողմից, 16 դավադիրներ, ներառյալ ՀՀԽ–ի 5 անդամներ, գնդակահարվեցին կամ կախաղան հանվեցին»:

Բռնությունները, հալածանքները և մահապատիժները Սադամի տիրապետության շրջանում իրագործվում էին ալիք առ ալիք՝ մեկը մյուսին հաջորդելով: Մ. Ռամադանը, որը քաջատեղյակ էր, թե ինչ է տեղի ունենում պրեզիդենտական պալատում և իշխանական մյուս կառույցներում, հետևյալ հետաքրքիր տեղեկություններն է հաղորդում: «Իրականում,— գրում է նա,— Բաաս կուսակցության ավելի քան 500 բարձրաստիճան պաշտոնյաներ սպանվեցին Սադամի ուղղակի հրամանով: Հեղափոխական խորհրդի անդամների մեկ երրորդի ընտանիքներին պահում էին որպես պատանդներ, իսկ իրենք՝ կուսակցության և խորհրդի անդամները, հարկադրված էին ստորագրել իրենց նախկին գործընկերներին դատապարտող թղթերը: Մահվան վճիռ կայացնելուց հետո այդ մարդկանց ստիպում էին մասնակցել դրանց ի կատար ածմանը, այդ կերպ նրանց կապելով Սադամի հետ՝ որպես ոճրագործության հարկադրված մասնակիցներ:

Ընդհանուր առմամբ տասնյակ հազարավոր իրաքցիներ են ներգրավված Սադամի վարչակարգի դաժանությունների մեջ:

Անվտանգության ծառայության տասնյակ հազարավոր աշխատակիցներ մասնակցում էին հարյուր հազարավոր իրաքցիների բռնության ենթարկելուն, տանջահար անելուն և սպանություններին»:

Այսպիսին էր Իրաքում տիրող մթնոլորտը:

1980 թ. նոյեմբերին ստեղծվեց կառավարող վարչակարգին հակադրվող Դեմոկրատական ազգային–հայրենասիրական ճակատը, որի մեջ մտան բաասականների պրոսիրիական մի խմբավորում, Իրաքի կոմկուսը, Արաբական սոցիալիստական շարժումը և Քրդստանի հայրենասիրական միությունը: Հետագայում այդ ճակատին միացավ նաև Քրդստանի միացյալ սոցիալիստական կուսակցությունը, շիաների այսպես կոչված Իսլամական կոչի կուսակցությունը և այլ խմբավորումներ:

Սակայն այս ճակատը ներքնապես միասնական չէր, և սոսկ կառավարող ռեժիմի դեմ ունեցած հակակրանքը բավական չէր հիրավի գործուն մարմին ստեղծելու համար: ԻԿԿ–ն լուրջ նշանակություն էր տալիս քրդական օպոզիցիոն ուժերի հետ դաշնակցելու գործին: Բայց քրդական կուսակցությունների և կազմակերպությունների մեջ էլ միասնություն չկար: Ավելին, քանի որ Քրդստանի հայրենասիրական միության և Քրդստանի դեմոկրատական կուսակցության միջև սուր հակասություններ կային, և հատկապես առաջինը ոչ մի կերպ չէր ուզում ՔԴԿ–ի հետ մեկ ճակատի մեջ մտնել, ԻԿԿ–ն նույն 1980 թ. ստեղծեց զուգահեռ Ազգային–դեմոկրատական ճակատ (ԱԴՃ), որի մեջ մտան ԻԿԿ–ն, Քրդստանի դեմոկրատական կուսակցությունը և Քրդստանի միասնական սոցիալիստական կուսակցությունը:

Սադամ Հուսեյնը ծանր հարված հասցրեց այդ ճակատներին և նրանց մասնակից բոլոր կուսակցություններին և կազմակերպություններին: Նրանց ղեկավարներից և անդամներից շատերը ձերբակալվեցին, հայտնվեցին բանտերում ու տանջամահ արվեցին: Բռնությունների էին ենթարկվում, ընդհուպ մինչև մահապատիժը, նաև նրանց ընտանիքների անդամները, որոնք ոչ մի առնչություն չունեին որևէ քաղաքական գործունեության հետ: Սադամ Հուսեյնը Իսլամական կոչի կուսակցությանն անդամակցելը հայտարարեց մահվան ենթակա ոճրագործություն:

Փոփոխության ենթարկվեց նաև քաղաքականությունը սոցիալ–տնտեսական ոլորտում:

Դեռևս 1975 թ. կեսերից սկսվեց Իրաքի ֆինանսատնտեսական վիճակի բարելավում, որը մեծապես կապված էր նավթի համաշխարհային գների բարձրացման հետ: Շեշտակի աճեցին նավթից ստացվող եկամուտները, ինչը հնարավորություն տվեց կառուցել նոր գործարաններ և արդյունաբերական ձեռնակություններ, ընդարձակել մշակովի հողատարածություններ: Նշանակալի տեղաշարժեր կատարվեցին նաև առողջապահության, կրթության, բնակարանաշինարարության և այլ ոլորտներում: Դեռևս Բաքրի կառավարման շրջանում կազմվեցին լուրջ ծրագրեր Իրաքի տնտեսության դիվերսիֆիկացիայի ուղղությամբ այն հաշվով, որ նվազի նրա կախվածությունը նավթից, նրա հանույթից և վաճառքից ստացվող եկամուտներից:

1975–1980 թթ. տեղի ունեցած փոփոխությունները սոցիալ–տնտեսական ոլորտում հավասարաչափ ազդեցություն չունեցան բոլոր խավերի դրության վրա: 80–ական թվականների սկզբներին Իրաքում արդեն ձևավորվել էր մի նոր խավ, յուրատեսակ ռազմաբյուրոկրատական բուրժուազիա, որի ֆինանսական, տնտեսական և քաղաքական գերակա վիճակը անմիջականորեն կապված էր կառավարող վարչակարգի համակարգում գրաված դիրքի և նրա չարաշահման հետ: Այդ խավի արագ հարստացումը, կոռուպցիայի և ապօրինի այլ միջոցներով իր համար տնտեսական նոր իրավիճակի ստեղծումը հասցրեց այն բանին, որ նա, բնականաբար, պետք է հակադրվեր կառավարության նախկինում հռչակված քաղաքական կուրսին: Ըստ էության, այդ խավը իր հարստությամբ և տնտեսական վիճակով ավելի շատ ընդհանրություններ ուներ ազգային բուրժուազիայի և ունևոր մյուս խավերի հետ, որից տրամաբանորեն բխում էր նրա քաղաքական կեցվածքը: 1982 թ. տեղի ունեցած Բաասի IX համագումարը, փաստորեն, որոշ սկզբունքային հարցերում նահանջեց նախորդ՝ 1973 թ. տեղի ունեցած VIII համագումարի հռչակած, այսպես կոչված, «սոցիալիստական կողմնորոշման» կուրսից: Դրա կոնկրետ արտահայտությունը հանդիսացան տնտեսության պետական սեկտորի շրջանակների սահմանափակումը և մասնավոր սեկտորին տրված լայն արտոնությունները, տնտեսական (նաև քաղաքական) մերձեցումը արևմտյան երկրների հետ, ռեգիոնի հետադիմական ու «չափավոր» ռեժիմների հետ սերտ հարաբերությունների հաստատումը:

Իրաքի ներքին քաղաքականության և տնտեսական զարգացման վրա բացասական առումով մեծ ազդեցություն ունեցավ Սադամ Հուսեյնի արտաքին քաղաքականությունը, որն այլ կերպ, քան հավակնոտ և

արկածախնդրական չի կարելի համարել: Նրա սկսած ութամյա պատերազմը Իրանի հետ, դրան հաջորդած ագրեսիան Քուվեյթի դեմ և այլ չմտածված քայլեր հանգեցրին Իրաքի տնտեսական քայքայմանը և բնակչության կենսամակարդակի կտրուկ անկմանը:

Իրաքի բնակչությունը շատ թանկ վճարեց իր դաժան և անհեռատես զահիմի՝ առաջնորդի անմիտ և արկածախնդրական քաղաքականության դիմաց:

3. Պատերազմը Իրանի հետ

Այսպիսի ոչ կայուն ներքաղաքական վիճակի պայմաններում Իրաքը 1980 թ. սեպտեմբերի 22–ին պատերազմական գործողություններ սկսեց Իրանի դեմ:

Սկսված պատերազմում նախահարձակն Իրաքն էր, սակայն ծավալած իրադարձությունները ցույց տվեցին, որ զինված կոնֆլիկտին մասնակցող երկու կողմերն էլ՝ թե՛ իրաքյան բաասական վարչակարգը և թե՛ Իրանի իսլամական վարչակարգը, ունեին պատերազմ սանձազերծելու ներքին և արտաքին շահագրգռվածություններ:

Իրաքը երկրի ներսում ուներ մի շարք պրոբլեմներ, որոնք խորանալու և քաղաքական ցնցումների վերածվելու միտում ունեին: Այդ պրոբլեմների համակարգում առանձնապես ակնառու էին կառավարող վարչակարգի բացահայտ առճակատումը երկրի բոլոր դեմոկրատական ուժերի հետ: Մյուս կողմից՝ Սադամ Հուսեյնի վարչակարգին անհանգստացնում և մեծ վտանգ էր ներկայացնում Քրդստանում սկսված և թափ առնող ազգային շարժումը՝ լիարժեք ինքնավարության համար:

Պատերազմ սանձազերծելու քաղաքական շահագրգռվածությունների մեջ առաջին պլանի վրա էին Իրանի իսլամական ֆունդամենտալիստական վարչակարգի բացահայտ հակահիրաքյան և հակաբաասական դիրքորոշումը:

Իրանա–իրաքյան հարաբերությունների լարվածությունը նոր չէր սկսվել. այն ուներ իր պատմությունը, որը նախ և առաջ կապված էր սահմանային և տարածքային վեճերի հետ: Երբ Իրանը 1971 թ. գրավեց Աբու Մուսա, Մեծ Թոնբ և Փոքր Թոնբ կղզիները Օրմուզի նեղուցում, Իրաքը, որ ինքն էր հավակնում այդ կղզիներին, խզեց դիվանագիտական հարաբերություններն Իրանի հետ: Այդ կղզիների հարցում վեճ գոյություն ուներ նաև Իրանի և Արաբական Միացյալ Էմիրությունների միջև:

Դիվանագիտական հարաբերությունները Իրաքի և Իրանի միջև վերահաստատվեցին 1973 թ: Դրան հաջորդեցին տարածայնությունները Շատ ալ–Արաբ գետով անցնող իրանա–իրաքյան սահմանների վերաբերյալ: Իրաքը պնդում էր, որ սահմանն անցնի գետի արևմտյան՝ իրաքյան ափով և իրեն տրվեն գետում գտնվող մի քանի կղզիներ, որի հետ չէր համաձայնվում Իրանի շահական կառավարությունը:

1975 թ. Ալժիրի պրեզիդենտ Հուարի Բումեդիենի նախաձեռնությամբ և միջնորդությամբ Ալժիրում տեղի ունեցավ երկու հանդիպում Իրանի շահ Մուհամմադ Ռեզա Պահլավիի և Իրաքի փոխպրեզիդենտ Սադամ Հուսեյնի միջև, որի շնորհիվ կողմերը համաձայնության եկան իրանա–իրաքյան սահմանների դեմարկացիայի վերաբերյալ, այդ թվում և Շատ ալ–Արաբի հարցում: Երկու կողմերն էլ դիմեցին որոշ զիջումների: Նրանք համաձայնվեցին, որ երկու երկրների միջև սահմանը պետք է անցնի Շատ ալ–Արաբ գետի միջնամասի նավարկելի մասով, որը զիջում էր Իրաքի կողմից Իրանին: Իրաքին էին անցնելու գետաբերանում գտնվող մի քանի մանր կղզիներ: Դրա դիմաց Իրանը պարտավորվում էր դադարեցնել իր օգնությունը Իրաքի քրդական ապստամբությանը: Համաձայնագիրը ստորագրվեց 1975 թ. հունիսի 13–ին:

Եվ, իրոք, Իրանի շահը, հավատարիմ իր խոստմանը, դադարեցրեց ամեն տեսակի օգնություն և աջակցություն քրդական ապստամբության ղեկավար Մուստաֆա Բարզանիին, և քրդական ապստամբությունը ճնշվեց:

Իր հերթին Սադամ Հուսեյնն Իրաքից արտաքսեց Իրանի շահի և վարչակարգի հակառակորդ այաթոլլահ Խոմեյնիին, որը Իրանի շահի կողմից արտաքսվելուց հետո մոտ տաս տարի գտնվում էր Իրաքում՝ շիաների կրոնական կենտրոններ Նաջաֆում և Քարբալայում, որտեղ 1977 թ. ավտոարկածի պատճառով զոհվեց նաև նրա որդին՝ Մուստաֆան: Խոմեյնին համոզված էր, որ դա արկած չէր, այլ կազմակերպված սպանություն, որի մեջ նա մեղադրեց Սադամ Հուսեյնին և Իրաքի կառավարությանը պատասխանատու համարեց իր որդու սպանության համար: Տարածված է այն տեսակետը, որ այդ երկու պարագաները՝ Խոմեյնիի արտաքսումը Իրաքից և նրա որդու հավանական սպանությունը, հետագայում իրենց ոչ երկրորդական դերն են խաղացել Սադամ Հուսեյնի և նրա վարչակարգի հանդեպ Խոմեյնիի գրված թշնամական դիրքի և իրանա–իրաքյան պատերազմի առաջացման հարցում:

1979 թ. փետրվարին Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխության հաղթանակից և շահի տապալումից հետո Իրաքը մեղադրեց Իրանին, որ նա չի կատարում 1975 թ. համաձայնագրով իր վրա վերցված պարտավորությունները, ըստ որի նա պետք է Իրաքին վերադարձներ մի քանի սահմանամերձ տարածքներ և պահանջեց Իրանի նոր վարչակարգից, որը գլխավորում էր հեղափոխության առաջնորդ այաթոլլահ Ռուհոլլահ Խոմեյնին, կատարել նախորդ վարչակարգի կողմից ստանձնած պարտավորությունները: Սակայն վերջինս չընդունեց իրաքյան կողմի մեղադրանքները և հրաժարվեց որևէ զիջում կատարել Իրաքին:

Սադամ Հուսեյնն այդ հանգամանքն օգտագործեց որպես պատրվակ, չեղյալ հայտարարեց 1975 թ. իրանա–իրաքյան պայմանագիրը և 1980 թ. սեպտեմբերի 22–ին իր զորքերը մտցրեց Իրան: Այսպես սկսվեց իրանա–իրաքյան պատերազմը:

Դրա հետ միասին, մեր կարծիքով, երբ խոսք է գնում իրանա–իրաքյան պատերազմի և նրա պատճառների մասին, ապա հարկ է անդրադառնալ ևս մեկ հարցի, որի մասին միշտ չէ, որ բարձրաձայն կամ հստակ են արտահայտվում:

Սադամ Հուսեյնին և Իրաքի կառավարությանը մեծ չափով անհանգստացնում էին Թեհրանի իսլամական վարչակարգի բացահայտ կոչերը՝ տապալել իրաքյան բաասական վարչակարգը, տարածել շիական իսլամական հեղափոխությունն առաջին հերթին Իրաքի վրա և Իրաքը նույնպես վերածել շիական թեոկրատիկ պետության:

Իրանի իսլամական հեղափոխությունը, ինչպես հայտնի է, համարվում է նաև շիական իսլամական հեղափոխություն: Եվ Իրանի նոր առաջնորդները հավատացած էին ու հույս ունեին, որ այն կտարածվի նաև մյուս իսլամական երկրներում, հատկապես այն երկրներում, որոնց բնակչության մեծամասնությունը կա՛մ շիաներ են, կա՛մ այդ երկրներում բնակվում է մեծաքանակ շիական բնակչություն: Այդ տեսակետից առաջին թեկնածու նրանց համար դիտվում էր Իրաքը, որտեղ շիաները կազմում էին մեծամասնություն:

Սադամ Հուսեյնի և բաասական վարչակարգի մտավախությունն իրական հիմքեր ուներ, քանի որ Իրաքի իսլամ բնակչության մեծամասնությունը կազմում են շիա արաբները: Բայց առանձնահատկությունն այստեղ կայանում է նրանում, որ Իրաքում 1921 թ. ի վեր, երբ ստեղծվեց Իրաքի թագավորությունը, իշխանությունը պատկանում է սունիի փոքրամասնությանը: Երկրի պետական կառավարական բոլոր օղակներում

և բանակում ամենակարևոր, առանցքային բնույթի պաշտոններն ու լծակները կենտրոնացված են սուննի արաբների ձեռքում, որը չէր կարող չառաջացնել շիա մեծամասնության դժգոհությունը: Հետևաբար, Սադամ Հուսեյնի վարչակարգը, որը դավանական առումով ներկայացնում էր փոքրամասնություն, չէր կարող հենվել շիա մեծամասնության վրա և արգելք ստեղծել Իրաքի վրա իրանական շիական իսլամական հեղափոխության տարածման առջև:

Կար նաև մեկ այլ հանգամանք, որն ավելի էր բարդացնում Սադամ Հուսեյնի դրությունը: Իրաքում սուննի մուսուլմաններ էին նաև քրդերը: Բայց Սադամ Հուսեյնը չէր կարող դաշնակցել, առավել ևս հենվել նրանց վրա և ստանալ նրանց աջակցությունը, քանի որ նրա հարաբերությունները լարված էին քրդերի հետ: Նա հրաժարվում էր բավարարել քրդերի պահանջները լիակատար ինքնավարության վերաբերյալ, և մեկ անգամ չէ, որ քրդերը ապստամբել էին Բաղդադի իշխանությունների, այդ թվում և Սադամ Հուսեյնի վարչակարգի դեմ, մեկ անգամ չէ, որ Իրաքի իշխանությունները արյան մեջ ճնշել էին այդ ապստամբությունները:

Ստացվում էր պարադոքսային վիճակ: Սուննի–շիա տարաձայնությունների և հակամարտությունների պատճառով, որը գալիս է դարերի խորքից, Սադամ Հուսեյնի սուննի վարչակարգը Իրանի իսլամական հեղափոխության դեմ պայքարում չէր կարող հենվել երկրի շիա արաբ բնակչության վրա, իսկ քուրդ–արաբ էթնիկական հակամարտության պատճառով չէր կարող հենվել սուննի քուրդ բնակչության վրա: Այլ կերպ ասած՝ այդ վարչակարգը կարծեք թե գտնվում էր օդում կախված վիճակում:

Քանի որ այդ հարցն անհնար էր լուծել սովորական միջոցներով, Սադամ Հուսեյնն իր անձնական իշխանությունը և բաասական վարչակարգը իսլամական շիական հեղափոխությունից պաշտպանելու և այդ հեղափոխության հետագա տարածումը կանխարգելու համար կանգնեց Իրանի դեմ պատերազմական գործողություններ սկսելու տեսակետի՝ որպես միակ հնարավոր միջոցի վրա:

Սադամ Հուսեյնը հավատացած էր իր հաղթանակի մեջ՝ հաշվի առնելով, որ հեղափոխությունից հետո իրանական բանակը փաստորեն քայքայված վիճակում էր հայտնվել:

Հաղթանակի հարցում նրան վստահություն էր ներշնչում նաև այն պարագան, որ իրանական իսլամական հեղափոխությունը մեծապես անհանգստացնում էր նաև ԱՄՆ–ին, արևմտյան մի շարք երկրների, Խորհրդային Միությանը, ինչպես նաև արաբական մի շարք երկրների,

որոնք նույնպես շահագրգռված էին իսլամական հեղափոխության հետագա ընթացքը և ծավալումը զսպելու մեջ: Եվ, իրոք, Սադամ Հուսեյնը ստացավ այդ երկրների բարոյաքաղաքական աջակցությունը, ապա նաև նյութական, ֆինանսական և ռազմական ուղղակի կամ անուղղակի օգնությունը: Նրանք Իրաքին դիտում էին որպես իրենց հարավածային բռունցքը՝ ուղղված Իրանի իսլամական հեղափոխության դեմ:

Իրաքը պատերազմը սկսեց այն արագ կերպով իր օգտին ավարտելու հեռանկարներով:

Սակայն այս հաշվարկները չարդարացան:

Իրաքի նախահարձակ լինելու հանգամանքը հմտորեն օգտագործեց Իրանի իսլամական վարչակարգը՝ երկրում սկսված ներքաղաքական սուր պայքարը երկրորդ պլան մղելու, իսկ այնուհետև մեղմացնելու համար: «Հայրենիքը պաշտպանելու» լոզունգով Խոմեյնու վարչակարգը ըստ էության կարողացավ դառնալ երկրի իրավիճակի լիիրավ տերը: Սկսված պատերազմը Իրանի իսլամական վարչակարգի կողմից օգտագործվեց իր քաղաքական հակառակորդների հետ հաշիվները մաքրելու և երկրի սոցիալական ու տնտեսական բազմաթիվ սուր պրոբլեմների լուծումից առժամանակ ազատվելու համար: Ուշագրավ են այդ տեսակետից պատերազմի սկսման կապակցությամբ Խոմեյնու արտահայտած խոսքերը. «Մենք պետք է շնորհակալ լինենք ալլահին այս պատերազմը մեզ պարգևելու համար»:

Ավելի քան ութ տարի տևած պատերազմը ավերիչ հետևանքներ ունեցավ երկու երկրների համար: Նախնական շրջանում Իրաքի ձեռք բերած ռազմական հաջողությունները և տարածքային գրավումները ժամանակավոր բնույթ կրեցին: Երկար ժամանակ պատերազմը կրում էր դիրքային բնույթ: Ի մի բերելով իր մարդկային, տնտեսական ու ռազմական կարողությունները՝ Իրանը 1981 թվականից աստիճանաբար ուժեղացրեց ճնշումը իրաքյան զինված ուժերի վրա և կարողացավ հետ վերցրել իր կորցրած տարածքները՝ հասնելով Իրաքի սահմանին: 1986 թ. Իրանի զորքերը անցան Շատ ալ–Արաբը և գրավեցին Ֆաո նավահանգիստը, դրան հետևեց մի շարք տերիտորիաների գրավումը: Իրանա–իրաքյան պատերազմը նոր արհավիրքներ բերեց Իրաքի ազգաբնակչությանը՝ արաբներին, քրդերին, հայերին և մյուս ժողովուրդներին: Հայերը՝ որպես Իրաքի քաղաքացիներ, նույնպես զորակոչվեցին բանակ և մարտնչում էին ռազմաճակատում՝ տալով զգալի զոհեր: Նրանք

արաբների հետ միասին զոհվում էին նաև քաղաքների ռմբակոծումներից, ենթարկվում տնտեսական զրկանքների և այլն:

Պատերազմը շատ ծանր անդրադարձավ երկու երկրների քուրդ ազգաբնակչության վրա: Այդ պատերազմի այսպես կոչված հյուսիսային ճակատն անցնում էր Քրդստանով, դրա հետևանքով տասնյակ քրդական քաղաքներ և գյուղեր ավերվեցին, տնտեսական քայքայումը հասել էր աներևակայելի չափերի: Քրդերի վիճակի վատթարացումը կապված էր նաև Իրանում ու Իրաքում ծավալված քրդական ինքնավարական շարժման ծավալման հետ: Իրաքի քրդական շարժման ղեկավարները կապված էին իրանական իշխանությունների հետ՝ Իրաքի վարչակարգի դեմ պայքարելու համար: Իրանի քրդական շարժման պարագլուխներն էլ իրենց հերթին նմանօրինակ կապեր ունեին իրաքյան իշխանությունների հետ: Ու թեև տակտիկական նկատառումներով քրդական լիդերների նման դիրքորոշումը բխում էր «Իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է» սկզբունքից, բայց այն արձակում էր երկու երկրների վարչակարգերի ձեռքերը քրդական ազգային ուժերի, խաղաղ բնակչության հետ հաշվեհարդար տեսնելու համար:

Իրանա–իրաքյան անիմաստ գնահատված պատերազմը կործանարար ազդեցություն ունեցավ երկու երկրների տնտեսական ու սոցիալական կյանքի վրա: Մոտավոր հաշվումներով՝ այդ պատերազմում սպանվել կամ խեղանդամ է դարձել ավելի քան 1 մլն 200 հազ. մարդ: Կրճատվեց երկու երկրների տնտեսության մեջ վճռորոշ նշանակություն ունեցող նավթի հանույթը: Երկու կողմերի պատերազմական ծախսերը կազմեցին 600 մլրդ ԱՄՆ դոլար: Պատերազմից առաջ միջազգային վալյուտայի զգալի պաշար ունեցող Իրանը և Իրաքը արագորեն սպառեցին այն, և նրանց գանձարանները դատարկվեցին:

1987–1988 թթ. ակնառու դարձավ, որ սկսված պատերազմում կողմերից ոչ մեկը վճռական հաղթանակի հասնելու հնարավորություն և գրավականներ չունի: Նման պայմաններում ավելի աշխուժացավ մի շարք երկրների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների միջնորդությունը պատերազմի դադարեցման ուղղությամբ: Ի վերջո, 1988 թ. ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի No 598 բանաձևի հիման վրա պատերազմը Իրաքի և Իրանի միջև դադարեց: 1988 թ. օգոստոսի 20–ին ուժի մեջ մտավ կրակը դադարեցնելու վերաբերյալ համաձայնագիրը: 1990 թ. օգոստոսի 15–ին Սադամ Հուսեյնը կատարեց հաջորդ քայլը՝ պաշտոնապես դիմեց Իրանի կառավարությանը՝ հաշտության պայմա-

նագիր կնքելու, որն ընդունվեց Իրանի կողմից: Դրանից հետո նա իր զորքերը դուրս բերեց Իրանի բոլոր տարածքներից: Տեղի ունեցավ ռազմագերիների փոխանակում: Դա հնարավորություն տվեց 1990 թ. սեպտեմբերին վերականգնել դիվանագիտական հարաբերությունները երկու երկրների միջև:

Պատերազմը, որքան էլ տարօրինակ լինի, բարձրացրեց Սադամ Հուսեյնի հեղինակությունը Իրաքի բնակչության աչքում: Նրա քարոզչական մեքենան այնքան վարպետորեն ներկայացրեց պատերազմը, որ նրա արդյունքներն ընկալվեցին որպես Իրանի դեմ տարած հաղթանակ: Պատերազմի սկզբում այն ներկայացվեց որպես «Կադիսիյա Սադամիյա», այսինքն՝ «Սադամի Կադիսիյա»՝ զուգահեռ անցկացնելով 637 թ. Կադիսիյայի մոտ տեղի ունեցած ճակատամարտի հետ, որի ժամանակ արաբները պարտության մատնեցին Սասանյան Իրանին և նվաճեցին այն: Այժմ դա ներկայացվում էր որպես մի նոր հաղթանակ Իրանի դեմ: Չնայած դա չէր համապատասխանում իրականությանը, այդուհանդերձ, Իրաքում շարունակում էին թմբկահարել Սադամի հաղթանակը: Եվ, ի պատիվ նրա, Իրաքում կանգնեցվեց հաղթակամար:

Անդրադառնալով այդ հարցին, մասնավորապես Սադամի հեղինակության ոչ միայն պահպանման, այլև բարձրացման խնդրին իրանա–իրաքյան պատերազմից հետո՝ Մ. Ռամադանը այդ երևույթին տվել է բավականին համարձակ և ինքնատիպ բացատրություն: Նա գտնում է, որ «մասամբ դա կապված է երկրի ողբերգական պատմության և այն բանի հետ, որ արաբներն իրենց առաջնորդների մոտ գնահատում են ուժը և ոչ թե կարեկցանքը: Դա շատ խորը կերպով արմատավորվել է իրաքյան մշակույթի մեջ և սկիզբ է առել պատերազմներից, որ դարերի ընթացքում մղվել են Մերձավոր Արևելքի ամենաբուռն շրջաններից մեկում»: Ինչքան էլ վիճելի լինի այդ տեսակետը, այդուհանդերձ, կարծում ենք, որ դա չի կարելի հաշվից դուրս նետել:

Պատերազմի ավարտից հետո հատուկ քննարկման առարկա դարձավ իրանա–իրաքյան պատերազմի նկատմամբ ԱՄՆ–ի դիրքորոշման հարցը: Դրան անդրադարձել են մի շարք հեղինակներ, որոնցից ուշադրության է արժանի ամերիկյան հետազոտող Ռոբերտ Պերիի արտահայտած կարծիքը: Նա համոզված կերպով ընդգծում է, որ ԱՄՆ–ը հրահրել է Իրաքին՝ պատերազմ սկսել Իրանի դեմ: «Միացյալ Նահանգները,— գրում է նա,— ուզում էին, որ Սադամը հակադրվեր Իրանի նոր վարչակարգին: Արդյունքը եղավ Իրաքի ներխուժումն Իրան 1980 թ. սեպտեմ-

բերին և ութամյա պատերազմը երկուսի միջև»: Հետագա հետաքննությունը, ինչպես նշում է նա, ցույց տվեց, որ «պրեզիդենտ Կարտերի կողմից Իրանի վրա հարձակվելու համար Սադամին կանաչ լույս է տրվել»:

Այդտեղ ոչ մի տարօրինակ բան չկա: Նման քաղաքականությունը պատմագիտության և քաղաքագիտության մեջ վաղուց որակվել է որպես «ուրիշի ձեռքով կրակի միջից շագանակներ հանելու» քաղաքականություն:

4. Իրաքի ներխուժումը Քուվեյթ, պատճառները և արաբական երկրների դիրքորոշումը

Իրաքը դեռ չէր բուժել Իրանի հետ պատերազմի վերքերը, երբ Սադամ Հուսեյնը դիմեց նոր արկածախնդրության, որը իրաք–իրանյան պատերազմից հետո դարձավ միջազգային նոր ճգնաժամի պատճառ:

1990 թ. օգոստոսի 1–ի գիշերը՝ լույս 2–ի առավոտյան, իրաքյան զորքերը Իրաքի պրեզիդենտ և զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար մարշալ Սադամ Հուսեյնի հրամանով անցան իրաք–քուվեյթյան սահմանը, ներխուժեցին հարևան Քուվեյթ, և առանց դժվարության արագորեն գրավեցին արաբական այդ ոչ մեծ երկիրը: Քուվեյթում կառավարող աս–Սաբահների դինաստիան տապալվեց, էմիր Ջաբր ալ–Սիմադ ալ–Ջաբր աս–Սաբահը փախուստ տվեց և ապաստան գտավ Սաուդյան Արաբիայում: Օգոստոսի 8–ին Քուվեյթը բռնակցվեց Իրաքին և հայտարարվեց նրա 19–րդ նահանգը:

Այդ անսպասելի քայլը կատարելու պաշտոնական տեսակետն այն էր, որ Քուվեյթը Իրաքի անբաժան մասն է, որը նրանից 1913 թ. անջատել է Մեծ Բրիտանիան:

Արաբական երկրները թեև արդեն վարժվել էին Սադամ Հուսեյնի անկանխատեսելի քայլերին, այդուհանդերձ, նրա հարձակումը արաբական եղբայրական պետության վրա և նրա բռնակցումը ցնցեցին Պարսից ծոցից մինչև Ատլանտյան օվկիանոս ձգվող արաբական աշխարհը: Նրա քայլը համարվեց արաբներին թիկունքից հասցված դանակի հարված: Սադամ Հուսեյնի բազմաթիվ բացասական ածականներին՝ «դահիճ», «մարդասպան», «դիկտատոր», «նենգ» և այլն, ավելացավ նս մեկը՝ «ուխտադրուժ»: Որոշ սրամիտներ ավելի հեռուն գնացին և հիշելով իր ժամանակին մեծ աղմուկ հանած «Բաղդադի գողը» հոլի-

վուդյան հանրահայտ ֆիլմը՝ նրան կոչեցին «Բաղդադի գող»՝ Քուվեյթի բռնակցումը համարելով քաղաքական գողություն:

Իրաքի կողմից Քուվեյթի գրավումը մի ծանր հարված էր արաբների սպասումներին, երազանքներին և նրանց միասնության գաղափարին: Այդ հանգամանքը, ինչպես նաև Սադամ Հուսեյնի նենգությունը և ուխտադրժությունը, ավելի ցայտուն է դառնում, եթե նշենք, որ Քուվեյթի դեմ ագրեսիա սկսելուց ոչ շատ առաջ նրա նախաձեռնությամբ Բաղդադում գումարվել էր արաբական պետությունների ղեկավարների՝ թագավորների և պրեզիդենտների վեհաժողով, որտեղ ընդունվել էին կարևոր որոշումներ արաբական միասնության ամրապնդման, Պաղեստինի արաբ ժողովրդին ցույց տրվող ռազմական, քաղաքական և նյութական օգնության ուժեղացման, լիբանանյան ճգնաժամի կարգավորման վերաբերյալ: Տիրապետող էր այն տեսակետը, որ եթե արաբական երկրները հավատարիմ մնան իրենց ընդունած որոշումներին, ապա Բաղդադի հանդիպումը կարող էր կարևոր ուղենիշ դառնալ արաբական աշխարհի քաղաքական հետագա զարգացումների ճանապարհին: Բայց դա տեղի չունեցավ: Իրաքն ինքն առաջինը խախտեց այդ որոշումները: Քուվեյթի բռնակցումով Իրաքը կանգնեց համեմատաբար մեծ պետության կողմից փոքր պետությունը կլանելու ճանապարհի վրա: Դա իր հետևանքներով շատ վտանգավոր «նորամուծություն» էր, որ Սադամ Հուսեյնը կիրառեց միջարաբական հարաբերություններում:

Ո՞րն էր նման քայլի պատճառը:

Իրաքի համար մի առանձին դժվարություն չէր նվաճել Քուվեյթը, քանի որ այդ պահին նա արաբական աշխարհում և ընդհանրապես Մերձավոր Արևելքում ամենամեծ բանակն ունեցող երկիրն էր: Նրա բանակը, որը իր շարքերում հաշվում էր մեկ միլիոն մարդ, այդ ժամանակ չորրորդն էր աշխարհում՝ ԽՍՀՄ–ի, Չինաստանի և ԱՄՆ–ի բանակներից հետո: Դա Իրանի հետ ութամյա պատերազմի բովով անցած, Խորհրդային Միության ռազմական մասնագետների կողմից մարզված և նախապատրաստված, բավականին մարտունակ բանակ էր, որի տնօրինության տակ էր գտնվում ժամանակակից հզոր ռազմական տեխնիկա՝ տանկեր, ինքնաթիռներ, հրթիռներ, հրետանի, քիմիական զենք և այլն, որ Իրաքին հիմնականում մատակարարել էին Խորհրդային Միությունը, Ֆրանսիան և ԱՄՆ–ը:

Իրաքի ռազմական հզորության մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար նպատակահարմար է նրա զինված ուժերը Քու-

վեյթ ներխուժելու նախօրյակին, համեմատենք նրա անմիջական և մերձակա հարևանների հետ:

Երկիր	Բանակ (մարդ)	Տանկեր (հատ)	Ինքնաթիռներ (հատ)
Իրաք	1000000	5600	574
Թուրքիա	650000	3840	366
Իրան	605000	530	120
Սիրիա	404000	4050	500
Իսրայել	141000	3800	600
Սաուդյան Արաբիա	65700	550	179
Քուվեյթ	20300	275	36

Այսպիսով՝ բանակի թվաքանակով և զենքի մի քանի տեսակներով Իրաքի բանակը զգալիորեն գերազանցում էր Թուրքիային, Իրանին, Սիրիային, Իսրայելին, էլ չենք խոսում Քուվեյթի մասին, որի հետ համեմատելու անգամ եզրեր չկան: Եվ եթե ավելացնենք, որ այդ ժամանակ Իրաքի բնակչությունը կազմում էր 17 մլն 600 հազ., իսկ Քուվեյթի բնակչությունը՝ ընդամենը 1 մլն 950 հազ. մարդ, ապա հասկանալի է, որ Քուվեյթը Իրաքին դիմագրավելու ոչ մի հնարավորություն չուներ:

Ապավինելով իր հզոր ռազմական ուժերին՝ Սադամ Հուսեյնը փայփայում էր տարածաշրջանի գերտերությունը դառնալու հույսեր: Քուվեյթի գրավումը և բռնակցումը պետք է հանդիսանար կարևոր քայլ այդ ցնորամիտ ծրագրի իրականացման ճանապարհին:

Դա Քուվեյթի դեմ ռազմական ինտերվենցիայի պատճառների, այսպես ասած, գլոբալ ասպեկտն էր:

Նշենք նաև, որ 1961 թվականից ի վեր, երբ Քուվեյթը դադարեց բրիտանական պրոտեկտորատ լինելուց և դարձավ անկախ ու ինքնիշխան պետություն, դա Քուվեյթը բռնակցելու Իրաքի երրորդ փորձն էր: Առաջին անգամ Իրաքը նման փորձ կատարեց 1961 թ. հունիսի 19–ին, իսկ երկրորդ անգամ՝ 1973 թ. մարտի 20–ին, որոնք երկուսն էլ ձախողվեցին:

Սադամ Հուսեյնը Քուվեյթի բռնակցումը փորձում էր արդարացնել պատմաիրավական մոտեցումով, որը հանգում էր այն բանին, որ Քուվեյթը իբր թե պատմականորեն կազմել է Իրաքի տարածքի մի մասը, և նրանք օսմանյան ժամանակներում մտել են միևնույն վարչատարածքային միավորման մեջ: Շարունակելով իր «փաստարկները»՝ Սադամ Հուսեյնը մատնանշում է, որ Անգլիան և Ֆրանսիան «բաժանեցին միաս-

նական արաբական հայրենիքը», որի հետևանքով առաջացան բազմաթիվ արաբական պետություններ: Սադամ Հուսեյնի՝ այդ ոգով արված բազմաթիվ վկայակոչումներից բերենք նրա դիմումը Խորհրդային Միության պրեզիդենտ Մ. Գորբաչովին և ԱՄՆ–ի պրեզիդենտ Ջորջ Բուշ ավագին, 1990 թ. սեպտեմբերի 8–ին՝ Հելսինկիում նրանց հանդիպման նախօրեին: «Քուվեյթը,— շեշտում է Սադամ Հուսեյնը,— Իրաքի մի մասն է, Քուվեյթի ժողովուրդը՝ իրաքյան ժողովրդի մի մասը: Բրիտանական իմպերիալիզմը պոկել էր նրան Իրաքից՝ հետապնդելով գաղութային նպատակներ: Իրաքը չի ճանաչել այդ միջոցառման օրինականությունը»: Սադամ Հուսեյնի դատողություններից հետևում էր, որ Իրաքը լրիվ իրավունք ուներ դիմելու այդ քայլին, այսինքն՝ բռնակցել Քուվեյթը՝ այն համարելով գաղութատիրության վերացում: Բայց ամբողջ հարցն այն է, որ Սադամ Հուսեյնը չէր ապացուցում և չէր էլ կարող ապացուցել, որ Քուվեյթը երբևիցե կազմել է Իրաքի մի մասը, իսկ Քուվեյթի ժողովուրդը՝ իրաքյան ժողովրդի մի մասը:

Իր ագրեսիան Քուվեյթի դեմ արդարացնելու համար Սադամ Հուսեյնը մեղադրում էր ոչ միայն Անգլիային և Ֆրանսիային, այլև Քուվեյթի իշխանություններին: Իրաքի հարավային մասում՝ Հյուսիսային Ռումեյլայում, որը սահմանակից է Քուվեյթին, գտնվում են Իրաքի ամենահարուստ նավթավայրերը: Սադամ Հուսեյնը մեղադրում էր Քուվեյթին, որ նա գաղտագողի օգտվում է Հյուսիսային Ռումեյլայի իրաքյան նավթաշրջանից: Չբավարարվելով դրանով՝ Իրաքի պրեզիդենտը մեղադրում էր իր փոքրիկ հարևանին նաև այն բանում, որ նա իր խաղն է խաղում նավթի համաշխարհային գների սահմանման մեջ և նավթի արտահանման համար սահմանված քվոտայի հարցերում, որի հետևանքով Իրաքը իբր միլիարդավոր դոլարների կորուստ է կրում: Բայց այս մեղադրանքները նույնպես ոչնչով չեն հաստատվում: Եթե նույնիսկ մի պահ ենթադրենք, որ դա իրոք այդպես է, դարձյալ դա չի կարող արդարացում լինել պատերազմական գործողությունների և ՄԱԿ–ի ու Արաբական պետությունների լիգայի անդամ, անկախ ու ինքնիշխան պետության բռնակցման համար:

Շարունակելով պահանջներ ներկայացնել Քուվեյթին ֆինանսական հարցերում՝ Սադամ Հուսեյնը մեղադրում էր նրան այն բանում, որ նա բավարար չափով չի օգնել Իրաքին Իրանի հետ պատերազմի ժամանակ: Ի դեպ, նա համանման մեղադրանքներ էր ներկայացնում նաև արաբական մյուս երկրներին, առաջին հերթին՝ նավթարդյունահանող

Սաուդյան Արաբիային և Արաբական Միացյալ Էմիրություններին, Կատարին և այլ երկրների: Այս հարցում նրա փաստարկն այն էր, որ Իրանի դեմ պատերազմում Իրաքը կատարում էր համաարաբական առաքելություն և պարտականություն, որի համար պետք է վճարեն արաբական բոլոր պետությունները:

Այդ հարցում ևս Սադամ Հուսեյնն իրավացի չէր, քանի որ Քուվեյթը, Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն և արաբական մյուս պետությունները վիթխարի ֆինանսական և տնտեսական օգնություն են ցույց տվել Իրաքին, որը կազմում էր 80–100 մլրդ ԱՄՆ դոլար: Առանց այդ օգնության Իրաքը հազիվ թե կարողանար ութ տարի շարունակել արյունաքամ պատերազմ մղել Իրանի դեմ:

Վերջապես անհրաժեշտ է անդրադառնալ Սադամ Հուսեյնի մի «փաստարկի», որն ուղղակի զարմանք է առաջացնում: Նա իր ագրեսիան Քուվեյթի դեմ փորձում էր արդարացնել դեմագոգիական դատողություններով: Նա իր քայլը համարում էր «կենսական անհրաժեշտություն արաբական երկրների հարստությունը հավասարապես բաժանելու, արդարություն հաստատելու և ճնշվածների շահերը պաշտպանելու համար»: Նա հայտարարեց, որ արաբական «ծախված փոքրամասնության ձեռքում կենտրոնացված են արաբական աշխարհի գլխավոր հարստությունները... և եկել է ժամանակը, որպեսզի արաբական ազգը սրբազան պատերազմ սկսի իր բոլոր հարստություններն օգտագործելու համար»: Գտնելով, որ նավթարդյունահանող երկրների շեյխերը և էմիրները թալանում են արաբական երկրներն ու նրանց ժողովուրդներին և կապված են արևմտյան պետությունների հետ՝ Սադամ Հուսեյնը կոչ արեց տապալել այդ շեյխերին ու էմիրներին:

Նա իր քննադատության կրակն ուղղեց հատկապես Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի դեմ: 1990 թ. սեպտեմբերի 7-ին Սադամ Հուսեյնը կոչ արեց տապալել Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆահդին, սաուդյան էմիրներին ու Եգիպտոսի պրեզիդենտ Հուսնի Մուբարակին: Ֆահդը և Հուսնի Մուբարակը առաջին օրվանից խստիվ դատապարտեցին իրաքյան ագրեսիան ու Քուվեյթի բռնակցումը, և եռանդուն գործունեություն ծավալեցին արաբական աշխարհը ոտքի հանելու, համախմբելու և իրաքյան ագրեսիան կասեցնելու համար:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ Սադամ Հուսեյնի պատճառաբանությունները մտացածին էին, կեղծ ու անհամոզիչ, որոնց նպատակն էր սքողել ագրեսիայի իսկական շարժառիթները:

Իսկ որո՞նք էին այն իրական շարժառիթները, որոնք ընկած էին Սադամ Հուսեյնի այդ ագրեսիվ գործողության հիմքում, և վերջին հաշվով ի՞նչ նպատակներ էր հետապնդում նա:

Իրաքի ներխուժումը Քուվեյթ ուղղակի կապ ուներ Իրանի հետ ութ տարի տևած պատերազմի քաղաքական, տնտեսական և ռազմական արդյունքների հետ: Ճիշտ է, Իրաքն այդ պատերազմից դուրս եկավ չպարտված, բայց և չհաղթանակած: Պատերազմը, ինչպես նշել ենք, շատ ծանր նստեց Իրաքի վրա: Հարյուր հազարավոր զոհեր ու վիրավորներ, հարյուրավոր միլիարդների հասնող տնտեսական վնասներ, տնտեսության ու կենսամակարդակի աներևակայելի անկում. սրանք էին պատերազմի արդյունքները: Մարդիկ սկսել էին խորհել, թե ինչի համար էր այդ ամենը, ինչ տվեց պատերազմը իրենց: Պատասխանը շատ հստակ էր. միայն կորուստներ: Դրա համար վաղ թե ուշ հաշիվ էին ներկայացնելու Սադամ Հուսեյնի վարչակարգին: Երկրում կուտակվում էր խորը դժգոհություն, որը եթե չկասեցնեին բացառված չէր սոցիալական պայթյունը, որը Իրաքում ավանդաբար ընդունում է արյունալի պետական հեղաշրջման ձև: Հասկանալի է, որ սովորական ինչ–որ քայլ չէր կարող ելք հանդիսանալ և շեղել իրաքցիների ուշադրությունը երկրի ներքաղաքական և տնտեսական ծանր խնդիրներից: Դրա համար անհրաժեշտ էր ինչ–որ արտակարգ բան, որը մի կողմից ներկայացվեր որպես ռազմական փայլուն հաղթանակ, որը շոյելու էր իրաքցիների ազգային ինքնասիրությունը, մյուս կողմից՝ «իմաստուն» և «համարձակ» քայլ: Դա հիմք կտար Սադամ Հուսեյնին հանդես գալ որպես արաբական աշխարհի միակ՝ ուժեղ և վճռական գործողությունների ընդունակ պետական այր, որը կարող էր լուծել ոչ միայն Իրաքի, այլև ամբողջ արաբական աշխարհի առջև ծառացած հիմնախնդիրները: Իսկ դրա համար Սադամ Հուսեյնը փորձում էր որպես խայծ օգտագործել և իրեն ներկայացնել իբր արաբական ծախու շեյխերի ու միապետների դեմ պայքարող, աշխատավորական մասսաների շահերի պաշտպան ու արաբական միասնությունը կենսագործող մարտիկ:

Քուվեյթը բռնազավթելու Սադամ Հուսեյնի հաշիվներում առանձնահատուկ, անգամ կարելի է ասել գլխավոր տեղ էին գրավում ֆինանսական և տնտեսական նկատառումները: Իրաքի տնտեսական վիճակը իրանա–իրաքյան պատերազմից հետո ողբերգական էր: Շատ ծանր էր ֆինանսական դրությունը: Իրաքի պարտքերը, որոշ տվյալների համաձայն, աստղաբաշխական թիվ էին կազմում: Իրաքը մի կողմից՝ հար-

կադրված էր արաբական և արևմտյան երկրներին վճարել արտաքին պարտքերը, որի հնարավորությունը նա գործնականում չուներ, մյուս կողմից՝ ստանալ նոր վարկեր՝ դրանք վճարելու և տնտեսական գործունեությունն ինչ–որ մակարդակի վրա պահելու համար: Սակայն նա նոր վարկեր չէր կարող ստանալ, մինչև չվճարեր հին պարտքերը: Ստացվում էր սատանայական շրջագիծ: Եվ Սադամ Հուսեյնը որոշեց այդ գորդյան հանգույցը լուծել մեկ հարվածով՝ Քուվեյթի դեմ հաղթական պատերազմի և նրա բռնակցման միջոցով: Նա հույս ուներ իր առջև ծառացած լրջագույն տնտեսական և ֆինանսական հարցերը լուծել երեք ուղիով:

Առաջին՝ զավթել Քուվեյթի ազգային հարստությունը և դրանք ի սպաս դնել Իրաքի տնտեսական շահերի: Մասնավորապես, ենթադրվում էր, օգտվելով հանկարածակիության պահից, ձեռք գցել Քուվեյթի բանկերում պահվող դրամական միջոցները, որոնք, որոշ տվյալների համաձայն, կազմում էին մոտ 200 մլրդ ԱՄՆ դոլար:

Երկրորդ՝ տնօրինել արտասահմանյան բանկերում պահվող Քուվեյթի դրամական գումարները՝ մոտ 100 մլրդ ԱՄՆ դոլար:

Երրորդ՝ զավթել և իր հսկողությունը հաստատել Քուվեյթի բոլոր նավթային պաշարների վրա:

Իրաքին միայն մասամբ հաջողվեց իրականացնել իր ծրագրի առաջին կետը: Քուվեյթի ֆինանսների նախարարի հայտարարության համաձայն՝ իրաքյան զորքերը Քուվեյթի կենտրոնական բանկից գողացել էին 400 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ծուլածո ոսկի և 1 մլրդ ԱՄՆ դոլարի կանխիկ դրամ: Իսկ ընդհանրապես առաջին չորս ժամվա ընթացքում իրաքյան զինվորները կողոպտել էին 11 մլրդ ԱՄՆ դոլարի ոսկերչական իրեր, թանկարժեք քարեր ու ապրանքներ: Կողոպուտը շարունակվել էր նաև հետագայում:

Սակայն Իրաքին չհաջողվեց իր ձեռքը գցել արտասահմանյան բանկերում պահվող քուվեյթյան ավուարները: ԱՄՆ–ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և այլ երկրներ սառեցրին իրենց բանկերում պահվող քուվեյթյան բոլոր դրամական միջոցները:

Իսկ ինչ վերաբերում է Քուվեյթի նավթի պաշարների տնօրինությանը, ապա դրանք, իրոք, անցան Իրաքի վերահսկողության տակ: Դրա հետևանքով Իրաքը մի որոշ ժամանակաշրջանում հսկում էր նավթի համաշխարհային պաշարների մոտ 25%–ը: Դա կարող էր մի վիթխարի հարստության աղբյուր ծառայել Սադամ Հուսեյնի վարչակարգի համար: Հասկանալի է, որ Իրաքի տիրապետությունը Քուվեյթի վրա պահ-

պանելու պարագայում խիստ կուժեղանային Իրաքի միջազգային դիրքերը, կմեծանար նրա դերակատարումը նավթի համաշխարհային գների սահմանման, յուրաքանչյուր երկրի համար նավթ արդյունահանելու և արտահանելու չափաբաժինները սահմանելու հարցերում: Ակնհայտ է նաև, որ կուժեղանար աշխարհի երկրների կախվածությունը Իրաքից՝ նավթային քաղաքականության ոլորտում:

Այդ մտահղացման իրականացման համար ընտրությունն ընկավ ռազմական տեսակետից թույլ ու անպաշտպան, սակայն ֆինանսական առումով հարուստ Քուվեյթի վրա:

Եվ վերջապես՝ Քուվեյթը Իրաքի կողմից բռնակցելու մյուս կարևոր շարժառիթը պետք է փնտրել Սադամ Հուսեյնի տարածաշրջանային քաղաքական նպատակների մեջ: Իրաքը, ինչպես արդեն նշել ենք, տնօրինում էր հզոր ռազմական ուժեր: Նա ուներ մեծաթիվ բանակ՝ զինված ժամանակակից ռազմական տեխնիկայով: Սադամ Հուսեյնը երազում էր իր ռազմական հզորությունը վերածել քաղաքական առավելության, փորձել նախ տիրապետող դիրքեր հաստատել Պարսից ծոցի ավազանում, իր կամքը թելադրել այդ գոտում գտնվող արաբական երկրներին, իսկ ապագայում դուրս գալ այդ գոտուց ավելի ընդարձակ արաբական ասպարեզ և դառնալ նրա առաջատար երկիրը: Այդ տեսանկյունից Քուվեյթի գրավումը լոկ առաջին քայլն էր, որին հաջողության դեպքում պետք է հաջորդեին համանման այլ քայլեր: Այդ մասին բացեիբաց խոսվում էր Իրաքի ղեկավարության բարձրագույն շրջաններում: Հատկապես խոսքը գնում էր Սաուդյան Արաբիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Բահրեյնի, Կատարի և Օմանի մասին:

Ահա այս գործոններն էին, որոնք, մեր կարծիքով, շարժառիթ հանդիսացան Սադամ Հուսեյնի համար՝ դիմել Քուվեյթը բռնակցելու քայլին:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչպիսի դիրք գրավեցին արաբական երկրները Քուվեյթի դեմ Իրաքի ագրեսիային դեմ հանդիման, թեև այդ հարցի առանձին ասպեկտներ արդեն լուսաբանվել են:

Կարող ենք ասել, որ արաբական երկրները, հակառակ արաբական միասնության վերաբերյալ իրենց կոչերին, այս անգման ևս դրսևորեցին իրեն անհամերաշխությունը:

Ագրեսիան, անշուշտ, ցնցեց արաբական բոլոր երկրներին, իսկ Պարսից ծոցի ավազանի արաբական երկրներում ուղղակի խուճապ առաջացրեց, մանավանդ այն բանից հետո, երբ Սադամ Հուսեյնը անթաքույց հասկացնել տվեց, որ իր հնարավոր հերթական հարվածն

ուղղված է լինելու այդ երկրների դեմ, և կոչ արեց տապալել «արաբական ծախու վարչակարգերը»:

Իրաքյան ագրեսիայից անմիջապես հետո՝ 1990 թ. օգոստոսի 10–ին, Կահիրեում գումարվեց արաբական երկրների ղեկավարների արտակարգ գագաթնաժողով՝ քննարկելու ստեղծված իրավիճակը և նրանց գրավելիք դիրքորոշումը: Եվ պարզվեց, որ այդ հարցերում արաբական պետությունների միջև միասնություն չկա: Արտաքնապես նրանց միջև տարակարծություն չկար, քանի որ նրանցից և ոչ մեկը չէր արդարացնում Իրաքին: Սակայն իրականում պատկերը բոլորովին այլ էր: Արաբական պետությունների մի մասը, չարդարացնելով հանդերձ իրաքյան ագրեսիան, դեմ էր արտահայտվում Իրաքի նկատմամբ անհրաժեշտ ռազմական, տնտեսական և քաղաքական վճռական սանկցիաներ կիրառելուն: Դա ակնհայտորեն դրսևորվեց արաբական պետությունների ղեկավարների վերոնշյալ գագաթնաժողովին ներկայացված բանաձևի քննարկման ժամանակ, որն առաջարկում էր իրաքյան զորքերի դուրսբերում Քուվեյթի տարածքից, Քուվեյթի անկախության, գերիշխանության ու տարածքային ամբողջականության վերականգնում և Քուվեյթի օրինական կառավարության վերահաստատում: Այդ բանաձևի օգտին քվերակեց ընդամենը 12 պետություն՝ Եգիպտոսը, Սիրիան, Սաուդյան Արաբիան, Մարոկկոն. Լիբանանը, Քուվեյթը, ԱՄԷ–ն, Բահրեյնը, Օմանը, Կատարը և այլն: Դեմ քվեարկեցին երեքը՝ Լիբիան, Իրաքը և Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը: Ալժիրը և Եմենը ձեռնպահ մնացին, Հորդանանը, Սուդանը և Մավրիտանիան հայտարարեցին, որ իրենք ունեն հատուկ կարծիք, իսկ Թունիսը հրաժարվել էր մասնակցել այդ վեհաժողովին:

Ճիշտ է, արաբական պետությունների մեծամասնությունը կողմ էր քվեարկել հօգուտ ներկայացված բանաձևի, բայց փաստը մնում էր փաստ, որ արաբական երկրների համարյա կեսի համար այդ բանաձևը և նրա դրույթներն անընդունելի եղան: Դա, անկասկած, եղավ այն պատճառներից մեկը, որ Իրաքը համառում էր և չէր ցանկանում հեռանալ Քուվեյթից, ինչը դարձավ պատերազմի պատճառ:

5. «Փոքրիկ անապատում»

Իրաքի ագրեսիան Քուվեյթի դեմ իր նշանակությամբ և հետևանքներով դուրս էր գալիս մերձավորարևելյան տարածաշրջանային կոնֆլիկտի

շրջանակներից և միջազգային կոնֆլիկտի իմաստ ձեռք բերում: Այն շոշափում էր աշխարհի բոլոր երկրների քաղաքական և ստրատեգիական շահերը, քանի որ խաղաքարտի վրա էին դրված միջազգային իրավունքի նորմերի պահպանումը, յուրաքանչյուր պետության անկախության և սուվերենության հարգման հիմնարար ու սրբազան սկզբունքը: Եթե Իրաքին հաջողվեր վայելել սեփական ագրեսիայի պտուղները, ապա դա շատ վտանգավոր նախադեպ կդառնար ուժեղ պետության կողմից համեմատաբար թույլ ու փոքր պետությունն անեքսիայի ենթարկելու համար, կփլուզվեր գոյություն ունեցող միջազգային համակարգը, և ամեն ինչ կվերածվեր քաոսի: Ահա թե ինչու միջազգային հանրությունը, աշխարհի բոլոր մեծ պետությունները դատապարտեցին իրաքյան ագրեսիան:

Արդեն 1990 թ. օգոստոսի 2–ին, այսինքն՝ ագրեսիան կատարելու հենց նույն օրը, ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը միաձայն ընդունեց No 660 բանաձևը, որով պահանջվում էր Իրաքից անհապաղ զորքերը դուրս բերել Քուվեյթից, վերականգնել Քուվեյթի անկախությունը և էմիր Ջաբր աս–Սաբահի իրավունքները: Առաջին անգամ Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամ պետությունները՝ ԱՄՆ–ը, ԽՍՀՄ–ը, Մեծ Բրիտանիան, Չինաստանը և Ֆրանսիան, միասնական դիրքորոշում ունեցան ագրեսիայի հարցում:

Իրաքը մերժեց կատարել ՄԱԿ–ի որոշումը՝ կրկին պնդելով, որ Քուվեյթը Իրաքի անբաժան մասն է:

ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը հաստատակամ գտնվեց իր որոշման մեջ և ընդունեց լրացուցիչ մի քանի որոշումներ, որով Իրաքը ենթարկվեց ցամաքային, ջրային, ապա նաև օդային շրջափակման: Շրջափակման ենթարկվեցին նրա տնտեսական կապերը աշխարհի բոլոր երկրների հետ, այդ թվում՝ նավթի արտահանումը, սառեցվեցին արտասահմանյան բանկերում գտնվող նրա արտարժութային պաշարներն ու հաշիվները, դադարեցվեց բոլոր տեսակի զենքերի մատակարարումը Իրաքին: Այդ ամենը խիստ ծանր դրության մեջ դրեց Իրաքին, վատացավ նրա տնտեսական վիճակը, սրվեց ներքաղաքական մթնոլորտը: Սադամ Հուսեյնի վարչակարգը հարկադրված էր մտցնել պարենամթերքի նորմավորում: Յուրաքանչյուր շնչին ամսական սահմանված էր 1 կգ շաքար, 100 գ թեյ, 1,5 կգ բրինձ, 500 գ բուսական յուղ, 6 կգ ալյուր, 1 տուփ ջեմ, 1 տուփ լվացքի փոշի, 1 կտոր օճառ և այլն:

ԱՄՆ–ը և արևմտյան մյուս պետությունները սկսեցին իրենց ռազմական ուժերը կենտրոնացնել Պարսից ծոցի շրջանում: Դա էին պա-

հանջում նաև արաբական որոշ երկրներ: Արաբական մի քանի երկրներ, որոնք, ինչպես արդեն նշել ենք, 1990 թ. օգոստոսին դեմ քվեարկեցին արաբական երկրների ղեկավարների Կահիրեի վեհաժողովում առաջարկված բանաձևին՝ իրաքյան զորքերը Քուվեյթից դուրս բերելու վերաբերյալ, բերում էին այն փաստարկը, որ Իրաքի ներխուժումը և Քուվեյթի բռնակցումը արաբների «ներընտանեկան վեճն է», ուստի պետք չէ աղբը դուրս հանել, այսինքն՝ պետք չէ դիմել օտար, ոչ արաբական երկրների և ուժերի օգնությանը:

Այդ տեսակետին կտրուկ դեմ էին Պարսից ծոցի բոլոր արաբական պետությունները, ինչպես նաև մի քանի այլ երկրներ: Նրանք լավ էին գիտակցում, որ իրենց սեփական ուժերով չեն կարող դիմակայել հնարավոր իրաքյան ագրեսիային: Առանձնահատուկ տագնապ էր տիրում Սաուդյան Արաբիայում, որը համարվում էր Իրաքի հավանական հարվածի հաջորդ թեկնածուն: Նրա խնդրանքով և ՄԱԿ–ի անդամ պետությունների համաձայնությամբ ԱՄՆ–ը իր ռազմական ուժերը տեղակայեց Սաուդյան Արաբիայի տարածքում, մասնավորապես սաուդա—քուվեյթյան սահմանի մերձակայքում: Հետագայում նրանց միացան նաև անգլիական և ֆրանսիական զորամիավորումները՝ ռազմական հզոր տեխնիկայով հանդերձ՝ ավիակիրներ, ռազմանավեր, ինքնաթիռներ, հրթիռներ և զենքի սովորական տեսակներ:

Իրենց ռազմական ուժերը Սաուդյան Արաբիա ուղարկեցին նաև Եգիպտոսը, Սիրիան, Արաբական Միացյալ Էմիրությունները, Մարոկկոն, Բահրեյնը, Օմանը, Կատարը, ինչպես նաև Պակիստանն ու Բանգլադեշը՝ որպես մուսուլմանական երկրներ՝ Սաուդյան Արաբիայում գտնվող մուսուլմանական սրբավայրերը Բաղդադի դիկտատորից պաշտպանելու համար:

Մյուս կողմից՝ Իրաքին օգնելու համար իրենց զորքերը Իրաք ուղարկեցին Սուդանը և Մավրիտանիան, կամավորների ցուցակագրում կատարվեց Հորդանանում և պաղեստինցիների շրջանում, նրան պաշտպանում և աջակցում էր Եմենը:

Ի պատասխան ԱՄՆ–ի ու արևմտյան պետությունների ձեռնարկած քայլերի՝ Սադամ Հուսեյնը հայտարարեց ջիհադ՝ սրբազան պատերազմ, թեև դա անհեթեթություն էր, քանի որ ջիհադը, ըստ ավանդության, մուսուլմանների սրբազան պատերազմն է անհավատների, գլխավորապես քրիստոնյաների դեմ: Բայց տվյալ պարագայում ԱՄՆ–ը և մյուս եվրոպական պետությունները առանձին չէին հանդես գալիս:

Իրաքին դատապարտելու և Քուվեյթից նրա հեռանալու հարցում ԱՄՆ–ի և եվրոպական պետությունների հետ դաշնակցում էին մի քանի արաբական և ասիական մահմեդական պետություններ: Հետևաբար, դա ոչ թե քրիստոնյա–մուսուլմանական պայքար էր, այլ նրանց համատեղ պայքարը հանուն արդարության՝ Քուվեյթի անկախության վերականգնման: Ուստի Սադամ Հուսեյնի հայտարարած ջիհադը ուղղված էր ոչ միայն քրիստոնյա եվրոպական պետությունների ու ԱՄՆ–ի, այլև առնվազն մեկ տասնյակից ավելի մուսուլմանական պետությունների դեմ, որոնք իրենց զորքերն էին ուղարկել Սաուդյան Արաբիա՝ նրան Իրաքի հնարավոր հարձակումից պաշտպանելու համար: Իսկ դա, իհարկե, անհեթեթություն է, քանի որ մուսուլմանների սրբազան պատերազմ մուսուլմանների դեմ չի լինում:

Պետք է նշել, որ մուսուլմանական պետություններն էլ իրենց հերթին, ի դեմս Իսլամական կոնֆերանս կազմակերպության, որոշեցին ստեղծել մի հանձնաժողով՝ առաջարկելով նրան համապատասխան նյութեր հավաքել Սադամ Հուսեյնին դատի տալու համար՝ նրան մեղադրելով իսլամի սրբազան նորմերը խախտելու համար:

Մի քանի ամիս անընդհատ ՄԱԿ–ը և նրա զանազան կառույցներ, ԱՄՆ–ը, Խորհրդային Միությունը և Անվտանգության խորհրդի մյուս անդամները, եվրոպական և ասիական զանազան երկրներ, արաբական երկրները, միջազգային զանազան կազմակերպություններ և այլն հորդորում էին Իրաքին դուրս բերել իր զորքերը Քուվեյթից: Սակայն Սադամ Հուսեյնը մնաց անդրդվելի: Նա չանսաց բանականության ձայնին և հարվածի տակ դրեց իր երկիրը՝ պատճառելով բնակչությանը անասելի տանջանքներ ու զրկանքներ:

Այդ ընթացքում ձևավորվեց Քուվեյթի ազատագրության բազմազգ ուժերի կոալիցիան, որը գլխավորեց ԱՄՆ–ը: Նրա մեջ մտան Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ճապոնիան, Պակիստանը, Եգիպտոսը, Սիրիան. ընդամենը 30 երկիր: Կոալիցիային իր լիակատար աջակցությունը հայտնեց նաև նրան չմիացած երկրների մեծ մասը: Նրան պաշտպանում էր նաև Խորհրդային Միությունը, թեև նա անմիջական մասնակցություն չունեցավ ռազմական գործողություններին: Կոալիցիոն ուժերի գլխավոր հրամանատար նշանակվեց ամերիկյան գեներալ Շվարցկոպֆը:

ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը վերջնագիր ներկայացրեց Բաղդադին՝ մինչև 1991 թ. հունվարի 15–ը իր զորքերն ամբողջությամբ դուրս բերել Քուվեյթից: Դա վերջին հնարավորությունն էր, որ տրվեց

Սադամ Հուսեյնին քուվեյթյան ճգնաժամը լուծել խաղաղ ճանապարհով և պատվով դուրս գալ ստեղծված ծանր իրադրությունից: Սադամ Հուսեյնը մերժեց իրեն ներկայացված վերջնագիրը և չօգտվեց ընձեռված հնարավորությունից:

1991 թ. հունվարի 17–ին ՄԱԿ–ի անդամ 30 երկրների կոալիցիոն ուժերը ԱՄՆ–ի գլխավորությամբ սկսեցին ռազմական գործողություններ Իրաքի դեմ՝ «Փոթորիկ անապատում» անվան տակ: Ռազմական գործողությունները տևեցին 42 օր: Իրաքը, չնայած տպավորիչ ռազմական ուժերին, չկարողացավ կազմակերպված և լուրջ դիմադրություն ցույց տալ կոալիցիոն ուժերին: Նա անգամ չկարողացավ ինչ–որ չափով ճակատամարտ հիշեցնող մարտ տալ: Իրաքի պարտությունը կատարյալ էր և մարշալ Սադամ Հուսեյնը 1991 թ. փետրվարի 28–ին հայտնեց, որ ընդունում է ՄԱԿ–ի բոլոր որոշումներն ու պայմանները: Նման խայտառակ պարտությունից հետո նա իր զորքերը դուրս բերեց Քուվեյթից:

Դա մի անիմաստ պատերազմ էր, որի ընթացքում Իրաքի կողմից ժամանակակից ռազմական արվեստին ծանոթ լինելու հետք անգամ չդրսևորվեց ոչ «մարշալ» Սադամ Հուսեյնի, և ոչ էլ նրա՝ նույնքան ապաշնորհ գեներալների կողմից:

Իրաքի կորուստները պատերազմի ընթացքում շատ մեծ էին: Միայն զոհվածների թիվն անցնում էր 100 հազարից, իսկ վիրավորներն ավելի մեծ թիվ էին կազմում: Պատերազմն անդրադարձավ իրաքյան ամեն մի ընտանիքի վրա: Վիթխարի էին նյութական կորուստները: Եթե հիշենք, որ դրան նախորդած իրանա–իրաքյան պատերազմի ժամանակ Իրաքը կրել էր անհամեմատ ավելի մեծ մարդկային և նյութական կորուստներ, ապա հասկանալի կդառնա, թե ինչպիսի ծանր, եթե ոչ անելանելի դրության մեջ հայտնվեց Իրաքը և նրա բնակչությունը Սադամ Հուսեյնի անհեռատես, անմիտ, անտրամաբանական, անգրագետ ու հավակնոտ քաղաքականության արդյունքում:

Քուվեյթյան պատերազմից հետո Իրաքը հայտնվեց քաղաքական մեկուսացման մեջ: Երկրի ներքաղաքական պրոբլեմներին ավելացան նաև արտաքին քաղաքական բարդ պրոբլեմները:

6. Իրաքը XX դարավերջում

XX դարի 90–ական թվականների Իրաքի պատմությունն իր վրա կրում է երկու՝ իրանա–իրաքյան և քուվեյթյան պատերազմների և Սա-

դամ Հուսեյնի բռնակալական վարչակարգի քաղաքականության արյունոտ կնիքը: Իրաքը մխրճվել էր խորը ճգնաժամի մեջ, որը համակարգային բնույթ էր կրում, և ընդգրկել էր Իրաքի պետական, վարչակառավարական, քաղաքական, հասարակական, տնտեսական և սոցիալական կյանքի բոլոր ոլորտները:

Քուվեյթի պատերազմի տնտեսական հետևանքները տարբեր հաշվարկներով Իրաքի վրա նստեցին մոտ 150 միլրդ ԱՄՆ դոլար: Իսկ ի՞նչ էր թաքնված այդ թվերի հետևում, կամ ինչպե՞ս էր դա ստացվել:

Դրանք կապված էին ոչ միայն վիթխարի ռազմական ծախսերի հետ, որ Սադամ Հուսեյնը անխնա տրամադրում էր իր հպարտությունը հանդիսացնող բանակը զինելու համար. մի բանակ, որը խայտառակ պարտություն կրեց, այլև տնտեսական ավերածությունների հետ: Պատերազմի ընթացքում կոալիցիոն ուժերի ռազմական ավիացիան կատարեց 1300 մարտական թռիչք, արձակվեց 106 «Տոմագավկ» հրթիռ, որոնց հիմնական թիրախներն էին Իրաքի ոչ միայն ռազմական բազաները, ռադարային սարքերը և կապի հանգույցները, այլև տնտեսական օբյեկտները: Դրանց մեջ հատկապես պետք է նշել նավթահանքերի, նավթավերամշակման գործարանների, նավթապահեստների (տերմինալների), ոռոգման համակարգերի և ենթակառույցների ոչնչացումն ու ավերածությունները:

Իրաքի տնտեսության հիմքը նավթարդյունաբերությունն է, որը մինչև քուվեյթյան արկածախնդրությունը տալիս էր Իրաքի արտարժութային եկամուտների 95%–ը: Պատերազմի պատճառված ավերածությունների, իսկ այնուհետև Իրաքի նկատմամբ կիրառված տնտեսական սանկցիաների հետևանքով Իրաքը զրկվեց ֆինանսական աղբյուրներից, որի հետևանքով շեշտակի կերպով ընկավ տնտեսական ակտիվությունը: Իրաքը 2000 թ. դադարեցրեց ընդհանրապես նավթի արդյունահանումը: Իրաքի տնտեսությունը ամբողջությամբ վերցրած XX դարի 90–ական թվականներին մեծ անկում ապրեց, կրճատվեցին արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության ծավալները, աշխատավորների եկամուտները, աճեց ինֆլյացիան և գործազրկությունը, պակասում էին ամենաանհրաժեշտ ապրանքները, այդ թվում՝ սննդամթերք, դեղորայք և այլն, ծաղկում էր սև շուկան, իսկ երկրում մտցված մթերաբաժինը, որը մշտապես նվազում էր, այլևս չէր բավարարում բնակչության նվազագույն պահանջները: Մարդիկ սոված էին: Իրաքում տիրող մղձավանջային վիճակի համահավաք ցուցիչը կարող է լինել

այն փաստը, որ 90–ականներին երեխաների մահացությունն աճել էր երեք անգամ:

Ստեղծված պայմաններում ՄԱԿ–ի 1996 թ. որոշումով որոշ մեղմացում տեղի ունեցավ Իրաքի նկատմամբ կիրառվող տնտեսական շրջափակման և պատժամիջոցների հարցում: Սկսվեց կիրառվել «Նավթ սննդի դիմաց» ծրագիրը, որը սահմանեց նավթի արտահանման որոշակի չափաբաժին՝ քվոտա, որի վաճառքից ստացվող եկամուտներով թույլատրվում էր Իրաքին գնել միայն պարեն ու դեղորայք: Դա մի փոքր մեղմացրեց տնտեսական լարվածությունը և բնակչությանը սնունդով ապահովելու խնդիրը: Իսկ 1999 թ. դեկտեմբերին ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի որոշմամբ կատարվեց հաջորդ քայլը՝ Իրաքին թույլատրվեց նավթ արտահանել այնքան, որքան կպահանջվի հումանիտար պահանջները բավարարելու համար: Իրաքը կարող էր ստացված եկամուտները ծախսել բացառապես պարենի, դեղորայքի, բժշկական սպասարկման և որոշ ենթակառուցվածքների վրա: Կատեգորիկ կերպով արգելվում էր դրանք օգտագործել այլ նպատակների համար, առաջին հերթին՝ ռազմական:

XX դարի 90–ական թվականներին Իրաքի ներքաղաքական կյանքի էական գծերից մեկը ընդդիմադիր շարժման զգալի ուժեղացումն էր, որը յուրահատուկ ձևով էր արտահայտվում: Դա զանգվածային բնույթ չէր կրում, և հավանաբար հնարավոր էլ չէր, որ նման բնույթ կրեր՝ հաշվի առնելով Իրաքում գոյություն ունեցող հատուկ բռնակալական–ոստիկանական վարչակարգը: Հրապարակի վրա միշտ չէ, որ ամեն ինչ տեսանելի էր, քանի որ քաղաքական կուսակցությունները, միությունները և կազմակերպությունները ծանր հարվածներ էին ստացել, նրանք գործում էին ընդհատակի ծանր պայմաններում, և նրանց առաջնորդներից շատերը գլխատված էին, իսկ շատ–շատերն էլ գտնվում էին էմիգրացիայում: Բացի դրանից, դեռևս ուժեղ էր Սադամի ստեղծած պատժիչ ապարատը: Այդուհանդերձ, դժգոհությունը Սադամ Հուսեյնից և նրա քաղաքականությունից քանի գնում, այնքան ուժեղանում էր: Ամենայն հավանականությամբ, այդ տրամադրությունները համակել էին նաև բանակին և բարձրաստիճան զինվորականներին: Դրա վկայությունն էր այն փաստը, որ միայն 1998–1999 թթ. մահապատժի էր ենթարկվել Իրաքի բանակի 33 գեներալ: Դրա վկայությունը պետք է համարել նաև այն փաստը, որ 1995 թ. Իրաքից Հորդանան փախան Սադամ Հուսեյնի երկու փեսաներն իրենց կանանց հետ, այսինքն՝ Սադամ Հուսեյնի երկու դուստրերի հետ:

Սակայն ընդդիմությունը Սադամ Հուսեյնին և նրա վարչակարգին բացահայտ կերպով դրսևորվեց բոլորովին այլ կողմից: 1990–ականների սկզբներին աշխուժացավ քրդական շարժումն ինքնավարության և իրենց իրավունքների համար: Դա լայն զանգվածային ընդդիմություն էր և քրդական քաղաքական ուժերն ու մասսաները պատրաստ էին, ինչպես միշտ, զենքը ձեռքներին պայքարել իրենց իրավունքների համար: Սադամ Հուսեյնի ժխտական դիրքորոշումը քրդական ինքնավարության նկատմամբ առաջացրեց քրդերի նոր ապստամբություն: Սադամ Հուսեյնը նրանց դեմ օգտագործեց հիմնականում իր ավիացիան՝ զանգվածային ռմբակոծման ենթարկելով քրդաբնակ քաղաքներն ու գյուղերը՝ ավերելով ու կործանելով բազմաթիվ քրդական բնակավայրեր: Նա անգամ չխորշեց քուրդ ապստամբների դեմ քիմիական զենք օգտագործել, որը միջազգային իրավունքի կոպիտ խախտում ու հումանիտարական սկզբունքների ոտնահարում էր: Այդպիսի միջոցների գործադրումով Սադամ Հուսեյնին հաջողվեց ճնշել քրդական ապստամբությունը: Մոտ 2 մլն քրդեր հարկադրված էին իրենց բնակավայրերից փախուստ տալ և կենտրոնանալ իրաք–թուրքական սահմանի երկայնքով: Քրդական ղեկավարության և Իրաքի կառավարության միջև ընթացող բանակցությունները քրդական ինքնավարության նկատմամբ, բնական է, ընդհատվեցին:

Սադամ Հուսեյնի դեմ ընդդիմության մի նոր վտանգավոր կենտրոն ձևավորվեց Իրաքի հարավում, որը հիմնականում բնակեցված էր շիաներով: Նրանք խիստ դժգոհ էին Սադամ Հուսեյնի քաղաքականությունից, որն անտեսում էր շիաներին և նրանց պահանջները, նրանց տեղ չէր տալիս երկրի կառավարման համակարգում, դիտում նրանց որպես երկրորդ կարգի քաղաքացիներ: Սադամ Հուսեյնը ոչ մի զիջման չդիմեց շիա իրաքցիների պահանջները բավարարելու համար: Նրա միակ պատասխանը եղավ, ինչպես քրդերի դեպքում, նրանց բնակավայրերի օդային ռմբակոծումները և ավերածությունները:

1990–ականների իրաքյան ընդդիմությունը, այդուհանդերձ, չկարողացավ լուծել գլխավոր խնդիրը՝ Սադամ Հուսեյնի վարչակարգի տապալումը և նոր, ժողովրդավարական կարգերի հաստատումը: Այլևս ակնհայտ էր, որ Իրաքի դեմոկրատական ընդդիմադիր ուժերն ի վիճակի չէին միայնակ՝ իրենց սեփական ուժերով լուծել այդ հարցը: Դրա համար անհրաժեշտ էին կազմակերպվածության ու համախմբվածության այլ մակարդակ, ինչպես նաև այլ պայմաններ, որոնք, տարաբախտաբար, Իրաքում բացակայում էին:

Քաղաքական զարգացումներն ընթացան այլ ուղիով:

7. Ամերիկյան ներխուժումը և Սադամ Հուսեյնի տապալումը: «Գեներալները դավաճանեցին հայրիկին»

Սադամ Հուսեյնը կապիտուլյացիայից և իր զորքերը Քուվեյթից դուրս բերելուց հետո էլ չստացավ գործողությունների ազատություն: Նա գտնվում էր ՄԱԿ–ի, հատկապես ԱՄՆ–ի խիստ վերահսկողության տակ, որոնք չէին վստահում Սադամ Հուսեյնին և համոզված չէին, որ նա չի դիմի նոր արկածախնդրության և միջազգային նոր ճգնաժամի առաջացման: Նրանց քաղաքականությունը, մանավանդ ԱՄՆ–ի պրեզիդենտ Ջորջ Բուշ կրտսերի ընդգծված ժխտական վերաբերմունքը Սադամ Հուսեյնի, նրա վարչակարգի ու քաղաքականության նկատմամբ, չփոխվեց անգամ այն բանից հետո, երբ Իրաքը 1994 թ. դիվանագիտական հարաբերությունները վերականգնեց Քուվեյթի հետ:

Իրաքի վրա սահմանված էր բավականին խիստ վերահսկողություն և Սադամ Հուսեյնի գործունեությունը դրված էր որոշակի շրջանակների մեջ, որը սահմանվել էր ՄԱԿ–ի և նրա Անվտանգության խորհրդի որոշումներով: Իրաքը, ինչպես նշվել է, ենթարկվել էր խիստ ցամաքային, ջրային և օդային տնտեսական, ֆինանսական և ռազմական շրջափակման, սառեցվել էին արտասահմանյան բանկերում գտնվող նրա բանկային հաշիվները, խստիվ արգելվում էր որևէ երկրի Իրաքին զենք և պահեստամասեր մատակարարելը, նավթ նա կարող էր արդյունահանել և արտահանել միայն նրան տրված չափաբաժիններին համապատասխան և ոչ մի բարել ավելի: Այդ բոլոր պատժամիջոցները պահպանեցին իրենց ուժը:

Որոշ հարցերում սահմանափակվեցին Սադամ Հուսեյնի և նրա կառավարության իրավունքները Իրաքի տարածքում: ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը Իրաքի տարածքում սահմանեց երկու գոտիներ, որոնք արգելված էին իրաքյան ինքնաթիռների թռիչքների համար: Դրանցից մեկը 36–րդ զուգահեռականից հյուսիս ընկած գոտին էր, որն ընդգրկում էր Իրաքյան Քրդստանը, իսկ մյուսը այդ զուգահեռականից հարավ ընկած տարածքն էր, որը համապատասխանում էր շիաներով բնակեցված գոտուն: Իրաքը զգուշացված էր, որ եթե նա խախտի այդ կարևոր պայմանը, և նրա ինքնաթիռները փորձեն թռչել այդ տարածքների վրայով, ապա նրանք կխփվեն: Սադամ Հուսեյնը, հարազատ իր

բնավորությանը և տակտիկային, մի քանի անգամ խախտեց իր վրա դրված այդ արգելքը, և նրա ինքնաթիռները մի քանի անգամ փորձ արեցին թռչել 36–րդ զուգահեռականից հյուսիս և հարավ: Այդ բոլոր ինքնաթիռներն էլ խփվում էին այդ գոտիներում տեղակայված ամերիկյան օդուժի կողմից: Իսկ անգլիական և ամերիկյան ինքնաթիռները 1993 թ. ռմբակոծեցին և ոչնչացրին Բաղդադի մոտ գտնվող հրթիռների արտադրության գործարանը, ապա նաև իրաքյան հետախուզության շենքը: Շարունակելով Սադամ Հուսեյնին պահել իրենց տեսադաշտում՝ ամերիկյան ինքնաթիռները 1996 թ. օդային դիպուկ հարվածներ հասցրեցին Իրաքի բազմաթիվ ռազմական օբյեկտների, մանավանդ այն բանից հետո, երբ Իրաքը փորձեց միջամտել Իրաքյան Քրդստանի տարբեր հակադիր ուժերի միջև բռնկված հակամարտությանը:

1998 թ. դեկտեմբերին ԱՄՆ–ը և Անգլիան ձեռնակեցին «Աղվեսը անապատում» օպերացիան և ռմբակոծեցին Իրաքի տարբեր կարևոր օբյեկտներ: Այդ օպերացիայի շրջանակներում 2001 թ. փետրվարի 17–18–ին ամերիկյան և անգլիական ավիացիան ուժեղ ռմբակոծման ենթարկեց Բաղդադից ընդամենը 10–30 կմ հեռավորության վրա գտնվող օբյեկտները: Թվում էր, թե օղակը նեղանում էր, և ուր որ է Սադամը կընկնի: Բայց դա տեղի չունեցավ: Սադամը շարունակում էր մնալ դրության տերն Իրաքում, և նույնիսկ նրա հակաօդային պաշտպանության ուժերը հարված էին հասցնում ամերիկյան և անգլիական ավիացիային, որոնք հատկապես ուժեղացան 2001 թ.:

Սակայն կար մի հարց, որն առանձնապես մտահոգում ու անհանգստացնում էր ԱՄՆ–ին և նրա դաշնակիցներին: Դա Իրաքի միջուկային զենք ունենալու կամ այդ ուղղությամբ աշխատանքներ տանելու և զանգվածային ոչնչացման զենքի այլ տեսակներ պատրաստելու հարցն էր: Այդ խնդիրը հատկապես սուր բնույթ կրեց, երբ 2001 թ. սեպտեմբերի 11–ին ԱՄՆ–ը օդային հարձակման ենթարկվեց «Ալ–Կաիդա» ահաբեկչական կազմակերպության կողմից, որը ղեկավարում էր սաուդցի Ուսամա բին Լադենը: ԱՄՆ–ում հայտարարվեց այդ ահաբեկչական կազմակերպության և Իրաքի միջև ուղղակի կապի գոյության մասին, և Իրաքը մտցվեց միջազգային ահաբեկչությանն օժանդակող պետությունների ցանկի մեջ:

Իրաքում միջուկային, ինչպես նաև քիմիական զենք հայտնաբերելու նպատակով այդ երկրում ՄԱԿ–ի հովանավորության ներքո երկար ժամանակ գործում էր միջազգային մասնագետների հատուկ հանձնա-

ժողով: Սադամ Հուսեյնը մերթ համագործակցում էր այդ հանձնաժողովի հետ, մերթ դադարեցնում համագործակցությունը, իսկ 1997–1998 թթ. անգամ նրանց արտաքսեց երկրից: Թեև հետագայում՝ 2002 թ., նրանք Սադամի թույլտվությամբ նորից վերադարձան Իրաք, բայց նրանց այդպես էլ չհաջողվեց հայտնաբերել միջուկային և բակտերիոլոգիական զենք Իրաքում, որի մասին համապատասխան հայտարարությամբ հանդես եկավ այդ հեղինակավոր հանձնաժողովը: ԱՄՆ–ի պրեզիդենտ Ջորջ Բուշը, որին ամենամեծ և անվերապահ աջակցություն էր ցույց տալիս Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլեյրը, անտեսեց հանձնաժողովի տեսակետը: Նա համոզված էր որ Սադամ Հուսեյնը դրա հետքերը խնամքով թաքցնում է, և դրանք կարելի է գտնել ինչ–որ տեղ Իրաքում:

2003 թ. մարտին ԱՄՆ–ի նախաձեռնությամբ ձևավորված կոալիցիոն ուժերը, որի մեջ մտնում էին Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրներ՝ ԱՄՆ–ը, Անգլիան, Գերմանիան, Իտալիան, Իսպանիան, Ճապոնիան և այլն, ԱՄՆ–ի գլխավորությամբ ռազմական գործողություններ սկսեցին Իրաքում, որոնք ավարտվեցին նույն թվականի ապրիլին՝ Սադամ Հուսեյնի կատարյալ պարտությամբ: Նրա բանակը կրկին անգամ ցուցադրեց իր կատարյալ անճարակությունը և ընդունակ չեղավ շատ թե քիչ դիմադրություն ցույց տալ կոալիցիոն ուժերին: Շատ վայրերում իրաքյան զորքերը հրաժարվում էին դիմադրել նրանց և երբեմն զանգվածաբար գերի հանձնվում:

Սադամ Հուսեյնը և նրա վարչակարգի առաջին դեմքերը փախուստ տվեցին, և ով ինչպես կարող էր, իր համար թաքստոց գտավ: Բայց սկսվեց նրանց որսը՝ հայտնաբերման և ձերբակալման գործընթացը: Հիմնականում նրանք հայտնաբերվեցին, իսկ ոմանք էլ կամավոր անձնատուր եղան: Երկար ժամանակ չէր հաջողվում գտնել Սադամ Հուսեյնի թաքստոցը: Ի վերջո, հերթը հասավ նաև նրան: Նա հայտնաբերվեց, ձերբակալվեց և բանտ նետվեց, սպասելով իր դատավարությանը:

Այսպիսով՝ ավարտվեց Իրաքի պատմության ամենաարյունոտ դրաման: Սադամ Հուսեյնը տապալվեց, իսկ նրա վարչակարգը փլուզվեց, որը մեծ ուրախությամբ ընդունվեց երկրի բնակչության ճնշող մեծամասնության կողմից:

Ինչպես իրանա–իրաքյան և քուվեյթյան պատերազմների, այնպես էլ 2003 թ. ռազմական գործողությունների ժամանակ իրաքյան բանակը որևէ լուրջ դիմադրություն կամ մարտնչելու կամք չդրսևորեց: Անդրադառնալով այդ հարցին և իր հոր կրած պարտությանը Սադամ

Հուսեյնի դուստրը՝ Ռանան, մեղադրեց Իրաքի բանակի գեներալներին ծախվածության և դավաճանության մեջ: Նա հայտարարեց. «Գեներալները դավաճանեցին հայրիկին»:

Չբացառելով գեներալների դավաճանությունը, այդուհանդերձ, սխալ կլիներ համաձայնվել նման մեկնաբանության հետ:

Սադամ Հուսեյնի անձնիշխանական, ավտորիտար, դիկտատորական ռեժիմը հիմնված էր ահ ու սարսափի վրա, այն խարսխված էր բռնությունների, հալածանքների, զանգվածային ձերբակալությունների և մահապատիժների վրա: Նա երկրում չուներ ամուր և հուսալի սոցիալական հենարան: Վախից բխող «հավատարմությունը» կամ «նվիրվածությունը» չի կարող հուսալի հենարան լինել: Նման ռեժիմները, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, կործանվում են առաջին իսկ հնարավորության դեպքում: Մի դեպքում այդ հնարավորությունը կարող է ստեղծվել տվյալ երկրի ներսում, իսկ մեկ այլ դեպքում՝ արտաքին ազդակների ներգործության արդյունքում:

Սադամ Հուսեյնի պարագայում գործեց երկրորդ տարբերակը:

Սադամ Հուսեյնի տապալումից և միջուկային ու զանգվածային ոչնչացման զենք չհայտնաբերելուց հետո նս ԱՄՆ–ի և նրան աջակցող եվրոպական ու ասիական մի շարք երկրների զորքերը շարունակում են մնալ Իրաքում: Ամերիկյան զորքերը, որոնց տրամադրության տակ կան տանկեր, ինքնաթիռներ, հրթիռներ, զրահապատ մեքենաներ, ծանր հրետանի և ժամանակակից զենքի այլ տեսակներ, կազմում են Իրաքում տեղակայված խաղաղապահ ուժերի հիմնական միջուկը: Նրանց թիվն անցնում է 150 հազարից:

Նրանց առջև, որոնք գործում են ՄԱԿ–ի հովանու ներքո և նրանից ստացված լիազորությունների շրջանակներում, դրված է երեք գլխավոր խնդիր:

Առաջին՝ խաղաղության ու կայունության հաստատումը Իրաքում:

Սակայն դա չի հաջողվում նրանց: Երկրում որոշ իմաստով ստեղծվել է քաոսային վիճակ: Պայթյունները, ահաբեկչությունը, պատանդներ, այդ թվում՝ օտարերկրացիներից, վերցնելն ու նրանց սպանելը և այլն 2003 թթ. ի վեր դարձել են Իրաքի ներքաղաքական կյանքի բնորոշ իրողությունները: Իրաքի տարբեր ուժեր, լեգալ և գաղտնի քաղաքական, կրոնական և բացահայտ ահաբեկչական կազմակերպություններ Բաղդադում, Բասրայում, Մոսուլում, Կիրկուկում, Թիկրիտիում, Բաքուբայում, Ֆալուջայում, Ամարայում, Նաջաֆում, Քարբալայում

և երկրի այլ քաղաքներում ու բնակավայրերում հարձակումներ են գործում ամերիկյան և բրիտանական, ինչպես նաև կոալիցիայի անդամ այլ երկրների զինվորների վրա, սպանում և գերեվարում նրանց: Իրաքում ամերիկյան զորքերի զոհերի թիվը 2003–2005 թթ. արդեն անցել է երկու հազարից: Իսկ տեղացիների զոհերի թիվն անհամեմատ մեծ է: Տեղացիները զոհվում են իրենց երկրում գտնվող օտարերկրյա ռազմական ուժերի հետ ունեցած բախումներից, գլխավորապես զանազան ահաբեկչական գործողություններից ու պայթեցումներից: Ահ ու սարսափ են տարածում կամիկածեները՝ անձնասպան մուսուլման մոլեռանդները, որոնց անձնասպան գործողությունների զոհն են դառնում ինչպես կոալիցիոն ուժերի զինվորները, այնպես էլ խաղաղ ազգաբնակչությունը, այդ թվում և կանայք, երեխաներն ու ծերունիները:

Երկրորդ՝ Սադամ Հուսեյնի վարչակարգի դեմոնտաժ՝ ապաքանդում:

Այդ ուղղությամբ Իրաքում ամերիկյան ռազմական և քաղաքացիական իշխանությունները գործում են վճռականությամբ և հետևողականությամբ: Ձերբակալվել են մոտ 60 երևելի իրաքյան պետական, ռազմական և քաղաքական գործիչներ Սադամ Հուսեյնի գլխավորությամբ, այսինքն՝ Իրաքի ռազմաքաղաքական էլիտան, որն ԱՄՆ–ի կողմից համարվում էր պատասխանատու Իրաքում հաստատված հակադեմոկրատական, բռնատիրական և ոստիկանական վարչակարգ հաստատելու մեջ, տարիներ շարունակ սեփական ժողովրդի, ազգային գործիչների, կուսակցությունների, միությունների և կազմակերպությունների դեմ ամենադաժան պատժամիջոցներ կիրառելու համար:

Սադամ Հուսեյնի պրեզիդենտության ժամանակաշրջանում ծնավորված համարյա բոլոր պետական, կառավարական, ռազմական, ներքին գործերի, ոստիկանական, անվտանգության և այլ կառույցներ դադարեցրել են իրենց գործունեությունը: Մասնավորապես վերացվել է Հեղափոխական հրամանատարության խորհուրդը, պրեզիդենտական խորհուրդը, արգելվել է Բաաս կուսակցության գործունեությունը, վերակազմավորվել են բանակային և ոստիկանական կառույցները, որտեղից հեռացվել են բոլոր այն գեներալները և բարձրաստիճան սպաները, որոնք հանցանք են գործել կամ կապեր ունեցել կառավարող Բաաս կուսակցության հետ: Այլ կերպ ասած, արմատախիլ են արվել բոլոր այն կառույցները, մարմինները, նախարարությունները, կոմիտեները, կազմակերպությունները և օղակները, որոնք կազմում էին Սադամ Հուսեյնի դաժան ռեժիմի հիմքը:

Երրորդ՝ Իրաքի վերակառուցումը և նոր կարգավիճակի հաստատումը, նոր պետական–կառավարման համակարգի և մարմինների ստեղծումը վերևից մինչև ներքև և պայմանների ստեղծումը երկրի անվտանգության, տնտեսության վերականգնման ու զարգացման և դեմոկրատացման համար:

Դրանք շատ բարդ խնդիրներ են, որոնց անմիջական լուծումը կարճ ժամկետներում գործնականորեն անհնարին է: Դրա համար ԱՄՆ–ը և կոալիցիայի գծով նրա պարտնյորները սահմանեցին անցումային շրջան, որն անմիջապես սկսվեց Սադամ Հուսեյնի տապալումից հետո՝ 2003 թ., և շարունակվում է ահա արդեն ավելի քան երեք տարի:

Սկզբնական շրջանում Սադամ Հուսեյնի տապալումից հետո, Իրաքի կառավարումն իրենց ձեռքը վերցրեցին ամերիկյան և կոալիցիոն ուժերը: Ստեղծվեց Կոալիցիոն ժամանակավոր իշխանություն (Coalition Provisional Authority), որն օժտված էր ամենալայն լիազորություններով: Այնուհետև, 2004 թ. հունիսին իշխանությունը փոխանցվեց Իրաքի ժամանակավոր կառավարությանը (Iraqi Interim Government), որը, սակայն, շարունակում էր մնալ կոալիցիոն ուժերի վերահսկողության տակ:

Մերժվեց Իրաքի տրոհման գաղափարը, ըստ որի՝ միասնական՝ ունիտար Իրաքի տարածքում պետք է կազմավորվեին երեք անկախ պետություններ՝ քրդական՝ հյուսիսում, շիական՝ հարավում, և սուննիական՝ կենտրոնական մասում: ՄԱԿ–ը, ԱՄՆ–ը և նրա դաշնակիցները գտան, որ պետք է պահպանել Իրաքի տերիտորիալ ամբողջականությունը: Միաժամանակ չի բացառվում դրա շրջանակներում դաշնակցային՝ ֆեդերալ պետության սկզբունքների կիրառումը:

Իրաքի պետական վերակառուցման ճանապարհին վճռական տարի եղավ 2005 թ.: Հունվարի 30–ին տեղի ունեցան պառլամենտական ընտրություններ, որի ժամանակ ընտրվեց Իրաքի պառլամենտը՝ այսպես կոչված Անցումային ազգային ժողովը՝ բաղկացած 275 դեպուտատական տեղերից: Նա մշակեց մշտական սահմանադրության նախագիծ, որը հավանություն ստացավ 2005 թ. կայացած համաիրաքյան հանրաքվեի ժամանակ, և նրա հիման վրա 2005 թ. վերջերին կայացան նոր պառլամենտական ընտրություններ: Ընտրությունների արդյունքում փոխվեց ուժերի հարաբերակցությունը իրաքյան հասարակության և պետության մեջ: Տեղի ունեցավ վերադասավորում, և հաղթանակ տարան շիաները, որոնք կազմում են Իրաքի ազգաբնակչության մեծամաս-

նությունը: Նրանց ներկայացուցիչները ստացան ամենաշատ ձայները և ամենաշատ տեղերը նորընտիր պառլամենտում, բայց ոչ բացարձակ մեծամասնությունը: Դեպուտատական տեղերի նվաճման քանակով պառլամենտում երկրորդ տեղը գրավեցին քրդերը, իսկ սուննիները հայտնվեցին երրորդ տեղում: Նրանք շահեցին ամենաքիչ մանդատները: Դա յուրատեսակ հեղաշրջում էր այն առումով, որ սուննիները կրոնական առումով թեև կազմում էին փոքրամասնություն, սակայն 1921 թ. ի վեր, երբ կազմավորվեց Իրաքի թագավորությունը բրիտանական մանդատի ներքո, հանդիսանում էին կառավարող էլիտան և մշտապես նրանց ձեռքում էր կենտրոնացված ամբողջ իշխանությունը: Այժմ նրանք զրկվեցին այդ մենաշնորհից և դադարեցին Իրաքի կառավարող ուժ լինելուց:

Իրաքի պրեզիդենտի պաշտոնը վստահվեց Ջալալ Թալաբանիին: Առաջին անգամ Իրաքի պատմության մեջ պետության ղեկավարի բարձր պաշտոնը գրավում է ազգությամբ քուրդը: Իսկ կառավարություն կազմելը 2006 թ. փետրվարին հանձնարարվեց շիաների ներկայացուցիչ Իբրահիմ ալ–Ջաֆարին: Սակայն դա նրան չհաջողվեց և 2006 թ. մայիսին պառլամենտը վարչապետի պաշտոնում նշանակեց Նուրի Մալիքին, որը հունիս ամսին ավարտեց կառավարության կազմումը:

Իրաքի խնդիրները դեռևս լուծված չեն: Նրան շատ երկար և փշոտ ճանապարհ է սպասվում հաղթահարելու համար այն համակարգային ճգնաժամը, որի մեջ նա հայտնվել է:

VIII. ԻՐԱՔԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրաքի և Հայաստանի միջև որոշակի տնտեսական և մշակութային կապեր գոյություն ունեին դեռևս այն ժամանակ, երբ դեռ Խորհրդային Միությունը չէր փլուզվել, և Հայաստանը կազմում էր նրա մի մասը: Հասկանալի է, որ դրանք իրականացվում էին Խորհրդային Միության շրջանակներում: 1960–ականների վերջերին Երևանի «Հայէլեկտրո» գործարանի օգնությամբ Բաղդադում կառուցվեց և շահագործման հանձնվեց էլեկտրատեխնիկական գործարանը, որն այդ ժամանակ ամենախոշորն էր Մերձավոր Արևելքում: Հայաստանի մասնագետները նախագծեցին Բաղդադի մետրոյի կառուցումը, որը, սակայն, Իրաքում

տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների պատճառով, չիրականացվեց: 1971 թ. Հայաստանում անցկացվեցին Իրաքի մշակութային օրեր, և Հայաստան ժամանեց իրաքյան պատվիրակություն՝ կազմված պետական գործիչներից, Բաաս և կոմունիստական կուսակցությունների ներկայացուցիչներից, գրողներից, նկարիչներից, երաժիշտներից, որին ընդունեց Հայկական ԽՍՀ ղեկավարությունը:

1972 թ. դեկտեմբերին Իրաքում անցկացվեցին Հայաստանի մշակութային օրեր: Իրաք մեկնեց պաշտոնական պատվիրակություն՝ մշակույթի գործիչների և արաբագետ–գիտնականների ուղեկցությամբ: Պատվիակությունը, բացի Բաղդադից, եղավ նաև Բասրայում, Մոսուլում և Իրաքի այլ վայրերում: Պատվիրակությանն ընդունեց Իրաքի պրեզիդենտ Ահմադ Հասան ալ–Բաքրը, որը բարեկամական զրույցի ընթացքում կարևորեց հայ–արաբական բարեկամությունն ու համագործակցությունը և շատ բարձր գնահատեց Իրաքի հայ համայնքի գործունեությունն ու ներդրումը Իրաքի տնտեսական և մշակութային կյանքում:

Իրաքը 1992 թ. հունվարի 1–ին ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը՝ իններորդը արաբական երկրներից: Այնուհետև կողմերը դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին, և, ըստ այդմ՝ Երևանում բացվեց Իրաքի դեսպանություն, իսկ Բաղդադում՝ Հայաստանի դեսպանություն:

Այսպիսով՝ Արաբական կամ Բաղդադի խալիֆայությունից տասնմեկ դար անց, երբ նա 885 թ. պաշտոնապես ճանաչեց Բագրատունյաց Հայաստանի անկախությունը և խալիֆա ալ–Մութամիդը թագ ուղարկեց հայոց թագավոր Աշոտ I Բագրատունուն, Տիգրիսի ափերին ստեղծված արաբական նոր պետությունը, որն այս անգամ կրում էր Իրաք անվանումը, սակայն միևնույն Բաղդադ մայրաքաղաքով, կրկին ճանաչեց հայոց վերածնված և անկախ պետությունը:

Հայաստանի Հանրապետությունը և Իրաքը, հաստատելով դիվանագիտական հարաբերություններ, նախաքայլեր ձեռնարկեցին զարգացնելու համագործակցությունը տնտեսության, առևտրի, կրթության, մշակույթի, գիտության և այլ բնագավառներում: Այդ ուղղությամբ կատարվեցին միայն առաջին քայլերը, որոնց երկու կողմից մասնակցում էին նաև անհատ ձեռներեցները: Սակայն դա հետագա զարգացում չունեցավ, գլխավորապես Իրաքում քաղաքական այն իրադարձությունների պատճառով, որոնց մասին խոսվեց վերևում: Իսկ 2003 թ. սկսված պատերազմից և Սադամ Հուսեյնի տապալումից հետո հարաբերու-

թյունները երկու երկրների միջև սառեցվեցին: Երևանում Իրաքի դեսպանությունը դադարեցրեց իր գործունեությունը, իսկ դիվանագիտական անձնակազմը հեռացավ Երևանից, քանի որ այն այլևս պաշտոնապես Իրաքը չէր ներկայացնում: Իրաքում ստեղծված ներքին անկայունության և անապահովության պատճառով, Հայաստանի կառավարությունը Բաղդադից հետ կանչեց իր դիվանագիտական ներկայացուցչությունը: Սակայն դա չի նշանակում դիվանագիտական հարաբերությունների խզում Իրաքի և Հայաստանի միջև:

Իրաքում ծավալված ռազմական գործողությունները, ստեղծված անկայուն և անապահով իրադրությունը, ահաբեկչական գործողությունները, հարձակումները քրիստոնեական եկեղեցիների և այլ կառույցների վրա իրենց բացասական հետևանքներն ունեցան նաև Իրաքի հայ համայնքի վրա: 2005 թ. վերջերին արդեն զոհվել էր 18 իրաքահայ, իսկ 300 հայ ընտանիքներ հարկադրված հեռացել էին Իրաքից: Դա մեծապես անհանգստացրեց Հայաստանի իշխանություններին: Հայաստանն իր պատրաստակամությունը հայտնեց ընդունել և համապատասխան կարգավիճակ տալ նրանց: Եվ, իրոք, բազմաթիվ իրաքահայեր հաստատվեցին Հայաստանում:

2005 թ., Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մի զորաջոկատ, բաղկացած 36 հոգուց, ՄԱԿ–ի որոշումների համաձայն, մեկնեց Իրաք և խաղաղապահ կոալիցիոն ուժերի կազմում մասնակցում է Իրաքում խաղաղություն, ապահովություն և անվտանգություն հաստատելու հումանիստական առաքելությանը:

Հայաստանը շահագրգռված է, որ իր ոչ հեռավոր հարևան երկրում՝ Իրաքում, հաստատվեն դեմոկրատական կարգեր, խաղաղություն և անվտանգություն, և որ բարեկամ արաբ ժողովուրդն ազատորեն տնօրինի իր ճակատագիրն իր սեփական երկրում:

Դա համապատասխանում է երկու երկրների ազգային և պետական շահերին:

Գլուխ հնգերորդ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼԻԲԱՆԱՆ

ԱԼ–ՋՈՒՄՀՈՒՐԻՅԱ ԱԼ–ԼՈՒԲՆԱՆԻՅԱ
ԼՈՒԲՆԱՆ

Աշխարհագրական դիրքը — գտնվում է Մերձավոր Արևելքում՝ Միջերկրական ծովի ափին

Սահմանները — սահմանակից է Իսրայելին և Սիրիային

Տարածքը — 10 հազ. 400 քառ. կմ

Բնակչությունը — 3 մլն 826 հազ. (2005 թ. հուլիս)

Ազգային կազմը — արաբներ՝ 95%, հայեր՝ 4%, այլք՝ 1%

Մայրաքաղաքը — Բեյրութ (մոտ 2 մլն)

Պետական կրոնը — մուսուլմաններ (շիա, սուննի, դրուզ, իսմայիլականներ, ալավիներ)՝ 59,7%, քրիստոնյաներ (մարոնիներ, հայ ուղղափառներ, սիրիական կաթոլիկներ, հայ կաթոլիկներ, հույն կաթոլիկներ, բողոքականներ)՝ 39%, այլք՝ 1,3%

Պաշտոնական լեզուն — արաբերենը՝ պետական պաշտոնական, անգլերեն, ֆրանսերեն, հայերեն

Պետական կարգը — հանրապետություն

Պետության ղեկավարը — պրեզիդենտ, ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամանակով

Գործադիր իշխանությունը — իրականացնում են պրեզիդենտը, վարչապետը և նրա տեղակալը, որոնց նշանակում է պրեզիդենտը՝ Ազգային ժողովի հետ խորհրդակցելով

Օրենսդիր իշխանությունը — պատկանում է միպալատանի Ազգային ժողովին՝ Մեջլիս ան–Նուվաբին, որն ընտրվում է չորս տարի ժամանակով՝ կրոնահամայնքային սկզբունքի հիման վրա: Կազմված է 128 դեպուտատներից: 1943 թ. Ազգային պակտի համաձայն՝ Լիբանանի պրեզիդենտը պետք է լինի մարոնի քրիստոնյա, վարչապետը՝ սուննի մուսուլման, պառլամենտի՝ Ազգային ժողովի նախագահը՝ շիա մուսուլման:

ԼԻԲԱՆԱՆ

Դատական իշխանությունը — իրականացնում են չորս վճռաբեկ դատարանները, Սահմանադրական խորհուրդը և Գերագույն խորհուրդը

Անկախության օրը — 22 նոյեմբերի, 1943 թ.՝ Ֆրանսիական մանդատի վերացումից հետո

Ազգային տոնը — 22-ը նոյեմբերի

Քաղաքական կուսակցությունները — գործում են մի շարք արաբական և հայկական քաղաքական կուսակցություններ

Ազգային դրամը — Լիբանանյան լիրա

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ըստ շնչի — 5000 ԱՄՆ դոլար (2004 թ.)

Արդյունաբերությունը — ցեմենտի, տեքստիլ, սննդի վերամշակման, ոսկերչական, հանքային և քիմիական նյութերի, փայտամշակման և կահույքի, նավթավերամշակման, մետաղյա իրերի արդյունաբերություն, բանկային գործունեություն

Գյուղատնտեսություն — ցիտրուսներ, մրգեր, բանջարեղեն, ծիթապտուղ և ծխախոտ, ինչպես նաև անասնապահություն

I. ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՕԿՈՒՊԱՑՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ (1918–1920 թթ.)

1. Ֆրանսիական տիրապետության հաստատումը Լիբանանում

Այն տարածքը, որը կազմում է ժամանակակից Լիբանանը, յուրահատուկ կարգավիճակ ուներ Օսմանյան կայսրության կազմում: 1861 թ. ընդունված Օրգանական ստատուտի համաձայն՝ ստեղծվել էր Լեռնալիբանանի ինքնավար մարզը՝ մութասառիֆությունը, որը կառավարում էր սուլթանի կողմից նշանակվող քրիստոնյա կաթոլիկ մութասառիֆը (կառավարիչը): Իսկ մնացած շրջանները բաժանված էին Դամասկոսի և Բեյրութի վիլայաթների միջև:

Երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, թուրքական կառավարությունը խախտեց Օրգանական ստատուտը և իր զորքերը մտցրեց Լեռնալիբանան՝ պաշտոնանկ անելով Լեռնալիբանանի վերջին քրիստոնյա մութասառիֆ Հովհաննես Կույումջյանին: Երկրամասը սկսեցին կառավարել թուրք նահանգապետները: Պատերազմը խիստ բացասաբար անդրադարձավ Լիբանանի վրա: Նրա բնական, նյութական և մարդկային ռեսուրսները ի սպաս դրվեցին թուրքական բանակների կարիքներին: Երկրում մոլեգնում էր սովը, որին զոհ գնացին տասնյակ հազարավոր լիբանանցիներ: Հետապնդելով լիբանանյան ազգային հայրենասերներին, որոնք պայքարում էին արաբական հայրենիքի ազատագրության համար՝ օսմանյան կառավարողները 1915–1916 թթ. մահապատժի ենթարկեցին նրանցից շատ–շատերին: Լիբանանն ընկավ աներևակայելի ծանր դրության մեջ: Այդ բոլորի հետևանքով խիստ ուժեղացան հակաթուրքական տրամադրությունները:

Լիբանանի ազատագրումը օսմանյան լծից ավարտվեց 1918 թ. աշնանը, որն իրագործվեց անգլիական զորքերի և արաբական ապստամբ բանակի միջոցով, որոնք մի շարք ճակատամարտերում պարտու-

թյան մատնեցին թուրքական բանակներին: 1918 թ. հոկտեմբերի 8–ին ազատագրվեց Բեյրութը, այնուհետև՝ Լիբանանի մյուս շրջանները: 1918 թ. հոկտեմբերի 30–ին կնքված զինադադարով Թուրքիան պարտավորվեց արաբական երկրներում, այդ թվում և Լիբանանում գտնվող իր կայազորները հանձնել դաշնակիցներին: Այսպես վերջ տրվեց թուրքական երկարամյա դաժան և արյունարբու տիրապետությանը Լիբանանում:

Սակայն դրանից անմիջապես հետո պայքար ծավալվեց Ֆրանսիայի և Սիրիայի միջև Լիբանանի հետագա քաղաքական ստատուսի համար: Ֆրանսիան, հենվելով 1916 թ. Անգլիայի հետ կնքված Սայքս–Պիկոյի գաղտնի համաձայնագրի վրա, ձգտում էր իր տիրապետությունը հաստատել Լիբանանում: Մինչդեռ Սիրիայի ազգայնական ուժերը և արաբական ապստամբական բանակի հրամանատար Ֆեյսալը Լիբանանը դիտում էին որպես Սիրիայի անբաժան մաս և գտնում, որ այն պետք է զերծ մնա ֆրանսիական տիրապետությունից: Ֆեյսալը 1918 թ. հոկտեմբերի 4–ին ռազմական մի ջոկատ ուղարկեց Բեյրութ՝ Շուքրի ալ–Այյուբիի գլխավորությամբ այնտեղ արաբական իշխանությունը հաստատելու համար: Սակայն մինչ այդ Բեյրութում կազմվել էր արաբական կառավարություն՝ Ումար ադ–Դաուկի գլխավորությամբ: Բեյրութում բարձրացվեց շերիֆ Հուսեյնի Արաբական ազատագրության դրոշը: Ալ–Այյուբին իր իշխանությունը տարածեց նաև Լեռնալիբանանի վրա, որտեղ նա տեղապահ նշանակեց Հաբիբ աս–Սաադին:

Ֆրանսիացիները վճռական քայլի դիմեցին Բեյրութում և Լեռնալիբանանում արաբական ազգայնականների իշխանությունը վերացնելու և իրենց տիրապետությունը հաստատելու համար: 1918 թ. հոկտեմբերի 7–ին Բեյրութում խարիսխ ձգեցին ֆրանսիական ռազմանավերը, իսկ հաջորդ օրը Բեյրութ մտան անգլիական զորքերը՝ գեներալ Ալլենբիի գլխավորությամբ: Նրան ուղեկցում էր նաև ֆրանսիական մի ռազմական ջոկատ գնդապետ Պյեպապի հրամանատարությամբ: Նրանց առաջին գործը եղավ Լիբանանում արաբական իշխանության վերացումը: Շուքրի ալ–Այյուբին հարկադրված էր հեռանալ Բեյրութից, իսկ Ումար ադ–Դաուկը՝ որպես արաբական կառավարության ղեկավար, իշխանությունը հանձնեց Պյեպապին, որը նշանակվեց Բեյրութի կառավարիչ: Ֆրանսիացիները կառավարիչներ նշանակեցին նաև Սայդայում և Սուրում: Իսկ մինչ այդ՝ դեռևս 1917 թ. ապրիլին, Ֆրանսուա Ժորժ Պիկոն նշանակվել էր Ֆրանսիայի գլխավոր կոմիսար Լևանտում: Ֆրանսիան 1919 թ. նոյեմբերին օկուպացրեց նաև Բեկաայի շրջանը:

2. Լիբանանցիների դիրքորոշումը Լիբանանի քաղաքական ապագայի հարցում

Լիբանանցիներն այս կենսականորեն կարևոր հարցում միասնական չէին: Մուսուլմանները կողմնակից էին, որ Լիբանանը կազմի Սիրիայի մի մասը: Ընդհանուր գծերով այս տեսակետին դեմ չէին նաև լիբանանյան ուղղափառ և բողոքական քրիստոնյաները: Նրանք հաշվի էին առնում, որ իրենք փոքրամասնություն են կազմում արաբական լայնածավալ աշխարհում, և քաղաքական անհեռատեսություն կլինի բացեիբաց հանդես գալ արաբական բարձրացող ազգայնականության դեմ, որի կարևոր նպատակներից մեկը միասնական անկախ Սիրիայի ստեղծումն էր իր պատմաշխարհագրական սահմաններում: Նրանց դիրքորոշման վրա ազդում էին նաև մուսուլմանական ազգայնականների հավաստիացումները, որ իրենց ազգայնականությունը կրոնական սկզբունքներով չի առաջնորդվում, և քրիստոնյա արաբներին հավասարապես համարում են արաբական աշխարհի օրինական զավակներ: Այդ տեսակետը հստակորեն դրսևորվեց Ֆեյսալի ելույթում, որ նա արտասանեց 1919 թ. մայիսի 9–ին Դամասկոսում: Նա ընդգծեց, որ ապագա անկախ Սիրիան մեծ ուշադրություն կդարձնի կրոնական և ազգային փոքրամասնությունների հարցին, որպեսզի «վերացնի ատելությունը և կրոնական հակամարտությունը, որ ստեղծել էին թուրքերը, և դրա փոխարեն սիրո և եղբայրության սերմեր ցանի տարբեր կրոնական համայնքների միջև»:

Լիբանանը Սիրիայի կազմում պահելուն բացահայտորեն դեմ էին քրիստոնյա մարոնիները[21], ինչպես նաև հույն կաթոլիկները: Դա, հավանաբար, կարելի է բացատրել հետևյալ պատճառներով: Առաջին՝ մարո-

21 Իր անունը ստացել է սուրբ Մարոնից, որի հետևորդներն ենք նրանք: Քրիստոնեական այդ ուղղությունը ծագել է դեռևս IV դարում, իսկ Լիբանանում հաստատվել է VII դարում: Մարոնիները մոնոֆելիտներ են, որոնք, ընդունելով Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունը, գտնում էին, որ նա ունի միասնական կամք: Նրա առանձնահատկությունը կայանում է նրանում, որ լինելով արևելյան քրիստոնեական եկեղեցի՝ XVII դարում ունիայի մեջ մտավ Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ և Հռոմի պապին ընդունում է որպես մարոնի քրիստոնյաների եկեղեցու գլխավոր: Սակայն նա պահպանում է իր կազմակերպական ինքնուրույնությունը, հատուկ արևելյան ծիսակարգը և ունի իր պատրիարքը, որն անմիջականորեն, Հռոմի պապից անկախ, տնօրինում է մարոնի եկեղեցու ներքին գործերը:

նիները դարեր շարունակ ապրում էին մեկուսի, և նրանց մոտ նույնիսկ այն տեսակետն էր տիրապետող, որ իրենք էթնիկական առումով արաբներ չեն: Նրանց հարաբերությունները բավականին լարված էին մուսուլման արաբների հետ, որոնք շատ հաճախ, մանավանդ XIX դարից սկսած, ընդունում էին արյունալի բախումների բնույթ: Երկրորդ՝ մարոնիները սերտ կապերի մեջ էին Ֆրանսիայի հետ, որին նրանք համարում էին իրենց հովանավորը: Ֆրանսիան, ինչպես նշվեց, ամեն կերպ ձգտում էր իր տիրապետությունը հաստատել Լիբանանի վրա, և նրա այս քաղաքականությունը շատ բանով կանխորոշեց մարոնիների դիրքորոշումը Լիբանանի ապագա քաղաքական կարգավիճակի հարցում: Ֆրանսիան ուղղակիորեն քաջալերում և թիկունք էր կանգնում մարոնիների այս նկրտումներին: Եվ երրորդ՝ մարոնիները մեծամասնություն էին կազմում Լիբանանում, ինչը նրանց քաղաքական և տնտեսական մեծ առավելություններ էր տալիս: Լիբանանը Սիրիայի կազմում պահելու դեպքում նրանք մտավախություն ունեին, որ կկորցնեն այդ առավելությունը և կդառնան մի կաթիլ մուսուլմանական հսկայածավալ օվկիանոսում:

1919 թ. հոկտեմբերի 27-ին մարոնիների պատվիրակությունը պատրիարք Իլյաս ալ-Հուվայիկի գլխավորությամբ Ֆրանսիայի վարչապետ Կլեմանսոյին ներկայացրեց հուշագիր, որտեղ նշվում էր, որ լիբանանցիները կազմում են հատուկ ազգ, որը չի մտնում Սիրիայի կազմի մեջ: Լիբանանյան ազգը ֆրանսիական մանդատի ներքո պետք է «լիակատար անկախ լինի Սիրիայի տերիտորիայում կազմավորվող արաբական պետությունից»: Միաժամանակ պատվիրակությունը պահանջեց ընդարձակել Լիբանանի սահմանները, նրա մեջ Լեռնալիբանանից բացի ներառնել նաև Բեյրութը, Բեկաան, Սայդան և Սուրը:

Պայքարը քաղաքական այս երկու գծերի միջև կազմում է Լիբանանի 1918-1920 թթ. պատմության հիմնական առանցքը:

Ֆրանսիան ձեռնամուխ եղավ մարոնիների պահանջների կենսագործմանը: 1919 թ. դեկտեմբերին ֆրանսիական զորքերը փորձեցին գրավել Բաալբեկը՝ Բեկաայի շրջանի խոշոր կենտրոններից մեկը: 1919 թ. դեկտեմբերի 18-ին բաալբեկցիները ամբողջ օրը հերոսական դիմադրություն էին ցույց տալիս ֆրանսիական կանոնավոր զորքերին, որոնց միայն հաջորդ օրը հաջողվեց գրավել քաղաքը:

Բաալբեկի հերոսական ճակատամարտը լայն արձագանք գտավ Լիբանանում, ինչպես նաև Սիրիայում և խթանեց զինված պայքարը ֆրանսիական օկուպանտների դեմ: Լիբանանյան հայրենասերները սի-

րիական պարտիզանների հետ միասին 1919 թ. և 1920 թ. սկզբներին հարձակումներ են գործում Ռայյակ–Հալեպ երկաթուղագծի գոտում, մարտեր մղում Լիթանիի կամրջի շրջանում, Ակր–Սայդա ճանապարհի երկայնքով, Հոմս–Տրիպոլի բարձրավանդակի շրջանում և այլ վայրերում:

1920 թ. մարտի 8–ին Դամասկոսում հրավիրվեց Սիրիական գլխավոր կոնգրես, որը հռչակեց սիրիական անկախ թագավորության ստեղծումը Սիրիայի բնական սահմաններում, իսկ Ֆեյսալին ընտրեց թագավոր:

Կոնգրեսը Սիրիայի կազմի մեջ մտցրեց նաև Լիբանանը: Սակայն ընդունված դեկլարացիայում ճանաչվում էր Լիբանանի ինքնավար իրավունքները սիրիական միասնական պետության շրջանակներում:

Բայց դաշնակիցները՝ Անգլիան և Ֆրանսիան, չճանաչեցին Սիրիական գլխավոր կոնգրեսի 1920 թ. մարտի 8–ի որոշումները: Դաշնակիցների Գերագույն խորհուրդը 1920 թ. ապրիլի 25–ին Սան Ռեմոյում գումարած նիստում որոշում ընդունեց Սիրիայի և Լիբանանի մանդատը տալ Ֆրանսիային:

II. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

1. Մեծ Լիբանան պետության կազմավորումը

Մանդատի հաստատմանը Լիբանանում ծեռնամուխ եղավ Մերձավոր Արևելքում ֆրանսիական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Անրի Գուրոն, որը փոխարինեց ժորժ Պիկոյին նաև գլխավոր կոմիսարի պաշտոնում: Նա Բեյրութ ժամանեց 1919 թ. նոյեմբերի 21–ին և այնտեղ հաստատեց իր շտաբ–կայանը:

Գուրոն 1920 թ. հուլիսին գրավեց Շթորան, Զահլեն և Մաջդ ալ–Անջարը և դրանով ավարտեց Լիբանանի լրիվ օկուպացումը: 1920 թ. օգոստոսի 31–ին նա՝ որպես Ֆրանսիայի գլխավոր կոմիսար, ստորագրեց Մեծ Լիբանան պետություն ստեղծելու մասին դեկրետը, որը պաշտոնապես հռչակվեց 1920 թ. սեպտեմբերի 1–ին: Այն կազմավորվեց Լեռնալիբանանի հիմքի վրա, որին միացվեցին Բեյրութը, Տրիպոլին, Սայդան, Սուրը, Մարջայունը, Ռաշայյան, Հաբայան, Բաալբեքը, Բեկաայի դաշտավայրը, Աքքարը և Աքքարի հարթավայրի հյուսիսային մնացած մասը. ընդամենը 10 հազ. քառ. կմ: Բեյրութը դարձավ նրա մայ-

ռաքաղաքը: Մեծ Լիբանանը համարվեց Սիրիայից անկախ պետական միավորում: Այսպիսով՝ Արաբական Արևելքի քաղաքական քարտեզի վրա հանդես եկավ մի նոր պետություն, որը համարվեց ֆրանսիական ենթամանդատային տերիտորիա: Ազգերի լիգան 1922 թ. հուլիսի 24–ին պաշտոնապես հաստատեց Լիբանանի և Սիրիայի կառավարման մանդատի հանձնումը Ֆրանսիային:

Նորաստեղծ պետությունում ներքին և արտաքին քաղաքականության բոլոր հարցերը կենտրոնացված էին ֆրանսիական գլխավոր կոմիսարի ձեռքում: Լիբանանն անմիջականորեն կառավարում էին գլխավոր կոմիսարի կողմից նշանակվող նահանգապետները: Առաջին նահանգապետ նշանակվեց ֆրանսիական բանակի կապիտան Ժորժ Թրաբոն:

Գլխավոր կոմիսարի դեկրետով նահանգապետին կից ստեղծվեց Վարչական կոմիտե՝ բաղկացած 17 անձնավորությունից: Դա խորհրդակցական մարմին էր, որի անդամներին նշանակում էր ֆրանսիական գլխավոր կոմիսարը: Վարչական կոմիտեի ստեղծման և նրա անդամների նշանակման հիմքում դրվեց կրոնահամայնքային սկզբունքը:

1922 թ. մարտի 8–ին գեներալ Գուրոյի հրամանով Վարչական կոմիտեն վերացվեց, և նրա փոխարեն ստեղծվեց Ներկայացուցչական խորհուրդ՝ կազմված 30 մարդուց: Ներկայացուցչական խորհրդի անդամները ոչ թե նշանակվում, այլ ընտրվում էին: Ընտրությունները երկաստիճան էին, և նրանց մասնակցելու իրավունքը ունեին միայն տղամարդիկ: Ներկայացուցչական խորհուրդը նույնպես կառուցված էր ըստ կրոնահամայնքային սկզբունքի: Նրա կազմում ընդգրկված էին տասը մարոնի, չորս ուղղափառ քրիստոնյա, երկու կաթոլիկ, վեց սուննի, հինգ շիա, երկու դրուզ և մեկ կրոնական փոքրամասնության ներկայացուցիչ: 1922 թ. մայիսի 25–ին գումարվեց Ներկայացուցչական խորհրդի առաջին նիստը, որտեղ խորհրդի նախագահ ընտրվեց մարոնի քաղաքական գործիչ Հաբիբ փաշա աս–Սաադը: Ներկայացուցչական խորհուրդը գոյություն ունեցավ մինչև 1925 թ. հունվարը:

2. Սոցիալական հենարան ստեղծելու ֆրանսիական մանդատային իշխանությունների քաղաքականությունը 1920–ական թվականներին

Մեծ Լիբանան պետության կազմավորումից հետո ֆրանսիական մանդատային իշխանությունները որոշակի քայլերի դիմեցին իրենց հա-

մար սոցիալական հենարան ստեղծելու ուղղությամբ: Նրանք նախ և առաջ սիրաշահեցին լիբանանյան ֆեոդալներին: Դեռևս օսմանյան տիրապետության շրջանում հաստատված հողային հարաբերությունները թողնվեցին ուժի մեջ, որի շնորհիվ լիբանանյան կալվածատերերը պահպանեցին իրենց տիրույթները, իսկ որոշ դեպքերում նույնիսկ ընդարձակեցին դրանք: Պահպանվեց նաև հողօգտագործման և վարձակալման համակարգը, որի հետևանքով գյուղացին շարունակում էր կախված մնալ հողատեր կալվածատիրոջից:

Ֆրանսիական իշխանությունները բնահարկը փոխարինեցին դրամական հարկով, որի հետևանքով լիբանանյան գյուղացին կախման մեջ ընկավ վաշխառուական կապիտալից: Հենց վաշխառուական խավն էլ դարձավ մանդատային իշխանությունների հենարաններից մեկը: Ֆրանսիացիների այդ քաղաքականությունը հանգեցրեց գյուղացիության քայքայմանը և գյուղատնտեսության անկմանը: Առանձնապես ծանր վիճակ ստեղծվեց շերամագործության համար, մեծ չափերով կրճատվեցին դրա, ինչպես նաև ծխախոտի, խաղողի և այլ կուլտուրաների ցանքատարածությունները:

Ֆրանսիական իշխանությունների մյուս կարևոր սոցիալական հենարանը դարձավ լիբանանյան կոմպրադորական և առևտրական բուրժուազիան, որը վաղուց սերտ կապերի մեջ էր ֆրանսիական առևտրական, ֆինանսական և արդյունաբերական բուրժուազիայի հետ:

Ֆրանսիայի տնտեսական դիրքերի ամրապնդման գործում զգալի դեր խաղաց 1919 թ. հիմնված Սիրիայի և Լիբանանի բանկը: Դա միայն անունով էր սիրիա–լիբանանյան: Իրականում նա պատկանում էր ֆրանսիական կապիտալին և օգտվում էմիսիայի՝ դրամահատման մենաշնորհ իրավունքից: Բանկը շրջանառությունից հանեց ոսկյա դրամը, որն ուղարկվեց Ֆրանսիա, և 1920 թ. մարտին շրջանառության մեջ դրեց այսպես կոչված սիրիա–լիբանանյան լիրան՝ մի արժեքազրկված թղթադրամ, որը ծանր հարված էր Սիրիայի և Լիբանանի տնտեսությանը: Ֆինանսական այս «ռեֆորմից», որն ավելի շատ նման էր սպեկուլյացիայի, մեծապես շահեց ֆրանսիական բուրժուազիան: Նրա համար շահույթների և հարստացման լրացուցիչ աղբյուր դարձան նաև զանազան կոնցեսիաները, որ ֆրանսիական մոնոպոլիստները ձեռք բերեցին Լիբանանում: Այսպիսով՝ կարելի է ասել, որ ֆրանսիական իշխանությունների քաղաքականությունը չէր նպաստում Լիբանանում տնտեսության զարգացմանը:

Ֆրանսիայի դիրքերի ամրապնդմանը և նրան հավատարիմ սոցիալական հենարանի ուժեղացմանն էր ուղղված նաև վարչական ապարատի ստեղծման և համալրման յուրահատուկ սկզբունքը, որ սահմանեցին մանդատային իշխանությունները: Նրանք՝ որպես ապարատի աշխատողներ, հավաքագրում էին ֆրանսիական և միսիոներական կաթոլիկ դպրոցների շրջանավարտներին, որոնք, աշխատելով որպես ֆրանսիական պաշտոնյաների օգնականներ, անցնում էին համապատասխան դպրոց և դաստիարակվում Ֆրանսիային ծառայելու հոգեբանությամբ: Եվ վերջապես՝ հարկ է նշել ժանդարմական կորպուսի վերակառուցումը, որ իրագործեցին մանդատային իշխանությունները: Այն համալրվեց Ֆրանսիային նվիրված մարդկանցով և դրվեց ֆրանսիական նահանգապետի ենթակայության տակ:

Խիստ ուժեղացվեցին նաև հետախուզական մարմինները:

3. Դժգոհության կուտակումը և հակաֆրանսիական ելույթները

Ֆրանսիական այս քաղաքականությունից դժգոհ էին ժողովրդական զանգվածները: Երկիրը, որ քայքայվել էր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, շարունակում էր մնալ տնտեսական ծանր վիճակում, վատ էր աշխատավորների դրությունը, որոնք զուրկ էին նաև քաղաքական իրավունքներից: Նրանք դժգոհ էին, որ Լիբանանը զրկված էր քաղաքական անկախությունից: Եվ այս հողի վրա Լիբանանում ծայր առավ պայքարը ֆրանսիական մանդատային իշխանությունների դեմ՝ հանուն տնտեսական դրության բարելավման և քաղաքական անկախության նվաճման:

1920 թ. գործադուլ հայտարարեցին Բեյրութի բանվորները, որոնց միացան նաև այլ վայրերի գործարանների ու արհեստանոցների բանվորները: Դա, փաստորեն, Լիբանանի երիտասարդ, ոչ մեծաթիվ և դեռևս քաղաքական պայքարի հարուստ փորձ չունեցող բանվոր դասակարգի առաջին ելույթն էր ֆրանսիական իշխանությունների և նրանց հովանավորությունը վայելող լիբանանյան գործատերերի դեմ:

1920–ական թվականների կեսերը պետք է համարել Լիբանանի բանվոր դասակարգի՝ քաղաքական ասպարեզ դուրս գալու և իր զանազան կազմակերպությունները հիմնելու ժամանակաշրջան: Առաջացան մի շարք արհմիութենական կազմակերպություններ: 1924 թ. հուլիսին ստեղծվեց Լիբանանի ծխախոտի բանվորների, հետագայում նաև

ատաղձագործների, տպարանների բանվորների, կոշկակարների, վարորդների արհմիությունները, որոնք 1925 թ. միավորվեցին և հիմնեցին Լիբանանի արհմիությունների բարձրագույն կոմիտե:

Այս շրջանում ձևավորվում են նաև առաջին մարքսիստական կազմակերպությունները: 1924 թ. սկզբներին Լիբանանի մի խումբ հայ մարքսիստներ Հարություն Մադեյանի գլխավորությամբ հիմնեցին «Սպարտակ» կոմունիստական կազմակերպությունը: Նույն տարվա հոկտեմբերի 24–ին լիբանանցի մի խումբ մարքսիստներ Ֆուադ Շիմալիի և Յուսուֆ Յազբեքի գլխավորությամբ հիմնեցին Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը: 1925 թ. Լիբանանի պատմության մեջ առաջին անգամ բացահայտ կերպով նշվեց մայիսի 1–ը: Այդ օրը լիբանանյան աշխատավորները կազմակերպեցին մայիսմեկյան ցույց:

1925 թ. մայիսին տեղի ունեցավ «Սպարտակի» միավորումը Լիբանանի և Սիրիայի կոմունիստական կուսակցությանը: Ստեղծվեց Կենտրոնական կոմիտե, որի մեջ մտան Յուսուֆ Յազբեքը, Ֆուադ Շիմալին, Հարություն Մադեյնը, Հայկազուն Բոյաջյանը և Էլի Թիբրը: Կուսակցության գործունեության մեջ մեծ տեղ գրավեց պայքարը երկրի անկախության, ազգային տնտեսության զարգացման և աշխատավոր ժողովրդի վիճակի բարելավման համար:

Ֆրանսիական տիրապետության դեմ մղվող պայքարում ներգրավվեց նաև լիբանանյան գյուղացիությունը՝ երբեմն դիմելով նաև զինված պայքարի:

Այդպես վարվեցին Բեկաայի շրջանի գյուղացիները, որոնք 1924 թ. զենքը ձեռքին սարերում զինված պայքար էին մղում ֆրանսիական զինվորական ջոկատների դեմ:

1925 թ. Սիրիայում սկսվեց համազգային ապստամբություն՝ ընդդեմ ֆրանսիական օկուպանտների, որն անմիջականորեն անդրադարձավ նաև Լիբանանի ներքաղաքական վիճակի վրա: Ֆրանսիական իշխանությունները, խաղալով կրոնական տարբերությունների վրա, ցանկանում էին Լիբանանի քրիստոնյաներին, այդ թվում և հայերին ոտքի հանել սիրիական ապստամբների դեմ: Սակայն այդ փորձերն ապարդյուն անցան: Բացառությամբ քրիստոնյա մարոնիների մի ոչ մեծ խմբի՝ լիբանանցիները սիրիական հայրենասերների դեմ դուրս չեկան: Դեռ ավելին՝ Բեյրութի բանվորները գործադուլ հայտարարեցին՝ ի համերաշխություն սիրիական ապստամբների:

4. Լիբանանի հայ համայնքի ձևավորումը

Հայերը Լիբանանում հաստատվել են վաղնջական ժամանակներից, և դարերի ընթացքում հայ համայնքը Լիբանանում մերթ ապրել է վերելքի ու ծաղկման, մերթ էլ վայրէջքի ու անկման շրջան: Ներկայումս գոյություն ունեցող լիբանանահայ համայնքը ձևավորվել է հիմնականում Առաջին համաշխարհային պատերազմի և նրան հաջորդած տարիներին: Հայ գաղթականների առաջին և ամենահոծ հոսանքը Լիբանանում հայտնվեց երիտթուրքերի կողմից 1915 թ. Արևմտյան Հայաստանում կիրառած ցեղասպանության քաղաքականության հետևանքով, երբ հարյուր հազարավոր հայեր բռնի տեղահան արվեցին և աքսորվեցին արաբական երկրներ, այդ թվում և Լիբանան: Դրան հաջորդեց հայ գաղթականների երկրորդ ալիքը Կիլիկիայից, երբ Ֆրանսիան 1922 թ. Կիլիկիան հանձնեց քեմալական Թուրքիային, և հայերը հարկադրված էին լքել իրենց տները և ապաստան գտնել գլխավորապես Սիրիայում ու Լիբանանում:

Հայերի հիմնական զանգվածը տեղավորվեց Բեյրութում, ինչպես նաև Տրիպոլիում, Սայդայում, Զահլեում, Ջունիում և այլուր: Լիբանանում 20–30–ական թթ. հաստատված հայերի թիվը մոտավորապես կազմում էր 85 հազ. մարդ:

Սկզբնական շրջանում գաղթականները գտնվում էին անասելի ծանր պայմաններում: Նրանք ստեղծում են այսպես կոչված վրանաքաղաքներ, այնուհետև կառուցում հյուղակներ: Աստիճանաբար, թեև շատ դանդաղ, հայերը հաղթահարում են իրենց առջև կանգնած դժվարությունները և ոտքի կանգնում: Նրանք բացում են արհեստանոցներ ու կրպակներ, իսկ հետագայում նաև արդյունաբերական ձեռնարկություններ և այդ բնագավառում հասնում աչքի ընկնող հաջողությունների: Տնտեսագետներն ընդգծում են, որ Լիբանանում արդյունաբերական հին ձևերի փոխարինումը նորերով կապված է ոչ միայն եվրոպացիների, այլև հայերի անվան հետ, և որ վերջիններս աչքի են ընկնում աշխատասիրությամբ, ջանասիրությամբ, տեխնիկական մեծ ունակություններով և փորձառությամբ:

Հայերն աստիճանաբար կարգավորում են նաև իրենց ազգային–մշակութային կյանքը: Հիմնվում են զանազան հայրենակցական ու մշակութային միություններ, բացվում դպրոցներ և մանկական ակումբներ, կազմակերպվում հայերեն լեզվով թերթերի և ամսագրերի հրատարակում և այլն: Անթիլիասում հաստատվում է Մեծի Տանն Կիլիկիո կա-

թողիկոսությունը, իրենց գործունեությունն են ծավալում հայկական քաղաքական կուսակցությունները՝ Հնչակյան սոցիալ–դեմոկրատական, Ռամկավար ազատական և Հայ հեղափոխական դաշնակցություն, որոնք Բեյրութում հաստատում են իրենց ղեկավար մարմինները: Ինչպես նշվեց, հայերը առաջատար դեր խաղացին Լիբանանի և Սիրիայի կոմունիստական կուսակցության ստեղծման մեջ, որի կազմավորումից հետո հիմնվեց հայկական սեկցիա:

Սկսեցին աշխուժանալ հայերի շփումներն իրենց հյուրընկալ արաբ ժողովրդի հետ: Նրանք աստիճանաբար ներգրավվում են լիբանանյան հասարակական–քաղաքական և տնտեսական կյանքի ոլորտը և տարեցտարի ընդլայնում համագործակցության շրջանակները արաբների հետ: Ֆրանսիական մանդատային իշխանությունները 1924 թ. օգոստոսին Սիրիայի և Լիբանանի քաղաքացիություն շնորհեցին Օսմանյան կայսրության նախկին բոլոր հպատակ հայերին: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ֆրանսիացիները ձգտում էին հայերին իրենց կողմը գրավել, դարձնել իրենց հենարան՝ ի հարկին ազգամիջյան թշնամանք հրահրել և հայերին օգտագործել ընդդեմ արաբների ազգային ձգտումների: Բայց նրանք հաջողություն չունեցան իրենց ծրագրերի իրագործման մեջ:

Լիբանանահայությունը երբեք գործիք չդարձավ ֆրանսիական գաղութարարների ձեռքում և երբեք հանդես չեկավ արաբների դեմ: Ընդհակառակը, լիբանանահայ ժողովրդական զանգվածները, լիբանանահայ դեմոկրատական ուժերը մշտապես կանգնած են եղել Լիբանանի ժողովրդի և նրա դեմոկրատական ուժերի կողքին և Լիբանանը համարելով իրենց երկրորդ հայրենիքը՝ մարտնչել նրա անկախության և ազատության համար:

III. ՄԵԾ ԼԻԲԱՆԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

1. 1926 թ. Սահմանադրության ընդունումը և Լիբանանի Հանրապետության հռչակումը

Լիբանանում, ինչպես նշվեց, կուտակվել էր մեծ դժգոհություն մանդատային իշխանությունների դեմ, որը համակեց նաև սոցիալական այն խավերին, որոնք սկզբունքորեն կողմնակից էին Ֆրանսիայի հետ համա-

գործակցելուն: Նրանք նույնպես պահանջում էին փոփոխություններ մտցնել Լիբանանի կառավարման համակարգում: 1924 թ. վերջին ստեղծվեց «Աշ–Շաբիբա ալ–Լուբնանիյա» կուսակցությունը, որը պահանջում էր Լիբանանի ժողովրդին իրավունք տալ ընտրելու իր պետության պրեզիդենտին և ընդունելու հիմնական օրենք՝ սահմանադրություն: Նման դիրքերում էր կանգնած նաև մեկ այլ կուսակցություն՝ Լիբանանյան լիգան, որը ստեղծվեց 1925 թ. վերջերին: Փոփոխություններ մտցնելու պահանջի հետ միասին այդ կուսակցությունն առաջադրեց «Մանդատային Ֆրանսիայի հետ՝ հանուն Մեծ Լիբանանի առաջադիմության» լոզունգը:

Ֆրանսիայի համար դժվար էր նախկին ձևով կառավարել, և անհրաժեշտ էին որոշ փոփոխություններ, որոնք, սկզբունքորեն չխախտելով ֆրանսիական մանդատային կառավարման բնույթը, ստեղծեին Լիբանանը լիբանանցիների կողմից կառավարելու տպավորություն: Այդ խնդրի իրագործմանն էր կոչված Լիբանանի սահմանադրության ընդունումը:

Ֆրանսիական նոր գլխավոր կոմիսար Անրի դը Ժուվենելը 1925 թ. հրավիրեց Ներկայացուցչական խորհրդի նիստ, որին հանձնարարվեց քննարկել և հաստատել Լիբանանի սահմանադրությունը: Մուսուլմանները, մանավանդ սունիները համայնքը, բացահայտորեն դեմ էին դրան՝ ելնելով այն բանից, որ սահմանադրությունը ապագա Լիբանանի հանրապետությունում իշխանությունը կկենտրոնացնի քրիստոնյա մարոնի համայնքի ձեռքում, և իրենք վերջնականապես կանջատվեն Սիրիայից: 1926 թ. հունվարի 5–ին Բեյրութում տեղի ունեցավ մուսուլմանական համայնքների ղեկավարների ժողով, որը որոշեց սահմանադրության մշակմանը չմասնակցել և միանալ Սիրիային: Համանման դիրք գրավեցին նաև Տրիպոլիի, Ջեբել Ամալի և Բաալբեկի մուսուլմանները:

Ներկայացուցչական խորհուրդը, իրեն հայտարարելով Սահմանադրական ժողով, 1926 թ. մայիսի 23–ին հաստատեց Լիբանանի սահմանադրությունը: Համաձայն սահմանադրության՝ «Մեծ Լիբանան» պետությունը վերակոչվեց Լիբանանի Հանրապետության: Ստեղծվեց երկպալատ պառլամենտ՝ բաղկացած դեպուտատների պալատից, որն ընտրվում էր չորս տարի ժամկետով, և սենատից, որն ընտրվում էր վեց տարի ժամկետով: Սենատը բաղկացած էր 16 սենատորներից, որից յոթը նշանակվում էին պրեզիդենտի կողմից: Լիբանանի պրեզիդենտն ընտրվում էր երկու պալատների համատեղ նիստում՝ երեք տարի ժամկետով: Նա կարող էր ընտրվել նաև երկրորդ անգամ: Պրեզիդենտն ինքն էր նշանակում կառավարության կազմը:

Սակայն սահմանադրությունը հաստատում էր, որ լիբանանյան իշխանությունների լիազորություններն իրականացվում են մանդատատեր պետության իրավունքների և պարտականությունների պահպանման հետ միասին: Լիբանանի Հանրապետության իշխանությունների քաղաքականությունը չէր կարող հակասել Ազգերի լիգայի մանդատով Ֆրանսիային տրված լիազորություններին: Պահպանվում էին ֆրանսիական գլխավոր կոմիսարի բոլոր իրավունքները, և Լիբանանն անմիջականորեն ենթակա էր նրան: Թեև կազմավորվում էր լիբանանյան կառավարություն, սակայն այն իրավունք չուներ զբաղվելու արտաքին քաղաքականության, ազգային պաշտպանության և ֆինանսական հարցերով, որոնք մնում էին Ֆրանսիայի իրավասության ներքո: Ֆրանսիական գլխավոր կոմիսարը պահպանում էր վետոյի իրավունքը, որ նա կարող էր կիրառել լիբանանյան կառավարության և պրեզիդենտի կողմից ընդունվող բոլոր օրենքների և որոշումների նկատմամբ, կարող էր ցրել պառլամենտը, դադարեցնել սահմանադրության գործողությունը, Լիբանանը կառավարել հատուկ դեկրետների օգնությամբ և այլն:

1926 թ. մայիսի 26-ին դեպուտատների պալատը և սենատը համատեղ նիստում Լիբանանի Հանրապետության պրեզիդենտ ընտրեցին ուղղափառ քրիստոնյա Շառլ Դաբբասին: Նա կառավարություն կազմելը հանձնարարեց քրիստոնյա մարոնի Օգոստոս Ադիբ փաշային:

Ֆրանսիացիների կողմից հաստատված Լիբանանի պետական այս համակարգը կայուն չէր և հաճախակի փոփոխության էր ենթարկվում գլխավոր կոմիսարի կողմից: 1927 թ. սենատը վերացվեց, հաստատվեց միապալատ պառլամենտ, որի դեպուտատների միայն երկու երրորդն էր ընտրվում, իսկ մեկ երրորդը հաստատվում էր պրեզիդենտի կողմից՝ ըստ Ֆրանսիական գլխավոր կոմիսարի ներկայացրած ցուցակի: Որոշ չափով կրճատվեցին պառլամենտի օրենսդրական իրավունքները, և, ընդհակառակը, ընդլայնվեցին պրեզիդենտի իրավասության շրջանակները: 1929 թ. պրեզիդենտի լիազորության ժամկետը երեք տարվա փոխարեն սահմանվեց վեց, սակայն նա իրավունք չուներ երկրորդ անգամ ընտրվելու: Միաժամանակ դժվարություններ մտցվեցին պառլամենտի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու հարցում: Այս հանգամանքը և ընդհանրապես երկրում տիրող վիճակը հաճախ առաջացնում էին պառլամենտի դեպուտատների դժգոհությունը, որը երբեմն ընդդիմության բնույթ էր կրում: Այդպես եղավ 1930 թ. մարտին, երբ պառլամենտն անվստահություն հայտնեց էմիլ էդդեի կառավարությանը:

2. Ներքաղաքական իրադրության սրումը Լիբանանում 1930–ական թվականներին: Ֆրանսիական մանդատային իշխանությունների անցումը կոշտ քաղաքականության

Սահմանադրության ընդունումը, պրոզիդենտի ընտրությունը և կառավարության ձևավորումը թեև որոշակի առաջընթաց քայլ էին, այդուհանդերձ, անդորրություն չբերեցին Լիբանանին: Չէին լուծվել Լիբանանի առջև կանգնած հիմնական խնդիրները, ինչպես՝ անկախության և Ֆրանսիայի հետ հարաբերությունների հարցը, շարունակում էին պահպանվել ինչպես ներհամայնքային, այնպես էլ միջհամայնքային հակասությունները և այլն:

Իրենց ընդդիմությունը ֆրանսիական իշխանությունների քաղաքականության դեմ չէին դադարեցրել Լիբանանի մուսուլմանական համայնքները: Անգամ Լիբանանի սահմանադրության ընդունումից հետո նրանք չէին հրաժարվել Սիրիային միանալու մտքից:

Հարաբերությունները բավականին սրված էին նաև մարոնի համայնքի ներսում: Մարոնիների մոտ ձևավորվել էր երկու թև: Առաջին թևը գլխավորում էր էմիլ էդդեն, որը վայելում էր մանդատային իշխանությունների վստահությունն ու աջակցությունը: Նա հաշվի չէր առնում 1920 թ. հետո Լիբանանում առաջացած փոփոխությունները և նախկինի պես այն դիտում էր քրիստոնյաների հայրենիք, մերժում արաբական նացիոնալիզմը և գտնում, որ մահմեդական արաբները վտանգ են ներկայացնում Լիբանանի համար: Նա գտնում էր, որ Լիբանանը պատկանում է ոչ թե արաբական աշխարհին, այլ Միջերկրական ծովի ավազանին, ինչպես Ֆրանսիան:

Մարոնիների մյուս թևը գլխավորում էր Բիշարա ալ–Խուրին, որը նույնպես լավ հարաբերությունների մեջ էր ֆրանսիացիների հետ: Սակայն, լինելով իրատես գործիչ, նա ելնում էր այն բանից, որ զուտ քրիստոնյա Լիբանանը իր սահմանափակ տերիտորիայով գոյության հեռանկար չունի, և որ Լիբանանի ապագան կախված է Մեծ Լիբանանի մեջ միավորված քրիստոնյաների և մահմեդականների համագործակցությունից: Նա գտնում էր, որ անհրաժեշտ է արաբական նացիոնալիստների հետ համագործակցության եզրեր գտնել և քրիստոնյաների ու մուսուլմանների միջև հաստատել պարտնյորների հարաբերություն: Միաժամանակ նա շեշտում էր, որ մուսուլմանները և արաբական նացիոնալիստներն իրենց

հերթին չպետք է ձգտեն անջատվել և միավորվել Սիրիայի հետ: Էմիլ Էդդեին և Բիշարա Խուրիին բաժանում էր նաև վերաբերմունքը ֆրանսիական մանդատի նկատմամբ: Էմիլ Էդդեն ֆրանսիական մանդատի պահպանումը համարում էր Լիբանանի անկախության երաշխիք, մինչդեռ Բիշարա Խուրին ֆրանսիական մանդատի գոյությունը համարում էր քրիստոնյաների և մուսուլմանների միջև համագործակցության հաստատմանը խոչընդոտող լուրջ գործոն, քանի որ մուսուլմանները սկզբունքորեն դեմ էին մանդատին: Մրցակցությունը Էմիլ Էդդեի և Բիշարա Խուրիի միջև հանգեցրեց այն բանին, որ 1932 թ. ձախողվեցին պրեզիդենտի ընտրությունները, ինչը սրեց քաղաքական մթնոլորտը Լիբանանում:

Լարվածության սրմանը և պահպանմանը նպաստեց նաև 1929–1933 թ. տնտեսական ճգնաժամը, որը ծանր հարված է Լիբանանի թույլ տնտեսությանը: Խիստ վատացավ ժողովրդական զանգվածների վիճակը, տնտեսական կյանքը կարծես թե կանգ առավ, փակվեցին բազմաթիվ ձեռնարկություններ և արհեստանոցներ, աճեց գործազրկությունը և այլն:

Ահա այս բոլոր գործոնները, միասին վերցրած, Լիբանանում ստեղծեցին անկայուն վիճակ և խիստ լարված հարաբերություններ: Ֆրանսիական իշխանությունները դիմեցին կոշտ քայլերի: 1932 թ. մայիսի 9–ին ֆրանսիական գլխավոր կոմիսար Անրի Պոնսոն կախակայեց սահմանադրության գործողությունը, ցրեց պառլամենտը, իսկ պրեզիդենտի ընտրությունները հետաձգեց անորոշ ժամանակով:

Մանդատային իշխանությունների այս քայլը խոր վրդովմունք առաջացրեց երկրում: Դժգոհ էր ոչ միայն մուսուլմանական, այլև քրիստոնյա հասարակայնությունը: Երկրում կուտակվել էր պայթուցիկ նյութ, որը կարող էր բռնկվել յուրաքանչյուր պահին: Չգտելով խուսափել նման իրավիճակից՝ գլխավոր կոմիսարը հարկադրված էր մի փոքր նահանջել: 1934 թ. հունվարի 2–ին գործողության մեջ դրվեց Լիբանանի ժամանակավոր սահմանադրությունը, որով վերականգնվում էր պառլամենտական կյանքը: Սակայն նրանում այնքան վերապահումներ կային, որոնք այդ բոլորը ձևական էին դարձնում: Այսպես, օրինակ՝ վերացվում էր կառավարության պատասխանատվությունը պառլամենտի առաջ, պրեզիդենտը ոչ թե ընտրվում, այլ նշանակվում էր գլխավոր կոմիսարի կողմից և այլն: Այս իրավիճակը պահպանվեց մինչև 1937 թ., երբ մանդատային իշխանությունները հարկադրված նոր զիջման դիմեցին: Հունվարի 4–ին վերականգնվեց 1926 թ. սահմանադրությունը:

3. Քաղաքական նոր կուսակցությունների ձևավորումը

30–ական թվականներին Լիբանանում հանդես եկան մի շարք քաղաքական կուսակցություններ և բլոկ–կուսակցություններ, որի հետևանքով աշխուժացավ քաղաքական կյանքը Լիբանանում, ավելի նպատակասլաց ու կազմակերպված դարձավ պայքարը ֆրանսիական մանդատի վերացման համար: Նոր կուսակցությունների ձևավորումով նաև ավելի հստակ դարձավ ջրբաժանը տարբեր քաղաքական ուժերի ու հոսանքների միջև:

1932 թ. Լիբանանի քաղաքական կյանքում հայտնվեց Ազգային–սոցիալական կուսակցությունը: Նրա հիմնադիրն էր Անտուան Սաադեն, որն անձնական կապեր ուներ իտալական ֆաշիստների ղեկավար Մուսոլինիի հետ: Այս կուսակցությունն ավելի շատ հայտնի էր Սիրիական ազգային սոցիալական կուսակցություն անվամբ: Նա իր շարքերում միավորում է գլխավորապես ուղղափառ քրիստոնյաներին և բողոքականներին: Կուսակցությունը հանդես էր գալիս հանուն Մեծ Սիրիայի, որի մեջ պետք է միավորվեին Սիրիան, Իրաքը, Հորդանանը, Լիբանանը, Պաղեստինը և Կիպրոսը: Նա կանգնած էր ծայրահեղական աջ դիրքում և չէր խորշում տեռորի քաղաքականությունից:

Լիբանանում ձևավորված կուսակցությունների մեջ իր խաղացած դերով աչքի էր ընկնում «Ալ–Քաթաիբ ալ–Լուբնանիյան»՝ «Լիբանանյան փաղանգները», որի հիմքերը դրվեցին 1934 թ., սակայն կազմակերպչական ձևավորումն ավարտվեց 1936 թ.. Այն հիմնվեց Պյեր Ժմայելի կողմից: Նրա շարքերում միավորվել են քրիստոնյա մարոնի գործարար շրջանների, մանր բուրժուազիայի ներկայացուցիչներ, առևտրականներ, փաստաբաններ, ինչպես նաև բանվորներ ու գյուղացիներ: Դա կիսառազմականացված կազմակերպություն է, որը պաշտպանում է մարոնի խոշոր բուրժուազիայի, կալվածատերերի, ինչպես նաև միջին ու մանր բուրժուազիայի շահերը: Այն բացարձակապես դեմ է որևէ միության արաբական երկրների հետ, ձգտում է մեկուսացնել Լիբանանը արաբական աշխարհից և ամրապնդել կապերը արևմտյան պետությունների հետ:

Համաձման մի կուսակցություն, ի պատասխան փաղանգավորների, 1937 թ. ստեղծեցին մուսուլմանները, որը կոչվում էր «Նաջջադե»: Նրա ղեկավարն էր Ադնան Հաքիմը: «Նաջջադեն» մուսուլմանական, գլխավորապես Բեյրութի սուննի երիտասարդության կազմակերպու-

թյունն էր: Այն դեմ էր Լիբանանը արևմտյան տերությունների բլոկին այս կամ այն ձևով միավորելու գծին, հանդես էր գալիս արաբական երկրների հետ Լիբանանի մերձեցման օգտին և պահանջում, որ պրեզիդենտի պաշտոնն ըստ հերթականության գրավեն քրիստոնյան և մուսուլմանը:

30–ական թվականներին Լիբանանի քաղաքական ասպարեզում գործում էին նաև բլոկ–կուսակցություններ: 1934 թ. ձևավորվեց Սահմանադրական բլոկը Բիշարա ալ–Խուրիի գլխավորությամբ: Դա գլխավորապես մարոնիներից կազմված միություն էր, թեև նրա շարքերում կային նաև այլ համայնքների, այդ թվում և մուսուլմանական, ներկայացուցիչներ: Բլոկն առանձնապես սերտ կապեր չէր պահպանում մանդատային իշխանությունների հետ, կողմնակից էր մուսուլմանների հետ համագործակցության և, ի տարբերություն մարոնիների մյուս կուսակցությունների, ավելի ճկուն քաղաքականություն էր վարում: Նրա շարքերում միավորվել էին խոշոր առևտրականներ, կալվածատերեր, փաստաբաններ և լիբանանյան վերնախավի այլ ներկայացուցիչներ:

Մեկ տարի անց՝ 1935 թ., ստեղծվեց Ազգային բլոկը՝ էմիլ էդդեի գլխավորությամբ: Դա մարոնի առևտրաֆինանսական բուրժուազիայի և կալվածատերերի կուսակցությունն էր, որի գործունեության մեջ մեծ դեր էր խաղում մարոնի հոգևորականությունը: Այն սերտորեն կապված էր և համագործակցում էր ֆրանսիական մանդատային իշխանությունների հետ՝ հանդիսանալով վերջիններիս ամենահուսալի հենարանը:

Այս կուսակցություններից շատերը հետագայում վերածվեցին ազդեցիկ ուժի և կարևոր դերակատարում ունեցան անկախ Լիբանանի պետական և քաղաքական կյանքում: Կուսակցությունների հետ միասին քաղաքական ասպարեզ իջան նաև մի շարք հասարակական ու մշակութային կազմակերպություններ ու միություններ: Դրանցից հիշատակության է արժանի 1937 թ. ամռանը հիմնված «Ֆաշիզմի դեմ պայքարի լիգան», որը գլխավորում էր Լիբանանի հայտնի հասարակական գործիչ, ճարտարապետ Անտուան Թաբիթը:

4. Ֆրանս–լիբանանյան 1936 թ. պայմանագիրը

Լիբանանում ու Սիրիայում ծավալված ազգային–ազատագրական պայքարը և ֆրանսիական տիրապետության ու մանդատային կառավարման դեմ կուտակված խիստ դժգոհությունը ստիպեցին Ֆրանսի-

ային՝ զիջումներ կատարել և իր հարաբերությունները Լևանտի այդ երկու երկրների հետ կարգավորել պայմանագրային հիմքի վրա:

Դրանում իր դերը խաղաց նաև այն հանգամանքը, որ Անգլիան դեռևս 1930 թ. Իրաքի, իսկ 1936 թ.՝ Եգիպտոսի հետ կնքված պայմանագրերով նոր հիմքի վրա էր կառուցել իր հարաբերությունները այդ երկու երկրների հետ: Ճանաչելով նրանց «անկախությունը»՝ Անգլիան այդ պայմանագրերով կարողացել էր հիմնականում պահպանել իր տիրապետությունն այդ երկու երկրների վրա: Դա յուրատեսակ նախադեպ էր ստեղծել, որից օգտվեց նաև Ֆրանսիան:

Ֆրանսիան, 1936 թ. սեպտեմբերին «Բարեկամության և օգնության պայմանագիր» կնքելով Սիրիայի հետ, նույն թվականի նոյեմբերի 13–ին նման պայմանագիր կնքեց նաև Լիբանանի հետ, որը հայտնի է նաև որպես մանդատի վերացման և Լիբանանի անկախության հաստատման պայմանագիր:

Պայմանագիրը 1936 թ. նոյեմբերի 13–ին Բեյրութում ստորագրեցին Լիբանանի պրեզիդենտ էմիլ էդդեն, որն այդ պաշտոնը զբաղեցնում էր 1936 թ. հունվարից, և ֆրանսիական գլխավոր կոմիսար կոմս Դամիեն դը Մարտելը: Պայմանագիրը սահմանում էր երեք տարվա անցումային շրջան՝ մանդատի վերացման և Լիբանանը Ազգերի լիգայի անդամ ընդունելու համար: Ֆրանսիան հրաժարվում էր Սիրիայի և Լիբանանի այսպես կոչված «Ընդհանուր տնտեսական շահերի» հաստատությունը ղեկավարելուց, որը Ֆրանսիայի կարևոր զիջումներից մեկն էր: Այդ հաստատության տնօրինության տակ էին գտնվում մաքսատան, կապի և վալյուտայի հարցերը, որոնք, ըստ պայմանագրի, անցնելու էին Լիբանանի և Սիրիայի անմիջական կառավարման ներքո: Լիբանանը մնում էր Ֆրանսիայի դաշնակիցը և, որպես այդպիսին, նրա տրամադրության տակ դնում իր ամբողջ տերիտորիան՝ ծովային և օդային տարածությունները, թե՛ խաղաղ և թե՛ պատերազմի ժամանակ: Լիբանանի բանակը կառուցվելու էր ֆրանսիական ղեկավարությամբ և տեխնիկական օգնությամբ: Լիբանանում ֆրանսիական դեսպանը օգտվելու էր ավագության իրավունքից:

Որպես հավելված՝ պայմանագրին կցվեց էմիլ էդդեի և դը Մարտելի միջև փոխանակված նամակը, որով Լիբանանի հանրապետությունը երաշխավորում էր բոլոր կրոնական համայնքների արդարացի ներկայացուցչությունը երկրի կառավարման համակարգում:

1936 թ. նոյեմբերի 17–ին Լիբանանի պառլամենտը վավերացրեց սույն պայմանագիրը:

Մնում էր, որ այն վավերացներ Ֆրանսիական պառլամենտը: Սակայն Ֆրանսիան չէր շտապում վավերացնել այն, ինչը կապված էր Ֆրանսիայում ներքաղաքական իրադրության փոփոխության հետ:

Երբ 1936 թ. ստորագրվեց պայմանագիրը, Ֆրանսիայում իշխանության գլուխ էր գտնվում ժողովրդական ճակատի կառավարությունը՝ սոցիալիստ Լեոն Բլյումի գլխավորությամբ, որն ընդհանուր առմամբ վարում էր դեմոկրատական քաղաքականություն և կողմնակից էր կարգավորել Ֆրանսիայի հարաբերություններն իր գաղութների և ենթամանդատային երկրների հետ վերջիններիս իրավունքները որոշ չափով ընդլայնելու ուղիով: Հենց ժողովրդական ճակատի և նրա կառավարության այդ քաղաքականության շնորհիվ հնարավոր եղավ 1936 թ. ստորագրել պայմանագրեր Սիրիայի և Լիբանանի հետ:

Սակայն ֆրանսիական պահպանողական ուժերը և ֆրանսիական գաղութային տիրապետության պահպանման մոլի կողմնակիցները խստորեն քննադատում էին Լեոն Բլյումի կառավարությանը՝ գտնելով, որ նա չափազանց մեծ զիջումներ է կատարել՝ ի վնաս «Ֆրանսիայի ազգային շահերի»: Այդ մեղադրանքն անհիմն էր, քանի որ Լիբանանին և Սիրային որոշ զրիջումներ կատարելով հանդերձ՝ պայմանագիրը սահմանափակում էր Լիբանանի, ինչպես նաև Սիրիայի անկախությունն ու ինքնիշխանությունը և պահպանում Ֆրանսիայի տիրապետությունը:

Ֆրանսիական պահպանողական ուժերին երեք տարի անընդհատ հաջողվում էր ձգձգել ֆրանս–լիբանանյան պայմանագրի վավերացումը պառլամենտի կողմից: Իսկ երբ 1939 թ. Ֆրանսիայում ընկավ ժողովրդական ճակատի կառավարությունը, և իշխանության գլուխ եկան նոր ուժեր, գործնականում անհնարին դարձավ պայմանագրի վավերացումը, և ֆրանսիական կառավարությունը 1939 թ. հունվարին պաշտոնապես հայտարարեց, որ հրաժարվում է այդ պայմանագրից: Իսկ դա նշանակում էր, որ ուժի մեջ էր մնում կառավարման մանդատային վարչակարգը՝ իր դասական ձևով:

1936 թ. պայմանագիրը, անշուշտ, մի քայլ առաջ էր Լիբանանի անկախության նվաճման ճանապարհին: Սակայն, մյուս կողմից, սխալ կլիներ գերագնահատել նրա նշանակությունը, քանի որ այն ուժի մեջ էր թողնում Ֆրանսիայի տիրապետող դիրքերը Լիբանանում:

IV. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄԸ (1939–1945 թթ.)

1. Լիբանանը երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում (1939–1941 թթ.)

Լիբանանը երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ ներգրավվեց որպես ֆրանսիական ենթամանդատային երկիր:

Պատերազմն սկսվելուց հետո Ֆրանսիան Լիբանանում անմիջապես մտցրեց արտակարգ դրություն: Նոր գլխավոր կոմիսար Գաբրիել Պյուոյի կարգադրությամբ 1939 թ. սեպտեմբերի 21–ին ցրվեց լիբանանյան պառլամենտը, և կախակայվեց սահմանադրությունը: Լիբանանի կառավարությունը փոխարինվեց պետական քարտուղարությամբ: Գլխավոր կոմիսարը էմիլ էդդեին նշանակեց պրեզիդենտ, իսկ Աբդալլահ Բայհումին՝ պետական քարտուղար: Մանդատային իշխանությունները սկսեցին առաջադիմական և դեմոկրատական կազմակերպությունների գործիչների հալածանքը: Արգելվեց «Ֆաշիզմի դեմ պայքարի լիգայի» գործունեությունը, փակվեցին մի շարք թերթեր, մի շարք առաջադեմ արաբ և հայ գործիչներ ձերբակալվեցին և բանտ նետվեցին: Այդ գործողությունները չէին արդարացվում պատերազմական իրադրությամբ: Ֆրանսիական գաղութարարները պարզապես օգտագործեցին պատերազմի հանգամանքը՝ իրենց դիրքերը Լիբանանում ավելի ամրապնդելու և դեմոկրատական ու ազգային–հայրենասիրական ուժերին նոր հարված հասցնելու համար:

Խիստ վատացավ երկրի տնտեսական վիճակը: Պարենամթերքը գլխավորապես օգտագործվում էր ֆրանսիական բանակի կարիքների համար: Երկրի բնակչությունն անհրաժեշտ սննդամթերքի սուր կարիք էր զգում: Լիբանանում ծայր առավ դժգոհությունը, 1941 թ. սկզբներին տարբեր քաղաքներում տեղի ունեցան ցույցեր և գործադուլներ: Էմիլ էդդեն և Աբդալլահ Բայհումը 1941 թ. ապրիլին հարկադրված էին հրաժարական տալ: Ֆրանսիական գլխավոր կոմիսար գեներալ Դենցը, որն այդ պաշտոնը ստանձնել էր 1940 թ. դեկտեմբերին, մարոնի դատավոր Ալֆրեդ Նակկաշին 1941 թ. ապրիլի 9–ին նշանակեց Լիբանանի պրեզի-

դենտ: Ստեղծվեց նաև կոմիտե, որը կատարում էր կառավարության ֆունկցիաներ: Կոմիտեի նախագահ նշանակվեց Ահմադ Դաուկը:

Պատերազմը Ֆրանսիայի համար աղետալի վախճան ունեցավ: Նա պարտություն կրեց և 1940 թ. հունիսին ընդունեց իր կապիտուլյացիան: Ֆրանսիական մի խումբ գործիչներ մարշալ Ֆիլիպ Պետենի գլխավորությամբ, որոնք եկան իշխանության գլուխ, սկսեցին համագործակցել ֆաշիստական Գերմանիայի հետ: Կազմվեց կառավարություն, որի նստավայրը դարձավ Վիշի առողջարանային քաղաքը: Դրա հետևանքը եղավ այն, որ ֆրանսիական գաղութային իշխանությունները տեղերում նույնպես իրենց հավատարմությունը հայտնեցին նացիստական Գերմանիայի հետ Պետենի կնքած զինադադարի պայմաններին և Վիշիի կառավարությանը, մի կառավարություն, որը չէր ընդունվում ֆրանսիական ժողովրդի կողմից և համարվում էր դավաճանների կառավարություն:

Լիբանանի ֆրանսիական մանդատային իշխանությունները նույնպես ընդունեցին զինադադարի պայմանները և հայտնեցին, որ ենթարկվում են Վիշիի կառավարությանը:

1940 թ. հունիսի 7–ին Սիրիայում և Լիբանանում ֆրանսիական ռազմական ուժերի հրամանատարի պոստում գեներալ Վեյգանին փոխարինած գեներալ Միթելհաուզերը արձակեց մի հրաման, որտեղ ասվում էր, որ ֆրանս–գերմանական զինադադարի պայմանների համաձայն մանդատային տերիտորիաների կարգավիճակում ոչ մի փոփոխություն տեղի չի ունենալու, հրաման է տրված դադարեցնել պատերազմական գործողությունները, ֆրանսիական դրոշը ծածանվելու Լիբանանի և Սիրիայի վրա, և Ֆրանսիան շարունակելու է կատարել իր առաքելությունը: Միթելհաուզերի հայտարարությունից հետևում էր, որ Ֆրանսիան լիովին պահպանում էր մանդատային պետության իր բոլոր իրավունքները, և Լիբանանն ու Սիրիան նախկինի պես համարվում էին նրա ենթամանդատային տերիտորիաները:

Ֆրանսիայի կապիտուլյացիան, Լևանտում ֆրանսիական իշխանությունների հավատարմությունը Վիշիի կառավարությանը, Միթելհաուզերի հրամանը պատերազմական գործողությունները Գերմանիայի դեմ դադարեցնելու և ֆրանս–գերմանական զինադադարին միանալու մասին բոլորովին նոր իրադրություն ստեղծեցին Մերձավոր Արևելքում, որը լուրջ կերպով անհանգստացրեց Անգլիային: Նա Ֆրանսիայի կապիտուլյացիայից հետո ըստ էության մնացել էր առանց լուրջ դաշնակ-

ցի: Անգլիան անհանգստանում էր, որովհետև լայն հնարավորություններ էին ստեղծվում Սիրիա և Լիբանան գերմանա–իտալական ներթափանցման համար: Նրան մտահոգում էր նաև Արաբական Արևելքում ֆաշիստական Գերմանայի և Իտալիայի դեմ միայնակ պայքարելու մռայլ հեռանկարը: Այդ հնարավորությանն իրականություն դառնալը խափանելու համար Անգլիան դիմեց մի շարք կանխարգելիչ քայլերի:

Պատերազմական գործողությունները ֆաշիստական երկրների դեմ դադարեցնելու մասին Միթելհաուզերի արձակած հրամանից երեք օր անց՝ 1940 թ. հուլիսի 1–ին, հրապարակվեց բրիտանական կառավարության հայտարարությունը, որտեղ ասված էր՝ բրիտանական կառավարությունը ենթադրում է, թե Միթելհաուզերի հրամանը չի նշանակում, որ եթե Գերմանիան և Իտալիան փորձեն օկուպացնել Սիրիան ու Լիբանանը, ապա ֆրանսիական ուժերը նրանց դիմադրություն ցույց չեն տա: Անգլիական կառավարությունը զգուշացնում էր, որ «ինքը թույլ չի տա որևէ թշնամի պետության գրավել Սիրիան կամ Լիբանանը, կամ նրանց օգտագործել որպես հենակետ»: Բրիտանական կառավարության այդ կարևոր հայտարարության վերջում ասված էր, որ եթե ֆրանսիական իշխանությունները թույլ տան առանցքի երկրներին՝ Սիրիան ու Լիբանանը օգտագործելու իրենց ագրեսիվ նպատակների համար, ապա Մեծ Բրիտանիան իրեն ազատ է համարելու դիմելու այնպիսի գործողությունների, որպիսիք ինքը նպատակահարմար կգտնի:

Սակայն ֆրանսիական իշխանություններն անտեսեցին բրիտանական այդ լուրջ նախազգուշացումները և ուժեղացրին իրենց համագործակցությունն առանցքի երկրների հետ: Նրանց հաջորդ քայլը եղավ դեմոկրատական հայացքների տեր պաշտոնյաներին աշխատանքից հեռացնելը և նրանց փոխարինումը այնպիսի մարդկանցով, որոնք համակրում էին առանցքի երկրներին և հավատում հիտլերյան «նոր կարգին»: Այդ գործում հատկապես մեծ եռանդ էր ցուցաբերում Լևանտում վիշիական գլխավոր կոմիսար Դենցը: Նա մի կողմից հովանավորում էր ֆաշիստամետ տարրերին, մյուս կողմից՝ ուժեղացնում բռնություններն ու հալածանքները դեմոկրատական ուժերի նկատմամբ: Դենցը նույնիսկ արգելեց Լիբանանում և Սիրիայում լսել բրիտանական ռադիոհաղորդումները:

Անգլիան դիմեց մի շարք հակաքայլերի: Նա տնտեսական շրջափակման ենթարկեց Սիրիան և Լիբանանը, սահմանափակեց կապը Պաղեստինի և ֆրանսիական մանդատային երկրների միջև, փակեց Կիրկուկ–Տրիպոլի նավթամուղը: Լիբանանում խիստ վատացավ տնտեսա-

կան վիճակը, մթերքները զգալիորեն պակասեցին, գները շեշտակի բարձրացան: Դրանից առաջին հերթին տուժում էին աշխատավորական խավերը: Բեյրութում, Տրիպոլիում, Սայդայում և այլ վայրերում ծայր առան գործադուլներն ու ցույցերը՝ ուղղված ֆրանսիական մանդատային իշխանությունների քաղաքականության դեմ:

Ներքաղաքական դրությունն ավելի լարվեց այն բանից հետո, երբ ֆրանսիական իշխանությունները գերմանական ինքնաթիռներին թույլատրեցին օգտագործել Լևանտի օդանավակայանները:

Իսկ ինչպիսի՞ն էր Լիբանանի տարբեր քաղաքական հոսանքների դիրքորոշումը պատերազմի հարցում, ո՞ւմ էին նրանք պաշտպանում և ի՞նչ նպատակներ էին հետապնդում:

Այդ հարցում Լիբանանում միասնական տեսակետ գոյություն չուներ:

Լիբանանի տիրող վերնախավի, ֆեոդալ–կալվածատերերի և կոմպրադորական բուժուազիայի ներսում կային որոշ տարրեր, որոնք համակրում էին հիտլերյան «նոր կարգին» և ցանկալի համարում գերմանացիների հաղթանակը: Դրանք Լիբանանում Վիշիի ռեժիմի կողմնակիցներն էին, որոնք հույս ունեին օգտվել գերմանական զենքի հաղթանակից և ամրապնդել իրենց քաղաքական կարգավիճակն ու տնտեսական բարեկեցությունը: Չպետք է մոռանալ, որ դա այն ժամանակներն էին, երբ գերմանական հորդաները պատերազմի բոլոր թատերաբեմերում հաղթական էին, և ոմանց թվում էր, թե աշխարհում չկա մի այնպիսի ուժ, որն ի վիճակի լիներ կանգնեցնել այդ հաղթարշավը: Իսկ լիբանանյան հետադիմական ուժերի համար գերմանական կառավարման մեթոդները և հիտլերյան «նոր կարգը» թվում էին ամենահուսալի զենքը ժողովրդավարական ուժերը զսպելու, առաջադիմական շարժումները ճնշելու և իրենց տիրապետությունը երկրի ներսում անսասան պահելու համար:

Լիբանանում կային որոշ ուժեր, որոնք երկրի բախտը կապում էին Անգլիայի և անգլո–սաքսոնական աշխարհի հետ: Նրանք տվյալ պայմաններում, երբ ուժեղացել էին ֆաշիստական Գերմանիայի ու Իտալիայի սպառնալիքները Լիբանանին, դեմ չէին, եթե Անգլիան գրավեր Լիբանանը:

Սակայն Լիբանանի ժողովրդի ճնշող մեծամասնությունը, բոլոր ժողովրդավարական և առաջադիմական ուժերը դեմ էին թե՛ գերմանական, թե՛ ֆրանսիական և թե՛ անգլիական տիրապետությանը: Ինչպես նկատել է արաբ պատմաբան Ալբերտ Հուրանին «Սիրիան և Լիբանանը» իր աշխատության մեջ, Լիբանանի բնակչության ճնշող մեծամասնությունն ուզում էր ազատվել ֆրանսիական և ամեն մի օտար տիրապետությունից:

2. Անգլիական և «Ազատ Ֆրանսիայի» զորքերի մուտքը Լիբանան և գեներալ Կատրուի դեկլարացիան Լիբանանի անկախության վերաբերյալ

Երբ Ֆրանսիան 1940 թ. հունիսի 22–ին Կոմպյենում Գերմանիայի հետ ստորագրեց կապիտուլյացիայի ակտը, և ստեղծվեց Վիշիի կառավարությունը, ոչ բոլոր ֆրանսիացիներն էին, որ հաշտվեցին այդ ազգային խայտառակության հետ և ծառայության անցան Պետեն–Լավալ վիշիական կառավարությանը: Ընդհակառակը, նրանց ճնշող մեծամասնությունը դեմ էր դրան, որի հիմքի վրա Ֆրանսիայում ծնավորվեց Ռեզիստանսը՝ Դիմադրական շարժումը: Իսկ ֆրանսիական քաղաքական և զինվորական հայրենասերների մի խումբ՝ գեներալ Շառլ դը Գոլի գլխավորությամբ, որը հրաժարվեց ընդունել կապիտուլյացիայի պայմանները և համագործակցել ֆաշիստական Գերմանիայի հետ, շարունակեց պայքարը և 1940 թ. հունիսի 28–ին Լոնդոնում հռչակեց «Ազատ Ֆրանսիայի» ստեղծումը: Շառլ դը Գոլը դարձավ նրա ղեկավարը: «Ազատ Ֆրանսիայի» և Անգլիայի միջև հաստատվեց սերտ ռազմական և քաղաքական համագործակցություն, և նրանք դարձան դաշնակիցներ հիտլերյան Գերմանիայի դեմ մղվող պայքարում:

Անգլիան և «Ազատ Ֆրանսիան» չէին կարող թույլ տալ, որ Սիրիան և Լիբանանը վերածվեին ֆաշիստական հենակետի Արաբական Արևելքում:

1941 թ. հունիսի 8–ին անգլիական և ազատֆրանսիական զորքերն անցան հարձակման և պատերազմական գործողություններ սկսեցին Սիրիայում ու Լիբանանում, որը Վիշիի կառավարությունը համարեց «ոչնչով չհրահրված և ամոթալի ագրեսիա»: Պատասխանելով այդ մեղադրանքին՝ անգլիական «Թայմսը» նշում էր, որ «ո՛չ Դը Գոլի զորքերը, ո՛չ անգլիացիները չէին խախտի սիրիական սահմանը, եթե չհրագործվեր այդ երկիրը զավթելու գերմանական պլանը»:

Դենցը համառ դիմադրություն է ցույց տալիս, բայց անգլիացիները և ազատֆրանսիական զորքերը առաջ են շարժվում՝ վայելելով տեղական ժողովրդի համակրանքն ու աջակցությունը: Այդ առումով հատկանշական էր Բեյրութի բնակչության դիրքը: Բեյրութցիները ցույցեր էին կազմակերպում՝ պահանջելով դադարեցնել դիմադրությունը անգլո–ազատֆրանսիական դաշնակիցներին, բոլոր զորքերը դուրս բերել

քաղաքից և Բեյրութը հայտարարել բաց քաղաք: Դենցը ճնշում է այդ ցնցյցերը՝ ձերբակալելով մայրաքաղաքի շատ ականավոր դեմքերի, սակայն դա չփրկեց նրան:

Դենցի դրությունը դառնում էր անհույս: Դաշնակիցների զորքերը մեկը մյուսի հետևից գրավեցին Լիբանանի քաղաքներն ու գյուղերը, և 1941 թ. հուլիսի 8–ին Դենցը հաշտություն խնդրեց դաշնակիցներից: Հուլիսի 11–ին դադարեցվեց կրակը, իսկ հուլիսի 14–ին Դենցն անձնատուր եղավ: Հաջորդ օրը՝ հուլիսի 15–ին, Ակրայում ստորագրվեց հաշտության համաձայնագիր: Անգլիական և «Ազատ Ֆրանսիայի» զորքերը գրավեցին Սիրիան և Լիբանանը, իսկ վիշիական զորքերը հեռացան այդ երկու երկրներից: Դաշնակիցների տնօրինության տակ դրվեցին Լիբանանի նավահանգիստները, երկաթուղային և խճուղային ճանապարհները, զորանոցները և այլն: Լիբանանյան երիտասարդներից շատերը մտան դաշնակիցների բանակը:

Բնակչության համակրանքը նվաճելու համար դաշնակիցները Լիբանանում արտոնեցին որոշ դեմոկրատական ազատություններ: Թույլատրվեց առաջադիմական կազմակերպությունների գործունեությունը, վերսկսվեց դեմոկրատական մամուլի հրատարակությունը, բանտից ազատվեցին լիբանանյան ձերբակալված գործիչները: Աշխուժացավ «Ֆաշիզմի դեմ պայքարի լիգայի» գործունեությունը, որը 1941 թ. դեկտեմբերից սկսեց հրատարակել «Աք–Թարիկ» ամսագիրը: 1941 թ. հիմնադրվեցին «Խորհրդային Միության բարեկամների ընկերությունը», «Հայաստանի պաշտպանության լիգան» և այլն:

Պատերազմական գործողություններ սկսելով՝ անգլիացիները և ֆրանսիացիները շատ լավ գիտեին, որ Լիբանանի և Սիրիայի ժողովուրդների նվիրական իղձը մանդատի վերացումը և քաղաքական անկախության ձեռքբերումն է: «Ազատ Ֆրանսիան», որ դեռևս թույլ էր և չուներ համապատասխան ուժեր իր կամքը թելադրելու համար, հարկադրված էր հաշվի նստել լիբանանցիների ու սիրիացիների այդ գլխավոր պահանջի հետ:

Պատերազմական գործողությունները սկսվելու օրը՝ 1941 թ. հունիսի 8–ին Լևանտում «Ազատ Ֆրանսիայի» ուժերի հրամանատար գեներալ Կատրուն, որ գործում էր Դը Գոլի անունից, հանդես եկավ հատուկ դեկլարացիայով՝ ուղղված Սիրիայի և Լիբանանի ժողովուրդներին: Նրանում ասված էր. «Սիրիացիներ՝ և լիբանանցիներ՝: Ես գալիս եմ վերջ դնելու մանդատի ռեժիմին և հայտարարելու ձեզ ազատ ու անկախ:

Հետևաբար, դուք այս պահից ինքնիշխան և անկախ եք»:

Նույն օրը՝ հունիսի 8–ին, Անգլիան հրապարակեց հատուկ հայտարարություն, որով նա պաշտպանում էր Կատրուի դեկլարացիան և հանդես գալիս ֆրանսիական մանդատը չեղյալ հայտարարելու ֆրանսիական խոստման երաշխավոր:

Հարկավոր է նշել, որ գոյություն ուներ անգլո–ֆրանսիական սուր հակամարտություն Լևանտում: Անգլիան փորձում էր օգտվել Ֆրանսիայի թուլությունից, նրան դուրս մղել Սիրիայից ու Լիբանանից և գրավել նրա տեղը: Իսկ դրա հնարավորությունը կարող էր ստեղծվել, ըստ անգլիական մտայնության, ֆրանսիական մանդատի վերացման դեպքում: Եվ քանի որ ինքն այդ ժամանակ Արաբական Արևելքում ամենաուժեղ դիրքերն ունեցող երկիրն էր, ապա նրա համար դժվար չէր լինի ներթափանցել Սիրիա ու Լիբանան և այն վերածել իր ազդեցության գոտու: Անգլիան, հանդես գալով մանդատը վերացնելու վերաբերյալ ֆրանսիական խոստման երաշխավորի դերում, փաստորեն միակողմանիորեն իրավունք ձեռք բերեց պաշտոնապես միջամտելու ֆրանս–սիրիա–լիբանանյան հարաբերություններին: Ջ. Բաներջին գրում էր, որ «իրական իշխանությունը գտնվում է բրիտանացիների ձեռքում: Եվ սրանից հետո, բրիտանացիները գեներալ–մայոր սըր Էդվարդ Սպիրսի գլխավորությամբ Լևանտում ֆրանսիական ազդեցության գերեզմանափորի գործում սիրիական նացիոնալիստների դաշնակիցները կլինեն»:

Ֆրանսիացիները, անշուշտ, հասկանում էին այդ բոլորը և փորձում ամեն կերպ դիմադրել անգլիական նկրտումներին: Գեներալ Դը Գոլը բացահայտորեն հանդես էր գալիս ֆրանսիական հայտարարության երաշխավորը լինելու Անգլիայի քաղաքականության դեմ: Մուսա Դիբը նշում էր, որ «Դը Գոլը չէր կարողանում տեսնել այն բանի անհրաժեշտությունը, թե ինչու Մեծ Բրիտանիան պետք է տա իր երաշխավորությունը մեկ այլ պետության՝ Ֆրանսիայի խոստմանը»:

Սակայն Ֆրանսիան հարկադրված էր զիջել, քանի որ նա թույլ էր և այլ ելք չուներ:

Արաբ պատմաբան Նաջիբ ալ–Արմանազին «Դասախոսություններ Սիրիայի մասին օկուպացումից մինչև էվակուացիան» արժեքավոր աշխատության մեջ ճիշտ կերպով նկատել է, որ Անգլիան Մերձավոր Արևելքը համարում էր մի կամուրջ Ասիայի և Աֆրիկայի միջև, ինչպես նաև Միջերկրական ծովի ու Հնդկական օվկիանոսի միջև: Այդ պատճառով էլ նա

«պայքարում է ինչպես ամեն մի թշնամի, այնպես էլ բարեկամ պետության դեմ, որը ցանկանում է այդտեղ գերակայություն ձեռք բերել»:

Դը Գոլին հանգստացնելու համար Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլը Համայնքների պալատում հայտարարեց, որ Անգլիան բնավ մտադիր չէ Ֆրանսիային դուրս մղել Լևանտից և նրա տեղը գրավել: Այդ բանը հաստատվեց այսպես կոչված «Դը Գոլ–Լիթլտոն համաձայնագրում». դա նամակների փոխանակություն էր Մերձավոր Արևելքում Մեծ Բրիտանիայի նախարար–ռեզիդենտ Օլիվեր Լիթլտոնի և գեներալ Դը Գոլի միջև, որը տեղի ունեցավ 1941 թ. օգոստոսի 7–ին: Դը Գոլին ուղղված նամակում Լիթլտոնը հայտնում էր, որ Անգլիան Սիրիայում և Լիբանանում բացի պատերազմը շահելուց, ուրիշ ոչ մի նպատակ չի հետապնդում, և երբ այդ երկրները ձեռք բերեն վերջնական անկախություն, ապա Ֆրանսիան այդ երկրներում՝ այլ եվրոպական երկրների համեմատությամբ պետք է ունենա տիրապետող դիրքեր: Իր պատասխան նամակում Դը Գոլն ի գիտություն էր ընդունում բրիտանական հավաստիացումները:

1941 թ. հունիսի 8–ին հռչակելով Լիբանանի անկախությունը և մանդատային ռեժիմի վերացումը՝ ֆրանսիական իշխանությունները, սակայն, չէին շտապում գործնական քայլերի դիմել իրենց այդ խոստումն իրագործելու համար: Ամիսներն անցնում էին, իսկ «Ազատ Ֆրանսիան» ոչինչ չէր ձեռնարկում: Իրականում ոչինչ չփոխվեց: «Ազատ Ֆրանսիան» լրիվ իր վրա վերցրեց մանդատային իշխանության ֆունկցիաները: Իսկ Կատրուն, որը սկսեց կոչվել գլխավոր դելագատ, իրականացնում էր գլխավոր կոմիսարի ֆունկցիաները:

Այս փուլում ֆրանսիական քաղաքականությունը հասկանալու հարցում մեծ հետաքրքրություն է ներկայացնում Դը Գոլի 1941 թ. հունիսի 24–ի թվակիր նամակը գեներալ Կատրուին: Նա հանձնարարում է Կատրուին անհապաղ ամրապնդել Ֆրանսիայի հեղինակությունը և ընդգծում, որ Վիշիի պարտությունը չի կարող առիթ ծառայել Ֆրանսիային հետին պլան մղելու համար: «1923 թ. Ֆրանսիային տրված Լևանտի մանդատը,— գրում էր Դը Գոլը,— պետք է իրականացվի, ինչպես դա են պահանջում նրա պայմանները, և Ֆրանսիայի առաքելությունը պետք է շարունակվի»: Մյուս կողմից, շատ լավ գիտակցելով, որ, վերջին հաշվով, Սիրիային և Լիբանանին անկախություն չտալ չի լինի, Դը Գոլը Կատրուին առաջարկում էր Լիբանանի և Սիրիայի հետ կնքել մի այնպիսի պայմանագիր, որն ապահովեր Ֆրանսիայի քաղաքական, ռազմական, տնտեսական ու կուլտուրական շահերը:

Դը Գոլը, Բեյրութում հանդիպում ունենալով ԱՄՆ–ի հյուպատոսի հետ, ասում է նրան. «Ֆրանսիան անկախություն կշնորհի Սիրիային և Լիբանանին, բայց միայն այն ժամանակ, երբ ժողովուրդը պատրաստ կլինի դրան, սակայն դրա համար կպահանջվեն տարիներ»:

Ֆրանսիացիներն իրենց ձեռքում կենտրոնացրին ողջ քաղաքացիական իշխանությանը՝ համարյա զրոյի հավասարեցնելով Լիբանանի կառավարության դերը: Ֆրանսիական գլխավոր դելեգատը ֆրանսիական տարբեր պաշտոնյաների կցեց կառավարական բոլոր հիմնարկներին, բոլոր կարևոր վարչությունները վերցրեց իր ենթակայության ներքո, ինչպես «Ընդհանուր շահերի» սպասարկությունը, որը տնօրինում էր մաքսերի, կոնցեսիոն ընկերությունների և որոշ տնտեսական ու ֆինանսական հարցեր, տեղական բանակն ու ռազմական ուժերը, ներքին անվտանգությունը, գրաքննությունը և այլն:

Այս ամենը խիստ դժգոհություն առաջացրեց երկրի ներսում: Հաշվի առնելով այդ տրամադրությունները՝ Կատրուն 1941 թ. նոյեմբերի 26–ին կրկին հավաստեց ֆրանսիական դեկլարացիան Լիբանանի անկախության վերաբերյալ:

1941 թ. դեկտեմբերի 1–ին Կատրուի դեկրետով Լիբանանի պրեզիդենտ նշանակվեց Ալֆրեդ Նակկաշը, իսկ Ահմեդ Դաուկը ղեկավարեց այսպես կոչված լիբանանյան կառավարությունը: Դա լիցքաթափ չարեց, այլ, ընդհակառակը, ավելի սրեց իրադրությունը: Իսկ այն բանից հետո, երբ սննդամթերքի պակասության պատճառով իսկական ճգնաժամ առաջացավ Լիբանանում, Ահմադ Դաուկը ստիպված էր 1942 թ. ամռանը հրաժարական տալ, և նրա փոխարեն կառավարությունը ղեկավարեց Սամի Սոլիը:

Կատրուն Դը Գոլի անունից վերջնական անկախությունը կրկին պայմանավորեց Ֆրանսիայի և Լիբանանի միջև պայմանագրի կնքումով, որի մասին նշվեց վերևում:

Ֆրանսիայի այդ պահանջը ուժեղ բողոք առաջացրեց երկրում: Լիբանանի հայտնի քաղաքական գործիչ Բիշարա ալ–Խուրին Լիբանանի անկախությունը համարեց կեղծ և պահանջեց ազատ ընտրություններ անցկացնել: Իսկ քաղաքական մեկ այլ հայտնի գործիչ՝ Ռիյադ ալ–Սոլիը, գտնում էր, որ Ֆրանսիայի հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ Կատրուի առաջ քաշած պայմանը հակասում է Ֆրանսիայի պաշտոնական հայտարարություններին՝ Լիբանանին լրիվ անկախություն տալու մասին: Սակայն Կատրուի կողմից պրեզիդենտ նշանակելը

և կառավարության պարտականությունների շրջանակների սահմանումը նրա կողմից չէին խոսում այն մասին, որ Լիբանանի անկախությունն իրական է և հարգվում է:

3. Սահմանադրության վերականգնումը և 1943 թ. պառլամենտական ընտրությունների անցկացումը: Բիշարա ալ-Խուրին Լիբանանի պրեզիդենտ

Լիբանանի կառավարման հարցը, որն ուղղակի առնչվում էր մանդատի վերացման և անկախության խնդրի հետ, դառնում է կենտրոնական: Լիբանանի ազգային-հայրենասիրական ուժերը պահանջում էին վերականգնել սահմանադրությունը և անցկացնել պառլամենտական ընտրություններ: Այդ պահանջը դարձավ տվյալ շրջանում ազգային-ազատագրական պայքարի գլխավոր պահանջը: Եվ այդ հարցի վերաբերյալ Կատրուն ազգային հայրենասիրական ուժերի ճնշման տակ բանակցություններ սկսեց երկրի առանձին քաղաքական գործիչների հետ: Բանակցելով նրանց հետ՝ Կատրուն, սակայն, բոլորովին անտեսում էր Լիբանանի պրեզիդենտին և կառավարությանը, որն առիթ տվեց պրեզիդենտ Նակկաշին բողոք հայտնել Կատրուին նրա այդ քաղաքաքականության դեմ: Կատրուն 1943 թ. փետրվարի 27-ին հետևյալ պատասխանն է ուղարկում Լիբանանի պրեզիդենտ Նակկաշին. «Ես հարկ եմ համարում հաղորդել Ձեզ, որ չնայած 1941 թ. նոյեմբերի 26-ին Լիբանանի անկախության հռչակմանը՝ Ֆրանսիան դե յուրե պահպանում է Լիբանանի մանդատը, մինչև որ Ազգերի լիգան նրան կազատի իր պատասխանատվությունից»: Նա հիշեցնում է Լիբանանի պրեզիդենտին, որ միայն Ֆրանսիայի գլխավոր դելեգատին են պատկանում անհրաժեշտ որոշումներ ընդունելու ամբողջ իրավունքն ու պատասխանատվությունը:

Լիբանանյան ազգային-ազատագրական և դեմոկրատական ուժերի ճնշումն ուժեղանում է: Նրանք պնդում են սահմանադրության վերականգնման և պառլամենտական ընտրությունների անցկացման վրա: Իրավացի է արաբ հետազոտող Ուսման Քամալ Հադադը, երբ գրում է, որ արաբական երկրները, այդ թվում և Լիբանանը, գիտակցում էին, որ իրենք պետք է օգտվեն պատերազմի հետևանքով ստեղծված բարենպաստ իրադրությունից և հասնեն իրենց անկախությանը:

Ի վերջո, «Ազատ Ֆրանսիան», որն արդեն վերանվանվել էր «Մարտնչող Ֆրանսիայի», հարկադրված էր զիջել: 1943 թ. մարտի

25–ին Կատրուն հայտարարեց Լիբանանի 1926 թ. սահմանադրության վերականգնման մասին: Լիբանանյան հայրենասիրական ուժերը խանդավառությամբ ընդունեցին այդ լուրը: Նրանք դա համարեցին վերին աստիճանի կարևոր քայլ, որը նրանց ավելի էր մոտեցնում իրենց ազգային նպատակների իրագործմանը:

Սահմանադրության վերականգնումը ողջունեցին նաև հայ դեմոկրատական ուժերը, որոնք շեշտեցին, որ իրենք ընտրություններին կմասնակցեն դեմոկրատիայի զարգացման և հայ ու արաբ ժողովուրդների բարեկամության ամրապնդման պահանջի ներքո:

Սահմանադրության վերականգնման հետ միասին ֆրանսիական գլխավոր դելեգատը որոշում ընդունեց նաև պառլամենտական ընտրությունների մասին: Ընտրություններն անցկացնելու համար ստեղծվեց փոխանցման կառավարություն Այյուբ Թաբեթի, իսկ նրա հրաժարականից հետո՝ Բուտրոս Թրադի գլխավորությամբ:

Ընտրությունները նշանակվեցին 1943 թ. օգոստոսի 29–ին: Ընտրարշավն ընթանում էր լարված մթնոլորտում. նրան ակտիվորեն միջամտում էին Անգլիան ու Ֆրանսիան: Նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր պառլամենտ անցկացնել իր կողմնակիցներին և Լիբանանի ապագա օրենսդիր մարմնում ունենալ հուսալի հենարան: Պառլամենտական ընտրություններում հաղթեց լիբանանյան բուրժուազիայի և կալվածատերերի այն թևը, որն անգլիական կողմնորոշում ուներ: Դա Սահմանադրական միությունն էր՝ Բիշարա ալ–Խուրիի գլխավորությամբ: Մունիր Թակի ադ–Դինը «Անկախության ծնունդը» իր աշխատության մեջ, որը պարունակում է հետաքրքիր փաստեր Լիբանանում անկախության համար ծավալված պայքարի մասին, գրում էր, որ «Սպիրսը (բրիտանական զորքերի հրամանատարը տարածաշրջանում — Ն. Հ.) շատ պայքարեց Բիշարա Խուրիի Սահմանադրական միության ցանկն ամրապնդելու համար՝ երկիրը օտար լծից ազատելու և անկախության պայքարի դիմակի տակ: Այդ գործում Սպիրսին օգնեցին Եգիպտոսի վարչապետ Նահաս փաշան և Իրաքի վարչապետ Նուրի Սաիդ փաշան: Այդ օգնության փոխարեն Բիշարա Խուրին հանձն առավ հետևել բրիտանական–արաբական քաղաքականությանը»:

Լիբանանի պառլամենտում ընտրվեց 55 դեպուտատ, որոնցից 30–ը՝ քրիստոնյա, այդ թվում՝ երկու հայ, իսկ 25–ը՝ մուսուլման: Այսպիսով՝ Լիբանանի օրենսդիր մարմնում քրիստոնյաները կազմեցին մեծամասնություն:

1943 թ. սեպտեմբերի 21–ին բացվեց պառլամենտի առաջին նիստը, որը 44 ձայնով, 11–ը՝ ձեռնպահ, Սահմանադրական միության ղեկավար մարոնի քրիստոնյա Բիշարա ալ–Խուրիին ընտրեց Լիբանանի պրեզիդենտ: Նա կառավարության կազմելը հանձնարարեց սուննի համայնքի ամենաազդեցիկ դեմքերից մեկին՝ Ռիյադ Սոլիին: Կառավարության կազմի մեջ մտան Լիբանանի վեց կրոնական համայնքների՝ մարոնի, ուղղափառ, հույն–կաթոլիկ, սուննի, շիա և դրուզ, ներկայացուցիչները:

1943 թ. սեպտեմբերին Բիշարա ալ–Խուրին, որը ներկայացնում էր Լիբանանի ամենաազդեցիկ քրիստոնյա համայնքը, և Ռիյադ Սոլիը՝ որպես ամենաազդեցիկ մուսուլմանական սուննի համայնքի ղեկավար, կնքեցին այսպես կոչված Ազգային պակտ: Իրականում դա մի բանավոր, ջենտլմենյան համաձայնագիր էր, որի գրավոր տեքստը գոյություն չունի: Այն սահմանում էր Լիբանանի տարբեր կրոնական համայնքների փոխհարաբերությունների, պետական կառուցվածքում նրանց գրավելիք տեղի, ինչպես նաև արտաքին քաղաքականության սկզբունքները: Նրանք համաձայնվեցին, որ Լիբանանի արտաքին քաղաքականությունը պետք է հիմնվի դրական չեզոքության քաղաքականության վրա: Ազգային պակտն ընդգծում էր, որ Լիբանանը պետք է լինի անկախ պետություն: Քրիստոնյաները չպետք է փնտրեն օտար՝ արևմտյան, մասնավորապես Ֆրանսիայի հովանավորություն, և չփորձեն Լիբանանը դնել օտար հսկողության տակ: Իսկ մուսուլմանները պարտավորվում էին ոչ մի փորձ չանել Լիբանանի և Սիրիայի կամ Լիբանանի և որևէ այլ արաբական պետության միջև քաղաքական միություն ստեղծելու ուղղությամբ: Ազգային պակտը Լիբանանը դիտում էր որպես արաբական երկիր և արաբական աշխարհի մի մաս, սակայն իր հատուկ՝ քրիստոնեական բնութագրով: Բիշարա ալ–Խուրին և Ռիյադ Սոլիը համաձայնության եկան պետական և կառավարական պաշտոնների բաժանման հիմքում կրոնահամայնքային սկզբունքի կիրառման շուրջը: Որոշվեց, որ Լիբանանի պրեզիդենտը պետք է լինի մարոնի քրիստոնյա, վարչապետը՝ սուննի մուսուլման, պառլամենտի նախագահը՝ շիա մուսուլման, արտաքին գործերի նախարարը՝ հույն ուղղափառ, պաշտպանության նախարարը՝ դրուզ և այլն: Պառլամենտում սահմանվեց դեպուտատական տեղերի բաշխում 6/5 փոխհարաբերությամբ՝ հօգուտ քրիստոնյաների, այսինքն՝ յուրաքանչյուր 5 մուսուլման դեպուտատի դիմաց պետք է ընտրվեր 6 քրիստոնյա դեպուտատ:

Ազգային պակտի դրական կողմն այն էր, որ նա արտահայտվեց հօգուտ անկախ և սուվերեն Լիբանանի, հռչակեց խաղաղություն և համագործակցություն տարբեր կրոնական համայնքների միջև: Սակայն նրա թերությունն այն էր, որ նա պետական կառավարման հիմքում դրեց կրոնահամայնքային սկզբունքը, որը դարձավ Լիբանանի պետականության տկարության պատճառներից մեկը:

Ջենտլմենյան համաձայնագրով սահմանված այդ սկզբունքը հիմնական գծերով մինչև օրս պահպանվում և կիրառվում է Լիբանանում:

4. Ֆրանսիական մանդատի վերացումը 1943 թվականին: Լիբանանը անկախ և ինքնիշխան պետություն

1943 թ. հոկտեմբերի 7-ին վարչապետ Ռիյադ Սոլիը պառլամենտին ներկայացրեց իր կառավարության ծրագիրը: Նա հայտարարեց, որ իր կառավարության կարևոր խնդիրը Լիբանանի իսկական անկախության և գերիշխանության ձեռքբերումը և տերիտորիալ ամբողջականության պահպանումն է: «Մենք ուզում ենք,— հայտարարեց վարչապետը,— իրական անկախություն և լիակատար ազգային գերիշխանություն, որը թույլ կտա մեզ որոշելու մեր ճակատագիրն այնպես, ինչպես մենք ենք հասկանում, և միայն մեր ազգային շահերին համապատասխան ձևով: Այս է իմ կազմած և գլխավորած կառավարության նշանաբանը, և դրա համար միայն ծանր պատասխանատվության տակ մտանք»:

Իսկ լիակատար անկախության հասնելու համար անհրաժեշտ էր փոփոխություններ մտցնել Լիբանանի սահմանադրության մեջ և վերացնել այն հոդվածները, որոնք վերաբերում էին ֆրանսիական մանդատին: Դա կլիներ առաջին լուրջ քայլը, որն իրավական առումով Լիբանանը կազատեր ֆրանսիական մանդատի տիրապետությունից: Ռիյադ Սոլին ընդգծում է, որ իր կառավարությունը լի է վճռականությամբ՝ սահմանադրությունը փոփոխության ենթարկելու, նրանից հանելու ֆրանսիական մանդատին վերաբերող հոդվածները, և այն այդ ձևով ներկայացնելու Լիբանանի պառլամենտի հաստատմանը:

Ներքին քաղաքականության բնագավառում Ռիյադ Սոլիը կարևոր խնդիր համարեց զարկ տալ ազգային տնտեսությանը՝ արդյունաբերության զարգացմանը, գյուղատնտեսական արտադրության բարձրացմանը, մշակելի հողատարածությունների ընդարձակմանը, ոռոգման հա-

մակարգի ընդարձակմանը, գյուղատնտեսական մեքենաների կիրառմանը և այլն:

Կառավարությունը խոստանում էր տալ դեմոկրատական ազատություններ, իրականացնել վարչական և դատական ռեֆորմներ, լուծել «աշխատավորների վեճերը՝ ջանալով բանվորին ապահովել իր հացը, ազատությունը, ապագան և օրինական իրավունքները»:

Ռիյադ Սոլիը իր կառավարական ծրագիրն անվանեց «Անկախության խարտիա»:

Պառլամենտը հավանություն տվեց կառավարության հայտարարությանը և վստահություն հայտնեց Ռիյադ Սոլիին:

Ռիյադ Սոլիի կառավարության հայտարարությունը կամ «Անկախության խարտիան» հավանության արժանացավ նաև պառլամենտից դուրս՝ ժողովրդական ամենալայն խավերի և տարբեր քաղաքական ուժերի կողմից: Այն բնութագրվեց մի շարք կետերով որպես «խիզախ և հարուստ հայտարարություն», որին պատրաստ էին թիկունք կանգնել բոլոր լիբանանցիները:

Լիբանանի կառավարական ծրագրին իրենց համերաշխությունը հայտնեցին նաև լիբանանահայությունը և նրա դեմոկրատական ուժերը: Հ. Մատեյանը նշում էր, որ այդ ծրագրի իրագործումով Լիբանանում և լիբանանահայության կյանքում անխուսափելիորեն խոր փոփոխություններ տեղի կունենան, որովհետև այն մեծ թափ է հաղորդում ազգային զարթոնքին և իրական անկախությանն ու ազգային գերիշխանությանը, և Լիբանանի հայությունն իր սեփական շահերի դեմ մեղանչած կլինի, եթե իր զարգացումը Լիբանանի զարգացման բնական հունով չտանի:

Հայ առաջադիմական ուժերն այն ելակետն ունեին, որ հայերի զարգացումը քաղաքական ու տնտեսական բոլոր թելերով կապված է Լիբանանի հետ, ուստի և նրանց պարտականությունն է արաբների հետ զորավիգ կանգնել Լիբանանի ազգային անկախությանը:

Ստանալով պառլամենտի վստահության քվեն՝ Ռիյադ Սոլիը անմիջապես դիմեց գործնական քայլերի Լիբանանի ազգային ինքնիշխանությունն ամրապնդելու ուղղությամբ:

Լիբանանում դեռևս ֆրանսիական մանդատի հաստատման առաջին օրվանից ավանդույթ էր դարձել, որ կառավարությունը կազմելուց հետո նրա ղեկավարը այցելում էր Լիբանանում ֆրանսիական ներկայացուցչին՝ գլխավոր կոմիսարին: Ռիյադ Սոլիը որոշեց վերջ տալ Լիբանանի ազգային ինքնիշխանության հետ անհամատեղելի այդ ծիսակա-

տարությանը: Նա չայցելեց ֆրանսիական գլխավոր դելեգատին, որը նախկին գլխավոր կոմիսարի պարտականություններն էր կատարում: Ռիյադ Սոլիը նրան դիտեց մյուս դեսպաններին հավասար դեսպան, որի շնորհավորական այցելությանը կարելի էր պատասխանել, եթե նա՝ գլխավոր դելեգատը, առաջինն ինքն այցելեր վարչապետին:

Այս հողի վրա վեճ առաջացավ Լիբանանի կառավարության և ֆրանսիական գլխավոր դելեգատի միջև: Վերջինս ամեն կերպ ձգտում էր ուժի մեջ թողնել նախկին ավանդույթը: Սակայն Ռիյադ Սոլիը անկոտրում գտնվեց, և ֆրանսիացիները ստիպված էին զիջել՝ համաձայնվելով Լիբանանի կառավարության այդ նոր դիրքորոշման հետ, որը բնավ էլ ձևական հարց չէր: Այսպիսով՝ ինչպես ճիշտ նշում է Մունիր Թակի աղ–Դինը, Լիբանանի «կառավարությունը վերացրեց մի տրադիցիա, որը լիբանանցիներին ցավ էր պատճառում, որովհետև նրանում տեսնում էին գաղութատիրության և ստորացման խորհրդանշան»:

Դրանից հետո կառավարությունն անմիջապես ձեռնամուխ եղավ սահմանադրության վերանայմանը:

Նա սահմանադրության առաջին հոդվածից հանեց մանդատային պետությանը և Ազգերի լիգային վերաբերող բոլոր բառերը և այն շարադրեց հետևյալ կերպ. «Լիբանանը անկախ, ունիտար և ինքնիշխան պետություն է»: Մինչ այդ ֆրանսերենը համարվում էր պաշտոնական լեզու, որն ամրագրված էր սահմանադրության մեջ: Այժմ այդ կետը հանվեց, և Լիբանանի միակ պաշտոնական լեզուն համարվեց արաբերենը: Դրան համապատասխան՝ վարչապետը 1943 թ. հոկտեմբերի 13–ին հրահանգ ուղարկեց բոլոր նախարարություններին, որտեղ ասված էր. «Կխնդրեմ հետայսու ձեր նախարարությանը ենթակա բոլոր հաստատություններում բոլոր գրավոր հաղորդագրությունները և գործառույթները կատարել արաբերենով, որը երկրի պաշտոնական լեզուն է»:

Կառավարությունը փոփոխության ենթարկեց նաև սահմանադրության 52–րդ հոդվածը, որը միջազգային պայմանագրեր կնքելու իրավունքը վերապահում էր միայն ֆրանսիային: Փոփոխելով այդ հոդվածը՝ կառավարությունն առաջարկում էր, որ այդ իրավունքը վերցվի ֆրանսիայից և տրվի Լիբանանի հանրապետության պրեզիդենտին:

Եվ վերջապես՝ Լիբանանի կառավարությունն ամբողջությամբ վերացրեց սահմանադրության 90–94–րդ հոդվածները, որտեղ ասված էր, որ լիբանանյան սահմանադրական իշխանությունները պարտավոր են պահպանել մանդատային պետության, այսինքն՝ ֆրանսիայի իրա-

վունքները, հարևան երկրների հետ լավ հարաբերությունները պետք է պահպանվեն ֆրանսիական մանդատի հովանու ներքո, իսկ վեճերի դեպքում Ֆրանսիան հանդես էր գալու արբիտրի դերում: Հոդվածներից մեկում ամրագրված էր, որ Ֆրանսիան ներկայացնում է Լիբանանին այն երկրներում, որտեղ կային մեծ թվով լիբանանցիներ:

Սիա դրանք էին սահմանադրության այն հոդվածները, որոնք վերաբերում էին մանդատին ու Ֆրանսիայի իրավունքներին և սահմանափակում Լիբանանի անկախությունն ու ինքնիշխանությունը:

Լիբանանի կառավարությունը սահմանադրության փոփոխված այդ տեքստը ներկայացրեց պառլամենտի հաստատմանը:

Մինչ այդ Կատրուին 1943 թ. հունիսին Լիբանանում ֆրանսիական գլխավոր դելեգատի պաշտոնում փոխարինած Ժան Հելոն պաշտոնապես առարկեց սահմանադրության մեջ մտցված այդ փոփոխությունների դեմ՝ նշելով, թե Լիբանանն իրավունք չունի միակողմանիորեն փոփոխություններ կատարել սահմանադրության մեջ, և առաջարկեց հարցը լուծել բանակցությունների միջոցով: Եվ որպես բանակցությունների հիմք առաջարկեց 1936 թ. ֆրանս–լիբանանյան պայմանագիրը, որը Ֆրանսիան ինքը 1939 թ. հրաժարվել էր վավերացնել:

Լիբանանի կառավարությունը, բնականաբար, մերժեց ֆրանսիական առաջարկությունները: Դրանից հետո Լիբանանի կառավարության և Ժան Հելոյի միջև համաձայնություն ձեռք բերվեց, որ վերջինս կմեկնի Ալժիր, որտեղ ժամանակավորապես գտնվում էր Ֆրանսիայի Ազգային ազատագրության կոմիտեն՝ Դը Գոլի գլխավորությամբ՝ այդ հարցն այնտեղ քննարկելու և համապատասխան հրահանգներ ստանալու համար: 1943 թ. նոյեմբերի 4–ին հրապարակվեց «Մարտնչող Ֆրանսիայի» բարձրագույն կառավարող մարմնի՝ Ազգային ազատագրության կոմիտեի պաշտոնական կոմյունիկեն, որտեղ նա մերժում էր սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու և ֆրանսիական մանդատը վերացված համարելու Լիբանանի իրավունքը: Նա ընդգծում էր, որ վավերական չի նկատի առանց իր համաձայնության Լիբանանի սահմանադրության մեջ կատարվող որևէ փոփոխություն:

Ֆրանսիայի Ազգային ազատագրության կոմիտեի այս որոշումից հետո՝ 1943 թ. նոյեմբերի 5–ին, կայացավ Լիբանանի նախարարների խորհրդի նիստը, որը պետք է որոշեր Լիբանանի հետագա քաղաքականությունը՝ արդյո՞ք ընկրկել Ֆրանսիայի բացահայտ ճնշման առջև և հրաժարվել սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելուց ու

ֆրանսիական մանդատից հրաժարվելուց, թե՞ շարունակել ընթանալ ազգային ազատագրության, Լիբանանի ազգային անկախության և ինքնիշխանության ամրապնդման ուղիով:

Լիբանանի կառավարությունն ընտրեց երկրորդ ուղին:

Այդ նույն օրը՝ 1943 թ. նոյեմբերի 5–ին, Լիբանանի կառավարությունը հրապարակեց մի հայտարարություն, որտեղ ասված էր. «Նկատի ունենալով, որ սահմանադրության փոփոխումը լիբանանյան սահմանադրական իշխանությունների իրավունքն է, կառավարությունը, համաձայն սահմանադրության 76–րդ և այլ հոդվածների, այժմ պառլամենտին ներկայացրեց Լիբանանի ճանաչված անկախությանը հակասող սահմանադրության մի քանի հոդվածների փոփոխման նախագիծը, որը Նախարարների խորհուրդը սկսել էր ուսումնասիրել՝ համաձայն կառավարական հայտարարության և ի կիրառումն անկախության գործնական իրականացման»:

Լիբանանի պառլամենտի նիստը նշանակված էր 1943 թ. նոյեմբերի 8–ին: Ֆրանսիական իշխանությունները մի փորձ ևս կատարեցին այդ նիստը տապալելու համար: Նրանք փոնում էին համոզել Լիբանանի կառավարությանը՝ հետաձգել պառլամենտի նիստը և ներկայացված հարցը քննարկել հետագայում: Միաժամանակ նրանք փորձեր կատարեցին համոզել առանձին դեպուտատների՝ պառլամենտի նիստին չմասնակցել, որպեսզի անհրաժեշտ քվորում չլինի: Սակայն նրանց այդ բոլոր փորձերը ձախողվեցին:

Լիբանանի պառլամենտի պատմական նիստը բացվեց 1943 թ. նոյեմբերի 8–ին: Պառլամենտի 55 դեպուտատներից ներկա էին 52–ը:

Պառլամենտի այդ նիստը շատ հետաքրքիր է նկարագրել արաբ պատմաբան Մունիր Թակի ադ–Դինն իր «Անկախության ծնունդը» գրքում, որը անհրաժեշտ ենք համարում մեջբերել ամբողջությամբ. «Պառլամենտի նախագահը բացեց նիստը, սրտերը բաբախեցին, շունչերը պահվեցին, որպեսզի ականջները լսեն: Տեղի ունեցավ փոփոխումը (սահմանադրության — Ն. Հ.) ձախողելու մի վերջին փորձ. մի քանի դեպուտատներ պահանջեցին նախագիծն ուղարկել հատուկ հանձնաժողովի, որպեսզի հաջողեցնեն հասնել փոփոխման որոշ հետաձգման, սակայն վերջին փորձն էլ ձախողվեց առաջինի նման: Այդ ժամանակ էմիլ էդդեն դուրս եկավ պառլամենտի շենքից, նրան հետևեց Ամին աս–Սաադը: Բազմությունը նրանց ճանապարհեց սուլոցներով և զայրույթի ու դատապարտման խոսքերով: Պառլամենտը շարունակեց քն-

նարկումը և փոփոխությունը հաստատեց հոդված առ հոդված, և այն վերջացրեց միայն մանդատի կապանքներից ազատվելուց հետո: Այդ պահին դահլիճում գտնվողները մեքենայաբար ոտքի կանգնեցին, ցնցվեցին պատերը բացականչություններից և ծափերից»:

1943 թ. նոյեմբերի 8–ին Լիբանանի պառլամենտը հաստատեց սահմանադրության մեջ մտցված փոփոխությունները: Դա նշանակում էր, որ մանդատի վերացումը և Լիբանանի անկախությունը ստացան իրավական ուժ, և նոր հիմքերի վրա դրվեցին հարաբերությունները Ֆրանսիայի հետ:

1943 թ. նոյեմբերի 8–ը՝ երկուշաբթի օրը, մտավ Լիբանանի պատմության մեջ որպես Ֆրանսիական մանդատի վերացման և Լիբանանի անկախության ու ինքնիշխանության հաստատման օր:

Պառլամենտի այս պատմական որոշումը մեծ խանդավառությամբ ընդունեց Լիբանանի ժողովուրդը: Բեյրութում, Տրիպոլիում և այլ վայրերում տեղի էին ունենում ցույցեր՝ ի պաշտպանություն պառլամենտի որոշման և Լիբանանի անկախության: Ցույցերին մասնակցում էին նաև հայերը, որոնք հպարտ էին, որ պառլամենտի հայ դեպուտատներից Հրաչ Շամլյանը ներկա էր գտնվել պառլամենտի նիստին և նույնպես քվեարկել սահմանադրության փոփոխության՝ մանդատի վերացման և Լիբանանի անկախության ամբողջացման օգտին:

5. 1943 թ. նոյեմբերյան զինված ապստամբությունը

Ֆրանսիական իշխանությունները, տեսնելով, որ Լիբանանը դուրս է գալիս իրենց տիրապետությունից, որոշեցին դիմել վճռական քայլերի: Բեյրութի փողոցներում նրանք սահմանեցին զինված ջոկատների անընդմեջ պարեկություն: Լիբանանի կառավարությունը զգուշացրեց ֆրանսիական իշխանություններին, որ նրանց այդ քայլը կարող է տհաճ հետևանքների հասցնել: Նրանք լիբանանյան կառավարության այս նախազգուշացումը ոչ միայն հաշվի չառան, այլև դիմեցին մի այնպիսի քայլի, որը ցնցեց ողջ Լիբանանը:

1943 թ. նոյեմբերի 11–ին Ֆրանսիայի նոր գլխավոր դելեգատ Ժան Հելոյի հրամանով ձերբակալվեցին Լիբանանի պրեզիդենտ Բիշարա ալ–Խուրին, վարչապետ Ռիյադ Սոլհը, նախարարներ Ադիլ Օսեյրանը, Սելիմ Թակլան, Քամիլ Շամունը, ինչպես նաև ականավոր քաղաքական գործիչ Աբդել Համիդ Քարամեն, որոնք բանտարկվեցին Հերմոն

սարի մոտ գտնվող Ռաշայյա ամրոցում: Ժան Հելոյի հրամանով ցրվեց պառլամենտը, և Լիբանանում մտցվեց ռազմական դրություն: Գլխավոր դելեգատի դեկրետով էմիլ Էդդեն նշանակվեց երկրի պրեզիդենտ և կառավարության ղեկավար: Ֆրանսիական զորքերը և նրանց կազմում գտնվող սենեգալական զինվորները Բեյրութում և Լիբանանի մյուս քաղաքներում գրավեցին ստրատեգիական բոլոր կարևոր կետերը:

Ֆրանսիական իշխանությունների կողմից դասական գաղութատիրության ոճով իրագործված այս քաղաքականությունը խոր ցասում առաջացրեց ամբողջ Լիբանանում, որը վերածվեց զինված ապստամբության: Շարժման մեջ մտան համարյա բոլոր սոցիալական խավերը՝ ազգային բուժուազիան, հողատերերի մեծ մասը, բանվոր դասակարգը, գյուղացիությունը, արհեստավորները, մտավորականությունը, ուսանողությունը:

Վրդովված ժողովրդական զանգվածները դուրս եկան փողոց՝ բողոքելու ֆրանսիական իշխանությունների գործողությունների դեմ: Բեյրութում, Տրիպոլիում, Սայդայում և այլ քաղաքներում ու բնակավայրերում ծայր առան ցույցերը: Ֆրանսիական զորքերը կրակ բացեցին ցուցարարների վրա: Նրանցից շատերը վիրավորվեցին, եղան նաև սպանվածներ: Լիբանանյան ժանդարմերիան հրաժարվեց ենթարկվել ֆրանսիացիներին և անցավ ժողովրդի կողմը:

Ամբողջ երկրում հայտարարվեց համընդհանուր գործադուլ: Ժողովրդական ելույթները ղեկավարելու համար ստեղծվեց միջկուսակցական քաղաքական օրգան՝ Ազգային կուսակցությունների համագումար, որի աշխատանքներին մասնակցում էին Լիբանանի բոլոր նշանավոր քաղաքական առաջադիմական կուսակցությունները, այդ թվում նաև հայ Հնչակյան սոցիալ–դեմոկրատական և Ռամկավար ազատական կուսակցությունները: Այդ մարմնի որոշումները ու հրամանները բոլորը կատարում էին անշեղորեն:

1943 թ. նոյեմբերի 12–ին Բեյրութի նավահանգստի շրջանում փոխհրաձգություն տեղի ունեցավ ապստամբ ցուցարարների և սենեգալական զորքերի միջև, որոնց ֆրանսիական իշխանությունները կանչել էին լիբանանյան ժանդարմերիայի և ապստամբված ժողովրդի դիմադրությունը ճնշելու համար: Այդ նույն օրը նրանք փորձեցին գրավել պրեզիդենտի տունը, ինչը նրանց չհաջողվեց: Պրեզիդենտի տունը վերածելով բարիկադների՝ ընդդիմադիր ուժերը դիմադրում էին սենեգալական զինվորներին, և վերջիններս ստիպված նահանջում են: Նոյեմբերի 13–ին ֆրանսիացիները տանկերից ու զրահապատներից գնդակոծեցին դե-

մոկրատական ուժերի ցույցը Բեյրութում: Պայքարը հատկապես կազմակերպված և ուժեղ բնույթ էր կրում մայրաքաղաքի Բաստա թաղամասում, որը ծածկված էր բարիկադներով: Արյունալի ընդհարումներ տեղի ունեցան նաև Տրիպոլիում, Սայդայում և այլ բնակավայրերում:

Ամբողջ Լիբանանը ցնցեց ֆրանսիական զինվորների բարբարոսական արարքը Սայդայում: Նրանք ցույցի մասնակից կանանց և երեխաներին հավաքեցին տեղական կառավարական շենքի բակը, փակեցին դարպասները և փայտերով անխնա ծեծի ենթարկեցին անպաշտպան կանանց ու երեխաներին:

Լիբանանի օրինական ղեկավարությանը ձերբակալելուց և բանտարկելուց հետո Ժան Հելոն, ինչպես նշվեց, Լիբանանի պրեզիդենտ և կառավարության ղեկավար նշանակեց էմիլ էդդեին: Ստանձնելով իշխանությունը՝ նա հայտարարեց, որ իր այդ քայլը նա համարում է իր ազգային պարտքը: Նա դիմեց ժողովրդին, որ վստահեն իրեն՝ միաժամանակ սպառնալով ծանր պատիժների ենթարկել նրանց, ովքեր կհամարձակվեն չենթարկվել իր կառավարության որոշումներին: Սակայն կառավարություն կազմելու նրա բոլոր փորձերն ապարդյուն անցան, քանի որ ոչ ոք չհամաձայնվեց մտնել նրա «կառավարության» մեջ: Ի վերջո, էմիլ էդդեն հարկադրված եղավ «կառավարություն» կազմել տնօրեններից, քաղաքապետներից և ոստիկանական զորահրամանատարներից, որոնք, սակայն, այդպես էլ չներկայացան կառավարական պալատ: Դա պետք է բացատրել նրանով, որ այդ պահին, երբ վճռվում էր Լիբանանի ճակատագիրը, էդդեի կառավարության մեջ մտնելը Լիբանանի ազգային և հայրենասիրական ուժերի համար հավասարազոր էր երկրի անկախությանը դավաճանելուն: Նույնիսկ պետական պաշտոնյաները հրաժարվում էին կատարել էմիլ էդդեի «կառավարության» կարգադրությունները՝ այն համարելով ազգային դավաճանության կառավարություն:

էմիլ էդդեի առաքելության ձախողումը պետք է համարել Լիբանանի ապստամբական ուժերի հաղթանակը և ֆրանսիական գաղութարարների պարտությունը:

Նոյեմբերյան ապստամբության այդ պատմական իրադարձությունների ժամանակ Լիբանանի ընդդիմադիր ուժերը կազմեցին ժամանակավոր կառավարություն, որը դարձավ ապստամբության ղեկավարման կարևոր կենտրոնը: Այն ստեղծվեց ձերբակալումից խուսափած վարչապետի տեղակալ Հաբիբ Աբու Շահլայի և պաշտպանության նախարար Մաջիդ Արսլանի նախաձեռնությամբ, որոնք հաստատվեցին

Լեռնալիբանանի Բշամուն լեռնային գյուղում: Նրանց միացավ նաև Լիբանանի պառլամենտի նախագահ Սաբրի Համադեն: Ժամանակավոր կառավարությունը ձեռնամուխ եղավ ազգային բանակի ստեղծմանը և զինված դիմադրության կազմակերպմանը: Հազարավոր լիբանանցիներ մեկնում էին Բշամուն գյուղը ազգային բանակի մեջ մտնելու և մարտնչելու Լիբանանի անկախության համար: Նրա որոշումով Սիրիայի և Լիբանանի բանկը ու Լիբանանի գանձատունը չկատարեցին էդդեի «կառավարության» և ոչ մի կարգադրություն:

Չնայած պառլամենտը ցրելու վերաբերյալ Ժան Հելոյի նոյեմբերի 11–ի դեկրետին պառլամենտը երբեք չդադարեցրեց իր գործունեությունը: Նոյեմբերի 11–ին դեպուտատները, հաղթահարելով զանազան արգելքներ, մտան պառլամենտի շենք, նիստ գումարեցին և ընդունեցին մի բանաձև, որը դատապարտում էր Լիբանանի սահմանադրության ոտնակոխ անելը և օրինական կառավարության դեմ ֆրանսիական իշխանությունների կիրառած բռնաքայլերը: Նա մի հուշագիր ուղարկեց ԱՄՆ–ի, ԽՍՀՄ–ի, Անգլիայի, Սիրիայի, Եգիպտոսի և Իրաքի կառավարություններին՝ խնդրելով նրանց աջակցությունը:

Պառլամենտն իր հաջորդ նիստը գումարեց նոյեմբերի 12–ին Լիբանանի հայտնի ընդդիմադիր շարժման ղեկավարներից մեկի՝ Սաիբ Սալամի տանը և վստահություն հայտնեց Բշամունում հաստատված Լիբանանի ժամանակավոր կառավարությանը: Այնուհետև պառլամենտը ևս մի քանի նիստեր է գումարում, որից հետո հաստատվում Բշամուն գյուղում, որտեղ նոյեմբերի 20–ին գումարում է իր հերթական նիստը: Այդ նիստերի ընթացքում պառլամենտը որոշում է ոչ մի բանակցություններ չձեռնարկել ֆրանսիացիների հետ նախքան Լիբանանի ձերբակալված ղեկավարների ազատ արձակումը և սահմանադրության վերականգնումը:

Լիբանանի պառլամենտի այդ սկզբունքային դիրքը մեծապես նպաստեց երկրի ազգային–ազատագրական, հայրենասիրական ուժերի կոնսոլիդացիային և ֆրանսիական գաղութարարների դեմ մղվող պայքարի հաջողությանը:

Նոյեմբերի երկրորդ կեսից ֆրանսիացիները ռազմական գործողությունները կենտրոնացրին Բշամունի՝ ապստամբական այդ կարևոր կենտրոնի դեմ: Նրանք հասկանում էին, որ ժամանակավոր կառավարության գոյությունը նրանց համար մեծ վտանգ էր ներկայացնում: Եվ նրանք որոշեցին ճնշել ու ասպարեզից վերացնել ապստամբության կազմակերպման այդ կենտրոնը:

Նոյեմբերի 16–ին ֆրանսիական զորքերը տանկերի աջակցությամբ շարժվեցին Բշամունի ուղղությամբ: Տեղի ունեցավ ճակատամարտ լիբանանյան և ֆրանսիական զորքերի միջև: Լիբանանյան կառավարական զորքերին հաջողվեց հետ մղել ֆրանսիացիների գրոհները, որի ընթացքում նրանք խփեցին երկու տանկ: Մի քանի օր անց՝ նոյեմբերի 19–ին, ֆրանսիացիները նոր գրոհ ձեռնարկեցին՝ այս անգամ 20 տանկերի աջակցությամբ: Սակայն այս անգամ ևս նրանք ձախողության մատնվեցին և չկարողացան գրավել Բշամունը: Այդ ռազմական հաջողությունները, որին տեղյակ էր ամբողջ Լիբանանը, մեծապես ոգևորեց ապստամբներին և ամրապնդեց նրանց վճռականությունը՝ մինչև վերջ պայքարել հանուն Լիբանանի անկախության ու ազատության:

Ժողովրդական դիմադրությունը պառակտելու նպատակով ֆրանսիական իշխանությունները փորձեցին գժտություն առաջացնել քրիստոնյաների և մուսուլմանների միջև՝ ջանալով, ինչպես նշում է լիբանանցի պատմաբան Նիկոլա Զիադեհը, ապստամբությունը ներկայացնել որպես քրիստոնյաների դեմ ուղղված շարժում: Մունիր Թակի ադ–Դինը վկայում է, որ ընդհանուր անվտանգության հիմնարկները և առանձին վարձկաններ աշխատում էին երկրում սարսափ տարածել: Նրանք «քրիստոնյաներին ասում էին, որ մուսուլմաններն ուզում են իրագործել իսլամական միություն, իսկ մուսուլմաններին ասում, որ քրիստոնյաներն ուզում են ստեղծել քրիստոնեական ազգային հայրենիք»:

Իրենց արկածախնդրական այդ ծրագրերի իրագործման մեջ ֆրանսիական իմպերիալիստները մեծ տեղ էին հատկացնում նաև հայերին: Նրանց գործակալները հայերի շրջանում սկսեցին լուրեր տարածել, որ Ռիյադ Սոլհի կառավարական դեկլարացիան և սահմանադրության մեջ մտցրած փոփոխությունները իբր ուղղված են հայերի դեմ: «Ընդլայնեցին այդ չարամիտ ագիտացիան,— գրում է Մունիր Թակի ադ–Դինը,— ու հասան մինչև իսկ հայերին: Նրանք այդ տեսակետից շատ զգայուն ժողովուրդ են: Խռովության գործակալները սկսեցին տարածել իրենց զրույցներն ու հերյուրանքները հայերի մեջ՝ դիմադրության շարժումը նրանց ներկայացնելով որպես մուսուլմանների շարժում իրենց ոչնչացնելու համար»: Դրությունն ավելի վտանգավոր դարձավ, երբ լուրեր տարածվեցին, թե իբր Ռիյադ Սոլհի ձերբակալման ժամանակ նրա թղթերի մեջ գտել են հայերին լիբանանյան քաղաքացիությունից զրկելու օրենքի նախագիծ:

Արաբական ազգային գործիչները հասկանում էին, որ եթե հայերը հավատան այդ ստահոդ լուրերին, ապա դա կունենա չափազանց ծանր հետևանքներ: Նրանք գիտակցում էին, որ հայերին չի կարելի հաշվից դուրս նետել և նկատի չառնել նրանց դիրքորոշումը: Ինչպես գրում էր Խալիդ Բեկդաշը. «Մենք լավ գիտենք, որ արաբ ազգային որևէ հարցի լուծում, որը նկատի չի առնի Սիրիայի և Լիբանանի հայ ժողովրդի շահերը, անխուսափելիորեն դատապարտված է ձախողության»:

Արաբ և հայ դեմոկրատական ու առաջադեմ գործիչների ծավալած լայն բացատրական աշխատանքի շնորհիվ փարատվեցին հայերի կասկածները: Լիբանանի Ազգային կուսակցությունների համագումարի պատվիրակությունը 1943 թ. նոյեմբերի 20–ին այցելեց Անթիլիաս՝ Հայոց ազգային առաջնորդարան, և հավաստեց, որ «Լիբանանի ազգային շարժման նպատակը Լիբանանի բոլոր դավանական համայնքների իրավունքներն ապահովելն է և ոչ թե մեկը հօգուտ մյուսին իրավազրկելը, ինչպես տարածում են չարամիտ բերանները»: Իր պատասխանում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի տեղապահը հայ համայնքի անունից վստահեցրեց Ազգային կուսակցությունների համագումարին, որ հայերը կանգնած են արաբների կողքին, և երկու ժողովուրդների բարեկամությունն անխզելի է: Պատվիրակությունը Անթիլիասից մեկնում է գոհ, և Ազգային կուսակցությունների համագումարը 1943 թ. նոյեմբերի 21–ի նիստում հատուկ գոհունակություն է հայտնում հայերին նրանց գրաված դիրքի համար:

Նույն նպատակներով Անթիլիաս, կաթողիկոսի տեղապահին է այցելում նաև Լիբանանի կանանց պատվիրակությունը, որը կոչ է անում հայերին՝ չհավատալ սուտ լուրերին և «հավատարիմ լինել Լիբանանին, որը նրանց հյուրընկալել ու դարձել է լավագույն հայրենիք այն հայրենիքից հետո, որտեղ նրանք ծնվել են»:

Արաբ և հայ դեմոկրատական կազմակերպությունների ջանքերի շնորհիվ ֆրանսիական իշխանություններին չհաջողվեց հայերին հակադրել արաբներին: Նոյեմբերյան պատմական օրերին հայերը արաբների կողքին էին և մարտնչում էին հանուն Լիբանանի ազգային անկախության:

Ֆրանս–լիբանանյան ճգնաժամին վճռականորեն միջամտեց Անգլիան: Նա վերջնագրի բնույթով Ֆրանսիայից պահանջեց մինչև նոյեմբերի 22–ը՝ ժամը 10–ը, ազատ արձակել բոլոր ձերբակալվածներին՝ զգուշացնելով, որ հակառակ դեպքում նրանք ազատ կարձակվեն բրիտանական զորքերի կողմից: Ֆրանսիան հարկադրված էր նահանջել: Պրեզիդենտը և մյուս ձերբակալվածները 1943 թ. նոյեմբերի 21–ին

ազատ արձակվեցին: Ժան Հելոն, որի գործողությունները համարվեցին ինքնագլուխ, հետ կանչվեց իր պաշտոնից, և նրա փոխարեն Դը Գոլը Լիբանանում գլխավոր դելեգատ նշանակեց Իվ Շատինյոնին: Վերջինս նոյեմբերի 22–ին չեղյալ հայտարարեց իր նախորդի կողմից նոյեմբերի 11–ին ընդունված դեկրետը, պաշտոնապես վերացվեց էմիլ էդդեի «կառավարությունը», վերականգնվեց պառլամենտական կյանքը:

Ամբողջ երկիրը ցնծությամբ ընդունեց այդ բոլորը: Տասնյակ հազարավոր մարդիկ հավաքվեցին պառլամենտի հրապարակում: Ֆրանսիայի եռագույն դրոշը իջեցվեց, և դրա փոխարեն պառլամենտի շենքի վրա բարձրացվեց Լիբանանի նոր՝ ազգային դրոշը՝ կարմիր–սպիտակ–կարմիր, մեջտեղում՝ Լիբանանի մայրին՝ որպես երկրի խորհրդանիշը:

1943 թ. նոյեմբերի 22–ին Բեյրութ ժամանեցին ձերբակալությունից ազատ արձակված Լիբանանի պրեզիդենտ Բիշարա ալ–Խուրին, վարչապետ Ռիյադ Սոլհը և մյուս ձերբակալված ղեկավարները: Ժողովուրդը նրանց դիմավորեց ցնծությամբ և ուրախության բացականչություններով:

1943 թ. նոյեմբերի 23–ին կառավարության կոչով ավարտվեց ընդհանուր գործադուլը, և բանվորները, ծառայողները, արհեստավորները, առևտրականներն անցան աշխատանքի: Կառավարությունը լրիվ կազմով անցավ իր պարտականությունների կատարմանը: Երկրում վերահաստատվեց բնականոն կյանքը:

Նոյեմբերի 24–ին գեներալ Կատրուն պաշտոնապես տեղեկացրեց Լիբանանի պրեզիդենտին, որ ճանաչում է սահմանադրության մեջ կատարված բոլոր փոփոխությունները, այսինքն՝ մանդատի վերացումը:

Նոյեմբերյան հաղթանակը ձեռք բերվեց շնորհիվ լիբանանցիների համերաշխության և նրանց շարքերի միասնության: Լիբանանյան տարբեր ուղղությունների քաղաքական գործիչները այդ պայքարի ամենակարևոր դասերից մեկը համարում էին այն իրողությունը, որ առաջին անգամ մուսուլմանը, քրիստոնյան, դրուզը, հայը, շիան, մարոնին, ուղղափառը և կաթոլիկը միացան պաշտպանելու համար հայրենիքի իրավունքները, անկախությունը և պատիվը:

Նոյեմբերյան իրադարձություններից հետո Լիբանանի քաղաքական և պետական գործիչները, մամուլը, զանազան կազմակերպություններ կրկին անդրադարձան այդ պատասխանատու օրերին հայերի գրաված դիրքին ու կատարած դերին՝ բարձր գնահատելով նրանց հայրենասիրությունը և նվիրվածությունը Լիբանանի անկախությանը: «Բեյ-

րութ» արաբատառ թերթը հատուկ հոդված տպեց «Աստված պահե մեր հայ եղբայրները» խորագրով, որտեղ նշվում էր. «Մենք իրապես հիացած ենք մեր հայ եղբայրների զգացմունքներով»: Նոյեմբերի 24–ին Ազգային համագումարի նախագահ Ահմադ Դաուքը մեծ ընդունելություն կազմակերպեց, որին լիբանանյան ղեկավարների հետ միասին ներկա էր նաև հայկական պատվիրակությունը: Ողջույնի խոսքով հանդես եկան համագումարի մի քանի անդամներ, որոնք բարձր գնահատեցին հայերի դերը Լիբանանի ազգային–ազատագրական պայքարի մեջ: Հայերի կողմից այդ ընդունելության ժամանակ հանդես եկան Թապուրյանը, Ենիգոմուշյանը և Աղպաշյանը, որոնք նշեցին, որ հայերը թանկ են գնահատում բարեկամությունը արաբների հետ և պատրաստ են մինչև վերջ պայքարել Լիբանանի անկախության ու ազատության համար:

Ֆերբակալումից ազատվելուց և իր պարտականություններին անցնելուց հետո Լիբանանի վարչապետ Ռիայդ Սոլիը հարկ համարեց հրապարակայնորեն անդրադառնալ այն լուրերին, որ իբր ձերբակալության ժամանակ իր փաստաթղթերում հայտնաբերել են հայերին Լիբանանի քաղաքացիությունից զրկելու վերաբերյալ օրենքի նախագիծ: Ռիյադ Սոլիը, 1943 թ. նոյեմբերի 30–ին հանդես գալով պրես–կոնֆերանսում, հայտարարեց. «Բացարձակապես կհերքեմ այդ չարամիտ սուտ լուրերը: Նման փաստաթուղթ գոյություն չի ունեցել: Ես հայերի ներկայությունն այս երկրի մեջ կընդունեմ գրկաբաց և առանձին հաճույքով: Նրանք այս երկրի անկախությունը թերևս մեզանից ավելի լավ պաշտպանեն, որովհետև նրանք երկար ժամանակ ապրել են բռնության տակ, պայքարել և զոհվել են անկախության համար, հետևաբար լավ գիտեն անկախության արժեքը: Իմ կառավարության սիրտը բաց է հայերի համար: Ես պետք է անեմ կարելին, որպեսզի նրանք այսուհետև ավելի լավ բաժին ունենան կառավարական գործերի մասնակցության մեջ»:

Եվ վերջապես՝ 1943 թ. դեկտեմբերին Բեյրութում Հայ ազգային առաջնորդարան այցելեց Լիբանանի պրեզիդենտ Բիշարա ալ–Խուրին, որ գովաբանեց հայ համայնքը՝ նշելով, որ «Լիբանանի հայ համայնքը անբաժան մասն է լիբանանյան ազգության»:

Հայերը նման բարձր գնահատականի արժանացան շնորհիվ իրենց ազնիվ կեցվածքի և Լիբանանի ազգային անկախությունը պաշտպանելու պայքարի համար:

Այսպիսով՝ 1943 թ. նոյեմբերյան զինված ապստամբությունը պսակվեց հաղթանակով: Լիբանանը շատ կարևոր քայլ կատարեց իր քաղաքական անկախության հաստատման ուղղությամբ:

6. Ֆրանսիական իշխանությունների կողմից կառավարման ֆունկցիաների փոխանցումը Լիբանանին

1943 թ. դեկտեմբերին բանակցություններ սկսվեցին Ֆրանսիայի, Սիրիայի և Լիբանանի միջև՝ Ֆրանսիայի կողմից կառավարման բոլոր ֆունկցիաները Սիրիային և Լիբանանին հանձնելու վերաբերյալ: Դեկտեմբերի 22–ին նրանց միջև կնքվեց համապատասխան համաձայնագիր, որտեղ ասված էր. «Այսօր պետության (Ֆրանսիայի — Ն. Հ.) լիազոր գեներալ Կատրուի և սիրիական ու լիբանանյան կառավարությունների ներկայացուցիչների միջև համաձայնություն կայացավ ներկայումս ֆրանսիական իշխանությունների կողմից իրագործվող լիազորություններն այդ երկու պետություններին հանձնելու շուրջը: Այս համաձայնության համապատասխան՝ առաջիկա հունվարի 1–ից սկսած՝ Ընդհանուր շահերը (խոսքը մաքսային ընդհանուր շահերի և համապատասխան սպասարկությունների մասին է — Ն. Հ.) ու նրանց պաշտոնյաները փոխանցվելու են սիրիական և լիբանանյան պետություններին՝ օրենսդրական և վարչական իրավունքների հետ միասին»:

1944 թ. հունվարի 1–ից սկսած՝ Լիբանանի տնօրինության տակ անցան բոլոր կարևոր սպասարկությունները՝ ընդհանուր ապահովության, արտաքին գործերի, ֆինանսական, տնտեսական և օրենսդրական ծառայությունները, փոստ–հեռագիրը, գրաքննությունը, արդյունաբերական և առևտրական սեփականության պաշտպանությունը, հսկողությունը օտար ընկերությունների վրա, առողջապահության, վառոդի ու պայթուցիկ նյութերի արտադրության և այլ ծառայություններ:

1944 թ. հունիսի 5–ին Սիրիայի և Լիբանանի կառավարությունները հայտարարեցին, որ Ֆրանսիայի կողմից կառավարման ֆունկցիաների փոխանցումն իրենց ավարտված է: Այդ օրվանից Լիբանանն ինքն սկսեց տնօրինել ֆինանսների, օրենսդրական, տնտեսական, առողջապահության, ներքին և արտաքին քաղաքականության բոլոր հարցերը: Դա նպաստեց Լիբանանի քաղաքական ստատուսի միջազգային ճանաչմանը: Լիբանանի անկախությունը պաշտոնապես ճանաչեցին աշխարհի մի շարք երկրներ:

Դրանից հետո դրվեց տեղական զորքերի՝ այսպես կոչված «հատուկ զորամասերի» փոխանցման հարցը: Այդ զորքերը գտնվում էին Ֆրանսիական զինվորական իշխանությունների հրամանատարության ներքո: Դրանց թիվը հասնում էր 25 հազարի և հավաքագրվում էր արաբներից, հայերից, քրդերից ու չերքեզներից: Լիբանանի կառավարությունը պաշտոնապես պահանջեց, որ այդ զորքերը դրվեն Լիբանանի տնօրինության տակ: Ի պաշտպանություն այդ պահանջի՝ 1945 թ. հունվարի 29–ին Լիբանանում համընդհանուր գործադուլ հայտարարվեց: Բեյրութում տեղի ունեցան զանգվածային ցույցեր՝ «Բանակը հայրենիքի պատնեշն է, անկախության պաշտպանը և խորհրդանիշը» լոզունգի ներքո: Կառավարության դիրքորոշումը լրիվ հավանության արժանացավ լիբանանյան պառլամենտի 1945 թ. փետրվարի 3–ի նիստում:

Ֆրանսիան հատուկ զորամասերի փոխանցումը Լիբանանին պայմանավորում էր հատուկ պայմանագրի ստորագրումով: Լիբանանը մերժեց այս անհիմն պահանջը: Ի պատասխան դրա՝ 1945 թ. մայիսին Ֆրանսիան լրացուցիչ ռազմական ուժեր բերեց Լիբանան՝ առանց վերջինիս կառավարության գիտության և համաձայնության: Դա խիստ լարեց քաղաքական իրադրությունը Լիբանանում, ինչպես նաև Սիրիայում: Տեղի ունեցան գործադուլներ և ցույցեր, իսկ մի շարք վայրերում՝ բախումներ ցուցարարների և ֆրանսիական զորքերի միջև:

Ուժեղ պայքար էր գնում նաև Սիրիայում: Ֆրանսիան կրկին հարկադրված էր զիջել: 1945 թ. հունիս–հուլիս ամիսներին ավարտվեց «հատուկ զորամասերի» փոխանցումը Լիբանանին և Սիրիային:

Լիբանանի քաղաքական անկախությունն ամբողջական լինելու համար անհրաժեշտ էր օտար ուժերի՝ ֆրանսիական և անգլիական զորքերի դուրսբերումը Լիբանանից: Եվ այդ հարցը 1945–1946 թթ. դարձավ Լիբանանի առջև կանգնած ամենակարևոր ազգային քաղաքական խնդիրը:

Սպառելով հարցը բանակցությունների միջոցով լուծելու հնարավորությունները՝ Լիբանանի և Սիրիայի կառավարությունները դիմեցին ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդին: Վերջինս այդ հարցի քննարկմանը ձեռնամուխ եղավ 1946 թ. փետրվարի 14–ին: Հանդես գալով Անվտանգության խորհրդի նիստում՝ Լիբանանի արտաքին գործերի մինիստր Համիդ Ֆրանժիեն իր կառավարության անունից պահանջեց «անգլիական և ֆրանսիական զորքերի անհապաղ, միաժամանակյա և լրիվ էվակուացիա»:

ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդում ԽՍՀՄ–ը, Լեհաստանը, Եգիպտոսը և Մեքսիկան վճռականորեն պաշտպանեցին Լիբանանի և

Սիրիայի արդարացի պահանջները: Շնորհիվ խորհրդային պատվիրակի կիրառած վետոյի՝ ձախողվեց արևմտյան տերությունների պաշտպանությունը վայելող բանաձևի ընդունումը:

Վերջիվերջո, Անգլիան և Ֆրանսիան հարկադրված եղան նահանջել և պարտավորվեցին իրենց զորքերը դուրս բերել:

1946 թ. դեկտեմբերի 31–ին ավարտվեց օտարերկրյա բոլոր զորքերի դուրսբերումը Լիբանանից:

Դա Լիբանանի ազգային–ազատագրական ուժերի խոշոր և պատմական նշանակություն ունեցող հաղթանակն էր:

Դրանով ավարտվեց ֆրանսիական մանդատի վերացման, Լիբանանի կառավարության կողմից կառավարման ֆունկցիաների ամբողջական տնօրինման և օտար երկրների զինված ուժերի ներկայությունից Լիբանանի տարածքի մաքրման պատմական պրոցեսը:

Լիբանանը դարձավ իրապես անկախ և ինքնիշխան պետություն:

V. ԼԻԲԱՆԱՆԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ: ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (1946–1958 թթ.)

1. Անկախ Լիբանանի սոցիալ–տնտեսական զարգացման մոդելը և առանձնահատկությունները

Լիբանանն իր տնտեսական կառուցվածքով և տնտեսական քաղաքականությամբ զգալիորեն տարբերվում է արաբական մյուս երկրներից: Լիբանանի տնտեսությունը հիմնված է չորս սյուների՝ առևտրի, տուրիզմի, գյուղատնտեսության և արդյունաբերության վրա: Յուրահատկությունը կայանում է նրանում, որ ազգային եկամուտի մեծ մասը ստեղծվում է ոչ թե արտադրության, այլ առևտրի և սպասարկման ոլորտում: Առևտրի բաժինը կազմում է այնքան, որքան արդյունաբերության և գյուղատնտեսության բաժինը՝ միասին վերցրած: Իսկ եթե առևտրի հետ միասին վերցնենք նաև տուրիզմն ու սպասարկությունների ամբողջ համակարգը, ապա նրանց բաժինը ազգային եկամտի մեջ կկազմի 75%:

Անկախության նվաճումից հետո իշխանության գլուխ եկած առևտրական–կոմպրադորական բուրժուազիան և կալվածատերերը

հետևողականորեն ձգտում էին պահպանել Լիբանանի տնտեսության այս կառուցվածքը: Դրանից տուժում էր ազգային արդյունաբերությունը և ոտնահարվում ազգային բուրժուազիայի շահերը: Լիբանանում՝ Բեյրութում, Տրիպոլիում, Սայդայում և մյուս քաղաքներում կան տեքստիլ, սննդի, կաշվի, կոշկեղենի, փայտամշակման, ծխախոտի, ցեմենտի, պատրաստի հագուստի և այլ գործարաններ:

Լիբանանի տնտեսության, մասնավորապես արդյունաբերության մեջ նշված ժամանակահատվածում զգալի դեր էր խաղում հայ բուրժուազիան: Նրան էին պատկանում տեքստիլ, երկաթագործական և մետաղագործական, կաշեգործական, փայտամշակման և սննդի բազմաթիվ գործարաններ, ֆաբրիկաներ և արհեստանոցներ: 60-ական թթ. հայ բուրժուազիային էր պատկանում երկրի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների 18%-ը, արհեստավորական ձեռնարկությունների 43%-ը, իսկ խոշոր ներմուծման մեջ հայ առևտրական բուրժուազիայի բաժինը կազմում էր 10%: 1960 թ. Լիբանանի խոշոր արդյունաբերության մեջ ներդրված 375 մլն լիբանանյան լիրայից 125 միլիոնը պատկանում էր հայ արդյունաբերական բուրժուազիային:

Սակայն Լիբանանում տիրապետող էր հանդիսանում օտարերկրյա կապիտալը: Սկզբնական շրջանում ուժեղ էին ֆրանսիական կապիտալի դիրքերը, մասնավորապես բանկային գործունեության և առևտրի բնագավառում: Հետագայում ուժեղացան անգլիական և ամերիկյան կապիտալի դիրքերը: Լիբանանում լայն գործունեություն ծավալեց նաև իտալական, ճապոնական և արևմտագերմանական կապիտալը:

Անկախության նվաճումից հետո Լիբանանի կառավարությունը որդեգրեց այսպես կոչված «տնտեսական լիբերալիզմի» կամ «բաց դռների» քաղաքականությունը, որը հանդիսանում է Լիբանանի տնտեսական զարգացման հիմնական մոդելը և առանձնահատկություններից մեկը: Այդ քաղաքականությունն առաջին հերթին արտահայտում է առևտրական, կոմպրադորական բուրժուազիայի շահերը և խիստ կերպով հարվածում Լիբանանի ազգային տնտեսությանը, մասնավորապես արդյունաբերությանը, որն այդ տարիներին պրոտեկցիայի կարիք էր զգում: Երկրի արդյունաբերական ձեռնարկությունները «բաց դռների» քաղաքականության հետևանքով ի վիճակի չէին դիմադրելու արևմտյան պետությունների ապրանքների մրցակցությանը:

Լիբանանի ազգային շահերը պահանջում էին վարել ազգային տնտեսությունը և առաջին հերթին արդյունաբերությունը հովանավորելու և արտաքին մրցակցությունից պաշտպանելու քաղաքականություն:

2. Ներքաղաքական դրությունը: «Մեծ Սիրիայի» ծրագիրը և 1949 թ. պետական հեղաշրջման փորձի ձախողումը

Անկախության նվաճումից հետո Լիբանանի առջև, բացի տնտեսական հարցերից, ծառացան նաև ներքաղաքական մի շարք հարցեր: Սկզբնական շրջանում Լիբանանում պահպանվում էին բուրժուա–դեմոկրատական ազատությունները, խոսքի, մամուլի, ժողովներ գումարելու, քաղաքական կազմակերպությունների գործունեության ազատությունը: Լեգալ կերպով գործում էին կուսակցություններն ու կազմակերպությունները: Աշխուժացավ նաև արհմիութենական կյանքը: Լիբանանի աշխատավորների մեծագույն նվաճումը պետք է համարել կառավարության կողմից 1946 թ. սեպտեմբերին ընդունված Աշխատանքային օրենքը: Չնայած իր սահմանափակ բնույթին՝ այն բանվորներին և ծառայողներին որոշ երաշխիքներ էր տալիս, կարգավորում նրանց հարաբերությունները ձեռնարկատերերի հետ և այլն:

Սակայն 1947 թ. սկզբներից կառավարության քաղաքականության մեջ նկատվում է շրջադարձ դեպի հետադիմությունը: Կառավարող վերնախավը անկախության նվաճումից հետո վախենում էր հակաիմպերիալիստական և ազգային–դեմոկրատական պայքարի հետագա ուժեղացումից: Եվ հետադիմությունն անցավ հարձակման: Դա ցայտուն կերպով դրսևորվեց 1947 թ. մայիսի 25–ին տեղի ունեցած պառլամենտական ընտրությունների ժամանակ: Ընտրություններն ընթացան հակադեմոկրատիզմի պայմաններում, թույլ տրվեցին քվեարկության արդյունքների բացահայտ կեղծիքներ: Այդ պատճառով նորընտիր պառլամենտում թուլացան դեմոկրատական ուժերի դիրքերը, որը նրանք նվաճել էին 1943 թ. ընտրությունների ժամանակ: Սկսվեցին դեմոկրատական ուժերի հետապնդումներն ու հալածանքները և 1948 թ. հունվարին մի շարք առաջադիմական կազմակերպություններ հարկադրված անցան ընդհատակ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջ քաշվեց այսպես կոչված «Մեծ Սիրիայի» ծրագիրը, որի գաղափարները ձևավորվել էին դեռևս պատերազմի տարիներին: Նախատեսվում էր Սիրիան, Լիբանանը, Անդրհորդանանը և Պաղեստինի մի մասը միավորել

և ստեղծել «Մեծ Սիրիա», որի մեջ կարող էր մտնել կամ սերտ դաշինք հաստատել նաև Իրաքը: Դա լինելու էր մի թագավորություն՝ Իրաքում և Անդրհորդանանում թագավորող Հաշիմյանների դինաստիայի գլխավորությամբ, որը սերտորեն կապված էր Անգլիայի հետ: Ծրագրի իրագործումը հնարավորություն կտար Անգլիային՝ ավելի ամրապնդել իր դիրքերն Արաբական Արևելքում:

«Մեծ Սիրիայի» կողմնակիցները բացահայտ ճնշում էին գործադրում Լիբանանի վրա՝ ընդհուպ մինչև ահաբեկչությունը և զենքի օգտագործման սպառնալիքները: Իսկ այդ ծրագրի ամենաջերմեռանդ կողմնակից Անդրհորդանանի թագավոր Աբդալլահը, սպառնալով Լիբանանին, անգամ հայտարարեց, որ «եթե Լիբանանը մտածում է դուրս մնալ սիրիական դաշինքից, ապա Սիրիային կրկին կմիացվեն այն տերիտորիաները, որոնք նրանից խլվեցին 1920 թ. մանդատի հաստատման ժամանակ»: Նա նկատի ուներ Լիբանանի հյուսիսային և հարավային մասերը՝ Տրիպոլիի, Սայդայի և Սուրի շրջանները, որոնք Լեռնալիբանանին կցվեցին 1920 թ.: Նա Լիբանանին հասցեագրված իր սպառնալիքների մեջ այնքան հեռու գնաց, որ հայտարարեց, թե իր բանակը կարող է Լիբանանի անակնկալ գրավումով իրականացնել «Մեծ Սիրիայի» ծրագիրը:

Լիբանանի ժողովրդական զանգվածները, առաջադիմական և ազգայնական բոլոր քաղաքական կազմակերպությունները և ուժերը վճռականորեն դեմ արտահայտվեցին այդ ծրագրին՝ գտնելով, որ դա հակասում է Լիբանանի ազգային շահերին, 1943 թ. Ազգային պակտին և 1945 թ. ստեղծված Արաբական պետությունների լիգայի կանոնադրությանն ու որոշումներին: Լիբանանյան «Ան–Նահար» թերթը գավեշտական էր համարում այն հանգամանքը, որ «Մեծ Սիրիայի» ստեղծման հարցը բարձրացրել է մի պետություն՝ Անդրհորդանանը, որը ինքն անկախ չէ և գտնվում է անգլիական մանդատի տիրապետության ներքո: Մեկ այլ թերթ՝ «Ռաջիբ ալ–Ահվալը», արտահայտելով լիբանանյան ամենալայն ժողովրդավարական շրջանների տեսակետը, «Մեծ Սիրիայի» ծրագրի պաշտպաններին համարում էր դավաճաններ՝ գտնելով, որ նրանց լիբանանյան իշխանությունները պետք է անհապաղ ձերբակալեն:

Լիբանանի առաջադիմական ուժերը, միահամուռ մերժելով այդ ծրագիրը, նախազգուշացնում էին, որ նրա իրագործումը կհանգեցներ իմպերիալիստական ազդեցության նոր գոտու կազմավորմանը, Լիբանանում և Սիրիայում հանրապետական կարգերի վերացմանը և արաբական երկրների միջև ընդհարումների ու բախումների առաջացմանը:

«Մեծ Սիրիայի» ծրագրի հարցը 1946 թ. նոյեմբերի 26–ի քննարկման առարկա դարձավ Լիբանանի պառլամենտի նիստում: Պառլամենտի դեպուտատները իրենց ելույթներում այդ ծրագիրը բնութագրեցին որպես Լիբանանի անկախությանը սպառնացող իմպերիալիստական պլան և ընդգծեցին, որ իրենց խնդիրն է պահպանել Լիբանանը որպես անկախ և գերիշխան պետություն: Այդ օրը՝ 1946 թ. նոյեմբերի 26–ին, Լիբանանի պառլամենտը միաձայն ընդունեց հետևյալ բանաձևը. «Լիբանանի պառլամենտը դատապարտում է «Մեծ Սիրիայի» ստեղծման ծրագիրը և կառավարությունից պահանջում է պաշտոնական բողոք ուղարկել Անդրհորդանանի կառավարությանը»:

«Մեծ Սիրիայի» ծրագիրը դատապարտեց նաև Արաբական պետությունների լիգայի քաղաքական կոմիտեն՝ ուշադրության առնելով այն հանգամանքը, որ այն հակասում է Արաբական պետությունների լիգայի կանոնադրությանը:

Լիբանանի կառավարությունը նույնպես պաշտոնապես հանդես եկավ «Մեծ Սիրիայի» ստեղծման դեմ: Լիբանանի արտաքին գործերի նախարար Համիդ Ֆրանժիեն 1945 թ. նոյեմբերին հայտարարեց. «Ես շատ զարմացած եմ, որ ժամանակ առ ժամանակ հարկադրված ենք տարօրինակ խոսակցություններ լսել «Մեծ Սիրիայի» ստեղծման մասին: Լիբանանի կառավարությունը բազմիցս հայտարարել է, որ ինքն ամբողջովին մերժում է այդ գաղափարը»: Այս տեսակետը Լիբանանի կառավարությունը կրկին հաստատեց 1946 թ. իր հայտարարության մեջ, որտեղ ասված էր. «Մենք չենք ուզում «Մեծ Սիրիա» ոչ Լիբանանով, և ոչ էլ առանց Լիբանանի»:

Սակայն նա իր քաղաքականության մեջ հետևողական չէր, շատ հաճախ տատանվում էր և պատրաստ էր դիմել կոմպրոմիսների: Դա հատկապես դրսևորվեց Լիբանանի Սիրիական ազգային–սոցիալական կուսակցության նկատմամբ նրա, այսպես կոչված, մեղմ դիրքորոշման մեջ: Լիբանանում միակ ուժը, որ բացահայտորեն հանդես էր գալիս հօգուտ «Մեծ Սիրիայի» ծրագրի, այդ կուսակցությունն էր: Դա շատ լավ հայտնի էր կառավարությանը, սակայն նա վճռական քայլերի չէր դիմում՝ կասեցնելու նրա գործունեությունը:

1946–1947 թթ. այդ կուսակցությունը Լիբանանի տարբեր վայրերում՝ Բեյրութում, Տրիպոլիում, Դհուր աշ–Շուեյում և այլուր, կազմակերպեց իր կողմնակիցների բազմաթիվ ցույցեր՝ ի պաշտպանություն այդ ծրագրի: Դհուր աշ–Շուեյրում ցուցարարները եկել էին զինված ատրճա-

նակներով ու դաշույններով և հայտարարում էին, որ իրենք պահանջում են, որ իրենց առաջնորդ Անտուան Սաադեն դառնա Լիբանանի պրեզիդենտ: Վերջինս առիթը բաց չէր թողնում հայտարարելու, որ իր ղեկավարած կուսակցությունը պայքարելու է «Մեծ Սիրիայի» ծրագրի իրագործման համար, որի մեջ կմիավորվեն Լիբանանը, Սիրիան, Պաղեստինը, Անդրհորդանանը և Միջագետքը:

Անտուան Սաադեի կամ, ինչպես նրան անվանում էին, «ֆյուրերի» այդ ելույթները բողոքի մեծ ալիք բարձրացրին Լիբանանում: Լիբանանյան «Լ'Օրիան» թերթը նշում էր, որ Սիրիական ազգային–սոցիալական կուսակցությունն իր ֆյուրերի բերանով փաստեց, որ այդ կուսակցությունը լիբանանյան չէ: Իսկ «Ալ–Ամալը», այդ կուսակցության անդամներին համարելով դավաճաններ, գտնում էր, որ Լիբանանում դավաճանների համար տեղ չկա, և պահանջում կառավարությունից դավաճաններին պատժել զենքով:

Մի շարք քաղաքներում և շրջաններում տեղի էին ունենում հակացույցեր: 1947 թ. մարտի 2–ին Լիբանանի առաջադիմական ուժերը բողոքի մեծ միտինգ կազմակերպեցին Բեյրութում՝ դատապարտելով Ազգային–սոցիալական կուսակցության և նրա ղեկավար Անտուան Սաադեի քաղաքականությունը: Այդ միտինգին մասնակցում էին նաև հայերը, որոնք արաբական առաջադիմական ուժերի հետ միասին հանդես էին գալիս «Մեծ Սիրիայի» ծրագրի դեմ: Հայերը այդ ծրագրի դեմ հանդես գալու համար ունեին նաև հատուկ պատճառ: Դա այդ կուսակցության թշնամական վերաբերմունքն էր Լիբանանի հայերի նկատմամբ, որոնց նա պահանջում էր «ծովը թափել»:

1947 թ. արյունալի բախումներ տեղի ունեցան Տրիպոլիում Ազգային–սոցիալական կուսակցության անդամների և ժողովրդական զանգվածների միջև, որոնց ժամանակ զոհվեց 14 և վիրավորվեց 46 մարդ:

Անտուան Սաադեի սադրիչ ելույթները և նրա կուսակցության անդամների գործողությունները կրկին հատուկ քննարկման առարկա դարձան պառլամենտի 1947 թ. մարտի 6–ի նիստում, որի ժամանակ դեպուտատները բացատրություն էին պահանջում կառավարությունից, թե նա ինչ միջոցներ է ձեռնարկում այդ կապակցությամբ: Վարչապետ Ռիյադ Սոլիը պատասխանեց, որ Անտուան Սաադեի ճառը վիրավորանք է Լիբանանի գերիշխանությանը և հակասում է Լիբանանի 1943 թ. Ազգային պակտին: Նա վստահեցրեց պառլամենտին, որ իր կառավարությունը ճնշելու է այդ պակտի և Լիբանանի անկախության դեմ ուղղված

ամեն մի ելույթ: Նա տեղյակ պահեց, որ հրաման է տրված Անտուան Սաադեին ձերբակալել, սակայն վերջինիս հաջողվել էր փախչել:

Չնայած դրան՝ Անտուան Սաադեի կուսակցությունը և կողմնակիցները չդադարեցրին իրենց գործունեությունը և չհրաժարվեցին «Մեծ Սիրիայի» ծրագրի իրականացումից: Դեռ ավելին՝ նրանք 1949 թ. կեսերին անցան վճռական գործողությունների՝ նպատակ ունենալով զինված պետական հեղաշրջումով տապալել Լիբանանի օրինական կառավարությունը, գրավել իշխանությունը և այնուհետև՝ որպես կառավարող կուսակցություն պայքարել «Մեծ Սիրիայի» ստեղծման համար: Այդ դավադրությունը կազմակերպված էր խնամքով՝ համաձայն մշակված ծրագրի: Դավադիրների տրամադրության տակ կար մեծ քանակությամբ զենք, զինամթերք, ավտոմեքենաներ և այլն:

1949 թ. հուլիսի 3–5–ը Սիրիական ազգային սոցիալական կուսակցությունը Լիբանանում պետական հեղաշրջման փորձ կատարեց: Հուլիսի 3–ին նրա զինված ջոկատները Լիբանանի տարբեր վայրերում հարձակում գործեցին ոստիկանական կայանների ու գրասենյակների վրա: Կառավարությունը նրանց դեմ ոտքի հանեց բանակը և ոստիկանությանը: Խռովարարները փախուստի դիմեցին: Սակայն 1949 թ. հուլիսի 4–ի լույս 5–ի գիշերը նրանք դիմեցին նոր հարձակման: Դավադիրները, զինված ավտոմատներով և ատրճանակներով, սիրիական սահմանին ներխուժեցին Ռաշայյայի շրջանը: Այստեղ նրանց և ոստիկանական գնդի միջև տեղի ունեցավ փոխհրաձգություն և, ի վերջո, ոստիկանական ուժերին հաջողվեց ճնշել նրանց դիմադրությունը և փախուստի մատնել խռովարարներին: Զինված մարտեր տեղի ունեցան նաև Մաշպարայի շրջանում: Այստեղ նույնպես խռովարարները պարտություն կրեցին:

Սիրիական ազգային–սոցիալական կուսակցության շատ անդամներ ձերբակալվեցին այդ թվում և նրա ղեկավար Անտուան Սաադեն: Նա դատապարտվեց մահվան և անմիջապես գնդակահարվեց:

Լիբանանի կառավարությանը, բանակի ու ոստիկանության ուժերով և ժողովրդական զանգվածների ամենալայն աջակցությամբ հաջողվեց ճնշել Լիբանանի անկախության և գերիշխանության դեմ ուղղված այդ հետադիմական դավադրությունը: Դա ծանր հարված էր «Մեծ Սիրիայի» բոլոր կողմնակիցներին և մեծ նվաճում Լիբանանի անկախության և գերիշխանության ամրապնդման ուղղությամբ:

3. Ներքաղաքական դրության հետագա սրումը և պրեզիդենտ Բիշարա ալ–Խուրիի հրաժարականը

Լիբանանի կառավարությունը շարունակում էր առաջադիմական կազմակերպությունների և գործիչների հետապնդումը և դեմոկրատական ազատությունների սահմանափակումը, որը սկսվել էր դեռևս 1947 թ.: Այդ ուղղությամբ մեծ ակտիվություն սկսեց ցուցաբերել Ազգային անվտանգության բարձրագույն խորհուրդը:

Երկրում խոր դժգոհություն էր կուտակվել: Դեմոկրատական ուժերը և ժողովրդական մասսաները խիստ դժգոհ էին պրեզիդենտ Բիշարա ալ–Խուրիի ներքին և արտաքին քաղաքականությունից: Նրա պրեզիդենտության 10 տարիների ընթացքում խիստ վատացավ ժողովրդական զանգվածների վիճակը. գներն անընդհատ բարձրանում էին, աճում էր գործազրկությունը, ամենուր ծաղկում էր կաշառակերությունը, սահմանափակվել էին դեմոկրատական ազատությունները:

Դժգոհության առիթ էր տալիս նաև պրեզիդենտի արտաքին քաղաքականությունը: Բիշարա ալ–Խուրին, ինչպես նշվեց, պրեզիդենտ դառնալու համար շատ բանով պարտական էր անգլիացիներին և սկզբնական շրջանում սերտորեն համագործակցում էր նրանց հետ: Դրանից դժգոհ էր Լիբանանի կառավարող վերնախավի այն թևը, որը կապված էր Ֆրանսիայի հետ: ԱՄՆ–ի քաղաքականության ակտիվացումից հետո Բիշարա ալ–Խուրին աստիճանաբար հակվեց նրա հետ ավելի սերտորեն համագործակցելուն: Լիբանանի կառավարությունը 1948–1951 թթ. մի շարք համաձայնագրեր ստորագրեց ԱՄՆ–ի հետ, այդ թվում՝ Լիբանանի տերիտորիայում ամերիկյան «Արամկո» ընկերության նավթամուղի և Սայդայում նավթազտիչ գործարանի կառուցման վերաբերյալ: 1951 թ. մայիսի 29–ի համաձայնագրով Լիբանանն ընդունեց Տրումենի դոկտրինայի 4–րդ կետով նախատեսվող ամերիկյան «օգնությունը»: Վերջապես նա պատրաստակամություն էր հայտնել մասնակցել ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Թուրքիայի կողմից առաջարկվող «Միջինարևելյան հրամանատարություն» ռազմական խմբավորմանը: Լիբանանի կառավարության այս վերակողմնորոշումը անհանգստացրեց Անգլիային և լիբանանյան վերնախավի այն թևին, որ կապված էր նրա հետ:

Երկրի ազգային և առաջադիմական ուժերը ստեղծված ծանր դրությունից ելքը տեսնում էին Բիշարա ալ–Խուրիին տապալելու և նրա վարչակարգից ազատվելու մեջ:

Ընդդիմադիր ուժերը 1952 թ. պառլամենտում միավորվեցին և ստեղծեցին Սոցիալիստական ճակատ, որի մեջ մտան Լիբանանի Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը, Ազգային բլոկը և Քամիլ Շամունի կողմնակից դեպուտատների խումբը: Առանձնապես եռանդուն գործողություն ծավալեց Առաջադիմական սոցիալիստական կուսակցության հիմնադիր և ղեկավար, Լիբանանի ականավոր քաղաքական և պետական գործիչ Քամալ Ջունբլատը, որը գլխավորում էր Սոցիալիստական ճակատը:

Լիբանանի ընդդիմադիր ուժերը պահանջեցին Բիշարա ալ–Խուրիի հրաժարականը՝ միաժամանակ ներկայացնելով բարենորոգումների իրենց ծրագիրը, որով նախատեսվում էր պետական ապարատի զտում, ընտրական սիստեմի փոփոխություն և այլն: Նրանց կոչով 1952 թ. սեպտեմբերին ընդհանուր գործադուլ հայտարարվեց: Երկու օր փակ էին Բեյրութի, Տրիպոլիի, Ջահլեի, Սայդայի, Սուրի գործարանները, արհեստանոցները, խանութները և շուկաները: Բիշարա ալ–Խուրին փորձեց դիմել բանակի օգնությանը, սակայն լիբանանյան բանակի հրամանատար Ֆուադ Շիհաբը հայտարարեց, որ բանակը ժողովրդի դեմ հանդես չի գա:

1952 թ. սեպտեմբերի 18–ին Բիշարա ալ–Խուրին հրաժարվեց Լիբանանի պրեզիդենտի պաշտոնից: Այդ «անարյուն հեղափոխությունից» հինգ օր անց՝ սեպտեմբերի 23–ին, Լիբանանի պառլամենտը երկրի պրեզիդենտ ընտրեց Քամիլ Շամունին:

4. Իրավիճակը Լիբանանում 1952–1958 թթ.

Քամիլ Շամունի պրեզիդենտության տարիները եղան Լիբանանի պատմության՝ դրամատիզմով հագեցված տարիներ: Ներքին քաղաքականության բնագավառում նա վարում էր իր հավանական քաղաքական հակառակորդներին մեկուսացնելու, ընդդիմությունը ջլատելու և իր կողմնակիցների դիրքերն ամրապնդելու գիծ: Շամունի ռեժիմը անխնա հետապնդում էր առաջադիմական գործիչներին, սահմանափակումներ մտցնում դեմոկրատական մամուլի համար: Սովորական երևույթ դարձավ ցույցերն արգելելը և ցրելը: Նրա պրեզիդենտության վերջին շրջանում վատացավ նաև աշխատավորների տնտեսական վիճակը:

Շամունի որդեգրած հետադիմական կուրսն ավելի ցայտունորեն դրսևորվեց արտաքին քաղաքականության բնագավառում: Շամունը վարում էր բացահայտ արևմտամետ քաղաքականություն: Օտարերկր-

յա, գլխավորապես անգլիական և ամերիկյան կապիտալը հոսում էր Լիբանան, մանավանդ 1954 թ. օրենքից հետո, որն օտարերկրյա ընկերություններին վեց տարով ազատում էր հարկեր վճարելուց: Դրան նպաստեց բանկային գործառության գաղտնիությունը պահպանելու մասին օրենքը: Բեյրութում իրենց մասնաճյուղերը բացեցին ամերիկյան, անգլիական և արևմտյան բազմաթիվ այլ բանկեր: Երկիրը ողողված էր արևմտյան, հատկապես ամերիկյան զանազան մասնագետներով, որոնք իրենց հսկողությունն էին սահմանել Լիբանանի պետական հիմնարկների, հասարակական և անգամ արհմիութենական կազմակերպությունների վրա: Ավելի ու ավելի մերձենալով արևմտյան տերություններին՝ Լիբանանը հեռանում էր արաբական այն պետություններից, առաջին հերթին Եգիպտոսից և Սիրիայից, որոնք հետևողականորեն հակաիմպերիալիստական քաղաքականություն էին վարում:

Դա ցայտունորեն դրսևորվեց Բաղդադի ագրեսիվ պակտին միանալու Շամունի մտադրության մեջ: Արևմտյան երկրները, 1955 թ. ստեղծելով Բաղդադի պակտը, որի մեջ մտնում էր միայն մեկ արաբական երկիր՝ Իրաքը, հույս ունեին պառակտում մտցնել արաբական երկրների շարքերում և նրա օգնությամբ արաբական երկրներին առանձին–առանձին ներքաշել այդ ագրեսիվ խմբավորման մեջ: Այդ նպատակով Բաղդադի պակտի անդամները ճնշում էին գործադրում արաբական երկրների, այդ թվում և Լիբանանի վրա: Իրաքի արտաքին գործերի նախարար Ֆադիլ ալ–Ջամալին 1955 թ. սկզբներին այցելություն կատարեց Լիբանան, ինչպես նաև Սիրիա, Հորդանան և Եգիպտոս: Այդ երկրների ղեկավարների հետ հանդիպումների ժամանակ նա փորձում էր նրանց համոզել միանալ թուրք–իրաքյան պակտին, որը դարձավ Բաղդադի պակտի առանցքը:

Արաբական երկրների ճնշող մեծամասնությունը՝ Եգիպտոսը, Սիրիան, Սաուդյան Արաբիան, Հորդանանը և Եմենը, ոչ միայն մերժեցին Բաղդադի պակտին միանալու առաջարկը, այլև դատապարտեցին Իրաքին՝ նրա քաղաքականությունը համարելով թիկունքից հասցված հարված արաբական ազատագրական շարժմանը:

Բոլորովին այլ դիրք գրավեց Լիբանանի կառավարությունը, որը, փաստորեն, հանդես էր գալիս Բաղդադի պակտի պաշտպանությամբ: Կառավարության այդ քաղաքականության պաշտպանությամբ հանդես եկան Լիբանանի մի շարք արևմտամետ ուժեր, կուսակցություններ, խմբավորումներ և քաղաքական գործիչներ: Այսպես, օրինակ՝ «Հիզբ

ալ–Քաթաիբ ալ–Լուբնանի»՝ «Լիբանանի փաղանգներ» կուսակցության ղեկավար Պյեր Ժմայելը հայտարարեց, թե «Լիբանանի համար դժվար է չեզոք մնալը: Անհրաժեշտ է հարել արևմտյան դաշինքին»:

Արաբական մի շարք երկրների կառավարություններ փորձում էին համոզել Քամիլ Շամունին և Լիբանանի կառավարությանը, որ նրանց դիրքորոշումը վտանգավոր է արաբական բոլոր երկրների համար: Լիբանանի կառավարության հետ փոխհասկացողություն հասնելու համար 1955 թ. մարտի 5–ին Բեյրութ ժամանեց եգիպտական կառավարական մի պատվիրակություն: Սակայն Քամիլ Շամունը չարձագանքեց արաբական երկրների կոչերին և նախազգուշացումներին: Նա, ընդհակառակը, ավելի ուժեղացրեց իր շփումները Իրաքի և Թուրքիայի՝ Բաղդադի պակտի այդ երկու անդամ երկրների հետ:

Լիբանանի դեմոկրատական և հայրենասիրական ուժերը բացահայտորեն իրենց դժգոհությունն էին արտահայտում կառավարության քաղաքականությունից: Լիբանանի Ազգային համագումարը, քաղաքական ու հասարակական կազմակերպությունները 1955 թ. մարտին գումարեցին մի ժողով, որտեղ հանդես եկան Լիբանանի ականավոր քաղաքական գործիչներ Քամալ Ջունբլատը, Նասիբ Մեթնին, Անվար Խաթիբը, Ժորժ Հաննան, Հուսեյն Ուվեյնին և ուրիշներ: Նրանք պահանջեցին կառավարությունից չմիանալ որևէ ռազմական պակտի: Ժողովի կողմից ընդունված որոշման մեջ դատապարտվում էր թուրք–իրաքյան պակտը՝ այն համարելով արաբական համերաշխության խախտում:

Սակայն Լիբանանի պրեզիդենտ Շամունը, անտեսելով Լիբանանի ազգային–հայրենասիրական ուժերի պահանջը, 1955 թ. ապրիլի 1–ին մեկնեց Անկարա, որտեղ բանակցություններ վարեց Լիբանանը թուրք–իրաքյան պակտին միանալու հարցի շուրջը: Դա խոր դժգոհություն առաջացրեց երկրում: Լիբանանում գումարվում էին ժողովներ, կազմակերպվում ցույցեր, հրատարակվում թռուցիկներ՝ ուղղված Բաղդադի պակտի և Լիբանանի արտաքին քաղաքականության դեմ:

1955 թ. ապրիլի 2–ին՝ Շամունի Թուրքիա մեկնելու հաջորդ օրը, իր հերթական նիստը գումարեց Լիբանանի ազգային համագումարը, որը նորից թուրք–իրաքյան պակտի դեմ արտահայտվեց: Ելույթ ունեցողներն առաջարկում էին Թուրքիայի և արևմտյան պետությունների հետ ռազմական պակտեր կնքելու փոխարեն ստեղծել արաբական միացյալ բանակ:

1955 թ. ապրիլի 3–ին հզոր ցույց տեղի ունեցավ Բեյրութի Բաստա թաղամասում, որին մասնակցում էին 3000 ցուցարարներ՝ արաբ-

ներ և հայեր: Ցուցարարները կրում էին Բաղդադի պակտի դեմ ուղղված և արաբական միասնությանը սատարող բազմաթիվ լոզունգներ: Ոստիկանությունը դաժանորեն ցրեց այդ ցույցը և ձերբակալեց մի քանի տասնյակ արաբ և հայ ցուցարարներ: Ապրիլի 7–ին մի նոր ցույց տեղի ունեցավ Հերմելում՝ ուղղված Բաղդադի պակտին միանալու Լիբանանի կառավարության մտադրությունների դեմ:

Լիբանանի ազգային, հայրենասիրական և դեմոկրատական ուժերի, ինչպես նաև արաբական հասարակական կարծիքի ճնշման ներքո, Լիբանանի կառավարությունը հարկադրված եղավ նահանջել և փոխել իր դիրքորոշումը: Լիբանանի վարչապետ Սամի Սոլիը պաշտոնապես հայտարարեց, որ Լիբանանը չի միանա Բաղդադի պակտին:

Դա կարևոր հաղթանակ էր, որ Լիբանանի ժողովուրդը ձեռք բերեց շնորհիվ ազգային միասնության և Լիբանանի ժողովրդի հետ արաբական այլ երկրների համերաշխության ու համագործակցության:

Շամունը, հարկադրված լինելով հրաժարվել Բաղդադի պակտին միանալուց, չմիացավ նաև արաբական այն երկրներին, որոնք վարում էին հակաիմպերիալիստական քաղաքականություն: 1956 թ. Եգիպտոսի դեմ Անգլիայի, Ֆրանսիայի և Իսրայելի սանձազերծված ագրեսիայի ժամանակ Շամունը հրաժարվեց խզել դիվանագիտական հարաբերությունները Անգլիայի և Ֆրանսիայի հետ, ինչպես արեցին արաբական մի շարք երկրներ, և անտեսելով ժողովրդի պահանջը՝ իրական օգնություն ցույց չտվեց Եգիպտոսին:

Լիբանանը դարձավ արաբական առաջին երկիրը, որը 1957 թ. մարտին ընդունեց «Էյզենհաուերի դոկտրինան»: Լիբանանի բոլոր ազգային–հայրենասիրական ուժերը հանդես եկան այդ դոկտրինայի դեմ՝ նշելով, որ Լիբանանի ազգային շահերին ամենից ավելի համապատասխանում է չեզոքության և ազգային անկախության քաղաքականությունը: Ի բողոք Լիբանանի կառավարության քաղաքականության՝ իրենց պառլամենտական մանդատներից հրաժարվեցին նախկին վարչապետներ Ռաշիդ Քարամեն և Աբդալլահ Յաֆին, պառլամենտի նախկին նախագահներ Ահմադ Ասադը և Սաբրի Համադեն, ինչպես նաև մի քանի այլ դեպուտատներ: Ընդունելով «Էյզենհաուրի դոկտրինան»՝ Լիբանանը, ինչպես նշում է Ամին Սահիդը, «դուրս եկավ արաբական ազատագրված պետությունների խմբից և ընկավ պակտերի իմպերիալիստական քաղաքականության ուղեծիրը»:

1957 թ. գարնանը ընդդիմադիր ուժերը միավորվեցին և ստեղծեցին **Ազգային միացյալ ճակատ**, որի մեջ մտան Առաջադիմական–սոցիալիստական և «Նաջջադե» կուսակցությունները, քաղաքական կուսակցությունների Ազգային համագումարը, Ռաշիդ Քարամեի խումբը Տրիպոլիից, ինչպես նաև առանձին քաղաքական գործիչներ՝ Անրի Ֆարաոնը, Ֆիլիպ Թակլան, Համիդ Ֆրանժիեն և ուրիշներ: Ապրիլին ճակատը հրապարակեց մի հայտարարություն, որտեղ շարադրված էին նրա հիմնական սկզբունքները, որի վրա պետք է խարսխվեր Լիբանանի կառավարության քաղաքականությունը: Նրա հիմնական պահանջները հանգում էին հետևյալին. բոլոր միջոցներով պահպանել Լիբանանի անկախությունն ու գերիշխանությունը, հավատարիմ մնալ 1943 թ. Ազգային պակտին, վարել չեզոքության քաղաքականություն և օտար ոչ մի պետության չտալ առանձնաշնորհյալ դիրք, սերտորեն համագործակցել արաբական երկրների հետ և վարել արաբական քաղաքականություն, չընդունել որևէ օտար օգնություն, որը կարող է սահմանափակել Լիբանանի ազատությունը և վտանգի տակ դնել նրա անկախությունն ու ինքնիշխանությունը, ընդդիմանալ բոլոր իմպերիալիստական և սիոնիստական ծրագրերին, պահպանել Լիբանանի դեմոկրատական, հանրապետական և պառլամենտական վարչակարգը և այլն:

Ազգային ճակատը ցանկացավ իր այս գլխավոր պահանջները հանձնել պրեզիդենտ Քամիլ Շամունին, սակայն վերջինս չբարեհաճեց ընդունել Ազգային ճակատի պատվիրակությանը: Ազգային ճակատը բողոքեց պրեզիդենտի այդ քայլի դեմ և, ի պատասխան, որոշեց ընթացք չտալ պրեզիդենտի կողմից եկող հրավերներին և ներկա չգտնվել այն հանդեսներին և ընդունելություններին, որտեղ կարող էր ներկա գտնվել պրեզիդենտը:

Ազգային ճակատի ստեղծումը դրական երևույթ էր: Նա նպաստեց երկրի առաջադիմական և դեմոկրատական ուժերի համախմբմանը և բարձրացրեց նրանց հաղթանակի շանսերը Շամունի վարչակարգի դեմ մղվող պայքարում: Այդպիսի ճակատի ստեղծումը համապատասխանում էր Լիբանանի ազգային շահերին: Ինչպես նշում էր Բեյրութում լույս տեսնող «Ալ–Ախբար» շաբաթաթերթը. «Ազգային բարձրագույն շահերը պահանջում են, որ բոլոր հայրենասիրական ուժերը միանան ազատելու և փրկելու երկիրն այս քաղաքականության անեծքից, «էյզենհաուերի դոկտրինայի» ու Բաղդադի պակտի կեղտից և հաստատ ընթանալու

անվտանգության, չեզոքության, խաղաղության, ինքնիշխանության, կայունության, հանդարտության և ազգային եղբայրության երթում»:

Ազգային ճակատը և մյուս ընդդիմադիր ուժերը որոշեցին կառավարությանը վճռական ճակատամարտ տալ 1957 թ. հունիսին նշանակված պառլամենտական ընտրությունների ժամանակ, որը վերածվեց քաղաքական կատաղի պայքարի: Շամունը ցանկանում էր պառլամենտում ստեղծել հուսալի մեծամասնություն և փոփոխություններ մտցնել սահմանադրության մեջ, որը նրան իրավունք կտար երկրորդ անգամ անընդմեջ վերընտրվել պրեզիդենտ, որն արգելված էր Լիբանանի սահմանադրությամբ: Ազգային ճակատը դեմ էր դրան և ամեն կերպ ջանում էր ծախսողել այդ ծրագրերի իրականացումը: Ազգային ճակատի կոչով 1957 թ. մայիսի 12–ին Բեյրութում տեղի ունեցավ հսկայական միտինգ, որին մասնակցեց 75 հազ. մարդ՝ բանվորներ, ծառայողներ, գյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ, մտավորականներ և սոցիալական այլ խավերի ներկայացուցիչներ: Միտինգում ելույթ ունեցան Լիբանանի մի շարք ականավոր քաղաքական գործիչներ, որոնք նշում էին, որ Լիբանանի ժողովրդի ցանկությունն է Լիբանանը տեսնել անկախ, մնալ հավատարիմ 1943 թ. Ազգային պակտին, պահպանել միջհամայնքային համերաշխությունը, դատապարտել կառավարության ճնշումի, սարսափի և հալածանքների քաղաքականությունը, պայքարել հլու–հնազանդ պառլամենտական մեծամասնություն ստեղծելու կառավարության փորձերի դեմ:

Ազգային ճակատը պահանջեց կառավարության հրաժարականը և նոր կառավարության կազմումը, որի գլխավոր խնդիրը պետք է լիներ վարել չեզոք քաղաքականություն, հարգել սահմանադրությունը, դեմոկրատական ազատությունները և նորմալ պայմաններ ստեղծել պառլամենտական ընտրությունների համար: Այդ պահանջների բավարարման համար Ազգային ճակատի կոչով 1957 թ. մայիսի վերջերին ընդհանուր գործադուլ սկսվեց Բեյրութում, Տրիպոլիում, Սայդայում, Սուրում, Նաբաթիայում, Բաալբեքում, Հերմելում և երկրի այլ քաղաքներում ու շրջաններում: Չորս օր փակ մնացին գործարանները, արհեստանոցները, խանութները և այլ ձեռնարկություններ: Գործադուլին զուգընթաց, տեղի էին ունենում ցույցեր: Կառավարությունը 1957 թ. մայիսի 30–ին ցուցարարների դեմ նետեց ոստիկանական ուժեր և զրահապատ մեքենաներ, որոնք գնդակոծեցին ցուցարարների շարքերը: Սպանվեց 10, վիրավորվեց 130, և ձերբակալվեց 410 մարդ:

Կառավարության վայրագ գործողությունները չվախեցրին ցուցարարներին և չկոտրեցին ընդդիմադիր ուժերի կորովը: Հունիսի 1–ին Ազգային ճակատը հայտարարեց, որ պայքարը շարունակվելու է: Կառավարող շրջանների համար ստեղծվեց ծանր դրություն, և նրանք հարկադրված եղան նահանջել: Հունիսի 2–ին տեղի ունեցավ բանակի ընդհանուր հրամանատար գեներալ Ֆուադ Շիհաբի հանդիպումը Ազգային ճակատի պատվիրակության հետ: Պատվիրակությունը պահանջեց վերջ տալ բռնություններին և ապահովել պառլամենտական ընտրությունների ազատությունը: Շիհաբն ընդունեց այդ պահանջները և իր զինվորական պատվով խոսք տվեց ապահովել ընտրությունների ազատությունը:

Հունիսի 3–ին պրեզիդենտ Շամունի ղեկավարությամբ տեղի ունեցավ կառավարության նիստ, որը բավարարեց Ազգային ճակատի մի շարք պահանջները: Նա համաձայնվեց, որ բանակը վերահսկի ընտրությունները, Ազգային ճակատի երկու ներկայացուցիչներ մտնեն կառավարության մեջ՝ որպես պետական նախարարներ, և ստեղծվի ընտրություններին վերահսկող վերաքննիչ մարմին: Վերջապես՝ կառավարությունը համաձայնվեց ազատ արձակել մայիսի 30–ին և նրանից հետո բոլոր ձերբակալվածներին և դադարեցնել բոլոր կամայական միջոցառումները:

Չնայած կառավարության այդ խոստումներին՝ պառլամենտական ընտրություններն անցան բացահայտ կեղծարարության, բռնության և սարսափի պայմաններում: Շամունին այդ ուղիով հաջողվեց «հաղթանակ» տանել: Պառլամենտի 66 դեպուտատներից 44–ը կամ 2/3–ը նրա կողմնակիցներ էին:

Դա է՛լ ավելի սրեց քաղաքական իրադրությունը: Ազգային ճակատը և երկրի բոլոր հայրենասիրական ու ընդդիմադիր ուժերը չէին կարող հաշտվել այն մտքի հետ, որ Շամունի ներքին և արտաքին քաղաքականությունը, որը հակասում էր Լիբանանի ազգային շահերին, կարող էր շարունակել ևս վեց տարի:

Ընդդիմադիր ուժերը հասկացան, որ խաղաղ և լեգալ միջոցներով անհնար է ազատվել Շամունի վարչակարգից և փոխել կառավարության քաղաքականությունը: Այդ խնդրի իրականացման համար պահանջվում էին պայքարի այլ միջոցներ և մեթոդներ:

VI. ԱՌԱՋԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ (1958 թ.)

1. Քաղաքացիական պատերազմի պատճառները և հակադիր քաղաքական խմբավորումների կազմավորումը

1957 թ. վերջերին և 1958 թ. սկզբներին ավարտվեց Լիբանանի տարբեր քաղաքական ուժերի սահմանազատումը: Շամուն–Սոլիի կառավարությանը թիկունք կանգնեցին «Լիբանանյան փաղանգները»՝ քրիստոնյա մարոնի համայնքի հիմնական ռազմաքաղաքական ուժը և Սիրիական ազգային–սոցիալական կուսակցությունը: Նրանց էր հարում Հայ հեղափոխական դաշնակցությունը:

Իսկ հակառակ կողմում դասավորվեցին ազգային–դեմոկրատական, հակաիմպերիալիստական ուժերի տարբեր խմբավորումները՝ Ազգային միասնության ճակատը, որի մեջ մտնում էին Առաջադիմական–սոցիալիստական, «Նաջջադե», Բաաս, Ազգային կոչ և Սահմանադրական բլոկ կուսակցությունները, ընդդիմադիրների խումբը Տրիպոլիում՝ Ռաշիդ Քարամեի գլխավորությամբ, Քաղաքական կազմակերպությունների և անձնավորությունների համագումարը՝ Հուսեյն Ուվեյնիի գլխավորությամբ:

Ասպարեզում հայտնվեց նաև մեկ այլ ընդդիմադիր խմբավորում՝ այսպես կոչված «Երրորդ ուժը», որը հիմնականում բաղկացած էր Լիբանանի խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչներից: «Երրորդ ուժը» արտահայտում էր Լիբանանի բուրժուազիայի այն շրջանների շահերն ու քաղաքական տրամադրությունները, որոնք սկզբունքորեն դեմ չէին Արևմուտքի հետ Լիբանանի մերձեցմանը, սակայն դեմ էին Շամունի կառավարության բացահայտ պրոիմպերիալիստական քաղաքականությանը, որը կարող էր վտանգի տակ դնել Լիբանանի անկախությունը: Իսկ դա չէր համապատասխանում լիբանանյան խոշոր բուրժուազիայի շահերին: «Երրորդ ուժը» փորձում էր որոշ իմաստով նաև միջնորդի դեր կատարել կառավարության և ժողովրդական զանգվածների ու նրանց շահերն արտահայտող կազմակերպությունների միջև և ստիպել Շամունին՝ փոխել իր բացահայտ ամերիկանամետ քաղաքական կուրսը, մի կողմից, և հասնել ազգային–ազատագրական, ընդհանրապես իմպերիալիզմի դեմ ուղղված ժողովրդական պայքարի թուլացմանը, մյուս կողմից:

Ընդդիմադիր ուժերի հետ էր Լիբանանի կոմունիստական կուսակցությունը, որի հարաբերություններն առավել սերտ էին Ազգային միասնության ճակատի անդամ կուսակցությունների ու խմբավորումների հետ:

Ընդդիմադիր ճակատի հետ էին նաև հայ կոմունիստները, սոցիալ–դեմոկրատական հնչակյանները, ռամկավարները և հայ անկախականները:

Ձևականորեն պայքար ծավալվեց սահմանադրությունը փոխելու հարցի շուրջը, որի միջոցով Շամունը ձգտում էր ևս վեց տարով երկարաձգել իր իշխանությունը: Պրեզիդենտ Շամունը, 1958 թ. հունվարին ընդունելով «Երրորդ ուժի» պատվիրակությանը, հայտարարեց, որ ինքը վերատեսության կենթարկի սահմանադրությունը, եթե երկրում չգտնվի որևէ մեկը, ով, իրեն հաջորդելով, ապահովի իր քաղաքականության շարունակությունը: «Աթ–Թելեգրաֆ» թերթը Շամունի վերոնշյալ հայտարարությունը համեմատեց ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս XIV–ի՝ «Պետությունը ես եմ» հայտարարության հետ:

Իրականում պայքարը գնում էր այն հարցի շուրջ՝ շարունակել արդյոք Շամունի հակազգային, հակաարաբական և պրոիմպերիալիստական կուրսը, թե՞ փոխել Լիբանանի ներքին ու արտաքին քաղաքականությունը և վարել Լիբանանի ազգային շահերին համապատասխանող քաղաքականություն: Սա էր ապստամբության և քաղաքացիական պատերազմի գլխավոր պատճառը:

1958 թ. հունվարի 27–ին կայացավ Ազգային ճակատի մամուլի կոնֆերանսը, որի ժամանակ Շամունի հայտարարության կապակցությամբ Ազգային ճակատի անունից հանդես եկավ Աբդալլահ Յաֆին: Նա խիստ քննադատության ենթարկեց Շամունի քաղաքականությունը՝ նշելով, որ նա ոտնակոխ արեց Լիբանանի Ազգային պակտը, Լիբանանը դարձրեց լրտեսների և իր դրացի արաբական երկրների դեմ ուղղված դավադրությունների որջ: Նա ընդգծեց, որ Ազգային ճակատը դեմ է սահմանադրությունը փոփոխելուն և Շամունի վերընտրությանը, որովհետև նախագահի թեկնածուն պետք է լինի անկեղծ ու անկաշառ ազգային, որը կհետապնդի արաբական անկախ քաղաքականություն: Ազգային ճակատի հայտարարության մեջ նշվում էր, որ «Լիբանանի ժողովրդի առջև կանգնած է հետևյալ երկընտրանքը. ընտրություն կատարել պրեզիդենտ Շամունի կամ Լիբանանի միջև»:

Շամունի պլանները և քաղաքական նպատակները դատապարտող որոշում ընդունեց նաև Ազգային համագումարը, որի նիստը տեղի ունեցավ 1958 թ. մարտի 27–ին: Նիստին մասնակցում էին տարբեր քա-

դաքական հոսանքների պատկանող 80 հայտնի գործիչներ: Ընդունված որոշման մեջ ասվում էր. «Ստորագրյալներս որոշեցինք միացնել մեր ճիգերը և մեկտեղել մեր ուժերը ընդդիմանալու համար նախագահական մանդատի վերանորոգմանը, որը հակասում է ժողովրդի կամքին ու վտանգում այս հայրենիքը»:

Սահմանադրության փոփոխության դեմ արտահայտվեցին Լիբանանի երկու կարևոր կրոնական համայնքների՝ մարոնիների հոգևոր առաջնորդ պատրիարք Մեուշին և հանրապետության մուֆթին՝ շեյխ Մուհամմադ Ալայան: Պատրիարք Մեուշին հայտարարեց, որ ոչ մի ձեռք չպետք է կպչի սահմանադրությանը, քանի որ նրա փոփոխումը կնշանակի երկիրը նետել արկածախնդրության գիրկը:

1958 թ. ապրիլի 10–ին կայացավ Լիբանանի մուսուլմանական՝ սուննի, շիա և դրուզ համայնքների 300 ներկայացուցիչների հավաքը, որոնք նույնպես դատապարտեցին սահմանադրությունը փոփոխելու և Շամունին պրեզիդենտի պաշտոնում վերընտրելու փորձերը: Նրանք մուսուլմանական համայնքների անունից արտահայտվեցին հոգևոր իսլամ–քրիստոնյա միասնականության:

Միաժամանակ տեղի էին ունենում զանգվածային ցույցեր ընդդեմ Շամունի փորձերի: Դրանցից հատկապես հիշատակության է արժանի 1958 թ. մարտի 21–ին Տրիպոլիում տեղի ունեցած բազմահազարանոց ցույցը:

Սակայն Շամունը բոլորովին մտադիր չէր հրաժարվել իր ծրագրերից: Նա մոբիլիզացրեց իր կողմնակիցներին և նրանց զենք բաժանեց, փորձեց միջհամայնքային երկպառակություններ հրահրել քրիստոնյաների ու մուսուլմանների միջև, իսկ նրա կողմնակից պատգամավորները բացահայտ ընտրական քարոզարշավ սկսեցին պառլամենտում Շամունին վերընտրելու համար: Երկրում մեծ թափ առան դավադրությունները, խժդժությունները և ամեն տեսակի անօրինականությունները: Դրա զոհը դարձավ Լիբանանի հայտնի հասարակական և ազգային գործիչ, «Աթ–Թելեգրաֆ» հեղինակավոր թերթի խմբագիր և տնօրեն Նասիբ Մեթնին, որը և Քամիլ Շամունի վարչակարգի դեմ ապստամբության ազդանշան ծառայեց:

2. Համազգային ապստամբությունը

1958 թ. մայիսի 7–ին, երբ Նասիբ Մեթնին տուն էր վերադառնում, բանդիտները հարձակվեցին նրա վրա և սպանեցին նրան: Նա համարձա-

կորեն հանդես էր գալիս Շամունի քաղաքականության և վարչակարգի դեմ: Նասիբ Մեթնին դեմ էր Շամունի վերընտրությանը, և նրա թերթը դարձել էր Շամունի քաղաքականության քննադատության իսկական ամբիոն: Նասիբ Մեթնիի սպանությունը քաղաքական ակտ էր, որի մեջ Լիբանանի ազգային–հայրենասիրական ուժերը մեղադրեցին Սամի Սոլհի կառավարությանը և անձամբ Շամունին՝ նրան համարելով ազգի դավաճան:

Այդ քաղաքական սպանությունը լցրեց ժողովրդի համբերության բաժակը: Եվ Շամունի ու նրա քաղաքականության դեմ կուտակված զայրույթը պոռթկաց ու դուրս հորդեց վարար գետի նման:

Լիբանանն ապստամբեց: Սկսվեց քաղաքացիական պատերազմը:

Ընդդիմադիր ուժերի կոչով 1958 թ. մայիսի 9–ին Ազգային ճակատն ամբողջ երկրով մեկ հայտարարեց համընդհանուր գործադուլ՝ միաժամանակ պահանջելով Շամունի անհապաղ հրաժարականը և մինչև նոր պրեզիդենտի ընտրությունը ստեղծել փրկության կաբինետ: Ի պատասխան Ազգային ճակատի կոչի՝ Լիբանանում մայիսի 9–ին սկսվեց համընդհանուր գործադուլ:

Ապստամբության դրոշ բարձրացվեց Տրիպոլիում: Մայիսի 9–ին Տրիպոլիում մոտ 1000 մարդ, դուրս գալով Մանսուրի մզկիթից, իշխանությունների դեմ ուղղված բողոքի ցույց կազմակերպեց, որոնց միացան նաև ուրիշները: Ցույցերը ճնշելու համար Շամունը նրանց դեմ նետեց անվտանգության ուժերը, սակայն ցուցարարները չնահանջեցին, և իսկական մարտ տեղի ունեցավ, որի ընթացքում վիրավորվեց 40 մարդ: Այդ մարտերը շարունակվեցին նաև հետագա օրերին: Համառ մարտեր տեղի ունեցան Տրիպոլիի նավահանգստի շրջանում: Ապստամբները փորեցին խրամատներ և կառուցեցին բարիկադներ: Երկու ժամ տևած մարտերից հետո ապստամբ ժողովուրդը դարձավ դրության տերը:

Տրիպոլիում ապստամբությունը ղեկավարում էր Ռաշիդ Քարամեն, որի ղեկավարությամբ ստեղծվեց 8 հոգուց բաղկացած կենտրոնական հրամանատարություն, որը լուծում էր բոլոր քաղաքական, ռազմական և կազմակերպչական հարցերը: Ստեղծվեցին ժողովրդական գվարդիա, գործադիր մարմին, հեղափոխական դատարաններ և այլն: Տրիպոլիում, իսկ հետագայումի նաև Լիբանան այլ վայրերում, որոնք անցնում էին ապստամբների իշխանության ներքո, ստեղծվում էին նոր կառավարական ու պետական մարմիններ:

Ապստամբությունը Տրիպոլիում ճնշելու համար կառավարությունը ապստամբների դեմ նետեց խոշոր ռազմական ուժեր, այդ թվում՝

տանկեր և ինքնաթիռներ: Նա պաշարեց Տրիպոլիի՝ այսպես կոչված Հին քաղաքը, և նավահանգիստը՝ ալ–Մինան, փորձեց քաղաքը կտրել մյուս շրջաններից և սովի մատնել բնակչությանը: Կառավարական զորքերը, որոնց միջուկը կազմում էին ժանդարմերիան և ոստիկանական ուժերը մայիսի 9–ից մինչև հունիսի սկզբները 12 անգամ փորձեցին մտնել Տրիպոլի և ճնշել ապստամբությունը: Սակայն այդ բոլոր փորձերը՝ թե՛ ռազմական և թե՛ սովի միջոցով կոտրել ապստամբների կամքը ու ճնշել ապստամբությունը, անցան ապարդյուն:

Մայիսի 12–ին հուզումներ սկսվեցին Բեյրութում, որոնք այնուհետև վերածվեցին զինված ապստամբության, որը գլխավորում էր Սաիբ Սալամը: Ապստամբության գլխավոր կենտրոններն էին Բեյրութի Բաստա, Թարիկ Ջադիդ, Մուսայթբե և այլ թաղամասերը: Առաջին զինված ընդհարումը ապստամբ բեյրութցիների և կառավարական ուժերի միջև տեղի ունեցավ մայիսի 12–ին, որի ընթացքում զոհվեց 10 մարդ: Ապստամբներն այրեցին ամերիկյան ինֆորմացիոն կենտրոնի բյուրոյի շենքը: Բեյրութում կատաղի մարտեր տեղի ունեցան մայիսի 16–ին, երբ ապստամբները հարձակվեցին Ռաս Բեյրութի և ժանդարմերիայի զորանոցների վրա: Բեյրութում ապստամբների հենակետը դարձավ Բաստա թաղամասը, որտեղ կանգնեցվեցին բարիկադներ և փորվեցին խրամատներ: Բեյրութում օր չկար, որ արյունալի ընդհարումներ կամ մարտեր տեղի չունենային: Բեյրութում ստեղծվեցին արհեստանոցներ, որտեղ զենք ու պայթուցիկներ էին արտադրում: Բեյրութցիներին Շուֆից օգնություն ուղարկեց Քամալ Ջունբլատը՝ նրանց տրամադրելով գնդացիրներ, նռնակներ և ականանետներ:

Կառավարական ուժերի և Բեյրութի ապստամբների միջև կատաղի ճակատամարտ տեղի ունեցավ հունիսի 14–15–ը: Կառավարությունը որոշել էր վճռական գրոհով ճնշել ապստամբությունը և վերացնել ապստամբական օջախները մայրաքաղաքում: Բայց դա նրան չհաջողվեց, թեև նա ապստամբների դեմ նետել էր նաև տանկեր: Ապստամբները կարողացան ոչ միայն հետ մղել կառավարական ուժերի գրոհները, այլև անցան հակահարձակման, գնդակոծեցին պրեզիդենտական պալատը, Բեյրութի բանտերից մեկը, այրեցին վարչապետ Սամի Սուլհի տունը և այլն: Դա զգալիորեն բարելավեց ապստամբների դրությունը և մեծ թափ հաղորդեց ապստամբական շարժմանը ամբողջ երկրում:

Ապստամբության մյուս կարևոր կենտրոնը դարձավ Շուֆի շրջանը: Այստեղ պայքարը ղեկավարում էր Քամալ Ջունբլատը: Նա ստեղծեց

իր ռազմական ուժերը, ոստիկանությունը, արդարադատության մարմինները և վարչական այլ օրգաններ, որոնք գտնվում էին Ջունբլատների հայրական Մուխթարա գյուղում: Ջունբլատի զորքերը կարողացան գրավել շրջակա մի շարք գյուղեր և ամրապնդել իրենց դիրքերը Շուֆի շրջանում: Այնուհետև նա հունիսի 30–ին իր զորքերն ուղղեց Բեյրութի ուղղությամբ՝ նպատակ ունենալով տիրանալ Բեյրութի մերձակա մի քանի գյուղերի և վերահսկողություն սահմանել Բեյրութի օդանավակայանի վրա: Կռահելով Քամալ Ջունբլատի մտադրությունը՝ Շամունը Ջունբլատի զորքերի դեմ նետեց բավականին խոշոր ուժեր՝ 1200 զինյալ ոստիկաններ, 20 հրետանի, մեծ քանակությամբ զրահապատ մեքենաներ և տանկեր: Օդից նրանց պաշտպանում էին 6 ռազմական ինքնաթիռներ: Հուլիսի 2–ին սկսվեց մի իսկական ճակատամարտ, որը տևեց 4 օր: Այնաբ գյուղը երեք անգամ ձեռքից ձեռք անցավ: Կառավարական ուժերին մեծ զոհերի ու ճիգերի շնորհիվ հաջողվեց ստիպել Ջունբլատի զորքերին նահանջել: Այդ ճակատամարտում շամունական ուժերը կորցրեցին 300 սպանված և վիրավոր, այդ թվում՝ 17 իրաքցի, 32 հորդանանցի, 55 բահրեյնցի և մեկ բրիտանական սպա, որը ծպտված էր արաբի զգեստով: Դրանք արաբական որոշ երկրներում հավաքագրված՝ այսպես կոչված «կամավորներ» էին, որոնք եկել էին պաշտպանելու Շամունի վարչակարգը:

Ապստամբական շարժումները ծավալվել էին նաև Սուրում, Բաալբեկում, Զոորթայում, Հերմելում, Սայդայում, Մարջայունում, Բինտ Ջբեյլում և երկրի մյուս վայրերում: Հերմելում ապստամբությունը ղեկավարում էր Լիբանանի պառլամենտի նախկին նախագահ Սաբրի Համադեն: Այստեղ ստեղծվեց 1000 հոգուց բաղկացած ռազմական ջոկատ, որը իշխանությունը Հերմելում վերցրեց իր ձեռքը: Այնուհետև՝ մայիսի 21–ին ապստամբները գրավեցին Բաալբեկ քաղաքը: Սայդան նույնպես անցավ ապստամբների ձեռքը, որոնց գլխավորում էր Սաադ Մաարուֆը: Այստեղ ապստամբները ստեղծեցին տեղական զանազան կոմիտեներ, որոնք զբաղվում էին ֆինանսական, ներքին ապահովության և այլ հարցերով:

Ամբողջ երկիրը ներգրավվել էր քաղաքացիական պատերազմի մեջ: Ապստամբական կենտրոնի էր վերածվել Լիբանանի հյուսիսում գտնվող Զոորթա քաղաքը, որտեղ ապստամբական ջոկատում միավորվել էր 1500 մարտիկ: Ապստամբները մի քանի վայրերում պայթեցրին «Իրաք պետրոլեում» ընկերության նավթամուղը:

Ապստամբները կազմակերպեցին նաև իրենց ռադիոհաղորդումները: Քաղաքացիական պատերազմի օրերին գործում էին ապստամբական ուժերին պատկանող երեք ռադիոկայաններ՝ «Ազատ Լիբանան»՝ Տրիպոլիում, «Զահ» և «Արաբական Ձայն»՝ Բեյրութում: Այս վերջինն իր հաղորդումները հեռարձակում է ամեն օր 9 ժամ տևողությամբ՝ արաբերենով, անգլերենով, ֆրանսերենով և հայերենով:

Շամունը ռազմական նշանակալի օգնություն էր ստանում ԱՄՆ–ից, Թուրքիայից, Իրաքից, Հորդանանից: Որպես «կամավորներ» նրա կողմնակիցների շարքերում կռվում էին զգալի թվով իրաքցիներ, հորդանանցիներ, բահրեյնցիներ և այլք:

Շամունը փորձեց օգտագործել նաև լիբանանյան բանակը, սակայն բանակի ընդհանուր հրամանատար Ֆուադ Շիհաբը հայտարարեց, որ բանակը կոչված է Լիբանանը պաշտպանել արտաքին հարձակումներից, իսկ ներկա ապստամբությունը ներքին քաղաքական վեճ է, և բանակի խնդրի մեջ չի մտնում պաշտպանել կողմերից մեկին:

Չնայած դրսից ստացվող օգնությանը՝ շամունականները պարտություն պարտության հետևից էին կրում:

1958 թ. կեսերին ապստամբների վերահսկողության տակ էր գտնվում ամբողջ Լիբանանի տարածքի 2/3–ը, իսկ նրանց զինված ուժերի թիվը հասնում էր 10–12 հազարի:

3. Ամերիկյան ինտերվենցիան

Ապստամբության համաժողովրդական բնույթը և բանակի չեզոք դիրք գրավելը հուսահատ դրության մեջ դրին Շամուն–Սոլիի կառավարությանը և նրա կողմնակիցներին:

Նրանք ապստամբության առաջին օրերից սերտ կապերի մեջ էին արևմտյան պետությունների, մասնավորապես ԱՄՆ–ի, ինչպես նաև Անգլիայի և Ֆրանսիայի հետ: ԱՄՆ–ի կառավարությունը բազմիցս հայտարարեց, որ պատրաստ է ռազմական օժանդակություն ցույց տալ Շամունին: ԱՄՆ–ի պետական քարտուղար Ջոն Ֆոստեր Դալեսը 1958 թ. մայիսի 15–ին սենատի լիդերներին տեղյակ պահեց, որ «Միացյալ Նահանգները պատրաստ է Լիբանան ափ հանել ամերիկյան ռազմական ուժեր»:

Սակայն նման միջամտության համար հարկավոր էր թեկուզ որևէ ձևական պատրվակ: Եվ Շամունը «գտավ» պատրվակը:

Խուճապի մատնված Շամունը դիմեց ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդին՝ բողոքելով, որ իբր Արաբական Միացյալ Հանրապետությունը միջամտում է Լիբանանի ներքին գործերին և հրահրում քաղաքացիական պատերազմ:

Շամունի այդ քայլի նպատակն էր Լիբանանում տեղի ունեցող իրադարձություններին տալ միջազգային բնույթ և դրանով իսկ հնարավորություն ընձեռել ԱՄՆ–ին և արևմտյան այլ պետություններին՝ միջամտելու Լիբանանի ներքին գործերին: Շամունը հույս ուներ ամերիկյան սվիններով օգնությամբ պահպանել իր իշխանությունը:

Շամունի այդ քայլը դատապարտեց Լիբանանի ամբողջ ժողովուրդը և ազգային–հայրենասիրական ու առաջադիմական բոլոր ուժերը՝ Ազգային ճակատը, Կուսակցությունների, կազմակերպությունների և անձնավորությունների համագումարը, Առաջադիմական–սոցիալիստական, «Նաջջադե» կուսակցությունները, Սահմանադրական միությունը, Լիբանանի մուֆթին, դրուզների կրոնապետը և այլ ուժեր: 1958 թ. մայիսի 30–ին հատուկ հայտարարությամբ հանդես եկավ մարոնի պատրիարք Մեուշին՝ հերքելով Շամունի վարկածը, թե Արաբական Միացյալ Հանրապետությունը միջամտել է Լիբանանի ներքին գործերին: Նա, դատապարտելով ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդին Շամունի դիմումը, նշեց, որ ներկա վիճակի համար պատասխանատու է կառավարությունը և նրա գործած ոճիրները: Պատրիարք Մեուշին պահանջեց, որ Շամունը հեռանա Լիբանանից, իշխանությունը հանձնվի գեներալ Շիհաբին, և ստեղծվի ազգային կառավարություն:

ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը Լիբանանի կառավարության գանգատին անդրադարձավ հունիսի 6–ին: Լիբանանի արտաքին գործերի նախարար Շառլ Մալիքը պնդեց, որ ԱՄՀ–ն միջամտում է Լիբանանի ներքին գործերին: Այդ տեսակետը պաշտպանություն գտավ ԱՄՆ–ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Իրաքի ներկայացուցիչների կողմից:

Եգիպտոսի ներկայացուցիչ Ումար Լութֆին հերքեց Լիբանանի կառավարության մեղադրանքները և Շառլ Մալիքի փաստարկները, որը պաշտպանություն գտավ Խորհրդային Միության պատվիրակի կողմից: Վերջինս նշեց, որ Շառլ Մալիքի ելույթը ոչ ոքի չհամոզեց և չհիմնավորեց Լիբանանի կառավարության բողոքը: Նա հայտարարեց, որ Խորհրդային Միությունը դեմ է Լիբանանի ներքին գործերին միջամտելուն և Անվտանգության խորհուրդը պետք է մերժի լիբանանյան կառավարության գանգատը՝ որպես անհիմն:

Անվտանգության խորհուրդը 1958 թ. հունիսի 11–ին որոշեց ՄԱԿ–ի դիտորդներ ուղարկել Լիբանան, որը, տեղում ուսումնասիրելով իրադրությունը, հանգեց այն եզրակացության, որ լիբանանյան տագնապն ունի ներքին բնույթ, և ԱՄՀ–ի կողմից որևէ միջամտություն չկա:

Ստեղծված պայմաններում արևմտյան պետությունների մոտ հասունանում է ռազմական ինտերվենցիայի գաղափարը: Ինտերվենցիա կատարելու պատիվը տրվեց Բաղդադի ագրեսիվ բլոկի անդամ Իրաքին: 1958 թ. հուլիսի 14–ին Ստամբուլում նշանակված Բաղդադի պակտի նիստը պաշտոնապես պետք է լիազորեր Իրաքին՝ «օգնության» հասնել Լիբանանին: Սակայն հուլիսի 14–ին Իրաքում տեղի ունեցավ հակաիմպերիալիստական հեղափոխություն: Այդ նույն օրը առավոտյան սարսափահար Շամունը հանդիպում ունեցավ Լիբանանում ԱՄՆ–ի, Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանների հետ և պահանջեց անհապաղ միջամտություն: Նա պնդում էր, որ այդ միջամտությունը տեղի ունենա առաջիկա 48 ժամվա ընթացքում, այլապես ուշ կլինի. ինքը կսպանվի, իսկ Լիբանանը կդառնա Եգիպտոսի արբանյակը:

ԱՄՆ–ի կառավարությունը գտավ, որ հասել է վճռական գործողությունների պահը: 1958 թ. հուլիսի 15–ին ամերիկյան ծովային հետևակը ափ իջավ Բեյրութի Սեն Ժորժ ծոցում: Միաժամանակ ամերիկյան 6–րդ նավատորմի ռազմանավերը նավարկում էին Լիբանանի ափամերձ ջրերում:

Սպիտակ տունը հուլիսի 15–ին տարածեց մի հայտարարություն այն մասին, որ ամերիկյան զորքերը, որոնց թիվը հասնում էր 17 հազարի, մտել են Լիբանան ամերիկյան քաղաքացիների կյանքը պաշտպանելու և Լիբանանի կառավարությանը ոգևորելու համար: Այնուհետև ասվում էր, որ «այդ զորքերի ուղարկումը չի հանդիսանում պատերազմական գործողություն: Այդ ուժերը ցույց են տալիս Միացյալ Նահանգների հոգատարությունը Լիբանանի անկախության և ամբողջականության նկատմամբ, որը մենք համարում ենք կենսականորեն կարևոր մեր ազգային շահերի և ամբողջ աշխարհի խաղաղության համար»:

Ամերիկյան ինտերվենցիան նպատակ ուներ զորավիգ կանգնել Շամունին և ճնշել ապստամբությունը Լիբանանում: Բացի դրանից, նա, ինչպես և հուլիսի 17–ի անգլիական դեսանտը Հորդանան, նպատակ ուներ խեղդել հուլիսյան հեղափոխությունը Իրաքում: Այլ կերպ ասած՝ ԱՄՆ–ի և Անգլիայի ռազմական ինտերվենցիան նպատակ ուներ հարված հասցնել ազգային–ազատագրական շարժումներին արաբական

երկրներում և պահպանել իրենց ռազմավարական տիրապետող դիրքերն այդ կարևոր տարածաշրջանում:

Ամերիկյան ինտերվենցիան և ամերիկյան զորքերի մտնելը Լիբանան նշանակում էին Լիբանանի օկուպացիա:

Այդ պահից սկսած՝ Լիբանանի հայրենասիրական ուժերի գլխավոր պահանջը դարձավ երկիրը ամերիկյան օկուպացումից ազատագրելը և Լիբանանի անկախության վերականգնումը:

Ամերիկյան ինտերվենցիան չտեսնված վրդովմունք առաջադրեց Լիբանանում: Մի շարք վայրերում ընդհարումներ տեղի ունեցան ապստամբների և ամերիկյան զորքերի միջև:

Լիբանանի պառլամենտի նախագահ Ադիլ Օսեյրանը բողոքի հեռագիր ուղարկեց ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդին: Իսկ Լիբանանի զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ֆուհադ Շիհաբը Միացյալ Նահանգներից պահանջեց 24 ժամվա ընթացքում իր զորքերը դուրս բերել Լիբանանից: Առաջադիմական–սոցիալիստական կուսակցության առաջնորդ Քամալ Ջունբլատը հայտարարեց. «Եթե ամերիկացիները չհեռանան, ապա մենք նրանց դեմ կկռվենք»: Իրենց բողոքն արտահայտեցին նաև Ռաշիդ Քարամեն, Սաիբ Սալամը և ապստամբության այլ ղեկավարներ ու լիբանանյան կազմակերպություններ: Բեյրութի, Տրիպոլիի և Լիբանանի մյուս քաղաքների ու շրջանների բնակիչները ժողովներ էին գումարում և բողոքի բանաձևեր ընդունում:

Հուլիսի 15–ին ԱՄՆ կառավարության պահանջով գումարվեց ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի նիստ, որտեղ նա խորհրդի անդամ պետություններին «տեղյակ պահեց», որ Լիբանանի կառավարության խնդրանքով ամերիկյան կառավարությունը զորքեր է ուղարկել Լիբանան: Այդ քայլի նպատակն էր ցույց տալ, որ ԱՄՆ–ը հարգում է միջազգային նորմերը և չի անտեսում միջազգային կազմակերպությունները:

Խորհրդային Միության ներկայացուցիչը խստորեն դատապարտեց ամերիկյան ագրեսիան և իր կառավարության անունից մտցրեց բանաձևի նախագիծ, որը, ԱՄՆ–ի գործողությունները համարելով ռազմական ինտերվենցիա, ՄԱԿ–ի կանոնադրության խախտում և սպառնալիք աշխարհի խաղաղությանը, «կոչ էր անում ԱՄՆ կառավարությանը դադարեցնել միջամտությունը արաբական պետությունների ներքին գործերին և անհապաղ իր զորքերը դուրս բերել Լիբանանի տերիտորիայից»: Խորհրդային բանաձևը դրվեց քվեարկության հուլիսի 18–ին և մերժվեց, քանի որ ԱՄՆ–ը, Անգլիան և Ֆրանսիան դեմ քվեարկեցին բանաձևին, այսինքն՝ օգտվեցին վետոյի իրենց իրավունքից:

Խորհրդային Միության նախաձեռնությամբ օգոստոսի 8–ին հրավիրվեց ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի արտակարգ նիստ: Ակնհայտ դարձավ, որ ՄԱԿ–ի անդամների մեծամասնությունը կողմ է ամերիկյան զորքերը դուրս բերել Լիբանանից, իսկ անգլիական զորքերը՝ Հորդանանից: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ԱՄՆ–ը և Անգլիան չհամարձակվեցին բացահայտ կերպով հանդես գալ այդ պահանջի դեմ և առաջադրեցին «Միջին Արևելքում խաղաղության պահպանման համար ՄԱԿ–ի զորքեր ստեղծելու» իրենց ծրագիրը: Դրա դեմ դուրս եկան Խորհրդային Միությունը, արաբական երկրները, Ասիայի և Աֆրիկայի երկրների ճնշող մեծամասնությունը:

Իրենց հերթին արաբական 10 պետություններ ներկայացրին բանաձևի իրենց նախագիծը, որը պահանջում էր հրաժարվել ագրեսիայից, չմիջամտել մյուս երկրների ներքին գործերին և ամերիկյան ու անգլիական զորքերը դուրս բերել Լիբանանից ու Հորդանանից: Բանաձևն առաջարկում էր ՄԱԿ–ի գլխավոր քարտուղարին՝ հետևել այդ որոշման կատարմանը և ոչ ուշ, քան 1958 թ. սեպտեմբերի 30–ը, զեկուցագիր ներկայացնել այդ հարցի կապակցությամբ:

1958 թ. սեպտեմբերի 21–ին ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի արտակարգ նստաշրջանն ընդունեց արաբական 10 երկրների բանաձևը:

Ի վերջո, ամերիկյան զորքերը 102 օր մնալուց հետո հարկադրված եղան դուրս գալ մայրիների երկրից: 1958 թ. հոկտեմբերի 25–ին ամերիկյան վերջին զորախումբը հեռացավ Լիբանանից:

Դա Լիբանանի բոլոր հայրենասիրական ուժերի խոշոր հաղթանակն էր:

VII. ԼԻԲԱՆԱՆԸ ԵՐԿՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1958–1975 թթ.)

1. Ֆուադ Շիհաբի ընտրությունը Լիբանանի պրեզիդենտ և «Հարկադրական կոմպրոմիսի կառավարության» ստեղծումը

1958 թ. սեպտեմբերի 23–ին ավարտվում էր Քամիլ Շամունի պրեզիդենտական լիազորությունների ժամկետը: Պրեզիդենտի նոր թեկնածուի հարցը դարձավ ներքաղաքական ամենակարևոր հարցը: Շամու-

նականները ձգտում էին թույլ չտալ, որ այդ պաշտոնը գրավի ազգային–հայրենասիրական ուժերի որևէ ներկայացուցիչ: Նրանք ցանկանում էին պրեզիդենտ ընտրել այնպիսի մեկին, որի թեկնածությունն ընդունելի լիներ նրանց համար, և որը շարունակեր վարել Շամունի ներքին և արտաքին քաղաքականությունը: Նրանք կանգ առան Ռայմոն Էդդեի թեկնածության վրա, որը ապստամբության ժամանակ գրավել էր հաշտվողական դիրք:

Ընդդիմադիր ուժերը դեմ էին Ռայմոն Էդդեի թեկնածությանը և պաշտպանում էին բանակի գլխավոր հրամանատար գեներալ Ֆուադ Շիհաբի թեկնածությունը:

1958 թ. հուլիսի 31–ին Լիբանանի պառլամենտը 48 ձայնով՝ ընդդեմ 7–ի, հանրապետության պրեզիդենտ ընտրեց գեներալ Ֆուադ Շիհաբին, որը դարձավ անկախ Լիբանանի երրորդ պրեզիդենտը՝ Բիշարա ալ–Խուրիից և Քամիլ Շամունից հետո:

Ազգային ճակատը պահանջեց, որ Քամիլ Շամունն անհապաղ վայր դնի իր լիազորությունները և դրանք փոխանցի Ֆուադ Շիհաբին: Սակայն նա մերժեց այդ պահանջը և հայտարարեց, որ ինքը նույնիսկ մեկ օր շուտ վայր չի դնի իր լիազորությունները, որոնք ավարտվում էին սեպտեմբերի 23–ին:

Ֆուադ Շիհաբը պրեզիդենտի լիազորությունները ստանձնեց 1958 թ. սեպտեմբերի 23–ին:

Ֆուադ Շիհաբը պրոֆեսիոնալ զինվորական էր, որն իր զինվորական ծառայությունը սկսել էր ֆրանսիական մանդատի տարիներին և հասել գնդապետի աստիճանի: Անկախության նվաճումից հետո նա ստանում է գեներալի կոչում և նշանակվում բանակի հրամանատար: Նա մեծ ջանքեր գործադրեց լիբանանյան բանակի արդիականացման ուղղությամբ, որը համարում էր իր գլխավոր խնդիրներից մեկը: Իր մյուս գլխավոր խնդիրը նա համարում էր բանակը պահել չեզոք և քաղաքականությունից դուրս և չթողնել, որ քաղաքական ուժերն այն ներգրավեն իրենց խաղերի մեջ ու փորձեն նրա օգնությամբ լուծել քաղաքական ճգնաժամերը: Նա իրեն այդպես պահեց 1952 թ. քաղաքական ճգնաժամի ժամանակ, երբ ցույցեր տեղի ունեցան Բիշարա ալ–Խուրիի վարչակարգի դեմ: Նա կարողացավ բանակը պահել զորանոցներում և թույլ չտվեց, որ իրեն օգտագործեն քաղաքական նպատակների համար: Ֆուադ Շիհաբն իրեն նույն կերպ պահեց նաև 1958 թ. քաղաքացիական պատերազմի ժամանակ: Երկու դեպքում էլ գործող պրեզիդենտները

ստիպված հեռացան քաղաքական ասպարեզից: Այդ խելամիտ, լայնախոհ և հեռատես զինվորականը, որին բնորոշ էր հավասարակշռության վրա խարսխված քաղաքականության իրականացումը, մեծ հեղինակություն էր վայելում ոչ միայն զինվորականների, այլև մտավորականների, քաղաքական գործիչների և ժողովրդական լայն զանգվածների շրջանում: Ուստի նրա պրեզիդենտ ընտրվելը համարվում էր բնականոն, և նրա հետ մեծ հույսեր էին կապում:

Ֆուադ Շիհաբի պրեզիդենտ ընտրվելու կապակցությամբ Ազգային ճակատը հրապարակեց մի հայտարարություն, որը, փաստորեն, գործողությունների ծրագիր էր հանդիսանում նոր իշխանությունների համար: Ազգային ճակատը շեշտում էր, որ Ֆուադ Շիհաբի ընտրությունը բավարար չէ լիբանանյան տագնապը լուծելու համար, քանի որ լիբանանյան ճգնաժամը միայն պրեզիդենտի աթոռին նստած անձի փոփոխության հարց չէ: Նկատի ունենալով այդ հանգամանքը և ելնելով լիբանանյան ճգնաժամը շուտափույթ լուծելու պահանջից՝ Ազգային ճակատը հետևյալ պահանջները ներկայացրեց Ֆուադ Շիհաբին. ա) ստեղծել ազգային կառավարություն, որը հավատարիմ լինի 1943 թ. Ազգային պակտին, բ) վերականգնել և պահպանել Լիբանանի ազգային անկախությունը և ինքնիշխանությունը, գ) երկիրը ձերբազատել «էյզենհաուերի դոկտրինայից» և վարել չեզոք քաղաքականություն, դ) սերտ համագործակցություն հաստատել արաբական երկրների հետ, ե) հարգել ժողովրդի դեմոկրատական ազատությունները, զ) նպաստել երկրի տնտեսության վերականգնմանը և ժողովրդի կենսամակարդակի բարձրացմանը:

Ազգային ճակատի ծրագիրը գտավ Լիբանանի ժողովրդական ամենալայն զանգվածների պաշտպանությունը: Նրանում ձևակերպված սկզբունքները փաստորեն ընդունելի եղան նաև Ֆուադ Շիհաբի համար: Եվ կարելի է ասել, որ վերոնշյալ պահանջների հիմնական մասը նա կարողացավ հաջողությամբ կատարել:

Ֆուադ Շիհաբը հայտարարեց, որ ինքը պայքարելու է ազգային միասնությունը վերականգնելու համար, վարելու է անկեղծ արաբական քաղաքականություն: Այդ շրջանում առաջին պլանի վրա հայտնվեց ազգային միասնականությունը վերականգնելու հարցը, որին լուրջ հարված էր հասցրել շամունականների անհեռատես և կողմնապահ քաղաքականությունը: Երկիրը պառակտված էր, բաժանված առանձին բլոկների և թշնամական խմբավորումների: Քաղաքացիական եղբայրասպան պատերազմի ժամանակ բոլոր կողմերից եղել էին մեծաթիվ զոհեր,

լիբանանցին թափել էր լիբանանցու արյունը: Այդ ամենն անհետևանք չէր կարող անցնել: Մարդիկ հիշում էին, իսկ հիշողությունը սնում էր ոչ միայն հակադրություն, այլև թշնամություն: Հասկանալի է, որ նման մթնոլորտում անհնար էր Լիբանանի նորմալ զարգացումը: Ուստի ազգային միասնականության վերականգնումը Լիբանանին անհրաժեշտ էր, ինչպես օդը: Դա լավ էր հասկանում նորընտիր պրեզիդենտը: Եվ նա հայտարարեց. «Շնորհիվ ազգային միասնականության մենք պիտի կարողանանք իրականացնել մեր ազգային բոլոր բաղձանքները»:

Ազգային միասնականության վերականգնումն ու պահպանումը, ինչպես նաև հավասարակշռության ապահովումը լիբանանյան տարբեր կրոնահամայնքային ուժերի միջև, դարձավ Ֆուադ Շիհաբի՝ որպես պրեզիդենտի, քաղաքականության հիմնաքարը: Պատահականություն չէր, որ նա առաջ քաշեց «Ո՛չ հաղթողներ, ո՛չ պարտվածներ» կարգախոսը:

Ֆուադ Շիհաբը պրեզիդենտ ընտրվելու հաջորդ օրը՝ սեպտեմբերի 24–ին, Ռաշիդ Քարամեին հանձնարարեց կազմել իր առաջին կառավարությունը, որի մեջ, բացի նրանից, ապստամբության ոչ մի լիդեր չմտավ: Կաբինետը բաղկացած էր 7 նախարարներից, որոնցից 4–ը պատկանում էին համաձայնողականներին, իսկ 3–ը՝ ընդդիմության այն շրջաններին, որոնք թեև դեմ էին Շամունին, բայց չէին մասնակցել նրա դեմ մղված պայքարին: Այդուհանդերձ, այդ կառավարությունն ընդունելի չեղավ շամունականների և ներքին հետադիմության համար: Նրանց համար հատկապես անընդունելի էր այն հանգամանքը, որ կառավարություն կազմելը Շիհաբը հանձնել էր ապստամբության ամենաակտիվ դեմքերից մեկին՝ Ռաշիդ Քարամեին: Այդ ուժերը դիմեցին զանազան հնարանքների՝ մթնոլորտը կրկին շիկացնելու, քաղաքական իրադրությունն ավելի անկայուն դարձնելու համար և, ի վերջո, հասնել նրան, որ Ռաշիդ Քարամեն հրաժարական տա: Այդ գործում նրանք վայելում էին Լիբանանում ամերիկյան դեսպան Մակկլինտոկի օժանդակությունն ու աջակցությունը:

Ներքին հետադիմության և ամերիկյան դեսպանի ճնշումներն իրենց հետևանքներն ունեցան: Ռաշիդ Քարամեի առաջին կաբինետը հրաժարական տվեց, և նա հոկտեմբերի 15–ին կազմեց իր երկրորդ կառավարությունը, որը ստացավ «Հարկադրական կոմպրոմիսի կառավարություն» անունը:

Ռաշիդ Քարամեն հարկադրված էր գնալ կոմպրոմիսի և 4 հոգուց բաղկացած իր նոր կառավարության կազմում ընդգրկել փաղանգավոր-

ների կուսակցության ղեկավար Պյեր Ժմայելին, որը 1958 թ. ապստամբության և քաղաքացիական պատերազմի ժամանակ Քամիլ Շամունի հենարաններից մեկն էր, ինչպես նաև Ռայմոն Էդդեին, որը հանդիսանում էր այսպես կոչված միջին կամ երրորդ ուժերի ներկայացուցիչը և չեզոք դիրք էր գրավել ապստամբության ժամանակ, որը տվյալ պահին ավելի նպաստավոր էր շամունականների, քան թե ապստամբների համար: Կոմպրոմիսի արտահայտություն հանդիսացավ նաև հրապարակ նետված «Ո՛չ հաղթողներ, ո՛չ պարտվածներ» լոզունգը:

Շիհաբը և Ռաշիդ Քարամեն եռանդուն քայլերի դիմեցին ամերիկյան զորքերը Լիբանանից դուրս բերելու ուղղությամբ, որը ինչպես արդեն նշել ենք, հաջողությամբ պսակվեց 1958 թ. հոկտեմբերի 25–ին:

2. Լիբանանի ներքին և արտաքին քաղաքականությունը (1958–1970 թթ.)

Ֆուադ Շիհաբի ներքին քաղաքականությունն ուղղված էր միջհամայնքային լարվածության վերացմանը և տարբեր կրոնական համայնքների միջև համերաշխության և համագործակցության վերականգնմանը: Նրա բարեփոխումների քաղաքականությունը միտված էր այն բանին, որ երկրի բոլոր համայնքներն ավելի արդարամիտ կերպով ներկայացվեն պետական, վարչական, դատական և զինվորական մարմիններում: Նա ցանկանում էր արդիականացնել Լիբանանի կառավարական–վարչական համակարգն ու պետական մեքենան, որը հիմնված էր ֆեոդալական քարացած և վաղուց իրենց դարն ապրած արժեքների վրա: Նա դիմեց կոնկրետ քայլերի պետական մեքենան ձերբազատելու կրոնահամայնքային կապանքներից, որոնք մշտական լարվածության, հակամարտության և բախումների ու ճգնաժամերի աղբյուր էին հանդիսանում: Եվ այդ ուղղությամբ նա հասավ թեև համեստ, բայց, այդուհանդերձ, որոշ արդյունքների: Որպես դրա փայլուն օրինակ և նշանակալի երևույթ՝ նշվում է այն իրողությունը, որ Ֆուադ Շիհաբի պրեզիդենտության շրջանում ավելի մեծ թվով մուսուլման գործիչներ ներգրավվեցին պետական կառավարման կառույցներում:

Դրա շնորհիվ Ֆուադ Շիհաբին հաջողվեց պահպանել ներքին կայունությունը երկրում, և նրա պրեզիդենտության վեց տարիների ընթացքում չեղան քաղաքական, կրոնահամայնքային և սոցիալական ցնցումներ:

Կառավարությունը զգալի ուշադրություն դարձրեց հանրային աշխատանքների ընդլայնմանը, նոր ճանապարհների շինարարությանը, որի շնորհիվ հազարավոր մարդիկ ապահովվեցին աշխատանքով: Ֆուադ Շիհաբը ջանում էր ավելի նպաստավոր պայմաններ ստեղծել ազգային էկոնոմիկայի, մասնավորապես արդյունաբերության զարգացման համար՝ խրախուսելով տեղական գործարար շրջանների ձեռներեցությունը: Երկրում ամրապնդվեց օրինապահությունը և ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեցին ազգային–հայրենասիրական ուժերի գործունեության համար, որոնք զգալիորեն ամրապնդեցին իրենց դիրքերը: Դա իր արտահայտությունը գտավ 1960 թ. պառլամենտական ընտրությունների ժամանակ, երբ դեպուտատական տեղերի մեծ մասը նվաճեցին հենց այդ ուժերը:

Դրական փոփոխություններ տեղի ունեցան նաև աշխատավորների սոցիալ–տնտեսական վիճակում: Ընդունվեց օրենք բանվորների և ծառայողների սոցիալական ապահովագրության մասին, և բարձրացվեց նրանց աշխատավարձը, թեև սոցիալական անհավասարությունը շարունակում էր պահպանվել և խորանալ:

Տպավորիչ էին Ֆուադ Շիհաբի կառավարության նվաճումները արտաքին քաղաքականության բնագավառում: Ֆուադ Շիհաբի և Ռաշիդ Քարամեի գլխավորած կառավարության առաջին քայլերից մեկը եղավ պաշտոնապես «էյզենհաուերի դոկտրինայից» հրաժարվելը: Ռաշիդ Քարամեն և նրա նորակազմ կաբինետում արտաքին գործերի նախարար Հուսեյն Ուվեյնին հայտարարեցին, որ Լիբանանն այլևս իրեն կապված չի համարում այդ դոկտրինայի հետ: Այնուհետև Լիբանանի կառավարությունը կատարեց հաջորդ քայլը՝ նա հրաժարվեց բլոկներին միանալու քաղաքականությունից և որդեգրեց դրական չեզոքության քաղաքականությունը: Որպես դրական երևույթ պետք է նշել Լիբանանի հարաբերությունների բարելավումը արաբական երկրների, առաջին հերթին՝ Արաբական Միացյալ Հանրապետության հետ. նրանց միջև վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները: Ակտիվացավ Լիբանանի մասնակցությունը համաարաբական գործերին: Լիբանանը մասնակցեց 1964 թ. Կահիրեում և Ալեքսանդրիայում գումարված արաբական պետությունների ղեկավարների կոնֆերանսին և հանձն առավ իրագործել նրա որոշումները իսրայելական էքսպանսիան կասեցնելու ուղղությամբ:

Լիբանանը ուղղումներ մտցրեց նաև արևմտյան տերությունների հետ իր հարաբերություններում: Զգալիորեն թուլացավ նրա կախվածու-

թյունը ԱՄՆ–ից և Անգլիայից: Իհարկե, Լիբանանը շարունակում էր սերտ քաղաքական և առևտրատնտեսական հարաբերություններ պահպանել արևմտյան տերությունների հետ, սակայն նա ձգտում էր դա իրագործել իր անկախության պահպանման հիմքի վրա՝ մերժելով բլոկներին միանալու քաղաքականությունը:

Այս դրական փոփոխություններն անհանգստացնում էին լիբանանյան հետադիմությանը և օտարերկրյա ուժերին, հատկապես Անգլիային, որի դիրքերը Շամունի անկումից հետո շատ էին թուլացել: Հենց Անգլիայի դրդմամբ 1961 թ. դեկտեմբերի 31–ին Ազգային–սոցիալական կուսակցության կողմից պետական հեղաշրջման փորձ կատարվեց: Խռովարարների կողմն անցավ լիբանանյան բանակի մի փոքրաթիվ խումբ: Սակայն լիբանանյան բանակի բացարձակ մեծամասնությունը հավատարիմ մնաց կառավարությանը և հեշտությամբ ճնշեց այդ դավադրությունը:

1964 թ. սեպտեմբերին լրացավ Ֆուադ Շիհաբի պրեզիդենտության ժամակետը: Լիբանանը պետք է ընտրեր նոր պրեզիդենտ: Լիբանանի պետության ղեկավարի պաշտոնը ստանձնեց Շառլ Հելուն, որը վայելում է Ֆուադ Շիհաբի աջակցությունը: Եվ Ֆուադ Շիհաբը, առանց բարդությունների կամ ձգձգումների, սահուն կերպով իշխանությունը փոխանցեց նորընտիր պրեզիդենտ Շառլ Հելուին: Այդ հարցում նս գեներալը գտնվեց իր բարձրության վրա: Նրա կողմնակիցներից ոմանք առաջարկում էին փոփոխություն մտցնել սահմանադրության մեջ և ապահովել նրա վերընտրությունը երկրորդ ժամկետի համար: Սակայն գեներալը կտրուկ կերպով մերժեց նման առաջարկությունները:

Շառլ Հելուն, իհարկե, այնպիսի հարուստ կենսագրություն և հեղինակություն չուներ, ինչպես նրա անմիջական նախորդը: Այդ երկու անձնավորություններն անհամամեմատելի էին:

Շառլ Հելուն ժամանակին եղել էր Բեյրութում ֆրանսերեն լեզվով լույս տեսնող «Լ'Օրիան դը Ժուր» օրաթերթի խմբագիր, ապա՝ պառլամենտի անդամ, իսկ 1954–1955 թթ. զբաղեցրել էր Լիբանանի արդարադատության նախարարի պաշտոնը: 1958 թ. իրադարձությունների ժամանակ նա դեմ էր պրեզիդենտի պաշտոնում Քամիլ Շամունի վերընտրությանը, բայց ապստամբությանը ոչ մի մասնակցություն չունեցավ: Դա որոշակի դրական դեր խաղաց նրա պրեզիդենտ ընտրվելու հարցում, քանի որ նա ընկալվեց որպես չեզոք և անկողմնակալ թեկնածու: Նրա թեկնածությունը, ինչպես նշվեց, պաշտպանեց նաև Ֆուադ Շիհաբը:

Շառլ Հելուն իր պրեզիդենտության շրջանում՝ 1964–1970 թթ., ներքին և արտաքին քաղաքականության բնագավառներում ընդհանուր առմամբ փորձում էր հավատարիմ մնալ իր նախորդի քաղաքականությանը: Լիբանանը 1965 թ. գարնանը խզեց դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության հետ, վերջինիս կողմից Իսրայելը ճանաչելու և նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու կապակցությամբ: 1965 թ. ամռանը կառավարությունը մերժեց ամերիկյան կապիտալի համար արտոնյալ պայմաններ ստեղծելու համաձայնագիրը և այլն: Նրա կարևոր արժանիքներից մեկը պետք է համարել նաև այն, որ նրան հաջողվեց Լիբանանը զերծ պահել 1967 թ. արաբա–իսրայելական պատերազմին մասնակցելուց:

1965 թ. առաջադիմական ուժերի ջանքերով ստեղծվեց նոր Ազգային ճակատ, որի մեջ մտան Առաջադիմական–սոցիալիստական կուսակցությունը, Արաբական ազգայնականների շարժումը, կոմունիստական կուսակցությունը, բաասականները, Բանվորական ազատագրության ճակատը, Հնչակյան սոցիալ–դեմոկրատական կուսակցությունը, ինչպես նաև քաղաքական ու հասարակական երևելի գործիչներ:

Այս շրջանում բավականին ակտիվացավ բանվորական շարժումը, որը հասավ շոշափելի արդյունքների՝ բարելավվեցին բանվորների աշխատանքային պայմանները, բարձրացվեց աշխատավարձը, աշխատողների համար ստեղծվեցին ժողովրդական տներ և այլն:

Շառլ Հելուն համարվում էր թույլ պրեզիդենտ, որն իր սեփական հենարանը չուներ: Դա եղավ այն պատճառներից մեկը, որ Ֆուադ Շիհաբի սկսած բարեփոխումները նրա օրոք դանդաղեցին: Սակայն նրան հաջողվեց ապահովել ներքին կայունությունը և խոշոր ցնցումներ թույլ չտալ: Դրան էր ուղղված մուսուլմանական ղեկավարությանն ավելի լայն չափերով երկրի կառավարման մեջ ներգրավելու նրա քաղաքականությունը: Նրա քաղաքականության հաջողությունների շարքը պետք է դասել նրա պատրաստակամությունը կարգավորելու հարաբերությունները պաղեստինցիների հետ:

3. 1969 թ. Կահիրեի համաձայնագիրը և լիբանանա–պաղեստինյան հարաբերությունների կարգավորումը

Լիբանանում ապաստան էին գտել զգալի թվով պաղեստինյան գաղթականներ, որոնց թիվն շեշտակիորեն աճեց 1967 թ. արաբա–իս-

ռայելական պատերազմից հետո: Մոտավոր հաշիվներով Լիբանանում բնակվում էին մոտ 400 հազ. պաղեստինցիներ, որոնք կենտրոնացված էին 15 ճամբարներում, ինչպես Նահր ալ–Բարիդը և Ալ–Բադաուին՝ հյուսիսում, Սաբրան, Շատիլան, Բուրջ ալ Բարաջնան՝ Բեյրութում, Այն ալ–Հիլվան, Նաբատիյան և Ռաշիդիյան՝ հարավում և այլն: Նրանց ներկայությունը և ծավալած ռազմական ու քաղաքական–հասարակական գործունեությունը դարձավ Լիբանանի ներքաղաքական կյանքի վրա ազդող գործոններից մեկը:

Լիբանանցիները տարբեր կերպով էին վերաբերվում պաղեստինցիների ներկայությանը իրենց երկրում: Ազգային–հայրենասիրական ուժերը և ժողովրդական զանգվածները կողմնակից էին նրանց հետ համագործակցելու և նրանց ցույց էին տալիս բարոյաքաղաքական և նյութական աջակցություն: Իսկ աջակողմյան ուժերը՝ փաղանգավորները և մարոնի համայնքի այլ հատվածներ, թշնամական դիրք գրավեցին պաղեստինցիների նկատմամբ: Նրանք առաջ քաշեցին «Լիբանանի մաքրության» լոզունգը՝ ընդգծելով, որ Լիբանանը պետք է պատկանի լիբանանցիներին, և «անհրաժեշտ է պայքարել պաղեստինցիների դեմ, որոնք զավթում են երկիրը: Նրանք պետք է հեռանան, քանի որ նրանց համար տեղ չկա»:

Աջերի գրաված դիրքի պատճառով լարված վիճակ ստեղծվեց լիբանանա–պաղեստինյան հարաբերություններում: Հաճախակի էին դարձել բախումները և կոնֆլիկտները պաղեստինցիների և լիբանանյան աջերի միջև: Գործին միջամտեցին արաբական երկրները, որոնց ջանքերով 1969 թ. նոյեմբերի 3–ին Կահիրեում ստորագրվեց համաձայնագիր լիբանանյան իշխանությունների և պաղեստինցիների միջև, որտեղ ձևակերպված էին նրանց փոխհարաբերությունների սկզբունքները: Շառլ Հելուն, իրավացիորեն վախենալով, որ հետագա բախումները լիբանանցիների և պաղեստինցիների միջև կարող են հանգեցնել լիբանանյան բանակի տրոհմանը, որը կարող էր շատ ծանր հետևանքներ ունենալ Լիբանանի համար, որոշեց միանալ Կահիրե կոնֆերանսում մշակված համաձայնագրին:

Համաձայնագիրը ճանաչում էր Լիբանանում գտնվող պաղեստինցիների աշխատանքի, բնակվելու և դիմադրական շարժմանը մասնակցելու իրավունքը՝ Լիբանանի գերիշխանությունը և անվտանգությունը պահպանելու պայմանով: Համաձայնագրով թույլատրվում էր պաղեստինյան զինված ջոկատների գոյությունը փախստականների

ճամբարներում: Պաղեստինցիները հնարավորություն ստացան Լիբանանի հարավում գտնվող Արկուբայի շրջանում ստեղծել իրենց ռազմական բազան:

Այսպիսով՝ պաղեստինցիները չպետք է միջամտեին Լիբանանի ներքին գործերին, իսկ Լիբանանի իշխանությունները չպետք է արգելեին պաղեստինցիների ազատագրական շարժմանը և Իսրայելի դեմ ուղղված պարտիզանական ռազմական գործողություններին՝ երկրի հարավային շրջաններից:

VIII. ԵՐԿՐՈՐԴ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ (1975–1990 թթ.)

1. Սոցիալ–քաղաքական նոր ճգնաժամի հասունացումը

70–ական թվականների սկզբներին բավականին խորացել էր լիբանանյան հասարակության սոցիալական բևեռացման և տնտեսական անհավասարության պրոցեսը: 60–ական թվականներին սկսված տնտեսական վերելքից հիմնական շահողը եղան բուրժուազիան, խոշոր առևտրականները, ֆինանսիստները, խոշոր հողատերերը: Հարստության շլացուցիչ կուտակումը ունևոր խավերի մոտ, նրանց զեխ ու ցոփ կյանքը ճնշիչ տպավորություն էին գործում աշխատավորների վրա, ուժեղացնում սոցիալական անարդարության դեմ պայքարելու և սոցիալ–տնտեսական վերափոխումներ կիրառելու նրանց ձգտումը: 70–ական թթ. լայն ծավալ ընդունեց աշխատավորների պայքարը իրենց տնտեսական դրության բարելավման և կենսական տարրական պահանջների բավարարման համար: Դրանում շատ մեծ էր Լիբանանի առաջադիմական կուսակցությունների դերը:

Նրանք ստեղծված ծանր վիճակից դուրս գալու ելքը տեսնում էին ազգային–դեմոկրատական կառավարություն ստեղծելու մեջ:

Լիբանանի աշխատավորներն իրենց կենսական շահերի պաշտպանության համար ավելի ու ավելի հաճախ էին դիմում փորձված զենքին՝ գործադուլներին: 1973 թ. գործադուլ հայտարարեցին Բեյրութի «Ղանդուր» հրուշակեղենի ֆաբրիկայի 1200 բանվորներ: Սակայն նրանց դեմ նետվեցին ներքին անվտանգության ուժերը, որոնք դաժանորեն ճնշեցին բանվորների ելույթը՝ երկու բանվոր սպանվեց, իսկ շա-

տերն էլ վիրավորվեցին: Ընդհանրապես պետք է նշել, որ Շառլ Հելուին հաջորդած Սուլեյման Ֆրանժիեի պրեզիդենտության շրջանում՝ 1970–1976 թթ., սովորական երևույթ էին դառնում աշխատավորների ելույթները ոստիկանության և անվտանգության ուժերի օգնությամբ ճնշելը: Նրանք նույնպիսի դաժանությամբ ճնշեցին Նաբատիայի ծխախոտագործների խաղաղ ցույցը:

Բանվորական ելույթներին զուգահեռ, 70–ական թվականների առաջին կեսին աշխուժանում է նաև ուսուցիչների և ուսանողության շարժումը: Ուսուցիչները պահանջում էին աշխատավարձի բարձրացում, իսկ ուսանողությունը՝ կրթական համակարգի փոփոխություն: Այս շրջանում տեղի ունեցած ելույթներից պետք է նշել նաև Սայդայի աշխատավորների ելույթը: 1975 թ. փետրվարի 26–ին ողջ Սայդայի բնակչությունը մեծ ցույց կազմակերպեց: Ցուցարարների դեմ նետվեցին ոստիկանության և անվտանգության ուժերը, որի ժամանակ զոհվեց 11 բանվոր:

Լիբանանյան աջերի մեղքով նորմալ հունով չէին ընթանում նաև լիբանանա–պաղեստինյան փոխհարաբերությունները, անընդհատ խախտվում էին Կահիրեի համաձայնագրի պայմանները, ինչը լրացուցիչ լարվածություն էր ստեղծում երկրի ներսում: Դրությունն ավելի սրվեց, երբ 1970 թ. աշնանը Հորդանանում տեղի ունեցած արյունալի բախումներից հետո պաղեստինցիների հիմնական ռազմական ուժերը և ղեկավար մարմինները տեղափոխվեցին Լիբանան: Նրանց ու Լիբանանի ազգային–հայրենասիրական ուժերի միջև հաստատվեցին սերտ հարաբերություններ և համագործակցություն: Սակայն լիբանանյան աջերը մեծ դժգոհությամբ ընդունեցին պաղեստինյան ռազմական ուժերի հաստատումը Լիբանանում: Սկսվում են զինված բախումներ պաղեստինցիների և լիբանանյան զինված ուժերի միջև, որն իր գագաթնակետին հասավ 1973 թ. ապրիլ–մայիս ամիսներին, երբ փորձ արվեց պաղեստինցիների հետ հաշվեհարդար տեսնել, ինչպես դա տեղի էր ունեցել Հորդանանում, և արտաքսել նրանց երկրից:

Դրությունը բարդանում էր նաև Իսրայելի գործողությունների հետևանքով, որը տարբեր քայլերի էր դիմում՝ սրելու հարաբերությունները լիբանանցիների և պաղեստինցիների միջև:

Այսպիսով՝ 70–ական թվականների առաջին կեսին Լիբանանում առկա էր սոցիալ–քաղաքական սուր ճգնաժամ, և երկիրը գտնվում էր խոշոր ցնցումների նախօրեին:

2. Քաղաքացիական երկրորդ պատերազմի պատճառները և հակադիր բլոկների կազմավորումը

Լիբանանում քաղաքացիական երկրորդ պատերազմը պայթեց 1975 թ. գարնանը: Որո՞նք էին դրա պատճառները, և ի՞նչ բնույթ էր կրում այն:

1975–1976 թթ. քաղաքացիական պատերազմը, որն այնուհետև ընդունեց երկարատև քաղաքական ճգնաժամի բնույթ և տևեց մինչև 1990 թ., արդյունք էր ներքին և արտաքին մի շարք գործոնների:

Ներքին գործոններից ամենակարևորը հետևյալներն էին:

Առաջին՝ ինչպես նշվել է, երբ 1943 թ. հռչակվեց Լիբանանի անկախությունը, նրա պետական կառուցվածքի հիմքում դրվեց կրոնահամայնքային սկզբունքը: Լիբանանում փաստորեն հաստատվեց մարոնի քրիստոնյա համայնքի վերնախավի դիկտատուրա: Երկրի կառավարման մեջ ստորադաս վիճակում հայտնվեցին ոչ միայն մահմեդական, այլև մյուս քրիստոնյա՝ ուղղափառ, կաթոլիկ, հայ և բողոքական համայնքները: Այս հողի վրա երկրում կուտակվել էր խիստ դժգոհություն, որը համակել էր նաև մնացած բոլոր համայնքների առևտրաֆինանսական, արդյունաբերական և ֆեոդալական շրջաններին, որոնք պահանջում էին փոփոխություններ մտցնել Լիբանանի պետական կառուցվածքում՝ հրաժարվել իր դարն ապրած ֆեոդալական–կլանային, կլանա–համայնքային համակարգից և անցել բուրժուական պառլամենտարիզմի սովորական ձևերի կիրառմանը:

Սակայն մարոնի վերնախավը լսել անգամ չէր ուզում որևէ ռեֆորմի մասին: Դրանով իսկ նա իրեն հակադրեց Լիբանանի մնացած բոլոր համայնքներին և դարձավ լիբանանյան կոնֆլիկտի ծագման պատճառներից մեկը:

Երկրորդ՝ 60–ական թվականների վերջերից և 70–ական թվականների սկզբներից խիստ սրվեցին սոցիալ–դասակարգային հակասությունները, ամրապնդվեցին առաջադիմական ուժերի դիրքերը, բարձրացավ նրանց դերը երկրի կյանքում:

Դա խիստ անհանգստացնում էր մարոնի վերնախավին և ընդհանրապես լիբանանյան բոլոր աջակողմյան և հետադիմական ուժերին: Բայց նրանք միաժամանակ ըմբռնում էին, որ սովորական, խաղաղ միջոցներով այլևս ի վիճակի չեն կանխել աշխատավորների ելույթները և առաջադիմական ուժերի դիրքերի ամրապնդման հետագա ընթացքը:

Եվ նրանց մոտ ավելի ու ավելի է հասունանում սոցիալական կոնֆլիկտը ուժի միջոցով լուծելու գաղափարը:

Երրորդ՝ ներքաղաքական վիճակը Լիբանանում ավելի շիկացավ, երբ այնտեղ տեղափոխվեցին Պաղեստինի դիմադրության շարժման հիմնական ուժերը: Իսկ երբ վերջիններիս և Լիբանանի ազգային–հայրենասիրական ուժերի միջև հաստատվեցին սերտ հարաբերություններ, դա լիբանանյան աջերի խուճապն առաջացրեց: Վերաբերմունքը պաղեստինյան դիմադրության շարժման նկատմամբ ջրբաժան գիծ հանդիսացավ Լիբանանի քաղաքական ուժերի միջև և դարձավ լիբանանյան կոնֆլիկտի առաջացման դրդապատճառներից մեկը:

Չորրորդ՝ խիստ դժգոհություն էր առաջացնում Լիբանանի արտաքին քաղաքական կուրսը, որը բացահայտորեն արևմտամետ էր: Լիբանանի առաջադիմական ազգային–հայրենասիրական ուժերը պահանջում էին վերանայել երկրի արտաքին քաղաքականությունը, հրաժարվել միակողմանիորեն դեպի արևմտյան պետություններն ունեցած կողմնորոշումից, վարել Լիբանանի ազգային շահերին համապատասխան քաղաքականություն:

Ահա այսպիսի տարրերից միահյուսվեց լիբանանյան կոնֆլիկտը ծնած ներքին հակասությունների բարդ հանգույցը:

Սակայն քաղաքական պայքարը քաղաքացիական պատերազմի վերածելու համար անհրաժեշտ էին արտաքին ազդակներ կամ արտաքին գործոններ:

Առաջին՝ դա կապված էր Մերձավոր Արևելքում տիրապետող դիրքեր հաստատելու ԱՄՆ–ի և Իսրայելի էքսպանսիոնիստական քաղաքականության հետ: Լիբանանում դեմոկրատական ուժերի դիրքերի ամրապնդումը և երկրի ձախացման հեռանկարները լրջորեն անհանգստացնում էին ոչ միայն Լիբանանի մարոնի վերնախավին, այլև հավասարապես ԱՄՆ–ին ու Իսրայելին, և դա դարձավ նրանց միջև կայուն համագործակցություն հաստատելու շարժառիթներից մեկը:

Երկրորդ՝ լիբանանյան հետադիմության ձգտումը՝ լիկվիդացնել Պաղեստինի դիմադրության շարժման հենակետերը և պաղեստինցիներին դուրս վռնդել Լիբանանից, լիովին համապատասխանում էր ԱՄՆ–ի և Իսրայելի շահերին: Հենց այդ հանգամանքը դարձավ ոչ միայն նրանց միջև սերտ համագործակցություն հաստատելու, այլև քաղաքացիական պատերազմի ծագման մյուս կարևոր պատճառը:

Երրորդ՝ մերձավորարևելյան ճգնաժամի կարգավորման խնդրում ԱՄՆ–ի նոր քաղաքականության որդեգրումը: Խախտելով ՄԱԿ–ի շրջանակներում ընդունված և Խորհրդային Միության հետ ձեռք բերված համաձայնությունները մերձավորարևելյան կոնֆլիկտի համընդհանուր կարգավորման մասին՝ ԱՄՆ–ը XX դարի 70–ական թվականների կեսերից, հրաժարվելով մերձավորարևելյան կոնֆլիկտի համընդհանուր կարգավորման քաղաքականությունից, կանգնեց կոնֆլիկտի մասնակի և անջատ կարգավորման դիրքերում: Դա մի փորձ էր՝ արաբական ժողովուրդների վզին փաթաթել ու կոնֆլիկտի կարգավորման ամերիկյան տարբերակը, որը համապատասխանում էր նաև Իսրայելի շահերին: Նա սկսեց կիրառել պրոբլեմի «քայլ առ քայլ» լուծման և մասնակի զիջումների դիվանագիտությունը: Այդ ծրագիրն իրականացնելու համար ԱՄՆ–ը և Իսրայելը գտնում էին, որ անհրաժեշտ է պառակտում մտցնել արաբների շարքերում, նրանց հրահրել միմյանց դեմ, ներգրավել եղբայրասպան պատերազմի մեջ՝ դրանով իսկ նրանց ուշադրությունը շեղելով ամերիկյան իմպերիալիստական նոր պլանների դեմ ուղղված և 1967 թ. հունիսյան պատերազմի հետևանքների վերացման համար պայքարից: Վերը նշված հանգամանքների բերումով Լիբանանին էր վիճակված կատարելու այդ տխուր դերը: Այդ նկատառումներից ելնելով՝ ԱՄՆ–ը և Իսրայելը ամենալայն բարոյաքաղաքական, նյութական և ռազմական աջակցություն էին ցույց տալիս լիբանանյան աջերին:

Լիբանանյան կոնֆլիկտը հանդիսանում էր մերձավորարևելյան ճգնաժամի բաղկացուցիչ մասը:

Քաղաքացիական պատերազմի ժամանակ միմյանց դեմ էին կանգնած ծախ՝ ազգային–հայրենասիրական, և աջ՝ հետադիմական ուժերը:

Ձախերը միավորվեցին Ազգային շարժման մեջ, որի ղեկավար մարմինը՝ Կենտրոնական քաղաքական խորհուրդը, գլխավորում էր Քամալ Ջունբլատը: Ազգային շարժման մեջ մտնում էին Առաջադիմական–սոցիալիստական, կոմունիստական, Բաաս, Ազգային–սոցիալական[22] կուսակցությունները, Կոմունիստական գործողությունների, նասերականների՝ մուրաբիտունների կազմակերպությունները և այլն: Կրոնական պատկանելության առումով նրանց շարքերում միավորված էին թե՛ մուսուլմաններ, և թե՛ քրիստոնյաներ:

22 Այս կուսակցությունը 70–ական թ. սկզբներին զգալի էվոլյուցիա ապրեց, հրաժարվեց էքստրեմիստական տակտիկայից և որդեգրեց ռեալիստական ազգային դիրքորոշում:

Աջերը միավորվեցին այսպես կոչված Լիբանանյան ճակատի մեջ: Նրա նախագահը դարձավ նախկին պրեզիդենտ Քամիլ Շամունը, իսկ ռազմական ուժերի հրամանատարը՝ Պյեր Ժմայելի կրտսեր որդի Բաշիր Ժմայելը: Նրա գլխավոր հարվածային ուժը «Ալ–Քաթաիբ ալ–Լուբնանի»՝ «Լիբանանյան փաղանգներն» էր: Դա լինելով կուսակցություն, որը հիմնվել էր դեռևս 1934 թ. Պյեր Ժմայելի կողմից, ուներ նաև զինված խմբեր, որոնք ցույցերի և հանդեսների ժամանակ կրում էին ռազմական համազգեստ և բաժանվում էսկադրաների՝ 25–ական մարդ, սեկցիաների՝ 125–ական մարդ, և փաղանգների՝ 500–ական մարդ: Լիբանանյան ճակատի մեջ մտնում էին նաև «Հիզբ ալ–Կաումի ալ–Ահրար»՝ Ազգային լիբերալ կուսակցությունը, որը հիմնվել էր Շամունի կողմից 1958 թ., Լիբանանի պրեզիդենտի պաշտոնը 1970 թ. զբաղեցրած Սուլեյման Ֆրանժիեի գլխավորած Զղորթայի քաղաքական խմբավորումը և «Լիբանանի մայրիի պաշտպանության» թեև ոչ մեծաթիվ, բայց ծայրահեղ էքստրեմիստական կազմակերպությունը: Լիբանանյան ճակատում միավորված կուսակցություններում և ուժերում կրոնական առումով գերակշռում էին մարոնի քրիստոնյաները, սակայն կային նաև ոչ մեծ թվով մուսուլմաններ: Օրինակ՝ «Լիբանանյան փաղանգներ» կուսակցության մոտ 4%–ը շիա մուսուլմաններ էին:

Սկզբնական շրջանում փորձեր արվեցին լիբանանյան կոնֆլիկտը ներկայացնել որպես քրիստոնյաների և մուսուլմանների միջև ծագած կրոնական պատերազմ: Դա հիմնազուրկ տեսակետ է: Ինչպես նշվեց, երկու կողմերում էլ կային կրոնական տարբեր պատկանելության ուժեր: Բացի այդ, հարկ է նշել, որ աջակողմյան ուժերին, որոնց փորձում էին ներկայացնել որպես զտարյուն քրիստոնյա ուժեր, չմիացան ուղղափառները, կաթոլիկները, հայերը, «Ազգային բլոկ» կուսակցությունը, որը նույնպես բաղկացած էր մարոնիներից: Հետագայում Լիբանանյան ճակատից դուրս եկավ մարոնիների Զղորթայի խմբավորումը՝ Սուլեյման Ֆրանժիեի գլխավորությամբ, որը համագործակցություն հաստատեց մահմեդական սուննի ուժերի, իսկ ապա նաև Ազգային շարժման ղեկավարության հետ:

Լիբանանյան կոնֆլիկտը **ոչ թե կրոնական, այլ քաղաքական բնույթ** ուներ:

3. Քաղաքացիական պատերազմի սկիզբը

Քաղաքացիական պատերազմը սկսողները եղան լիբանանյան աջերը:

1975 թ. ապրիլի 13–ին մի խումբ պաղեստինցիներ ավտոմեքենայով Բեյրութի արևմտյան հատվածից վերադառնում էին արևելյան մասում գտնվող Թել Զաաթարի իրենց ճամբարը: Նրանց ճանապարհն անցնում էր Այն առ–Ռումանա թաղամասով, որը բնակեցված է գլխավորապես քրիստոնյաներով և որտեղ տիրապետող դիրքեր ունեն «Հիզբ ալ–Քաթաիբ ալ–Լուբնանի»՝ Լիբանանյան փաղանգներ կուսակցությունը և նրա մարտական խմբերը՝ փաղանգները: Ավտոմեքենան Բեյրութի Այն առ–Ռումանա թաղամասով անցնելու պահին փաղանգավորների զինված մարտիկները դավադրաբար կրակ բացեցին մեքենայի վրա և սպանեցին նրանում գտնվող բոլոր 27 խաղաղ պաղեստինցիներին:

1975 թ. ապրիլի 13–ի այդ արյունալի օրն ընդունված է համարել Լիբանանում երկրորդ քաղաքացիական պատերազմի սկիզբ:

Ի պաշտպանություն պաղեստինցիների հանդես եկան Ազգային շարժման մեջ միավորված ուժերը: Ռազմական բախումները, զարգանալով վերընթաց գծով, տարածվեցին Բեյրութում, իսկ այնուհետև՝ ամբողջ երկրում. հյուսիսում՝ Տրիպոլիի շրջանում, հարավում՝ Սայդայի և Սուրի շրջանում, արևելքում՝ Բեքաայի շրջանում, Շուֆի շրջանում և այլուր: Երկրում անխնա արյուն էր հոսում, քանդվում էին տները, շենքերը, կազմալուծվում տնտեսությունը: Այդ ընթացքում զինադադարի ավելի քան 50 համաձայնագիր ստորագրվեց, բայց դրանք անմիջապես խախտվում էին, և պատերազմական գործողությունները բռնկվում էին նոր թափով:

Քաղաքացիական պատերազմի սկզբնական շրջանում հաջողությունն ուղեկցում էր աջերին: Սակայն Ազգային շարժումը կարողացավ վերակառուցել իր ուժերը և փոխել պատերազմի ընթացքը: Ձախ կամ ազգային–հայրենասիրական ուժերը հարված հարվածի հետևից էին հասցնում աջերին և արդեն 1976 թ. կեսերին Լիբանանի տերիտորիայի մոտ 80%–ը գտնվում էր նրանց հսկողության տակ:

Ստեղծված ծանր պայմաններում 1976 թ. հունիսին Լիբանան մտան սիրիական, իսկ ապա նաև արաբական մի շարք այլ պետությունների՝ Սաուդյան Արաբիայի, Հյուսիսային Եմենի, Սուդանի զորքերը, որոնց նպատակն էր, ինչպես պաշտոնապես նշվում էր, վերջ տալ արյու-

նահեղությանը Լիբանանում: Նրանք ձնավորեցին միջարաբական խաղաղապահ ուժերը, որոնց միջուկը, սակայն, սիրիական զորքերն էին, որոնց թիվը հետագայում անցավ 30 հազարից: Իսկ վերոնշյալ արաբական մյուս երկրներն իրենց զորքերը դուրս բերեցին Լիբանանից և քաղաքացիական պատերազմը սանձելու ամբողջ պարտականությունը ստանձնեց Սիրիան: Հետագայում Սիրիան իր զորքերը մտցրեց նաև Լիբանանի մյուս շրջանները: Փաստորեն, ամեն ինչ կենտրոնացվեց սիրիացիների ձեռքում: Առանց նրանց գիտության և համաձայնության Լիբանանում ոչինչ չէր կատարվում: Այդ օրերին Լիբանանում շատ տարածված էր մի ասույթ. «Առանց Սիրիայի թույլտվության անգամ թռչունը չի կարող թռչել Լիբանանի տարածքով»: Դրա մեջ կար ճշմարտության հատիկ:

Սիրիայի նպատակն էր ոչ միայն կանխել եղբայրասպան պատերազմը Լիբանանում, այլև ապահովել իր թիկունքը հնարավոր իսրայելա–սիրիական պատերազմի դեպքում, ամրապնդել իր դիրքերը և ազդեցությունն արաբական աշխարհում: Չպետք է հաշվից դուրս նետել նաև այն իրողությունը, որ Սիրիայում կային ուժեր, որոնք, Լիբանանը համարելով պատմաաշխարհագրական Սիրիայի մի մասը, հեռուն գնացող հավակնություններ ունեին նրա նկատմամբ:

Այդուհանդերձ, Լիբանանում սիրիական զորքերի տեղակայումից հետո լիբանանյան կոնֆլիկտը չլուծվեց և ռազմական բախումները հակադիր կողմերի միջև շարունակվում էին: Բեյրութը այսպես կոչված «կանաչ գծով» բաժանվեց երկու մասի՝ արևմտյան, որը գտնվում էր ազգային–հայրենասիրական ուժերի հսկողության տակ, և արևելյան, որտեղ տիրապետող էին աջակողմյան ուժերը:

Պատերազմի ընթացքում զոհվեց մոտ 60 հազ., և վիրավորվեց 200 հազ. մարդ: Հարյուր հազարավոր լիբանանցիներ՝ արաբներ, հայեր և այլք, հարկադրված էին արտագաղթել: Տնտեսությանը հասցված վնասները հաշվվում են տասնյակ միլիարդ դոլարներով: Լիբանանի կառավարությունն անդամալուծվեց: Այն այլևս ի վիճակի չէր իրականացնել երկրի կառավարման ֆունկցիաները: Կազմալուծվեց նաև լիբանանյան բանակը, որը դադարեց գոյություն ունենալ որպես մեկ ամբողջություն: Դրա փոխարեն գլուխ բարձրացրին քաղաքական կուսակցությունները, որոնք ստեղծեցին իրենց սեփական զինված ուժերը և իրենց տիրապետությունը հաստատեցին Բեյրութի տարբեր թաղամասերում, ինչպես նաև Լիբանանի տարբեր շրջաններում: Բախումները նրանց միջև շատ հաճախ թաղամիջյան պայքարի էին վերածվում: Բեյ-

ռուքի փողոցներում պարեկություն էին անում տարբեր խմբավորումների պատկանող զինված խմբերը և կասկածելի մարդիկ, որոնք իրենց տիրապետության տակ գտնվող քաղաքի թաղամասերում արգելափակոցներ էին դրել և ստուգում էին յուրաքանչյուր անցորդի ու ամեն մի մեքենա: Նրանք իրենց տեր ու տնօրեն էին զգում և անպատիժ կերպով կարող էին ամեն ինչ անել, ընդհուպ մինչև սպանությունը:

Լայն տարածում ստացան թալանը և կողոպուտը: Որոշ մարդկանց համար դա դարձավ մասնագիտություն և հարստություն դիզելու աղբյուր: Թալանում էին խանութները, բռնագրավում ավտոմեքենաները, ծաղկում էր ռեկետը, թմրադեղերի վաճառքը և այլն:

Երկրում տիրում էր վախի ու սարսափի մթնոլորտը:

Քաղաքացիական պատերազմը և համընդհանուր տնտեսական անկումը շեշտակիորեն ազդեցին բնակչության տնտեսական դրության վրա: Կառավարության անդամալույծ լինելու պայմաններում, երբ համարյա չէին գործում ժողովրդի տարրական պահանջները սպասարկող ծառայությունները, առաջացավ բնակչությանը սնունդ և պարեն մատակարարելու կենսական խնդիրը: Դրան ավելացան նաև ջրի, էլեկտրականության և վառելիքի պակասը, մարդիկ օրերով զրկված էին էլեկտրականությունից, հեռախոսային կապից, ջուրը տրվում էր միայն որոշակի ժամերի: Երբեմնի ծաղկուն և հրապուրիչ Բեյրութն անճանաչելի էր դարձել, շատ թաղամասեր վեր էին ածվել ավերակների, քաղաքը գտնվում էր սանիտարական անտանելի վիճակում, չէին աշխատում դեռևս կանգուն մնացած բարձրահարկ շենքերի վերելակները: Իսկ գիշերները լուսահորդ կյանքի վարժված Բեյրութը թաղվում էր խավարի մեջ: Մարդիկ վախենում էին դուրս գալ փողոց:

Այս բոլորին պետք է ավելացնել լիբանանյան լիրայի կատաստրոֆիկ արժեզրկումը, որի պատճառով լիբանանյան տասնյակ հազարավոր ընտանիքներ հայտնվեցին ծայրաստիճան աղքատության ու սովի ճիրաններում:

Անդադար ռմբակոծումների հետևանքով քանդվել կամ ավերվել էին բազմաթիվ տներ և տասնյակ հազարավոր մարդիկ մնացել էին անօթևան:

Ոչ պրեզիդենտ Սուլեյման Ֆրանժիեն, որի կառավարման տարիներին՝ 1970–1976 թթ., սկսվեց քաղաքացիական պատերազմը, և ոչ էլ 1976 թ. նրան փոխարինած Իլյաս Սարկիսը, որը պրեզիդենտի պաշտոնը զբաղեցրեց մինչև 1982 թ., այդպես էլ ոչինչ չկարողացան անել խա-

ղաղ ճանապարհով և քաղաքական մեթոդներով վերջ դնելու լիբանանյան ողբերգությանը:

Բայց եթե Սուլեյման Ֆրանժիեն հանդիսանում էր Լիբանանյան քրիստոնեական ճակատի ղեկավարներից մեկը և պատասխանատվություն էր կրում քաղաքացիական պատերազմի առաջացման համար, թեև նա հետագայում հեռացավ իր նախկին դաշնակիցներից, ապա Իլյաս Սարկիսը ոչ մի խմբի չէր պատկանում և շատ թե քիչ ուժեղ հենարան չուներ Լիբանանում: Նրան համարում էին Սիրիայի դրածո և նրա կամքը կատարող: Տվյալ պայմաններում մարդկային բարձր առաքինություններով օժտված այդ անձնավորությունն այլընտրանք չուներ:

Լիբանանյան աջակողմյան ուժերը ամբողջ պատերազմի ընթացքում զենք և զինամթերք էին ստանում Իսրայելից: Չբավարարվելով դրանով և աջերին նյութական ու բարոյական օգնություն ցույց տալով՝ իսրայելական 30–հազարանոց բանակը, տանկերի և ավիացիայի պաշտպանությամբ 1978 թ մարտի 5–ին ներխուժեց Լիբանան: Իսրայելն իր ագրեսիան փորձում էր արդարացնել այսպես կոչված «անվտանգության գոտի» ստեղծելու անհրաժեշտությամբ: Սակայն նրա իսկական նպատակներն էին ոչնչացնել Պաղեստինի դիմադրության շարժումը, ջախջախիչ հարված հասցնել Լիբանանի ազգային–հայրենասիրական ուժերին և ընդարձակել Իսրայելի տարածքները՝ ի հաշիվ Լիբանանի: Իսրայելական զորքերը գրավեցին Լիբանանի հարավը՝ հասնելով մինչև Լիթանի գետը:

Իսրայելական ագրեսիան խոր զայրույթ առաջացրեց ամբողջ աշխարհում: ՄԱԿ–ը պահանջեց Իսրայելից իր զորքերը դուրս բերել գրաված վայրերից: Եվ նա ստիպված էր երեք ամիս անց հեռանալ Լիբանանից: ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի որոշմամբ Լիբանանի հարավային շրջան մտցվեցին ՄԱԿ–ի խաղաղապահ ուժերը:

Սակայն Իսրայելը, նախքան իր զորքերը դուրս բերելը, օկուպացված շրջաններում իշխանությունը հանձնեց այսպես կոչված «Լիբանանի հարավի պաշտպանության բանակին»: Դա լիբանանյան զորամիավորումներ էին, որոնց հրամանատարն էր լիբանանյան բանակի մայոր Սաադ Հադդադը: Նա, դավաճանելով իր հայրենիքին, համագործակցության մեջ մտավ Իսրայելի հետ՝ նրանից ստանալով ֆինանսական օգնություն, ռազմամթերք, հանդերձանք և այլն: Մեկ տարի անց մայոր Հադդադն իր վերահսկողության տակ գտնվող հատվածում հռչակեց այսպես կոչված «Ազատ Լիբանան» պետությունը, որը Թել Ավիվի խամաճիկն էր:

4. Աջակողմյան ուժերի 1978–1979 թթ. զինված հարձակումները հայ համայնքի վրա

Երբ սկսվեց քաղաքացիական պատերազմը, լիբանանահայ համայնքը որպես իր պաշտոնական դիրքորոշում հռչակեց դրական չեզոքության քաղաքականությունը: Դա միանգամայն ճիշտ որոշում էր և օբյեկտիվորեն ծառայում էր զինված առճակատման շառավղի կրճատմանը և լիբանանյան կոնֆլիկտի շրջանակների որոշակի սահմանափակմանը: Դա կանխեց արաբների եղբայրասպան պատերազմի կողքին հայերի եղբայրասպան պատերազմի առաջացմանը: Բացի դրանից, դա հնարավորություն տվեց հայ համայնքին՝ ծավալելու ակտիվ գործունեություն կոնֆլիկտի քաղաքական կարգավորման համար՝ ելակետ ունենալով Լիբանանի միասնության, անկախության և տերիտորիալ ամբողջականության պահպանումը: Հայ համայնքի որդեգրած քաղաքականությունը հենց այդպես էլ ընկալեցին Լիբանանի ազգային–հայրենասիրական ուժերը և հավանություն տվեցին նրա ընդունած դրական չեզոքության քաղաքականությանը: Այդ կապակցությամբ Բեյրութի «Մանդի Մորնինգ» շաբաթաթերթը գրում էր. «Հայ համայնքը խաղում է կրկնակի դեր՝ կայունացման և միավորման:

Կայունացման դերը նա կատարում է տնտեսական և սոցիալական մակարդակով: Թեև նա ներկայացնում է Լիբանանի բնակչության միայն 8%–ը, սակայն տալիս է ազգային արտադրանքի 25%–ը:

Միավորման դերը նա խաղում է քաղաքական, ազգային մակարդակով: Դա միակ համայնքն է, որ մնաց գործող թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Բեյրութում, միակ համայնքը, որի դերը չկատարեցին Լիբանանի մյուս համայնքների ժողովրդական շարժումները: Հայերին դուրս չմղեցին Արևելյան կամ Արևմտյան Բեյրութից: Այդ եզակի դիրքը նրանց հնարավորություն է ընձեռում առանձնահատուկ դեր կատարելու»:

Հայերի թիվն այդ ժամանակ կազմում էր մոտավորապես 240–245 հազ.: Նրանք հիմնականում բնակվում էին մայրաքաղաքում, ինչպես նաև Տրիպոլիում, Զահլեում, Ալեյում, Սայդայում, Բիբլոսում, Ջունիում, Շուֆի, Մեթնի և Քեսրվանի շրջաններում, Բեքաայի դաշտավայրում և այլուր:

Զգալի է հայերի տեսակարար կշիռը Լիբանանի քաղաքական և պետական կյանքում: Նա Լիբանանի պառլամենտում սովորաբար ներկայացված է 6–7 դեպուտատներով: Լիբանանյան ընտրական բավակա-

նին բարդ համակարգի հետևանքով պառլամենտի ևս 21 դեպուտատի ընտրվել–չընտրվելու հարցը զգալիորեն կախված է հայ ընտրողի դիրքորոշումից: Լիբանանի կառավարության կազմում սովորաբար լինում է 1–2 հայ նախարար: Հայ համայնքը Լիբանանի պետական, քաղաքական, տնտեսական և մշակութային կառույցների օրգանական մասն է հանդիսանում:

Եթե Լիբանանի ձախ՝ ազգային–հայրենասիրական ուժերը ընդունումով մոտեցան հայ համայնքի դրական չեզոքության քաղաքականությանը և հարգեցին նրա այդ որոշումը, ապա այլ եղավ լիբանանյան աջերի՝ փաղանգավորների և շամունականների դիրքը հայ համայնքի նկատմամբ: Նրանք ուժեղ ճնշում էին գործադրում, որպեսզի հայ համայնքը՝ որպես քրիստոնյա համայնք, հրաժարվի դրական չեզոքության քաղաքականությունից, միանա Լիբանանյան ճակատին և զենքն ուղղի Լիբանանի ազգային–հայրենասիրական ուժերի դեմ: Սակայն հայ համայնքը թույլ չտվեց իրեն ներգրավել արյունահեղ կոնֆլիկտի մեջ: Նա հաստատակամ իր դրական չեզոքություն պահպանելու հարցում: Այնժամ աջերը որոշեցին հարցը լուծել ճակատային գրոհով:

1978 թ. հոկտեմբերի 1–ին փաղանգավորների և շամունականների զինված բանդաները հարձակում սկսեցին Արևելյան Բեյրութի հայկական թաղերի վրա: Հոկտեմբերի 1–7–ը ծանր հրետանային ռմբակոծման ենթարկվեցին Բուրջ Համուդ, Դորա, Խալիլ Բադաի, Նոր Հաջն, Հայաշեն, Աշրաֆիյա, Մար Մխայել, Մար Յուսուֆ, Նահր ալ–Մոթ, Զալկա և այլ հայաբնակ շրջանները: Հայերի վրա հարձակումներ եղան նաև Բիբլոսում, Մեթնում, Քեսրվանում և այլ վայրերում: Գազազած հրոսակները պայթեցնում և քանդում էին հայերին պատկանող շինությունները, մշակութային հաստատությունները, գործարաններն ու արհեստանոցները: Հոկտեմբերի 26–ին մարդկային խիղճը կորցրած ջարդարարները պայթեցրին Բիքֆայայում լիբանանահայության կողմից 1915 թ. հայերի ցեղասպանության հիշատակին կանգնեցված հուշարձանը: Հոկտեմբերյան արյունալի օրերին զոհվեց 80 և վիրավորվեց 350 հայ:

Աջերի վայրագ հարձակումը հայ համայնքի վրա առաջացրեց Լիբանանի ազգային–հայրենասիրական ուժերի, բոլոր ազնիվ մարդկանց և համաշխարհային հասարակության բողոքն ու վրդովմունքը: Ի պաշտպանություն լիբանանահայության՝ վճռականորեն հանդես եկավ խորհրդային հասարակայնությունը: Այդ օրերին մեծ մտահոգության մեջ էր մայր հայրենիքը՝ Խորհրդային Հայաստանը: Հանրապետության

աշխատավորությունն իր խորը ցասումն արտահայտեց լիբանանյան աջերի բարբարոսական գործողությունների դեմ՝ պահանջելով դադարեցնել բռնությունները հայերի նկատմամբ:

Ի պաշտպանություն հայերի իրենց ձայնը բարձրացրին Լիբանանի և արաբական մի շարք այլ երկրների պետական գործիչները, ազգային ուժերը և մտավորականությունը: Լիբանանի արաբական դեմոկրատական ուժերը և կազմակերպություններն ակտիվորեն մասնակցեցին հայերին օգնություն ցույց տալու գործին: Լիբանանի նախկին վարչապետ Ռաշիդ Սոլիը Բեյրութում տողերիս հեղինակի հետ ունեցած զրույցի ժամանակ դատապարտելով լիբանանյան աջերի հակահայ քաղաքականությունը և գործողությունները, ընդգծեց. «Մենք՝ արաբներս, խոր հարգանք ենք տածում հայերի նկատմամբ, որոնք շատ բան են արել Լիբանանի տնտեսական և կուլտուրական զարգացման համար: Հայ համայնքը Լիբանանի օրինական համայնքներից մեկն է, իսկ հայերը՝ այս երկրի օրինական քաղաքացիները և մեր եղբայրները: Ուստի մեր պարտականություն է պաշտպան կանգնել մեր հայ եղբայրներին»: Ի պաշտպանություն հայերի հանդես եկան Լիբանանի Ազգային հայրենասիրական ուժերի ճակատի բոլոր մասնակիցները, ինչպես նաև Պաղեստինի ազատագրության կազմակերպության ղեկավարությունը: Մենք Սուխթարա գյուղում, որը Ջունբլատների տոհմի կենտրոնատեղին է, հանդիպում ունեցանք Լիբանանի Առաջադիմական սոցիալիստական կուսակցության ղեկավար Վալիդ Ջունբլատի հետ, որը դավադրաբար սպանված իր հոր՝ Քամալ Ջունբլատի փոխարեն ստանձնել էր դրուզ համայնքի և վերոնշյալ կուսակցության ղեկավարությունը: Նա ամենալայն օգնությունը խոստացավ հայ համայնքին և իր խոսքի տերը եղավ: Իսկ Պաղեստինի դիմադրության շարժման ղեկավարներից մեկի հետ մեր ունեցած հանդիպման ժամանակ վերջինս Պաղեստինի ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) ղեկավար Յասիր Արաֆաթի անունից հայտարարեց, որ ՊԱԿ–ը պատրաստ է իր ռազմական ուժերը դնել հայերի տրամադրության տակ:

Լիբանանյան աջերը ստիպված էին դադարեցնել ռազմական գործողությունները և իրենց զինված բանդաները դուրս բերել հայկական թաղամասերից: Դա հնարավորություն տվեց հայ փախստականներին վերադառնալ իրենց բնակավայրերը և ձեռնամուխ լինել իրենց քանդված տների, դպրոցների, այլ հաստատությունների վերաշինմանը և վերանորոգմանը:

Հայ համայնքին հասցված ծանր վերքերի բուժման գործում զգալի դեր խաղած մայր հայրենիքը: Հայաստանի կառավարության որոշումով լիբանանահայությանը ցույց տրվեց նյութական մեծ օգնություն: Հայաստանը Լիբանան՝ պատերազմից տուժած հայությանն ուղարկեց սննդամթերք, հագուստ, դեղորայք և առաջին անհարժեշտության այլ իրեր, որոնց մի մասը հատկացվեց պատերազմից տուժած նաև արաբ որոշ ընտանիքների: Ընդհանուր առմամբ 30 ապրանքատար ինքնաթիռ մեկնեց Երևանից Բեյրութ: Հայաստանի օգնությունը շատ բարձր գնահատականի արժանացավ լիբանանահայության կողմից, մարդիկ արցունքն աչքներին շնորհակալություն էին հայտնում հայրենիքին, որի օգնությունը նրանք դիտում էին ոչ միայն որպես նյութական օժանդակություն, այլ թերևս ավելի շատ բարոյական և քաղաքական աջակցություն: Հենց այդ ժամանակ Լիբանանի հայերի մոտ ինքնաբերաբար ծնվեցին «Այժմ մենք գիտենք, որ անտեր չենք» և «Հայրենիքը մեզ հետ է» կարգախոսները: Մարդ առանց հուզմունքի չէր կարողանում լսել այդ բառերը:

Ինչ երանելի օրեր էին:

Սակայն մեկ տարի անց՝ 1979 թ. սեպտեմբերի 10–ին, աջերը նոր զինված հարձակում գործեցին Արևելյան Բեյրութի Բուրջ Համուդ և Նաբաա հայկական թաղերի վրա: Բայց հայ համայնքն այս անգամ ավելի լավ էր նախապատրաստված և քաջաբար հետ մղեց այդ նոր հարձակումը՝ պաշտպանելով հայ համայնքի գոյության իրավունքը: «Ան–Նիդա» թերթը գրում էր, որ «Դեպքերի հետևողների ուշադրությունը գրավեց զինված ջոկատների (փաղանգավորների — Ն. Հ.) դեմ ցուցաբերված հայկական զորավոր հակազդեցությունը, որի ընթացքում պաշտպանության դիրքերի վրա գտնվող հայերը ոչ միայն կարողացան Բուրջ Համուդ–Նաբաա շրջանի բոլոր սահմանները պաշտպանել, այլև առաջ շարժվեցին»: Կռիվներն ավարտվեցին սեպտեմբերի 13–ին: Այս անգամ նս աջերին չհաջողվեց իրագործել իրենց ռազմական ծրագրերը և ստիպել հայ համայնքին՝ միանալ Լիբանանյան ճակատին:

1979 թ. սեպտեմբերյան մարտերի օրերին լիբանանահայ համայնքի ղեկավարությունը հրապարակեց «Կոչ լիբանանահայությանը», որտեղ մեկ անգամ նս հստակորեն շեշտվեց, որ «ապարդյուն են հայության քաղաքացիական դիրքորոշումը ճնշումի տակ փոխելու բոլոր ծիգերը»:

Հայ համայնքը հավատարիմ մնաց դրական չեզոքության քաղաքականությանը և աջերը չկարողացան հայերին ներգրավել եղբայ-

ռասպան պատերազմի մեջ և քաղաքացիական պատերազմին տալ ազգամիջյան բախումների երանգավորում:

5. 1982 թ. իսրայելական ներխուժումը Լիբանան

Դրությունը Լիբանանում շարունակում էր մնալ անկայուն: Ըստ էության, քաղաքացիական պատերազմը շարունակվում էր: Օր չկար, որ բախումներ չլինեին երկու հակադիր ուժերի միջև: Զոհերի և վիրավորների թիվն անընդհատ աճում էր: 1977 թ. մարտի 16–ին դավադրաբար սպանվեց Ազգային շարժման ղեկավար, Լիբանանի և արաբական աշխարհի ականավոր գործիչ Քամալ Ջունբլատը: Նա, որ այդ ժամանակ Լիբանանի ամենահեղինակավոր և ազդեցիկ քաղաքական գործիչն էր, առաջին օրվանից վճռականորեն դեմ էր Սիրիայի միջամտությանը Լիբանանի ներքին գործերին և պահանջում էր սիրական զորքերի դուրսբերումը երկրից:

Տարածայնություններ ծագեցին և անգամ բախումներ սկսվեցին աջ խմբավորումների ներսում: Փաղանգավորները, որոնք ձգտում էին մենատիրության՝ իրենց ենթարկել Լիբանանում գտնվող բոլոր քրիստոնյա համայնքները և իրենց անբաժան իշխանությունը հաստատել Լիբանանում, 1978–1980 թթ. ընթացքում դիմեցին մի շարք ռազմական քայլերի իրենց դաշնակիցների նկատմամբ: Նրանք հարձակվեցին իրենց նախկին գլխավոր դաշնակիցներից մեկի՝ նախկին պրեզիդենտ Սուլեյման Ֆրանժիեի խմբավորման վրա, որը դուրս էր եկել Լիբանանյան ճակատից: Բաշիր Ժմայելի մի մեծ զորախումբ գիշերը գաղտագողի հարձակվեց Ֆրանժիեի զորաջոկատների վրա և ոչնչացրեց նրանցից շատերին: Սպանվեցին նաև Ֆրանժիեի որդին՝ Տոնի Ֆրանժիեն, նրա կինը և նորածին երեխան: Նման հարձակման ենթարկվեցին նաև «Լիբանանյան մայրիի պաշտպանության» կազմակերպությունը, որը կազմված էր մարոնի քրիստոնյաներից և դաշնակցում էր փաղանգավորների հետ: Իսկ 1980 թ. Բաշիր Ժմայելի հրոսակները հանկարծակի հարձակում գործեցին իրենց ամենագլխավոր դաշնակցի՝ Քամիլ Շամունի զորքերի վրա, որոնք Ջունիի «Ակվա Մարինա» լողափում հանգստանում էին, և ոչնչացրին շամունականների հիմնական ռազմական ուժերը: Սպանվեց մի քանի հարյուր զինվոր, որոնք անգամ չհասցրեցին զենքերը գործի դնել: Ականատեսների վկայությամբ՝ լողափի մերձակա ջրատարածքը արյունից կարմիր գույն էր ընդունել:

Բարդություններ առաջացան նաև ձախ ճամբարում, մասնավորապես Ազգային շարժմանը հարող Ամալի՝ շիա համայնքի ռազմաքաղաքական կազմակերպության, և ՊԱԿ–ի միջև: Հարթ չէին հարաբերությունները նաև Լիբանանի ազգային–հայրենասիրական ուժերի և Սիրիայի միջև: Նրանք սկզբում ընդհանուր առմամբ դրական դիրք գրավեցին Սիրիայի միջամտության հանդեպ՝ ակնկալելով, որ դա պետք է ժամանակավոր բնույթ կրեր, և որոշ ժամանակից հետո սիրիացիները կհեռանան Լիբանանից: Մինչդեռ Սիրիան մտադիր չէր հեռանալ և իր նպատակների համար օգտագործում էր լիբանանյան թե՛ աջակողմյան, և թե ձախակողմյան ուժերին:

Ապարդյուն անցան Իլյաս Սարգսի, որը Լիբանանի պրեզիդենտն էր 1976–1982 թթ., բոլոր ջանքերը աջակողմյան և ձախակողմյան ուժերի միջև հաշտության եզրեր գտնելու ուղղությամբ:

Ահա այսպիսի իրադրության մեջ սկսվեց իսրայելական ագրեսիան: Դրան նպաստեցին 1978 թ. Քեմփ Դևիդի գործարքը և 1979 թ. մարտին սեպարատ համաձայնագրի կնքումը Իսրայելի և Եգիպտոսի միջև, որի հետևանքով արաբական աշխարհի ամենաուժեղ պետությունը՝ Եգիպտոսը, դուրս եկավ պայքարից, և Իսրայելը ձեռքերի ազատություն ստացավ:

1982 թ. հունիսի 6–ին իսրայելական 80–հազարանոց բանակը ներխուժեց Լիբանան: Իսրայելին հաջողվեց կոտրել պաղեստինյան և լիբանանյան հայրենասիրական ուժերի դիմադրությունը, գրավել Լիբանանի տերիտորիայի մեկ երրորդը և հունիսի 15–ին շրջապատել Արևմտյան Բեյրութը: Ագրեսիան իրականացվեց «Խաղաղություն Գալիլեային» անվան տակ, որի նպատակն էր, ըստ իսրայելական վարկածի, անվտանգություն ապահովել Իսրայելի հյուսիսային տերիտորիների համար: Իրականում այդ ագրեսիայի նպատակն էր ՊԱԿ–ի ջախջախումը, Սիրիայի թուլացումը, փաղանգավորների ղեկավարությամբ դրության «կայունացումը» Լիբանանում, քեմպդևիդյան պրոցեսի շարունակումը՝ Լիբանանը նրա մեջ ներգրավելու ուղիով, և պայմանների ստեղծում ԱՄՆ–ի ռազմական ներկայության ընդլայնման համար: Արևմտյան Բեյրութի բնակչության համար սկսվեցին դժոխային օրեր: Իսրայելի բանակը պաշարման ենթարկեց Բեյրութը: Իսրայելական զորքերը մարոնի քրիստոնեական ռազմական ուժերի հետ միասին ամեն ինչ անում էին, որ Բեյրութ սնունդ և վառելիք չմտնի: Սպառվում էին ջրի, հացի և վառելիքի վերջին աղքատիկ պաշարները: Քաղաքը կանգնած էր սովի և համաճարակների վտանգի առջև: Անելանելի վիճակում հայտնվեցին հի-

վանդանոցները, ծերերը և մանուկները: Արևմտյան Բեյրութի թաղամասերն ամեն օր ենթարկվում էին բարբարոսական ռմբակոծումների: Այդ անմարդկային գործողությունների հետևանքով սպանվեց և վիրավորվեց 60 հազ. մարդ, իսկ 800 հազ. մարդ մնաց անօթևան:

Իսրայելական ագրեսիան և բարբարոսական գործողությունները խորապես վրդովեցին ամբողջ աշխարհին: Այդ քայլը դատապարտեցին ՄԱԿ–ը և միջազգային բազմաթիվ կազմակերպություններ, համաշխարհային հռչակ վայելող քաղաքական և հասարակական դեմքեր, գիտնականներ և մշակույթի գործիչներ: Միջազգային մասշտաբով ուժեղ ճնշում գործադրվեց Իսրայելի վրա՝ վերջ տալ ագրեսիային և իր զորքերը դուրս բերել Լիբանանից:

Երկարատև բանակցություններից հետո 1982 թ. օգոստոսի 10–ին համաձայնություն ձեռք բերվեց, որ պաղեստինյան զորքերը և Պաղեստինի ազատագրության կազմակերպության՝ ՊԱԿ–ի, քաղաքական ու ռազմական կառույցները պետք է հեռանան Լիբանանից և տեղակայվեն արաբական տարբեր երկրներում: 1982 թ. օգոստոսի 21–ից սկսվեց պաղեստինյան զորքերի էվակուացիան Լիբանանի մայրաքաղաքից, որն ավարտվեց նույն տարվա սեպտեմբերի 1–ին:

Բեյրութից ՊԱԿ–ի հեռանալը, սակայն, չէր նշանակում, որ պաղեստինցիներն ընդհանրապես հեռացան Լիբանանից: Նրանք շարունակում էին բնակվել Բեյրութում և Լիբանանի այլ վայրերում: 1986 թ. Լիբանանում դեռևս մնացել էր պաղեստինյան 11 ճամբար, որոնք գործում էին ՄԱԿ–ի Ազգերի օգնության և աշխատանքի գործակալության (UNRWA) հովանու ներքո: Այնտեղ հիմնականում կենտրոնացված էին պաղեստինցիների չունևոր խավերը, իսկ մեծահարուստներն ապրում էին ճամբարներից դուրս՝ շքեղ վիլլաներում և առանձնատներում: ԱՄՆ–ի պետական դեպարտամենտի տվյալներով՝ 1986 թ. նրանց թիվը հասնում էր 400 հազարի, մինչդեռ ՊԱԿ–ի տվյալները նշում են 600 հազ. թիվը:

1982 թ. օգոստոսի 23–ին, երբ Բեյրութը դեռ գտնվում էր պաշարման օղակում, կայացան Լիբանանի պրեզիդենտի ընտրությունները: ԱՄՆ–ի և Իսրայելի ակտիվ միջամտությամբ և պաշտպանությամբ Լիբանանի նոր պրեզիդենտ ընտրվեց «Լիբանանյան փաղանգներ» կուսակցության ղեկավար Պյեր Ժմայելի կրտսեր որդին՝ Բաշիր Ժմայելը, որը հանդիսանում էր Լիբանանյան ճակատի ռազմական ուժերի գլխավոր հրամանատարը: Նա սերտորեն կապված էր ԱՄՆ–ի և Իսրայելի հետ, և վերջիններս հույս ունեին նրա օգնությամբ Լիբանանում հաստատել մա-

ռիոնետային ռեժիմ, որը հլու–հնազանդ կիետներ ամերիկա–իսրայելական քաղաքականությանը: Թվում էր, թե մարոնիներն ու նրանց աջակցող ամերիկացիները և Իսրայելը մոտ էին իրենց ծրագրերի իրականացմանը:

Սակայն Բաշիր Ժմայելը չհասցրեց գբաղեցնել պրեզիդենտի պաշտոնը: 1982 թ. սեպտեմբերի 14–ին Արևելյան Բեյրութում պայթեցվեց փաղանգավորների կուսակցության շտաբ–կայանը, որի ժամանակ սպանվեց այնտեղ գտնվող Բաշիր Ժմայելը:

Պատրվակ բռնելով այդ հանգամանքը՝ իսրայելական զորքերը ներխուժեցին Արևմտյան Բեյրութ: Երկու օր անց՝ սեպտեմբերի 16–ին, նրանք փաղանգավորների անմիջական մասնակցությամբ իրագործեցին Բեյրութի Սաբրա և Շատիլա ճամբարների պաղեստինյան բնակչության սպանդը: Այդ սարսափելի կոտորածը ցնցեց ամբողջ աշխարհը, որն անարգանքի սյունին գամեց Իսրայելին և նրա փաղանգավոր կամակատարներին:

Իսրայելական զորքերը Արևմտյան Բեյրութից հեռացան 1982 թ. սեպտեմբերի 1–ին՝ պաղեստինյան 11 հազ. 644 մարտիկների և սիրիական 2700 զորքերի հեռացումից հետո:

6. 1983 թ. մայիսի 17–ի լիբանանա–իսրայելական համաձայնագիրը

Սպանված Բաշիր Ժմայելի փոխարեն 1982 թ. հոկտեմբերին Լիբանանի պրեզիդենտ ընտրվեց նրա ավագ եղբայրը՝ Ամին Ժմայելը: Նա պրեզիդենտի պաշտոնը ստանձնեց Լիբանանի համար ծանր պայմաններում: Լիբանանի տարածքը՝ մինչև Արևմտյան Բեյրութ, օկուպացված էր Իսրայելի կողմից: Լիբանանում էին գտնվում արևմտյան տերությունների այսպես կոչված բազմազգ ուժերը, որոնց միջուկը կազմում էին ամերիկյան ծովային հետևակայինները: Դրանք մտցվել էին Լիբանանից պաղեստինյան ջոկատների էվակուացմանը հետևելու պատրվակով: ԱՄՆ–ը և Իսրայելը բացահայտ ճնշում էին գործադրում Ամին Ժմայելի վրա լիբանանա–իսրայելական համաձայնագիր ստորագրելու համար, որը պետք է նոր խթան հանդիսանար Եգիպտոսի պրեզիդենտ Անվար Սադաթի սպանությունից հետո փակուղու մեջ մտած քեմպդևիդյան պրոցեսի հետագա զարգացման համար:

Լիբանանա–իսրայելական համաձայնագիրը ստորագրվեց 1983 թ. մայիսի 17–ին: Դա մի անիրավահավասար պայմանագիր էր, որը

սահմանափակում էր Լիբանանի ինքնիշխանությունը: Լիբանանը զրկվում էր իր տերիտորիայում ունենալ զենիթային զենք, լիբանանյան ինքնաթիռները չէին կարող թռչել Լիբանանի հարավային տերիտորիայի վրայով, առանց իսրայելական իշխանություններին վաղօրոք տեղյակ պահելու այդ մասին, Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերություն չունեցող պետությունը զրկվում էր Լիբանանի տերիտորիայով, ջրային և օդային տարածքով զենքի տարանցիկ տեղափոխման իրավունքից, Լիբանանի հարավին վերաբերող բոլոր հարցերը պետք է լուծեին Լիբանանը և Իսրայելը համատեղ և այլն: Լիբանանը համաձայնագրի ստորագրումն արդարացնում էր նրանով, որ այն նախատեսում էր իսրայելական զորքերի դուրսբերում Լիբանանից: Սակայն այս հարցում ևս կար վերապահություն: Իսրայելը իր զորքերի դուրսբերումը կիրագործեր, եթե դրան նախորդեր սիրիական զորքերի դուրսբերումը:

Սիրիան հայտարարեց, որ իր զորքերը դուրս կբերի միայն իսրայելական զորքերի անհապաղ էվակուացիայից հետո: Իսրայելը մերժեց սիրիական հակապահանջը: Եվ իսրայելական զորքերի դուրսբերումը փոխարինվեց նրանց վերատեղաբաշխումով: 1983 թ. հոկտեմբերի 9–ին ավարտվեց իսրայելական զորքերի հետքաշումը Արևմտյան Բեյրութից, Շուֆից և Բեքայից մինչև Ավալի գետը: Բայց պահպանվեց Սաադ Հադդադի խամաճիկ «Ազատ Լիբանան» պետությունը: Այսպիսով՝ այդ պայմանագրից Լիբանանը ոչինչ չշահեց: Սիրիան գտնում էր, որ դա հակասում է նաև իր անվտանգության շահերին:

Համաձայնագրի ստորագրումը առաջ բերեց լիբանանցիների խոր դժգոհությունը: Երկրում ուժեղ շարժում ծավալվեց նրա վերացման համար: Ռազմական արյունալի բախումներ սկսվեցին այսպես կոչված «լիբանանյան բանակի» և շիա ու սուննի համայնքների ռազմական ուժերի միջև: Սիրիայի միջնորդությամբ հաջողվեց հասնել կրակի դադարեցմանը: 1983 թ. հոկտեմբերի 31–ին Ժնևում հրավիրվեց հաշտեցման կոնֆերանս, որին մասնակցում էին Լիբանանի պրեզիդենտ Ամին Ժմայելը, Ազգային շարժման ղեկավարներ Վալիդ Ջունբլատը և Ռաշիդ Քարամեն, Ամալի ղեկավար Նաբիհ Բերին, ականավոր քաղաքական գործիչներ Սուլեյման Ֆրանժիեն, Սաիբ Սալամը, Քամիլ Շամունը և Ադիլ Օսեյրանը: Այս հանդիպման ժամանակ լիբանանա–իսրայելական համաձայնագիրն ըստ էության դատապարտվեց և նշվեց, որ կրակի դադարեցումն ու հաշտեցումը հնարավոր է այդ համաձայնագիրը չեղյալ հայտարարելու դեպքում: Սակայն ԱՄՆ–ը և Իսրայելը լսել անգամ չէին ուզում այդ մասին:

Ցանկանալով ահաբեկել լիբանանյան հայրենասերներին՝ բազմազգ ուժերի կազմում գտնվող ամերիկյան զորքերն ակտիվացրին իրենց գործողությունները նրանց դեմ: Լիբանանի ափերի մոտ խարիսխ ձգած ամերիկյան «Նյու Ջերսի» գծանավի մեծ տրամաչափի թնդանոթներից սկսեցին անխնա գնդակոծել Բեյրութի և հարակից շրջանների՝ դրուզներով և շիաներով բնակեցված վայրերը: Իսրայելն իր հերթին ուժեղացրեց Լիբանանի քաղաքների և գյուղերի օդային ռմբակոծումները: Սակայն լիբանանյան հայրենասերները չընկրկեցին դրա առջև: Նրանք քաջաբար պայքարում էին իրենց երկրի ազատության համար և մեծ կորուստներ պատճառեցին ամերիկյան ծովային հետևակայիններին: ԱՄՆ–ը, հաշվի առնելով իր զորքերի կրած մեծ զոհերը և դրա ավելի մռայլ հեռանկարները, հարկադրված էր իր զորքերը հեռացնել Լիբանանից:

Համազգային պայքարի այս մթնոլորտում 1984 թ. մարտին չեղյալ հայտարարվեց լիբանանա–իսրայելական համաձայնագիրը, իսկ ապրիլ ամսին Ամին Ժմայելը Լիբանանի վարչապետ նշանակեց Ռաշիդ Քարամեին, որը կազմեց ազգային միասնության կառավարություն:

1985 թ. ավարտվեց Լիբանանից իսրայելական զորքերի դուրսբերման վերջին փուլը: Հարավային Լիբանանում նա իշխանությունը թողեց իր խամաճիկ Հարավային Լիբանանի բանակի հրամանատար մայոր Սաադ Հադդադին:

Սակայն Իսրայելի և ԱՄՆ–ի սադրանքների, ինչպես նաև լիբանանյան աջերի մեկուսապաշտական քաղաքականության հետևանքով, ազգային հաշտեցում տեղի չունեցավ: Ամբողջ 1984–1985 թթ. ընթացքում պարբերաբար տեղի էին ունենում զինյալ բախումներ Լիբանանի տարբեր խմբավորումների միջև: Երկրում տիրում էր քաոսային վիճակ և անապահովություն: Խիստ վատացել էին տնտեսական վիճակը: Գործարար կյանքը կանգ էր առել, փակվում էին գործարանները, արհեստանոցները և խանութները, աճում գործազրկությունը, խելահեղորեն բարձրանում գները: Լիբանանցիներին համակել էր հուսահատությունը:

Ստեղծված դրությունից ելքը Լիբանանի առողջ և հեռատես ուժերը տեսնում էին ազգային հաշտեցման և պետական–քաղաքական կառուցվածքի բարեփոխման մեջ այն հաշվով, որ այն արտահայտի ստեղծված ուժերի նոր փոխհարաբերությունը և պատասխանի ժամանակի պահանջներին:

1985 թ. դեկտեմբերին Սիրիայի աջակցությամբ Դամասկոսում համաձայնություն ձեռք բերվեց Առաջադիմական սոցիալիստական կու-

սակցության ղեկավար Վալիդ Ջունբլատի, Ամալի ղեկավար Նաբիհ Բերրիի և Լիբանանյան ճակատի ուժերի հրամանատար էլի Հոբեյկայի միջև Լիբանանում ըստ փուլերի ռեֆորմներ անցկացնելու վերաբերյալ: Նախատեսվում էր վերջիվերջո հրաժարվել կրոնահամայնքային սիստեմից, սահմանափակել պրեզիդենտի իրավունքները, որոշ չափով ընդլայնել վարչապետի իրավունքները, պառլամենտում հաստատել քրիստոնյաների և մահմեդականների հավասար ներկայացուցչություն: Այս ծրագիրը որոշ հույսեր էր ներշնչում, որ իրական հնարավորություններ կարող են բացվել կոնֆլիկտի լուծման համար:

Սակայն դրա դեմ դուրս եկան պրեզիդենտ Ամին Ժմայելը, ինչպես նաև փաղանգավորներն ու ընդհանրապես Լիբանանյան ճակատի ղեկավարությունը: Այդ ճակատի ներսում՝ աջերի ճամբարում, «պետական հեղաշրջման» պես բան կատարվեց: Էլի Հոբեյկան զրկվեց իր գրաված պաշտոնից, և եռյակի համաձայնությունը, փաստորեն, չեղյալ հայտարարվեց:

1987 թ. սկզբներին նոր բախումներ սկսվեցին Արևմտյան Բեյրութում, այս անգամ մուսուլմանական համայնքների՝ «Ամալ» շիա կազմակերպության և ծախ՝ ոչ շիա մուսուլմանների միջև: Արյունահեղությանը վերջ տալու նպատակով Սիրիան իր զորքերը մտցրեց Արևմտյան Բեյրութ, որտեղից նրանք հեռացել էին դեռևս 1982 թ.:

1988 թ. ավարտվում էին Ամին Ժմայելի պրեզիդենտական լիազորությունների ժամկետը: Լիբանանի պառլամենտին չհաջողվեց նոր պրեզիդենտ ընտրել և Լիբանանում ստեղծվեց յուրատեսակ քաոսային դրություն: Ամին Ժմայելը, տեսնելով, որ պառլամենտը չի կարողանում ընտրել նոր պրեզիդենտ, 1988 թ. սեպտեմբերի 22–ին՝ իր լիազորություններն ավարտվելուց ուղիղ մեկ օր առաջ, բանակի շտաբի պետ, իր կողմնակից գեներալ Միշել Աունին հանձնարարեց կազմել ժամանակավոր կառավարություն, բայց դա նրան չհաջողվեց: Այն երեք մուսուլման թեկնածուները, որոնց նա առաջարկեց մտնել կառավարության մեջ, մերժեցին միանալ նրա կառավարությանը:

Միշել Աունը պատկանում էր լիբանանյան քրիստոնյաների այն թևին, որոնք բացահայտ հանդես էին գալիս Սիրիայի ներկայության դեմ և պահանջում, որ Սիրիան իր զորքերը մինչև վերջին զինվորը դուրս բերի Լիբանանից: 1989 թ. մայիսին նա Լիբանանը Սիրիայից «ազատագրելու պատերազմ» հայտարարեց: Կրկին ծայրահեղ աստիճան լարվեց ներքաղաքական դրությունը Լիբանանում:

7. Թաիֆի 1989 թ. հաշտեցման համաձայնությունը և քաղաքացիական պատերազմի ավարտը

Լիբանանը նորից հայտնվեց փակուղու մեջ: Ակնհայտ էր, որ այդպես շարունակել չէր կարելի, և նման իրավիճակի պահպանումը անդունդի եզրին գտնվող Լիբանանին կարող էր հասցնել կործանման: Այդ բանն ըմբռնում էին ոչ միայն Լիբանանում, այլև արաբական մյուս երկրներում, որոնք խիստ մտահոգ էին, որ Լիբանանի կոնֆլիկտը չի հաջողվում կարգավորել: Լիբանանյան կոնֆլիկտը վաղուց ներլիբանանյան խնդրից վերածվել էր համաարաբական հիմնախնդրի: Արաբական երկրները 80–ական թվականների վերջերին դիմեցին վճռական քայլերի՝ նպատակ ունենալով մուսուլմաններին և քրիստոնյաներին նստեցնել մեկ սեղանի շուրջ և հասնել նրանց հաշտեցման:

Նրանց ջանքերի շնորհիվ 1989 թ. հոկտեմբերին Սաուդյան Արաբիայի Թաիֆ քաղաքում, որը սաուդյան թագավորական ընտանիքի և սաուդյան մեծահարուստների ամառանոցային վայրն էր, որտեղ նրանք անց էին կացնում ամառային շոգ ամիսները, գումարվեց Լիբանանի պառլամենտի նստաշրջանը, որին մասնակցում էին նախորդ ընտրությունների ժամանակ ընտրված բոլոր դեպուտատները, բացի ինը պատգամավորներց, որոնք զոհվել կամ վախճանվել էին այդ ընթացքում: Այդ նստաշրջանի գլխավոր նպատակն էր վերջնական լուծում տալ լիբանանյան կոնֆլիկտի հիմնախնդիրներին, հասնել համազգային հաշտեցման և վերջակետ դնել 15 տարի տևած քաղաքացիական պատերազմին:

Լիբանանյան պառլամենտականների քննարկմանը ներկայացվեց որոշման մի նախագիծ, որը նախապատրաստել էին Արաբական պետությունների լիգայի անդամ երեք պետությունները՝ Ալժիրը, Մարոկկոն և Սաուդյան Արաբիան: Դա, ըստ էության, Լիբանանի պետական կառավարման համակարգի վերափոխումների ու բարելավումների ծրագիր էր՝ հիմնված փոխզիջումների վրա:

Առաջին կարևոր հարցը, որի շուրջը համաձայնության եկան կողմերը՝ պառլամենտում քրիստոնյաների և մուսուլմանների հավասար ներկայացուցչության հարցն էր: Ինչպես նշվել է, 1926 թ. ընդունված և գործող սահմանադրությունը սահմանել էր քրիստոնյա դեպուտատների գերակայությունը մուսուլմանական համայնքների դեպուտատների նկատմամբ՝ 6:5 փոխահարաբերությամբ, այսինքն՝ յուրաքանչյուր 5 մուսուլման դեպուտատի դիմաց ընտրվում էր 6 քրիստոնյա դեպուտատ: Տարիների

ընթացքում Լիբանանի ազգաբնակչության հարաբերակցությունը՝ կրոնական պատկանելության առումով, փոխվել էր հօգուտ մուսուլմանների: Նրանք 1980–ական թվականներին արդեն կազմում էին ազգաբնակչության ընդհանուր թվի մոտավորապես 60%–ը: Մուսուլմանների պահանջը՝ հաշվի առնել այդ նոր իրողությունը և դրան համապատասխան փոփոխություններ մտցնել երկրի կառավարման համակարգում, այդ թվում և պառլամենտում ներկայացուցչության հարցում, և հաստատել հավասարության սկզբունքը, անտեսվում էր քրիստոնյա համայնքների, առաջին հերթին մարոնի համայնքի ղեկավարության կողմից:

Այժմ երկու կողմերն էլ դիմեցին փոխզիջման և հաստատվեց հավասար ներկայացուցչության սկզբունքը: Քրիստոնյաները հրաժարվեցին մոտ 65 տարի տևած իրենց մենաշնորհից, իսկ մուսուլմանները, չնայած այն հանգամանքին, որ այժմ կազմում էին բնակչության մեծամասնությունը, չպնդեցին պառլամենտում մեծամասնություն ունենալու վրա: Նրանք համաձայնվեցին, որ մուսուլմանները և քրիստոնյաներն այսուհետև ունենալու են հավասար թվով դեպուտատներ Լիբանանի բարձրագույն օրենսդրական մարմնում:

Կարելի է ասել, որ փոխզիջման վրա հիմնված համաձայնությունն այդ առանցքային հարցի վերաբերյալ ունեցավ անկյունաքարային նշանակություն և դուռ բացեց հաշտեցման համար երեկվա հակառակորդ ուժերի միջև նաև այլ հարցերում:

Պառլամենտի հետ կապված կողմերը Թաիֆում համաձայնության եկան նաև մեկ այլ հարցում՝ դեպուտատական տեղերի քանակը 99–ից հասցվեց 128–ի: Դա արվեց՝ հաշվի առնելով, որ տարիների ընթացքում աճել էր Լիբանանի բնակչության թվաքանակը, և տվյալ պահին անհրաժեշտություն կար, որ ժողովուրդը, Լիբանանի կրոնական համայնքներն ավելի լայն կերպով ներկայացված լինեն օրենսդիր մարմնում:

Երկու կողմերը համաձայնվեցին, որ կոնֆեսիոնալիզմը, նրա կիրառումը իրականացվի. սահմանափակ չափերով միայն վարչական ապարատում: Մեկնակետ ունենալով այդ սկզբունքը՝ նրանք պայմանավորվեցին, որ Լիբանանի պրեզիդենտը, ինչպես նախկինում, լինի քրիստոնյա, սակայն ավելի սահմանափակ իրավունքներով:

Նախագիծը պարունակում էր հատուկ անդրադարձ Լիբանանում Սիրիայի ներկայության հարցին: Առաջարկվում էր նրա ներկայությունը երկարաձգել ևս երկու տարով այն բանից հետո, երբ կկազմվի Լիբանա-

նի ազգային միասնության կառավարությունը, որը կհամաձայնվի կիրառել սահմանադրական բարեփոխումներ: Արաբական պետությունների լիգայի կողմից Սիրիային 1976 թ. տրված մանդատի ժամկետը՝ խաղաղապահ առաքելություն իրականացնելու վերաբերյալ, լրացել էր դեռևս 1982 թ.: Այժմ Սիրիային հնարավորություն էր տրվում ևս երկու տարի շարունակել իր առաքելությունը և իր զորքերը պահել Լիբանանում:

Բոլոր դեպուտատները, որոնք հավաքվել էին Թաիֆում, բացի չորս մուսուլման դեպուտատներից, հավանություն տվեցին Ալժիրի, Մարոկկոյի և Սաուդյան Արաբիայի ներկայացրած նախագծին:

Ահա այս հիման վրա ընդունված է ասել, որ 1989 թ. հոկտեմբերին ավարտվեց Լիբանանում 15 տարի տևած քաղաքացիական պատերազմը:

1989 թ. նոյեմբերի 4–ին Թաիֆի հանդիպման ժամանակ կողմ արտահայտված բոլոր դեպուտատները և պառլամենտի նախագահը, որոնք կազմում էին Լիբանանի պառլամենտի անդամների չորս հինգերորդը, հավաքվեցին Լիբանանի հյուսիսում գտնվող Քուլայաթ վայրում, և պաշտոնապես վավերացրին ձեռք բերված համաձայնագիրը, որը Լիբանանի պատմության մեջ մտել է որպես Թաիֆի համաձայնագիր:

IX. ԼԻԲԱՆԱՆԸ ՀԵՏԹԱԻՖՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1990–2005 թթ.)

1. Կարևոր փոփոխություններ Լիբանանի կառավարման համակարգում և անհրաժեշտ քայլեր քաղաքացիական պատերազմի հետևանքները վերացնելու ուղղությամբ

Թաիֆի համաձայնագրից հետո Լիբանանի առջև կանգնեցին մի շարք անհետաձգելի խնդիրներ, որոնք նպատակաուղղված էին քաղաքացիական պատերազմի քաղաքական, սոցիալական և տնտեսական ծանր հետևանքները վերացնելուն: Անհրաժեշտ էր վերականգնել պետական–կառավարական ինստիտուտները, կառավարման բոլոր աստիճանի մարմինները, ապահովել նրանց նորմալ գործունեությունը և իրավասությունների տարածումը ամբողջ Լիբանանում, երկրում հաստատել կարգ ու կանոն, ապահովել քաղաքացիների կյանքի և նրանց ունեցվածքի անվտանգությունը, վերականգնել քայքայված տնտեսությունը, բարելավել ժողովրդի նյութական և սոցիալական վիճակը և այլն, և այլն:

Այդ խնդիրների իրականացումը դարձավ լիբանանյան իշխանությունների գործունեության հիմնական բովանդակությունը XX դարի 90–ական թվականներին և XXI դարի սկզբներին:

1990 թ.՝ պրեզիդենտ Ռենե Մուավադի սպանությունից հետո, Լիբանանի պառլամենտը Շթորայում գումարված իր նստաշրջանում Լիբանանի նոր պրեզիդենտ ընտրեց Իլյաս Հրավիին, որը վայելում էր Սիրիայի աջակցությունը:

Այնուհետև ստեղծվեց ազգային միասնության կառավարություն, և 1990 թ. օգոստոսին սկսվեց Թաիֆի համաձայնագրի դրույթների իրականացման գործընթացը:

Դեպուտատների պալատը նախ և առաջ փոփոխության ենթարկեց 1926 թ. սահմանադրության երեք հոդվածները, որոնք վերաբերում էին պրեզիդենտի և կառավարության լիազորություններին: Նորովի ձևակերպվեց սահմանադրության 17–րդ հոդվածը, որը գործադիր իշխանությամբ օժտում էր պրեզիդենտին: Բարեփոխումից հետո այդ հոդվածը հետևյալ կերպ շարադրվեց. «Գործադիր իշխանությունը տրվում է Նախարարների խորհրդին»: Ավելացվեց նաև, որ Նախարարների խորհուրդը կամ կառավարությունը կազմավորվում է հավասար թվով քրիստոնյա և մուսուլման նախարարներից:

Նախկին սահմանադրությունը պրեզիդենտին օժտել էր վարչապետին նշանակելու լիազորություններով, որն այնհուհետև ներկայացվում էր պառլամենտի հաստատմանը: Նա էր նաև նշանակում և ազատում նախարարներին: Փոփոխված սահմանադրությամբ պրեզիդենտը նախքան վարչապետին նշանակելը նրա թեկնածության մասին պետք է խորհրդակցեր պառլամենտի նախագահի և տարեց դեպուտատների հետ և միայն դրանից հետո նշանակեր վարչապետ: Իսկ ինչ վերաբերում էր նախարարներին նշանակելու և ազատելու հարցին, ապա նոր սահմանադրության համաձայն՝ այդ իրավունքն անցնում էր կաբինետին:

Փոփոխության ենթարկվեց նաև մի այնպիսի կարևոր հոդված, ինչպիսին օտարերկրյա երկրների հետ պայմանագրեր կնքելու հարցն էր: Նախկին սահմանադրության համապատասխան հոդվածի համաձայն՝ պրեզիդենտն իրավունք ուներ բանակցություններ վարել օտար պետությունների հետ և կնքել պայմանագրեր առանց վարչապետի համաձայնության: Այդ հոդվածի վերափոխված տեքստը նախատեսում էր, որ պրեզիդենտը պետք է ունենա վարչապետի և կաբինետի համաձայնությունը՝ նախքան տվյալ պայմանագիրը ստորագրելը:

Ինչպես տեսնում ենք, կառավարությունն ավելի լայն լիազորություններ էր ստանում, քան պրեզիդենտը: Սակայն ինչ–որ չափով հավասարակշռությունը պահպանելու նպատակով պահանջվում էր կառավարության անդամների երկու երրորդի համաձայնությունը նրա կողմից ընդունվող որոշումների համար:

Ազգային միասնության առաջին կառավարությունն այդ վերափոխումներն իրականացնելուց հետո, որը համարվում է Թաիֆում ձեռք բերված համաձայնությունների կիրառման առաջին փուլը, հրաժարական տվեց, և 1990 թ. դեկտեմբերին կազմվեց Ազգային միասնության երկրորդ կառավարությունը, որով սկսվեց բարեփոխումների երկրորդ փուլը: Այդ փուլում հիմնական խնդիրը դարձավ վարչական ապակենտրոնացման հարցը: Լիբանանը բաժանվեց 6 մուհաֆազաների՝ նահանգների՝ Բեյրութի, Բեքայայի, Հյուսիսային Լիբանանի, Հարավային Լիբանանի, Լեռնալիբանանի և Նաբատիայի:

Լիբանանի ազգային–հայրենասիրական ուժերը գոհունակությամբ ընդունեցին Թաիֆի որոշումները՝ գտնելով, որ դրանք, իրոք, կարող են վերջ տալ արյունաքամ քաղաքացիական պատերազմին և նոր հորիզոններ բացել Լիբանանի զարգացման առջև:

Թաիֆի համաձայնագիրը արժանացավ նաև արաբական պետությունների և բազմաթիվ այլ երկրների ու միջազգային հանրության դրական գնահատականին:

Սակայն նա այլ ընտրություն գտավ Լիբանանի որոշ քրիստոնյա և մուսուլման շրջանների կողմից, որոնք ժխտական դիրք գրավեցին նրա նկատմամբ: Իր ռազմաշունչ տրամադրություններով Թաիֆի համաձայնության դեմ հանդես եկավ Միշել Աունը:

Ինչ վերաբերում է Մարոնի քրիստոնյա ճակատին, ապա շնորհիվ պրեզիդենտ Իլյաս Հրավիի՝ հաջողվեց նրա մեծ մասն անջատել Աունի ազդեցությունից, որի հետևանքով այդ ճակատը, ցուցաբերելով սթափ և պրագմատիկ որոշում, իր համաձայնությունը հայտնեց Թաիֆի համաձայնագրին:

Այն բանից հետո, երբ Լիբանանի պառլամենտը իրագործեց այդ համաձայնագրի բոլոր պայմանները և համապատասխան փոփոխություններ մտցրեց սահմանադրության մեջ, որի մասին արդեն նշվել է, Թաիֆի որոշումները ստացան օրենքի ուժ:

Սակայն Միշել Աունը չէր հանդարտվում և չէր ընդունում Լիբանանում տեղի ունեցած նոր քաղաքական իրողությունները: Նա չէր հրա-

ժարվել Լիբանանը Սիրիայի տիրապետությունից «ազատագրելու պատերազմից»: 1989 թ. հոկտեմբերի 13–ին սիրիական և լիբանանյան ուժերը համատեղ ռազմական գործողություններ իրականացրին Միշել Աունի դեմ և պարտության մատնեցին նրա զորքերին: Հենց այդ օրն էլ համարվում է քաղաքացիական պատերազմի ավարտման օր:

Ինչպես ասվեց, ստեղծվեց ազգային միասնության կառավարություն, որի առաջնահերթ խնդիրներից մեկը եղավ անհամար զինված խմբերի ու բանդաների զինաթափումը, որի արդյունքում մեծապես ամրապնդվեցին ներքին անվտանգությունն ու ապահովությունը: Առանձին և անօրինական զինված խմբերի վերացմանը զուգահեռ, լիբանանյան կառավարությունը ձեռնամուխ եղավ լիբանանյան բանակի վերականգնմանը որպես մեկ ամբողջություն, որպես միասնական ազգային ինստիտուտ՝ առանց կրոնահամայնքային հատվածայնության: Լիբանանի բոլոր կրոնական համայնքները դրականորեն արձագանքեցին կառավարության սկզբունքային նշանակություն ունեցող այդ քայլին և լայն աջակցություն ցույց տվեցին նրա միասնական ազգային բանակ ստեղծելու ջանքերին:

Բեյրութցիները խանդավառությամբ ընդունեցին մայրաքաղաքը արևելյան և արևմտյան հատվածների բաժանող «կանաչ գծի» վերացումը և նրա՝ որպես մայրաքաղաքի ամբողջականության վերականգնումը:

Լիբանանյան կառավարությունը մինչև 90–ական թվականների վերջը կարողացավ իր իշխանությունը վերականգել Լիբանանի տարածքի երկու երրորդի վրա: Նրա իրավասություններից դուրս էր մնում Հարավային Լիբանանի մի մասը՝ այսպես կոչված «Անվտանգության գոտին», որը գտնվում էր Իսրայելի օկուպացման ներքո: Լիբանանը կարևոր էր համարում Հարավային Լիբանանի ազատագրումը իսրայելական օկուպացումից: Նա պահանջեց Իսրայելի կառավարությունից անհապաղ և առանց որևէ նախապայմանի իր զորքերը դուրս բերել Հարավային Լիբանանից՝ հենվելով դրա վերաբերյալ դեռևս 1978 թ. ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի կողմից ընդունված 425 բանաձևի վրա, որը, սակայն, Իսրայելը հրաժարվեց կատարել:

Հաշվի առնելով այդ հանգամանքը և ցանկանալով հակաուժ ստեղծել Հարավային Լիբանանում հաստատված մայոր Սաադ Հադդադի Հարավային Լիբանանի բանակի դեմ՝ Լիբանանի կառավարությունը թույլատրեց Հիզբոլլահին՝ գործել երկրի հարավային մասում:

Այդուհանդերձ, Իսրայելը 2000 թ. իր զորքերը դուրս բերեց նաև այդ գոտուց, որից հետո Լիբանանում այլևս չմնացին իսրայելական զորքեր:

Ինչ վերաբերում է սիրիական զորքերին, ապա խնդիրն այստեղ ավելի բարդ էր: Թաիֆի համաձայնագիրը երկրորդ անգամ լեգալացրեց սիրիական զորքերի գտնվելը Լիբանանում, որի ժամկետն Արաբական պետությունների լիգայի 1976 թ. որոշման համաձայն արդեն ավարտվել էր դեռևս 1982 թ.: Սակայն Թաիֆում միաժամանակ որոշվեց, որ Լիբանանում գտնվող սիրիական զորքերի թվաքանակը պետք է կրճատվի մինչև 16 հազ. զինվորի, և պետք է տեղի ունենա նրանց վերադասավորում այն հաշվով, որ նրանք կենտրոնացվեն միայն Արևելյան Բեյրութում և Բեքաայի հովտում: Սիրիան հիմնականում իրականացրեց իր զորքերի վերադասավորումը, իսկ ինչ վերաբերում է զորքերի կրճատմանը, ապա այն իրականացվեց մասնակիորեն: Ուստի լիբանանցիների մոտ ավելի և ավելի էր ուժեղանում սիրիական զորքերը Լիբանանից դուրս բերելու պահանջը, որը հատկապես ուժեղացավ 2000 թ., երբ իսրայելական զորքերը հեռացան Լիբանանից:

Սակայն Սիրիան հրաժարվում էր դիմել այդ քայլին՝ պատճառաբանելով, որ իր զորքերը Լիբանանում գտնվում են Բեյրութի խնդրանքով՝ ավելացնելով, որ դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Լիբանանի կառավարությանը դեռևս չի հաջողվում լրիվ իրագործել Թաիֆի համաձայնագրով նախանշված սահմանադրական վերափոխումները: Այդ փաստարկի մեջ, անշուշտ, կար ճշմարտության հատիկ, բայց կարծում ենք, որ անկախ այդ փաստից, Սիրիան ձգտում էր, որքան հնարավոր է, երկարաձգել իր ներկայությունը Լիբանանում և պահպանել իր տիրապետող դիրքերն այդ երկրում:

Համենայն դեպս, Լիբանանի պրեզիդենտ Իլյաս Հրավին 1991 թ. մայիսին Սիրիայի հետ կնքեց եղբայրության, համագործակցության և կոորդինացիայի մասին պայմանագիր:

1990–ական թվականներին՝ քաղաքացիական պատերազմի վերջանալուց հետո, լիբանանյան իշխանությունները մեծ ուշադրություն էին դարձնում բարձրագույն օրենսդիր մարմնի՝ պառլամենտի գործունեության համար նորմալ պայմաններ ստեղծելու վրա: Կանոնավոր կերպով, պահպանելով սահմանադրությամբ հաստատված ժամկետները, տեղի էին ունենում պառլամենտական ընտրությունները: 1992 թ.՝ քաղաքացիական պատերազմի ավարտից հետո, տեղի ունեցան պառ-

լամենտական առաջին ընտրությունները: Հաջորդ ընտրությունները տեղի ունեցան 1996 և 2000 թթ.՝ չորս տարին մեկ, ինչպես պահանջում էր սահմանադրությունը: Պառլամենտական կյանքի նորմալացումն իր բարերար ներգործությունն ունեցավ Լիբանանի ընդհանուր քաղաքական կյանքի աշխուժացման վրա:

1998 թ. հոկտեմբերի 15–ին կայացան Լիբանանի պրեզիդենտական հերթական ընտրությունները, և պրեզիդենտ ընտրվեց Լիբանանի բանակի շտաբի պետ 62–ամյա գեներալ Էմիլ Լահուդը: Նրա հայրը լիբանանյան բանակի գեներալ Ջամիլ Լահուդն էր, իսկ մայրը՝ հայազգի Ադրինե Բաջակյանը: Նա բավականին ազատ խոսում է հայերեն և հպարտ է, որ հայուհու զավակ է: Նրա կինը՝ Անդրեաս Ամատունին, նույնպես հայուհի է:

Էմիլ Լահուդը ռազմական կրթությունը ստացել է Բեյրութի ռազմական ակադեմիայում, և այնուհետև շարունակել Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ ռազմածովային հաստատություններում: 1985 թ. Էմիլ Լահուդը ստանում է ադմիրալի ռազմական կոչում: Պրեզիդենտ Հրավին նրան շնորհում է գեներալի կոչում և նշանակում բանակի շտաբի պետ՝ պաշտոնանկ անելով Միշել Աունին: Լահուդը գլխավորեց Աունի դեմ ուղղված ռազմական գործողությունները:

Լահուդին էր վիճակված միավորել ցաքուցրիվ եղած լիբանանյան զորախմբերը և կառուցել նոր միասնական բանակ:

1998 թ. սեպտեմբերի 3–ին Լիբանանի պառլամենտը երեք տարի ժամանակով երկարաձգեց Էմիլ Լահուդի պրեզիդենտական լիազորությունները:

Պրեզիդենտ ընտրվելուց հետո Լահուդը Լիբանանի վարչապետ նշանակեց Սալիմ Հոսին, որը մեկ անգամ չէ, որ նախկինում գլխավորել էր Լիբանանի կառավարությունը: Նա տնտեսագետ է, Բեյրութի ամերիկյան համալսարանի պրոֆեսոր, մի շարք տնտեսագիտական աշխատությունների հեղինակ: Պատահականություն չէր նրա նշանակումը կառավարության ղեկավար, քանի որ այդ ժամանակ կարևոր նշանակություն էին ձեռք բերում տնտեսական հարցերը և քայքայված տնտեսության վերականգնման խնդիրները: Այդ նույն խնդիրներն էին կանգնած նաև Ռաֆիկ Հարիրիի առջև, որը Լիբանանի կառավարությունը գլխավորում էր մինչև Սալիմ Հոսին վարչապետի պաշտոնում նշանակելը: Ռաֆիկ Հարիրին կրկին գլխավորեց Լիբանանի կառավարությունը 2000 թ. կայացած պառլամենտական ընտրություններից հետո:

1975–1990 թթ. քաղաքացիական պատերազմի ժամանակ Լիբանանի տնտեսությունը ծանր կորուստներ էր կրել, արտադրությունը կրճատվել էր ավելի քան 50%–ով, մեծ չափով խաթարվել էին տնտեսական ենթակառուցվածքները, Լիբանանը դադարել էր լինել տարածաշրջանային բանկային և ֆինանսական կենտրոն, մինչև քաղաքացիական պատերազմը ուրիշ երկրներին վարկավորող Լիբանանն ինքն էր խրվել պարտքերի մեջ, մեծ չափերի էր հասնում գործազրկությունը, սոցիալ–տնտեսական ծայրահեղ անմխիթար վիճակում էին գտնվում ժողովրդական զանգվածները: 1997 թ. տվյալներով բնակչության մոտ 20%–ը գործազուրկ էր, իսկ 28%–ը գտնվում էր աղքատության սահմանագծից ներքև:

Լիբանանի կառավարությունը պետք է կարողանար լուծել այդ ծանր տնտեսական խնդիրները՝ երբեմն հարկադրված լինելով ամեն ինչ սկսել զրոյից:

1992 թ. կառավարությունն ընդունեց «Հորիզոն–2000» տնտեսական վերակառուցման և զարգացման 15–ամյա ծրագիրը և ձեռնամուխ եղավ նրա իրագործմանը: Արդյունքներն իրենց շատ սպասեցնել չտվեցին: Թեև դանդաղ, այդուհանդերձ, սկսվեց տնտեսական վերելքը, բացվեցին նոր արդյունաբերական ձեռնարկություններ, արհեստանոցներ, խանութներ և ռեստորաններ: Վերակենդանության նշաններ սկսեց ցույց տալ տուրիզմը, որը միշտ էլ եղել է Լիբանանի կարևոր տնտեսական ճյուղերից մեկը: Ավերված Բեյրութը փոխեց իր անհրապույր տեսքը և վերակառուցման ու լայնածավալ կառուցապատման շնորհիվ աստիճանաբար իր նախկին շուքն ու փայլը ձեռք բերեց:

Տնտեսության վերակառուցումն ու զարգացումն ավելի լայն ծավալներ ընդունեցին, երբ 2000 թ. հոկտեմբերի 23–ին Լիբանանի կառավարությունը գլխավորեց Ռաֆիկ Հարիրին՝ աշխարհի ամենահարուստ մարդկանցից մեկը, որը հիանալի էր կողմնորոշվում տնտեսական և ֆինանսաբանկային գործերում: Նա վերահսկողություն սահմանեց կառավարական ծախսերի վրա՝ զգալիորեն կրճատելով դրանք, ավելացրեց հարկերի գանձումը, ընդլայնեց սեփականաշնորհումը՝ ի հաշիվ պետական ձեռնարկությունների, և այլն: Փարիզում նա բանակցություններ վարեց Լիբանանի վարկատու կամ դոնոր պետությունների հետ, որոնք համաձայնվեցին վերակառուցել Լիբանանի պարտքը և նրան լրացուցիչ սուբսիդիաներ տրամադրեցին: Այդ քայլերի շնորհիվ զգալիորեն

կայունացավ Լիբանանի տնտեսական դրությունը, ակտիվացավ ներքին շուկան, մեծացավ արտահանումը:

Այդ նույն քաղաքականությունն էր վարում վարչապետի պաշտոնում Ռաֆիկ Հարիրիին հաջորդած Քարամեի կառավարությունը:

Լիբանանի ժողովուրդը մեծ հույսերով ու լավատեսությամբ էր նայում ապագային:

2. Ռաֆիկ Հարիրիի սպանությունը, «Մայրիի հեղափոխությունը» և սիրիական զորքերի դուրսբերումը Լիբանանից

2004 թ. կրկին լարվեց ներքաղաքական իրադրությունը Լիբանանում: Երկրի քաղաքական ուժերի մեծամասնությունը պահանջում էր սիրիական զորքերը դուրս բերել Լիբանանից: Դրա կողմնակիցն էր նաև վարչապետ Ռաֆիկ Հարիրին, որը հարկադրված հրաժարական տվեց: Նա դարձավ այն անձնավորությունը, որի շուրջը համախմբվեցին Սիրիայից դժգոհ բոլոր քաղաքական ուժերը: Նրանք գտնում էին, որ Թաիֆի համաձայնագրից և նրա պայմանների իրականացումից հետո այլևս ոչ մի անհրաժեշտություն չկար, որ սիրիական զորքերը մնային Լիբանանում: Նրանք դժգոհ էին, որ Սիրիան ակտիվորեն միջամտում էր Լիբանանի ներքին գործերին, երկրի պրեզիդենտի ընտրություններին, նա էր որոշում, թե ով պետք է լինի երկրի պրեզիդենտը, և վճռորոշ դեր խաղում Լիբանանի կառավարության քաղաքականությունը որոշելու մեջ: Լիբանանցիներն ուզում էին ազատվել սիրիական վերահսկողությունից:

Սիրիան համառորեն դիմադրում էր և մտադիր չէր հեռանալ Լիբանանից: Նա ճնշում էր գործում այն ուժերի և գործիչների նկատմամբ, որոնք ակտիվորեն հանդես էին գալիս սիրիացիների հեռացման պահանջով: Նրանք սպառնացին Միշել Աունին ձերբակալել, եթե նա փորձեր Փարիզից վերադառնալ Լիբանան: Նա Ֆրանսիայում էր ապաստան գտել 1990 թ. պարտությունից հետո: Բանտարկված էր Լիբանանի ոստիկանական ուժերի նախկին ղեկավար Սամիր Ջահջահը, որը նույնպես հակասիրիական դիրքորոշում ուներ:

Սիրիայի հեռացումը միայն քրիստոնյա համայնքը չէր պահանջում: Նրա հեռացման վրա էին պնդում նաև մուսուլմանական համայնքները և նրանց ղեկավարները, ինչպես՝ Ռաֆիկ Հարիրին, Վալիդ Ջունբլատը և այլ գործիչներ: Ռաֆիկ Հարիրին, ինչպես նշվեց, հեռացավ վարչապետի պաշտոնից, մահափորձ կատարվեց Վալիդ Ջունբլատի առա-

ջին օգնական Մրվան Համադեի դեմ, որն ընկալվեց որպես սպառնալիք՝ ուղղված Վալիդ Ջունբլատի դեմ:

2005 թ. փետրվարի 14–ին Բեյրութի կենտրոնում պայթեցվեց Ռաֆիկ Հարիրիի ավտոմեքենան, որի հետևանքով զոհվեցին նա և նրան ուղեկցող 16 մարդ:

Դա ալեկոծեց ողջ Լիբանանը: Լիբանանցիները Ռաֆիկ Հարիրիի սպանության մեջ մեղադրեցին Սիրիայի և Լիբանանի հատուկ ծառայություններին և պահանջեցին սիրիական զորքերը մինչև վերջին զինվորը անհապաղ դուրս բերել Լիբանանից, բացահայտել և պատժել մեղավորներին: Նրանք պահանջեցին նաև Լիբանանի կառավարության հրաժարականը:

Ընդդիմությունը հայտարարեց «Լիբանանի խաղաղ ապստամբություն»: Բեյրութում և Լիբանանի այլ շրջաններում չէին դադարում ցույցերը, որոնց գագաթնակետը հանդիսացավ 2005 թ. մարտի 24–ի ցույցը Բեյրութում, որին մասնակցում էր մեկ միլիոնից ավելի մարդ՝ մայրաքաղաքից և Լիբանանի այլ քաղաքներից ու գյուղական վայրերից: Քարամեի կառավարությունն ընկավ, և 2005 թ. հունիսի 30–ին կազմվեց նոր կառավարություն՝ Ֆուադ Սինյորայի գլխավորությամբ, որը պատկանում է Հարիրիների ճամբարին:

Ռաֆիկ Հարիրիի սպանության մեջ Սիրիային և Լիբանանի իշխանություններին մեղադրեց միջազգային հանրությունը: ՄԱԿ–ի որոշումով Լիբանանի նախկին վարչապետի սպանության հանգամանքները բացահայտելու համար ստեղծվեց հատուկ քննչական անկախ հանձնաժողով, որի զեկույցի համաձայն՝ նրա սպանության մեջ մեղսակից էին Սիրիայի և Լիբանանի հատուկ ծառայությունները: 2005 թ. օգոստոսին ձերբակալվեցին Լիբանանի հատուկ ծառայությունների երեք պատասխանատուներ, իսկ հոկտեմբերի 12–ին Դամասկոսում ինքնասպանությամբ իր կյանքին վերջ տվեց Սիրիայի ներքին գործերի նախարար Ղազի Քանաանը: Նա շատ բան գիտեր և մոտ 20 տարի լինելով Լիբանանում սիրիական ռազմական հետախուզության ղեկավարը՝ դարձել էր ամենաազդեցիկ մարդկանցից մեկը:

Ցույցերը շարունակվում էին, և լիբանանցիները հայտարարեցին, որ իրենք չեն դադարեցնի պայքարը, քանի դեռ սիրիական զորքերը դուրս չեն բերվել իրենց երկրից:

Հանդիպելով այդպիսի համառ դիմադրության և միջազգային ճնշման տակ ծանր դրության մեջ հայտնված Սիրիան հարկադրված էր

նահանջել և բավարարել լիբանանցիների պահանջները: Նա երկու փուլով իր զորքերը դուրս բերեց Լիբանանից, որն ավարտվեց 2005 թ. ապրիլի վերջերին:

Լիբանանցիները իրենց այդ հաղթանակն անվանեցին «Մայրիի հեղափոխության» հաղթանակ: Մայրիի ծառը, ինչպես արդեն նշել ենք, համարվում է Լիբանանի խորհրդանիշը:

Այսպիսով՝ մոտ 30 տարի անց սիրիական զորքերը հեռացան Լիբանանից: Դրանով վերացավ Լիբանանի քաղաքացիական պատերազմի հետևանքներից ևս մեկը:

Փակվեց մայրիների երկրի՝ Լիբանանի պատմության մի կարևոր գլուխը:

3. Լիբանանի միջազգային դրության նորմալացումը

Քաղաքացիական պատերազմի հետևանքների վերացման հասկացողության մեջ կառավարման մարմինների գործունեության վերականգնման, տնտեսական, քաղաքական, սոցիալական, ներքին անվտանգության, օտարերկրյա զորքերի դուրսբերման և այլ հարցերի հետ միասին մտնում են նաև Լիբանանի արտաքին կապերի վերականգնման և զարգացման, նրա միջազգային դրության նորմալացման ոչ դյուրին խնդիրները:

Քաղաքացիական պատերազմի տարիներին, երբ արյունալի մարտեր էին գնում, և երբ երկիրը փաստորեն բաժանված էր զանազան փոքրիկ «իշխանությունների», որոնցից յուրաքանչյուրն ուներ իր զաին՝ առաջնորդը, ու զինված խմբավորումները, և Լիբանանն ըստ էության դադարել էր միասնական պետություն լինելուց, այդպիսի պայմաններում պահպանել նորմալ հարաբերություններ տարբեր երկրների հետ կամ լիարժեք մասնակցություն ունենալ միջազգային կյանքում, գործնականորեն անհնար էր: Խոսքը դիվանագիտական հարաբերությունների մասին չէ: Գնականորեն այդ բնագավառում որևէ փոփոխություն չեղավ՝ ոչ մի պետություն չխզեց կամ չդադարեցրեց դիվանագիտական հարաբերությունները Լիբանանի հետ: Թեև եղան որոշ պետություններ, որոնք, անվտանգության շահերից ելնելով, իրենց դիվանագիտական անձնակազմը ժամանակավորապես հետ կանչեցին Բեյրութից կամ էլ խիստ կրճատեցին:

Ուրեմն, քաղաքացիական պատերազմի բացասական հետևանքների վերացումը և Լիբանանի վերադարձը միջազգային համագործակ-

ցության ընտանիք դարձան Լիբանանի կառավարության գերակա խնդիրը արտաքին քաղաքականության ոլորտում:

Լիբանանի համար հետթաիֆյան շրջանում կարևորագույն նշանակություն ուներ հարաբերությունների կարգավորումն առաջին հերթին արաբական երկրների և Արաբական պետությունների լիգայի հետ, լիարժեք մասնակցությունը համաարաբական գործընթացներին: Եվ նա համբերատարորեն, քայլ առ քայլ գնում է այդ ուղղությամբ՝ հասնելով նշանակալի հաջողությունների: Լիբանանի պատվիրակությունը 1991 թ. հոկտեմբերին մասնակցեց Մադրիդում գումարված Մերձավոր Արևելքի խաղաղության կոնֆերանսին, որը նվիրված էր մերձավորարևելյան բազմաշերտ կոնֆլիկտի լուծման հարցերին, որոնք ուղղակիորեն առնչվում էին նաև Լիբանանին: Լիբանանն ակտիվորեն մասնակցում էր Արաբական պետությունների լիգայի աշխատանքներին և արաբական երկրների ղեկավարների պարբերաբար գումարվող գագաթնաժողովներին: Իսկ 2002 թ. մարտ ամսին Լիբանանում գումարվեց Արաբական պետությունների լիգայի անդամ երկրների ղեկավարների 21–րդ գագաթնաժողովը, որտեղ նախագահում էր Լիբանանի պրեզիդենտ Էմիլ Լահուդը: Առաջին անգամ էր նման ժողով գումարվում Բեյրութում: Այստեղ Լիբանանն իր ջանքերը միացրեց արաբական մյուս պետությունների ջանքերին, որպեսզի հաշտեցում կայանա Իրաքի և Քուվեյթի, Իրաքի և Սաուդյան Արաբիայի միջև: Եվ դա եղավ բեյրության գագաթանաժողովի կարևոր նվաճումներից մեկը:

Լիբանանն ընդհանուր առմամբ հաջողությամբ լուծեց հարաբերությունների վերականգնումը, կանոնավորումը և զարգացումը Եգիպտոսի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Մարոկկոյի, Ալժիրի և արաբական մյուս պետությունների հետ, որը զգալիորեն ամրապնդեց նրա դիրքերը և հեղինակությունը մերձավորարևելյան տարածաշրջանում:

Ինչ վերաբերում է Սիրիայի հետ հարաբերություններին, ապա դա մնում է Լիբանանի արտաքին քաղաքականության և դիվանագիտության ամենաբարդ բնագավառը: Սիրիան ընդհուպ մինչև 2005 թ. ապրիլ ամիսը, երբ ավարտվեց սիրիական զորքերի և հետախուզության ծառայությունների հեռացումը Լիբանանից, թելադրող դիրքեր էր պահպանում Լիբանանում, և Բեյրութը հարկադրված էր հաշվի առնել Դամասկոսի դիրքորոշումը, նրա հետ նախօրոք համաձայնեցնել բոլոր հանգուցային հարցերը: Դա նյարդայնացնում էր լիբանանցիներին, դժգոհության մշտական աղբյուր ծառայում և ստիպում նրանց մտածել սիրիա-

կան հովանավորչությունից ազատվելուց ելք փնտրելու մասին: Եվ այդ պարագան հանդիսացավ Լիբանանում 2005 թ. փետրվար–մարտ ամիսներին ծավալված «Մայրիի հեղափոխության» գլխավոր պատճառը:

Լիբանանի համար կարևոր են հարաբերությունները Ֆրանսիայի հետ, որոնք ունեն պատմական արմատներ և հոգևոր–մշակութային խորը կապեր: Այդ հարաբերությունները կրում են բարեկամական բնույթ և զարգանում են այդ հիմքի վրա: Հարաբերությունները կարգավորվեցին նաև ԱՄՆ–ի հետ: Կողմերը կարողացան հաղթահարել քաղաքացիական պատերազմի ընթացքում նրանց միջև ծագած հակասությունները, և այսօր լիբանանա–ամերիկյան հարաբերությունները նորմալ հունով են ընթանում:

Լիբանանը մեծ նշանակություն է տալիս հարաբերությունների զարգացմանը և խորացմանը նաև արևմտյան, ինչպես նաև ասիական, լատինաամերիկյան և աֆրիկյան այլ երկրների հետ, հատկապես առևտրի, բանկային գործունեության և տնտեսական համագործակցության բնագավառներում: Լիբանանի արտահանման մեջ նրա հիմնական առևտրական գործընկերներն են ԱՄՆ–ը, Եգիպտոսը, Ֆրանսիան, Շվեյցարիան, Հորդանանը, Թուրքիան, Սաուդյան Արաբիան և այլն: Իսկ ներմուծման բնագավառում առաջնությունը պատկանում է Իտալիային, Ֆրանսիային, Գերմանիային, ԱՄՆ–ին, Սիրիային, Չինաստանին, Բելգիային և Մեծ Բրիտանիային:

Լիբանանն անդամ է մի շարք կարևոր միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Արաբական պետությունների լիգայի, ՄԱԿ–ի և նրա մասնաճյուղերի՝ ՅՈՒՆԵՍԿՕ–ի, ՅՈՒՆԿՏԱԴ–ի և այլն, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Իսլամական կոնֆերանս կազմակերպության, Սննդի և գյուղատնտեսության կազմակերպության, Միջազգային արժութային ֆոնդի, Ինտերպոլի և առևտրական, ֆինանսական, բանկային այլ կազմակերպությունների:

X. ԼԻԲԱՆԱՆ — ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1992–2005 թթ.)

XX դարի 90–ական թվականները շրջադարձային նշանակություն ունեցան Լիբանանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պատմության մեջ:

Լիբանանում, շնորհիվ Թաիֆի 1989 թ. համաձայնագրի, ավարտվեց քաղաքացիական պատերազմը, և սկսվեց նրա հասցրած վերքերի բուժման, տնտեսության վերականգնման և երկրի միջազգային դրության կայունացման ժամանակաշրջանը:

Հայաստանը 1991 թ. դարձավ անկախ և ինքնիշխան պետություն: Հայաստանի երրորդ հանրապետությունը վստահորեն ոտք դրեց միջազգային ասպարեզ՝ որպես միջազգային համակեցությսն լիիրավ անդամ:

Լիբանանը, որը ձգտում էր ընդլայնել իր միջազգային կապերը, 1991 դեկտեմբերի 30–ին ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, իսկ 1992 թ. մարտի 4–ին նրանց միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ: 1994 թ. հունիսին Բեյրութում բացվեց Հայաստանի Հանրապետության դեսպանությունը, իսկ 1997 թ. ապրիլին Երևանում՝ Լիբանանի Հանրապետության դեսպանությունը:

Դրանով երկու պետությունների միջև քաղաքական, տնտեսական և մշակութային բազմակողմանի հարաբերությունների զարգացման հիմքը դրվեց:

Լիբանանա–հայկական միջպետական հարաբերությունները բարեկամական հարաբերություններ են, որոնք զարգանում են վերընթաց ուղիով և տրամաբանորեն հանգեցրին Լիբանանի և Հայաստանի միջև Բարեկամության և համագործակցության մասին համաձայնագրի ստորագրությանը, որը տեղի ունեցավ 1998 թ. մայիս ամսին Երևանում՝ Լիբանանի վարչապետ Ռաֆիկ Հարիրիի պաշտոնական այցի ժամանակ: Դրա կարևորության մասին վկայում է նաև այն փաստը, որ Լիբանանը միակ արաբական երկիրն է, որի հետ Հայաստանն ունի նման համաձայնագիր:

Լիբանանը նաև միակ արաբական պետությունն է, որ ճանաչել է 1915 թ. Հայոց ցեղասպանությունը:

Լիբանանի կողմից Հայաստանի անկախության ճանաչումը, դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և Բարեկամության և համագործակցության համաձայնագրի ստորագրումը դրեցին ոչ միայն նրանց բարեկամական հարաբերությունների իրավական հիմքերը, այլև սահմանեցին նրանց համագործակցության շրջանակները:

Իսկ այդ շրջանակները շատ լայն են, որոնց մեջ պետք է առանձնացնել առաջին հերթին քաղաքական հարաբերությունները, որոնք առ այսօր հասել են շատ բարձր մակարդակի: Դրա մասին են վկայում երկու երկրների արտաքին գործերի և այլ նախարարությունների ղեկավարների, վարչապետների, պառլամենտների նախագահների փոխայ-

ցելությունները, որոնք կանոնավոր բնույթ են կրում և աչքի են ընկնում իրենց արդյունավետությամբ:

Լիբանանա–հայկական բարեկամական հարաբերությունների խթանման և խորացման գործում առանձնահատուկ նշանակություն ունեցան Հայաստանի Հանրապետության պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական այցը Լիբանան 2000 թ. փետրվարին և նրա բանակցությունները Լիբանանի պրեզիդենտ էմիլ Լահուդի և Լիբանանի այլ ղեկավարների հետ: Իսկ 2001 թ. մայիսին պատասխան այցով Հայաստան ժամանեց Լիբանանի պրեզիդենտ էմիլ Լահուդը:

Այդ փոխայցելությունները, ինչպես նաև ՀՀ պրեզիդենտ Ռ. Քոչարյանի աշխատանքային այցը Լիբանան, որը կայացավ 2004 թ. մայիսին, լիբանանա–հայկական միջպետական հարաբերությունները բարձրացրին մի նոր մակարդակի:

Երկու երկրների միջև ստորագրվել են երկտասնյակից ավելի պայմանագրեր և համաձայնագրեր, որոնք ընդգրկում են տնտեսական հարաբերությունների տարբեր ոլորտները, այդ թվում՝ առևտրական, տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության, կապիտալ ներդրումների խրախուսման, բանկային համակարգերի համագործակցության, օդային հաղորդակցության և միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների, ինչպես նաև գյուղատնտեսության բնագավառում համագործակցության մասին: Համաձայնագրերի մեկ այլ խումբ վերաբերում է երկու երկրների միջև համագործակցությանը մշակութային, միջնակարգ, բարձրագույն կրթության և գիտության, առողջապահության, սպորտի և զբոսաշրջիկության բնագավառներում:

Լիբանանի և Հայաստանի միջև բարեկամական հարաբերությունների հաստատման, զարգացման և խորացման գործում իրենց նշանակալի դերակատարումն ունեն լիբանանահայ բավականին ազդեցիկ համայնքը, Լիբանանի պառլամենտի հայ դեպուտատները և կառավարության հայազգի անդամները: Լիբանանահայ համայնքը կամուրջի դեր է կատարում երկու երկրների մերձեցման գործում:

Հայ–լիբանանյան միջպետական հարաբերություններն ունեն զարգացման լայն հեռանկարներ:

Գլուխ տասներորդ

ԼԻԲԻԱԿԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՋԱՄԱՀԻՐԻՅԱ
ԼԻԲԻԱ

ԱԼ-ՋԱՄԱՀԻՐԻՅԱ ԱԼ-ԱՐԱԲԻՅԱ ԱԼ-ԼԻԲԻՅԱ ԱՇ-ՇԱԱԲԻՅԱ ԱԼ-ԻՇՏԻՐԱԿԻՅԱ ԱԼ-ՈՒԶՄԱ
ԼԻԲԻԱ

Աշխարհագրական դիրքը — գտնվում է Հյուսիսային Աֆրիկայի կենտրոնական մասում

Սահմանները — սահմանակից է Թունիսին, Ալժիրին, Նիգերին, Չադին, Սուդանին և Եգիպտոսին

Տարածքը — 1 մլն 759 հազ. 540 քառ. կմ

Բնակչությունը — 5 մլն 765 հազ. 563 մարդ (2005 թ. տվյալներ)

Ազգային կազմը — արաբներ և բերբերներ՝ 97%, հույներ, մալթացիներ, իտալացիներ, եգիպտացիներ, պակիստանցիներ, թուրքեր, հնդիկներ և թունիսցիներ՝ 3%

Մայրաքաղաքը — Տրիպոլի՝ 3 մլն

Պետական կրոնը — պետական՝ իսլամ, սուննի մուսուլմանները կազմում են 97%, մնացածը քրիստոնյաներ են, գլխավորապես կաթոլիկ

Պաշտոնական լեզուն — պաշտոնականը՝ արաբերեն, գործածական են բերբերերենը, մասամբ իտալերենը և անգլերենը

Պետական կարգը — ջամահիրիյա՝ ուղղակի ժողովրդաիշխանություն: Պետություն և կառավարություն դասական իմաստով պաշտոնապես գոյություն չունեն

Պետության ղեկավարը — Հեղափոխության առաջնորդն է՝ գնդապետ Մուամմար Աբու Մինյար ալ-Կադաֆին, որը պաշտոնապես որևէ տիտղոս չի կրում, սակայն հանդիսանում է պետության փաստացի ղեկավարը

Գործադիր իշխանությունը — Համընդհանուր ժողովրդական կոմիտեն՝ կառավարությունը կամ կաբինետը, որը նշանակվում է Համընդհա-

նուր ժողովրդական կոնգրեսի կողմից: Գլխավորում է Համընդհանուր ժողովրդական կոմիտեի քարտուղարը՝ վարչապետը

Օրենսդիր իշխանությունը — միապալատ Համընդհանուր ժողովրդական կոնգրեսը

Դատական իշխանությունը — Գերագույն դատարանը: Դատական համակարգն իր բնույթով իսլամական է, որի հիմքում դրված են շարիաթի և Կորանի սկզբունքները: Գործածական է նաև իտալական քաղաքացիական օրենսդրությունը

Վարչական բաժանումը — բաժանված է 25 բալադիյաների՝ մունիցիպալիտետների

Անկախության օրը — 24 դեկտեմբերի 1951 թ.

Ազգային տոնը — 1 սեպտեմբերի, 1969 թ.՝ հեղափոխության օրը

Ազգային դրամը — Լիբիական դինարը

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ըստ շնչի — 6700 ԱՄՆ դոլար (2004 թ.)

Արդյունաբերությունը — նավթ, երկաթ և պողպատ, ցեմենտ, տեքստիլ, սննդի վերամշակման արդյունաբերություն, արհեստագործական արտադրություն

Գյուղատնտեսությունը — ցորեն, գարի, ձիթապտուղ, ցիտրուսներ, բանջարեղեն, անասնապահություն:

ԼԻԲԻԱ
1:10 000 000

I. ԼԻԲԻԱՆ ԻՏԱԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Իտալական տիրապետության հաստատումը: Կիրենաիկայի, Տրիպոլիտանիայի և Ֆեցցանի միավորումը և Լեբու–Լիբիայի կազմավորումը

Իտալիան, համեմատած եվրոպական այլ պետությունների, առաջին հերթին՝ Անգլիայի և Ֆրանսիայի, անգամ Գերմանիայի հետ, ավելի ուշ ոտք դրեց գաղութային քաղաքականության ոլորտը: Եվ դա ոչ թե այն պատճառով, որ նա ավելի «մաքուր» էր, կամ նրա իդեալներին չէին համապատասխանում օտար տարածքների գրավումը և իր տիրապետության հաստատումը ուրիշ երկրների ու ժողովուրդների վրա, այլ այն պատճառով, որ նա ուներ իր ներքին խնդիրները, որոնք երկար ժամանակ կաշկանդում էին նրան գաղութային քաղաքականություն իրականացնելու գործում:

Իտալիային միայն 1870 թ. հաջողվեց վերջնականապես ազատագրվել ավստրիական տիրապետությունից և ստեղծել միավորված անկախ պետություն՝ միապետության ձևով: Նրան երկար ժամանակ պահանջվեց որպես պետություն կայանալու գործում: Մյուս կողմից՝ Իտալիան տնտեսական, հետևաբար նաև ռազմական առումով ավելի թույլ երկիր էր և երբեք չբարձրացավ իսկապես մեծ ու հզոր պետության կարգավիճակի:

Այդ գործոնների ազդեցության տակ Իտալիան երկար ժամանակ չէր կարողանում վճռական քայլերի դիմել և ի վիճակի չէր նվաճողական քաղաքականություն իրականացնել ու այդ նպատակով պատերազմական գործողություններ ծավալել:

Իրադրությունը փոխվեց XX դարի սկզբներին, երբ Իտալիան իրեն բավարար չափով պատրաստ էր զգում գաղութային քաղաքականություն վարելու համար: Բայց այդ ճանապարհին կար մեկ շատ լուրջ և նրա համար անհաղթահարելի գործոն:

Երբ Իտալիան ոտք դրեց գաղութային քաղաքականության բնագավառը, աշխարհը հիմնականում արդեն բաժանված էր, գլխավորապես Անգլիայի ու Ֆրանսիայի միջև, և «ազատ» տարածք համարյա արդեն չկար: Մնացել էին առանձին կղզյակներ, որոնք թեև դեռ գրավված չէին Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից, սակայն գտնվում էին նրանց տեսադաշտում: Այդ քիչ մնացած «ազատ» տարածքներից էին Իտալիայից հարավ և աշխարհագրականորեն նրանից ոչ այնքան հեռու Հյուսիսային Աֆրիկայի կենտրոնական մասում գտնվող, Միջերկրականի ավազանին պատկանող տարածքները, որոնք հավաքական առումով կոչվում էին Լիբիա:

Սակայն երբ խոսում ենք Լիբիայի «ազատ» տարածք լինելու մասին, դա պետք է հասկանալ պայմանականորեն, քանի որ նա ծնականորեն մտնում էր Օսմանյան կայսրության մեջ և իրավական առումով «անտեր» չէր, այլ ուներ իր սյուզերենը՝ ի դեմս Ստամբուլի: Ուրեմն Իտալիան այդ տարածքը պետք է գրավեր Օսմանյան կայսրությունից: Այլ կերպ ասած՝ նա պետք է գնար այն նույն ուղիով, որով գնացել և շարունակում էին գնալ Անգլիան ու Ֆրանսիան, որոնք Հյուսիսային Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում իրենց գաղութային տիրապետությունը հաստատել էին հիմնականում Օսմանյան կայսրության մեջ մտնող մի շարք արաբական երկրների հաշվին:

XX դարի սկզբներին, ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, Լիբիան բաժանված էր երեք հիմնական մասերի և որպես մեկ միասնական պետական միավոր՝ գոյություն չուներ: Այդ մասերն էին Կիրենաիկան՝ արևելքում, Տրիպոլիտանիան, որը զբաղեցնում էր հյուսիսային և արևմտյան հատվածները, և Ֆեցցանը՝ հարավարևմտյան մասում:

Կիրենաիկայում, Տրիպոլիտանիայում ու Ֆեցցանում թուրքական տիրապետությունն առավել զգալի էր մերձծովյա քաղաքներում: Իսկ խորքերում՝ գյուղական վայրերում և բեդվինական շրջաններում, թուրքական տիրապետությունն այնքան շոշափելի չէր: Բեդվինական ցեղերն իրենց համեմատաբար անկախ էին զգում, և միշտ չէ, որ հաշվի էին նստում տեղական թուրքական կառավարիչների հետ, որոնց հիմնական զբաղմունքներն էին կաշառակերությունը, ցեղերին միմյանց դեմ լարելը, թալանի ու կողոպուտի ճանապարհով հարստություն դիզելը և այլն:

XIX դարի կեսերին Կիրենաիկան վերածվեց կրոնական մի նոր հոսանքի կենտրոնի, որն այնուհետև մեկ դարից ավելի բախտորոշ նշա-

նակություն ունեցավ ամբողջ Լիբիայի քաղաքական և հոգևոր–կրոնական կյանքում: Խոսքը, այսպես կոչված, սանուսիական ուսմունքի տարածման մասին է, որը սկսվեց Կիրենաիկայում, իսկ այնուհետև աստիճանաբար տարածվեց Տրիպոլիտանիայում և Ֆեցցանում: Նրա հիմնադիրն էր Մուհամմադ բին Ալի Սանուսին, որը 1837 թ. Մեքքայի մերձակայքում հիմնեց սանուսիների եղբայրությունը կամ օրդենը: Թեև նա բնակվում էր մուսուլմանների սրբակենտրոն Մեքքայում, բայց ծագումով պատկանում էր Ալժիրի ազդեցիկ Շերիֆների տոհմին, որը մեծ հեղինակություն էր վայելում արաբական աշխարհում, մանավանդ կրոնական դասի մոտ:

Ո՞րն էր այդ ուսմունքի էությունը, և ի՞նչ էին ցանկանում նրա ջատագովներն ու հետևորդները:

Մուհամմադ բին Ալի Սանուսին հանդես եկավ նախնական, անաղարտ և մաքուր իսլամին վերադառնալու պահանջներով՝ մերժելով աշխարհիկ կյանքի վայելքները, ցոփությունը, շքեղությունը, հարստություն դիզելու մոլուցքը և այլ արատներ, որոնք կապված էին աշխարհիկ կյանքի իրողությունների հետ: Եվ մաքրամաքուր իսլամին վերադառնալու համար որպես ուղեցույց՝ նա առաջարկում էր ապավինել միայն ու միայն Կորանին: Մերժելով սուննան և հադիսները և կապերը խզելով սուննիզմի հետ՝ Մուհամմադ Սանուսին գտնում էր, որ մուսուլմանների միակ սուրբ գիրքը Կորանն է:

Ահա այսպիսին է ընդհանուր գծերով Սանուսիի ուսմունքի՝ սանուսիզմի հիմնական բովանդակությունը:

Այդ ուսմունքն ըստ էության որևէ նոր բան չէր պարունակում: Արաբական և ընդհանրապես մուսուլմանական երկրներում մինչև այդ դարերի ընթացքում պարբերաբար մերթ այստեղ, մերթ այնտեղ հայտնվում էին գործիչներ՝ մահդի–փրկիչներ, որոնք կոչ էին անում վերադառնալ նախասկզբնական իսլամին, վերանալ աշխարհիկ «պիղծ» կյանքի անցողիկ հաճույքներից, հավատարիմ մնալ Կորանի հիմնարար սկզբունքներին և իրենց կյանքը կառուցել համաձայն նրա դոգմաների: Նման ուսմունքները, որպես կանոն, սկզբնական շրջանում կարողանում են նվաճել համակիրներ, երբեմն՝ լայն զանգվածներ, կյանքի կոչել սոցիալ–կրոնական շարժումներ, արձանագրել չափավոր հաջողություններ, իսկ այնուհետև անկում են ապրում և անհետանում ասպարեզից: Եվ կարծում ենք, ճիշտ կլինի Սանուսիի ուսմունքին մոտենալ այդ տեսանկյունից:

Սանուսին սկզբնական փուլում ձգտում էր իր ուսմունքը տարածել և հաստատել Արաբիայում, որը հանդիսանում էր օրթոդոքս իսլամի՝ սուննիզմի միջնաբերդը, որտեղ գտնվում էին սուննիզմի վրա խարսխված օրթոդոքս իսլամի սրբակենտրոնները՝ Մեքքան և Մադինան: Բայց, ինչպես և պետք էր սպասել, որևէ հաջողություն չունեցավ: Նա կարողացավ միայն որոշ համակիրներ ձեռք բերել պարզունակ արաբ բեդվինների շրջանում, որոնց համար հասկանալի ու ընդունելի էին այդ ուսմունքի դրույթները, մանավանդ նրանք, որոնք ուղղված էին ընդդեմ աշխարհիկ կյանքի ցոփության՝ ի պաշտպանություն պարզ ու ոչ հավակնոտ կենցաղի ու մարդկային փոխհարաբերությունների:

Սանուսիական օրդենը խարսխված էր զավիայի՝ մենաստանի սկզբունքի վրա, որը հանդիսանում էր սանուսիականների հավաքատեղին, կենտրոնը, որի շուրջը համախմբվում էին նրանք: Այդ ուսմունքի հետևորդները միավորվում էին զավիյաներում: Առաջին նման զավիյա հիմնվեց 1843 թ. ալ–Բայդում, իսկ ապա նաև այլ վայրերում:

Անհաջողության մատնվելով Հիջազում՝ Մուհամմադ բին Ալի Սանուսին իր գործունեությունը տեղափոխեց Լիբիա, գլխավորապես Կիրենաիկա, որը դարձավ սանուսիական կրոնամուսուլմանական օրդենի միջնաբերդը: Այդտեղից նրա ազդեցությունը տարածվեց նաև հարևան արաբական երկրներ՝ Եգիպտոս, Սուդան և Թունիս:

Կիրենաիկայում սանուսիականների դիրքերն այնքան ամրապնդվեցին, և նրանց հետևորդների թիվն այնքան բազմամարդ դարձավ, որ սանուսիականներն անգամ ի վիճակի եղան շատ լուրջ դիմադրություն ցույց տալ եվրոպացիների ներթափանցմանը և XIX դարի վերջերին իրենց գլխավոր նստոցում՝ Աջդաբիում ստեղծեցին սանուսիական կառավարություն՝ Մուհամմադ Իդրիս Սանուսիի գլխավորությամբ, որը հետագայում՝ 1918 թ., ընտրվեց սանուսիական օրդենի ղեկավար:

Սանուսիական օրդենն իր գործունեությունը Աֆրիկա՝ Լիբիա, տեղափոխելուց հետո մշտապես ձգտել է դուրս գալ Կիրենաիկայի սահմաններից և իրեն ենթարկել նաև Տրիպոլիտանիայի ու Ֆեցցանի ցեղերին: Բայց այդտեղ բնակվող արաբական և բերբերական ցեղերը մուսուլմանական այլ ուսմունքների հետևորդներ էին և դիմադրում էին սանուսիական օրդենի ոտնձգություններին: Ուստի օրդենի ղեկավարներին, այդ թվում և Մուհամմադ Իդրիս Սանուսիին, երկար ժամանակ չէր հաջողվում կոտրել այդ ցեղերի դիմադրությունը, նրանց իրենց ենթարկել և դրանով իսկ սանուսիզմը վերածել Լիբիայում տիրապետող դավանանքի:

Սիա այսպիսին էր ընդհանուր իրադրությունը Իտալիայի՝ Լիբիա ներխուժման նախօրյակին:

Իտալիան այդ արշավանքին պատրաստվում էր ամենայն պատասխանատվությամբ՝ գիտակցելով, որ իր գաղութային այդ առաջին պատերազմի ելքը շատ կարևոր նշանակություն կունենա իր՝ որպես պետության, հեղինակության համար:

Իտալա–թուրքական պատերազմը սկսվեց 1911 թ. սեպտեմբերի 29–ին իտալական զորքերի հարձակումով, որոնք կարողացան կոտրել թուրքական զորքերի դիմադրությունը և հոկտեմբերի 3–ին գրավեցին Տրիպոլին՝ Տրիպոլիտանիայի գլխավոր քաղաքը: Թուրքական զորքերը լուրջ դիմադրություն չկարողացան ցույց տալ իտալական զորքերին և նրանց զիջելով մերձծովյա քաղաքներն ու բնակավայրերը՝ Միսուրատը, Բենգազին և այլն՝ նահանջեցին երկրի խորքը: Շուտով նրանց մեծ մասը վերադարձավ Թուրքիա և մասնակցեց բալկանյան պատերազմին:

Այսպիսով՝ լիբիացիները մնացին միայնակ իտալացիների դեմ–հանդիման: Բայց նրանք ցուցաբերեցին մեծ մարտունակություն և համառորեն դիմադրում էին իտալացիներին: Նրանց պայքարը ղեկավարեցին սանուսի ցեղային առաջնորդները, որոնց մեջ իր խիզախությամբ և ռազմական հմտությամբ աչքի էր ընկնում սանուսի շեյխ Օմար Մուխտարը: Սանուսի բեդվինները և գյուղացիներն իրենց սանուսի ղեկավարների առաջնորդությամբ Կիրենաիկայում և Տրիպոլիտանիայում համալրում էին իտալացի զավթիչների դեմ մարտնչողների շարքերը, կազմակերպում պարտիզանական ջոկատներ և աշխարհազորայիններ-ի խմբեր: Իտալացիները հայտնվեցին բավականին բարդ դրության մեջ և նրանց հարձակողական գործողությունները դանդաղեցին:

Թուրքիան, որն այդ նույն ժամանակ պարտություն կրեց բալկանյան պատերազմում, հարկադրված էր հաշտություն խնդրել Իտալիայից: Նա այլևս ի վիճակի չէր շարունակել պատերազմը Իտալիայի դեմ Հյուսիսային Աֆրիկայում:

Հաշտության պայմանագիրը Իտալիայի և Օսմանյան կայսրության միջև ստորագրվեց 1912 թ. հոկտեմբերի 18–ին: Այդ պայմանագրով Թուրքիան ճանաչեց Իտալիայի իրավունքները Կիրենաիկայի և Տրիպոլիտանիայի նկատմամբ, որոնց տրվում էր վարչական ինքնավարություն: Բայց դա ձևական էր, և ինքնավարության մասին կետը մնաց միայն թղթի վրա: Իտալիան, օգտվելով իր հաղթանակի պտուղներից,

1913 թ. հունվարին «միավորեց» Կիրենաիկան, Տրիպոլիտանիան ու Ֆեցցանը և այդ միացյալ տարածքն անվանեց Լիբիա:

Այսպես հաստատվեց իտալական տիրապետությունը Լիբիայի վրա, որը դարձավ իտալական առաջին նշանակալի գաղութը Աֆրիկայում:

Լիբիա անունը ծագում է հին եգիպտական «լեբու» բառից: Հին եգիպտացիները՝ ղպտիները, այդպես էին կոչում իրենցից արևմուտք գտնվող երկրի բնակիչներին՝ բերբերներին: «Լեբու» եզրի հիման վրա հին հույները լեբուների երկիրը կոչեցին Լիբիա: Իսկ իտալացիները 1913 թ. պարզապես վերականգնեցին և կյանքի կոչեցին այդ մոռացության մատնված անվանումը՝ մի տարբերությամբ միայն: Հին եգիպտացիները Լիբիա անունը տարածել էին ամբողջ Հյուսիսային Աֆրիկայի, իսկ երբեմն նաև ամբողջ աֆրիկյան մայրցամաքի վրա: Մինչդեռ իտալացիները Լիբիա անունը տեղայնացրին բացառապես Կիրենաիկան, Տրիպոլիտանիան և Ֆեցցանն ընդգրկող տարածքում, որը և կազմում է ժամանակակից Լիբիան:

Լիբիայում Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին ստեղծվեց բարդ իրավիճակ: Չկար համաձայնություն լիբիական տարբեր ուժերի՝ Կիրենաիկայում տիրապետող դիրքեր ունեցող սանուսիականների և Տրիպոլիտանիայի միջև: Նրանցից յուրաքանչյուրը պայքարում էր գերակայող դիրքերի համար Լիբիայում: Երկպառակություններ դրսևորվեցին նաև սանուսիականների օրդենում՝ ղեկավարության համար: Հաշտ չէին նաև տրիպոլիտանական ճամբարում:

Դրությունն ավելի էր բարդանում այն պատճառով, որ ակտիվորեն միջամտում էին թուրքերը, իտալացիները և անգլիացիները: Թուրքերը թեև թուլացել էին, բայց օգնում էին լիբիական այն ուժերին, որոնք պայքարում էին իտալացիների դեմ: Պատերազմի սկզբում Թուրքիան և նրա դաշնակից Գերմանիան սուզանավերով զգալի քանակությամբ զենք և զինամթերք մատակարարեցին հատկապես տրիպոլիտանացիներին, այն իտալացիների դեմ իրենց պայքարում օգտագործելու համար: Միաժամանակ թուրքական սուլթանը Տրիպոլիտանիայում նշանակեց նոր էմիր և զորքերի նոր հրամանատար: Այդ քայլերով Ստամբուլը ձգտում էր բարդություններ ստեղծել Իտալիայի համար, նրան ավելի խորը ներգրավել լիբիական գործերի մեջ և դրանով շեղել նրա ուշադրությունը եվրոպական թատերաբեմից, որտեղ նա Անտանտի երկրների հետ հանդես էր գալիս Գերմանիայի և Թուրքիայի դեմ: Իսկ

Իտալիան, ընդհակառակը, ցանկանում էր վերջնականապես թուրքերին դուրս մղել Լիբիայից:

2. Լիբիան իտալական տիրապետության ներքո (1918–1939 թթ.)

Սանուսիական օրդենի ներսում պայքարն ավարտվեց Մուհամմադ Իդրիս Սանուսիի հաղթանակով, որը ազ–Զավիատնայում կնքված պայմանագրով Անգլիայի և Իտալիայի կողմից ճանաչվեց որպես ներքին Կիրենաիկայի էմիր՝ նրանց հետ համագործակցելու դիմաց: Իտալիան պահպանում էր իր տիրապետությունը Կիրենաիկայում, որտեղից թուրքերը 1918 թ. լրիվ դուրս մղվեցին:

Այլ կերպ դասավորվեցին իրադարձությունները Տրիպոլիտանիայում: Կիրենաիկայի հետ համաձայնության գալու և համատեղ պայքարելու բազմաթիվ փորձերի ձախողումից հետո 1918 թ. նոյեմբերին Տրիպոլիտանիան հռչակվեց հանրապետություն, իսկ Գարյան քաղաքը հայտարարվեց նրա մայրաքաղաք: Ստեղծվեցին հանրապետական կառավարություն և Հանրապետության խորհուրդ, որը դարձավ Տրիպոլիտանիայի բարձրագույն մարմինը: Նրա ղեկավարները դարձան Ռ. Սուվեյիլին, Ս. Բարունին և Ա. Մուրիդը:

Տրիպոլիտանական հանրապետության հռչակումը թշնամաբար ընդունվեց Իտալիայի կողմից: Նա պատրաստվեց վճռական ռազմական գործողությունների նրա դեմ: Արդեն 1919 թ. Տրիպոլիում կենտրոնացվեցին 70 հազ. իտալական զինվոր և մեծաքանակ ռազմական տեխնիկա՝ պատրաստ զենքի ուժով վերացնելու հանրապետությունը: Սակայն Իտալիան չկարողացավ իրագործել իր այդ ծրագիրը ներքին մի շարք պատճառներով: Նախ՝ Իտալիան նոր էր դուրս եկել պատերազմից, հյուծված էր, իսկ պատերազմից, այդ թվում՝ Աֆրիկայում ծավալված ռազմական գործողություններից հոգնած իտալացիները, որոնք այդ պատերազմից որևէ լավ բան չէին սպասում, պահանջում էին խաղաղություն: Ծագել էին նաև մի շարք ներտնտեսական և ներքաղաքական խնդիրներ: Այդ հանգամանքների բերումով իտալական կառավարությունը գերադասեց ձեռնպահ մնալ ռազմական գործողություններից և ինչ–որ քաղաքական լուծում գտնել: Տրիպոլիտանացիները նույնպես հոգնած էին երկարատև արյունաքամ պատերազմական գործողություններից և պատրաստ էին բանակցությունների սեղանի շուրջը նստել իտալացիների հետ: 1919 թ. նրանց միջև կնքվեց զինադադարի և

հաշտության համաձայնագիր: Տրիպոլիտանիայի Հանրապետությունը պահպանվեց, սակայն պահպանվեցին նաև Իտալիայի իրավասությունները նրա նկատմամբ: Փաստորեն, երկու կողմերն էլ այդ պայմանագրով փորձում էին ժամանակ շահել և պատրաստվել նոր հակամարտության, որն անխուսափելի էր թվում երկու կողմերի համար:

Իտալիան դիմեց մի խորամանկ քայլի: Նա 1920 թ. Հռոմ հրավիրեց տրիպոլիտանական պաշտոնական պատվիրակությանը՝ Տրիպոլիտանիայի «վարչական անկախության» հարցերը քննարկելու համար: Պատվիրակությունը Հռոմից վերադարձավ ծեռնունայն: Իտալացիները միևնույն ժամանակ ամեն ինչ անում էին պառակտում մտցնելու Տրիպոլիտանիայի ղեկավարության շարքերում, ընդհարումներ հրահրում տարբեր ռազմական խմբավորումների ու ցեղերի միջև: Նման մի ընդհարման ժամանակ 1921 թ. զոհվեց Ռամադան Սուվեյհլին, որը դարձել էր Տրիպոլիտանիայի Հանրապետության ամենահեղինակավոր դեմքերից մեկը:

Նրա սպանությունը նոր իրադրություն ստեղծեց Տրիպոլիտանիայի Հանրապետությունում: Նրա ղեկավարության առջև կանգնեց հետագա քաղաքական քայլերի և հանրապետության ճակատագրի հարցը: Այդ հարցի լուծմանը նպաստեց Կիրենաիկայի էմիր Իդրիս Սանուսին, որը հայտնեց իր պատրաստակամության մասին՝ համաձայնության գալ Տրիպոլիտանիայի հետ: Վերջինիս ղեկավարությունը, որը Ռ. Սուվեյհլիի սպանվելուց հետո գլխավորում էր Ա. Մուրիդը, դրականորեն արձագանքեց Իդրիսի առաջարկությանը: 1921 թ. Սիրտում տեղի ունեցավ տրիպոլիտանական ղեկավարների հանդիպումը Իդրիս Սանուսիի հետ: Կողմերն ընդունեցին նրա առաջարկությունը՝ միավորվել և միասնական ուժերով պաշտպանել Լիբիայի շահերը: Տրիպոլիտանական ղեկավարությունը համաձայնվեց միավորել Կիրենաիկան և Տրիպոլիտանիան և նրա էմիր ճանաչել Իդրիս Սանուսիին: Վերջինս 1922 թ. հոկտեմբերին էմիրի կարգավիճակով գլխավորեց Կիրենաիկան և Տրիպոլիտանիան:

Սակայն իրադրությունը շուտով կտրուկ փոխվեց, որը կապված էր 1922 թ. Իտալիայում ֆաշիզմի իշխանության գլուխ գալու հետ: Առաջին ֆաշիստական կազմակերպությունները Իտալիայում հայտնվել էին դեռևս 1919 թ., որոնք այնուհետև այնքան ուժեղացան, որ երեք տարի անց՝ 1922 թ., գրավեցին իշխանությունը: Իտալիան դարձավ առաջին ֆաշիստական պետությունը, որը գլխավորեց ֆաշիստների առաջնորդ Բենիտո Մուսոլինին, որը կրում էր դուչե տիտղոսը: Իտալիայում հաստատվեց ամբողջատիրական համակարգ, վերացվեցին դեմոկրատա-

կան ազատությունները, սկսվեցին հալածանքները առաջադիմական ուժերի նկատմամբ, լայն ծավալ ստացան զանգվածային ձերբակալությունները և այլն:

Ֆաշիզմի իշխանության գլուխ գալն իր ազդեցությունն ունեցավ նաև Իտալիայի գաղութային քաղաքականության վրա: Այն դարձավ ավելի ագրեսիվ ու դաժան: Իտալիայի ֆաշիստական իշխանությունների այդ նոր քաղաքականությունն իր արտահայտությունը գտավ նաև Լիբիայում, որը շարունակում էր մնալ իտալական գաղութային կայսրության ստեղծման գլխավոր խաղաքարտը:

Իտալիայի ֆաշիստական կառավարությունը, խախտելով նախորդ կառավարությունների պայմանագրային պարտավորությունները և լիբիացիներին տրված խոստումները, անցավ հարձակողական գործողությունների՝ նպատակ ունենալով վերացնել այն սահմանափակ ազատությունները, որ տրվել էին Կիրենաիկային ու Տրիպոլիտանիային: Լիբիայում նորանշանակ իտալական նահանգապետ կոմս Վոլպին, որն այդ պաշտոնը զբաղեցրեց մինչև 1925 թ., կարողացավ գրավել Տրիպոլիտանիան, զինաթափ անել բնակչությանը և հաղթական հեռագրեր ուղարկել Հռոմ այն մասին, որ Տրիպոլիտանիան «խաղաղեցված է»: Իտալական 30–հազարանոց զորաբանակը, որը նետվել էր Լիբիա, գրավեց Տրիպոլիտանիայի մայրաքաղաք Գարյանը, ինչպես նաև կարևոր նշանակություն ունեցող Եֆրեն և այլ տրիպոլիտանական քաղաքները: Կիրենաիկան չէր շտապում օգնության հասնել տրիպոլիտանական մարտիկներին, որոնք զգում էին զենքի և զինամթերքի մեծ պակաս և հայտնվել էին հուսահատ վիճակում: 1923–1924 թթ. հայրենասիրական ուժերը կրեցին մի շարք պարտություններ և իտալական զորքերը գրավեցին ամբողջ Տրիպոլիտանիան, որը նշանակում էր Տրիպոլիտանական Հանրապետության վախճանը:

Դրությունը տագնապալի դարձավ նաև Կիրենաիկայում: Այստեղ բավականին լարված էր քաղաքական իրադրությունը, որը մեծապես կապված էր իտալական ագրեսիայի նկատմամբ համապատասխան դիրքորոշում գրավելու հետ: Էմիր Իդրիսի շրջապատում կային ազդեցիկ ուժեր, որոնք գտնում էին, որ չպետք է մասնակցել հակաիտալական պայքարին, որը և դարձավ տրիպոլիտանացիներին օգնություն ցույց չտալու գլխավոր պատճառը: Սակայն հարցը միայն դա չէր: Բավարարելով այդ ուժերի պահանջը՝ էմիր Իդրիսը, որպեսզի չմասնակցի հակաիտալական պայքարին, «վատառողջ» լինելու պատրվակով հե-

ռացավ Լիբիայից և հաստատվեց Եգիպտոսում: Նրա բացակայության ժամանակ Կիրենաիկան ղեկավարում էր շեյխերի խորհուրդը՝ շեյխ Մ. Գադամսի գլխավորությամբ:

Կիրենաիկայում դրությունը բարդանում էր նաև նրանով, որ այստեղ ստեղծվել էր յուրատեսակ իրադրություն: Կիրենաիկայի ծովափնյա քաղաքները գտնվում էին իտալացիների վերահսկողության տակ, և նրա նստակյաց բնակիչները, որոնք տնտեսապես կապված էին իտալացիների հետ, դեմ էին Իտալիայի հետ պատերազմին և պահանջում էին խաղաղության պահպանումը, որից կախված էր նրանց տնտեսական բարեկեցությունը:

Իսկ Կիրենաիկայի ներքին շրջանների, որոնք գտնվում էին սանուսիների և նրանց ռազմական ջոկատների վերահսկողության տակ, տեղական բնակչությունը, գլխավորապես քոչվոր բեդվինները, կողմնակից էին զինված պայքարի՝ իտալական տիրապետությունը Կիրենաիկայում վերացնելու համար:

1923 թ. մարտին իտալական զորքերը ռազմական գործողություններ սկսեցին Կիրենաիկայում: Լավ զինված իտալական կանոնավոր զորքերի դեմ կանգնած էին Կիրենաիկայի աշխարհազորային մարտիկները, որոնց մեջ հատկապես աչքի էին ընկնում Օմար Մուխտարի զորաջոկատները: Իտալական զորքերը տարան մի շարք հաղթանակներ: 1925 թ. նրանք գրավեցին սանուսիների կարևոր հենակետ Ջաղբուբը, իսկ 1927 թ.՝ Ջելան, Օյիլան և Ջալոն: Լիբիական ընդդիմադիր ջոկատները, այդ թվում նաև Օմար Մուխտարը, հարկադրված էին հեռանալ և ամրանալ Ջեբել Ախդարի լեռներում:

1928 թ. Լիբիայում իտալական գլխավոր նահանգապետ նշանակվեց մարշալ Բադոլիոն, որն ավարտին հասցրեց Կիրենաիկան ամբողջապես հնազանդեցնելու և ամբողջ Լիբիան օկուպացնելու գործը: Դրանից հետո 1929 թ. մարշալ Բադոլիոյի զորքերը գրավեցին Միզդան Ֆեցցանում և այդ նույն թվականին ավարտեցին Լիբիայի երրորդ երկրամասի՝ Ֆեցցանի գրավումը:

Ավարտելով Լիբիայի հիմնական մասերի գրավումը՝ իտալացիները որոշեցին վերջ տալ նաև Օմար Մուխտարի դիմադրական շարժմանը: Այդ գործը 1930 թ. հանձնարարվեց Գրացիանիին, որը 1931 թ. լայնածավալ գործողություններ սկսեց Օմար Մուխտարի դեմ: Վերջինս, կտրված լինելով արտաքին աշխարհից և դրսից ոչ մի օգնություն չստանալով, հայտնվել էր հուսահատական դրության մեջ: Մարտերից մեկում

նա վիրավորվեց և գերեվարվեց իտալացիների կողմից: 60–ամյա այդ հերոսը՝ լիբիացիների ազատագրական պայքարի այդ խիզախ առաջնորդը, դատապարտվեց մահվան և 1931 թ. կախաղան հանվեց:

Այսպիսով՝ իտալական ֆաշիստներին հաջողվեց ճնշել լիբիացիների ազատագրական պայքարը և իրենց տիրապետությունը տարածել ամբողջ Լիբիայի՝ նրա երեք մասերի՝ Կիրենաիկայի, Տրիպոլիտանիայի և Ֆեցցանի վրա:

Լիբիայի ռազմական նվաճումը և նրա երեք մասերն իրեն ենթարկելը, հանդիսանում էր Լիբիայում Իտալիայի գաղութային քաղաքականության մի կողմը: Մյուս կարևոր կողմը Լիբիայի տնտեսական յուրացումը և համայն Լիբիայի «իտալականացման» խնդիրն էր: Եվ Իտալիան, հատկապես ֆաշիստների իշխանության գլուխ գալուց հետո, այդ ծրագիրն իրականացնում էր ամենայն հետևողականությամբ:

Իտալական ֆաշիստներն իրենց դուչեի գլխավորությամբ փայփայում էին Միջերկրական ծովը յուրատեսակ իտալական ծովի վերածելու ցնորամիտ գաղափարները: Այդ ծրագրի շրջանակներում Լիբիան գրավում էր բացառիկ տեղ, և նրան վերապահված էր ցատկահարթակի դեր: Իտալիայում Լիբիան համարում էին Իտալիայի «չորրորդ ափը»: Անցյալ դարի 20–ական թվականներից սկսվեց Լիբիայի կոլոնիզացիան: Մեծաքանակ իտալական գյուղացիներ, գլխավորապես Սիցիլիայից, ներգաղթեցին Լիբիա, որոնց տրամադրվեցին լավագույն և բարեբեր հողատարածքները: Բայց դրանք ազատ կամ «անտեր» հողատարածքներ չէին, այլ պատկանում էին լիբիացի գյուղացիներին, որոնցից բռնագրավում էին դրանք ու հանձնվում Իտալիայից եկած գյուղացիներին: Նրանց տրվում էին նաև այլ բնույթի զանազան արտոնություններ Լիբիան «իտալականացնելու» համար: Մոտ 10–15 տարի անց նրանց ձեռքում կենտրոնացվեց մոտ 500 հազ. հա մշակելի հողատարածքներ, իսկ իտալական կոլոնիստների թիվը հասավ մոտ 100 հազարի:

Լիբիայի «իտալականացման» ծրագրի իրականացումով Իտալիան հիմնականում երեք նպատակ էր հետապնդում: Առաջին՝ խրախուսելով իտալացի գյուղացիների արտագաղթը Լիբիա, նրանց տրամադրելով հսկայական հողատարածքներ և տալով արտոնություններ՝ իտալական իշխանությունները ձգտում էին իրենց համար ստեղծել հուսալի հենարան Լիբիայում: Երկրորդ՝ Իտալիայում շատ բարձր էր գործազրկությունը, այդ թվում և գյուղական շրջաններում, որտեղ կար նշանակալի աշխատուժի ավելցուկ: Նրանց ծրագրավորված արտագաղթը նպատակ

ուներ կրճատել գործազրկությունը Իտալիայում և դրանով լուծել նաև նրա առջև կանգնած սոցիալական որոշ խնդիրներ: Եվ եթե այս բոլորին ավելացնենք նաև այն հանգամանքը, որ ընդարձակ հողաբաժիններ ստանում էին ոչ միայն անհատ գյուղացիները, այլև Լիբիայում իտալական քաղաքացիական ու ռազմական իշխանությունները, ապա պարզ կդառնան տնտեսական այն վնասների չափերը, որ Իտալիան իր տիրապետության տարիներին հասցրեց Լիբիայի տնտեսությանը: Եվ երրորդ, իտալացի կոլոնիստներին տրվում էին արգավանդ հողեր, որոնք աչքի էին ընկնում իրենց բարձր բերքատվությամբ, որոնց զգալի մասը արտահանվում էր Իտալիա: Դրանով Իտալիան աշխատում էր մեղմացնել պարենային հարցում երկրում գոյություն ունեցող լարվածությունը:

Լիբիայի «իտալականացման» ծրագիրը և իտալական գաղութային և տնտեսական քաղաքականությունը արժանացել են խիստ բացասական գնահատականի մասնագիտական գրականության մեջ: Էն Զուսիֆը, որը Լիբիային նվիրված մի շարք աշխատությունների հեղինակ է, գրում է. «Իտալական ժամանակաշրջանը ավերիչ եղավ լիբիական ժողովրդի համար: 1911 թվականի (նկատի ունի իտալա–թուրքական պատերազմը և Լիբիայի գրավումը Իտալիայի կողմից — Ն. Հ.) և երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտի միջև ընկած ժանակահատվածում մոտ մեկ միլիոն կազմող տեղական բնակչության կեսը մնաց բռնի արտաքսման կամ ոչնչացման հետևանքով»: Իտալական քաղաքականությունը Լիբիայում նույն կերպ է բնութագրում նաև Վ. Լ. Լավրենտևը՝ նշելով, որ «Լիբիայում երկարատև ռազմական գործողությունների և իտալացիների վայրագությունների հետևանքով նրա տնտեսությունը լրիվ անկում ապրեց»: Պատահականություն չէր, որ անգլիական մի այնպիսի հեղինակավոր հրատարակության մեջ, որպիսին «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա» կոլեկտիվ աշխատությունն է, նշելով, որ իտալական կոլոնիստները Լիբիայում հիանալի էին մշակում այգիները և ցանքատարածությունները, իսկ իտալական իշխանությունները ստեղծեցին բարեկարգ ճանապարհների խիտ ցանց և այլն, ընդգծում են, որ «նրանց քաղաքակրթական քաղաքականությունն իր ծանրակշիռ մասով իրականացվում էր ի սեր իրենց շահերի»: Եվ դրանից հետո անմիջապես մատնանշում են, որ «լիբիացիների առաջադիմության հարցերը շատ ստորադաս տեղ էին գրավում»:

Տնտեսությունը իտալական գաղութարարների ավերիչ գործողությունների միակ բնագավառ չէր: Նրանք ոտնձգություններ կատարեցին

նաև մշակույթի, առաջին հերթին կրթության նկատմամբ՝ վիրավորելով լիբիացիների ազգային արժանապատվությունը: Հաղորդակցության և պաշտոնական հրահանգների ու գրությունների լեզուն համարվեց ոչ թե արաբերենը, այլ իտալերենը: Լիբիայում հիմնվեցին տարրական դպրոցներ, բայց լիբիացիները իրենց զավակներին չէին ուղարկում այդ դպրոցները՝ վախենալով, որ նրանք կկորցնեն իրենց իսլամական հավատը և ապրելածնը: Իսկ բարձրագույն կրթություն լիբիացիները նախընտրում էին ստանալ հարևան Եգիպտոսում:

Լիբիացի շատ հայրենասեր մտավորական, ազգային ու քաղաքական գործիչներ, խուսափելով իտալական ֆաշիստների հալածանքներից, բռնություններից ու ձերբակալություններից, հարկադրաբար լքում էին իրենց հայրենիքը և քաղաքական ապաստան գտնում արաբական երկրներում՝ Եգիպտոսում, Թունիսում, Ալժիրում, անգամ աֆրիկյան որոշ երկրներում, ինչպես՝ Չադը, Նիգերը և այլն, որոնք առանձնապես չէին փայլում դեմոկրատական ազատությունների հարցերում:

3. Լիբիան Երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում (1939–1945 թթ.)

Երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում, մանավանդ նրա սկզբնական փուլում, Լիբիան ակամայից վերածվեց կատաղի պատերազմական գործողությունների թատերաբեմի: Պատերազմը հարմար առիթ հանդիսացավ Իտալիայի համար՝ գործնական քայլերի դիմելու «Հյուսիսաֆրիկյան կայսրություն» ստեղծելու իր վաղեմի քաղաքական ծրագիրն իրականացնելու համար: Այդ կայսրության միջուկը լինելու էր Լիբիան, որտեղից Իտալիան պետք է ներխուժեր Եգիպտոս և հարևան այլ երկրներ և դրանց միացնելով նաև Եթովպիան՝ ստեղծեր **իր** «սեփական» լայնածավալ կայսրությունը:

Իտալիան, որը ստեղծել էր բավականին լավ զինված բանակ, հույս ուներ, հենվելով իր ռազմաքաղաքական դաշնակից հիտլերյան Գերմանիայի աջակցության ու օգնության վրա, պարտության մատնել Հյուսիսային Աֆրիկայում իր գլխավոր հակառակորդ Անգլիային: Եվ պատերազմի սկզբնական փուլում, մանավանդ Ֆրանսիայի կապիտուլյացիայից հետո, երբ Անգլիան մնացել էր միայնակ գերմանա–իտալական հզոր ռազմական մեքենայի դեմ, թվում էր, թե միջազգային բարե-

նպաստ ռազմաքաղաքական պայմաններ են ստեղծվել իտալական այդ ծրագրի կենսագործման համար:

1940 թ. իտալական զորքերը լիբիական տարածքից ներխուժեցին Եգիպտոս: Այդպես Լիբիան ներգրավվեց պատերազմի հորձանուտի մեջ, որը նրան մեծ տառապանքներ պատճառեց:

Ստացվեց այնպես, որ լիբիացիները պատերազմական գործողություններին մասնակցեցին երկու կողմից՝ թե՛ իտալական և թե՛ անգլիական: Իտալական ֆաշիստական բարձրագույն ղեկավարության կողմից ստեղծվեց հատուկ՝ այսպես կոչված Լիբիական կորպուս, որի հրամանատար նշանակվեց Լիբիայում իտալական գլխավոր նահանգապետը: Նա համալրված էր լիբիացիներից և իտալացիներից, ընդ որում՝ լիբիացիները կազմում էին այդ կորպուսի անձնակազմի երկու երրորդը:

Իսկ անգլիացիներն օգտագործեցին լիբիական էմիգրացիային, որոնք հաստատվել էին գլխավորապես Եգիպտոսում, որտեղ գտնվում էր նաև Կիրենաիկայի և Տրիպոլիտանիայի էմիր Իդրիս Սանուսին՝ իր Լիբիական լեգեոնով, որի շարքերում հաշվվում էր 14 հազ. մարդ: Երկրորդ համաշխարհային պատերազմը սկսվելուց հետո, 1939 թ. հոկտեմբերին լիբիական շեյխերը, քննարկելով Լիբիայի ապագայի հարցերը և պատերազմում նրա գրավելիք դիրքորոշումը, որոշում ընդունեցին պայքարել Իտալիայի տիրապետությունից Լիբիայի ազատագրման համար: Եվ նրանք այդ պայքարի ղեկավարությունը վստահեցին Իդրիս Սանուսիին: Սակայն նրան կից ստեղծվեց Խորհրդատվական խորհուրդ, որի մեջ մտան Կիրենաիկայի և Տրիպոլիտանիայի շեյխերի ներկայացուցիչները: Ստանալով նման լիազորություններ՝ Իդրիս Սանուսին 1940 թ. օգոստոսին համաձայնագիր ստորագրեց Անգլիայի հետ և նրա տրամադրության տակ դրեց իր 14–հազարանոց լեգեոնը, որը բաժանված էր հինգ գումարտակների: Փոխարենը, Անգլիան խոստացավ պատերազմի ավարտից հետո օգնել Իդրիսին նրա դիրքերը Լիբիայում ամրապնդելու համար:

Ինչպես նշվեց, Իտալիան 1940 թ. վերջերին ներխուժեց եգիպտական տարածք, և այդ պահից սկսած՝ Եգիպտոսում տեղակայված Իդրիս Սանուսիի Լիբիական կորպուսը մասնակցեց եգիպտա–լիբիական տարածքում ծավալված մարտական բոլոր գործողություններին: Իսկ հակառակ՝ իտալական կողմից նրանց դեմ պատերազմական գործողություններին իտալական զորքերի հետ միասին մասնակցում էին լիբիական զորքերը, որոնք բռնի զորակոչվել էին Իտալիայի կողմից ստեղծված Լիբիական կորպուս:

Անգլիացիները կարողացան դուրս մղել իտալական զորքերին Եգիպտոսից, և 1941 թ. ծմռանը ռազմական գործողությունները ծավալվեցին Լիբիայի տարածքում: Այստեղ կատաղի մարտեր տեղի ունեցան Բենգազիի մոտ, որտեղ առաջին անգամ միմյանց բախվեցին նաև լիբիացիների մարտական ուժերը, որոնք հանդես էին գալիս անգլիական և իտալական զորքերի շարքերում: Դա նրանց համար վերածվեց եղբայրասպան պատերազմի: Կիրենաիկայի մայրաքաղաք Բենգազիի համար ծավալված մարտերը թերևս ամենաթեժ և ծանր մարտերն էին, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ծավալվեցին Լիբիայի տարածքում: Քաղաքը մի քանի անգամ ձեռքից ձեռք անցավ: Նա անխնա ռմբակոծման ենթարկվեց անգլիական և իտալական ավիացիայի և հեռահար ծանր հրետանու կողմից: Քաղաքը վերածվել էր ավերակների կույտի: Վերջիվերջո, անգլիացիները գրավեցին այն: Ականատեսների վկայությամբ՝ քաղաքից շատ քիչ բան էր մնացել: Շատ մեծ էին մարդկային կորուստները, այդ թվում և լիբիացիների, որոնք երկու կողմից էլ տվեցին մարդկային վիթխարի զոհեր: 1941 թ. ծմեռվա վերջերին և գարնան սկզբներին բրիտանական զորքերն ամբողջությամբ գրավեցին Կիրենաիկան: Իտալիան հայտնվեց հուսահատ վիճակում. ակնհայտ դարձավ, որ նա չի կարող իր սեփական ուժերով ոչ միայն իրականացնել Հյուսիսային Աֆրիկայում իր կայսրությունը ստեղծելու ծրագրերը, այլև ապահովել իր ներկայությունը Լիբիայում և ընդհանրապես Աֆրիկայում: Եվ ինչքան էլ որ ստորացուցիչ լիներ դուչեի համար, այնուհանդերձ, նա օգնության խնդրանքով դիմեց Հիտլերին, որը խուճապային վիճակում հայտնված իր դաշնակցին փրկելու համար Լիբիա ուղարկեց իր ընտիր տանկային կորպուսներից մեկը՝ գեներալ Էրվին Ռոմելի հրամանատարությամբ: Գերմանա–իտալական զորքերին հաջողվեց անցնել հակահարձակման և հասնել որոշակի հաջողություններ: Նրանք կրկին ներխուժեցին Եգիպտոս, որտեղ, սակայն, Ալ–Ալամեյնի մոտ 1942 թ. հոկտեմբերին տեղի ունեցած ճակատամարտում, նրանք գլխովին ջախջախվեցին: Այդ մարտերում անգլիական զորքերի հետ կողք կողքի մարտնչում էին նաև լիբիացիները: Զարգացնելով իրենց հարձակումը՝ անգլիացիները 1942–1943 թթ. ընթացքում կրկին ազատագրեցին Կիրենաիկան, ապա նաև Տրիպոլիտանիան:

Իսկ ինչ վերաբերում է Լիբիայի երրորդ երկրամասին՝ Ֆեցցանին, ապա այն գրավվեց գեներալ Դը Գոլի կողմից ղեկավարվող և Անգլիայի դաշնակից «Մարտնչող Ֆրանսիայի» զորքերի կողմից: Լիբիայի որոշ

մերձծովյա շրջաններում ափ իջան նաև ամերիկյան զորքեր, որոնք օգնության էին եկել իրենց դաշնակից բրիտանական զորքերին:

Այսպիսով՝ 1943 թ. ամբողջ Լիբիան ազատագրվեց իտալական տիրապետությունից[23]:

4. Լիբիական անկախ պետության՝ Լիբիական Միացյալ Թագավորության կազմավորումը

Իտալիայի պարտությունը և նրա արտաքսումը աֆրիկյան մայրցամաքից ազատություն չբերեցին Լիբիային: Այն օկուպացվեց անգլիական և ֆրանսիական զորքերի կողմից: Անգլիան օկուպացրեց Կիրենաիկան ու Տրիպոլիտանիան, իսկ «Մարտնչող Ֆրանսիան»՝ Ֆեցցանը: Այս երեք երկրամասերում էլ հաստատվեց օկուպացիոն ռեժիմ:

Պատերազմը շատ ծանր հետևանքներ ունեցավ Լիբիայի համար: Վիթխարի մարդկային զոհեր, տասնյակ ավերված քաղաքներ և հարյուրավոր գյուղեր, քայքայված տնտեսություն և ժողովրդի թշվառ վիճակ. ահա թե ինչ ստացավ Լիբիան պատերազմից, որ, ինչպես նշել ենք, նրա պատերազմը չէր, և որի մեջ նա ներգրավվել էր ակամայից կամ բռնի կերպով: Բնակչության մեծ մասը տառապում էր թերասնումից, իսկ մի մասն էլ կանգնած էր սովի վտանգի առջև: ՄԱԿ–ի հատուկ ներկայացուցիչը, որը այցելել էր Լիբիա և ծանոթացել երկրում տիրող տնտեսական «իսկապես սարսափելի դրության» հետ, առաջարկել էր «կազմակերպել գոնե դպրոց հաճախող երեխաների սնունդը»: Բնակչության ամսական եկամուտը ըստ շնչի կազմում էր ընդամենը 2,5 ԱՄՆ դոլար, որն ամենացածր ցուցանիշներից մեկն էր աշխարհում: Լիբիայում չկար առողջապահության և սոցիալական ապահովագրության որևէ համակարգ:

Անգլիական և ֆրանսիական օկուպացիոն իշխանությունները չէին շտապում ավերված բնակավայրերը վերակառուցել, քայքայված տնտեսությունը վերականգնել և ժողովրդի դրությունը փոքրիշատե բարելավել: Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ նրանք վստահ չէին, թե երկար ժամանակ կմնան Լիբիայում և հստակ պատկերացում չունեին, թե պատերազմի ավարտից հետո Լիբիան՝ ինչպիսի քաղաքական կարգավիճակ կունենար: Այդուհանդերձ, նրանք աշխատում էին ամրապնդել իրենց դիրքերը Լիբիայում, անգամ փորձում էին իրենց համար սո-

23 Այս մասին տե՛ս նաև սույն հատորի Եգիպտոսին նվիրված գլխում:

ցիալական հենարան ստեղծել: Իտալիայի պարտությունից հետո շատ իտալացիներ փախան Լիբիայից, լքելով իրենց գույքն ու հողերը: Օկուպացիոն իշխանությունները այդ լքված հողերը բաժանեցին ոչ թե աղքատության դուռը հասած գյուղացիներին, այլ լիբիական ցեղային ավագանուն: Նրանք էքսպրոպրիացիայի ենթարկեցին իտալական բարձրագույն զինվորականության ունեցվածքը և հողատարածքները, սակայն դա պահեցին իրենց վերահսկողության տակ:

Անգլիական և ֆրանսիական օկուպացիոն իշխանությունները վարում էին Լիբիայի երկրամասերը միմյանցից տարանջատելու և նրանց միջև տնտեսական կապերը խզելու կամ թուլացնելու մի յուրօրինակ քաղաքականություն, որն իր արտացոլումը գտավ յուրաքանչյուր շրջանում իր սեփական դրամը մտցնելու մեջ: Տրիպոլիտանիայում շրջանառության մեջ դրվեց իտալական լիրան, Կիրենաիկայում՝ անգլիական ֆունտ ստեռլինգը, իսկ Ֆեցցանում՝ ալժիրյան ֆրանկը: Բացի դրանից, այդ երեք շրջաններից յուրաքանչյուրն ուներ իր վարչական բաժանումը: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Լիբիայի երեք երկրամասերի հարցերով՝ քաղաքական, տնտեսական, ֆինանսական և այլն, զբաղվում էին Անգլիայի և Ֆրանսիայի գաղութային նախարարությունները, որից դժվար չէր եզրակացնել, որ Լիբիայի տարածքները Լոնդոնում և Փարիզում դիտվում էին որպես գաղութային միավորներ:

Օկուպացիոն իշխանություններն ըստ իրենց հայեցողության էին տնօրինում Լիբիայի տարածքները: Ֆրանսիան Լիբիայից անջատեց Գատի օազիսը և միավորեց Հարավային Ալժիրին, իսկ Գադամեսի օազիսը՝ Հարավային Թունիսին: Այնուհետև նա ամբողջ Ֆեցցանի վրա տարածեց Ալժիրում գործող օրենքները, որոնք ֆրանսիական գաղութարարներն էին մտցրել:

Անգլիան և Ֆրանսիան որոշ քայլեր ձեռնարկեցին նաև իրենց ռազմական ներկայությունը Լիբիայում ամրապնդելու համար: Բրիտանական ռազմածովային բազաներ ստեղծվեցին Տրիպոլիում, Բենգազիում, Տոբրուկում, Զուարայում, իսկ Ֆրանսիան Ֆեցցանում կառուցեց թռիչքադաշտեր: Նրանցից հետ չմնաց ԱՄՆ–ը, որը հիմնեց իր ռազմական բազան Ուիլուս Ֆիլդում՝ Տրիպոլիտանիայում:

Անգլիական և ֆրանսիական օկուպացիոն իշխանությունների տնտեսական, ֆինանսական, վարչական և ռազմական քաղաքականությունը լիբիացիների խորը դժգոհությունն առաջացրեց: 1945 թ. տեղի ունեցան առաջին խոշոր հակաանգլիական ցույցերը Տրիպոլիում:

Անհնազանդություն չհանդուրժող անգլիական օկուպացիոն վարչակարգը դաժանորեն ճնշեց լիբիացիների այդ ելույթը և պատժեց նրա կազմակերպիչներին ու ոգեշնչողներին: Սակայն դա չէր կարող խեղդել լիբիացիների ազատատենչ ձգտումները:

Հետպատերազմյան շրջանում նկատվեց զգալի փոփոխություն լիբիացիների հոգեբանության, տրամադրությունների և մտածելակերպի մեջ: Նրանց մեջ ուժեղանում էր ազգային–ազատագրական պայքարի և անկախ պետություն ունենալու գաղափարը: Աշխուժացավ քաղաքական կյանքը, սկսեցին լույս տեսնել թերթեր, ձևավորվել քաղաքական կազմակերպություններ, որոնց գործունեությունը նպաստում էր լիբիացիների հակագաղութային գործունեության ծավալմանը:

Սակայն սկզբնական շրջանում լիբիացիների մոտ չկար միասնական տեսակետ երկրի ապագայի վերաբերյալ: Լիբիացիների մեծամասնությունը կողմնակից էր Լիբիայի անկախությանը և միասնությանը, սակայն կային ուժեր, գլխավորապես Տրիպոլիտանիայում, որոնք հանդես էին գալիս Տրիպոլիտանիայի ինքնավարության պահանջով, իսկ մեկ այլ տեսակետի կողմնակիցներն առաջադրում էին Եգիպտոսի և Լիբիայի դաշնության պահանջը, որի ձայնափողն էր 1946 թ. ստեղծված Եգիպտոսի և Լիբիայի դաշինքի կուսակցությունը: Քաղաքական ասպարեզում հայտնվեցին ուժեր, որոնք պահանջում էին Լիբիան դնել Արաբական պետությունների լիգայի խնամակալության տակ: Այդ հանգամանքը, բնականաբար, ջլատում էր Լիբիայի հակագաղութային, հակաիմպերիալիստական ուժերը՝ հնարավորություն տալով Անգլիային ու Ֆրանսիային մանևրելու և իրենց ձեռնտու քաղաքական լուծումներ պարտադրելու լիբիացիներին:

Հարկ է նկատի առնել ևս մեկ կարևոր հանգամանք: Ասպարեզում զանազան անվանակոչումների տակ հայտնված կուսակցությունները՝ «Ազատ ազգային բլոկ», Ազգային կուսակցություն, «Միասնության ազգային բլոկ», Լեյբորիստական կուսակցություն, Անկախության կուսակցություն և այլն, թույլ կազմակերպություններ էին, չունեին կազմակերպական կուռ կառուցվածք և առանձնապես աչքի չէին ընկնում կարգապահությամբ: Կուսակցություններին զուգահեռ, ասպարեզում հայտնվեցին այսպես կոչված ազգային կամ քաղաքական ակումբները, ինչպես «Օմար ալ–Մուխտար» ակումբը Կիրենաիկայում կամ Քաղաքական ակումբը Տիրպոլիտանիայում: Նրանք հրապուրիչ էին հատկապես երիտասարդության համար, որոնք ջանասիրաբար ձեռնամուխ եղան իրենց

տպագիր օրգանները հրատարակելու և բնակչության տարբեր խավերի շրջաններում տարածելու գործին, ինչպես «Թարաբլուս ալ–Ղարբ» կամ «Ալ–Վաքան» թերթերը: Հակագաղութային պայքարի ընթացքում այդ կուսակցություններից շատերն ասպարեզից չքացան, տեղի ունեցավ նրանց միավորում, իսկ ակումբներն էլ կա՛մ լուծարվեցին կա՛մ մտան որևէ այլ կուսակցության մեջ, ինչպես «Օմար ալ–Մուխտար» ակումբը, որը միավորվեց Տրիպոլիտանիայի ազգային կոնգրեսի հետ:

Տրիպոլիտանիայի ազգային կոնգրես կուսակցությունը ձևավորվեց 1948 թ. կայացած նրա հիմնադիր համագումարում: Նա մի շարք այլ կուսակցությունների հետ, ի մասնավորին «Ազատ ազգային բլոկի», առաջադրեց սկզբունքային բնույթի հետևյալ հիմնարար պահանջները. Լիբիայի միասնությունը, լիակատար անկախությունը և անդամակցությունը Արաբական պետությունների լիգային: Նա հստակորեն արտահայտվեց ապագա անկախ Լիբիայի պետական սահմանների վերաբերյալ՝ նշելով, որ այն ընդգրկելու է Թունիսից մինչև Եգիպտոս ընկած տարածքները: Իսկ խոսելով Լիբիայի միասնության և անկախության մասին՝ նրա կողմից ընդունված որոշման մեջ շեշտվում էր, որ այդ միասնությունը և անկախությունը պետք է իրագործվեն Իդրիս աս–Սանուսիի գլխավորությամբ:

Այս շրջանում Իդրիսի թեկնածությունը՝ որպես ապագա Լիբիայի ղեկավար, արդեն համընդհանուր ճանաչում էր ստացել և լրջորեն չէր վիճարկվում որևէ ուժի կամ անձի կողմից:

Հետպատերազմյան շրջանում Լիբիայի ճակատագրով, նրա ապագա քաղաքական կարգավիճակի հարցով պաշտոնապես զբաղվում էր ԱՄՆ–ի, Անգլիայի, Խորհրդային Միության և Ֆրանսիայի արտաքին գործերի խորհուրդը, որը ստեղծվել էր 1945 թ.՝ պատերազմի ավարտից հետո: Նրա գլխավոր խնդիրներից մեկը Երկրորդ համաշխարհային պատերազմում պարտություն կրած ֆաշիստական Գերմանիայի դաշնակիցների, այդ թվում՝ Իտալիայի հետ հաշտության պայմանագրերի նախապատրաստումը և ստորագրումն էր:

Իտալիայի հետ հաշտության պայմանագիրը ստորագրվեց 1947 թ. փետրվարի 10–ին Փարիզում: Պայմանագրի տակ իրենց ստորագրությունները դրեցին 20 պետություններ, այդ թվում՝ ԱՄՆ–ը, Անգլիան, ԽՍՀՄ–ը և Ֆրանսիան: Սպասվում էր, որ հաշտության պայմանագիրը կանդրադառնա նաև Աֆրիկայում իտալական նախկին գաղութների՝ Լիբիայի, Էրիտրեայի և Իտալական Սոմալիի հարցին: Սակայն այդ հարցը

տեղ չգտավ հաշտության պայմանագրում: Բայց այդ, պայմանագրի 23–րդ հոդվածում կար հատուկ անդրադարձ դրան, առ այն, որ «Իտալիան հրաժարվում է Աֆրիկայում իտալական տերիտորիալ տիրույթների նկատմամբ իր բոլոր իրավունքներից և իրավական հիմքերից»: Դա առաջին փաստաթուղթն էր, որտեղ մի կողմից պարտություն կրած Իտալիան, իսկ մյուս կողմից՝ հաղթանակած 20 պետությունները իրավական առումով արձանագրում էին Իտալիայի գաղութային տիրապետության վերացումը Լիբիայի, Էրիտրեայի և Իտալական Սոմալիի նկատմամբ:

Միաժամանակ ԱՄՆ–ը, Անգլիան, ԽՍՀՄ–ը և Ֆրանսիան Իտալիայի հետ հաշտության պայմանագրի ստորագրման հետ միասին հրապարակեցին հատուկ հայտարարություն Աֆրիկայում Իտալիայի տարածքային տիրույթների վերաբերյալ, որով նրանք իրենց վրա պարտավորություն վերցրեցին որոշել նրանց ճակատագիրը: Այդտեղ կար մի կարևոր պահ ևս: Նրանք պարտավորվեցին այդ հարցը, այսինքն՝ Լիբիայի և իտալական մյուս գաղութների ճակատագիրը, լուծել հաշտության պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ մինչև 1948 թ. նոյեմբերի 15–ը: Իսկ եթե դա չհաջողվեր իրականացնել նշված ժամկետում, ապա հարցի քննարկումը, ինչպես նշված էր հաշտության պայմանագրի XI հավելվածում, պետք է փոխանցվեր ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեային:

Մինչև նշված ժամկետը՝ 1948 թ. նոյեմբերի 15–ը, չհաջողվեց լուծել Լիբիայի քաղաքական կարգավիճակի հարցը, որի գլխավոր պատճառը Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքականությունն էր, որոնք ամեն կերպ ջանում էին ձգձգել այդ կարևոր հարցի լուծումը: Իրականում այդ երկու դասական գաղութային երկրները կցանկանային Լիբիան պահել իրենց տիրապետության ներքո՝ Կիրենաիկան և Տրիպոլիտանիան՝ Անգլիայի, իսկ Ֆեցցանը՝ Ֆրանսիայի գերիշխանության տակ: Բայց, ինչպես մտածում էին Լոնդոնում և Փարիզում, եթե իրենք չեն մնալու Լիբիայում, վերացվելու է իրենց հաստատած օկուպացիոն ռեժիմը, և իրենք հեռանալու են Լիբիայից, ապա պետք է Լիբիայում ստեղծել այնպիսի իրադրություն և հաստատել կառավարման այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտար պահպանել իրենց դիրքերը, կախման մեջ գցել Լիբիան իրենցից կամ ինչպես ընդունված է ասել, «հեռանալով՝ մնալ»:

Հարցի լուծման ձգձգմանը նպաստեց նաև անհամաձայնությունը լիբիական տարբեր ուժերի միջև, մասնավորապես Կիրենաիկայի և Տրիպոլիտանիայի միջև: Իր դերը խաղաց նաև Իդրիս Սանուսիի տատանվո-

դական դիրքորոշումը, որը պայմանավորված էր այն հանգամանքով, որ նա վայելում էր Անգլիայի հովանավորությունը, զանազան թելերով կապված էր Լիբիայում անգլիական իշխանությունների հետ և ազատ չէր իր գործողություններում:

Անգլիան իր քաղաքականության մեջ այնքան հեռուն գնան, որ անգամ խախտեց 1947 թ. Փարիզում ձեռք բերված համաձայնությունները, որոնք ամրագրված էին Իտալիայի հետ կնքված հաշտության պայմանագրում, որի տակ դրված էր նաև իր ստորագրությունը: Անգլիան, ինչքան էլ որ դա կարող է տարօրինակ թվալ, անդրկուլիսյան բանակցությունների մեջ մտավ Իտալիայի հետ Լիբիայի ապագայի և տարածքային բաժանման հարցի շուրջը: Այդ բանակցություններն ավարտվեցին «հաջողությամբ», և 1949 թ. մայիսի 7–ին Անգլիայի և Իտալիայի միջև ստորագրվեց համապատասխան համաձայնագիր: Անգլիայի կողմից համաձայնագիրը ստորագրեց արտաքին գործերի նախարար Էռնստ Բևինը, իսկ Իտալիայի կողմից՝ իտալական արտաքին գործերի նախարար Կարլո Սֆորցան: Նրանց անունով էլ այդ համաձայնագիրը դիվանագիտության պատմության մեջ մտել է որպես «Բևին–Սֆորցայի պլան»: Ըստ այդմ՝ նախատեսվում էր Կիրենաիկան տասը տարի ժամանակով հանձնել Անգլիային, Տրիպոլիտանիան՝ Իտալիային, իսկ Ֆեզցանը՝ Ֆրանսիային: ԱՄՆ–ը, որ տեղյակ էր անգլո–իտալական բանակցությունների մասին, իրավունք էր ստանում Լիբիայում ունենալ իր ռազմաօդային բազան:

Անգլո–իտալական այդ գործարքի հետևանքով Իտալիան կրկին հնարավորություն էր ստանում վերադառնալ Հյուսիսային Աֆրիկա, որպես գաղութային պետություն, և իր տիրապետությունը վերահաստատել Տրիպոլիտանիայի վրա: Բացի դրանից, օրակարգից հանվում էին Լիբիայի միասնության և անկախության վերաբերյալ ամենակենսական հարցերը: «Բևին–Սֆորցայի պլանը» համաձայնագիր էր Լիբիայի նոր բաժանման վերաբերյալ:

Լիբիայի բոլոր ազգային և հայրենասիրական ուժերը, ժողովրդական ամենալայն զանգվածները խորը վրդովմունքով ընդունեցին այդ համաձայնագիրը: Նրանց վրդովմունքը վերածվեց զայրույթի և ապա հակաիմպերիալիստական, հակագաղութային ցույցերի: Երկրում հայտարարվեց համընդհանուր գործադուլ: Միտինգներ տեղի ունեցան բրիտանական և ֆրանսիական ներկայացուցչությունների առջև: Ցուցարարները այրում էին իտալական դրոշները, ամերիկյան հյուպատո-

սարանի շենքից իջեցրին ամերիկյան դրոշը, քարկոծեցին բրիտանական իշխանություններին պատկանող շենքերը: Դրությունն այն աստիճանի էր սրվել, որ անգլիական իշխանությունները Տրիպոլիում ցուցարարների դեմ նետեցին զինված ջոկատներ, քաղաքի առանձին փողոցներում անգամ հայտնվեցին տանկեր: Ցուցարարների և այդ ուժերի միջև տեղի ունեցան բախումներ, որի ժամանակ զոհվեցին և վիրավորվեցին բազմաթիվ լիբիացի հայրենասերներ: Ցուցարարներին օգնության էին գալիս բեդվինները, որոնք, միանալով քաղաքաբնակ լիբիացիներին, խստորեն դատապարտում էին Անգլիայի երկդիմի քաղաքականությունը:

Լիբիացիների հակաիմպերիալիստական ելույթները պաշտպանություն գտան Տրիպոլիտանիայի մուսուլմանական հոգևոր առաջնորդի՝ մուֆթիի կողմից:

Տրիպոլիում հավաքվեցին ցեղերի առաջնորդները Լիբիայի բոլոր մասերից: Նրանք գումարեցին համաժողով, որի ժամանակ Լիբիայի ամենահեղինակավոր ցեղապետները միաձայն որոշում ընդունեցին՝ սկսել զինված դիմադրություն ամբողջ Լիբիայի տարածքում, եթե արևմտյան տերությունները փորձեն ծեռնամուխ լինել «Բևին–Սֆորցա» համաձայնագրի կենսագործմանը:

Այսպիսի մթնոլորտում ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեան 1949 թ. սկսեց Լիբիայի հարցի քննարկումը: Անգլիան հույս ուներ իր արևմտյան դաշնակիցների օգնությամբ հասնել «Բևին–Սֆորցա» համաձայնագրի պայմանների ընդունմանը: Բայց դա չհաջողվեց: Արաբական և աֆրիկյան երկրները, Խորհրդային Միությունը և սոցիալիստական ճամբարի պետությունները խստորեն հանդես եկան դրա դեմ: ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեան 1949 թ. մայիսի 18–ին մերժեց Լիբիայի բաժանման վերաբերյալ անգլո–իտալական պլանը:

ՄԱԿ–ի այդ որոշումը չտեսնված խանդավառությամբ ընդունվեց լիբիացիների կողմից: Երկրի տարբեր վայրերում ցույցեր էին տեղի ունենում ի պաշտպանություն այդ որոշման: Տրիպոլիում տեղի ունեցած ցույցի ժամանակ, որին մասնակցում էր ավելի քան 40 հազ. մարդ, ցուցարարները տանում էին այն բոլոր երկրների պետական դրոշները, որոնք 1949 թ. մայիսի 18–ին ՄԱԿ–ում դեմ էին քվեարկել անգլո–իտալական գործարքին: Նրանք մեկ անգամ ևս հավաստեցին իրենց վճռականությունը՝ պահպանել Լիբիայի տարածքային ամբողջականությունը և հասնել երկրի անկախությանը:

ՄԱԿ–ը գտնվեց իր բարձրության վրա, և 1949 թ. նոյեմբերին Գլխավոր ասամբլեան ձայների մեծամասնությամբ որոշում ընդունեց Լիբիային տրամադրել անկախություն ոչ ուշ, քան 1952 թ. հունվարի 1–ը: Լիբիան պետք է լիներ միասնական՝ ունիտար պետություն:

ՄԱԿ–ի հատուկ հանձնակատարի՝ կոմիսարի վրա դրվեց պարտականություն՝ հետևել Լիբիայի անկախության գործընթացին և կատարել համապատասխան նախապատրաստական աշխատանքներ: Ստեղծվեց նաև խորհրդատվական խորհուրդ՝ կազմված ԱՄՆ–ի, Անգլիայի, Եգիպտոսի, Իտալիայի, Պակիստանի, Ֆրանսիայի և Լիբիայի երեք շրջանների՝ Կիրենաիկայի, Տրիպոլիտանիայի և Ֆեցցանի ներկայացուցիչներից: Խորհրդատվական խորհուրդը ՄԱԿ–ի կոմիսարի հետ միասին պետք է նախապատրաստեր Լիբիայի սահմանադրությունը և Սահմանադիր ժողովի գումարումը: Հետագայում՝ 1950 թ. հուլիսին, ստեղծվեց 21–ի կոմիտեն, որի մեջ մտան 7–ական ներկայացուցիչներ Լիբիայի երեք մասերից, որն իր ձեռքը վերցրեց սահմանադրության տեքստի պատրաստման և Ազգային ժողովի գումարման նախապատրաստման հարցերը: Կոմիտեի աշխատանքները գլխավորում էր Լիբիայի մուֆտի Մուհամմադ Ալամը:

Կոմիտեի աշխատանքներն ընթանում էին արագ, որի վկայությունն է հանդիսանում այն փաստը, որ 1950 թ. հոկտեմբերին արդեն ձևավորվեց Ազգային ժողովը: Այն կազմված էր 60 դեպուտատներից և գործեց որպես Սահմանադիր ժողով, որի իրավասությունների մեջ էր մտնում սահմանադրության ընդունումը: Մեկ ամիս անց կայացավ նրա առաջին նիստը: Հանգամանալի քննարկումից հետո 1950 թ. դեկտեմբերին Սահմանադիր ժողովն ընդունեց երկրի հիմնական օրենքը, որն այնուհետև դարձավ անկախ Լիբիայի առաջին Սահմանադրությունը:

Ընդունվեց որոշում պետության ղեկավարի վերաբերյալ: Իդրիս Սանուսին հռչակվեց Լիբիայի թագավոր, որը կրելու էր Իդրիս I տիտղոսը:

1950 թ. մարտին ձևավորվեց Լիբիայի ժամանակավոր կառավարությունը:

1951 թ. դեկտեմբերի 24–ին, ՄԱԿ–ի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան, Իդրիս I Սանուսին պաշտոնապես հռչակեց Լիբիայի անկախությունը, որը կոչվեց Լիբիայի Միացյալ Թագավորություն:

Ավարտվեց իտալական գաղութատիրության վերացման փուլը, և Լիբիան ոտք դրեց իր անկախության շրջանը:

II. ԼԻԲԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (1952–1969 թթ.)

1. Պետական համակարգը և նրա էվոլյուցիան

Լիբիայի առաջին սահմանադրությունը հաստատեց Լիբիայի պետական կառուցվածքը: Նրանում արձանագրված էր, որ «Լիբիան դեմոկրատական, ֆեդերատիվ, անկախ և ինքնիշխան պետություն է, որի կառավարման ձևը սահմանադրական միապետությունն է»: Լիբիայում որպես կառավարող դինաստիա հաստատվեց Սանուսիների դինաստիան՝ ժառանգականության սկզբունքով:

Լիբիական ֆեդերացիայի սուբյեկտներն էին Կիրենաիկան, Տրիպոլիտանիան և Ֆեցցանը:

Օրենսդիր մարմինը բաղկացած էր երկու պալատներից՝ Դեպուտատների պալատից և Սենատից: Դեպուտատների պալատը համարվում էր ստորին պալատը, որի առջև պատասխանատու էր կառավարությունը՝ Նախարարների խորհուրդը, որը նշանակվում էր թագավորի կողմից:

Սենատը, որը համարվում էր բարձրագույն պալատը, կազմված էր 24 սենատորներից, որտեղ հավասար չափով ներկայացված էին Կիրենաիկան, Տրիպոլիտանիան և Ֆեցցանը՝ որպես ֆեդարացիայի սուբյեկտներ: Նրանցից յուրաքանչյուրը սենատում ներկայացված էր 8 սենատորով: Սակայն սենատի 24 անդամների կեսին նշանակում էր թագավորը:

Թագավորն օժտված էր օրենսդրական նախաձեռնությամբ և վետոյի իրավունքով, որը նա կարող էր կիրառել Դեպուտատների պալատի ընդունած օրենքների նկատմամբ: Նա իրավունք ուներ նաև ցրել պառլամենտը: Ֆեդերացիայի սուբյեկտներն իրենց հերթին ունեին իրենց տեղական օրենսդրական և վարչական մարմինները, որոնք ենթակա էին ֆեդերալ իշխանություններին:

Անկախության հռչակումից հետո 1952 թ. փետրվարի 19–ին կայացան առաջին պառլամենտական ընտրությունները Լիբիայում: Դեպուտատների պալատի 75 տեղերից 55–ը հատկացվել էր Տրիպոլիտանիային, որը բնակչության թվով ամենամեծն էր Լիբիայի երեք երկրամասերի մեջ, 15–ը՝ Կիրենաիկային, և 5–ը՝ Ֆեցցանին: Կուսակցական պատկանելության առումով՝ 46 աթոռ գրավեց Անկախության կուսակցությունը, իսկ 7 տեղ՝ Տրիպոլիի «Ազգային կոնգրես» կուսակցությունը՝

աս–Սաադաուի գլխավորությամբ: Վերջինս դեմ էր ֆեդերալիզմին և հանդես էր գալիս Լիբիան ունիտար պետության վերածելու պահանջով: Այդ հողի վրա, ինչպես նաև դժգոհ ընտրության արդյունքներից, Լիբիայի տարբեր մասերում տեղի ունեցան ելույթներ և ցույցեր, որոնց գագաթնակետը Տրիպոլիում 1952 թ. փետրվարի 20–21–ը ծավալված իրադարձությունները հանդիսացան: Նրանք ավարտվեցին սուր բախումներով ցուցարարների և կառավարական զինված ուժերի միջև: Կառավարության որոշումով 1952 թ. Լիբիայում արգելվեց քաղաքական կուսակցությունների, արհմիութենական, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ու ակումբների գործունեությունը: «Ազգային կոնգրես» կուսակցությունը հայտարարվեց օրենքից դուրս, իսկ նրա ղեկավար աս–Սաադաուին արտաքսվեց երկրից: Թագավորի հրամանով լուծարվեց Տրիպոլիտանիայի օրենսդիր խորհուրդը, որը մեղադրվում էր այն բանում, որ չէր ցանկանում համագործակցել ֆեդերալ կառավարության հետ: Հրաժարական տվեցին նաև վարչապետը և նրա գլխավորած կառավարությունը: Կազմվեց նոր կառավարություն, որը թեև կարողացավ ժամանակավորապես կարգ ու կանոն հաստատել, բայց երկրում պահպանվում էր անկայուն քաղաքական դրություն:

Քաղաքական անկայունությանը նպաստեցին նաև թագավորական ընտանիքում ծագած գժտությունները, որոնք սուր բնույթ կրեցին 1954 թ.: Իդրիս I–ը ստիպված էր արտակարգ դրություն մտցնել Կիրենաիկայում և արքայական ընտանիքի յոթ անհնազանդ և հավակնոտ անդամների աքսորեց Լիբիայի հարավային անապատները: Լուծելով ներընտանեկան այդ կոնֆլիկտը՝ Իդրիս I–ը միաժամանակ հստակություն մտցրեց ժառանգության հարցում, թե ով կարող է գահակալին փոխարինել նրա մահվան դեպքում: 1954 թ. հոկտեմբերի 20–ի թագավորական դեկրետով սահմանվեց, որ գահին թագավորին կարող են հաջորդել թագուհին և նրանց զավակները:

Քաղաքական օրակարգում շարունակում էր մնալ պետական համակարգի հարցը: Լիբիայի քաղաքական և ազգային գործիչներն ավելի ու ավելի համարձակորեն էին առաջադրում ֆեդերատիվ կառուցվածքը վերացնելու և Լիբիան ունիտար պետության վերածելու պահանջը, որը դարձել էր համալիբիական պահանջ: Նրանք հավատացած էին, որ դրա շնորհիվ Լիբիան՝ որպես պետություն, կդառնա ավելի կուռ, ուժեղ և կազմակերպված, կամրապնդվեն տնտեսական կապերը Լիբիայի երկրամասերի միջև, և ավելի նպաստավոր պայմաններ կստեղծվեն երկրի

առջև կանգնած սուր սոցիալ–տնտեսական խնդիրների լուծման, Լիբիայի տնտեսական զարգացման և բնակչության դրության բարելավման համար: Այդ էին պահանջում նաև Լիբիայի ազգային կոնսոլիդացիայի, ներքին համախմբման, ինչպես նաև երկրի տարբեր մասերի, մասնավորապես Տրիպոլիտանիայի և Կիրենաիկայի միջև գոյություն ունեցող մրցակցության վերացման խնդիրները, որոնք կենսական անհրաժեշտություն էին լիբիական պետության կայացման համար:

Այդ խնդիրը կանգնած էր մեկը մյուսին հաջորդող Աբդ ալ–Մաջիդ Կուբարի, Մուհամմադ բին Ուսման աս–Սայիդի, Մոհի ադ–Դին Ֆեկինի կառավարությունների առջև: Հենց այս վերջին կառավարությանն էր վիճակված լուծելու Լիբիայի պետական համակարգի վերակազմավորման հարցը:

Լիբիայի թագավոր Իդրիս I–ը դոկտոր Մոհի ադ–Դին Ֆեկինին վարչապետ նշանակեց 1963 թ. մարտի 20–ին: Նույն տարվա ապրիլ ամսին նա իր կառավարական հայտարարության մեջ նշեց, որ իր գլխավորած կառավարությունը մտադիր է պառլամենտի հաստատմանը ներկայացնել Լիբիան ֆեդերալ պետությունից ունիտար պետության վերածելու օրենքի նախագիծ, որը կբարձրացնի կառավարման համակարգի արդյունավետությունը: 1963 թ. ապրիլի 15–ին նա Դեպուտատների պալատին ներկայացրեց մի շարք կարևոր բարեփոխումների վերաբերյալ օրենքի նախագիծ: Նախատեսվում էին իրականացնել հետևյալ չորս բարեփոխումները. ա) Լիբիայի թագավորությունը դադարում է երեք նահանգներից՝ Տրիպոլիտանիայից, Կիրենաիկայից և Ֆեցցանից, կազմված ֆեդերալ պետություն լինելուց և դառնում է ունիտար պետություն՝ բաժանված 10 վարչական միավորների: բ) Լիբիայում, ինչպես նախկինում, հաստատվում է երկպալատանի պառլամենտական համակարգ այն տարբերությամբ, որ թագավորն այժմ իրավունք էր ստանում նշանակել սենատի բոլոր 24 անդամներին (նախկինում թագավորն իրավունք ուներ նշանակել սենատի անդամների միայն կեսին՝ 12 հոգու): գ) Երեք նահանգներում գործող վարչական խորհուրդները վերացվում են, և գործադիր իշխանության իրականացումը դրվում է Լիբիայի կառավարության՝ Նախարարների խորհրդի վրա: դ) Կանայք ստանում են ընտրություններին մասնակցելու իրավունք:

Դեպուտատների պալատը հավանություն տվեց կառավարության առաջարկություններին և ընդունեց համապատասխան որոշում:

1963 թ. ապրիլի 27–ին Լիբիայի թագավոր Իդրիս I Սանուսիի թագավորական հրամանով Լիբիան հռչակվեց ունիտար պետություն:

Թագավորական հրամանով բոլոր 10 նորաստեղծ վարչական շրջաններն անցան կառավարության կողմից նշանակված կառավարիչների՝ ադմինիստրատորների վերահսկողության տակ, որոնց կից, սակայն, ստեղծվեցին տեղական խորհրդատվական խորհուրդներ: Վերջիններս կարող էին զբաղվել տեղական կրթական, առողջապահական, աշխատանքային, գյուղատնտեսական, ճանապարհների և հաղորդակցության հարցերով:

Այսպիսով՝ մոտ 15 տարի անց լիբիացիները կարողացան իրականացնել ունիտար պետություն ստեղծելու իրենց քաղաքական ծրագիրը, որը տեղի ունեցավ առանց քաղաքական և սոցիալական ցնցումների՝ էվոլյուցիոն ճանապարհով:

2. Հարաբերությունների հաստատումը և զարգացումը արաբական և արևմտյան երկրների հետ

Նորաստեղծ արաբական թագավորության առջև կանգնած էին շատ լուրջ խնդիրներ նաև արտաքին քաղաքականության բնագավառում: Նա պետք է անհրաժեշտ քայլերի դիմեր՝ կարգավորելու իր հարաբերությունները նախ և առաջ արաբական, ապա նաև արևմտյան երկրների, առաջին հերթին, Անգլիայի, ԱՄՆ–ի և Ֆրանսիայի հետ, դառնար միջազգային համակեցության լիարժեք անդամ:

Լիբիայի Միացյալ Թագավորության համար կենսական անհրաժեշտություն էր դիվանագիտական և միջպետական քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունների զարգացումը եղբայրական արաբական պետությունների հետ, որը տեղի ունեցավ համեմատաբար սահուն կերպով և առանց բարդությունների: 1953 թ. մարտին նա դարձավ Արաբական պետությունների լիգայի անդամ, որը շատ կարևոր քայլ էր, քանի որ դուռ էր բացում Լիբիայի առջև՝ համագործակցելու արաբական մյուս անդամ երկրների հետ գործնականորեն բոլոր բնագավառներում: Չպետք է մոռանալ, որ Արաբական պետությունների լիգան, շնորհիվ իր վճռական դիրքորոշման, կարևոր դեր խաղաց Լիբիայի անկախության նվաճման գործում: Եղավ մի պահ, երբ անգամ առաջ քաշվեց Լիբիան Արաբական պետությունների լիգայի խնամակալության տակ դնելու ծրագիր:

Լիբիան իր դեսպանությունները բացեց Արաբական պետությունների լիգայի անդամ երկրներում, իսկ նրանք՝ համապատասխանաբար

Լիբիայում, որն այդ ժամանակ պաշտոնապես ուներ երկու մայրաքաղաք՝ Տրիպոլին, որը Տրիպոլիտանիայի կենտրոնն էր, և Բենգազին, որը Կիրենաիկայի կենտրոնն էր:

Լիբիան արաբական մի շարք երկրների հետ կնքեց տարբեր բնույթի պայմանագրեր և համաձայնագրեր: 1956 թ. մայիսին նա Եգիպտոսի հետ ստորագրեց պայմանագիր առևտրի և վճարումների վերաբերյալ, որը նախատեսում էր գյուղատնտեսական և անասնապահական մթերքների փոխանակում: Կողմերը պայմանավորվեցին նաև Առևտրական պալատ հիմնելու վերաբերյալ:

1957 թ. հունվարին Լիբիան և Թունիսը կնքեցին Բարեկամության մասին պայմանագիր, և երկու երկրները սկսեցին համագործակցություն տնտեսության և մշակույթի ոլորտներում: Հիշատակության է արժանի նաև 1962 թ. Մարոկկոյի հետ կնքված Բարեկամության և համագործակցության մասին պայմանագիրը: Կողմերը համաձայնություն եկան համագործակցել կրթուրթյան, տնտեսության, առողջապահության և հաղորդակցության բնագավառներում: Նույն տարվա դեկտեմբերի 25–ին Տրիպոլի ժամանեց Մարոկկոյի պատվիրակությունը արտաքին գործերի նախարարի գլխավորությամբ, որի արդյունքում Լիբիայի և Մարոկկոյի միջև ստորագրվեց լրացուցիչ համաձայնագիր, որը նախատեսում էր գործնական քայլեր վերոնշյալ պայմանագիրը իրականացնելու համար:

Լիբիան ակտիվորեն մասնակցում կամ արձագանքում էր արաբական աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին, որոնք ունեին համաարաբական նշանակություն: Նա իր համերաշխությունը հայտնեց Պաղեստինի արաբ ժողովրդին, որը պայքարում էր իր օրինական իրավունքների համար: Եգիպտոսի դեմ 1956 թ. ուղղված անգլո–ֆրանս–իսրայելական ագրեսիայի ժամանակ լիբիական ժողովուրդը ամբողջապես Եգիպտոսի կողմն էր և խստորեն դատապարտեց եռյակ ագրեսիան: Լիբիան խստորեն դատապարտեց ֆրանսիական ագրեսիան Ալժիրում, կանգնեց Եգիպտոսի, Սիրիայի և Հորդանանի կողքին 1967 թ. հունիսյան արաբա–իսրայելական պատերազմի ընթացքում և նշանակալի ֆինանսական օգնություն ցույց տվեց նրանց պատերազմի հասցրած ծանր հետևանքները բուժելու գործում: 1967 թ. հունիսյան վեցօրյա արաբա–իսրայելական պատերազմը ցնցեց ամբողջ Լիբիան: Բենգազիում, Տրիպոլիում և Լիբիայի այլ քաղաքներում տեղի ունեցան հզոր ցույցեր, որոնց ամենաակտիվ մասնակիցներն էին նավահան-

գիստների և նավթարդյունաբերության բանվորներն ու ուսանողությունը: Նրանք հարձակվեցին անգլիական և ամերիկյան դեսպանությունների վրա: Ջանգվածային ցույցերը մի քանի օր շարունակ չէին դադարում: Կառավարությունը, որը գլխավորում էր վարչապետ Հուսեյն Մազիքը, այլևս չէր վերահսկում իրադրությունը, և թագավորը 1967 թ. հունիսի 28–ին հեռացրեց նրան: Նոր կառավարությունը գլխավորեց Աբդուլ Կադիր Բադրին, որը կտրուկ միջոցների դիմեց «անհնազանդ» ժողովրդի նկատմամբ և կարողացավ իրադրությունը կայունացնել:

Լիբիայի միջազգային դիրքերի ամրապնդման տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ նրա անդամակցությունը 1955 թ. Միավորված ազգերի կազմակերպությանը: Իսկ 1958 թ. նա դարձավ Միջազգային արժութային ֆոնդի և Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի անդամ: Հետագայում նա անդամակցեց նաև այլ միջազգային քաղաքական, տնտեսական, մշակութային կազմակերպությունների:

Սակայն միջազգային հարաբերությունների ոլորտում Լիբիայի թագավորության համար ամենադժվար բնագավառը մնում էին հարաբերությունները արևմտյան գլխավոր պետությունների հետ: Դժվարությունը, բացի այլ հանգամանքներից, կապված էր այն իրողության հետ, որ Անգլիան, ԱՄՆ–ը և Ֆրանսիան ունեին որոշակի և միանգամայն ազդեցիկ դիրքեր Լիբիայում, որոնցից բնավ մտադիր չէին հրաժարվել դրանցից և, ասպես ասած, դատարկածեռն հեռանալ Լիբիայից: Ուստի լիբիական երիտասարդ պետության ղեկավարությունը հարկադրված էր հաշվի նստել այդ հանգամանքի հետ և իր քաղաքականությունը նշված երկրների հետ կառուցել՝ ելնելով այդ իրողությունից:

1953 թ. հուլիսի 29–ին Անգլիան և Լիբիան ստորագրեցին Բարեկամության և դաշինքի մասին պայմանագիր՝ 20 տարի ժամանակով: Այդ պայմանագրով Անգլիան իրավունք էր ստանում Լիբիայում պահպանել իր ռազմական և ռազմաօդային բազաները՝ Բենգազիում, Տրիպոլիում և ալ–Ադամում, ինչպես նաև իրականացնել ճանապարհաշինարարական, ինժեներական, տոպոգրաֆիկ և այլ աշխատանքներ: Անգլիական զինվորականները ստանում էին մի շարք արտոնություններ, այդ թվում և էքստերիտորիալ իրավունք, ըստ որի՝ նրանց վրա չէին տարածվելու լիբիական օրենքները և օրենսդրությունը:

Այդ զիջումների դիմաց Անգլիան յուրաքանչյուր տարի Լիբիայի թագավորությանը վճարելու էր 3 մլն 750 հազ. ֆունտ ստեռլինգ, որից 1 մլն ֆունտ ստեռլինգ հատկացվում էր Լիբիայի տնտեսական բարելավ-

ման, իսկ 2 մլն 750 հազարը՝ Լիբիայի պետական բյուջեի բացը փակելու համար:

Այդ պայմանագիրը, որը 20 տարով ապահովելու էր Անգլիայի ռազմական և քաղաքական ներկայությունը, մեծ դժգոհությամբ ընդունվեց Լիբիայում: Իր տարակուսանքն արտահայտեց նաև Արաբական պետությունների լիգան՝ ի դեմս նրա գլխավոր քարտուղար Ազզամի: Այդուհանդերձ, լիբիական պառլամենտն այն վավերացրեց:

Դրանից հետո ծավալված իրադարձությունները եկան ցույց տալու, թե ինչ նպատակների համար էին օգտագործվելու անգլիական ռազմական բազաները Լիբիայում: Երբ 1956 թ. սկսվեց անգլո–ֆրանս–իսրայելական ագրեսիան Եգիպտոսի դեմ այն բանից հետո, երբ Եգիպտոսն ազգայնացրեց Սուեզի ջրանցքի ընկերությունը, անգլիացիներն օգտագործեցին Լիբիայում իրենց ռազմաօդային բազաները Եգիպտոսը ռմբակոծելու համար: Իսկ լիբիական կառավարությունը չէր կարող արգելել նման գործողությունները, որովհետև 1953 թ. անգլո–լիբիական պայմանագրով նման բան չէր նախատեսված:

Անգլիան 1956 թ. հուլիսին լիբիական կառավարության անունից սկսեց Արաբական լեգեոնի մարզումը և հանդերձավորումը: Այդ լեգեոնը կազմում էր լիբիական բանակի կորիզը: Իսկ դա նշանակում էր, որ անգլիական ռազմական հրահանգիչները մուտք էին գործում նաև լիբիական ցամաքային ուժեր:

Համանման հունով էին ընթանում ամերիկա–լիբիական հարաբերությունները: 1954 թ. լիբիական կառավարությունը պայմանագրային հիմունքներով մի շարք ռազմական բազաներ տրամադրեց ԱՄՆ–ին, որոնց մեջ ամենակարևորը Ուիլուս Ֆիլդի ռազմաօդային բազան էր: 1954 թ. սեպտեմբերին երկու երկրների միջև ստորագրվեց համաձայնագիր, որով Լիբիան 17 տարի ժամանակով վերոնշյալ բազան տրամադրում էր ԱՄՆ–ին: Իսկ վերջինս պարտավորվում էր այդ տարիների ընթացքում մոտ 40 մլն ԱՄՆ դոլարի տնտեսական և ֆինանսական օգնություն ցույց տալ Լիբիային: Այդ համաձայնագիրը նույնպես բողոքի մեծ ալիք առաջացրեց Լիբիայում: Սակայն լիբիական կառավարությունը անտեսելով բոլոր տեսակի բողոքները և դժգոհության դրսևորումները, ընթացք տվեց այդ պայմանագրին նս:

Այդ տարիներին թերևս միակ լուսավոր կետը 1955 թ. Ֆրանսիայի համաձայնությունն էր՝ իր զորքերը դուրս բերել Ֆեցցանից, որոնք այնտեղ հայտնվել էին երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ:

Ֆրանսիայի և Լիբիայի միջև այդ թվականին կնքվեց Բարեկամության մասին պայմանագիր, որը Ֆրանսիան վավերացրեց 1956 թ. նոյեմբերին: Եվ ֆրանսիական մոտ 500-ի հասնող զորքերը հեռացան Ֆեցցանից՝ շնորհիվ այդ պայմանագրի: Այդ պայմանագրով տեղի ունեցան լիբիա-ալժիրյան սահմանների որոշ ճշգրտումներ հօգուտ Լիբիայի, որի դիմաց Լիբիան Ֆրանսիային իրավունք տվեց օգտագործել որոշ թռիչքադաշտեր:

Որոշ տեղաշարժեր եղան նաև իտալա-լիբիական հարաբերություններում: 1956 թ. ստորագրվեց նաև իտալա-լիբիական համաձայնագիր՝ երկու երկրների միջև առաջացած որոշ ֆինանսական հարցերի կարգավորման վերաբերյալ:

Սակայն լիբիական ազգային-հայրենասիրական ուժերին և ժողովրդական ամենալայն զանգվածներին շարունակում էր մտահոգել օտարերկրյա ռազմական բազաների ներկայությունը Լիբիայում: Ուժեղանում էր նրանց ճնշումը լիբիական կառավարության վրա՝ երկիրն ազատել նրանց ներկայությունից: Տեղի տալով այդ ճնշմանը և հաշվի առնելով արաբական հարևան երկրների համանման դիրքորոշումը՝ Լիբիայի կառավարությունը 1964 թ. հանդես եկավ հայտարարությամբ, որ ինքը պաշտպանում է օտարերկրյա բազաների վերացման պահանջը, և խոստացավ չերկարացնել անգլիական և ամերիկյան բազաների վարձակալման ժամկետները: Այդ նույն թվականին լիբիական պառլամենտն ընդունեց օրենք ռազմական բազաների վերացման մասին: Նշենք, որ ամերիկյան բազաների վերաբերյալ պայմանագրի ժամկետն ավարտվում էր 1970 թ., իսկ անգլիական բազաներինը՝ 1973 թ.:

Այդուհանդերձ, ստեղծված պայմաններում, հաշվի առնելով նաև միջազգային ճնշումները և նոր իրադրության ստեղծումը, Անգլիան 1966 թ. փետրվար-մարտ ամիսներին իր զորքերը դուրս բերեց Տրիպոլիի բազայից: Անգլիական որոշ սարքավորումներ՝ փոքրաքանակ զորախմբով, մնացին Բենգազիում, Թոբրուկում և ալ-Ադամում: Սակայն դրանց, ինչպես նաև ամերիկյան զորքերի դուրսբերման հարցը օրակարգից չհանվեց, և արդեն 1967 թ. նոր բանակցություններ սկսվեցին դրանց վերաբերյալ:

3. Սոցիալ-տնտեսական իրադրությունը: Նավթի գործոնը

Լիբիան անկախություն ստանալու պահին տնտեսապես խիստ հետամնաց երկիր էր, ուստի և երկրի կառավարությունը շատ բաներ

հարկադրված էր սկսել զրոյից: Հետամնացությունը համատարած էր և ընդգրկում էր հավասարապես նրա երեք հիմնական երկրամասերը՝ Տրիպոլիտանիան, Կիրենաիկան և Ֆեցցանը:

Լիբիայի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն էր, սակայն բնական պայմանները նպաստավոր չեն գյուղատնտեսության զարգացման համար: Նրա տարածքի 85%–ը կազմում են անապատները: Լիբիայի հողատարածքների միայն 10%–ն է պիտանի մշակելու համար: Երկրում չկա ոչ մի գետ, անձրևները սակավ են և անկանոն, իսկ ջերմաստիճանը՝ շատ բարձր: Թագավորական Լիբիայի բնակչության 25%–ը քոչվորներ էին, 35%–ը՝ քաղաքաբնակներ, իսկ 40%–ը՝ գյուղական բնակիչներ:

Ազգարարային հարաբերություններին բնորոշ էին կիսաֆեոդալական հարաբերությունները և նոր ծնավորվող կապիտալիստական հարաբերությունները: Կիսաֆեոդալական հարաբերությունները բնորոշ էին երկրի ներքին գյուղական վայրերի համար, որտեղ առկա էին նաև ավանդական համայնքային հարաբերությունների մնացուկները: Իսկ կապիտալիստական հարաբերությունները բնորոշ էին իտալական կոլոններին պատկանող խոշոր կալվածքներին: Հողագործ բնակչության զգալի մասը հողազուրկ էր, մեծ էր նաև սակավահող բնակչության քանակը: Իսկ քոչվոր բնակչության հիմնական զբաղմունքը, ինչպես ամենուրեք, Լիբիայում ևս անասնապահությունն էր: Թագավորական Լիբիայում հողերի և անասունների մեծ մասը կենտրոնացված էր ցեղային ավագանու, շեյխերի և ֆեոդալների ձեռքում:

Զարգացման ցածր մակարդակի վրա էր գտնվում նաև արդյունաբերությունը: Մեծ տեղ էր գրավում մանր, արհեստավորական արտադրությունը: Իսկ մշակող արդյունաբերական ճյուղերից պետք է նշել կաշվի, տեքստիլի և սննդի վերամշակման, քիմիական արտադրությունը, որոնց մի զգալի մասը պատկանում էր իտալական կապիտալին: Պետական արդյունաբերական ձեռնարկություններից հիշատակության են արժանի ծխախոտի երկու ֆաբրիկաները, տարաների արտադրության ֆաբրիկան և երեք տպարանները: Այսպիսին էր թագավորական Լիբիայի արդյունաբերության ընդհանուր պատկերը մինչև նավթի հանքավայրերի հայտնաբերումը և արդյունահանումը:

Նավթ Լիբիայի տարածքում հայտնաբերվեց 1955 թ., որը արմատականորեն փոխեց իրադրությունը, իսկ նրա արդյունահանումը նոր և աննախադեպ հնարավորություններ բացեց Լիբիայի առջև, այդ թվում և սոցիալ–տնտեսական ոլորտում: Լիբիայի կառավարությունն անմիջա-

պես՝ 1955 թ. մայիս 21–ին, ընդունեց Նավթի մասին No 25 օրենքը: Այդ սկզբունքային նշանակություն ունեցող օրենքի համաձայն՝ Լիբիայում հայտնաբերված ամբողջ նավթը համարվում էր պետական սեփականություն, օտարերկրյա նավթային ընկերություններին տրվում էր կոնցեսիաների իրավունք, և ստեղծվում էր Նավթի հարցերով հանձնաժողով, որը հետևելու էր No 25 օրենքի ճշգրիտ կատարմանը: Այդ օրենքով սահմանվեց նավթից ստավող եկամուտների չափաբաժինը Լիբիայի և կոնցեսիոն ընկերությունների միջև: Ընդունվեց 50: 50–ի սկզբունքը, որն արդեն կիրառվում էր նավթարդյունահանող այլ երկրներում:

Նավթային ընկերությունների միջև սուր պայքար սկսվեց լիբիական նավթին տիրանալու համար: Հաղթող դուրս եկավ Նավթային միջազգային կարտելը: 1955–1956 թթ. կոնցեսիա ստացած 12 ընկերությունների մեջ էին ամերիկյան «Ստանդարդ օյլ օֆ Նյու Ջերսի», «Ստանդարդ օյլ օֆ Կալիֆոռնիա», «Տեկսակո ինկորպորեյշն» և «Գալֆ օյլ», ինչպես նաև երեք ամերիկյան «անկախ» նավթային ընկերությունները՝ անգլիական «Բրիտիշ պետրոլեում», անգլո–հոլանդական «Ռոյալ–Դատչ Շելլ» և ֆրանսիական «Կոմպանի ֆրանսեզ» ընկերությունը: Լիբիայի տարածքի երեք քառորդը գտնվում էր կոնցեսիոն ընկերությունների տրամադրության տակ: Նավթի մասին օրենքով թույլատրվում էր օտարերկրյա նավթային ընկերություններին ազատորեն իրենց կապիտալը դուրս բերել Լիբիայից: Նրանց տրվում էին մաքսային և հարկային արտոնություններ նավթարդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ սարքավորումներ ներմուծելու համար: Այդ բոլորն արվում էր նավթային ընկերությունների գործունեությունը խրախուսելու և համապատասխանաբար նավթից ստացվող եկամուտները շեշտակի ավելացնելու նպատակով:

1962 թ. փոփոխություններ մտցվեցին նավթային օրենքի մեջ՝ ի նպաստ Լիբիայի, որի արդյունքում զգալիորեն մեծացավ նավթից ստացվող եկամուտների նրա չափաբաժինը:

Նավթի արդյունահանումը Լիբիայում սկսեց զարգանալ չափազանց արագ տեմպերով: 1961 թ. նավթի արդյունահանումը կազմում էր ընդամենը 0,7 մլն տոննա, իսկ 1969 թ.՝ թագավորության գոյության վերջին տարում, այն հասավ 160 մլն տոննայի: Ըստ այդմ՝ աճեցին նավթից ստացվող եկամուտները. 1961 թ. նրանք կազմում էին ընդամենը 1,6 մլն ԱՄՆ դոլար, իսկ 1969 թ. ԱՄՆ Լիբիայի համար կազմում էին աստղաբաշխական թիվ՝ 1 մլրդ 36 մլն ԱՄՆ դոլար:

Նավթարդյունաբերության զարգացումը, նավթագտիչ և նավթավերամշակման գործարանների և նավթամուղների կառուցումը դրամական եկամուտների կտրուկ աճի հետ միասին առաջ բերեցին նաև սոցիալական լուրջ տեղաշարժեր լիբիական հասարակության ներսում: Սկսվեց գյուղական աղքատ և հողազուրկ բնակչության հոսքը դեպի քաղաքներ և նավթային կենտրոններ, ինչը մեծապես խթանեց ուրբանիզացիայի գործընթացը Լիբիայում, որին նա պատրաստ չէր: Դա իր հետ բերեց նոր պրոբլեմներ՝ կապված բնակարանների, կրթության, առողջապահության ապահովման հետ, որը Լիբիայում առանց այդ էլ շատ սուր բնույթ էր կրում: Լիբիայում սկսեց ձևավորվել հարուստների նոր հասարակական–սոցիալական շերտ, որը կապված էր նավթային գործունեության և նավթից ստացվող մեծածավալ եկամուտների հետ: Դրանք ինչպես առանձին ձեռներեցներ էին, այնպես էլ պետական, կառավարական և բյուրոկրատական համակարգում բարձր ու ազդեցիկ դիրք ունեցող մարդիկ, այդ թվում և մի քանի նախկին վարչապետներ ու նախարարներ, թագավորական ընտանիքի անդամներ:

Նավթից ստացվող եկամուտների աճի հետևանքով մեծացավ և կանոնավորվեց Լիբիայի պետական բյուջեն: 1950–ական թվականների սկզբներին պետական բյուջեն կազմում էր մի չնչին գումար՝ ընդամենը 3 մլն լիբիական դինար, իսկ 1967/1968 ֆինանսական տարում այն հասավ 226 մլն լիբիական դինարի, որի մոտ 50%–ը հատկացվեց սոցիալական ոլորտի զարգացմանը: Դա հնարավորություն տվեց կրճատել, ապա նաև հրաժարվել օտարերկրյա օգնությունից, վարկերից և դրամական նպաստներից:

1963 թ. Հուսեյն Մազիկի կառավարությունը հաստատեց տնտեսական և սոցիալական զարգացման հնգամյա պլան՝ նախատեսված 1963/1964–1967/1968 թթ. համար: Թեև դա համարվում էր էքսպերիմենտ, բայց, ընդհանուր առմամբ, տվեց դրական արդյունքներ: Կառուցվեցին մի շարք արդյունաբերական ոչ մեծ ձեռնարկություններ, զգալի ուշադրություն հատկացվեց գյուղատնտեսության, ձկնարդյունաբերության և տուրիզմի զարգացմանը, կոմունիկացիաների կառուցմանը և այլն: Շոշափելի գումարներ հատկացվեցին նաև բնակարանաշինարարությանը, կրթության և առողջապահության ոլորտների զարգացմանը:

Այդուհանդերձ, Լիբիայում տիրապետող էր հանդիսանում օտարերկրյա կապիտալը, և չնայած նավթից ստացվող դրամական հոսքին՝ Լիբիան շարունակում էր մնալ աշխարհի ամենաաղքատ երկրներից մե-

կը: Շատ ծանր էր գյուղի և քաղաքի աշխատավորների վիճակը, որոնց նավթից ստացվող եկամուտներից համարյա ոչինչ չէր հասնում: Նրանք վարում էին աղքատիկ կյանք: Նրանց կենսամակարդակը ցածր էր անգամ մերձավորարևելյան ստանդարտներով: Չափազանց ցածր էր աշխատավարձը, որին նպաստում էր նաև այն հանգամանքը, որ գյուղի պաուպերիզացիայի և գյուղական աշխատանքային ուժի՝ զանգվածաբար քաղաք ներհոսելու հետևանքով առաջացել էր աշխատուժի մեծ ավելցուկ, որը հնարավորություն էր տալիս գործատուին՝ իր պայմանները թելադրել վարձու աշխատողին: Իսկ թույլ արդյունաբերությունն էլ իր հերթին չէր կարող շատ աշխատատեղեր առաջարկել: Մեծ թիվ էր կազմում գործազուրկների բանակը: Թերասնումը սովորական երևույթ էր, որը հանդիսանում էր բարձր մահացության պատճառներից մեկը:

Աշխատավորները գտնվում էին իրավազուրկ վիճակում: Նրանց արհմիությունները դեռևս թույլ էին և գտնվում էին կառավարության վերահսկողության տակ: Պետական ձեռնարկություններում աշխատող բանվորներին և ծառայողներին արգելվում էր դիմել գործադուլի: Նրանք, ովքեր խախտում էին այդ օրենքը, ենթարկվում էին բռնությունների և հալածանքների: 1961 թ. Տրիպոլիի հուսահատության հասած բանվորները գործադուլ հայտարարեցին՝ պահանջելով աշխատավարձի հավելում: Նրանց այդ պահանջը կապված էր ոչ միայն այն բանի հետ, որ աշխատավարձը շատ ցածր էր, այլ նաև այն հանգամանքի հետ, որ սննդամթերքի և ապրանքների գները վերահսկողության չէին ենթարկվում և անընդհատ բարձրանում էին: Կառավարությունը դաժանորեն պատժեց գործադուլավորներին: Նրանց ղեկավարները բանտ նետվեցին, իսկ արհմիութենական ֆոնդի վրա կառավարությունը կալանք դրեց՝ զրկելով արհմիություններին նյութական օգնություն կազմակերպել գործադուլավորներին և նրանց ընտանիքներին: Միաժամանակ կառավարությունը խստիվ հանձնարարեց գործատուներին՝ աշխատանքի ընդունել միայն այն բանվորներին, ովքեր դուրս կգան արհմիություններից: Կառավարությունը նույն կերպ վարվեց 1962 թ. Տրիպոլիի գործադուլավոր բանվորների, 1963 թ. կայացած քաղաքացիական տրանսպորտի աշխատողների հետ՝ նրանց գործադուլը հայտարարելով անօրինական:

Ճիշտ է, 1957 թ. ընդունվել էր սոցիալական ապահովագրության մասին օրենք, իսկ 1958 թ.՝ օրենք աշխատանքի մասին, բայց դրանք շատ մակերեսային բնույթ էին կրում և էական կիրառություն չունեին:

Դրությունը հեռու էր բարվոք լինելուց նաև առողջապահության և կրթության բնագավառում: Ճիշտ է, կառուցվում էին նոր դպրոցներ, բացվեց Լիբիայի ազգային համալսարանը և այլն, այդուհանդերձ, 1965 թ. տվյալներով, թագավորական Լիբիայի բնակչության 73%–ը անգրագետ էր:

Այսպիսով՝ նավթի արդյունահանումը և նրանից ստացվող եկամուտները չկարողացան լուծել Լիբիայի առջև կանգնած սոցիալ–տնտեսական հրատապ խնդիրները: Երկրում իրադրությունը մնում էր խիստ լարված: Ժողովուրդը նոր և արմատական փոփոխությունների կարիք էր զգում: Ակնհայտ էր, որ միապետական վարչակարգը ի վիճակի չէր լուծել Լիբիայի առջև կանգնած քաղաքական և սոցիալ–տնտեսական խնդիրները, որոնց լուծումից էր կախված երկրի ապագան:

III. «ԱԶԱՏ ՍՊԱՆԵՐԻ» 1969 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1–Ի ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ

Քաղաքական և սոցիալ–տնտեսական լարվածությունը համակել էր ոչ միայն ամբողջ երկիրը: Անհանգիստ էր դրությունը նաև արքունիքում, խմորումներ էին գնում բանակում, մասնավորապես նրա միջին և ցածրաստիճան սպայության շարքերում:

Հիվանդ և աշխատունակությունն օրեցօր կորցնող Իդրիս I–ը մտահոգ էր գահի և իր փոխանորդի հարցում: Նա մտադրվում էր գահը փոխանցել արքայական ընտանիքի անդամներից մեկին, որը հավատարմորեն կշարունակեր նրա ներքին և արտաքին քաղաքականությունը: Նրա ընտրությունը կանգ առավ իր ազգականի՝ թագաժառանգ, 41–ամյա Հասան Ռիզայի վրա: Այդ մասին թագավորը, որը բուժվում և հանգստանում էր Թուրքիայում, նախնական զրույց ունեցավ իր գլխավոր խորհրդական Օմար Շելխիի հետ: Ապա նա իր այդ մտադրության մասին 1969 թ. օգոստոսին տեղյակ պահեց թագավորական Լիբիայի վերջին վարչապետ Վանիս Կադաֆիին և կառավարությանը:

Դրանից հետո իրադարձությունները սկսեցին զարգանալ արտակարգ արագությամբ, որի հիմնական դերակատարները դարձան թագավորական պալատը, Շելխի եղբայրները և բանակը, որոնցից յուրաքանչյուրը հետամուտ էր իր ծրագրին:

Թագավորական պալատի քաղաքական նպատակների մասին արդեն ասվեց:

Ինչ վերաբերում է Շելխի եղբայրներին ու նրանց ծրագրին, ապա իրողությունն այստեղ հետևյալն էր: Շելխի եղբայրներից մեկը՝ Օմար Շելխին, ինչպես նշվեց, թագավորի գլխավոր խորհրդականն էր և շատ ազդեցիկ մարդ պալատում: Իսկ նրա եղբայրը՝ Աբդ ալ–Ազիզ Շելխին, որ զբաղեցնում էր բանակի գլխավոր շտաբի պետի տեղակալի և բանակի Վերակառուցման կոմիտեի նախագահի պաշտոնները, հանդիսանում էր բանակի փաստացի ղեկավարը: Եղբայր Շելխիները վատ հարաբերությունների մեջ էին գահաժառանգ Հուսեյն Ռիզայի հետ և չէին ցանկանում նրան տեսնել գահի վրա, մանավանդ որ այդ վերջինը ժողովրդի կողմից սիրված անձնավորություն չէր: Նրանք որոշեցին կանխել բոլորին և կատարել պետական հեղաշրջում, որը նշանակված էր 1969 թ. սեպտեմբերի 15–ին: Հեղաշրջման հաջողությունն ապահովելու համար Աբդ ալ–Ազիզ Շելխին հրաման արձակեց բանակի 40 երիտասարդ սպաների «ուսման» ուղարկել Անգլիա: Իրականում դրանք ազատամիտ սպաներ էին, որոնց նա այդ պատրվակով մեկուսացնում էր բանակից և արտաքսում Լիբիայից:

Շելխի եղբայրները բանակում և լիբիական քաղաքական էլիտայի շրջանակներում փութաջանորեն աշխատում էին իրենց համար կողմնակիցներ ապահովել:

Ինչպես նշվեց, անհանգիստ էր նաև բանակում, որտեղ խմորումը և հակամիապետական տրամադրություններն ավելի վաղ էին արմատ գցել: Դրա կրողները հանդիսանում էր լիբիացիների նոր սերունդը, որի շարքերից ձևավորվում էր բանակի ցածր և միջին հրամանատարությունը, որն ապրում էր համաարաբական հոգսերով, տուրք էր տալիս այդ ժամանակ լայն տարածում գտած արաբական նացիոնալիզմի և միասնականության գաղափարներին, պաշտում էր Եգիպտոսի հեղափոխական ղեկավար Նասերին և դժգոհ էր թագավորի բացահայտ արևմտամետ քաղաքականությունից: Նրանց դժգոհությունն էր հարուցում նաև այն հանգամանքը, որ Իդրիս I–ը հոգու խորքում չէր վստահում բանակին՝ նկատի ունենալով բանակի ակտիվ դերակատարումը արաբական մի շարք երկրներում՝ Եգիպտոսում, Իրաքում, Սիրիայում և Եմենում, պետական հեղաշրջումներ կամ հեղափոխություններ կատարելու գործում: Այդ պատճառով էլ թագավորն ավելի շատ վստահում էր անվտանգության մարմիններին և ուժերին, որոնք, գաղտնի թե բացահայտ, վերահսկողություն էին հաստատել բանակի վրա: Անվտանգության ուժերն ավելի բազմաքանակ և ավելի լավ էին զինված, քան բանակը:

1964 թ. բանակում ծառայող «Յունիոնիստ սոցիալիստներ» հորջորջվող երիտասարդ ցածրաստիճան սպաները հիմնեցին «Ազատ սպաներ» գաղտնի զինվորական կազմակերպությունը: Այդ հարցում նրանք հետևեցին Նասերի օրինակին, որը եգիպտական բանակում իր ժամանակին ստեղծել էր «Ազատ սպաներ» կազմակերպություն, որը 1952 թ. հուլիսի 23–ին իրագործեց հեղափոխություն Եգիպտոսում: «Ազատ սպաներ» զինվորական գաղտնի կազմակերպություն էր ստեղծվել նաև Իրաքում՝ Աբդել Քերիմ Կասիմի գլխավորությամբ, որը նույնպես 1958 թ. հուլիսի 14–ին տապալեց միապետությունը Իրաքում: Եգիպտական և իրաքյան «Ազատ սպաներ» կազմակերպություններն օրինակ էին հանդիսանում լիբիական երիտասարդ սպաների համար և նրանց համար ծառայում ոգևորության աղբյուր:

Լիբիայում գաղտնի այդ կազմակերպության լրիվ անվանումն էր «Ազատ սպաներ–յունիոնիստ սոցիալիստներ»: Դրանով շեշտվում էր ոչ միայն այն հանգամանքը, որ կազմակերպության հիմնադիրները լիբիական յունիոնիստ սոցիալիստներն էին, այլև այն իրողությունը, որ նրանք կողմնակից էին արաբական միասնությանը և սոցիալիստական հասարակության կառուցմանը:

Կազմակերպության գլխավոր մարմինը Կենտրոնական կոմիտեն էր, որը գործում էր շատ զգույշ, շրջահայեցորեն՝ պահպանելով գաղտնապահության, կոնսպիրացիայի բոլոր կանոնները: Կենտրոնական կոմիտեի անդամներն իրավունք չունեին խմել, ղումար խաղալ, այցելել զվարճանքի վայրեր, նրանք պետք է կենցաղում և հասարակության մեջ լինեին համեստ և աշխատեին իրենց վրա ուշադրություն չգրավել: Նրանք պարտավոր էին նաև պահպանել իսլամի նորմերը, կանոնավորապես աղոթել, լինել մզկիթներում և այլն: Շատ լավ էր մշակված նաև միմյանց հետ կապ պահպանելու տեխնիկան: Կենտկոմի անդամներն ունեին տարվա մեջ հատուկ օրեր՝ միմյանց հետ հանդիպելու և իրենց գործողությունների ծրագիրը քննարկելու ու մշակելու համար: Այդ օրերն էին օգոստոսի 9–ը, նոյեմբերի 7–ը, դեկտեմբերի 24–ը, զոհաբերության և ռամադանի՝ ծոմապահության ավարտման օրերը, որոնք լուսնային տոմարի պատճառով փոփոխական էին:

Կենտկոմի անդամներից յուրաքանչյուրն իրեն նախապատրաստում էր ապագայում երկիրը ղեկավարելու համար: Այդ նպատակով նրանք ջանում էին ստանալ բարձրագույն կրթություն, խորանալ քաղաքական, դիվանագիտական, պետական կառավարման, տնտեսական,

ֆինանսական, կրթական, մշակութային, իրավական և ընդհանրապես այն բոլոր հարցերի մեջ, որոնք կարող էին ապագայում օգտակար լինել պետությունը կառավարելու համար:

Շնորհիվ հմուտ գաղտնապահության՝ բանակային հետախուզությունն այդպես էլ մինչև վերջ չիմացավ «Ազատ սպաներ» կազմակերպության գոյության մասին:

«Ազատ սպաներ» կազմակերպության տակտիկայի մեջ կարևոր տեղ էր գրավում չշտապելու գաղափարը: Պահանջվում էր համբերատարորեն նախապատրաստվել վճռական գործողություններին՝ սպասելով ամենահարմար պահին: Ղեկավարվելով այդ սկզբունքով՝ Կենտրոնական կոմիտեն երկու անգամ՝ 1969 թ. մարտի 12–ին և մարտի 24–ին, հետաձգեց բանակի ելույթը տիրող միապետական վարչակարգի դեմ:

Կազմակերպությունը տեղյակ էր և ուշադիր հետևում էր թագավորական պալատում տեղի ունեցող իրադարձություններին և Շելխի եղբայրների կողմից նախապատրաստվող գործողություններին: Կենտրոնական կոմիտեն ճիշտ գնահատեց բանակի 40 երիտասարդ սպաներին, որոնք «Ազատ սպաներ» կազմակերպության անդամներ էին, Անգլիա ուղարկելու Շելխի եղբայրների իրական մտադրությունները և որոշեց, որ հասել է վճռական գործողությունների պահը: Հիմնական խնդիրը դարձավ առաջընթաց գործողություններով կանխել թե՛ պալատին և թե՛ Շելխի եղբայրներին:

«Ազատ սպաներ» կազմակերպության ղեկավարությունը սեպտեմբերի 1–ը նշանակեց ապստամբության սկսման օր: 1969 թ. օգոստոսի 31–ի գիշերը՝ լույս սեպտեմբերի 1–ի առավոտյան, կազմակերպությանը հավատարիմ զորամասերը շարժվեցին երկու մայրաքաղաքների՝ Բենգազիի և Տրիպոլիի, և թագավորանիստ ալ–Բայդայի ուղղությամբ: Ամեն ինչ կատարվեց շատ արագ: Սեպտեմբերի 1–ի առավոտյան՝ ժամը 5–ին, «Ազատ սպաներ» կազմակերպության գլխավորությամբ բանակը դարձավ դրության տերը: Ըստ էության, նա լուրջ դիմադրության չհանդիպեց թագավորական ուժերի, ինչպես նաև Շելխի եղբայրների համակիրների կողմից: Առանց անգամ որևէ կրակոցի բանակը գրավեց կառավարական, պառլամենտի, փոստի, հեռագրատան և ռադիոյի շենքերը, ձերբակալեց թագավորական ընտանիքը, բացի թագավորից, որն այդ պահին գտնվում էր Թուրքիայում, բանակի գլխավոր շտաբի պետ Շամսեդդին Սանուսիին, անվտանգության զորքերի հրամանատարներից մեկին՝ գեներալ Սալիմ Աբու Տալիբին, և մի քանի այլ

բարձրաստիճան զինվորականների: Ձերբակալվածների մեջ էր նաև Աբդ ալ–Ազիզ Շելխին: Ապստամբությունը հաղթեց: Շատ վայրերում ոստիկանությունը և անվտանգության ուժերն իրենց զենքերով անցան ապստամբների կողմը: Դա անարյուն հեղափոխություն էր, որի ժամանակ ոչ մի մարդ չզոհվեց հազվագյուտ երևույթ հեղափոխությունների և հեղաշրջումների այնքան հարուստ պատմության, մանավանդ արաբական երկրների պատմության մեջ:

1969 թ. սեպտեմբերի 1–ի առավոտյան ժամը 6–ին Բենգազիի և Տրիպոլիի ռադիոկայանները միաժամանակ տեղյակ պահեցին Լիբիայի բնակչությանը, որ միապետությունը Լիբիայում տապալվել է, և իշխանությունն անցել է նորաստեղծ Հեղափոխական հրամանատարության խորհրդի՝ ՀՀԽ–ի ձեռքը: Նոր իշխանությունների այդ առաջին հայտարարության մեջ հակիրճ ձևով ասված էր, որ ՀՀԽ–ի նպատակն է կառուցել հեղափոխական, սոցիալիստական և առաջադիմական Լիբիա, որը կպայքարի իմպերիալիզմի, գաղութատիրության, սոցիալական ճնշման, անարդարության, ռասայականության դեմ՝ հանուն շահագործվող ժողովուրդների ազատագրության:

Այսպիսով՝ ընդամենը 12 տարի գոյություն ունեցած միապետությունը Լիբիայում տապալվեց, և Սանուսիների դինաստիան գահընկեց արվեց:

IV. ԼԻԲԻԱԿԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ (1969–1977 թթ.)

1. Իշխանության հարցը: Հեղափոխական հրամանատարության խորհուրդը և «Հեղափոխական կառավարության» ձևավորումը

ՀՀԽ–ի առաջին պաշտոնական հայտարարության մեջ, որը տրվեց սեպտեմբերի 1–ի առավոտյան ժամը 6–ին, խոսվում էր միայն միապետության տապալման մասին, սակայն ոչինչ չէր ասված Լիբիայի ապագա պետական կառուցվածքի մասին: Բոլորը սպասում էին, թե ինչ է լինելու, և նոր ղեկավարները երկար սպասել չտվեցին: Նույն օրը՝ առավոտյան ժամը 10–ին, դարձյալ ռադիոյով հաղորդվեց, որ Լիբիան հռչակվում է հանրապետություն և պաշտոնապես կոչվում է Լիբիական Արաբական Հանրապետություն:

Այդ նույն օրը՝ ժամը 15–ին, ռադիոյով հաղորդվեց ՀՀԽ–ի երկրորդ պաշտոնական հայտարարությունը, որը շատ կարևոր էր նոր իշխանությունների հաստատման և Լիբիայում նոր իրադրության ստեղծման առումով: Հինգ կետից բաղկացած այդ հայտարարության մեջ ամենակարևորը առաջին երեք կետերն էին: ՀՀԽ–ն, հանդես գալով «Հանուն Լիբիական Արաբական Հանրապետության», հայտարարում էր, որ «լուծարվում են բոլոր սահմանադրական ինստիտուտները, ներառյալ օրենսդիր, կառավարական մարմինները: Բոլոր այդ մարմինները զրկվում են ամեն տեսակ լիազորություններից՝ սկսած 1969 թ. սեպտեմբերի 1–ի առավոտից»: Հայտարարության երկրորդ կետում սահմանված էր, որ «Լիբիական Արաբական Հանրապետությունում ամբողջ իշխանությունն անցնում է Հեղափոխական հրամանատարության խորհրդի ձեռքը: Բոլոր պետական հիմնարկները, նրանց ծառայողները, անվտանգության ուժերը, այս պահից սկսած, ենթարկվում են Հեղափոխական հրամանատարության խորհրդին: Այդ հրահանգի ամեն մի խախտում կհետապնդվի օրենքով»: Երրորդ կետում հակիրճ շարադրված էին ՀՀԽ–ի քաղաքականության հիմնական ուղղությունները, որտեղ ընդգծված էր, որ «Հեղափոխական հրամանատարության խորհուրդը հայտարարում է բոլոր քաղաքացիներին հեղափոխական Լիբիա, սոցիալիստական Լիբիա կառուցելու իր մտադրության մասին: Լիբիան զարգանալու է պատմական ուղիով՝ առանց վերադառնալու անցյալին, հետամնաց, հիվանդություններով ախտահարված պետությունից դառնալու է առաջադեմ պետություն, որը պայքարելու է իմպերիալիզմի, ռասայական խտրականության, սոցիալական ճնշման և անարդարության դեմ՝ հանուն ստրկացված ժողովուրդների ազատագրության»:

Այնուհետև Լիբիայի նոր ղեկավարությունն ընդգծում էր, որ ինքը հավատում է բոլոր կրոնների սրբությանը, մուսուլմանական ոգու արժեքներին, որոնք բխում են Կորանից:

Դեպքերի հետագա զարգացումը, նոր իշխանության հաստատման և ամրապնդման հարցը և երկրում կայունություն ու հանդարտություն հաստատելը նշանակալիորեն կախված էին այն բանից, թե ինչպիսի դիրք կգրավեն թագավորը և նրա շուրջը համախմբված ուժերը, ինչպես նաև Շելխի եղբայրների համակիրները:

Շուտով ակնհայտ դարձավ՝ որ թագավորական ճամբարում չկար միասնություն: Սեպտեմբերի 1–ի երեկոյան շատ կարևոր հայտարարությամբ հանդես եկավ գահաժառանգ Հուսեյն Ռիզան, որը հայտարարեց

հետևյալը. «Ես՝ Հասան Ռիզան՝ Լիբիայի թագաժառանգը, հայտարարում եմ լիբիական ժողովրդին և ամբողջ աշխարհին, որ ես հրաժարվում եմ իմ բոլոր սահմանադրական իրավունքներից՝ որպես գահի ժառանգորդ: Այս իմ հայտարարությունը հանդիսանում է պաշտոնական փաստաթուղթ իմ հրաժարականի մասին, որը ես արել եմ իմ սեփական կամքով: Թող Ալլահը վկա լինի այն բանին, ինչ որ ես ասացի»: Վերջում նա կոչ արեց ժողովրդին պաշտպանել նոր վարչակարգը և զենքի չդիմել:

Այլ դիրք գրավեց դեռևս Թուրքիայում գտնվող Իդրիս I–ը: Նրա խոսնակը թագավորի անունից հայտարարեց, որ թագավորը մտադիր չէր հրաժարվել և մնում էր իշխանության գլուխ: Սեպտեմբերի 2–ին Իդրիս I–ը Թուրքիայից տեղափոխվեց Հունաստան, որտեղ նրան այցելեց թագավորի գլխավոր խորհրդական Օմար Շելխին, որը, ի տարբերություն իր եղբոր՝ Աբդ ալ–Ազիզ Շելխիից, կարողացել էր խուսափել ձերբակալությունից: Շուտով հայտնի դարձավ, որ թագավորը ոչ միայն չէր ցանկանում գահից հրաժարվել, այլև մտադիր էր դիմել Մեծ Բրիտանիայի ռազմական օգնությանը և բրիտանական ինտերվենցիայի միջոցով վերականգնել միապետությունը և իր իրավասությունները: Այդ առաքելությունը դրվեց Օմար Շելխիի վրա: Թագավորն ամենայն հավանականությամբ տեղյակ չէր Շելխի եղբայրների դավադրության մասին, և դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ նա շարունակում էր վստահել իր խորհրդականին, որը սեպտեմբերի 3–ին նրա հանձնարարությամբ մեկնեց Լոնդոն և բանակցություններ վարեց անգլիական արտաքին գործերի նախարար Մայքլ Ստյուարտի հետ: ՀՀԽ–ն իմացավ Օմար Շելխիի առաքելության մասին և պաշտոնական բողոք հղեց անգլիական կառավարությանը՝ նախազգուշացնելով, որ դեպքերի հետագա զարգացման ամբողջ պատասխանատվությունը կընկնի նրա վրա:

Ի պաշտպանության ՀՀԽ–ի դիրքորոշման՝ ոտքի ելան լիբիացիները: Երկրի քաղաքներում տեղի էին ունենում զանգվածային ցույցեր, որի ժամանակ ցուցարարները դատապարտում էին Անգլիային և պահանջում կախաղան հանել Օմար Շելխիին: Անգլիական կառավարությունը, կշռադատելով ստեղծված իրադրությունը, գերադասեց նահանջել և հրաժարվեց ինտերվենցիայի գաղափարից և սվիններով Իդրիսին նորից լիբիական գահի վրա վերահաստատելու գայթակղությունից:

Իդրիս I–ը ստիպված էր հաշտվել կատարվածի հետ և սեպտեմբերի 6–ին հայտարարեց գահից իր հրաժարականի մասին, որը պետք է

դիտել որպես լիբիական հակամիապետական ուժերի և նոր վարչակարգի կարևոր հաղթանակը իշխանության հարցում:

Իսկ ինչ վերաբերում է Շելխի եղբայրներին և նրանց համակիրներին, որոնք առանց այն էլ մեծաթիվ չէին, ապա գործնականում նրանք ոչինչ չէին կարող անել և չփորձեցին էլ անել, մանավանդ այն բանից հետո, երբ եղբայրներից մեկը ձերբակալված էր, իսկ մյուսը գտնվում էր երկրից դուրս և ենթակա էր կախաղան բարձրացնելու:

Այսպիսով՝ իշխանության հարցում Լիբիայի նոր ուժերը տարան շատ կարևոր հաղթանակ:

Իսկ ովքե՞ր էին Լիբիայի նոր ղեկավարները:

Հեղաշրջումից հետո առաջին օրերին ոչինչ հայտնի չէր այն իրականացնողների մասին, չէր հիշատակվում անգամ որևէ անուն: Ստացվում էր այնպիսի տպավորություն, որ, ինչպես ընդունված է ասել, սեպտեմբերյան հեղափոխությունը մի յուրօրինակ «անդեմ» և անհասցե երևույթ էր:

Հեղաշրջումն իրականացրած «Ազատ սպաներ» կազմակերպության գլուխ կանգնած էր 27–ամյա կապիտան Մուամմար Աբու Մինյար ալ–Կադաֆին, որը գլխավորեց Հեղափոխական հրամանատարության խորհուրդը: Նրա մերձավոր զինակիցներն էին Աբդել Սալամ Ջալուդը, որը համարվում էր երկրորդ դեմքը և գլխավորել էր ապստամբությունը Տրիպոլիում, Ուբեյդին, Մաղրաբին և ևս մի քանի հոգի:

Կադաֆին ծնվել է 1942 թ. Լիբիայում՝ Սիրտ քաղաքի մոտ՝ բեդվինի ընտանիքում՝ լինելով ընտանիքի կրտսեր զավակը: Նախնական տարրական կրթությունը ստացել է տեղական մադրասայում՝ հոգևոր դպրոցում, և փոքր հասակից դաստիարակվել իսլամական կրոնական սովորույթների համաձայն: 1956–1961 թթ. սովորել է Ֆեցցանի նախապատրաստական դպրոցում: Բարձրագույն կրթությունը ստացել է Լիբիայի համալսարանում, որն ավարտել է բարձր ցուցանիշներով: Այնուհետև, նա 1963 թ. ընդունվել է Բենգազիի ռազմական ակադեմիան, որն ավարտելուց հետո՝ 1965 թ., ուղարկվում է Անգլիա իր ռազմական կրթությունը շարունակելու համար: Վերադառնում է Լիբիա 1966 թ. և ծառայում լիբիական բանակում՝ որպես սպա:

Ռազմական ակադեմիայում սովորելու տարիներին՝ 1964 թ., նա իր համակիր դասընկերների հետ միասին կազմակերպում է գաղտնի կազմակերպություն՝ «Ազատ սպաներ» կազմակերպությունը, որն իր առջև դեռևս այդ ժամանակ արդեն խնդիր էր դրել տապալել արևմտա-

մետ միապետությունը: Դեռևս պատանեկան տարիներից Կադաֆին ոգեշնչված էր Գամալ Աբդել Նասերի գաղափարներով, հիացած էր նրանով և նրա քաղաքական գծի ջերմ երկրպագուն էր:

Միապետությունը տապալելուց և Լիբիայի նոր առաջնորդը դառնալուց հետո Կադաֆին հրաժարվեց կրել գեներալի զինվորական աստիճան, բայց ստացավ գնդապետի աստիճան, որն ավելի շատ արարողական նշանակություն ուներ: Ի պատասխան արևմտյան որոշ երկրներում հնչող այն դիտողությունների, թե ինչպես գնդապետը կարող է լինել երկրի ղեկավար և նրա ռազմական ուժերի գլխավոր հրամանատար՝ նա ընդգծում է, որ լիբիական հասարակությունը կառավարվում է ժողովրդի կողմից, ուստի ինքը մեծ տիտղոսներ և բարձր կոչումներ կրելու կարիք չունի: Կադաֆին ունի ութ երեխա՝ մեկ աղջիկ և յոթ տղա: Նա ուներ նաև մեկ որդեգրած աղջիկ, որը զոհվեց, երբ ԱՄՆ–ի օդային ուժերը 1986 թ. ռմբակոծեցին Կադաֆիի բնակատեղին:

Ահա այսպիսին է ընդհանուր գծերով Լիբիայի առաջնորդի կենսագրությունը:

ՀՀԽ–ն անգամ իշխանությունը գրավելուց հետո չուներ և մտադիր էլ չէր ունենալ իր նախագահը: Նրա անդամները ցանկանում էին երկիրը կառավարել կոլեկտիվ կերպով, առանց պարտականությունների հստակ բաժանման: Նրանք անգամ չէին ցանկանում կառավարություն կազմել: Սակայն սեպտեմբերի 4–ին Տրիպոլի ժամանած եգիպտական և սուդանական պատվիրակությունները՝ հանդիպելով ՀՀԽ–ի անդամների հետ, նրանց խորհուրդ տվեցին ընտրել ՀՀԽ–ի նախագահ և կազմել կառավարություն: Հետաքրքիր է նշել, որ Լիբիա ժամանած եգիպտական պատվիրակությունը չգիտեր՝ ում հանձնել եգիպտոսի պրեզիդենտ Նասերի ուղերձը: Ի վերջո, ՀՀԽ–ի անդամները տեղի տվեցին և Կադաֆիին ընտրեցին ՀՀԽ–ի նախագահ:

1969 թ. սեպտեմբերի 7–ին Մահմուդ Սուլեյման Մաղրաբին կազմեց «Հեղափոխական առաջին կառավարությունը», որը նույն օրը հաստատվեց ՀՀԽ–ի կողմից: Լիբիայի միասնության և արտաքին գործերի նախարար նշանակվեց Սալահ Բուսիրը, պաշտպանության նախարար՝ փոխգնդապետ Ադամ Սաիդ Հավվազը, ներքին գործերի նախարար՝ փոխգնդապետ Մուսա Ահմադը և այլք, ընդամենը ութ նախարար:

ՀՀԽ–ն սեպտեմբերի 8–ին Մուամմար Կադաֆիին շնորհեց գնդապետի աստիճան և նշանակեց Լիբիայի ռազմական ուժերի գլխավոր հրամանատար:

Այդ քայլերի շնորհիվ նոր իշխանության և նրա մարմինների ձևավորումը ավելի կոնկրետ կերպարանք ընդունեց:

2. Նոր իշխանությունների առաջնահերթ խնդիրները ներքին քաղաքականության ասպարեզում

Նոր իշխանությունների առջև կանգնած էին բազում դժվար քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ խնդիրներ, որոնք պահանջում էին գործողությունների հստակ ծրագիր, խնդիրների լուծման առաջնայնություն, հաստատուն կամք և համբերատարություն: Անհրաժեշտ էր լուրջ նախադրյալներ ստեղծել միապետության հիմքերը արմատախիլ անելու, հասարակությունը վերափոխելու և Լիբիան զարգացման նոր ուղու վրա դուրս բերելու համար:

Հեղափոխական կառավարության 1969 թ. սեպտեմբերի 8-ի հայտարարության մեջ, որն առաջին կառավարական հայտարարությունն էր, և որը հիմնված էր ՀՀԽ-ի առաջին պաշտոնական հայտարարություններում ամրագրված տեսադրույթների վրա, ասվում էր, որ «Կառավարության քաղաքականությունը կլինի պարզ՝ ուղղված հեղափոխության նպատակների իրագործմանը, մեր ժողովրդի ազատության, սոցիալիզմի և միասնության վերաբերյալ հույսերի իրագործմանը: Մեր առջև դժվար ուղի է: Բայց մեր մարտնչող ժողովուրդը, համախմբվելով և աջակցելով հեղափոխությանը, ուժ ձեռք կբերի, որը մեզ ընդունակ կդարձնի հաղթահարելու դժվարությունները»:

ՀՀԽ-ի անդամները մեկնում էին Լիբիայի տարբեր շրջաններ, հանդիպում ունենում բնակչության հետ և նրանց բացատրում երկրի առջև կանգնած խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Սակայն դրա համար անհրաժեշտ էին սահմանադրական-իրավական նոր նորմեր, որոնք մի կողմից ամրապնդեին հանրապետության իրավական հիմքերը, իսկ մյուս կողմից՝ պայմաններ ստեղծեին հասարակության վերակառուցման համար: Նախկին՝ միապետական սահմանադրությունն իր դարն ապրել էր: Անհրաժեշտ էր նրանից ազատվել և երկրին տալ նոր սահմանադրություն: ՀՀԽ-ի որոշումով նախկին սահմանադրությունը կասեցվել էր և այլևս չէր գործում:

1969 թ. դեկտեմբերի 11-ին ՀՀԽ-ն հրապարակեց ժամանակավոր Սահմանադրական դեկլարացիա, որը սահմանադրության ուժ ուներ: Համաձայն դրա՝ Լիբիան հայտարարվեց հանրապետություն: Ճիշտ

է, հանրապետության հռչակումը տեղի էր ունեցել 1969 թ. սեպտեմբերի 1–ին, բայց դա արվել էր ՀՀԽ–ի անունից ռադիոյով: Այժմ Լիբիայի վերածումը հանրապետության ամրագրվում էր Սահմանադրական դեկլարացիայով, որն օրենքի ուժ ուներ: Նրանում ամրագրված էր նաև, որ ամբողջ օրենսդիր և գործադիր իշխանությունը պատկանում է ՀՀԽ–ին, այսինքն՝ նա դառնում էր երկրի բարձրագույն մարմինը: ՀՀԽ–ն օժտվում էր կառավարություն նշանակելու իրավունքով: Կառավարությունն ամբողջապես ենթակա էր ՀՀԽ–ին:

Սահմանադրական դեկլարացիան կանխագծում էր նաև Լիբիայի զարգացման հիմնական խնդիրները: Նրանում հռչակվում էր, որ Լիբիայի առջև կանգնած գլխավոր խնդիրը սոցիալիստական սկզբունքների վրա խարսխված հասարակության կառուցումն է, «համընդհանուր բարեկեցության հասարակության ստեղծումը՝ ոգեկոչված իսլամի և արաբական ազգի ժառանգությունով»:

Սահմանադրական դեկլարացիան պարունակում էր նաև մի շարք հոդվածներ, որոնցով երաշխավորվում էր բոլոր քաղաքացիների ազատությունը և հավասարությունն օրենքի առաջ, ձրի կրթությունը և արմատական սոցիալ–տնտեսական վերափոխումները:

Այսպիսով՝ Սահմանադրական դեկլարացիան հանդիսացավ նոր իշխանությունների ձևավորման և պետական–կառավարական համակարգի ստեղծման ավարտական փուլը: Մյուս կողմից՝ հիմնական օրենքի ուժ ունեցող այդ փաստաթուղթը սահմանեց Լիբիայի սոցիալ–տնտեսական վերափոխումների հիմնական ուղղությունները և սկզբունքները՝ հռչակելով, որ այդ հասարակությունը պետք է լինի իսլամի և արաբական նացիոնալիզմի հիմնադրույթների վրա խարսխված սոցիալիստական հասարակություն:

Եվ այդ պահից սկսած՝ իսլամն ու սոցիալիզմը, արաբական նացիոնալիզմը և սոցիալիզմը Լիբիայի պետական, քաղաքական և հասարակական կյանքում հանդես են գալիս ձեռք ձեռքի տված՝ կազմելով մի յուրատեսակ սիմբիոզ:

Ժողովրդական ամենալայն զանգվածներն իրենց պաշտպանությունն էին արտահայտում նոր իշխանություններին ու նրանց հռչակած սկզբունքներին: Նրանք միաժամանակ պահանջում էին ստեղծել հեղափոխական տրիբունալներ՝ պատժելու համար թագավորական վարչակազմի, կառավարության և անվտանգության մարմինների պատասխանատուներին: Իշխանությունները, ընդառաջելով ժողովրդական

այդ պահանջներին, 1971 թ. օգոստոսին դատական ցուցադրական պրոցես սկսեցին միապետական կառավարության 107 նախկին նախարարների և բարձրաստիճան պաշտոնյաների դեմ, որոնք ստացան տարբեր չափի պատիժներ: Սկսվեց պետական ապարատի զտումը, և ավելի քան 4 հազ. պաշտոնյաներ ազատվեցին աշխատանքից: Պետական ապարատի զտումը և պայքարը հակահեղափոխության դեմ դարձավ ամենաժողովրդական լոզունգներից մեկը: Ջուգահեռաբար առաջ քաշվեց պետական ապարատի և պաշտոնյաների գործունեության վրա վերահսկողություն սահմանելու պահանջը՝ անհրաժեշտ համարելով վարչական պաշտոններում նշանակել այնպիսի մարդկանց, որոնք ազնվորեն կծառայեն ժողովրդին: Օրվա գլխավոր պահանջներից մեկը դարձավ վարչական ապարատի և նավթային արդյունաբերության համար ազնիվ, նվիրված և կրթված մասնագետների պատրաստումը: Այդ բոլոր հարցերում ՀՀԽ–ն ընդառաջում էր ժողովրդին և ձգտում իրագործել նրա պահանջները:

Իշխանությունները անհրաժեշտ քայլերի դիմեցին ինչ–որ չափով բարելավելու ժողովրդի նյութական դրությունը, որը դարձել էր անհետաձգելի խնդիր: ՀՀԽ–ի 1969 թ. սեպտեմբերի որոշումով երկու անգամ բարձրացվեց ցածր վարձատրվող բանվորների, պաշտոնյաների և ծառայողների աշխատավարձը, սահմանվեց նվազագույն աշխատավարձի չափաքանակը: ՀՀԽ–ն արգելեց առաջին անհրաժեշտության ապրանքների գների բարձրացումը, իսկ սննդամթերքների գները զգալիորեն իջեցվեցին: Իջեցվեցին նաև բնակարանների վարձերը: Այդ բնագավառի համար կարևոր նշանակություն ունեցավ նաև «Աշխատանքի մասին» օրենքի ընդունումը 1970 թ. մայիսին, որով մտցվեցին վճարովի արձակուրդներ բանվորների և ծառայողների համար, սահմանվեցին կենսաթոշակներ և բարձրացվեցին աշխատավարձերը: Թույլատրվեց արհեստակցական միությունների գործունեությունը, որը, ինչպես նշվել է, արգելված էր միապետական Լիբիայում:

Բնակչության համար շատ կարևոր նշանակություն ունեցան նորամուծությունները նաև առողջապահության ոլորտում: Բուժումը, որը վճարովի էր, շատ թանկ հաճույք էր Լիբիայում, և բոլորին չէ, որ մատչելի էր: ՀՀԽ–ի մի շարք որոշումներով կիսով չափ կրճատվեցին բուժսպասարկման համար բնակչության կողմից կատարվող վճարումները: Ընդ որում՝ այդ օրենքը տարածվում էր նաև մասնավոր հիվանդանոցների վրա:

Լիբիայում մտցվեց պարտադիր և ձրի տարրական ուսուցում և որոշում ընդունվեց անգրագիտության վերացման համար: Սկսվեցին նոր դպրոցների կառուցում և ուսուցիչների պատրաստում:

Լիբիայում մեծ խանդավառությամբ ընդունվեցին նոր իշխանությունների քայլերը արաբական լեզվի գործածության դաշտն ընդարձակելու, երկրում արաբերենի դիրքերն ամրապնդելու և արաբերենն իրոք պետական լեզվի վերածելու ուղղությամբ: Տարրական ուսուցման ծրագրերից հանվեց անգլերենի ուսուցումը, որը, սակայն, պահպանվեց միջնակարգում: Ճանապարհների վրա և բնակավայրերում գտնվող ամեն տեսակի ցուցանակները, որոնք գրված էին օտար լեզուներով, փոխարինվեցին արաբերենով: Նույնիսկ օրենք ընդունվեց, որ բոլոր փոստանիշերը, ծանուցումները, տոմսերը և նման այլ նյութերը տպագրվեն միայն արաբերենով: Լիբիացիների համար այդ միջոցառումները նաև ազգային արժանապատվության հարց էին:

Շարունակելով միապետության արմատների արմատախիլ անելու քաղաքականությունը՝ ՀՀԽ–ի որոշումով բռնագրավվեց թագավորին, նրա ընտանիքի անդամներին, ինչպես նաև նախկին մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներին պատկանող ունեցվածքը, այդ թվում և նրանց պատկանող կապիտալը: Իրենց այդ քայլը նոր իշխանությունները բացատրում էին այն հանգամանքով, որ դրանք ոչ օրինական ճանապարհով, թալանով, կաշառակերությամբ, խաբեբայությամբ, պաշտոնական դիրքի չարաշահումով կուտակված հարստություն էին: Այդ բռնագրված ամբողջ ունեցվածքն անցավ պետության տնօրինության տակ:

ՀՀԽ–ի կողմից ընդունված օրենքների մեջ կարևոր էր նաև 1970 թ. հուլիսին ընդունված «Լիբիական ժողովրդին նրանից խլված սեփականությունը վերադարձնելու մասին» օրենքը: Դա վերաբերում էր Լիբիայում գտնվող 25 հազ. իտալական կոլոնիստներին, որոնցից բռնագրավվեցին նրանց տրամադրության տակ գտնվող հողերը, կառույցները, մեքենաները՝ ելակետ ունենալով այն մոտեցումը, որ դրանք լիբիացիներին պատկանող հողեր էին, որոնք ժամանակին լիբիացիներից բռնագրավել էին իտալական գաղութարարները:

Թագավորական ընտանիքից և իտալական կոլոնիստներից բռնագրված հողերը, ավելի քան 50 հազ. հա, հանձնվեցին գյուղատնտեսության և ագրարային ռեֆորմների նախարարությանը, որն այնուհետև բաժանվեց գյուղացիներին: Լիբիական իշխանություններն ագրարային հարաբերությունների ոլորտում կիրառում էին «Հողը նրան, ով

այն մշակում է» սկզբունքը: Իշխանություններն իրենց կարևոր խնդիրներից մեկը համարում էին գյուղատնտեսության զարգացումը՝ նպատակ ունենալով երկիրն ապահովել սեփական գյուղատնտեսական մթերքներով: Այդ բնագավառում զգալի դերակատարում ունեցավ 1970 թ. ստեղծված Ագրարային ռեֆորմի և անմշակ հողերի համընդհանուր կազմակերպությունը: Լայն ծավալ ստացան ոռոգման և մելիորացիայի աշխատանքները, ճանապարհների կառուցումը, որը հեշտացրեց կապը օազիսների և քաղաքների միջև և գյուղատնտեսկան մթերքների վաճառքը քաղաքներում: Նշանակալիորեն աճեց գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, որը հնարավորություն տվեց իշխանություններին զգալիորեն կրճատել նրանց ներմուծումը:

Եվ վերջապես՝ անհրաժեշտ է նշել այն հանգամանքը, որ Լիբիայում մտցվեց տնտեսության զարգացման պլանավորման սկզբունքը, որը պարտադիր էր տնտեսության թե՛ պետական և թե՛ մասնավոր սեկտորի համար: Լիբիական իշխանություններն այդ հարցին մեծ կարևորություն էին տալիս: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ Պլանավորման գերագույն խորհուրդը գլխավորեց Մուամմար Կադաֆին:

Փոփոխություններ տեղի ունեցան նաև օրենսդրության բնագավառում: 1974 թ. ընդունվեցին մի շարք օրենսդրական ակտեր, որոնք հիմնված էին մուսուլմանական իրավունքի՝ շարիաթի վրա: Նրա սկզբունքների համաձայն՝ պետք է կարգավորվեին ընտանիքի, ամուսնության, ամուսնալուծության, ժառանգության և այլ հարցեր: Օրենսդրական ակտերից մեկը վերաբերում էր ոգելից խմիչքների արտադրությանը, ներմուծմանը և օգտագործմանը, որի համար սահմանվում էին խիստ պատիժներ:

Հերթը հասավ նաև օտարերկյա նավթային ընկերություններին: Այդ բնագավառում իշխանություններն իրենց գլխավոր խնդիրը համարեցին վերահսկողության ուժեղացումը նավթային ընկերությունների վրա, նավթային եկամուտների աճի ապահովումը, որը կոչված էր իր հերթին ապահովել տնտեսական ծրագրերի ֆինանսավորումը: Այդ ուղղությամբ 1970–1973 թթ. ընդունվեցին մի շարք կարևոր որոշումներ: Պետությունն իր վերահսկողության տակ վերցրեց նավթավերամշակումն ամբողջ Լիբիայի տարածքում, ազգայնացրեց «Էսսո», «Շելլ» և «Աջիպ» նավթային ընկերություններին պատկանող բենզակայանները: Ապա պետական վերահսկողություն հաստատվեց նավթի արդյունահանման վրա: ՀՀԽ–ն 1971 թ. առաջին ծանր հարվածը հասցրեց Լիբի-

այում գործող օտարերկրյա նավթային ընկերություններին՝ ազգայնացրեց «Բրիտիշ պետրոլեում կոմպանին» և բրիտանական բանկերից հանեց իր հաշիվները:

Լիբիայում կարևոր փոփոխություններ տեղի ունեցան նաև հասարակական–քաղաքական ոլորտում: Լիբիայում դեռևս միապետության շրջանից արգելված էին քաղաքական կազմակերպությունները: Նոր իշխանություններն այդ արգելքը չվերացրին: Սակայն, հետևելով Եգիպտոսի օրինակին, ՀՀԽ–ի 1971 թ. սեպտեմբերի 11–ի դեկրետով հիմնվեց Արաբական Սոցիալիստական Միությունը՝ ԱՍՄ–ն, որը պետք է ծառայեր մասսաներին հեղափոխական գործընթացների մեջ ներգրավելու, նրանց մոբիլիզացնելու և ակտիվացնելու խնդիրներին: Ավելի լայն առումով՝ այն կոչված էր իրականացնելու երեք կարևոր խնդիրներ, որոնք ձևակերպված էին 1972 թ. ընդունված նրա ծրագրային փաստաթղթերում:

Առաջին՝ այն պետք է նպաստեր լիբիական հեղափոխության սոցիալական բազայի ընդլայնմանը: Դա շատ պարզ երևում է այն դրույթից, որ ԱՍՄ–ն, իր կանոնադրության համաձայն, բնութագրված է որպես «աշխատավոր ժողովրդի՝ բանվորների, գյուղացիների, հեղափոխական մտավորականության և չշահագործող ազգային կապիտալի դաշինք»: Հենց այդ ուժերը և սոցիալական խավերն էլ կազմելու էին Լիբիայի նոր վարչակարգի սոցիալական հենարանը:

Երկրորդ՝ ներքին քաղաքականության բնագավառում այն պետք է պայքարեր «իսլամական սոցիալիզմի հաղթանակի համար»:

Երրորդ՝ արտաքին քաղաքականության բնագավառում նրա հիմնական խնդիրն էր պայքարը արաբական միասնության իրականացման համար:

1972 թ. կայացած ԱՍՄ–ի հիմնադիր համագումարում Կադաֆին ընտրվեց նրա նախագահ:

Այսպիսին էին ընդհանուր գծերով լիբիական հեղափոխության խնդիրները, ծրագրերը և զարգացման հիմնական ուղղությունները, որոնք անհրաժեշտ հող նախապատրաստեցին հեղափոխության զարգացման հաջորդ փուլին անցնելու համար:

3. Հարաբերություններն արաբական երկրների հետ և միավորման լիբիական փորձերի ձախողումը

Նախքան լիբիական հեղափոխության նոր փուլի լուսաբանությանն անցնելը, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել Լիբիական

Արաբական Հանրապետության արտաքին քաղաքականության մի քանի հարցերի վրա:

Լիբիայի արտաքին քաղաքականության մեջ սեպտեմբերյան հեղափոխության սկզբնական շրջանում շատ հստակորեն դրսևորվում էր երկու բնագավառ՝ հարաբերություններ արաբական երկրների հետ և հարաբերություններ արևմտյան երկրների հետ: Երկուսն էլ այդ պահին ունեին կենսական նշանակություն նորաստեղծ հանրապետության համար, որի ճակատագիրը և ազգային անվտանգությունը զգալիորեն կախված էր այդ հարաբերությունների բնույթից:

ՀՀԽ–ի ընդունած որոշումներում և Կադաֆիի բազմաթիվ հայտարարություններում արաբական միասնությունը համարվում էր ազգային արտաքին քաղաքականության ամենագերակա ուղղությունը: Ձեռնամուխ լինելով հեղափոխության իրականացմանը և ապավինելով իրենց սեփական ուժերին՝ լիբիական նոր ղեկավարները միաժամանակ գիտեին և համոզված էին, որ միապետության տապալման և Լիբիայի անկախության համար պայքարում իրենք միայնակ չէին լինելու և կարող էին ապավինել արաբական երկրների օգնությանը: Նրանք առաջին հերթին նկատի ունեին արաբական այն երկրները, որոնք վարում էին ակտիվ հակաիմպերիալիստական քաղաքականություն, ինչպես Եգիպտոսը, Սիրիան, Իրաքը, Եմենի Ժողովրդա–Դեմոկրատական Հանրապետությունը, Սուդանը և այլն: Դրանք արաբական այն երկրներն էին, որոնք ժամանակին բազմիցս քննադատել էին Իդրիս I–ի արևմտամետ քաղաքականությունը: Եվ առաջ անցնելով պետք է նշենք, որ արաբական վերոնշյալ երկրները չհիասթափեցրին Մուամմար Կադաֆիին և նրա զինակիցներին:

Հեղափոխության հաղթանակի հաջորդ օրը՝ սեպտեմբերի 2–ին, Լիբիական Արաբական Հանրապետությունը ճանաչեցին Եգիպտոսը, Իրաքը, Սիրիան և Սուդանը: Շուտով նրանց միացան նաև Ալժիրը, Եմենի Արաբական Հանրապետությունը, Եմենի Ժողովրդա–Դեմոկրատական Հանրապետությունը, Թունիսը, Լիբանանը և Մավրիտանիան: Արաբական երկրների բարյացակամ դիրքորոշումը, նրանց պատրաստակամությունը՝ օգնություն ցույց տալու նորաստեղծ հանրապետությանը, նպաստեցին նոր վարչակարգի դիրքերի ամրապնդմանը երկրի ներսում և կարևոր դեր խաղաց Լիբիայի դիրքերի ամրապնդման համար ոչ միայն արաբական աշխարհում, այլև ընդհանրապես միջազգային հարաբերություններում:

Լիբիական միապետական ուժերը հասկացան, որ նրանք դրսից՝ արաբական երկրներից որևէ օգնություն չեն կարող ստանալ և շատ արագությամբ համակերպվեցին նոր իրադրությանը:

Լիբիայի նոր ղեկավարությունը, հավատարիմ արաբական միասնության վերաբերյալ իր դեկլարացիաներին, դիմեց մի շարք քայլերի՝ արաբական միասնությունը գործնականորեն կիրառելու ուղղությամբ:

Լիբիայի ղեկավարությունը արաբական միասնությունը մեկնաբանում էր նախ և առաջ որպես միասնություն պետական մակարդակով, այսինքն՝ արաբական պետությունների միավորման հիմքի վրա ստեղծել նոր, հզոր և լայնածավալ արաբական պետություն: Լինելով այդ տեսակետի մոլի ջատագով՝ Մուամմար Կադաֆին իր կառավարման առաջին տարիներին բավականին եռանդուն քայլերի դիմեց արաբական միասնությունն իր պատկերացրած ձևով իրագործելու ուղղությամբ:

Նա այդ խնդրում նախապատվությունը տալիս էր նասերական Եգիպտոսին: Մենք արդեն նշել ենք երիտասարդ Կադաֆիի հիացական վերաբերմունքը Նասերի նկատմամբ:

1969 թ. դեկտեմբերին՝ սեպտեմբերյան հեղափոխությունից մոտ երկու ամիս անց, Տրիպոլի ժամանեցին Եգիպտոսի պրեզիդենտ Գամալ Աբդել Նասերը և Սուդանի վարչապետ Ջաֆար Նիմեյրին, որոնք բանակցություններ վարեցին Կադաֆիի հետ: Դրա արդյունքում եռյակը ստորագրեց «Տրիպոլյան խարտիան»՝ արաբական միասնական պետություն ստեղծելու մասին, որին 1970 թ. նոյեմբերին միացավ Սիրիան: Ի զարգացումն այդ փաստաթղթում արձանագրված դրույթների՝ 1971 թ. ապրիլի 17–ին Եգիպտոսը, Սիրիան և Լիբիան Կահիրեում ստորագրեցին հռչակագիր Արաբական հանրապետությունների ֆեդերացիայի ստեղծման մասին: Սակայն այդ որոշումը մնաց թղթի վրա: Նասերի մահվանից հետո նրան փոխարինած Անվար Սադաթը ընդհանրապես սառն էր վերաբերվում միավորման գաղափարին:

Սակայն անխոնջ Կադաֆին չէր հուսահատվում և 1972 թ. օգոստոսին Բենգազիում Անվար Սադաթին ուղղակի պարտադրեց ստորագրել փաստաթուղթ մեկ տարվա ընթացքում Եգիպտոսի և Լիբիայի միաձուլման մասին: Սադաթն իր ստորագրությունն այդ փաստաթղթի տակ դնելուց հետո, ոչինչ չարեց նրա իրագործման համար, և այդ փաստաթուղթն էլ արժանացավ նախորդի ճակատագրին:

Հիասթափված Կադաֆին դեմքով շրջվեց դեպի Ալժիր ու Թունիս և երկու փորձ արեց՝ միավորվելու նրանց հետ, բայց այստեղ նույնպես հաջողությունը նրան չուղեկցեց:

Այդ և միասնության հասնելու Կադաֆիի հետագա բոլոր փորձերի ձախողումը խոսում էր այն մասին, որ այդ գաղափարով խանդավառված, բայց մեծ քաղաքականությանը և նրա նրբություններին ոչ բավարար չափով տեղյակ լիբիական լիդերը հստակ պատկերացում չուներ այդ հարցում արաբական աշխարհում տիրող իրողությունների մասին: Արաբական միասնության գաղափարը՝ որպես գաղափար, շարունակում էր մնալ գրավիչ արաբների համար: Բայց գործնականում տեղի էին ունեցել մեծ տեղաշարժեր արաբական աշխարհում: Մասնավորապես, ձևավորվել և ամրապնդվել էին առանձին արաբական պետություններ՝ **իրենց ուրույն ազգային–պետական շահերով և հետաքրքրություններով,** որտեղ քաղաքական նոր էլիտան ոչ միայն պատրաստ չէր միավորմանը պետական մակարդակով, այլև դեմ էր դրան և չէր ցանկանում հրաժարվել այն առավելություններից ու առանձնաշնորհումներից, որ նրանց տալիս է անկախ պետությունը: Դեռ ավելին՝ արաբական պետությունների միջև ծագում էին հակասություններ, անգամ տերիտորիալ պահանջներ, որոնք երբեմն նույնիսկ հանգեցնում էին նրանց միջև ռազմական բախումների և պատերազմական գործողությունների: Նման պայմաններում արաբական պետությունների միավորման պահանջն ավելի շատ զգացմունքային ոլորտին, քան թե իրատես քաղաքականության մարզին էր պատկանում:

Ավելի իրատեսական և հասանելի է թվում արաբական համերաշխության հաստատումը կոնկրետ առանցքային հարցերի շուրջը, թեև այդ խնդիրը ևս ունի իր դժվարությունները, և ինչպես ցույց է տալիս արաբական երկրների վերջին տասնամյակների պատմությունը, համերաշխության դրսևորումը նույնպես շատ հեռու է բավարար լինելուց[24]:

Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ սեպտեմբերյան հեղափոխությունը Լիբիայում ոչ բոլոր արաբական երկրներն ընդունեցին խանդավառությամբ կամ թեկուզ ուրախությամբ: Դրանց մեջ էր առաջին հերթին Սաուդյան Արաբիան, որը չողջունեց միապետության տապալու-

24 Այս հարցի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս **N. H. Hovhannesian**, Irregularities in the Development of Arab Countries and Their Consequences (1950–1970s), Proceedings of the XXXII International Congress for Asian and North African Studies. Hamburg, Franz Steiner Verlag, Stuttgart, 1992, p. 450–451:

մը Լիբիայում, և նրա դեսպանը հեղափոխությունից մի քանի օր անց հեռացավ Տրիպոլիից: Հարաբերությունները հարթ չէին դասավորվում նաև Լիբանանի հետ:

Սակայն, ընդհանուր առմամբ, արաբական աշխարհի դիրքորոշումը բարենպաստ էր Լիբիայի համար, և դա իր դրական դերը խաղաց հեղափոխության հաղթանակի գործում: Համենայն դեպս, արաբական ոչ մի երկիր թույլ չտվեց Լիբիայի դեմ ինտերվենցիայի գաղափարն իսկ:

4. «Լիբիական Արաբական Հանրապետությունը Լիբիայի թագավորությունը չէ, Անգլիան էլ Բրիտանական կայսրությունը չէ, որի վրա արևը մայր չի մտնում»

Հեղափոխությունից հետո Լիբիայի նոր իշխանությունների առջև իր ողջ ծանրությամբ կանգնեց օտարերկրյա՝ անգլիական և ամերիկյան ռազմական բազաների վերացման և Լիբիայից նրանց ռազմական ուժերի դուրսբերման դժվարագույն հարցը, որի լուծումից էր կախված Լիբիայի անկախության և ազատության ամբողջականացման ստրատեգիական հարցը: Եվ Լիբիայի նոր ղեկավարությունը չվարանեց հստակորեն հնչեցնել իր դիրքորոշումն այդ կարևոր հարցի նկատմամբ:

1969 թ. հոկտեմբերին ՄԱԿ–ում Լիբիայի մշտական ներկայացուցիչը Գլխավոր ասամբլեայի նիստում հայտարարեց, որ Լիբիան մտադիր է վերացնել իր տարածքում գտնվող օտարերկրյա ռազմական բազաները: Դա առաջին լուրջ ազդանշանն էր, որ Տրիպոլին ուղարկեց Լոնդոնին և Վաշինգտոնին: Դրան հետևեց Մուամմար Կադաֆիի ելույթը հոկտեմբերի 16–ին՝ Տրիպոլիում կայացած բազմահազարանոց միտինգում, որի ժամանակ լիբիական առաջնորդը հստակորեն շարադրեց պաշտոնական Լիբիայի տեսակետը օտարերկրյա բազաների հարցում. «Սեպտեմբերի 1–ի իրադարձություններից հետո Լիբիայի ժողովուրդն այլևս չի ցանկանում ապրել օտարերկրյա բազաների կողքին: Լիբիայի զինված ուժերը նույնպես չեն ցանկանում տեսնել իրենց տերիտորիայում գաղութարարների բազաները: Մեր երկրում այդ բազաների ճակատագիրը պարզ է. մենք համաձայն չենք նրանց ներկայության հետ: Դա հասկանում է և՛ թշնամին, և՛ բարեկամը: Մենք, ինչ էլ որ լինի, կազատագրենք մեր հողերը օտարերկրյա բազաներից, օտարերկրյա զինված ուժերից: Օտարերկրյա բազաների դուրսբերումը հանդիսանում է մեր ազատության հիմնական պայմանը: Լիբիայի

ազատությունը կլինի սահմանափակված այնքան ժամանակ, քանի դեռ մեկ օտարերկրացի գրավում է մեր հողի մի մասը»: Շատ կարևոր ու տպավորիչ էին Կադաֆիի ելույթի եզրափակիչ խոսքերը, որտեղ նա նշեց, որ եթե անհրաժեշտ լինի, ապա լիբիական ժողովուրդը զենք կվերցնի, բոլոր դպրոցները և հիմնարկությունները կվերածվեն զորանոցների, իսկ տները՝ խրամատների:

Ավելորդ է ասել, որ ժողովուրդը չտեսնված խանդավառությամբ էր ընդունում իր առաջնորդի խոսքերը:

Հոկտեմբերի 31–ին Լիբիայի կառավարությունը նոտաներ հղեց ԱՄՆ–ի և Մեծ Բրիտանիայի դեսպանություններին՝ պաշտոնապես պահանջելով այդ երկու երկրներից, որ նրանք վերացնեն իրենց բազաները և զորքերը դուրս բերեն Լիբիայից: Եվ վերջիններս ստիպված էին նահանջել ու լիբիացիների հետ նստել բանակցությունների սեղանի շուրջը:

1969 թ. դեկտեմբերի 8–ին լիբիական Տոբրուկ քաղաքում սկսվեցին լիբիա–անգլիական բանակցությունները: Անգլիական պատվիրակությունը գլխավորում էր Լիբիայում բրիտանական դեսպան Դոնալդ Մեյթլանդը, իսկ լիբիական պատվիրակությունը՝ Կադաֆիի մերձավորագույն զինակից, ՀՀԽ–ի անդամ, կապիտան Աբդել Սալամ Ջելուդը, որը հետագայում բազմիցս գրավեց վարչապետի պաշտոնը:

Կարևորելով այդ բանակցությունների նշանակությունը՝ առաջին նիստը բացեց ՀՀԽ–ի նախագահ Մուամմար Կադաֆին: Դիմելով բանակցությունների մասնակիցներին՝ նա ասաց, որ քննարկման առարկա կարող է լինել միայն և միայն բազաների վերացման և անգլիական զորքերի դուրսբերման հարցը: Այնուհետև նա անդրադարձավ մի շարք կարևոր հարցերի, դրանց վրա հրավիրելով հատկապես անգլիական կողմի ուշադրությունը: Լիբիական լիդերը շեշտեց, որ ժամանակները փոխվել են և «Լիբիական Արաբական Հանրապետությունը Լիբիայի թագավորությունը չէ, Անգլիան էլ Բրիտանական կայսրությունը չէ, որի վրա արևը մայր չի մտնում»: Նա շեշտեց, որ Լիբիայի ռազմական օկուպացիան անընդունելի է Լիբիայի համար և առաջացնում է լիբիացիների ատելությունը, Լիբիայի ազատությունը կոտնահարվի, քանի դեռ գեթ մեկ օտարերկրացի զինվոր կմնա նրա տերիտորիայում և այլն: Հուզված Կադաֆին վերջում, դիմելով անգլիացիներին, բացականչեց. «Հեռացե՛ք ձեր երկիրը»:

Իր պատասխան խոսքում Դոնալդ Մեյթլանդը նշեց, որ Անգլիան շահագրգռված է հաջողությամբ ավարտել այդ բանակցությունները և Լիբիայի հետ հարաբերություններ հաստատել ու զարգացնել նոր հիմքի վրա: Անգլիական կողմը համաձայնվեց փակել իր բազաները և իր զորքերը դուրս բերել Լիբիայից: Անգլիան դա իրագործեց 1970 թ. մարտի 28–ին, երբ ավարտվեց նրա զորքերի հեռացումը Լիբիայից:

1969 թ. դեկտեմբերի 15–ին Տրիպոլիում սկսվեցին լիբիա–ամերիկյան բանակցությունները, որոնք նույնպես հաջողությամբ ավարտվեցին: 1970 թ. հունիսի 11–ին ամերիկյան վերջին զինվորը հեռացավ Լիբիայից:

Լիբիայի տարածքում չմնաց որևէ օտարերկրյա ռազմական բազա և գեթ մեկ օտարերկրյա զինվոր:

Լիբիայի ազատագրումը օտարերկրյա կապանքներից դարձավ պատմական իրողություն:

V. ԶԱՄԱՀԻՐԻՑԱ

1. Կադաֆիի «Երրորդ ունիվերսալ տեսությունը»

Կադաֆին, ղեկավարելով միապետության տապալման, Լիբիական Արաբական Հանրապետության ստեղծման և օտարերկրյա բազաների վերացման ու երկիրը օտարերկրյա կապանքներից վերջնականապես ազատագրելու գործընթացները, որոնք, ընդհանուր առմամբ լուծվեցին հաջողությամբ, այնուհետև 1970–ական թվականների կեսերից կենտրոնացավ լիբիական պետության և հասարակության վերնից ներքև արմատականորեն վերակառուցելու և երկրի սոցիալ–տնտեսական վերափոխումները նոր հիմքերի վրա դնելու առանցքային նշանակություն ունեցող խնդիրների վրա:

1974 թ. ապրիլի 5–ին Լիբիայի ղեկավարությունն ընդունեց հատուկ որոշում Կադաֆիի վերաբերյալ, որտեղ ասված էր, որ նա թեև պահպանում է լիբիական պետության ղեկավարի և զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնները, գործնականում ազատվում է քաղաքական և վարչական պարտականություններից, որպեսզի կարողանա իրեն ամբողջապես նվիրել գաղափարական և տեսական խնդիրների մշակմանը և մասսաներին կազմակերպելու գործին: Այդ հարցին

այնպիսի մեծ կարևորություն էր տրվում, որ որոշման մեջ նշված էր, որ Կադաֆին ազատվում էր նաև արարողական–ծիսակատարողական պարտականություններից: Այդ մասին եղավ պաշտոնական հայտարարություն և տեղյակ պահվեց Լիբիայի բնակչությունը:

Նման որոշումը պատահական չէր:

Միապետության տապալումից հետո ստեղծված պետական և կառավարական նոր մարմինների գործունեությունն արդյունավետ չէր և սպասված արդյունքները չէր տալիս: Չհաջողվեց մինչև վերջ վերացնել դիմադրական ուժերի գաղտնի գործունեությունը և կասեցնել նրանց բացահայտ մարտահրավերները նորաստեղծ վարչակարգին ու նրա ղեկավար Կադաֆիին, որի վկայություններն էին երկու դավադրությունները, որ կազմակերպվեցին 1969 թ. դեկտեմբերին և 1970 թ. մայիսին:

Հետաքրքիրն այն է, որ 1969 թ. դավադրության գլուխ կանգնած էր հեղափոխական առաջին կառավարության պաշտպանության նախարար Ա. Հավվազը, որին այդ պաշտոնում նշանակել էր ՀՀԽ–ն: Իսկ երկրորդ դավադրությունը կազմակերպել էին միապետականները, որը գլխավորում էր նախկին թագավորական ընտանիքի անդամներից մեկը՝ Ա. Սանուսին: Ճիշտ է, երկու դավադրություններն էլ ձախողվեցին, և նրանց կազմակերպիչները դաժանորեն պատժվեցին, բայց փաստը մտահոգիչ էր: Առավել ևս, որ դրանից հետո ևս եղան Կադաֆիի դեմ ուղղված մի քանի մահափորձեր: Նկատի ունենք 1975 թ. հունիսի մահափորձը, երբ զինվորական շքերթի ժամանակ կրակոցներ արձակվեցին ամբիոնում կանգնած և շքերթն ընդունող Կադաֆիի կողմը: Իսկ երկու ամիս անց՝ 1975 թ. օգոստոսին, պետական հեղաշրջման բացահայտ փորձ կատարվեց: Այդ վերջինն ուշագրավ էր այն առումով, որ նա ղեկավարում էր երկրի բարձրագույն մարմնի՝ Հեղափոխական հրամանատարության խորհրդի անդամ Օ. Մոխեյշին, իսկ մասնակիցները բանակի սպաներն էին:

Լիբիայում դրությունը միանգամայն անբավարար էր նաև սոցիալական և տնտեսական ոլորտներում: Չնայած նոր իշխանությունների գործադրած ջանքերին և ծեռնարկած միջոցառումներին, Լիբիան շարունակում էր մնալ տնտեսապես հետամնաց ու աղքատ երկիր: Տեղաշարժերն այդ ոլորտներում շատ դանդաղ էին ընթանում, իսկ ժողովրդի, նրա աշխատավոր խավերի նյութական վիճակը մնում էր ծանր: Չկար տնտեսության վերակառուցման, հետամնացության հաղթահարման,

զարգացման և առաջադիմության հստակ հայեցակարգ: Ճիշտ է, իշխանության գլուխ եկած Կադաֆին և նրա գործընկերներն առաջին օրվանից խոսում էին իսլամական արժեքների, անգամ իսլամական սոցիալիզմի մասին, բայց դրանք առանձին հայտարարություններ էին, և ոչ հասարակության սոցիալական և տնտեսական վերակառուցման վերաբերյալ մշակված, կուռ և ամբողջական տեսություն:

Եվ ահա, Կադաֆիի առջև կանգնած էր Լիբիայի պետական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, կրթական և մշակութային ամբողջ համակարգը արմատական վերակառուցման ենթարկելու համար նոր հայեցակարգի մշակման խնդիրը: Անհրաժեշտ էին նոր սկզբունքներ և մոտեցումներ, որոնք բխեին արաբական և իսլամական արժեքներից և համապատասխանեին ժամանակակից պահանջներին: Դա անհրաժեշտ էր նաև երկրի ներսում կայունություն ստեղծելու և ամեն տեսակ դավադրությունների դեմն առնելու տեսանկյունից:

Կադաֆին 1976 թ. լքեց մայրաքաղաքը և քաշվեց անապատ, որտեղ բեդվինական վրանի տակ անցկացրեց ամիսներ: Նա լրիվ մեկուսացել էր, և անգամ նրա ամենամտերիմները չգիտեին, թե առաջնորդն ինչ է անում: Իսկ նա այդ ընթացքում մտածում էր Լիբիայի ապագայի, նրա կառուցվածքի, նրա զարգացման ուղիների մասին և կատարում գրառումներ, որոնց մասին ոչ ոք գաղափար չուներ:

Անապատից վերադառնալով Տրիպոլի՝ նա Լիբիայի ժողովրդին գրավոր ներկայացրեց իր երկարատև մտորումների արդյունքները:

Այսպես լույս աշխարհ եկավ Մուամմար Կադաֆիի «Երրորդ ունիվերսալ կամ համաշխարհային տեսությունը»: Այն առաջին անգամ Կադաֆին շատ թռուցիկ կերպով նարկայացրել էր դեռևս 1973 թ., որի վրա, սակայն, ուշադրություն չէր դարձվել, և շատերն անգամ չէին հիշում այդ մասին: Նա այդ տեսության հիմնադրույթները մշակեց և որպես մեկ ամբողջական հայեցակարգ ներկայացրեց 1976–1979 թթ. լույս տեսած իր «Քիթաբ ալ–Ախտար»՝ «Կանաչ գիրք» խորագրով երեք գրքույկներում:

Պատահականություն չէր, որ գիրքը կոչվում էր կանաչ և հրատարակված էր կանաչ կազմով: Դա բացատրվում է նրանով, որ այդ «Երրորդ ունիվերսալ տեսությունն» ամբողջապես ներծծված էր իսլամով, իսլամական գաղափարներով և հիմնադրույթներով, իսկ կանաչ գույնը իսլամի խորհրդանիշ–գույնն է: Հիշենք, որ իսլամի հիմնադիր մարգարե

Մուհամմադի և նրան հաջորդած խալիֆաների արշավանքները տեղի էին ունենում իսլամի կանաչ դրոշների ներքո[25]:

Կադաֆին իր տեսությունն անվանեց «Երրորդ համաշխարհային կամ ունիվերսալ տեսություն»՝ ի հակադրություն հասարակության կառուցման կապիտալիստական և կոմունիստական տեսությունների, որոնք նա ժխտում էր: Նա չէր ընդունում կապիտալիստական տեսությունը՝ գտնելով, որ կապիտալիստական հասարակությունը հիմնված է մարդու և ժողովուրդների շահագործման սկզբունքի վրա: Իսկ կոմունիստական տեսությունը նրա համար ընդունելի չէր, քանի որ նրանում տեղ չկար մարդու ազատության համար, որովհետև պետությունը սահմանափակում, ուղղակի ճզմում է մարդուն, նրա անհատական ազատությունը:

Ելակետ ունենալով այդ մոտեցումները և ժխտելով գոյություն ունեցող և աշխարհի մեծ մասում տիրապետող հանդիսացող այդ երկու տեսությունները՝ նա առաջ էր քաշում իր՝ «երրորդ»՝ իսլամական դրույթների վրա խարսխված կամ իսլամի էությունից ու պրակտիկայից բխող տեսությունը: Ընդ որում՝ նա գտնում էր, որ իր այդ տեսությունը կիրառելի է ոչ միայն Լիբիայի, այլև «Երրորդ աշխարհի», այսինքն՝ Աֆրիկայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի զարգացող բոլոր երկրների համար:

Կադաֆին իր «Կանաչ գրքում» քննարկում է երրորդ տեսության քաղաքական, տնտեսական և սոցիալական բաղադրիչները:

Առաջին գրքում, որը կրում է «Դեմոկրատիայի հիմնախնդրի լուծումը: Ժողովրդի իշխանությունը» խորագիրը, քննարկվում են կառավարման և դրանց ժողովրդի մասնակցության հարցերը, որի մեջ նա մեծ տեղ է հատկացնում պառլամենտի հարցին:

Կադաֆին նշում է. «Պառլամենտը ավանդական դեմոկրատիայի ողնաշարն է՝ ինչպես դա գոյություն ունի այսօր: Սակայն պառլամենտը

25 1985 թ. կառավարական պատվիրակության կազմում եղանք Լիբիայում, որտեղ մեզ ընդունեց երկրի բարձրագույն ղեկավարությունը: Մենք զարմացած էինք կանաչ գույնի բացարձակ տիրապետությունից Տրիպոլիում և երկրի այլ վայրերում: Այդ գույնը զանազան կերպարանավորումներով ներկա էր ամենուր՝ փողոցներում, շուկաներում և խանութներում, հյուրանոցներում, սրճարաններում և մատ՛ամներում (ճաշարան–ռեստորաններում), կառավարական և հասարակական շենքերում, կահույքի պաստառների վրա և այլն: Ամեն կողմից մարդու վրա նայում էին կանաչ շրջանակների մեջ առնած Կադաֆիի տասնյակ հազարավոր նկարները: Անգամ Տրիպոլիի կենտրոնական ընդարձակ հրապարակի ասֆալտը ներկված էր կանաչ գույնով:
Այցի ընթացքում մեր հյուրընկալները մեզ նվիրեցին Կադաֆիի «Կանաչ գրքի» օրինակներից և Կորանի կանաչ կազմով մի շքեղ հրատարակություն:

ժողովրդի կեղծ ներկայացուցչություն է, և պառլամենտական կառավարությունները կեղծ ուղիով են առաջնորդում դեպի դեմոկրատիայի լուծումը: Պառլամենտը ի սկզբանե հիմնվել է ժողովրդին ներկայացնելու համար, բայց այն ինքնին հակադեմոկրատական է, քանի որ դեմոկրատիա նշանակում է ժողովրդի իշխանություն և ոչ թե նրա անունից գործող իշխանություն: Պառլամենտի սոսկ գոյությունը նշանակում է ժողովրդի բացակայություն, բայց իսկական դեմոկրատիան գոյություն ունի միայն ժողովրդի մասնակցության միջոցով, սակայն ոչ նրա ներկայացուցիչների գործունեության միջոցով: Պառլամենտները լեգալ արգելքներ են ժողովրդի և իշխանության իրագործման միջև՝ բացառելով ժողովրդին իշխանությունից՝ նրա փոխարեն բռնազավթելով ինքնիշխանությունը»: Եվ Կադաֆին ձևակերպում է «Երրորդ ունիվերսալ տեսության» կարևոր հիմնադրույթներից մեկը. «Ո՛չ մի ներկայացուցչություն՝ ժողովրդի փոխարեն»:

Կադաֆին ժխտում է նաև կուսակցությունների անհրաժեշտությունը՝ որպես կառավարման գործիք՝ նշելով, որ դա պառակտում է հասարակությունը: Նա կուսակցական սկզբունքների վրա կառուցված կառավարությունները նույնիսկ այն դեպքում, երբ տվյալ կուսակցությունը բացարձակ հաղթանակ է տարել ընտրությունների ժամանակ, համարում է փոքրամասնության դիկտատուրա մեծամասնության վրա և ժողովրդին իրական իշխանությունից զրկելու միջոց: Նա կուսակցական կառավարությունը համեմատում է ցեղերի կառավարման հետ՝ համարելով դա անթույլատրելի և հակաժողովրդական: Տարբերությունը միայն նրանում է, որ ցեղի պարագայում մարդկանց միավորողը արյունակցական կապն է, որի ժամանակ տվյալ արյունակցական կապով համախմբված մի ցեղը տիրապետում և իրեն է ենթարկում մնացյալ ցեղերին, որոնք կազմում են մեծամասնություն, իսկ կուսակցական կառավարության պարագայում նրանց միավորողը բնակչության փոքրամասնությունը կազմող կուսակցության մեջ համախմբված ուժերի քաղաքական, տնտեսական և այլ շահերն են և այդ ուղիով նրանց՝ փոքրամասնության դիկտատուրայի հաստատումը երկրի բնակչության մեծամասնության վրա:

Այստեղ նա մի ուշագրավ փաստարկ էլ է բերում՝ դարձյալ կապված ընտրությունների և պառլամենտարիզմի հետ: Նա գրում է. «Քաղաքական պայքարը, որի արդյունքում թեկնածուն 51% ստանալով հաղթանակում է, տանում է դիկտատորական մարմնի ստեղծմանը, որը

ծպտյալ կեղծ դեմոկրատիա է, քանի որ 49%–անոց էլեկտորատը կառավարվում է մի կառավարության կողմից, որը նրանք չեն ընտրել»:

Իսկ ո՞րն է ելքը:

Երրորդ ունիվերսալ տեսությունը ելքը տեսնում է ուղղակի դեմոկրատիայի հաստատման և կիրառման մեջ: Ոչ թե դեմոկրատիա՝ հիմված ներկայացուցչության և դեպուտատության սկզբունքների վրա, այլ ուղղակի, անմիջական և չմիջնորդավորված, այսինքն՝ ուղղակի դեմոկրատիա, երբ բացառվում է սուվերենության՝ ինքնիշխանության խլումը ժողովրդից և նրա փոխանցումը դեպուտատներին: Ուղղակի դեմոկրատիայի դեպքում սուվերենությունը մնում է ժողովրդի ձեռքում:

Երրորդ ունիվերսալ տեսության մեջ նախատեսված են նաև ուղղակի դեմոկրատիայի կիրառման և սուվերենությունը ժողովրդին թողնելու մեխանիզմները. «Կանաչ գիրքը» հայտարարում է «Ժողովրդին դեպի ուղիղ դեմոկրատիայի տանող ուղու երջանիկ հայտնագործման մասին»: Դա ժողովրդական կոնգրեսների և ժողովրդական կոմիտեների համակարգի ստեղծումն է վերևից ներքև՝ թաղային, գյուղական, շրջանային, քաղաքային և այլ ստորին օղակներից մինչև կառավարման բարձրագույն աստիճանները: Դրանք կազմում են մի համակարգ, որը և ապահովում է ժողովրդի ուղղակի իշխանությունը: «Չկա դեմոկրատիա առանց ժողովրդական կոնգրեսների».— դա Երրորդ ունիվերսալ տեսության հիմնական դրույթն է, որն անկյունաքարային նշանակություն ունի:

Վերոշարադրյալից հետևում է, որ Երրորդ ունիվերսալ տեսության համաձայն՝ նորաստեղծ համակարգում պետության գոյության համար տեղ չի մնում: Պետությունը և պետական մարմինները դասական իմաստով վերանում են, և հաստատվում է ժողովրդական ուղղակի և անմիջական կառավարում, որն այնուհետև ստացավ «Ջամահիրիյա» անվանումը:

«Կանաչ գրքի» երկրորդ մասը կրում է «Տնտեսական հիմնախնդրի լուծումը: Սոցիալիզմ» խորագիրը: Այստեղ շարադրված են Երրորդ ունիվերսալ տեսության հիմնադրույթները տնտեսական վերափոխումների, սոցիալիզմի, սեփականության և մարդու երջանկության վերաբերյալ: Նրա հեղինակը գտնում է, որ մարդը պետք է երջանիկ լինի և դա բնական օրենք է, որը լավագույնս դրսևորվում է իսկական կամ հեղափոխական իսլամի դրույթների և դոգմաների մեջ: Նա գտնում է, որ կապիտալիզմը չկարողացավ լուծել հասարակության զարգացման տնտեսական պրոբլեմները և մարդու երջանիկ դառնալու խնդիրը, քանի որ նա հիմնված է

մարդու շահագործման և ուրիշի, ժողովրդի հաշվին հարստություն կուտակելու սկզբունքի վրա: Կադաֆին նշում է. «Ամբողջ արևմտյան սոցիալական կյանքը փչացած է հարստության պատճառով. հարստությունը միակ բանն է, որ նշանակություն ունի: Նա, ով չունի կապիտալ, տեղ չունի, և նրան ոչ ոք չի լսի»: Եվ այնուհետև նա ավելացնում է. «Կապիտալը պետք է ծառայի տնտեսությանը, և ոչ թե տնտեսությունը ծառայի միջազգային կապիտալիզմին, ինչպես եղել է մինչև օրս»:

Երրորդ ունիվերսալ տեսությունը եթե իր մի ծայրով ուղղված է կապիտալիզմի դեմ, ապա մյուս ծայրով ուղղված է գիտական սոցիալիզմի դեմ, թեև «գիտական սոցիալիզմ» եզրը չի օգտագործվում: Այդ տեսության մեջ նախապատվությունը տրվում է «պետական սոցիալիզմ» կամ «մարքսիզմ», «մարքսիստական սոցիալիզմ» եզրերին: Այդ հարցում ընդհանուր մոտեցումն այն է, որ պետական սոցիալիզմը (նկատի ունի Խորհրդային Միությունում և սոցիալիստական մյուս երկրներում հաստատված սոցիալիզմը) մարդուն ամբողջապես բաժանել է ավանդական կյանքից, հիմնված է բռնության վրա և պահանջում է, որ մշտապես երկաթյա բռունցք լինի ժողովրդի գլխի վրա: Նա հավաստում է, որ «Մարքսիստական հասարակության մեջ միտումն այն է, որ հիմնվի ուժեղ պետություն, որը վերահսկում է հարստությունը, իշխանությունը և կոմունիզմը»:

Ժխտելով հասարակությունը և մարդկությունը փչացնող կապիտալիզմը և պետական անխիղճ սոցիալիզմը՝ Կադաֆին, որպես միակ ելք, առաջարկում է «Նոր սոցիալիզմը», որը հիմնված է բնական օրենքի վրա: «Բնական օրենք» ասելով Երրորդ ունիվերսալ տեսությունը նկատի ունի իսլամի և Կորանի դոգմաները, իսլամական ավանդույթներն ու սովորությունները, որոնց վրա և խարսխվում է նոր կամ իսլամական սոցիալիստական հասարակությունը:

Այս բաժնում առկա է այն միջոցների թվարկումը, որոնցից կախված է «մարդկության երջանկությունը»: Ըստ Երրորդ ունիվերսալ տեսության, դրա մեջ մտնում են հետևյալ պահանջները:

Ցան հարցը. «Տունը պետք է պատկանի նրան, ով նրա մեջ ապրում է»: **Եկամտի խնդիրը.** «Մարդու համար եկամուտն էական է: Բայց դա չի կարող աշխատավարձ լինել, այլ պետք է բարեգործություն լինի: Նոր սոցիալիստական հասարակության մեջ չկա աշխատավարձ, կան միայն կոմպանիոններ»: **Հողի հարցը.** «Հողը ոչ մեկի սեփականությունը չէ: Յուրաքանչյուր մարդ կարող է մշակել այն գյուղատնտեսության և

անասնապահության համար... Նա, այդուհանդերձ, չի կարող օգտագործել այլ մարդու, վճարովի, թե անվճար, իր հողակտորի վրա», և այլն, և այլն:

Կադաֆին ինքը և նրա տեսության բազմահազար քարոզիչները հավատացած են, որ «Երրորդ ունիվերսալ տեսության կիրառումը կհանգեցնի տնտեսական անկախության և իրական սոցիալական արդարության հաստատմանը: Դա կկառուցի մի նոր սոցիալիստական հասարակություն, որը նման չէ թե՛ գոյություն ունեցող պետական սոցիալիստական և թե՛ կապիտալիստական մոդելին, և որտեղ մարդն ու նրա կենսական կարիքների բավարարումը հանդիսանում է էական գործոն»:

Կադաֆիի «Կանաչ գրքի» երրորդ մասը վերնագրված է «Երրորդ ունիվերսալ տեսության սոցիալական հիմքը»: Գրքի հենց սկզբում հեղինակը հայտարարում է, որ «Մարդկային պատմության շարժիչ ուժը սոցիալական, այսինքն՝ ազգային գործոնն է: Սոցիալական կապերը, որոնք կապում են մարդկային յուրաքանչյուր խումբ, ընտանիքից ցեղի միջոցով մինչև ազգություն, պատմության շարժման հիմքն են»: Կադաֆին շատ է կարևորում նացիոնալիզմի դերը և նրա կապը կրոնի հետ: Նա շեշտում է, որ «այն ազգերը, որոնց նացոնալիզմը ոչնչացվել է, ենթակա են կործանման»: Եվ այդ կապակցությամբ նա անդրադառնում է կրոնի դերին՝ որպես ազգության միավորման և ներդաշնակության գործոն՝ նշելով. «Բնական կանոնն այն է, որ ամեն մի ազգություն պետք է ունենա մի կրոն: Դրա հակառակն աննորմալ բան է... Չկա այլ լուծում, քան ներդաշնակ լինել բնական կարգի հետ, որ ամեն մի ազգություն մի կրոն ունի»:

Այսպիսով՝ կրոնը, տվյալ պարագայում՝ իսլամը, հանդիսանում է հասարակության սոցիալական հիմքը, որը կատարում է ազգության միավորման ֆունկցիա և ունի նրա տարբեր հատվածները ներդաշնակող գործոնի դերակատարություն:

Գրքի երրորդ հատորում առանձնահատուկ տեղ է հատկացված անհատ–ընտանիք–պետություն փոխկապակցությանը՝ որպես երրորդ ունիվերսալ տեսության սոցիալական հիմքի ամենաէական բաղադրիչներից մեկը: Այդ հարցի վերաբերյալ նշվում է. «Անհատ մարդու համար ընտանիքն ավելի կարևոր է, քան թե պետությունը: Մարդկությունն ինքնին անհատը և ընտանիքն է և ոչ թե պետությունը: Պետությունն արհեստական տնտեսական և քաղաքական համակարգ է, երբեմն ռազմական համակարգ, որի հետ մարդկությունը ոչ մի կապ չունի և անելիք չունի»: Կադաֆին ընտանիքը համեմատում է բնության մի ծառի հետ, որն ունի

ծյուղեր, տերևներ և ծաղիկներ: Եվ դարձյալ վերադառնալով ընտանիք–պետություն հարցին՝ լիբիական առաջնորդը կրկին շեշտում է. «Փաստն այն է, որ քաղաքական, տնտեսական և ռազմական գործոններն ընտանիքների խմբերը միավորել են պետության մեջ, որը ոչ մի ընդհանուր բան չունի մարդկության հետ»: Դրանից հետո անցնելով հասարակության հարցին՝ Կադաֆին գտնում է. «Ծաղկող հասարակությունն այն հասարակությունն է, որտեղ անհատը բնականորեն աճում է ընտանիքի ներսում և ընտանիքն ինքնին ծաղկում է հասարակության ներսում»: Ամփոփելով այդ հարցի լուսաբանությունը՝ նա հանգում է այն եզրակացության, որ անհատն առանց ընտանիքի որևէ արժեք կամ սոցիալական կյանք չունի:

«Կանաչ գրքի» երրորդ հատորում իրենց տեղն են գտել նաև այնպիսի հարցերի քննարկումը, ինչպես ցեղի՝ թրայբ, կնոջ դերի, փոքրամասնությունների, նեգրերի, կրթության և սպորտի հարցերը: Նեգրերի հարցը քննարկելիս Կադաֆին այն տեսակետն է արտահայտում, որ նեգրերը գերակշռելու են աշխարհում:

Այս բոլորը նա միավորում է երրորդ ունիվերսալ տեսության սոցիալական հիմքի մեջ՝ դրանք համարելով նրա ամենաէական բաղադրիչները:

Կադաֆիի երրորդ ունիվեսալ տեսության հիմքի վրա 1970–ական թվականների կեսերից բարձրացավ Լիբիական Ջամահիրիյայի շենքը:

2. Լիբիական Արաբական Հանրապետության վերածումը Լիբիական Արաբական Ժողովրդական Սոցիալիստական Ջամահիրիյայի և կառավարման նոր համակարգի հաստատումը

1970–ական թվականների կեսերից սկսվեց Լիբիայի պետական, սոցիալ–հասարակական և տնտեսական՝ իր նախադեպը չունեցող վերակառուցման գործընթացը՝ հիմնված Մուամմար Կադաֆիի երրորդ ունիվերսալ տեսության վրա, որը, ըստ էության, շարունակվում է մինչև օրս:

Պաշտոնապես այդ գործընթացի հիմքը դրեց 1977 թ. մարտի 2–ին Լիբիայի հարավային անապատային գոտում գտնվող Սաբխեում գումարված Լիբիայի Համընդհանուր ժողովրդական կոնգրեսի (ՀԺԿ) արտակարգ նստաշրջանը:

Կոնգրեսն ընդունեց հռչակագիր Լիբիայում ժողովրդի իշխանությունը հաստատելու մասին, որի համաձայն ամբողջ իշխանությունն անցնում էր ժողովրդի ձեռքը: Երկրում հաստատվում էր ուղղակի ժո-

ղովրդաիշխանության համակարգ՝ ներքևից վերև: Ստեղծվեց Ժողովրդական կոնգրեսի բարձրագույն կոմիտե (ԺԿԲԿ)՝ որպես օրենսդիր և գործադիր միասնական բարձրագույն մարմին:

Վերացվեցին Հեղափոխական հրամանատարության խորհուրդը և Նախարարների խորհուրդը:

Լիբիական Արաբական Հանրապետությունը վերանվանվեց **Լիբիական Արաբական Ժողովրդական Սոցիալիստական Ջամահիրիյայի (ԼԱԺՍՋ)**:

Հռչակագիրը հաստատում էր, որ ուղղակի ժողովրդաիշխանությունն իրականացվում է ժողովրդական ժողովների և ժողովրդական կոմիտեների, ինչպես նաև արհեստակցական միությունների և այլ ժողովրդական–հասարակական կազմակերպությունների միջոցով: Սա ընդհանուր դրույթ է, իսկ գործնականում ինչպե՞ս են նրանք կազմավորվում, ի՞նչ մակարդակներով և ինչպե՞ս են գործում:

Ուղղակի ժողովրդաիշխանության համակարգի հիմքում **բազային կամ տեղական ժողովրդական կոնգրեսներն են,** որոնք ծնավորում են քաղաքային թաղամասերի, գյուղերի, շրջանների բնակիչները: Նրանց ենթակայությանն է հանձնվում տվյալ թաղի, գյուղի և շրջանի տնտեսական և կուլտուրական հարցերի տնօրինումը: Սակայն նրանց իրավունք է վերապահված նաև իրենց կարծիքը և տեսակետները հայտնել, իրենց առաջարկությունները ներկայացնել Լիբիայի ներքին և արտաքին քաղաքականության բոլոր հարցերի վերաբերյալ: Այս վերջին պարագան շատ կարևոր է ուղղակի ժողովրդաիշխանության իրականացման տեսանկյունից:

Թաղային, գյուղական, շրջանային և մարզային ժողովրդական կոնգրեսներն ընտրում են իրենց մշտական ղեկավար մարմինները, որոնք կոչվում են **ժողովրդական կոմիտեներ**: Նրանք կարևոր դերակատարություն ունեն ուղղակի ժողովրդաիշխանության համակարգում, քանի որ նրանք են զբաղվում տվյալ թաղի, գյուղի և շրջանի առօրյա հոգսերով:

Բազային կամ տեղական ժողովրդական կոնգրեսները և նրանց մշտական ղեկավար մարմինները հանդիսանում են ուղղակի ժողովրդաիշխանության առաջին աստիճանակարգը:

Այդ համակարգի հաջորդ կարևոր օղակը կամ աստիճանակարգը՝ մարզերի կամ, ինչպես որոշման մեջ էր ծնակերպված, **մունիցիպալիտետների ժողովրդական կոնգրեսներն են:** Դրանք կազմավորվում են մի քանի տեղական ժողովրդական կոնգրեսների միավորումից, որն

իրականացնում են տեղական կոմիտեները: Մունիցիպալ ժողովրդական կոնգրեսները նույնպես ընտրում են իրենց մշտական ղեկավար մարմինները՝ **ժողովրդական կոմիտեները:**

Համակարգի բարձրագույն աստիճանը **Համընդհանուր ժողովրդական կոնգրեսն է,** որը կազմավորում են մունիցիպալ ժողովրդական կոնգրեսների ժողովրդական կոմիտեների ամբողջ աշխատակազմը, տեղական ժողովրդական կոնգրեսների ժողովրդական կոմիտեների քարտուղարները և արհեստակցական միությունների, ասոցիացիաների ու միությունների ներկայացուցիչները:

Այսպիսով՝ ուղղակի ժողովրդաիշխանությունը կառուցվածքային առումով ներկայացնում է հետևյալ պատկերը. տեղական ժողովրդական ժողով + ժողովրդական կոմիտե + մունիցիպալ ժողովրդական ժողով + մունիցիպալ ժողովրդական կոմիտե + Կոնգրեսի քարտուղարություն + Համընդհանուր ժողովրդական կոնգրես + Համընդհանուր ժողովրդական կոնգրեսի Համընդհանուր քարտուղարություն:

Կադաֆիի բնորոշմամբ՝ «Ժողովրդական կոնգրեսները և ժողովրդական կոմիտեները դեմոկրատիայի համար ժողովրդի պայքարի վերջնական պտուղն են»:

Կառավարման նոր համակարգում կարևոր տեղ է գրավում Համընդհանուր ժողովրդական կոնգրեսը, որը համարվում է երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը: Նրա իրավասությունների մեջ է մտնում օրենքների և օրենսդրական ակտերի հաստատումը, երկրի արտաքին և ներքին քաղաքականության կարևոր հարցերի վերաբերյալ որոշումների և բանաձևերի ընդունումը, Բարձրագույն ժողովրդական կոմիտեի՝ կառավարության ձևավորումը:

Համընդհանուր ժողովրդական կոնգրեսը տարին մեկ անգամ գումարում է իր նստաշրջանը, իսկ նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում գործում է Կոնգրեսի կողմից ընտրված Գլխավոր քարտուղարությունը, որը կոնգրեսի գործադիր մարմինն է: Նա ունի իր գլխավոր քարտուղարը, գլխավոր քարտուղարի տեղակալը և երեք քարտուղարները: Գլխավոր քարտուղարության պարտականությունների մեջ է մտնում հետևել ժողովրդական կոնգրեսների կողմից ՀԽԿ–ի ընդունած որոշումների կատարմանը, խորհրդատվական և կազմակերպչական օգնություն ցույց տալ տեղական և մունիցիպալ կոնգրեսներին ու կոմիտեներին և այլն: Համընդհանուր ժողովրդական կոնգրեսի գլխավոր քարտուղար ընտրվեց Մուամմար Կադաֆին:

Ինչպես նշվեց, ՀՀԽ–ի հետ լուծարվեց նաև Նախարարների խորհուրդը, այսինքն՝ կառավարությունը: Դա վերացվեց, և փոխարենը ստեղծվեց Բարձրագույն ժողովրդական կոմիտե, որը կատարում է կառավարության պարտականությունները: Վարչապետի պաշտոնը, որպես այդպիսին, նույնպես վերացվեց, և ստեղծվեց Բարձրագույն ժողովրդական կոմիտեի քարտուղարի պաշտոնը, որը համարվում է կառավարության ղեկավարը: Վերացվեցին նաև նախարարությունները և նախարարները, դրանց փոխարեն ստեղծվեցին քարտուղարություններ, որոնց գլուխ են կանգնած քարտուղարները, որոնց պարտականությունները և լիազորությունների շրջանակները հար և նման են նախարարի պարտականություններին և լիազորություններին:

Լիբիական Ջամահիրիյայի Բարձրագույն ժողովրդական կոմիտեի քարտուղար նշանակվեց Ա. Օբեյդին:

Այսպիսին է ժողովրդի ուղղակի կառավարման կամ ուղղակի ժողովրդիշխանության կառուցվածքը և էությունը, որն ընկալվում է որպես պետության և կառավարության վերացում՝ ըստ նրանց ավանդական կամ դասական հասկացությունների և պատկերացումների:

Լիբիայի պետության և հասարակության նման ոչ ստանդարտ վերակառուցումից հետո, բնականաբար, իր անհրաժեշտությունը կորցրեց Հեղափոխական հրամանատարության խորհրդի կողմից 1969 թ. դեկտեմբերի 11–ին ընդունված սահմանադրությունը: Նրա գործողությունը կախակայվեց: Բայց որևէ երկիր, հասկանալի է, չի կարող գոյություն ունենալ առանց հիմնական օրենքի: Բացառություն չէ նաև Լիբիան՝ իր ուղղակի ժողովրդաիշխանության մոդելով: Դադարեցնելով 1969 թ. սահմանադրության գործողությունը՝ լիբիական իշխանությունները երկրի օրենսդրության հիմքում դրեցին Կորանը և շարիաթի օրենքները, այլ կերպ ասած՝ Կորանին տրվեց սահմանադրական կարգավիճակ:

Այդ բոլոր արմատական վերափոխումների միջոցով հաստատված հասարակարգը, ժողովրդի անմիջական և չմիջնորդավորված մասնակցությունը երկրի կառավարմանը և ուղղակի ժողվրդաիշխանությունը, որպես մեկ ամբողջական համակարգ, Կադաֆիի և նրա զինակիցների ու համախոհների կողմից կոչվեց **ջամահիրիյա:**

«Ջամահիրիյա» եզրի լույս աշխարհ գալու առաջին օրվանից մինչև օրս նա վեճեր և տարակուսանքներ է հարուցում: Արաբերեն «ջամահիր» բառը «ջումհուր» բառի հոգնակին է, որը նշանակում է «ամ-

բոխ», «մասսա», «հասարակություն» (публика)[26]: Այդ բառը որոշ փոխակերպումով ընկած է արաբերեն «ջումհուրիյա» (հանրապետություն) եզրի հիմքում՝ «ջումհուր–ջամահիր–ջումհուրիյա»: Այդուհանդերձ, օտար լեզվով արաբական այդ բառի՝ բոլորի կողմից ընդունելի, ճշգրիտ համարժեքը չկա: Ոմանք «ջամահիր» բառը թարգմանում և օգտագործում են «ժողովրդի պետություն» կամ «ժողովրդապետություն», իսկ ոմանք էլ՝ «ժողովրդաիշխանություն» իմաստով: «Ժողովրդապետության» պարագայում հիմնական առարկությունը կապված է այդ բառակապակցության «պետություն» բառի հետ այն առումով, որ ջամահիրիյայի համակարգը չի ընդունում «պետություն» հասկացությունը, չի ընդունում պետությունը որպես այդպիսին: Իսկ «ժողովրդաիշխանության» պարագայում խոցելի կողմն այն է, որ դժվար է տարբերակում մտցնել ժողովրդաիշխանության և դեմոկրատիայի՝ ժողովրդավարության միջև: Բայց այդ երկու տարբերակներից ավելի նախապատվելին «ժողովրդաիշխանությունն» է:

Ինչ վերաբերում է մեզ, ապա մենք նախընտրում ենք որպես «ջամահիրիյա» եզրի հայերեն տարբերակ՝ «համաժողովրդակառավարում», իսկ եթե դա շատ երկար է թվում, ապա պարզապես «ժողովրդակառավարում» եզրը՝ ուշադրություն չդարձնելով այն բանի վրա, թե ինչպես են ռուսները կամ անգլիացիներն այդ եզրը արաբերենից թարգմանում իրենց մայրենի լեզվով:

3. «Տունը պետք է պատկանի նրան, ով այնտեղ ապրում է»: Սոցիալ–տնտեսական տեղաշարժերը Ջամահիրիյայում (1978–2005 թթ.)

Կադաֆիական «Տունը պետք է պատկանի նրան, ով այնտեղ ապրում է» ձևակերպումը, որը, արևելյան հասարակություններին բնորոշ սովորույթի համաձայն, վերածվեց թևավոր արտահայտության, լավագույնս է արտահայտում Ջամահիրիյայի հռչակումից հետո Լիբիայում իրականացվող քաղաքականության բնույթը և գործընթացների ուղղվածությունը: Իսկ այդ իրողությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Լիբիայում հաստատված կառավարման համակարգը և ուղ-

26 Տե՛ս Арабско–русский словарь. Составил В. М. Белкин, Москва, 1970, с. 227. Русско–арабский учебный словарь. Составил Г. Ш. Шарбатов, Москва, 1964, с. 756:

ղակի ժողովրդաիշխանությունը քարացած վիճակում չեն գտնվում, այլ մշտապես փոփոխության են ենթարկվում և կատարելագործվում:

Դրանց մեջ կարևորագույններից էր հեղափոխական կոմիտեների ստեղծումը, որոնք օժտված էին ամենալայն լիազորություններով: Նրանք ստեղծվեցին արդյունաբերական ձեռնարկություններում, հիմնարկներում, գյուղական վայրերում, քաղաքներում և բանակում: Նրանց առջև դրված էր երկու կարևոր խնդիր. առաջին՝ վերահսկողություն սահմանել կառավարման ապարատի ու հիմնարկների ղեկավարության գործունեության վրա, և երկրորդ՝ արթնացնել ժողովրդին ու նրան մղել իրականացնելու ժողովրդաիշխանությունը:

Հեղափոխական կոմիտեների ստեղծումը կապված էր այն իրողության հետ, որ ուղղակի ժողովրդաիշխանության հաստատումը հեշտ չէր ընթանում: Ժողովրդի ցածր քաղաքական և կրթական մակարդակն ու փորձի պակասությունը որոշակի, երբեմն շատ լուրջ խոչընդոտ էին հադիսանում նոր համակարգի հաստատման ճանապարհին: Ջամահիրիյայի ղեկավարությանն ավելի անհանգստացնում էր այն հանգամանքը, որ մի շարք վայրերում ուղղակի ժողովրդաիշխանության համակարգում տիրապետող դիրքեր գրավեցին ոչ աշխատավորական ուժերը՝ լիբիական բուրժուական բյուրոկրատիայի ներկայացուցիչները, որոնք կառավարման ավելի մեծ փորձ ունեին: Մի շարք վայրերում աջ ուժերը, որոնք մեծ դժգոհությամբ էին ընդունում իրագործվող փոփոխությունները, ժողովրդական խավերին հրահրում էին հակաիշխանական ցույցերի: 1979 թ. օգոստոսին անգամ հուզումներ տեղի ունեցան Տոբրուկում տեղակայված զինվորական մասերում:

Կադաֆին և նրա զինակիցները չէին կարող անտեսել նման երևույթների առկայությունը և հենց սկզբից առանց հետաձգելու դիմեցին մի շարք կտրուկ և անսպասելի քայլերի: Տոբրուկում տեղակայված զինվորական մասերում օգոստոսին տեղի ունեցած հուզումներից շատ չանցած՝ սեպտեմբերին Կադաֆին հերթական անգամ ապշեցրեց ոչ միայն լիբիացիներին, այլև շատ երկրների ղեկավարներին և բնակչությանը: Նա հանդես եկավ «քաղաքների և ուսումնական հաստատությունների ռազմականացման» ծրագրով: Դարձյալ ղեկավարվելով ամեն ինչ «ժողովրդականացնելու» սկզբունքով՝ Կադաֆին հայտարարեց, որ պետք է հրաժարվել ավանդական բանակներից և անցնել «ժողովրդի զինմանը՝ նշելով, որ «զինված ժողովրդը» կփոխարինի բանակին: Նա հավատա-

ցած էր, որ զինված ժողովուրդն ի վիճակի է Լիբիան պաշտպանել արտաքին ամեն մի հարձակումից:

Ստեղծելով հեղափոխական կոմիտեներ, որոնց գործունեության մեջ առաջնակարգ դերակատարում ուներ երիտասարդությունը, հատկապես արմատականորեն տրամադրված ուսանողական երիտասարդությունը, Ջամահիրիյայի ղեկավարությունը հույս ուներ նրանց օգնությամբ շտկել սխալներն ու բացթողումները և ամենուր ամրապնդել կառավարման նոր համակարգը՝ ղեկավարվելով այն սկզբունքով, որ տունը պատկանում է ոչ թե բուրժուական բյուրոկրատական ուժերին, այլ ժողովրդին:

Պատահական չէր նաև, որ Համընդհանուր ժողովրդական կոնգրեսի որոշումով 1979 թ. ստեղծվեց Ջամահիրիյայի՝ ԼԱԺՍՋ–ի Հեղափոխական ղեկավարություն, որը գլխավորեց Կադաֆին: Հինգ հոգուց բաղկացած այդ մարմինը պաշտոնապես կառավարման որևէ ֆունկցիա չունի: Կադաֆին և նրա չորս մերձավոր զինակիցները հրաժարվեցին իրենց գրաված բոլոր պաշտոններից, որպեսզի կենտրոնական սեպտեմբերյան հեղափոխության և ջամահիրիյայի սկզբունքների կենսագործման, ժողովրդի հեղափոխական պաթոսի բոցավառման և ժողովրդահիշխանության սկզբունքները երկրում ամրապնդելու խնդիրների վրա: Կադաֆին իրեն վերապահեց «Հեղափոխության առաջնորդի» կոչումը և գործնականում իրականացնում է ԼԱԺՍ Ջամահիրիյայի ղեկավարի, այսինքն՝ պետության ղեկավարի իրավասությունները, թեև Լիբիան պաշտոնապես պետության ղեկավար չունի: Իրականում նա և նրա ղեկավարած Հեղափոխական կոմիտեն են որոշում Լիբիայի ամբողջ ներքին և արտաքին քաղաքականությունը:

Այդ փոփոխությունները կարևոր քայլ հանդիսացան տանը՝ երկրում, նոր կարգերի ամրապնդման գործում:

Հեղափոխական և ժողովրդական կոմիտեների ստեղծումից հետո Կադաֆին կոչ արեց Լիբիայի բանվորներին և ծառայողներին՝ գրավել ձեռնարկությունները, որը դրեց արդյունաբերության և առևտրի ոլորտներում մասնավոր սեկտորի վերացման գործընթացի սկիզբը: Առաջարկվեց արդյունաբերական ձեռնարկությունների, արդյունաբերական և առևտրական ընկերությունների կառավարման նոր ձև՝ հիմնված պարտնյորության՝ գործընկերության սկզբունքի վրա: Նախկին գործատերերը արտադրողների հետ հավասար գործընկերության սկզբունքով կարող էին մասնակցել նախկինում նրանց պատկանող ձեռնարկությունների և ընկերությունների կառավարմանը:

Փոփոխությունների հզոր ալիքը տարածվեց նաև արտաքին քաղաքականության մարմինների՝ արտաքին գործերի նախարարության և Լիբիայի արտաքին ներկայացուցչությունների վրա: Փոփոխություններն այդ բնագավառում անցկացվեցին «Վերջ տալ ավանդական դիվանագիտությանը» կարգախոսի ներքո: Լիբիայի դիվանագիտական ներկայացուցչությունները՝ դեսպանությունները, վերակազմավորվեցին արտասահմանում լիբիական «Ժողովրդական բյուրոների»: Լիբիան հրաժարվեց միջազգային հարաբերություններում գործող դիվանագիտական նորմերից դիվանագիտական անձնագրերի, ագրեմանի տրամադրման, հավատարմագրերի հանձնման և վիզաների հարցերում:

Շնորհիվ նավթից ստացվող եկամուտների կտրուկ աճի՝ Ջամահիրիյայի ղեկավարությունը հետևողականորեն վարում էր ժողովրդի դրության բարելավման քաղաքականություն: Բարձրացվեց նվազագույն աշխատավարձը, մեծ թափ ստացավ բնակարանային շինարարությունը, հողազուրկ և սակավահող շատ գյուղացիներ ապահովվեցին հողակտորներով, անգամ նրանց տրվեցին պետության կողմից կառուցված ֆերմերական ագարակներ:

Մեծ ուշադրություն էր դարձվում կրթական գործին և անգրագիտության վերացմանը, որի համար ստեղծվել էին միանգամայն արտոնյալ և ժողովրդական խավերի համար միանգամայն մատչելի պայմաններ: Ջամահիրիյայի իշխանությունների ուշադրության կենտրոնում էին գտնվում նաև առողջապահության հարցերը, այդ թվում և գյուղական վայրերում:

Լուծվում էր նաև ազգային մասնագետների պատրաստման հարցը, որը շատ սուր բնույթ էր կրում: Լիբիան տնտեսության տարբեր ճյուղերի, կրթության, առողջապահության, մշակույթի և տարբեր ոլորտների համար անհրաժեշտ մասնագետներին, ինժեներներին, ճարտարապետներին սովորաբար հրավիրում էր արտասահմանյան երկրներից, ոչ միայն արաբական, այլև արևմտյան, մանավանդ ինժեներներին և տեխնիկներին, որոնց կարիքը շատ էր զգում Լիբիայի զարգացող տնտեսությունը: Եվ ծեռնարկած քայլերի արդյունքում տարեցտարի աճում էր ազգային մասնագետների պատրաստումը և համապատասխանաբար կրճատվում նրանց հրավիրումը արտասահմանյան երկրներից:

Վերոնշյալ քայլերը վկայում էին, որ Ջամահիրիյայի ղեկավարությունը հավատարիմ էր «Տունը պետք է պատկանի նրան, ով այնտեղ ապրում է» սկզբունքին:

Լիբիայում արմատական վերափոխումների, այդ թվում և տնտեսական ու սոցիալական ոլորտներում, իրականացվող քաղաքականության մեջ որոշակի փուլ հանդիսացավ 1981–1985 թթ. հնգամյա պլանի ընդունումը: Նա կարևոր էր այն առումով, որ նրա հիմքում դրվեց «Լիբիան՝ երրորդ ունիվերսալ տեսության սկզբունքներին համապատասխան, վերածել սոցիալիստական արտադրողական հասարակության»: Շեշտը դրվեց արդյունաբերության, գյուղատնտեսության, կրթության, առողջապահության և մշակույթի զարգացման վրա, մեծ գումարներ հատկացվեցին բնակարանային շինարարությանը:

Հնգամյա պլանի շրջանակներում կատարվեց հաջորդ կարևոր քայլը: Համընդհանուր ազգային կոնգրեսը 1983 թ. ընդունեց որոշում՝ տնտեսության զարգացման բնագավառում հենվել սեփական տնտեսական ռեսուրսների վրա: Իսկ քանի որ հնգամյա պլանը խթանում էր հասարակության վերակառուցումը և ամրապնդում այդ գործընթացի տնտեսական հիմքերը, ուստի ուժեղացավ «նախկիններ» դիմադրությունը, որոնք այս անգամ ընտրեցին «պասիվ դիմադրության» ձևը: Նրանք, մասնավորապես, խոչընդոտներ էին հարուցում ժողովրդական կոմիտեների գործունեության առջև, որոնք աջակցություն էին գտնում համալսարանական պրոֆեսուրայի և մամուլի որոշ շրջանների կողմից: Դրանց դեմ ակտիվորեն հանդես եկան հեղափոխական կոմիտեները, որոնք զտումներ անցկացրին համալսարանների և լրատվամիջոցների ղեկավարության շարքերում:

Լիբիայի տնտեսության գլխավոր ճյուղը շարունակում է մնալ նավթարդյունաբերությունը: Նավթի արտահանումից ստացվող եկամուտներն ապահովում են Լիբիայի արտարժույթի 95%–ը: Այդ եկամուտները տարեցտարի աճում են: Դրա մասին են վկայում հետևյալ թվերը. 1998 թ. դրանք կազմել են 5,9 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ 2004 թ.՝ 18,1 մլրդ: Դա հնարավորություն է տալիս ֆինանսական մեծ միջոցներ հատկացնել տնտեսության մյուս ճյուղերի զարգացման համար: Արագ թափով են զարգանում շինարարական սեկտորի և թեթև արդյունաբերության ճյուղերը: Նկատվում է նաև գյուղատնտեսական մթերքների արտադրության և նրանց վերամշակման աճ, թեև Լիբիան շարունակում է ներմուծել երկրի բնակչությանն անհրաժեշտ սննդամթերքի մոտ 80%–ը:

Վերջին տարիներին զարգանում են Լիբիայի համար արդյունաբերության նոր ճյուղեր, հնչպես՝ նավթաքիմիական, երկաթի, պողպատի, ալյումինի և այլն: Միսուրատում կառուցվել է մետալուրգիական համա-

լիր, արտադրվում են մետաղյա խողովակներ, մալուխ, գործում են ավտոմեքենաների և տրակտորների հավաքման գործարաններ և այլն:

Լիբիայի արդյունաբերության 90%–ը կենտրոնացված է պետության ձեռքում և կազմում է պետական սեկտորը: Սակայն 2000–ական թվականների սկզբից նկատվում է որոշ ձեռնարկությունների ապապետականացման և մասնավորեցման միտում: Ջամահիրիյայի ղեկավարությունը քայլեր է ձեռնարկում համաշխարհային տնտեսությանը ինտեգրվելու ուղղությամբ:

Ջամահիրիյայի աշխատուժը, 2004 թ. տվյալներով, կազմում է 1,59 մլն մարդ: Դրա 17%–ը զբաղված է գյուղատնտեսության, 29%–ը՝ արդյունաբերության և 54%–ը՝ սպասարկությունների ոլորտում: Ակնհայտ է, որ տեղի է ունենում Լիբիայի ուրբանացում: Սակայն դեռևս շատ բարձր է գործազրկությունը: 2004 թ. տվյալներով՝ այն կազմել է աշխատուժի 30%–ը:

Լիբիական Ջամահիրիյան անկախության տարիներին, հատկապես 1970–ական թվականների կեսերից, երբ սկսվեց հասարակության արմատական վերակառուցումը, հասել է նշանակալի նվաճումների բոլոր բնագավառներում: Փոխվել է երկրի ընդհանուր պատկերը: Նա հաստատակամորեն ընթանում է վերափոխումների ուղիով, որը միշտ չէ, որ հարթ է ընթանում: Դեռևս կան շատ լուրջ դժվարություններ, թույլ են տրվում կոպիտ սխալներ ու վրիպումներ, խզում խոսքի, հռչակված դեկլարացիաների և գործողությունների միջև: Բայց, այդուհանդերձ, առաջընթացն առկա է:

Այդ ամենը հիմք է տվել էն Ջուսիֆին և մի շարք այլ մասնագետների՝ այն կարծիքն արտահայտելու, որ Լիբիայի Արաբական Ժողովրդական Սոցիալիստական Ջամահիրիյան ապրում է նոմադիկ հասարակությունից ժամանակակից սպառողական հասարակության արագ անցման շրջան:

4. ԼԱԺՍՋ–ի արտաքին քաղաքականությունը. ձեռքբերումներ, սխալներ, պարտություններ, ուղղումներ (1970–ական թվականներ — 2005 թ.)

Լիբիական հասարակության արմատական վերափոխումը և Ջամահիրիյայի կազմավորումը շոշափելի փոփոխությունների չհանգեցրին Լիբիայի արտաքին քաղաքականությունը մի այնպիսի կարևոր

ոլորտում, որպիսին միջարաբական հարաբերություններն էին: Այդ ոլորտը նախկինի պես համարվում է Լիբիայի համար գերակա նշանակություն ունեցող բնագավառ: Լիբիական Ջամահիրիյան, ինչպես իր նախորդը՝ Լիբիական Արաբական Հանրապետությունը, ձգտում է արաբական միասնության՝ իր հասկացած ձևով, և դարձյալ, ինչպես նախորդ փուլում, կրում ձախողումներ, որոնք հանգեցնում են լարվածության արաբական այս կամ այն երկրի հետ:

Շատ լարված հարաբերություններ ստեղծվեցին Եգիպտոսի հետ: Նասերի մահից հետո ընդհանրապես եգիպտա–լիբիական հարաբերությունները հարթ չէին ընթանում, մանավանդ այն բանից հետո, երբ Եգիպտոսի պրեզիդենտ Անվար Սադաթը որդեգրեց արևմտամետ քաղաքականություն, մերձեցավ Իսրայելի հետ և նրա հետ կնքեց անջատ համաձայնագրեր: Իսկ երբ Սադաթը 1977 թ. այցելեց Երուսաղեմ, Կադաֆին հայտարարեց, որ Լիբիան հրաժարվում է ճանաչել Սադաթի վարչակազմը և խզեց նրա հետ տնտեսական կապերը: Եգիպտա–լիբիական հարաբերություններն այն աստիճան սրվեցին, որ 1977 թ. նոյեմբերի 19–24–ը տեղի ունեցան զինված բախումներ երկու երկրների միջև: Դա պատրաստ էր վերածվելու լուրջ ռազմական կոնֆլիկտի, որը, սակայն, հաջողվեց կանխել Ալժիրի պրեզիդենտ Հուարի Բումեդիենի և Պաղեստինի ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) ղեկավար Յասիր Արաֆաթի գործադրած ջանքերի շնորհիվ:

Արաբական համարյա բոլոր երկրներն էին դատապարտում Սադաթի քաղաքականությունը, որը հնարավորություն տվեց Լիբիային ակտիվորեն հանդես գալ որպես արաբական հակաիմպերիալիստական ուժերի համախմբման նախաձեռնող: Եվ նա ունեցավ որոշակի հաջողություն: 1977 թ. դեկտեմբերի 2–5–ը Տրիպոլիում հավաքվեցին Ալժիրի, Լիբիայի, Սիրիայի, ԵԺԴՀ–ի և ՊԱԿ–ի ղեկավարները, որոնք հիմնեցին Կայունության և դիմադրության ազգային ճակատ: Ճակատի անդամները հայտարարեցին, որ նրանք սառեցնում են իրենց հարաբերությունները Եգիպտոսի հետ և կոչ արեցին մնացած արաբական երկրներին՝ միանալ իրենց:

Նշանակալի երևույթ էր նաև Համաարաբական ժողովրդական կոնգրեսի գումարումը Տրիպոլիում, որին մասնակցում էին արաբական երկրների առաջադիմական կուսակցությունները, կազմակերպությունները, միությունները և ասոցիացիաները, այդ թվում և եգիպտական ընդդիմության ներկայացուցիչները: Ստեղծվեց Կոնգրեսի մշտական քարտուղարություն, որի նստավայրը դարձավ Լիբիայի մայրաքաղաքը:

Այդ նորաստեղծ կազմակերպության գլխավոր խնդիրն էր համախմբել արաբական ժողովուրդներին և ուժեղացնել նրանց պայքարը հանուն արաբական ազգային շահերի:

Կադաֆին այդ տարիներին հետամուտ էր Մաղրիբի երկրների՝ Ալժիրի, Թունիսի և Լիբիայի միավորմանը, սակայն չհասավ դրական արդյունքի, քանի որ Թունիսը և նրա պրեզիդենտ Հաբիբ Բուրգիբան խանդավառված չէին այդ գաղափարով և խուսափում էին նմանատիպ միավորումներից: Եվ թեև հետագա տարիներին Լիբիան նման մի շարք փորձեր նս կատարեց, դրանք նույնպես ձախողվեցին:

Ջամահիրիյայի արտաքին քաղաքականության համար այդ տարիներին բնորոշ էր բազմակողմանի հարաբերությունների զարգացումը Խորհրդային Միության և սոցիալիստական մյուս երկրների՝ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության, Չեխոսլովակիայի, Բուլղարիայի հետ:

Լիբիայի ղեկավարությունը մեծ նշանակություն էր տալիս իր հարաբերություններին նաև աֆրիկյան երկրների, մասնավորապես հարևան երկրների հետ՝ երբեմն շատ ակտիվ կերպով ներգրավվելով կամ անհարկի միջամտելով նրանց ներքին գործերին՝ ենթարկվելով ամենախիստ քննադատության և մեղադրանքների: Լիբիան ներգրավվել էր Չադում ծավալված երկարամյա քաղաքացիական պատերազմի մեջ, մասնակցել Վերին Վոլտայի պրեզիդենտի տապալմանը, նրան մեղադրում էին Գվինեա–Բիսաուի պրեզիդենտ Լուիշ Կոբրալի սպանության մեջ և այլն: Պարբերաբար հարաբերությունները սրվում էին նաև աֆրիկյան այլ երկրների հետ, ինչպես Գաբոնը, Գանան, Գամբիան և Սենեգալը, որոնք 1980–ականներին խզեցին իրենց դիվանագիտական հարաբերությունները Լիբիայի հետ:

Սակայն Ջամահիրիյայի համար ամենադժվար բնագավառը մնում էին հարաբերությունները արևմտյան երկրների, առաջին հերթին՝ ԱՄՆ–ի հետ: Նրանք Լիբիային մեղադրում էին ահաբեկչության, իր տարածքում ահաբեկիչներ պատրաստելու նպատակով ուսումնական կենտրոններ և ճամբարներ կազմակերպելու, տարբեր երկրներում ահաբեկչական գործողությունները խրախուսելու, ֆինանսավորելու ու կազմակերպելու մեջ: Լիբիան մեղադրվում էր Օլստերում Իռլանդական հանրապետական բանակին, Իսպանիայում բասկերի ԷՏԱ կազմակերպությանը, Պաղեստինի ազատագրության կազմակերպությանը և զանազան իսլամական շարժումներին, այդ թվում և Ֆիլիպիններում, թիկունք կանգնելու համար:

Կադաֆին, իհարկե, մերժում էր այդ մեղադրանքները, սակայն հակառակ կողմը բերում էր բազմաթիվ փաստարկներ, որոնք, սակայն, շատ դժվար էր հերքել:

Ամերիկա–լիբիական հարաբերությունները հատկապես սրվեցին Ռոնալդ Ռեյգանի պրեզիդենտության շրջանում՝ 1980–ական թվականներին: Դրան նախորդել էր լիբիացիների հարձակումը Տրիպոլիում ամերիկյան դեսպանության շենքի վրա, որը նրանք ավերել ու հրդեհել էին: Դա ընկալվեց որպես գործողություն՝ ի պաշտպանություն Իրանի իսլամական հեղափոխության և նրա ղեկավար այաթոլլահ Խոմեյնիի: ԱՄՆ–ը հետ կանչեց իր դիվանագետներին Տրիպոլիից, սակայն չխզեց դիվանագիտական հարաբերությունները Լիբիայի հետ:

1981 թ. մայիսի 6–ին Ռեյգանը պաշտոնապես Լիբիային մեղադրեց միջազգային ահաբեկչությունը հովանավորելու, կազմակերպելու և աջակցելու մեջ, որը շատ ծանր մեղադրանք էր: Նրա կարգադրությամբ լիբիական բոլոր դիվանագետներն արտաքսվեցին ԱՄՆ–ից, և խզվեցին դիվանագիտական հարաբերությունները Լիբիայի հետ: 1982 թ. ԱՄՆ–ը առաջին տնտեսական սանկցիան կիրառեց Լիբիայի նկատմամբ: Նա արգելեց լիբիական նավթի ներմուծումը և ամերիկյան տեխնոլոգիաների, այդ թվում և նավթային սարքավորումների արտահանումը Լիբիա:

Հարաբերությունները սրվեցին նաև Անգլիայի հետ, մանավանդ այն բանից հետո, երբ Լոնդոնում լիբիական դեսպանության առջև կայացած բողոքի ցույցի ժամանակ լիբիական դեսպանությունից կրակոցներ արձակվեցին ցուցարարների վրա, և զոհվեց բրիտանական մի կին ոստիկան: Անգլիան նույնպես խզեց դիվանագիտական հարաբերությունները Լիբիայի հետ:

Ռեյգանը դիմեց ավելի ազդեցիկ գործողությունների՝ ստիպելու Կադաֆիին դադարեցնելու պաշտպանել «ազատագրական շարժումները» այլ երկրներում, որի տակ հասկացվում էր աջակցություն Լիբիայի կողմից ահաբեկչական գործողություններին միջազգային մասշտաբով: 1986 թ. ապրիլի 14–ին ամերիկյան ռազմական ինքնաթիռները ռմբակոծեցին Տրիպոլիի և Բենգազիի շրջակայքում գտնվող ենթադրյալ ահաբեկչական կենտրոնները, որի ժամանակ զոհվեց 60 մարդ, որոնց թվում էր նաև Կադաֆիի որդեգիր դուստրը: Ամերիկյան կառավարությունը Լիբիայի իշխանություններին մեղադրեց Արևմտյան Բեռլինի «Լա Բել» գիշերային ակումբը պայթեցնելու մեջ, որի ընթացքում զոհվեցին մի քանի ամերիկյան զինվորներ: Այդ ակումբը ամերիկյան զինվորների երեկոյան

ժամանցի սիրելի վայրերից մեկն էր: Վերջապես պետք է նշել նաև ֆրանսիական օդանավի խփելը Սուդանի վրա և 1992 թ. ամերիկյան «Պանամ» ընկերության ինքնաթիռի խփելը Լոկերբիի վրա՝ Շոտլանդիայում, որի ժամանակ զոհվեց 270 մարդ: Այս վերջինը ցնցեց ամբողջ աշխարհը՝ առաջացնելով դժգոհության և բողոքի ուժեղ ալիք Լիբիայի դեմ:

Լիբիայի հարաբերություններն արևմտյան երկրների հետ ավելի սրվեցին, երբ հայտնի դարձավ, որ Լիբիայում աշխատանքներ են տարվում զանգվածային ոչնչացման զենք, այդ թվում և քիմիական, պատրաստելու ուղղությամբ: Քիմիական այդ զենքը գաղտնիորեն պատրաստվում էր հնդուհավի բուծման ագարակում:

ԱՄՆ–ը, Անգլիան և Ֆրանսիան կտրուկ պահանջեցին Լիբիայից՝ վերջ տալ միջազգային ահաբեկչությանը սատարել, նրան մեղադրեցին 1988–1989 թթ. մի քանի քաղաքացիական ինքնաթիռներ պայթեցնելու մեջ և պնդեցին, որ Լիբիան մեղավորներին դատի և պատժի: Կադաֆին մերժեց բավարարել այդ պահանջները, որին հաջորդեց ՄԱԿ–ի 1993 թ. որոշումը Լիբիայի դեմ տնտեսական սանկցիաներ կիրառելու մասին:

Լիբիան հայտնվեց ծանր դրության մեջ: Տնտեսական բլոկադան, որը հաստատեց նաև ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը, խիստ բացասաբար ազդեց երկրի տնտեսական վիճակի վրա, իսկ քաղաքականապես Լիբիան հայտնվեց մեկուսացման մեջ: Նա աջակցություն չգտավ անգամ արաբական երկրների կողմից, ինչպես նաև առանձին իսլամական գործիչների, մտավորականների ու հեղինակությունների կողմից:

Ստեղծված պայմաններում Կադաֆին հարկադրված էր նահանջել, ուղղումներ մտցնել իր քաղաքականության մեջ և հրաժարվել աջակցել ահաբեկչությանը: Նա 1999 թ. Հաագայի միջազգային դատարանին հանձնեց լիբիական ազգային անվտանգության երկու աշխատակիցներին, որոնք կազմակերպել էին ամերիկյան «Պանամ» ընկերությանը պատկանող քաղաքացիական ինքնաթիռի պայթեցումը Շոտլանդիայի վրա: Լիբիան, դրա պատասխանատվությունը վերցնելով իր վրա, 2003 թ. համաձայնվեց որպես փոխհատուցում զոհվածների ընտանիքներին վճարել 2 մլրդ 700 մլն ԱՄՆ դոլար:

Ջամահիրիայի ղեկավարությունը ստանձնեց նաև իր պատասխանատվությունը Սուդանի օդային տարածքում ֆրանսիական քաղաքացիական ինքնաթիռի պայթեցման և Լոնդոնում լիբիական դեսպանության մոտ անգլիական կին ոստիկանին սպանելու համար:

Կադաֆին միջազգային կազմակերպություններին տեղյակ պահեց Լիբիայում մասսայական ոչնչացման զենքի գոյության մասին, որը հանձնվեց միջազգային համապատասխան կազմակերպություններին: Դրանք ապամոնտաժվեցին:

Դրականորեն լուծվեց նաև Լիբիայում առակա միջուկային զենքի տեխնոլոգիաների հարցը: Ի հայտ եկավ, որ Լիբիան երկար ժամանակ կապող օղակ էր հանդիսացել միջուկային զենքի արտադրության տեխնոլոգիաները և սարքավորումները Հյուսիսային Կորեայից այլ երկրներ փոխանցելու գործում: Լիբիայի ղեկավարությունը պատրաստակամություն հայտնեց դադարեցնել իր գործողություններն այդ ուղղությամբ և առկա բոլոր սարքավորումները հանձնել ԱՄՆ–ին: Նա իր խոստումը կատարեց: 2004 թ. մարտի 7–ին ԱՄՆ–ի Ապիտակ տունը պաշտոնապես հաստատեց, որ միջուկային զենքի հետ առնչություն ունեցող վերջին սարքավորումները Լիբիայից առաքվել են ԱՄՆ:

Հաշվի առնելով այդ հանգամանքները՝ ՄԱԿ–ը և ԱՄՆ–ը վերացրեցին Լիբիայի դեմ կիրառվող սանկցիաները:

Լիբիայի առջև բացվել են միջազգային համակեցությանը, տնտեսական և քաղաքական կառույցներին ինտեգրվելու հնարավորությունները և հեռանկարները:

Գլուխ քսանմեկերորդ

ԿԱՏԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐ

ԴԱՎԼԱԹ ԿԱՏԱՐ
ԿԱՏԱՐ

Աշխարհագրական դիրքը — գտնվում է Սերձավոր Արևելքում՝ Հարավարևմտյան Ասիայի, նույնանուն թերակղզու վրա

Սահմանները — սահմանակից է Սաուդյան Արաբիային և ԱՄԷ-ին

Տարածքը — 11 հազ. 437 քառ. կմ

Բնակչությունը — 843 հազ. (2004 թ.)

Ազգային կազմը — արաբներ՝ 40%, պակիստանցիներ՝ 18%, հնդիկներ՝ 10%, այլք՝ 14%

Մայրաքաղաքը — Դոհա (մոտ 310 հազար)

Պետական կրոնը — պետական կրոնը՝ իսլամ՝ 95%, այդ թվում՝ վահաբական սուննիներ՝ 86%, շիաներ, քրիստոնյաներ և այլն

Պաշտոնական լեզուն — արաբերեն՝ պաշտոնական, անգլերեն՝ առօրյա-գործածական

Պետական կարգը — բացարձակ միապետություն՝ էմիրություն, կառավարող դինաստիան՝ աթ-Թանիների տոհմը՝ հիմնված ժառանգականության սկզբունքի վրա

Պետության ղեկավարը — միապետ էմիրը

Գործադիր իշխանությունը — պետության ղեկավարը՝ 1995 թ. հունիսի 27-ից էմիր Համադ բին Խալիֆա աթ-Թանին, կառավարության ղեկավարը, կաբինետը՝ Նախարարների խորհուրդը, որը նշանակում է միապետը

Օրենսդիր իշխանությունը — էմիրի հրովարտակները, միապալատ Խորհրդատվական խորհուրդը՝ Սաջլիս աշ-Շուրա, որի անդամների երկու երրորդն ընտրվում է, իսկ մեկ երրորդին նշանակում է էմիրը

Դատական իշխանությունը — էմիրի վերահսկողության և հայեցողության տակ գտնվող օրենքների համակարգ, քաղաքացիական կոդեքսի դրույթներ, իսլամական օրենք, որը տիրապետող է ընտանեկան և անձնական խնդիրների ոլորտում

Անկախության օրը — 3 սեպտեմբերի 1971 թ.
Ազգային տոնը — 3 սեպտեմբերի
Քաղաքական կուսակցությունները — արգելված են
Վարչական բաժանումը — բաժանված է 10 մունիցիպալիտետների՝ բալադիյաների
Ազգային դրամը — Կատարի ռիալ
Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ըստ շնչի — 21500 ԱՄՆ դոլար (2005 թ.)
Արդյունաբերությունը — նավթարդյունահանում և վերամշակում, պարարտանյութեր, նավթաքիմիկատներ, ցեմենտ, մետալուրգիա՝ հիմնված բերովի երկաթահանքի ծուլման վրա, տնայնագործական արտադրություն, բնական մարգարիտի արդյունահանում
Գյուղատնտեսությունը — մրգեր, բանջարեղեն, օազիսային հողամշակում, անասնապահություն, թռչնաբուծություն, ձկնորսություն, մանր ծովախեցգետինների որս

ԿԱՏԱՐ
ԿԱՏԱՐ
ՍԱՈՒԴՅԱՆ
ԱՐԱԲԻԱՅԻ
ՍԱՈՒԴՅԱՆ
ԱՐԱԲԻԱՅԻ
ՍԱՈՒԴՅԱՆ
ԱՐԱԲԻԱՅԻ
ՍԱՈՒԴՅԱՆ
ԱՐԱԲԻԱՅԻ

I. ԿԱՏԱՐԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏ (1916–1971 թթ.)

1. Աբ–Թանիների տոհմը և նրա վերածումը Կատարում կառավարող դինաստիայի

Կատարի պատմությունը շատ ընդհանուր գծեր ունի Պարսից ծոցի արաբական մյուս շեյխությունների պատմության հետ: Նա անցել է նույն ուղիով, գտնվել է նույն օտարերկրյա պետությունների տիրապետության ներքո և ունի նույն հասարակական–սոցիալական և տնտեսական կառուցվածքը: Անգամ նրանց առջև կանգնած քաղաքական և տնտեսական խնդիրներն իրենց բնույթով համընկնում են:

Եթե մի հետադարձ հայացք նետենք Կատարի անցած պատմական ուղու վրա, ապա մենք այնտեղ տեսնում ենք Ալեքսանդր Մակեդոնացու հետքերը և պարթևական ու սասանյան Պարսկաստանի տիրապետությունը՝ մ.թ.ա. IV մինչև մ.թ. VII դարերը, երբ սկսվեց Արաբական խալիֆայության հաղթարշավը, և Կատարը դարձավ նրա մի մասը, մանավանդ այն բանից հետո, երբ VII դարի վերջերին ավարտվեց Կատարի իսլամացումը: Հետագա դարերում Կատարը հայտնվեց այլ պետությունների տիրապետության տակ: XII–XIV դարերում Կատարը գտնվել է Բահրեյնի տիրապետության տակ, իսկ XVI դարում այն նվաճում են պորտուգալացիները, որոնց հաջորդում են օսմանյան թուրքերը:

Այդ ընթացքում արաբական տարբեր կլանները, հատկապես Սաուդները, Խալիֆաները և Թանիները, որոնք քոչվորական ցեղախմբեր էին և վարում էին քոչվորական կյանք, անընդհատ շարժման մեջ էին գտնվում և հայտնվելով Արաբական թերակղզու և աշխարհագրական առումով նրա մասը կազմող տարածքներում՝ փորձում իրենց տիրապետությունը հաստատել այս կամ այն շրջանի վրա: XVIII դարի կեսերին Կատարի թերակղզում հայտնվեց աբ–Թանիների տոհմը, որը սկզբում տիրապետող դիրքեր գրավեց, իսկ այնուհետև՝ մոտ մեկ դար անց, դարձավ Կատարի կառավարիչը: Դրանում մեծ դեր խաղաց Անգլիան, որը

միջամտեց 1867–1868 թթ. Բահրեյնի և Կատարի միջև ընթացող մարտերին և ստիպեց Կատարի նկատմամբ հավակնություններ ունեցող Բահրեյնի տիրակալներ ալ–Խալիֆաների ընտանիքին՝ դադարեցնել ռազմական գործողությունները Կատարի դեմ և ճանաչել Կատարը որպես Բահրեյնից անջատ միավոր: Դա ամրագրվեց 1868 թ. Պարսից ծոցում բրիտանական քաղաքական ռեզիդենտի և Մուհամմադ աթ–Թանիի միջև ստորագրված համաձայնագրով, որն ամրապնդեց աթ–Թանի ընտանիքի դիրքերը Կատարում և բարձրացրեց նրա հեղինակությունը քոչվորական ցեղախմբերի աչքում: Միաժամանակ դա դրեց Մեծ Բրիտանիայից Կատարի կախվածության հիմքերը:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1913 թ. հուլիսի 29–ին, Անգլիայի և Օսմանյան կայսրության միջև ստորագրվեց իր նշանակությամբ կարևոր համաձայնագիր, որը մեծապես սահմանափակում էր օսմանյան կառավարության իրավունքները Պայմանագրային Օմանի, Բահրեյնի, Քուվեյթի, ինչպես նաև Կատարի նկատմամբ: Իսկ պատերազմի ընթացքում՝ 1915 թ., աթ–Թանիները՝ Կատարի տիրակալները, օգտվելով ստեղծված բարենպաստ քաղաքական և ռազմական իրադրությունից, անգլիացիների օգնությամբ՝ ստիպեցին Դոհայում գտնվող թուրքական կայազորին՝ հեռանալ Կատարից: Դոհա մտան անգլիական զորքերը:

2. Անգլիայի և Կատարի միջև 1916 թ. պայմանագիրը և բրիտանական պրոտեկտորատի հաստատումը Կատարի վրա

Թուրքերին Կատարից արտաքսելուց հետո Կատարի էմիրը 1916 թ. Անգլիայի հետ ստորագրեց հատուկ պայմանագիր, որն իրավաբանորեն ձևակերպեց անգլիական պրոտեկտորատի հաստատումը Կատարի վրա:

Նման պայմանագրի ստորագրումը չի կարելի անակնկալ համարել: Դա կապված է Անգլիայի ընդհանուր քաղաքականության հետ, որ նա վարում էր XVIII դարի վերջերից և XIX դարի սկզբներից Պարսից ծոցի արաբական էմիրությունների և շեյխությունների նկատմամբ: Նրանց հետ հարաբերությունները կարգավորելու և նրանց վրա իր տիրապետությունը հաստատելու ամենանպաստավոր ձևը Մեծ Բրիտանիան համարեց պրոտեկտորատը: Եվ նա XIX դարի ընթացքում և XX դարի սկզբներին մեկը մյուսի հետևից համապատասխան պայմանագրեր կնքեց, ավելի ճիշտ կլինի ասել՝ պարտադրեց արաբական շեյխու-

թյուններին՝ Քուվեյթին, Բահրեյնին, Պայմանագրային Օմանին և, ի վերջո, նաև Կատարին:

Կատարի հետ կապված առաջին քայլն այդ ուղղությամբ արվեց դեռևս 1868 թ., երբ, ինչպես նշվեց, հաստատվեց Կատարի կարգավիճակը՝ որպես Բահրեյնից անջատ և անկախ միավոր: Անգլիան Կատարին առաջարկեց իր հովանավորությունը՝ տեղական բնակչության կողմից անդորրություն պահպանելու դիմաց, և խոստացավ ամրապնդել աթ–Թանի ընտանիքի ազդեցությունը: Սակայն այդ ժամանակ պաշտոնապես չձևակերպվեց անգլիական պրոտեկտորատը Կատարի վրա: Մեծ Բրիտանիան այդ ժամանակ Կատարը դիտում էր որպես ստրատեգիական կարևոր հանգրվան Հնդկաստանի ճանապարհին, որին տիրապետելը համարվում էր կարևոր՝ Հնդկաստան տանող ծովային ուղիների ապահովության տեսանկյունից:

Իրադրությունը փոխվեց Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ Օսմանյան կայսրությունը ռազմական պարտություններ էր կրում, ընկել էր նրա հեղինակությունը, և երբ արաբներն ապստամբվեցին օսմանյան տիրապետության դեմ ու սկսեցին թուրքերին դուրս մղել արաբական երկրներից: Դրանում իր համեստ ներդրումն ունեցավ նաև Կատարը, որտեղից թուրքական զորքերը հեռացան 1915 թ.:

Դրան հաջորդեց պայմանագրի ստորագրումը Անգլիայի և Կատարի միջև, որը տեղի ունեցավ 1916 թ.: Պայմանագիրը Կատարի կողմից ստորագրեց Կատարի կառավարող, շեյխ Աբդալլահ իբն Կասիմ աթ–Թանին: Մեծ Բրիտանիայի կողմից պայմանագիրը ստորագրեց Պարսից ծոցում բրիտանական քաղաքական ներկայացուցիչ (ռեզիդենտ) Պերսի Կոքսը, որն արտակարգ ծառայություններ ունի արաբական երկրներում բրիտանական գաղութային տիրապետությունը հաստատելու գործում: Պայմանագիրը ստորագրվեց շատ արտառոց կերպով, որը շատ քիչ է հանդիպում միջազգային դիվանագիտական պրակտիկայում: Բրիտանական կողմը հարկ չհամարեց նախապատրաստել և Կատարի շեյխին ներկայացնել պայմանագրի նախագիծ: Դրա փոխարեն Պերսի Կոքսը շեյխ Աբդալլահ իբն Կասիմին ներկայացրեց Բահրեյնի և Պայմանագրային Օմանի յոթ շեյխությունների հետ Մեծ Բրիտանիայի մինչ այդ կնքված համանման պայմանագրի պատճենը և ստիպեց նրան՝ իր ստորագրությունը կցել այդ պայմանագրի պատճենին:

Ըստ պայմանագրի՝ Կատարի էմիրը պարտավորվում էր Կատարի տերիտորիայի որևէ մասը չզիջել, վարձակալության չտալ կամ այլ կերպ

որևէ երրորդ կողմի տնօրինությանը չհանձնել, բացի բրիտանական կառավարությունից: Դրա մեջ մտնում էին նաև հանքային հարստությունները: Նա պարտավորվում էր բացի բրիտանական կառավարությունից հարաբերությունների մեջ չմտնել որևէ օտար կառավարության հետ: Օտար կառավարության հետ Կատարը կարող էր շփումների մեջ մտնել միայն Մեծ Բրիտանիայի համաձայնությամբ:

Իր կողմից Մեծ Բրիտանիան երաշխավորում էր Կատարի տերիտորիալ ամբողջականությունը, պարտավորվում էր պաշտպանել Կատարը ծովային ագրեսիայից և նրան տրամադրել բարի ծառայություններ կոնֆլիկտների կամ ագրեսիայի դեպքերում:

Այդ պայմանագրի շնորհիվ, եթե Մեծ Բրիտանիան իր պրոտեկտորատը հաստատեց Կատարի վրա և դրան տվեց իրավական ձևակերպում, ապա Կատարը կառավարող աթ-Թանի ընտանիքը իրավական առումով ամրապնդեց իր իշխանությունը՝ որպես Կատարի կառավարող դինաստիա:

Դրանով Կատարը դարձավ Պարսից ծոցի և Հնդկական օվկիանոսի ավազանում բրիտանական շահերն ապահովող շղթայի կարևոր օղակներից մեկը:

3. Կատարի քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակը բրիտանական պրոտեկտորատի շրջանում

Կատարի պրոտեկտորատյան շրջանը պայմանականորեն կարելի է բաժանել երկու ժամանակահատվածի: Առաջին ժամանակահատվածն ընդգրկում է 1920-1940-ական թվականների կեսերը, մինչև նավթի հայտնաբերումը և արդյունահանումը, իսկ երկրորդ ժամանակահատվածը՝ 1947-1949 թվականներից, երբ սկսվեց նավթի արդյունահանումը, մինչև 1971 թվականը՝ բրիտանական պրոտեկտորատի վերացումը:

Առաջին շրջանում Կատարի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքում էական տեղաշարժեր չկատարվեցին: Կատարը մնում էր հետամնաց և աղքատ երկիր: Այստեղ տնտեսության գլխավոր ճյուղը շարունակում էր մնալ բնական մարգարիտի արդյունահանումը ծովի ընդերքից, ձկնորսությունը, տնայնագործական արտադրությունը և օազիսային գյուղատնտեսությունը, որը վարվում էր հին պապենական մեթոդներով: Դրան պետք է ավելացնել նաև անասնապահությունը, որը հանդիսանում էր քոչվորական և կիսաքոչվոր ցեղերի գլխավոր տնտեսական զբաղմունքը: Մեծ տարածում ուներ նաև ստրկությունը:

Մարգարիտի արդյունահանումն սկսեց անկում ապրել 1920–ական թվականների վերջերից և հատկապես 1930–ական թվականներին, որը կապված էր ճապոնացիների կողմից արհեստական մարգարիտի արդյունաբերության ստեղծման և զարգացման հետ: Դա մեծ հարված էր Կատարի՝ առանց այն էլ թույլ զարգացած տնտեսությանը:

Կատարի սոցիալական բուրգի վերևում գտնվում էին աթ–Թանիների դինաստիան, ցեղապետ շեյխերը և ֆեոդալները: Սոցիալական կառուցվածքի հիմքում ընկած էր ցեղային բաժանումը և ցեղային պատկանելությունը: Դրանք ինչպես նստակյաց, այնպես էլ վաչկատուն, քոչվորական բեդվինական ցեղեր և ցեղախմբեր էին՝ իրենց բնորոշ պարզունակ, անգամ արխայիկ հարաբերություններով:

Ցեղերը և ցեղային միությունները կարևոր դեր էին խաղում Կատարի հասարակական կյանքում, մանավանդ նրանց հարաբերություններից էր կախված երկրի անդորրությունը և խաղաղությունը: Դժբախտաբար, միջցեղային հարաբերություններում միշտ չէ, որ տիրապետող էին լինում համերաշխությունը և խաղաղությունը: Ընդհակառակը, նրանց ավելի բնորոշ էին հակասությունները և հակամարտությունները: Դա նկատելի էր Կատարում հատկապես Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներին, որի հետևանքով բավականին լարված հարաբերություններ և անկայուն իրադրություն էր ստեղծվել երկրի ներսում:

Առերևույթ դա հակամարտություն էր սուննիների և շիաների միջև: Բայց իրականում դա հակամարտություն էր տիրապետող սուննիական վերնախավի և աղքատ ու իրավազուրկ նստակյաց և քոչվոր ժողովրդական զանգվածների միջև, որոնք մեծ մասամբ շիաներ էին:

Կատարը կառավարող աթ–Թանիների ընտանիքը պատկանում էր աթ–թանիմ սուննի ցեղին, որոնց շիաները համարում էին նվաճողներ, քանի որ նրանք Կատարում հայտնվել էին XVIII դարի կեսերին և դարձել Կատարի կառավարողներ: Իսկ Կատարի բնիկները պատկանում էին բանի հաջար, ալ–կաաբան և մի շարք այլ շիա ցեղերին, որոնք դժգոհ էին աթ–թանիմ սուննիական կառավարող ցեղին ենթարկվելու իրողությունից:

Այստեղ կար նս մեկ կարևոր հանգամանք: Կատարի կառավարող սուննի վերնախավը դավանում էր ոչ թե սովորական կամ ուղղափառ սուննիզմ, այլ նրա վահաբիական տարբերակը: Վահաբիզմը լայն տարածում գտավ XVIII դարից, հատկապես Արաբական թերակղզում, Սաուդյան Արաբիայում և նրա հարակից տարածքներում: Վահաբիզմը հանդես էր գալիս հանուն նախնական, մաքուր իսլամի և նրա հիմնադրույթ-

ների կիրառման և երբեմն այդ հարցում հասնում ծայրահեղությունների, մասնավորապես նա դեմ էր զանազան նորամուծությունների և շատ խիստ դիրքորոշում էր գրավում նրանից շեղվողների նկատմամբ:

Աբ–Թանիները, XIX դարում գալով, իշխանության գլուխ նախընտրեցին սուննիզմի վահաբիական տարբերակը, որն ուներ իր քաղաքական դրդապատճառները: Կատարի հակառակորդ Բահրեյնը և նրա կառավարող ալ–Խալիֆաները հրաժարվեցին ընդունել վահաբիզմը: Օգտվելով այդ հանգամանքից՝ աբ–Թանիները նախապատվությունը տվեցին վահաբիզմին՝ ելնելով այն իրողությունից, որ վահաբիզմը հայտարարվել էր տիրապետող ուղղություն Սաուդյան Արաբիայում: Աբ–Թանիները, ընդունելով վահաբիզմը, դրանով հույս ունեին ձեռք բերել հզոր դաշնակից՝ ի դեմս Սաուդյան Արաբիայի՝ ընդդեմ Բահրեյնի, որ շարունակում էր հավակնել Կատարին:

Ահա այս պարագան՝ վահաբիական, այսինքն՝ ավելի ծայրահեղական և մարտականորեն տրամադրված սուննիզմի տիրապետող լինելը Կատարում, առաջացնում էր շիական զանգվածի անհանգստությունը, որը դարձել էր Կատարում սոցիալական անհանգստության պատճառ:

Դրությունն ավելի էր սրվում նաև այն պատճառով, որ որոշ վահաբիական սուննի ցեղեր անգամ հանդես էին գալիս Կատարը Սաուդյան Արաբիայի հետ միավորելու պահանջով, որին դեմ էին մնացած ցեղերը:

Դա ներքին պառակտման պատճառներից մեկն էր:

Ներքին անհանգստության մյուս պատճառն այն էր, որ Կատարի կենտրոնական և արևմտյան մասերի ցեղերը ոչ միայն դեմ էին Կատարը Սաուդյան Արաբիային միավորելուն, այլև հանդես էին գալիս ընդդեմ բրիտանական տիրապետության և նրա կամակատար աբ–Թանիների կառավարող դինաստիայի, մանավանդ նրա հաշտվողական քաղաքականության, ամեն բանում Բրիտանիայի շահերի հետ հաշվի նստելու նրա պատրաստակամության հետ:

1930–ական թվականներին սկսվեց նավթի համատարած հետախուզում և հայտնաբերում Սաուդյան Արաբիայում և Պարսից ծոցի շրջանի բոլոր արաբական շեյխություններում՝ Բահրեյնում, Քուվեյթում, Օմանում և Պայմանագրային Օմանում: Բացառություն չկազմեց նաև Կատարը: Դա յուրատեսակ նավթային բումի ժամանակաշրջան էր: Նավթ հայտնաբերելու մոլուցքը համակել էր բոլորին, բոլոր միջազգային նավթային ընկերություններին և երկրներին:

Կատարում նավթի հայտնաբերման աշխատանքները խթանեց ամերիկյան «Ստանդարդ օյլ կոմպանին»: Շատ չանցած՝ Կատարը թույլատրեց Անգլո–իրանական նավթային ընկերությանը՝ Կատարի տարածքում հետախուզական աշխատանքներ կատարել նավթ հայտնաբերելու ուղղությամբ և 1935 թ. նրան 75 տարի ժամանակով կոնցեսիա տրամադրեց, որը հետագայում անցավ «Պետրոլեում Կոնսեշիոն» ընկերությանը, ապա նրա կողմից ստեղծված «Պետրոլեում Դիվելոպմենտ օֆ Կատար» ընկերությանը: Այդ ընկերությունը 1939 թ. Կատարի Դուխան վայրում առաջին անգամ նավթ հայտնաբերեց:

Սակայն նավթի հայտնաբերման և արդյունահանման հետագա աշխատանքներն ընդհատվեցին 1939 թ. սեպտեմբերին սկսված երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով:

Կատարը պատերազմին մասնակցություն չունեցավ, թեև դրա վտանգը կախված էր նաև նրա գլխին: Գերմանա–իտալական բլոկի հաղթանակի դեպքում Կատարը արաբական մյուս երկրների հետ կանցներ նրա տիրապետության տակ: Անգլիան կանխարգելիչ մի շարք քայլերի դիմեց Կատարն առանցքի երկրների հնարավոր հարձակումից պաշտպանելու ուղղությամբ: Կատարում ստեղծվեց պաշտպանական գիծ, Կատարի մայրաքաղաք Դոհայում տեղակայված բրիտանական կայազորը համալրվեց լրացուցիչ զինական ուժով, վերակառուցման աշխատանքներ կատարվեցին Դոհայի օդանավակայանում և այլն: Կատար և Պարսից ծոցի մյուս արաբական երկրներ գերմանա–իտալական ներխուժումը կանխվեց շնորհիվ անգլո–ամերիկյան ուժերի հաղթանակի Եգիպտոսում և Լիբիայում:

Նավթի արդյունահանման ուղղությամբ աշխատանքները վերսկսվեցին 1947 թ., և արդեն 1949 թ. շահագործման հանձնվեց 110 կմ երկարությամբ նավթամուղը Դուխանից մինչև Ումմ Սայիդ, որտեղ կառուցվեց նավթային տերմինալ: Այդ նույն տարվա վերջին Ումմ Սայիդի տերմինալից առաջին տանկերը Կատարի նավթն արտահանեց արտերկիր: Նավթի արդյունահանումը սկսեց զարգանալ արագ տեմպերով: Եթե 1949 թ. արդյունահանվել է 96 հազ. տոննա նավթ, ապա արդեն 1963 թ. Կատարն արդյունահանում էր տարեկան 9 մլն տոննա նավթ:

Այսպիսով՝ Կատարը դարձավ նավթարդյունահանող երկիր, որը նրան ապահովում է շատ մեծ եկամուտներ: Դա շրջադարձային փուլ էր Կատարի պատմության և տնտեսության զարգացման բնագավառում: 1961 թ. Կատարը դարձավ Նավթ արտահանող երկրների կազմակեր-

պության՝ ՕՊԵԿ–ի անդամ, իսկ 1970 թ. անդամակցեց Նավթ արտահանող արաբական երկրների կազմակերպությանը՝ ՕԱՊԵԿ–ին, որը նրան հնարավորություն է տալիս մասնակցելու նավթի ծավալների և համաշխարհային գների սահմանմանը:

Նավթից ստացվող եկամուտների նշանակությունը բարձրացավ հատկապես այն բանից հետո, երբ 1951 թ. հաստատվեց օտարերկրյա նավթային ընկերությունների հետ նավթի եկամուտների բաժանման հավասար՝ 50/50 սկզբունքը: 1953 թ. «Պետրոլեում Դիվելոպմենտ Կոմպանին» վերանվանվեց «Կատար Պետրոլեում Կոմպանիի»:

Մասնագետներն իրավացիորեն նավթարդյունաբերության զարգացման և նավթից ստացվող եկամուտների հետ են կապում Կատարում ժամանակակից պետության կառուցումը և երկիրը աղքատության ճիրաններից ազատելն ու զարգացման նոր ուղիներ դուրս բերելը:

Ստացվող եկամուտների, որոնք 1969 թ. կազմում էին 30 մլն ֆունտ ստեռլինգ, զգալի մասը ծախսվում էր արքունիքի պահպանման և մի շարք հավակնոտ ծրագրերի իրականացման վրա:

Աբ–Թանիների դինաստիան մեծ ուշադրություն էր դարձնում Դոհան նախկին խղճուկ ձկնորսական գեղջկական բնակավայրից ժամանակակից մայրաքաղաքի վերածելու վրա: Այդտեղ կառուցվեցին կառավարական և բնակելի շենքեր, փողոցներ, ջրատարներ և այլն: Կատարում 1950–1953 թթ. պատմության մեջ առաջին անգամ բացվեց երկու տարրական դպրոց: Դոհայում կառուցվեց նաև առաջին հիվանդանոցը, որն ուներ 140 մահճակալ, և որի վրա ծախսվեց 3,5 մլն ֆունտ ստեռլինգ: Դա հագեցված էր առաջնակարգ բժշկական սարքավորումներով և համարվում էր աշխարհում լավագույններից մեկը:

Հետագայում կառուցվեցին նոր դպրոցներ, և ընդարձակվեց կրթական համակարգը: 1960–ական թվականների վերջերին Կատարում կային տարրական 50 արական և 27 իգական դպրոցներ, որտեղ սովորում էր 10 հազ. երեխա, և մեկ երկրորդական վարժարան՝ 1500 աշակերտով: 1968–1969 թթ. աշակերտների ընդհանուր թիվը Կատարում հասնում էր 16 հազարի: Բացվեցին նաև մեկական տեխնիկական դպրոց և հոգևոր դպրոց, ինչպես նաև ուսուցիչների պատրաստման ինստիտուտ:

Կատարում չկան գետեր, և երկիրը գործնականում զուրկ է խմելու համար պիտանի ջրային պաշարներից: Երկար ժամանակ որպես խմելու ջուր օգտագործվում էին ջրհորներից վերցվող ջրերը, որոնք նույնպես զգալի քանակությամբ աղեր էին պարունակում: Խմելու ջրի

հարցի լուծման համար կարևոր նշանակություն ունեցավ Դուխան–Դոհա գազամուղի անցկացումը և դրա հիման վրա էլեկտրակայանի կառուցումը, որից ստացվող էներգիան օգտագործվում է ծովային և արտեզյան ջրհորների ջրերի աղազերծման համար: Հետագայում ջրերի աղազերծման աշխատանքներն ավելի մեծ ծավալներ ընդունեցին: Դոհայում կառուցվեց միջազգային օդանավակայան, իսկ 1966 թ. ավարտվեցին Դոհայի ծոցի ջրանցքի կառուցման աշխատանքները:

Նավթային շահույթների զգալի մասը ֆոնդերի և արժեթղթերի ձևով ներդրվեց արտասահմանյան բանկերում և ֆինանսական այլ կառույցներում, որոնք ապահովում էին զգալի եկամուտներ և օգտագործվում տնտեսության վերակառուցման համար: Երկրի ղեկավարությունը խրախուսում էր նավթաքիմիական արդյունաբերության, ցեմենտի արտադրության և ձկնարդյունաբերության զարգացումը: Կատարը սկսեց ձկնեղենի, այդ թվում և մանր ծովախեցգետինների արտահանում, հատկապես Մեծ Բրիտանիա, որի համար Դոհայի մոտ կառուցվեց սառնարանի կոմբինատ: Հիմնվեց Կատարի Ցեմենտի արտադրության ազգային ընկերություն, իսկ ապա նաև ցեմենտի գործարան, որը գտնվում է Ումմ Բաբում: Նրա արտադրանքը 1969 թ. հասավ 100 հազ. տոննայի: Դա աշխատում է տեղական հումքի վրա, օգտագործում հատուկ այդ նպատակի համար կառուցված ջերմակայանի էլեկտրաէներգիան և իր արտադրանքը արտահանում հարևան երկրներ:

Որոշ քայլեր կատարվեցին նաև գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ: 1960–ականներին Կատարն արդեն բավարարում էր սեփական պահանջները բանջարեղենի բնագավառում, կտրուկ կերպով աճեց նաև մրգերի արտադրությունը:

Այդ տարիներին, հատկապես 1950–1960–ական թվականներին, զգալի չափով զարգացավ կատարցիների ազգային ինքնագիտակցությունը, ուժեղացան հակաբրիտանական տրամադրությունները, որոնք իրենց մի ծայրով ուղղված էին նաև տեղական՝ կատարյան իշխանությունների և կառավարող աթ–Թանիների դինաստիայի դեմ: Դրա մասին են վկայում 1950 թ. մայրաքաղաք Դոհայում, Վախրայում, Ումմ Սայիդում տեղի ունեցած հակաբրիտանական ելույթները, որոնց իրենց համակրանքն արտահայտեցին նաև Կատարի գյուղական վայրերի բնակիչները: Այդ ելույթների հակաբրիտանական ուղղվածությունն ավելի ընդգծվեց, երբ կատարցիները 1951 թ. հանդես եկան ի պաշտպանություն Իրանի ժողովրդի, որը ծանր պայքարի մեջ էր մտել

Մեծ Բրիտանիայի դեմ՝ հանուն սեփական նավթարդյունաբերության ազգայնացման:

Կառավարող շեյխ Ալի իբն Աբդալլահ իբն Կասիմ աթ–Թանին հայտնվեց բավականին ծանր դրության մեջ: Նրա գլխավոր խնդիրը դարձավ կատարցիների օրեցօր խմորվող դժգոհության դեմն առնելը և թույլ չտալ, որ այն վերածվի բացահայտ հակակառավարական և հակաբրիտանական ելույթների: Դա էին կառավարող շեյխից պահանջում նաև բրիտանական իշխանությունները: Եվ կառավարությունը դիմեց որոշ քայլերի բնակչության վիճակը ինչ–որ չափով բարելավելու ուղղությամբ: Մենք արդեն նշել ենք դպրոցների և հիվանդանոցների կառուցման և ջրամատակարարման բարելավման մասին: Ավելացնենք, որ արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման հետևանքով բացվեցին նոր աշխատատեղեր, ավելացան աշխատավարձերը և այլն: Սակայն սոցիալական ոլորտում տեղի ունեցած փոփոխությունների մեջ ամենակարևորը, անշուշտ, ստրկության վերացումը և ստրկավաճառության արգելումն էր, որի մասին որոշումն ընդունվեց 1952 թ.: Իսկ ստրուկների թիվը հասնում էր 6–7 հազարի, որը փոքր թիվ չէր Կատարի նման ոչ մեծ ազգաբնակչություն ունեցող երկրի համար: Հիշեցնենք, որ 1960–ական թվականների կեսերին Կատարի բնակչությունը կազմում էր մոտ 70 հազ. մարդ, որից 50 հազարը բնակվում էր Դոհայում: Ստրուկները հիմնականում աֆրիկացիներ և սևամորթներ էին, որոնց ստրկավաճառությամբ զբաղվող զանազան «ընկերություններ» բռնի կերպով աֆրիկյան մայրցամաքից արտահանում էին այլ, այդ թվում և արաբական երկրներ, և վաճառում որպես ստրուկներ: Եվ դա շատ արդյունավետ ու շահութաբեր ոլորտ էր:

1960–ական թվականներին Կատարն ավելի ու ավելի էր ներգրավվում համաարաբական ընդհանուր գործընթացների մեջ, և նրա ժողովուրդն անտարբեր չէր, թե քաղաքական ինչ գործընթացներ էին տեղի ունենում արաբական աշխարհում: Կատարի աշխատավորական զանգվածներն ավելի հաստատակամորեն էին պահանջում երկրի իշխանություններից՝ պաշտպանել Արաբական Արևելքում ծավալված ազգային–ազատագրական պայքարը, ամրապնդել կապերը Եգիպտոսի, Իրաքի և Սաուդյան Արաբիայի հետ: Շատ հաճախ նրանց այդ պահանջներն արտահայտվում էին ցույցերի և գործադուլների ձևով: Այդ առումով հիշատակության է արժանի 1963 թ. համընդհանուր գործադուլը: Ցուցա-

րարների և գործադուլավորների դեմ օգտագործվեցին ոստիկանական ուժեր, նրանցից շատերը ձերբակալվեցին և բանտերը նետվեցին:

Այդ ամենն անհանգստացնում էր թե՛ Կատարի և թե՛ բրիտանական իշխանություններին: Այս վերջիններս խիստ դեմ էին Կատարի կապերի ամրապնդմանը արաբական երկրների հետ և ամեն կերպ ձգտում էին Կատարի մեկուսացմանը արաբական աշխարհից:

1963 թ. Կատարում ձևավորվեց փաստորեն առաջին քաղաքական կուսակցությունը, որը կոչվում էր Ազգային միասնության ճակատ: Նա հանդես էր գալիս նավթից ստացվող եկամուտները կառավարող դինաստիայի կողմից վատնելու քաղաքականության և երկրում հաստատված խիստ վարչակարգի դեմ: Ճակատը կազմակերպեց Կատարի աշխատավորների մի շարք հակակառավարական ցույցեր պահանջելով կազմել պետական բյուջե, ներկայացուցչական խորհուրդ և սահմանափակել աթ–Թանիների բացարձակ իշխանությունը:

Կատարի իշխանություններն ամեն տեսակի ճնշումներ էին կիրառում Ազգային միասնության ճակատի և նրա անդամների դեմ: Բայց միաժամանակ հարկադրված էին դիմել նաև որոշ զիջումների, որոնց մեջ ամենանշանակալին 1964 թ. Խորհրդատվական խորհրդի ստեղծումն էր, որը կարող էր մշակել և Կատարի կառավարողին ներկայացնել պետական քաղաքականության վերաբերյալ որոշ օրինագծեր:

Կատարը չուներ սահմանադրություն, բայց մինչև 1970–ականների սկիզբը և պրոտեկտորատի վերացումը, գործում էր մի հիմնական օրենք, որն ընդհանուր ձևով սահմանում էր Կատարի կարգավիճակը և կառավարման համակարգը: Ըստ այդմ՝ Կատարը ձևականորեն համարվում էր անկախ շեյխություն, որը պայմանագրով կապված էր Մեծ Բրիտանիայի հետ, որը պարտավորվում էր պաշտպանել Կատարն արտաքին ագրեսիայից և վարել նրա արտաքին գործերը: Խոսքն այստեղ 1916 թ. անգլո–կատարյան պայմանագրի մասին է, որով Կատարի վրա հաստատվել էր բրիտանական պրոտեկտորատ:

Կատարի ներքին հարցերը տնօրինում էր նրա էմիրը: Նրան ներքին կառավարման հարցերում օգնում էին նրա տեղակալը, ֆինանսների, կրթության և ներքին գործերի նախարարները, կառավարությանը կից ընդհանուր տնօրենը և Խորհրդատվական խորհուրդը:

1960 թվականից Կատարի կառավարողն էր շեյխ Ահմադ բին Ալի աթ–Թանին, որը 1960 թ. գահընկեց արեց իր հորը՝ շեյխ Ալի բին Աբդալլահ բին Կասիմ աթ–Թանիին: Ընդհանրապես, պետք է նշել, որ գահըն-

կեց անելը բավականին տարածված էր աթ–Թանիների դինաստիայի ներսում: Կառավարողի տեղակալը և գահաժառանգը հանդիսանում էր շեյխ Խալիֆա բին Համադ աթ–Թանին, որը, ինչպես կտեսնենք, իր հերթին 1972 թ. գահընկեց արեց Ահմադ բին Ալի աթ–Թանիին:

II. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐԻ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

1. Կատարը և Արաբական Ֆեդերացիայի ստեղծման հարցը

1968 թ. հունվարի 16–ին Մեծ Բրիտանիայի լեյբորիստական կառավարության վարչապետ Հարոլդ Վիլսոնը հայտարարեց, որ բրիտանական կառավարությունը մտադիր է մինչև 1971 թ. վերջերը իր ռազմական ուժերը դուրս բերել Սուեզից արևելք ընկած տարածքներից և հեռանալ Պարսից ծոցում գտնվող արաբական շեյխություններից:

Բրիտանական կառավարության այդ որոշումն արտացոլումն էր այն նոր իրողությունների, որ ստեղծվել էին միջազգային հարաբերություններում 1950–1960 թվականներին: Մեծ Բրիտանիան թուլացել էր և այլևս աշխարհի նախկին գերիզոր տերությունը չէր: Նշանակալիորեն սահմանափակվել էին նրա քաղաքական, ռազմական և ֆինանսական հնարավորությունները, և նա ի վիճակի չէր ներկա գտնվել աշխարհի բոլոր մասերում և ազդեցիկ դերակատարում ունենալ: Ուժեղացել էին ազատագրական շարժումներն ամբողջ աշխարհում, որի մեջ ներգրավվել էին նաև Պարսից ծոցի արաբական շեյխությունները: Անկախություն էին նվաճել Հնդկաստանը, Պակիստանը և Շրի Լանկան, որի պատճառով կորել էր դեպի Հնդկաստան տանող ուղիների և նրանց անվտանգության ապահովման ստրատեգիական նշանակությունը: Ելնելով այդ իրողություններից Անգլիան նպատակահարմար գտավ հեռանալ այդ տարածքներից: Դա նշանակում էր նաև չեղյալ հայտարարել պրոտեկտորատի վերաբերյալ Պարսից ծոցի արաբական շեյխությունների հետ կնքված պայմանագրերը:

Սակայն բրիտանական ռազմական ուժերի դուրսբերումը չէր նշանակում, թե Անգլիան ընդհանրապես հեռանում էր Սուեզից արևելք ընկած տարածքներից և կորցնում իր հետաքրքրությունը նրանց նկատմամբ: Այդպես չէր: Նա պահպանելու էր իր քաղաքական և տնտեսական

հետաքրքրությունները արաբական շեյխությունների նկատմամբ: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ Մեծ Բրիտանիան խրախուսում էր Պարսից ծոցի բոլոր արաբական շեյխություններին՝ միավորվել մեկ ֆեդերալ պետության մեջ:

Ինչպիսի՞ն եղավ Կատարի արծագանքը հեռանալու վերաբերյալ բրիտանական կառավարության որոշմանը և ֆեդերացիա ստեղծելու վերջինիս ծգտումներին:

Բրիտանական կառավարության որոշումը, ինչպես նշում է արաբ պատմաբան Իբրահիմ Աբու Նաբն իր «Կատար. պետական շինարարության մի պատմություն» փաստահարուստ աշխատության մեջ, «մի յուրահատուկ խուճապ առաջացրեց մի քանի էմիրություններում, և ամեն մի կառավարող իրեն նետեց Լոնդոն՝ օգնություն և խորհուրդ ստանալու առ այն, թե ինչ անեն»: Նրա կարծիքով՝ բացառություն կազմեց Կատարը: Նա գրում է, որ եթե շատ–շատերի համար Մեծ Բրիտանիայի ցանկությունն անսպասելի էր, և պատրաստ չէին դրան, ապա դրությունն այլ էր Կատարում և նշում, որ Կատարի գահաժառանգ Խալիֆա բին Համադ աթ–Թանին, որը միաժամանակ իրականացնում էր կառավարության ղեկավարի ֆունկցիաներ, «չէր զգում, որ նա պատրաստ չէր դրան»: Այստեղ, ինչպես սույն աշխատության այլ մասերում, ակնհայտորեն նկատվում է շեյխ Խալիֆա բին Համադ աթ–Թանիի դերի ակնհայտ գերագնահատություն, որը երբեմն հասնում է չափազանցության:

Կարծում ենք, վերոնշյալ հեղինակն ավելի մոտ է ճշմարտությանը, երբ նշում է, որ «Ծոցի շեյխությունների հասարակական կարծիքը խանդավառորեն պահանջում էր անկախություն»:

Այդ նույն տեսակետին էր նաև Կատարի ղեկավարությունը, որը հանդես եկավ միասնության և սեփական ուժերին ապավինելու պահանջով:

Պարսից ծոցի արաբական շեյխություններում կամ էմիրություններում սկսվեց շարժում հանուն միասնության և ֆեդերացիայի: Առաջին կարևոր քայլը կատարեցին Աբու Դաբին և Դուբայը: 1968 թ. փետրվարի 18–ին Շարջայի ռադիոն ծայնասփռեց Աբու Դաբիի և Դուբայի համատեղ հայտարարությունն այն մասին, որ երկու երկրների միջև հիմնվում է ֆեդերալ միություն: Հայտարարությունը կոչ էր անում նս հինգ էմիրությունների՝ Շարջային, Աջմանին, Ռաս–ալ Խայմային, ալ–Ֆուջայրային և Ումմ ալ–Կավայնին, միանալ այդ ֆեդերալ միությանը: Միաժամանակ նրանք կոչ արեցին Կատարի և Բահրեյնի ղեկավարներին՝ «հանդիպել և քննարկել տարածաշրջանի ապագան, որպեսզի հասնեն համաձայնու-

թյան իրենց գործողությունների միասնության վերաբերյալ, որը կապահովի նրանց անվտանգությունը և կայունությունը»:

Կատարի արձագանքն այդ կոչին միանգամայն դրական էր: Նրա պատվիրակները եղան արաբական էմիրություններում և ուղղակի առաջարկեցին միավորվել և ստեղծել ֆեդերացիա, որն ընդգրկեր Պարսից ծոցի ինը էմիրությունները՝ Աբու Դաբին, Դուբայը, Շարջան, Աջմանը, Ռաս ալ–Խայման, Ալ–Ֆուջայրան, Ումմ ալ–Կավայնը, Բահրեյնը և Կատարը: 1968 թ. փետրվարի 25–ին վերոնշյալ բոլոր ինը էմիրությունների կառավարողները հանդիպեցին Դուբայում: Նրանք երեք օր տևած քննարկումներից հետո հայտարարեցին, որ Դուբայի 1968 թ. փետրվարի 18–ի պայմանագրով հիմնվում է «Արաբական Միացյալ էմիրություններ»: Նրանք արձանագրեցին նաև, որ Դուբայի պայմանագիրն ուժի մեջ է մտնում 1968 թ. մարտի 30–ին:

1968 թ. հուլիսի 7–ին տեղի ունեցավ ինը էմիրների նոր հանդիպումը, որի ժամանակ ստեղծվեց ժամանակավոր ֆեդերալ խորհուրդ, որը Կատարի գահաժառանգ շեյխ Խալիֆային ընտրեց նրա նախագահ: Սակայն իննյակի միջև շուտով սուր տարաձայնություններ ծագեցին ֆեդերալ միության սահմանադրության հարցի շուրջը: Կատարը և որոշ շեյխություններ գտնում էին, որ մշտական սահմանադրությունը պետք է ընդունել ֆեդերալ մարմինների ստեղծումից հետո, իսկ մյուսները, որոնք կազմում էին մեծամասնություն, գտնում էին, որ սկզբում պետք է ընդունել մշտական սահմանադրություն, հետո ստեղծել դաշնային կառավարման մարմինները:

Այդ ընթացքում պարզ դարձավ նաև, որ Անգլիայի դիրքորոշման մեջ տեղի է ունեցել փոփոխություն, և նա ավելի շատ հակված էր ստեղծել դաշնային միություն յոթ էմիրությունների միավորման հիմքի վրա՝ բացառելով Կատարը և Բահրեյնը՝ հավանաբար չցանկանալով մի նոր, համեմատաբար ավելի մեծ պետության հայտնվելն այդ տարածաշրջանում:

Այդուհանդերձ, ինը պետություններից կազմված ֆեդերացիայի կազմավորման աշխատանքները չդադարեցին: Ստեղծվեցին տարբեր կոմիտեներ, որոնց խնդիրն էր մշակել և Ֆեդերալ բարձրագույն խորհրդի հաստատմանը ներկայացնել այնպիսի հարցեր, ինչպես Ֆեդերացիայի դրոշը, հիմնը, տպագիր օրգանը, փոստային ծառայությունը, միասնական դրամը և այլն:

Ստեղծվեց նաև Ֆեդերալ բարձրագույն խորհուրդ, որի անդամները դարձան ինը էմիրությունների կառավարողները:

Ֆեդերացիայի կազմավորման հարցերը չէին կարող ստիպել Կատարի ղեկավարությանը՝ աչքաթող անել սեփական պետական հարցերը՝ հատկապես կապված հարևան պետությունների հարաբերությունների կարգավորման հետ: Եվ այդ բնագավառում արձանագրվեցին մի շարք հաջողություններ: 1968 թ. գահաժառանգ շեյխ Խալիֆան, որի ազդեցությունն ու դիրքերն ավելի ու ավելի էին ամրապնդվում Կատարի կառավարման համակարգում, այցելեց Իրան վերջինիս շահի հրավերով, և ձեռք բերվեց համաձայնություն, որ նրանց փոխհարաբերությունները հիմնվելու են հավասարության սկզբունքի վրա: Հարաբերությունները շարունակում էին մնալ սերտ Սաուդյան Արաբիայի հետ: Դրանից հետո, որը որոշակիորեն բարձրացրեց նրա քաղաքական կշիռը, Կատարը դրական դերակատարում ունեցավ հարևան էմիրությունների միջև տերիտորիալ վեճերը հարթելու գործում: Այդ ուղղությամբ նշանակալի էր նրա դերը Աբու Դաբիի, Դուբայի և Ռաս ալ–Խայմայի միջև տերիտորիալ տարաձայնությունները, իսկ Աբու Դաբիի և Ռաս ալ–Խայմայի միջև՝ միջցեղային վեճերը լուծելու գործում:

Շեյխ Խալիֆան կրկին փորձ արեց առաջ մղել ֆեդերացիայի կազմավորման գործընթացը: Նա դիմեց Աբու Դաբիի էմիր շեյխ Զայիդին և Բահրեյնի էմիր շեյխ Իսային՝ ֆեդերալ բարձրագույն խորհրդի նիստում, որը նշանակված էր 1969 թ. մայիսի 10–ին, քննարկել ապագա ֆեդերացիայի կառուցվածքային հարցերը, ինչպես պրեզիդենտի, փոխպրեզիդենտի, սահմանադրության և ժամանակավոր ֆեդերալ հանձնաժողովը ֆեդերալ կառավարության վերակազմելու խնդիրները:

Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի վրա: Երբ Կատարի շեյխ ալ–Խալիֆան առաջ քաշեց ֆեդերալ կառավարության ստեղծման հարցը, ապա նրա կարևոր փաստարկներից մեկն էլ այն էր, որ նման կառավարության ստեղծումն անհրաժեշտ էր Մեծ Բրիտանիայի հետ պաշտոնական բանակցություններ սկսելու՝ պրոտեկտորատի վերաբերյալ շեյխությունների հետ կնքված բոլոր պայմանագրերը չեղյալ հայտարարելու համար: Մեծ Բրիտանիան կտրուկ դեմ դուրս եկավ նման առաջակությանը՝ պատճառաբանելով, որ դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ երբ Մեծ Բրիտանիան XIX–XX դարերում նման պայմանագրեր էր կնքում Պայմանագրային Օմանի, Բահրեյնի, Կատարի և Քուվեյթի հետ, դրանք կնքվել են շեյխերի և ոչ թե պետությունների հետ:

Բրիտանական այս հակափաստարկը իր դերը խաղաց, և 1969 թ. մայիսի 10–ի նիստում, որը տեղի ունեցավ Կատարի մայրաքաղաք Դոհայում, այդ հարցերի շուրջը հնարավոր չեղավ հասնել համաձայնության: Սակայն Ֆեդերացիայի բարձրագույն խորհրդի հաջորդ նիստում՝ 1969 թ. հոկտեմբերի 21–ին, նրա մասնակիցները համաձայնվեցին Աբու Դաբիի կառավարող շեյխ Զայիդ բին Սուլթան ալ–Նահայանին ընտրել Ֆեդերացիայի պրեզիդենտ, իսկ Դուբայի կառավարող շեյխ Ռաշիդ բին Սայիդ ալ–Մակտումին՝ փոխպրեզիդենտ: Ժամանակավոր ֆեդերալ հանձնաժողովը վերակազմավորվեց դաշնային կառավարության, և շեյխ Խալիֆա աթ–Թանին ընտրվեց Ֆեդերալ կառավարության վարչապետ: Սակայն այդ նիստին անսպասելիորեն հայտնվեց Աբու Դաբիում բրիտանական քաղաքական գործակալը և պահանջեց ընթերցել Բահրեյնում բրիտանական ներկայացուցչի ինչ–որ հայտարարություն: Բրիտանական գործակալի ներխուժումը և պահանջը խորապես վիրավորեց էմիրներին, որոնք վրդովմունքով մերժեցին նրա պահանջը, իսկ մի քանիսն էլ, ի նշան բողոքի, զայրացած հեռացան նիստերի դահլիճից և վերադարձան իրենց երկրները: Արդյունքում այդ դիպվածի հետևանքով ձախողվեցին այդ նիստում ընդունված բոլոր որոշումները:

Դրանից հետո Ֆեդերալ միության ստեղծման հարցը, պատկերավոր ասած, հայտնվեց կոմայի մեջ: Ամբողջ մի տարի ոչինչ չարվեց: Բոլորը սպասում էին կամ նրա վերակենդանացմանը, կամ էլ նրա հանգիստ մահվանը մահճում: Ակնհայտ էր, որ տարբեր պատճառներով որոշ էմիրություններ, առաջին հերթին՝ Բահրեյնը և Կատարը կորցրել էին հետաքրքրությունը նրա նկատմամբ և նախկինի պես չէին ձգտում նրա ստեղծմանը: Այստեղ իր դերը խաղաց Իրանի և Բահրեյնի միջև հարաբերությունների կարգավորումը: Իրանը հավակնում էր Բահրեյնին: Վերջինս արաբական շեյխությունների ֆեդերացիայի ստեղծումով հույս ուներ ինչ–որ չափով ապահովագրել իրեն հնարավոր իրանական ագրեսիայից: Սակայն այն բանից հետո, երբ 1970 թ. ապրիլին ՄԱԿ–ը քվեարկություն անցկացրեց Բահրեյնի հարցի շուրջը, որի արդյունքներն ի նպաստ նրա էին, Իրանի սպառնալիքի հարցը վերացավ, և Բահրեյնն այլևս հետաքրքրություն չցուցաբերեց Արաբական Միացյալ էմիրություններին՝ անդամակցելու հարցի նկատմամբ:

Բահրեյնի դիրքի փոփոխությունը, ամենայն հավանականությամբ, իր ազդեցությունն ունեցավ նաև Կատարի դիրքորոշման վրա, թեև այստեղ գլխավոր շարժառիթներն այլ էին: Կատարը որոշեց գնալ իր անկա-

խությունը և ինքնիշխանությունն ամրապնդելու ուղղությամբ՝ արագացնելով այդ գործընթացը: 1970 թ. ապրիլին Կատարը Ֆեդերացիայի հարցում երկարատև սպասումներից ու անհաջողություններից հետո, հայտարարեց ժամանակավոր սահմանադրություն ընդունելու մասին, որով Կատարը համարվում էր անկախ և ինքնիշխան պետություն:

Բահրեյնի և Կատարի հեռանալուց հետո, ստեղծվեց, ինչպես նշել է, Արաբական Միացյալ էմիրություն՝ յոթ էմիրությունների միավորման հիմքի վրա:

2. Կատարի 1970 թ. ժամանակավոր սահմանադրության ընդունումը, բրիտանական պրոտեկտորատի վերացումը և Կատարի անկախության հռչակումը

1970–1971 թթ. վճռական տարիներ եղան անգլիական պրոտեկտորատի վերացման և Կատարի անկախ պետության ստեղծման պատմության մեջ: Այդ ուղղությամբ կարևոր քայլ հանդիսացավ ժամանակավոր սահմանադրության ընդունումը, որը գործողության մեջ դրվեց 1970 թ. ապրիլի 19–ին՝ կառավարող շեյխ Ահմադ իբն Ալի աթ–Թանիի կողմից: Նա բաղկացած էր 77 հոդվածներից և հինգ բաժիններից, որոնք վերաբերում էին պետության կառուցվածքին, իշխանությունների բաժանմանը, կատարցիների իրավունքներին, պարտականություններին և այլ հարցերի, ինչպես սովորաբար ընդունված է յուրաքանչյուր երկրի հիմնական օրենքը կազմելիս: Ժամանակավոր սահմանադրությունն արձանագրում էր, որ «Կատարը անկախ և ինքնիշխան պետություն է»: Նրա համակարգը համարվում էր դեմոկրատական, իսկ բնակչությունը՝ արաբ ազգի մի մասը:

Ժամանակավոր սահմանադրությունը գերագույն լիազորություններով էր օժտում երկրի կառավարողին, որը կրում էր էմիր տիտղոսը, իսկ աթ–Թանիներին հաստատեց որպես կառավարող դինաստիա՝ ժառանգական իրավունքով: Ստեղծվում էր Խորհրդատվական խորհուրդ և տասը հոգուց կազմված կառավարություն: Կաբինետի բոլոր անդամներին նշանակում կամ ազատում էր էմիրը:

1970 թ. մայիսի 29–ին կազմվեց Կատարի առաջին կառավարությունը՝ Նախարարների խորհուրդը, որը գլխավորեց գահաժառանգ շեյխ Խալիֆա իբն Համադ աթ–Թանին:

Այսպիսով՝ Կատարն ընդհուպ մոտեցել էր անկախ պետության նախաշեմին, և մնում էր կատարել լոկ մի ձևական, բայց ամենակարևոր քայլը՝ պաշտոնապես հայտարարել պրոտեկտորատի վերացման և անկախության մասին:

Անկախության նախաշեմին խիստ սրվեց պայքարը իշխանության համար աթ–Թանի կառավարող դինաստիայի ներսում: Դրա հիմնական պատճառն այն էր, որ գահաժառանգը՝ Խալիֆա իբն Համադը, որը միաժամանակ գրավում էր երկրի վարչապետի պաշտոնը, ոչ թե կառավարող էմիր Ահմադ իբն Ալիի որդին էր, այլ եղբորորդին, որն արդյունք էր ժամանակին աթ–Թանի ընտանիքի ներսում տիրող ուժերի փոխհարաբերակցության: Լինելով եռանդուն գործիչ՝ նա տարիների ընթացքում կարողացել էր քայլ առ քայլ իր ձեռքում կենտրոնացնել համարյա ամբողջ իշխանությունը և դառնալ Կատարի ամենաազդեցիկ մարդը: Պատահականություն չէ, որ Պոլ Գրինվեյը նրան բնութագրում է որպես «Կատարի կառավարող ամեն բանում, բացի տիտղոսից»: Նույն տեսակետն է արտահայտում Խալիֆա իբն Համադի կենսագիր Իբրահիմ Աբու Նաբը՝ նշելով, որ նա «իշխանությունն իր ձեռքում չկենտրոնացրեց միանգամից, այլ դա կատարեց աստիճանաբար», և արդյունքում «գործող կառավարողը միայն ձևականորեն էր պետության գլխավորը»: Անշուշտ, դա կառավարող էմիր Ահմադ իբն Ալիի սրտովը չէր, սակայն նա այլևս ի վիճակի չէր արմատապես փոխելու դրությունը: Նրա փոխարեն ակտիվորեն քաղաքական պայքարի մեջ մտավ նրա որդին՝ շեյխ Աբդուլ Ազիզը, «ի դեմս որի,— ինչպես մատնանշում է Իբրահիմ իբն Նաբը,— առաջացավ իշխանության մի նոր կենտրոն»: Կատարում ստեղծված իրավիճակը նա բնութագրում է որպես երկիշխանություն: Շեյխ Աբդուլ Ազիզն ամեն տեսակի խոչընդոտներ էր ստեղծում շեյխ Խալիֆայի գործունեության առջև և ձգտում էր հասնել այն բանին, որ հենց ինքն անմիջապես փոխարինի իր հորը:

Այդ «ներընտանեկան հակամարտությունն» իր ազդեցությունն ունեցավ պրոտեկտորատի վերաբերյալ անգլո–կատարյան 1916 թ. պայմանագիրը վերացնելու հարցում:

Կատարը և Մեծ Բրիտանիան համաձայնվել էին պրոտեկտորատի վերաբերյալ պայմանագրի պաշտոնական վերացման և Կատարի անկախության հռչակման մասին: Նախատեսվում էր, որ ընդամենը մեկ էջ կազմող այդ համաձայնագիրը պետք է ստորագրեր Կատարի կառավարող էմիր Ահմադ իբն Ալին, որից հետո երկու երկրների միջև պետք է այդ

ստորագրված համաձայնագրերի փոխանակությունը տեղի ունենար Կատարի մայրաքաղաք Դոհայում: Ընդ որում՝ ցանկալի չէր նրա ստորագրման և փոխանակման հետաձգումը: Սակայն այդ պահին էմիրը Կատարում չէր, այլ իր ամառային արձակուրդն անց էր կացնում Ժնևում, նույնանուն լճի գեղատեսիլ ափին գտնվող իր պալատում՝ իր հարեմով հանդերձ: Նա հավանաբար իր որդու ծնշման տակ հրաժարվեց վերադառնալ Դոհա, և պահանջեց հետաձգել այդ դեկլարացիայի ստորագրման արարողությունը, մինչև որ ինքը կավարտի իր արձակուրդը և կվերադառնա Կատար: Այդ բոլոր իրադարձությունները ծավալվում էին 1971 թ. սեպտեմբերի 1–ին:

Հնարամիտ շեյխ Խալիֆան, այնուամենայնիվ, ելք գտավ: Նա Ժնևում գտնվող և Կատարին պատկանող թագավորական պալատը համարեց Կատարի տերիտորիա և ինքնաթիռով այնտեղ էմիրին ստորագրելու համար ուղարկեց մեկէջանոց անգլո–կատարյան համաձայնագիրը: Դրանով իսկ պահպանվեց համաձայնագիրը Կատարում ստորագրելու արարողական պահանջը, իսկ ինքը՝ Կատարի գահաժառանգ շեյխ Խալիֆան, այդ նույն օրը պաշտոնապես հռչակեց Կատարի անկախությունը:

Կատարի անկախության վերաբերյալ դեկլարացիան ուժի մեջ մտավ 1971 թ. սեպտեմբերի 3–ին: Այդ օրը՝ սեպտեմբերի 3–ը, հայտարարվեց Կատարի ազգային տոն:

Բայց պայքարը աթ–Թանիների ընտանիքում չդադարեց: Աբդուլ Ազիզը չհրաժարվեց իր մտադրությունից՝ չթողնի, որ էմիրի գահն անցնի Խալիֆային, և ինքը փոխարինի իր հորը պետության ղեկավարի պաշտոնում: Նա զինեց մի շարք բեդվինական ցեղերի, կապեր հաստատեց անվտանգության մարմինների աշխատակիցների հետ նրանցից որոշ մարդկանց իր կողմը գրավելու համար: Լարվածությունն իր գագաթնակետին հասավ 1972 թ. փետրվարին, երբ էմիրը կրկին բացակայում էր երկրից և որսորդության էր մեկնել Իրան: Օգտվելով նաև այդ առիթից՝ շեյխ Խալիֆան, վախենալով, որ Աբդուլ Ազիզը կարող է իրեն կանխել իշխանությունը գրավելու հարցում, 1971 թ. փետրվարի 21–ին կատարեց պետական հեղաշրջում, որը Կատարի պատմության մեջ մտել է «անարյուն պետական հեղաշրջում» հորջորջումով: Շեյխ Խալիֆան դարձավ Կատարի նոր էմիր:

Այսպիսով՝ Կատարը ձերբազատվեց պրոտեկտորատի անվան տակ նրան պարտադրված բրիտանական կապանքներից և դարձավ անկախ ու ինքնիշխան պետություն՝ պաշտոնապես կրելով «Կատարի

Պետություն» անվանակոչումը: Արաբական աշխարհը համալրվեց ևս մեկ անկախ պետությամբ:

III. ԿԱՏԱՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. Կառավարման համակարգի հետագա կարգավորումը: Էմիր Խալիֆա իբն Համադի «Ուղղիչ շարժումը»

Նորանկախ Կատարի առջև, ինչպես սովորաբար լինում է նման պայմաններում հայտնված յուրաքանչյուր պետության հետ, կանգնեցին մի շարք պետական, քաղաքական և սոցիալ–տնտեսական բարդ և անհետաձգելի խնդիրներ: Դրանց լուծումից էին կախված երկրի ապագան և նրա տեղը միջազգային հարաբերություններում: Նոր էմիրը՝ շեյխ Խալիֆա իբն Համադը, լավ էր գիտակցում այդ բոլորը և անհապաղ ձեռնամուխ եղավ այդ խնդիրների իրագործմանը:

Նա տվյալ պահի համար առաջնային համարեց պետական–վարչական, կառավարման համակարգի կատարելագործումը և սկսեց նրանից, որ կանոնակարգեց նավթից ստացվող եկամուտների օգտագործման պետական մեխանիզմը: Նրա նախորդը սահմանել էր այդ եկամուտները չորս հավասար մասերի բաժանելու սկզբունքը: Ըստ այդմ՝ մեկ քառորդը հատկացվում էր վարչական ապարատին՝ ադմինիստրացիային, մեկ քառորդը՝ երկրի կառավարողին՝ էմիրին, մեկ քառորդը թագավորական դինաստիայի անդամներին, իսկ մնացյալ մեկ քառորդը՝ երկրի զարգացմանը: Ստացվում էր, որ նավթից ստացվող եկամուտների, որոնք ըստ էության միակ եկամուտներն էին, միայն մեկ քառորդն էր ծախսվում երկրի զարգացման նպատակների համար: Մինչդեռ միայն էմիրն այնքան էր ստանում, որքան հատկացվում էր ամբողջ երկրի տնտեսությանը, կրթությանը, առողջապահությանը և այլն: Եվ եթե դրան ավելացնենք նաև այն փաստը, որ էմիրը ստանում էր նաև մաքսերից ստացվող եկամուտների ուղիղ կեսը, ապա Կատարում պետական մակարդակով գործող եկամուտների յուրացման և սեփականացման կողոպտիչ բնույթն ավելի ակնառու կդառնա: Այդ ժամանակ աթ–Թանիների թագավորական ընտանիքի անդամների թիվը հասնում էր մոտ 1000 մարդու: Այդ հազարը դարձյալ ստանում էր ճիշտ այնքան, որքան ամբողջ երկրի տնտեսությունը: Իսկ եթե այդ ամենը թվերով արտահայտելու լինենք, ապա պատ-

կերն ավելի ապշեցուցիչ կլինի: Այդ ժամանակ Կատարում նավթ օրական արդյունահանվում էր 600 հազ. բարել, իսկ նրանից ստացվող տարեկան եկամուտները կազմում էին 5 մլրդ 400 մլն ԱՄՆ դոլար այն պարագայում, երբ Կատարի ազգաբնակչությունն այդ ժամանակ կազմում էր ընդամենը 250 հազ. մարդ: Ուստի նավթից և մաքսերի գանձումից ստացվող էմիրի «աշխատավարձը» պատմագիտական գրականության մեջ անվանվել է «առասպելական և անհավանական»:

Վերոնշյալից ակնհայտ է դառնում պետական մակարդակով կառավարող դինաստիայի կողմից երկրի հարստությունը արտադրության (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, արհեստագործություն և այլն) և սոցիալական (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովագրություն, աշխատավարձ և այլն) ոլորտից դուրս բերելու և կառավարող վերնախավի անձնական սպառողական պահանջների բավարարմանն ուղղորդելու քաղաքականության կործանարար լինելը: Եվ դա հանդիսանում էր Կատարի աղքատության ու հետամնացության ամենագլխավոր պատճառներից մեկը:

Նման պետական քաղաքականությունը շարունակելու դեպքում, հասկանալի է, որ Կատարը կդառնար հեռանկարից զուրկ պետություն: Նոր էմիրը դա լավ էր հասկանում և անհրաժեշտ գտավ փոխել այդ վնասակար պետական քաղաքականությունը:

Նա նախ վերացրեց երկրում հաստատված երկիշխանությունը և կարողացավ մեկուսացնել գահին հավակնող իր քաղաքական հակառակորդներին: Ամբողջ իշխանությունը կենտրոնացնելով իր ձեռքում և ամրապնդելով իր դիրքերն աթ–Թանիների ընտանիքում և երկրում՝ էմիրը կատարեց իր կարևոր քայլերից մեկը: Նա դիմեց եկամուտների բաժանման նոր պետական համակարգի հաստատմանը: Նրա առաջին դեկրետներից մեկով վերացվեց էմիրին հատկացվող նավթային եկամուտների 25 և մաքսերից ստացվող եկամուտների 50%–ը, և այդ բոլորը նա ուղղորդեց պետական գանձարան՝ հասարակական կարիքների բավարարման և Կատարի հասարակական ու տնտեսական կառուցվածքի արդիականացման համար: Դա կարևոր նշանակություն ունեցավ Կատարը ժամանակակից պետության վերածելու ճանապարհին: Այդ քայլի շնորհիվ հնարավոր եղավ անմիջապես բարձրացնել պետական ծառայողների և զինվորականների աշխատավարձը, իսկ պետական բնակարաններում բնակվող աշխատավորներն ազատվեցին դրա համար փոխհատուցում և վարձ վճարելուց: Այդ ամենը իր հերթին

նպաստեց պետական ապարատի աշխատանքների բարելավմանը և ներքին կայունության ամրապնդմանը:

Ինչպես նշվել է, որոշվել էր Կատարում ստեղծել Խորհրդատվական խորհուրդ, որն ամրագրվել էր նաև 1970 թ. ժամանակավոր սահմանադրության մեջ: Սակայն նախկին էմիր Ահմադ իբն Ալին սահմանադրական այդ պահանջն այդպես էլ չիրագործեց, և դա մնաց թղթի վրա, որը երկրի ներսում խոր դժգոհություն էր առաջացնում և շեյխ Խալիֆայի կողմից օգտագործվեց Ահմադ իբն Ալիին տապալելու գործում: Նոր էմիրը, ստանձնելով իշխանությունը, անմիջապես հայտարարեց, որ սահմանադրական այդ պահանջը շուտով կիրականացվի: Եվ նա եղավ իր խոստման տերը: 1972 թ. Կատարում ստեղծվեց Խորհրդատվական խորհուրդ՝ առաջին ներկայացուցչական մարմինը Կատարի պատմության մեջ: Ինքնին դա կարևոր երևույթ էր, սակայն հանուն արդարության պետք է նշել, որ նրա իրականացման ձևը, ինչպես նաև իրավունքները, իրենց վրա կրում էին արևելյան հասարակություններին բնորոշ գծերը և սահմանափակումները: Այդ մարմինը չստեղծվեց ժողովրդավարական՝ ընտրությունների ճանապարհով, այլ նշանակվեց էմիր Խալիֆայի կողմից: Սկզբնական շրջանում նա կազմված էր 20 անդամներից, որոնց բոլորին նշանակում էր էմիրը: 1975 թ. նրա անդամների թիվը հասցվեց 30–ի, իսկ 1988 թ.՝ 35–ի: Նրա գործունեության ժամկետը սահմանվեց չորս տարի, և ամեն չորս տարին մեկ այդ ժամկետը երկարացվում էր: Վերջին անգամ այն երկարացվել է 2002 թ.:

Իսկ ինչ վերաբերում է Խորհրդատվական խորհրդի իրավասություններին, ապա էմիրի կողմից նրան իրավունք էր վերապահվել խորհուրդներ տալ կառավարությանը միայն այն հարցերի վերաբերյալ, որոնց շրջանակները սահմանել էր ինքը՝ էմիրը:

Էմիր Խալիֆա իբն Համադի ձեռնարկած այդ քայլերը, որոնք ընդհանուր առմամբ արժանի են դրական գնահատականի, Կատարի պատմության մեջ մտել է որպես «Ուղղիչ շարժում»: Ընդհանուր առմամբ, այդ գնահատականը ճիշտ է: Նա հասցրեց որոշ սխալներ վերացնել կամ ուղղել Կատարի պետական կառուցվածքի, ներքին, այդ թվում և տնտեսական, ինչպես նաև արտաքին քաղաքականության բնագավառներում: Դա նոր հեռանկարներ բացեց Կատարի առջև: Բայց շատ բաներ էլ նա այդ բնագավառներում չկարողացավ կամ չցանկացավ անել:

Էմիր Խալիֆան, նստելով Կատարի գահին, կազմեց նոր կառավարություն: Կառավարության 15 անդամներից 10–ը նրա եղբայրները և

որդիներն էին: Դա պատահականություն չէր: Էմիրը, որ իշխանության գլուխ էր եկել պետական հեղաշրջման և իր նախորդին՝ հորեղբորը, գահընկեց անելու ուղիով, մտահոգ էր իշխանությունն ամրապնդելու հարցում՝ ամենայն հավանականությամբ չբացառելով, որ այդ նույն կերպ կարող են վարվել նաև իր հետ: Երկրի կառավարությանը կազմի առումով տալով «ներընտանեկան» կառավարության բնույթ՝ նա հույս ուներ ամեն ինչ կենտրոնացնել իր ձեռքում և անսասան պահել իշխանությունը: Սակայն դա նրան չհաջողվեց:

2. 1995 թ. պալատական հեղաշրջումը: Մշտական սահմանադրության ընդունումը 2003 թվականին և իշխանության հիմնական ճյուղերի սահմանազատումը

Խմորումները աթ–Թանիների ընտանիքում գահին տիրանալու հարցում շարունակվում էին, իսկ պալատական հեղաշրջումները ավանդույթ էին դառնում:

1995 թ. հունիսի 27–ին, երբ էմիր Խալիֆա իբն Համադը ճանապարհորդում էր Շվեյցարայով և գտնվում էր ժնևում, նրա որդին՝ Համադ իբն Խալիֆան, որին հայրը 1977 թ. նշանակել էր գահաժառանգ, կատարեց պետական հեղաշրջում, գահընկեց արեց հարազատ հորը և դարձավ Կատարի էմիր:

Գահընկեց էմիրը հեռացավ Կատարից և հաստատվեց Աբու Դաբիում:

Դա թվով երրորդ անընդմեջ պալատական հեղաշրջումն էր Կատարում: 1960 թ. շեյխ Ահմադ իբն Ալին բրիտանացիների օգնությամբ գահընկեց արեց իր հորը՝ Ալի իբն Աբդուլլահին, 1972 թ. Ահմադ իբն Ալին տապալեց նրա եղբորորդին՝ շեյխ Խալիֆա իբն Համադը, իսկ վերջինս 1995 թ. գահից հեռացվեց իր որդու՝ Համադ իբն Խալիֆայի կողմից:

Այսպիսին է կյանքը, մանավանդ պալատական կյանքը, որտեղ մարդկային և ազգակցական զգացմունքների համար տեղ չկա, քանի որ դրանք՝ նման զգացմունքները, միշտ իրենց տեղը զիջում են իշխանատենչության սառնասիրտ տրամաբանությանը:

Իսկ մեզ մնում է ավելացնել, որ Կատարում 1995 թ. կատարված հեղաշրջման ժամանակ նույնպես արյուն չթափվեց՝ որդին հայրասպան չդարձավ:

Դա նույնպես քաղաքական կուլտուրա է:

Նոր էմիրի առջև նույնպես կանգնած էր Կատարի պետական կառուցվածքի հետագա կատարելագործման և երկրի մոդեռնացման խնդիրը, որը սկսել էր նրա նախորդը, բայց 1995 թ. պալատական հեղաշրջման պատճառով չկարողացավ հասցնել իր ավարտին:

Այդ բնագավառում էմիր Համադ իբն Խալիֆայի քաղաքականության մեջ առանցքային նշանակություն ունեցավ Կատարի մշտական սահմանադրության ընդունումը: 1999 թ. նրա դեկրետով ստեղծվեց մշտական սահմանադրության նախապատրաստման կոմիտե: Վերջինիս պատրաստած նախագիծը 2003 թ. ապրիլի 29–ին դրվեց հանրաքվեի, որի մասնակիցների 96,6%–ն իր հավանությունը տվեց սահմանադրության նախագծին և սահմանադրությունը մտավ ուժի մեջ:

Դրա հիման վրա հստակեցվեցին իշխանության գործադիր, օրենսդիր և դատական մարմինների իրավասության շրջանակները:

Կատարը բացարձակ միապետություն է: էմիրը համարվում է պետության ղեկավարը, որն իրականացնում է բարձրագույն գործադիր իշխանությունը: էմիր Համադ իբն Խալիֆան միաժամանակ Կատարի զինված ուժերի գլխավոր հրամանատարն է և զբաղեցնում է նաև պաշտպանության նախարարի պաշտոնը: Նրա իշխանությունը որևէ կերպ չի սահմանափակված:

Գործադիր իշխանության մասն է կազմում կառավարությունը, որը նշանակվում է էմիրի կողմից և պատասխանատու է նրա առջև: 2003 թ. սահմանադրության ընդունումից հետո կազմված առաջին կառավարությունը գլխավորում է էմիրի եղբայրը՝ շեյխ Աբդուլլահ իբն Խալիֆան, որը միաժամանակ զբաղեցնում է ներքին գործերի նախարարի պաշտոնը: Սակայն գահաժառանգը էմիրի երրորդ որդին՝ շեյխ Ջասիմ իբն Համադն է:

էմիրի մյուս եղբայրները և որդիները գրավում են կառավարության ամենաբարձր պաշտոնները. նրանք վարչապետի տեղակալներ են, արտաքին գործերի և այլ նախարարներ: Այլ կերպ ասած՝ կառավարությունը հիմնականում կազմված է աթ–Թանի ընտանիքի անդամներից:

2003 թ. սահմանադրության համաձայն՝ իշխանության օրենսդրական ճյուղը ներկայացնում է Խորհրդատու խորհուրդը՝ Մաջլիս աշ–Շուրան: Դա միպալատանի մարմին է, որը, 1970 թ. ժամանակավոր սահմանադրության համաձայն, բաղկացած էր 35 անդամներից, որոնց բոլորին նշանակում էր էմիրը: 2003 թ. սահմանադրությունը որոշ փոփոխություններ մտցրեց այդ բնագավառում: Մաջլիս աշ–Շուրայի անդամների թիվը հասցվեց 45–ի, ընդ որում՝ դրա երկու երրորդն ընտրվում է,

իսկ մեկ երրորդին նշանակում է էմիրը: Այդ մարմինն իրականացնում է միայն ու միայն խորհրդատվական ֆունկցիաներ և որպես այպիսին իր խորհուրդներով օգնում է էմիրին՝ ձևավորելու Կատարի ներքին և արտաքին քաղաքականության հիմնախնդիրները, առանց, սակայն, օրենսդրական լիազորությունների:

Նոր սահմանադրությունը կանոնակարգեց նաև Մունիցիպալ խորհրդի աշխատանքները: 2003 թ. ապրիլին տեղի ունեցան Կենտրոնական մունիցիպալ խորհրդի ընտրությունները: 29 հոգուց կազմված այդ խորհրդի խնդիրն է բարելավել Կատարի տեղական մարմինների աշխատանքները:

Ինչ վերաբերում է իշխանության դատական ճյուղին, ապա այն բավականին յուրօրինակ է: Դատական ամբողջ համակարգը ենթակա է էմիրի հայեցողությանը և վերահսկվում է նրա կողմից: Թեև կիրառվում է քաղաքացիական կոդեքս, և գոյություն ունի Բողոքարկման դատարան, սակայն նրանց կիրառման ոլորտը շատ սահմանափակ է: Ավելի գերակայող է իսլամական օրենքը՝ շարիաթի նորմերը, մանավանդ ընտանեկան և անձնական ոլորտներում: Բնորոշ է նաև այն պարագան, որ էմիրը, որը վերահսկում է ամբողջ դատական համակարգը և լինելով բացարձակ միապետ՝ թեև պատասխանատու չէ որևէ մեկի կամ որևէ մարմնի առջև, այդուհանդերձ, չի կարող խախտել շարիաթի օրենքները: Ընդհակառակը, նրա պարտականությունների մեջ մտնում է հետևել շարիաթի նորմերի անշեղ կատարմանը: Դեռ ավելին՝ գործնականում նա պարտավոր է հաշվի նստել կրոնական հաստատությունների և Կատարի երևելի ցեղապետների ու շեյխերի կարծիքի հետ: Այդպիսին է հնուց եկող ավանդույթը: Այդ նույն ավանդույթի համաձայն՝ Կատարի յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի անձամբ դիմելու և բողոքարկելու էմիրին: Այդ կապակցությամբ հաճախ նշվում է, որ Կատարի դատական համակարգում կիրառվում է կոնսենսուսի սկզբունքը, երբ բոլոր կողմերը՝ էմիրը, հասարակության երևելիները և մյուս անդամները, վեճերը կամ բողոքարկումները շատ հաճախ լուծում են ընդհանուր համաձայնության սկզբունքների հիման վրա:

Կատարի սահմանադրությունը երկրում մտցրեց ընդհանուր ընտրական իրավունք: Ընտրական իրավունքից օգտվում են նաև կանայք: Էմիր Համադ իբն Խալիֆան կիրառեց որոշ ազատականացում, որից օգտվում են նաև կանայք: Կանայք բավականին ազատ են հագուստներ կրելու հարցում, կարող են ավտոմեքենա վարել և այլն:

Ազատականացումը տարածվեց նաև զանգվածային լրատվամիջոցների վրա: Որպես օրինակ սովորաբար նշվում է Դոհայից հեռարձակվող «ալ–Ջազիրա» հեռուստաալիքը, որը գրաքննության չի ենթարկվում և ձեռք է բերել մեծ հեղինակություն ոչ միայն Կատարում, այլև արաբական ու այլ երկրներում: Կատարում հրատարակվում են «Ալ–Վաթան», «Գալֆ Թայմզ» և «Պենինսուլա» օրաթերթերը: Իսկ ինչ վերաբերում է քաղաքական կազմակերպություններին, ապա իրադրությունն այստեղ բոլորովին այլ է: Կատարում չի թույլատրվում քաղաքական կուսակցությունների գործունեությունը և նման կազմակերպություններ գոյություն չունեն:

3. Սոցիալ–տնտեսական իրադրությունը Կատարում XX դարի վերջերին և XXI դարի սկզբներին: Արդիականացման միտումները

Կատարի պետության արդիականացման հետ միասին երկրի ղեկավարության առջև կանգնած է նաև նրա տնտեսական և սոցիալական հարաբերությունների արդիականացման հարցը: Դրանք փոխադարձաբար կապակցված են միմյանց հետ, և յուրաքանչյուրը մյուսի համար ծառայում է յուրատեսակ պատվանդան:

Կատարի գլխավոր հարստությունը նավթն է, իսկ տնտեսության հիմնական ճյուղը կամ ողնաշարը՝ նավթարդյունաբերությունը: Նավթի հետազոտված պաշարները կազմում են մոտ 15 մլրդ բարել: Հաշվված է, որ եթե պահպանվեն նավթի արդյունահանման ժամանակակից բարձր տեմպերը, ապա նավթի պաշարները կբավարարեն ևս 23 տարի: Այդ հանգամանքը խիստ մտահոգում է Կատարի էմիրին և կառավարությանը, որոնք կանգնած են ծանր ընտրության առջև՝ կա՛մ պահպանել նավթարդյունահանման այժմյան տեմպերը և մոտ 20 տարի անց այլևս ոչինչ չունենալ, կամ նվազեցնել նավթարդյունահանումը և դրանով որոշ ժամանակ հետաձգել նրա սպառման վերջնական պահը, որը կնշանակի տնտեսության զարգացման տեմպերի նվազում: Բայց դա ելք չէ, և Կատարի ղեկավարությունն ընտրել է տնտեսության դիվերսիֆիկացիայի ուղին, որն ավելի հստակ կերպով ուրվագծվեց Համադ իբն Խալիֆայի էմիր դառնալուց հետո, հատկապես XXI դարի սկզբներից: Դա նշանակում է թուլացնել տնտեսության կախվածությունը նավթից և զարգացնել արդյունաբերության նոր ճյուղեր, որի շնորհիվ մի կողմից՝ կնվազի նավթարդյունաբերության դերը երկրի տնտեսության մեջ,

մյուս կողմից՝ կստեղծվեն արդյունաբերական նոր ճյուղեր, որն իր հերթին կապահովի բնակչության զբաղվածությունը:

Սակայն տնտեսության դիվերսիֆիկացիայի և արդիականացման խնդիրները միայն դրանով չեն սահմանափակվում: Կատարը թևակոխել է արդիականացման փուլը մի այնպիսի պատմական ժամանակաշրջանում, երբ գլոբալ մասշտաբներով համաշխարհային տնտեսության մեջ առաջնակարգ տեղ են գրավում ինֆորմացիոն տեխնոլոգիաները և գիտատար ուղղությունները: Նման բարենպաստ պայմաններում Կատարը ևս մեծ ուշադրություն է դարձնում այսպես կոչված «գիտական տնտեսության»՝ «նոլիջ էկոնոմիի» («knowledge economy») ստեղծմանը և զարգացմանը: Այդ ուղղությամբ արդեն կատարվել են առաջին կարևոր քայլերը: 2004 թ. ստեղծվեց Կատարի «Գիտության և տեխնոլոգիայի պարկը», որի նպատակն է զարկ տալ այդ ուղղությունների զարգացմանը և դրանում ներգրավել առաջավոր տեխնոլոգիաների վրա հիմնված արտասահմանյան ընկերություններին և ձեռներեցներին:

Կատարի էմիրը 1990–ականների վերջերից և 2000–ականների սկզբներից վարում է օտարերկրյա կապիտալի ներդրումը Կատարի տնտեսության մեջ խրախուսելու քաղաքականություն՝ դրա համար ստեղծելով ամենաբարենպաստ պայմանները և վերացնելով նրա ճանապարհին եղած ամեն տեսակի իրավական և այլ բնույթի խոչընդոտները:

Տնտեսության դիվերսիֆիկացիայի քաղաքականության բաղկացուցիչ մասն է կազմում բանկային համակարգի զարգացումը Կատարում և նրա վերածումը միջազգային բանկային կենտրոնի: Այդ առումով էմիրը խրախուսում է օտարերկրյա բանկերի կամ նրանց մասնաճյուղերի հաստատումը և գործունեությունը Կատարում: Դրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ Քուվեյթում և Արաբական Միացյալ Էմիրություններում, որոնք նույնպես նավթարդյունահանող երկրներ են և ունեն ֆինանսական մեծ միջոցներ, արգելված է օտարերկրյա բանկերի գործունեությունը: Հետևաբար, նրանք չեն կարող լինել Կատարի մրցակիցը: Միակ մրցակիցը տարածաշրջանում Բահրեյնն է, որը նույնպես ձգտում է դառնալ բանկային գործունեության կենտրոն:

Կատարի տնտեսության դիվերսիֆիկացիայի և արդիականացման ուղղությամբ իրականացվող քաղաքականությունն արդեն տալիս է իր արդյունքները: Նավթից ստացվող եկամուտների զգալի մասը կառավարությունն օգտագործում է ոչ միայն նավթարդյունաբերական, այլև արդյունաբերության այլ ճյուղերի զարգացման համար: Մեծ տեղ է

հատկացվում գազի արդյունահանմանը: Կատարում են գտնվում գազի համաշխարհային պաշարների 5%–ը, և գազի պաշարներով նա աշխարհի երրորդ պետությունն է:

Այսօր Կատարում Ումմ Սաիդում գործող խոշոր նավթավերամշակման գործարանի կողքին գործում են արդյունաբերական նոր կառույցներ: Դոհայում շահագործման են հանձնվել մետալուրգիական կոմբինատը, որն աշխատում է բերովի երկաթահանքի հիման վրա, մեքենաշինական, նավաշինական, նավթավերամշակման և սննդարդյունաբերության գործարանները: Դոհան՝ նախկին ձկնորսական խղճուկ բնակավայրը, վերածվել է արդյունաբերական կարևոր կենտրոնի: Երկրի տարբեր վայրերում կառուցվել են նավթաքիմիական, պարարտանյութերի, ցեմենտի և այլ ժամանակակից գործարաններ, մի քանի աղազերծման և ջերմաէլեկտրական կայաններ և այլն: Աղազերծված ջուրն օգտագործվում է ոչ միայն խմելու, այլև ոռոգման նպատակներով:

Վերելք է ապրում նաև ավանդական արդյունագործությունը, ինչպես կտավի, գորգերի, կահույքի, նավակների և այլ տնայնագործական իրերի արտադրությունը: Մոռացության չի մատնվել նաև բնական մարգարիտի արդյունահանումը, որը թեև ծանր հարված ստացավ ճապոնացիների կողմից արհեստական մարգարիտի արտադրությունից հետո, բայց, այդուհանդերձ, իսպառ չի վերացել և շատ–շատերի համար մնում է ապրուստի հայթայթման գլխավոր միջոցը: Իր նշանակությունը չի կորցրել նաև ձկնարդյունաբերությունը, մանավանդ մանր ծովախեցգետինների որսը, որի մեծ մասն արտահանվում է:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը, ապա այն կարևոր դեր չի խաղում Կատարի տնտեսության մեջ: Մշակելի հողատարածությունը կազմում է երկրի ընդհանուր տարածության ընդամենը 1%–ը, իսկ ոռոգվող հողատարածքները կազմում են 80 քառ. կմ: Հիմնականում զարգանում է օազիսային հողագործությունը: Մշակվում են ցորեն, եգիպտացորեն, փյունիկյան արմավ, բանջարեղեն և այլն: Ավելի նշանակալի է անասնապահության դերը, հատկապես քոչվոր և կիսաքոչվոր բեդվինական ցեղերի համար, որոնք սովորաբար բուծում են ուղտ, ոչխար և այծ:

Երկրի տնտեսության և նրա ճյուղերի տեսակարար կշռի պատկերը հստակ կերպով երևում է Կատարի համախառն ներքին արդյունքի՝ ՀՆԱ–ի, կառուցվածքից: 2003 թ. տվյալներով ՀՆԱ–ն կազմել է 14 մլրդ 54 մլն ԱՄՆ դոլար: Նրա տարեկան աճը կազմում է 8,5%: ՀՆԱ–ի մեջ գյուղատնտեսության բաժինը կազմում է 0,4%, արդյունաբերությանը՝

70,8, իսկ սպասարկմանը՝ 28,8%: Արդյունաբերության մեջ նավթի բաժինը գազի հետ միասին կազմում է 55%, որն արդեն մի փոքր նվազել է՝ համեմատած նախորդ ժամանակաշրջանների հետ:

Շատ արագ թափով է աճում ՀՆԱ–ն: 2001 թ. այն կազմել է 11 մլն 800 հազար, 2003 թ.՝ 21 մլն 500 հազար, իսկ 2005 թ.՝ 39 մլն 607 հազ. ԱՄՆ դոլար: Դա շատ բարձր թիվ է, և այդ ցուցանիշներով Կատարը պատկանում է աշխարհի ամենահարուստ և զարգացած երկրների թվին:

Զգալի զարգացում են ապրել նաև ենթակառույցները, մասնավորապես ճանապարհաշինարարությունը: Կատարում գոյություն չունի երկաթուղի, բայց լավ են զարգացած ավտոճանապարհները, որոնց երկարությունը կազմում է 1230 կմ: Դրանք ասֆալտապատված առաջնակարգ ճանապարհներ են և հանդիսանում են երկրի հիմնական տրանսպորտային զարկերակները: Նավթամուղի երկարությունը 722 կմ է, իսկ գազամուղինը՝ 902 կմ: Կատարի օդային դարպասներն են 4 օդանավակայանները, որոնցից գլխավորը Դոհայի միջազգային օդանավակայանն է, իսկ ծովային դարպասներն են Դոհայի, Ում Սահիդի և Հալուլի նավահանգիստները:

Երկրում առկա հարստությունը և ֆինանսական վիթխարի միջոցներն իրենց դրական ազդեցությունն են թողել բնակչության նյութական մակարդակի բարձրացման և սոցիալական դրության բարելավման վրա: Մեծ ուշադրություն է դարձվում կրթությանը և առողջապահությանը: Կատարում կրթությունը, սկսած մանկապարտեզից մինչև քոլեջ, ձրի է: Դոհայում գործում է համալսարան՝ Կատարի համալսարանը, ինչպես նաև մի շարք այլ կրթական հաստատություններ, որոնց հիման վրա ստեղծվել է Կատարի Կրթական քաղաքը: Այստեղ իրենց մասնաճյուղերն են բացել նաև ամերիկյան մի շարք համալսարաններ, ինչպես «Կարնեգի Մելլոն» համալսարանը, Ջորջթաունի համալսարանը, Տեխասի համալսարանը, Վիրջինիայի համալսարանը և Վեյլ Կորնելլ բժշկական քոլեջը: Պատահականություն չէ, որ Կատարում կտրուկ բարձրացել է գրագիտության տոկոսը: Նախկինում համատարած անգրագիտության երկիր Կատարում այսօր բնակչության 85%–ը համարվում է գրագետ: Էմիր Համադ իբն Խալիֆայի 2002 թ. դեկրետով Կատարում ստեղծվել է Կրթության բարձրագույն խորհուրդ, որը հսկում է կրթական համակարգը և կանխագծում նրա հետագա զարգացման և կատարելագործման ուղիները, ներառյալ համալսարանական կրթությունը: Նրա գլխավոր ծրագիրը, որը արդեն գործողության մեջ է դրվել, կոչվում է «Կրթություն նոր դարաշրջանի համար»:

Մեծ ուշադրություն է դարձվում նաև առողջապահությանը: Կատարում բժշկությունը ձրի է, հաստատվել է սոցիալական ապահովագրության համակարգ:

Կատարը կարիք ունի բարձրագույն որակավորում ունեցող մասնագետների: Եվ քանի որ սեփական ուժերով առայժմ չի կարող բավարարել այդ պահանջները, նա ստիպված է նման բազմաթիվ մասնագետներ հրավիրել արաբական, ասիական և եվրոպական տարբեր երկրներից:

4. Կապերն արտաքին աշխարհի հետ

Անկախության հռչակումից հետո Կատարի գլխավոր խնդիրներից մեկը նրա միջազգային կապերի ընդլայնումը և դիրքերի ամրապնդումն է: Այդ տեսակետից նրա համար կարևոր է երեք բնագավառ՝ անդամակցությունը տարաբնույթ միջազգային կազմակերպություններին, հարաբերություններն արաբական երկրների հետ ու մասնակցությունն ընդհանուր արաբական գործընթացներին և հարաբերությունները այլ՝ գլխավորապես արևմտյան երկրների հետ:

Կատարը հաջողությամբ լուծեց առաջին խնդիրը: Նա ՄԱԿ–ի անդամ է, մշտապես ընդգծում է իր հավատարմությունը նրա կանոնադրությանն ու հռչակած հիմնախնդիրներին և գործնականում հետևում է նրա սկզբունքներին խաղաղության պահպանման և միջազգային անվտանգության ապահովման հարցերում: Կատարն անդամակցում է ՄԱԿ–ի այնպիսի կազմակերպությունների, ինչպես՝ ՅՈՒՆԵՍԿՕ–ին, ՖԱՕ–ին (Սննդի և գյուղատնտեսության կազմակերպություն), Միջազգային արժութային ֆոնդին, Համաշխարհային բանկին, ՕՊԵԿ–ին, Միջազգային առևտրական կազմակերպությանը, Իսլամական կոնֆերանս կազմակերպությանը, Ինտերպոլին և այլն:

Կատարի համար կենսական նշանակություն ունեն հարաբերությունները արաբական երկրների հետ, և դա հասկանալի է, քանի որ նա կազմում է արաբական աշխարհի բաղկացուցիչ մասը: Նա Արաբական պետությունների լիգայի անդամ է և Սաուդյան Արաբիայի, Բահրեյնի, ԱՄԷ–ի, Քուվեյթի ու Օմանի հետ միասին հանդիսանում է 1981 թ. հիմնված Ծոցի համագործակցության խորհրդի հիմնադիր անդամը: Նա երկար ժամանակ սահմանային վեճեր ուներ Սաուդյան Արաբիայի և Բահրեյնի հետ: Սակայն էմիր Համադ իբն Խալիֆային հաջողվեց 2001 թ. լուծել այդ վեճերը իր երկու կարևոր արաբական հարևանների հետ, և

Ալմիր. Ճաշարանի պատուհաններից մեկը

Հուշակոթող Ալմիրում

Վերևում՝ «Բուրջ ալ-Արաբ» բարձրակարգ հյուրանոցային համալիրը

Աջում՝ Դաբիում ՀՀ դեսպանատան տարածքում արարողության ներկայությունը, որին ներկա է ՀՀ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանը

Որսորդ-բազեպետի մնացորդները Լեմի–ում

Բազեով որսի դրդոմ նկարագրվող մնացնանպարտան սպասարկ

ԱՄՏ. սենայլաման հասած ալիհաստանի ծառերում

Բահրեյնի Մեծ Հյուսիսը

Նորաբակուն պետությունների լիգայի յոլոցը ներսից

Գամալ Աբդել Նասեր

Ընդդիմ. այլ ԱՄՆ-ի նախագահ չեխ Ռայնոը, Հորդանանի թագավոր Հուսեյնի II-ը և Եգիպտոսի նախագահ Սադատը

ՀՀ փոխանակումը Եգիպտոսում

Դայոց գրերը. Ալեքսանդրիայի գրադարանի պատին

Տոքիոյ Հայոց Ս.Խաչ եկեղեցիի դիմաց՝ Եզիտյանների առաջին փարեզանիա Նուբար Նուբարյանի հու յարգանքի ծոմ։

Ամրոցներ Սանաում

Ասեղնագործ մանյակներ արծաթից

Հին քաղաքի ավերակներից Թունիսում

Թունիս

Իրաք. տեսարան Ռուսաֆայի թաղամասից

Իրաքցի կին հանդիպում է շեյխական սրբավայրի դռան



Լիբանանի մայրաքաղաք Բեյրութի ընդհանուր տեսքը

Երեկոյան Բեյրութ. Նայրի հրապարակը

Մուամար Կադաֆի

Մի դեսպանատան մոտերքը Մադրիդում

Տեսարան Կատարի մայրաքաղաք Դոհայից

Բնգնոստիպ կրթող Դոհայում

Upper Institute

[illegible]

այսօր նրա դիրքերը տարածաշրջանում ավելի ամուր ու ապահով են: Նրան հաջողվեց հարաբերությունները կարգավորել նաև Իրանի հետ:

Կատարը մեծ նշանակություն է տալիս արաբական համերաշխությանը և համատեղ գործողություններին, մասնավորապես Պաղեստինի ժողովրդի իրավունքների պաշտպանության հարցում: 1973 թ. արաբա–իսրայելական պատերազմի ժամանակ Կատարը քաղաքական և բարոյական աջակցության հետ միասին ֆինանսական մեծ օգնություն ցույց տվեց Եգիպտոսին և Սիրիային: Էմիրը 1974 թ. պետական այցով եղավ ճակատային առաջին գծում գտնվող արաբական երկրներում և կրկին հավաստեց իր վճռականությունը նրանց անհրաժեշտ օգնություն ցույց տալու հարցում:

Կատարը եղավ այն երկիրը, որը Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի և ԱՄԷ–ի հետ միասին հիմնեց Արաբական պաշտպանական հաստատությունը, որի նպատակն էր ապահովել արդիական զենքի արտադրությունը և մատակարարումն արաբական բանակներին: Դրա հետ միասին նա առանձին օգնություն ցույց տվեց Եգիպտոսին: Նա մասնակցեց Զարգացման իսլամական բանկի հիմնադրմանը և ֆինանսավորմանը: Կատարի օգնությունը արաբական, ասիական և աֆրիկյան երկրներին, օրինակ՝ 1975 թ. կազմել է նրա ազգային եկամտի 20%–ը:

Կատարը Իրաքի կողքին էր իրանա–իրաքյան 1980–1988 թթ. պատերազմի ժամանակ: Բայց երբ Իրաքը 1990–1991 թ. հարձակվեց Քուվեյթի վրա և օկուպացրեց այդ անկախ և ինքնիշխան պետությունը, Կատարը արաբական մի շարք երկրների հետ միասին դատապարտեց Իրաքի այդ գործողությունները և պահանջեց իրաքյան զորքերը դուրս բերել Քուվեյթից, վերականգնել նրա անկախությունն ու ինքնիշխանությունը:

Կատարի քաղաքականությունը, սակայն, միշտ չէ, որ համընկնում է արաբական ընդհանուր դիրքորոշման հետ: Այդպես պատահեց, երբ Կատարը, չնայած նրա վրա գործադրված արաբական և իսլամական երկրների ճնշումներին, համաձայնվեց, որ իր մայրաքաղաք Դոհայում 1977 թ. գումարվի Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրների Չորրորդ տնտեսական կոնֆերանսը: Դրա հետևում կանգնած էր ԱՄՆ–ը, և կոնֆերանսի նպատակն էր խրախուսել տնտեսական կապերի հաստատումը և համագործակցությունը Իսրայելի հետ: Կատարում անգամ բացվեց Իսրայելի առևտրական գրասենյակ: Դա մեծ դժգոհություն հարուցեց կառավարող էմիր Խալիֆա իբն Համադի դեմ և որոշակիորեն բարդացրեց Կատարի հարաբերությունները արաբական

և իսլամական երկրների հետ, որոնք վարում էին Իսրայելին բոյկոտելու քաղաքականություն և կտրուկ դեմ էին նրա հետ որևէ կապերի, այդ թվում և առևտրատնտեսական, հաստատմանը: Սակայն Կատարը փոխեց իր դիրքորոշումն այդ հարցում, երբ էմիրը տապալվեց իր որդու կողմից, և իշխանությունն անցավ Համադ իբն Խալիֆային: Վերջինս 2000 թ. փակեց Իսրայելի առևտրական գրասենյակը Դոհայում: Այդ նույն թվականին նա ընտրվեց Իսլամական կոնֆերանս կազմակերպության նախագահ:

Իհարկե, դա չխանգարեց նրա բարեկամական հարաբերությունների պահպանմանը ԱՄՆ–ի հետ: Երբ 2001 թ. սեպտեմբերի 11–ին տեղի ունեցավ ահաբեկչական հարձակում Նյու Յորքի և Վաշինգտոնի վրա, որն առաջ բերեց ամբողջ աշխարհի զայրույթը, Կատարը դատապարտեց այդ ահաբեկչությունը, իսկ էմիր Համադ իբն Խալիֆան անձամբ մեկնեց Վաշինգտոն և ցավակցություն հայտնեց ԱՄՆ–ի պրեզիդենտ Ջորջ Բուշ Կրտսերին:

2002 թ. կատարվեց նս մեկ կարևոր քայլ Կատարի և ԱՄՆ–ի մերձեցման ուղղությամբ: Սաուդյան Արաբիայում էին գտնվում ամերիկյան մի շարք ռազմական բազաներ և կենտրոններ: Սակայն Սաուդյան Արաբիայում նրանց հետագա մնալու դեմ վճռականորեն հանդես էր գալիս սաուդյան հասարակայնությունը, որը պահանջում էր հեռացնել դրանք իրենց երկրից: Հավանաբար դրանում անխառն չէին նաև սաուդյան իշխանությունները: Համենայն դեպս, ԱՄՆ–ը բավարարեց սաուդյան պահանջները: Եվ երբ բարձրացավ նրանց այլ երկրում տեղաբաշխելու հարցը, ԱՄՆ–ին օգնության եկավ Կատարը: Նրա համաձայնությամբ Պենտագոնը Սաուդյան Արաբիայի ամերիկյան ալ–Խարջ ռազմաօդային բազայից իր ռազմական ուժերի և միջոցների մեծ մասը տեղափոխեց Կատար և տեղակայեց Կատարի Ուբեյդ ռազմաօդային բազայում: Այնուհետև Կատարը միացավ ԱՄՆ–ի գլխավորած կոալիցիային Իրաքի դեմ 2003 թ. մարտին սկսված պատերազմում, որի ընթացքում Իրաքը օկուպացվեց ամերիկյան և կոալիցիայի մասնակից պետությունների կողմից, և նրա ղեկավար Սադամ Հուսեյնը տապալվեց ու ձերբակալվեց: Այդ գործողությունների ժամանակ շատ օգտակար եղավ Ուբեյդ ռազմաօդային բազան, որը դարձավ ԱՄՆ–ի կենտրոնական հրամանատարության օպերացիոն գլխավոր շտաբը: Այստեղից էին ղեկավարվում Իրաքի դեմ հարձակողական գործողությունները:

Կատարը բարեկամական հարաբերություններ է պահպանում արևմտյան, աֆրիկյան և ասիական երկրների մեծ մասի հետ: Նրանք Կատարի գլխավոր պարտնյորներն են հատկապես տնտեսական համագործակցության և առևտրի ոլորտներում: 2003 թ. Կատարի արտահանման ծավալը դրամական արտահայտությամբ կազմել է 12 մլրդ 36 մլն ԱՄՆ դոլար: Հիմնականում արտահանվել են նավթ և նավթամթերքներ, պարարտանյութ, պողպատ և այլն: Արտահանության գծով նրա հիմնական գործընկերներն են Ճապոնիան, որին բաժին է ընկել Կատարի արտահանության 41%–ը, Հարավային Կորեան, Սինգապուրը և այլն:

Իսկ ներմուծումն այդ նույն 2003 թ. կազմել է 5 մլրդ 711 մլն ԱՄՆ դոլար: Կատարը հիմնականում ներմուծում է մեքենաներ, տրանսպորտային միջոցներ, սննդամթերք, քիմիկատներ և այլն, որոնք ներմուծվում են Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Ճապոնիայից, ԱՄՆ–ից և Իտալիայից:

Կատարն իր միջազգային կապերի հետագա ամրապնդումն ու զարգացումը դիտում է որպես երկրի առջև կանգնած տարաբնույթ հիմնախնդիրների լուծման կարևոր գործոն:

Այդ շրջանակներում պետք է դիտարկել նաև Կատարի կողմից Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչումը և դիվանագիտական հարաբերությունների հաստատումը նրանց միջև: Երկու երկրների միջև հաստատվել են բարեկամական հարաբերություններ և կատարվում են որոշակի քայլեր նրանց խորացման և բովանդակային առումով հարստացման ուղղությամբ: Այդ առումով նշանակալի էր 2005 թվականին Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատվիրակության այցը Կատար՝ Ազգային Ժողովի նախագահի Ա. Բաղդասարյանի գլխավորությամբ: Պատվիրակությանն ընդունեց Կատարի էմիր Համադ իբն Խալիֆան, որի ժամանակ կողմերը կարևորեցին երկկողմանի հարաբերությունների զարգացումը երկու պետությունների միջև տնտեսության, մշակույթի, գիտության և այլ ոլորտներում:

Վերջ երրորդ հատորի

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբաս, 336
Աբասի Մադանի, 84, 85
Աբդ ալ–Ազիզ Բուտեֆլիկա, 76, 81, 86
Աբդ ալ–Ազիզ Թալիբի, 386
Աբդ ալ–Ազիզ Շելխ, 711, 714, 716
Աբդ ալ–Կադիր, 26
Աբդ ալ–Մաջիդ Կուբար, 700
Աբդ ալ–Ռազակ Նայիֆ, 504
Աբդ ալ–Վահաբ Ջինան, 152
Աբդ առ–Ռահման ալ–Արյանի, 343
Աբդալլահ ալ–Հաջարի, 345
Աբդալլահ ալ–Սիմադ, 344
Աբդալլահ աս–Սալալ, 339, 342, 343
Աբդալլահ Բազիբ, 363
Աբդալլահ Բազիր, 356
Աբդալլահ Բայհում, 575
Աբդալլահ բին Սիմադ ալ–Վազիր, 333, 334
Աբդալլահ բին Հուսեյն ալ–Սիմարի, 375
Աբդալլահ իբն Կասիմ, 757, 762
Աբդալլահ իբն Կասիմ աթ–Թանի, 765
Աբդալլահ Յաֆին, 613, 618
Աբդալլահ Ջուզեյլան, 338
Աբդալլահ Սալիհ, 372, 373, 381
Աբդել Լաթիֆ Բաղդադի, 254
Աբդել Լաթիֆ Նուրի, 462
Աբդել Կադիր Իսմայիլ, 459
Աբդել Համիդ Քարամե, 592
Աբդել Հաքիմ Ամեր, 253–255, 286–289
Աբդել Մոնեյմ Ամին, 264
Աբդել Ռահման ալ–Բազազ, 501
Աբդել Ռահման ալ–Գայլանի, 444, 446
Աբդել Սալամ Արիֆ, 486, 487, 493, 494, 497, 498, 501, 516
Աբդել Սալամ Ջալուդ, 717, 729
Աբդել Վահաբ Շավաֆ, 490
Աբդել Քերիմ Կասեմ, 483, 487, 489, 494, 516, 712
Աբդել Ֆաթահ ալ–Իբրահիմ, 459
Աբդել Ֆաթահ Իսմայիլ, 359–361, 365, 366, 368, 369
Աբդելաթիֆ Սուլթան, 83
Աբդուլ Իլլահ, 464, 466, 468, 470, 476, 477, 486
Աբդուլ Կադիր Բադրի, 703
Աբդուլլահ իբն Խալիֆա, 778
Աբդռահման առ–Ռաֆի, 192
Աբու աթ–Թիման, 435, 456, 458, 461–463
Ադամ Սաիդ Հավվազ, 718
Ադիբ Օգոստոս, 568
Ազզամ, 704
Ազիզ Աբդուլ, 772, 773
Ազիզ Սուհամմադ, 506, 510
աթ–Թանի, 753–760, 763, 764, 770, 772, 774–778
Ալ–Սիմար, 346, 374
Ալամ Սուհամմադ, 697
Ալայա Սուհամմադ, 619
ալ–Այնի, 344, 346
ալ–Արյանի, 343–346
ալ–Բադրի, 337, 339–342
ալ–Բաքիր, 165
ալ–Բաքր, 504, 505, 510, 512, 514–519, 552
ալ–Գայլանի, 438, 444, 446, 455, 456, 458, 459, 466–468
Ալեքսանդր Մակեդոնացի, 755
ալ–Ջայիդ, 130, 143, 144
ալ–Թալիբ, 386, 387
ալ–Թանիներ, 97
Ալի Աբդ ալ–Մուղնի, 338
Ալի Աբդալլահ Սալիհ, 347
Ալի Աբդել Ալիմ, 362
Ալի ալ–Բազիրկան, 435
Ալի Անտար, 361, 369
Ալի աս–Սալամ, 358
Ալի Բելհաջ, 84, 85

Ալի իբն Աբդալլահ իբն Կասիմ աթ–Թանի, 764, 765
Ալի իբն Աբդուլլահ, 777
Ալի Մահիր, 220, 227, 228, 230, 231, 234, 235, 240, 249, 258, 259
Ալի Նասեր Մուհամմադ, 366, 368, 369
Ալի Շայյա Հադի, 369
Ալի Շարավի, 187, 188
Ալի Ջավդատ, 462, 466
Ալի Սաադի, 497, 498, 505
Ալի Սաբրի, 254, 583
Ալի Սալիհ, 375
Ալիյա, 466
Ալլենբի, 194, 195, 198, 200, 208–210, 557
ալ–Խալիդի, 332
ալ–Խալիֆա, 11, 97, 115, 146, 148–160, 164, 168, 170–176, 760, 769
ալ–Կասիմ, 91, 97, 107–110, 116, 145
ալ–Համդի, 345, 346
ալ–Հասան, 443
ալ–Դաշմի, 346, 347, 365
ալ–Միսրի, 188, 189, 196, 231
ալ–Մուալա, 97
ալ–Մութամիդ, 552
ալ–Նահայան, 88, 97, 101, 110, 120, 122, 144, 770
ալ–Նուայմ, 97
ալ–Շարկի, 97
ալ–Շաֆի, 196
ալ–Վազիր, 333, 334
Ահմադ ալ–Մութա, 330
Ահմադ Բեն Բելլա, 47, 51, 53, 59, 61, 65, 66, 69–82
Ահմադ բին Ալի աթ–Թանի, 765, 771
Ահմադ բին Յահյա, 334, 335
Ահմադ Դաուդի, 445
Ահմադ Զիվար փաշա, 210
Ահմադ իբն Ալի, 771, 772, 776, 777
Ահմադ Կահիդ, 76
Ահմադ Հասան ալ–Բաքր, 504, 505, 508, 510, 512, 514–517, 552
Ահմադ Հասանեյն, 235
Ահմադ Հուսեյն, 240
Ահմադ Մահիր, 219, 240, 242
Ահմադ Մեդեղրի, 73, 76
Ահմադ Մեսալի Հաջ, 28, 29, 33–36
Ահմադ Սուխթար Բաբան, 485
Ահմադ Մուհամմադ Նուման, 333, 344
Ահմադ Յահյա աս–Սուլայա, 336
Ահմադ Սահնուն, 83
Ահմադ Ֆուադ, 201, 253, 260
Աղպաշյան Հ., 599
Ամատունի Անդրեաս, 664
Ամին աս–Սաադ, 591
Ամին Զաքի, 466
Ամր Մուսա, 318
Անիս Հասան Յահյա, 363
Անտոնի Իդեն, 216, 273
Անրի դը Ժուվենել, 567
աշ–Շաաբի, 212, 357, 360–362
աշ–Շաֆի, 190
Աշոտ I Բագրատունի, 552
Աուն Միշել, 656, 661, 662, 664, 666
Առնոլդ Վիլսոն, 431, 432, 435, 436, 438
Ասադ Ահմադ, 613
աս–Սաադաու, 699
աս–Սաբահներ, 11, 97, 529
աս–Սալալ, 338–343
աս–Սուվեյդի, 434
Արաֆաթ Յասիր, 648, 748
Արիֆ, 496, 498–504, 511
Արիֆ Աբդել Ռազակ, 501
Արիֆ Հիքմաթ, 435
Արսլան Մաջիդ, 594

Բադոլիո, 684
Բազազ, 501, 502
Բակուշ, 395, 401
Բաղդադի, 254, 255
Բայհում Աբդալլահ, 575
Բաներջի Զ., 581
Բաջակյան Ադրինե, 664
Բարունի Ս., 681
Բաքր Սիդկի, 460–464
Բնին Էռնստ, 472, 692
Բելգրայվ Չ., 155, 156, 160, 164, 167
Բելկասիմ Քրիմ, 51
Բելյան Ի., 285, 287
Բեկդաշ Խալիդ, 597
Բեն Հուրիոն, 273
Բերի Նաբիհ, 654, 656
Բին Ալի, 417–422, 426
Բիշարա ալ–Խուրի, 569, 572, 583–586, 592, 598, 599, 609, 610, 628
Բլեյր Թոնի, 547
Բլյում Լեոն, 32–35, 43, 574
Բոյաջյան Հայկազուն, 564
Բրանիեյթ Վիլյամ, 185
Բուդիաֆ, 51, 70, 72, 85, 86
Բուլարդ Ռ., 468
Բուլգանին Մ., 273
Բումեդիեն Հուարի, 66, 70, 73–87, 523, 748
Բուշ Ջորջ, 532, 545, 547, 786
Բուսիր Սալահ, 718
Բուտեֆլիկա, 73, 76, 81, 86, 87
Բուտրուս Բուտրոս–Ղալի, 316
Բուրգիբա Հաբիբ, 388–358, 400–420, 422, 749

Գաղամս Մ., 684
Գալեբ, 219
Գամալ Սալիմ, 254
Գերտրուդա Բել, 432
Գի Մոլե, 56, 57, 273

Գորբաչով Մ., 532
Գևորգ VI, 231
Գուրո Անրի, 560, 561
Գրացիանի, 231, 232, 684
Գրինվեյ Պոլ, 772
Գրյուի, 242

Դաբբաս Շառլ, 568
Դագ Համարշելդ, 405
Դամիեն դը Մարտել, 573
Դանցիգ Բ., 469
Դաուդ ադ-Դաուդ, 461
Դաուք Սիմադ, 557, 576, 583, 599
Դառլան, 39
Դենց, 575, 577, 579, 580
Դիբ Մուսա, 581
Դոբս Հենրի, 448

Ենիգոմուշյան, 599

Զահիդ բին Սուլթան ալ-Նահայան, 88, 97, 101, 110, 120, 122, 124, 130, 131, 143, 144, 769, 770
Զահուան, 75
Զաքարիա Սոհի ադ-Դին, 251, 254, 264, 287, 289, 290
Զիադեհ Նիկոլա, 596
Զիյա ադ-Դին Դաուդ, 314
Զին ալ-Աբիդին Բին Ալի, 417–419, 422
Զուն Ֆ., 469

Էդդե Էմիլ, 568–575, 591–595, 598
Էդդե Ռայմոն, 628, 631
Էդվարդ Էրիո, 27
Էյզենհաուեր, 39, 613, 614, 629, 632

Թաբիթ Այյուբ, 585
Թաբիթ Անտուան, 572
Թալաբանի Զալալ, 551
Թալիբ Շաբիբի, 498, 505
Թակի ադ-Դին աշ-Շիրազ, 437, 585, 589, 591, 596
Թակի Մունիր ադ-Դին, 585, 589, 591, 596
Թակլա Սելիմ, 592
Թակլա Ֆիլիպ, 614
Թահա Հաշիմի, 466
Թահար բին Ամար, 396, 397, 401
Թահիր Յահյա, 498, 501
Թանիներ, 97, 755, 756, 759–766, 771, 773, 773, 774, 775, 777
Թաուֆիկ ալ-Մադան, 54
Թապուրյան, 599
Թիբր էլի, 564
Թուֆիկ աս-Սուվեյդի, 434, 456, 470
Թրաբոն Ժորժ, 561
Թրադ Բուտրոս, 585

Ժակ Մասյու, 59
Ժակ Սուստել, 55, 56, 60
Ժիրո, 39–41
Ժմայել Բաշիր, 641, 650, 652, 653, 656
Ժմայել Պյեր, 571, 612, 631, 641, 652
Ժմայել Ամին, 653–656

Իբադ, 93
Իբն Սաուդ, 15, 328
Իբրահիմ Աբու Նաբ, 767, 772
Իբրահիմ ադ-Դաուդ, 504
Իբրահիմ ալ-Համդի, 345
Իբրահիմ ալ-Զաֆարի, 551
Իդրիս, 328, 678, 681–683, 688, 693, 697
Իդրիս I, 697, 699, 700, 710, 711, 716, 725
Իդրիս աս-Սանուսի, 693, 694, 697
Իլյաս ալ-Հուվայիկ, 559
Իսա ալ-Խալիֆա, 146, 150–154, 171, 173, 174, 176
Իսա իբն Սալման, 168, 170–173
Իսմայիլ Նամիկ, 434
Իսմայիլ Սիդկի, 191, 212
Իսմայիլ Ֆահմի, 301, 307

Լահուդ Էմիլ, 664, 669, 672
Լահուդ Զամիլ, 664
Լավալ, 37, 40, 390, 579
Լավրենտև Վ. Ի., 686
Լարբի Բեն Միհդ, 51
Լեոն Բլյում, 32–35, 43, 574
Լի Ստեկ, 208, 209
Լիամին Զերուալի, 86
Լիթլտոն Օլիվեր, 582
Լիլիան Կրեյգ Հարիս, 292
Լլոյդ-Ջորջ, 188, 191, 194, 197
Լյուսովիկոս XIV, 618
Լևոն Տեր-Պետրոսյան, 319, 320
Լութֆի Ումար, 624
Լուցկայա Ն., 469
Լուցկի Վ., 469

Խաթիբ Անվար, 612
Խալիդ բին Համեր ալ-Կասիմի, 108
Խալիդ իբն Հաշիմ, 26–28
Խալիդ Սոհի ադ-Դին, 254, 255, 264, 297
Խալիլ Խոշավի, 461
Խալիֆա, 154, 776
Խալիֆա բին Համադ աթ-Թանի, 766, 767, 770
Խալիֆա իբն Սալման ալ-Խալիֆա, 172
Խալիֆաներ, 11, 97, 115, 148–150, 171, 755, 760
Խեյրալլահ Թալֆա ալ-Մասալատ, 516
Խիդեր, 70–72
Խոմեյնի, 523, 524, 750

Կադաֆի Մուամմար, 673, 717, 718, 723–744, 748–752

Կադաֆի Վանիս, 710
Կահիքան ալ–Շաաբի, 357, 360–362, 373
Կայսունի Ա., 287
Կասեմ, 369, 483, 486–496, 516
Կասիմ Աբդել Քերիմ, 483, 487, 489, 494, 516, 712
Կատրու ժորժ, 41, 43, 57, 579–585, 590, 598, 600
Կարտեր, 301–303, 529
Կերր Ա., 462
Կիմչե Ջ., 236
Կինահան Կորնուոլիս, 444
Կիրկ Ջ., 468
Կլեմանսո ժորժ, 25, 559
Կոբրալ Լուիշ, 749
Կոսիգին Ա. Ն., 511
Կոտի Ռենե, 61
Կորդել Հելլ, 232
Կուլումջյան Հովհաննես, 556
Կոքս Պերսի, 432, 436, 437, 439, 443, 446, 447, 757

Հաբիբ Աբու Շահլա, 594
Հաբիբ աս–Սաադի, 557
Հաբիբ Բուրգիբա, 388–409, 412–422, 749
Հաբիբ փաշա աս–Սաադ, 561
Հադդադ Սաադ, 645, 654, 655, 662
Համադ ալ–Խալիֆա, 154, 156, 158, 160, 170, 172
Համադ բին Ալի ալ–Խալիֆա, 160
Համադ իբն Իսա ալ–Խալիֆա, 171, 173, 174, 176
Համադ իբն Խալիֆա, 777–780, 783–787
Համադե Մրվան, 667
Համադե Սաբրի, 595, 613, 622
Համդի ալ–Բասիլի, 191
Համդի բեյ Փաչաչի, 445
Համիդ աղ–Դին, 327, 330, 334
Հաննա ժորժ, 612
Հաշիմիներ, 434, 444, 484, 486, 605
Հաջ Բեն Ալա, 66, 74
Հասան ալ–Բաննա, 243, 246
Հասան Իբրահիմ, 254, 255
Հասան Մաքի, 345
Հասան Սաբրի, 231, 235
Հավվազ Ա., 718, 731
Հարդան Թիկրիթ, 508
Հարիրի Ռաֆիկ, 664–668, 671
Հաքիմ Աղնան, 571
Հաֆիզ ալ–Ասադ, 517
Հելո ժան, 590, 592–595, 598, 633
Հելու Շառլ, 633–637
Հիտլեր, 223, 231–233, 238, 689
Հիքմեթ Սուլեյման, 461–464
Հոբեյկա էլի, 656
Հոլմս Ֆ., 158
Հոկայն Այտ Ահմադ, 47
Հոս Սալիմ, 664
Հուարի Բումեդիեն, 66, 70, 73–83, 86, 87, 523, 748
Հուդայբի, 263
Հուսեյն Աբդ ալ–Մաջիդ, 515
Հուսեյն իբն Ալի, 14, 15, 434, 444
Հուսեյն Շաֆի, 254
Հուսեյն Ռուշդի, 188, 190
Հուսեյն Սադամ, 142, 380, 514, 515–550, 552, 786
Հուսեյն Սիրի, 235
Հուսեյն Օսման Աշալի, 361
Հուսեյն Ֆարիդ, 256
Հուսեյնիներ, 385, 391, 399
Հուսնի Այյուշ, 454
Հուրանի Ալբերտ, 578
Հրավի, 660–664
Ղազի, 459, 460, 462, 464, 667

Մաարուֆ Սաադ, 622
Մադեյան Հարություն, 564
Մադֆաի, 464, 466, 477
Մազիք Հուսեյն, 703
Մալիք Շառլ, 624
Մախտում բին Ռաշիդ ալ–Մախտում, 120, 121
Մակկլինտոկ, 630
Մակտումներ, 97
Մակրամ Ուբեյդի, 240
Մահդի ալ–Խալիսի, 445
Մահդի Բուսաիրի, 445
Մահմուդ Աբդ ալ–Լաթիֆ, 264
Մահմուդ Բարզինջի, 440
Մահմուդ Նուկրաշի, 219
Մահմուդ Ռիյադ, 301
Մահմուդ Սալման, 466
Մահմուդ Սուլեյման Մաղրաբի, 717, 718
Մայլզ Լեմփսոն, 230, 235, 236
Մաջիդ Խադուրի, 448
Մառլոու Ջ., 236
Մավլուդ Մուխլիս, 434
Մարշալ, 295, 431, 435
Մեքնի Նասիբ, 612
Մեյթլանդ Դոնալդ, 612, 619, 620, 646
Մենահիմ Բեգին, 300–302
Մենդես–Ֆրանս, 52, 395, 396
Մեուշ, 619, 624
Մեսալի Հաջ, 28, 29, 33–36, 42–44, 47, 49, 51, 54, 70
Մեսրոպ Մաշտոց, 322
Միթելհաուզեր, 576, 577
Միլերան, 386
Միլներ, 197, 198, 200
Միտերան Ֆրանսուա, 52
Միրսկի Գ., 252
Մոդ, 430, 431
Մոխեյշի Օ., 731

Մոհի ադ–Դին Ֆեկին, 700
Մոհսին Ֆաղլի, 349
Մոնտգոմերի, 239
Մոջհամմադ Մահմուդ, 191, 211, 220, 332, 333
Մոսադեղ, 163, 474
Մորիս Զ., 194, 464, 468
Մորիս Վիոլետ, 32, 33
Մուավադ Ռենե, 660
Մուբարակ Հուսնի, 308–322, 533
Մուխտար Օմար, 679, 684
Մուհամմադ Ալի, 206, 260, 339, 418
Մուհամմադ աթ–Թանի, 756
Մուհամմադ ալ–Ամին, 391, 399, 400
Մուհամմադ ալ–Բադր, 336–339
Մուհամմադ Ալի Հալվանի, 418
Մուհամմադ Ալի Օսման, 339
Մուհամմադ ալ–Իդրիս, 328
Մուհամմադ ալ–Մունսիֆ, 390, 391
Մուհամմադ ալ–Զիֆրի, 356
Մուհամմադ Ամին ալ–Ումար, 464
Մուհամմադ աս–Սադր, 435, 445
Մուհամմադ Բակիր աշ–Շաբիբի, 435
Մուհամմադ Բենջալուլ, 27, 34, 54
Մուհամմադ բին Ալի Սանուս, 677, 678
Մուհամմադ բին Ուսման աս–Սայիդ, 700
Մուհամմադ բին Ռաշիդ ալ–Մախտում, 140
Մուհամմադ Բուդիաֆ, 51, 85, 86
Մուհամմադ Բուչիհա, 418
Մուհամմադ իբն Մուբարակ ալ–Խալիֆա, 172
Մուհամմադ Խդիր, 51
Մուհամմադ Կահակ, 393
Մուհամմադ Հադիդ, 459
Մուհամմադ Հասայնեյն Հեյքալ, 307
Մուհամմադ Հեյտամ, 361
Մուհամմադ Ղանուչի, 419
Մուհամմադ Մահմուդ, 191, 211, 220, 332, 333
Մուհամմադ մարգարե, 330
Մուհամմադ Նագիբ, 254–256, 258, 260
Մուհամմադ Նակկաշ, 74
Մուհամմադ Նուր ադ–Դին, 476, 477
Մուհամմադ Շենիկ, 390, 394
Մուհամմադ Ռեզա Պահլավի, 115, 523
Մուհամմադ Սադր, 473
Մուհամմադ Քրիմ, 51
Մուհի Աբդուլլահ Մաշաղ, 519
Մուհսին ալ–Այնի, 344
Մունիր Թաքի ադ–Դին, 585, 589, 591, 596
Մուսա Ահմադ, 718
Մուստաֆա Քամիլ, 297
Մուսթաֆա ալ–Բարզանի, 456, 470, 471
Մուսոլինի Բենիտո, 223, 231, 233, 571, 682
Մուստաֆա Բեն Բուլահդ, 51
Մուստաֆա Նահաս, 211, 215, 216, 218, 219, 235–240, 246, 249
Մուրադ Դիդուշի, 51
Մուրիդ Ա., 681, 682
Մուրտադա Սայիդ Աբդել Բաքր, 508

Յազբեք Յուսուֆ, 564
Յահյա Համիդ էդ–Դին, 327–334
Յասին ալ–Հաշիմի, 456, 460–462
Յաֆի Աբդալլահ, 613, 618
Յել Ու., 468
Յուսուֆ Ահմադ ալ–Գունդի, 193
Յուսուֆ Իզզեդին Իբրահիմ, 464
Յուսուֆ Սադիկ, 264
Յուսուֆ Սալման, 454, 471–473

Նագիբ, 236, 254–263, 267, 289, 298
Նակկաշ Ալֆրեդ, 74, 575, 583, 584
Նահաս, 211, 212, 215–220, 235–240, 246, 249, 585
Նաջի Թալիբ, 502
Նաջի Սուվեյդի, 456
Նաջիբ ալ–Արմանազի, 581
Նասեր Գամալ Աբդել, 51, 166, 181, 183, 250–292, 295–298, 306, 310, 314, 342, 366, 368, 369, 386, 410, 483, 497, 499, 711, 712, 718, 726, 748
Նիմեյրի Զաֆար, 292, 726
Նիքսոն, 293
Նուկրաշի, 245, 246
Նուման, 333, 344, 346
Նուրի Մալիք, 551
Նուրի Սաիդ, 434, 454, 456, 458, 464–468, 470, 472, 473, 478–486, 585

Շաբաանի, 72
Շադլի Բենջադիդ, 82, 85
Շախբուտ ալ–Նահայան, 101, 110
Շակիր Արսլան, 29
Շամլյան Հրաչ, 592
Շամուն Քամիլ, 592, 610, 612, 614, 619, 627, 628, 631, 633, 641, 650, 654
Գոլ Շառլ դը, 40, 41, 43, 46, 59–64, 81, 391, 579–583, 590, 598, 689
Շառլ Ժոնար, 25, 26, 28

Շատինյոն Իվ, 598
Շարաբի Հ., 461
Շարաֆ Բելկասիմ, 76
Շարաֆ իբն Ռաջիհ, 466
Շելխի Աբդ ալ–Ազիզ, 711, 714
Շելխի եղբայրներ, 710, 711, 713, 715, 717
Շելխի Օմար, 710, 711, 716
շեյխ Զայիդ, 120, 124, 144, 769, 770
շեյխ Իսայի, 769
Շենիկ, 390, 391, 394, 395
Շերիֆներ, 677
Շիհաբ Ֆուաադ, 610, 616, 623–634
Շիմալի Ֆուաադ, 561
Շուքրի ալ–Այյուբի, 557
Շուքրի Քուաթլի, 277
Շվարցկոպֆ, 540

Չադլի, 401
Չերչիլ Ու., 222, 237, 242, 444, 468, 582

Պետեն, 37, 40, 390, 576, 579
Պերի Ռոբերտ, 528
Պերսի Կոքս, 432, 436, 437, 439, 443, 446, 447, 757
Պիկո ժորժ, 430, 440, 557, 560
Պյեպապ, 557
Պյեր Մենդես–Ֆրանս, 52, 395, 396
Պյուո Գաբրիել, 575
Պոլ Կնաբենշու, 466
Պոնսո Անրի, 570
Պրիմակով Ե., 285, 287

Զաբր ալ–Ահմադ ալ–Զաբր աս–Սաբահ, 529, 538
Զալալ Բաբան, 435
Զահիջահ Սամիր, 666
Զամիլ ալ–Մադֆաի, 434, 464, 477
Զամիլ–զադե, 438
Զասիմ իբն Համադ, 778
Զաֆար Աբու աթ–Թիմման, 435
Զաֆար ալ–Ասկարի, 448
Զաֆար Նիմեյրի, 292, 726
Զոն Ֆոստեր Դալես, 623
Զորջ Լենցովսկի, 302
Զունբլատ Վալիդ, 648, 654, 656, 666, 667
Զունբլատ Քամալ, 610, 612, 621, 622, 626, 640, 648, 650
Զունբլատների տոհմ, 622, 648
Զուսիֆ, 686, 747

Ռաբահ Բիթար, 51
Ռամադան Միքայել, 515, 518, 519, 528, 682
Ռամզեյ Մակդոնալդ, 207
Ռանա, 548
Ռաշիդ Ալի ալ–Գայլանի, 455, 456, 458, 466–469
Ռաշիդ ալ–Մախտում, 97, 120, 121, 140
Ռաուլ Սալան, 60
Ռեյգան Ռոնալդ, 750
Ռեյլի, 354
Ռեջինալդ Վինգեյտ, 187, 188, 194
Ռիբենտրոպ, 224, 225
Ռիզա Հասան, 710, 716
Ռիզա Հուսեյն, 711, 715
Ռիյադ ալ–Սոլի, 583
Ռոբեր Լակոստ, 57
Ռոբերտ Քոչարյան, 144, 145
Ռոմել, 38, 233, 234, 237–239, 689
Ռուզվելտ Ֆրանկլին, 40, 222, 237, 238, 242
Ռուշդի, 188, 190
Ռուստամ Հայդար, 462

Սաադ Աբդել Ազիզ Ֆահմի, 187
Սաադ ադ–Դին Իբրահիմ, 291, 293
Սաադ Զաղլուլ, 187, 188, 191, 195–199, 205–211, 215, 219
Սաադե Անտուան, 571, 607, 608
Սաադուն Գայդան, 508
Սաադաթ Անվար, 144, 251–255, 264, 289–312, 316, 425, 653, 726, 748
Սաադամ Հուսեյն, 142, 380, 514—552, 786
Սաիդ Ամին, 613
Սալահ ադ–Դին Բակուշ, 395
Սալահ ադ–Դին աս–Սաբահ, 466
Սալահ բին Յուսուֆ, 392, 394, 401
Սալահ Սալիմ, 254
Սալամ Սաիբ, 595, 621, 626, 654
Սալամ Ռուբայա Ալի, 361, 364, 365
Սալիհ Մահդի Ամաշ, 508
Սալիհ Մուսլի Կասեմ, 369
Սալիհ Զաբր, 464, 472, 473
Սալման ալ–Խալիֆա, 160, 164, 168, 170–172
Սալման բին Համադ ալ–Խալիֆա, 160
Սալամ Ադիլ, 495
Սակր բին Սուլթան ալ–Կասիմի, 107, 108, 110
Սանուս Իդրիս, 677–682, 688, 694, 697
Սանուսի Ա., 731
Սանուսի Շամսեդդին, 713
Սանուսիների դինաստիա, 698, 714
Սաուդիներ, 755
Սարկիս Իլյաս, 644, 645
Սարվատ, 211, 215
Սետոն–Վիլյամս Ս., 468
Սթոուն, 236

Սիդկի, 191, 212, 214, 215, 245, 460–464
Սինիորա Ֆուադ, 667
Սոլի Սամի, 583, 613, 620, 621
Սոլի Ռիյադ, 586–589, 592, 596, 598, 599, 607
Սուբհա Խեյրալլահ Թալֆա ալ–Սասալատ, 516
Սուլթան բին Սուհամմադ ալ–Կասիմի, 145
Սուվեյիլի Ռ., 681, 682
Սպիրս, 581, 585
Ստալին Ի., 242
Ստարկ Ֆ., 468
Ստյուարտ Մայքլ, 716
Սֆորցա Կարլո, 695, 696

Վասիլև Լ., 307, 422
Վատսոն, 190, 191
Վեյգան, 576
Վիլսոն Հարոլդ, 766
Վիլսոն Վուդրո, 186, 196, 197
Վինգեյտ, 187, 188
Վոերման, 224
Վոլպի, 683

Տալիբի Սալիմ Աբու, 713

Ուբեյդ, 240, 717, 786
Ումար աղ–Դաուք, 557
Ուսամա բին Լադեն, 546
Ուսման Քամալ Հադադ, 584
Ուվեյնի Հուսեյն, 612, 617, 632

Փաչախչի, 438

Քամալ աղ–Դին Հուսեյն, 254, 255
Քամալ ալ–Գանզուր, 319
Քամիլ, 302, 306
Քամիլ Շաբիբ, 466
Քամիլ Չադերչի, 460–464, 471
Քանաան Ղազի, 667
Քարամե Ռաշիդ, 592, 613, 614, 617, 620, 626, 630–632, 654, 655, 666, 667
Քերզոն, 198, 200

Օբեյդի Ա., 741
Օսեյրան Ադիլ, 592, 626, 654
Օսկանյան Վարդան, 144
Օրաբի, 216

Ֆադիլ ալ–Ջամալի, 478, 611
Ֆաքահ Իսմայիլ, 359–361, 365–369
Ֆահդի, 533
Ֆահմի Սայիդ, 466
Ֆայսալ, 342
Ֆարաոն Անրի, 614
Ֆարհաթ Աբաս, 34, 36, 42–50, 53, 54, 61–65, 71
Ֆարուկ I, 219, 228, 234–236, 246, 247, 256, 257, 267, 298
Ֆեյսալ, 15, 434, 443, 444, 447, 448, 464, 557, 558, 560
Ֆեյսալ I, 446, 451, 459
Ֆեյսալ II, 466, 477, 478, 481, 482, 485, 486
Ֆեյսալ Աբդել Լատիֆ, 362
Ֆիշ, 232
Ֆիշեր, 444
Ֆոստեր Հ., 448
Ֆուադ I, 201, 204–208, 219
Ֆուադ II, 260
Ֆրանժիե Սուլեյման, 637, 641, 644, 645, 650, 654
Ֆրանժիե Համիդ, 601, 606, 614
Ֆրանժիե Տոնի, 650
Ֆրունզե Ս., 309

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբասիա, 256
Աբյան, 353, 364
Աբու Դաբի, 88, 94, 95, 97, 98, 101, 103, 104, 106, 107, 110, 114, 116, 117, 120, 121, 124, 127, 129, 130, 131, 136, 137, 141, 142, 144, 767–770, 777
Աբու Սուսա, 137, 139, 522
Աբու Սուխեյր, 435, 442
Աղ–Դալի, 351
Աղեն, 9, 108, 168, 169, 324, 326–329, 332, 333, 339, 340, 349–359, 361, 364, 367–369, 372, 376, 377
Ազատ Ֆրանսիա, 40, 391, 579, 580, 582, 584
Ազգերի լիգա, 13, 14, 217, 218, 242, 440, 444–448, 451–454, 457, 458, 561, 568, 573, 584, 589
ազ–Զավիատնա, 681
ազ–Զուբարա, 148
ալ–Ադամ, 703, 705
ալ–Ալամայն, 230, 238, 239
ալ–Այն, 90, 121, 131, 344, 346
ալ–Բայդա, 328, 678, 713
ալ–Գազալ, 234
Ալեյ, 646
Ալեքսանդրիա, 192, 193, 198, 210, 212, 216, 217, 231, 232, 238, 241, 245, 251, 252, 256, 263, 264, 270, 272, 285, 322, 632
Ալժիր, 9, 16, 18–88, 239, 285, 367, 382, 384, 403, 404, 406, 422, 426, 523, 537, 590, 657, 659, 669, 673, 677, 687, 691, 702, 725, 727, 748, 749
Ալ–Խաուշաբի, 351, 357
ալ–Խարջ, 786
Ալ–Կատիր, 351
Ալ–Կուվայթ, 351

ալ–Հայ, 480, 488
Ալ–Մահալա ալ Քուբրա, 245
Ալ–Մուկալա, 352
ալ–Մուսայիբ, 442
Ալ–Վահիդի, 351
Ալ–Ֆաղլի, 351
ալ–Ֆուջայրա, 127, 767
Ակրա, 580
Ամադիյա, 440
Աման, 317, 318
Ամարա, 436, 470, 474, 480, 482, 548
Ամերիկա, 9, 36, 37, 39, 112, 113, 179, 750
ԱՄԷ, Արաբական Միացյալ Էմիրություններ, 88, 90–97, 101, 102, 104, 105, 111, 114–145, 157, 311, 318, 381, 522, 533, 536, 537, 539, 753, 768, 770, 771, 781 784, 785, 806
ԱՄՀ, Արաբական Միացյալ Հանրապետություն, 276–278, 283, 337, 340, 341, 484, 496, 499, 503, 624, 625, 632
ԱՄՆ, 12, 13, 16, 19, 37, 38, 40, 71, 81, 89, 102, 112, 113, 115, 126, 128, 134, 143, 144, 147, 157, 158, 163, 173, 175, 182, 186, 196, 197, 221, 222, 226, 232, 234, 237, 238, 242, 258, 266, 269, 271–273, 291–294, 299, 301, 302, 303, 306, 311, 315, 316, 325, 333, 344, 373, 376, 378, 381, 383, 390, 424, 427, 429, 445, 451, 475, 476, 478, 480, 484, 487, 488, 489, 507, 512, 525, 527, 528, 530, 532, 533, 535, 538–542, 545–550, 555, 583, 595, 609, 622–627, 633, 639, 640, 650, 652, 654, 655, 664, 670, 674, 690, 691, 693–697, 701, 703, 704, 706, 707, 718, 728, 746, 749–752, 754, 775, 782, 784, 786, 787
Այն ալ–Հիլվա, 635
Այն առ–Ռումանա, 642
Այնաբ գյուղ, 622
Անաբա, 84
Անգլիա, 8–10, 12, 15, 36, 39, 91, 94, 95, 106–114, 140, 155–161, 167, 169, 173, 184, 187, 188, 191, 193–195, 197–203, 207–240, 244–250, 266–275, 289, 327–329, 334–337, 344, 349–358, 386, 390, 390, 430, 431, 433–435, 440–448, 451–455, 462–470, 472–482, 484, 487–488, 531, 532, 540, 546, 547, 557, 560, 573, 576–585, 595, 597, 602, 605, 609, 612, 622, 624, 626, 627, 633, 674, 676, 681, 687–697, 701–705, 711, 713, 716, 717, 728–730, 750, 751, 755–757, 761, 766, 768
Անդրկովկաս, 223
Անդրհորդանան, 15, 229, 241, 604–606
Անթիլիաս, 564, 597
Անկարա, 451, 612
Անտանտ, 440, 680
Աշ–Շուայբա, 351
Աշրաֆիյա, 647
Աուրես, 52, 56
Աջդաբի, 678
Աջման, 88, 94, 97, 114, 116, 117, 121, 127, 768
Առ–Ռիյադ, 342
Ասիա, 9, 10, 12, 36, 38, 58, 61, 112, 113, 149, 173, 179, 202, 221, 338, 392, 432, 470, 547, 581, 627, 732, 753
Ասիր, 328, 329, 345
Ասյուտ, 192, 193
Ասուան, 192, 271–273, 279, 301
Ավադիլ, 357
Ավալ, 158, 166, 167, 654
Ավալի գետ, 654
Ավստրալիա, 177, 475
Ատլանտյան օվկիանոս, 5, 529
Ատրպատական, 449
Արաբական Արևելք, 5, 6, 136, 149, 153, 157, 220, 221–225, 239, 349, 355, 432, 448, 487, 503, 561, 577, 579, 581, 605, 764
Արաբական թերակղզի, 88, 90, 142, 168, 324, 332, 349, 755, 759
Արաբական խալիֆայություն, 91, 148, 755
Արաբական Ֆեդերացիա, 484, 485, 488, 766
Արաբիա, 13, 15
Արևելյան Բեյրութ, 647, 649, 653, 663
Արևելյան Եվրոպա, 380
Արկուբա, 636
Արևմտյան Աֆրիկա, 39, 41
Արևմտյան Բեռլին, 750
Արևմտյան Հայաստան, 448, 565
Աքաբայի ծոց, 294
Աֆղանստան, 134
Աֆրիկա, 9, 10, 12, 14, 16, 20, 28–30, 33, 35, 36, 38–41, 58, 61, 112, 113, 149, 159, 181, 202, 216, 221, 224, 226, 231–239, 339, 382, 384, 390, 392, 404, 426, 470, 581, 627, 673, 676, 678–681, 686–689, 693–695, 733, 785

Բաալբեկ, 148, 559, 560, 567, 615, 622
Բաբելոն, 148
Բահրեյն, 11, 94, 95, 97, 101, 108, 114, 115, 126, 139, 142, 143, 146, 148–180, 318, 536, 538, 754, 756, 757, 760, 767, 768, 770, 771, 781, 784
Բաղդադ, 254, 271, 304, 343, 428, 430–434, 437–439, 442, 445, 447, 449–456, 459, 462, 466, 467, 472–486, 489, 492, 494, 498, 511, 516, 525, 529, 530, 539, 540, 546, 548, 551–553, 611–614, 625
Բայթ Ալ–Ֆակիհ, 328
Բանգլադեշ, 134, 539
Բաստա, 594, 612, 620, 621
Բասրա, 238, 428, 431, 432, 442, 445, 449–451, 454, 456, 458, 467, 472, 474, 475, 480, 482, 484, 485, 548, 552
Բարդո, 397, 651
Բարզան, 456, 470
Բարլնի գիծ, 298
Բաքուբա, 432, 442, 449, 548
Բելգիա, 9, 113, 670
Բեկաա, 557, 559, 560, 564, 642, 646, 654, 661, 663
Բեյհան, 349, 351
Բեյրութ, 178, 554, 556, 557, 559, 560, 563–567, 571, 573, 578–580, 583, 592–594, 598–603, 606, 607, 610–612, 614, 615, 621–623, 625, 626, 633, 635, 636, 642–649, 651–656, 661–669, 671
Բենգազի, 232, 234, 678, 688, 689, 691, 702, 703, 705, 713, 714, 717, 726, 750
Բենգալյան ծոց, 238
Բեռլին, 233, 750
Բիբլոս, 646, 647
Բիզերտա, 389, 390, 398, 399, 403–406
Բիխեյր, 192
Բինտ Ջբեյլ, 622
Բիր Հաքիմ, 234, 237
Բիքֆայա, 647
Բլիդա, 84
Բուլղարիա, 749
Բուրայմի օազիս, 90, 100, 137
Բուրեյկ, 353
Բուրունդի, 427
Բուրջ ալ–Բարաքնա, 635
Բուրջ Համուդ, 647, 649
Բրիտանական Կայսրություն, 222, 728, 729

Գաբոն, 749
Գաղամես, 691
Գամբիա, 749
Գանա, 749
ԳԴՀ, 336, 367
Գեզիրե, 208
Գելմ, 45
Գերմանիա, 11–13, 19, 36–40, 44, 126, 144, 159, 177, 187, 216, 221–229, 232–234, 238, 242, 290, 389–391, 427, 465, 469, 540, 547, 576–579, 670, 675, 680, 687, 693, 749, 787
Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն, 509
Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն, 634
Գվինեա–Բիսաու, 749
ԳՖՀ, 335, 344

Դալի, 351, 357
Դակար, 39, 90
Դահրան, 163
Դամանհուր, 192
Դամասկոս, 277, 556, 558, 560, 655, 667, 669
Դամյատ, 214
Դաս կղզի, 104
Դար աս–Սալամ, 430
Դեյր ազ–Զոր, 450
Դիլտավա, 442
Դիյալա, 449, 460
Դիվանիյա, 436, 442, 445, 446, 472, 476, 482
Դհուր աշ–Շուեյր, 606
Դոհա, 647, 753, 756, 761–764, 770, 773, 780, 782, 783, 785, 786
Դորա, 647, 753, 756
Դուբայ, 88, 94, 97, 101–108, 114, 117, 120, 121, 127, 129–131, 141, 767, 768–770
Դուխան, 761, 763
Դոֆար, 380

ԵԱՀ, 339–348, 358, 365, 368, 371, 372, 379
Եգիպտոս, 9–11, 38, 51, 61, 98, 106, 134, 143, 144, 151, 153, 159, 166, 183–323, 332–337, 341–343, 358, 378, 379, 406, 410, 425, 426, 450, 475, 476, 481–484, 496, 497, 501, 516, 533, 537, 539, 540, 573, 585, 595, 601, 611, 613, 624, 625, 651, 653, 669, 670, 673, 678, 684, 687–689, 692, 693, 697, 702, 704, 711, 712, 718, 724–726, 748, 761, 764, 785
Եթովպիա, 216, 234, 687
ԵԺԴՀ, 344–348, 363–380, 748
ԵՀ, 372–381
Եմեն, 134, 326, 328, 329, 330–332, 335, 336, 340–342, 349, 350, 353,

356, 357, 370–374, 378, 711
Եմենի Արաբական Հանրապետություն, 318, 327, 339, 340, 358, 359, 365, 368–373, 379, 380, 725
Եմենի Ժողովրդա-Դեմոկրատական Հանրապետություն, 318, 326, 327, 359, 362, 363, 366, 370–372, 379, 406, 725
Եմենի Հանրապետություն, 326, 327, 368, 371–378, 380, 381
Եվրոպա, 8, 10, 36, 44, 67, 149, 179, 222, 226, 311, 380, 391, 424, 547
Երևան, 319–322, 551–553, 648, 670, 671
Երուսաղեմ, 285, 292, 300, 301, 307, 450, 748

Զաբիդ, 328
Զալկ, 647
Զախո, 440, 450
Զակազիկ, 192, 193
Զահլե, 560, 565, 610, 646
Զայիդ, 110, 120, 122, 124, 130, 131, 143, 144, 769, 770
Զելա, 475, 684
Զիֆտ, 193
Զղորթա, 622, 641
Զուարա, 691

Էլ-Քուվեյթ, 162
Էյլաթ Նավահանգիստ, 284
Էվիան, 63, 64, 406
Էրբիլ, 440, 470
Էրիտրեա, 234, 693, 694

Թաիզ, 336
Թաիլանդ, 134, 381
Թաիֆ, 329, 657–663, 666, 671
Թալի, 192, 386, 497, 498, 502, 505
Թանթ, 192
Թարիկ Զադիդ, 621
Թել Ավիվ, 300, 316, 317, 645
Թել Զաթար, 642
Թեհրան, 524
Թիամա, 328, 331
Թիաման, 328
Թիկրիտ, 515, 548
Թիհամ, 377
Թոբրուկ, 234, 237, 238, 705
Թունիս, 11, 16, 39, 58–61, 67, 305, 318, 382, 384–427, 537, 673, 678, 687, 691, 693, 702, 725, 727, 749
Թուրքիա, 134, 186, 270, 276, 428, 451, 463, 470, 474, 478, 480, 481, 488, 513, 531, 557, 565, 609, 612, 623, 670, 679, 680, 710, 713, 716

Ժնև, 359, 654, 772, 773, 777

Ինդոնեզիա, 377
Իսմայիլիա, 243, 247, 248, 301
Իսպանիա, 9, 113, 547, 749
Իսրայել, 81, 106, 143, 181, 272, 273, 283–285, 291, 294, 298–308, 316, 317, 425, 475, 480, 530, 554, 613, 634, 636, 637, 639, 640, 645, 651–655, 662, 663, 784–786
Իտալական Սոմալի, 234, 693, 694
Իտալիա, 8, 9, 13, 36–38, 159, 216, 221–234, 289, 290, 328, 329, 332, 335, 344, 381, 389, 390, 427, 445, 469, 547, 577, 578, 670, 675, 676, 679–697, 787
Իրան, 94, 95, 105, 106, 115, 116, 128, 134, 137–142, 146, 152, 162, 164, 174, 175, 421, 428, 451, 463, 474, 475, 480, 507, 513, 522–534, 750, 763, 769, 770, 773, 785
Իրաք, 12, 15, 98, 101, 137, 140–143, 151, 153, 157, 158, 175, 221, 229, 241, 284, 285, 316–318, 333, 378–380, 429–553, 571, 573, 585, 595, 605, 610–612, 622–625, 669, 711, 712, 725, 764, 785, 786
Իրաքյան Քրդստան, 439, 447, 499, 545, 546
Իֆնի, 9

Լահջ, 349, 351, 353
Լևանտ, 557, 573, 576–582
Լատինական Ամերիկա, 9, 112, 113, 733
Լեբու, 675, 680
Լեբու-Լիբիա, 675
Լեհաստան, 227, 337, 417, 601
Ղեռնալիբանան, 556, 557, 559, 560, 595, 605, 661
Լեռնային Ասիր, 328
Լիբանան, 12, 15, 41, 134, 151, 178, 194, 221, 241, 302, 332, 426, 475, 484, 485, 487, 497, 537, 554–672, 725, 728
Լիբիա, 9, 16, 38, 67, 181, 231–234, 367, 382, 390, 426, 537, 674–752, 761
Լիբիական Արաբական Հանրապետություն, 714, 715, 725, 728, 729, 739, 748
Լիբիական Արաբական Ժողովրդական Սոցիալիստական Մեծ Զամահիրիյա, 739, 744, 747

Լիբիական Ջամահիրիյա, 738, 741, 747, 748
Լիբիայի Միացյալ Թագավորություն, 697
Լիքանի, 560, 645
Լոկերբի, 751
Լոնդոն, 156, 157, 162, 185, 188, 189, 200, 207, 216, 240, 244, 431, 454, 579, 691, 694, 716, 728, 750, 751, 767

Խալիլ Բադավի, 647
Խանեկին, 432, 442, 450
Խարիբ, 341
Խարտում, 342, 343
Խորհրդային Հայաստան, 647
Խորհրդային Միություն, 37, 58, 61, 81, 113, 271, 273, 292, 306, 337, 367, 378, 380, 412, 425, 487, 530, 540, 551, 624, 627, 696, 736
Խորհրդային Ռուսաստան, 186, 196
ԽՍՀՄ, 221, 292, 329, 337, 339, 340, 348, 366, 367, 479, 480, 498, 510, 511, 530, 538, 594, 601, 692, 694

Ծովահենության ափ, 92, 126

Կաբիլիա, 44, 52, 56, 70–72
Կադիմայն, 437, 438
Կահիրե, 51–53, 108, 181, 183, 191–200, 208–216, 226, 230, 232, 234, 235, 238, 241, 243–251, 253, 256, 258, 262, 267, 269, 271–274, 277, 285, 288–291, 295, 302, 306, 309, 316–322, 342, 392, 425, 444, 496, 500, 516, 537, 539, 632–637, 726
Կամբոջա, 427
Կասաբլանկա, 39
Կատար, 11, 88, 94, 97, 104, 108, 114, 115, 126, 139, 142, 146, 148, 150, 169, 175, 212, 318, 533, 536–539, 754–787
Կարթագեն, 396
Կարմիր ծով, 324, 328, 332
Կենտրոնական Աֆրիկա, 14
Կիզիլ Ռաբաթ, 442
Կիլիկիա, 565
Կիպրոս, 571
Կիրենաիկա, 234, 675–700, 702, 706
Կիրկուկ, 440, 450, 472, 475, 482, 485, 548, 577
Կոմպյեն, 579
Կոստանդնուպոլիս, 270
Կովկաս, 238, 239
Կուտ ալ–Հայ, 482
Կուֆ, 434, 442

Հաագա, 140, 751
Հաբայա, 560
Հաբբանիյա, 450, 455, 465–467, 479
Հադրամաութ, 108, 328, 349, 351
ՀԱԷՖ, 355
Հալուլ, 783
Համրիյա, 130
Հայաշեն, 647
Հայաստան, 7, 13, 144, 145, 176, 319–323, 381, 427, 448, 551–553, 565, 580, 647, 649, 670–672, 787
Հայաստանի Հանրապետություն, 7, 144, 552
Հաջարի լեռնաշղթա, 90
Հասա օազիս, 148
Հավար կղզի, 175
Հարավային Արաբիայի Ֆեդերացիա, 355
Հարավային Աֆրիկա, 392
Հարավային Եմենի Ֆեդերացիա, 359
Հարավային Թունիս, 691
Հարավային Լիբանան, 655, 661, 662
Հարավային Կորեա, 126, 381, 787
Հարավային Սահարա, 72, 73
Հարավարևելյան Ասիա, 392
Հարավարևմտյան Աֆրիկա, 14
Հարավի Արաբական էմիրությունների Ֆեդերացիա, 355
ՀԱՖ, 355
ՀԵԺՀ, 359–361
Հելուան, 279
Հեռավոր Արևելք, 91, 94
Հերմել, 613, 615, 622
Հերմոն սար, 592
Հիլ, 90, 432, 436, 438, 446, 460, 635
Հինդիյա, 442
Հիջազ, 14, 15, 438, 439, 444, 678
Հյուսիսային Աֆրիկա, 9, 28, 29, 33, 35, 39, 40, 58, 159, 181, 226, 231–239, 382, 384, 390, 404, 426, 673, 676, 679, 680, 686–689, 695, 785
Հյուսիսային Եմեն, 327, 328, 341, 345, 349, 350, 371, 379, 642
Հյուսիսային Լիբանան, 661
Հյուսիսային Կորեա, 752
Հնդկական օվկիանոս, 5, 198, 581, 758
Հնդկաստան, 91, 93, 94, 111, 134, 144, 153, 224, 269, 350, 377, 432, 757, 766
Հոդեյդա, 328, 337, 376
Հոլանդիա, 9
Հոմս, 560

Հորդանան, 194, 284, 285, 288, 299, 302, 317, 339, 340, 379, 428, 466, 475, 482, 484–487, 497, 507, 537, 539, 543, 571, 611, 623, 625, 627, 637, 670, 702
Հունաստան, 427, 716
Հռոմ, 230, 405, 682, 683

Ղազա, 272, 285, 302

Ճապոնիա, 13, 126, 144, 242, 381, 540, 547, 787

Մադինա, 678
Մադրիդ, 426, 669
Մալթա, 191, 196
Մահրի, 351
Մաղրիբ, 5, 426, 749
Մաղրիբի երկրներ, 749
Մանամահ, 146, 161, 162, 166, 167, 180
Մանդալի, 442
Մանկաբադ, 251–253, 264, 289
Մանսուր, 192, 212, 214, 620
Մաշպարա, 608
Մաշրիկ, 5
Մաջդ ալ–Անջար, 560
Մասկատ, 11, 169
Մավրիտանիա, 16, 318, 426, 537, 539, 725
Մար Մխայել, 647
Մար Յուսուֆ, 647
Մարգիլ, 479
Մարիբ, 341, 376
Մարոկկո, 9, 11, 16, 39, 58–61, 67, 134, 318, 384, 426, 537, 539, 657, 659, 669, 702
Մարջայուն, 560, 622
Մեքն, 612, 619, 620, 646, 647
Մեծ Բրիտանիա, 40, 81, 91–98, 102–115, 134, 144, 149, 150, 153–162, 168, 169, 175, 184, 185, 190, 191, 194, 197, 198, 200–203, 207, 216, 236, 237, 257, 328, 339, 340, 378, 381, 431, 432, 444, 468, 529, 535, 538, 547, 577, 581, 582, 664, 670, 716, 729, 756–758, 763–769, 772, 787
Մեծ Թոնբ, 137, 139, 522
Մենուֆիյա նահանգ, 309
Մերիլանդի նահանգ, 302
Մերձավոր Արևելք, 88, 90, 102, 109, 146, 158, 223, 224, 226, 232, 238, 239, 283, 302, 303, 324, 426, 428, 449, 528, 530, 551, 554, 560, 576, 581, 582, 639, 669, 676, 686, 753, 785
Մերս Մատրուկ, 238
Մեքսիկա, 601
Մեքքա, 422, 677, 678
Միացյալ Էմիրություններ, 90, 94–97, 114, 116, 120, 126, 128, 137, 144, 157, 318, 522, 533, 536, 539, 768, 770, 781
Միացյալ Նահանգներ, 37, 103, 237, 528, 623, 625, 626
Միզդան Ֆեցցան, 684
Սինա Ջաբալ Ալի, 127
Սինյե, 192, 193
Միջագետք, 13, 430–432, 451, 607
Միջերկրական ծով, 16, 19, 20, 38, 181, 223, 382, 404, 554, 569, 581, 685
Միջերկրականի ավազան, 676
Միջին Արևելք, 94, 158, 161, 164, 178, 221, 223, 472, 480, 513, 627
Միջին Եփրատ, 438, 441, 442, 445, 446, 460, 482
Միսուրատ, 679, 746
Մոնտրյո, 218
Մոսկվա, 81, 202, 348, 479
Մոսուլ, 428, 438–442, 449–452, 464, 470, 482, 484, 485, 490, 548, 552
Մուխթարա, 622, 648
Մուկալա, 351–353
Մուհարակ, 146, 162, 163, 166, 167
Մունթաֆիկ, 445
Մուսայթբե, 621

Նաբաա, 649
Նաբաթիա, 615, 637, 661
Նահր ալ–Բարիդ, 635
Նահր ալ–Մոթ, 647
Նամիբիա, 427
Նաջաֆ, 435, 437–439, 442, 445, 446, 472, 476, 482, 523, 548
Նաջրան, 328, 329, 345
Նասիրիյա, 436, 437, 459, 460, 480
Նար Ումար, 449, 450
Նեղոս, 185, 201, 225, 240, 251, 264, 271–273, 309
Նեջդ, 15
Ներքին Սաջարդ, 411
Ներքին Յաֆի, 351
Նիգեր, 16, 673, 687
Նիդերլանդներ, 94
Նյու Յորք, 786
Նոր Զելանդիա, 475
Նոր Հաջն, 647

Շահարա, 340
Շահրաբան, 442
Շամիյա, 438
Շատ ալ–Արաբ, 449, 479, 523, 526
Շատիլա, 635, 653
Շարկիյա, 192
Շարմ աշ–Շեյխ, 315
Շարջա, 88, 91, 94, 96–110, 114, 116, 117, 121, 127,

128, 130, 139, 140, 145, 767, 768
Շիհրի, 351
Շոբակ, 194
Շոտլանդիա, 751
Շուայբա, 455, 465, 474
Շուքր, 277, 364, 557
Շուֆ, 621, 622, 642, 646, 654
Շվեյցարիա, 71, 670
Շրի Լանկա, 134, 766

Չադ, 401, 460–464, 471, 673, 687, 749
Չեխոսլովակիա, 337, 340, 367, 749
ՉԺՀ, 381
Չինաստան, 91, 94, 144, 337, 381, 530, 538, 670

Պակիստան, 111, 134, 269, 377, 480, 539, 540, 697, 766
Պաղեստին, 6, 12, 13, 15, 134, 194, 221, 253, 283, 288, 301, 304, 348, 426, 530, 537, 571, 577, 604, 607, 636, 639, 645, 648, 652, 702, 748, 749, 785
Պայմանագրային կամ խաղաղության ափ, 93
Պայմանագրային Օման, 11, 90, 93–110, 114–117, 150, 169, 756, 757, 760, 769
Պարսից ծոց, 5, 88, 94, 97, 146, 149, 150, 159–162, 164, 169, 175, 238, 438, 529, 536, 538, 539, 755–761, 766–768
Պարսկաստան, 91, 148, 432, 755
Պորտ Սաիդ, 193, 199, 210, 245, 247, 270, 273
Պորտուգալիա, 9, 91, 113
Պորտսմուտ, 472, 473

Ջաբալ, 127, 130, 251, 252, 289, 328, 377
Ջաբալ Շարիֆ, 251, 252, 289
Ջալո, 684, 717
Ջաղբուբ, 684
Ջեբել Ախդարի լեռներ, 684
Ջեբել Սմալ, 567
Ջիդա, 341
Ջիզան, 345
Ջուլֆար, 91
Ջունի, 565, 646, 650

Ռադֆան, 349, 357
Ռակկա, 192, 193
Ռամադի, 432
Ռայյակ, 560
Ռաշայյա, 560, 593, 608
Ռաշիդիյա, 635
Ռաս ալ–Խայմա, 88, 91–94, 97, 100, 101, 104, 107, 110, 114, 116, 117, 121, 129, 139, 140, 767–769
Ռաս Բեյրութ, 621
Ռոդեզիա, 81
Ռուանդա, 427
Ռուբ ալ–Խալի, 90
Ռումայսա, 442, 460
Ռուսաստան, 186, 196, 202, 316, 430
Ռուտբա, 467

Սաադա, 341, 699
Սաբխե, 738
Սաբրա, 635, 653
Սակիեթ Սիդի Յուսու, 404
Սահարա, 16, 39, 41, 48, 72, 73
Սամավա, 432, 460
Սամարա, 442, 456
Սայդա, 557, 559, 560, 565, 578, 593, 594, 603, 605, 609, 610, 615, 622, 637, 642, 646
Սան Ռեմո, 440, 441, 560
Սան Ֆրանցիսկո, 242

Սանա, 324, 328–334, 338, 341–343, 372, 376, 381
Սաուդյան Արաբիա, 15, 88, 90, 95, 104, 109, 110, 115, 128, 136, 137, 139, 142, 143, 146, 157, 163, 168, 172, 175–177, 241, 288, 293, 311, 318, 324, 328, 329, 335, 337, 339–346, 367, 374, 377–381, 428, 451, 475, 529, 531, 533, 536, 537, 539, 540, 611, 642, 657, 659, 669, 670, 727, 753, 759, 760, 764, 769, 784–786
Սեյշելյան կղզիներ, 198
Սեն ժորժ ծոց, 625
Սենեգալ, 749
Սետիֆ, 41, 45, 46
Սիդի Բարանի, 231
Սինա, 272, 285, 299, 303, 316
Սինայի թերակղզի, 272, 285
Սինգապուր, 126, 238, 787
Սիրիա, 12, 13, 15, 41, 134, 151, 153, 159, 194, 221, 241, 276–278, 284, 285, 299, 302, 332, 337, 341, 367, 378, 406, 410, 428, 475, 481, 482, 484, 496, 497, 516, 530, 531, 537, 539, 540, 554, 557–586, 595, 597, 600–611, 616, 642–645, 650, 651, 654–663, 666, 667, 669, 670, 702, 711, 724, 726, 748, 785
Սիրտ, 682, 717
Սիցիլիա, 685
Սոկոտրա, 324, 351
Սուդան, 9, 16, 181, 198, 200, 201, 207–212, 217, 218, 229, 240, 245–247, 253, 266–270, 292, 537,

539, 642, 673, 678, 725, 726, 751
Սուեզ, 106, 110–113, 166, 199, 201, 216, 218, 224, 225, 232, 238, 246–248, 268–274, 278, 293, 298, 300, 303, 306, 307, 309, 481, 704, 766
Սուեզի ջրանցք, 106, 110–112, 166, 201, 216, 218, 224, 225, 232, 238, 247, 248, 268–274, 293, 299, 300, 303, 306, 307, 309, 481, 704
Սուլեյմանիա, 440
Սուկ աշ–Շույուխ, 442, 460
Սումամ, 57, 58
Սուս, 55, 56, 60, 61, 399, 417
Սուր, 556, 559, 560, 605, 610, 615, 622, 642
Ստալինգրադ, 223, 238
Ստամբուլ, 485, 625, 676, 680
Սֆար, 399

Վախրա, 763
Վահիդ, 351, 357
Վաշինգտոն, 242, 300, 303, 728, 786
Վասպուրական, 449
Վաստա, 193
Վարշավա, 425
Վերին Յաֆի, 351
Վերին Վոլտա, 749
Վիշի, 36–41, 390–393, 576–579, 582
Վոլգա, 238, 239

Տիգրիս, 482, 552
Տիրանի նեղուց, 284
Տոբրուկ, 691, 729, 743
Տրիպոլի, 67, 69, 344, 560, 565, 567, 577, 578, 592–594, 603–607, 610, 614–626, 642, 646, 673, 675–709, 713, 714, 716, 718, 726, 728, 730, 732, 748, 750
Տրիպոլիտանիա, 675–702, 706
Տրիպոլիտանիայի Հանրապետություն, 682

Ում ալ–Կավայնի, 767, 768
Ուբեյդ, 240, 717, 786
Ուիլուս Ֆիլդ, 691, 704
Ում ալ–Քայվայն, 88, 94, 97, 114, 117, 121, 127
Ում Շարիֆ, 104
Ում Բաբ, 763
Ում Սայիդ, 761, 763

Փարիզ, 12–15, 23, 28, 33, 34, 41, 46, 49, 56, 60, 188, 189, 195–197, 386, 388, 392, 394–398, 402–405, 439, 665, 666, 691, 693–695
Փոքր Թոնբ, 137, 139, 522

Քարբալա, 432, 437–442, 445, 446, 484, 485, 523, 548
Քաֆր ադ–Դավրա, 259
Քեմբրիջ, 173
Քեմփ Դնիդ, 303, 305, 316, 348, 651, 653
Քեսրվան, 646, 647
Քիշնի, 351
Քիֆլ, 442
Քիֆրի, 442
Քութ, 240, 277, 351, 474
Քութեյբի, 351
Քուլայաթ, 659
Քուվեյթ, 11, 94, 97, 108, 114, 126, 140–150, 157, 162, 169, 175, 316, 318, 378, 380, 381, 428, 484, 507, 522, 529–542, 545, 669, 756, 757, 760, 769, 781, 784, 785
Քրդստան, 13, 435, 439, 440, 447, 466, 471, 491–493, 496–502, 508, 509, 511, 520, 522, 527, 545, 546

Օլստեր, 749
Օման, 11, 88–110, 114–117, 136–139, 142, 148, 150, 168, 169, 324, 380, 381, 536, 537, 539, 756, 757, 760, 768, 784
Օմանի ծոց, 88, 90, 92
Օսմանյան կայսրություն, 13, 95, 184, 187, 676, 757
Օրան, 38–41, 44, 50, 56, 62, 84
Օրմուզի նեղուց, 522

Ֆալուջա, 253, 254, 467, 548
Ֆաո, 526
Ֆեցցան, 675–680, 684, 685, 689–700, 704–706, 717
Ֆիլիպիններ, 134
Ֆուջայրա, 88, 94, 97, 114, 117, 121, 124, 127, 130, 767, 768
Ֆրանսիա, 8–15, 19–81, 92, 94, 106, 113, 144, 157, 221, 222, 231, 238, 272, 273, 378, 381, 385–397, 404–411, 427, 430, 440, 445, 451, 475, 481, 530–535, 538, 540, 556–593, 597–602, 609, 619, 623–626, 666, 670, 675, 676, 687, 689–697, 701, 703–705, 751, 787

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ[27]

I. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Центральный государственный архив Октябрьской революции СССР (ЦГАОР СССР), Москва: (ԽՍՀՄ Հոկտեմբերյան հեղափոխության պետական կենտրոնական արխիվ)

1. Фонд 4459, опись 1, дело 232, 234, 235, 238, 356, 526, 669, 1261, 1313, 1363, 1374, 1824, 1957, 2230, 2731, 3005, 3016, 3108, 3468, 3998, 4178, 4271, 4272, 4416, 4418, 4636, 5439, 5440, 5580, 6700, 8088, 11425.
2. Фонд 4459, опись 2, дело 414, 815, 892, 981, 1079, 1190, 1313.
3. Фонд 4459, опись 3, дело 1476, 1779, 1790, 1821, 1907, 2020, 2279, 2282, 2285, 2387, 2651, 2670, 3352.
4. Фонд 4459 опись 9, дело 804.
5. Фонд 4459 опись 12, дело 431.
6. Фонд 4459, опись 24, дело, 10, 71, 126, 232, 751, 912, 913, 1182.
7. Фонд 4459, опись 26, дело 10, 175, 186.

II. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

8. Аграрный вопрос и национально—освободительное движение. Материалы обмена мнениями марксистов—аграрников, состоящегося в июне—сентябре 1960 г. в Гаване и Бухаресте, Москва, 1963.
9. Африка. 1961—1965. Справочник, Москва, 1967.
10. Вся Азия. Географический Справочник. Государственное устройство. Природа. Население. Хозяйство. История. Культура, Москва, 2003.
11. Внешняя политика СССР. Сборник документов, т. IV, (1935 — июнь1941 г.), Москва, 1946.
12. Внешняя политика Советского Союза в период Отечественной войны. Документы и материалы. Т. I., Москва, 1946.
13. **Гальдер Ф.** Военный дневник. Ежедневные записи начальника Генерального штаба сухопутных войск. 1939—1942. Том 2. От запланированного вторжения в Англию до начала Восточной кампании (1.07.1940—21.06.1941), Москва, 1969.

27 Արաբերենով գրականությունը տրվում է լատինական տառադարձությամբ և հայերեն թարգմանությամբ:

14. **Гальдер Ф.** Военный дневник. Ежедневные записи начальника Генерального штаба сухопутных войск. 1939—1942 гг. Том 3, в двух книгах. От начала восточной кампании до наступления на Сталинград (22.06.1941—24.09.1942), перевод с немецкого, Москва, 1971.
15. **Гальдер Ф.** Военный дневник. Ежедневные записи начальника Генерального штаба сухопутных войск. 1939—1942 гг. Том 3 в двух книгах. От начала Восточной кампании до наступления на Сталинград (22.06.1941—24.09.1942) Записи в дневнике. Книга вторая (1.10.1941—24.09.1942), Москва, 1971.
16. **Де Голль Шарль.** Военные мемуары, пер. с французского, т. 1, Москва, 1957, т. 2, Москва, 1962.
17. Десять лет национальной независимости Народной Демократической Республики Йемен, Москва, 1978.
18. Дипломатический словарь, т. I, Москва, 1960; т. II, Москва, 1961; т. III, Москва, 1964.
19. Дневник посла Додда. 1933—1938, Москва, 1961.
20. Документы внешней политики СССР, т. I, Москва, 1957.
21. Документы внешней политики СССР, т. VI, Москва, 1962.
22. Документы и материалы кануна второй мировой войны. Том I. Ноябрь 1937—1938 гг. Из Архива Министерства Иностранных Дел Германии, Москва, 1948.
23. Документы и материалы кануна втотрой мировой войны. Том II. Архив Дирксена (1938—1939 гг.), Москва, 1948.
24. История дипломатии, т. III, М—Л. 1945.
25. История международного рабочего и национально—освободительного движения, ч. 2, Москва, 1962.
26. **Ключников Ю. В., Сабанин А. В.** Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч. II. От империалистической войны до снятия блокады с Советской России, Москва, 1926.
27. **Ключников Ю. В., Сабанин А. В.** Международная политика новейшего времени в договорах, нотах, декларациях. Ч. III. От снятия блокады с Советской России до десятилетия Октябрьской революции. Вып. II. Акты дипломатии иностранных государств, Москва, 1929.
28. Конституция Республики Египет, Москва, 1956.
29. **Ллойд Джордж Д.** Правда о мирных договорах, тт. I, II, Москва, 1957.
30. Малая Энциклопедия стран, Москва, 2004
31. Министерство иностранных дел СССР. СССР и Арабские страны. 1917—1960. Документы и материалы, Москва, 1961.
32. Население земного шара, Москва, 1965.
33. **Насер Г. А.** Проблемы египетской революции. Избранные речи и выступления (1952—1970), Москва, 1979.
34. Обьединенная Арабская Республика. Москва, 1968.
35. Переписка Председателя Совета Министров СССР с Президентами США и Премьер—министрами Великобритании во время Великой Отечественной войны. 1941—1945 гг. Том первый. Переписка с У. Черчиллем и К. Эттли (июль 1941—ноябрь 1945 г.), Москва, 1957.
36. Переписка Председателя Совета Министров СССР с Президентами США и Премьер—министрами Великобритании во время Великой Отечественной войны.

1941–1945 гг. Том второй. Переписка с Ф. Рузвельтом и Г. Трумэном (август 1941 г.–декабрь 1945 г.), Москва, 1957.
37. Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны. 1941–1945. Крымская конференция руководителей трех союзных держав — СССР, США и Великобритании. 4–11 февраля 1945 г., Москва, 1984.
38. Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны. 1941–1945. Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав–СССР, США и Великобритании. 17 июля–2 августа 1945, Москва, 1984.
39. Современный Алжир, Москва, 1972.
40. Современный Ирак, Москва, 1966.
41. Современный Ливан, Москва, 1963.
42. Тегеран. Ялта. Потсдам. Сборник документов, Москва, 1970.
43. **Abdul Kerim Qassim**. Objectives of Iraqs Revolution, Baghdad, 1959.
44. A Decade of American Foreign Policy. Basic Documents. 1941–1949, Washington, 1950.
45. US Department State Bulletin, December 15, Washington, 1952.
46. **Hurewitz J**. Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record: 1914–1956, v. II, New York, 1956.
47. Documents on American Foreign Relations. v. III, Boston, 1941.
48. Documents on American Foreign Relations, v. IV, Boston, 1942.
49. Documents on American Foreign Relations, v. V, Boston, 1944.
50. Documents on American Foreign Relations, v. VI, Boston, 1945.
51. Documents on American Foreign Relations, v. VII, Princeton, 1947.
52. Documents on British Foreign Policy. 1919–1939. 1st Series, v. I, London, 1947.
53. Documents on British Foreign Policy. 1919–1939. 1st Series, v. IV, London, 1952.
54. Documents on British Foreign Policy. 1919–1939. 1st Series, v. IX, London, 1952.
55. Documents on German Foreign Policy (1918–1945). Series D (1937–1945), v. V, Washington, 1953.
56. Documents on German Foreign Policy (1918–1945). Series D (1937–1945), v. VI, London, 1956.
57. Documents on German Foreign Policy. (1918–1945). Series D (1937–1945), v. VIII, Washington, 1954.
58. Documents on German Foreign Policy (1918–1945). Series D (1937–1945), v. X, London, 1957
59. Documents on German Foreign Policy (1918–1945). Series D (1937–1945), v. XI. London.
60. Documents on German Foreign Policy (1918–1945). Series D (1937–1945), v. XII, London, 1962.
61. Documents on German Foreign Policy (1918–1945). Series D (1937–1945), v. XIII, London, 1964.
62. Documents on International Affairs. 1939–1946, v. I–II, London, 1954.
63. Documents on International Affairs. 1958, London, 1962.
64. Documents on International Affairs. 1959, London, 1963.

65. Constitutions, Electoral Laws, Traeties of States in the Near East, H. Davis, Durham, 1953.
66. **Churchill W.** The Second World War, v. III. The Great Alliance, London, 1950.
67. The Economic Development of Iraq. Report of a Mission Organized by the International Bank of Reconstruction and Development on the Request of the Govermnent of Iraq, Washington, 1952.
68. The Essential Middle East. A Comprihensive Guide. Dilip Hiro, New York, 2003.
69. Foreign Relations of the United States. Diplomatic Papers. 1940, v. II, Washington, 1958.
70. Foreign Relations of the United States. Diplomatic Papers. 1941, v. III, Washington, 1959.
71. Foreign Relations of the United States. Diplomatic Papers. 1943, v. IV, Washington, 1964.
72. Foreign Relations of the United States. Diplomatic Papers. 1944. v. V, Washington, 1965.
73. Government of Iraq. Ministry of Economics. Statistical Abstract, Baghdad, 1956.
74. Great Britain. Parliamentary Papers. 1920. Treaty Series, Cambridge, 1964.
75. Industrial Census of Lebanon. 1955, v. II, Beirut, 1958.
76. An Introduction to the Past and Present of the Kingdom of Iraq. By a Committee of Officials, Baghdad, 1946.
77. Lebanon, Jordan, Iraq. Report on the United States Foreign Assistance Programs. Prepared at the Request of the Special Committee to Study the Foreign Aid Program by Hamilton Fish Armstrong, Washington, 1957.
78. The Letters of Gertrude Bell, London, 1930.
79. The Middle East and North Africa. 1969–1970, London, 1969.
80. The Middle East. From Libya to Iran, London, 2000.
81. Ministry of Culture and Information [Iraq]. The Historic Statement of the Revolutionary Command Council on the Peaceful Democratic Solution of the Kurdish Issue, Baghdad, 1970.
82. Ministry of Information [Iraq]. The National Action Charter. Documentary Series (16), Baghdad, 1971.
83. **Naser G. A.** The Philosophy of the Revolution, Buffalo, 1969.
84. Onwards to Victory. War Speeches by the Right Hon. Winston Churchill. 1943, London, 1944.
85. The New Industrial Yearbook for the Year 1960, New York, 1961.
86. Pact of Mutual Co–Operation Between Iraq and Turkey and Special Agreement Between the Government of the United Kingdom and the Government of Iraq–British Foreign Policy: Some Relevant Documents, London, 1955.
87. Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference, v. V, Washington, 1946.
88. Papers Relating to the Foreign Relations of the United States, v. XII, Washington, 1947.
89. Point IV in Lebanon. A Joint Technical Cooperation Program, Beirut, 1955.
90. The Public Papers and Addresse of Franklin D. Roosevelt, v. IX, New York, 1969.

91. The Public Papers and Addresses of Franklin D. Roosvelt, v. XI, 1942, New York, 1969.
92. Republic of Iraq. Ministry of Culture and Information. July 17 Revolution in Brief, Baghdad.
93. The Revolution Government and Oil Negotiations. Prepared by the Ministry of Oil, Baghdad, 1961.
94. **El Sadat Anwar.** Revolte sur le Nil, Paris, 1957.
95. Special Report by H. M. G. in the United Kingdom of Great Britain and Northern Ireland to the Council of the League of Nations on the Progress of Iraq During the Period 1920–1931, London, 1931.
96. Speech of the President Ahmed Hasan al–Bakr on the Second Anniversary of the July 17th Revolution, Baghdad, 1970.
97. Statement of Policy by His Majesty's Government in the United Kingdom in Respect of Syria and Lebanonn. 8th June–9th September 1941, London, 1945.
98. **Stebbing R.** The United States in World Affairs. Documents on American Foreign Relations. 1954, New York, 1955.
99. **Qathafi Muammar Al.** The Green Book. Part One. Democracy. Tripoli, Libya.
100. **Qathafi Muammar Al.** The Green Book. Part Two. Economic Problems, Tripoli, Libya.
101. **Qathafi Muammar Al.** The Green Book. Part Three. The Social Foundation, Tripoli, Libya.
102. Statement of the President of the Iraqi Republic Ahmed Hassan al–Bakr in the Press Conference Held on the 28th March, 1970, Baghdad, 1970.
103. United Nations. Treaty Series, v. 151, New York, 1952.
104. Uited Nations. Treaty Series, v. 222, New York, 1952.
105. United Nations. Economic Developments in the Middle East. 1945 to 1954, New York, 1955.
106. United Nations. Economic Developments in the Middle East. 1959–1961, New York, 1962.
107. United Nations. Statistical Yearbook, New York, 1958, 1961.
108. Who's Who in Egypt and Near East, Cairo, 1953.
109. Lubnan fi Ahd al–Istiklal, Beirut, 1947.
Լիբանանն անկախության դարաշրջանում, Բեյրութ, 1947:
110. Intafada al–Irak al–Akhira. Arada wa Tahlil, Baghdad, 1957.
Վերջին ապստամբությունն Իրաքում. պահանջներ և լուծումներ, Բաղդադ, 1957:
111. Siyasat al–Djumhuriya al–Irakiya al–Kharidjiya, Baghdad, 1959.
Իրաքի Հանրապետության արտաքին քաղաքականությունը, Բաղդադ, 1959:
112. Al–Djumhuriya al–Iraqiya. Al–Islah al–Zira'i, Baghdad, 1963.
Իրաքի Հանրապետություն. Ագրարային ռեֆորմը, Բաղդադ, 1963:
113. Mabda'i Saura 14 Tamuz fi Khitabi al–Zaim, Baghdad, 1958.
Հուլիսի 14–ի հեղափոխության սկզբունքները Առաջնորդի ելույթներում, Բաղդադ, 1958:
114. Masira al–Saura fi Kkhitabi wa Tasrihati al–Said Raisi al–Djumhuriya al–Iraqiya Ahmad Hasan al–Baqr. 1967–1970, Baghdad, 1971.
Հեղափոխության ընթացքը Իրաքի Հանրապետության պրեզիդենտ պարոն Ահմադ Հասան ալ–Բաքրի ելույթներում և հայտարարություններում, 1967–1970, Բաղդադ, 1971:

115. Mundjazat as–Saura al–September 1969 li Salasa Sanavat, Tripoli, 1972.
1969 սեպտեմբերյան հեղափոխության նվաճումները երեք տարիներում, Տրիպոլի, 1972:
116. Madzmuat Khutab wa Tasrihat wa Bayanat al–Rais Gamal Abd al–Nasir, v. I, al–Kahira, 1958.
Պրեզիդենտ Գամալ Աբդել Նասերի ճառերի, դեկլարացիաների և հայտարարությունների ժողովածու, հ. I, Կահիրե, 1958:

III. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

117. **Աբգարյան Ե. Ա.**, Քաղաքական և սոցիալ–տնտեսական վերափոխությունները եգիպտական հեղափոխության առաջին փուլում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XIV, Երևան, 1987:
118. **Աբրահամյան Ա. Գ.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա. Երևան, 1964, հ. Բ, Երևան, 1967:
119. **Ազատեան Լիպարիտ**, Դեպքեր ու դեմքեր, Լոս Անճելըս, 2003:
120. **Ալպոյաճեան Ա. Ա.**, Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 1, Գահիրե, 1941, հ. 2, Գահիրե, 1955:
121. **Ալպոյաճեան Արշակ**, Իրաքի հայերը, Երևան, 2003:
122. **Աղպաշեան Հ.**, Արաբական ազգային ազատագրական զարթոնքը, Պեյրութ, 1949:
123. Արևելագիտական ժողովածու, հ. I, Երևան, 1960:
124. Արևելագիտական ժողովածու, հ. II, Երևան, 1964:
125. **Գասպարյան Ս.**, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962.
126. **Եագուպեան Նազարէթ Գ.**, Յանուն երջանկութեան (Յուշեր), Գահիրե, 1960:
127. **Թոփուզյան Հ. Խ.**, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805–1952), Երևան, 1978:
128. **Թոփուզյան Հ. Խ.**, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841–1946), Երևան, 1986:
129. **Կարամանուկյան Շ. Լ.**, Արաբական պետությունների լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988:
130. **Կարապետյան Ռ. Կ.**, Սիրիա–ամերիկյան հարաբերությունները և խաղաղության գործընթացը Արաբական Արևելքում, Երևան, 1999:
131. **Կարապետյան Ռ. Կ.**, Սիրիա–ամերիկյան հարաբերությունները (1967–1966), Երևան, 2000:
132. **Կարապետյան Ռ. Կ.**, Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003:
133. **Հովհաննիսյան Ն. Հ.**, Ազգային–ազատագրական պայքարը Իրաքում (1945–1963), Երևան, 1964:
134. **Հովհաննիսյան Ն. Հ.**, Ազգային–ազատագրական պայքարը Լիբանանում (1939–1958), Երևան, 1967:
135. **Հովհաննիսյան Ն. Հ.**, Հոկտեմբերը և ազգային–ազատագրական շարժման վերելքը Արաբական Արևելքում: Վ. Ի. Լենինը և Արևելքի ժողովուրդների ազատագրական պայքարը, Երևան, 1970:
136. **Հովհաննիսյան Ն. Հ.**, Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975–1982), Երևան, 1982:

137. **Հովհաննիսյան Ն. Հ.**, Հեղափոխական պրոցեսը արաբական աշխարհում, Երևան, 1990:
138. **Հովհաննիսյան Ն. Հ.**, Իրան. Այաթոլլաի Խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 2004:
139. **Հովհաննիսյան Ն. Հ.**, Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանային գործոն — Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները, Երևան, 2004:
140. **Հովհաննիսյան Ն. Հ., Սարգսյան Հ. Հ.**, Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917–1946), Երևան, 1975:
141. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. III, Արաբական երկրներ, Երևան, 1967:
142. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. VI, Արաբական երկրներ, Երևան, 1974:
143. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. IX, Արաբական երկրներ, Երևան, 1978:
144. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XV, Երևան, 1989:
145. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVI, Երևան, 1996:
146. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVII, Երևան, 1998:
147. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXII, Երևան, 2003:
148. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIV Երևան, 2005:
149. **Նաջարյան Ե. Հ.**, Հայ–արաբական մշակութային կապերը (Սիրիա, Լիբանան) 1945–1970 թվականներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. VI, Երևան, 1974:
150. **Սառաջյան Պ. Հ.**, Արաբական Արևելքի կոմունիստական կուսակցությունների և առաջադիմական ուժերի պայքարը դեմոկրատիայի և սոցիալ–տնտեսական վերափոխումների համար, Երևան, 1986:
151. **Վարժապետյան Ս. Հ.**, Հայերը Լիբանանի մեջ. Հանրագիտարան Լիբանանի հայ գաղութի, հ. Գ, Պեյրութ, 1981:
152. **Փաշայան Ա. Ա.**, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, Երևան, 2003:
153. **Абдаррахман ар–Рафии.** Восстание 1919 г. в Египте, сокращ. перевод с арабского, Москва, 1954.
154. **Аветисян Л. В.** Проблема накопления капитала в Ираке, Ереван, 1972.
155. Аграрные реформы в странах Востока, Москва, 1961.
156. Актуальные проблемы Африки, Москва, 1965.
157. **Али Зарка.** Национальная экономика Ирака, пер. с араб (полный текст см. Центральный государственный архив Октябрьской революции СССР, ф. 4459, оп. 2, д. 1190).
158. **Алитовский С. Н.** Аграрный вопрос в современном Ираке, Москва, 1966.
159. **Амин Саид.** Восстание арабов в XX веке, пер. с араб. Москва, 1964.
160. **Андреасян Р., Эльянов А.**, Ближний Восток, нефть и независимость, Москва, 1961.
161. Арабы в борьбе за независимость, Москва, 1957.
162. **Аршаруни Н. А.** Ливия, Москва, 1965.
163. **Аршаруни Н. А.** Иностранный капитал в Ливии (1911—1967), Москва, 1970
164. **Бакланов А. Г.** Рабочий класс современного Египта, Москва, 1981.
165. **Беляев И. П., Примаков Е. М.** Время президента Насера, Москва, 1974.

166. **Бодянский В. Л., Шагаль В. Э.** Современная Ливия, Москва, 1965.
167. **Бодянский В. Л.** Современный Бахрейн, Москва, 1976.
168. **Бомье Жан.** От Гитлера до Трумэна, пер. с франц., Москва, 1951.
169. **Брукс Майкл.** Нефть и внешняя политика, Москва, 1949.
170. **Вагаршян В. Л.** Ислам и арабский национализм в западной историографии (1950–1980), Ереван, 1991.
171. **Васильев Л. С.** История Востока. 2, Москва, 2001.
172. **Ватолина Л. Н.** Современный Египет, Москва, 1949.
173. **Ватолина Л. Н.** Экономика Обьединенной Арабской Республики, Москва, 1962.
174. **Вольнов Л. Л.** Ливанский дневник, Москва, 1980.
175. **Ганб Фарман.** Ирак в годы черного режима, пер. с араб., Москва 1958.
176. **Галкин В. А.** В Йемене, Москва, 1963.
177. **Гатаулин М. Ф.** Экономика ОАР на новом пути, Москва, 1960.
178. **Герасимов О.** Иракская нефть., Москва, 1969.
179. **Герасимов О.** Ирак, Москва, 1971.
180. **Григорян Г. М.** Позиция Сирии в ближневосточном конфликте, Ереван, 1989.
181. **Голдобин А.** Египетская революция 1919 г., Ленинград, 1958.
182. **Голубовская Е. К.** Политическое развитие Йеменской Арабской Республики, Москва, 1989.
183. **Гореликов С. Г.** Ирак. Экономическо–географическая характеристика, Москва, 1963.
171. **Гурко–Кряжин В.** Арабский Восток и империализм, Москва, 1926.
172. **Гусаров В. И., Сейфульмулюков Ф. М.** Экономика Йеменской Арабской Республики, Москва, 1972.
173. **Гусаров В. И.** Аден, Москва, 1981.
174. **Гуськов А. С.** Демократический Йемен: 20 лет революции, Москва, 1983.
175. **Данциг Б. М.** Ирак, Москва, 1955.
176. **Данциг Б. М.** Ирак в прошлом и настоящем, Москва, 1960.
177. **Джафар Хайят.** Иракская деревня, пер, с араб. Москва, 1953.
178. **Егоров И. А.** Социально–экономическая структура Алжира, Москва, 1988.
179. **Зеваров Ф.** Социально–экономические преобразования в Иракской Республике, Москва, 1979.
180. **Зуев Ф.**, Балканы, Ближний и Средний Восток накануне и в первый период второй мировой войны, Москва, 1950.
181. **Иванов Н. А.** Государственный строй Туниса, Москва, 1962.
182. **Иванов Н. А.** Кризис французского протектората в Тунисе, Москва, 1971.
183. **Ингерсолл Р.** Совершенно секретно, пер. с англ., Москва, 1947.
184. **Исави Ш.** Египет в середине XX века, Москва, 1958.
185. **Исраэлян В. Л.** Дипломатическая история Великой Отечественной войны. 1941–1945 гг., Москва, 1959.
186. **Исраэлян В. Л., Кутаков Л. Н.** Дипломатия агрессора, Москва, 1967.
187. **Камаль М. А.** Национально–освободительное движение в Иракеском Курдистане, Баку, 1967.
189. **Катин В. К.** По Ливану, Москва, 1961.
190. **Катин В. К.** В Тунисе, Москва, 1963.

191. **Кассис В. Б.** Бахрейн, Москва.
192. **Кечекьян С.** Мандаты Лиги Наций в странах Ближнего Востока, Баку, 1930.
193. **Корсун Н.** Арабский Восток. Ирак, Москва, 1928.
194. **Коршунов Е.** Я — Бейрут, Москва, 1983.
195. **Котлов Л. Н.** Национально—освободительное восстание 1920 г. в Ираке, Москва, 1958.
196. **Крахмалов С. П.** Йеменская Арабская Республика и ее вооруженные силы, Москва, 1977.
197. **Кукушкин В. Ю.** Нефть и развитие: Ливия, Алжир, Москва, 1985.
198. **Кунина А.** Доктрина Эйзенхауэра, Москва, 1957.
199. **Лаврентьев В. Л.** Ливия, Москва, 1985.
200. **Ланда Р. Г.** История Алжирской революции. 1954—1962, Москва, 1983.
201. **Левин И.** Ирак (Современная Месопотамия), Москва, 1937.
202. **Левин З. И.** Менталитет Диаспоры, Москва, 2001.
203. **Лифанов Н.** Ливан, Москва, 1966.
204. **Луцкая Н. С.** Очерки новейшей истории Марокко, Москва, 1973.
205. **Луцкевич В. А.** Египет в борьбе за экономическую независимость (1952—1971), Москва, 1976.
206. **Луцкий В. Б.** Арабские страны, Москва, 1947.
207. **Луцкий В. Б.** Проблемы Сирии и Ливана, Москва, 1946.
208. **Манасерян Л. П.** Марокко в борьбе за независимость, Ереван, 1969.
209. **Манукян А., Козарез К.** Капиталистический рынок нефти, Москва 1953.
210. **Марунов Ю. В., Потемкин Ю. В.** Арабо—турецкие отношения на современном этапе, Москва, 1967.
211. **Маслов Ю. А.** Ливия. Экономика и внешняя торговля, Москва, 1975.
212. **Мгои Ш. Х.** Курдский национальный вопрос в Ираке в новейшее время, Москва. 1991.
213. **Ментешашвили А. М.** Ирак в годы английского мандата, Москва, 1969.
214. **Мельников Е. Н.** Политический и государственный строй Ливана, Москва, 1974.
215. **Милованов И., Сейфуль—Мулюков Ф.** Ирак вчера и сегодня, Москва, 1959.
216. **Мирский Г. И.** Ирак в смутное время, Москва, 1961.
217. **Мирский Г. И.** Армия и политика в странах Азии и Африки, Москва, 1970.
218. **Мирский Г. И.** Третий мир. Общество, власть, армия, Москва, 1976.
219. **Мурадян С. М.** Формирование национальной интеллигенции Ирака, Ереван, 1988.
220. **Мнахаммед Маджзуб.** Трагедия демократии и арабского национализма в Ливане, пер. с арабского, Москва, 1959.
221. **Николаев А. Н.** Правовой режим Суэцкого канала и национализация Суэцкой компании, Москва, 1960.
220. Новейшая история арабских стран (1917—1966), Москва, 1968.
221. Новейшая история арабских стран Азии. (1917—1985), Москва, 1988.
222. Новейшая история стран Азии и Африки. XX век. 1900—1945, Москва, 2001.
223. **Оганесян Н. О.** Образование независисмой Сирийской республики (1939—1946), Москва, 1968.
224. **Оганесян Н. О.** Национально—освободительное движение в Ираке (1917—1958), Ереван, 1976.

225. **Оганесян Н. О.** Политика империалистических держав на Арабском Востоке в годы второй мировой войны (1939—1945), Ереван, 1980.
226. **Оганесян Н. О.** Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Ереван, 1985.
227. **Оганесян Н. О.** Становление и развитие востоковедения в Советской Армении — Востоковедные центры в СССР (Азербайджан, Армения, Грузия, Украина), Москва, 1988.
228. **Оганесян Н. О., Абгарян Е. А., Сараджян П. А. Кондакчян Р. П. Еганян Г. М.** Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока, 1986.
229. **Орлов Е. А.** Государственный строй Йемена, Москва, 1958.
230. **Павлович М.** Борьба за Азию и Африку, М—Л, 1925.
231. **Пегов С., Алитовский С.** Ирак, Москва, 1966.
232. **Поздеева Л. В.** Англо—американские отношения в годы второй мировой войны. 1941—1945гг., Москва, 1969.
233. Проблемы современной советской арабистики. Труды IV всесоюзной конференции арабистов, Ереван, 1985. Вып. I. Современные политические и социально—экономические проблемы арабских стран, Ереван, 1988.
234. **Прокофьев В.** Агрессивный блок СЕНТО, Москва, 1963.
235. Политика США на Арабском Востоке, Москва, 1961.
236. Политика Франции в Азии и Африке, Москва, 1965.
237. Политика Англии на Ближнем и Среднем Востоке, Москва, 1966.
238. **Прошин Н. И.** История Ливии, Москва, 1966.
239. **Прошин Н. И.** Страны Аравийского полуострова, Москва, 1958.
240. **Прошин Н. И.** История Ливии. Конец XIX в. — 1965, Москва, 1975.
241. Рабочее движение в капиталистических странах (1959—1961), Москва, 1961.
241а. **Рамадан Микаел.** Тень Саддама Хусейна, пер. с англ., Москва, 2000.
242. Революция в Ираке, пер. с англ., Москва, 1959.
243. **Рузвельт Эллиот.** Его глазами, пер. с англ., Москва, 1947.
244. **Самвелян К. Х.** Рабочий класс Ирака в борьбе за упрочение республиканского режима и демократию, Ереван, 1979.
245. **Самыловский И.** Экспансия американского империализма на Ближнем и Среднем Востоке, Москва, 1955.
246. **Светлов В. С.** Алжир сегодня, Москва, 1981.
247. **Себа Поль,** Тунис, пер. с франц. Москва, 1953.
248. **Сейранян Б. Г.** Египет в борьбе за независимость, Москва, 1970.
249. Советский опыт решения национального вопроса и его значение для народов Африки и Азии, Ереван, 1982.
250. Советско—арабские дружественные отношения, Москва, 1961.
251. **Стоклицкий С. Л.** Ливан. тревоги и надежды, Москва, 1988.
252. Страны Аравии, Москва, 1964.
253. Страны Ближнего и Среднего Востока, Москва, 1944.
254. **Суворов К. В.** Два года в Йемене, Москва, 1964
255. **Тер—Мкртчян Л. Х.** Армяне в странах Арабского Востока, Москва, 1965.
256. **Товмасян С. А.** Ливия на пути независимости и социального прогресса, Москва, 1980.

257. **Трошин Ю. А.** История стран Азии и Африки в новейшее время, Москва, 2004.
258. **Туганова О. Э.** Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, Москва, 1960.
259. **Тума Эмиль.** Национально–освободительное движение и проблема арабского единства, Москва, 1977.
260. **Уорринер Д.** Земельные реформы в странах Ближнего и Среднего Востока (Египет, Сирия, Ирак), пер с англ., Москва, 1958.
261. **Усачев И. Г.** Джон Фостер Даллес. Политический миф и реальность, Москва, 1990.
262. **Федченко А. Ф.** Ирак в борьбе за независимость, Москва, 1970.
263. **Фатис В. Л.** Ливия, Москва, 1982.
264. **Фридман Л. А.** Капиталистическое развитие Египта (1882–1939), Москва, 1963.
265. **Фридман Л. А.** Египет (1882–1952). Социально–экономическая структура деревни, Москва, 1972.
266. **Халед Багдаш.** Избранные статьи, Москва, 1970.
267. Характерные черты социально–политического развития арабских стран в 1950–1970–е годы, Ереван, 1980.
268. **Ш. Аш–Шафии.** Развитие национально–освободительного движения в Египте (1882–1956), пер. с араб. Москва, 1961.
269. **Шервуд Р.** Рузвельт и Гопкинс. Глазами очевидца. Т. I–II, пер. с англ., Москва, 1958.
270. **Шульце Э.** Борьба за персидско–месопотамскую нефть, пер. с англ., Москва, 1924.
271. **Шумов С., Авдеев А.** Ирак. История. Народ. Культура, Москва, 2002.
272. **Юсуф Хаттар аль–Хилю.** Экономика Ливана, пер. с араб. Москва, 1959.
273. **Abid al–Marayat.** A Diplomatic History of Modern Iraq, New York, 1961.
274. **Abouchdid E.** 30 Years of Lebanon and Syria. 1917–1947, Beirut, 1948.
275. **Adams D.** Iraq's People and Resources, Los Angeles, 1958.
276. **Ahmad Hussain.** The Story of Egypt and Anglo–Egyptian Relations, New York, 1947.
277. **Ahmad Kashif al Ghita.** Outline of Modern Iraq, London, 1949.
278. **Amine Youssef Bey.** Independent Egypt, London 1940.
279. **Antonius G.** The Arab Awakening, New York, 1946.
280. **Bahija Lovejoj.** The Land and People of Iraq, New York, 1960.
281. **Banerji J.** The Middle East in World Politics, Calcutta, 1960
282. **Beaujeu–Garnie.** L'Economie du Moyen–Orient, Paris, 1951.
283. **Buckley Ch.** Five Ventures, London, 1954.
284. **Bullard R.** Britain and the Middle East. From the Earliest Times to 1950, London, 1951.
285. **Campbell J.** Defence of the Middle East. Problems of American Policy, New York, 1958.
286. **Caplain M.** Le Moyen–Orient, Paris, 1956.
287. **Charles Malik.** The Near East Between East and West. The Near East and the Great Powers, Massachusetts, 1951.
288. Canada and the Third World, Toronto, 1976.
289. **O'Connor H.** World Crisis in Oil, New York, 1962.
290. **Dekmejian H.** Egypt under Nasir. A Study in Political Dynamics, Bloomington, 1971.
291. **Emerson R.** From Empire to Nation, Cambridge, 1960.

292. **Edmunds C.** Kurds, Turks, Arabs, London, 1957.
293. **Fahim Qubain.** Crisis in Lebanon, Washington, 1961.
294. **First R. Libya.** The Elusive Revolution, Harmondsworth, 1974.
295. **Foster H.** The Making of Modern Iraq, Oclahoma, 1935.
296. **Galagher Ch. F.** The United States and North Africa, Morocco, Algeria and Tunisia, Cambridge, Massachusetts, 1967
297 **Gavan S.** Kurdistan. Divided Nation of the Middle East, London, 1958.
298. **Ghareeb Edmund.** The Kurdish Question in Iraq, New York, 1981.
299. **G. de Gaury.** Three Kings in Baghdad, London, 1961.
300. **Glub J.** War in Desert, London, 1960.
301. **Groba F.** Irak, Berlin, 1941.
302. **Hadad G.** Fifty Years of Modern Syria and Lebanon, Beirut, 1950.
303. **Harold J.** Kings of Arabia. The Rise and Set of the Turkish Sovereignty in the Arabian Peninsula, London, 1923.
304. **Hogarth D. G.** Arabia, London, 1922.
305. **Hitti Ph.** History of the Arabs. From the Earliest Times to the Present, London, 1951.
306. **Hitti Ph.** History of Syria Including Lebanon and Palestine, London, 1951.
307. **Hitti Ph.** Lebanon in History, London, 1957.
308. **Hoskins Ph.** The Middle East Problem Area in World Politics, New York, 1956.
309. **Hourani A.** Syria and Lebanon, London, 1946.
310. **Hourani A.** Minorities in the Arab world, London, 1947.
311. **Hourani A.** Arabic Thought in the Liberal Age. 1798–1939, London, 1930.
312. **Hovhannisyan Nikolay.** The Foreign Policy of Armenia, Yerevan, 1998.
313. **Humbaraci A.** Middle East Indictment, London, 1958.
314. **Ihsan Musa Husaini.** The Moslem Brethern, Beirut, 1956.
315. **Ireland A.** Iraq. A Sudy in Political Development, London, 1937.
316. **Kamal Salibi.** The Lebanese Identity, Beirut, 1971.
317. **Kedourie E.** England and the Middle East. The Destruction of the Ottoman Empire. 1914–1921, London, 1956.
318. **Kimche J.** Seven Fallen Pillars. The Middle East in 1945–1952, London, 1953.
319. **Kirk G.** The Middle East in the War, London, 1954.
320. **Kirk G.** A History of the Middle East from the Rise of Islam to the Modern Times, London, 1961.
321. **Kirk G.** Contemporary Arab Politics, London, 1961.
322. **Khalil Totah.** Dynamite in the Middle East, New York, 1955.
323. **Khadduri Majid.** Independent Iraq. A Study in Iraqi Politics. From 1932 to 1958, London, 1960.
324. **Khadduri Majid.** Modern Libya, Baltimore, 1963.
325. Kolonialismus und Neokolonialismus in Nordafrika und Nahost, Berlin, 1964.
326. **Kubba A. A.** Libya: Its Oil Industry and Economic System, Baghdad, 1964.
327. **Lacouture Jean and Simonne.** Egypt in Transition, London, 1958.
328. **Laqueur W. Z.** Communism and Nationalism in the Middle East, London, 1956.
329. **Laqueur W. Z.** Middle East in Transition, London, 1968.
330. **Lenczowski G.** The Middle East in World Affairs, New York, 1957.

331. **Lenczowski G.** American Presidents and the Middle East, Durham and London, 1990.
332. **Lengyel E.** The Changing Middle East, New York, 1960.
333. **Little T.** Egypt, London, 1958.
334. **Longrigg S.** Iraq. 1900 to 1950, London, 1953.
335. **Longrigg S.** Oil in the Middle East. Its Discovery and Development, London, 1955.
336. **Longrigg S.** Syria and Lebanon under French Mandate, London, 1958.
337 **Longrigg S.** and Stoakes F. Iraq, London, 1958.
338. **Mahmud Riad.** The Struggle For Peace in the Middle East, London, 1981.
339. **Main E.** Iraq from Mandate to Independence, London, 1935.
340. **Malek A. A.** Egypt: Military Society, New York, 1968.
341. **Marlowe J.** Anglo-Egyptian Relations. 1800–1953, London, 1954.
342. **Marlowe J.** Arab Nationalism and British Imperialism, London, 1961.
343. The Middle East. Ten Years after Camp David. William Quandt. Editor, Washington, 1968.
344. **Mills A.** Private Enterprise in Lebanon, Beirut, 1959.
345. **Meo Leila.** Lebanon. Improbabale Nation, Bloomington, 1968.
346. **Meyer A.** Middle Eastern Capitalism, Cambridge, 1959.
347. **Mohammed Shafi Aghwani.** The United States and the Arab World. 1945–1952, Aligarh, 1955.
348. **Morris J.** The Hashimite Kings, London, 1959.
349. **Muskat F.** My President My Son, Malta, 1974.
350. **Mussa Dib.** The Arab Bloc in the United Nations, Amsterdam, 1954.
351. **Nabih Faris, Muhammed Husayn.** The Crescent in Crisis, Kansas, 1955.
352. **Naguib M.** Egypt's Destiny, New York, 1955.
353. People Without Country. The Kurds and Kurdistan. London, 1980.
354. **Philby J.** Arabian Days. An Authobiography, London, 1948.
355. **Polk William.** The United States and the Arab World, Cambridge, Massachusetts, 1965.
356. **Quandt William.** Decade of Decisions. American Policy Toward the Arab–Israeli Conflict. 1967–1976, California, 1977.
357. **Rajah Himadeh.** The Fiscal System of Lebanon, Beirut., 1961.
358. Resolutions of the Arab Summit Conference held in Khartoum from 20 August — 1 September 1967, London, 1967.
359. **Roosevelt K.** Arabs, Oil and History, New York, 1949.
360. **Rossi P.** L'Itak des revoltes, Paris, 1962.
361. **Saad Eddin Ibrahim.** Domestic Developments in Egypt (The Middle East. Ten Years after Camp David), Washington, 1988.
362. **Seton–Williams M.** Britain and the Arab States, London, 1948.
363. **Soane E.** To Mesopotamia and Kurdistan in Disguise, London, 1926.
364. **Sharabi H.** Governments and Politics of the Middle East in the 20th Century, New York, 1962.
365. **Sharabi H.** Natioalism and Revolution in Arab World, New York, 1966.
366. **Stark E.** The Arab Iseland. The Middle East. 1939–1943, New York, 1946.
367. **Upthegrove C.** Empire by Mandate, New York, 1954.

368. **Vatikiotis P. J.** The Egyptian Armi in Politics, Bloomington, 1961.
369. **Wheelock K.** Naser's New Egypt, London, 1960.
370. **Weinberger N. J.** Syrian Intervention in Lebanon, New York, 1986.
371. **Wilson A.** Mesopotamia. 1917–1920. A Clash of Loyalties, London, 1931.
372. **Yale W.** The Near East. A Modern History, Michigan 1958.
373. **Young H.** Egypt, London, 1927.
374. **Yusif Sayigh.** Enterpreneurs of Lebanon, Cambridge, 1962.
375. **Ziadeh N.** Syria and Lebanon, London, 1957.
376. **Zein N. Zein.** The Struggle for Arab Independence, Beirut, 1960.
377. **Zein N. Zein.** The Emergence of Arab Nationalism, New York, 1973.
378. **Zeki Khairl.** Report on Agrarian reform. «Iraqi Review», No 27, Baghdad, 1960.
379. **Abd al–Rahman al–Bazaz.** Muhadarat an al–Iraq min al–Ihtilali Hatta al–Istiklal, al–Kahira, 1952.
Աբդ ալ–Ռահման ալ–Բազազ, Դասախոսություններ Իրաքի մասին՝ օկուպացումից մինչև անկախություն, Կահիրե, 1954:
380. **Abd al–Rahman al–Rifal.** Saura 23 Yuliyu Sanat 1952, al–Kahira, 1956.
Աբդ ալ–Ռահման առ–Ռիֆայի, 1952 թ. հուլիսի 23–ի հեղափոխությունը, Կահիրե, 1956:
381. **Abd al–Razzak al–Hilall.** Mudjam al–Iraq, Baghdad, 1953.
Աբդ ալ–Ռազակ ալ–Հիլալի, Իրաքի հանրագիտարան, Բաղդադ, 1953:
382. **Abd al–Razzak al–Hasanl.** Tarikh al–Irak al–Siyasi al–Hadis, v. I, Saida, 1957.
Աբդ ալ–Ռազակ ալ–Հասանի, Իրաքի քաղաքական նոր պատմությունը, հ. I, Սայդա, 1957:
383. **Abd al–Razzak al–Hasanl.** Al–Asrar al–Khafiya fi Haraqat as Sanat 1941 al–Tahrir, Saida, 1971.
Աբդ ալ–Ռազակ ալ–Հասանի, 1941 թ. ազատագրական շարժման գաղտնի ծալքերը, Սայդա, 1971:
384. **Abd al–Fatah al–Yafi.** Al–Iraq Baina Inkilabain, Beirut, 1938.
Աբդ ալ–Ֆաթահ ալ–Յաֆի, Իրաքը երկու հեղաշրջումների միջև, Բեյրութ, 1938.
385. **Adib Farhat.** Lubnan wa Suriya, Beirut.
Ադիբ Ֆարհաթ, Լիբանանը և Սիրան, Բեյրութ:
386. **Aziz al–Hadj.** Al–Kaumiya al–Arabiya wa al–Dimukratiya, Baghdad.
Ազիզ ալ–Հաջ, Արաբ ազգայնականությունը և դեմոկրատիան, Բաղդադ:
387. **Asad Daghir.** Muzaqirat ala Hamshial–Kadiya al–Arabiya, al–Kahira.
Ասադ Դաղիր, Հուշեր արաբական հարցի մասին, Կահիրե:
388. **Albert Badr.** Muhadarat fi al–Iktisadi al–Lubnani, Al–Kahira, 1955.
Դասախոսություններ Լիբանանի տնտեսության մասին, Կահիրե, 1955:
389. **Amil Tuma.** Al–Arab wa Tatawur al–Tarikhiya fi al–Sharki al–Awsat, Haifa, 1962.
Ամիլ Թումա, Արաբները և պատմական զարգացումը Միջին Արևելքում, Հայֆա, 1962:
388. **Amin Said.** Al–Duwlat al–Arabiya al–Muttahida, v. III, al–Kahira.
Ամին Սաիդ, Արաբական միացյալ պետություն, հ. III, Կահիրե.
390. **Amin Said.** As–Saura Min 23 Yuliyu 1952 Ila 29 Uqtubr 1956, al–Kahira, 1959.
Ամին Սաիդ, Հեղափոխությունը 1952 թ. հուլիսի 23–ից մինչև 1956 թ. հոկտեմբերի 29–ը, Կահիրե, 1959:

391. **Buladyan Arshaq.** Tarikh al–Alakat al–Irmaniya–al–Arabiya, Abu Dabi, 2002.
Փոլադյան Արշակ, Հայ–արաբական հարաբերությունների պատմություն, Աբու Դաբի, 2002:
392. **Tufik Munir.** Ansar as–Salam fi–I–Iraq, al–Kahira, 1956.
Թուֆիկ Մունիր, Խաղաղության կողմնակիցները Իրաքում, Կահիրե, 1956:
393. 17 Ab 1943–1947. Arbaa Sanawat min al–Ahd al–Watani, Dimashq, 1947.
17 օգոստոսի 1943–1947 թթ.: Չորս տարի ազգային դարաշրջանից, Դամասկոս, 1947:
394. **Fadil al–Jamali.** Min Wakai as–Siyasat al–Iraqiyat, Beirut, 1956.
Ֆադիլ ալ–Ջամալի, Իրաքի քաղաքականության իրողություններից, Սայդա, 1956:
395. **Farik al–Muzhir.** Ak–Hakaik al–Nasiat fi al–Saura al–Iraqiya sana 1920 wa Nataidjiya, v. I, 1952.
Ֆարիկ ալ–Մուզհիր, Իրական ճշմարտությունը 1920 թ. իրաքյան ապստամբության և նրա արդյունքների մասին, հ. I, Բաղդադ, 1952:
396. **Qamal Junblat.** Hakika as–Saura al–Lubnaniya, Beirut, 1959.
Քամալ Ջունբլատ, Լիբանանյան հեղափոխության ճշմարտությունը, Բեյրութ, 1959:
397. **Mahmud Ahmad Muhammad.** Saura al–Iraq, al–Kahira 1963.
Մահմուդ Ահմադ Մուհամմադ, Իրաքի հեղափոխությունը, Կահիրե, 1963:
398. **Muhammad Hasanain Hayqal.** Abd al–Nasir wa Alam, Beirut, 1972.
Մուհամմադ Հասանայն Հայքալ, Աբդել Նասերը և աշխարհը, Բեյրութ, 1972:
399. **Munir Takki ad–Din.** Wiladat al–Istiklal, Beirut, 1953.
Մունիր Թակի ադ–Դին, Անկախության ծնունդը, Բեյրութ, 1953.
400. **Munir Takki ad–Din.** Al–Djala'a, Beirut, 1956.
Մունիր Թակի ադ–Դին, Էվակուացիա, Բեյրութ, 1956:
401. **Yusuf Salman Yusuf (Fahd).** Kadiyatuna al–Wataniya, Baghdad, 1952.
Յուսուֆ Սալման Յուսուֆ (Ֆահդ), Մեր ազգային հարցերը, Բաղդադ, 1952:
402. **Husayn Muhammad Al–Shabibi.** Al–Istiklal wa Siyadat al–Wataniya, Baghdad.
Հուսեյն Մուհամմադ աշ–Շաբիբի, Անկախությունը և ազգային ինքնիշխանությունը, Բաղդադ:
403. **Husayn Muruwa.** As–Saura al–Iraq, Beirut, 1958.
Հուսեյն Մուրուվա, Իրաքի հեղափոխությունը, Բեյրութ, 1958:
404. **Nikula Hufhanisyan.** An–Nidal al–Taharuri al–Watani fi Lubnan (1939–1958), Beirut, 1974.
Նիկոլայ Հովհաննիսյան, Ազգային–ազատագրական պայքարը Լիբանանում (1939–1958), Բեյրութ, 1974:
405. **Shaqir Khasbaq,** Muhammad al–Mahana, Faisal al–Atrakji, Djughrafiya al–Iraq, Baghdad, 1960.
Շաքիր Խասբաք, Մուհամմադ ալ–Մահանա, Ֆայսալ ալ–Ատրակջի, Իրաքի աշխարհագրությունը, Բաղդադ, 1960:
406. **Usman Qamal Haddad.** Haraqat Rashid Ali al–Qajlani, Saida, 1955.
Ուսման Քամալ Հադդադ, Ռաշիդ Ալի ալ–Քայլանիի շարժումը, Սայդա, 1955:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 5

Գլուխ առաջին
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ (1918–1920 թթ.) 8

Գլուխ երկրորդ
ԱԼԺԻՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 16
I. ԱԼԺԻՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1919–1939 թթ.) 18
1. Ընդհանուր բնութագիրը 18
2. Հակագաղութային գաղափարախոսության ձևավորումը և ազգային անկախության պահանջի առաջադրումը 23
3. «Բլյում–Վիոլետ» պլանը . . . 32
II. ԱԼԺԻՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1939–1945 թթ.) 36
1. Սոցիալ–տնտեսական վիճակը և քաղաքական իրադրությունը Ալժիրում Վիշիի կառավարման շրջանում (1940–1942 թթ.) . . 36
2. Ամերիկյան և անգլիական զորքերի ներխուժումը Ալժիր և Ազգային ազատագրության ֆրանսիական կոմիտեի իշխանության հաստատումը 39
3. Քաղաքական կյանքի աշխուժացումը: Սետիֆի 1945 թ. ապստամբությունը 41
III. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱԼԺԻՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ (1946–1962 թթ.) 45
1. Ալժիրի օրգանական ստատուտը 45
2. Անկախության պատերազմի սկիզբը և կողմերի դիրքորոշումները (1954–1956 թթ.) 51
3. 1956 թ. Սումամի համագումարը և նրա որոշումները 57
4. 1958 թ. մայիսի 13–ի պետական հեղաշրջումը Ֆրանսիայում, գեներալ Դը Գոլի վերադարձը իշխանության գլուխ և դրա ազդեցությունը ալժիրյան խնդրի լուծման վրա 59

5. Ֆրանս–ալժիրյան բանակցությունները և Ալժիրի անկախության հռչակումը . 62
IV. ԱԼԺԻՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ 65
1. Ալժիրի ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության հռչակումը և պետական կառավարման մարմինների ձևավորումը 65
2. Ալժիրի զարգացման «Տրիպոլյան ծրագիրը» 66
3. Տարածայնությունների սրումը ալժիրյան ղեկավարության շարքերում և Ահմադ Բեն Բելայի տապալումը . 69
4. Նոր իշխանությունների առաջին քայլերը իրենց դիրքերն ամրապնդելու ուղղությամբ 74
5. Բումեդիենի վարչակարգի ներքին և արտաքին քաղաքականությունը (1965–1978 թթ.) ... 77
6. Ալժիրը 1980–2005 թվականներին 82

Գլուխ երրորդ
ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 88
I. ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 90
1. Ծովահենային ափ — Պայմանագրային (խաղաղության) ափ — Պայմանագրային Օման . 90
2. Անգլիական պրոտեկտորատի հաստատումը 94
3. Կառավարող շեյխական տոհմերը 95
II. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ (1918–1971 թթ.) 97
1. Քաղաքական իրադրությունը և սոցիալ–տնտեսական իրավիճակը 1920–1930–ական թվականներին . . . 97
2. Նավթի հայտնագործումը Պայմանագրային Օմանում և դրա հետևանքները 101
3. Իրադրությունը 1950–1960–ական թվականներին: Հասարակական և քաղաքական կյանքի նշանակալի ակտիվացումը Պայմանագրային Օմանում 105
III. ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 111
1. Տարածաշրջանում անգլիական նոր քաղաքականության դրդապատճառները 111
2. Արաբական Միացյալ էմիրությունների կազմավորումը 114
IV. ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ–ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 117
1. Պրեզիդենտ 118
2. Դաշնային գերագույն խորհուրդը 119
3. Նախարարների խորհուրդը՝ կառավարությունը 120
4. Դաշնային ազգային խորհուրդ 121

5. Մեջլիս և շուրա 122
6. Դատական համակարգը 125
V. ԱՄԷ–Ի ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ . . . 126
1. Ցատկ XXI դար 126
2. Տնտեսության ընդհանուր պատկերը և զարգացման միտումները 129
3. Սոցիալական հարաբերությունների յուրահատկությունները: Քաղաքացիության և տեղացի–եկվոր փոխհարաբերությունների հարցը 133
VI. ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ . . . 136
1. Հարևան երկրների անբարյացակամ դիրքորոշումը ԱՄԷ–ի նկատմամբ նրա կազմավորման սկզբնական շրջանում 136
2. Ապավինում դիվանագիտությանը և միջազգային նորմերին 138
3. Իրանա–իրաքյան պատերազմը և ԱՄԷ–ի դիրքորոշումը 140
4. Ծոցի համագործակցության խորհրդի հիմնումը և ԱՄԷ–ն: Արաբական միասնության ամրապնդումը 142
5. ԱՄԷ – Հայաստանի Հանրապետություն 144

Գլուխ չորրորդ

ԲԱՀՐԵՅՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 146
I. ԲԱՀՐԵՅՆԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1918–1971 թթ.) 149
1. Ընդհանուր դիտարկում 149
2. Հակագաղութային ազատագրական շարժումները 1918–1930–ական թվականներին 151
3. «Բահրեյն պետրոլեում կոմպանիի» (ԲԱՊԿՕ) ստեղծումը 157
4. Բահրեյնը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939–1945 թթ.) 159
5. Բահրեյնը հետպատերազմյան տարիներին: Բրիտանական պրոտեկտորատի վերացման համար պայքարի ավարտական փուլը 162
II. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱՀՐԵՅՆՈՒՄ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ . . 170
1. Պետական շինարարությունը և փոփոխություններ վարչա–կառավարականհամակարգում: Բահրեյնի վերածումը թագավորության . . 170
2. Տնտեսական զարգացումը: Արդիականացման և դիվերսիֆիկացիայի քաղաքականությունը 176

Գլուխ հինգերորդ

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 181
I. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ (1918–1922 թթ) 184
1. Հակաբրիտանական պայքարի սրումը: Վաֆդ ալ–Մսրի 184

2. 1919 թ. ապստամբությունը 189
3. Իրադարձությունների հետագա զարգացումը և 1921 թ. ապստամբությունը 196
4. Պրոտեկտորատի վերացումը և Եգիպտոսի անկախության հռչակումը 199
II. 1923 թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ 1936 թ. ԱՆԳԼՈ–ԵԳԻՊՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ . . . 204
1. 1923 թ. սահմանադրության ընդունումը և հետպրոտեկտորյան Եգիպտոսի ինստիտուցիոնալիստական գործընթացի ավարտը 204
2. Հիզբ ալ–Վաֆդը կառավարող կուսակցություն: Հարաբերությունների սրումը նրա և պալատի ու բրիտանական իշխանությունների միջև 206
3. 1930 թ. պետական հեղաշրջումը 211
4. Անգլո–եգիպտական 1936 թ. պայմանագիրը 215
III. ԵԳԻՊՏՈՍԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1939–1945 թթ) 220
1. Իմպերիալիստական մեծ պետությունների գլխավոր քաղաքական նպատակները Արաբական Արևելքում Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ . 220
2. Եգիպտոսը Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին փուլում . . 225
3. Իտալա–գերմանական ներխուժումը Եգիպտոս: Ալ–Ալամայնի ճակատամարտը 230
4. Եգիպտոսը պատերազմի ավարտական փուլում . . 239
IV. ԵԳԻՊՏՈՍԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1945–1952 թթ.) 243
1. Իրադրությունը Եգիպտոսում «փոքրամասնական» կուսակցությունների կառավարման շրջանում (1945–1950 թթ.) 243
2. Ֆարուկ I–ի հռչակումը Եգիպտոսի և Սուդանի թագավոր 246
3. «Ազատ սպաները»՝ «Ադ–Դուբատ ալ–ահրար» 250
V. 1952 թ. ՀՈՒԼԻՍԻ 23–Ի ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 255
1. Իշխանության գրավումը, միապետության տապալումը և Եգիպտոսի հռչակումը հանրապետություն (1952 թ. հուլիսի 23 – 1956 թ. հուլիսի 23) 255
2. Գեներա՞լ, թե՞ փոխգնդապետ: Դրամայի հանգուցալուծումը . 260
VI. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԷՎԱԿՈՒԱՑԻԱՆ: ՍՈՒԵՋԻ ՃԳՆԱԺԱՄԸ: 1956 թ. ԵՌՅԱԿ ԱԳՐԵՍԻԱՆ . . . 266
1. Սուդանի վերաբերյալ անգլո–եգիպտական 1953 թ. փետրվարի 12–ի համաձայնագիրը . . . 266
2. 1954 թ. հոկտեմբերի 19–ի անգլո–եգիպտական համաձայնագիրը և անգլիական զորքերի դուրսբերումը Եգիպտոսից . . 268
3. Սուեզի ջրանցքի ընկերության ազգայնացումը և 1956 թ. անգլո–ֆրանս–իսրայելական ագրեսիան 270

VII. ԵԳԻՊՏՈՍԻ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ (1958–1961 թթ.) 274
1. Օտարերկրյա ձեռնարկությունների և ընկերությունների ազգայնացումն ու եգիպտականացումը, եգիպտական ազգային բուրժուազիայի դիրքերի ամրապնդումը 274
2. Արաբական Միացյալ Հանրապետության ստեղծումը և փլուզումը (1958–1961 թթ.) 276
VIII. ԵԳԻՊՏՈՍԻ ՀՌՉԱԿՈՒՄԸ «ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» . 278
IX. 1967 թ. ՀՈՒՆԻՍՅԱՆ ՎԵՑՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 283
X. ԵԳԻՊՏՈՍԸ 1970–1981 թթ. 289
1. Անվար Սադաթը եգիպտոսի երրորդ պրեզիդենտ 289
2. Սադաթիզմը և եգիպտոսի պատմական նոր ընթացքը . 290
3. Եգիպտոսի մեկուսացումը արաբական աշխարհից և Սադաթի սպանությունը . 303
XI. ԵԳԻՊՏՈՍԸ XX ԴԱՐԻ ՎԵՐՋՈՒՄ ԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ: ՋԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ 308
1. Հուսնի Մուբարակը եգիպտոսի նոր պրեզիդենտ ... 308
2. Հուսնի Մուբարակի ներքին քաղաքականությունը: Իմպրովիզացիայից՝ հանկարծաստեղծումից՝ հավասարակշռված քաղաքականություն 310
3. Եգիպտոսի արտաքին քաղաքականությունը: Վերադարձ արաբական ընտանիք 315
XII. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 319

Գլուխ վեցերորդ

ԵՄԵՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ **324**
I. ԵՄԵՆԻ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՄԵՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 327
1. Հյուսիսային Եմենի անկախության հռչակումը 1918 թ. և Համիդ ադ–Դինների դինաստիայի հաստատումը 327
2. Եմենի կառավարման համակարգը 330
3. Եմենը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին 331
4. 1948 թ. պետական հեղաշրջումը 333
5. Եմենը 1948–1962 թթ. 335
6. 1962 թ. սեպտեմբերի 26–ի հեղափոխությունը 338
7. Քաղաքացիական պատերազմը Եմենում , ... 340
8. Եմենի քաղաքացիական կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը (1970–1974 թթ.) 344
9. Եմենը 1974–1985 թթ. 346

II. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՄԵՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԵՄԵՆԻ ԺՈՂՈՎՐԴԱ–ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ 349
1. Հարավային Եմենի կարգավիճակը (1917–1945 թթ.) 349
2. Հարավային Եմենի սոցիալ–տնտեսական կառուցվածքը 351
3. Հարավային Եմենի Դաշնության ստեղծումը 354
4. Հակագաղութային պատերազմը և Հարավային Եմենի անկախության նվաճումը (1963–1967 թթ.) 356
5. ՀԵԺՀ–ն անկախության նվաճումից հետո առաջին տարիներին: Ներքաղաքական պայքարի սրումը 360
6. Արմատական վերափոխումների նոր փուլը: Երկրի վերանվանումը Եմենի ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության (1970–1975 թթ.) 362
7. Ներքաղաքական և ներկուսակցական վիճակը 1975–1978 թթ. 363
8. Եմենի սոցիալիստական կուսակցության հիմնումը 365
9. Եմենի ժողովրդական Դեմոկրատական Հանրապետությունը 1980–ական թվականներին 366
III. ԵՄԵՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՄԵՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԵՄԵՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 369
1. Եմենի Հանրապետության ստեղծումը 369
2. Եմենի Հանրապետության պետական կառուցվածքը 373
3. Իրադրությունը տնտեսական և սոցիալական ոլորտներում 376
4. ԵՀ–ի միջազգային դրությունը 379

Գլուխ չորրորդ

ԹՈՒՆԻՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 382
I. ՊԱՅՔԱՐ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԵՎ ԹՈՒՆԻՍԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ (1918–1956 թթ.) 385
1. Քաղաքական նոր տեղաշարժեր և իրողություններ Թունիսում (1918–1938 թթ.) 385
2. Թունիսը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939–1945 թթ.) 389
3. Ներքին ինքնավարության տրամադրումը Թունիսին (1945–1955 թթ.)
4. Թունիսի անկախության հռչակումը, միապետության վերացումը և Թունիսի Հանրապետության ստեղծումը (1956–1957 թթ.) 391
II. ԹՈՒՆԻՍԸ ՀԱԲԻԲ ԲՈՒՐԳԻԲԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1957–1987 թթ.) 397
1. Հաբիբ Բուրգիբան անկախ Թունիսի առաջին պրեզիդենտ և ամբողջ իշխանության կենտրոնացումը նրա ձեռքում 400
2. «Ճակատամարտ հանուն Բիզերտայի» և ֆրանսիական զորքերի հեռացումը Թունիսից 400

3. Փոփոխություններ և վերակառուցումներ Թունիսի սոցիալական և տնտեսական հարաբերությունների ոլորտում 403
III. ԹՈՒՆԻՍԸ XX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ 406
1. Իշխանափոխությունը Թունիսում 1987 թ. 415
2. Նոր իշխանությունների ներքին քաղաքականության հիմնական միտումները 417
3. Հայեցակարգային փոփոխություններ սոցիալ–տնտեսական ոլորտում 423
4. Արտաքին հարաբերությունները 425

Գլուխ ութերորդ

ԻՐԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 428
I. ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԿՈՒՊԱՑԻՈՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԻՐԱՔՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՍԿԻԶԲԸ (1918–1920 թթ.) . 430
1. Օսմանյան տիրապետության վերացումը և անգլիական քաղաքացիական վարչակարգի հաստատումը Իրաքում . 430
2. Ազգային–ազատագրական պայքարը Իրաքում 1918–1920 թթ. . . . 434
II. ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ 440
1. 1920 թ. համաիրաքյան համազգային ապստամբությունը 441
2. Իրաքի թագավորության ստեղծումը: Ֆեյսալ իբն Հուսեյն ալ–Հաշիմին Իրաքի առաջին թագավոր 443
3. Հայ գաղթականների հոսքը Իրաք և իրաքահայ համայնքի ձևավորումը 448
4. Սահմանադրության ընդունումը և Իրաքի պետական սահմանների վերջնական ճշգրտումը 451
5. Պայքարի հետագա սրումը մանդատի վերացման համար 452
III. 1930 թ. ԱՆԳԼՈ–ԻՐԱՔՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՔԻ ՉԵՎԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ 454
IV. ԻՐԱՔԸ ՉԵՎԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾԵԼՈՒ ՊԱՅՔԱՐԻ ՓՈՒԼՈՒՄ (1932–1958 թթ.) 457
1. Իրադրությունը Իրաքում «անկախության» հռչակման առաջին տարիներին 457
2. 1935–1936 թթ. ապստամբությունը 460
3. 1936 թ. պետական հեղաշրջումը և ազգային ռեֆորմների կառավարությունը 461
4. Իրաքը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: 1941 թ. անգլո–իրաքյան պատերազմը: 1943–1945 թթ. քրդական ապստամբությունը 465
5. Դրությունն Իրաքում հետպատերազմյան առաջին տարիներին 470
6. Պորտսմուտի պայմանագիրը և 1948 թ. ապստամբությունը 472

7. Գործադուլայինպայքարի ուժեղացումը և օտարերկրյա նավթային ընկերությունների ազգայնացման համար ծավալված շարժումը 474
8. 1952 թ. ապստամբությունը 476
9. Բաղդադի պակտի ստեղծումը: Անգլո–իրաքյան 1930 թ. պայմանագրի վերացումը 478
10. 1956 թ. նոյեմբերյան զինված ապստամբությունը 481
V. ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ 483
1. «Ազատ սպաներ» գաղտնի զինվորական կազմակերպության և Ազգային միասնության ճակատի ստեղծումը 483
2. 1958 թ. հուլիսի 14–ի հեղափոխությունը . 485
3. Կասեմի կառավարության առաջադիմական միջոցառումները ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում հեղափոխության առաջին փուլում (1958–1959 թթ.) 488
4. Շեշտակի շրջադարձ դեպի աջ Կասեմի կառավարության ներքին քաղաքականության մեջ 490
VI. ԿԱՍԵՄԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՏԱՊԱԼՈՒՄԸ, ԱՋ ՈՒԺԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԵՎ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՈՒՄԸ ԻՐԱՔՈՒՄ 1960–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 493
1. 1963 թ. փետրվարի 8–ի պետական հեղաշրջումը և Կասեմի տապալումը: Աբդել Սալամ Արիֆը Իրաքի պրեզիդենտ 493
2. Իրադրության հետագա վատթարացումը և դժգոհության կուտակումը երկրում 495
3. Հերթական հեղաշրջումը և իշխանափոխությունն Իրաքում 497
4. Ներքաղաքական իրադրությունը Իրաքում 1966–1968 թվականներին 501
5. 1968 թ. հուլիսի 17–ի հեղաշրջումը և իշխանության գրավումը Բաաս կուսակցության կողմից 504
6. 1970 թ. մարտի 11–ի համաձայնագիրը քրդական հարցի խաղաղ կարգավորման վերաբերյալ 508
7. Ազգային խարտիան և Իրաքի Ազգային առաջադիմական հայրենասիրական ճակատի ստեղծումը 509
8. Հակասությունների սրումը Իրաքի տարբեր քաղաքական ուժերի միջև 512
VII. ԻՐԱՔԸ ՍԱԴԱՄ ՀՈՒՍԵՅՆԻ ՊՐԵԶԻԴԵՆՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1979–2003 թթ.) 514
1. Սիմադ Հասան ալ–Բաքրի հեռացումը իշխանությունից: Սադամ Հուսեյնը Իրաքի Պրեզիդենտ 514
2. Սադամ Հուսեյնի՝ բռնությունների վրա խարսխված ներքին քաղաքականությունը . 517
3. Պատերազմը Իրանի հետ . . 522
4. Իրաքի ներխուժումը Քուվեյթ, պատճառները և արաբական երկրների դիրքորոշումը 529
5. «Փոթորիկ անապատում» 537

6. Իրաքը XX դարավերջում 541
7. Ամերիկյան ներխուժումը և Սադամ Հուսեյնի տապալումը: «Գեներալները դավաճանեցին հայրիկին» 545
VIII. ԻՐԱՔԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 551

Գլուխ ինններորդ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 554
I. ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՕԿՈՒՊԱՑՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ (1918–1920 թթ.) 556
1. Ֆրանսիական տիրապետության հաստատումը Լիբանանում 556
2. Լիբանանցիների դիրքորոշումը Լիբանանի քաղաքական ապագայի հարցում 558
II. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 560
1. Մեծ Լիբանան պետության կազմավորումը 560
2. Սոցիալական հենարան ստեղծելու ֆրանսիական մանդատային իշխանությունների քաղաքականությունը 1920–ական թվականներին 561
3. Դժգոհության կուտակումը և հակաֆրանսիական ելույթները 563
4. Լիբանանի հայ համայնքի ձևավորումը 565
III. ՄԵԾ ԼԻԲԱՆԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 566
1. 1926 թ. սահմանադրության ընդունումը և Լիբանանի Հանրապետության հռչակումը 566
2. Ներքաղաքական իրադրության սրումը Լիբանանում 1930–ական թվականներին: Ֆրանսիական մանդատային իշխանությունների անցումը կոշտ քաղաքականության 569
3. Քաղաքական նոր կուսակցությունների ձևավորումը 571
4. Ֆրանս–լիբանանյան 1936 թ. պայմանագիրը ... 572
IV. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄԸ (1939–1945 թթ.) 575
1. Լիբանանը Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում (1939–1941 թթ.) 575
2. Անգլիական և «Ազատ Ֆրանսիայի» զորքերի մուտքը Լիբանան և գեներալ Կատրուի դեկլարացիան Լիբանանի անկախության վերաբերյալ 579
3. Սահմանադրության վերականգնումը և 1943 թ. պառլամենտական ընտրությունների անցկացումը: Բիշարա ալ–Խուրին Լիբանանի պրեզիդենտ . 584
4. Ֆրանսիական մանդատի վերացումը 1943 թ.: Լիբանանը անկախ և ինքնիշխան պետություն . 587
5. 1943 թ. նոյեմբերյան զինված ապստամբությունը ... 592
6. Ֆրանսիական իշխանությունների կողմից կառավարման ֆունկցիաների փոխանցումը Լիբանանին 600

V. ԼԻԲԱՆԱՆԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ: ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (1946–1958 թթ.) 602
1. Անկախ Լիբանանի սոցիալ–տնտեսական զարգացման մոդելը և առանձնահատկությունները . . 602
2. Ներքաղաքական դրությունը: «Մեծ Սիրիայի» ծրագիրը և 1949 թ. պետական հեղաշրջման փորձի ձախողումը 604
3. Ներքաղաքական դրության հետագա սրումը և պրեզիդենտ Բիշարա ալ–Խուրիի հրաժարականը 609
4. Իրավիճակը Լիբանանում 1952–1958 թթ. 610
VI. ԱՌԱՋԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ (1958 թ.) 617
1. Քաղաքացիական պատերազմի պատճառները և հակադիր քաղաքական խմբավորումների կազմավորումը 617
2. Համազգային ապստամբությունը 619
3. Ամերիկյան ինտերվենցիան 623
VII. ԼԻԲԱՆԱՆԸ ԵՐԿՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1958–1975 թթ.) 627
1. Ֆուադ Շիհաբի ընտրությունը Լիբանանի պրեզիդենտ և «Հարկադրական կոմպրոմիսի կառավարության» ստեղծումը . 627
2. Լիբանանի ներքին և արտաքին քաղաքականությունը (1958–1970 թթ.) 631
3. 1969 թ. Կահիրեի համաձայնագիրը և լիբանանա–պաղեստինյան հարաբերությունների կարգավորումը 634
VIII. ԵՐԿՐՈՐԴ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ (1975–1990 թթ.) 636
1. Սոցիալ–քաղաքական նոր ճգնաժամի հասունացումը 636
2. Քաղաքացիական երկրորդ պատերազմի պատճառները և հակադիր բլոկների կազմավորումը 638
3. Քաղաքացիական պատերազմի սկիզբը 642
4. Աջակողմյան ուժերի 1978–1979 թթ. զինված հարձակումները հայ համայնքի վրա 646
5. 1982 թ. իսրայելական ներխուժումը Լիբանան . . . 650
6. 1983 թ. մայիսի 17–ի լիբանանա–իսրայելական համաձայնագիրը 653
7. Թաիֆի 1989 թ. հաշտեցման համաձայնությունը և քաղաքացիական պատերազմի ավարտը . . 657
IX. ԼԻԲԱՆԱՆԸ ՀԵՏԹԱՐՖՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1990–2005 թթ.) 659
1. Կարևոր փոփոխություններ Լիբանանի կառավարման համակարգում և անհրաժեշտ քայլեր քաղաքացիական պատերազմի հետևանքները վերացնելու ուղղությամբ 659
2. Ռաֆիկ Հարիրիի սպանությունը, «Մայրիի հեղափոխությունը» և սիրիական զորքերի դուրսբերումը Լիբանանից 666
3. Լիբանանի միջազգային դրության նորմալացումը 668

X. ԼԻԲԱՆԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1992–2005 թթ.) 670

Գլուխ տասներորդ

ԼԻԲԻԱԿԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՋԱՄԱՀԻՐԻՅԱ ... 673
I. ԼԻԲԻԱՆ ԻՏԱԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 675
1. Իտալական տիրապետության հաստատումը: Կիրենաիկայի, Տրիպոլիտանիայի և Ֆեցցանի միավորումը և Լեբու–Լիբիայի կազմավորումը 675
2. Լիբիան իտալական տիրապետության ներքո (1918–1939 թթ.) 681
3. Լիբիան Երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում (1939–1945 թթ.) 687
4. Լիբիական անկախ պետության՝ Լիբիայի Միացյալ Թագավորության կազմավորումը . 690
II. ԼԻԲԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (1952–1969 թթ.) 698
1. Պետական համակարգը և նրա էվոլյուցիան 698
2. Հարաբերությունների հաստատումը և զարգացումը արաբական և արևմտյան երկրների հետ 701
3. Սոցիալ–տնտեսական իրադրությունը: Նավթի գործոնը 705
III. «ԱՋԱՏ ՍՊԱՆԵՐԻ» 1969 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1–Ի ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ 710
IV. ԼԻԲԻԱԿԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ (1969–1977 թթ.) 714
1. Իշխանության հարցը: Հեղափոխական հրամանատարության խորհուրդը և «Հեղափոխական կառավարության» ձևավորումը 714
2. Նոր իշխանությունների առաջնահերթ խնդիրները ներքին քաղաքականության ասպարեզում 719
3. Հարաբերություններն արաբական երկրների հետ և միավորման լիբիական փորձերի ձախողումը 724
4. «Լիբիական Արաբական Հանրապետությունը Լիբիայի Թագավորությունը չէ, Անգլիան էլ Բրիտանական կայսրությունը չէ, որի վրա արևը մայր չի մտնում» 728
V. ՋԱՄԱՀԻՐԻՅԱ 730
1. Կադաֆիի «Երրորդ ունիվերսալ տեսությունը» . . 730
2. Լիբիական Արաբական Հանրապետության վերածումը Լիբիական Արաբական Ժողովրդական Սոցիալիստական Ջամահիրիյայի և կառավարման նոր համակարգի հաստատումը 738
3. «Տունը պետք է պատկանի նրան, ով այնտեղ ապրում է»: Սոցիալ–տնտեսական տեղաշարժերը Ջամահիրիյայում (1978–2005 թթ.) 742
4. ԼԱԺՍՋ–ի արտաքին քաղաքականությունը. ձեռքբերումներ, սխալներ, պարտություններ, ուղղումներ (1970–ական թվականներ — 2005 թ.) 747

Գլուխ տասնմեկերորդ

ԿԱՏԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ **753**
Ի. ԿԱՏԱՐԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏ (1916–1971 թթ.) 755
1. Աթ–Թանիների տոհմը և նրա վերածումը Կատարում կառավարող դինաստիայի 755
2. Անգլիայի և Կատարի միջև 1916 թ. պայմանագիրը և բրիտանական պրոտեկտորատի հաստատումը Կատարի վրա 756
3. Կատարի քաղաքական և սոցիալ–տնտեսական վիճակը բրիտանական պրոտեկտորատի շրջանում 758
II. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐԻ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ 766
1. Կատարը և Արաբական Ֆեդերացիայի ստեղծման հարցը 766
2. Կատարի 1970 թ. ժամանակավոր սահմանադրության ընդունումը, բրիտանական պրոտեկտորատի վերացումը և Կատարի անկախության հռչակումը . 771
III. ԿԱՏԱՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ 774
1. Կառավարման համակարգի հետագա կարգավորումը: Էմիր Խալիֆա իբն Համադի «Ուղղիչ շարժումը» 774
2. 1995 թ. պալատական հեղաշրջումը: Մշտական սահմանադրության ընդունումը 2003 թվականին և իշխանության հիմնական ճյուղերի սահմանազատումը 777
3. Սոցիալ–տնտեսական իրադրությունը Կատարում XX դարի վերջերին և XXI դարի սկզբներին: Արդիականացման միտումները 780
4. Կապերն արտաքին աշխարհի հետ 784

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 788

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 802

CONTENTS

FOREWORD 5

CHAPTER I

JURIDICAL–POLITICAL STATUS OF ARAB COUNTRIES AFTER THE SECOND WORLD WAR (1918–1920) 8

CHAPTER II

PEOPLE'S DEMOCRATIC REPUBLIC OF ALGERIA 16

I. ALGERIA BETWEEN TWO WORLD WARS (1919–1939) 18

1. General Review 18
2. Formation of Anticolonial Ideaology and the Demand for National Independence 23
3. «Blum–Viollette's» Plan 32

II. ALGERIA IN THE YEARS OF THE SECOND WORLD WAR (1919–1945) 36

1. Social–Economic Condition and Political Situation in Algeria During the Vichy Government (1940–1942) 36
2. Invasion of American and British Troops in Algeria and Establishment of the Power of French National–Liberation Committee 39
3. Activisation of Political Life. The Uprising in Setif in 1945 41

III. THE WAR FOR INDEPENDENCE AND LIBERATION OF ALGERIA FROM THE FRENCH DOMINATION (1946–1962) 45

1. The Organic Statute of Algeria 45
2. The Beginning of the War for Independence and the Attitude of the Sides (1954–1956) 51
3. The Congress of 1956 in Sumami and Its Decisions 57
4. Coup d'Etat in France on May 13, 1958. Return of De Gaulle to Power and Its Impact on Decision of the Algerian Problem 59
5. French–Algerian Negotiations and Declaration of Independence of Algeria 62

IV. ALGERIA IN THE EPOCH OF INDEPENDENCE . 65

1. Declaration of the People's Democratic Republic of Algeria and Formation of the State and Governmental Bodies 65

2. The «Tripolitanian Program» on Algerian Development 66
3. The Strengthening of Discrepancy within the Leadership of Algeria and Overthrow of President Ahmad Ben Bella .. . 69
4. The First Steps of New Powers for Strengthening Their Positions 74
5. Internal and Foreign Policy of Boumediene's Regime (1965–1978) 77
6. Algeria in 1980–2005 82

CHAPTER III

UNITED ARAB EMIRATES **88**
I. A BRIEF HISTORICAL REVIEW 90
1. Pirate Coast — Trucial Coast — Trucial Oman 90
2. Establishment of British Protectorate 94
3. The Ruling Sheikh Families 95
II. ON THE WAY TO INDEPENDENCE (1918–1971) 97
1. Political Situation and Socio–Economic Condition in 1920–1930s 97
2. Discovery of Oil in Trucial Oman and Its Consequences 101
3. Situation in 1950–1960s. Significant Activisation of Public and Political Life in Trucial Oman 105
III. LIQUIDATION OF BRITISH PROTECTORATE AND FORMATION OF UNITED ARAB EMIRATES . 111
1. The Reasons of New British Regional Policy 111
2. Formation of United Arab Emirates 114
IV. THE STATE–RULINGI SYSTEM IN THE UNITED ARAB EMIRATES AND ITS PECULARITIES 117
1. President 118
2. Federal Supreme Council 119
3. Council of Ministers–the Government . 120
4. Federal National Council 121
5. Majlis and Shura 122
6. Juridicial System 125
V. SOCIAL–ECONOMIC DEVELOPMENTS OF THE UNITED ARAB EMIRATES AFTER INDEPENDENCE . 126
1. Jump to the XXI Century . . 126
2. The General Picture of Economy and the Tendencies of Development 129
3. Pecularities of Social Relations. The Problem of Citizenship and Immigrant–Native Relations 133
VI. THE INTERNATIONAL CONDITION OF THE UNITED ARAB EMIRATES AND MAIN DIRECTIONS OF FOREIGN POLICY 136
1. Non–Friendly Attitude of Neighbor Countries Towards the United Arab Emirates at the First Phase of Its Composition 136

2. Relying Upon Diplomacy and International Standards 138
3. Iran–Iraqi War and the Attitude of UAE 140
4. Establishment of the Gulf Cooperation Council and the UAE. The Strengthening of Arab Unity 142
5. United Arab Emirates — Republic of Armenia 144

CHAPTER IV

KINGDOM OF BAHRAIN **146**
I. BAHRAIN IN THE YEARS OF BRITISH PROTECTORATE (1918–1971) 149
1. A General Look–Out 149
2. Anticolonial Liberation Movements in 1918–1930s 151
3. Establishment of Bahrain Petroleum Company (BAPCO) 157
4. Bahrain in the Years of Second World War (1939–1945) 159
5. Bahrain in the Post War Years. The Final Phase of the Struggle for Liquidation of British Protectorate . 162
II. POLITICAL AND SOCIAL–ECONOMIC DEVELOPMENTS IN BAHRAIN IN THE EPOCH OF INDEPENDENCE 170
1. State Building and Changes in the Ruling System. Transformation of State of Bahrain into Kingdom of Bahrain 170
2. Economic Development. Policy of Modernization and Diversification 176

CHAPTER V

ARAB REPUBLIC OF EGYPT **181**
I. LIQUIDATION OF BRITISH PROTECTORATE AND PROCLAMATION OF KINGDOM OF EGYPT (1918–1922) . 184
1. Aggravation of the Anti–British Struggle. Wafd al–Misri 184
2. Uprising of 1919 . 189
3. The Further Development of Events and Uprising of 1921 196
4. Liquidation of Protecorate and Proclamation of the Independence of Egypt 199
II. FROM ADOPTION OF CONSTITUTION IN 1923 TO ANGLO–EGYPTIAN TREATY OF 1936 204
1. The Promulgation of Constitution in 1923 and the Ending of Institutionalizing Process in Egypt 204
2. Hizb al–Wafd — a Ruling Party. Aggravation of Its Relations with the Palace and British Powers 206
3. Coup d'Etat in 1936 211
4. Anglo–Egyptian Treaty of 1936 215
III. EGYPT IN THE YEARS OF SECOND WORLD WAR (1939–1945) ... 220
1. The Main Political Aims of the Great Imperialistic Powers in the Arab East During the Second World War 220

2. Egypt in the First Phase of the Second World War 225
3. The Italian–German Invasion Egypt. The Battle of Al–Alamain 230
4. Egypt at the Final Phase of the War . 239
IV. EGYPT IN THE FIRST POST–WAR YEARS (1945–1952) .. 243
1. Situation in Egypt During the Period of Government of «Minority» Parties 243
2. Proclamation of Farouk I King of Egypt and Sudan 246
3. «Free Officers» — «Al–Dubat al–Ahrar» 250
V. JULY 23, 1952, REVOLUTION 255
1. Seizing of Power, Overthrow of Monarchy and Proclamation of Republic (July 23, 1952 — July 23, 1956) 255
2. General or Colonel? Solution of Drama 260
VI. EVACUATION OF THE ENGLISH TROOPS, THE SUEZ CRISIS, TRIPLE AGGRESSION IN 1956 266
1. Anglo–Egyptian Agreement on Sudan, February 12, 1953 ... 266
2. Anglo–Egyptian Agreement, October 19, 1954, and the Withdraw of English Troops From Egypt 268
3. Nationalization of Suez Canal Company and the Anglo–French–Israeli Aggression in 1956 270
VII. UNIFICATION OF EGYPT AND SYRIA AND CREATION OF THE UNITED ARAB REPUBLIC 274
1. Nationalaization and Egyptization of Foreign Enterprises and Strengthening of Position of Egyptian National Bourgeoisie 274
2. Creation and Disintegration of United Arab Republic 276
VIII. DECLARATION OF EGYPT AS «DEMOCRATIC SOCIALIST STATE» 278
IX. THE JUNE, 1967, SIX–DAY WAR AND ITS CONSEQUENCES 283
X. EGYPT IN 1970–1981 289
1. Anwar Sadat — the Third President of Egypt 289
2. Sadatism and the Egypt's New Historical Processes 290
3. Isolation of Egypt from the Arab Countries and Assassination of Sadat 303
XI. EGYPT AT THE END OF THE XX CENTURY AND BEGINNING OF THE XXI CENTURY. PERIOD OF DEVELOPMENT AND STABILIZATION 308
1. Husni Moubarak a New President of Egypt 308
2. Internal Policy of Husni Moubarak. From Imptovization into Balanced Policy ... 310
3. The Egypt's Foreign Policy. Return to the Arab Family 315
XII. RELATIONS BETWEEN THE ARAB REPUBLIC OF EGYPT AND REPUBLIC OF ARMENIA 319

CHAPTER VI

REPUBLIC OF YEMEN **324**
I. FORMATION OF INDEPENDENT STATE OF YEMEN AT THE TERRITORY OF THE NORTHERN YEMEN . . 327
1. Proclamation of Independence of North Yemen in 1948 under the Dinasty of Hamid Al–Din ... 327
2. The Ruling System of Yemen 330
3. Yemen in the Years of Second World War 331
4. Coup d'Etat of 1948 333
5. Yemen in 1948–1962 . 335
6. September 26, 1962, Revolution 338
7. Civil War in Yemen 340
8. Internal and Foreign Policy of the Yemeni Civil Government (1970–1974) 344
9. Yemen in 1974–1985 346
II. POLITICAL STATUS OF THE SOUTH YEMEN AND CREATION OF THE PEOPLE'S DEMOCRATIC REPUBLIC OF YEMEN 349
1. Status of the South Yemen (1917–1945) 349
2. Social–Economic Structure of the South Yemen 351
3. Creation of the South Yemeni Federation 354
4. Anticolonial War and Achievement of Independence by South Yemen (1963–1967) 356
5. The People's Democratic Republic of South Yemen in the First Years after the Achievement of Independence. Aggravation if Internal Struggle 360
6. A New Stage of Radical Changes. Renaming of the Country into People's Democratic Republic of Yemen (P. D. R. Y.) 362
7. Internal Political and Inter–Party Situation 363
8. Establishment of the Socialist Party of Yemen . 365
9. People's Democratic Republic of Yemen in 1980s . . 366
III. UNION OF YEMEN ARABIC REPUBLIC AND PEOPLE'S DEMOCRATIC REPUBLIC OF YEMEN AND FORMATION OF REPUBLIC OF YEMEN 369
1. Formation of Republic of Yemen 369
2. State Structure of Republic of Yemen .. 373
3. Situation in the Economic and Social Fields 376
4. International Conditions of Yemen 379

CHAPTER VII

REPUBLIC OF TUNISIA **382**
I. STRUGGLE FOR LIQUIDATION OF FRENCH PROTECTORATE AND INDEPENDENCE OF TUNISIA (1918–1956) 385
1. New Political Advances and Realities in Tunisia (1918–1938) 385

2. Tunisia During the Second World War (1939–1945) 398
3. Granting of Internal Autonomy to Tunisia (1945–1955) 391
4. Proclamation of Independence of Tunisia, Liquidation of Monarchy and Creaton of Republic of Tunisia (1956–1957) 397
II. TUNISIA UNDER THE RULING OF HABIB BOURGUIBA (1957–1987) 400
1. Habib Bourguiba as the First President of Tunisia and Concentration of Whole Power in His Hand 400
2. «Battle for Bizerta» and Evacuation of the French Troops from Tunisia 403
3. Changes and Reorganizations in the Field of Social and Economic Relations 406
III. TUNISIA AT THE END OF THE XX CENTURY AND BEGINNING OF THE XXI CENTURY 415
1. Changing of Power in Tunisia in 1987 415
2. Main Tendencies in the Internal Policy of the New Powers 417
3. Conceptual Changes in Socio–economic Field 423
4. Foreign Relations 425

CHAPTER VIII

REPUBLIC OF IRAQ **428**
I. ESTABLISHMENT OF BRITISH OCCUPATION REGIME IN IRAQ AND THE BEGINNING OF THE ANTIBRITISH STRUGGLE (1918–1920) 430
1. Liquidation of Ottoman Domination and Establishment of the British Civil Administration in Iraq 430
2. National–Liberation Struggle in Iraq in 1918–1920 434
II. ESTABLISHMENT OF BRITISH MANDATE AND CREATION OF THE IRAQI KINGDOM 440
1. All–Iraqian National Uprising in 1920 441
2. Creation of Iraqi Kingdom. Faysal Ibn Hussayn al–Hashimi — the First King of Iraq 443
3. The Flood of Armenian Refugees in Iraq and Formation of the Armenian Community of Iraq 448
4. Adoptian of a Constitution and the Final Defination of State Borders of Iraq 451
5. Aggravation of Further Struggle for Liquidation of Mandate 452
III. ANGLO–IRAQIAN TREATY OF 1930. LIQUIDATION OF BRITISH MANDATE AND PROCLAMATION OF NOMINAL INDEPENDENCE OF IRAQ 454
IV. IRAQ IN THE STAGE OF STRUGGLE FOR TURNING OF THE NOMINAL INDEPENDENCE INTO REAL INDEPENDENCE (1932–1958) 457
1. Situation in Iraq in the First Years After Proclamation of Independence 457
2. Uprising of 1935–1936 460
3. Coup d'Etat in 1936 and the Government of National Reforms 461

4. Iraq During the Second World War. Anglo–Iraqi War of 1941. Kurdish Uprising, 1943–1945 465
5. Situation in Iraq in the First Years of Post–War Period 470
6. The Portsmouth Treaty and the 1948 Uprising 472
7. Strengthening of Strike Struggle and the Movement for Nationalization of Foreign Oil Companies 474
8. The 1952 Uprising 476
9. Creation of the Baghdad Pact. Abolishment of Anglo–Iraqi 1930 Treaty 478
10. The November, 1956, Armed Uprising . . 481
V. OVERTHROW OF MONARCHY AND PROCLAMATION OF IRAQI REPUBLIC . . 483
1. The «Free Officers» Secret Military Organization and Establishment of Front of National Union 483
2. July 14, 1958, Revolution 485
3. The Progressive Measures of the Qassim Government in the Field of Internal and Foreign Policy in the First Stage of Revolution (1958–1959) 488
4. Radical Changes to the «Right» in the Internal Policy of the Qassim Government 490
VI. OVERTHROW OF THE QASSIM REGIME. VICTORY OF THE «RIGHT» FORCES AND AGGRAVATION OF INTERNAL STRUGGLE IN IRAQ IN 1960s 493
1. February 8, 1963, Coup d'Etat and Overthrow of Qassim. Abdel Salam Arif–President of Iraq 493
2. Further Worsening of Situation and Accumulation of Dissatisfation in the Country 495
3. The Next Coup d'Etat and Changing of Power in Iraq 497
4. The Internal Situation in Iraq in 1966–1968 501
5. July 18, 1968, Coup d'Etat and the Seizing of Power by the Baath Party 504
6. March 11, 1970, Agreement on Peaceful Decision of the Kurdish Question 508
7. The National Charter and Creation of the National Progressive Patriotic Front . . 509
8. Aggravation of Contradictions Between the Different Political Forces of Iraq . 512
VII. IRAQ UNDER THE PRESIDENCY OF SADDAM HUSSAYN (1979–2003) 514
1. Move Away of Ahmad Hasan al–Baqr from Power. Saddam Hussayn–President of Iraq 514
2. The Internal Policy of Saddam Hussayn, Based on Repressions 517
3. War with Iran 522
4. Invasion of Iraq in Quwait. Reasons and the Position of the Arab Countries 529
5. «Storm in Desert» 537

6. Iraq at the End of the XX Century 541
7. American Invasion in Iraq and Overthrow of Saddam Hussayn. «The Generals Betrayed My Father» . 545
VIII. RELATIONS BETWEEN IRAQ AND REPUBLIC OF ARMENIA 551

CHAPTER IX

REPUBLIC OF LEBANON **554**
I. LIBERATION OF LEBANON FROM THE OTTOMAN DOMINATION AND OCCUPATION BY FRANCE (1918–1920) . 556
1. Establishment of the French Domination Over Lebanon 556
2. Attitude of the Lebanese Towards the Political Future of Lebanon 558
II. ESTABLISHMENT OF FRENCH MANDATE 560
1. Formation of the State «Greater Lebanon» 560
2. The Policy of the French Mandatory Powers to Create for Themselves Social Basis in 1920s . 561
3. Accumulation of Dissatisfaction and Anti–French Demonstrations 563
4. Formation of the Armenian Community of Lebanon 565
III. REORGANIZATION OF THE «GREATER LEBANON STATE» INTO LEBANESE REPUBLIC 566
1. Promulgation of Constitution in 1926 and Proclamation of the Lebanese Republic . 566
2. Aggravation of the Internal Political Situation in Lebanon in 1920s and Adoption of Tough Policy by the French Manadatory Powers 569
3. Formation of New Parties 571
4. French–Lebanese Treaty of 1936 572
IV. LIQUIDATION OF FRENCH MANDATE AND ACHIVEMENT OF INDEPENDENCE OF LEBANON (1939–1945) 575
1. Lebanon at the Beginning of the Second World War (1939–1941) ... 575
2. The British and «Free French» Troops Entry Lebanon and General Catroux's Declaration on Independence of Lebanon .. 579
3. Restoration of Constitution and Parliamentary Elections in 1943. Bishara al Khouri–President of Lebanon . 584
4. Liquidation of the French Mandate in 1943. Lebanon an Independent and Sovereign State .. 587
5. Armed Uprising of 1943 592
6. Transfer of the Governing Functions by the French Powers to Lebanon 600
V. LEBANON AT THE INITIAL STAGE OF INDEPENDENCE. SOCIAL AND POLITICAL PROBLEMS (1945–1958) . 602
1. Pecularities of the Model of Social–Economic of Development of Independent Lebanon 602

2. Internal Situation. Plan of the «Greater Syria» and the Failure of the Coup d'Etat Attempt in 1949 604
3. Aggravation of the Internal Situation and the Resigntation of President Bishara Khouri 609
4. Situation in Lebanon in 1952–1958 610
VI. THE FIRST CIVIL WAR IN LEBANON (1958) 617
1. The Reasons of the Civil War and Formation of the Contradicting Political Groups 617
2. National Uprisisng 619
3. American Intervention 623
VII. LEBANON BETWEEN TWO CIVIL WARS (1958–1975) ... 627
1. Election of Fuad Shiab President of Lebanon and Formation of the «Government of Enforced Compromise» 627
2. Internal and Foreign Policy of Lebanon (1958–1970) 631
3. The Cairo Agreement of 1969 and Regulation of the Lebanese–Palestinian Relations ... 634
VIII. THE SECOND CIVIL WAR IN LEBANON (1975–1990) 636
1. The Imminenting of a New Socio–Economic Crisis 636
2. The Cuases of the Second Civil War and Formation of Contradiciting Blocks . 638
3. The Beginning of the Civil War 642
4. The Armed Attacks of Right–Wing Forces on Armenian Community in 1978–1979 646
5. Israeli Invasion in Lebanon in 1982 650
6. Lebanese–Israeli Peace Treaty of May 17, 1983 653
7. The Taif Accord of 1989 and the Ending of Civil War 657
IX. LEBANON IN THE POST–TAIF PERIOD (1990–2005) 659
1. Important Changes in the Governing System and Necessary Measures for Liquidation of Consequences of the Civil War 659
2. Assassination of Rafiq Hariri. «The Cedar Revolution» and the Withdraw of Syrian Troops from Lebanon 666
3. Normalization of the Lebanon's International Conditions 668
X. LEBANON–REPUBLIC OF ARMENIA. INTERSTATE RELATIONS (1992–2005) 670

CHAPTER X

GREAT SOCIALIST PEOPLE'S LIBYAN ARABIC JAMAHIRIYYA 673
I. LIBYA IN THE PERIOD OF ITALIAN DOMINATION 675
1. Establishment of the Italian Domination. Union of Cyrenaica, Tripolitania and Fezzan and Formation of Lebu–Libya 675

2. Libya Under the Italian Domination (1918–1939) 681
3. Libya During the Second World War (1939–1945) 687
4. Formation of Independent Libyan State — United Kingdom of Libya 690
II. THE UNITED KINGDOM OF LIBYA (1952–1969) 698
1. The State System and Its Evolution . . 698
2. Establishment and Development of Relations with Arab and Western Countries 701
3. Social–Economic Situations. Factor of Oil 705
III. REVOLT ON SEPTEMBER 1, 1969, BY «FREE OFFICERS» AND OVERTHROW OF MONARCHY 710
IV. PROCLAMATION OF LIBYAN ARABIC REPUBLIC (1969–1977) 714
1. Question of Power. Revolutionary Command Council and Formation of «Revolutionary Government» 714
2. Primary Tasks of New Powers in the Field of Internal Policy 719
3. Relations with Arab Countries and Failure of the Libyan Attempts for Union 724
4. «Libyan Arabic Republic is not Libyan Kingdom and England is not British Empire Where There is no Sunset» 728
V. JAMAHRIYYA 730
1. «The Third Universal Theory» of Qadhafi 730
2. Renaming of Libyan Arab Republic into Great Socialist People's Lybian Arabic Jamahiriyya and Establishment of New Ruling System 738
2. «House Must Belong to Whom, Who is Living in It». Social–Economic Advances in Jamahiriyya (1978–2005) 742
3. Great Socialist People's Lybyan Arabic Jamahiriyya's Foregin Policy: Achievements, Mistakes, Defeats, Corrections (1970s–2005) 747

CHAPTER XI

STATE OF QATAR **753**
I. QATAR A BRITISH PROTECTORATE (1916–1971) . . . 755
1. Al–Thani Clan and its Becoming of Ruling Dynasty in Qatar . 755
2. Treaty of 1916 Between the Great Britain and Qatar and Establishment of British Protectorate . . . 756
3. Political and Social–Economic Conditions In Qatar During the British Protectorate . . . 758
II. LIQUIDATION OF THE BRITISH PROTECTORATE AND PROCLAMATION OF INDEPENDENT STATE OF QATAR 766
1. Qatar and the Problem of Formation of Arab Federation 766
2. Promulgation of Interim Constitution of Qatar in 1970, Liquidation of the British Protectorate and Declaration of Independenc of Qatar 771

III. QATAR IN THE EPOCH OF INDEPENDENCE 774
1. Further Improvement of Government System. The Amir Khalifa Ibn Hamad's «Corrective Movement» 774
2. Palace Revolt of 1995. Promulgation of Permanent Constitution in 2003 and Division of the Main Branches of Power 777
3. Social and Economic Situation in Qatar at the End of the XX century and the Beginning of the XXI Century. Tendencies of Modernization 780
4. Relations with the Foreign Countries 784

INDEX 788

LITERATURE 802

Նիկոլայ Հովհաննիսյան
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Հատոր III. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան. 1918–2005 թթ.

Nikolay Hovhannisyan
HISTORY OF THE ARAB COUNTRIES
Volume III: The Epoch of Independence and Sovereignty: 1918–2005
(In Armenian)
"Zangak–97" Press, Yerevan, Armenia, 2006

Николай Оганесян
ИСТОРИЯ АРАБСКИХ СТРАН
Том III: Период независимости и суверенитета — 1918–2005 гг.
(на армянском языке)
Изд. "Зангак–97", Ереван, 2006 г.

Հրատարակչության տնօրեն՝ Է.Ս. Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ա.Ա. Բաղդասարյան
Վերստուգող սրբագրիչ՝ Մ.Ս Իսկանդարյան
Համակարգչային ձևավորումը՝ Գ Ա. Հարությունյանի
Քարտեզների պատրաստումը՝ Գ Ս. Բեգլարյանի
Շապիկի համակարգչային մշակումը՝ Ա.Տ. Հակոբյանի

Տպագրությունը՝ օֆսետ: Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսետ:
Ծավալը՝ 52.5 տպ. մամ. + 2.38 կավճ., 47.36 + 2.26 հրատ. մամ., 48.83 + 2.21 պայմ. մամ.:
Տպաքանակը՝ 400 օրինակ: Գինը՝ պայմանագրային:

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Տպագրված է հրատարակչության տպարանում
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23–25–28,
Ֆաքս՝ (+37410) 23–25–95, էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայք՝ www.zangak.am